



ՀՐԱՄԱՆԱԲ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻԲՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՅԱՓԱՌ-
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Протоиерей Александр Мень

ИСАГОГИКА

(Курс по изучению священного писания)

Том I, II



Первопрестольный Св. Эчмиадзин-2020

Ավագերեց Ալեքսանդր Մեն

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

(Սուրբ Գրքի ուսումնասիրության դասընթաց)

Հատոր Ա, Բ

Ռուսերենից թարգմանեցին՝
Ա. Մադոյանը, Գ. Մադոյանը



Ս. ԷԶՄԻԱԾԻՆ-2020

ՀՏԴ 27-277
ԳՄԴ 86.37
Մ 610

*Տպագրվում է երաշխավորությամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի*

Թարգմանիչներ՝
Ա. Մադոյան, Գ. Մադոյան

Խմբագիր՝ Ղևոնդ ավ. քահանա Մայիլյան

ՄԵՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՎԱԳԵՐԵՑ

Մ 610 ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (Սուրբ Գրքի ուսումնասիրության դասընթաց)/ Ավագերեց Ալեքսանդր Մեն; Ռուսերենից թարգմ.՝ Ա. Մադոյան, Գ. Մադոյան; Խմբագիր՝ Ղևոնդ ավ. քահանա Մայիլյան.– Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2020.

Հատոր Ա, Բ.- 624 էջ:

Այս հրատարակությամբ ներկայացնում ենք Հին Կտակարանի Ներածությանը նվիրված XX դ. հայտնի աստվածաբան Ա. քին. Մենի (1935-1990) «Исагорика. Ветхий Завет» գրքի հայերեն թարգմանությունը:

Ներածությունը աստվածաշնչագիտության բաժին է, որ ուսումնասիրում է Հին Կտակարանի կանոնը, տեքստերը, առանձին գրքերի ստեղծման պատճառները, բովանդակությունը, ժամանակագրությունը, առանձնահատկությունները, մեկնաբանական մեթոդները: Հին Կտակարանի Ներածությունը նախորդում է Հին Կտակարանի մեկնաբանությանը, որը նախադրում է հանդիսանում մեկնաբանական անսահման աշխարհը մտնելու:

Գիրքը նախատեսված է Աստվածաշունչ Մատյանով հետաքրքրվողների լայն շրջանակի համար: Այն գրված է ուսումնական ձեռնարկի սկզբունքներով և կարող օգտագործվել, որպես այդպիսին, ուսումնական հոգևոր-կրթական հաստատություններում:

ՀՏԴ 27-277
ԳՄԴ 86.37

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ

«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ISBN 978-9939-59-247-3

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2020

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ներածություն կամ Իսագոգիկա (*հուն. εισαγωγή* – ներածություն) – Աստվածաբանության բաժիններից է, որ ուսումնասիրում է սուրբգրային սկզբնաղբյուրները, դրանց քննությունը, առաջացման պատճառները, ժամանակագրությունը, բովանդակության առանձնահատկությունները, Աստվածաշնչի կանոնը, մեկնաբանական եղանակները: Ներածության հիմնական խնդիրներից է նաև առանձին գրքերի ստեղծման պատմական, աշխարհագրական պատճառների քննությունը, Յին աշխարհի, մանավանդ հունա-հռոմեական, Մերձավոր Արևելքի պետությունների, այլ ազգերի գրականության աղբյուրների տվյալների տեսանկյունից:

Ներածությունը տեսականորեն և գործնականում նախորդում է Ս. Գրքի մեկնությանը: Այն բաժանվում է երկու մասի՝ Ընդհանուր և Մասնավոր: Ընդհանուրը ներածական է Ս. Գրքի ընկալմանը, իսկ Մասնավորը՝ Ս. Գրքի առանձին գրքերին է վերաբերում: Այդ առումով էլ Ներածությունը բաժանվում է երկու մասի՝ Ներածություն Յին Կտակարանի և Ներածություն Նոր Կտակարանի:

Այս հրատարակությամբ ներկայացնում ենք աստվածաբան, ավագ քահանա Ալեքսանդր Մենի¹ (*Александр Мень, Исагогика. Ветхий Завет, М, 2000*) գրքի թարգմանությունը, որը վերաբերում է վերոնշյալ հարցերին (Յին Կտակարան): Գիրքը բաղկացած է երկու մասից. ա) Ներածություն. Սուրբ գրությունները մինչ մարգարե-գրողները և բ) Մարգարեների շրջան. Սուրբ Գրությունները Երկրորդ Տաճարի ժամանակ: Գրքի բովանդակությունն է. ընդհանուր նախաբան, հինկտակարանյան գրքերի և որոշ պարականոն գրվածքների ուսումնասիրություններ՝ Եկեղեցու Հայրերի աստվածաբանության և աստվածաշնչագիտության տվյալների հիման վրա: Յին Կտակարանի Ներածությունը նախորդում է Յին Կտակարանի մեկնաբանությանը, այն մեկնաբանական անսահման աշխարհի նախադրումն է: Առանց Ներածության

¹ Ալեքսանդր Վ. Մեն (1935–1990) – Ռուս Ուղղափառ Եկեղեցու աստվածաբան, ավագ քահանա, քարոզիչ, աստվածաբանական բազմաթիվ գրքերի հեղինակ (Կրոնի պատմություն, 7 հատոր, Բրյուսել, 1970-1983 թթ., Մարդու Որդին, Ս., 1991-1992 թթ. և այլն):

Մեկնաբանական աշխարհի մտնելը սխալ և այլ ճանապարհ կտանի: Գիրքը գրված է ուսումնական ձեռնարկի սկզբունքներով և կարող օգտագործվել, որպես այդպիսին, ուսումնական հոգևոր-կրթական հաստատություններում:

Հեղինակի մոտեցումները ինքնին յուրահատուկ են. լինելով կրոնական տեսակետից ազատամիտ, նա օգտագործում է եղած բոլոր տեսակետները, և կառչած չէ այս կամ այն կարծրատիպերից: Օգտագործում է բավականին շատ ոչ քրիստոնեական աղբյուրներ, որն ավելի հետաքրքիր է դարձնում աշխատությունը, համեմատական եզրակացություններ թողնելով ընթերցողին:

Ներկա հրատարակությունը գալիս է լրացնելու Հին Կտակարանի Ներածության վերաբերող Մայր Աթոռի տարիներ առաջ տպագրված մի քանի գրքերի և Ի-ԻԱ դարերում Ներածության վերաբերող սակավաթիվ հայալեզու գրականության, հուսալով, որ Ներածության նվիրված հրատարակումների ավանդությունը կշարունակվի¹:

Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Հրատարակչությունը իր շնորհակալությունն է հայտնում Գևորգյան Հոգևոր Գեմարանի Տեսչությանը (2015 թ.)՝ հանձինս Տ. Գևորգ եպս. Սարոյանի, որի առաջարկով ձեռնարկվեց Ա. Մենի «Ներածություն Հին Կտակարանի» հայրերեն հրատարակության պատրաստումը, ինրպես նաև «Ալեքսանդր Մեն» Հիմնադրամին, որն սիրահոժար համաձայնվեց մեր առաջարկին՝ այս աշխատության հայրերեն թարգմանությունը և հրատարակումը իրականացնելու համար:

10 հոկտեմբերի 2020 թ.

Սբ. Էջմիածին

Տոն Սրբոց թարգմանչաց

Վարդապետուացն մերոց

¹ Տե՛ս Գր. *Ղարբինյան*, Ներածություն Հին Կտակարանի, Հոգևոր գրադարան, ԻԵ, ԶԴԶԿ, 2000: *Ֆունդաս Երեմիա*, Հին Կտակարան. բովանդակությունը և աստվածաբանությունը: Հունարենից թարգմ.՝ Գաբրիել քհն. Վարդանյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2018: Նաև *Գուրեան Խ. Ս.*, Մեսրոպեան Աստուածաշունչը բանասիրութեան լոյսին տակ, Գահիրե, 1944: *Եղիայեան Բիզանդ*, Քննական պատմութիւն Սուրբգրական ժամանակներու, Ա-Գ հատորներ, Այթիիաս, 1972-1974: *Մանուկեան Արտակ արք.*, Աստուածաշունչ Մատենը, Թեհրան, 1966: *Մանուկեան Սիոն արք.*, Ներածութիւն Աստուածաշնչի, Ս. Էջմիածին, 1984: *Հակոբ եպս. Գըլընճյան*, Կոհելեթ կամ Գիրք Ժողովողի, Մոստեվիդեո, 2000: Նույնի՝ Մեկնութիւն Արարածոց, Մոստեվիդեո, 1995:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրատարակչության կողմից	5
Նախաբան	13

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Մաս Ա

Ներածություն

§ 1. Աստվածաշունչը Հայտնության և Ուխտի Սուրբ Գիրք	19
§ 2. Աստվածաշունչը և պատմությունը	22
§ 3. Աստծու շնչով գրված (աստվածաշունչ). Աստծու խոսք և մարդկային խոսք	25
§ 4. Եկեղեցին ու Աստվածաշունչը: Ներածություն: Սուրբ Գրքի հեղինակների խնդիրը	27
§ 5. Հինկտակարանյան կանոնի կազմությունը, բովանդակությունը և հաստատումը	29
§ 6. Աստվածաշնչի բնագրերը, թարգմանությունները և հրատարակությունները ..	35
§ 7. Մեկնություն. Մեկնարկեստ: Հին Կտակարանի մեկնության եղանակները	46
§ 8. Բնագրաբնություն	50
§ 9. Գրական քննադատություն	52
§ 10. Պատմական քննություն	56
§ 11. Ներքին կամ «բարձր» քննություն	59
§ 12. «Աստվածաշնչյան աշխարհ». Հին Իսրայելի հարակից քաղաքակրթությունները	69
§ 13. Հին Կտակարանի ստեղծման և հինկտակարանյան պատմության համառոտ ակնարկ (<i>Ժամանակակից աստվածաշնչագիտության տվյալների համաձայն</i>)	79
§ 14. Աստվածաշնչի միասնականությունը	86

ՄԱՍ Բ

ՀՆԳԱՄԱՏՅԱՆ

§ 15. Հնգամատյան. անունը, կազմը և ծագման խնդիրը	91
§ 16. Մովսիսական ավանդության չորս տարբերակների տեսության չարադրանքը	97
§ 16–ի Հավելված	
1. Երկու ավանդությունների միացման օրինակ Աստվածաշնչական պատումի մեջ	104
2. Հնգամատյանի չորս ավանդությունների հաստատման ենթադրելի ժամանակը	105
3. Հինկտակարանյան Եկեղեցու ժամանակագրական հանգրվաններ	106

ԾՆՆԴՈՑ ԳՐՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ (Ծննդ. Ա–ԺԱ)

§ 17. Արարչության ուսմունքը Վեցօրյայում 107

§ 17–ի Հավելված

1. Դրվագներ տիեզերաստեղծման բաբելյական պոեմից Աշխարհի արարչության մասին «Էնունա Էլիշ» – Երբ վերևում... 120
2. Եգիպտական ասքն աշխարհի արարման մասին 123
3. Իրանական դուալիզմ (երկաստվածություն) 123
4. Վիշապի կերպարը քանանյան առասպելաբանության մեջ 123

§ 18. Մարդու արարումն ըստ Ծննդոց Գրքի Բ գլխի 124

§ 18–ի Հավելված

1. Մարդկային մարմնի ծագման մասին 131
2. Մարդու նախորդների ժամանակագրական աղյուսակ 133
3. Շումերների ավանդազրույցները ոսկե դարի մասին 133

§ 19. Մեղքի սկիզբն ու տարածումը (Ծննդ. Գ – ԺԱ) 134

§ 19–ի Հավելված

1. Ջրհեղեղի շումերական ավանդությունը 151
2. Բաբելոնյան ավանդությունը ջրհեղեղի մասին 151
3. Բաբելոնական առասպելն աշտարակ կառուցող աստվածների մասին 154
4. Աստվածաշնչական ազգագրություն 154

ԱԲՐԱՀԱՄ. ՆԱՀԱՊԵՏՆԵՐ (Ծննդոց ԺԱ–Ծ)

Ք. ծ. ա. ԺԹ–ԺԷ դարեր

§ 20. Սուրբ երկիր: Աբրահամի ծագումը (Ծննդոց ԺԱ 16–26) 157

§ 20–ի Հավելված

1. Հյուսիսային Քանանի բնությունն Աբրահամի դարաշրջանում 164
2. Պաղեստինի հողագործական օրացույցը 165
3. Նահապետների պատմության ժամանակագրական սահմանները 165
4. Նահապետների տոհմագրությունը 166
5. Սրբազան թվեր նահապետների մասին պատումներում 166

§ 21. Աբրահամը «հավատացյալների հայր» (Ծննդ. ԺԲ–ԻԵ) 167

§ 21–ի Հավելված

1. Մահմեդական պատումն Աբրահամի դարձի մասին 180
2. Սեմական ցեղերի Եգիպտոս փոխադրվելու վկայություններ 181

§ 22. Հակոբ նահապետ: Իսրայելի որդիները (Ծննդ. ԻԵ 19–Վ 26) 182

§ 22–ի Հավելված

1. Եգիպտական քուրմ Մանթոնի պատմածը հիբսոսների արշավանքի մասին 192
2. Փարավոնի՝ վեզիրին վերաբերող հրահանգներից 193
3. Եգիպտոսի յոթնամյա սովը և հողային բարեփոխումը 193

ՄՈՎՍԵՍ (Ք. ա. ԺԳ դար)

§ 23. Մովսեսը և Ելքը: Աստված իբրև Փրկիչ և պատմության տիրակալ 195

§ 23–ի Հավելված

1. Էքնաթոնի օրհներգից 214

2. Հատված մովսիսական դարաշրջանի օրհներգից՝ ձոնված եզիպտական Ամոնին	215
3. Խաբիրին Պաղեստինում (ԺԴ դար)	215
4. Ռամզես Բ-ի՝ քետացիների հետ [կնքած] պայմանագրից	216
5. Բաղարջակերաց տոնի հնագույն արտասուրբգրական նկարագիր	216
§ 24. Սինայի ուխտը (Ելք ԺԹ–Խ, Ղևտական)	217
§ 24-ի Հավելված	
1. Բարոյական հանգամանքները եզիպտական «Մեռյալների գրքում»	230
2. Որոշ զուգահեռներ Համմուրաբիի օրենքների և Ուխտի գրքի միջև	232
3. Հինկտակարանյան զոհաբերության ձևերն ըստ Հնգամատյանի	233
4. Ուրիմ և Թուրիմ	233
§ 25. Սինա–Կադես–Անդրհորդանան (Թվերի գիրքը և Բ Օրինացը)	234

ՄԱՍ Գ

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԳՐՔԵՐ
(Մինչ մարգարե–գրողների դարաշրջան)

ՀԵՍՈՒ ՆԱՎԵԻ ԵՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ
(մոտ. Ք. ծ. ա. 1200–1040 թթ.)

§ 26. Պայթար Ավետյաց երկրի համար: Հեսու Նավեի գիրքը	245
§ 26-ի Հավելված:	
ԺԳ դ. Քանանում բնակվող ժողովուրդները	254
§ 27. Քանանի համար մղվող պայթարի շարունակությունը	255
§ 28. Սամուել մարգարեն և միապետության հիմնումը (Ա Թագ. Ա–ԺԵ)	260

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՏՐՈՅՈՒՄԸ
1010–910 թթ. Ք. ծ. ա.

§ 29. Դավիթ թագավոր: Մեսիականության ակունքները (Ա Թագ. Ժ2–ԼԱ, Բ Թագ.)	269
§ 29-ի Հավելված	
ՃԾԱ սաղմոսի նորագյուտ բնագիրը	280
§ 30. Սողոմոն: Երուսաղեմի Տաճարը (Գ Թագ. Ա–ԺԱ, Բ Մն. Ա–Թ): Մնացորդաց գրքեր. Առակաց գիրքը	281
§ 30-ի Հավելված	
Որոշ զուգահեռներ Առակաց գրքի և եզիպտական իմաստության միջև	294
§ 31. Իսրայելյան Կայսրության տրոհումը (Գ Թագ. ԺԲ–ԺԴ, Բ Մնաց. Ժ–ԺԲ)	295

ՊԱՅՔԱՐ ԵՐԿՅԱՎԱՏՈՒԹՅԱՆ �ԵՄ
ԵՂԻԱ ԵՎ ԵՂԻՍԵ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ
Ք. ծ. ա. 910–800 թթ.

§ 32. Հեթանոսության նոր հարձակումը. Եղիա մարգարե	301
§ 33. Եղիսե մարգարե: Մարտնչող մարգարեականության ավարտը (Դ Թագ. Ա–ԺԵ)	308
§ 33-ի Հավելված	312

ԶԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ
ՄԱՍ Ա
ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՁԱՆ

ՄԻՆԶԲԱԲԵԼՈՆՅԱՆ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ
ԳՐՔԵՐԸ (Ք. ծ. ա. Ը–2 դարեր)

§ 1. Մարգարեական գրքեր: Մարգարեականության էությունը 315

§ 2. Ամոս՝ Աստծու դատաստանի մարգարե (մոտ. 750 թ.) 325

§ 3. Օսեե. Աստծու հանդեպ սեր պահանջող մարգարեն (մոտ. 750–730 թթ.) 336

§ 4. Եսայի. Սրբության և մեսիականության մարգարե (մոտ. 765–685 թթ.) 342

§ 4–ի Հավելված
Եսայի մարգարեի մարտիրոսական վախճանի մասին պատումը 350

§ 5. Եսայի մարգարե (շարունակություն) 351

§ 5–ի Հավելված
Հյուսիսային թագավորության կործանումը (Դ Թագ. ԺԷ) և
Եզեկիայի բարեփոխումները 364

§ 6. Ուխտի վերաբերյալ կեղծ հայացքի բացահայտումը: Միքիա և
Սոփոնիա մարգարեներ (Ը–Է դարեր) 366

§ 7. Հոսիայի բարեփոխումները: Նավում և Ամբակում մարգարեներ
(628–609 թթ.) 373

§ 8. Երեմիա մարգարե. կյանքը և ծառայությունը (մինչ 597 թ.) 380

§ 9. Եզեկիել մարգարե. ծառայության սկիզբը (597–590 թթ.) 389

§ 10. Երուսաղեմի անկումը (587 թ.): Երեմիայի մարգարեությունը
Նոր Ուխտի մասին 395

§ 11. Բաբելոնյան գերություն: Ողբի գիրքը: Աբդիու մարգարե (580–575 թթ.) 401

§ 12. Եզեկիելի մարգարեությունը Նոր Երուսաղեմի մասին (մոտ. 573 թ.) 406

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

§ 13. Սաղմոսարան. Ընդհանուր դիտարկում..... 411

§ 13–ի Հավելված
Քանանյան կրոնական պոեզիայի նմուշ (Ք. ծ. ա. ԺԴ դ.) 416

§ 14. Սաղմոսների տեսակները 417

ՄԱՍ Բ

ԳԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՃԱՐԻ ՇՐՋԱՆԻ
ՍՐԲԱՉԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԳԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՉԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ
(Չ–Ե ԴԴ. Ք. Ն. Ա.)

§ 15. Երկրորդ Եսայի՝ «հինկտակարանյան ավետարանիչ» (2 դար Ք. ծ. ա.) 427

§ 15–ի Հավելված
Կյուրոսի հրովարտակից՝ Բաբելոնի գրավման մասին 434

§ 16. Երկրորդ Եսայի (շարունակություն) 434

§ 17. Գերության ավարտը: Երկրորդ Տաճարի կառուցման ժամանակի
մարգարեները (538–515 թթ.) 443

§ 18. Ե դարի կրոնական ճգնաժամը: Մաղաքիա մարգարե: Յովնանի գիրքը (515–445 թթ.)	452
§18-ի Յավելված ԺԹ դարի «Յովնանը»	456
§ 19. Եզրասի և Նեեմիի բարեփոխումները: Յռութի գիրքը (Ե դարի կեսեր).....	457

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ կամ ԴԻՂԱԿՏԻԿ ԳՐՔԵՐ
(Ե–Դ դդ. Ք. ծ. ա.)

§ 20. Երգ Երգոց գիրքը	463
§ 21. Ուսմունք Աստծո Իմաստնության մասին (Առակաց գիրք)	469
§ 22. Յորի Գիրքը	476
§ 22-ի Յավելված Անմեղ տառապայալի մասին բաբելոնյան պոեմից	485
§ 23. Ժողովողի գիրքը	487
§ 24. Տոբիթի և Եսթերի գրքերը	493
§ 25. Սիրաբի որդի Յեսուի Իմաստության Գիրքը (մոտ. 190 թ.)	499

ՅԱՅՏՆՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՐՔԵՐ ԵՎ ՊԱՅՔԱՐ ՅԱՆՈՒՆ ՅԱՎԱՏՔԻ
(Ք. ծ. ա. Դ–Բ դարեր)

§ 26. Առաջին հայտնութենականները: Յարության ավետում (Ք. ծ. ա. Դ դ.)	505
§ 27. Յելլենականացում: Երեմիայի Թուղթը: Բարուբի Գիրքը: Մակարայեցիների Ա և Բ գրքերը: Անտիոքոս Դ-ի հալածանքը	515
§ 28. Դանիել մարգարեի Գիրքը (Բ դարի 60–ական թթ.)	522
§ 28-ի Յավելված 1. Դանիելի մասին պատմության պատառիկ Կումրանի 4–րդ քարանձավից	533
2. Յելլենական թագավորությունների ճակատագրերը Դանիել մարգարեի գրքի Ժ–ԺԱ գլուխներում	533
§ 29. Յասմոնյաններ: Պարականոն և ոչ կանոնական գրքեր (Բ–Ա դարեր)	535
§ 29-ի Յավելված Ենոքի Գրքից	544

ԵՐԿՈՒ ՈՒԽՏԵՐԻ ՍԱՅՄԱՆԻՆ (Ք. Ն. Ա. Բ–Ա ԴԱՐԵՐ)

§ 30. Մեռյալ ծովի ձեռագրերը: Եսսենականություն	545
§ 30-ի Յավելված Կումրանի քնագրերից	554
§ 31. Սփյուռքի ավանդությունները: Սողոմոնի Իմաստության գիրքը	555
§ 32. Խոստումն ու կատարումը	561

ՅԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. Յամառոտ մատենագիտություն: Յապավումներ	569
--	-----

ՅԱՎԵԼՎԱԾ Ա

Առաջին հատորի համառոտ մատենագիտությունը.....	570
--	-----

	ՀԱՎԵԼՎԱԾ Բ	
Երկրորդ հատորի համառոտ մատենագիտությունը.....		577
	ՀԱՎԵԼՎԱԾ Գ	
Յին Կտակարանի աստվածաշնչագետների անվանացանկ		583
	ՀԱՎԵԼՎԱԾ Դ	
Եզրույթների բառարան		588
	ՀԱՎԵԼՎԱԾ Ե	
Սրբազան պատմության սխեման ըստ չորս պատումների վարկածի		591
	ՀԱՎԵԼՎԱԾ Չ	
Յին Կտակարանից քաղվող մի շարք քարոզիտոսական նյութերի ցանկ		593
	ՀԱՎԵԼՎԱԾ Է	
Յին Կտակարանի Մեսիական կարևորագույն մարգարեությունները.....		596
	ՀԱՎԵԼՎԱԾ Ը	
Ժամանակագրական աղյուսակ		597
Քարտեզներ.....		607
Անվանացանկ.....		615

ՆԱԽԱԲԱՆ

Սուրբ Գրքի՝ Աստծու խոսքի, ճանաչումն ու ընկալումը, քրիստոնեական կյանքի և աստվածաբանության կարևորագույն կողմն է: Եկեղեցու հայրերի և աստվածաբանների երկասիրությունները դարերի ընթացքում ծնունդ տվեցին Աստվածաշունչ Սուրբ Մատյանի մեկնողական հարուստ գրականությանը. մի Գրքի, որը սերտորեն կապված է քրիստոնյայի ամենօրյա գործերին, հոգևոր-բարոյական լինելությանը:

Եկեղեցական մատենագրության, ծիսագիտության, կանոնագիտության և աստվածաբանական այլ առարկաների նմանությամբ, աստվածաշնչագիտությունը ևս Որոգիների և Յերոնիմոս Երանելու ժամանակներից ի վեր լայնորեն օգտվում է գիտության տարբեր բնագավառների՝ հնագիտության, բանասիրության, աղբյուրագիտության օժանդակ տվյալներից: Սակայն մինչ այն, երբ վերստին հայտնագործվեց Հին Արևելքի խորհրդավոր աշխարհը, որի ետնախորքին զարգանում էին սրբազան պատմության դեպքերը, Աստվածաշնչի գիտական մեկնաբանությունները հիմնվում էին բավականին սահմանափակ նյութի վրա: Վերջին մեկ և կես դարում Արևելքի հուշարձանների բազմաթիվ գտածոները և հին բնագրերի վերծանումները զգալի ազդեցություն ունեցան պատմական, բնագրագիտական և աստվածաշնչագիտական խնդիրների լուծման գործում, խնդիրներ, որ կարևոր էին Հին Կտակարանի ընկալման և մեկնության համար: Ի մասնավորի դրանք Նոր լույս սփռեցին Մատյանի առանձին հատվածների ու Գրքերի թվագրման և հեղինակների հարցում: Դա, բնականաբար, չէր վերաբերում կանոնական բնագրերի՝ Աստուծով ներշնչված լինելուն, որի նկատմամբ հավատը կախված չէ գիտական այս կամ այն եզրահանգումից:

Պրավոսլավ աստվածաշնչագիտության մեջ այս հարցը դիտարկվել է, բայց միասնական, համընդհանուր եկեղեցական կարծիք չի ներկայացվել: Բայց և այնպես մի շարք պրավոսլավ երևելի պատմաբաններ և աստվածաբաններ ներմուծեցին և շրջանառության մեջ դրեցին պատմաբանական հետազոտության եղանակներն ու եզրահանգումները: Նրանց թվում էին պրոֆ. Ս. Ն. Տրուբեցկոյը, Մոսկվայի հոգևոր ակադեմիայի պրոֆեսոր Ի. Դ. Անդրեևը, Կիևի հոգևոր ակադեմիայի պրոֆեսոր Ն. Դրոզդովը, Ա. Ելչանինովը (հետագայում հոգևոր կոչում ընդունեց), որ հայր Պ. Ֆլորենսկու և Ս. Բուլգակովի համագործակցությամբ հեղինակեց կրոնի պատմության համառոտ դասընթացը, ուր Սուրբ Գրոց նյութը շարադրված էր աստվածաշնչագիտության նորագույն նվաճումների դիրքերից:

Հիշյալ ուսումնասիրություններում առաջատար դիրք էր գրավում ակադեմիկոս Բորիս Տուրանը (1868–1920): Նա Ռուսաստանի եկեղեցապատմական գիտության վառ ներկայացուցիչներից էր: Դասավանդել է հոգեւոր դպրոցում, աշխատակցել «Богословский вестник» (Աստվածաբանական լրատու) պարբերականին, 1917–1918 թթ. եղել է Ռուս Պրավոսլավ Եկեղեցու ներկայացուցչական ժողովի անդամ: Իր կարճատև կյանքի ընթացքում Տուրանը համաշխարհային համբավ էր ձեռք բերել, որ և հավատարիմ մնալով ուղղափառությանը՝ գիտական սկզբունքային վերաբերմունք էր ցուցաբերում հետազոտվող նյութի առնչությամբ: Նրա ժառանգությունը կազմում է երկու հարյուր գիրք ու հոդված (չհաշված պարբերական մամուլի չորս հարյուր թղթակցությունները):

Արևելագետ, բանասեր, Եկեղեցու պատմաբան Տուրանը հատկապես շատ բան է արել դպտի և եթովպական քրիստոնեության հետազոտման ասպարեզում: Նրա պրպատումների արդյունքն էր «Հին Արևելքի պատմություն» երկհատոր աշխատությունը¹: Այդ գրքում Տուրանը մի քանի բաժին հատկացրել է հինկտակարանական նյութին՝ օգտագործելով այն ժամանակվա աստվածաշնչագիտության նվաճումները:

Տուրանից եկող ավանդները շարունակեց ռուս պրավոսլավ աստվածաբան Բորիս Սովեն, որ ձևակերպեց դրանց հիմնական սկզբունքները՝ Աթենքի ուղղափառ աստվածաբանների առաջին համաժողովում (1936 թ.): Նույն ուղղությամբ աշխատել են և ռուս այլ աստվածաշնչագետներ (պրոֆ. Ա. Վ. Կարտաշև, ավագ քահանա Ա. Կոյազև): Նրանց դրույթները դրական արձագանք գտան նաև Հույն Ուղղափառ Եկեղեցու աստվածաշնչագետների շրջանում:

Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու աստվածաբանները նախ բացասաբար վերաբերվեցին պատմաբանական մեկնության եղանակների կիրառությանը: Պապական Աստվածաշնչյան հանձնախմբի Ի. դարի առաջին տարիների ուղերձներում փորձ էր արվում աստվածաշնչագիտությունը պահել այն տեսքով, ինչպես է այն գոյատևել էր մինչև ԺԸ դարը: Եվ լոկ 1943 թ. Պիոս ԺԲ պապի կոնդակը «Divino afflante Spiritu» (Հոգու աստվածային ներշնչանք) 1943 թ.-ին ճանապարհի հարթեց կաթոլիկ աստվածաշնչագետների և աստվածաբանների առջև՝ աստվածաշնչագիտության նվաճումներն ընդունելու և կիրառելու համար: Այժմ նշված եզրահանգումներն ու եղանակները քաղաքացիության իրավունք են ստացել նաև կաթոլիկ աստվածաբանության մեջ, ընդ որում ոչ միայն նեղ մասնագիտական երկասիրություններում, այլև հատուկ դասընթացներում, վարդապետական և հանրամատչելի աշխատություններում:

¹ Առաջին տպագրությունը՝ ՍՊԲ, 1913, և երեք հետմահու տպագրություն՝ Լենինգրադ, 1935–1936: Տուրանի աշխատությունների մատենագիտությունը տե՛ս «Древний Восток. Памяти академика Бориса Александровича Тураева». М., 1980 ժողովածուի 42–55 էջերում:

«Սուրբ Գրքի ազատ հետազոտության» սկզբունքը, որ Բարեփոխության առաջնորդները ներմուծեցին մեկնության մեջ, բողոքական գիտնական-աստվածաբաններին հնարավորություն ընձեռեց (հատկապես 19-20 դդ.) նշանակալի հաջողությունների հասնելու աստվածաշնչի ուսումնասիրության ասպարեզում: Նրանք մեծ աշխատանք կատարեցին Սբ. Գրքի բնագրագիտական, գրական և պատմական քննության բնագավառներում: Սակայն արմատական բողոքականները ցայսօր հետևում են աստվածաշնչագիտության հին սկզբունքներին:

Չարկ է նշել, որ Սբ. Գրոց հետազոտողները, հաճախ մեծ տեղ հատկացնելով աստվածաշնչագիտության պատմաքննական կողմին՝ ի վնաս Աստծու Խոսքի հոգևոր-աստվածաբանական ընկալման: Աստվածաշնչի վերաբերյալ ուղղափառ գիտության խնդիրն է՝ Սբ. Գրքի պատմաքննական մոտեցումը սահուն կերպով համակցել այն ըմբռնման հետ, որ Գիրքն ընդունվում է իբրև աստվածային Չայտնություն:

Տարբեր պատճառներով երկմիասնական այս եղանակը, որ առաջին անգամ կիրառել են Բ. Տուրանը և այլ ուղղափառ հետազոտողներ, տակավին պատշաճ զարգացում չի ունեցել պրավոսլավ աստվածաշնչագիտության մեջ: Այդ իսկ պատճառով հոգևոր դպրոցների համար կազմված ուսումնական ձեռնարկներում հավուր պատշաճի նկատի չեն առնված Բ. Տուրանից սկիզբ առնող ավանդները: Ներկա համառոտ դասընթացը նպատակ ունի թեկուզ մասնակի լրացնելու այդ բացը և դրանով իսկ արժանին մատուցելու «Աստվածաշնչի քննության այս եղանակի ռաիվիրաներին»: Արդեն Տուրանի մահից հետո կատարված հնագիտական գյուտերը սկզբունքորեն չթուլացրին նրա տեսակետների դիրքը. դրանք այսօր ևս պահում են արդիականությունը:

Աստվածաշնչագիտական ուղեցույցները սովորաբար գրվում են երկու տարբերակով: Առաջինը պարունակում է ըստ հերթականության Սբ. Գրքի յուրաքանչյուր հատվածի հետևողական վերլուծություն, այնպես ինչպես դրանք հաջորդում են իրար Աստվածաշնչում: Ռուսերենով մեկնության այդ եղանակի վերջին նմուշը Ֆուլխման Վիգուրուի գործն է (1878-1880. ռուսերեն անավարտ թարգմանություն. «Աստվածաշնչի ընթերցման և ուսումնասիրության ուղեցույց» հատ. 1-2, Մ., 1897-1899): Շարադրանքի մյուս ձևը Սրբազան պատմությունն ընդունում է իբրև աստվածաշնչական Գրքերի ուսումնասիրության հենք: Սույն աշխատանքում նախապատվությունը տրվել է երկրորդ եղանակին, քանի որ սա առավել ակնհայտորեն ցույց է տալիս մեր փրկության իրագործման ուղին:


*Ավագ քահանա Ալեքսանդր Մեն
Չագրսկ, 1982*



ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Մաս Ա

Ներածություն



§ 1. Հայտնության և Ուխտի Սուրբ Գիրքը՝ Աստվածաշունչ

1. Եկեղեցու գոյության առաջին իսկ օրերից, երբ դեռ չկային առաքելական գրքերը, Հին Ուխտը հիմնապես մտավ նրա կյանքի մեջ: Սաղմոսները քրիստոնյաների առաջին աղոթքներն էին, իսկ աստվածաշնչական մարգարեություններով նրանց համար բացահայտվում էր Մեսիայի քավության խորհուրդը: Աստվածամարդու հինկտակարանյան նախկարապետների հոգևոր փորձը եղավ այն հենքը, որի վրա խոյացավ ավետարանական հավատքի շինությունը: Աստծու Բանի գանձարանից քրիստոնեությունը մշտապես ոգեշնչում և խրատ է քաղել: Չիմանալով Հին Ուխտը՝ դժվար է ընկալել եկեղեցական կյանքի շատ կողմերը: Եկեղեցու խորհուրդները, աստվածպաշտությունը, կրոնաբարոյական հիմքերը, նրա աստվածաբանությունը, հայացքն անցյալին, ներկային և ապագային՝ այս ամենը սերտորեն կապված են Հին Ուխտի հետ:

2. Խորանալով դրա մեջ՝ Եկեղեցին ընթանում է Տիրոջ ցույց տված ճանապարհով. «Քննեցե՛ք Գրքերը» (Յովհ. Ե 39): Երկրային կյանքի օրերին Աստծու թագավորությունը հռչակելիս Նա Ինքը բազմիցս աղոթել է Հին Ուխտի խոսքերով, հիմնվել դրանց վրա: Երուսաղեմի բնակիչները զարմանում էին Իր՝ Գրքերի իմացությունը (հմմտ. Մատթ. Դ 4, ԻԱ 42, ԻԲ 29, 31-32, 36-40, ԻԷ 46, Յովհ. Ե 47, Է 42, Ժ 35): Տիրոջ աղոթքը, առակները և ողջ քարոզը մեծավ մասամբ հիմնվում են Հին Կտակարանի տառի և գաղափարների վրա (հմմտ. օր.՝ Մատթ. 2 5. և Սաղմ. ԼԶ 11, Մատթ. 2 15 և Երեմիա ԻԳ 16, Մարկ. Ա 1-12 և Ես. Ե, Մարկ. ԺԳ 24 և Ես. ԺԳ 10 և շատ ուրիշներ): Այդ պատճառով Հերոնիմոս Երանելին ասում է. «Չիմանալ Գրքերը, այն է՝ չճանաչել Քրիստոսին» (Մեկնություն Եսայ., Նախաբան):

Այսպիսով, Քրիստոսի բարի ավետիսն ընդունող մարդկանց համար Հին Ուխտը Սուրբ Գիրք դարձավ: Եվ նորկտակարանյան մատենագրության ի հայտ գալուց հետո այն միացվեց Հին Ուխտին՝ կազմելով քրիստոնեական միասնական Աստվածաշունչը:

3. «Բիրիխ»-ն եբրայեցերեն «աֆարիմ» (אֶפְרַיִם)՝ գրքեր բառի հունարեն թարգմանությունն է: Տակավի՛ն մինչքրիստոնեական շրջանում այդպես էին անվանում Հայտնության աստվածաշունչ վկայությունները՝ գրառված Իսրայելի իմաստունների և մարգարեների ձեռքով (Դան. Թ 2):

Աստծու, աշխարհի և մարդու մասին կան ճշմարտություններ, որոնք մարդուն շնորհված բանականությունը կարող է և պետք է սեփական ուժերով բացահայտի: Բնության օրենքները, արհեստի գաղտնիքները, ժողովուրդների ներկան ու անցյալը և նույնիսկ գերագույն Սկզբի բուն գոյությունը՝ այս ամենը մարդը ճանաչում է իր հոգու բնական ջանքերով: Այլ բան է Հայտնությունը, ուր ամփոփված է այն, ինչ արտաքին փորձից, երկրային բանականության սահմաններից դուրս է: Այն Աստծու սիրո շնորհն է, որ մարդկանց հաղորդակցում է Արարչի և Նրա մտահղացումների խորհրդին:

4. Աստվածաշնչի մեջ չկա «կրոն» բառը. Աստվածաշունչն ուսուցանում է Աստծուն «ճանաչելը»¹ (Ես. ԾԳ 11), որ խոսում է հավատարիմների հետ՝ ամենից առաջ Իր ընտրյալների միջոցով: Ընդունված է կարծել, որ աստվածճանաչողության գլխավոր հատկանիշը *μονοθεϊσμός*-ն (միաստվածություն) է, Հին Ուխտի բյուրեղյա միաստվածությունը: Եվ իրոք, բոլոր մյուս հավատքներն ընդամենը մոտեցել են միակ Աստծու ըմբռնմանը, բայց երբեք չեն հասել ճշմարիտ միաստվածության: Ոմանք Աստվածությունը դիտարկել են որպես անդեմ Ուժ, որ տարածված է Տիեզերքում, մյուսները Նրա կողքին դրել են երկրորդական աստվածներ, երրորդները հավատացել են երկու բարձրագույն սկզբի՝ շար և բարի: Որոշ իմաստուններ (Հունաստանում և Հնդկաստանում) պնդել են, որ Աստված իր էությունմբ անհասանալի է, իսկ հեթանոսությունն աստվածներին մարդկային հատկանիշներ էր վերագրում, նույնիսկ նվաստ կրքեր: Միայն Հին Կտակարանում է հառնում մի Աստվածը, որ գերազանցում է բոլոր գոյերին, նվիրական և անհամեմատելի՝ մարդու և բնության հետ, բայց միևնույն ժամանակ Նա Կենդանի Աստված է՝ դիմավոր, որ Իր սերը հեղում է արարածների վրա:

5. Մոտավորապես 140 թ. Մարկիոն Սինոբացին (Պոնտացին) աշխատել է անջատել Նոր Ուխտը Հնից: Նա պնդում էր, որ Աստվածաշնչի հին գրքերի «դաժան Աստվածը» նույն սիրող Հայրը չէ, որին ազդարարում էր Քրիստոս: Դրա համար Մարկիոնը պիտի աղավաղեր և անջատեր նորկտակարանյան բնագրերը: Եկեղեցին՝ ի դեմս Սբ. Հուստինոս Վկայի և Սբ. Իրինեոս Լիոնացու վճռականորեն դատապարտեց այդ փորձը: «Ոչ թե այլ Աստծու ենք պաշտում՝ մերին, ի հակադրություն ձերի,- ասում էր Սբ. Հուստինոսը Հուդա Տրիփոնին,- այլ խոստովանում ենք միևնույնին, որը ձեր հայրերին «ամուր ձեռքով և բարձր մկանունքով» դուրս բերեց Եգիպտական երկրից, ուրիշի չենք ապավինում (քանզի ուրիշը չկա), բացի Նրանից, որին և դուք՝ Աբբահամի, Իսահակի և Հակոբի Աստծուն» (Ս. Հուստինոս, Չրույց հրեա Տրիփոնի հետ, II.): Իրականում Տեր Հիսուս երբեք չի ուսուցանել այլ Աստծու մասին և

¹ Հայերենում՝ «օժտել իմաստությամբ»:

Իր քարոզով էլնում էր Աստծու Հայտնությունից՝ տրված Հին Կտակարանում (տես օրինակ՝ Մատթ. ԻԲ 31-32): Իսկ Պողոս առաքյալը բոլոր հավատացյալներին անվանում էր Աբրահամի՝ հինկտակարանյան կրոնի նախահոր հետնորդներ (Յոհն. Դ 16):

6. Հին Ուխտի մեջ բացահայտվող Աստվածը տիեզերական անդամ Զորություն չէ, այլ Արարիչ, որ ամեն ինչ ստեղծել է Իր կամքով և Բանով: Նա սուրբ է (Եբր. ՍԴԴ - ԿԱԴՈ՛Շ) և օժտված է անխոստովանելի և անիմանալի բնությունմբ՝ ամբողջ արարվածից բացարձակապես տարբեր («Իմ խորհուրդները նման չեն ձեր խորհուրդներին, եւ ոչ Իմ ճանապարհները՝ ձեր ճանապարհներին,- ասում է Տերը,- այլ, ինչպես երկինքն է հեռու Երկրից, այնպես և Իմ ճանապարհներն են հեռու ձեր ճանապարհներից, և Իմ խորհուրդները՝ ձեր խորհուրդներից»: Եսայի ԾԵ 8-9): Բայց Աստված դեիզմի՝ հետևորդների ճանաչած սառն սկզբնապատճառը չէ՝ անտարբեր աշխարհի գործերին, այլ՝ բարի Հոգաբարձու: Նա ճշմարտության և արդարության Աստված է, անհաշտ չարի նկատմամբ, միաժամանակ Ինքը նաև Փրկիչ Աստված է՝ ներող, ողջացնող, որ արարածին տանում է դեպի վերածնունդ և նորացում: Նա Իր իմաստությունն ի ցույց է դնում աշխարհաստեղծման պարագային, բայց ամենից շատ բաց է անում և իրագործում է Իր կամքը մարդկային պատմության իրադարձություններում: Սրբազան Մատեանի Աստվածը կոչվում է «Նախանձոտ», քանի որ մարդուց Նա սպասում է բացարձակ հավատարմություն և սեր. Նրա կողքին հանդուրժելի չի կարող լինել ոչ մի «կուռք», ոչ մի այլ սպասավորություն. Նա լիովին պիտի թագավորի մարդկանց սրտերին ու կյանքին: Աշխարհի ու մարդու նկատմամբ Կենդանի Աստծու հարաբերությունն ընդգծելու, առավել շեշտելու համար աստվածաշնչական մատենագիրները երբեմն դիմել են մարդկային հատկությունների վերագրման, ասես Նրան օժտել են «աչքերով», «ձեռքերով», մարդկային զգացմունքներով: Սակայն դա լուկ Գրքի այլասացությունն է՝ նման սրբապատկերի՝ պայմանական, խորհրդանշական լեզվին:

7. Եվ վերջապես, Սուրբ Գրոց Աստվածն Ուխտի Աստված է: Նա Իր և մարդու միջև ստեղծում է հոգևոր կապեր, նրան կոչում Իր ստեղծագործական հղացումների մասնակցության, ոչ թե խոնարհաբար կանգնելու Իր առջև, այլ՝ գործուն ծառայության: Այս է Ուխտի իմաստը, որ Նա կնքել է ընտրյալ մարդկանց հետ: Այսպիսով բիբլիական կրոնն աստվածամարդկային է, և դրա պսակն է հանդիսանում Աստվածամարդը:

¹ Դեիզմ - [ֆր. déisme < լատ. deus աստված բառից] ԺԵ-ԺԸ դդ. տարածված կրոնափոխոպայական ուսմունք, որ Աստծուն ճանաչում է աշխարհի արարիչ, բայց հերքում է Երա մասնակցությունը բնության կյանքում. - Շան. թարգմ.:

Հարցեր կրկնության համար

1. Երբ է քրիստոնեական Եկեղեցին ընդունել Յին Կտակարանը:
2. Ինչ է նշանակում «Բիբլիա» բառը:
3. Հայտնությունն ինչով է տարբերվում սովորական բանականության բացահայտումներից:
4. Ինչով է տարբերվում Աստուծու բիբլիական ըմբռնումը մյուս հավատքներից:
5. Ինչ է Ուխտը:

§ 2. Աստվածաշունչը և պատմությունը

1. Հին հույները, որոնց մշակույթն ազդել է գիտության, փիլիսոփայության ողջ հետագա զարգացման վրա, ըստ էության «պատմություն» հասկացության ընկալում չունեին: Նրանց պատկերացմամբ աշխարհը և մարդկությունը ենթակա են անշարժ օրենքներին և արմատապես փոփոխվել չեն կարող: Տիեզերքը (κοσμος) նրանց թվացել է կառուցիկ և անշարժ: Եթե աշխարհը հրով կործանվի՝ ապա վաղ թե ուշ պիտի վերածնվի նույն տեսքով: Այդ պատկերացումն արմատացած էր Հին Արևելքի տեսություններում, ուր հավատում էին բնության ու հասարակության շրջանաձև շարժմանը: Աշխարհի գոյությունը ոչ մի տեղ չի տանում: Լոկ շրջափուլերն են փոփոխվում՝ նորից ու նորից կրկնվելով: Հեթանոսությունն աստված էր որոնում բնության երևույթների մեջ, և դրանով էր պայմանավորված հեթանոսական տեսակետը գոյության վերաբերյալ: Տարվա եղանակների փոփոխության կամ լուսատուների շարժման նմանությամբ մարդիկ և բնությունն իրենց ուղին անցնում են կարգի համաձայն, որ առհավետ սահմանել են աստվածները կամ գերագույն Սկիզբը: Այդ «բնական» աշխարհընկալմանն Աստվածաշունչը հակադրում է բոլորովին այլ հայացք:

2. Աստվածաշնչական ՕԼԱՄ - տիեզերք (եբր. օլմ ՕԼԱՄ) բառը ոչ թե անշարժ ծիրն է խորհրդանշում, այլ՝ ժամանակների մեջ շարժվող մի բան: Աստված երևացել է Աստծով ներշնչված մարգարեներին ոչ այնքան բնության, որքան մարդկային պատմության իրադարձությունների միջոցով: Հենց այդտեղ է գործում Աստվածային մտահղացումը, դրանով է բացահայտվում Նրա կամքը: Պատմությունն անդառնալի մի հոսք է՝ միտված գերագույն Նպատակին: Հենց սկզբից Հին Ուխտն ուղղված է դեպի Ապագան, և պատմությունն ընկալում է իբրև ճանապարհ, իբրև լինելություն, իբրև Աստուծու մտահղացման աստիճանական իրագործում: Դեռևս Աբրահամն է ստանում ավետյաց խոստումը, որ իրագործվելու է հեռավոր ապագայում:

Այնուհետև ըղձալի նպատակ է դառնում Ավետյաց Երկիրը, իսկ թագավորաց ժամանակաշրջանում բացվում է փրկչագործության և Աստծու թագավորության խորհուրդը: Հին Ուխտն աշխարհն ու մարդկային կյանքը չի դիտում իբրև մեկընդմիջտ շնորհյալ մի բան՝ սկզբունքորեն անփոփոխ: Ընդհակառակն, ցավով, բողոքով ու դառնությամբ է զննում մարդկանց առկա վիճակը (Յոթ ԺԳ, Ժող. Ա): Սակայն այդ վիշտն անհույս ու անկարող թախիծ չէ՝ այն կերպափոխվում է մեծ հույսի ճառագած լույսի ներքո: Պատահական չէ, որ Աստվածաշունչն անվանում են «հույսի Գիրք»: Աստվածաշնչական հույսը չի բխում բնական բանականության տվյալներից, որ ավելի շուտ հակվում է հոգուտ հեթանոսական պատկերացման անդադար շրջագալարներն ու փուլերը (նկատենք, որ պատմության գալարածե ընթացքի գաղափարը վերածնել են մեր դարի որոշ նշանավոր պատմաբաններ): Աստվածաշնչական հույսի համար հիմք է ծառայում միայն Աստծու Հայտնությունը և հավատն առ այդ:

3. Տերը բարի է: Նա մարդուն ստեղծել է հանուն բարության: Եվ անգամ այն բանից հետո, երբ մարդիկ փշրեցին սիրո և Նրա առջև հնազանդության ուխտը, Նա շարունակեց առաջնորդել անկյալ աշխարհը: Նա ընտրյալներին դարձրեց իր ծրագրերի իրականացման գործիք, Նա համբերությամբ և սիրով առաջնորդում էր նրանց՝ աստիճանաբար լուսավորելով նրանց գիտակցությունը: Եվ Փրկության այս պատմությունը Հին Ուխտի առանցքն է: Այդ պատճառով է, որ Հին Կտակարանում հաճախ են կրկնվում Ելքի և Ուխտի խոսքերը, որ պատմում են անցյալի մեծ իրադարձությունների մասին (Խմբ. Գործք Է 1-50, ԺԳ 16-31): Իսկ այդ պատմությունն ինչո՞վ պիտի պսակվի, ի՞նչ հանգրվանի պիտի հասնի:

Գրքի վերջին դրվագն անվանում էին «Աստծու օր», իսկ ավելի ուշ՝ Աստծու թագավորություն, երբ Աստված Ինքը կհայտնվի աշխարհին և կրկին կվերականգնի կորսված միասնությունն Իր արարածի հետ: Եվ դա իրականացավ ի դեմս Աստվածամարդ Հիսուս Քրիստոսի: Նա բարձրարարեց Աստծու թագավորությունը, որն «աննկատ» աշխարհ է մտնում Իր գալստյան պահից: Եվ բուն երևույթը՝ Քրիստոսի հայտնությունը, տեղի է ունեցել ժամանակի որոշակի պահի՝ իբրև ստույգ և իրական պատմական իրադարձություն:

4. Հին Ուխտը միայն Աստծու Խոսքի հայտնության պատմությունը չէ: Այստեղ նկարագրված է նաև մարդու պատասխանն այդ Խոսքին: Գիրքը մեզ ներկայացնում է թե՛ նրանց, որ ընկալեցին Աստվածային Բանը (Աբրահամի կամ մարգարեների նման), թե՛ նրանց, որ ընդդիմացան Նրան: Այդ ընդդիմանալը երկակի էր. մի կողմից մարդիկ մշտապես ձգտել էին հեթանոսական աստվածներին, որոնք բարօրություն էին խոստանում, փոխարենը

չպահանջելով ոչինչ, բացի զոհաբերությունից, մյուս կողմից պակաս չէին Աստծու ճշմարիտ պատկերը՝ երկրային, մարմնեղեն ձգտումների ծնունդ հանդիսացող կեղծ կերպարով փոխարինելու փորձերը: Թե՛ մեկը, թե՛ մյուսը, կռապաշտություն տարբեր դրսևորումներ են, կռապաշտության, որի գալթակղությունները սոսկ անցյալին չէ, որ վերաբերում են:

Աստվածաշնչում մեղքի պատկերը տրվում է լիակատարությամբ, անսքող շեշտակիությամբ, որ երբեմն շփոթեցնում է ներկայիս ընթերցողին: Բայց Հին Ուխտը «Վարք սրբոց» չէ և ոչ իսկ պարզ ուսուցումների հավաքածու, այլ՝ աստվածնանաչության պատմություն, պատմություն հագեցած ոչ միայն հավատով, պայծառացմամբ և սլացքներով, այլև շարշարանքով, անկումներով ու դավաճանությամբ: Քանի որ մարդն իր անկյալ վիճակով այդպիսին է (հմմտ. սաղմոսերգու Դավթին և մեղավոր Դավթին): Այս է պատճառը, որ ի տարբերություն անցյալի բազմաթիվ սրբազան գրքերի, Աստվածաշունչը հակասական ու հուզիչ է ինչպես կյանքը:

Հայտնությունը շատ սերունդների մարդկանց է քարոզվել, և Տիրոջ Խոսքը միշտ ներկայացվել է այս կամ այն դարաշրջանի զարգացման մակարդակի համապատասխանությամբ: Սրբազան պատմությունն ունի իր շրջափուլերը: Երեմիա մարգարեի կրոնական գիտակցությունն արդեն բոլորովին այլ էր, քան Հեսու Նավեինը: Հին Կտակարանը պատմում է հավատքի մասին, որ պայծառանում, մաքրվում ու խորանում էր Աստծու ժողովրդի հոգևոր աճին համընթաց: Եվ Գրքի բոլոր մասերին նույն չափանիշներն ու պահանջները ներկայացնելը կարող է գալթակղության և տարակուսանքի պատճառ դառնալ: Եվ միայն ճշմարտության աստիճանական բացահայտման և դրանով մարդու կերպափոխման ամբողջ բարդությունը հասկանալով կարող ենք Աստվածաշունչն ըմբռնել իբրև մեկ միասնական ամբողջություն, իբրև փրկության Սբ. Պատմություն՝ երկու Ուխտերի պատմություն:

Հարցեր կրկնության համար

1. Ինչո՞վ էին բնութագրվում հների հայացքները բնության ու մարդու վերաբերյալ:
2. Ինչո՞վ է տարբերվում պատմությանն ուղղված աստվածաշնչական հայացքը:
3. Ո՞րն է փրկության սրբազան պատմության նպատակը:
4. Ո՞րն է պատճառը, որ կարող ենք այդ պատմությունն անվանել աստվածամարդկային:
5. Մարդիկ ինչպես արձագանքեցին Աստծու կոչին:
6. Ինչո՞վ էին Հայտնության խորքերն աստիճանաբար բացահայտվում:

§ 3. Աստծու շնչով գրված (աստուածաշունչ). Աստծու խոսք և մարդկային խոսք

1. Սուրբ Գիրքն ստեղծվել է բազում մարդկանց ուժերով ավելի քան 10 դարի ընթացքում: Այն անվանելով Աստվածաշունչ (հուն. θεόπνευστος) Պողոս առաքյալն (Բ Տիմ. Գ 16) ի ցույց է դնում հինկտակարանային և նորկտակարանյան եկեղեցու ընդհանուր հավատն առ այն, թե Աստվածաշնչի Գրքերը գրվել են Սուրբ Հոգու հատուկ ազդմամբ (հմմտ. Մատթ. ԻԲ 43): Եվ իրապես Հայտնությունն լրիվությամբ ու անաղարտ մարդկանց հասցնելու համար՝ Սրբազան մատենագիրները վերին ներշնչանքի կարիքն ունեին:

2. Իսկ այդ ներշնչանքի բնույթի վերաբերյալ եկեղեցու տեսակետը միանգամից չի կազմավորվել: Վաղ շրջանի հայրերը, հետևելով հրեական ավանդույթին, հակված էին դա դիտել իբրև խոսքային՝ վերբալ (լատ. *verbum* – բառ, խոսք), այսինքն ասես թելադրված ի վերուստ և բառ առ բառ գրառված (Տերտուլիանոս¹ և այլք): Այս պարագային Աստվածաշնչի իրական հեղինակ էր դառնում միայն ու միայն Աստծու Հոգին, իսկ մարդու դերը սահմանափակվում էր Նրա խոսքերի մեքենայական փոխանցմամբ:

Բայց արդեն Դ դարում երանելի հայրերի գործերում սկսեց ընդգծվել հենց սրբազան հեղինակների դերը: Օգոստինոս Երանելու խոսքով՝ Աստված «մարդու միջոցով խոսում է մարդկորեն» (Աստծու քաղաքի մասին XVII., 6): Այդ են վկայում ոճական տարբերությունները և բնագրի այլ յուրահատկություններ: «Երեմիան,- գրել է երանելի Հերոնիմոսը,- կոպիտ է թվում Եսայի և Օսեե մարգարեների համեմատությամբ (Մեկնություն Եսայու մարգարեության), իսկ Գրիգոր Երկխոսը² նշել է, թե՛ «Եսային ոճի գեղեցկությամբ գերազանցեց բոլոր մարգարեներին» (Գ Թագ. Ե 30-ի կապակցությամբ): Դիոնիսիոս Մեծը նույն միտքն արտահայտել է Նոր Կտակարանի վերաբերմամբ: Նա նշել է, թե Հովհաննու Ավետարանն ու նրա թղթերը «գրված են ոչ միայն անսխալ հունարենով, այլև արտահայտությունների առանձնակի պերճությունով»: Մինչդեռ Հայտնությունն այլ կերպ է գրված. «խոսքն ու լեզուն մաքուր հունարեն չեն, այլ լի են օտար, իսկ երբեմն նաև սխալ կառույցներով ու արտահայտություններով» (Մեջբերումն ըստ՝ Եվսեբիոս, Եկեղեցական պատմություն. VII, 25, 25): Նա կարծում էր, որ այդ տարբերությունը կարող է մատնացուց անել տարբեր հեղինակների: Բայց եթե անգամ ընդունենք, որ մեկն

¹ Զվինտոս Սեպտիմիոս Ֆլորենս Տերտուլիանոս – քրիստոնյա աստվածաբան, մատենագիր՝ 155/165 Կարթագեն–200/240 Նույն վայրում. – Ծան. թարգմ.:

² Հռոմի պապ (մոտ. 540–604) (590 – 12 մարտ 604): Անունը կապվում է իր գործերից մեկի՝ «Երկխոսությունների» վերնագրի հետ. – Ծան. թարգմ.:

է գրել տարբեր ժամանակներում, կարևոր է Դիոնիսիոսի բուն միտքը, թե Աստծու խոսքը մեզ փոխանցվել է սրբազան հեղինակի լեզվական առանձնահատկություններով հանդերձ: Անհատականության կնիքը, հաճախ վառ և արտառոց, դրոշմված է սուրբգրական շատ երկերի վրա: Օրինադրող հատվածների սեղմ և խիստ ոճը քիչ է նմանվում Դավթի կյանքի հոգեցունց նկարագրին կամ մարգարեների բոցավառ խոսքին: Բացի այդ՝ աստվածաբույս խոսքի հեղինակներն անձամբ նշում են, որ օգտագործել են իրենց նախորդած գրավոր աղբյուրները: Օրինակ՝ Թվոց գրքում (ԻԱ 14) մեջբերում կա Աստծու պատերազմների գիրք չպահպանված գրքից, իսկ Պատմական գրքերում քաղվածքներ կան մեկ այլ՝ «Գիրք Արդարության»-ից՝ (Հեուռ Ժ 12, Բ Թագ. Ա 18): Նույն կերպ Նոր Կտակարանում Ղուկաս Ավետարանիչն է ձեռնարկել շարադրելու գործը՝ «ի սկզբանէ պիտու երթեալ ամենայնի ճշմարտութեամբ», ձեռքի տակ ունենալով «Չատերի» աշխատանքները, որ գրվել են իրենից առաջ Քրիստոսի մասին (Ղուկ. Ա 1-3):

Ինչպես նշում է «Ուղղափառ աստվածաբանական հանրագիտարանը»՝ աստվածաշունչ լինելու բառացի ըմբռնմանը հակասում է «տարբեր կարգի անճշտությունների առկայությունը (պատմական ու ժամանակագրական, տեղագրական, նաև սրբազան հեղինակների տարաձայնությունները)» (ԽՍ. Բ, էջ 736): Դա աստիճանաբար հանգեցրեց այն մտքին, որ սրբազան մատենագիրները հեղինակ էին՝ բառի բուն իմաստով:

Ուղղափառ աստվածաբանների Առաջին համաժողովի (Աթենք, 1936 թ. նոյեմբեր) դրույթներում ռուս աստվածաշնչագետ Բ. Ի. Սովեն գրել է. «Սրբազան գրքերի՝ աստվածաշունչ լինելու մեքենական-բառացի ընկալումը հրեական և պահպանողական-բողոքական աստվածաբանության արդյունքն է և չի կարող պաշտպանվել ուղղափառ աստվածաբանների կողմից որպես յուրօրինակ մի «միաբնակություն», այլ պիտի սրբագրվի Քաղկեդոնի ժողովի՝ աստվածամարդու մասին դրույթով¹: Իր սահմանափակությամբ հանդերձ մարդկային տարրի մասնակցությունն Աստվածաշնչի գրությունները՝ բացատրում է հինկտակարանյան գրքերի՝ որպես պատմական աղբյուրների առանձնահատկությունները, դրանց սխալները, ժամանակային շփոթներն ու անճշտությունները, որ կարող են ճշգրտվել ոչ-սուրբգրային տվյալներով, որոնք հատկապես վերջին տասնամյակներին հարուստ նյութ տրամադրեցին Հին Արևելքի պատմության վերաբերյալ: Սուրբ Գրքին ուղղված կեղծ ջատագովական հայացքն իբրև պատմական ու բնական գիտությունների հանրագիտարան՝ պետք է մի կողմ թողնել: Աստուծով ոգեշնչված հինկտակարանյան հեղինակները նախ և առաջ աստվածաբան և օրենսդրույց են: Այս տեսանկյունից է պետք դիտարկել աշխարհաստեղծման, համաշխար-

¹ Հայ Եկեղեցու կողմից անդնդունելի - խմբ.:

հային ջրհեղեղի և այլն, ուսմունքը: Աստվածաշնչի արժեքը նրա աստվածաբանությունն է» («Путь, 1936–1937, N 52):

3. Այսպիսով, Սուրբ Գրքը միաժամանակ և՛ Աստծու խոսք է, և՛ մարդկային խոսք: Հայտնությունն այնտեղ բեկվել է նրա հեղինակներին՝ կենդանի մարդկանց անհատականության միջոցով, որոնք ապրել են որոշակի դարաշրջաններում՝ իրենց վրա կրելով շրջապատող աշխարհի, ժամանակակիցների մտածողության ու հայացքների ազդեցությունը: Եթե Մենդոց Ա 7-ում խոսվում է ջրի մասին «որ ցամաքի վրա է», դա ոչ թե աստվածային ճշմարտություն է մատնանշում, այլ հների պատկերացումը տիեզերքի մասին: Հայտնությունը մարդկանց գիտական տվյալներ չի հաղորդում: Դա, ժամանակակից ուղղափառ աստվածաշնչագետ քհն. Ա. Կնյազևի խոսքով՝ հոգևոր փորձը հաղորդում է մարդկային լեզվով («Православная Мысль», 1951, VIII, էջ 121): Այն, որ սրբազան մատենագիրները հարմարվել են իրենց լսարանի մակարդակին ասում է հենց Ինքը՝ Քրիստոս, պարզաբանելով, օրինակ, որ Մովսեսը թույլատրում էր բաժանությունը՝ մարդկանց «կարծրասրտության» պատճառով (Մատթ. ԺԹ 8): Ինչպես ասում է Սուրբ Հովհան Ոսկեբերանը, Մենդոցի հեղինակը աշխարհաստեղծման պատմությունը շարադրել է «հարմարվելով մարդկային սովորույթին» (Беседы на Бытие, III., 3):

Սուրբ Գրքի աստվածամարդկային բնույթը բնականորեն բխում է Հայտնության աստվածամարդկային էությունից: Ուստի մեկնիչ-աստվածաբանը պարտավոր է սովորել ուշադրության առնել Աստծու խոսքի այդ երկրային տեսանկյունը, որին նպաստում է այս կամ այն Սրբազան Գրքի հանգամանքների, հեղինակի ու ժամանակի ուսումնասիրությունը (տե՛ս հտ. 1, § 4, 7, 11):

Չարքեր կրկնության համար

1. Ինչո՞ւ է Աստվածաշունչն համարվում աստվածամարդկային գիրք:
2. Ի՞նչ է նշանակունշմ աստվածաշունչ լինել:
3. Ինչո՞ւ է մերժվել ներշնչանքի բառացի ըմբռնումը:
4. Սրբազան մատենագիրների մասնակցությունն ինչպես է արտահայտվում բիբլիական գրքերն ստեղծելիս:

§ 4. Եկեղեցին ու Աստվածաշունչը Ներածություն: Սուրբ Գրքի հեղինակների խնդիրը

1. Թեպետ որպես կանոն Հայտնության մունեստիկները եղել են մարգարեներ, ուսուցիչներ ու իմաստուններ, այն տրվել է ամբողջ հինկտակարանյան Եկեղեցուն: Մինչև Աստծու խոսքի գրառվելն այն պահվել է Եկեղե-

ցու բանավոր Ավանդությանը իբրև նրա հիմնարար ուսմունք, իբրև հավատի և կյանքի չափանիշ: Ավելին՝ Ավանդության շատ կողմեր այդպես էլ չվերածվեցին Գրքի՝ շարունակելով գոյատևել ժողովրդի հոգևոր առաջնորդների սովորույթներում: Օրինակ, առավոտյան ու երեկոյան աղոթքի սովորույթը, որ պահպանվել է նաև նորկտակարանյան Եկեղեցում, արտացոլված չէ Աստվածաշնչում, այլ եղել է միայն ավանդության մեջ:

2. Եկեղեցու ուսմունքի համաձայն Աստծու Հայտնությունը պահվում, բացահայտվում ու մեկնաբանվում է բուն Եկեղեցու ակունքներում: Դա վերաբերում է նաև Եկեղեցու հինկտակարանյան նախապատմությանը: Հենց հինկտակարանյան Եկեղեցին է, ի դեմս իր վարդապետների, պահել Աստծու պարգևը՝ հավատքի Ավանդությունը, և հենց Եկեղեցին է առանձնացրել հայրական մատենագրության այն Գրքերը, որոնք ճանաչել է որպես Աստծու խոսք: Այլ խոսքով՝ Եկեղեցին եղել է առաջ, քան Սուրբ Գրքի կանոնի ի հայտ գալը (տե՛ս հատ. 1 § 5):

3. Այս առումով զարգանում էր եկեղեցական մոտեցումը՝ Ներածության, այն է՝ Ս. Գրքի այս կամ այն գրքի հեղինակների, դրանց թվագրման, գրական տեսակի, գրության հանգամանքների և մնացյալ հարցերի շուրջ: Կարելի է ասել, թե այդ գրքերի կանոնական արժանիքը որոշվել է ոչ այնքան հեղինակի հանգամանքով, որքան դրանց բովանդակությամբ՝ Ավանդությանը համապատասխան: Բավական է հիշել, որ ինչ-ինչ Գրքեր, որոնց հեղինակները նշված են (Ենովքի գիրքը, Բարուքի Հայտնությունը, Սողոմոնի Սաղմոսները ևն) կանոն չեն ներմուծվել, և ընդհակառակն, կանոնական են ճանաչել Աստվածաշնչի մի շարք Գրքեր, որոնց հեղինակները պարզված չեն (օրինակ՝ Դատավորաց, Հռութի, Թագավորաց, Հոբի, Եսթերի գրքերը): Այդ հեղինակների վերաբերյալ Սուրբ հայրերը (ինչպես և հուդայական մեկնիչները) տարբեր կարծիքներ ունեին, ինչը, սակայն, բնավ չի խաթարել դրանց՝ Աստծուց ներշնչված լինելու վերաբերյալ վստահությունը: Ընդհանրացնելով այդ միտքը՝ ոուս մտածող Ալեքսեյ խոմյակովը գրում էր՝ «Եթե ապացուցվեր, որ Հռովմայեցվոց թղթի հեղինակը Պողոս առաքյալը չէ, Եկեղեցին կասեր՝ Այն ինձնից է ծագում»:

4. Այնուամենայնիվ, մեկնաբանության համար կարևոր է, թե ով է եղել Գրքի հեղինակը, կամ գոնե երբ է այն ստեղծվել: Ինչպես արդեն ասվեց, սրբազան մատենագիրները Հայտնության հաղորդման, փոխանցման համար ներդրել են իրենց բանականությունը, տաղանդը, փորձն ու գիտանքները: Մարգարեները, նույնիսկ խոսելով Աստծու Հոգու ակնհայտ ազդումով, երբեք անգիտակից վիճակի կամ թմբիրի մեջ չեն ընկել հեթանոս պայծառատեսների նման: Հաճախ նրանք երկյուղել են իրենց վրա դրված

առաքելությունից և նույնիսկ հակառակվել (Ել. Գ 11, Երեմ. Ի 7-10): Բնագիրը խորությամբ հասկանալու գործում գրողի անձի ու շրջապատի մասին մեր գիտանքները կարող են էական դեր խաղալ:

Հարցեր կրկնության համար

1. Ինչո՞ւ է Սուրբ Ավանդությունը նախորդել Սուրբ Գրքին:
2. Բնչ է Ներածությունը (είσαγωγή):
3. Կանոնականության համար նշանակություն ունի Սուրբ Գրոց հեղինակների հարցը:
4. Բնչ կարևորություն ունի Սուրբ Գրքերի հեղինակի ու ստեղծման ժամանակի իմացությունը:

§ 5. Հինկտակարանյան կանոնի կազմությունը, բովանդակությունը և հաստատումը

1. Հինկտակարանյան կանոնի բաժինները: *հունարեն «կանոն» բառը թարգմանաբար նշանակում է օրենք, սահման(ում), չափ: Այն ծագում է արքադական ԿԱՆՈՒ, կամ եբրայեցերեն օրօփ - օրօփ - բառից, որ նշանակում է մական, որով շափումներ էին կատարում: Սուրբ Գրքի կանոն կոչվում է Գրքերի խումբը, որ Եկեղեցին համարում է սուրբ, աստվածաշունչ: Հնում Հին Ուխտը բաժանվում էր երեք հիմնական մասի՝ Օրենք, Մարգարեներ և Գրքեր (տե՛ս Սիրաք, Նախաբան¹) եբրայեցերեն ԹՈՐԱ - օրօփ, ՆԿԻԿՄ - օրօփ, և ԹԹՈՒԿՄ - օրօփ (սրանց առաջնատառերով կազմվում է Հին Կտակարանի կրճատ անվանումը՝ օրօփ - օրօփ): Եբրայական Աստվածաշնչում այդ մասերից յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմված է հետևյալ գրքերից.*

I. Օրենք (ԹՈՐԱ - օրօփ).

Մենդոց, Ելք, Ղևտական, Թվեր, Երկրորդ Օրենք:

II. Մարգարեներ (ՆԿԻԿՄ - օրօփ)

1. Վաղ մարգարեներ (եբրայեցերեն ՆԿԻԿՄ ՌԻՇՈՆԻՄ, օրօփ օրօփ):

Հեսու Նավե, Դատավորներ, Ա-Դ Թագավորություններ (եբրայական անվանումով 1-2 Սամուելի և 1-2 Թագավորությանց).

2. Ուշ մարգարեներ (եբրայեցերեն ՆԿԻԿՄ ԱԽԱՌՈՆԻՄ - օրօփ օրօփ).

(Ա) Մեծ մարգարեներ.

Եսայի, Երեմիա, Եզեկիել:

¹ Հայերեն Աստվածաշնչում այդ հատվածը բացակայում է - խմբ.:

(Բ) Փոքր մարգարեններ

Օսեե, Հովել, Ամովս, Աբդիու, Հովնան, Միքիա, Նավում, Ամբակում, Սոփոնիա, Անգե, Զաքարիա, Մաղաքիա:

III. Գրքեր (Քթուվիմ Ը՛ԵԵԵԵԵԵ)

Սաղմոս, Հոբ, Առականեր, Հռութ, Երգ Երգոց, Ժողովող, Ողբ Երեմիայի, Եսթեր, Դանիել, Եզրաս, Նեեմի, Ա-Բ Մնացորդաց:

Գրքերի դասավորությունն ու բաժինների անվանումը հունական, սլավոնական և ռուսական ավանդություններով փոքր-ինչ այլ է¹.

I. Հնգամատյան.

համընկնում է Թորային

II. Պատմական գրքեր.

Հեսու Նավե, Դատավորներ, Հռութ, Ա-Դ Թագավորություններ, Ա-Բ Մնացորդաց, Ա Եզր, Նեեմիա:

III. Ուսուցողական գրքեր

Եսթեր, Հոբ, Սաղմոս, Առականեր, Ժողովող, Երգ Երգոց.

IV. Մարգարեական գրքեր.

ա) Մեծ մարգարեններ

Եսայի, Երեմիա, Երեմիայի Ողբը, Եզեկիել, Դանիել:

բ) Փոքր մարգարեններ.

Օսեե, Հովել, Ամովս, Աբդիու, Հովնան, Միքիա, Նավում, Ամբակում, Սոփոնիա, Անգե, Զաքարիա, Մաղաքիա:

Բացի այդ, ի տարբերություն հրեական և բողոքական տպագրությունների ուղղափառ և կաթոլիկ հրատարակություններում գետեղում են նաև ոչ կանոնական (տես Ներածություն, § 6) գրքեր: Մարգարեական գրքերի ժողովածուն երկու մասի (Մեծ և Փոքր մարգարեններ) բաժանելը կապված է գրքերի ծավալի հետ:

2. Հնգամատյանն այդպես է կոչվում, որովհետև հինգ գրքի է բաժանված: Թորա անունը նշանակում է ուսմունք, խրատ (Աստծուց տրված): Եբրայական բնագրում հինգ գրքերից չորաքանչյուրը հին արևելյան սովորույթի համաձայն վերնագրված է դրա առաջին բառով: Հունական թարգմանություններում այդ գրքերը հետևյալ անվանումներն ունեն. 1) Մենդոց, 2) Ելք, 3) Ղևտական, 4) Թվեր, 5) Երկրորդ Օրենք:

Հնգամատյանն սկսվում է աշխարհի և մարդու արարչության, պատմության առաջին ժամանակների համառոտ պատումով, այնուհետև խոսվում է Աբրահամի և Աստծու ժողովրդի մյուս նահապետների, Մովսեսի մասին, որն Իսրայելը հանեց եգիպտական ստրկությունից, ինչպես և Իսրայելացիների

¹ Հայերենը նույնպես – իսկ:

անապատական դեգերումների մասին: Այս ամենն ասես պատմական շրջանակ է ծառայում՝ կրոնական, բարոյական և իրավական օրենքների ժողովածուին, որ Մովսեսը նորից կրկնեց Ավետյաց երկրի շեմին:

Օրենքը տրվել է Իսրայելի հետ Ուխտը կնքելիս: Ուխտի իմաստն այն է, որ Արարչի ընտրյալ մարդիկ Նրան պիտի սիրեն ամբողջ սրտով (Բ Օր. 2 4-5) և Նրա կամքը կատարելով՝ լինեն Նրա «սպասավորները» (Ելք ԺԹ 6). սա կանխապես համընկնում է Քրիստոսի բառերին. «Եթէ սիրէք զԻս զպատուիրանս Իմ պահեսչիք» (Յովհ. ԺԴ 15): Յածր բարոյական գիտակցութեան ժողովրդի դաստիարակութեան համար ասվում են սպառնալից խոսքեր զանցառուններին (Բ Օր. ԻԸ 15 և հաջ.): Բայց դա միայն Հին Կտակարանին չի վերաբերում: Աստուծու ճշմարտութեան անկարելի է ոտնահարել, այստեղից՝ Քրիստոս Փրկիչի խիստ կշտամբանքները (Մատթ. ԺԸ 6, ԻԳ 13 և հաջ., ԻԵ 30, 41):

3. Պատմական գրքերը ներկայացնում են Իսրայելի բնակեցումը Քանանում, պատերազմները հարևան ժողովուրդների և նվաճողների դեմ՝ քոչվորների և փղշտացիների, խոսում ցեղական դաշինքների շրջանի, դատավորների կառավարման և միապետության հաստատման մասին: Հետո նկարագրվում է Իսրայելի թագավորության բարգավաճումն ու անկումը, նրա բաժանումը երկու միապետության (Հյուսիսային և Հարավային): Պատմվում է այդ ժամանակների արքաների և մարգարեների, Հյուսիսային թագավորության կործանման մասին, նկարագրվում է Երուսաղեմի ավերումը քաղդեացիների ձեռքով և Բաբելոնյան գերության սկիզբը: Գրքերի այս շարքն ավարտվում է Քրիստոսից առաջ 2 դարի դեպքերով: Եվ այն, որ հրեական ավանդության մեջ այս ժողովածուն Մարգարեական գրքերի կարգն է դասվում, ամենևին պատահական չէ: Դրա հեղինակներն ու կազմողները միտված չէին սոսկ պատմությունն անկողմնակալ շարադրելու և մարգարեների նման ազդարարում, խրատում ու սովորեցնում էին ժողովրդին՝ կիրառելով անցյալի օրինակները: Պատմական գրքերի հիմնական գաղափարն Ուխտի մարգարեությունների իրականանալն է: Եթե մարդիկ արժանի չեն Աստուծու բարյացկամությանը, նրանք անպաշտպան կմնան ներքին և արտաքին վտանգների առջև:

4. Մարգարեական գրքերն ամփոփում են Տիրոջ՝ Իսրայելին և աշխարհին ուղղված խոսքը, որ հաղորդվում է աստվածային Հոգով առկեցուն անձանց՝ մարգարեների միջոցով: Նրանց քարոզն ուղղված է Ուխտի կրոնական և բարոյական եղծումների դեմ, լուկ ծիսական արարողությունների և եկեղեցական ձևական արարողությունների դեմ: Մարգարեները կանխատեսում էին Աստուծու Թագավորության գալուստը, երբ Արարչի կամքը կհաղթանակի աշխարհում: Այդ Թագավորության գլուխը կլինի Մեսիան

(Քրիստոս), որի կերպարը մշտապես ուրվագծվում է մարգարենների քարոզներում (հատկապես Եսայու): Մարգարենները (Երեմիա և Եզեկիել) կանխատեսեցին Նոր Ուխտի հաստատումը, որ տարբեր է Հնից:

5. Ուսուցողական գրքերը, բացի Հոբի գրքից, օգտագործվում էին տաճարական պաշտամունքների և տոնական արարողությունների ժամանակ: Դրանց մեծ մասն գրվել է բիբլիական իմաստունների կողմից, որոնք անդրադարձել են մարդկային կյանքի այլևայլ կողմերին. սեր և ընկերություն, աղոթք և վարվեցողություն, աշխատանք և իմացություն, անմեղ մարդու տառապանքի և մահվան գաղտնիքներ: Այս գրքերի նպատակն է ցույց տալ, որ իրական կյանքի մեկ ճանապարհ՝ կա՝ խոնարհ ընթացք Աստծու ամենատես հայացքի ներքո:

6. Ոչ կանոնական և պարականոն գրքեր (կաթոլիկները սրանք անվանում են երկրորդականոն)*, որ ներառված են ուսական Աստվածաշնչում.

I. Պատմական գրքերը.

1. Բ Եզր
2. Ա-Գ Մակաբայեցիներ
3. Մանասեի աղոթքը (Բ Մնացորդաց վերջ)

II. Մարգարեական գրքեր

1. Երեմիայի թուղթը²
2. Բարուք
3. Գ Եզր
4. Դանիելի առանձին գլուխներ:

III. Ուսուցողական գրքեր

1. Տոբիթ
2. Հուդիթ
3. Սողոմոնի իմաստություն
4. Սիրաքի որդի Հեսուի իմաստությունը
5. ՃԾԱ սաղմոս
6. Հավելումներ Եսթերին:

Կաթոլիկները Գ Մակաբայեցիների գիրքը համարում են պարականոն: Բողոքականները ոչ կանոնական գրքերը բնորոշում են պարականոն անվամբ:

7. Զինկտակարանյան կանոնի պատմությունը. Հինկտակարանյան կանոնը միանգամից չի ձևավորվել: Ամբողջ ժողովուրդը (կամ նրա մի մա-

* Հայ Եկեղեցում նույապես անվանում են երկրորդականոն:

² Կաթոլիկ հրատարակություններում այն Բարուքի գրքի վերջին գլուխն է, օրթոդոքս ավանդույթում՝ առանձին է. – Շան. թարգմ.:

սը) Մովսեսի Օրենքն անվերապահորեն սրբազան էր համարում (ինչ ծավալով էլ որ տրված լինեին): Երբ Օսեե թագավորի օրոք 622 թ. Տաճարի գաղտնարանում գտան Օրինաց գիրքը (Դ Թագ. ԻԲ 23), այն հայտարարվեց քաղաքացիական և կրոնական օրենսգիրք համայն Իսրայելի համար: Ք. ծ. ա. Ե դարում Նեեմիան և Եզրասը վերածնեցին ու բարեփոխեցին Երկրորդ Տաճարի Համայնքը, որն անկման էր հասել: Եզրասը Բաբելոնից բերեց Օրենքի գալարները (այժմյան Հնգամատյանը), կարդաց ժողովրդի առջև և մեկ անգամ ևս հանդիսավորապես հաստատեց այն իբրև Աստծու խոսք: Մոտավորապես Ք. ծ. ա. 190 թ. Սիրաքի որդի Հեսուն թվարկելով Աստվածաշնչի գրքերը՝ արդեն հիշատակում է ոչ միայն Օրենքն ու Պատմական գրքերը, այլև մարգարեների ժողովածուն՝ բացի Դանիելի գրքից (Սիր. 44-49): Հեսուի թոռը, որ նրա գիրքը թարգմանեց հունարեն մոտ 130 թ., խոսում է Աստվածաշնչի բոլոր երեք բաժինների՝ Օրենքի, Մարգարեների և «Մնացած գրքերի» մասին (այսինքն՝ םִיכֹּתֵינוּ, կամ գրքերի մասին. տես նրա՝ Սիրաքի առաջաբանը, որ պահպանված է միայն սլավոններեն թարգմանությամբ): Ք. ծ. հ. առաջին դարի վերջին Պաղեստինյան Եամնիա քաղաքում երկար վեճերից հետո ուսուցիչները հաստատեցին գրքերի ցանկը: Այժմ ամբողջ կանոնն ամփոփում էր պայմանական հաշվումով 22 գիրք (եբրայական այբուբենի տառերի թվով): Այս կանոնն ունի նաև Հովսեպոս Փլավիոսը, որ ստեղծագործում էր Ա դարի վերջին (Ընդդեմ Ապիստոսի, I, 8): Պայմանական այդ թիվն ստացվեց այնպես, որ որոշ զույգ գրքեր՝ Հոռթ և Դատավորաց, Երեմիայ և Ողբ, Եզր ու Նեեմի, մեկական հաշվեցին:

Երկրորդ դարում Մելիտոն Սարգիսցին (Նամակ Օնեսիմոսին), թվարկելով Հին Կտակարանի՝ Եկեղեցու ընդունած գրքերը, անվանում է միայն կանոնականները: Զորրորդ դարում սուրբ Աթանաս Մեծը գրում է՝ «Հին Ուխտի բոլոր գրքերի թիվը 22 է, քանզի, ինչպես լսել եմ, հրեաների տառերը ևս այդքան են»: Նույն թիվն են մատնանշում նաև Սբ. Կյուրեղ Երուսաղեմացին (Կոչումն ընծայության, 4, 35), սուրբ Եպիփան Կիպրացին (Ընդդեմ աղանդների, VIII. 6) և ուրիշներ: Այսպիսով, առաջին երկու տիեզերական ժողովների դարաշրջանում Եկեղեցին վերջնականորեն ընդունեց հինկտակարանյան (հրեական) կանոնը:

8. Կանոնից դուրս գրքեր և պարականոններ: Այս ամենին զուգընթաց տարագիր համայնքների, այսինքն՝ Պաղեստինի սահմաններից դուրս բնակվող հրեաների ավանդույթյան մեջ բիբլիական գրքերի քանակը նշանակալիորեն ավելի էր: Քրիստոսի ծննդյան ժամանակ այդ հավելյալ գրքերն արդեն միայն հունարեն թարգմանությամբ կային, իսկ մի մասը (օրինակ՝ Սոդոմոնի իմաստության գիրքը) գրված էր հունարեն: Այդ գրքերը Եամնիի¹ կանոն

¹ Հին Ուխտի կանոնը, որ ձևավորվել էր Ա դարի վերջին Հոպպեի (Հայթա) մերձակայքում՝ 3-Ա. ՄԵՆ, ՆԵՐԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

չմտան (տեն վերևը, կանոնից դուրս գրքերի ցանկը), քանի որ սփյուռքի համայնքներն աստիճանաբար էին ենթարկվում Յամնիի խորհրդին: Եվ քանի որ քրիստոնեական Եկեղեցին կար Եամնիայի կանոնի կազմությունից առաջ, այն ազատորեն օգտվում էր և պարականոն գրքերից: Սուրբ Հայրերն այդ գրքերը դիտում էին որպես «օգտակար և բարեբեր» (Սուրբ Եպիփան), իբրև «խրատի համար ընթերցվող» (Սուրբ Աթանաս): Բայց արևմտյան քրիստոնյաներն Օգոստինոս Երանելու ազդեցությամբ ոչ կանոնական գրքերին ավելի մեծ նշանակություն էին տալիս, քան Արևելքում և անվանում էին երկրորդականոն: Դա արտացոլվեց Աֆրիկյան ժողովների որոշումներում. Գիպոնյի (393 թ.), Կարթագենի երկու (397 թ., 419 թ.), հետագայում՝ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Տրիդենտյան ժողովում (1546 թ.):

Ուղղափառ և կաթոլիկ ավանդությունները պարականոն¹ են անվանում ուշ շրջանի գրքերը, որոնք ի հայտ են եկել Ք. ծ. ա. Բ դարից Ք. ծ. հ. Ա դար ընկած միջոցում. 1) (Գ Մակաբայեցիներ՝ կաթոլիկների շրջանում) Դ գիրք Մակաբայեցիների, 2) Ենոքի գիրքը, 3) Հոբեյանների գիրքը, 4) Սողոմոնի սաղմոսները, 5) Մովսեսի համբարձումը, 6) Բարուքի հայտնությունը, 7) Սիրիլյայի մարգարեությունների մի մասը, 8) Տասներկու նահապետների կտակը, 9) Կումրանյան գրականության նորագյուտ երկերը: Այս գրքերը շատ բանով շեղվում են աստվածաշնչական ուսմունքի հիմքերից:

Հարցեր կրկնության համար

1. Եբրայական աստվածաշունչն ինչ մասերի է բաժանվում:
2. Ինչ գրքերից է բաղկացած Հնգամատյանը:
3. Ո՞րն է Հնգամատյանի հիմնական բովանդակությունը:
4. Ինչ ասել է «Հին մարգարեներ»:
5. Թվարկեցե՞ք Հին Կտակարանի Պատմական Գրքերը:
6. Ո՞րն է դրանց հիմնական բովանդակությունն ու իմաստը:
7. Ինչպես են բաժանվում Մարգարեական Գրքերը:
8. Թվարկեցե՞ք Մարգարեական Գրքերի վերնագրերը:

Յամնիայում (Յավնե), հրեական աստվածաբանների շրջանում, որոնք այստեղ դպրոց էին հիմնել Իսրայելի անկումից հետո՝ 70 թվականին: Քրիստոնեական Եկեղեցին հինկտակարանյան գրքերն ընդունեց Ալեքսանդրիայի ու Յամնիայի կանոնների համադրությամբ. – *Շան. ռուս. խմբ.*:

¹ Հունարեն ἀπόκριφος (ապոկրիֆոս) բառը նշանակում է գաղտնի, ծածուկ: Առաջին անգամ օգտագործել է Կղեմես Ալեքսանդրացին (Ստրոմատիս, III, 4): Գրքերն ապոկրիֆ (պարականոն) են կոչվել երկու պատճառով. 1) դրանք պարունակում էին գաղտնի ուսմունք, 2) դրանք Եկեղեցում լայնորեն ընդունված չեն եղել և պահպանվել են հերձվածողների ու հերետիկոսների շրջանում:


Հերոնիմոս Երանելին (մոտ. 342–420) ապոկրիֆ է անվանում եբրայական կանոն չմուծված գրքերը: Դրանք կան հունական ու լատինական սուրբ գրքերի ժողովածուներում և առաջարկվում են ուսուցողական ընթերցանության համար – *ռուս. հրատ. խմբ.*:

9. Ի՞նչ էին սովորեցնում մարգարեները:
10. Ի՞նչ են ներառում Ուսուցողական Գրքերը:
11. Թվարկեցե՞ք ոչ կանոնական գրքերը:
12. Ի՞նչ բան է Սուրբ Գրքի կանոնը:
13. Ե՞րբ է ավարտվել Հին Ուխտի կանոնը:
14. Ի՞նչ են պարականոնները:

§ 6. Աստվածաշնչի բնագրերը, թարգմանությունները և հրատարակությունները

1. **Հինկտակարանյան հնագույն բնագրերը** գրվել են *փյունիկյան այբուբենով*: Դրանց նմուշները գտնվել են թագավորների դարաշրջանի Պաղեստինում (Օրացույց Գեզեթից, Եգեկիեյի արձանագրությունը, նամակներ Լաբեսից, կնիքներ, Մոսայի արձանագրությունը): **Սակայն Հին Կտակարանի հնագույն ձեռագրերը վերաբերում են Ք. ծ. ա. վերջին դարերին**: Նեշի պապիրուսը (Տասնաբանյա պատվիրաններ, Ել. Ի 2-17 կամ Բ Օր. Ե 6-21 և «Լսիր, Իսրայել» աղոթքը, Բ Օր. 2 4-6) **Քրիստոսից հետո 150 թ.** (Եգիպտոս) **և Եսայիի գրքի կաշվե գալարը՝ գտնված Կարմիր ծովի մոտ** (Կոււմրան)՝ **առաջին քարանձավում**): Բացի այդ, կան նաև պատառիկներ **Կոււմրանից** (Հին Կտակարանի գրեթե բոլոր գրքերը, բացի Եսթերից): **Դրանք գրված են արդեն եբրայական քառակուսի այբուբենով**: Եբրայական Աստվածաշնչի առավել վաղ ամբողջական բնագրեր մեզ հասել են **Թ և Ժ դարերից** (Թորայի լոնդոնյան ձեռագիրը, մարգարեների բաբելոնյան ձեռագրերը, Յալեայի ձեռագիրը): **Հին Կտակարանի հունարեն թարգմանության հնագույն ընդօրինակությունները ներկայացված են Սինայական և Վատիկանի կոդեքսներով** (Դ դար): Համանուն ձեռագիրը գտնվեց Սինայի սուրբ Կատարինե վանքում ուս արևելագետ Պորփյուր (Ուսպենսկի) եպիսկոպոսի ջանքերով (1804-1885): Հետո այդ ձեռագիրը հրատարակեց գերմանացի գիտնական Կոստանդին Տիշենդորֆը (1815-1874) Ռուսաց կառավարության աջակցությամբ, բայց Պորփյուր եպիսկոպոսը գիրքը հայտնաբերել ու ժամանակը ճշտել էր մի քանի տարի առաջ (տե՛ս Архим., ныне еп. Агафангел. Епископ Порфирий Успенский. – ЖМП, 1975, н. 5, 6):

2. **Հին Կտակարանը պատմության մեջ առաջին գիրքն է՝ թարգմանված օտար լեզվով**: Այդ լեզուն հունարենն էր, որ Քրիստոսի ծնունդից հետո Դ դարում դարձավ միջազգային: Հին թարգմանություններն աստվածաշնչագիտության համար քիչ դեր չեն կատարում, քանի որ օգնում են ճշգրտելու սկզբնական բնագիրը:



Եզեկիա թագավորի արձանագրությունը Սիլովամի ջրանցքի փորելու մասին Երուսաղեմում VIII դ. Ք. ծ. ա. (նմուշը գրված արամեական այբուբենով, որն կիրառում էին սբ. հեղինակները մինչ Գերությունը)

3. Թարգումներ: Հունական սինագոգային թարգմանություններից առաջ կային Հին Կտակարանի փոխադրություններ արամեական խոսակցական լեզվի, որ թարգում անունն են կրում: Այդպիսի առաջին բանավոր թարգմանությունները նախաձեռնվել են տակավին Ք. ծ. ա. հինգերորդ դարում, Եգրասի (Նեեմ. Ը 8) ժամանակ, քանի որ ժողովուրդն արդեն վատ էր հասկանում հին եբրայական լեզուն: Հնգամատյանի՝ մեզ հասած հնագույն թարգումն ստեղծել է հրեա Օնկելոսը՝ Քրիստոսից հետո Բ դարում: Այս և մյուս թարգումներն այնքան թարգմանություն չեն, որքան մեկնողական ազատ վերապատմում: Թարգումներն ստեղծվել են Պաղեստինում և Բաբելոնում (Հովնաթան բար Ուզիելի՝ Մարգարեների թարգում, Հնգամատյանի՝ Երուսաղեմի թարգումը ևն) ընդհուպ մինչև Քրիստոսից հետո է դար:

4. Յոթանասնից (Սեպտուագինտա): Հին Կտակարանի ամենավաղ և միակ մինչքրիստոնեական հունարեն թարգմանությունը կատարվել է Ալեքսանդրիայում: Այն կոչվում է Սեպտուագինտա կամ Յոթանասնից թարգմանություն (LXX): Այդ անվանումը կապված է «Արիստեսոսի թուղթ» խրատաջատագովական գրքում պահպանված ավանդազրույցի հետ (ռուս. թարգմ. դրված է իբրև Հովսեպոս Փլավիոսի «Հրեական պատերազմ»-ի թարգմանության հավելված 1787 թ.):

Մոտավորապես Ք. ծ. ա. 200 թ. գրված նամակը պատմում է հետևյալը.

Եգիպտոսի հույն արքա Պտղոմեոս Բ Փիլադելփոսը (285-246 Ք. ծ. ա.) վճռեց իր վիթխարի գրադարանը համալրել և ավանդապահ Դմիտրիի խորհրդով հավելել տվեց «Հրեաների օրենքները»: Այդ գաղափարն իրականացնելու համար նա պատվիրակություն ուղարկեց Երուսաղեմ՝ խնդրելով թարգմանիչներ ուղարկել: Եղիազար քահանայապետը տասներկու ցեղերից վեցական այր տվեց: Այդ յոթանասուներկու իմաստունները ժամանեցին

Ալեքսանդրիա և յոթանասուներկու օրում հունարենի փոխադրեցին ամբողջ Հնգամատյանը: Նրանք աշխատում էին Փարոս կղզում, միմյանց հետ չհաղորդակցվելով, բայց բոլորի թարգմանությունը նույնական էր:

Այս ավանդությունը հաղորդում է Թալմուզը, և երկրորդում են Փիլոն Ալեքսանդրացին, Հովսեպոս Փլավիոսը, Սբ. Հուստինոսը, Կղեմես Ալեքսանդրացին և Իրենեոս Լիոնացին: Սակայն արդեն Հերոնիմոս Երանելին (Против Руфина, Բ, 25) «Թղթի» հաղորդած մանրամասները համարում էր առասպելական: Ըստ երևույթին Հին Կտակարանի թարգմանության համար խթան է հանդիսացել հրեական համայնքի՝ Գրքի հունարեն տարբերակ ունենալու կարիքը, քանի որ նրանցից շատերը մայրենի լեզուն վատ էին հասկանում: Այսպիսով Յոթանասնիցը բավարարում էր Ալեքսանդրիայի հրեական մեծ գաղութի պահանջները: Արիստեոսը խոսում է միայն Օրենքի թարգմանության մասին: Ավելի ուշ թարգմանվեցին նաև Հին Կտակարանի մնացյալ գրքերը: Ամբողջ աշխատանքն ավարտվել է երկրորդ դարի կեսին (ինչպես դա երևում է Սիրաքի առաջաբանից):

Յոթանասնիցը պահպանվել է մի քանի տարբերակով: Դրա քննական հրատարակությունն իրականացրել է Ալֆրեդ Ռալֆսը (1935): Յոթանասնիցը հետևյալ հատկանիշներն ունի.

ա. գրված է այն ժամանակ ամենագործածական հունարեն բարբառով՝ կոյնե,

բ. նրա շարահյուսությունը եբրայաբանություններ ունի (այսինքն՝ եբրայական բնագրի ազդեցություն),

գ. թարգմանության ձեռագրերում Աստծու սուրբ անունը նշանակված է եբրայական տառերով,

դ. եբրայական անուններն ու անվանումները հաղորդված են հունական տառադարձությամբ, որոնք խիստ տարբերվում են եբրայականից (օրինակ՝ Մոշե - Մովսես, Շմուել - Սամուիլ, Աթալիա - Գոֆոլիա, Օմրի - Ամվրի, Բեթլեհեմ - Վիֆլիեեմ, Բէէր-Շեւա - Բերսաբիա):

ե. թարգմանությունն արված է բնագրից, որ տարբերվում է Մասորեստյան բնագրից (տես հտ. Ա, 1 § 8): Կումրանի ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Հին Կտակարանում եղել է մի քանի ձեռագրական ավանդություն, դրանցից մեկից օգտվել են Յոթանասնիցի թարգմանիչները: Դա պարզել է դեռևս Որիգենեսը, որ օգտվել է Մասորեստյանին լիովին համընկնող եբրայական բնագրից:

զ. թարգմանության որոշ տեղեր կրում են մեկնության հետքեր, որ արդյունք են այն պայմանների, որոնց պարագային ստեղծվել է Յոթանասնիցը: Օրինակ.

ԿՏՈՐ ՆԻՄՈՆՈՅԻԸ
 ԲՄՆՈՅՐԻՆՔ ԿԱԻՄԱՆ ԳԻՆ
 ԶԻՆ ԿՅԿԼԱՎ ԱՅԻՆՔ ԹՅՂԻՔ
 ԲՄՆԱԼԱՏ ՓՅԱՆԻՏՈՆ ՍԵՐԵ
 ԽՍՆՈՆՔ ԵՔ ԿՅԿԼԱՎ ԵՔ ՏԵՐ
 ԱՏՏՈՅ ԿԱԻՏԱՆ ԻՍՊԱՏՏՈՅՍՅ
 ԿԵԿՈՄԻՑԱԻՆՅՏԱՏ ԼՈՂԵԻԿԵ՝
 ԿԱԻՆՈ՝ ԽՍՈՆՏՈՒԿԼՈՎ ՏԵՐՈՒՆ
 ՏԱՏՈՎ ՏԻՄՈՎ ՏԵՐՆՅՏՈՒՆ
 ՍԱՐԱՅԻՆԻՏԻՆ ԴԻՔՈՒՆԿԻՆՈՎ
 ԿԱԻՆՈՆՔ ՏՈՄԱՆ ԵՂՈՒՆՔ ԴԻ
 ԱՅԻՆԿԻՆՈՎ ՅՏԻՆ ՏԵՐԱՏՈՅԵՐԻ
 ԻՄԵՐԱՆԻՆ ԼԻՏԻՆՏՈՍ ՏՈՅ ԿԱՆ
 ՆԱՏՈՒՆՔ ՏՈՒՆ ԴԻՔՈՒՆԿԻՆՈՎ
 ՈՒՆԿԻՆՈՆՔ ՏՈՒՆ ՏԻՆՈՎ ՏՈՅ
 ԿԱԻՏՏԱՆՈՎ ՏՈՒՆ ՏՈՒՆ
 ԱՎԵՐԻՆ ԵՐԱՏՈՒՆ ԴԻՔՈՒՆ
 ՍԵՐՏՆՈՒՆ ԵՐԱՏՏՈՅ ՏՈՒՆ
 ՈՒՆՏԵՐ ԿՏՈՅ ԿԱԻՆՈՎ ԱՅԻՆ
 ՏՈՒՆՔ ԻՆ ԿՈՎՈՒՆԻՆ ԿԱՅԻՆ
 ԴԻՔՈՒՆԿԻՆՔ ՏՈՒՆ ԿԱԻՆՈՎ
 ԵՂՈՒՆՔ ԴԻՔՈՒՆԿԻՆՈՎ ՅՏԻՆ
 ԵՐԱՏՈՅ ԿԱԻՆՈՎ ՍԵՐՏՆՈՒՆ
 ԿՏՈՒՆՔ ՏՈՒՆ ՏՈՒՆ ՏՈՒՆ

Սեպտուագինտա: Հին Կտակարանի հունարեն թարգմանությունը: 26ստեր Բիտոսի պապիրուսը (Գ դարի առաջին կես), Եգեկ. ԺԶ 57-ԺԷ 1 համարներ

1. Թարգմանությունը մեղմացնում է Հին Կտակարանի որոշ արևելյան անտրոպոմորֆիզմները (մարդակերպություններ):

«Աստծուն մի՛ վատաբանիր» (եբր. לֹא יִרְאֶה אֱלֹהִים - ԷԼՈՂԻՄ ԼՈ ՏԵԿԱԼԵԼ) (Ել. ԻԲ 28, Յոթանասնիցի՝ 27) դարձվածը փոխադրված է՝ «աստվածներին մի՛ վատաբանիր»¹, և դրանով շրջակա հեթանոսների նկատմամբ կրոնական հանդուրժողության կոչում:

Յոթանասնիցն իր կազմով տարբերվում էր հինկտակարանյան գրքերի պաղեստինյան հավաքածուից: Նրա մեջ մտել են նաև պարսկաևոն գրքեր: Յոթանասնիցը համընդհանուր ճանաչում ստացած թարգմանություն համարվեց քրիստոնեական եկեղեցում: Դրանից քաղվածքներ էին անում առաքյալները, ավետարանիչները և Սուրբ Հայրերը: Այդ պատճառով հրեաները ձեռնարկեցին սեփական թարգմանություններ:

¹ Լույնն է Լաև գրաբարում՝ *2աստուածս քո մի՛ բամբասիցես* – խմբ.:

5. Ակյուղասի թարգմանությունը: Ենթադրվում է, որ թարգումի կազմող Ակյուղասը և Օնկելոսը նույն անձն է (տես վերը, կետ 3): Նա ծագումով պոնտական Սինոպից էր: Ապրել է Քրիստոսից հետո Բ դարի առաջին կեսին: Հեթանոսությունից նա դարձավ հրեություն: Զգտելով Յոթանասնիցին հակադրել բառացի թարգմանություն՝ նա ստեղծեց տողացի նույնական թարգմանություն, անտեսելով հունարենի օրենքները: Այս թարգմանությունը պահպանվել է լոկ ոչ մեծ հատվածներով:

6. Թեոդոտիոնի թարգմանությունը: Թեոդոտիոնը (կամ Թեոդոսիոն) ծնունդով Եփեսոսից է և ապրել է Բ դարի կեսերին: Նա քրիստոնյա էր, բայց, ինչպես հայտնում է Հիերոնիմոս Երանելին, հուդայամետ կուսակցությունից էր: Թարգմանչի խնդիրը եղել է այն, որ ուղղեր և լրացներ Յոթանասնիցը: Թեոդոտիոնի թարգմանությունը պահպանվել է հատվածներով: Դրանից օգտվել են հին Եկեղեցու շատ սուրբգրագետներ:

7. Սիմաքոսի թարգմանությունը: Սիմաքոսը հրեա էր, թեպետ ոմանք նրան համարում են քրիստոնեա-էթիոնիտ: Նրա թարգմանությունը՝ կատարված Բ դարի վերջին, գրական տեսակետից առավել կատարյալ է: Նա օգտվել է Մասորեստյանին հարազատ մի ձեռագրից՝ աշխատելով մեղմել Յոթանասնիցի հրեաբանությունները: Սիմաքոսի աշխատանքը ոչ հրեական, ոչ քրիստոնեական միջավայրում չհանրայնացավ և պահպանվել է միայն հատվածներով:

Հիշված հին հունական թարգմանությունները համատեղվեցին Որոգինեսի «Աեղեջեան» գրքում: Այստեղ անվանի հին աստվածաշնչագետը զուգադրել է սյունակներով՝ ա. եբրայական բնագիրը, բ. դրա տառադարձությունը հունական գրերով, գ. Ակյուղասի թարգմանությունը, դ. Սիմաքոսի թարգմանությունը, ե. Յոթանասնիցը, զ. Թեոդոտիոնի թարգմանությունը: Ավելի ուշ այդ վեց սյունակին ավելացրել է Հին Կտակարանի ևս երեք տարբերակ:



Պեշիտտա: Սբ. Գրքի ասորերեն թարգմանությունը (Ելք 13, 8-17): Մագաղաթյա ձեռագիր, Սիտրիական անապատ, 464 թ.:

8. Ասորերեն թարգմանություններ: *Ասորեստանն ու Հյուսիսային Միջագետքը հնուց ի վեր եղել են ինչպես հրեական, նույնպես և հետագայում քրիստոնեական համայնքների կարևորագույն կենտրոն: Այդ է պատճառը, որ Հին Կտակարանի ասորերեն թարգմանությունները շատ շուտ հայտնվեցին: Անվերապահ ընդունված ասորերեն թարգմանությունը կոչվում է Պեշիտտա (պարզ, հասարակ): Պեշիտտայի ծագման ժամանակը ստույգ պարզված չէ: Հստ երևույթին Հնագմատյանը թարգմանվել է Քրիստոսի ծննդից հետո Ա դարում, իսկ մյուս գրքերը Բ-Գ դարերում: Այս թարգմանությունից հնագույն քաղվածքները հանդիպում են Ափրահատի¹ երկում: Այդ թարգմանությունը հիմնականում մերձ է Մասորեստան ավանդույթները: Թարգմանության մի մասը կատարել են հրեաները, մի մասը՝ քրիստոնյաները: Կան և մի շարք այլ ավելի ուշ ասորերեն թարգմանություններ:*

9. Լատիներեն թարգմանություններ. Վուլգատա: *Սկզբնական Իտալական կամ հին լատինական թարգմանությունը Յոթանասնիցի բնագրից էր: Ժամանակ անց հարկ եղավ կատարելու դրա լիակատար վերաքննությունը հին եբրայական բնագրի հիման վրա: Այդ գործը նախաձեռնեց Հերոնիմոս Երանելին (մոտ. 342-420): Ապրելով Պաղեստինում, նա ուսումնասիրել է եբրայեցիները և իրենից առաջ եղած բոլոր թարգմանությունները: Տասնհինգամյա աշխատանքով՝ խմբագրված թարգմանության փոխարեն հայտնվեց կատարելապես նոր լատիներեն թարգմանությունը, որն ընդունված է անվանել Վուլգատա (Vulgata Editio – համընդունված հրատարակություն): Թեև Վուլգատան գրված չէ դասական լատիներենով, սակայն աչքի է ընկնում գեղարվեստական բարձր ոճով ու ճշգրտությամբ: Տասնվեցերորդ դարի կեսերից Վուլգատան փաստացի դարձավ Հռոմեական Եկեղեցու միակ ընդհանուր-եկեղեցական թարգմանությունը:*

10. Այլ հին և միջնադարյան թարգմանություններ: *Բացի նշված հիմնական թարգմանություններից՝ եղել են նաև Ղպտիական, Եթովպական, Հայկական, Գոթական, Արաբական և այլ փոխադրումներ՝ պահպանված կամ ամբողջական, կամ հատվածական: Դրանց երևան գալը ցույց տվեց, թե որքան լայնորեն է տարածվել Աստվածաշունչը ժողովուրդների մեջ, Աստծու Խոսքը մատուցելով ազգային լեզուներով, ձևավորելով նրանց եկեղեցական ու մշակութային կյանքը:*

11. Գլուխներն ու տողերը Հին Կտակարանում: *Սկզբնապես Սուրբ Գիրքը բաժանված չէր գլուխների ու տողերի: Միայն ԺԳ դարում Քենթրբերիի արքեպիսկոպոս Ստեփան Լենգթոնը (1115-1228) գիրքը հարմար օգտագործե-*

¹ *Ափրահատ Ասորի* (ըստ այլոց՝ Պարսից իմաստասեր) (270/280-345) – քրիստոնյա մատենագիր, որ գիտական հանրությանն առավելաբար ծանոթ է իր երկերի հայերեն թարգմանություններով. մակրամասն տե՛ս Գ. Չարբահալյան, Մատենադարան հայկական թարգմանութեան, Վենետիկ, 1889, էջ 20-46. – Ծան. թարգմ.:

լու նպատակով հնարեց գլուխների համակարգը, որը պահպանվեց մինչև մեր օրերը: 1240-ին կարդինալ Հուգո Սեն-Շերացին գլուխները բաժանեց ենթագլուխների, բայց 1551 թ. Ռոբեր էտիենի Նոր Կտակարանի ժնկյան հրատարակության մեջ ենթագլուխները փոխարինվեցին համարակալած տողերով:

12. Եկեղեցալավոնական թարգմանություն: Ը-Թ դարերում քրիստոնյա ժողովուրդների ընտանիքին սկսեցին միանալ սլավոնական ցեղերը: Աշխարհագրական առումով նրանք գտնվում էին եկեղեցաքաղաքական և մշակութային ազդեցության երկու ոլորտներում՝ Բյուզանդիայի և Հռոմի: 862 թ. Մեծ Մորավիայի Ռոստիսլավ իշխանը, որ ընդդիմանում էր գերմանական ճնշմանը, դիմեց Բյուզանդիայի Միքայել Գ կայսրին՝ խնդրելով հույն եպիսկոպոս և կրոնավորներ ուղարկել: Երկու տարի անց Բյուզանդիայից Մորավիա ժամանեցին միսիոներներ՝ առաքելահավասար սբ. Կոստանդինը (կրոնավոր ժամանակ Կյուրեղ-Կիրիլ) և սբ. Մեթոդիոսը: Եղբայրները ծնվել էին Սալոնիկ քաղաքում (Θεσσαλονίκη - Թեսաղոնիկե) և բազմակողմանի փայլուն կրթություն էին ստացել: Կոստանդինը գրադարան էր ղեկավարում և փիլիսոփայություն դասավանդում: Հատկապես լայն էին նրա բանասիրական իմացությունները: Ժամանակի պատկերացմամբ նա իսկական բազմալեզու էր: Բալկանյան թերակղզին այն ժամանակ նշանակալիորեն բնակեցված էր սլավոնական շերտով, և Կոստանդինը լավ յուրացրեց նրանց լեզուն: Հենց դրանով էր որոշված նրա ընտրությունն իբրև սլավոնական առաքյալ:

Բյուզանդիայում Սուրբ Գիրքը կարդում էին Յոթնասնիցի տարբերակով, իսկ արևմտյան երկրներում՝ Վուլգատայի: Թե՛ մեկը, թե՛ մյուսը հասկանալի չէին սլավոնների համար: Ուստի եղբայրների առջև ծառայելով իրենց նոր հոտի համար պաշտամունքային և սուրբգրական բնագրեր թարգմանելու հարցը: Դեռևս հիսունական թվականներին Կոստանդինն իբրև քարոզիչ գնաց Բուլղարիա, Սիրիա ու խազարների երկիրը և համոզվեց, թե որքան կարևոր է նորադարձների համար ունենալ Սուրբ Գիրքը մայրենիով: Այդ նպատակով նա կազմեց սլավոնական այբուբենը, կիրառելով հունական և եբրայական տառերը¹:

Սուրբ Գրոց առաջին թարգմանությունը սլավոներեն, ավելի ստույգ հին բուլղարերեն, շատ բողոքների տեղիք տվեց: Կոստանդինին ու Մեթոդիոսին մեղադրում էին, թե նրանք դուրս են եկել երեք սրբազան լեզուների սահմանից, իբր որոնցով միայն կարելի է կարդալ Սուրբ Գիրքը (եբրայեցերեն, հունարեն և լատիներեն): Ի վերջո նորույթին հաշտվեցին թե՛ Բյուզանդիայում, թե՛ Հռոմում: Ազդիանոս Բ պապն արտոնեց սլավոնական պաշտամունքն ու

¹ Տառեր են փոխառվել ևս Մեսրոպյան այբուբենից (չ, տ, ց), այս առթիվ տե՛ս Զր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հատ. 2, էջ 294-295. Թեոդորա կայսրուհի հողվածը, հմմտ. «Ս. Էջմիածինը և հայոց գրերի գիւտի 1500 ու տպագրութեան 400-ամեակների սոսակատարութիւնը 1912-1913 թթ.». Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2019, էջ 261.- Ծան. թարգմ.:

Սուրբ Գրքի թարգմանությունը: Թեսաղոնիկեցի եղբայրներն ամենամեծ դիմադրությունն ստացան գերմանական իշխաններից ու եպիսկոպոսներից, որոնք ցանկանում էին սլավոններին պահել արևմտյան ազդեցության ներքո:

Կյուրեղի մահից հետո (869 թ.) եղբայրը շարունակեց Սուրբ Գրքի ամբողջական թարգմանությունը մինչև իր մահը (885 թ.): Ստույգ հայտնի չէ՝ ինչպիսին էր առաջին սլավոնական Աստվածաշնչի ծավալը: Սակայն անկասկած է, որ նրանք թարգմանել էին բոլոր ընթերցվածները և Սաղմոսագիրքը: Թարգմանությունը կատարվել է Յոթանասնից բնագրից: Սլավոնների լուսավորիչների աշխատանքները շարունակվեցին Բուլղարիայի Սիմեոն թագավորի (Թժ դդ.) օրոք:

13. Սլավոնական Սուրբ Գիրքը Ռուսիայում: Տակավին առաքելագոր սբ. Կոստանդինի (Կյուրեղ) վարքում հիշվում է, որ *Խերսոնոսում գտավ «Ավետարան և Սաղմոս՝ գրված ռուս գրերով»* («Ասք սլավոնական մատենագրության սկզբի մասին», Մ., 1981): Հարցը, թե դա ինչ գիր էր, գիտությունը պարզ չէ: Բայց, ինչ էլ որ լինի, Աստվածաշունչը Ռուսաստանում հայտնվել է Կյուրեղի ու Մեթոդիոսի և նրանց շարունակողների թարգմանությամբ: Չեռագիր ավանդությունների տարբերությունը շատ շուտ արտահայտվեց, որով բնագրերի ճշտում էր պահանջվում: Սուրբ բնագրի միասնականացման գործում հատկապես մեծ ներդրում ունի սբ. Գեննադի Նովգորոդցին (մահ. 1505 թ.): Գրքերի մի մասն ուղղվեց, մի մասը՝ վերստին թարգմանվեց Յոթանասնից բնագրից՝ Վուլգատայից արվող ճշտումներով (1499 թ.):

Սուրբ Գրոց համեմատության և ճշգրտման հետագա աշխատանքը ձեռնարկեց Մաքսիմ Գրեկը (մոտ. 1475–1556 թթ.), որ Աֆոնից Մոսկվա էր եկել 1518 թվականին: Բայց նրա գործունեությունն ընդհատեցին պահպանողականները՝ «գրքերի ուղղման» հակառակորդները:

Շուտով հիմք դրվեց Ռուսիայում գրահրատարակչությանը: 1564 թվականին լույս է տեսնում Իվան սարկավագ Ֆեոդորովի «Առաքյալ»-ը, իսկ 1581-ին առաջին տպագիր եկեղեցասլավոնական Աստվածաշունչը, որ հրատարակեց իշխան Կոստանդին Օստրոժսկին (Օստրոժսկու Աստվածաշունչ): Այդ հրատարակությունը Կյուրեղ-Մեթոդիոսյան բնագրերի վերարտադրություն չէր: Այն օգտվել էր Վուլգատայից, չեխերեն Աստվածաշնչից, «Գեննադիի ժողովածուի» Աստվածաշնչից, Ֆրանցիսկ Սկորինայի հրատարակած Սուրբ Գրքից և այլն: Այդ առնչությամբ ավելի ուշ ծագեց հին թարգմանությունը վերականգնելու հարցը:

Բայց Մոսկովյան առաջին Աստվածաշունչը 1663 թ. հիմնականում հենվում էր օստրոժյան հրատարակության վրա: Բնագրի վերականգնումն ըստ Յոթանասնիցի և հին սլավոնական թարգմանությունների ձեռնարկվել

է ժԸ դարում՝ Պետրոս Առաջինի օրոք: Այդ աշխատանքն ավարտվեց 1751 թվականին այսպես կոչված Ելիզավետյան Աստվածաշնչի լույսընծայմամբ:

Հին Կտակարանի վաղ սլավոնական բնագրի վերականգնումը բնավ չավարտվեց: Այդ նախաձեռնությունները հանդես եկավ Պետերբուրգի հոգևոր ճեմարանի պրոֆեսոր Ի. Ե. Եվսեևը (1868-1921), որ աշխատում էր հատուկ Աստվածաշնչական հանձնախմբում:

14. Սուրբ Գրքի ուսերեն թարգմանությունները: Պետրոսի բարեփոխումներից հետո ավելի խիստ էր զգացվում Աստվածաշունչը ուսերեն հրատարակելու պահանջը: Թարգմանության սկիզբը դրվեց Ֆիլարետ (Դրոզդով) մետրոպոլիտի (1782-1867) և 1813 թվականին հիմնված Ռուսաստանի Աստվածաշնչային ընկերության կողմից: Թարգմանվեցին Նոր Կտակարանը, Հնգամատյանը, Հեսու Նավե, Դատավորաց, Հոուլթի գրքերը, Սաղմոսագիրքը (1818-1825): Բայց դրանից հետո աշխատանքը դադարեցվեց: Կառավարությունն ու պահպանողական եկեղեցականները վախենում էին, թե նոր թարգմանությունները ժողովրդի մեջ կներթափանցի ազատասիրտության ոգին: Շուտով, դեկաբրիստների ապստամբությունից հետո, Աստվածաշնչային ընկերությունը փակվեց: Երկրորդ փորձը ձեռնարկեց աստվածաբանության դոկտոր, Սանկտ Պետերբուրգի Հոգևոր ճեմարանի պրոֆեսոր Գերասիմ Պավսկի քահանան (1787-1863): Դա «Հին Կտակարանի սրբազան գրքերը ուսերեն թարգմանելու առաջին փորձն էր, որ արվեց եբրայեցերենին ու ուսերենին կատարելապես տիրապետող գիտնականի ձեռքով» (Վ. Ա. Чистович, История перевода Библии на русский язык, СПб, 1899, էջ 206): Բայց Գ Պավսկու թարգմանությունն այնքան էր տարբերվում սլավոնականից, որ լուրջ ընդդիմություն առաջ բերեց և արգելվեց: Դրա բոլոր հրատարակություններն առգրավվեցին: Նույնպիսի բախտ վիճակվեց Ալեքսի նշանավոր միասիրտներ Մակար վարդապետի (Գլուխարյով, 1792-1847) թարգմանությանը: Միայն 1850-ական թվականներին մետրոպոլիտ Ֆիլարետի (Դրոզդով) նախաձեռնությամբ սրբազան Սինոդը վավերացրեց Աստվածաշնչի ուսերեն ամբողջական թարգմանությունը:

Սինդակական կոչված այդ թարգմանությունն ամբողջությամբ ավարտվեց 1876 թվականին: Այն հիմնականում հետևում էր եբրայական Մասոբետյան բնագրին, բայց Յոթանասնից հավելումներով, որոնք դրվում էին փակագծերի մեջ: Պահված էր եբրայական անունների հունական տառադարձությունը, իսկ Աստծու անվան փոխարեն գրվում էր «Տեր», ինչպես ընդունված էր կարգալ եբրայական ավանդությանը: Սինոդական (Սինոդալ) թարգմանությունը շատ հրատարակություններ ունեցավ: 1956 թվականին լույս ընծայեց Մոսկվայի պատրիարքությունը՝ որոշ հավելումներ և ուղղումներ կատարելով համաձայն լեզվի և ուղղագրության նոր կանոնների:

15. Արևմտաեվրոպական թարգմանություններն ու Աստվածաշնչի հրատարակությունները: Մարտին Լյութերի (1483-1546) թարգմանությունը համարվում է դասական-գերմանական, որ ավարտվել է 1534 թվականին, Անգլիականը՝ Հակոբ արքայի նախաձեռնությամբ կամ Հեղինակային թարգմանությունը (1611): ԺԹ՝ դարի վերջին Հեղինակային թարգմանությունը ենթարկվեց խմբագրման և ստացավ «Վերանայված միասնական թարգմանություն» անունը («Revised Standard Version»): Վերջին խմբագրումը եղել է 1946-1952 թթ.: Ի դարում Աստվածաշունչը բազմիցս թարգմանվել է եվրոպական լեզուներով: Վաթսունական թվականներին Բողոքական Եկեղեցիների մի խումբ ստեղծեց Անգլիական Նոր Աստվածաշունչը: Հանձնախմբի թարգմանիչները (ղեկավար՝ Չ. Դոդդ) ձգտել են ոչ թե թարգմանության ճշգրտության, այլ մերձեցմանը ժամանակակից գրական անգլերենին:

Արդի կաթոլիկ թարգմանություններից ամենահայտնիները հետևյալներն են. Քրիստոնեական դավանություն եղբայրության թարգմանությունը (Ամերիկյան Նոր Աստվածաշունչ), Աստվածաշնչի նորագույն թարգմանություն՝ իտալերեն (48 հատոր), Երուսաղեմի Աստվածաշունչ՝ հրատարակություն Դոմինիկյանների աստվածաշնչական դպրոցի՝ Երուսաղեմում, ֆրանսերեն մեկնաբանություններով (սույն հրատարակությունը կա նաև անգլերենով և գերմաներենով): Երուսաղեմյան Աստվածաշնչի օրինակով հրատարակվել է լեհական Աստվածաշունչը՝ նվիրված Լեհաստանի մկրտության հազարամյակին: Ներկայումս Աստվածաշունչը թարգմանված է 1659 լեզվի:

Աստվածաշունչը մշտապես վերահրատարակվում է գրեթե բոլոր երկրներում: Միայն 1973 թվականին աշխարհում տարածվել է Սուրբ Գրքի ավելի քան 218 միլիոն օրինակ, այդ թվում 5 միլիոնից ավելին ամբողջական գրքերով: Աստվածաշունչը հրատարակվում է մի քանի լեզուներով, պատկերազարդ գրքույկներով. կան երիտասարդական, մանկական հրատարակություններ, կույրերի համար նախատեսված տպագրություններ: Աստվածաշունչը պատկերազարդվում է հնության հուշարձանների, սուրբ վայրերի լուսանկարներով, արվեստի դասական երկերով: Այն բազմիցս է նկարահանվել, ձայնագրվել. նրա վերաբերյալ հաղորդումներ են ընդգրկվում հեռուստածրագրերի մեջ: Վերջին 30 տարում ստեղծվել են Աստվածաշնչային ընկերություններ և Աստու ինոքսն ուսումնասիրող հաստատություններ, մասնագիտական և հանրամատչելի հանդեսներ՝ նվիրված Աստվածաշնչին (ֆրանսերեն՝ «Աստվածաշունչը և Սուրբ երկիրը», «Աստվածաշնչական աշխարհ», «Աստվածաշնչական լրագրեր», անգլերեն՝ «Աստվածաշունչն այսօր», գերմաներեն՝ «Աստվածաշնչական հետազոտությունների պարբերական» և այլն¹):

¹ Ներկայումս Ռուսաստանում հրատարակվում է «Աստվածաշնչի աշխարհ» հանդեսը. – Ծան. ռուս. խմբագրի:

Աստվածաշնչի ազդեցությունը համաշխարհային մշակույթի վրա վիթխարի է: Գոթական տաճարներ և բյուզանդական խճանկարներ, Դանթե ու Միլտոն, Ռուբլյով ու Ռեմբրանդ, Պալեստրինա ու Բախ. բոլորն Աստվածաշնչի լույսն են՝ արտացոլված բազմադեմ մշակույթով: «Ինչ գիրք է այդ Աստվածաշունչը,- բացականչել է Դոստոևսկին,- ինչ հրաշք և ինչպիսի ուժ է այն տվել մարդուն: Ասես աշխարհի ու մարդու, մարդկային բնավորությունների կերտվածքն է. և ամեն ինչ ասված և ի ցույց է դրված առհավետ: Եվ որքան լուծված ու բացահայտված խորհուրդներ...»: Գյոթեն, որ իրեն քրիստոնյա չէր համարում, ասել է՝ «Որքան ավելի շատ սկսեն հասկանալ Աստվածաշունչը, այնքան ավելի գեղեցիկ կսկսի երևալ այն»:

Յարգեր կրկնության համար

1. Ինչ տառերով են նախապես գրվել Յին Ուխտի գրքերը:
2. Թարգումներն ինչ են:
3. Յոթանասնիցն ինչ է:
4. Որո՞նք են դրա տարբերակիչ հատկանիշները:
5. Թվարկեցե՞ք Յին Կտակարանի հունական հին թարգմանությունները:
6. Ինչ է Վուլգատան: Ո՞վ է ստեղծել այն:
7. Երբ և ո՞ւմ ձեռքով է մուծվել Աստվածաշնչի բաժանումը գրքերի ու տողերի համարների:
8. Երբ, ինչ հանգամանքներում է իրագործվել Աստվածաշնչի առաջին սլավոնական թարգմանությունը:
9. Սուրբ Գրքի եկեղեցական-սլավոնական ինչպիսի՞ ձեռագիր հավաքածուներ կային առաջին թարգմանությունից հետո:
10. Ո՞ւմն էին Աստվածաշնչի ռուսերեն թարգմանության առաջին փորձերը:
11. Երբ լույս տեսավ Սուրբ Գրքի Սինոդական թարգմանությունը:
12. Նշեցե՞ք արևմտաեվրոպական լեզուներով ամենանշանավոր թարգմանությունները:
13. Աստվածաշունչն ինչ ազդեցություն է գործել համաշխարհային մշակույթի վրա:

§ 7. Մեկնություն¹. Մեկնարկեստ²: Հին Կտակարանի մեկնության եղանակները

1. Աստվածաշնչի մեկնության անհրաժեշտությունը: Ծիսակատարությունների և սրբապատկերների նման Աստվածաշունչը գաղափարների և պատկերների մի ամբողջ աշխարհ է, մի ամբողջական մարմին, որ իր մեջ ներառել է բազում ավանդություններ: Այն ունի իր խորհրդանիշները, լեզուն, կառուցվածքը, որոնք (ինչպես ծիսակատարությունն ու սրբապատկերը) պահանջում են խորացված, հոգևոր, ներթափանցող մոտեցում: Նրա մեջ ամեն ինչ չէ, որ «մակերեսին է», ինչ-որ բան կարիք է զգում պարզաբանության, ինչ-որ բան՝ համեմատական վերլուծության: Բավական չէ Աստվածաշունչը պարզապես կարդալը, որպես Աստծու խոսք այն պահանջում է երկյուղած, աղոթական ապրումներ, իսկ ինչպես մարդկային խոսքը՝ հիմնավոր հետազոտություն: Այդ հետազոտությունն անհրաժեշտ է թեկուզ այն պատճառով, որ մեզ Աստվածաշնչական մատենագիրներից բաժանում են տասնյակ դարեր: Սբ. Հովհան Ոսկեբերանը գրել է, թե Սբ. Գրքերում առկա մի շարք տեղիների անորոշությունը հաճախ «ծագում է պարագաների անհայտությունից և իրադարձությունների սակավությունից, որոնք եղել են այն ժամանակ, իսկ այժմ չեն լինում» (Չրույց 29, Ա Կորնթ. ԺԲ 1-2): Աստվածաշնչի հեղինակները պատկանում էին Հին Արևելքի աշխարհին, իսկ նրա մեծ քաղաքակրթությունները՝ Եգիպտոսը, Բաբելոնը, Ասորեստանը, Փյունիկիան, մայրամուտի հասան Բրիտտոսի աշխարհ գալուց շատ առաջ: Բայց հենց նրանք են ստեղծել են Հին Կտակարանի մշակութային-պատմական ետնախորքը:

Եթե ուզում ենք խորապես թափանցել Աստծու խոսքի մեջ, որ մեզ շնորհվել է Աստվածաշնչական հեղինակների միջոցով, դրա համար պետք է լուրջ ջանք գործադրենք՝ անշուշտ ոչ դյուրին, բայց շահեկան ու բարեբեր: Պարզ է, անկեղծ հավատացյալը կարող է հոգեպես հագնել Աստվածաշնչով նաև առանց այդ գիտելիքների, բայց դրանք կօգնեն ավելի խորը թափանցելու Սուրբ Գրոց իմաստի մեջ: Եվ եթե կան գիտության ընդարձակ ասպարեզներ, որ ուսումնասիրում են դասականների ստեղծագործությունները (դանթեագիտություն, շեքսպիրագիտություն, պուշկինագիտություն և այլն), ապա Գրքերի Գիրքն արժանի է առավել խոր ուսումնասիրության: Այն հետապնդում է ոչ թե գիտության վերացական նպատակներ, այլ նրա խնդիրն է՝ օգնել հասկանալու այն, ինչ մեզ ասում է Աստված իր ընտրյալների միջոցով:

2. Մեկնություն և Մեկնարկեստ: Աստվածաշնչի մեկնությունը, նրա իմաստի պարզաբանումը կոչվում է Էկզեգեզիս (հունարեն *ἐξήγησις* – մեկնություն, բացատրություն): Եթե աստվածաշնչական մեկնությունն զբաղվում

¹ Հուն.՝ ἐξήγησις: Հայերենում գործածական է նաև *Էկզեգետիկա* ձևը – խմբ.:

² Հուն.՝ ἐρμηνευτική: Հայերենում գործածական է նաև *հերմենևտիկա* ձևը – խմբ.:

է անմիջականորեն սուրբգրային բնագրերի բացատրություններով, ապա հերմենևտիկան (հունարեն *ἐρμηνευτική* – բացատրություն, մեկնաբանում) սահմանում է մեկնության (կամ էկզեգետիկայի) կանոններն ու եղանակները: Ուղղափառ մեկնությունն ունի մեկնարվեստի (կամ հերմենևտիկայի) իր կանոնները:

1) Աստվածաշունչը պետք է կարդալ և ուսումնասիրել որպես Աստծու խոսք, որ տրված է մարդկանց ոչ թե նրանց հետաքրքրասիրությունը բավարարելու, այլ հավատն ու ճիշտ կյանքը սովորեցնելու համար:

2) Մեկնությունը պետք է լինի Եկեղեցու դավանանքի և ուսմունքի համաձայն:

3) Հին Կտակարանն անհրաժեշտ է արժեւորել նոր Կտակարանի լույսի ներքո:

4) Կարևոր է հաշվի առնել Սուրբ Հայրերի տված պարզաբանումները Հին Կտակարանի առնչությամբ: Գրանք «վիթխարի արժեք ունեն Հին Կտակարանի ուղղափառ ուսումնասիրողների համար, որը, սակայն, պետք է հաշվի առնի նաև Հայրերի մեկնությունների տարբերությունները, դրանցից ոչ մեկը մեքենայորեն չբարձրացնելով Եկեղեցու Ավանդության աստիճանին: Ուղղափառ աստվածաշնչագետները լիիրավորեն ուշադրություն են դարձնում նաև Հին Կտակարանի եկեղեցական-աստվածապաշտական (պատարագ, պատկերագրություն) մեկնաբանությանը, պարզաբանելով ընդհանուր եկեղեցական մեկնողական ավանդությունը, առանձնացնելով ուշ և պատահական տարրերը» (Բ. Ի. Սովե):

5) Մեկնությանը նախորդում է բնագրի քննությունը: «Քննություն» բառը տվյալ պարագային նշանակում է գիտական և գրական հետազոտություն: Աստվածաշնչագետը, Ինոկենտիոս Խերսոնացու խոսքով, «պիտի պարզի այն աղբյուրները, որոնց մեջ առկա է Հայտնությունը, պիտի ստուգի աղբյուրների և վկայությունների վավերականությունը, պիտի հասկանա, թե դրանց մեջ ինչպես են ամփոփվել և ինչպես են դրանցից ճառագել կրոնի ճշմարտությունները»:

3. Մեկնության հինգ հիմնական եղանակները: Եկեղեցու Հայրերի և վարդապետների ինչպես և հետագա մեկնիչների երկերի շնորհիվ Սուրբ Գրքի իմաստը դարաշրջանից դարաշրջան բացահայտվում է ավելի լիակատար՝ իր հոգևոր անսպառուկյամբ ու խորությամբ: Գոյություն ունի Հին Կտակարանի մեկնության հինգ հիմնական եղանակ, որոնք չեն բացառում, այլ լրացնում են միմյանց: Ինչպես նկատել է Սուրբ Հովան Ոսկեբերանը՝ «Սուրբ Գրքում որոշ տեղեր պետք է հասկանալ այնպես, ինչպես ասված է, իսկ մի այլ տեղ՝ փոխաբերական իմաստով... Իսկ որոշ տեղեր էլ՝ երկակի իմաստով. զգայական և հոգևոր» (Չրույց Սաղմ. 46): Ճիշտ նույն կերպ երա-

նաշնորհ Հովհաննես Կասսիանոս Հռոմեացին նշել է, որ Աստվածաշնչի մեկնությունը «բաժանվում է երկու մասի, այսինքն՝ պատմական (տառացի) մեկնություն և հոգևոր (խորհրդավոր) իմացություն»:

ԱՅԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿԸ ծագել է Ալեքսանդրիայի հուդայականների շրջանում: Այն զարգացրել է հայտնի կրոնական մտածող Փիլոն Ալեքսանդրացին (մահ. մոտ. 50 թ. Ք. ճ. հ.): Փիլոնը և իր նախորդներն այդ եղանակը փոխառել են անտիկ գրողներից:

Այլաբանական մեկնությունն ընդունեց Ալեքսանդրիայի քրիստոնեական դրոցը՝ Կղեմեսն ու Որոգինեսը (Բ-Գ դդ.), այնուհետև Սուրբ Գրիգոր Նյուսացին (մոտ. 335-մոտ. 394): Այդ բոլորի ելակետն այն միտքն էր, թե Հին Կտակարանն ավելին է պարունակում, քան կարելի է ի հայտ բերել դրա տառացի ընկալումից: Ուստի մեկնիչները ձգտել են այլաբանությունների վերծանությունամբ պարզել ծածուկը, Գրքի հոգևոր իմաստը: Եվ իրոք Աստվածաշնչական հեղինակները լայնորեն կիրառել են այլաբանական խորհրդանիշեր, պայմանական պատկերներ, սրբազան թվեր, որոնք ցույց էին տալու նրանց մեջ ամփոփված եղած ներքին բովանդակությունը: Այսպես, 7 թիվը նշանակում էր կատարյալ ամբողջություն, 4-ը՝ տիեզերականություն (աշխարհի չորս ծագերը), 12-ը՝ ընտրյալների ամբողջություն, 40-ը՝ մարդկային մի սերնդի ժամկետ և փրկության պատմության շրջափուլ: Սակայն, դրա ամբողջ արդյունավետությամբ հանդերձ, ալեքսանդրյան եղանակին պակասում էին հուսալի չափանիշները, որոնցով հասկանալի կլիներ Հին Արևելյան խորհրդանիշերի համակարգը, որ կիրառվել էր Հին Կտակարանում: Եվ այդ պակասը հաճախ հանգեցնում էր կամայական կռահումների: Ալեքսանդրիայի դպրոցի մեծ ծառայությունը եղավ Սուրբ Գրքի ուսմունքը փոխադասական և աստվածաբանական լեզվով շարադրելը: Մեր օրերում նման փորձ կատարեց բողոքական աստվածաբան Ռուդոլֆ Բուլտմանը (1884-1976), որ իր եղանակն անվանեց Սուրբ Գրքի ապառասպելացում: Քանի խոսքը Հին Կտակարանի մասին էր, այդ եղանակն արդյունավետ էր, բայց երբ Բուլտմանն այն կիրառեց Նոր Կտակարանի կապակցությամբ՝ Ավետարանը նրա աչքին զրկվեց ցանկացած պատմական հիմքից:

ԲԱՌԱՑԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿԸ հանգեցվում էր այն բանին, որ հնարավորին չափ կապակցված ու պարզ պատկերացվի բիբլիական դեպքերի ընթացքը և ուսմունքի ուղղակի իմաստը, որ շարադրված է Հին Կտակարանում: Այդ կարգը մշակել են Գ և Դ դարերի եկեղեցական (Անտիոքի և Եդեսիայի դպրոցներ) Հայրերը, որոնցից առավել հայտնի է Եփրեմ Ասորին (մոտ. 306-մոտ. 373): Ասորիներն ի մոտո ծանոթ էին արևելքի սովորույթներին, հանգամանք, որ թույլ էր տալիս հելլենիստական հեղինակներից լավ վերս-

տեղծել աստվածաշնչական աշխարհի պատկերը: Բայց հաճախ Գրքի բազմանշանակ իմաստը վրիպում էր այս մեկնիչների տեսադաշտից:

Սուրբ Գրքի ԲԱՐՈՅԱԲԱՐՈՉՉԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ առաջարկող Հայրերը միավորում էին հիշյալ երկու դպրոցների եղանակները: Դա ամենից առաջ խրատական, քարոզի նպատակ էր հետապնդում՝ շեշտադրելով Գրքի բարոյական և դավանաբանական տեսանկյունները: Այդպիսի մեկնաբանության բարձրագույն նմուշ են հանդիսանում Սբ. Հովհան Ոսկեբերանի (մոտ. 347–407) աշխատությունները: ԺԹ դարի հեղինակներից այս եղանակին դիմել են Խերսոնի արքեպիսկոպոս Ինոկենտիոսը, Մոսկվայի մետրոպոլիտ Ֆիլարետը, իսկ Արևմուտքում՝ բողոքական քահանա էթեն Բերսին:

Մեկնության ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ կամ ՆԱԽՏԻՊԱՅԻՆ եղանակն առաջին անգամ կիրառել են Կոմբանի հրեական համայնքի անդամները (Ք. ծ. ա. Բ–Ա դարերից մինչև Զ. ծ. հ. Ա դար): Սույն եղանակը հենվում էր այն բանի վրա, որ Աստվածաշունչը պարունակում է բազմանշանակ նախատիպարներ (հուն.՝ ΤΥΠΟΣ կերպար, տիպ) փրկության պատմությունից, որոնք կարող են դասվել դրա ոչ թե մեկ, այլ տարբեր շրջափուլերի: Այսպես՝ Եգիպտոսից ելքի մեջ տեսնում էին վերադարձը գերությունից, իսկ ավելի ուշ՝ մեղքի ստրկությունից ելնելու նախապատկերը (ծովի ջրերը՝ մկրտության ջրերի խորհրդանիշ): Այդ եղանակն արդեն կիրառվում էր Ավետարանում (Յովհ. Գ 14), Պողոս առաքյալի թղթում (Գաղ. Դ 22–25) և առկա է գրեթե բոլոր սուրբ հայրերի նամակներում, սկսած սուրբ Կղեմես Հռոմեացուց (Ա դարի վերջ): Նախատիպերի հետ սերտորեն կապված են Մեսիայի վերաբերյալ մարգարեությունները, ակնհայտ կամ երկրորդաբար ցրված ամբողջ Հին Կտակարանում: Տիպաբանական եղանակը մեծ դեր է կատարում Աստվածաշունչն իբրև հոգևոր մեկ ամբողջականության ըմբռնելու գործում՝ մի Գրքի, որը խոսում է միասնական Աստծու գործերի և փրկության միասնական պատմության մասին:

ՊԱՏՄԱԿԱՆ–ԳՐԱԿԱՆ–ՔՆՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, կամ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ. Այն սկիզբ է առնում Որոգինեսի, Հերոնիմոս Երանելու և մի շարք միջնադարյան գիտնականների երկերից: Բայց ամենամեծ արդյունքների աստվածաշնչական քննադատությունը հասավ վերջին երեք հարյուր տարիներին: «Գրոց և աստվածահայտնութենական կրոնի ուսումնասիրության պատմական մոտեցումը,– ասում է Ժամանակակից ուղղափառ աստվածաշնչագետ, ավագ քահանա Ալեքսեյ Կնյազևը¹,– ամենաբնական և ճիշտ մոտեցումն է, իհարկե պայմանով, որ ղեկավարվի Հայտ-

¹ Հայր Ալեքսեյ Կնյազև (1913–1991), Փարիզի սուրբ Սերգիսյան ուղղափառ աստվածաբանական հաստատության ռեկտոր, առաջաբան է գրել հայր Ալեքսանդր Մենի «Նոր Ուխտի շեմին» աշխատությանը (Բյուրսեյ, 1983, Բ տիպ., 1992):

4 -Ա. ՄԵՆ, ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

նության հավատով... Պատմության, փիլիսոփայության, հնագիտության, հնագրության և այլ օժանդակ գիտությունների ժամանակակից գյուտերի շնորհիվ աստվածաշնչագիտության բնագավառում մենք ավելի ենք մոտեցել մարդկության հայացքին իրեն բացահայտող և նրա փրկությունն ի գործ դնող Աստծուն ավելի ամբողջական ու մանրամասն տեսնելու հնարավորությանը»: Աստվածաշնչական քննությունը բաժանվում է՝ ա) բնագրի քննություն, բ) գրական քննություն, գ) պատմական աստվածաշնչագիտություն (ներառյալ բիբլիական հնագիտությունը և ոչ բիբլիական կրոնների ուսումնասիրության տվյալները), և դ) ներքին (կամ «բարձր») քննություն բաժինների: Աստվածաշնչական քննությունը ոչ թե վերացնում, այլ լրացնում է նախորդ չորս եղանակները:

Հարցեր կրկնության համար

1. Ինչո՞ւ է անհրաժեշտ ոչ թե պարզապես ընթերցել, այլ ուսումնասիրել Աստծու խոսքը:
2. Ի՞նչ է մեկնությունը:
3. Որո՞նք են ուղղափառ մեկնաբանության հիմնական կանոնները:
4. «Քննություն» բառն ի՞նչ իմաստով է կիրառվում:
5. Մեկնության ի՞նչ եղանակներ կան:
6. Ո՞րն է այլաբանական մեկնության եղանակի իմաստը:
7. Ո՞րն է տառացի մեկնությունը:
8. Ի՞նչ բան է բարոյական-բարոզական մեկնությունը:
9. Ի՞նչ են աստվածաշնչական նախատիպարները:
10. Ի՞նչ է ներառում աստվածաշնչական քննությունը:

§ 8. Բնագրաբանություն

1. Աստվածաշնչի հին բնագրերը: Հին Կտակարանը գրվել է հին եբրայեցերեն (արամեերենի որոշ հավելումներով), իսկ հրեական այբուբենը (ինչպես գրեթե բոլոր արևելյանները) ձայնավոր չունեք: Միայն Քրիստոսից հետո Զ և է դդ. հրեական ռաբբիները՝ մասորետները (եբրայեցերեն՝ חורוסה ילעב - ԲԱԱԼԵՅ ՀԱ-ՄԱՍՈՐԱ՝ ավանդություն) Աստվածաշնչի գալարներում գրել են նշաններ՝ իբրև ձայնավորներին փոխարինող (որոշք - ՆԵԿՈՒԴՕ՛Տ): Մինչև այդ ժամանակը բառերի արտասանությունը հաղորդվում էր բանավոր: Թեպետ արտասանության ավանդույթը կայուն էր ու անընդմեջ, այնուամենայնիվ, տեղ մնում էր առանձին սխալների: Բացի այդ, պարզված է, որ տակավին Ք. ծ. ա. եղել է գրիչների մի քանի դպրոց, և յուրաքանչյուրն ունեցել է իր ավանդույթը: Մասնավորապես Յոթանասնիցի թարգմանիչները

(տե՛ս հատ. 1, § 6) մասորետյանից տարբերվող մի ավանդույթի հետևորդ էին:

Բնագրաքննությունը գործ ունի և այն փաստի հետ, որ մեզ չեն հասել Աստվածաշնչի Գրքերի բուն օրինակները, այլ՝ լոկ մեծաթիվ պատճեններն ու թարգմանությունները: Դրանց մեծ մասն ի հայտ է եկել բնօրինակներից շատ դարեր անց: Տպագրության բացակայությունը պատճառ է հանդիսացել, որ բնագիր թափանցեն սխալներ, առաջանան այլընթերցումներ ու հավելումներ, մանավանդ որ եբրայական այբուբենի որոշ տառերի նմանության պատճառով ընդօրինակները հեշտությամբ կշփոթեին:

2. Բնագրաքննության խնդիրներն ու եղանակները: Այս ամենը բնագրի քննության խնդիր են դարձնում առավել ճշգրտությամբ վերականգնել Հին Կտակարանի նախնական շարադրանքը: Բնական է, որ լավագույն եղանակը հին ձեռագրերի վրա հիմնվելն է: Բայց դրանք համեմատաբար սակավ են: Ք. ծ. նախորդած ժամանակին են վերաբերում միայն Երեմիա մարգարեի (Գ դար) Գրքերը, Եսայի մարգարեի Գրքի ձեռագիրը (Բ դար), Կումրանում (Մեռյալ ծովի մոտ) գտնվածը, և Երկրորդումն Օրինացի պատառիկը: Այդ պատճառով բնագրաքննությունը՝ բախվելով այլընթեռնումների, ա) նախընտրում է պակաս հասկանալի տարբերակները, քանի որ ավելի պարզ ընթերցումները հաճախ պատկանում են ընդօրինակողին, բ) առավել հակիրճ տարբերակը դիտում է իբրև հնագույն, գ) անհասկանալի բառերը համեմատում է հին եբրայական գրականության՝ իմաստով կամ հնչմամբ մոտ բառերի հետ, դ) անջատում է հավելումները և մեկնությունները, որոնք հաճախ լուսանցքից անցել են բնագիր, ե) օգտագործում է հին «նկատողությունները», այսինքն Գրքի այն ձեռագրերը, որոնց մեջ ընդօրինակողը լուսանցքներում նշել է այլընթերցումներն ու սխալները (հայտնի են Իսիբեոսի, Ղուկիանոսի ու Որոգինեսի դիտողությունները):

Բնագրաքննության օրինակ

Ամովս Մարգարեի (Դ 13) գրքում կարդում ենք՝ «Ձի ահաւասիկ Նա որ հաստատե վերինս, եւ հաստատե փողոմս: Եվ պատմե ի մէջ մարդկան վկանս Իւր. առնէ առաւատ եւ մէգ, եւ ելանէ ի վերայ բարձանց երկրի. Տէր Աստուած ամենակալ անուն է Նորաս»: Հունական թարգմանության մեջ «վեռներ» բառի փոխարեն «ամպրոպ» է: Եթե համեմատենք եբրայական עננה – ՅԱՌԱՄ (ամպրոպ) և עיר – ՅԱՐԻՍ (վեռներ)՝ հասկանալի է դառնում, թե ինչպես կարող էր շփոթություն առաջանալ: «Ամպրոպ» բառն այս պարագային նախընտրելի է, քանի որ խոսքը բնական տարերքների մասին է, որոնք սուրբգրական խորհրդանիշերի համակարգում կապված են աստվածահայտնությանը (քամի, փոթորիկ, ամպրոպ):

3. Աստվածաշնչի քննական հրատարակությունները: Բնագրի ուսումնասիրությունը մեծապես օգնում են այսպես կոչված Ս. Գրքի քննական

հրատարակությունները: Դրանցից ամենահայտնին իրականացրել է բողոքական սուրբգրագետ Ռուդոլֆ Կիտտելը (1853–1929):

Նրա «*Biblia Hebraica*»-ն պարունակում է Հին Կտակարանի մասորեւտյան բնագիրը տողատակի ծանոթագրություններով, ուր ցույց է տվել բոլոր ձեռագրական այլընթերցումները, որ առկա են Աստվածաշնչի հին թարգմանություններում: 1905-ից այդ աշխատությունը շարունակում է վերահրատարակվել ու համալրվել նոր ուսումնասիրությունների և գյուտերի լույսի ներքո:

Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ առանձնահատկություններ ունի եբրայական այբուբենը:
2. Ովքե՞ր էին մասորետները, և ո՞րն էր նրանց աշխատանքը:
3. Ո՞րն է բնագրաբանության խնդիրը:
4. Ի՞նչ կանոններ ունի այն:
5. Ի՞նչ են «նկատողությունները»:
6. Ի՞նչ է նշանակում «Աստվածաշնչի բնական հրատարակություն»:

§ 9. Գրական բնագրատություն

1. Գրական տեսակներ: *Իբրև «Մարդկային խոսք»* ունենալով գրական երկի բոլոր որակները՝ Աստվածաշունչն Աստծու խոսքը մեզ փոխանցում է գրական տեսակների՝ կամ սեռերի բազմազան միջոցներով: Ինքնին Սբ. Գիրքը դիտարկելիս, այն գրական հին հուշարձանների հետ համեմատելիս՝ մեկնելը կարող է որոշել գրական ո՞ր սեռին կամ տեսակին է պատկանում ստեղծագործության այս կամ այն մասը: Դրա անհրաժեշտությունը բխում է նրանից, որ յուրաքանչյուր տեսակին հատուկ մոտեցում է պետք դրսևորել. Վիպական բանաստեղծությունը կամ օրհներգը, ժամանակագրական բնույթի պատումը և առակը չեն կարող մեկնաբանվել միևնույն սկզբունքով: Այսպիսով, Ավետարանն ուսումնասիրողի համար միևնույնն է՝ իրականում եղել է Բարի սամարացու առակում նկարագրված դեպքը, թե ո՞չ, բայց երբ խոսքը Տիրոջ երկրային կյանքի և ծառայության մասին է, հարցն այլ բնույթ է ձեռք բերում: Նեեմիայի գրքում գտնում ենք ոչ միայն կրոնական իմաստ, այլև պատմական իրադարձությունների նկարագրություն ժամանակակցի կողմից: Եվ ընդհակառակն, բաբելոնյան աշտարակի պատմությունը, որ եկել է դարերի խորքից ու ավանդություններից՝ ամենից առաջ կարևոր է իր հոգևոր իմաստով: Հինկտակարանյան գրական տեսակներն ուսումնասիրող ուղղափառ հեղինակներից ոչ քիչ ներդրում ունի Ս. Պետերբուրգի հոգևոր ճեմարանի պրոֆեսոր Ի. Ս. Յակիմովը (1847–1885), կաթոլիկներից՝

գոմինիկյան Մ. Ժ. Լագրանժը (1855–1938): *Վերջինիս աշխատանքների ազդեցությունը նկատելի է Պիոս ԺԲ պապի «Divino afflante spiritu»* (Յոգու աստվածային ներշնչանք, 1943) *կոնդակում: Դրանում ասված է.*

«Յաճախ հին արևելյան հեղինակների խոսքում ու երկերում տառացի իմաստն այնքան ակնհայտ չէ, ինչպես մեր ժամանակների գրողներինը. ինչ որ նրանք ուզում էին ասել իրենց խոսքով, հնարավոր չէ պարզել միայն քերականության կամ փիլիսոփայության օրենքներով կամ միայն շարադրանքով: Միանգամայն անհրաժեշտ է, որ մեկնիչն ասես մտովի փոխադրվի Արևելքի այն հեռավոր դարեր, որպեսզի պատմության, հնագիտության, ազգագրության և այլ գիտությունների միջոցներով որոշի ու պարզի՝ ինչ *գրական ստեղծություն* են ցանկացել, կամ որոնցից են օգտվել այդ հին ժամանակի գրողները... Աստվածաշնչի ուսումնասիրության արդի պահանջները լիովին բավարարելու համար կաթոլիկ մեկնիչը պարտավոր է, Սբ. Գիրքը մեկնաբանելով, ապացուցելով ու պաշտպանելով նրա բացարձակ անսխալականությունը, խելացի օգտվել այդ միջոցից. նա պիտի ուսումնասիրի, թե սրբազան հեղինակի կիրառած արտահայտության միջոցը կամ գրական տեսակը, ինչպես կարող է հանգեցնել ճիշտ ու ստույգ ըմբռնման»:

Դարերի ընթացքում գրական տեսակները զարգացրել են Իսրայելի շրջակա ժողովուրդները: Դրանք պաշտոնական տարեգրություններ էին, ներբողներ թագավորներին, ողբեր, առասպելներ, զվարճախոսություններ, աղոթքներ, քնարերգություն, հեքիաթներ, փիլիսոփայական աշխատություններ, պաշտոնական գրություններ: Դրանք բոլորը ենթարկվում էին որոշակի օրինաչափությունների, որոնց ենթարկվում էին հեղինակները: Սա ինչ-որ չափով նման է սրբապատկեր նկարելուն, ուր վարպետն արտահայտչամիջոցներ չի հնարում, այլ օգտվում է պատրաստի ավանդական ձևերից: Տեսակի օրենքները խստորեն պահպանվում էին, և յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները հեշտ նկատելի են առաջին իսկ ընթերցման ժամանակ (հմմտ. օրինակ՝ Բաբելոնի Յամմուրաբի¹ թագավորի Դատաստանագիրքը՝ անմեղ տառապայի պոեմի հետ. տե՛ս Յավելվածները, հտ. Ա, § 24 և հատ. Բ, § 22):

2. Գրական տեսակներն Աստվածաշնչում: *Սուրբգրական սրբազան հեղինակները դիմելով կամ անդրադառնալով իրենց ժամանակակիցներին, յուրացրել են առկա գրական ձևերը (տույն կերպ, ինչպես Սբ. Յայրերն օգտվել են անտիկ գրականության ու փիլիսոփայության լեզվական հնարքներից ու գրական տեսակներից): Բերենք այդ յուրացված տեսակներից լոկ մի քանիսն՝ ինչպես դրանք արտահայտվել են Աստվածաշնչում.*

ա. ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (եբր. תולדות – *ՏՈՒԴՈՒՏ*) (օրինակ՝ Ծննդ. Ժ հմմտ. Մատթ. Ա 1 և հաջ.) *սովորաբար հակիրճ են, խիստ, զերծ*

¹ Բաբելոնյան առաջին հարստության վեցերորդ թագավորը, կառավարել է Բ. ծ. ա. 1792-ից 1750 թվականներին. – *Շան. թարգմ.*:

գրական պաճուճանքից: Դրանց նպատակն է ոչ թե բավարարել հետաքրքրասեր ընթերցողներին, այլ տվյալ ձևով հաղորդել որոշակի ուսմունք (օրինակ՝ մարդկության սեռի միասնությունը կամ Քրիստոսի ծագումը Դավթի ցեղից): Այս խնդիրը բարձր է պատմական մասնավոր հավաստիություններից, և առաջնային է դարձնում հոգևոր իմաստը:

բ. **ՕՐԵՆՔՆԵՐԸ** (եբր. תורת - ՏՈՒՌՈՏ) պարունակում են ինչպես կրոնաբարոյական, նույնպես և իրավական ու քրեական օրենսգրքի տարրեր: Օժտված են ոճի հանդիսավորությամբ և արտահայտիչ բնույթ ունեն:

գ. **ԲԱՆԱՍՏԵՂՃԱԿԱՆ ԷՊՈՍ** (Դեբորայի երգը, Դատ. Ե, Տիրոջ պատերազմների գիրքը՝ մեջբերված Թվ. ԻԱ14 և հաջ., Արդարության Գիրքը՝ Հեսու. Ժ 12-13) բնութագրվում է արտահայտչամիջոցների պատկերավորությամբ և չափազանցությամբ:

դ. **ԷՊԻԿԱԿԱՆ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ** (օր.՝ նահապետների, Քանանի գրավման և դատավորների մասին), որոնց հիմքում պատմության իրական փաստեր են, բայց շարադրված իբրև ասք: Աչքի են ընկնում անձանց և իրագարծությունների խիստ որոշակի՝ կենդանի պատկերումով:

ե. **ՏԱՐԵԳՐՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ**, գրված ականատեսների և ժամանակակիցների կողմից (օր.՝ Սենեքերիմի արշավանքի պատմությունը): Սրանք Սբ. Գիրք են մուծվել իբրև յուրօրինակ ապաշխարության կոչ, իբրև Ուսուցում պատմության օգնությամբ: Դրանք հարուստ են պատմական հավաստի մանրամասներով, լեզուն զուսպ է, բայց ոչ զուրկ հուզականությունից:

զ. **ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ՔԱՐՈՉՆԵՐԸ, ԱՂՈԹՔՆԵՐՆ ՈՒ ՕՐՀՆԵՐԳԵՐՆ** աչքի են ընկնում բարձր ոճով, դրանց լեզուն առատ է սրբազան խանդավառությամբ, հանդիսավորությամբ, որ հատուկ է աստվածպաշտությանը: Դա պայմանավորված է և՛ մարգարեական ոգեշնչման հատկանիշով, և՛ նրանով, որ մարգարեներն իրենց խոսքն ասում էին Տաճարում կամ այլ սրբավայրերում: Նրանց խոսքերը աստվածպաշտության մասն էին կազմում:

է. **ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ** ստեղծվել են իբրև ձեռնարկ կղերականների և աշխարհականների համար (Ել. ԼԴ 18-25, Ղևտ. և այլն), գրված են չոր լեզվով, հագեցած են ծիսական մանրամասներով:

ը. **ՍԱՂՄՈՍՆԵՐ** (սրանց մասին մանրամասն կխոսվի Սաղմոսարանը դիտարկելիս):

թ. **ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԵՐԸ** (եբր. מִשְׁכָּן - ՍՈՅՐԻՄ և מִיְכָנִי - ԽԱՔԱՄԻՄ - դպիրներ և իմաստուններ) ոճով մերձ են Արևելքի կենցաղային

իմաստութեան ասույթներին: Իմաստուններից ոմանք գրում էին՝ չդիմելով Ուխտին, Օրենքին ու խոստումներին (Առակաց գիրքը, Յոբի գիրքը, Յովսեփի մասին պատմությունը Ծննդոցում), ուրիշներն (Սաղմ. 6ԺԸ) Օրենքի թեման հիմնական են դարձրել: Իմաստունների գրքերի շարքում առանձնանում է առակների տեսակը (եբր.՝ לֶשׁוֹן - ՄԱՇԱՆ), որոնք նախապես եղել են ասույթներ կյանքի և հավատի մասին: Լոկ առանձին դեպքերում է Հին Կտակարանի առակը հանդիսացել կապող պատմվածք (Դատ. Թ 7-15):

Ժ. ՄԻԴԻԱՇՆԵՐ, այսինքն խրատական մտորումներ ու պատումներ, որ կոչված են լուսաբանելու այս կամ այն կրոնական ուսմունքը: Միդրաշի տեսակը Հին Կտակարան ամենաուշ մուծվածներից է (դրա բնորոշ նմուշ է Տոբիթի գիրքը):

Ժա. ՅԱՅՏՆՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՐՔԵՐԸ հիմնականում ի հայտ են գալիս հետմարգարեական շրջանում: Դրանք բացահայտում են պատմության գաղտնիքներն ու Աստծու Նախախնամությունը խորհրդանիշներով, այլասություններով, ակնարկներով ու Բարու և Չարի պայքարի վիթխարի պատկերներով: Հայտնութենական նախնական տարրեր կան արդեն Եզեկիելի մարգարեության մեջ: Դրա դասական օրինակը Դանիելի գրքում է (Դանիել Է-ԺԲ): Հին Կտակարանի շատ պարականոն գրքեր (տես հտ. Ա, § 5) այդ տեսակին են պատկանում:

Աստվածաշնչի այս կամ այն մասը մեկնաբանելիս կարևոր է որոշել դրա տեսակը, քանի որ դրանցից յուրաքանչյուրն ունի իր պատկերավորման միջոցները, լեզուն, հնարքները: Դրան օգնում է հինարևելյան մշակույթի ուսումնասիրությունը:

3. Աստվածաշնչական բանաստեղծություն (պոեզիա): Գրական քննադատության մարզին է վերաբերում Սբ. Գրքի չափածո բաժինների տարբերակումը, որ հնարավոր դարձավ միայն հին սեմական բանաստեղծության օրենքները պարզելուց հետո: Ի տարբերություն անտիկ և արդի բանաստեղծությունների, այն բնութագրվում է ոչ խիստ չափով և հանգի բացակայությամբ: Դրա գլխավոր հատկանիշը, որ նկատելի է նույնիսկ մակերեսային ընթերցմամբ, համապատասխանությունն է: Սրբազան հեղինակը իր միտքը բացահայտում և ձևափոխում է երկու զուգահեռ բանատողերով: Այդ տողերի բովանդակությունը կամ նույնական է, կամ դրանք պարունակում են հակադրույթ (հակադրություն): Օրինակ.

Անապատում կանչողի ձայնն Է.

«Պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը

և հարթեցե՛ք մեր Աստծու շավիղները:

Բոլոր ձորերը պիտի լցվեն,

և բոլոր լեռներն ու բլուրները պիտի ցածրանան...

(Եսայի Խ 3-4)

Երբեմն երկրորդ տողում զարգացվում է առաջինի մեջ սկսված միտքը, կամ կրկնվում են առաջինի բառերը, դրանց նոր ուղղություն տալու համար: Այդպիսի զուգաձևերը ավելի ճիշտ կլինի անվանել համաչափություն, քանի որ երկու տողը, կամ նույնիսկ տողերի խումբը, ընդհանուր իմաստային առանցք ունեն: Աստվածաշնչական պոետիկայի այդ օրենքների իմացությունը կարևոր է «Սուրբ Գրոց մտքի համակողմանի ընկալման» համար (Иванов М. С., Библейская стилистическая симметрия. – ЖМП, 1981, # 7, էջ 70):

Աստվածաշնչի բանաստեղծական մյուս հատկանիշները (բաղաձայնույթ, բանակապ (ակրոստիքոս) և այլն) նկատելի են միայն բնագիրն ընթերցելիս: Հին Կտակարանի բնագրերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գրեթե դրա կեսը չափածո է (Հնգամատյանի որոշ մասեր, Հոբի գիրքը, Սաղմոսարանը, մարգարեական գրքերի մեծ մասը, Առակաց գիրքը, Սողոմոնի Իմաստության գիրքը, Երգ Երգոցը): Այդ առնչությամբ ժամանակակից բոլոր թարգմանություններում Աստվածաշնչի չափածո գլուխներն ու բաժինները տպագրվում են սյունաձև: Թուսական հրատարակություններից այդ կանոնը պահպանված է միայն Սինոդական թարգմանության բրյուսելյան տպագրության մեջ (1973-1977):

Հարցեր կրկնության համար

1. Ո՞րն է Սբ. Գրքի գրական քննության նպատակը:
2. Ի՞նչ են գրական տեսակը, սեռը:
3. Ի՞նչ տեսակներ կային Հին Արևելքում:
4. Թվարկեց՞եք Սբ. Գրքում հանդիպող հիմնական գրական տեսակները:
5. Ի՞նչ հատկանիշներ ունի աստվածաշնչական տաղաչափությունը:

§ 10. Պատմական քննություն

1. Աստվածաշունչը և Հին Արևելքը: Պատմական քննությունը սուրբ-գրական պատմությունն ու սրբազան հեղինակներին դիտարկում է Հին աշխարհի պատմության համատեքստում: Հայրաբանական շրջանում այդ աշխատանքը գլխավորապես հիմնվում էր անտիկ գրողների և հրեա պատմիչ Հովսեպոս Փլավիոսի (մահ. Ք. ծ. հ. Ա դարի 90-ական թթ.) հաղորդումներին: Բայց հույներն ու հռոմեացիք շատ թույլ պատկերացում ունեին Հին Արևելքի մասին, իսկ Հովսեպոս Փլավիոսը (ծագումով փարիսեցի, մասնակցել է Հռոմի դեմ պատերազմին) լավատեղյակ էր միայն հինկտակարանյան պատմության վերջին երկու դարերին:

Երբ ԺԹ դարի սկզբին Ֆրանսուա Շամպոլեոնը վերծանեց եգիպտական գաղափարագրերը, իսկ հետո Հենրի Ռոուլինսոնի և մյուս գիտնականների ջանքերով գտնվեց միջագետքյան սեպագրի բանալին, Աստվածաշնչի մեկնիչներն ստացան Սբ. Գրքին ժամանակակից վավերագրեր: Այդ ժամանակվանից սկսյալ Հին Արևելքի կյանքի մասին կարելի է իմանալ ոչ միայն Հերոդոտոսից ու Հին Կտակարանից: Պեղումները լույս սփռեցին Աստվածաշնչից հայտնի՝ մերձավորարևելյան քաղաքակրթությունների, մշակույթի, կրոնի վրա: Ուրվագծվեց սրբազան պատմության առավել ճշգրիտ պատկերը և փաստագրված ժամանակագրությունը: Եգիպտոսի, Բաբելոնի, Ասորեստանի, Փյունիկիայի ու Պարսկաստանի գրականությունների ուսումնասիրությունն այստեղ ի հայտ բերեց ոչ քիչ զուգահեռներ Հին Կտակարանի հետ: Ուղղափառ գիտնական, Ռուս Ուղղափառ Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովի անդամ Բորիս Տուրաևը գրել է.

«Աստվածաշունչն իբրև պատմական սկզբնաղբյուր մեծարժեք է... Նրա այն մասերը, ուր խոսվում է Եգիպտոսի ու Բաբելոնի մասին, գրվել են այդ միապետությունների կյանքի լավատեղյակություններով: Նոր հայտնագործություններն ավելի ու ավելի համոզում են, որ դրանք իրենց ժամանակ տիրող մշակույթի իսկական նմուշներ են: Դրանց տեղեկությունները մշտապես հաստատվում են և պարզվում: Սակայն մեր տեսանկյունից նույնիսկ Հին Կտակարանի պատմական գրքերը չեն կարող դիտվել որպես այդպիսիք: Դրանք ավելի շուտ ուսուցողական երկեր են, որոնց նպատակն է պատմության օրինակների դիտարկմամբ դաստիարակել ժողովրդին կրոնական ոգով» (История Древнего Востока, Л., 1935, т. 1, էջ 7):

2. Աստվածաշնչական հնագիտություն: Մերձավոր Արևելքի, հատկապես Պաղեստինի պեղումները կյանքի կոչեցին աստվածաշնչական հնագիտությանը: Գտնվեցին թագավորաց և մարգարեից ժամանակների բազում հուշարձաններ (Մովաբի թագավոր Մոսայի արձանագրությունը, Եգեկիա թագավորի արձանագրությունը Սիլովամում, Երեմիա մարգարեի ժամանակակից Լաբիսի նամակները), պեղվեցին երկրի երեսից վաղուց ջնջված աստվածաշնչական քաղաքները (Մակեդոնով, Գագեր, Թանաք, Լաբիս և այլն): Մեր դարի¹ 20-ական թթ. պեղվեց փյունիկյան Ուգարիտը (Ռաս-Շամրա): Ուգարիտյան հուշարձանները և բնագրերը հնարավորություն ընձեռեցին առավել ամբողջական պատկերացում կազմելու փյունիկեցիների և քանանացիների՝ Իսրայելի մերձակա հարևանների կենցաղի և հավատալիքների մասին: Մեռյալ ծովի տարածաշրջանի գտածոները համալրեցին հինկտակարանյան պատմությունը մի կարևոր բաժնով, որ վերաբերում է այսպես կոչված միջկտակարանյան ժամանակաշրջանին:

¹ Խոսքն Ի դարի մասին է. – Շան. թարգմ.:

Հաշվի առնելով, որ Պաղեստինում առավել հաճախ գրում էին մագաղաթի վրա, իսկ բնական պայմաններն այնտեղ ավելի խոնավ են, քան Եգիպտոսում, ուստի համեմատաբար քիչ գրավոր հուշարձաններ են պահպանվել (ի տարբերություն նույն Եգիպտոսի, Միջագետքի և Պարսկաստանի, ուր գրում էին կավե սալիկների և քարի վրա): Այս իսկ պատճառով հնագիտական նյութի թվագրման համար իբրև չափանիշ սկսեցին ծառայել կենցաղային խեցեղենի նմուշները: Պաղեստինյան հնագիտության խոշորագույն դեմքերից մեկը՝ Ֆլինդերս Պետրին (1853–1942) պարզեց, որ տարածքի յուրաքանչյուր դարաշրջանին համապատասխանում է խեցեղենի խիստ որոշակի ձևը: Պետրին հայտնաբերեց Մերնեփթահօ փարավոնի սյունակոթողը (Ք. ծ. ա. ԺԳ դար), որի վրա առաջին անգամ հիշատակվում է Իսրայելը (գիտնականներն այս հուշարձանը վերագրում են Մովսեսի կամ Հեսուե Նավեի դարաշրջաններին): Աստվածաշնչյան հնագիտության առաջատար մասնագետ Վիլյամ Օլբրայթը¹ (1891–1971) մի շարք պեղումներ կատարեց Պաղեստինում և այն եզրահանգման եկավ, որ գտածոները հրաշալի կերպով հաստատում և լրացնում են Սուրբ Գրքում դրոշմված տվյալները:

Հնագիտության առանձին բաժին է դրամագիտությունը՝ հին դրամներն ուսումնասիրող գիտությունը: Այն նույնպես կարևոր է պեղումների ժամանակը ճշտելու համար՝ հատկապես Երկրորդ Տաճարի շրջափուլի, որից հասել են հրեա թագավորների ու կառավարողների շատ դրամներ:

Այժմ հրատարակված են ատլասներ, որ արտացոլում են սուրբգրային հնագիտության հաջողությունները: Իրանցից ամենամբողջականներն են՝ Լ. Դրոլենբերգի Ատլասը, հրատարակված Հոլանդիայում և թարգմանված շատ լեզուների, և Քեմբրիջի ատլասը, որը Անգլերեն Նոր Աստվածաշնչի հավելվածն է:

3. Հին աշխարհի կրոնները և Հին Կտակարանը: Պատմական հեռանկարն ուշադրություն է դարձնում նաև կրոնների համեմատական ուսումնասիրությանը: Աստվածաշնչի համադրությունը հեթանոսական հուշարձանների հետ արդեն իսկ արդարացվում է նրանով, որ հեթանոսությունն, ըստ Եկեղեցու Հայրերի, իր մասնաբաժինն է ունեցել՝ աշխարհը նախապատրաստելով ընդունելու Փրկչին (հմմտ. Հուստինոս Վկա, Սբ. Թեոփիլոս Անտիոքացի, Աթանաս Մեծ և այլք): Հին Կտակարանում դիտարկված են Իսրայելի հարևան ժողովուրդների շատ հավատքներ: Հրեաները մի շարք սովորույթներ փոխառել են նրանցից: Իսրայելական որոշ կրոնական ծեսեր ձևավորվել են Հին Արևելքի կրոնների ազդեցությամբ: ԺԹ-ի դդ. սահմանագծին նույնիսկ

¹ Ամերիկացի հայտնի արևելագետ, աստվածաշնչագիտական հնագիտության հիմնադիրներից: Հայտնի աշխատություններից է «Քարե դարից մինչև Քրիստոնեություն» մենագրությունը (From the stone age to Christianity, Բայթիմոր, 1940):

վարկած առաջադրվեց, թե Հին Կտակարանի բոլոր ուսմունքները փոխառյալ են Բաբելոնից: Սույն կարծիքն առանձնակի համառոտությամբ տարածում էր գերմանական ասորագետ Ֆրիդրիխ Դելիշը, որ այն շրջանառության մեջ էր դնում՝ «Աստվածաշունչը և Բաբելոնը» դասախոսությունների շարքով (ռուս. թարգմ. ՍՊԲ, 1906): Սակայն տակավին Դելիշի կենդանության օրոք գիտությունը լիովին հերքեց նրա վարկածը: Ավելի չափավոր դիրքորոշում ուներ կրոնի հանրահայտ պատմաբան աստվածաշնչագետ Հերման Գունկելը (1862-1932): Մատնանշելով բաբելական գրույցների ու առասպելների տարրերը, որոնք ազդել են Աստվածաշնչի գրական հյուսվածքին՝ նա ընդգծում էր, որ հինկտակարանյան գրողներն ամբողջովին վեր են հինարևելյան առասպելաբանության հիմքից: Դա կարելի է համեմատել քրիստոնեական տաճարի կառուցման հետ, ուր օգտագործված են հին հեթանոսական սրբավայրերի շինանյութերը: Գունկելի դրույթները ցայժմ պահպանել են իրենց ազդեցությունն աստվածաշնչագիտության ասպարեզում: Կրոնների համեմատական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թեև Հին Կտակարանի հավատն ինչ-որ նմանություն ունի հինարևելյան մյուս կրոնների հետ, նրա էությունը, պատմությունն ու գրականությունը եզակի են:

Հարցեր կրկնության համար

1. Ինչ է Հին Կտակարանի պատմական քննությունը:
2. Ինչն օգնեց պատմական քննության զարգացմանը:
3. Պատմեցե՞ք աստվածաշնչական հնագիտության նվաճումների մասին:
4. Անվանեցե՞ք վերոբերյալ երկու առավել ակնառիվ աստվածաշնչագետներին:
5. Աստվածաշնչագիտության համար ինչ նշանակություն ունի կրոնների համեմատական ուսումնասիրությունը:

§ 11. Ներքին կամ «բարձր» քննություն

1. **Ներքին քննության խնդիրները**¹: Ի տարբերություն բնագրի քննության, այսպես կոչված ներքին քննությունը, օգտվելով գրական և պատմական քննության տվյալներից, նպատակ ունի պարզել գրքերի հեղինակների, ծագման ժամանակի հարցերը, նաև դրանց իմաստային մեկնությունը: Մի կողմից սա զուտ գիտություն է (ինչպես պատմությունը և հնագիտությունը), մյուս կողմից, եթե ցանկանում է մնալ քրիստոնեական, պահպանելու է հավատարմությունն իր հիմնական նպատակին՝ հասցնել մարդկանց,

¹ Գրականության մեջ ներքին քննությունն ընդունված է պարզապես անվանել աստվածաշնչական քննություն. – Ծան. ռուս. խմբ.:

թե ինչ և ինչպես է մեզ հաղորդում Աստծու խոսքը: «Եկեղեցին,- գրել է ռուս հայտնի աստվածաբան Սերգեյ Բուլգակով քահանան (1871-1914),- ոչ միայն չի խոչընդոտում Աստծու խոսքի ուսումնասիրությունը բոլոր մատչելի միջոցներով, մասնավորաբար արդի գիտական քննադատության եղանակներով, այլև նախապես չի որոշում այդ քննադատության եզրահանգումները... Ուղղափառ գիտակցությունը հիմք չունի վախենալու աստվածաշնչական քննությունից կամ վրդովվելու դրանից, քանի որ դրանով լուկ ավելի որոշակի հասանելի են դառնում Աստծու ճանապարհները և Աստծու Հոգու գործողությունը» (Православие, Фարիզ, 1964, էջ 57, 60):

2. Զին և միջնադարյան դարաշրջաններ: Հրեական մատենագիրների աստվածաշնչագիտական հայացքներն ամփոփված են Բավա-Բատրա (15ա)¹ հին տրակտատում: «Մովսեսը գրեց իր գիրքը և Բաաղամին ու Հոբին վերաբերող բաժինը: Հեսու Նավեն գրեց իր գիրքը և Հնգամատյանի ութ տողեր: Սամուելը գրեց իր գիրքը և Դատավորաց ու Հուրի գրքերը: Դավիթը գրեց Սաղմոսները տասն ավագների համագործակցությամբ: Նրեմիան գրեց իր գիրքը, Թագավորությանց գրքերը և Ողբը: Եզեկիելը և իր եղբայրակիցները գրեցին Եսայի², Առակաները, Նրգ Նրգոցը և Ժողովողը: Մեծ ժողովի այրերը գրեցին Եզեկիելը, տասներկու մարգարեները, Դանիելը և Եզրասը: Եզրասը գրեց իր գիրքը և Մնացորդացի ազգաբանությունը մինչև իր օրերը»:

Եկեղեցու Հայրերը մեծապես հենվել են Հին Կտակարանի հեղինակների վերաբերյալ այս ավանդության վրա: Բայց աստվածաշնչական գրքերի ծագման մասին միասնական հայացք հայրաբանության մեջ չմշակվեց: Բերյալ աղյուսակը (տե՛ս աղյուսակ) ամփոփում է սրբազան Հայրերի առավել տարածված ներածության վերաբերող հայացքները:

3. Բարեփոխությունների և Լուսավորության դարաշրջաններ: 1520 թ. Մ. Լյութերի ու Թ. Մյունցերի համախոհ Ա. Կարլշտադտը (1486-1541), ուսումնասիրելով Հին Կտակարանը, եզրակացրեց, որ Ներկորդ Օրենքի գիրքը, որի վերջում նկարագրված է Մովսեսի մահը, չի կարող պատկանել նրան: Բացի այդ, Կարլշտադտը կասկածում էր, թե Եզրասի գիրքն ամբողջապես պատկանում է այդ հեղինակին, քանի որ այնտեղ գովք կա Եզրասի հասցեին: Ավելի ուշ՝ 1574 թ., հոլանդացի կաթոլիկ աստվածաշնչագետ Անդրեաս Մասիուսը ենթադրեց, թե Հին Կտակարանի պատմական գրքերի հիմքում ընկած են տարեգրություններ, որ մեզ չեն հասել, ինչպես անուղղակիորեն վկայում է նաև Սբ. Գիրքը (օր.՝ Գ Թագ. ԺԴ՝ 19): Համանման մտքեր

¹ Թալմուդի 60(63) տրակտատներից մեկը, որ կանոնավորում է գույքային և ժառանգական հարաբերությունները. - Շան. ռուս. խմբ.:

² Երբ ասվում է՝ «Եզեկիելը գրեց Եսային» - դա նշանակում է ի մի հավաքեց Եսայու գրքերը:

արտահայտել են ճիզվիտ ժակ Բոնֆերեն (1575-1642), անգլիացի փիլիսոփա Թոմաս Հոբսը (1588-1679) և կալվինիստ Իսահակ Լա Պերեյրան (1665): Բայց ընդունված է աստվածաշնչական քննության իսկական սկզբնավորող համարել նիդերլանդացի փիլիսոփա-պանթեիստ Բենեդիկտոս Սպինոզային (1632-1677): Իր «Աստվածաբանական-քաղաքական տրակտատում» (1670) նա, ելնելով ռաբբի Իբն-Եզրասի (ԺԲ դար) ակնարկներից և Սուրբ Գրոց բուն բնագրից, փորձեց լիովին վերանայել ավանդական աստվածաշնչական Ներածությունը: Նրա կարծիքով ամբողջ Հնգամատյանը շէր կարող տեղավորվել «Քարերի վրա» (Բ Օրինաց ԻԷ 8, Յես. Նավե Ը 32): Բացի այդ Օրենքում կան տեղիներ, որոնք ցույց են տալիս նրա ծագումը Մովսեսից հետո (Ճննդ. ԺԲ 6, Բ Օր. ԼԱ 9 և այլն): Սպինոզան ենթադրեց, որ Հնգամատյանը, ինչպես և Պատմական գրքերը, կազմել է Ք.ծ.ա. Ե դարում Եզրասը: Գրեթե Սպինոզայի հետ միաժամանակ՝ 1678 թ., Հին Կտակարանի Գրքերի պատմության վերանայում առաջարկեց Ֆրանսիացի կաթոլիկ վանական Ռիշար Սիմոնը (1638-1712): Նա մասնավորապես վարկած առաջադրեց, թե Հնգամատյանում Մովսեսին է պատկանում միայն օրենսդրական մասը, իսկ մնացածները՝ «տարեգիրներին»: Դիտելի է նաև, որ Սիմոնը հինկտակարանյան Գրքի ձևավորման վրա բանավոր ավանդության նշանակությունն առաջինն է ընդգծել:

**Հին Կտակարանի գրքերի հեղինակների տվյալները
ըստ եկեղեցական հայրերի**

Հնգամատյան	Ամբողջապես գրել է Մովսեսը, բացառությամբ Եկորդդումն Օրինաց ԼԴ գլխի, որ ենթադրաբար կազմել է Եգրասը, որ Մովսեսի գրքերի «հավաքողն» է (Հերոնիմոս Երանելի)
Հեսու Նավեի	Եկեղեցու հայրերի մեծամասնության կարծիքով կարող է գրված լինել անձամբ Հեսուի կողմից: Սակայն Թեոդորիտոս Երանելին համոզիչ կերպով ցույց է տվել, որ հեղինակը «մեկ ուրիշ՝ ավելի ուշ ապրած անձ է»: (Մեկնություն Հեսու Նավեի, հ. 14)
Դատավորներ	Գրվել է «իր նկարագրված ժամանակից ավելի ուշ» (Թեոդորիտոս Երանելի, Մեկնություն Դատավորաց գրքի, հ. 2) Եկեղեցու շատ հայրեր այն վերագրել են Սամուել մարգարեին:
Հռուբ	Հեղինակը հայտնի չէ: Հնարավոր է՝ Սամուել մարգարեն լինի:
Թագավորություններ	Հավանական հեղինակներն են Սամուել մարգարեն և նրան հաջորդած մարգարեները:
Ա-Բ Մնացորդաց գիրք Եգրասի Ա գիրք	Եկեղեցու հայրերից ոմանք այս գրքերը վերագրել են անհայտ հեղինակների, ուրիշները՝ Եգրասին:

Նենմիի գիրք	Հեղինակն է Նենմիան:
Տոբիթի գիրք	Հեղինակը ենթադրաբար Տոբիթն է:
Հուդիթի գիրք	Հեղինակի մասին միանման կարծիք չկա (ենթադրվել է՝ Հուդիթն ինքը, Եղիակիմը, Աթիորը և ուրիշները):
Եսթերի գիրք	Հեղինակը հայտնի չէ, ոմանք վերագրել են Մուրթաբեին:
Հոբի գիրք	Հեղինակը հայտնի չէ: Հերոնիմոս Երանելին վերագրել է Մովսեսին, իսկ Ռոդոգինեսը վերագրում է մինչնովսեսյան շրջանին:
Սաղմոսագիրք	Գրել են Դավիթը և մյուս սաղմոսերգուները, որոնց անունները նշված են Գրքում:
Սողոմոնի առակների գիրք	Գրել են Սողոմոնը և գրքում հիշված հեղինակները:
Ժողովողի գիրք	Գրել է Սողոմոնը:
Երգ երգոց գիրք	Գրել է Սողոմոնը:
Սողոմոնի իմաստության գիրք	Հեղինակը հայտնի չէ: Քչերը միայն վերագրեցին Սողոմոնին:
Սիրաբի որդի Հեսուի գիրք	Հեղինակը Սիրաբի որդի Հեսուն է: Գրքի առաջաբանը կազմել է նրա թոռը:
Մեծ մարգարեներ	Ամբողջը գրել են այն հեղինակները, որոնց անունները նշված են վերնագրերում:
Փոքր մարգարեներ	Ամբողջապես գրել են այն հեղինակները, որոնց անունները նշված են վերնագրերում:
Ա-Գ Մակաբայեցիներ	Հեղինակներն անհայտ են:
Եզրասի Գ գիրքը	Հեղինակը հայտնի չէ: Ոմանք վերագրել են հենց Եզրասին:

4. Ժան Աստրուկ: *Ֆրանսիացի սիրող-աստվածաշնչագետ ժան Աստրուկի (1684–1766) «Ենթադրություններ այն սկզբնաղբյուրների վերաբերյալ, որոնցից հավանաբար օգտվել է Մովսեսը Ծննդոց գիրքը ստեղծելիս»* (Conjectures sur les mémoires originaux dont il paroît que Moïse s'est servi pour composer le livre de la Genèse) *աշխատության մեջ հետազոտությունների նոր շրջափուլ սկսվեց: Իր նախորդ հոփիվ Խինինդ Վեստտերից (1711 թ.) անկախ կարևոր դիտարկում արեց. Հնգամատյանի շատ մասերում նկատելի է երկու ավանդություն: Միևնույն իրադարձության մասին պատմվում է զուգահեռ տարբերակներով: Օրինակ՝ Ծննդ. 2 19-ում ասված է կենդանիների յուրաքանչյուր տեսակի զույգերի մասին, որ վերցվել են տապան, իսկ է 2-ում՝ յուրաքանչյուրից յոթական: Հագարի արտաքսման մասին միատեսակ չի պատմվում Ծննդ. Ժ2 և ԻՍ. 8–21, ինչպես և Մովսեսի դերի մասին (Ելք Գ 1–6, 2 2–7, 13): Պարզվեցին շատ տարբերություններ, և Աստրուկը նկատեց, որ տարբերվող պատումներում Աստված տարբեր ձևով է անվանվում: Որոշ դեպքերում՝ պարզապես Աստված (էլո-*

հիմ), ուրիշներում մշտապես կիրառվում է նրա Սրբազան անունը (Աստրուկի ժամանակ այն սխալմամբ կարդում էին Եհովա և միայն ավելի ուշ վերադարձան ավելի ստույգ արտասանության՝ Եահվե. տե՛ս հատ. Ա § 15, կետ 6): Դա հետագոտողին հանգեցրեց այն եզրակացության, թե «Մովսեսի ձեռքին եղել են հին վավերագրեր, որոնք պարունակում էին նախնիների պատմությունը՝ սկսած աշխարհի արարչագործությունից: Որպեսզի այդ վավերագրերից ոչինչ չկորսվեր, ըստ պատմված փաստերի նա դրանք մասերի բաժանեց և այդ պատառիկները մեկը մյուսից հետո մուծեց ամբողջի մեջ» (Աստրուկի գրքի ռուսերեն համառոտ թարգմանությունը գետեղված է «Происхождение Библии» ժողովածուի մեջ, Մոսկվա, 1964): Աստրուկի աշխատանքը սկզբնավորեց այն տեսությունն վավերագրերի վերաբերյալ, որոնք ընկած են Հնգամատյանի հիմքում և նշված որպես Էլոհիմական և Եահվեական:

5. ԺԹ դարի առաջին կեսի աստվածաշնչական քննությունը:
 Աստվածաշնչական քննության հաջորդ փուլը կապվում է բողոքական գիտնական Յոհանն էյխհորնի (1752-1827) հետ: Նա Ծննդոց գրքի կազմության ժամանակը տեղափոխեց ավելի ուշ շրջանի, թեպետ պնդում էր Մովսեսի հեղինակությունը մյուս չորս գրքերի հարաբերությանմբ: էյխհորնը կարծում էր, որ Գրքի «պատկերային, տեսողական, դրամատիկ լեզուն», հաճախ մերձ հին առասպելներին, բնավ չի հերքում հավատը նրա աստվածաշնչյան լինելու վերաբերյալ, քանի որ սրբազան գրողները ձգտում էին իրենց ուսմունքը ժողովրդին մատչելի դարձնել: Նույն ժամանակ գերմանական բողոքական աստվածաշնչագետ Կարլ Իլգենը (1763-1834) շարունակեց Աստրուկի աշխատանքը և էլոհիմական սկզբնաղբյուրը բաժանեց երկու մասի՝ էլոհիմականի և Քահանայական ավանդության, որին վերաբերում է Ծննդոց գրքի Ա գլուխը, նրա ծագումնաբանությունը և Ղևտացվոց գրքի պաշտամունքային պատվիրանները: 1829 թվականին գերմանացի մեկ այլ աստվածաբան, Վիլհելմ Դե Վեստեն (1780-1849), ընթանալով Հերոնիմոս Երանելու հարթած ճանապարհով, Երկրորդումն Օրինացը նույնացրեց 622 թվականին՝ Օսեե թագավորի օրոք, տաճարում գտնված Գրքի հետ: Դ թագավորությանց ԻԲ-ԻԳ-ի համաձայն՝ այդ գյուտի ազդեցությամբ թագավորը ոչնչացրել է երկրի բոլոր սրբավայրերը, բացի Երուսաղեմի տաճարից: Իսկ մեկ սրբավայրի օրինականությունը հենց Երկրորդումն Օրինացն է, որ հավաստում է (Բ Օր. ԺԲ 5-11): Դե Վեստեն պնդում էր, որ Բ Օրինացն ստեղծվել է հենց այն ժամանակ՝ է դարում, և այն անվանում էր Երկրորդօրենքյան սկզբնաղբյուր: Այդպես ստեղծվեց կանխավարկածը չորս ավանդությունների (կամ վավերագրերի), որոնցից կազմվել է Հնգամատյանը:

6. Վելլիաուզենի դպրոցը և դրա քննադատները: *Զորս վավերագրերի տեսությունը մշակել են բողոքականներ էդուարդ Ռեյսը (1804–1891), Կարլ Գրաֆը (1815–1869) և ուրիշներ: Այն ավարտուն ձև ստացավ գերմանացի պատմաբան Յուլիուս Վելլհաուզենի (1844–1918) աշխատություններում: Իր նշանավոր «Ժսրայելի պատմության ներածություն» (1818, ռուս. թարգմանությունը՝ ՄՊՐ, 1909) գրքով Վելլհաուզենն առաջարկեց վերակառուցել հինկտակարանյան պատմության ամբողջ հայեցակարգը: Նա համարում էր, որ Իսրայելն անցել է բոլոր ժողովուրդների համար ընդհանուր՝ կրոնի զարգացման ճանապարհ՝ ոգիների ու նախնիների հավատից դեպի ազգային միաստվածություն և, վերջապես, մարգարեների էթիկական մոնոթեիզմին: Եահվեականի գրությունը նա վերագրում է Ք. ծ. ա. է դարին, էլտհիմականի գրությունը՝ ավելի ուշ ժամանակի, իսկ Քահանայական տարեգրությունը և Օրենքները՝ Գերություն շրջանին, (Զ դար): Այսպիսով, Հնագամայան իբրև ամբողջություն տեղափոխվում էր սուրբգրային պատմության ավելի ուշ դարաշրջան: Թվում է՝ դա անուղղակիորեն հաստատում էր Օրենքի պակաս ազդեցությունը Պատմական գրքերի վրա (Դատավորներ, Թագավորություններ):*

Ավելի ուշ վավերագրերի վելհաուզենյան դասական տեսությունը մասնակիորեն վերանայվեց, բայց իր ազդեցությունը պահեց ընդհանուր գծերով: Նախապես, սակայն, այն ընդունեցին միայն արմատական բողոքականները և արտակեղեցական ռացիոնալիստները: Այդ տեսությունն ավելի լրջորեն քննադատվեց այն կետի կապակցությամբ, որը բիբլիական կրոնի պատմությունը մեկնաբանում էր զուտ աստիճանական զարգացման եղանակով: Մատնանշվում էր, թե Վելլհաուզենը թերագնահատել է բանավոր ավանդվածի՝ մնայուն ավանդության նշանակությունը, որը հանգում է Մովսեսի, նույնիսկ մինչմովսեյան ժամանակներին: Այդ առարկությունը հաստատեցին հնագիտական գտածոները: Պարզվեց, որ մովսեյան ավանդությունը (երբ էլ գրանցված լիներ) լիովին համապատասխանում էր հնագիտության տվյալներին: Հայտնի է, որ Արևելքում մարդիկ կարող են անգիր հիշել մեծածավալ բնագրեր (օրինակ, Մահաբհարատան, որ մի քանի անգամ ավելի է Հին Ուխտից իր ծավալով):

Վելլհաուզենի փաստարկները՝ բողոքական Ռ. Կիտտելը («Biblia Hebraica»-ի արդեն հիշված կազմողը) և կաթոլիկ Մ. Ժ. Լագրանժը հաստատեցին հինկտակարանյան պատմության անընդհատ հաջորդության առկայությունը: Իր՝ «Ժսրայելի ժողովրդի պատմությունը» գրքում (1909–1912, ռուս. թարգմանությունը՝ Մոսկվա, 1917) Կիտտելը կարողացավ ցույց տալ, որ Թորայի հիմքերը (համենայն դեպս Տասնաբանյան) Մովսեսին են պատկանում, թեև հետագայում ավանդության տարրերը գրավել ու բացահայտվել են աստիճանաբար: Հենց Մովսեսին է հանգում Հին Կտակարանի էթիկական մոնոթեիզմը,

որ միայն զարգացրել ու խորացրել են մարգարեները: Կիտտելի խոսքով՝ նրանք երբեք հանդես չեն եկել իբրև նոր կրոնի հոշակող, այլ միայն իբրև Մովսեսի շարունակողներ: Ավելի ուշ պարզվել է, որ Քահանայական ավանդույթունը ոչ թե գերուխյան ժամանակ է ծագել, այլ բավական վաղ: Բացի այդ, Երկրորդօրենքյան դարաշրջանը մի քանի հարյուրամյակով ետ է մղվել: Դրանում հայտնաբերվեցին Տասը ցեղերի թագավորության բացահայտ հետքեր, ինչպես նաև նրա կենտրոն Սյուքեմի, որը 622 թ. արգեն կորցրել էր իր նշանակույթունը:

Արմատական-բողոքականների պահպանողական խմբակը և հրեական մեկնիչները մինչև օրս մերժում են քննական աստվածաշնչագիտության եզրահանգումները և ձեռնպահ են մնում պատմական եղանակը կիրառելուց: Երկար ժամանակ այդ դիրքորոշմանն էր նաև կաթոլիկ պաշտոնական մեկնաբանության դպրոցը:

7. Ռուս ուղղափառ աստվածաշնչագիտություն: Ռուս ուղղափառ սուրբգրական քննությունն սկսվել է միայն ԺԹ դարում: Հիշենք մետրոպոլիտ Ֆիլարետին (Դրոզդով՝ 1782-1867), Գ. Կ. Վլաստովին (1827-1899), Ա. Ա. Օլեսնիցկուն (1842-1907), Պալլադի (Պյանկով) եպիսկոպոսին (1816-1882), Ս. Մ. Սոլսկուն (1835-1900), Ֆ. Գ. Ելեոնսկուն (1836-1906), Ն. Ա. Ելեոնսկուն (1843-1910), եպս. Միխայիլին (Լուզին 1830-1887), Ի. Ն. Կորսունսկուն (1849-1899), Պ. Ա. Յունգերովին (1856-1921), Ա. Պ. Լոպուխինին (1852-1904), Ի. Ե. Եվսեևին (1868-1921), Մ. է. Պոսնովին (1873-1931) և այլոց (նրանց աշխատանքների ցուցակը կազմել է Վ. Վ. Վորոնցովը, և այն կցված է՝ «Руководство к чтению Библии», Вигуры Ф., Բ հրատ., Մոսկվա, 1916, հատ. 1): Բնագրաքննություն, ներածություն և մեկնություն. Հին Կտակարանի ոչ մի գիրք չի վրիպել նրանց աչքից:

ԺԹ դարի վերջին և Ի դարի սկզբին մի շարք ռուս ուղղափառ գիտնականներ արտահայտվել են քննական սուրբգրագիտության տվյալները հաշվի առնելու օգտին: Ս. Ն. Բուլգակովը 1910 թ. գրել է, որ գրության ժամանակի ու հեղինակի հարցը «չի սպառում Սուրբ Գրքերի կրոնական հեղինակության խնդիրը, որը բնավ կախված չէ հեղինակների պատմական ճշգրտությունից, այլ՝ այդ Գրքի բովանդակության եկեղեցական գնահատականից, որ արտահայտվելու է նրա կանոնականության ճանաչմամբ» («Русская Мысль», 1910, # 6): Քննական աստվածաշնչագիտության արդյունքներն ընդունողների թվում էին պատմաբան, Աստվածաբանության ինստիտուտի պրոֆեսոր Բ. Ա. Տուրաևը (1868-1905), Ն. Մ. Դրոզդովը (1849-1920), կրոնական փիլիսոփա և պատմաբան Ս. Ն. Տրուբեցկոյը (1881-1934), Բ. Ի. Սովեն (1899-1962) և ուրիշներ: Նրանց տեսակետը հույն ուղղափառ գիտնականներից ընդունում էր Աթենքի համալսարանի պրոֆեսոր Վ. Վելլասը (1902-1969):

1944 թվականի փետրվարին Սերգիևյան հոգևոր ճեմարանում (Փարիզ) պրոֆեսոր Ա. Վ. Կարտաշևը (1875–1960) հանդիսավոր ճառ արտասանեց, որով Սուրբ Գրոց ուղղափառ հետազոտողներին կոչ արեց իրենց աշխատանքներում ավելի հաշվի առնել աստվածաշնչական քննության տվյալները: Երեք տարի անց ճառը հրատարակվեց իբրև առանձին գիրք: Նա շեշտում էր, որ աստվածաշնչագիտությունը շատ բանով շոշափում է զուտ գիտական խնդիրներ, շանդրադառնալով Սուրբ Գրքերի աստվածային ներշնչականությանը: Պրոֆեսոր Կարտաշևն անհրաժեշտ էր համարում ընդունել հինկտակարանյան գիտության հետևյալ եզրահանգումները.

1. Հնգամատյանը միայն Մովսեսը չի ստեղծել, այլ լրացրել են աստվածաշունչ մատենագիրները՝ Մովսեսի ավանդության հիման վրա (տե՛ս հտ. 1, § 15):

2. Հին Կտակարանի պատմական գրքերը գերության դարաշրջանում են գրվել՝ առավել վաղ սկզբնաղբյուրների վրա հիմնվելով:

3. Եսայի մարգարեի գիրքը մի ամբողջ դպրոցի երկերի ծաղկաքաղ է և հանգում է ընդհուպ Եսայի մարգարեին: Նա գրել է Գրքի լոկ մի մասը, մնացածները պատկանում են նրա հետևորդներին:

4. Սաղմոսարանն ստեղծվել է ժամանակի ընթացքում՝ Դավիթից մինչև Երկրորդ Տաճարի դարաշրջանը:

5. Առակաց գիրքը միայն իր հիմքով է հանգում Սողոմոնի դարաշրջանին, իսկ ամբողջությամբ կազմավորվել է Երկրորդ Տաճարի շրջանում:

6. Ժողովողի, Հոբի, Դանիելի գրքերը պատկանում են հետգերության շրջանին:

Այս եզրակացությունները չի կարելի վերջնական համարել, բայց այժմ դրանք ընդունում են բոլոր հարանվանությունների աստվածաշնչագետները: Սակայն դրանք անհրաժեշտ է լրջորեն ուսումնասիրել ուղղափառության տեսակետից: Փարիզի Սուրբ Սերգիևյան հոգևոր ճեմարանը Հին Կտակարանի դասընթացը կազմակերպում է Ա. Վ. Կարտաշևի ճառում նախանշված ուղիով (տե՛ս ավագ քահանա Ա. Կնյազևի աշխատանքները):

8. Արդի կաթոլիկ և բողոքական աստվածաշնչագիտությունը: Պիոս ԺԲ պապի «*Divino Afflante Spiritu*» (1943 թ.) կոնդակից և պապական աստվածաշնչյան հանձնախմբի՝ կարդինալ Սյուարին հղած ուղերձից (1948 թ. հունվար) հետո կաթոլիկական մեկնաբանությունը նույնպես վերակառուցվեց Սուրբ Գրքի քննության նվաճումների լույսի ներքո: Վատիկանի Բ ժողովն աշխուժացրեց աստվածաշնչական հետազոտությունները և խթան հանդիսացավ 1943 թ. կոնդակի դրույթների զարգացման համար: Ժողովի՝ «Աստվածային Հայտնության մասին» վարդապետական սահմանադրության մեջ ասված է.

«Քանի որ Աստված Սբ. Գրքում խոսում էր մարդկանց միջոցով և մարդկույթյան հետ, ուստի Սուրբ Գրքի մեկնիչը պիտի ուշադիր ուսումնասիրի՝ իրապես սրբազան գրողներն ինչ էին հասկանում և Աստծուն ինչ էր հարկավոր մեզ հայտնել նրանց խոսքի միջոցով, որպեսզի պարզաբանի, թե Աստված ինչ է կամեցել հայտնել մեզ: Սրբազան հեղինակների նպատակը պարզելու համար, ի շարս այլ պրպտումների, հարկավոր է ուշադրության առնել նաև «գրական տեսակը»: Իսկապես պատմական բնագրերում, մարգարեություններում, բանաստեղծություններում կամ այլ ձևերում ճշմարտությունը մատուցվում ու արտահայտվում է խոսքի տարբեր և զանազան միջոցներով: Ուստի հարկավոր է, որ մեկնիչը հետազոտի իմաստը¹, որ սրբազան գրողը ցանկացել է արտահայտել և արտահայտել է որոշակի հանգամանքներում՝ իր ժամանակի ու իր մշակույթի պայմաններին համապատասխան, իր օրերին գործածական գրական տեսակների օգնությամբ... Այդ գրքերը (Հին Կտակարանի), թեպետ պարունակում են ոչ այնքան կատարյալ և անցողիկ բաներ, սակայն ցույց են տալիս ճշմարիտ աստվածային դաստիարակությունը» (III., 12, IV., 15):

Դեռևս Վատիկանի Բ ժողովից առաջ այս ըմբռնումով պատրաստվել էին կաթոլիկ աստվածաշնչագետների համատեղ ծավալուն աշխատանքներ. «Սբ. Գրքի ներածություն» («introduction la Bible») v. 1-2, sur la dir. de A. Robert et A. Feuillet, Tournai, 1957-1959), «Սուրբ Գրքի կաթոլիկական նոր մեկնություն» («A New Catholic Commentary on Holy scripture», ed. by R.C. Fuller, Nashville-New York, 5 ed., 1968 թ. լույս տեսավ Աստվածաշնչի կոթողային մեկնությունը, որ աշխատասիրել էին ամերիկյան կաթոլիկական դպրոցների պրոֆեսորները՝ «Հերոնիմոսյան մեկնություն» (ի պատիվ Յերոնիմոս Երանելու՝ մեկնիչների հովանավորի. «The Jerome Biblical Commentary», vol. 1-2, ed. by R. E. Brown and oth., London), «Սուրբգրային աստվածաբանության բառարան»՝ Կ. Լեոն-Դյուֆոտի խմբագրությամբ (ռուս. թարգմ. Բրյուսեյ, 1974): Այս աշխատանքներում եկեղեցա-ավանդական տեսակետը բնականորեն ձուլվել է ժամանակակից գիտական քննության նվաճումներին: Մենդոց գրքի և արտասուրբգրական աղբյուրների համեմատության ծավալուն նյութ է հավաքված Բրյուս Վաուլթերի «Մենդոց. Նոր ընթերցում» (Vawter B, On Genesis: A New Reading, Garden City - New York - London, 1977) գրքում: Լայն ընթերցողի համար կաթոլիկ աստվածաշնչագիտության արդյունքները շարադրված են «Ձեռնարկ Հին Կտակարանի ընթերցման» մատենաշարում (ԱՄՆ, 60-ական թվականներ): Հին Կտակարանի աստվածաբանությանը հատուկ ուշադրություն է դարձվում Ֆրանսիական հեղինակների գործերում՝ Լուի Բուլե «О Библии и Евангелии» (ռուս.

¹ Այս և հետագա ընդգծումները հեղինակինն են. - Ծան. ռուս. խմբ.:

թարգմ. Բրյուսել, 1965) և *Ալբեր Ժելինի «Եսակների աղքատները»* («Les pauvres de Yahve», 3ed., Paris, 1956):

Բողոքականներից աստվածաշնչական աստվածաբանությունն ուսումնասիրել են Հարոլդ Ռաուլին («Իսրայելի հավատը» – The Faith of Israel, London, 1956) և *Գերհարդ Ֆոն Ռադը* («Յին Կտակարանի աստվածաբանություն» – Teologie des Alten Testaments, Bd. 1–2, Munchen, 1958): *Վերջինս մատնանշել է Աստվածաշնչում արտացոլված մի քանի ելակետային ավանդույթների վիթխարի նշանակությունը: Նրա կարծիքով դրանցից առաջինը կախված է իսրայելացիների այն խմբերի հետ, որոնք ապրել են Սյուրբեմում տակավին Հեսու Նավեից առաջ: Մեկնիչները պարզել են, որ մարգարեները, ինչպես և սղմոսերգուները սերտորեն կապված են եղել տաճարական պաշտամունքին: Աստվածաշնչական պատմության համադրույթը ներկայացված է ժամանակակից սուրբգրագետ Զոն Բրայթի և Մարտին Նոտի գրքերում:*

Շարունակվում է «The Anchor Bible» բազմահատոր հրատարակությունը (Քրիստոնեական հույսի խորհրդանիշ խարխախով զարդարուն Աստվածաշունչ մատյաններ): *Աշխատանքներին մասնակցում են տարբեր հարանվանությունների մասնագետներ: Մատենաշարի հատորները պարունակում են բնագրերի թարգմանություններ, յուրաքանչյուր բաժնի ներածականներով, մանրամասն ծանոթագրություններ ու մեկնություններ: Համանման աշխատանքներ իրականացվում են Լեհաստանում (կաթոլիկական հրատարակություն): Ռուսաստանում Աստվածաշնչի մեկնաբանված միայն մեկ հրատարակություն է եղել՝ «Մեկնողական Աստվածաշունչ»՝ 12 հատորով, որ սկսվել է պրոֆեսոր Ա. Պ. Լոպուխինի նախաձեռնությամբ: Դրա այժմյան հավելումն է Բրյուսելի Սինոդալ Աստվածաշունչը՝ ստեղծված Երուսաղեմյան Աստվածաշնչի օրինակով:*

9. Մեկնության չորս եղանակների օրինակներ: Բարու և չարի իմացության ծառը (Ծննդ. Բ 9, ԺԶ-ԺԷ և հաջ.):

ա) Այլաբանական մեկնություն. Այդ ծառը նշանակում է վերին հանգամանքների մասին հայեցողություն , որ թույլատրելի չէ անկատար բանականությանը (մտքին) իր մանկական վիճակում:

բ) Բառացի մեկնություն. Դա բույսերից մեկն էր, բայց օժտված էր խորհրդավոր հատկանիշներով:

գ) Բարոյական մեկնություն. Ծառից ճաշակելու արգելքը մարդու մեջ դաստիարակելու էր ժուժկալությունն (պահքի) իբրև արդարության պայմաններից մեկը:

դ) Պատմաբանական մեկնություն. Հին ժողովուրդների խորհրդանիշերի համակարգում ծառը նշանակում է տիեզերք: «Բարին և չարը» այս պարագային ոչ թե բարոյական կատեգորիա են նշանակում, այլ իրերի հակադիր

հատկություններ (հմմտ. Ծննդ. ԻԴ 50, ԼԱ 24, 29, Բ Թագ. ԺԳ 22): Հետևաբար դա «աշխարհի ճանաչողության» ծառն է: Բայց քանի որ «ճանաչել» բայը Հին Կտակարանում հաճախ նշանակում է «տիրել», «կարենալ», «տիրապետել» (Ծննդ. Դ 1, Ա Թագ. ԺԶ 18), ապա տվյալ շարակարգում խոսքը կարող է վերաբերել աշխարհի նկատմամբ մարդու ունեցած ինչ-ինչ իշխանության, որն անկախ է Աստծուց:

Յարգեր կրկնության համար

1. Աստվածաշնչական գիտության եզրակացությունները կարող են հակասել Աստծուց ներշնչվածության ուսմունքին:
2. Երբ սկզբնավորվեց Աստվածաշնչական քննությունը, և որոնք են դրա զարգացման փուլերը (միջնադար):
3. Ինչպիսին էր Աստվածաշնչական քննությունը ԺԶ-ԺԷ դարերում:
4. Բնութագրեցրեք ԺԷ-ԺԸ դարերի աստվածաշնչական հետազոտությունները:
5. ԺԸ-ԺԹ դարերի դր գիտնականներին Է պատկանում հիմնական ներդրումն աստվածաշնչական քննության բնագավառում:
6. Որոնք են աստվածաշնչական գիտության հիմնական եզրակացությունները:
7. Ուղղափառ գիտնականներից ո՞վ Է ուսումնասիրել այն:
8. Ուղղափառ գիտնականներից ո՞վ Է ընդունել այդ եզրակացությունները:
9. Ո՞րն Է արդի կաթոլիկական տեսակետն աստվածաշնչական քննության վերաբերյալ:

§ 12. «Աստվածաշնչյան աշխարհ».

Յին Իսրայելի հարակից քաղաքակրթությունները

1. Պատմության սկիզբը: «Հավատացյալների հայր» Աբրահամը, Աստծու ժողովրդի նախահայրը և հինկտակարանյան Եկեղեցու նահապետը, պատմության մեջ հայտնվեց, երբ շրջակա քաղաքակրթություններն արդեն ունեին շուրջ երկու հազարամյա անցյալ: Աստվածաշնչական բուլոր իրադարձությունները տեղի էին ունենում Իսրայելի հարևանների հետ սերտ շփումով: Հենց հեթանոսական հավատքներում վայրենի բազմաստվածության կողքին կային ճշմարտության հատիկներ: Սերաֆիմ Սարովսկին¹ ասում էր. «Բնչպես հրեական Աստծուն սիրելի ժողովրդի մեջ, Տիրոջը չճանաչող հեթանոսների շրջանում, այնուամենայնիվ պահպանվել է աստվածճանաչողությունը» («Չրույց Մոտովիլովի»² հետ): Ուստի հինկտակարան-

¹ Սերաֆիմ Սարովսկի (1754–1833) – Ռուս եկեղեցու հայտնի մենակյաց–ճգնավոր հոգևորական – խմբ.:

² Մոտովիլով Ն. Ա. (1809–1879) – Սարովսկու գրուցակիցը և կենսագիրը – խմբ.:

յան Եկեղեցին ոչ միայն հակադրվել է հեթանոսությանը, այլև օգտվել է դրա հոգևոր ժառանգությունից: Աստվածաշնչի քննությանը ձեռնամուխ լինելով՝ անհրաժեշտ է թեկուզ թռուցիկ հայացք ձգել այդ՝ ներկայիս մարած հեթանոսական մշակույթներին:

Նեղ իմաստով պատմությունն ընդունված է սկսել գրի ծագման դարաշրջանից: Սրա առաջին հուշարձանները կարելի է վերագրել Ք. ծ. ա. չորրորդ հազարամյակին: Այն գրեթե միաժամանակ հայտնվեց այսպես կոչված Բարեբեր մահիկի¹ երկու բևեռներում՝ Նեղոսի ու Եփրատի միջև, Եգիպտոսում և Միջագետքում (ներկայիս Իրաքում):



Լագաշի թագավոր Գուդեայի արձանիկը, դիորիտ, 2150 թ. Ք. ծ. ա.

2. Շումեր (Աստվածաշնչում՝ Սենաար):

Հին Միջագետքում հաջորդաբար կողք կողքի ապրել են շատ ցեղեր ու ժողովուրդներ: Բայց Միջագետքի իսկական հիմնողները շումերներն էին՝ ժողովուրդ, որ Եփրատի ու Տիգրիսի հովիտ են եկել Ք. ծ. ա. 3000 թվականին: Նրանք չորացրել են ճահիճները, ստեղծել ոռոգման բարդ համակարգ, մշակել են հողը, կառուցել քաղաքներ, սկսել առևտուր անել: Շումերները հայտնագործել են գիրը և հիմնել առաջին դպրոցները: Նրանց գրագիրները սուր ձողիկներով նշաններ են գծել կավե աղյուսներին, որոնք այնուհետև չորացրել են ու թրծել (սեպագիր):

Նրանք ստեղծել են Օրենքների առաջին հավաքածուները և բավական հարուստ գրականություն: Շումեր երկիրը միավորում էր Հարավային Միջագետքը (մոտ. 15.000 կմ²): Պետությունը ներառում էր մի քանի միութենական քաղաք, որոնք ղեկավարվում էին Էնաերը՝ կառավարիչ-քուրմերը: Գլխավոր քաղաքներն էին Ուրը, Նիպպուրը, Ուրուկը և Լագաշը:

Շումերում պաշտում էին բնության ուժերը մարմնավորող աստվածների (Ան - երկինք, Էնլիլ - երկիր, Էնկի - ջուր) և երկնային լուսատուները (Շամաշ - Արեգակ, Սին - Լուսին, Ինանա - Արուսյակ - Վեներա և այլն): Շումերները հավատում էին, որ և՛ մարդկանց, և՛ աստվածներին իշխում է ճակատագիրը, բայց մարդիկ անմիջապես կախված են աստվածներից: Հենց աստվածների վեճը հանգեցրեց ոսկեդարի կործանման, երբ երկրի վրա չկար «ո՛չ վախ, ո՛չ սարսափ»: Շումերական տիեզերածնության համաձայն նախապես եղել է համաշխարհային օվկիանոս, դրանից ծագել են աստվածները, որոնք հողն

¹ Պայմանական անուն, որ կիրառվում է ներկայիս Լիբանանի, Պաղեստինի, Իսրայելի, Սիրիայի, Իրաքի, Թուրքիայի, Զորդանանի, Երբեմն նաև Եգիպտոսի մի շարք տարածքների կապակցությամբ:

անշատեցին ջրից, երկիրն քր երկրից: Նրանց դիցարանը մի քանի հարյուր աստված ունեեր: Նրանց պատկերացնում էին մարդանման և ոչ զուրկ բարությունից: Ճիշտ է, նրանք ստեղծեցին մարդկանց, որ սրանք իրենց կերակրեն (գոհաբերությունների միջոցով), բայց ընդհանրապես իրենց նկատմամբ բարյացակամ էին: Աստվածների համար բնակարաններ էին կառուցում տաճարներ ու սրբազան աշտարակներ, աստիճանավոր զիկկուրատներ: Շումերների աղոթքներն ու օրհներգերն անկեղծ կրոնական զգացմունք են արտահայտում: Վիպերգերից մեկում պատմվում է տառապող բարեպաշտի մասին, որ վերին օգնության հույս ուներ և շարհամարհվեց: Բայց Միջագետքի բնակիչները հետմահու հատուցման մասին չէին խորհում: Նրանց ըմբռնումներով տարտարոսը մռայլ տեղ է, ուր մեռյալների ստվերները ողորմելի կիսարթուն գոյություն են քարշ տալիս. դա է սպասում բոլորին՝ և՛ չար, և՛ բարի մարդկանց: Կարևոր է, որ այդ հայացքը երկար ժամանակ ընդունում էին նաև իսրայելացիք (դրա պատճառների մասին կխոսենք Ծննդ. Գ 19-ը վերլուծելիս):

3. Աքքադ: Շումերների հայտնվելուց հետո շուտով Միջագետքի միջին շրջանում (այնտեղ ուր Տիգրիսն ու Եփրատը մերձենում են) բնակվեցին սեմական ցեղեր, որ կազմավորեցին Աքքադ պետութունը: Մոտ 2300 թ. Աքքադի Սարգոն Ա թագավորը նվաճեց Շումերը: Սարգոն Ա-ի թոռ Նարամ-Սուենն առաջինը հայտարարեց իր աստվածութունը: Սարգոնյան հարստության օրոք սկսվեց Միջագետքի երկու մասերի ժողովուրդների միախառնումը: Աստիճանաբար շումերներն իբրև ազգ սկսեցին անհետանալ՝ կլանվելով եկվորներից: Բայց նրանք վերջիններին թողեցին գրչութուն և մշակույթ, որ շարունակեց բարեհաջող զարգանալ: Աքքադական կայսրութունը կործանվեց Ք. ծ. ա. 2200 թ. լեռնականների հարձակումներից:



Նարամ-Սուեն արքայի հուշակոթողը, Ք. ծ. ա. XXIII դարավերջ

4. Էբլա: Նարամ-Սուեն թագավորը նվաճեց Էբլա պետութունը, որ Ասորիքում էր՝ Միջագետքի հյուսիս-արևմուտքում: Այդ պետության մասին նախկինում գրեթե ոչինչ հայտնի չէր: 1964-1974 թթ. պեղումները պարզեցին, որ Էբլայում բարձր զարգացած մշակույթ է եղել (գտնվել են արվեստի գործեր և հարյուրավոր վավերագրեր): Աստվածաշնչական պատմության համար այդ գյուղը շատ կարևոր էր, քանի որ Էբլական բնագրերում հանդիպում են աստվածաշնչական անուններին

մոտ անուններ: Այնտեղ հիշատակված են նաև Գազան, Մակեդոնացի, Ասորը և, ըստ երևույթին, Երուսաղեմ քաղաքը, որ, իբրև հետևություն, գոյություն են ունեցել իսրայելական պատմությունից շատ առաջ:

5. Եգիպտոս: Վաղ և Հին թագավորություններ (մոտավորապես 3000-2200 թթ. Ք. ծ. ա.). Եգիպտական պետությունը (եգիպտ. *Կեմե* կամ *խեթ Կարտախ*, հուն. Αἴγυπτος) կազմավորվել է Նեղոսի հովտում, այն դարաշրջանում, երբ քարե գործիքները փոխարինվում էին պղինձով: Երկրի բնակչությունը, որ խոսում էր քամերեն¹, մի կողմից ցեղակից է աֆրիկյան ցեղերին, մյուսից՝ սեմականներին: Վաղ թագավորության շրջանում մարգերը (սոմ) միացված էին միասնական թագավորի իշխանությանը (հին եգիպտերեն՝ *պեռո*, հուն. *փարավոն*), որին ենթարկվում էին Ներքին (Դելտա) և Վերին Եգիպտոսը: Փարավոնը համարվում էր արևի Ռա աստծու որդին: Այս աստվածությունից բացի եգիպտական դիցարանում կային շատ այլ աստվածներ, որոնց հաճախ մարմնավորում էին կենդանիները (իբիս - քաջահավ, կով, կատու, կոկորդիլոս): Ամենահայտնի աստվածներից առաջինն Օսիրիսն էր՝ վերածննդի, բնության արտադրող ուժը մարմնավորող եգիպտական աստված (հետագային անդրաշխարհի արքան):

Վաղ և Հին թագավորությունների շրջանում երկրում արդեն կային գաղափարագիր, առկա էր գիտությունը, օրացույցը, բժշկությունը: Եգիպտական արվեստն ու մշակույթը մի քանի հազարամյակ անընդմեջ պահպանեցին բարձրակարգ ժառանգականություն: Կայուն եղավ նաև կրոնական ավանդույթը, որ մարեց միայն քրիստոնեության մուտքից հետո: Եգիպտացիները խորապես հավատում էին անդրշիրիմյան կյանքին և հետմահու հատուցմանը: Նրանք համարում էին, որ հոգու ճակատագիրը սերտորեն կապված է մարդու աճյունի վիճակի հետ: Ուստի մարմինները զմուսում էին և հոգու համար ստեղծում «բնակարաններ»՝ արձանիկների տեսքով, իսկ ամենազոր փարավոնների համար՝ վիթխարի բուրգեր: Դրանցից ամենամեծը Քուֆու փարավոնի բուրգն է (146 մ. բարձրությամբ): Հին թագավորության շրջանի ավարտին երկրում գերիշխում էին կենտրոնախույս ուժերը. ամեն մարդ անկախություն էր որոնում, որով քայքայվեց պետությունը:

6. Եգիպտոս: Միջին թագավորություն (մոտ. 2000-1700 Ք. ծ. ա.). Գ և Բ հազարամյակների սահմանին (Աբրահամի դարաշրջանից քիչ առաջ) փարավոնները կրկին կարողացան միավորել Եգիպտոսը և հաջող գործողություններ ձեռնարկեցին հարևան երկրներում՝ Եթովպիայում և Պաղեստինում: Այս շրջանն անվանում են Միջին թագավորություն: Պետական աստված էին համարում թեբեական Ամոնին, որին նույնացնում էին Ռա-ի հետ:

¹ Քամյան, սեմաքամական կամ քամասեմական ընտանիքի լեզու, որ արևմտյան գրականության մեջ աֆրոասիական եզրույթով է բնորոշվում. - Ծան. թարգմ.:

Այս շրջանում Եգիպտոսի գրականությունը ծաղկման է հասնում: Ստեղծվում են օրհներգեր, պատմական աշխատություններ, հեքիաթներ, վիպերգեր, խրատական առակներ, ինքնակենսագրություններ: Եգիպտոսի արվեստը, չհեռանալով հանդերձ ժամանակի կանոններից, սկսում է մոտենալ իրապաշտության: Միջին թագավորության վերջում Եգիպտոսը բռնկվում է երկպառակտիչ պայքարով ու ապստամբություններով: 1700 թվականին Դեյտա են ներխուժում սեմական¹ ծագում ունեցող զավթիչները: Ուշ շրջանի հունական տարեգրությունները սրանց անվանում են հիքսոսներ: Նրանք ունեին ռազմական ուժեր ու ձիեր, որպիսիք եգիպտացիները դեռ չէին տեսել: Եգիպտոսը նվաճվեց, և 100 տարուց ավելի նրանց կառավարում էին ասիացի փարավոններն իրենց մայրաքաղաքից, որ Դեյտա Ավարիսում էր (ըստ երևույթին հենց հիքսոսների ժամանակ Հովսեփը և նրա ցեղակիցները տեղափոխվեցին Եգիպտոս):

7. Հինբաբելական թագավորություն: Ք. ժ. ա. մոտ. 2000 թ. (Աբրահամից քիչ առաջ) Միջագետք թափանցեցին սեմական ամորհացիները: Նրանք հիմնեցին երկու պետություն՝ Բաբելոն և Մարի: Համմուրաբի թագավորի ժամանակ (ժԸ դ. առաջին կես) գրեթե ամբողջ Միջագետքը ենթարկվեց վերջինիս: Մայրաքաղաք դարձավ Բաբելոնը: Համմուրաբին օրենքների հավաքածու ստեղծեց, ուր ամփոփվեց Արևելքի հին իրավունքը: Այս թագավորի ու նրա ժառանգորդների դարաշրջանում ծաղկում է Հինբաբելական թագավորությունը: Սրա մշակույթն աճում է շումերա-աքքադականի հիման վրա: Բարձր մակարդակի են հասնում բժշկությունը, աստղագիտությունն ու մաթեմատիկան: Այս դարաշրջանին է վերաբերում «Քաղղեական Մենդոցը»՝ աշխարհի արարչության վիպերգը («Էնումա էլիշ»), որը պատմում է, թե ինչպես գարնանային արևի աստված և Բաբելոնի հովանավոր Մարդուկը հաղթեց իրեն ծնած տիեզերական հրեշներ Թիամատին ու Ապսուին (աղի և քաղցրահամ ջրերը), ինչպես Թիամատի մարմնից ստեղծեց երկինքը և երկիրը, կացարաններ հիմնեց աստվածների համար և կավից արարեց մարդկանց, որ ծառայեն իրեն՝ Մարդուկին, ու իր եղբայրակիցներին: Հինբաբելական իմաստունները վերամշակեցին շումերական վիպերգը Գիզլամեշի՝ անմահություն որոնած և չգտած թագավորի մասին («Ամենը տեսածի մասին»): Վիպերգն ընդգրկում է ջրհեղեղի նկարագրությունը, որի մասին ավանդություն ունեին շումերները: 1530 թ. Բաբելոնը ենթարկվեց խեթերի հարձակման (տե՛ս ստորև՝ կետ 9), իսկ ապա՝ լեռնական կասսիտների գրոհներին, և կայսրությունը կործանվեց:

¹ Հաճախ դիտարկվում է նաև հիքսոս-հիլքսոսների (հուն. Ἰκσωός կամ Ἰξώος) հնդեվրոպական (ի մասնավորի հայկական) ծագման հարցը. – Ծան. թարգմ.:

8. Եգիպտոս: Նոր թագավորություն (մոտ. Ք. ծ. ա. 1580-1050 թթ.): Հիբ-սոսների դեմ ապստամբությունները գլխավորում էին Թեբեի կառավարիչները: Ասիական փարավոնների Ավարիս մայրաքաղաքը կործանվեց: Նոր թագավորության առաջին թագավոր եղավ Յահմոս Ա-ն: Եգիպտացիները գիտեին բրոնզ ձուլելու արվեստը, սովորեցին ձի ընտելացնել և օգտագործել, զարգացրին առևտուրը և արդյունաբերությունը: Մոտավորապես 1500 թ. Թուֆմոս Գ փարավոնը 15 արշավանք ձեռնարկեց՝ անցնելով Պաղեստինը, Սիրիան և հասնելով Եփրատ:

Մոտ. 1400 թ. պատմության մեջ առաջին անգամ Եգիպտոսում փորձ արվեց պետական միաստվածություն ընդունել: Էքնաթոն փարավոնը վերացրեց Ամոն-Ռայի պաշտամունքը և դրա փոխարեն հաստատեց մի աստու պաշտամունքը, որ մարմնավորում էր արևի սկավառակ Աթոնը (Օրհնեթզ Աթոնի պատվին, որը վերագրվում է թագավորին. այն շատ բանով զուգահեռվում է Սաղմ. ԾԳ-ին): Էքնաթոնն իր համար նոր մայրաքաղաք կառուցեց, որտեղ ճարտարապետներն ու նկարիչները մշակեցին կերպարվեստի ու ճարտարապետության նոր ոճ: Էքնաթոնից հետո կրոնական բարեփոխումները վերացան: Նրա մահից հետո փարավոնները վերադարձան Թեբե և վերականգնեցին նախկին պաշտամունքները: ԺԳ-ԺԳ դդ. սահմանին Ռամզես Բ իր նստավայրը տեղափոխեց Դելտա՝ վերականգնելով ավերված Ավարիսը: Նա լարված պայքար մղեց խեթերի դեմ՝ Պաղեստինին (Քանան) տիրելու համար: Պայքարը շարունակեց նրա որդի Մերնեփթահը (մոտ. 1230 թ.): Ռամզես Բ և Մերնեփթահը Մովսեսի ժամանակակիցներն էին: ԺԲ-ԺԱ դդ. փղշտացիների և «ծովի մյուս ժողովուրդների» (էգեյաններ) արշավանքները վերջ տվին փարավոնների հզորությանը:

9. Խեթեր (Ս. Գրքում՝ քետացիներ): Հնդեվրոպական այս ժողովուրդը (ցեղակից իրանցիներին, արիացիներին և հույներին) մոտ. Ք. ծ. ա. 1800 թ. գրավեց Փոքր Ասիան: Խեթերը հիմնեցին Խեթական թագավորությունը, որ հաջող մրցակցում էր Բաբելոնի ու Եգիպտոսի հետ: Նրանք իրենց գիրն ունեին, յուրօրինակ արվեստ և գրականություն: Նրանց Հատուսաս մայրաքաղաքը մինչ օրս զարմացնում է իր կիկլոպյան շինությունների ավերակներով: Խեթական օրենքները հին իրավաբանական ստեղծագործության նշանակալից հուշարձաններից են: ԺԳ-ԺԲ դդ. էգեյան ծովի կղզիների ցեղերը թափանցեցին Փոքր Ասիա և թերակղզում վերջ տվին խեթական պետությանը:

10. Փյունիկիան Ասորիքի քաղաք-պետությունների միությունն էր, որոնցից գլխավորներն էին Տյուրոսը և Սիդոնը: Սեփական պաշարներից զուրկ Փյունիկիան աշխույժ առևտուր էր անում: Նրա նավերը հեռավոր նավարկության էին գնում: Հետո փյունիկեցիք Աֆրիկայում հիմնեցին Կարթա-

գենը, որը դարձավ հզոր պետություն՝ մրցակցելով Հռոմի հետ: Փյունիկյան մշակույթի գլխավոր նվաճումներից մեկն այբուրեննի ստեղծումն էր, որ ընկավ եվրոպական այբուբենների հիմքում: Իրա նախատիպն էր այսպես կոչված սինայական գիրը: Սա ծագել էր Եգիպտոսի հետ սերտորեն կապված սեմականների շրջանում (թերևս հիքսոսների), և նախապես ելնում էր գաղափարագրից (հավանական է, որ Մովսեսի 10 պատվիրանները գրված են եղել հենց սինայական այբուբենով): Եգիպտոսի թուլացումը փյունիկյան թագավորներին հնարավորություն տվեց հզորության և անկախության հասնելու: Քիրամ Ա թագավորը (մոտ. Ք. ծ. ա. 950 թ.) Սողոմոնի դաշնակիցն էր: Փյունիկյան մշակույթը կրկնակի՝ եգիպտական և Միջագետքի ազդեցության տակ էր: Փյունիկիայի կրոնի մասին կիսովի ստորև՝ Քանանին նվիրված գլխում, որը մշակութային ու ցեղային առումով Փյունիկիայի հետ միասնական ամբողջություն էր:



Փյունիկյան Քիրամ արքայի դամբարանը, X դ. Ք. ծ. ա.

11. Ասորիք: Արամեական թագավորություն: էբլայի կործանումից հետո (տես վերևը՝ կետ 4) Ասորիքի սեմական քաղաք-պետությունները փոփոխաբար գտնվում էին խեթերի, միտանիացիների (Հյուսիսային Միջագետք), եգիպտացիների իշխանության տակ: Ք. ծ. ա. ԺԲ դարում արևելքից այստեղ փոխադրվեց արամեացիների ցեղը (իսրայելացիների մերձավոր ազգակիցներ): Նրանք թագավորություն հիմնեցին Դամասկոս կենտրոնով, որը որոշ ժամանակ Իսրայելական թագավորության կազմի մեջ էր (Դավիթի ժամանակ): Բայց Սողոմոնի ժամանակ դարձավ ինքնուրույն: Դամասկոսի թագավորները հաճախ մրցում էին Իսրայելի հետ, երբեմն նրա հետ միություն էին կազմում Ասորեստանի դեմ (Բենադադ Բ-ի օրոք, մոտ. Ք. ծ. ա. 880-844): Հազայել (Ազայել) թագավորի ժամանակ (844-804) արամեացիները դարձան ասորեստանցիներին հարկատու: Ընդդիմանալով նրանց, Ռասոն թագավորը (Ը դար, Եսայի մարգարեի ժամանակակիցը) գործում էր Հյուսիսային Իսրայելի թագավորության հետ համատեղ. նրան ջախջախեց Թիզլաթպալասար Գ (Աստվածաշնչում Փուա), և այդ ժամանակից հին Ասորիքը դառնում է Ասորեստանի կայսրության նահանգ: Ավելի ուշ այնտեղ իշխում են քաղղեացիները, եգիպտացիները, հույները, հռոմայեցիները, նաբատացիները: Ասորական մշակույթը մեծ կախում ուներ հարևան ժողովուրդների մշակույթներից, հատկապես՝ Միջագետքի ժողովուրդների: Բայց արամեերենը (որ մերձ է եբրայեցերենին) աստիճա-

նաբար դարձավ Արևելքում ամենատարածվածներից (Պաղեստինից մինչև Ինդոս): Բաբելոնյան գերության ժամանակ հրեաների մեծ մասը կենցաղում կիրառում էր այդ լեզուն: Այն Պաղեստինում տիրապետող էր նաև ավետարանական դարաշրջանում:

12. Ասորեստանյան ռազմական տերությունը ծագել է մոտավորապես Ք. ծ. ա. 900 թ.: Ասորիները սեմական ժողովուրդ են, որ բնակվել են հյուսիսային Միջագետքում և ստեղծել իրենց պետությունը տակավին երկրորդ հազարամյակում, բայց միայն Աշուրնասիրապալ Բ-ի ժամանակ (883-859) սկսեցին լայնորեն ծրագրված նվաճումները: Նրանք գրավեցին Կովկասը, Փյունիկիան, Ասորիքը, Իսրայելը և սպառնացին Եգիպտոսին: Ասորեստանի թագավորներն արտակարգ դաժանություններ էին մարտնչում. կտտանքների էին ենթարկում բնակչությանը, ոչնչացնում էին ցանքսերն ու այգիները, հողին հավասարեցնում քաղաքները: Ասորեստանյան լծի դեմ մեկից ավելի ապստամբություններ են բռնկվել, որ գլխավորում էր Իսրայելը, հենվելով Եգիպտոսի ու Բաբելոնի վրա: 722 թ. ասորեստանցիք կործանեցին Սամարիան, 689 թ.՝ Բաբելոնը: Եվ սոսկ Ասորեստանի թուլացումն օգնեց հրեա Օսեե թագավորին երկրի անկախությունը վերականգնել:

Ասորեստանի մշակույթն ամբողջովին կախված էր Միջագետքի ժողովուրդների մշակույթից: Դրա ամենաարժեքավոր բնագավառը կերպարվեստն էր: Ասորեստանյան արձանիկները, տաճարները և բարձրաքանդակները մտնում են Արևելքի համաշխարհային մշակույթի գանձարանը:

Ասորեստանի վերջին թագավորներից մեկի՝ Աշուրբանիպալի օրոք երկրի մայրաքաղաք Նինվեում ստեղծվեց վիթխարի գրադարան, որի մի մասը հասել է մեր օրերը: Դա հին Միջագետքի գրականության եզակի հավաքածու էր (գրեթե 20 հազար կավե աղյուսակ): Ասորեստանցիների գլխավոր աստվածն Աշուրն էր, բայց նրանց բազմաստվածությունն ընդհանուր գծերով քիչ էր տարբերվում Բաբելոնի բազմաստվածությունից:

612 թ. գարնանը Նինվեն կործանեցին մարաց թագավորի զորքերը: Ասորեստանի կայսրությունը դադարեց գոյություն ունենալ: Բայց ասորեստանցիք իբրև ժողովուրդ չվերացան: Նրանց ժառանգները՝ ներկայիս ասորիներն, այժմ ևս ապրում են՝ սփռված աշխարհով մեկ (գլխավորապես Մերձավոր Արևելքում) և պահում են իրենց ազգային դեմքը: Ներկայիս ասորիները (այսորիներ) քրիստոնյաներ են:

13. Նորբաբելոնյան կամ Քաղդեական թագավորություն: Ասորեստանի դեմ մղած երկարատև պայքարում Բաբելոնն ամրացավ: Մարդուկապլա-իդինի (Հուդայի՝ Եզեկիա թագավորի դաշնակցի) ձախողումներին հաջորդեցին նրա հետնորդների հաջողությունները: 626 թ. Բաբելոնն ան-

ջատվեց Ասորեստանից, իսկ 605-ին ասորեստանյան զորքի մնացորդները Կարքեմիշի մոտ ջախջախեց Բաբելոնի տիրակալ Նաբուգոդոնոսորը, որ շուտով դարձավ Բաբելոնի թագավոր: Նա ժառանգություն ստացավ Ասորեստանի պետության մի մասը, հնազանդեցրեց Ասորիքը, 587 թ. ավերեց Երուսաղեմը և բնակիչներին արտաքսեց Բաբելոն: Նաբուգոդոնոսորի մայրաքաղաքը կրկին դարձավ Մերձավոր Արևելքի առաջատար քաղաքը՝ ծաղկուն և բազմազգ: Նաբուգոդոնոսոր Բ իշխեց 43 տարի (մահ. 562 թ.): Նրանից հետո Քաղղեացիների թագավորությունն արագ անկում ապրեց: Այստեղի վերջին թագավորը Նաբոնիգոնն էր (556-539), իսկ Նաբուգոդոնոսորի որդի Բաղդասարը՝ մայրաքաղաքի փոխարքան: Այս իշխողները հակասություններ ունեին քուրմերի ազդեցիկ դասի հետ, որոնք առանց պայքարի Բաբելոնը հանձնեցին պարսից Կյուրոս թագավորին (539 թ.): Բաղդասարն սպանվեց, իսկ Նաբոնիգը գերեվարվեց:

14. Իրան: Պարսկական կայսրությունն ստեղծվեց Միջին Ասիայի, Աֆղանստանի և Պարսկական ծոցի միջև: Սկզբնապես այստեղ տիրապետող էին առանձին քաղաք-պետությունները՝ մարերի և պարսիկների: Ք. ա. առաջին հազարամյակի կեսերին Իրանում ի հայտ եկավ Զրադաշտը՝ մալդեակյան կրոնի հիմնադիրը: Նա ուսուցանում էր, որ աշխարհի և ճշմարտության մեծ աստվածը՝ Մազդան (կամ Ահուրամազդան), անդուլ պայքարում է իր հակառակորդ Ահրի-Մանյուի հետ, որ խավարի, մահու և կործանման տիրակալն է: Այս դուալիզմը լայնորեն տարածվեց Արևելքում և ավելի ուշ անցավ անտիկ և միջնադարյան աշխարհ (գնոստիկականություն, մանիքեականություն): Մազդեականությունը միանգամից Իրանի պետական կրոն չդարձավ: Երբ Աքեմենյան Կյուրոս Բ (558-530 թթ.) հիմնեց իր պետությունը, կրոնական հանդուրժողականության կողմնակից էր, բայց աստիճանաբար Իրանի աստվածներին դուրս մղեց Ահուրամազդայի պաշտամունքը:

Կյուրոսը գրավեց Փոքր Ասիայի մի մասը, իրեն ենթարկեց հունական քաղաքները, և, վերջապես, իր կայսրությանը միացրեց Բաբելոնը: 525 թ. ընկավ Եգիպտոսը: Աքեմենյանների կայսրությունն այդուհետև ներառում էր երկրներ՝ Աֆրիկայից մինչև Միջին Ասիա, և Հնդկաստանից մինչև էգեյան ծով: Դարեհ Ա-ի ժամանակ (522-486 թթ.) Իրանը լարված պայքարում էր արևմուտքում հույների ու սկյութների դեմ, բայց Աթենքը գրավելու փորձերն ապարդյուն էին (Քսերքսեսի պարտությունը Սալամինի մոտ 480 թ.):

Հինիրանական մշակույթի ժառանգությունից ամենանշանակալիցն Ավեստան է՝ մազդեականության սրբազան գիրքը: Սրա ավելի ուշ մասերում սկսվում է դուալիզմի հաղթահարումը: Երկու պայքարող աստվածների վերևում հայտնվում է մի, գերագույն աստվածը՝ Զրվանը: Բայց այս գործընթացն արդեն վերաբերում է Քրիստոսի ծննդից հետո ընկած ժամանակին:

Իսլամն արմատախիլ արեց մազդեականությունը: Մազդեական մնացորդները (փարսիները) փախան Հնդկաստան: Եվ նրանք մինչև մեր օրերը պահպանեցին Ավեստան:

15. Ուշ շրջանի Եգիպտոսը (Թ-Ա դդ. Ք. ծ. ա.): Փարավոնների երկրի գորությունն այս շրջանում նշանակալիորեն նվազեց: Երկիրը տևականորեն գտնվեց եթովպական թագավորների իշխանության տակ, որ ասորեստանցիների դեմ պայքարելիս օգնություն էին փնտրում Հուդայի երկրում: Լոկ կարճատև պահերի է երկիրն իրեն վերադարձնում իր երբեմնի փառքը, որից հետո նորից ընկնում է Իրանի ազդեցության տակ: Այնուհետև գալիս են հունական (հելլենական) թագավորների իշխանության ժամանակները, որոնց Ք. ծ. ա. 30 թվականից փոխարինում են հռոմեացիները: Եգիպտոսի մշակույթի նոր վերելքն սկսվում է միայն քրիստոնեական շրջանում: Է դարից երկիրը իսլամացվում է և դառնում արաբական: Հին եգիպտացիների հետնորդները՝ ղպտիները, այժմ քրիստոնեություն են դավանում¹:

16. Հելլենիստական թագավորություններ: Ք. ծ. ա. 333 թ. Ալեքսանդր Մակեդոնացին (336-323 թթ.) պարտության է մատնում Դարեհ Երրորդին և դառնում է Հունաստանի, Եգիպտոսի, Փոքր Ասիայի, Իրանի, Ասորիք-Պաղեստինի և Միջին Ասիայի տիրակալ: Նրա մահից հետո այդ կայսրությունը բաժանվում է անկախ թագավորությունների: Եգիպտոսն ու Պաղեստինը կառավարում են Պտղոմեոսյանները, Ասորիքն ու Փոքր Ասիան՝ Սելևկյանները: Սելևկյանները նվաճում են Հրեաստանը, որը նրանց գերիշխանությունից ազատվում է միայն Մակաբայեցիների ապստամբության (մոտ. 160 թ.) հետևանքով: Ք. ծ. ա. առաջին դարի վերջին հելլենիստական թագավորությունների վրա հաստատվում է Հռոմի իշխանությունը: Հռոմից անկախ է մնում միայն Իրանը, որ մտնում էր Հռոմեական Կայսրության գլխավոր մրցակցի՝ Պարթևական թագավորության մեջ:

Հարցեր կրկնության համար

1. Գլխավորապես ո՞ր ժողովուրդներն էին շրջապատում հին Իսրայելը:
2. Եգիպտոսի պատմությունն ի՞նչ փուլերի է բաժանվում:
3. Միջագետքի պատմությունն ի՞նչ շրջանների է բաժանվում:
4. Աշխարհին ի՞նչ են տվել եգիպտական և բաբելոնյան մշակույթները:
5. Ո՞վ է առաջին պետական՝ միաստվածական կրոնի ստեղծողը:
6. Աշխարհին ի՞նչ են տվել փյունիկեցիք:
7. Ո՞րն է Իրանի կրոնի գլխավոր հատկանիշը:
8. Հին Մերձավոր Արևելքում ո՞ր կայսրություններն են հաջորդել իրար:

¹ Արևելյան ոչ-քաղկեդոնական ընտանիքի անդամ է, որի մեջ է մտնում Նաև-Հայ եկեղեցին. – Ծան. խմբ.:

§ 13. Հին Կտակարանի ստեղծման և հինկտակարանյան պատմության համառոտ ակնարկ

(Ժամանակակից աստվածաշնչագիտության տվյալների համաձայն)

1. Ուխտն ինչո՞ւ տրվեց մեկ ժողովրդի շրջանակներում: Աստվածաշնչի գրքերը փառավոր ու հզոր քաղաքակրթություններից մեկի ստեղծածը չեն, այլ եղել են Հայտնություն՝ տրված փոքր և աղքատ երկրում ապրող մի ժողովրդի, որի պատմությունը դաժան փորձությունների, ճգնաժամերի ու դժբախտությունների շղթա է: Բայց հենց այդտեղ էր Քրիստոսի Եկեղեցու հոգևոր նախադուռը և նախակերպարը: Հին Կտակարանում Եկեղեցին, կամ Աստծու ժողովուրդը սահմանափակված էր ազգային շրջանակներով: Դա պայմանավորված է նրանով, որ հնում ցանկացած հոգևոր գիտելիքի փոխանցումն իրագործվում էր ծնողներից զավակներին՝ որոշակի մշակույթի և ազգային ավանդույթյան սահմաններում: Այդ փուլն սկսեց հաղթահարվել հելլենիստական դարաշրջանում (Ք. ծ. ա. 9-1 դդ.), երբ հինկտակարանյան Եկեղեցի սկսեցին մտնել առաջին նորադարձները: Նորկտակարանյան Եկեղեցին արդեն ընդգրկում է հրեաների ու հելլենների, բարբարոսների ու սկյուֆների (Կող. Գ 11)՝ վերածվելով Աստծու նոր՝ տիեզերական ժողովրդի:

2. Նահապետները և բանավոր պատումները: Իսրայելացիների նախնիները, որ կոչվում են նահապետներ, Արևելքից՝ Միջագետքից ու Ասորիքից, եկան Պաղեստին: Նրանց գաղթը կապված էր վերին կանչով, որն Աբրահամին հուշեց թողնել «հոր տունը»: Ըստ երևույթին այդ ժամանակ (Ք. ծ. ա. 1900-1700 թթ.) հյուսվեցին աշխարհի ու մարդու սկզբի վերաբերյալ ասքերը, ինչպես նահապետներին վերաբերող ավանդությունները (Աբրահամ, Իսահակ, Հակոբ, Հովսեփ և այլն): Այդ ավանդությունը պահպանվեց քանավոր:

3. Մովսեսից մինչև Հեսու Նավե: Ք. ծ. ա. Ժէ դ. սկզբին իսրայելացիները (Իսրայելի որդիները) սովի ժամանակ տեղափոխվեցին Նեղոսի գետաբերանի՝ Դելտայի, սահմանամերձ մարզ: Դա կատարվեց ասիական փարավոնահիքսոսների ժամանակ, որոնք հովանավորում էին Պաղեստինից սերողներին: Բայց Նոր թագավորության փարավոնների օրոք նրանց վիճակը վատացավ: Իսրայելացիների որոշ խմբեր լքեցին Եգիպտոսը (այդ մասին ակնարկություններ կան Հեսու Ը 33, Ա Մնաց. Է 21, 24 համարներում): Իսրայելացիների կյանքը հատկապես ծանրացավ Ռամզես Բ-ի օրոք, որն իր նստավայրը փոխադրելով Դելտա՝ շինարարական աշխատանքներում ներգրավեց այլազգիներին:

ԺԳ դ. Իսրայելը լքեց Եգիպտոսը դևտացի Մովսեսի ղեկավարությամբ, որը դարձավ նրա առաջնորդը, մարգարեն և օրենսդիրը: Սկզբում ժողովուր-

դը դեգերում էր Սինա լեռան մերձակա անապատում և Կադես օազիսում: Մովսեսի միջոցով Աստված տվեց առաջին Օրենքը, որից սկիզբ է առնում Թորայի Սրբազան Ավանդությունը (Հնգամատյանը): Դրա մի մասը գրի է առել Մովսեսն ինքը (օր.՝ Ելք Ի), մի մասը բանավոր պահպանել են ղևտացիները: Բայց, այնուամենայնիվ, Թորան հոգեպես Մովսեսինն է (տե՛ս հտ. 1, § 15, 16): Նույն այդ դարաշրջանում են ստեղծվել օրհներգերը (Ել. ԺԵ 1-18, 21, Թվեր Ժ 35), որոնք մուծված են եղել մինչև մեր օրերը շհասած ժողովածուների մեջ:

Մոտավորապես 1200 թ. Իսրայելն սկսում է Քանանի բնակեցումը՝ աստիճանաբար թափանցելով երկրի հյուսիսային և հարավային շրջանները: Գրավման տարիներին ծագում են Քանանի թագավորների դեմ մղված պատերազմների վերաբերյալ վիպական պատումներ:

4. Դատավորաց շրջան: ԺԲ-ԺԱ դդ. Քանանը ձգտում էին գրավել փղշտացիները (էգեյան շրջանից եկած) և քոչվորները: Այդ ժամանակ Իսրայելը ցեղերի միություն էր՝ կապված միայն կրոնական ընդհանրություններով: Հակառակորդները, օգտվելով սրա մասնատվածությունից, երկրում հաստատեցին իրենց իշխանությունը: Դեբորայի, Սամուել մարգարեի և մարգարեից որդիների ելույթները բարձրացնում էին ժողովրդի ոգին և աջակցում անկախության համար մղվող պայքարին: Այն օրերին կրոնական կենտրոններ էին Այուբեմն ու Սելովը: Այուբեմնում ցեղերի ներկայացուցիչները հավաքվում էին տոներին, իսկ Սելովում պահվում էր Ուխտի Տապանակը: Ցեղերը ղեկավարում էին դատավորները (եբր.՝ Ծ՛ՍԳՍՊ - Շոֆտիմ):

Դատավորաց դարաշրջանում են կազմվել ասքերը փղշտացիների հետ մղված պայքարի մասին, հնարավոր է՝ մշակվել են (նստակյաց կյանքին համապատասխան) Թորայի իրավական մասերը (Ուխտի գիրք, Ել. Ի-ԻԳ): Սամուելի գործունեության շնորհիվ փղշտացիների լուծը թուլացել էր: Փղշտացիների դեմ պայքարելու համար ժողովուրդը ցանկացավ թագավոր ընտրել: Սամուելը դժվարություններ համաձայնեց: Նրան հայտնվել է, թե ինչ փորձությունների կհանգեցնի միապետի իշխանությունը: Առաջին թագավորը Սավուլը եղավ, որը հաջողություն ուներ, քանի դեռ մարգարե էր համարվում, բայց երբ Սամուելի հետ կապը խզեց, նրան սկսեցին անհաջողություններ հետապնդել: Սավուլը գոհվեց փղշտացիների հետ մարտնչելիս: Նրան հաջորդած Դավիթը կարողացավ գլխովին ջախջախել նրանց և քշել դեպի ծովը:

5. Դավթի և Սողոմոնի թագավորությունը: Մոտավորապես 1010 թ. Դավիթն ստեղծեց բազմազգ կայսրություն (Իսրայելացիներից ու հարավի հրեաներից բացի դրա մեջ մտնում էին մովաբացիները, եգիպտացիները, ամոնացիները և ասորիները) և իր մայրաքաղաքը դարձրեց քանանյան Երուսաղեմ ամրոցը: Դավիթն սկիզբ դրեց Սաղմոսների գրքին (ամենավաղը դրանցից ԺԷ, ԻԹ, ԼԱ սաղմոսներն են):

Դավթի որդի Սողոմոնի իշխանության ժամանակ (մոտ. 970–931 թթ.) Իսրայելը կորցրեց Ասորիքը, բայց, չնայած դրան, պետությունը բարգավաճում էր, ծաղկում էր աշխույժ առևտուրը հարևանների հետ (Եգիպտոսի, Փյունիկիայի, Սաբայի թագավորության): Սողոմոնի՝ Երուսաղեմի Տաճարը կառուցողի տարիներին ստեղծվել էր պալատական տարեգիրների, իմաստունների ու դպիրների մի խումբ: Նրանք դատավորների և առաջին թագավորների մասին հավաքում էին առակներ, ասույթներ և պատումներ (Առակաց գրքի հիմքը): Աստվածաշնչագիտության մեջ համընդհանուր ընդունելության արժանացած կարծիքով՝ հենց Սողոմոնի ժամանակ է մշակվել Քահանայական Մովսիսական պատմությունը (Եսիվեական), որի հիմքում նախամովսեսյան և Մովսեսյան ավանդությունն է (տե՛ս հտ. 1, § 16, և գրքի վերջում՝ Հավելված 5):

6. Իսրայելը և Հուդան մինչև մարգարե-գրողները: Սողոմոնի մահից հետո մոտ 930 թ. նրա պետությունը բաժանվեց երկու թագավորության. Հյուսիսային (Իսրայել կամ Եփրեմ) և Հարավային (Հուդա): Դավթի արքայատոհմն իշխում էր Հուդային: Հյուսիսային թագավորությունում մի քանի արքայատոհմ փոխվեց: Սրա մայրաքաղաքը դարձավ Սամարիան: Մովսեսի ավանդությունը հյուսիսում պահում էին Սյուքեմի ղևտացիները: Ինչպես կարծում է աստվածաշնչագետների մեծ մասը՝ հենց նրանք են մշակել Քահանայական պատմության՝ իրենց (երկրորդ) տարբերակը (Էլդիմական) և Բ Օրինաց գիրքը: Սրբազան գրվածքների այս հուշարձաններն արդեն արտացոլում են մարգարենների ազդեցությունը: Մարգարեները (Եղիա, Եղիսե և այլն) պայքարում էին հեթանոսության դեմ, որը հեշտությամբ վարակում էր ամբոխներին: Իսրայելն ու Հուդան մրցում էին իրար հետ, որով նրանք քաղաքականապես թուլանում էին և անպաշտպան դառնում Ասորեստանի ճնշման դեմ:

7. Առաջին մարգարե-գրողները: Ասորեստանի դեմ պայքարի դարաշրջանում հանդես եկան մարգարե-գրողները, որոնցից մեկը հրեա հովիվ Ամոսն էր (Ը դար), որ քարոզում էր Հյուսիսային թագավորությունում: Նա հավատուրացության համար Աստծու պատիժով էր սպառնում: Նրա կրտսեր ժամանակակիցներից էր Օսեեն՝ Սամարիայից: Այս երկուսն ամենավաղ աստվածաշնչական հեղինակներն են, որոնց իսկապես պատկանում են իրենց վերագրվող գրքերը գրեթե ամբողջովին: Ը դարի վերջին և է-ի սկզբին Հուդայում մարգարեություն էր անում Եսային՝ Եգեկիել թագավորի կրոնական բարեփոխության ոգեշնչողը, երբ Եգեկիելը պայքարում էր հեթանոսական մնացուկների դեմ: Եսայի մարգարեն թագավորին զգուշացնում էր հեռու մնալ քաղաքական միություններից, համարելով, որ նրա գլխավոր գործը հավատքի մաքրությունը պաշտպանելն է: Եսայու ջանքերով մի ամբողջ ուղղություն կամ դպրոց ստեղծվեց: Մարգարեի անունը կրող գիր-

քը կազմված է ինչպես իր՝ Եսայիի, նույնպես և նրա՝ աստվածաշունչ աշակերտների ու շարունակողների ձեռքով: Եսայիին պատկանում են Ա-ԺԱ, ԺԷ-ԺԹ, ԻԲ, ԻԳ, ԻԸ-ԼԳ գլուխները: Ի գլուխը, որ մարգարեի կյանքի դրվագներ է պարունակում, կամ տարեգրություններից է վերցրած, կամ Եսայիի «վարքից»: Մարգարեների գրքերը գրվում էին մագաղաթի փոքր գալարների վրա, որոնք հետո կարվում էին: Սրանով բացատրվում է նրանց խոսքի ժամանակագրական հետևողականության անհամապատասխանությունը, որ աստվածաշնչագիրտությունն աշխատում է վերականգնել: Ը դարին է վերաբերում Միքիա մարգարեի գործունեությունը, Առակաց գրքի ԻԵ-Լ գլուխների, նաև «Արքայական սաղմոսների»¹ մի մասի ստեղծումը:

8. Հուդան Հյուսիսային թագավորության անկումից հետո: Հյուսիսային թագավորությունն կործանվեց 722 թ.: Դրանից հետո կրոնական կյանքի կենտրոն դարձավ Հուդան, հատկապես Երուսաղեմը: Հյուսիս-ղևտականներն այնտեղ են բերել Մովսեսի Օրենքի գալարները, որ պահվում էին Սյուքեմում և Սամարիայում:

Եզեկիայի որդի Մանասեի օրոք մարգարեները հալածանքների ենթարկվեցին, սակայն նրա հետնորդ բարեպաշտ Հուսիան (640-609 թթ.) սկսեց պաշտամունքի և կյանքի լիակատար կերպափոխումը՝ մարգարեական ուսմունքի ոգով: 622 թ. նա գտավ Օրինաց գիրքը, որ հանդիսապես հրապարակեց: Տաճարից բացի բոլոր սրբավայրերը վերացվեցին: Յովսիայի ժամանակ քարոզում և գրում էին Սոփոնիա, Նավում և Ամբակում մարգարեները: Վերջինիս օրոք՝ 626 թ., ծառայությունն սկսեց Երեմիա մարգարեն՝ ծավալուն գրքի հեղինակը, որի մեջ ընդգրկված էին (հավանաբար նրա աշակերտ Բարուքի միջոցով) նաև նրա կենսագրության դրվագները: Ինչպես ենթադրում են՝ հենց այդ ժամանակ ձեռնամուխ են եղել պատմական տարեգրությունների մշակման սրբազան պատմության մեջ, որն սկսվում էր Մովսեսից (Հին Կտակարանի պատմական գրքերը, կամ Բ Օրինաց պատմություն): Ժողովածուն ավարտվել է Գերուկյան ժամանակ՝ մոտ. 562 թ.: Երեմիա մարգարեն Երուսաղեմի հոգեվարքի և կործանման ականատեսն էր. այն կործանեց ու հրդեհեց Նաբուգոդոնոսորը 587 թ.: Քաղաքների բնակչության մեծ մասը տարհանվեց Բաբելոն: Որոշ հրեաներ փախան Եգիպտոս, ուր նրանց հետ զնաց նաև Երեմիան: Նա հավատում էր, որ Աստված փորձություններից հետո մարդկանց կտա Նոր Ուխտը՝ Հնի փոխարեն, որը նրանք չպահեցին:

9. Գերության շրջանը: Հինկտակարանյան Եկեղեցին տարագրության մեջ չկորցրեց հավատը և զղջալով էր նայում իր անցյալին: Դրանում մեծ էր

¹ Արքայական սաղմոսները (2, 17, 19, 20, 44, 71, 88, 100, 109, 131 և 143) մեծարում են երկրային միապետներին: Նրանց մեծարումը վերագրվում է Աստծուն, Ում անունից նրանք կառավարում են ժողովրդին – տե՛ս Դավթի Սաղմոսների Գիրքը, Սևանավանք, 2013, էջ 14 – խմբ.:

մարգարենների օժանդակությունը, որոնց թվում էր Եզեկիել քահանան (մահ. մոտ. 570 թ.): Տարագրության մեջ Թորան ընդունեց իր այժմյան ձևը, հավաքվեցին շատ սաղմոսներ:

Մոտավորապես 540 թ. ազատագրության հույս զարթնեց: Բաբելոնին սպառնալ սկսեց պարսից Կյուրոս Բ թագավորը: Այդ ժամանակ գրում և քարոզում էր Հին Կտակարանի մեծագույն մարգարեններից մեկը: Նրա անունը մնացել է անհայտ, իսկ երկերը մոծովել են Եսայի մարգարեի Գրքի մեջ, հավանաբար այն պատճառով, որ մարգարեն Եսայիի դպրոցի հետևորդ էր: Աստվածաշնչագիտության մեջ փրկության այդ ավետաբերի, Տիրոջ Տառապող Ծառայի (Մեսիայի) մասին երգչին անվանում են Երկրորդ Եսայի: Նրան են պատկանում Եսայի Խ-ՄԵ հատվածները: ՄՁ-ԿՁ գլուխներն էլ, ըստ երևույթին, նա ինքն է գրել, բայց գերությունից վերադառնալուց հետո՝ 583 թ.: Բ Եսայիին և նրա խմբին են վերագրում նաև Եսայի ԺԳ-ԺԴ, ԻԱ 1-10, ԼԴ-ԼԵ հատվածները:

10. Վերականգնում: Պարսիկների Բաբելոնը գրավելուց հետո հրեաներն իրավունք ստացան հայրենիք վերադառնալու: Վերադարձավ ժողովրդի լոկ մի մասը, որը գլխավորում էին Հեշուա (Հեսու) քահանայապետն ու իշխան Զորաբաբելը: 520 թ. Անգե և Զաքարիա մարգարենները հանդես եկան Տաճարը վերականգնելու կոչով, որը հրկիզել էին քաղղեացիները: Այն վերաշինվեց 515 թ., բայց անկախության և վերածնության հույսերը շարդարացան: Ժողովրդի հոգևոր կյանքն ավերված երկրում անկում ապրեց: Այդ մասին է վկայում Մաղաքիա մարգարեի (Ե դար) գիրքը:

11. Օրենսգետներ: 445 թ. Երուսաղեմ ժամանեց Պարսից արքայի պաշտոնյա եբրայեցի Նեեմիան: Նա վերականգնեց քաղաքի պարիսպները և աշխատեց վերածնել հինկտակարանյան համայնքի կյանքը: Նրան խոչընդոտում էին սամարացիները (Հյուսիսային թագավորության բնակչության մնացորդները, որ խառնվել էին արևելյան երկրներից վերաբնակվածների հետ): Նեեմիան ընդհանուր անկմանը ցանկանում էր հակադրել Օրենքը: Նրան օգնեց դպիր և քահանա Եզրասը, որ եկել էր Բաբելոնից: Երուսաղեմում Եզրասը ժողովրդական հավաք կազմակերպեց և հրեաներին երդվեցրեց՝ անշեղորեն հետևել Թորայի ուխտին: Այդ ժամանակից էլ սկսվեց հրեականության առանձնանալու գործընթացը: Եզրասի ծայրահեղությունների արձագանքը եղան Հոութի ու Հովնանի գրքերը, որոնք ուղղված էին նեղ ազգայնականության դեմ:

12. Իսրայելի իմաստունները: Ե և Գ դարերի միջև օրենսգետներին զուգահեռ հինկտակարանյան Եկեղեցում սկսում են նշանակալից տեղ զբաղեցնել իմաստունները: Նրանք դեմ էին ազգային մեկուսացմանը, թեպետ նախանձախնդրորեն պահպանում էին հավատքի հիմքերը: Նրանք գրեցին

Հոբի (մոտ. 400 թ.), Ժողովողի (մոտ. 300 թ.) գրքերը, վերամշակեցին Առակաց և Երգ Երգոց գրքերը: Վերջին իմաստուններից մեկն էր Սիրաքի որդի Հեսուն (մոտ. 190 թ.):

Երուսաղեմի հոգևորականությունը կազմեց հինգերորդ Քահանայական պատմությունը՝ Ա և Բ Մնացորդաց գրքերը (Բ. ծ. ա. Գ դար), ուր հինկտակարանյան եկեղեցու ավանդության ոգով դիտարկվում էր թագավորների, Գերության ու վերադարձի պատմությունը:

Այն օրերին մարգարեական ավանդությունները շարունակում էին Հովել, Երկրորդ Զաքարիա (Չաք. Թ-ԺԲ) և Եսայիի դպրոցի վախճանաբանությունը (Եսայի ԻԴ-ԻԷ), որոնց գործերի մեջ գտնում ենք առաջին վկայությունները հավատի և մեռելների հարության մասին:

Օրենքի ավանդության պահպանողները եղան Մեծ Տաճարի Այրերը¹, որոնք տարածեցին բանավոր և գրավոր Թորայի ավանդությունները կյանքի բոլոր ոլորտներում:

13. Հուդայականություն և հելլենիզմ: 332 թ. Հուդան պարսիկներից անցավ Ալեքսանդր Մակեդոնացու իշխանության տակ, իսկ նրա մահվանից հետո մտավ Պտղոմեոսյանների հունաեգիպտական թագավորության կազմը: Պտղոմեոս Ա Լագոսը շատ հրեաների վերաբնակեցրեց Ալեքսանդրիայում: Այնտեղ, մոտավորապես 250 թվականին՝ Պտղոմեոս Բ Փիլադելփոսի (Եղբայրասեր) օրոք (285-247 թթ.), սկսվեց Հնգամատյանի, ապա և մյուս սուրբ գրքերի թարգմանությունը հունարեն (Յոթանասնորդ):

189 թ. Սելևկյան հարստության Անտիոքոս Գ Մեծ թագավորը եգիպտոսից խլեց Հուդան: Սելևկյաններն ամենուրեք սերմանում էին հունական սովորույթներ ու հավատք: Այդ ժամանակվանից սկսվում է հինկտակարանյան եկեղեցու դաժան պայքարը հելլենական գալթակղությունների դեմ: Ք. ծ. ա. Գ դարասկզբին գրված գրքերը՝ Տոբիթի, Բարուքի և Երեմիայի Թղթի նպատակ ունենին ամրապնդելու հուդայականության բարոյական ու կրոնական գաղափարները, պաշտպանելու այն հունական ազդեցությունից:

168 թ. Սելևկյան Անտիոքոս Գ Եպիփանես թագավորը (175-163 թթ.) հարձակվեց Հուդայի վրա՝ ձգտելով արյունալի հալածանքներով արմատախիլ անել տեղաբնակների կրոնը: Տաճարը վերածեցին հեթանոսական մեհյանի, Սբ. Գրքերը հրի մատնեցին, և բոլոր հինկտակարանյան ծեսերն արգելվեցին: Հալածյալներն ու բռնությունների զոհերն այն օրերին մխիթարություն էին գտնում Դանիելի Գրքի մարգարեություններում, որ կազմվել էին մոտավորապես 165 թ.՝ հին ավանդությունների հիման վրա: Ըստ երևույթին նույն

¹ Մեծ Տաճարի կամ Մեծ Ժողովարանի (Սինագոգի) Այրեր - Ըստ Թալմուդի՝ Երկրորդ Տաճարի շրջանում հինկտակարանյան իմաստունների և ուսուցիչների ատյանը, որին կարևոր դեր է վերագրվում աստվածաշնչական կանոնի ձևավորման գործում. - Ծան. ռուս. խմբ.:

այդ ժամանակ է գրվել Հուդիթի Գիրքը (ավելի ուշ թարգմանվել է հունարեն): Դանիելի գրքին ոգով և ժամանակով մոտ էր Ենոքի Ա Գիրքը, որ հետո համալրվեց տասնամյակների ընթացքում:

Ք. ծ. ա. 164 թ. հրեաներն ապստամբեցին Անտիոքի դեմ: Հասմոնյան տոհմից Հուդա Մակաբայեցու առաջնորդությամբ նրանք արագ հաջողություներ էին հասան: Մոտավորապես 140 թ. երկիրն արդեն լիովին անկախ էր, և կառավարում էր Հասմոնյան հարստությունը: Այդ ժամանակ ամբողջ Հին Կտակարանն ավարտված էր:

14. Երկու Ուխտի սահմանագծին: Հոսիան ինքնուրույն թագավորություն մնաց ընդհուպ մինչև Ք. ծ. ա. 63 թ., երբ այն նվաճեցին հռոմեացիները: Հասմոնացիների ժամանակ Համայնքի ներսում առաջացավ մի քանի հոսանք, որոնցից յուրաքանչյուրն իր գրականությունն ստեղծեց: Փարիսեցիների միջավայրում երևան եկան «բանավոր Օրենքի» գրառումները (որ նախորդեցին Թալմուդին), Մակաբայեցիների Բ Գիրքը (մոտ. 120 թ.) և Սողոմոնի Սաղմոսները (մոտ. 63 թ.): Հասմոնացիների հարստության կողմնակիցները, որ մոտ էին սադուկեցիների կուսակցությանը, ստեղծեցին Մակաբայեցիների Ա Գիրքը (մոտ. 100 թ.): Էսսենացիների շրջանում ծագեցին կուսական գրականությունը, Հոբելենից գիրքը և մյուս պարականոնները (Ք. ծ. ա. Բ-Ա դարեր):

Ալեքսանդրիայում հելլենականացած տարագիր հրեաներն ունեին սեփական հարուստ գրականություն. տրակտատներ, դրամաներ, մեկնություններ, պատմական երկեր: Դրանցից առավել հայտնի են Սողոմոնի Իմաստության Գիրքը (մոտ. Ք. ծ. ա. 50 թ.) և Փիլոն Ալեքսանդրացու երկերը (մոտ. Ք. ծ. ա. 25 թ. – Ք. ծ. հ. 50-ական թթ.). վերջինս ձգտում էր հինկտակարանյան ուսմունքը զուգակցել անտիկ փիլիսոփայությանը:

Ք. ծ. ա. վերջին երկու դարերում գրված շատ գրքեր արդեն դուրս են գալիս բիբլիական ավանդության շրջանակներից: Բայց դրանք կարևոր են Գրքի մեկնիչների համար, քանի որ ասես կամրջում են Հին և Նոր Կտակարանները: Վախճանաբանականների մեսիական նկրտումները, դպիրների բարոյական ուսմունքներն ստեղծեցին այն մթնոլորտը, որ նախորդեց և նախապատրաստեց Ավետարանի քարոզչությունը:

Հարցեր կրկնության համար

1. Հինկտակարանյան Եկեղեցին ինչո՞ւ զարգացավ ազգային շրջանակներում:
2. Ո՞ր դարաշրջանում հյուսվեց բիբլիական բանավոր ավանդությունը:
3. Պատմեցե՞ք իսրայելացիների ճակատագրի մասին՝ նահապետներից մինչև Ելք:

4. Հնգամատյանն ինչու՞ է կոչվում Մովսիսական:
5. Ի՞նչպես է բնութագրվում դատավորաց դարաշրջանը:
6. Աստվածաշնչի ո՞ր մասերն են վերաբերում Դավթի և Սողոմոնի ժամանակին:
7. Ե՞րբ բաժանվեցին թագավորությունները:
8. Ո՞վ էր առաջին մարգարե-գրողը:
9. Գերությունն ի՞նչ նշանակություն ունեցավ բիբլիական կրոնի համար:
10. Ո՞ր մարգարեներն են քարոզել Գերության ժամանակ:
11. Ի՞նչ հանգամանքներում ավարտվեց Բաբելոնյան գերությունը:
12. Ո՞վ նպաստեց հրեության առանձնակի դառնալուն:
13. Ինչպիսի՞ք էին հուդայականության ու հելլենիզմի հարաբերությունները:
14. Հուդայականների մեջ ի՞նչ հոսանքներ կային նորկտակարանյան ժամանակի նախօրեին:

§ 14. Աստվածաշնչի միասնականությունը

1. *Ով ցանկանա Աստվածաշունչն ընթերցել միահետ, իբրև մեկ երկ, կարող է հանդիպել դժվարությունների: Բայց այն, որ Գրքի առանձին մասերը հաճախ իրար նման չեն (կանոնագրեր և աղոթքներ, առաջին հայացքից անկողմնակալ տարեգրություններ և մարգարեների զայրագին մերկացումներ), նաև գրքերի բուն ոգու մեջ չի կարելի շնկատել տարբերություններ: Ժողովողի հոռետեսությունն ինչպես կարելի է համադրել ցնծացող Երգ Երգոցին, կամ պաշտամունքային մանրամասն հրահանգներն ինչպես են մերվում «Զանյի ողորմություն եմ ցանկանում և ոչ թե կոհարեռում» խոսքին (Օւեհ 2 6): Հոբի անսահման թախիծն ինչպես է կապված Ավետարանի ուրախ լուրին: Այնուամենայնիվ Աստվածաշնչին բնորոշ է խորունկ և էական միասնությունը: Նրա ուսմունքն իր լիակատար ամբողջությամբ հասկանալու համար բավարար չէ բնագրի առանձին հատվածներ կամ քաղվածքներ վերցնելը, այլ անհրաժեշտ է ըմբռնել Հայտնությունն ամբողջության մեջ՝ մի բնագիրը լրացնելով մյուսով:*

2. *Մարդու կապն Աստծու հետ, որ գտնում ենք Աստվածաշնչում, անշարժ, մեկընդմիջ տրված մի բան չէ: Այն աճում, ամրանում է, անցնում է մի շարք աստիճաններ՝ ավարտուն դառնալով Մարդու Որդու կերպարով: Այդ պատճառով Քավիչ-Մեսիան՝ որ շնորհում է փրկություն, Սբ. Գրոց կենտրոնական դեմքն է: Նա ամենուր է՝ սկսած նախակերպարներից և մարգարեություններից, վերջացրած Նրա մարմնով հայտնությամբ մարդկանց մեջ: Այդ մասին է ավետում առաքյալն՝ արտահայտելով Եկեղեցու հավատարմ. «Աստված բալմասպիսի ձևերով և այլապան օրինակներով նախասպես խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով. այս վերջին օրերին մեզ հետ*

խոսեց իր Որդու միջոցով, որին ժառանգ նշանակեց ամեն ինչի, և որի միջոցով ասեղծեց տիեզերքը» (Եբր. Ա 1-2):

3. Երկու Ուխտերի հարաբերությունը բավականին բարդ է: «Նոր Կտակարանը,- գրել է Օգոստինոս Երանելին,- թաքնված է Հնի մեջ, իսկ Հինը բացահայտվում է Նորով»: Սակայն դա չի նշանակում, թե Հին Կտակարանի արժեքը Եկեղեցու համար միայն Քրիստոս Փրկչի կյանքի մասին մարգարեության կատարումն է: Այդ դեպքում նրա դերը խիստ կսահմանափակվեր: Իրականում Հին Կտակարանի մեջ Աստված ոչ թե պարզապես Մեսիայի հայտնություն մասին կանխասում է, այլև ներշնչալ գրողների միջոցով բացահայտում է մեծ ճշմարտություններն իր իսկ մասին, նաև աշխարհի, մարդու մասին: Այդ ճշմարտությունները բացահայտվել են աստիճանաբար՝ մարդկանց հոգեկան աճին համապատասխան՝ նրանց նախապատրաստելով Ավետարանի ընկալմանը:

4. Հին Կտակարանի որոշ տեսակետներ Նորի գալստյամբ մնում են անցյալում, մյուսներն ստանում են այլ, ավելի խոր իմաստ: Բայց նրա հիմունքները մնում են անասան: Քրիստոս ասում է, որ Ինքը եկել է Օրենքը և մարգարեները լրացնելու (Մատթ. Ե 17-19): Խոսքն այստեղ «լրացնելու», «լրման հասցնելու» մասին է՝ ամբողջ Սուրբ շինության, որ սկսել էր ստեղծվել Հին Կտակարանում (այդ է հունարեն πλῆρωσαι - կատարել բայի իմաստը):

5. Հին Կտակարանը ասում է.

Խոստումի մասին, ուսուցանում է, որ Աստված մարդկանց առաջնորդում է իր Արքայության լրումին.

Ելքի մասին, իբրև Աստծու փրկչական գործողության՝ պատմության ու ժամանակի մեջ.

Ուխտի մասին՝ իբրև մարդկանց և Նախահավիտենականի երկկողմ հարաբերության.

Արարչության մասին՝ իբրև Աստծու ազատ սիրո գործողություն.

Բանի մասին՝ իբրև Աստծու և Նրա կամքի բացահայտվող խորհրդի.

Մարդու սրբության մասին՝ իբրև ամենընկալ նվիրում ծառայության և մաքրության.

Ընտրյալ լինելու մասին՝ իբրև Աստծու ժողովրդի պատասխանատվության, որ կոչված է Աստվածային Տնտեսության Նախախնամությունը իրականացնելու.

Աստծու մասնավոր ընտրյալների կոչման մասին, որոնց միջոցով հայտարարվում է երկնային Կամքը.

Հավատի մասին, որպես Աստծու ողորմածության հանդեպ ամբողջական վստահության և Ուխտին հավատարիմ լինելու.

ճշմարտության մասին՝ որպես երկրային կյանքում Աստծուն ճշմարիտ ծառայության.

Մեղքի մասին՝ իբրև հեռացում Աստծուց.

Գթասարտության մասին՝ իբրև մեծագույն զոհաբերության.

Չոհարերության մասին՝ իբրև Աստծու հետ միանալու խորհուրդ և աղոթական վիճակ Աստծու առաջ.

Աստծու արքայության մասին՝ իբրև Արարչի մտահղացումների հանդես:

Հին Կտակարանի այս և մյուս տարրերն անանց են: Դրանք ապրում են Նոր Կտակարանում՝ հասնելով իրենց լրմանը:

6. Հին Կտակարանի Ավանդության մեջ երկու դարաշրջանի մասին պատկերացում է եղել. «Հին» և «Նոր», մեսիական՝ երբ Մեսիան կտա «նոր Թորան» (Բաբելոնյան Թալմուդ, Շաբբաթ, 51ա): Հետ այսպիսի Պողոս առաքյալն ուսուցանում էր, որ Քրիստոսի Հայտնությամբ ավարտվում է Օրենքի ժամանակը, և գալիս է շնորհի ժամանակը, որը վերափոխելու է մարդուն և դարձնելու է «նոր արարած» (Գաղ. 2 15): Բայց շնորհի պարգևը չի բացառում «պատվիրանները պահելու» պահանջը: Քրիստոս Ինքը դրան կոչելով՝ նկատի ունենալով Հին Կտակարանից եկած պատվիրաններ (Մարկ. Ժ 19): Պատվիրանները պահելը պատրաստություն է Սբ. Հոգու շնորհը ընդունելու համար (հմմտ. Ա Կորնթ. Է 19): Միաժամանակ, եթե համեմատենք Հին Ուխտի ոգին Ավետարանի ոգու հետ, կարգվի, ինչպես ցույց է տվել Պողոս առաքյալը, որ Օրենքը թելադրում է ու արգելում միայն, ընդամին Աստծու կամքը կատարելու ուժ չտալով: Այդ հիմամբ երբեմն սխալաբար կարծում են, թե ամբողջ Հին Կտակարանը հագեցած է արտաքին օրինապահությանմբ: Մինչդեռ ոչ միայն մարգարեների ու սաղմոսերգուների երկերում ենք գտնում ներքին խորը առաքինության ոգի, այլև Օրենքն ինքը բխում է Աստծու սիրուց՝ ամբողջ սրտով, ամբողջ հոգով և բոլոր ուժերով (Բ Օր. 2 5): Այդ սերը երկու Կտակարանները կապող օղակներից մեկն է:

Հարցեր կրկնության համար

1. Ինչո՞վ է բնորոշվում Աստվածաշնչի միասնությունը:
2. Հին Կտակարանն ինչպե՞ս է ապրում Նորի մեջ:
3. Որո՞նք են Օրենքի ու Ավետարանի տարբերությունները, և ի՞նչն է հարազատ դարձնում սրանք:

§ 15. Հնգամատյան. անուներ, կազմը և ծագման խնդիրը

1. Անուներ: Հովհաննեսի Ավետարանի մեկնության մեջ Որոգիները Հին Կտակարանի առաջին հինգ գրքերն անվանել է Հնգամատյան (հուն. ΠΕΝΤΑΤΕΥΧΟΣ - հինգ գալար): Այդ ժամանակվանից այդ եզրույթը հաստատապես մտավ քրիստոնեական գրականության մեջ: Եբրայական Սուրբ Գրքում Հնգամատյանը կոչվում է Թորա: Այս թորա՝ բառը նոր Կտակարանում սովորաբար թարգմանվում է օրենք (հուն. ΝΟΜΟΣ): Բայց այստեղ պետք է հաշվի առնել, որ թորա հասկացությունն իրավաբանականից ու կանոնականից լայն է: Այն նշանակում է խրատ, բանավոր ուսուցում, պատգամ (հմմտ. Յոթ ԻԲ 22, Առակ. ԺԳ 15, Եսայի ԻԴ 5):

Հնգամատյանում, բացի պատվիրաններից, օրենքներից ու հրահանգներից կա նաև պատմական բաժիններ, և դա գրքի անվանը չի հակասում: Հին Արևելքի օրենսդիրները սովորություն ունեին իրավական և պաշտամունքային պատվերները շրջանակել պատմական բնույթի զրույցներով:

2. Կազմությունը և բովանդակությունը: Թորան բաժանվում է հինգ գրքի, սակայն պահպանում է միասնական երկի ամբողջականությունը: Ըստ երևույթին հինգ մասի բաժանելը կապված է հին ժամանակների գրքարվեստի յուրահատկությունների հետ. շատ մեծ գալարներն անհարմար էին կիրառելիս: Այդ իսկ պատճառով հինգ գրքի է բաժանվել նաև Սաղմոսարանը (սբ. Եպիփան Կիպրացի, Չափերի մասին, 4, 5):

Սկզբնապես Թորայի գրքերը կոչվում էին իրենց առաջին բառերով: Հունարեն թարգմանության մեջ դրանք ստացան այլ անուններ, որոնք անցան նաև ռուսերեն Աստվածաշնչին¹:



Թորայի գալար

Ծննդոց (եբր. תשיבא - Բե-րեշիտ - սկզբում. հուն. ΓΕΝΕΣΙΣ՝ ծագում). Գիրքը պատմում է աշխարհի և մարդու ծագման, մարդկանց անկման, Աբ-

¹ Նույնն է նաև հայերեն Ս. Գրքում - խմբ.:

րահամի ընտրությունների և նրա ու Աստծու ժողովրդի նահապետների հետ Ուխտը կնքելու մասին: Այնտեղ պատմվում է Իսրայելի նախնիների ճակատագրի և նրանց՝ Եգիպտոս վերաբնակեցման մասին:

ԵԼՔ (եբր. תומש (תלמי) ՎԷ-ԷԼԷ) շեմոտ – (և ահա) անունները, հուն. Ξεδος): Գիրքը բովանդակում է Իսրայելի շահագործումը փարավոնի կողմից, Մովսես մարգարեի կոչումը, նրա պայքարը փարավոնի դեմ և իսրայելացիների ելքը Եգիպտոսից, Աստծու ժողովրդի պանդխտելը դեպի Սինա լեռ, շարադրում է Ուխտի պատվիրաններն ու օրենքները (Ի-ԻԳ, ԻԵ-ԼԱ, ԼԴ, ԽՄ), խոսում է իսրայելացիների մեղքերի մասին, որ ոսկե հորթ էին կերտել, և նկարագրում տախտակների երկրորդ անգամ տալը: Օրենքի Գրքի հիմնական միտքը Փրկիչ-Աստծու հանդեպ տածած հավատն է, որ իր կամքը հայտնի է դարձնում պատմության ընթացքում:

ՂԼտական գիրք (եբր. ארך וי վԱիֆՐԱ – և կոչեց, հուն. Λευιτικόν). Գիրքը պարունակում է Աստվածաշտական կանոններ, նաև մաքրագործման կանոններ՝ տրված հինկտակարանյան Եկեղեցու մարմնական և հոգևոր մաքրությունը պահպանելու համար: ՂԼտական գրքի հիմնական իմաստն արտահայտված է խոսքերով. «Սուրբ եղեք, որովհետև ես սուրբ եմ» (ԺԱ 44):

ԹՎեր (եբր. דבר מדבֶּר ԲԷ-ՄԻԴԲԱՐ – անապատում, հուն. Ἀριθμοί). Գիրքը պատմում է իսրայելացիների՝ Սինայից դեպի Կադես դեզերումները, մարդահամարը, ճամփորդության ժամանակ ժողովրդի վարանոտ վիճակն ու թերահավատությունը, Ավետյաց երկիր մտնելու առաջին փորձերը, Կադեսում լինելը, ուր տեղի է ունենում հուզումներ Մովսեսի դեմ: Մուտքն արևելյան Պաղեստին (այժմյան Հորդանան) ուղեկցվում էր գինյալ բախումներով տեղական քաղաք-պետությունների թագավորների հետ: Մովսեսի Բաղակ թագավորը Բաղամ քուրմի օգնությամբ փորձում է կործանել իսրայելացիներին, բայց փորձն ապարդյուն է մնում: Հորդանանից անդին իսրայելական երկու ցեղ զբաղեցնում է առաջին տարածքները:

Բ Օրենք (եբր. דִּבְרֵי הַתּוֹרָה (ԷՂԷ ՀԱ) – ԴԼԲԱՐԻՄ – ահա խոսքերը, հուն. Δευτερονόμιον) գիրքը շարադրում է հիմնականում Մովսեսի օրենքներն ու պատվիրանները, որ նա կրկնում էր (ավելացնելով նորերը) իր վախճանից քիչ առաջ: Այդպես է տրվել նոր պատվիրան՝ Աստծուն նվիրված պաշտամունքի տեղը միակը պիտի լինի, Աստծու կողմից հաստատված տեղում: Վերջում բերվում են Մովսեսի երգն ու օրհնությունը (ԼԲ-ԼԳ) և պատմությունը նրա մահվան՝ արևմտյան Քանանն արևելյանից բաժանող սահմանին:

Այսպիսով Հնգամատյանը հինկտակարանյան Եկեղեցու հիմնադրության պատմությունն է, ընդմիջարկված նրա օրենքների ու պատվիրանների

րի (կրոնաբարոյական, աստվածաշտակական, կանոնական և իրավական) հավաքածուով: Շնորհիվ այդ բանի թորան ասես ամբողջ Հին Կտակարանի հիմքը լինի: Այն ուսուցանում է Արարչի իմաստությունը, ամենագորությունը և ողորմածությունը: Աստված, հանդիպելով մարդու ընդդիմությանը, ընտրյալ մարդկանց կոչում է և նրանց բացահայտում է Իր կամքը: Նրանց Նա մեծ ապագա (ավետյաց երկիր) է խոստանում, որ սերտորեն կապված է Նրա խորհրդավոր մտահղացումներին: Նա փորձում է Իր Ուխտն ազատակամ ընդունածների հավատը, նրանց պաշտպանում է վտանգներից և տալիս կյանքի Օրենքը: Նրանք պիտի լինեն անձնուրաց, նվիրված «Քահանաների թագավորություն»՝ պատրաստ ծառայելու Իր ստեղծագործ մտադրություններին: Աստծու ժողովրդին՝ իբրև տեսանելի նշան, ի տիրապետություն տրվում է խոստացյալ երկիրը, որին վիճակված է հետագայում դառնալ Փրկության Երկիր ամբողջ մարդկության համար:

3. Հնգամատյանի ծագումը Մովսեսից: Նոր Կտակարանում Օրենքը որոշակիորեն կոչվում է Մովսիսական (Մատթ. ԺԹ 7, Մարկ. Ժ 3, ԺԲ 19, Դուկ. ԺԶ 29, ԻԴ 27, Հովհ. Ա 17, Գործ. ԺԵ 21), այդ պատճառով Ուղղափառ Եկեղեցին հնագույն ժամանակներից Մովսեսին ճանաչել է Հնգամատյանի հեղինակ: Մովսեսի հեղինակ լինելու ավանդությունը լիակատար իրավունքով ու հիմքով է պնդվում: Այլ հարց է՝ ինչպես հասկանալ այդ հեղինակությունը. բառացի, արդի իմաստով, թե ավելի լայն՝ ըստ հոգու: «Աստվածաշնչի առանձին գրքերն առանձին հեղինակների վերագրելը, նշում է ակադ. Բ. Ա. Տուրանը, շատ դեպքերում պետք է հասկանալ ոչ թե մեր, այլ արևելյան իմաստով: Արևելքը գրական սեփականություն չգիտեր. ստեղծագործության և հեղինակների անհատականությունը գրեթե ժամանակակից իմաստով բավարար հստակությամբ ի հայտ է գալիս լոկ մարգարեների գրքերում» (ИДВ, һատ. 1, էջ 6): Բնավ կասկած չկա, որ հինկտակարանյան Օրենքի և ուսմունքի հիմքերը հանգում են Մովսեսին, բայց որոշակիորեն ինչ է գրել նա, և ինչն է հաղորդվել բանավոր ավանդությամբ ու գրառվել ավելի ուշ՝ որոշելը հեշտ չէ:

4. Ներքին վկայություններ: Հնգամատյանում ոչ մի ակնարկ չկա, թե այն ամբողջապես պատկանում է Մովսեսին: Այնտեղ միայն հիշվում է «Գիրքը», ուր նա գրառում է հիշարժան իրադարձությունները (Ել. ԺԷ 14, Թվեր 1Գ 2): Նաև գրանցում էր օրենքներ և պատգամներ (Ել. ԻԴ, 1Դ 27): Բայց տեղեր կան Հնգամատյանում, որոնք ակնհայտորեն Մովսեսին հաջորդող ժամանակին են վերաբերում: Այսպես, խոսելով Աբրահամի՝ Այուքեմի մերձակայք ժամանելու մասին, Ծննդոցի հեղինակը նկատում է. «Այդ ժամանակ, սակայն բանասացիներն էին բնակվում այդ երկրում» (Ծննդ. ԺԲ 6): Հետևաբար նրա ժամանակ արդեն իսրայելացիներն էին ապրում այնտեղ: Ծննդ. ԺԴ 14-ում հիշվում է

Դան քաղաքը (կամ տեղանքը), որն իր անունն ստացել է Դանի տոհմի՝ Քանանում վերաբնակվելուց հետո՝ Հեսու Նավեի ժամանակներում¹: Ծննդ. ԼԶ 31-ում Եդոմի թագավորների մասին ասված է, որ նրանք էին կառավարում «երբ դեռ որևէ թագավոր չէր թագավորում Իսրայելում»: Այսպիսով, սրբազան մատենագիրը գիտեր արդեն այդ թագավորների մասին (իսկ նրանք հայտնվել են Մովսեսից 200 տարի հետո): Այնուհետև մարգարեի մասին այնքան երկյուղածորեն է խոսվում, որ հազիվ թե հնարավոր լինի այդ խոսքերը վերագրել նրան (Թվ. ԺԲ 3, Բ Օրին. ԼԳ 1, ԼԴ 10-11): Եվ վերջապես, անհնարին է ենթադրել, որ Մովսեսը պատմեր սեփական վախճանի մասին (Բ Օրին. ԼԴ):

Ուշ ժամանակի արձագանքներ ունեն նաև Ելից Գրքի այնպիսի տեղիներ, ինչպես վկայություն է խորանի նկարագիրը (Ել. ԻԵ 31, ԻԷ 8): Դա քիչ է համապատասխանում իսրայելացիների աղքատիկ՝ քոչվոր կենցաղին:

«Ո՛ւր են,- գրում է պրոֆ. Կարտաշևը,- կարելի է ասել ծանր արդյունաբերության այն գործիքները, որ պիտի գտնվեին արշավական ղեզբրումներում: Առավել աներևակայելի է կշռով ոչ այնքան թեթև մեքենայական ճշգրիտ տեխնիկան, որ պիտի գործեր լայն բեհեզից կտավներ՝ վկայության խորանը ծածկելու համար, որի վրա պատկերված պիտի լինեին նշված գույներով և պատկերներով քերովբենները, ինչպես նաև քահանայության նրբահյուս զգեստները՝ լանջապանակն ու ծոպերը... Մովսեսի փաստացի խորանն անհամեմատ համեստ է եղել, սեմականների կողմից ընդունված մի վրան, ուր գտնվում էր սրբությունը, որ պահպանում էր ոչ թե ղևտացիների զորախումբը, ինչպես հետո կազմակերպեցին որոշ թագավորներ Բեթելում ու Երուսաղեմում, այլ ընդամենը մեկ՝ Մովսեսին նվիրված անձնավորություն՝ նրա անձնական «զինակիր Հեսու Նավեն» (Ветхозаветная библейская критика, Фարիզ, 1977, էջ 49, 51):

Այս ամենը աստվածաբան-աստվածաշնչագետներին բերեց այն եզրակացության, որ անձամբ մարգարեին պատկանում է միայն Հնագամատյանի բնագրի մի մասը, իսկ մնացածը՝ Մովսիսական ավանդությունը, գրավոր շարագրել են Աստուց ներշնչված այլ իմաստուններ (տե՛ս հտ. 1, §11): Բայց ե՞րբ և որտե՞ղ են ապրել այդ իմաստունները՝ Մովսեսի ավանդության ժառանգորդներն ու շարունակողները: Աստվածաշունչը հասկանալու և մեկնաբանելու համար այս հարցն ամենևին երկրորդական չէ:

5. Մովսիսական ավանդության չորս տարբերակ: Թորայի հիմքերի ծագումը Մովսեսից ապացուցվում է դրա ինչպես պատմողական, նույնպես և օրենսդրական մասերի էական միասնությունամբ: Բայց մասնավոր հարցերում՝ ո՞ճի, Հնագամատյանի մեջ այս կամ այն նյութի բացահայտման միջոցների դիտարկումով կարելի է տեսնել տարբերություններ: Օրինակ.

¹ Հայերեն Աստվածաշնչում այս հատվածը չկա - խմբ.:

ա) արարչության պատմությունները Ծննդ. Ա-ում՝ ոգով միասնական են, բնույթով հստակորեն տարբերվում են (Ծննդ. Ա-ում սկզբում ստեղծվել են բույսերն ու կենդանիները, ապա մարդը. ըստ Ծննդ. Բ-ի, երբ հայտնվեց մարդը՝ բույսերը դեռ չկային, նաև կենդանիներն են ստեղծվել մարդուց հետո):

բ) Ծննդ. Դ 25-26-ում պատմվում է Սեթի ծնունդը, իսկ Ծննդ. Ե 3-ում ասես այդ մասին խոսվում է առաջին անգամ:

գ) Ծննդ. Դ 17 ենոքը Կայենի որդին է, իսկ Ծննդ. Ե 18՝ Հարեղի որդին, այսինքն Ադամից հետո 10-րդը:

դ) Ծննդ. է 17 ջրհեղեղը տևել է 40 օր, իսկ Ծննդ. է 24՝ 150 օր:

Այս տարբերությունները (որոնց թիվը շատ մեծ է) թույլ են տալիս սրբազան պատմության մեջ տարանջատել չորս ուղղություն, որոնք միացված են մեկ ամբողջով: Շատ աստվածաշնչագետներ ենթադրում են, որ նախապես եղել է չորս կապված բնագիր՝ ծագած տարբեր ժամանակներ ու տարբեր շրջանակներում: Այդ բոլորը եղել են գրավոր մշակումներ հինկտակարանյան Եկեղեցու մեկ ավանդության, որ հանգում էր Մովսեսին ու միջմովսեսյան ժամանակին: Այս իմաստով Թորան իր արդի տեսքով նման է Տատիանոս ջատագովի (Բ դար) աշխատությանը, որ մեկ պատումով միացրել է չորս ավետարանները: Ուղղափառ աստվածաշնչագետ ավագերեց Ա. Կնյազևի կարծիքով Հնգամատյանի նմանօրինակ «հավաքական» կառույցը բացատրվում է Մովսեսից եկող, Աստծուց ներշնչված ճշմարտության «համակողմանի բացահայտման» ձգտումով (Господь, Муж брани, ПМ, էջ 949, պրակ VII.):

6. Աստծու անունները Հնգամատյանում: Դեռևս Տերտուղիանոսը, Սուրբ Հովհան Ոսկեբերանը և երանելի Օգոստինոսը նկատել են, որ Սրբազան պատմության մի տարբերակում մշտապես կիրառվում է Աստծու սրբազան ԵԱՅՎԷ անունը, իսկ այլուր նախընտրություն է տրվում ԷԼՈՅԻՄ-ին: Եբրայական բնագրում սրբազան անունը գրված է չորս տառով՝ YHWH: Ք. ծ. ա. Գ-Բ դդ. բարեպաշտ սովորույթը սրբազան անվան արտաբերման արգելք է դրել առօրյայում: Դրա փոխարեն օգտագործում էին Ադոնայ՝ Տեր բառը: Մասորեաները, որոնք ձայնավորներ մուծեցին եբրայական բնագրի մեջ (տե՛ս հտ. 1, § 8), սրբազան անվան չորս տառերին հավելեցին ձայնավորներ՝ վերցնելով Ադոնայ-ից: Ստացվեց մի միացություն, որ Եվրոպայում ժԶ դարում սկսեցին սխալ արտասանել՝ Եհովա: Մինչդեռ հրեական լեզվին լավատեղյակ Որոգինեսն է դեռևս գրել, որ սրբազան անունը հնչում է ԵԱՎԷ: Ուստի աստվածաշնչագիտության մեջ ընդունված է սրբազան անվան ձայնավորներ համարել Ա-ն և է-ն, իսկ Աստծու անունն արտասանել yahwé, քանի որ վերջին «H» բաղաձայնը չի արտասանվում:

7. Վարկած Յնգամատյանի երկու նախնական գրավոր ավանդու-թյունների մասին: Այն ավանդույթունը, ուր կիրառվում էր սրբազան անու-նը՝ նոր ժամանակների աստվածաշնչագիտության մեջ սկսեցին անվանվել Եահվեական (Ե - J), իսկ այն, ուր Աստված էլոհիմ (Աստված) էր անվան-վում՝ Էլոհիմական (Է - E): Վիթխարի եռանդ գործադրվեց, որպեսզի սրբա-զան գրքերում տարբերակվի մի ավանդույթը մյուսից (տես Հավելված 5, գրքի վերջում): Ավելի ուշ Հնգամատյանում առանձնացվեց ևս երկու ավանդույթ (D և P, տես հտ. 1, § 16): ԺԹ դարի վերջին նույնիսկ հրատարակվեց «Ծիա-ծանային Աստվածաշունչ», ուր «չորս աղբյուրները» նշանակվում էին տար-բեր գույների տառերով: Բայց այդ ջանքերը հավաստի արդյունք չտվեցին: Մանրամասն տրոհումները «աղբյուրների» հաճախ ենթադրական հիմքով էին կատարվում և ապացուցողական ուժ չստացան:

Այնուամենայնիվ Սրբազան պատմության չորս շերտերի առկայություն-նը ներկայիս ընդունում են գրեթե բոլոր աստվածաշնչագետները: Դեռևս Ի դարասկզբին այդ մասին անվերապահորեն գրում էին որոշ ուղղափառ հե-ղինակներ (Բ Ա. Տուրան, Ի. Դ. Անդրեև և ուրիշներ): Այս տեսությունը կաթոլիկ աստվածաբանության մեջ շրջանառվելու իրավունք ստացավ լոկ կարդի-նալ Սյուարին ուղղված Աստվածաշնչական հանձնաժողովի ուղերձից հետո (1948 թ. մարտի 27):

«Այժմ,- ասված է ուղերձում,- ոչ ոք չի կասկածի տակ չի դնում աղ-բյուրների գոյությունը և չի մերժում Մովսիսական օրենքների աստիճա-նական աճը՝ կախված ավելի ուշ ժամանակների ընկերային և կրոնական պայմաններից»:

Սակայն մնում էր մի հարց. երբ և որտե՞ղ են առաջացել այդ աղբյուրնե-րը: Ժ. Աստրուկը (տես հտ. 1, § 11, կետ 4) կարծում էր, թե այդ աղբյուրներից օգտվել է անձամբ Մովսեսը: Շվեդական Մեկնողական դպրոցը դրանք հա-մարում է չորս բանավոր ավանդույթուն, որոնք գրառվել են միայն Գերու-թյան դարաշրջանում:

Հարցեր կրկնության համար

1. Աստվածաշնչի առաջին հինգ գրքերն ի՞նչպես են կոչվում և ինչի՞ մասին են պատմում:
2. Ո՞վ է համարվում Հնգամատյանի հեղինակը և ինչու:
3. Հետմովսիսյան շրջանի ի՞նչ հետքեր կան Հնգամատյանում:
4. Բերե՞ք տարբերակների օրինակներ աստվածաշնչական պատմություննե-րում:
5. Գրառման քանի՞ տարբերակ է նկատվում Հնգամատյանում:
6. Աստծու անունն ինչո՞ւ է արտասանվում Եահվե:

§ 16. Մովսիսական ավանդության չորս տարբերակների տեսության շարադրանքը

Ուղղափառ մեկնաբանության մեջ դեռևս չկա միասնական՝ համընդունված տեսակետ Հնգամատյանի չորս աղբյուրների վերաբերյալ: Բայց Բ. Ա. Տուրանի և Ա. Վ. Կարտաշևի աշխատանքներից հետո, որոնք պաշտպանում են այդ տեսությունը, ոչ մի լուրջ աշխատանք ի հայտ չի եկել, որը հերքեր այդ տեսակետը: Ի դարի կեսին աստվածաշնչագիտության մեջ այն վերջնական ճանաչում գտավ՝ մտնելով դասագրքեր ու քրիստոնեականներ:

Ինչպես արդեն ասվեց, այդ տեսությունը չի ձգտում վնասել Հնգամատյանի՝ կանոնականությանն ու աստվածաշունչ լինելու տեսակետին: Այն վերաբերում է լոկ Ս. Գրքի պատմա-ներածական նեղ ոլորտին:

Սույն ենթագլխում տեսությունը շարադրվելու է այնպես, ինչպես ընդունված է ժամանակակից աստվածաշնչագիտության մեջ՝ ինչպես ուղղափառների, այնպես էլ կաթոլիկների ու բողոքականների մոտ (բացառությամբ մկրտչական-արմատականների):

1. Չորս ավանդությունների բնույթը և դրանց գրառման ժամանակը: Ընդունելով Հնգամատյանի հիմքում ընկած չորս սրբազան ավանդությունների առկայությունը՝ մեկնաբաններն ընդգծում են, որ դրանց նմանությունն ու կրոնական միասնությունը պայմանավորված են այն բանով, որ հանգում են Մովսեսին (մասամբ գրավոր, մասամբ բանավոր ձևով): Թագավորաց դարաշրջանում, իսրայելական մշակույթի զարգացմանը զուգընթաց, անհրաժեշտություն առաջացավ Մովսիսական ավանդությունը հավաքել ի մի: Այդ կարգի ամենավաղ փորձն է համարվում Եահվեականի Սրբազան պատմությունը:

Եահվեական պատումը (Ե, լատ. J): Աստվածաշունչ հեղինակը, որ հայտնի է այս պայմանական անունով, ենթադրաբար ապրել է Երուսաղեմում: Նրա ուշադրությունը Հուդայի տոհմի նկատմամբ է և շեշտում է ժողովրդի միաբանությունը («համայն Իսրայելը»), որը ցույց է տալիս միասնական թագավորության ծաղկման ժամանակը՝ Դավթի ու Սողոմոնի օրոք (Զ. ծ. ա. Ժ դար): Թերևս նա եղել է այն դպիր-գրիչներից, որոնք աշխատել են Սողոմոնի պալատում (Գ Թագ. Դ 3): Իբրև գրական տեսակ (տե՛ս հտ. 1, § 9) պատումների Եահվեական բաժինը պատկանում է արձակ էպոսին (չափածո մասերի ընդգրկումով): Սրա լեզուն կենդանի է, ակնհայտ պատկերավոր: Հայտնելով Աստծո՛ւ մարդուն մոտ լինելու խորհուրդը՝ սրբազան մատենագիրը հաճախ դիմում է մարդակերպության պատկերների: Նրան խորթ է վերացական մտածողությունը, նրա պատկերները հագեցած են իմաստով, մատչելի են

թե՛ իմաստունին, թե՛ երեխային: Ընդ սմին նրա մտահորիզոնը լայն է: «Նա սիրով ու համբերատար հավաքում է պատումերը,- գրում է Բ. Ա. Տուրաևը,- լինի բաբելոնյան կամ քաղղեական ծագման: Նա խուսբի վարպետ է, որ հոգեբանական նուրբ զգացողության ունի. Նա հետաքրքրված է գոյություն ու կրոնի մեծագույն խնդիրներով: Ինքը շատ օժտված հրեա է՝ ո՛չ հոգևորական միջավայրից, հավանաբար հին մարգարեների շրջանակից, լի խորունկ մտքերով ու որոնումներով, միաստվածյան և համապարփակ աշխարհընկալումով» (ИДВ, һ.т. II., էջ 28):

Եահվեականի պատումն ընդգրկում է մարդու արարման պատմությունը՝ մինչև Մովսեսի մահը: Նրա աստվածաբանությունը կապված է սուրբ-գրական կարևորագույն նյութերի՝ Հայտնության, Ուխտի և խոստումի հետ:

Էլոհիմական պատումը (Է, լատ. E): Սողոմոնի թագավորության տրոհումից հետո՝ մոտավորապես 930 թ., Հյուսիսային թագավորությունում (Իսրայելում կամ Եփրեմում) անհրաժեշտություն առաջացավ Մովսեսական ավանդության սեփական մեկնաբանման: Դա, ինչպես համարում են աստվածաշնչագետները, իրագործել է հյուսիսիսրայելական անծանոթ մի իմաստուն (մոտ. Թ-Ը դդ.): Պայմանականորեն էլոհիմական անվանված այդ իմաստունն իր պատումն սկսում է Աբրահամից և ավարտում Մովսեսի մահով: Դա արդեն «առավել զարգացած հոգևոր դարաշրջանի ներկայացուցիչ է, որ պակաս հանդուրժող է ու ինքնատիպ, որ Եահվեականին զիջում է թե՛ գեղարվեստական, թե՛ ոճի հարցերում» (Բ. Ա. Տուրաև): էլոհիմականը խուսափում է մարդակերպ պատկերներից, Աբրահամին անվանում է մարգարե (Ճննդ. Ի 7): Նրա պատումներում ամենից հաճախ Աստված հայտնվում է երազում ու տեսիլներում: Նա ընդգծում է, թե Եահվե անունը բացահայտվել է լուկ Մովսեսի ժամանակ (Ել. Գ): էլոհիմականն՝ իբրև հյուսիսցի, մեծ ուշադրություն է հատկացնում հյուսիսային տոհմերի հերոսներին, Հովսեփին ու Հեսու Նավեին: Հյուսիսային թագավորության անկումից հետո Մովսեսական ավանդությունը հավանաբար էլոհիմյան տարբերակով տարվել է Երուսաղեմ (մոտ. 721 թ.), և ինչ-որ մի մատենագիր միացրել է Եահվեականի հետ իբրև մեկ ամբողջություն (ԵԷ):

Քահանայական ավանդություն (Բ, լատ. P): Մովսեսական ավանդության երրորդ տարբերակում Աստված (ինչպես նաև երկրորդում) կոչվում է էլոհիմ: Բայց ոճով, լեզվով ու խնդիրներով այս ավանդույթը կտրուկ տարբերվում է առաջին երկուսից: Նրա զուսպ, հակիրճ պատմեալաձևը վեցօրյայից է սկսվում (Ճննդ. Ա) և հասնում մինչև Մովսեսի մահը: Սկզբնական պատմությունը և նահապետների կյանքը հիմնականում շարադրված են տոհմագրության միջոցով (տոլդոտ), որոնք ասես պատմական սխեմա լինեն,

պատումի ողնաշարը: Ամեն ինչից երևում է կազմողի պատկանելությունը քահանայական միջավայրին: Նա ամենից շատ ուշադրություն է դարձնում Խարայելի եկեղեցական կառուցվածքին, ծեսերին և աստվածաշտույթյանը, որոնց խնդիրն է «սուրբ ժողովրդին»՝ այսինքն Աստծուն ընծայվածին, առանձնացնել հեթանոս աշխարհից: Քահանայական ավանդության ստեղծման ժամանակը դժվար է որոշել: Մի կողմից Եզեկիել մարգարեն (Չ դար) այն ամբողջությամբ դեռ չգիտի, բայց մյուս կողմից՝ քիչ չեն այնտեղ վստահաբար շատ հին հատվածներ: Բոլոր դեպքերում երրորդ Սրբազան Պատմությունը ձևավորվել է Գերությունից ոչ ուշ: Ենթադրություն կա, որ այն ընդհանրապես չկար իբրև առանձին գիրք, այլ միանգամից ներմուծվել է իբրև լրացում առաջին երկու սրբազան պատմություններին (ԵՆ + Ք):

Երկրորդ օրենքյան սրբազան պատմություն (Եօր., լատ. D): Չորրորդ ավանդությունը, որ առկա է Հնգամատյանում ոճով հիշեցնում է մարգարեների ասածները՝ մասնավորապես Երեմիայի: Այն իր անունն ստացել է Թորայի հինգերորդ գրքից: Հեղինակի լեզուն հանդիսավոր է, զգացական, հնչում է որպես բոցաշունչ քարոզ: Պատմությունն սկսվում է Մովսեսի կտակով, որ հիշեցնում է անապատական դեգերումների ժամանակ եղած դեպքերը և ավարտվում է մարգարեի մահվան պատմությունով: Աստվածաշնչագետների մեծ մասը կարծում է, որ այդ պատմությունը նախաբանն է եղել սրբազան գրության առավել ընդարձակ մի երկի, որ Հին մարգարեներ է անվանվում, կամ Պատմական գրքեր (Յեսու Նավե, Դատավորաց, Թագավորաց): Աշխատանքն ավարտվել է գերության ժամանակ, բայց դրա մեջ մուծվել են ավելի վաղ գրված բնագրեր (սկսյալ Զ. ծ. ա. ԺԲ դարից):

2. Հնգամատյանի օրենսդրական մասերը: Չորս ավանդություններից յուրաքանչյուրին պատկանում է Թորայի օրինադրական բնագրերից մեկը: Դրանք ավելի շուտ հավելում են պատումների բնագրին և ժամանակով նախորդում են դրանց: Քանի որ Մովսեսը ոչ միայն մարգարե ու առաջնորդ էր, այլև առաջին հերթին օրենսդիր, ապա պատգամներն ու օրենքները հավանաբար եղել են Հնգամատյանի առավել հին մասը:

Հնգամատյանի ավանդությունները	Դրանց համապատասխանող օրենքներն ու կանոնները
Եսիվեական	Ծիսական Տասնաբանյա (Ել. ԼԴ)
Էլոհիմյան	Տասն պատվիրանները (դեկալոգ) (Ել. Ի 2-17), Ուխտի գիրքը (Ել. Ի 22-23, 33)
Քահանայական	Ղևտական գիրքը և Թվոց գրքի կանոնները (Թվ. Ե-Ժ, ԺԸ-ԺԹ)

Երկրորդօրենքյան	Բ Օրինաց օրենսդրական մասը՝ ներառյալ Տասնաբանյան որոշ փոփոխություններով
-----------------	--

Բայց բնագրերից ո՞րն է անմիջականորեն Մովսեսին պատկանում:

Մեկնիչների մեծ մասը համակարծիք է, որ Մովսեսին է պատկանում Տասնաբանյան, նաև Ուխտի գիրքը: Վերջինը, սակայն, լրացումներ է պարունակում, ներմուծված նստակյաց-հողագործական կյանքի անցման ժամանակ, այդ պատճառով դա կարելի է Մովսեսի Օրենքը համարել, որն ընդլայնվել է Հեսու Նավեի և դատավորների շրջանում: Նույն ժամանակին է վերաբերում նաև ծիսական օրենսգիրքը (Ել. ԼԴ):

Ավելի բարդ է Ղևտական Գրքի ծիսական պատվիրանների հարցը: Թեպետ այնտեղ կան խոր, մինչմովսիսյան հնուիթյան գծեր, բայց ամբողջապես դրանք ակնհայտորեն նկատի ունեն ոչ թե քոչվորների պարզապես նահապետական կենցաղը, այլ ավելի զարգացած դարաշրջան՝ մնայուն սրբատեղիներով, մեծաթիվ կղերականներով և պաշտամունքի թանկագին նյութերի առատությամբ:

Վերջապես, Բ Օրինաց պատվիրանները, որ թելադրում են ժամերգություն կատարել միայն մեկ վայրում՝ Երուսաղեմում, հայտնի են դառնում լոկ 622 թվականից հետո, երբ Հոսիա թագավորը (640-609) Տաճարում գտավ այդ հրահանգը պարունակող Օրինաց գիրքը: Ըստ Հերոնիմոս Երանելու դա Բ Օրենքն է եղել (ավելի ճիշտ՝ սրա օրենսդրական մասը): Այժմ ընդունված է, որ գիրքը պահվել է Հյուսիսային թագավորութայան ղևտացիների միջավայրում և Հուդա է տարվել այդ թագավորութայան անկումից հետո:

Հոսիա թագավորի օրոք՝ Օրենքի Գրքի հանդիսավոր օրինակարգումից առաջ, Իսրայելի պատմության մեջ չենք գտնում հետքեր, որ այն ունեցած լինի որևէ՝ հանրորեն ընդունված ծիսական օրենքների հավաքածու: Բերենք մի քանի օրինակ:

Հակառակ Բ Օրինաց արգելքին՝ ժողովուրդը զոհաբերություն է անում զանազան տեղերում ու սրբավայրերում (Սելով, Քեբրոն և այլն), զոհ մատուցում են ոչ թե քահանաները (ինչպես Ղևտականում), այլ դատավորները, թագավորները, ընտանիքների գլուխները (Դատ. 2 19, ԺԳ 19, Բ Թագ. 2 17): Մարգարեների գրքերը վկայում են, որ անապատում (Մովսեսի ժամանակ) պաշտամունքը զերծ էր Ղևտական գրքում նկարագրված ճոխությունից ու վեհուիթյունից: Դա համապատասխանել է քոչվորների կենցաղին, որ ոչ ցանում էին, ոչ այգիներ տնկում, ոչ էլ խաղողի վազեր: Ամոսի մարգարեության մեջ (Ք. ծ. ա. Ը դար) Աստված հարցնում է. «Միթե ողջակեպ և ւոհեք մատուցեցիք Ինձ այնտեղ, անապատում, քառասուն տարի, ո՞վ տունդ Իսրայելի» (Ամ. Ե 25): Միքիա մարգարեն (Ը դար) հավաստում է, թե Աստծուն չի

կարելի գոհերով հաճելի լինել: «Պատմվեց քեզ, ո՛վ մարդ, թե ի՞նչ է բարին և ի՞նչ է ուկում քեզնից Տերը, իրավունք հաստատել, ողորմություն սիրել և պատրաստ լինել քո Տեր Աստծու հետևից գնալ» (Միք. 2 8): Իսկ Երեմիայի մարգարեության մեջ (Է դար) Աստված ասում է. «Ձեր հայրերի հետ ոչինչ չխոսեցի և ոչ էլ պատվեր տվեցի նրանց ողջակեպների և Կոհերի մասին այն օրը, երբ նրանց հանեցի Եգիպտացիների երկրից: Բայց այս բանը պատվիրեցի նրանց՝ ասելով. "Ականջ դրեք իմ ձայնին, և ես ձեզ համար Աստված կլինեմ, իսկ դուք ինձ համար կլինեք ժողովուրդ:"» (Երեմ. Է 22-23):

Սրանից պարզվում է՝ 1) դատավորների ու թագավորների դարաշրջանում ամբողջ Իսրայելին ծանոթ չէին բարդ ծիսակարգեր՝ իբրև պարտադիր, 2) Մովսիսյան Թորայի հիմքը բարոյական միաստվածությունն է, նրա կրոնաբարոյական պատվիրանները: Հենց այդ առումով Քրիստոս Փրկիչը՝ հավատի խոստովանությունը միակ Աստծու հանդեպ, ինչպես նաև սերն Աստծու ու մերձավորի նկատմամբ համարում էր Օրենքի կարևորագույն պատվիրանները (Մարկ. ԺԲ 29-33): Այստեղից հասկանալի է Սբ. Իրենեոսի միտքը. «Քանի որ թե՛ մեկ, թե՛ մյուս Ուխտում կատարյալ կյանքի կանոնները նույնն են, ապա դրանք մատնանշում միևնույն Աստծուն, որ թեկուզ սահմանել է մեկին և մյուսին պատշաճ պատվիրաններ, բայց գլխավոր ու կարևորագույնները, առանց որոնց փրկությունը հնարավոր չէ, տվել է միևնույնը երկու Ուխտերում» (Против ересей, IV,12,3):

Բայց Սբ. Գրքի պատմության մեջ պատահական բան չկա: Եթե Մովսիսական Օրենք են մուծվել անցողիկ պաշտամունքային ու իրավական տարրեր, դա պետք է ունենար նախախնամական նշանակություն: Սբ. Հայրերի կարծիքով այդ լրացումների նպատակը դաստիարակչական էր. Աստծու ժողովրդի ամբողջ կյանքը լցնել կրոնական բովանդակությամբ և ծեսերով, քանի որ այն տակավին պատրաստ չէր յուրացնելու հոգևոր ճշմարտությունն իր մաքրությամբ: Այդ է մատնանշում Սբ. Իրենեոսը. «Եթե Նոր Կտակարանում առաքյալները, ինչպես պարզվում է, որոշ պատվիրաններ են տալիս ներողամտաբար, ոմանց անզուսպ վիճակի պատճառով, որպեսզի այդպիսի խստասիրտ մարդիկ լիովին չկորցնեն իրենց փրկության հույսը և չդառնան Աստծուց հեռացած, ապա զարմանալի չէ, որ Հին Կտակարանում Աստված այդպիսի մի բան է թողել ժողովրդի օգտին և վերոհիշյալ արարողությունների միջոցով ուղղորդել է, որպեսզի նրանք դրա միջոցով փրկություն ստանան» (Против ересей, IV.,15,2): Ծիշտ այդպես Տերտուղիանոսն ասում է. «Աստված առաջարկում էր նաև ծանր և բազմազան ծիսակատարությունների միջոցով Իրեն ենթարկել կոպիտ և անհնազանդ մարդկանց մտքերը: Նա ուզում էր այնքան տարբեր և հաճախակի կրոնական արարողությունների միջոցով զսպել նրանց իր մշտական ներկայությամբ և սովորեցնել՝ օր ու գի-

շեր խոկալ աստվածային օրենքի մասին» (Против Маркиона, 2, 19): *Հստ Սբ. Հովհան Ոսկեբերանի՝ «Ի սեր մոլորյալների փրկության Աստված Իրեն ծառայելիս փոփոխություններով թույլ տվեց այն, ինչին ականատես էին լինում հեթանոսները դևերին պաշտելիս, որպեսզի փոքր առ փոքր հեռացնելով հեթանոսական սովորություններից՝ հասցնի բարձր իմաստության»* (Беседа IV. на Мф 2:1): *Եվ իրոք քանանանացիների ծեսերի հրապուրանքը թուլացվեց այնքանով, որ աստվածահայտնութենական կրոնը նույնպես ընդունեց ժողովրդին մատչելի հանդիսավոր պաշտամունքային ձևեր:*

3. Մովսեսի օրենսդրության օրինակարգում¹: *Հինկտակարանյան շրջանը գիտե Մովսիսական օրենքի երեք հանդիսավոր համակարգում.*

- ա) *Առաջինը տեղի ունեցավ Սինա լեռան վրա, երբ Մովսեսի միջոցով ժողովուրդն ստացավ Տասնաբանյայի քարե տախտակները և բանավոր կարգադրություններ Աստծուց (Ել. ԺԹ-Ի):*
- բ) *Երկրորդը տեղի ունեցավ 622 թ., Հովսիս թագավորի ժամանակ: Թագավորն ինքը Օրենքի Գրքերն ընթերցելիս «պատառոտեց իր պղնձադրոշմը» ի նշան ապաշխարության (Դ Թագ. ԻԲ 11), իսկ ամբողջ ժողովուրդը «մտավ ուխտի մեջ», այսինքն հանդիսավորապես խոստացավ պահպանել պատվիրանները:*
- գ) *Երրորդ և վերջնականը վերաբերում է Ք. ծ. ա. Ե դարի կեսին, երբ Եզրաս քահանան Բաբելոնից բերեց ամբողջ Հնգամատյանը՝ ներկայիս ծավալով և կարդաց Երուսաղեմի բնակիչների հավաքի առջև: Խոստանալով պահել Մովսիսական օրենքը՝ ժողովուրդն ապաշխարեց և ծոմ պահեց (Նեեմի Ը 1, Թ 1):*

Այսպիսով, համակեղեցական ընդունումն Օրենքի այնպիսի մասերի, ինչպես Ուխտի գիրքը, Ղևտաական գիրքը և Թվերի գրքի օրենսդրական մասերը, տեղի է ունեցել Գերությունից հետո միայն: Դրանով է բացատրվում, որ մարգարեների և պատմական գրքերում հղում չկա Հնգամատյանի շատ ծիսական սովորություններին:

4. Մովսիսական ավանդության հնությունը: *Վելլհաուզենի վարկածի հիմնական սխալն (տես § 11) այն միտքն էր, իբր չորս սրբազան պատմություններից յուրաքանչյուրն ամբողջապես նրանց ստեղծածն է, ովքեր առաջին անգամ գրառել են: Դրանով կասկածի էր ենթարկվում ոչ միայն նահապետների, այլև հենց Մովսեսի վերաբերյալ պատումների հավաստիությունը: Նույնիսկ պնդում էին, թե Մովսեսը մտացածին, առասպելա-*

¹ Ռուսերեն кодификация – այսպես է կոչվում օրենքների ժողովումն ու համակարգումը և դրանց շրջանառումն իբրև եկեղեցական կամ քաղաքացիական գործող իրավունք:

կան անձ է: Բայց հնագիտության վերջին նվաճումներով այդ տեսակետը հերքվեց: Պարզվեց որ Աբրահամի, Իսահակի ու Հակոբի կենցաղը, ինչպես նկարագրված է Մենդոց գրքում, լիովին համապատասխանում է հինարևելյան սովորություններին ու իրավունքին, որոնք իշխում էին երկրորդ հազարամյակի սկզբին, իսկ Ժ դարին (Եահվեականի ենթադրյալ թվականը) կորցրել են իրենց նշանակությունը: Հայտնի դարձավ, որ Հովսեփի, Ելքի ու Մովսեսի վերաբերյալ ավանդությունը լիովին համաձայնում է եգիպտագիտության տվյալներին: Ուխտի գրքում և Հնգամատյանի օրենսդրական մյուս մասերում քիչ չեն օրենքները, որ համընկնում են հին դատաստանագրքերին ու օրենսգրքերին (օր. Յամմուրաբիի օրենսգրքի, որ գրված է մոտ. մ. թ. ա. 1700 թ., տես հտ. 1, § 24): Մինչև մովսեսյան և Մովսեսյան ժամանակի պատմական միջավայրը նկարագրված է այնպիսի հավաստիություններով, որ բացառում է այն միտքը, թե Հնգամատյանի պատումներն ստեղծված են Ժ կամ Ը դարերում: Այլ խոսքով՝ Մովսեսական գրքերը շատ հին, բուն՝ վավերական ավանդությունից են գրառված:

5. Օրենք և օրինականություն: Հինկտակարանյան Եկեղեցին չուներ օրենքների բաժանում՝ Աստծու և աշխարհականի: Մարդու կյանքն՝ իր բոլոր հանգամանքներով, անցնելու էր Տիրոջ աչքի առջևով: Այդ իսկ պատճառով Հնգամատյանը կրոնաբարոյական պատգամների հետ մեկտեղ ներառում է նաև քաղաքացիական ու քրեական իրավունք: Օրենսդրությունն ամբողջապես ծագում է Աստծուց և ավանդությունում սրբագործվել է Մովսեսի հեղինակությամբ: Հենց նա, իբրև Հինկտակարանյան Եկեղեցու ստեղծող, նրա՝ եկեղեցու խնդիրը դարձրեց Աստծուն ծառայելը և միայն նրան պատկանելը: Հենց նրա միջոցով Աստված մարդկանց ցույց տվեց, որ բարոյական սկզբունքների պահպանումը հավատացյալի կարևորագույն պարտականությունն է: Մովսեսյան օրենքի մշտական հարստացումն ու ընդլայնումը գրավում էր մարդկային համակեցության նորանոր բնագավառներ՝ աշխատանքի, ամուսնական և ընկերային հարաբերությունների ասպարեզում: «Կյանքն ըստ Օրենքի» պարզապես չէր նշանակում հրահանգների ինչ-որ խմբաքանակի մեքենայական կատարում, այլ մարդու ամեն քայլի համապատասխանեցում Աստծու կամքին: Օրենքի կրոնի այդ հոգևոր խորությունն արտացոլված է Սաղմոսներում, հատկապես ՃԺԸ սաղմոսում, որը Եկեղեցին կարդում է հոգեհանգստյան կարգի ժամանակ¹:

Բայց հավատացյալների ձգտումը՝ կյանքի ամեն մի մանրուք ենթարկել Օրենքի կանոններին, հղի էր նաև վտանգներով: Այն աստիճանաբար դառնում էր մեռնող կանոնակարգային առաքինություն, բարդ դիպվածական

¹ Հայ եկեղեցում կարգն այլ է, ընթերցվում են այլ սաղմոսներ – խմբ.:

բարոյականություն, կրոնական ձևականություն և ծիսամուլություն: Այստեղ է օրինապաշտության՝ կանոններին կուրորեն հետևելու ակունքը, որ ավելի ուշ արգելք ծառայեց Քրիստոսի բերած ազատության ավետիսին: Այն համոզումը, թե մարդ սեփական ուժերով կարող է առաքինիների կարգն անցնել, ստեղծեց «կեղծավորի» այն տեսակը, որին խստորեն դատապարտեց Քրիստոս Փրկիչը:

Հարցեր կրկնության համար

1. Բնութագրեցե՞ք այսպես կոչված Եսիվեական սկզբնաղբյուրը: Մոտավորապես ե՞րբ է գրվել այն:
2. Բնութագրեցե՞ք Էլոհիմյան Սրբազան պատմությունը:
3. Ի՞նչ է Քահանայական ավանդույթը:
4. Ի՞նչ բան է Բ Օրինաց Սրբազան պատմությունը:
5. Ո՞ր հիմնական օրենսդրական բնագրերն են համապատասխանում Հնգամատյանի չորս աղբյուրներին:
6. Այդ բնագրերը ե՞րբ են գրվել:
7. Ծիսական օրենքներն ինչի՞ համար են տրվել:
8. Ե՞րբ են խմբագրվել Հնգամատյանի օրենքները, և այդ ամենը ե՞րբ ճանաչվեց որպես Սուրբ Գիրք:
9. Ինչո՞վ է ապացուցվում Մովսիսական օրենքի հնությունն ու վավերականությունը:
10. Ո՞րն է Օրենքի էությունը, և «Օրենքի կրոնը» ինչով է տարբերվում «Օրինապահությունից»:

§ 16-ի Հավելված

1. Երկու ավանդությունների միացման օրինակ Աստվածաշնչական պատումի մեջ Ծննդ. 2-Է

Եսիվեական ավանդություն (Ե)	Քահանայական ավանդություն (Ք)
<p>Է 1 Տեր Աստված (Եսիվե) ասաց Նոյին. «Դու և քո ողջ ընտանիքը մտնե՛ք տապան, որովհետեւ մարդկային ցեղի մեջ միայն քեզ գտա արդար իմ հանդեպ: 2 Անպիղծ բոլոր կենդանիներից յոթը-յոթը՝ արու և էգ, կմտցնես քեզ հետ, իսկ պիղծ բոլոր կենդանիներից երկու-երկու՝ արու և էգ, 3 նաև երկնքի անպիղծ թռչուններից յոթը-յոթը՝ արու և էգ, իսկ պիղծ թռչուններից երկու-երկու՝ արու</p>	<p>Չ 17 Իսկ ես, ահա, ջրով կհեղեղեմ երկիրը՝ ոչնչացնելու համար երկնքի տակ գտնվող ամեն մի շնչավոր էակ. և այն ամենը, ինչ կա երկրի վրա, կոչնչանա: 18 Ես իմ ուխտը կհաստատեմ քեզ հետ, և տապան կմտնես դու, քեզ հետ նաև՝ քո որդիները, քո կինը և քո որդիների կանայք: 19 Բոլոր կենդանիներից, բոլոր գազաններից ու բոլոր էակներից երկու-երկու կմտցնես տապան, որ նրանք կե-</p>

<p>և Էգ, որ սերունդ պահպանվի ողջ երկրի վրա: 4 Յոթը օր հետո ես քառասուն օր ու քառասուն գիշեր անձրև պիտի թափեմ երկրի վրա և երկրի երեսից պիտի ջնջեմ իմ ստեղծած ամեն մի Էակ»: 5 Նոյն արեց այն ամենը, ինչ պատվիրեց Տեր Աստված: 7 Ջրհեղեղի պատճառով Նոյի հետ տապան մտան նրա որդիները, նրա կինն ու նրա որդիների կանայք: 8 Անպիղծ թռչուններից ու պիղծ թռչուններից, երկրի վրայ սողացող բոլոր սողուններից 9 երկու-երկու՝ արու և Էգ, Նոյի հետ մտան տապան, ինչպես պատվիրել էր նրան Տեր Աստված: 10 Յոթը օր յետոյ երկրի վրա ջրհեղեղ եղաւ: 13 Այդ օրը Նոյի հետ տապան մտան Սեմը, Քամը, Յաբեթը՝ Նոյի որդիները, Նոյի կինը և նրա որդիների երեք կանայք: 14 Նրանք և ամեն տեսակ գազան, ամեն տեսակ անասուն, երկրի վրա սողացող ամեն տեսակ սողուն և ամեն տեսակ թռչուն մտան տապան: 16... Տեր Աստված նրա ետևից փակեց տապանը: 17 Երկրի վրա քառասուն օր ու քառասուն գիշեր ջրհեղեղ եղավ: Հորդացավ ջուրն ու բարձրացրեց տապանը: 18 Ջուրն ավելի ու ավելի վարարեց, ողողեց երկիրը, և տապանը լողաց ջրերի վրա: 21 Մեռան երկրի վրա շարժվող բոլոր կենդանի Էակները՝ թռչունները, անասուններն ու գազանները, երկրի վրա սողացող բոլոր սողուններն ու բոլոր մարդիկ: 22 Ցամաքի վրա եղած ամեն բան, որ կենդանի շունչ ուներ իր ռունգերի մեջ, ոչնչացավ: 23 Աստված բնաջնջեց երկրի երեսին գտնվող ամեն մի Էակ՝ մարդուց մինչև անասուն, սողուններից մինչև երկնքի թռչունները: Նրանք վերացան երկրի երեսից: Կենդանի մնաց միայն Նոյը, նաև նրանք, որ նրա հետ տապանում էին:</p>	<p>րակրվեն քեզ հետ: Թող դրանք արու և Էգ լինեն: 20 Ամեն տեսակ թռչուններից, ամեն տեսակ կենդանիներից, երկրի ամեն տեսակ սողուններից՝ բոլորից երկու-երկու, արու և Էգ, թող մտնեն քեզ հետ, որ կերակրվեն քեզ հետ: 21 Եվ դու կվերցնես բոլոր այն ուտելիքներից, որոնցով պիտի սնվեք: Դրանք կկուտակես քեզ մոտ, որպեսզի քեզ ու նրանց համար կերակուր լինեն»: 22 Եվ Նոյն արեց այն ամենը, ինչ պատվիրեց նրան Տեր Աստված: Նա այդպես էլ արեց: Է 6 Նոյը վեց հարյուր տարեկան էր, երբ ջրհեղեղ եղավ երկրի վրա: 11 Նոյիկյանքի վեցհարյուրերորդ տարում, երկրորդ ամսի քսանյոթին ժայթքեցին ստորգետնյա բազում աղբյուրներ, բացվեցին երկնքի ջրվեժները: 24 Ջուրը հարյուր հիսուն օր ողողեց երկիրը:</p>
---	--

2. Հնգամատյանի չորս ավանդությունների հաստատման ենթադրելի ժամանակը

Ա. Օրենսդրական բաժիններ

- | | | |
|--------|---|--|
| ԺԳ Դար | - | Տասնաբանյա, Ուխտի գրքի մի մասը,
բանավոր Թորա |
| ԺԲ Դար | - | Ուխտի գիրք, ծիսական Տասնաբանյա
(Ել. ԼԴ), Բ Օրինաց և Ղևտական գրքերի կորիզը |
| Ը Դար | - | Բ Օրինացի օրենսդրական մասը |
| 622 թ. | - | Բ Օրինացի խմբագրումը Երուսաղեմում |
| Չ Դար | - | Ղևտական գիրքը |
| Ե Դար | - | միասնական Հնգամատյան |

Բ. Պատմողական բաժիններ

- | | | |
|-----------|---|--|
| ԺԳ-ԺԱ դար | - | բանավոր պատումներ աշխարհի սկզբի,
նահապետների և Մովսեսի մասին: Առաջին
գրառումներն անապատում թափառումների
մասին |
| Ժ դար | - | Երուսաղեմյան ավանդությունը, Եսիվեական (Ե, J) |
| Թ-Ը դարեր | - | հյուսիսային ավանդությունը, Էլիիմյան (Է, E) |
| Է-Չ դդ. | - | Երկրորդօրենքյան ավանդությունը (Եօր, D) |
| Չ դար | - | Քահանայական ավանդությունը (Ք, P): |

3. Հինկտակարանյան Եկեղեցու ժամանակագրական հանգրվաններ

(Հնգամատյանում նկարագրված դարաշրջանը)

- | | | |
|--------------------------|---|------------------------------|
| Մոտ. 1850 թ. | - | Աբրահամի Քանան տեղափոխվելը |
| Մոտ. 1750 թ. | - | Հակոբի Քանան տեղափոխվելը |
| Մոտ. 1650 թ. | - | Իսրայելի տեղափոխվելը Եգիպտոս |
| ԺԳ դարի երկրորդ
կեսեր | - | ելքը Եգիպտոսից |

ԾՆՆԴՈՑ ԳՐՔԻ ՆԱԽԱԲԱՆԸ (Ծննդ. Ա-ԺԱ)

§ 17. Արարչության ուսմունքը Վեցօրյայում (Ծննդ. Ա)

1. Ծննդոց գրքի կազմը և բովանդակությունը: Աստվածաշնչի առաջին գիրքը բաժանվում է երկու՝ ծավալով անհավասար մասի. փոքրը՝ նախաբանը (Ա 1-ԺԱ 26) և մեծը՝ նահապետների պատմությունը (ԺԱ 27-Յ 26): Աստածաշունչ գրողին Նախաբանն անհրաժեշտ էր՝ ցույց տալու համար Ուխտի ակունքների կապն աշխարհի և մարդու վերաբերյալ՝ Արարչի համատեղեցողական ծրագրերի հետ: Ծննդոց գրքի առաջին մասն իր հերթին նվիրված է երկու գլխավոր նյութի՝ աշխարհաստեղծման ուսմունքին (Ա-Բ) և մարդկային մեղքին (Գ-ԺԱ):

Նահապետների պատմության մեջ (ԺԲ-ԻԵ) հիմնականում խոսվում է Աբրահամի մասին, Իե-ԼԶ գլուխներում՝ Իսահակի և Հակոբի, իսկ ԼԷ-Ծ գլուխներում՝ Հովսեփի մասին:

Իսկ ամբողջությամբ գիրքը սովորեցնում է.

- Աստծու՝ տիեզերքի և մարդու Արարչի Ողորմածության և ամենագորուծության մասին,
- Աստծու կամքին մարդկանց հակադրվելու և մեղքի հետևանքների մասին,
- Աշխարհի գալիք փրկության աղբյուրի՝ Աստծու ժողովրդի ստեղծման մասին, այդ ժողովրդի նախնիներին փորձությունների մեջ՝ պահելու և պահպանելու նախախնամության վերաբերյալ:

2. Ծննդոց Գրքի նախաբանի բնույթը: Հին Կտակարանի գլխավոր առանձնահատկություններից մեկն այն է, որ պատմության օգնությամբ ուսուցանում է աստվածահայտ ճշմարտությունները: Սակայն սուրբգրական նախաբանը սովորական, ժամանակակից իմաստով պատմություն չէ: Ավելի շուտ այն աշխարհի և մարդկության սկզբի հոգևոր պատմություն է, որտեղ հեռավոր հնության իրադարձությունները հաղորդվում են կերպարների, խորհրդանիշների, ուսուցողական պատկերների լեզվով: Նախաբանի աստվածաբանությունը նման է սրբապատկերների աստվածաբանությանը, ուր վերին աշխարհի հայտնությունը հաղորդվում է գծերի, գույների և ձևերի

պայմանական նշաններով¹: «Աստվածաշունչը խորություն է. նրա հնագույն մասերը, և առաջին հերթին Ծննդոց Գիրքը, ծավալվում են այն տրամաբանության օրենքներով, որը չի տարանջատում մասնակիին վերացականից, պատկերը գաղափարից, խորհրդանիշը՝ խորհրդանշվող իրականությունից: Միգուցե այս տրամաբանությունը բանաստեղծական կամ խորհրդավոր է, բայց նրա պարզունակությունը սոսկ թվացյալ է: Այն հագեցած է Բանով, որը մարմնականություն է հաղորդում (առանց անջատելու այն բառերից ու իրերից) անօրինակ թափանցիկությանը» (Վ. Ն. Լոսսկի²):

Նախաբանի պատումի հյուսվածքն ուսումնասիրելիս՝ նախ հարկավոր է պարզել. ինչ միտք, ինչպիսի ուսմունք է տրամադրում մեզ սրբազան հեղինակը կերպարների և խորհրդանիշների միջոցով: Աստվածաշունչը չի անդրադառնում աշխարհաստեղծման՝ գիտական, բանականորեն հասանելի տեսանկյան: Այն աստղագիտության կամ կենսաբանության ձեռնարկ չէ: Նրա նպատակն է ցանկացած քաղաքակրթության և ցանկացած դարաշրջանի մարդկանց հաղորդել Աստծու Հայտնության մասին: Ծննդոց գրքի առաջին գլուխը պետք է գիտարկել ոչ թե մեր ժամանակի գիտական նվաճումների տեսանկյունով, այլ հեթանոսության կրոնափիլիսոփայական հայացքների, որի դեմ է այն ուղղված (այդպիսի մոտեցման սկիզբը դրել է դեռևս Եվսեբիոս Կեսարացին):

3. Հեթանոսական տիեզերածնության ուսմունքներ: Հեթանոսների պատկերացումներն աշխարհաստեղծման վերաբերյալ, դրանց ամբողջ բազմազանությամբ հանդերձ, կարելի է հանգեցնել մի քանի հիմնական կերպի (առավել մանրամասն տե՛ս § 17-ի Հավելվածը):

Ա. Աշխարհն սկիզբ չի ունեցել: Օվկիանոսի անբովանդակելի նախնական անդունդը, բնությանը լինելով աստվածային, իրենից ծնել է բոլոր աստվածներին, և ամեն ինչ, որ լցնում է երկինքն ու երկիրը:

Բ. Քաոսային անդունդը օվկիանոս-աստծու (կամ աստվածուհու) պարտության է մատնվում իրենից իսկ ծնված երիտասարդ աստվածներից: Հենց նրանք են քաոսը կարգի վերածել, կազմավորել և բնակեցրել երկիրը, ստեղծել մարդկանց իբրև իրենց ծառաներ, որոնք աշխատելու են իրենց համար:

Գ. Սկզբնապես եղել է երկու աստվածություն՝ լույսի և խավարի: Նրանք իրար դեմ մարտնչելով ստեղծում են աշխարհի այն կերպարը, որ առկա է այժմ:

¹ Ուղղփառ եկեղեցուն բնորոշ պատկերապաշտության տարրերից – խմբ.:

² Լոսսկի Վլ. Ն. (1903–1958) – աստվածաբան, Ուղղփառ աստվածաբանության մեջ «Նեոպատրիստիկ» սինթեզի հիմնադիր:

Այս հավատալիքներում, որ դավանում էին մարդիկ ամենուրեք՝ Հնդկաստանից մինչև Հունաստան, նշմարվում են կրոնափիլիսոփայական հիմնական հայացքները.

- Աստծու և բնության անբաժանելիության ուսմունքը (պանթեիզմ).
- բնական երևույթների դիտարկումը՝ որպես աստվածների բազմության գործունեության ձև (բազմաստվածություն, պոլիթեիզմ).
- հասկացողություն աստվածային երկու ճշմարիտ սկզբունքների վերաբերյալ (դուալիզմ).
- կարծիք տարերքներից կազմված աշխարհի անծայրածիր լինելու մասին.
- պատկերացումներ տիեզերածնության վերաբերյալ՝ իբրև աստվածների ճակատամարտի արդյունք.
- հավատ համընդհանուր մայր-աստվածուհու հանդեպ (ավելի ուշ նրա կերպարը միաձուլվեց կույր ճակատագրի և անհրաժեշտության ըմբռնմանը).
- կարծիք Տիեզերքի վերաբերյալ, որ դատապարտված է մնալու անփոփոխ կամ շարժվելու հավերժական վերադարձի շրջանաձև ծիրով,
- համոզմունք մոգական եղանակով (կախարդանքով, ծեսերով և այլն) աստվածային ուժերի վրա ազդելու մարդկային կարողության վերաբերյալ, որի շնորհիվ իրենց համար կապահովեն առավել բարօր վիճակ:

Այս ըմբռնումներից շատերին երկար կյանք էր վիճակված, իսկ Աստվածաշնչի ստեղծման դարաշրջանում դրանք լիովին տիրապետող էին Իսրայելը շրջապատող ժողովուրդների շրջանում: «Քրիստոնեական աստվածաբանությունը,- գրում է Ս. Տրուբեցկոյը,- կազմավորվել է հերձվածների դեմ պայքարում: Հրեից կրոնական միտքը զարգացել է օտարերկրյա և հայրենի հեթանոսության դեմ համառ և ծանր պայքարի բովում»: Այդ դիմակայության արտացոլումը խորհրդավոր կերպով առկա է Ծննդոց Գրքի առաջին գլխում՝ Վեցօրյայում:

4. Վեցօրյա (Ծննդ. Ա 1-Բ 4): Վեցօրյա ընդունված է անվանել արարչության պատկերը, նկարագրված Ծննդոց Ա 1-ից Բ 4-ում: Այն բացվում է հնչեղ բառերով. «Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը»: Այստեղ չկա ո՛չ աստվածների պայքար, ո՛չ



Աստարթի արձանիկ, Նեգև, Պաղեստին, Ք. ծ. ա. Դ. հազարամյակի սկիզբ

նախահավիտենական նյութ, չկան անդունդի (օվկիանոսի) աստվածուհիներ, որոնցից կազմավորվում է աշխարհը: Ամեն ինչ իրագործում է միակ, դիմավոր Արարիչը: Ըստ Նրա խոսքի ծագում են լույսն ու խավարը, առանձնանում է ջուրը ցամաքից, երկնականարին վառվում են լուսատուները, ծովը և հողը ծնում են բույսեր ու կենդանիներ: Եվ, վերջապես, Աստված մարդուն ստեղծում է Իր պատկերով ու նմանությունով: Վեցօրյայի պատումը հակիրճ է, քանի որ այն լոկ ներածությունն է սրբազան պատմության, որի միջոցով ճանաչվում է Աստծու կամքը:

Սակայն Արարչի գործերը հինկտակարանյան իմաստուններն ըմբռնում են նաև բնության զննումով: Այսպես՝ Ը սաղմոսը պատմում է տիեզերքի մեծության մասին, որի համեմատ մարդն այնքան չնչին է թվում, բայց և Տիրոջ կամքով նա գրեթե հավասարեցված է հրեշտակներին: ԾԳ սաղմոսը, նկարագրելով բնության բազմազան երևույթները, վկայում է, որ Աստծու ստեղծագործությունը շարունակական գործընթաց է, որով Տերը մշտապես սատարում է աշխարհի լինելությանը: Երկինքն ու երկիրը, տարերքն ու կյանքն իրենց գոյությունը իսկ փառաբանում են Արարչի իմաստությունը (Սաղմ. ԾԽԸ): Այդ աստվածային իմաստությունը որոշում է բնության օրենքների կանոնավորությունը (Յոթ ԻԸ): Հին Կտակարանում Աստծու իմաստությունը հաճախ անձնավորվում է: Առակ. Ը 22-ում և հաջորդիվ ասվում է. «Տերն ինձ ստեղծեց իր ճանապարհի սկզբին՝ իր գործերի համար. հավիտենությունից էլ առաջ հաստատեց ինձ: Նա ծնեց ինձ հենց սկզբին, դեռ երկիրն արարելուց առաջ, ավելի առաջ, քան անդունդներ կրացեր»: Իմաստությունն ի հայտ է գալիս Աստծու խոսքում, որը Վերին Բանականության և Ամենագործության ազատ իրագործումն է (Եսայի ԾԵ 10-11, Սաղմ. ԾԽԸ 5):

- Վեցօրյայի ուսմունքը կարելի է ամփոփել յոթ դրույթով.
 - ա) Բնության ուժերն աստված չեն. միակ Աստվածն աշխարհի նախապատճառն է (հմմտ. Հռոմ. Ա).
 - բ) Նա բացահայտում է Իրեն որպես դիմավոր, գերագույն էություն.
 - գ) Նա բացահայտում է Իրեն Իր իսկ գործերի մեջ (հմմտ. Հռոմ. Ա 20).
 - դ) Նա ստեղծում է աշխարհն Իր խոսքով (հմմտ. Եբր. ԺԱ 3) և գործում նրանում.
 - ե) Նա կարող է միջնորդավորված գործել՝ տարերքների միջոցով (երկրորդապատճառ).
 - զ) Աշխարհն ստեղծվում է ոչ թե վայրկենապես, այլ հաջորդաբար՝ պարզից դեպի բարդ, անկենդանությունից՝ կենդանի, կենդանուց դեպի մարդ.
 - է) Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերով և նմանությամբ, որի շնորհիվ մարդը դառնում է արարածների տիրակալ:

5. Բացատրություն՝ Վեցօրյայի տեքստի:

Ա) **Ի ՍԿՉԲԱՆԵ** (եբր. תישארב - *ԲեՆԻԵՇԻՏ*). Այս բառը նշանակում է ոչ թե պարզապես հերթական կամ ժամանակագրական սկիզբ (եբր. הליכת *ՏեհիլԱ*), այլ անցում հավերժականից դեպի ժամանակ: Մինչ այս խորհրդավոր սկիզբը, Օգոստինոս Երանելու խոսքերով ժամանակ չի եղել, քանի որ դա ստեղծվել է աշխարհի հետ զուգընթաց (*Μενοεθε* XI, 13)¹: Երանելու միտքը մերձենում է ժամանակակից գիտության տվյալներին, որոնց համաձայն ժամանակն առանց նյութի գոյություն չունի: Բուն Աստվածությունից ծնվում է ստեղծագործող Բանը: Այդ պատճառով Իրենեոսը Մենդոց Ա 1-ը համեմատում է Հովհաննու ավետարանի Ա 1-ի հետ, որտեղ Բանը կար՝ «Սկզբից» Աստծու մոտ (նշենք, որ Հովհաննեսի նախաբանը սերտորեն կապված է Մենդոցին. այնտեղ խոսվում է Բանի մասին, և «ամեն ինչ նրանով եղավ»):

Բ) **ԱՏԵՂԾԵՑ** (եբր. ארב - *ԲԱՌԱ՛*) բառացի՝ «արեց», «կազմեց» (*հունարեն* εσποίοιχεσεν), *հմմտ.* Եսայի ԽԱ 20: Բայց Մենդոցի հեղինակը չէր ուզում ասել՝ թե Աստված աշխարհը «կազմեց» հավերժական նյութից: Ոչինչ չկա Նրան հավերժակից՝ հենց այդպես են հասկացել Ծննդ. Ա 1-ը հինկտակարանյան ժամանակներում: Այդ մասին է վկայում «Աստված նրանց ստեղծել է ոչնչից» (Բ Մակ. Է 28) խոսքը:

Արարումն աստվածային կամքի բացարձակ և գերագույն գործն է: Սուրբ Բարսեղ Մեծն իբրև հեթանոսական գաղափար անտեսում է, որ «Աստված աշխարհի պատճառն էր, բայց ոչ ինքնաբերական պատճառը, ինչպես մարմինն է սովորի պատճառ լինում... Եվ լոկ այս չէր Աստված աշխարհի համար. ոչ միայն պատճառ էր լինելության, այլ որպես բարի արարեց օգուակարը, իբրև իմաստնագույն՝ ամենագեղեցիկը, իբրև հղորագույն՝ մեծագույնը» (*Беседы на Шестоднев., 1*)²:

Գ) **ԱՍՏՎԱԾ** (եբր. אִיְהוָה - *ԷլՈՀԻՄ*). «Աստված»ը սեմական սովորական Էլ բառն է (որ նշանակում է ուժեղ, հզոր), տարբերակներն են՝ Էլ, Իլու, Ալլահ: Էլոհիմն Էլոահ-ի հոգնակին է (Հին Կտակարանում հազվագյուտ է կիրառվում, գլխավորապես բանաստեղծական բնագրերում, օր.՝ Հոբի գրքում): Այստեղ չի կարելի դիտարկել դա որպես բազմաստվածության արձագանքներ: Հոգնակի թիվը նշանակում է լինելության կատարելություն (հմմտ. եբր. ַיְהוָה - *ՇԱՄԱՅԻՄ*՝ երկինք): Վեցօրյայի ամբողջ պատումը բազմաստվածու-

¹ Հայերեն թարգմանությունը՝ Օգոստինոս Երանելի, Խոստովանություններ, Անկյունաքար, Երևան, 2008 - խմբ.:

² Հայերեն հրատարակությունը՝ Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցարեայ արարչութեան, պատր. Կ. Մուրադեան, ՀՍՍՀ ԳԱ, ՄՍ, Երևան, 1984 - խմբ.:

թյան դեմ է ուղղված: Բնորոշ է, որ սեմիթներն Աստվածությունը երբեմն անվանել են Իլանի (այսինքն՝ աստվածներ), թեպետ խոսքը մեկ էություն մասին էր (տե՛ս նախախորայեյան շրջանի Երուսաղեմի Տիր թագավորի նամակը. Տուրան Բ. Ա., ИДВ, հատ. 1, էջ 294): Նկատենք, որ եբրայեցիներն ունենում «աստվածուհի» բառ չկա (անհրաժեշտության պարագային սրբազան մատենագիրները ստիպված էին կիրառել արական սեռի բառը):

Դ) ԵՐԿԻՆՔ ԵՎ ԵՐԿԻՐ: Բառակապակցություն, որ համապատասխանում է շումերական անկի-ին, որ նշանակում է Տիեզերք: «Երկինքը» որոշ մեկնաբաններ կապում են հրեշտակների աշխարհի հետ: Մի ըմբռնումը չի հակասում մյուսին, քանի որ Աստվածաշնչում հրեշտակների լինելությունը և ծառայությունը սերտորեն կապված են բնության ուժերի հետ (Հայտն. ԺԴ 18, ԺԶ 5): Եկեղեցու հավատն արտահայտելով՝ Աթենագորաս¹ գրում է, որ Աստված հրեշտակներին «Իր խոսքով հաստատեց և բաշխեց, որ կառավարեն տարերքները, թե՛ երկինքը, թե՛ երկիրը» (Апология, 10):

Ե) ԵՐԿԻՐՆ ԱՆՁԵՎ ՈՒ ԴԱՏԱՐԿ ԷՐ² (Եբր. והו והו – ՏՈՂՈՒ ՎԱՎՈՂՈՒ): Հին Կտակարանի մեջ այս հազվագյուտ արտահայտությունը քառու է նշանակում (փյունիկյան առասպելաբանության գիշերվա աստվածուհին կոչվում է Բաաու): Այս քառասյին վիճակն արդյո՞ք Աստծու կամքի ուղղակի արդյունքն է: Եսայի ԽԵ 18-ում (բառացի թարգմանություն) Աստված երկիրն ստեղծեց «ոչ դատարկ» (Եբր. והו אֵל – ԼՈ՛Ր ՏՈՂՈՒ): Սրանից կարելի է եզրակացնել ինչ որ խորհրդավոր մի բան խեղաթյուրել է արդեն սկզբնական ստեղծագործական հղացումը: Հնարավոր է՝ այստեղ խորհրդավոր ակնարկություն կա չար կամքին, որ ծագել է արարած ոգիների աշխարհում:

Զ) ԽԱՎԱՐ (Եբր. חשך – ԽՈ՛ՇԵՍ) և ԱՆԴՈՒՆԴ (Եբր. אנו – ՏԵՅՈՒՍ հոգն. תומוהו – ՏԵՅՈՒՍՈՍ): Ուշագրավ է, որ Տերը հավանություն է տալիս ոչ թե քառասյին խավարին, այլ միայն լույսին (Ա 4. հմմտ. Ա 3ովի. Ա 5 «Աստված լույս է, և նրա մեջ խավար չկա, բոլորովին չկա»): Ռուս աստվածաբան Վ. Ն. Իլյինն այս կապակցությամբ նկատում է. «Լիակատար վստահություն կարելի է պնդել, որ մեր տիեզերքի ստեղծման սկզբին, նրա «առաջին օրվան» նախորդել է ինչ-որ նախաաշխարհական, մետանյութական, մետաֆիզիկական ողբերգություն, որի ահագոտ վերջաբանը խավարն ու քառան էին» (Шесть дней творения, Париж, 1930, էջ 67): «Տեհում» բառը համահունչ է օվկիանոսի բաբելոնյան աստվածուհի Թիամատին (տե՛ս § 11, 3): Թիամատը պատկերվում էր վիշապի տեսքով: Քառսի նմանատիպ հրեշներ հանդիպում են նաև այլ

¹ Վաղբրիստոնեական ջատագով, իր՝ «Ձատագովություն»ը («Միջնորդություն քրիստոնյաների համար») գրել է 176–180 թթ. – Շան. ռուս. խմբ.:

² Հայերենում Երկիրն անձն ու անկազմ էր – խմբ.:

ժողովուրդների առասպելներում (եգիպտացիների, քանանացիների, չինացիների):



Մարդուկը մարտնչում է Թիամաթի հետ: Արքայական պալատի քանդակներից, Նեբրոթ, Ասորեստան (մոտ. 870 թ. Ք. ծ. ա.):

*Վիշապագուն աստվածները մարմնավորում էին ջրային տարերքը (տե՛ս Հավելվածը. նաև *В. Топоров. Хаос. – Мифы народов мира.* գրքում. հատ. 2, Մ., 1982, էջ 581-582): Չնայած Վեցօրյայում «անդունդը» զուրկ է որևէ առասպելական հատկությունից, Հին Կտակարանի այլ մասերում հանդիպում ենք ջրային հրեշի կերպարների, որոնք, սակայն, դիտարկվում են որպես արարած (լևիաթան, ռահաբ, վիշապ. Հոբ Թ 13, ուր սինոդական թարգմանության մեջ Ռահաբ անունը փոխարինված է «հպարտություն» բառով, Սաղմ. ՀԳ 13-14, ՁԼ 11, Եսայի ԾԱ 9-10, հմմտ. Ղուկ. Ը 31): Այս էակն իր մեջ մարմնավորում է հակադրումն աստվածային կամքին, և այն առաջացել է հոգևոր՝ արարված աշխարհի ընդերքում (սատանայի անկումը. հմմտ. Հովի. Ը 44, Ա Հովի. Գ 8, Հայտն. ԺԱ 9, Ի 2): Ժամանակների ավարտին այս դիվական ուժերը կջախջախվեն (Եսայի ԻԷ 1. հմմտ. Հովի. ԺԲ 31):*

է. ԱՍՏԾՈՒ ՀՈԳԻ (եբր. עִירָאֵל օուր – ՌՈՒԷԼՄ ԷԼՈՂԻՄ). որոշ մեկնիչներ «ռուախ» բառը թարգմանում են որպես քամի: Իրականում այս բառն կարող է նշանակել և՛ հոգի, և՛ քամի: Բայց «ՌՈՒԷԼՄ ԷԼՈՂԻՄ»-ն առավել բնական կլինի թարգմանել որպես Աստծու Հոգի, հատկապես, որ «շրջում էր» (תפארה «մեռախնեֆետ») բայը հոգածության, խնամքի, ստեղծագործական ազդեցության իմաստն ունի (Բ Օրինաց ԼԲ 11-ում այն թարգմանվել է՝ «իր ձագերին թևի տակ առնող արծվի նման»):

Ը. Եվ Աստված ասաց... Աստված տեսավ... Աստված կոչեց... մարդուն բնորոշ նմանատիպ արտահայտությունները Վեցօրյայի խստակերպ շարադրանքում պատահական չեն: Դրանց նպատակն է Աստծուն ներկայացնել ոչ թե իբրև անդեմ գորութիւն, այլ որպէս դիմավոր էակ: «Ասաց» բայն իմաստային առումով կապված է Աստծու արարող Բանի աստվածաշնչական գաղափարի հետ: «Աստծու Բանը,- բացատրում է Սբ. Գրիգոր Նյուսացին,- չի արտասանվում ո՛չ եբրայեցերեն և ո՛չ ազգերի օգտագործած որևէ լեզվով, բայց ինչ էլ որ լինեն Մովսեսի կամ մարգարեների գրառած աստվածային բառերը՝ նպատակն Աստծու կամքի մատնանշումն է» (Ընդդեմ Եվսոմիոսի, 12ա; Երկեր., հտ. 6, էջ 369): Անուններով կոչելը կամ անուն շնորհելն Արևելքում իշխանութիւն էր մատնանշում (Դ Թագ. ԻԴ 17. հմմտ. 3ովհ. Ա 42): Սրանով Սբ. հեղինակն ընդգծում է, որ բնութիւյան ուժերն ու երևույթներն աստվածներ չեն (ինչպէս կարծում էին հեթանոսները), այլ արարված են ու ենթակա են Արարչին և Նրան են պատկանում:

Թ. ԱՌԱՎՈՏ, ԵՐԵՎՈ, ՕՐ: Ժամանակի հաշվարկը երեկոյից սկսելը համապատասխանում է օրվա ընթացքի չափման վաղնջական եղանակին, որ կապված է անասնապահական կենսակերպի հետ, երբ աշխատանքն, առօրյան սկսվում էր արևի մայր մտնելուց հետո: Այս երևույթը հիմնովին ամրապնդվեց հինկտակարանյան Եկեղեցում և անցավ նորկտակարանյանին (օրվա ժամերգությունների ընթացքն սկսվում է երեկոյից): «Օր» (եբր. օր՝ օր) բառը այս տեքստում դժվար թե սովորական օր նշանակի, որովհետև երկրային օր, որ սահմանվեր արևով և լուսնով (Ծննդ. Ա 14), տակավին չկար: Հետևաբար այստեղ «օր»ը կարող է մատնանշել ժամանակի ցանկացած միավոր: «Հապար տարին Տիրոջ աչքում,- ասում է սաղմոսեգուն,- երեկվա օրվա պես է» (Սաղմ. 2Թ 4, հմմտ. Բ Պետր. Գ 8): Տես նաև Ծննդ. Բ 4, Ելք Ժ 6, Ղևտ. Է 35-36, Թվեր Է 10, 84, Բ Օրին. Թ 24, ԼԱ 17-18, ԼԲ 7, որտեղ «օր» բառը կիրառվում է առավել լայն իմաստով՝ որպես ժամանակագրական շրջան:

Ժ Արարման օրերի մասին պատումի կառուցվածքը: Վեցօրյան տիեզերաստեղծման որևէ գիտական տեսութիւն չի առաջարկում, ինչը հաստատվում է գեղարվեստական բնույթով: Ըստ ժանրի պատկանելության այն սրբազան բանաստեղծութիւյան նմուշ է, որ աստվածաշատական օրհներգութիւն է հիշեցնում: Ծննդոցի հեղինակը յոթ կրկներգ (կրկնվող արտահայտություն) է կիրառում. 1. «Եվ Աստված ասաց», 2. «Թող լինի», 3. «և եղավ այդպես», 4. բացատրութիւն, 5. «Եվ Աստված տեսավ», 6. «Եվ Աստված կոչեց», 7. «Եվ եղավ երեկո»:

Աստվածաշնչի բանաստեղծական գուգահեռների սկզբունքով արարման վեց օրերը տրոհվում են երկու եռյակների (տես հտ. 1, § 8, 4).

- 1) լույսը - 4) լուսատու
- 2) ջրերը - 5) կյանքը ջրում
- 3) ցամաքը - 6) ցամաքում բնակվող կենդանիները:

Ցամաքի վրա բուսականության առաջացումը կարծես իրար է շաղկապում երկու եռյակները: «Յոթ օրերի» նկարագրության կրկնակներն ասես դասավորված են բարդ նախշազարգմամբ, որի իմաստը դեռևս պիտի պարզվի.

Օրեր	Կրկնակների թիվը	Օրեր
առաջին օր	7 ————— 6	չորրորդ օր
երկրորդ օր	6 ————— 6	հինգերորդ օր
երրորդ օր	5 ————— 5	վեցերորդ օր
յոթներորդ օր	6 ————— 7	

Բաբելոնում (Գերուսթյան շրջանում և ավելի վաղ) հրեաները կարող էին ծանոթ լինել Ակիտուի հեթանոսական տոնին: Ամանորյա այս հանդիսության ընթացքում թատերգական եղանակով ներկայացվում էր Մարդուկ աստծու հաղթանակը քառսի նկատմամբ և ընթերցվում էր աշխարհի արարման մասին «Էնունա Էլիշ» (տես §17-ի Յավելվածը) պոեմը: Բաբելոնացիների հավատալիքների համաձայն այս արարողությունները պիտի օժանդակեին արևի աստծուն, որ հերթական անգամ հաղթանակ տոներ խավարի նկատմամբ: Հնարավոր է, որ ի հակադրություն այս հեթանոսական տոնի ընդհանրական պաշտամունքից հետո հինկտակարանյան Եկեղեցին կրկնում էր Վեցօրյայի պատմությունը. ընդ որում պատումն ընթերցվում (կամ երգվում) էր փոխն ի փոխ: Այս եղանակով պետք է ամրապնդվեր բարդ համաչափությունը բնագրի՝ իր կրկներգերով և զուգահեռականությամբ հանդերձ: Իսկ ընդհանուր առմամբ երկու եռյակները պատմում են աշխարհաստեղծման երեք կարևոր շրջափուլերի մասին. տիեզերքի ստեղծումը, կենսական պայմանների արարումը և կյանքի ստեղծումը, կենդանիների և մարդու ստեղծումը: Ընդ որում առաջին եռյակը հիմնականում պատմում է տարերքների կազմության և տրոհման մասին, իսկ երկրորդն «արարված տարածությունը» լուսատուներով և կենդանի էակներով լցնելու: Այս ամբողջության մեջ աներկբա կերպով հերքվում են և՛ լուսատուների բաբելական պաշտամունքը, և՛ կենդանիների երկրպագության եգիպտական հավատքը: Թե՛ առաջինը, թե՛ երկրորդն Աստծու ձեռքով են արարված:

Օ ա ն ն շ ու շ յ ու ն

Այս կամ այն միտքը փոխանցելու համար Գիրքը հաճախ դիմում է սրբազան թվերի խորհրդաբանությանը, որի արմատներն Արևելքում վաղնջական ժամանակներին են հասնում:

- 3 - կատարելություն
- 3, 5 - փորձության շրջափուլ
- 4 - աշխարհի չորս ծագերը, տիեզերականություն
- 7 - ավարտուն կատարելություն
- 10 - օրենք
- 12 - լրումն ընտրյալների
- 40 - մեկ սերնդի անցման շրջան, նախապատրաստության և փորձության ժամկետ

6. Վեցօրյան և բնագիտությունը: «Հաստատությունը» նշելով իբրև թաղանթ, որ բաժանում է երկնային ջրերը երկրային ջրերից, Ծննդոցի հեղինակն ի նկատի ունի տիեզերքի կառուցվածքի մասին հինարևելյան պատկերացումը: Այդ ընկալման համաձայն երկիրը բոլոր կողմերից ողողում է տիեզերական օվկիանոսը: Ներքևից այն պահում են հաստատուն «սյուները», իսկ վերևից սահմանազատում է «հաստատությունը», որի վրայով շարժվում են լուսատուները: Ծննդոցի գրվելու պահից տիեզերքի մասին պատկերացումները բազմիցս փոփոխվել են: Ինչպես արդեն ասվել է՝ Հայտնությունը մարդուն պատրաստի վիճակում չի տրվում այն, ինչին նա կարող է հասնել իր բանականությամբ: Արարիչի մասին ուսմունքի հիմունքները բոլորովին կախում չունեն տիեզերաստեղծման այս կամ այն գիտական պատկերացումից: Երկրի պտտական շարժման տեսությունը, տիեզերքի և կյանքի զարգացման վերաբերյալ ժամանակակից վարկածները գիտության ոլորտին են պատկանում: Բայց աշխարհի բազմազան և բարդագույն օրինաչափությունները մշտապես մնում են իբրև մեծ հրաշք. և որքան շատ է իմանում մարդը բնության մասին, այնքան ավելի հիմնավորված կարող կրկնել սաղմոսագրուի բառերը. «Երկինքը պատմում է Աստծու փառքը, և երկնքի հաստատությունը հայտնում է նրա ձեռքի գործերը» (Սաղմ. ԺԸ 2):

7. Մարդու արարումն ըստ Վեցօրյայի: Եթե աշխարհաստեղծման բոլոր փուլերն իրականանում են աստվածային հրահանգով, ապա մարդու արարմանը նախորդում է խորհրդավոր մի «խորհրդակցություն», որն ընդգծում է նոր ստեղծվող էակի կենտրոնական նշանակությունը Տիրոջ ծրագրերում: Միայն նա է ստեղծվում Աստծու պատկերով և նմանությամբ: «Ստեղծենք» և «Մեր կերպարանքով» բառերը դիտարկելիս երբեմն բոլորովին առանց հիմքի փորձում էին բազմաստվածության հետքեր գտնել: Սակայն, նույն այդ քննադատողների կարծիքով, Վեցօրյայի տեքստը ստեղծվել է մոտավորապես 2 դարում, երբ միաստվածությունը վերջնական հաղթանակ էր տարել Իսրայելում (հմմտ. Եսայի ԽԴ 6, ԽԵ 5-7):

Մեկ այլ մեկնաբանությունամբ Աստված դիմում է էլոհիմներին՝ հրեշտակային արարածներին (հմմտ. Գ Թագ. ԻԲ 19, Սաղմ. ՁԱ 1): Այսուհանդերձ հայրաբանական գրականության մեջ գերակշռում է այն կարծիքը, որ Վեցօրյայում խոսքը ներաստվածային խորհրդի՝ «Երրորդության խորհրդի» մասին է: Եվ այս տեսակետը համաձայն է այն բանին, որ Հին Կտակարանում արդեն մասամբ քողագերծվում է Երրորդության Անձերի խորհուրդը: Չնայած Երրորդության խորհուրդը հայտնվում է լոկ Նոր Կտակարանի ժամանակ, Հին Կտակարանը տեղյակ է Հոգու, Իմաստության և Բանի մասին և նրանց վերաբերյալ խոսում է այնպիսի մի լեզվով, որ խիստ մոտ է Երրորդությանն առնչվող եզրույթներին (տե՛ս օր.՝ Սաղմ. ԳԳ 29, Եսայի ԼԱ 3, ԾԵ10-11, Հոբ 28):

8. Պատկեր և նմանություն: Ադամ: «Պատկեր» (եբր. ԾԼՅ – ՅՆԼԷՄ) և «նմանություն» (եբր. ՌՈՂԴ – ԴԵՄՈՂԾ) բառերը Վեցօրյայում կիրառված են իբրև հոմանիշ, կամ առնվազն իրար խիստ մոտիկ հասկացություններ: Առաջին բառն ավելի որոշակի է, այն կարելի թարգմանել իբրև տեսք, արտապատկեր (տե՛ս Ամոս Ե 26), երկրորդն առավել վերացական է և կապվում է գաղափարին, մտահղացմանը, ծրագրին (հմմտ. Դ Թագ. ԺՁ 10 և հաջ., ուր «դեմոստ» բառն պատկերի նշանակություն ունի): Ներկա դեպքում գործ ունենք աստվածաշնչյան զուգահեռականության հետ, որն ավելի է խորանում Սբ. Հայրերի մեկնություններում: Օրինակ Սբ. Գրիգոր Նյուսացին «պատկերն» ընդունում է որպես մի բան, որ տրված է բնությամբ, իսկ «նմանությունն» իբրև այն գերագույն կատարելությունը, որին պետք է ձգտի մարդը (Об устройении человека, XVI)¹:

Եվքանի որ Աստված հոգևոր սկիզբն է (ի հակադրություն արարածականի, մարմնականի. հմմտ. Եսայի ԼԱ 3), ուստի Աստծու պատկերը մարդու մեջ նրա հոգևոր հատկանիշն է: Սուրբգրական պատումի համաձայն մարդու աստվածանմանությունը որոշում է բոլոր արարածների վրա նրա «իշխելը» (Ա 26 և հաջ.): Հետևաբար խոսքը էակի բանական անձի մասին է, որ կամքի ազատություն ունի:

«Մարդ» բառը (եբր. ԾԴՌ – Ադամ) սրբազան հեղինակը հաճախ կիրառում է հոգնակի իմաստով («թող իշխեն», հմմտ. Հոբ ԺԴ 1, Սաղմ. ԼԳ 13, ԼԵ 8, Եսայի Զ 12, Երեմ. ԼԲ 19, ուր Ադամ նշանակում է պարզապես մարդ կամ համայն մարդկությունը):

Ադամի աստվածաշնչյան կերպարը նույն կերպ են հասկանում նաև Եկեղեցու Հայրերը: Սբ. Գրիգոր Նյուսացին նրան ամենամարդ է անվանում (Об устройении человека, XVI): Օգոստինոս Երանելու խոսքով Ադամը՝ «totum

¹ Հայերեն հրատարակությունը՝ Ս. Գր. Նիսացի, Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն, Ս. Էջմիածին, 2008, էջ 111-112:

genus humanorum», իմա՛համայն մարդկային ցեղը: Սբ. Գրիգոր Աստվածաբանի խոսքով «հանցավոր ճաշակմամբ մի ողջ Ադամ ընկավ» (Песнопение таинственные, 8): Նույն կերպ և Մակար Եգիպտացին է «ամբողջ Ադամ» անվանում «երկրային բոլոր ցեղերը» (Беседы, 12,13): Սիմեոն Նոր Աստվածաբանը սովորեցնում է, որ Քրիստոս աշխարհ եկավ «հանուն Ադամի» (Слово 1): Նույն կերպ և ուղղափառ պաշտամունքի մեջ մարդկությունը հիշվում է որպես Ադամ (Ավագ Շաբաթվա առավոտյան ժամերգության մեջ – աշխարհ իջավ, որ փրկի Ադամին): Զատկական օրերին փառաբանվում է Տերը, Ով հարություն տվեց մարդկության հայր Ադամի սերնդին:

«Ադամի անձին բնորոշ աստվածային պատկերը,- գրում է Վ. Ն. Լոսսկին,- վերաբերում է համայն մարդկությանը, «ամենամարդուն»: Այս իսկ պատճառով Ադամի ցեղում անձերի բազմացումը, որոնցից յուրաքանչյուրը կերպարանակից է Աստծու, կարելի է ասել, Աստծու պատկերի հոգնակիությունը բազում մարդկային անձերի մեջ, չի հակասում բնության գոյաբանական միասնությանը, որ ընդհանուր է բոլոր մարդկանց համար... Կա մի բնություն, որ ընդհանուր է բոլոր մարդկանց համար» (БТ, вып. 8, էջ 65):

Կենդանիների վրա ունեցած մարդու իշխանությունը Սբ. Բարսեղ Մեծն ընդլայնված է մեկնաբանում՝ իբրև իշխանություն մեղքի և մարմնի վրա: Այս ընկալումը հաստատվում է նրանով, որ կենդանիները Հին Կտակարանում (հատկապես ծովային հրեշները) հաճախ չար ուժերն են խորհրդանշում (հմմտ. Հայտն. ԺԲ 3, ԺԳ 1): Եվ այն, ինչ անգոր էր իրագործել «հին Ադամը», իրականացրեց նոր Ադամը, Մարդու Որդին, որ պատկերված է Դանիել է-ում որպես՝ ծովից ելնող «հրեշների և գիշատիչ գազանների» հաղթող:

9. Աշխարհի կատարելությունը: Շաբաթ: Զնայած Վեցօրյայում ծածուկ հուշումներ կան արարչության այնպիսի տարրերի վերաբերյալ, որոնք դեմ են Տիրոջ մտահղացմանը (խավար, քաոս), այնուամենայնիվ արարչական յուրաքանչյուր հանգրվան Աստված բնորոշում է իբրև «բարի», շատ լավ (եբր. ԾԽ – ՏՈՎ), իսկ ավարտին ասվում է. «Աստված տեսավ, որ այն ամենը, ինչ ստեղծել էր շատ լավ է» (Ա 31): Այս թվացյալ հակասությունը վերանում է նրանով, որ Արարիչը՝ Այբը և Քեն¹, արարվածին դիտում է ժամանակից դուրս և նրա հնարավոր սահմանային կատարելության վիճակում, որ եկեղեցու հայրերը թեոսիս են կոչում՝ աստվածացում:

Շաբաթ օրվա պատումի մեջ երկու հանգամանք է պետք տարբերակել՝ աստվածային և մարդկային.

ա. Երբ գրված է՝ «ժանգատացավ Իր գործերից» հարկ է հասկանալ փոխաբերական իմաստով, որովհետև, ինչպես նշում է Սբ. Հովհան Ոսկեբերա-

¹ Այսինքն Սկիզբը և Վերջը – խմբ.:

նր, Ծննդոցի հեղինակը «տուրք է տվել մարդկային սովորությունը» (Беседы на Бытие III, 3): «Յանգուտացավ»-ն այստեղ այն սահմանն է, որը տարանջատում է արարչական մեծ գործերը (աշխարհի, կյանքի, մարդու արարում) նոր շրջանից, երբ սկսեց գործել նաև Աստծու մտահղացումների մասնակիցը՝ մարդը: Բայց Աստծու նախախնամության մեջ երբեք չի լինում շաբաթվա հանգիստ: «Իմ Յայրը մինչև այժմ գործում է, ուրեմն ես ևս գործում եմ», - ասում է Քրիստոս Փրկիչը (Յովհ. Ե 17):

բ. Վեցօրյայում ստեղծական գործողությունների ավարտը միավորվում է շաբաթ օրվա պատվիրանի հետ: «Շաբաթ» (եբր. שבת – ՇԱԲԱՏ) բառի ծագումը պարզ չէ: Այն երբեմն կապում են բաբելոնյան շապատտուտի՝ լիալուսնի օրվա հետ: Ըստ երևույթին իսրայելացիները շաբաթը նշում էին իբրև հանդիսավոր տոն, որն ինչ-որ կերպ կախված էր լիալուսնից (հմմտ. Դ Թագ. Դ 23, Եսայի Ա 13, Ովս. Բ 11, Ամ. Ը 5): Շաբաթը, անկասկած, սահմանել է Մովսեսը (Ելք Ի 8): «Հանգստի օրը» կապելով արարման պատմության հետ, Վեցօրյան այն վերջնականապես առանձնացրեց նորալուսնի հեթանոսական տոնից: Շաբաթը դարձավ յուրաքանչյուր յոթ օրը մեկ կրկնվող «Աստծու օրը», երբ հանգստանում էին թե՛ մարդիկ, թե՛ անասունները: Այն ընդգծեց աշխատանքային գործընթացում անհրաժեշտ դադարը, որպեսզի մարդուն ազատի աղոթքի և Աստծու մասին մտորելու համար: Ավելի ուշ շրջանում շաբաթին ավելի մեծ նշանակություն էին տալիս (Նեեմ. Ժ 31, ԺԳ 15): Համարվում էր, որ շաբաթի ժամանակ մարդը պետք է ձեռնպահ մնա այն գործերից, որ կարող են ի ցույց դնել նրա իշխանությունը բնության վրա: Շաբաթն ասես մի մշտական հիշեցում էր Արարչի գերագույն իշխանության մասին: Երկրորդ Տաճարի շրջանում շաբաթը դարձավ հուդայականության տարբերակիչ նշաններից մեկը: Սակայն չափազանց մոլի վերաբերմունքը շաբաթի հանդեպ աստիճանաբար հասցրեց ծիսական մոլեռանդության, որը մեկ անգամ չէ, որ դատապարտում է Հիսուս Քրիստոս (Մարկ. Բ 27):

Վեցօրյան ավարտվում է եզրափակիչ-հանդիսավոր տողերով՝ «Այս է երկնքի և երկրի արարչության [եբր. SOLIUS] պատմությունը» (Ծննդ. Բ 4ա).

Յարգեր կրկնության համար

1. Ի՞նչ մասերի է բաժանվում Ծննդոց գիրքը:
2. Ի՞նչ նյութ է վեր հանում այս գիրքը և ինչի՞ մասին է պատմում:
3. Ո՞րն է Ծննդոց գրքի նախաբանի յուրահատուկ բնույթը: Ի՞նչն է դրանում կարևոր:
4. Նշեցե՞ք տիեզերաստեղծման հեթանոսական պատկերացումների երեք տեսակները:

5. Ի՞նչ ուսմունքների դեմ է ուղղված արարչագործության սուրբգրական վարդապետությունը:
6. Ինչո՞վ է Վեցոյան տարբերվում տիեզերաստեղծման հեթանոսական պատմություններից:
7. Ըստ Աստվածաշնչի՝ ի՞նչպես է Աստված հայտնվում բնության մեջ:
8. Թվեցե՞ք արարչագործության մասին աստվածաշնչական վարդապետության մեջ ամկա յոթ կետերը:
9. Ի՞նչ է նշանակում «ի սկզբանե»:
10. Ինչ է նշանակում Աստծու Էլոհիմ անվանումը:
11. Ի՞նչպես հասկանանք «երկինք եւ երկիր» բառերը:
12. Աստվածաշնչում ինչն է մատնանշում քառսը, և քառսի աստվածաշնչյան ընկալումն ինչով է տարբերվում հեթանոսական պատկերացումներից:
13. Վեցոյայում ինչո՞ւ են կիրառվել մարդակերպությանը բնորոշ արտահայտություններ:
14. Վեցոյայում Տերն ինչո՞ւ է անուններ շնորհում բնության երևույթներին:
15. Ի՞նչպես պիտի հասկանանք արարչագործական «օրը»:
16. Տույց տվե՞ք Վեցոյայի կառուցվածքի առանձնահատկությունները:
17. Ի՞նչ փոխհարաբերության մեջ են Վեցոյան և գիտությունը:
18. Ի՞նչ են նշանակում «ստեղծենք» և «մեր կերպարանքով» բառերը:
19. Վեցոյայում ինչպես է Աստծու պատկերն ամփոփվել մարդու մեջ:
20. Բնութագրեցե՞ք հայրաբանական ուսմունքն Ադամի վերաբերյալ:
21. Ի՞նչ է խորհրդանշում աստվածային «հանգիստը»:
22. Ո՞րն է շաբաթվա հոգևոր նշանակությունը:

§ 17-ի Հավելված

1. Դրվագներ տիեզերաստեղծման բաբելական պոեմից Աշխարհի արարչության մասին «Էնումա Էլիշ» – Երբ վերևում...

1920-1921 թթ. գերմանացի ասորագետ Ֆրիդրիխ Դելիչը (տես հատ. 1, § 10, կետ 3) «Մեծ խաբեություն» գրքում փորձում էր ապացուցել, որ Հին Կտակարանի բոլոր հիմնական մտքերը փոխառված են Բաբելոնից, և որ Աստվածաշնչի ուսմունքն արարչության մասին ամբողջապես կախյալ է բաբելոնյան տիեզերաստեղծումից: Այդ կարծիքն արդյո՞ք իրավացի է. կարելի է եզրակացնել ստորև բերվող բնագրերից.

Երբ վերևում անվանված չէ երկինքը,
Իսկ ցամաքը վարը դեռ անանուն է,
Առաջնածինը Ապուն՝ ամենաստեղծը,
Նախամայր Թիամայթը, որ ծնել է ամբողջը,
Միախառնեցին իրենց ջրերը:

Եղեգնյա դաշտեր այնժամ դեռ չկային,
 Եվ եղեգնուտներ չէին տեսնվում:
 Երբ աստվածներից դեռ ոչ ոք չկար,
 Ոչինչ անվանված չէ, բախտից հիշված չէ:

*Այնուհետև պատմվում է, թե ինչպես համաշխարհային օվկիանոսը (Ապա-
 տուն և Թիամնաթը՝ քաղցրահամ և աղի ջրերը) ծնեց աստվածներին: Նրանց
 աղմուկը խախտեց նախածնողների հանգիստը: Եվ նրանք ենթարկվեցին
 խորհրդին՝ ոչնչացնել երիտասարդ աստվածներին: Այնժամ իմաստուլթյան
 աստված էջան քնեցրեց և սպանեց Ապսուին: Հետո նա առագաստ կառուցեց,
 որտեղ երկնեց սպանված Ապսուի ջրերից գարնան արևի աստված Մարդու-
 կին: Երկնքի աստված Անուն սկսեց նախամայր Թիամաթին սկսեց անհանգս-
 տացնել իր հողմերով: Նա վճռեց վրեժ լուծել իր ամուսին Ապսուի համար:
 Բայց Մարդուկն աստվածներին խոստացավ հաղթահարել նրան, պայմանով,
 եթե նրանք իրեն արքա կճանաչեն: Ստանալով աստվածների համաձայնու-
 թյունը՝ Մարդուկը մարտի ելավ Թիամաթի դեմ:*

Երբ Թիամաթն այդ լսեց՝
 Մտքում խռովվեց, կորցրեց բանականությունը:
 Թիամաթը մռնչաց, վեր խոյացավ,
 Ստորոտից մինչև վեր ցնցվեց ու ջղաձգվեց նրա մարմինը:

*Բայց նրան շհաջողվեց մարտը շահել: Մարդուկը նրան ցանցերով խճճեց
 և նրա ջրեղեն որովայնը լցրեց մուկեզնած քամիներով:*

Նրա մարմինը փքվեց և երախը բացվեց:
 Մարդուկը նետով ճեղքեց նրա որովայնը
 Եվ ընդերքը խողեց ու տիրացավ սրտին:
 Նա նրան ընկճեց, նրա կյանքը իլեց,
 Նետեց դիակն ու կանգնեց վրան:

*Թիամաթի մտերիմները ևս տապալվեցին: Իսկ Մարդուկը մտածեց վի-
 շապի դիակից աստվածների բարեկերտ կացարան պատրաստել:*

Ջախջախեց նրա մարմինը, խորիմաստ բան սարքեց:
 Նրան կես-կես արեց ինչպես խեցի:
 Կեսը վերցրեց, դրանով ծածկեց երկինքը:
 Փականներ արեց, պահակներ դրեց,-
 Թող հսկեն, որ ջրերը չարտահոսեն,-
 Կայանատեղեր պատրաստեց նա մեծ աստվածների համար,
 Աստղ-մոլորակներ, աստվածների նմանությամբ...
 Թիամաթի լորձունքը Մարդուկը հավաքեց և քամուն տվեց,
 Նրան ամփոփեց ամպերի կույտերով...

Նա թիամաթի գլխին սար փլուզեց,
 Բացեց անդունդը, հեղեղներ հորդեցին:
 Տիգրիսն ու Եփրատը նրա աչքերից անցկացրեց...
 Նա այդպես ստեղծեց երկինքն ու երկիրը:
 Երկնքի ու երկրի կապն ամրապնդեց:
 Յետո իր ծեսերը նշանակեց, սահմանեց իր արարողությունները:

Աստվածները փառաբանեցին Մարդուկին իմաստության համար, և այնժամ նա խորհեց նրանց համար ծառաներ ստեղծել:

«Արյուն կհավաքեմ, կամրացնեմ ոսկորով:
 Կստեղծեմ արարած և կանվանեմ մարդ:
 Իրոք, կստեղծեմ ես մարդկանց:
 Թող ծառայեն աստվածներին, որ սրանք հանգստանան»:

Մարդուկը վերցրեց սպանված Կինգուլի աստծու արյունը և դրանից մարդ ստեղծեց: Աստվածներն իրենց համար աղյուսով կերտեցին վեհ կացարան-տաճարներ: Նույնպիսի տաճարներ պիտի կառուցեն մարդիկ:

Նման այն բանին, որ նա ստեղծեց երկնքում՝
 Թող լինի ստեղծված և երկրի վրա:
 Թող հիշեն մարդիկ, դիմեն աստծուն:
 Նրա շրթունքի խոսքերով պատվեն աստվածուհուն:
 Աստվածներին թող հաց զոհաբերեն:
 Առանց անփութության պահեն աստվածներին:

Մի այլ առասպելով («Աբեր Ատրահասիսի մասին») աստվածները, ցանկանալով մեկի վրա բարդել ծանր աշխատանքը, մտածեցին ստեղծել մարդկանց:

Գերիմաստ աստծուն, որ բանական էր,
 Նրանք սպանեցին իրենց հավաքով:
 Նրա մարմնից, նրա արյունով
 Նինտու աստվածուհին կավը հունցեց:
 Որ հավերժ լսեին սրտի թակոցը՝
 Բանականությունն ապրում է աստծու մարմնի մեջ,
 Ապրողը գիտե իր կյանքի նշանը...
 Կանչեց Անունակիներին՝ մեծ աստվածներին...
 Այսպես է ասում մեծ աստվածներին.
 «Դուք հրամայեցիք՝
 Ես կատարեցի... Ես ձեզ փրկեցի աշխատանքից,
 Ձեր կողովները հանձնեցի մարդկանց»:

Թարգմ.՝ Վ. Կ. Աֆանասևա, «Я открою тебе сокровенное слово». М., 1981, էջ 32-57)

2. Եգիպտական սաքն աշխարհի արարման մասին

Մեմփիսյան սաքի համաձայն ամեն ինչի նախածնողը եղել է Պտահը (կամ՝ Պտա): «Նրանից է եղել ամեն բան, սնունդն ու ուտելիքը, աստվածների սնունդը և բոլոր մյուս գեղեցիկ իրերը: Այդպես են գտել ու խոստովանել, որ նրա գորովությունն ավելի է, քան բոլոր մյուս աստվածներինը:

Պտահն գոհ էր, այն բանից հետո երբ ստեղծեց բոլոր առարկաները և բոլոր աստվածային խոսքերը:

Եվ նա աստվածներ ծնեց, քաղաքներ ստեղծեց, նա հիմնեց նոմեր (մարզեր) աստվածներին դրեց իրենց սրբավայրերը, նա հաստատեց նրանց գոհերը, նա հիմնեց նրանց տաճարները, նրանց մարմինները ստեղծեց նրանց սրտերի ցանկությունը: Եվ աստվածները մտան իրենց մարմիններն ամեն տեսակ ծառերից, ամեն տեսակ կավից, ամեն տեսակ իրերից, որոնք աճում էին և որոնց մեջ նրանք ընդունեցին իրենց կերպարանքը»:

թարգմ.՝ Մ. Է. Մաթյե, «Древнеегипетские мифы»,

М., 1956, էջ 84

3. Իրանական դուալիզմ (երկաստվածություն)

Հատվածներ Իրանի մագդեզական կրոնի սուրբագան գիրք Ավեստայից.

45.2. Ես ուզում եմ ասել երկու ոգու մասին լինելության սկզբին, որոնցից լուսավորը չարին ասաց. «Զեն համաձայնվում ոչ մեր մտքերը, ոչ ուսմունքները, ոչ կամքը, ոչ համոզմունքները, ոչ խոսքերը, ոչ գործերը, ոչ մեր հավատքը, ոչ հոգիները»:

30.3. Երկու սկզբնադիները հայտնվեցին իբրև երկվորյակ գույգ, բարի և չար՝ մտքով, խոսքով ու գործով»:

Շարադրեց Վ. Ի. Աբաևը, ХДВ, 1980, հտ. 2, էջ 63

4. Վիշապի կերպարը քանանյան առասպելաբանության մեջ

Ռազմագիցուհի Անատի վերաբերյալ առասպելում պատմվում է մահվան ծովային աստծու՝ Յամնայի ու նրա վիշապի դեմ աստվածուհու պայքարի մասին (այլ մի առասպելում Յամնային հաղթում է Բահաղը): Անատն ասում է.

Միթե չկործանեցի Յամնային, սիրեցյալին Էլի,

Զոչնչացրի ես Գետի աստծուն:

Զխոցեցի արոյոք Վիշապին

Զհաղթեի ճարպիկ Օծին,

Չզոր հրեշին այդ յոթ գլխանի:

Թրգմ.՝ Ս. Գորդոն, Мифология древнего мира, М., 1977, էջ 217

Այդ պայքարը Վիշապիի դեմ խորհրդանշում է բուսականության ու կյանքի աստվածների պայքարը քառասի ու մահվան դեմ: Դրա գրական արտահայտությունը պահպանվել է աստվածաշնչական մատենագրության մեջ (Սաղմ. 3Գ 14, Ել. ԻԷ 1. հմմտ. Հայտն. ԺԲ 3): Բայց Աստվածաշնչում Վիշապը սատանայի, Աստծու դեմ ապստամբող արարածի կերպարն է:

§ 18. Մարդու արարումն ըստ Ծննդոց Գրքի Բ գլխի

1. Երկրորդ պատումն արարչագործության մասին: Ծննդոց Գրքի Բ գլխում փոքր-ինչ այլ կերպ է արարչության պատկերը, քան «Վեցօրեայում»: Վեցօրյան տեղադրված է սկզբում, քանի որ ավելի ծավալուն է պատմում երկրի պատմության փուլերի մասին, բայց հավանաբար երկրորդ պատումն ավելի հին է: Այն արմատներով հասնում է նահապետների դարաշրջան, երբ իսրայելացիների նախնիները սերտորեն կապված էին Միջագետքի մշակույթին: Սրբազան մատենագիրը բացահայտում է Հայտնության ճշմարտությունը, օգտագործելով միջագետքյան ժողովուրդների պատկերավոր լեզուն: Բայց այդ գրական «ատաղձը» նրան ծառայում է «Վեցօրյայի» հայտնած այն նույն ճշմարտությունների շարադրմանը:

Պատմության բովանդակությունը հետևյալին է հանգում. երբ Տերն ստեղծեց երկինքն ու երկիրը, երկիրը մերկ, անպտուղ անապատ էր: Այդ անապատի վրա թևածում էր փոշու ամպը (սա է եբր. 7Ճ – էԴ բառի թարգմանությունը: Սինոդալ թարգմանության մեջ՝ «գոլորշի»¹), և այնտեղ չկար ոչ մի խոտ կամ թուփ: Այնտեղ Աստված (Յահվե) «երկրային հողից» ստեղծեց մարդուն, որ լինելու էր աշխատավոր՝ երկրի վրա: Աստված ներշնչեց (բառացի՝ «փչեց») նորակազմ մարմնին «կենդանության շունչ», և մարդը դարձավ «կենդանի հոգի»: Աստված խնամքով «աճեցրեց» հրաշալի այգի Եդեմում և այդ այգեստանը նախատեսեց մարդու բնակության համար, որպեսզի նա այն պահպանի ու մշակի: Քանի որ մարդն օգնականի կարիք էր զգում, Աստված հողից² ստեղծեց կենդանիներ և բերեց Ադամի մոտ: Վերջինս նրանց անուններ տվեց (այսինքն իր իշխանությունը հաստատեց նրանց վրա), բայց դրանք չէին կարող լինել իսկական օգնականներ: Այնժամ Տերը տղամարդու կողից ստեղծեց կին, ի դեմս որի այրը ճանաչեց «մարմին իր մարմնից»: Առաջին մարդիկ մերկ էին և չէին ամաշում: Նրանց հնարավորություն ընձեռվեց օգտվելու Եդեմի բոլոր բարիքներից, արգելվեց միայն ուտել բաբու և չարի գիտության Ծառից:

¹ Հայերենում նույնպես – խմբ.:

² Հայերենում հողից բառը չիք – խմբ.:

Այս պատումն աչքի է ընկնում կենդանի անմիջականությունը ու պարզությունը: Բայց սրա իմաստը նույնքան խորն է, ինչքան «Վեցօրյայինը»: Այն կարելի է արտահայտել երեք դրույթով. 1) Ամեն ինչի Արարիչը բարի միասնական Աստվածն է. 2) մարդը երկմիասնական բնույթ ունի. 3) մարդը չունի «իրեն նմաններ» բնության մեջ: Նա հատուկ նախախնամ հոգածության առարկա է՝ որպես արարածների արքա, որպես արարած (գոյ)՝ կոչված աշխատելու Աստծու ստեղծածը կատարելագործելու ուղղությամբ:

2. Մարդու երկմիասնական բնույթը: Սբ. Հովհան Ոսկեբերանի խոսքով՝ այն, որ մարդու մարմինը կազմված է «հողից»՝ «խոնարհության դաս» է: «Հողը» (եբր. 755 - ԱՖԱՐ - փոշի) - հոմանիշն է չնչինի, ոտքի տակ տրորվողի (հմմտ. «փոշու մեջ պառկել» արտահայտությունը. Եսայի ԻԶ 19): Եվ հենց այդ՝ «փոշուց» ստեղծված արարածը կոչված է իշխանը լինելու արարածների: Նրան այդպիսին է դարձնում «շունչը» կամ Աստծու Հոգին: Մարդը շնչավոր է դառնում (եբր. 251 - ՆՆՖԵՇ)՝ այսինքն անձ: Շունչը կենդանի արարածի առանցքն է (տե՛ս Սաղմ. 29 3, 28 1): Իր հոգին մարդն անմիջականորեն Աստծուց է ստացել: Ծննդ. Բ-ում «շունչը» (ՆՆՖԵՇ) մեր ըմբռնած հոգու (եբր. 107 - ՌՌԻԱԽ) հոմանիշն է: Մինչդեռ Հին Կտակարանում «հոգի» բառին հաճախ համապատասխանում է ավելի ուշ մի եզրույթ՝ «կենսական ուժ»: Եթե քրիստոնեական մարդաբանությունը դիտարկում է մարդու երեք տարր՝ հոգի, շունչ և մարմին (կամ հոգի և հոգեմարմնավոր ամբողջությունը), ապա Հին Կտակարանում նույն միտքն այլ կերպ է արտահայտված: Շունչը (ՆՆՖԵՇ - 251) միանում է մարմնին (եբր. 752 - ԲԱՍԱՐ) և կենդանացվում է կենդանի հոգով (107 - ՌՌԻԱԽ): Այս երկու ձևով կարևորագույնը մարդու երկմիասնությունն է, որ բնական, տարբերային և աստվածատուր սկզբների զուգադրությունն է:

Քրիստոնեական մարդաբանություն		Հին Կտակարանի մարդաբանություն
Մարմին	} մարմին (բնական սկիզբ)	Մարմին (քաար)
Շունչ		Շունչ (նեֆեշ), որպես անձի կենտրոն
Հոգի, որ շնորհում է Աստված՝ գերագույն անձնային սկիզբ		Հոգի (ռուախ)-կենսական ուժ, որ շնորհում է Աստված

Ծննդ. Բ մարդու ծագման պատումն արդյո՞ք պետք է հասկանալ տառացի: Հինկտակարանյան բնագրերում կարելի է դրան հակառակ վկայություններ տեսնել: Սաղմ. 21Ը 13-ում ասված է. «Դու ստեղծեցիր երկկամներն ինձ, և մորս որովայնում ինձ հյուսեցիր»¹: «Ըն ձեռքն է արարել ու ինձ ձև է տվել - գոչում է Հորբը,- Յիշի, որ կավից ես ստեղծել... պանրի պես մակարդել»

¹ Սինոդալ թարգմանությունը հետևում է եբր. բնագրին, հայերենում վերջին մասն այսպես է՝ և մորս որովայնից ինձ ընդունեցիր - խմբ.:

(Ժ 8-10): Այս այլաբանությունների միջոցով սրբազան հեղինակն Աստուծու մասին է խոսում, որ ստեղծել է ամեն մարդու, և բնավ չի ժխտում ծննդյան բնական «երկրորդապատճառները»: Օգոստինոս Երանելին նշում է նաև, որ «փշեց» բայը չի կարելի տառացի հասկանալ, այն իմաստով, թե մարդկային հոգին Աստուծուն համագոյ է: «Այն Աստուծուց է,- ասում է երանելին,- բայց Նրա էությունից չէ» (Ծննդոց Գրքի մասին, 7. 28, 43): Ճիշտ նույն կերպ «հողի» կերպարը խորհրդանիշ է, որ նշանակում է մարդկային մարմնի կապը «հողի», բնության հետ:

Հոգու կրող լինելու համար մարդկային մարմինը պիտի հասներ կատարելության բարձրագույն մակարդակի: Ոչինչ չի խանգարում համարելու, որ այդ կատարելությունը նախապատրաստվել է զարգացման երկար պատմությամբ, որի մասին վկայում են արդի մարդաբանության հայտնագործությունները (տե՛ս հտ. 1, §18, Հավելված): Սերաֆիմ Սարովսկին Մոտովիլովի հետ գրուցելիս ասում է. «Մինչև այն վայրկյանը, երբ Աստված փշեց կյանքի շունչը, Ադամը նման էր մյուս կենդանիներին...» (Քրիստոնեական կյանքի նպատակի մասին, Սերգ. Պոսադ, 1914, էջ 11): Ավելի ուշ եպս. Թեոֆան Մենակյացը¹ (1815-1894) խոսում է Ծննդ. Բ 7-ի տառացի ըմբռնման դեմ. «Կար մի մարդու պատկերով մի կենդանի՝ կենդանու հոգով: Հետո Աստված Իր շունչը փշեց նրան, և կենդանին դարձավ մարդ» («Письма», М., 1898, հատ. 1, էջ 98): Մի ուրիշ ուղղափառ աստվածաբան գրել է, որ մարդու արարումը «կատարվել է աստիճանաբար և բնական ուժերի մասնակցությամբ, ինչպես և ամբողջ արարչությունը. հետևաբար կազմավորումը զարգացման տարբեր ձևերով է անցել մինչև այն ժամանակը, երբ ունակ դարձավ ընդունելու Աստուծու շունչը, այսինքն մարդ դարձավ» (прот. Клитин А., История религии, Одесса, 1910, էջ 497):

Արևմտյան աստվածաբանության մեջ այս հարցի մասին եկեղեցական տեսակետն արտահայտված է «Humani Generis» շրջաբերականում (1950): Այդտեղ մասնավորապես ասված է. «Եկեղեցական ուսուցումը չի խոչընդոտում այն բանին, որ էվոլյուցիայի տեսությունը դառնա ուսումնասիրության և քննարկման առարկա՝ արդի գիտության ու աստվածաբանության մակարդակով... այն չափով, որքան այն ուսումնասիրում է մարդկային մարմնի ծագման հարցը, որ, ինչպես համարում են, ծագել է նախորդող օրգանական նյութից (իսկ հոգու առթիվ կաթոլիկական հավատքը պնդում է, որ այն անմիջականորեն Աստուծու ստեղծածն է)»:

3. Եդեմական պարտեզ: «Եվ Տեր Աստված պարտեզ տնկեց»² խոսքերը մեկնաբանելով՝ Սբ. Հովհան Ոսկեբերանը գրում է. «Այս խոսքերի

¹ Թեոֆան Մենակյաց - Ռուս եկեղեցու եպիսկոպոս, աստվածաբան, հրապարակախոս, բարոզիչ - խմբ.:

² Հայերենում «Աստված դրախտը տնկեց Եդեմում» - խմբ.:

մասին ի՞նչ կասեին նրանք, ովքեր ամեն ինչ, որ ասվում է Աստծու մասին, հանդգնում են հասկանալ մարդկորեն... Ասա՛ ինձ, ինչ է, Նրան պետք չեղա՞վ նաև բահ... «Տնկեց» բառը պետք է հասկանալ այնպես, որ Աստված երկրի վրա հրամայեց դրախտ լինել, որպեսզի այնտեղ ապրեի ստեղծված մարդը» (Զրույցներ Ծննդ. ԺԳ 3):


Պարտեզը (սլավ. раѣ) ըստ Ծննդոցի գտնվել է Սբ. Երկրից «արևելք», Եդեմում (եբր. օդֵן – էՊԵՆ): Միջագետքում կար էդինու հարթավայր, ուր ավելի ուշ ի հայտ եկավ Բեթ-էդինու թագավորությունը: Դա Խառանի և Նինվեի միջև էր: Տիգրիսի ու Եփրատի հիշատակումը ևս Եդեմը կապում է Միջագետքի հետ: Սակայն սուրբգրական պատումի մեջ պետք չէ ճշգրիտ աշխարհագրություն որոնել: Եդեմի գտնվելու վայրն ավելի շուտ պայմանական է: Չորս գետերը, որ բխում են այնտեղից, խորհրդանշում են աշխարհի չորս կողմերը: Դրանցից երկուսը (Տիգրիսն ու Եփրատը) անցնում են Միջագետքով, երրորդը (Գեհոնը)՝ Քուշ (Եթովպիա) երկրով, չորրորդը (Փիսոնը) իր ճամփան հարթում է Եվրատ առեղծվածային երկրով, որ հարուստ է թանկարժեք քարերով: Պատումի այս գծերը կոչված են պատկերը գեղեցկացնելու. Աստված մարդուն բնակեցնում է ոչ միայն աշխարհի կենտրոնում (հնում այդպիսի կենտրոն էր համարվում Միջագետքը), այլև հրաշագեղ, հարուստ երկրներով շրջապատված վայրում:

Պտղատու ծառերով հարուստ պարտեզի պատկերն աստվածային օրհնությունը ներկայացնելու սիրված միջոց էր Արևելքում (հմմտ. Եսայի ԽԱ 18-19. այս հատվածն ընթերցվում է Աստվածախայտնության տոնին՝ ջրօրհնեթի ժամանակ)¹: Աղքատիկ բնության մեջ՝ անապատների գրկում բնակվող մարդկանց համար ստվերամած օազիսն իսկական «դրախտ» էր:

Միևնույն ժամանակ հին մեկնիչները (օր.՝ Փիլոն Ալեքսանդրացին) և Սբ. Հայրերը ընդգծում էին, որ «Եդեմական պարտեզը» առաջ հերթին մարդու երանելի վիճակի պատկերն էր մինչ անկումը: Ըստ Սբ. Գրիգոր Աստվածաբանի՝ «Եդեմ» նշանակում է անմիջականորեն Աստծու հետ հաղորդվելու գերազույն նվեր (Песнопения таинственные, 7):

Նախածնողների երջանիկ կյանքը, սակայն, իզուր չէր: Ծննդոցի հեղինակը խոսում է մարդուն տված հրամանի մասին՝ որ իր բնակվելու տեղը «մշակի և պահպանի այն»: Մարդը տակավին ներդաշնակ էր բնությունը, ուստի նրա ստեղծագործ ազդեցությունը բնությունը «տառապագին աշխատանք չէր, այլ բերկրալի հաճույք» (Օգոստինոս Երանելի): Այդ ներդաշնակությունը խաթարելու էր միայն մարդու մեղքը:

¹ Հայ եկեղեցում այլ է – խմբ.:



Բիբլիական պարտեզի պայմանական աշխարհագրական քարտեզը

4. Կենաց Ծառը և Գիտության Ծառը: Սրբագան համաշխարհային Ծառի պատկերը տարածված խորհրդանիշ է (տե՛ս Վ. Տոպորովի հոդվածը՝ «Мифы народов мира», т. 1, էջ 398–406): Դրա բազում պատկերներ հանդիպում են Հին Արևելքի արվեստում: Սակայն պատկերը երկակի իմաստ ունի: Մի կողմից այն խորհրդանշում է երկնքի ու երկրի կապը, մյուս կողմից՝ տիեզերքը: Այդ երկու խորհրդանիշն Աստվածաշունչն օգտագործում է՝ խոսելով երկու խորհրդավոր ծառերի մասին՝ Կենաց Ծառ և Գիտության Ծառ: Կենաց Ծառը մարդու՝ Աստծու հետ միավորվելու խորհրդանիշն է, որը նրան հավիտենական կյանք է շնորհում: Բարու և չարի գիտության Ծառն Տիեզերքի խորհրդանիշն է, քանի որ «բարին և չարը» կապակցությունը (եբր. עֶרֶב וְיוֹם – ՏՈՎ ՎԵՌԵՎՆԻՆՈՒՄ և Վատը) մի դարձված է, որ կարելի է թարգմանել որպես «աշխարհում ամեն ինչ» (տե՛ս վերևը՝ § 11, կետ 9): Գիտության Ծառի պտուղն ուտելու արգելքը զգուշացնում է մարդուն զերծ մնալ երկրի վրա ինքնակամ, Աստծուց անկախ իշխանություն հաստատելու գայթակղությունից (միտում, որ հետագայում արտահայտվեց մոգության մեջ): «Եթե,– ասում է Եփրեմ Ասորին,– մեր նախածնողները ենթարկվեին պատվիրանին՝ Աստված նրանց համար կլինեք բարին ճանաչելը և կյանքը, և նրանք կհասնեին այն քաղցր իմաստնությունը, որ ամփոփված է Կենաց Ծառի մեջ, որ է Աստված» (Толкование на Бытие 3):

Ծառի խորհրդաբանությունը ևս մի նշանակություն է ունեցել հինկտակարանյան Եկեղեցու համար: Այն ոչ միայն օրհնության նշան էր, այլև վտանգ էր պարունակում: Ծառերի տակ էին կատարվում հեթանոսների մոգական ծիսակատարությունները: Ծառերի հետ կապված էին պտղաբերության քանանացիների պաշտամունքը և դրանից բխող գայթակղությունները (հմմտ. ԴԹԱԳ. ԺԷ 10):



Աշշուրնասիրբալ II արքան և թևավոր աստվածն սրբազան ծառին երկրպագելիս: Գիպսե քանդակ Նեբրոթից, Ասորեստան, IX դ. ք. ծ. ա.:

Աստվածաշնչագիտության մեջ սովորաբար նշվում է, որ դրախտի թեման բացի Ծննդ. Բ-Գ գլուխներից, գրեթե բացակայում է Հին Կտակարանում: Միայն Եզեկիելի մի մարգարեության մեջ (ԻԼ 13-14) Փյունիկիայի ծաղկումը համեմատվում է եդեմական՝ «Աստծու պարտեզի» հետ¹: Սակայն Վկայության խորանում և Տաճարում սրբազան ծառի ձևով պատրաստված յոթնաստեղյան աշտանակի առկայությունը ցույց է տալիս, որ այն միշտ կարևոր տեղ է գրավել Հին Կտակարանի դավանաբանության մեջ (Քրիստոսի ծննդին նախորդած դարերում յոթնաստեղյան-ծառը դառնում է Իսրայելի կարևորագույն խորհրդանշանը):

5. «Երկուսը մեկ մարմին» (Ծննդ. Բ 18-24): Կնոջն Աստված չի ստեղծել, այլ ասես Նրա միջոցով կինը «ծնվում է» ամուսնուց (տես Ս. Յովհան Ոսկեբերան, Չրույց Սաղմ. 32 4): Ադամին կին ընծայելու պատումը նպատակ ունի. ա) ցույց տալ այր ու կնոջ նույն բնությունը, բ) սրբացնել միակնությունը: Բացի այդ, սրբազան հեղինակը հասկացնում է, որ կինը հայտնվեց ոչ սոսկ այն բանի համար, որ մարդիկ կարողանան շարունակել իրենց ցեղը, այլև իբրև տղամարդու «օգնական» (Բ 18): Պատումն սկսվում է Տիրոջ խոսքով. «լավ չէ, որ մարդը միայնակ լինի», - խոսքեր, որոնք որոշում են մարդու ընկերային, հասարակական բնույթը: Թեև մինչև անկումը նա բնության հետ ներդաշ-

¹ Հայերենում պարտեզի փոխարեն դրախտն է՝ Աստծու դրախտի գգվանքներում - խմբ.:

9 - Ա. ՄԵՆ, ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ԿՏԱՎԱՐԱՆԻ

նակ է եղել, ոչ մի կենդանի չէր կարող Ադամի նմանին փոխարինել (քանզի ըստ Վեցօրյայի միայն մարդն ունի Աստծու պատկերն ու նմանությունը): Ծննդ. Գ 20-ում առաջին անգամ Ադամ բառն օգտագործվում է առանց հոդի (որպես անուն), որով ընդգծվում է նրա էության անձնային բնույթը:



Հին քարե յոթնաստեղյան աշտանակ (մենորա), գտնված Տիբերիադայի պեղումների ժամանակ, II դար:

Խոսելով կնոջ և նրա՝ ամուսնու հետ նույն բնություն ունենալու մասին՝ Աստվածաշունչն օգտագործում է բառախաղ, որ ընդունված էր Արևելքում. կին (եբր. ִיִּשָׁׁ - ԻՇԱ՛) կոչվել է իր ամուսնու կողմից (եբր. ִישָׁׁ ִיִּשָׁ): Եվա անունը (եբր. ִיִּשָׁׁ - ԻՇԱ՛), որ ի հայտ է գալիս Ծննդ. Գ 20-ում, նշանակում է «կյանքի ընծայող». այնինչ շումերական սեպագրում միևնույն նշանը երկու հասկացություն է հաղորդում. կյանք և կող: Հետևաբար, իր միտքը տեղ հասցնելու համար սրբազան հեղինակը դիմում է Միջագետքի հնագույն խորհրդանիշերի: Պատկերի իմաստը նույնն է, ինչ Ծննդ. Բ 24. այրն ու կինը «մի մարմին» են: Սեռերի սերը նույն բնությունը ունեցողների ներդաշնությունն է: Դա այնքան կատարյալ է, որ նրանց փոխհարաբերությունները բնավ ստվերված չեն¹: Հենց այդ պատճառով, մերկ մնալով՝ նրանք չէին ամաչում: Ամոթը գալիս է ներդաշնակության խախտումով միայն, որի հետևանքն է մեղքը:

¹ Այն կարծիքը, թե մարդկանց ամուսնական հարաբերություններն սկսվել են մեղքի հետևանքով միայն՝ Օգոստինոս Երանելին համարում էր «անհեթեթ» (Աստծու քաղաքի մասին, ԺԴ, ԻԳ):

Հարցեր կրկնության համար

1. Ծննդ. Բ գրուխը ինչո՞վ է տարբերվում Վեցօրյայից, և ի՞նչ ընդհանրություն ունեն:
2. Մարդուն «հողից» ստեղծելու իմաստը ո՞րն է:
3. Մարդու կազմությունն ինչպես է նկարագրվում Հին Կտակարանում:
4. Ի՞նչպես հասկանալ մարդու՝ հոգի ստանալը («շունչ»):
5. Կարո՞ղ է «երկրի հողից» արտահայտությունը նշանակել կենդանի էակ, որ նախորդել է մարդուն:
6. Ի՞նչ է նշանակում՝ «Աստված տնկեց»:
7. Աշխարհագրական ո՞ր շրջանի հետ է կապվում Եդեմը:
8. Ո՞րն է Եդեմին վերաբերող պատումի իմաստը:
9. Համաշխարհային Ծառի խորհրդանիշն ի՞նչ էր նշանակում: Դա ի՞նչպես է արտացոլվել Եդեմի երկու Ծառերի աստվածաշնչական պատումում:
10. Ի՞նչ են խորհրդանշում Կենաց Ծառը և Գիտության Ծառը:

§ 18-ի Հավելված

1. Մարդկային մարմնի ծագման մասին

Մարդու մարմնի և կենդանիների մարմնի ապշեցուցիչ նմանություն մարդիկ նկատել են տակավին նախնադարում: Այստեղից են ծագում առասպելները, թե գազանները եղել են մարդկանց նախածնողները (տոտեմիզմ): Այդ միտքը գրականության մեջ առաջին անգամ հանդիպում է հին բուդդայական գիտունների գործերում: Գիտության մեջ մարդկային մարմնի կենդանական ծագման վարկածն առաջին անգամ բանաձևել է ռուս բնախույզ Ա. Ա. Կավերզնևը¹ (1775 թ.), իսկ փոքր-ինչ ուշ՝ Ֆրանսացի կենսաբան Ժ. Բ. Լամարկը² (1809 թ.): Բայց վարկածի իսկական մշակումն սկսվեց Չ. Դարվինի «Մարդու ծագումը» (1871 թ.) աշխատությունից հետո: «Մարդու նախնին զարգացման ո՞ր պահին Աստուծոց հոգի ստացավ» հարցին Դարվինը պատասխանել է. «Շատ քչերը կտազնապեն... ծնունդից առաջ կամ հետո մարդն սկսում է անմահ էակի վերածվել, և ես չեմ տեսնում զվելի լուրջ պատճառներ տազնապելու այն առթիվ, որ մշտապես բարձրացող օրգանական սանդուղքի վրա այդ շրջանը չի կարելի որոշել ճշգրիտ» (ՏԿ., հատ. 6, էջ 481): Բայց Դարվինի ժամանակ մարդկային մարմնի ծագման տե-

1 Ռուս կենդանաբան գիտնական: Առաջին ռուս էվոյուցիոնիստը, հայտնի է իր «Կենդանիների վերածննդի մասին» աշխատությամբ (1775) – *խմբ.*:

2 Ֆրանսիացի գիտնական բնագետ (1744–1829), կենդանական աշխարհի զարգացման՝ էվոյուցիայի տեսության հիմնադիրը: Հայտնի է «Կենդանաբանության փիլիսոփայությունը» աշխատությամբ (1809) – *խմբ.*:

սուժյունը նշանակալի չափով մտահայեցական էր: Միայն երբ ճավա կղզում հայտնաբերվեցին մնացորդները մի էակի (1890-1892), որը և՛ կենդանական, և՛ մարդու հատկանիշներով էր օժտված (պիտեկանտրոպ), մարդաբանությունը (գիտություն մարդու մասին) ոտք դրեց ավելի ամուր հողի վրա: Այդ գյուտի կապակցությամբ ավստրիացի հայտնի վանական գիտնական է. Վասմանը¹ (1859-1931) գրեց. «Աստված օգտագործել է ինչ-որ՝ արդեն իսկ կազմավորված նյութ, կիրառել է ինչ-որ մինչ այդ գոյություն ունեցող կենդանի արարած, որը մի շարք ձևերի միջով զարգանալու ընթացքում, աստիճանաբար հասել է այն աստիճանին, երբ նախկին կենդանական շունչը փոխարինվեց մարդու հոգևոր շնչով»:

Վերջին ութ տասնամյակներում Ասիայի, Աֆրիկայի և Եվրոպայի տարածքներում հայտնաբերվել են կենդանի էակների հարյուրավոր բրածո մնացորդներ, որ մոտ են մարդուն: Սովորաբար դրանք բաժանվում են երեք մեծ խմբի:

1. Ավստրալոպիտեկներ (լատ. հարավային կապիկներ) - Ուղիղ քայլող էակներ, որ ապրել են և որս արել խմբերով: Նրանց ուղեղը քիչ ավելի զարգացած է, քան այժմ ապրող անտրոպոիդների (մարդանման կապիկների) ուղեղը:

2. Արխանտրոպներ (հուն. հնագույն մարդիկ) - Մարդանման էակներ, որ դեռ շատ կենդանական գծեր ունեին:

3. Պալեոանտրոպներ (հին մարդիկ) կամ նեանդերթալցիներ - գրեթե արդեն ձևավորված մարդիկ, բայց զուրկ հոդաբաշխ խոսքից, արվեստականությունից: Սրանց փոխարինելու է գալիս արդեն իսկական մարդը, օժտված անմահ հոգով և անհատական բանականությամբ: Այդ խմբերի գենետիկական կապը (կապն ըստ ծագման) մինչև այժմ պարզված չէ: Բայց ընդհանրապես գտածոները վկայությունն են այն բանի, որ մարդու մարմինը երկար նախապատմություն ունի բնության մեջ: Այս տեսակետը լիովին համաձայնում է աստվածաշնչական «երկրի հողից» խոսքի լայն ըմբռնման հետ: Դա երևում է քրիստոնյա նշանավոր մարդաբան-գիտնականների աշխատություններից՝ արբա Ա. Բրեյլի (1877-1961), Գ. Օբերմայերի (1877-1946), վանական Պ. Թեյար դե Շարդենի (1881-1955)²:

¹ Ճիզվիտ-վանական, հայտնի կենդանաբան-միջատաբան - խմբ.:

² Ա. Բրեյլ - ֆրանսիացի կաթոլիկ քահանա, հնագետ, մարդաբան, երկրաբան, ազգագրագետ:

Գ. Օբերմայեր - հնագետ, մարդաբան, նախապատմական շրջանի հետազոտող:

Շարդեն Պ. Թեյար - ֆրանսիացի կաթոլիկ փիլիսոփա, ճիզվիտ, կենսաբան, երկրաբան, հնագետ, մարդաբան:

2. Մարդու նախորդների ժամանակագրական աղյուսակ

Մոտ 5 մլն տարի առաջ	առաջին ավստրալոպիտեկների հայտնվելը (Աֆրիկա)
Մոտ 3 մլն տարի առաջ	հնագույն գործիքներ (Աֆրիկա)
Մոտ 1 մլն տարի առաջ	արխանտրոպների հայտնվելը (Ասիա, Աֆրիկա, Եվրոպա)
Մոտ 800 հազար տարի առաջ	արխանտրոպներն սկսում են կրակ օգտագործել
Մոտ 100 հազար տարի առաջ	պալեոանտրոպների հայտնվելն ու տարածումը (Ասիա, Աֆրիկա, Եվրոպա)
Մոտ 50–40 հազար տարի առաջ	մարդու հայտնվելը:

Գրականություն

1. *Васман Э.* Христианство и теория развития. Пг., 1917.
2. *Иди М.* Недостажее звено. Пер. с англ. М., 1977.
3. *Лазуков Г. И.* Природа и древний человек. М., 1981.
4. *Матюшин Т. И.* У истоков человечества. М., 1982.
5. *Обермайер Г.* Человек в его прошлом и настоящем. Пер. с нем. СПб., 1913 (Փաստերի առումով գիրքը հնացած է, բայց արժեքավոր է իր գաղափարներով).
6. *Тейар де Шарден П.,* Феномен человека. Пер. с франц. (համառոտ). М., 1965:

3. Շումերների ավանդապրույցները ոսկե դարի մասին

Վկայություններ են պահպանվել այն մասին, որ շումերները՝ Միջագետքի հին մշակույթի ստեղծողները, գիտեին առաջին մարդկանց երանելի կյանքի պատումը: Բնագրերից մեկն ասում է.

Հնամենի օրերին օձ չկար, կարիճներ չկային,
 Չկային բորենիներ, չկային առյուծներ,
 Ո՛չ վայրի շուն կար, և ո՛չ գայլ,
 Վախ ու սարսափ չկար,
 Եվ մարդը թշնամիներ չուներ:

Մի ուրիշ ավանդազրույց պատկերում էր Դիլմուն երջանիկ երկիրը, ուր ժամանակին մարդիկ են ապրել:

Ազռավը չի կռռում Դիլմունում,
 «Իտտիտու» թռչունը չի ճչում,
 Առյուծը չի սպանում,
 Գայլը գառ չի հափշտակում:

Այս բոլոր մանրամասները հինկտակարանյան դրախտի պատկերում չկան, սրբազան հեղինակը շեշտադրում է մարդու մերձուխյունն Աստծուն, որի հովանու տակ նա գտնվում էր Եղեմում:

Քաղվածքները Ա. Ն. Կրամերի գրքից.
«История начинается в Шумере», М., 1965, էջ 172, 255

§ 19. Մեղքի սկիզբն ու տարածումը (Ծննդ. Գ - ԺԱ)

Ծննդոց Գիրքը շոշափում է մարդկային ցեղի մեջ շարի սկզբի հավերժական խնդիրը: Նրա պատասխանն այդ հարցին կարելի է արտահայտել այսպես. Աստված մեղքի պատճառը չէ, մարդն ինքն իր ազատ կամքով ընտրեց Աստծու ուղիներից շեղվելու ճանապարհը: Մեղքի արմատն ու բազմացումը կապված է հպարտության հետ, հակառակ Աստծու՝ ինքնահաստատվել, որ անխուսափելիորեն հանգեցնում է ողբերգական հետևանքների: Ծննդոցի հեղինակը դա արձանագրել է չորս պատկերով. 1) առաջին մարդու մեղքը և նրա վտարումը Եղեմից, 2) Կայենի գործած եղբայրասպանությունը և նրա արտաքսումն անապատ, 3) «հսկաների» հպարտությունը և ջրհեղեղը, 4) «աշտարակաշինությունն» ու դրա ողբալի վախճանը:

1. Ադամի մեղքը (Ծննդ. Գ 1-6): Պատմությունն սկսվում է այս խոսքերով. «Օձը երկրի վրա Աստծու ստեղծած բոլոր գազաններից ավելի խորամանկ էր» (Գ 1): Այդ օձը (եբր. ՉՈՂ – ՆԱԽԱ՛Շ) կնոջ հետ զրույցի է բռնվում, որից պարզվում է, որ դա սովորական օձ չէ: Պատումի առաջին ընթերցողներին օձի արտաքին կերպարանքը կարող էր հիշեցնել եգիպտական ու բաբելական հուշարձանների վիշապին. նա տեղաշարժվում էր ոտքերով (սողալու դատապարտվեց հետագայում՝ Գ 14): Այդ հրեշի կերպարը միաժամանակ կապված է սողունների հեթանոսական պաշտամունքի (հմմտ. պոնտ օձի (եբր. յՊՇՈՂ – ՆԵԽՈՒՇՏԱ՛Ն) երկրպագումը՝ իբրև աստծու – Դ Թագ. ԺԸ 4) և քառսի դելի հետ (տե՛ս հտ. 1, § 17, կետ 5): Օձի համեմատությունը մյուս կենդանիների հետ ընդգծում է նրա բնույթն իբրև արարածի: Հայտն. ԺԲ 9 ուղղակիորեն դեմն նույնացնում է օձի հետ. «Եվ ընկավ մեծ վիշապը՝ առաջին օձը, որ կոչվում է Բենեդյեթուդ և աստանա և որ մոլորեցրեց ամբողջ աշխարհը»:

Ծննդոց Գիրքում Եվայի փորձությունը պատկերված է որպես նուրբ խաբկանք: Օձն սկսում է Աստծուն զրպարտելով. հարցնում է թե՛ նա չի՞ արգելել Եղեմի պտուղներից օգտվել: Կինը պարզաբանում է, որ հակառակն է, իրենց մատչելի է ամեն ինչ, բացի Գիտության Ծառի պտուղներից, որոնք իրենց համար մահ են թաքցնում: Օձը շարունակում է, այս անգամ Աստծուն մեղադրելով ստի մեջ. «Չե՞ք մահանա, որովհետև Աստված գիտեր, որ այն օրը,

երբ դրանից ուտեք, կրացվեն ձեր աչքերը, և դուք կլինեք աստվածների նման՝ կիմանաք բարին ու չարը»։ Նայելով արգելված պտուղներին՝ կինը չի դիմանում. պտուղները հրաշագեղ են և «գիտելիք են տալիս»։ Անտեսելով Աստծու կամքը՝ Եվան Ադամի հետ կերավ Ծառի պտուղները։

2. Մեղանչման պատմության մեկնությունները: Հեթանոսները մեղքը հասկանում էին իբրև «խորհրդավոր պղծություն», թեկուզ ակամա՝ վարակ, ինչ-որ բան, որ վտանգավոր է մարդու համար։ Աստվածաշունչը բացահայտում է մեղքի բուն էությունը, այդտեղ տեսնելով Աստծու կամքի խախտում, հոգևոր հեռացում Արարչից։ Առաջին մարդկանց արարքի հիմնական դրդապատճառը «ինչպես աստված» լինելու ցանկությունն է, Արարչին շրջանցելով՝ աշխարհի վրա իշխանությունից օգտվելը։ Որոշ մեկնիչներ շեշտում են անկման բարոյական կողմը, ենթադրելով, որ «Ծառից ճաշակելը»՝ բարին ու չարը հասկանալու սեփական (Աստծուց անկախ) չափանիշների ընդունումն է մարդու կողմից։ Համենայն դեպս, ինչպես ցույց է տվել Պողոս առաքյալը՝ Ադամի մեղքը կարելի է համարել «հին» մարդու՝ ինքնակամ ապրողի մեղանչականության նախապատկեր։

Ծննդոց Գրքի պատումն ինչպես է հարաբերվում մարդկության իրական պատմությանը։ Ս. Հայրերն ու աստվածաբանները մի քանի մոտեցում ունեն.

ա) Ծննդոց Գ գլուխը պետք է տառացի հասկանալ. պատվիրանը խախտելով՝ առաջին մարդիկ իրենց մեղանչական բնությունը սերունդներին փոխանցեցին ժառանգական ճանապարհով (Անտիոքի դպրոց)։

Բայց ամեն բան չէ, որ Ծննդոց Գրքի սկզբնական գլուխներում կարելի է հասկանալ տառացի, իսկ այդպիսի կարծիքն ընդունելու պարագային կպարզվի, որ ժառանգականության, զուտ արտաքին կենսաբանական տեսքն Աստծու ճշմարտությունից ուժեղ է. երկու մարդու մեղքի պատճառով ստիպված են պատասխան տալ ու տառապել հետագա անթիվ սերունդները։

բ) Ծննդոց Գ գլուխը պետք է այլաբանորեն հասկանալ. անկումն ընդհանրապես ժխտվում է որպես պատմական իրադարձություն։ Այն վերածվում է ընդհանրապես մեղքի ժամանակից դուրս պատկերի, ուր օձը մեղքի մշտնջենավոր գայթակղությունն է, Եվան՝ զգացականության կերպարը, իսկ Ադամը բանականության կերպարը, որ տրվել է զգայականության (Ալեքսանդրիայի դպրոց, որ սկիզբ է առել դեռևս մինչքրիստոնեական աստվածաբանությունից, մասնավորաբար Փիլոն Ալեքսանդրացու աշխատանքներում)։

Բայց եթե մարդկանց մեղանչականությունը համընդհանուր և ակներև փաստ է, այն երբևէ պիտի առաջին անգամ արտահայտվեր մարդկության կյանքում։ Արդի հոգեբանները համարում են, որ բնությունից առանձնա-

նալով, կորցնելով վերջինիս հետ սերտ կապը՝ հին մարդը հիվանդագին ճգնաժամ է ապրել, որը մինչ այժմ արտահայտվում է նրա էություն մեջ: Այդ մտքին այլ ուղղություն է տալիս քրիստոնեական մոտեցումը. այն մատնանշում է մարդու բաժանումն Աստուծո՛ւ՝ որպես պատմության արշալույսին կատարված մի իրադարձություն, որի հետևանքն է «անկյալ մարդու» այժմյան վիճակը:

Չ) Ծննդոց Գ գլուխը այդ իրադարձությամբ մեզ տալիս է ոչ այնքան փաստեր ու մանրամասներ, որքան տալիս է դրանց հոգևոր իմաստը (այս է ժամանակակից մեկնիչների մեծ մասի տեսակետը): Այդ ժամ հասկանալի է դառնում Պողոս առաքյալի՝ երկու Ադամների հակադրությունը: Ինչպես Քրիստոս՝ երկրորդ Ադամը, նոր մարդկության Գլուխն է, Եկեղեցու Մարմինը, նույնպես առաջին Ադամը մարմնավորում է ամբողջ «հին» մարդկությունը, որ մի ժամանակ ապստամբել է Աստուծո դեմ: Ընկավ անբողջ Ադամը, որպես մի բովանդակ էակ (Հռոմ. Ե 12-17): Մարդկային ցեղն իր գոյության սկզբին նախընտրեց ընթանալ սեփական ճանապարհով, իրականացնելով աստվածատուր իշխանությունը ըստ իր, բայց ոչ Աստուծո կամքի: Բնության վրա մարդու ինքնավար իշխանության բնորոշ օրինակ է մոզուսությունը, որ խիստ տարածված էր նախնադարյան մարդկանց շրջանում: Մարդը մոզուսության մեջ բնությանը տիրելու միջոցներ էր փնտրում՝ օգտագործելով սեփական հնարավորությունները (իրական և մտացածին): Այսպիսով, առաջին մարդկանց մեղքն աղավաղեց (բայց չկործանեց) մարդկային ամբողջ բնությունն իր միասնության մեջ, որին, հոգևոր իմաստով, մասնակից է յուրաքանչյուր «Ադամի որդի»:

3. Մեղանշման հետևանքները (Ծննդ. Գ 7-24): Մեղանշումից հետո մարդկանց վարքը, նրանց հանդիպումն Աստուծո հետ և արդարանալու փորձերը Ծննդոց Գրքում նկարագրված են նույնպիսի հուզականությամբ, ինչպես և ամբողջ գլուխը: Սրբազան հեղինակի խնդիրն էր ցույց տալ Աստուծու մերձությունը մարդկանց, վերջիններիս ապաշխարության բերելու Նրա ցանկությունը: Պարզաբանելով Ծննդոց Գրքի Բ-Գ գլուխները Որոգիներսը գրել է. «Ո՛վ է այնքան միամիտ, որ մտածի, թե Աստված հողագործի նման արևելքում Եդեմի այգին է տնկել... Եվ եթե ասվում է՝ Աստված երեկոյան շրջում էր դրախտում, իսկ Ադամը թաքնվել էր ծառի տակ, ապա ես կարծում եմ՝ ոչ ոք չի կասկածում, որ այդ պատումը պատկերավոր մատնանշում է որոշ գաղտնիքներ» (О началах, 4, 16): Այդ «գաղտնիքների» թվում է մեղանշումի հետևանքները.

ա) Առաջին մարդկանց սեռական ամոթի արթնացումը (Գ 7), որ չի կարելի հասկանալ այն իմաստով, թե նրանց մեղքը մարմնական մերձեցմամբ եղավ: Այն Աստված օրհնել էր մարդուն ստեղծելիս (Ծննդ. Ա 28, Բ 24, հմմտ. Մատթ. ԺԹ 5): Խոսքն այստեղ մարդու կողմից իր նոր վիճակը գիտակցելու մասին կարող է լինել, երբ մարմինը նրա հսկողությունից ելնում է: Ժամանակակից մեկնիչների կարծիքով սեռի հարցը (սեռական ամոթի) այստեղ հանդես է գալիս իբրև ակնարկ Իսրայելի մշտական մեղանշական գայթակղության՝ պտղաբերության հեթանոսական պաշտամունքի, որի խորհրդանիշն օձն էր, և որն աչքի է ընկնում կոպիտ զգայականությունով:

բ) Աստծու նկատմամբ վստահություն կորուստը, որն արտահայտվեց մարդկանց թաքնվելով և մեղքի իրական պատճառը թաքցնելով (հպարտ երազանքը լինել «ինչպես Աստված»): Ավելի ուշ դա երկյուղ ծնեց աստվածների առջև, որ հատուկ է հեթանոսությանը:

գ) Մշտական պայքարը, որ մարդկությունն ստիպված կլինի մղել դիվանական ուժերի դեմ, որոնց խարդավանքին տեղի է տվել (հմմտ. Յոն. Է 15-20): Այն, որ «կնոջ սերունդը» կչախջախի օձի գլուխը (Գ 15), Եկեղեցու Հայրերը համարում են Նախավետարան՝ մարգարեություն սատանայի նկատմամբ ապագա հաղթանակի մասին: Այս իմաստով «կնոջ սերունդը», այսինքն Եվայի հետնորդները, պարզապես մարդկային ցեղը չեն, այլ՝ Մեսիան: Կարևոր է, որ ըստ Պողոս առաքյալի՝ Քրիստոս, ի հակադրություն Եվայի, «որը Աստծու կերպարանքով էր, բայց Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց» (Փիլ. Բ 6) (բառացի ճշգրիտ թարգմանությունը՝ «Ունենալով աստվածային բնություն, Նա չէր ձգտում ամեն կերպ լինել ինչպես Աստված»):

դ) Մարդու բնության և մարդկային հարաբերությունների ներդաշնակության խախտում (Գ 16):

ե) Մարդու և բնության ներդաշնակության խաթարումը: Բնությունը դադարում է մարդուն ենթարկվել: Մնունդ հայթայթելու համար մարդու ջանքերը ծանրանում են: «Թշնամին, գայթակղելով Ադամին և դրանով իշխելով նրա վրա, խլեց նրանից իշխանությունը, և ինքը կոչվեց այս աշխարհի իշխան» (Макарий Египетский, Слова 4, 3): Բայց մարդն ինքը նզովված չէ: Աստված շարունակում է հոգավ նրա մասին. Նա Ադամին ու կնոջը կաշվից զգեստներ հագցրեց (Գ 21):

զ) Մարդկանց զրկվելն Աստծու մերձությունից արտահայտվեց Ադամի և Եվայի՝ Եղեմական պարտեզից արտաքսելով: Մարդիկ ստացան այն, ինչ ուզում էին. նրանք նման դարձան աստվածներին (22-րդ համարը թախծոտ հեգնության երանգ ունի): Պարտեզը պահպանում ու հսկում են բոցեղեն

սուրն ու քերովբեները, որոնք հին խորհրդաբանությունում պահպաններին էին խորհրդանշում և պատկերվում էին թևավոր առյուծի տեսքով (կամ ցուլի): Մեղք գործելով՝ մարդը շմահացավ, բայց ավելի վատ ճակատագրի արժանացավ. «Ինչպես հոգու անշատումը մարմնից,- ասում է սուրբ Գրիգորի Պալաման,- մարմնի մահն է, այնպես և Աստծու անշատումը հոգուց՝ հոգու մահն է» (Օ страстях и добродетелях, 4): Բայց հետո կհաջորդի և մարմնի մահը:

Է) Աստծու հետ հաղորդակցվելուց զրկվելու արդյունքում մահվան հայտնվելը: Աստծու հետ շփվելով՝ մարդը կարող էր հաղթահարել մահը (ճաշակել Կենաց Ծառից): Կորցնելով Արարչի հետ անմիջական միությունը՝ նա հայտնվում է քայքայման օրենքի (մահվան) իշխանության տակ: «Արդարև, Աստված մահ չի ստեղծել, և Նա չի ուրախանում ողջերի կորստյան համար... Աստված մարդուն ստեղծել է անեղծ լինելու համար և արարել է նրան ըստ իր բարերարության պատկերի: Մահը աշխարհ է եկել բանասարկուի նախանձով. և ովքեր նրա բաժինն են, նրանք էլ պիտի կրեն այն» (Իմաստ. Սող. Ա 13, Բ 23-24):

Ծանոթություն

Հին Կտակարանում երկար ժամանակ հայտնություններ չկային մահվանից հետո հատուցման մասին: Հանդերձյալ կյանքի պատկերն Իսրայելն ստիպված փոխ էր առել հարևան ժողովուրդների կրոններից: Շենյի (սանդարամետ, դժոխք) հին գաղափարն



Քերովբեի (քերոպ) հին պատկերը: Փղոսկր, Ք. ծ. ա. VIII դար: Գտնվել է Արսլան-Թաշեում, Սիրիայի հյուսիսում:

ամբողջապես համընկնում էր Շումերի, Բաբելոնի, Քանանի համանման գաղափարներին: Ստորգետնյա մութ անձավը, ուր մահացածների սուվերները ողորմելի գոյություն են քարշ տալիս, Միջագետքում անվանում էին «երկիր անվերադարձ»: Ե՛հիշտ նույն կերպ Հին Կտակարանում Շենյը մարդ է, ուր մարդիկ Աստծուց հեռու են գտնվում, մատնված մոռացության, կիսաքուն և խավարի մեջ (Սաղմ. 2 6, ԻԹ 10, ՁԷ11-13, ՂԳ 17, Հոբ Գ 13, Ժող. Թ 10, Եսայի ԼԸ 18 և հաջ., Երեմ. ԾԱ 39): Այդ անհույս տեսակետը նախախնամորեն մարդկանց մեջ հարույթան ծարավ էր արթնացնում (Եսայի ԻԶ 19, Սաղմ. ԺԵ 10, ՀԹ 19, Դան. ԺԲ 2, Բ Մակ. Է 9), որի լուրը դժվարանալով էին ընկալում նրանք, որ հավատում էին հանդերձյալ երանության հնարավորությանը (Գործ. ԺԷ 32): Բացի այդ, մահվանը հաջորդող հատուցման հավատի երկար

բացակայությունը ամրապնդում էր Հին Կտակարանում երկրային արդարության պահանջը:

4. Եղբայրասպանությունը և Կայենի սերունդները (Ծննդ. Դ 1-12):
Պատումը մեղքի բազմանալու մասին է.

ա) Ադամի առաջին իսկ որդին նախանձով լցված՝ սպանում է եղբորը: Աստծու գերադասելը Աբելին Կայենից, հավանաբար պայմանավորված է ներքին դրդապատճառներով, որոնցով առաջնորդվել են եղբայրները զոհ մատուցելիս (հմմտ. Եբր. ԺԱ 4): Դա աստվածաշնչական առաջին ականարկն է, թե առանց սիրտը մաքրելու, պաշտամունքը ոչինչ է (հմմտ. Եսայի Ա 10 և հաջ.): Ասես Կայենն ուզում է ուժով ձեռք բերել Երկնքի օրհնությունը, հեռացնելով մրցակցին: Նա չի լսում Աստծու նախազգուշացմանը. եղբորն սպանելով՝ ցանկանում է դա թաքցնել Աստծուց (հատկանիշ, որ բնորոշ է Արարչի ու Նրա ընծաների նկատմամբ մոգական կոպիտ վերաբերմունքին): Հովիվ Աբելը հոգևորապես բարձր է իր առավել քաղաքակիրթ՝ հողագործ եղբորից: Աբելը դարձել է տառապող արդարի նախատիպ (Մատթ. ԻԳ 35): Սա ցույց է տալիս անկյալ մարդու պատմության ողբերգականությունը, երբ արդարն այս կյանքում ուրիշներից հաճախ է իր վրա զգում չարի ուժը:

Կայենի սերունդները դնում են քաղաքակրթության հիմքը. քաղաքներ են կառուցում, արհեստներ հնարում: Սա Աստվածաշնչի ևս մեկ դաս է. արտաքին հաջողությունը միշտ չէ, որ Աստծու օրհնության նշան է:

Կայենին վերաբերող պատումի մեջ մի քանի անորոշություն կա (խզումը հմր. 8-ում), ինչպես և տարակուսանք հարուցող տեղեր (Կայենը որտեղից կին գտավ՝ 16-17): Այս հիմամբ ժամանակակից մեկնիչները ենթադրեցին, թե Աստծուց ներշնչված հեղինակը Ծննդոց Դ գլուխը կազմելիս օգտվել է մեզ անհայտ աղբյուրից: Այդ աղբյուրը կապում են կինեցիների հետ:

Կինեցիները կամ կայենականները (կինեցիները Կայենի որդիներն են, Թվեր ԻԴ 21-22) քոչվոր ցեղեր էին՝ մադիանացիների ցեղակից: Ելքի դարաշրջանում Մովսեսը նրանց հետ սերտ շփում ունեցավ: Նա ամուսնացավ կինեցի քրմի դստեր հետ և օգտվում էր նրա խորհուրդներից (Ելք Գ 1, ԺԸ 12): Կինեցիներն անապատում միացան իսրայելացիների հետ և քոչեցին Քանան (Դաւտ. Ա 16): Սակայն այստեղ ևս վրաններ խփեցին՝ վարելով կիսաքոչվորական կյանք (Դաւտ. Դ 11): Նրանք Կայենին համարում էին իրենց նախահայր: Կայեն բառը նշանակում է կոփող, դարբին: Հավանաբար կինեցիները թափառում էին, միջնադարյան գնչուների նման, զբաղվելով դարբնությամբ: Ռաբբիմների խումբը, որ պահպանել է անապատի ավանդությունները (Երեմ. ԼԵ), ծագել է կինեցիներից (Ա Մնաց. Բ 55): Թշնամուց վրեժխնդիր լինելիս կինեցիներն աչքի էին ընկնում դաժանությամբ (Դաւտ. Դ 21): Կինեցիներն ապրում էին Նեգևի

հարավային մարզերում (Ա Թագ. Լ 29, հմմտ. նաև Կայեն քաղաքը, որ հիշված է Հեսու ԺԵ 57-ում): «Կայենի որդիները» մեջ ավանդույթյուններ են պահպանվել իրենց նախահայր Կայենի, Ղամեքի և մյուսների մասին: Հավանաբար հենց դրանք է օգտագործել Ծննդոցի հեղինակը՝ առաջին եղբայրասպանությունից տեսարանի և Կայենի հետնորդների մասին պատմելիս:

բ) Կայենի կնիքը (Ծննդ. Դ 13-16): Տերն անմիջապես չի իրագործում հատուցումը «արյան դեմ արյուն» սկզբունքով: Դա նշանակում է, որ շարից և բռնությունից հրաժարվելը մարդիկ ազատ պիտի կատարեն և ոչ թե՛ պատժի առջև երկյուղ կրելով: Բայց մարդկանց միջավայրից արտաքսված թափառականը, որ բնակություն է հաստատել «Նայիդ երկրում» (եբր.՝ ניד – նոփ բառը նշանակում է արտաքսում, պանդխտություն), արտաքին պահպանության պահանջ ունի հնարավոր մարդասպաններից: Որոշ մեկնիչներ կարծում են, թե Կայենի «նշանը»՝ նշան է մի տոհմի պատկանելության, որը հռչակել է արյան վրեժի օրենքը («ով սպանի Կայենին՝ յոթնապատիկ վրեժի կարժանանա» (հմր. 15): Այսպիսով, անապատի այդ դաժան որդիների մեջ բարոյական սկզբունքները հիմնվում են ոչ թե Աստծու կամքին հնազանդվելու վրա, այլ մարդկային վրեժառության երկյուղի:

գ) Կայենի ժառանգները (Ծննդ. Դ 17-24): Առաջին կայենյանները հիմնականում ապրում էին վրաններում, տիրապետում էին երաժշտական գործիքներ նվագելու արվեստին և զբաղվում մետաղամշակմամբ: ՅՕ-ական թվականներին Սինա թերակղզում հայտնաբերված եգիպտական հին նիզակների վրա նկատելի է ռազմիկի պատկեր՝ վահանով ու տապարով: Կողքին գրված է կիւնե, այսինքն կրենցի: «Կայենի որդիները», որ ծանոթ են պատմությանը, անշուշտ, քաղաքակրթության առաջին հիմնադիրները չէին: Աստվածաշունչը նրանց ավանդույթյունները վերցնում է լուկ իբրև նմուշ, որի օրինակով ցույց է տալիս՝ ինչպես է զարգացել մարդկային ցեղը: Հեթանոսները համարում էին, որ քաղաքակրթությունն աստվածներն են սերմանել: Աստվածաշունչն այն ծագեցնում է բուն մարդու աշխատանքից ու բանականությունից: Բայց կայենյանների քաղաքակրթության աճը նրանց հոգևոր աճ չի նշանակում: Հակառակը, նրանց միջավայրում ծաղկում է դաժանությունը, արյան վրեժի օրենքն առավել դաժան բնույթ է ձեռք բերում: Ղամեքի երգը (հմր. 23-24) հավանաբար կրենցիների ռազմական հին օրհներգ է, որ մեզ տանում է դաժան բարքերի աշխարհ: Մարդկային ցեղի անկումը շարունակվում է:

Ծանոթություն

«Ինձ վիրավորել» և «ինձ հարվածել» արտահայտությունները (հմր. 25) նշանակում են «վրեժ ինձ հասցված վերքի դիմաց»:

դ) Չոռի թեման: Կայենի և Աբելի պատմությունն առաջին անգամ մուծում է զոհաբերության թեման: Հեթանոսների մեջ զոհը երեք նշանակություն ուներ. 1) «Մնել» աստծուն, նրան սիրաշահել, 2) աստվածության հետ միանալու ցանկություն, նրա հետ միասնություն ձեռք բերել ընդհանուր սեղանի միջոցով, որին աստվածությունն անտեսանելի ներկա է, 3) աստվածությանը խոստովանել սեփական կախվածությունը նրանից: Աստվածաշունչը խստիվ դատապարտում է առաջինը (տե՛ս Սաղմ. ԽԹ 7-15), բայց ընդունում և սրբագործում է հաջորդ երկուսը: Հատկապես կարևոր է երկրորդը, և բացատրում է ինչո՞ւ է Հաղորդությունը պահպանում զոհաբերության խորհրդանիշը:

5. Մինչչրհեղեղյան սերունդների ծագումնաբանությունը (Ճննդ. Դ 17-Ե 32): Ծագումնաբանությունները (տոլդոտ) լրացնում են Աստվածաշնչի ժամանակագրական բացթողումները, նաև տալիս են պատմության համառոտ ակնարկ: Այսպես, Ա Մնաց. Ա-Թ՝ ծագումնաբանության օգնությամբ տրվում է ամբողջ հինկտակարանյան պատմության ամփոփումը, ընդհուպ մինչև թագավորներ: Իսկ Մատթ. Ա 1-17-ում ավետարանիչը տոհմաբանությունն օգտագործում է, ցույց տալու Հիսուս Քրիստոսի ծագումը Դավթից (հմմտ. նաև Ղուկ. Գ 23-38): Այդպիսի տոհմաբանություններ կազմողները պատմական լիակատար հավաստիության չեն ձգտել: Հաճախ բաց էին թողնում մի շարք անուններ՝ խորհրդանշական թիվ ստանալու համար: Ելից գրքում, օրինակ, 430 տարիներին (Ելք ԺԲ 40) համապատասխանում է ընդամենը երեք անուն (Ելք 2 14 և հաջ.): Իսկ Մատթ. Ա 8-ի մեջ բաց է թողած երեք թագավորի անուն (Օքոզիա, Հովաս և Ամասիա): Սովորաբար ծագումնաբանության մեջ գլխավորը ոչ թե անուններն են, այլ միտքը, որ հաղորդվում է դրանց թվարկումով:

Նախաջրհեղեղյան նահապետների ազգաբանությունը պարունակում է մի տեսություն, որ ավելի ուշ Պողոս առաքյալի տողերում հետևյալ ձևակերպումն էր ստանալու. «Մեկ արյունից ստեղծեց մարդկանց բոլոր ազգերը» (Գործք ԺԷ 26): Բնական կլիններ այս տեսությունն արտահայտել 10 սերունդների աղյուսակով՝ մարդու ստեղծումից մինչև ջրհեղեղ: Ծիշտ է, միջագետքյան ավանդազրույցի 10 թիվը սրբազան է (հմմտ. 10 պատվիրանները), իսկ հնագույն միջագետքյան ավանդությունը պնդում էր, որ հենց 10 թագավոր են իշխել երկրի վրա մինչև ջրհեղեղը: Բայց միջագետքյան ավանդազրույցում այդ 10 սերնդի ժամանակը երկարաձգված է մեծ ժամանակահատվածով՝ ավելի քան 240.000 տարի (որ շատ անգամ գերազանցում է մարդու գոյության ժամանակը. տե՛ս հտ. 1, § 18-ի Յավելվածի աղյուսակը), իսկ Աստվածաշունչը բավական համեստ թիվ է հաղորդում՝ մոտավորապես 1600 տարի: Բայց պետք է նկատի ունենալ, որ երկուսի պարագային մեր առջև ոչ թե սովորական

ժամանակագրությունն է, այլ խորհրդանշական (տե՛ս հտ. 1, § 17, կետ 5, ծնթ.):

Թվային խորհրդանիշներից բացի (Ադամն ապրեց 1000 տարի՝ հանած 70, Ենովքը՝ 365 տարի, արևային տարվա օրերի թվով և այլն) առաջին մարդկանց երկարակեցությունը նաև այլ իմաստ ունի: Դա նշանակում է, որ անմահության հնարավորությունը կորցնելով՝ մարդը, ասես դրա փոխարեն, ստացավ երկարամյա կյանք: Բայց հետագայում, աշխարհի վրա չարի շատանալով սահմանային տարիքը կրճատվում է մինչև 120 տարի (հմմտ. Ծննդ. Չ 3): Նշենք, որ եթե զավակների ծնվելու պահին, ըստ Ծննդ. Ե 32-ի, Նոյը եղել է 500 տարեկան, ապա Աբրահամի դարաշրջանում զառամյալ ծնողներից երեխայի ծնվելն արդեն հրաշք է թվում (Ծննդ. ԺԸ 11-12):

Երկու ավանդություն՝ Քահանայական և Եահվեական, տարբեր կերպ են դասավորում մինչըրհեղյան նահապետների անունները:

Ծննդոց Դ	Ծննդոց Ե
Ադամ	Ադամ
Կայեն, Սեթ	Սեթ
Ենոք, Ենոս	Ենոս
Գայերիդադ	Կայնան
Մայիել	Մադադայել
-	Հարեդ
-	Ենոք
Մաթուսաղա	Մաթուսաղա
Ղամեք	Ղամեք
-	Նոյ

Ըստ երկու ավանդությունների՝ թեև չարը մարդկանց մեջ շատացել է, բայց ամբողջովին չի գրավել նրանց: Ամեն մի ազգաբանություն նշում է մեկական արդարի անուն. Ենոս (Եբր. שֵׁט - մարդ) և Ենոք (Եբր. ִיֶּזֶק - ԽԱՆՈՒՄ): Սրանով հաստատվում է, որ ճշմարիտ Աստծու հավատը երբեք չանհետացավ մարդկանց միջից: Ենոսի ժամանակ հաստատվեց ճշմարիտ աստվածապաշտություն. «նա հուսալիվ կանչում էր Տեր Աստծու անունը» (Դ 26): Ծննդոցի հեղինակը օգտագործում է սրբազան անունը՝ Եահվե, չնայած Քահանայական ավանդության համաձայն այն բացահայտվել է միայն Մովսեսի ժամանակ (Ելք Չ 2): Իսկ Ենոքի մասին ասված է, թե նա «քայլում էր Աստծու առջև»¹, այսինքն՝ արդար էր, և «Աստված նրան տարավ» (հմմտ. Եբր. ԺԱ 5): Հին ավանդությունը «նրան տարավ» խոսքերը մեկնում է այն մտքով, որ Ենոքն առանձնացվել է մահկանացուների ընդհանուր վիճակից և համբարձվել երկինք (Սիրաք. ԽԳ 15)²: Ենոքի պարականոն գիրքը, որի

1 Հայերենում Նա սիրելի եղավ Աստծուն – խմբ.:
2 Հայերենում Սիրաք. ԽԳ-ԾԱ գլուխները չիք – խմբ.:

սկզբնական հատվածները գրվել են մոտավորապես Ք. ա. 160 թվականին, նրան տեսանող են ներկայացնում, մարդ, որին հայտնվում էր Տրեզերքի ու պատմության գաղտնիքները: Այս ավանդության սկիզբը հավանաբար հանգում է շումերական մինչըրհեղեղյան թագավորներից մեկին՝ էնմենդուրանին, որին Արեգակը բարձրացրեց իր ապարանքը:

6. Պատում հսկաների մասին (Ծննդ. Չ 1-4): Հեթանոս թագավորներն ու հերոսներն աստվածների և երկրային կանանց որդիներ էին համարվում: Հաս երևույթին դա օգտագործված է «Աստծու որդիներ» աստվածաշնչական պատմումում, որոնք նույնպես ամուսնանում էին մարդկանց դուստրերի հետ: Հաճախ այդ միությունը մեկնում էին իբրև ամուսնություն Սեթի հետնորդների և Կայենի մեղանչական հետնորդների միջև: Սակայն Աստվածաշնչում «Աստծու որդիներ» էին անվանվում սովորաբար հոգևոր էակներին (Յոթ Բ 1, Սաղմ. ԻԸ 1): Ենթի գրքում, որ վաղ Եկեղեցու հարգանքն էր վայելում (տես այդ մասին Յուդա Ա 6-14), «Աստծու որդիներն» անկյալ ոգիներ էին, որ մարդկանց սովորեցրել են մոգություն ու կախարդություն: Փիլոն Ալեքսանդրացին և Եկեղեցու շատ հայրեր այդ պատումների լույսի ներքո էին ըմբռնում Ծննդ. Զ 1-4 պատմությունը, (Սբ. Յուստինոս և Իրինեոս, Կղեմես Ալեքսանդրացի, Սբ. Ամբրոսիոս և ուրիշներ): Հայտնի ուղղափառ աստվածաբան Վ. Ն. Լոսսկին գրում է. «Հնարավոր այս նոր անկումը պետք է կապել հրեշտակների և մարդկանց խորհրդավոր հաղորդակցության հետ, որի հետևանքով հայտնվում են «հսկաները»: Արդյոք դա լյուցիֆերյան ինչ-որ գաղտնի գիտելիք չէր, որից մարդն իր համար անսովոր իշխանություն էր կորզում» (Догматическое богословие, БТ, պրակ 8, էջ 165):

Սբ. Գրքի խորհրդաբանության մեջ ամուսնական միությունը հաճախ կրոնական միություն է նշանակում (Օսեե Բ 16, Եփես. Ե 25-33), այդ պատճառով ոգիների հետ «ամուսնությունը» կարող է ընկալվել որպես մարդկանց դավաճանությունն Աստծուն և մեղանչական միության հաստատումը ոգիների հետ (այսինքն ինչպես հեթանոսության ծագումը): Այդ պարագային հսկաները վաղ հեթանոսության շրջանի աստվածացրած թագավորներն էին, որ փառաբանվում էին առասպելներում ու ավանդագրույցներում: Օրինակ՝ Միջագետքի Գիլգամեշ թագավորը պատկերված է որպես «երկու երրորդով աստված, մեկ երրորդով մարդ»:

Ծանոթություն

Յին Կտակարանը ոչ մի տեղ ուղղակիորեն չի խոսում բազմաստվածության ծագման մասին: Միայն Ծննդոց Գիրքից երևում է, որ առաջին մարդը կրոնը՝ իբրև մի ինքնօրինակ կապ Աստծու հետ, չուներ, քանի որ կապվում է այն, ինչ բաժանված է: Մինչդեռ Եդեմում լինելը նշանակում էր անմիջական միություն Աստծու հետ: Միայն Եդե-

մից արտաքսվելուց հետո մարդիկ սկսում են գոհեր մատուցել, որը կրոնի բնութագրական հատկանիշներից է: Աստծու հետ հաղորդակցական ամբողջության կորուստը մարդուն չզրկեց Աստծուն «ճանաչելու» հնարավորությունից (հմմտ. Հռոմ. Ա 21), բայց մարդկանց մեծ մասը նախընտրեց պաշտել բնության ուժերին (Հռոմ. Ա 23, 25): Ծննդոց Չ 1-ը և հաջորդ համարները թերևս հեթանոսության անցման այդ հանգամանքն են նշում: Հակառակ աստվածաշնչական ուսմունքի, ԺԸ-ԺԹ դարերի գիտությունը կրոնի նախնական ձևերը բնորոշել է որպես նախնիների, ոգիների, տարերքների և սրբազան առարկաների (ֆետիշ) պաշտամունք: Իսկ արդեն բարձրագույն Սկզբի հասկացությունն ի հայտ եկավ, ըստ այդ տեսությունների, միայն ուշ շրջանում (Ք. ա. առաջին հազարամյակ): Սակայն Ի դարում «նախնադարյան մշակույթի» գծերը պահպանած ցեղերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նաև ցածր մակարդակի քաղաքակրթության ժողովուրդները պատկերացում ունեն Գերագույն Էակի՝ աշխարհի Արարչի մասին (տե՛ս ЖМП, 1960, համար 11, էջ 51):

7. Ջրհեղեղը (Ծննդ. Չ 5 - Ը 19): *Հեղինակը միտումնավոր ուշադրություն է դարձրել Ղամբքին մինչև ընդհանրապես սերունդների հակիրճ թվարկման մեջ: Նոյի հոր դաժանությունը շեշտում է մարդկանց «ապականվելը» կործանման նախօրեին: Այդ կործանման մասին իսրայելացիները գիտեին վաղուց: Դեռևս Աբրահամը կարող էր դրա մասին ավանդությունը լսած լինել, երբ ապրում էր Միջագետքում: Աստվածաշնչում ընդհանրապես վերաբերյալ պատմությունը պահպանվել է երկու ավանդությամբ՝ միացած մեկ ամբողջի մեջ: Պատումի հենքը և իմաստը երկուսի մեջ էլ ընդհանուր են:*

Գիտության մեջ ընդհանրապես իբրև երկրաբանական փաստի հարցը լուծված չէ: Հեղեղի ակնհայտ հետքեր, որ միաժամանակ ընդգրկած լինի ամբողջ երկրագունդը, հայտնաբերված չեն: Բայց դժվար է անցնել ընդհանրապես մասին պատմող բազում գրույցների կողքով, որ հայտնի են աշխարհագրորեն իրարից հեռու ժողովուրդներին: Այդ գրույցների ընդհանրական ամփոփմանը կարելի է ծանոթանալ Ջ. Ֆրեզերի «Բանահյուսությունը Հին Կտակարանում» գրքում: Մեծ ընդհանրապես մասին պատմում են ոչ միայն Մերձավոր Արևելքի և Հունաստանի, այլև Հնդկաստանի, Մալակկայի [Մալայան թերակղզի], Ֆիլիպինների, Նոր Գվինեայի, Մելանեզիայի, Օվկիանիայի, Ավստրալիայի ու Ամերիկայի բնիկների ավանդությունները: Որոշ գիտնականների կարծիքով համաշխարհային ընդհանրապես իսկապես եղել է և առաջացել է անհիմանալի տիեզերական աղետի պատճառով (հսկայական երկնաքարի անկում, գիսաստղի անցում երկրին մոտ և այլն): Ենթադրություն կա, թե համաշխարհային ընդհանրապես առաջացել է ժամանակին երկիրը պարուրած սառույցների հալչելուց (տե՛ս Кондратов А., Великий потоп. Мифы и реальность, Л., 1982): Երբեմն ընդհանրապես կապում են Ատլանտիդայի առասպելին, մայրցամաք, որ իբր Ք. ա. շատ հազարամյակներ առաջ անցել է ջրի տակ: Այլ վարկածներով՝ երկրագնդի առանցքի շեղման պատճառով առաջացած

աղետների շարքը: Ենթադրում են, որ այդ աղետներից առաջ երկրի վրա արդեն կար բարձր քաղաքակրթություն, որը կործանեցին ջրերը:

Աստվածաշնչական հատվածը ներառել է ջրհեղեղի պատմության մի որոշակի վարկածի արձագանքներ, այն պատմության, որ ձևավորվել է Միջագետքում: Այդ տարածքում բազմիցս եղել են կործանարար հեղեղումներ, որոնց մասին վկայում են պեղումները: Դրանցից մեկի վերաբերյալ հիշողությունը երկար ժամանակ պահվել է շումերների ու բաբելոնացիների հիշողության մեջ: Այդ աղետի հետքերը (Ք. ա. 7 հազարամյակ) Ուր քաղաքի մոտ հայտնաբերել է անգլիացի հնագետ Լեոնարդ Վուլլին¹: Ջրհեղեղի մասին բաբելոնյան առավել ամբողջական պատումը պահպանվել է Գիլգամեշի մասին էպոսում (սրա մի դրվագը գտնվել էր Պաղեստինում՝ մինչխորալեյան ժամանակի Մակեդոնում):

Բիբլիական զրույցն ընդհանուր գծերով կրկնում է բաբելոնյանը: Բայց Սուրբ Գիրքը հին ավանդազրույցը վեր է ածում խրատական դասի: Մարդը՝ բնության թագավորի բարոյական քայքայումը բնությունն անիմաստ է դարձնում և սա ասես վերադառնում է հին քառսի վիճակին (հմմտ. Սով. Ա 2-3): Հեղեղի ջրերը խորհրդանշում են Ադամի որդիներին ընկղմած դիվային տարերքը: Աստծու «զղշումը» մարդ ստեղծելու համար՝ պայմանական միջոց է, որ կոչված է ցույց տալու Արարչի կենդանի, անձնային վերաբերմունքը երկրի վրա կատարվածի նկատմամբ: Նույր դառնում է արդար մարդկության ներկայացուցիչ, որին Աստված պաշտպանում է քառսից: Կարծես կատարվում է մարդկանց նոր արարում: Տերը վերստին սանձում է ծովային քառսը: Ի՛հ սաղմոսում ասված է.

Տիրոջ ձայնը ջրերի վրա է.

Փառքի Աստվածը որոտաց,

Տերն ինքն է անապառ ջրերի վրա...

Տերը պսպում և ցածրացնում է ջրհեղեղները,

Տերը հավիտյան պիտի թագավորի:

(Գ 10)

Այս պատկերներն արտացոլված են Աստվածհայտնության տոնի պաշտամունքի մեջ²: Այն հիշեցնում է ամենակարողությունն Արարչի, որ հաղթում է խավարի ուժերին և Իր Հոգով սրբացնում է տարերքը:

1 Կուլլի Լեոնարդ (1880-1960) – Անգլիացի հնագետ, պեղել է Շումերը, Հին Եգիպտոսը, Սիրիան: Առավել հայտնի են նրա Ուր քաղաքի պեղումները – խմբ.:

2 Հայ եկեղեցում նույնպես Աստվածհայտնության տոնին (հունվարի 6-ին) այդ սաղմոսն է ընթերցվում – խմբ.:



Գիլգամեշ (կենտրոնում) և Էնկիդու (աջից և ձախից):
Խեթական քանդակ գտնված Սիրիայում (IX դ. Ք. ծ. ա.):

Ծանոթություն

Ջրային անդունդը (սատանայի խորհրդանիշ) չի վերանում անգամ հեղեղից հետո: Միայն այլակերպված աշխարհում դրոշմները կփոխվի: «Ապա տեսա նոր երկինք ու նոր երկիր, քանախ առաջին երկինքն ու երկիրը անցել էին. և այլևս ծով չկար» (Հայտն. ԻԱ 1, հմնտ. Եսայի ԻԷ 1. «Այն օրը Տերը պիտի քաշի սուրբ, մեծ ու հյոր սուրը փախչող վիշապ օձի վրա՝ ծովի մեջ սպանելով վիշապին»): Իսկ մինչ այդ պահը Տերը միայն սահմանափակում է կործանարար ուժերի ազդեցությունը բնության և հասարակության մեջ: «Դու տիրում ես ծովի պորություններին, և նրա ալիքների խռովքը դու ես հանդարտեցնում: Դու վիրավորների պես խոնարհեցրիր ամբարտապաններին» (Եբր. բն. Ռահաբին) և բաակիդ ուժով ցրեցիր քո թշնամիներին» (Սաղմ. ՁԸ 10-11): Այլ խոսքով՝ թեպետ անկյալ աշխարհում մարդկային մեղքի պատճառով տակավին գործում են չար և կույր տարերթները, վախճանաբանական ավարտին դրանք կկորչեն:



Գիլգամեշի էպոսից հատված սեպագիր տախտակի վրա, գտնված Մակեդոնում, Պաղեստին (XIV դ. Ք. ծ. ա.):

8. Ուխտ Նոյի հետ (Ծննդ. Ը 20-Թ 17): *Նոյն ու իր հետնորդներն ավելի թույլ սերունդ են, որին Աստված ավելի քիչ պահանջներ է առաջադրում: Եթե առաջին մարդը սնվելու էր միայն բուսական կերով* (Ծննդ. Ա 29), *ապա հետագյուս մարդկանց թուլատրվում է նաև կենդանական ծագում ունեցող*

կերակուր: Արգելքը վերաբերում է միայն արյանը: Արյունը նույնացվում էր կենսական ուժի, բուն իսկ կյանքի հետ, և քանի որ կյանքն ամբողջովին Աստծուն է պատկանում, ապա նաև արյունն է սուրբ (հմմտ. Գործ. ԺԵ 19-20): Արյունից զերծ մնալը մարդկանց պիտի հիշեցնի կյանքի միակ Տիրոջ մասին: Մարդու և Աստծու միջև նախաստեղծ ներդաշնակությունը, սակայն, լիովին վերականգնված չէ: Դրա կատարումը հինկտակարանյան մարգարեները տեսել են լոկ հեռավոր՝ մեսիական ապագայում (Ես. ԺԱ 6-9): Բայց այդ ապագան ոչ թե նոր տեղում պիտի ի հայտ գա, այլ նույն աշխարհի և նույն, թեկուզ մեղանշական, մարդկության ծոցում: Ծիածանի նախանշանը հայտնում է, որ Աստված Իր մտահղացումներն իրագործելու է գոյություն ունեցող աշխարհում, որտեղ մնալու է եղած կարգը. «թող չդադարեն սերմն ու հունձը, ցուրտն ու տոթը, ամառն ու գարունը, ցերեկն ու գիշերը» (Ճննդ. Ը 22):

Ծննդոց Գրքի Քահանայական ավանդությունը, խոսելով Աստծու այդ վճռի մասին, առաջին անգամ կիրառում է «Ուխտ» բառը (Ճննդ. Թ 9): Ուխտը (եբր. תורה - ԲԵՐՔՏ) երկկողմ պայմանագիր է կամ միություն: Դա նշանակում է, որ Արարչի և բանական արարածի միջև հարաբերություններ են հաստատվում, որ մարդկանցից պահանջում են Աստծու կամքի կատարում: Նրանց արարքները երկնքի և երկրի միջև երկխոսության բազադրիչներն են, որն էլ հենց սրբազան պատմության էությունն է:

9. Նոր քաղաքակրթության սկիզբը: Քամի մեղքը (Ճննդ. Թ 20-28): Նոյ արդարն առաջինն է խաղողի այգի տնկում, որը նստակեցության մշակույթի պտուղն է: Բայց հենց նա էլ դառնում է արբեցության առաջին զոհը: Սա խոսում է քաղաքակրթության երկակի բնույթի մասին (տես վերևում, § 4 գ.), որն իր մեջ շատ վտանգներ է թաքցնում: Հետաքրքիր է, որ որոշ բարեպաշտ համայնքներ Իսրայելում ձեռնպահ են մնացել գինուց և նստակյաց կյանքի այլ պտուղներից (Թվեր 2 3, Երեմ. ԼԵ 1-10, Ղուկ. Ա 15):

Քամի հետ կապված միջադեպը ցույց է տալիս, որ մեղանշականությունը շարունակում է ապրել մարդկային ցեղի կյանքում: Հոր հանդեպ անհարգալից վերաբերմունքը Աստվածաշունչը դատապարտում է իբրև մեղք մարդկության առաջին բարոյական օրենքների դեմ: Նգովքի փոխանցումը Քանանի վրա (Ճննդ. Թ 25-27) այն բանի հետևանքն է, որ Իսրայելի աչքին քանանացիներն անագնավության մարմնացում էին:

10. Նոյի սերունդը (Ճննդ. Ժ): Այս ազգաբանության նպատակը նույնն է, ինչ Ծննդ. Դ-Ե գլուխներինը. կամրջել սերունդներին, շեշտել մարդկային ցեղի միասնությունը: Այս ուսմունքն աչքի է ընկնում նորությունմբ ու յուրօրինակությունմբ, քանի որ հին ժողովուրդների մեծ մասը չէր ընդունում արյան

մերձավորությունն այլազգիների հետ: Օրինակ եգիպտոսում այլազգիներին անվանում էին «Ապոպի որդիներ», այսինքն՝ չար ոգու:

Ծննդոց Ժ-ում գլխավորապես խոսվում է հին աշխարհի ժողովուրդների մասին, որ հայտնի էին իսրայելացիներին: Այդ ժողովուրդները բնակվում էին Միջերկրական ծովի ավազանում: Իսկ «սև» Աֆրիկայի բնակիչները և մոնղոլները սուրբգրային հեղինակի տեսադաշտից դուրս էին:

Այն կարծիքով, որ առաջին անգամ առաջադրել է Օգոստինոս Երանելին (O grade Boжием, XVI., 3), Ծննդոց Գրքի ժողովուրդների ցանկը ենթադրում է ոչ այնքան առանձին մարդկանց, որքան ամբողջ ցեղեր ու ժողովուրդներ: Ժողովուրդների նահապետների թիվը (70 կամ 72) նվիրական է (հենց դա նկատի ունեն հավանաբար Քրիստոս, ուղարկելով 70 աշակերտներին): Հարկ է նշել, որ Հին Կտակարանում, արևելյան վաղնջական սովորություններ, նախահայրը հաճախ պատկերվում էր իբրև էպոնիմ (հուն. ὄνομα – անուն), այսինքն հավաքական կերպար, որի մեջ խտացած են սերնդի, ցեղի, ազգի հատկանիշներն ու ճակատագիրը: Մի դեպքում էպոնիմները եղել են պատմական դեմքեր (հրեական նահապետներ), մեկ այլ դեպքում՝ (Ճննդ. Ժ) ներկայացրել են ժողովուրդներին (տե՛ս հտ. 1, 19, Հավելված 4):

11. Բաբելոնի աշտարակը (Ճննդ. ԺԱ 1-9): Բաբելոնի աշտարակի պատումով եզրափակում է ընդդեմ Աստվածային կամքի մարդու ապստամբելու մասին պատմությունը: Այն կազմվել է երկու ավանդության հիման վրա: Առաջինի համաձայն մարդիկ քաղաք են կառուցում, ըստ մյուսի՝ աշտարակ: Աստվածաշունչն այստեղ պատկերում է միասնության կենտրոն ստեղծելու մարդկանց փորձը, որով նրանք պիտի մեկ լինեին Աստծու կամքից անկախ: Իրադարձությունը տեղի է ունենում Միջագետքում՝ Սենաար երկրում: Աշտարակն ու քաղաքը կառուցվում են կավե աղյուսներով (ինչպես ընդունված էր Բաբելոնում): Մարդիկ հույս էին տածում, թե իրենք դրանով «համբավ ձեռք կբերեն» և կկանխեն սփռվելը (հմր. 4-ի բառացի թարգմանությունը՝ «որ մենք չսփռվենք աշխարհի երեսով մեկ»): Կարծելով, թե երկիրը այնքան էլ հեռու չէ, նրանք կարծում են, որ աշտարակի գագաթը երկիրն կհասնի: Բայց Աստծու աչքին շինությունն այնքան չնչին էր, որ Աստված «խջավ», որ «տեսնի այն քաղաքն ու աշտարակը»: Աստված տեսնում է, որ «սրանք մեկ ժողովուրդ են, ունեն մեկ լեզու», որ Արևելքում նշանակում է «միևնույն կայսրության մաս լինել»: Աստծու կամքով հպարտ շինարարների մտահղացումը փլուզվում է, և նրանք ցրվում են երկրով մեկ:

Այս պատմության մեջ պետք չէ փնտրել լեզուների ծագման պատմությունը: Դեռևս Սբ. Գրիգոր Նյուսացին նշել է, որ «աշտարակաշինությունն» սկսվել է այն բանից հետո, երբ ժողովուրդները տեղաբաշխվել են «իրենց

ցեղերով ու իրենց լեզուներով»: Նա բազմալեզու լինելը չի դիտում իբրև պատիժ մեղքի դիմաց. «Իսկ այն բանից հետո,- գրում է նա,- երբ աստվածային կամքով ամբողջ երկիրը լինելու էր բնակեցված, հաղորդակցման լեզվի քայքայումով մարդիկ ցրվեցին տարբեր վայրեր, և ամեն ժողովուրդ վերստին կազմավորեց խոսակցական հատուկ ձև... Աստված, կամենալով, որ մարդիկ տարալեզու լինեն, նրանց հնարավորություն տվեց բնական ճանապարհով ընթանալու և յուրաքանչյուր (ժողովրդի) ուզած ձևով ստեղծելու ձայն՝ անունները բացահայտելու համար» (Опровержение Евномия, 2 ա):

Ինչ է այդ դեպքում թաքնված սուրբգրական պատումի ետևում: Այն խորհրդանշում է բռնության հիման վրա կառուցված քաղաքակրթությունը: Երբ Միջագետքի թագավորները հպատակեցնում էին հարևաններին՝ դա անվանում էին «նրանց դարձնել մեկ լեզվի ժողովուրդ»: Բաբելոն անունն էլ այստեղ պատահական չէր: Հենց Միջագետքում են ստեղծվել առաջին բռնատիրական կայսրությունները (մոտ. Ք. ծ. ա. 2000 թ.): Հետագայում Սբ. Գիրքը Բաբելոնն ընտրում է իբրև աստվածամարտության, պղծության ու բռնության խորհրդանիշ (Երեմ. Ծ 29 և հաջ., Յայտն. ԺԸ 1 և հաջ.):

Միջագետքի բոլոր կայսրությունները կործանվեցին, և մարգարեները դա համարում էին Աստծու դատաստանի նշան:

«Բարձրությամբ երկինք հասնող» աշտարակի պատկերն, անշուշտ, պիկկոլուրատների ազդեցությունից է գալիս, վիթխարի, աստիճանավոր տաճարներից, որոնցից մեկը (գտնվում է հենց Բաբելոնում) էթեմենանկի էր կոչվում (երկնքի ու երկրի հիմք): Դրա բարձրությունը մոտավորապես 90 մետր էր:

Բաբելոնյան առասպելներից մեկում խոշոր աշտարակը ժամանակին իսկապես եղել է «Ապսուի նման», այսինքն՝ երկնքի: Այն կառուցել են ստորգետնյա Անուննակի աստվածները՝ փառաբանելու Բաբելոնի հովանավոր և թագավոր Մարդուկին: Մեկ այլ առասպելի համաձայն՝ շինարարությունից հոգնած աստվածները մարդ ստեղծեցին կավից, սպանված աստծու արյունով, որպեսզի իրենց փոխարեն մարդիկ աշխատեին (տե՛ս հտ. 1, § 17, Յավելված): Առասպելները կոչված էին մեծարելու Բաբելոնն ու նրա աստվածներին: «Աշտարակաշինությանը» իր նկարագիրը տալով՝ Աստվածաշունչը բանավեճի սլաքն ուղղում է հեթանոսության և կայսերական գոռոզացած մայրաքաղաքի նկրտումների դեմ:

Ծանոթություն

Ինչ վերաբերվում է «Բաբելոն» անվանը՝ այն կիրառված է ժամանակավրիպության սկզբունքով (ինչպես, օրինակ, պատմաբանները «Պաղեստին» եզրը կիրառում են այնպիսի ժամանակների կապակցությամբ, երբ դեռ այդ անվանումն չկար): Պատմության մեջ Բաբելոնն ի հայտ է գալիս իբրև խոշոր քաղաք Աբրահամի դարաշրջանից հարյուրամյակ անց: «Բաբելոն» բառը (Բաբիլու կամ Բաբիլի) նշանակում է «Աստծու

դարպասներ»։ Սրբազան հեղինակը բաղաբի անունը կապում է «խառնել» բայի հետ (արմատը՝ եբր. לָבַב – ԲԱԼԱԼ բառից), ցույց տալու համար թագավորների սնափամ մտքերի ապագան։ Իրենց աստվածներ համարելով՝ նրանք ցանկանում էին շատ ժողովուրդներ նվաճել։ Բայց կենտրոնախույս ուժերը ձախողեցին նրանց ծրագրերը։ «*Եթե ոչ Տերը տունը չհինի, իսկուր են չարչարվում այն շինողները*» (Սաղմ. ԾԻՉ 1)։ Ի հակակշիռ այս ապարդյուն ձգտումներին՝ Տերը հետագայում Տիեզերական Եկեղեցու հիմքը կդնի, որը Սուրբ Հոգով կշաղկապի ժողովուրդներին (Գործ. Բ)։

Հարցեր կրկնության համար

1. Ո՞րն է Աստվածաշնչի պատասխանը մեղքի ծագման վերաբերյալ հարցին։
2. Ի՞նչպես հասկանալ օձի Աստվածաշնչական կերպարը։
3. Ո՞րն է արգելված պտուղի հիմնական գայթակղությունը։
4. Ո՞րն է մեղքի հեթանոսական և սուրբգրական ըմբռնման տարբերությունը։
5. Ծննդոց Գրքի Գ պատումի ինչպիսի՞ երեք մեկնություն կա։
6. Որո՞նք են մեղանչման յոթ հետևանքները։
7. Ո՞րն է Հին Կտակարանի առաջին շրջանի հանդերձյալ կյանքի ուսմունքը։
8. Ի՞նչ է նշանակում «Նախավետարան»։
9. Եղբայրասպանության պատումի իմաստը ո՞րն է։
10. Մեկնիչների կարծիքով ի՞նչ աղբյուրներ ունի Կայենին վերաբերող պատումը։
11. Ի՞նչ կարող է նշանակել «Կայենի նշանը»։
12. Կայենի հետնորդներին վերաբերող գրույցում ինչպիսի՞ փոխհարաբերություն կա քաղաքակրթության և մարդկանց բարոյական վիճակի միջև։
13. Չոհաբերության իմաստը ո՞րն է։
14. Ո՞րն է մինչջրհեղեղյան մարդկանց ազգաբանության իմաստը։
15. Ինչի՞ց է երևում, որ չարի շատանալը մարդկանց մեջ չջնջեց բարու սերմերը։
16. Ի՞նչ երկու մեկնություն ունի հսկաների վերաբերյալ գրույցը։
17. Ի՞նչ վարկածներ կան ջրհեղեղի բնույթի մասին։
18. Աստվածաշնչական պատումն ի՞նչ պատմության վրա է հիմնված։
19. Ո՞րն է դրա հոգևոր նշանակությունը։
20. Ո՞րն է առաջին՝ Նոյի ուխտը։
21. Ո՞րն է ծովի ու ջրհեղեղի սուրբգրական խորհրդաբանությունը։
22. Ի՞նչպես պետք է հասկանալ Նոյի հետնորդների թվարկումը։
23. Ծննդոցի Ժ-ում ժողովուրդների ի՞նչ երեք խմբեր են նկարագրված։
24. Ո՞րն է Բաբելոնյան աշտարակի պատումի իմաստը։
25. Ի՞նչ սկզբնաղբյուրներ են ընկած դրա հիմքում։ Դրանք ինչի՞ համար են օգտագործված Աստվածաշնչում։

§ 19-ի Հավելված

1. Ջրհեղեղի շումերական ավանդությունը

Ջրհեղեղի շումերական պատմությունը գրված է Ք. ծ. ա. մոտավորապես 3000 տարի առաջ: Այն պահպանվել է միայն հատվածաբար: Այդտեղ պատմվում է, թե ինչպես աստվածներն ստեղծեցին մարդկանց, նրանց թագավորական իշխանություն շնորհեցին և հիմնեցին քաղաքներ: Դրանից հետո (անհասկանալի պատճառով) մարդկանց ջրհեղեղի միջոցով կործանելու վճիռ է կայացվել: Բայց աստվածներից մեկը մտածել է փրկել գոնե սակավ մարդկանց: Մոտալուտ կործանման լուրը նա հայտնում է Ջիուսուդրա թագավորին և սովորեցնում՝ ինչպես տապան կառուցել:

Բոլոր հողմերն արտակարգ ուժով միաժամանակ փոթորկվեցին:

Եվ նույն պահին ջուրը հեղեղեց գլխավոր սրբավայրերը:

Յոթ օր և յոթ գիշեր

Ջրհեղեղը ողողում էր երկիրը,

Եվ քամիները կատաղի ջրերով բռնեցին վիթխարի նավը:

Հետո ելավ Ուտուն¹, այն, որ լույս է տալիս երկնքին ու երկրին:

Այնժամ Չիուսուդրան լուսամուտ բացեց իր վիթխարի նավում,

Եվ հերոս Ուտուն իր շողերով թափանցեց վիթխարի նավի մեջ:

Չիուսուդրան՝ արքան,

Խոնարհվեց Ուտուի առջև,

Արքան նրա համար ցուլ սպանեց, ոչխար մորթեց:

(*Крамеп С. Н.* История начинается в Шумере,

М., 1965, էջ 179):

2. Բաբելոնյան ավանդությունը ջրհեղեղի մասին

Ջրույցը մուծված է Գիլգամեշին նվիրված էպոսում (գրառվել է Ք. ծ. ա. մոտավորապես 2000 թ.) և պատմվում է ջրհեղեղից փրկված Ուտնապիշտիի անունից:

Ավանդագրույցն ասում է. աստվածների սիրտը թեքվեց այն բանին, որ ջրհեղեղ սարքեն: էյա աստվածը, չհամարձակվելով ուղղակի ընդդիմանալ նրանց, ոչ թե մարդկանց դիմեց, այլ հյուղակին.

Հյուղանկ, հյուղանկ, պանտ, պանտ...

Լսիր, հյուղանկ, հիշիր պատ,

Բնակարանը քանդիր, նավ կառուցիր,

¹ Ուտուն՝ Արևի աստվածը:

Պերճանքը թո՛ղ, կյանքի մասի՛ն հոգ տար,
 Արհամարհի՛ր հարստությունը, քո հոգի՛ն փրկի՛ր:
 Նավի՛դ մեջ տար ամեն կենդանի բան:
 Այն նավը, որ կկառուցես՝
 Թո՛ղ ուրվագծվի չորս անկյուններով,
 Թո՛ղ լայնքն ու երկարությունը հավասար լինեն,
 Օվկիանոսի նման նավի՛դ կտուրը ծածկիր:

Ուտնապիշտի թագավորը լսեց այդ խոսքը: Նա հավաքեց ժողովրդին, հորդորեց տները կործանել և նավ կառուցել: Շինարարուժյունն օրեր տևեց: Թագավորը կերակրում էր բանողներին և ամեն օր խրախճանք էր սարքում: Վերջապես տապանը շրարկվում է: Ուտնապիշտին շարունակում է պատմել.

Նավը բարձեցի ամեն ինչ, որ ունեի,
 Այն բարձեցի, ամբողջը, որքան արծաթ ունեի,
 Այն բարձեցի, ամբողջը, որքան ոսկի ունեի,
 Այն բարձեցի, ամբողջը, որքան ունեի կենդանի արարած,



Շումերական աստվածները. Էնկի (Էյիա), Ուտու (Շամաշ), Ինաննա (Իշտար): Աքքադյան ժամանակների կնիքի դրոշմվածքը (Ք. ծ. ա. III հազարամյակի 2-րդ կես)

Նավ բարձրացրի իմ ամբողջ ընտանիքն ու ցեղը,
 Անապատի անասուններ ու գազաններ, բոլոր վարպետներին:
 Շամաշը (Արև) ինձ ժամանակ սահմանեց.
 «Առավոտյան հեղեղ կհորդի, իսկ գիշերը՝
 Գիշերը կտեսնես առատ անձրև.
 Մտի՛ր նավ և խեժով ծածկիր դռները»:
 Եկավ նշված ժամանակը.
 Առավոտյան տեղատարափ եղավ, իսկ գիշերը՝
 Յորդառատ անձրև տեսա գիշերը:
 Նայեցի եղանակի դեմքին,
 Սարսափելի էր եղանակին նայելը:

Ես մտա նալ, ձյութեցի դմները...
 Հագիվ նշմարվեց առավոտյան շողը՝
 Երկնքի հիմքից սև ամպ դուրս եկավ:
 Ադրուն որոտում է ամպի մեջտեղում,
 Շուլլատն ու Խանիշն ընթանում են նրա առջևից...
 Ինչ լուսավոր էր՝ խավարի փոխվեց,
 Երկիրն ամբողջ՝ բաժակի նման փշրվեց:
 Առաջին օրը Հարավի հողմը մոլեգնեց,
 Արագ հարձակմամբ հեղեղեց լեռները,
 Ասես պատերազմով՝ զավթելով երկիրը:
 Մեկը մյուսին չի տեսնում:
 Երկնքից մարդիկ տեսանելի չեն:
 Աստվածները սարսափեցին հեղեղից:
 Բարձրացան, հեռացան Անուի երկինքը,
 Շան նման կծկվեցին, ձգվեցին արտաբուստ:
 Իշտարը ճչում է, ասես երկունքի մեջ...
 Վեց օր, յոթ գիշեր շրջում է քամին,
 Հողմը հեղեղելով ծածկում է երկիրը:
 Յոթներորդ օրվա սկզբին
 Հողմն ու հեղեղը կռիվն ընդհատեցին...
 Բաց արեցի օդանցքը՝ լույս ընկավ դեմքին,
 Նայեցի ծովին, լռություն էր տիրում,
 Եվ ամբողջ մարդկությունը կավ դարձավ...
 Ես ծունկի իջա, նստեցի, լալիս եմ,
 Իմ դեմքով արցունքներ հոսեցին:
 Սկսեցի դիտել բաց ծովի ափը՝
 Տասներկու ասպարեզի վրա կղզի էր բարձրացել:
 Նիցիի լեռան մոտ կանգ առավ նավը...
 Յոթներորդ օրվա սկզբին
 Աղավնի հանեցի ու արձակեցի,
 Գնաց աղավնին ու վերադարձավ,
 Տեղ չէր գտել և ետ դարձավ:
 Ծիծեռնակ հանեցի և արձակեցի.
 Գնաց ծիծեռնակն ու ետ դարձավ...
 Ագռավ հանեցի ու արձակեցի.
 Իսկ ագռավը գնաց ու ջրի նվազելը տեսավ,
 Չվերադարձավ. Կռռում է, ուտում ու կեղտոտում,
 Ես ելա, չորս կողմերին զոհաբերություն արեցի...
 Աստվածներն առան բարի բույրը,
 Աստվածները ճանճերի պես հավաքվեցին զոհողի շուրջը:

«Поэзия и проза Древнего Востока», М., 1973, էջ 212–214:

3. Բաբելոնական առասպելն աշտարակ կառուցող աստվածների մասին

Երբ աստվածները՝ մարդկանց նման,
Բեռ էին կրում, կողովներ քարշ տալիս,
Աստվածների զամբուղները հսկայական էին,
Ծանր՝ աշխատանքը, ձախողումը՝ մեծ
Եվ Տիգրիս գետը նրանք խորացրին,
Խորացրին նաև Եփրատը
Եվ տքնում էին ջրային խորքերում՝
Նրանք Էնկիի համար կացարան էին պատրաստում
Նրանք Ապսուն կանգնեցրին Էնկիի համար...
Նրանք հասցրին նրա կատարին...
Երկու և կես հազար տարի
Նրանք զօր ու գիշեր տքնելով աշխատում են:

«Я открюю тебе сокровенное слово», М., 1981, էջ 51-52:

Ի վերջո, աստվածներն ապստամբեցին, և որպեսզի նրանց աշխատանքից ազատի, Նինտու աստվածուհին ստեղծեց մարդկանց, որոնք կառուցելու էին աշտարակներ ու տաճարներ: Սկզբնապես մարդիկ յոթ զույգ էին, բայց հետո նրանք բազմացան:

«Էնումա էլիշ» պոեմում այդ շինարարությունն մասին պատմվում է գրեթե նույնը: Մարդուկի՝ Թիամատ վիշապին հաղթելուց հետո Անուննակի աստվածները Բաբելոնը «Աստծու դարպասները» կառուցելու հրաման ստացան.

«Աստծու դարպասները» կառուցեցե՞ք՝ ինչպես ուզում էիք:
Աղյուսներ շարեցե՞ք, ստեղծեցե՞ք մեհյան:
Բահերը շարժեցին Անուննակիները:
Առաջին տարին տաճարի համար աղյուս պատրաստեցին:
Երկրորդ տարվա գալուն
Էսագիլայի¹ գլուխը, Ապսուի նման, կանգնեցրին:
Ապսուի մոտ բարձր բուրգ կառուցեցին:

«Я открюю тебе сокровенное слово», М., 1981, էջ 46:

4. Աստվածաշնչական ապագություն

Ծննդոց Գիրքը ժողովուրդներին բաժանում է երեք մեծ խմբի. Հաբեթյաններ, Քամյաններ և Սեմականներ: Միջերկրածովյան ժողովուրդների այդ բաժանումը գիտություն մեջ պահպանվել է մինչև օրս: Ունենալով ընդ-

¹ Էսագիլա՝ աշտարակ:

հանուր ցեղային հատկանիշներ՝ նշված երեք խմբերը հիմնականում տարբերվում են լեզվով. շնայած քամյանները նեգրոիդ խառնուրդ ունենին:

1. Հարեթյաններ (Հարեթի հետնորդները, որ պատկանում են հնդեվրոպական լեզվախմբին). *նշված են Մննդոց Ժ գլխում: Գրեթե բոլորը կարող են նույնացվել հայտնի ժողովուրդներին.*

Գամեր	-	կիմմերներ
Ասքանազ	-	սկյուլթներ
Մադան	-	մարեր, մեդացիներ
Թորգոման	-	փոքրասիական ցեղեր ¹
Հավան	-	հելլեններ (հույներ)
Ելիսա	-	հավանական է կրետացիները
Թոբել	-	խեթական խմբերից մեկը
Թիրաս	-	Իսպանիայի հին ցեղերը
Մոսոք	-	մոսքեր
Կիտտիմ	-	Կիպրոսի բնակիչներ
Թարսիս	-	հավանաբար էգեացիներ
Դոդանիմ	-	Ռոդոս կղզու բնակիչներ ² :

2. Քամյաններ (Քամի հետնորդներ, քամական լեզվաընտանիքի ժողովուրդներ).

Քուշ	-	եթովպացիներ
Մեստրեմ	-	եգիպտացիներ

Քանանի ու նրա հետնորդների մասին տե՛ս ստորև՝ 3. կետը:

3. Սեմականներ (Սեմի հետնորդներ, սեմական լեզվաընտանիքի ժողովուրդներ).

Ելամ	-	էլամացիներ
Արամ	-	արամեացիներ
Ասուր	-	ասորեստանցիներ
Հուս	-	հարավպաղեստինյան ցեղեր
Արփաքսազ	-	հավանաբար խալդեր (քաղդեացի)
Եբեր	-	եբրայեցիներ

Քանի որ քանանացիները համարվում էին պիղծ ժողովուրդ՝ Մննդոց Գիրքը նրանց դասում է քամյանների շարքը: Բայց ազգագրության տեսակետից նրանք սեմական էին.

¹ Ասքանազն ու Թորգոմը կապվում են Արարատյան երկրի և թագավորության հետ. – *Ճան. թարգմ.:*

² Եբր. Բ և Դ տառերի նմանության պատճառով է առաջացել այս տարբերությունը, և Դոդանիմը կարելի է կարդալ նաև Ռոդանիմ, որ ավելի մոտ կլինի կղզու անվանմանը՝ Ռոդոս. – *Ճան. թարգմ.:*

- Սիդոն - հյուսիսային քանանացիներ (փյունիկեցիներ)
 Հեբուսացիներ - պաղեստինյան ցեղ
 Ամորհացիներ - ամորհացիներ

Սեմական էին նաև Միջագետքում, Սենաար երկրում (Շումեր, եբր. ܨܘܡܝܐ ՇՆԵԱՐ) ապրող բաբելացիները: Ծննդոց ժ 10-ում թվարկված քաղաքները միջագետքյան քաղաքակրթության հին կենտրոններն են. Բաբելոն, Որեք (Ուրուկ), Աքադ և Քաղանե (Քալաթ): Միջագետքյան Նեբրոթ թագավորը պատկերված է որպես մեծ որսորդ (Ժ 8-10): Հին Կտակարանում Ասորեստանը «Նեբրոթի երկիր» է կոչված (Միք. Ե 6): Ասորեստանյան թագավորներն իրոք հռչակվել են որպես որսորդ և սիրում էին իրենց պատկերել առյուծի դեմ գոտեմարտելիս: Որոշ մեկնաբաններ Նեբրոթի անունը կապում են Բաբելոնի ասորեստանյան նվաճող Տուգուլտի-Նունուրտի Առաջինի անվան հետ (Բ. Ծ. ա. ԺԳ դար):

ԱԲՐԱՅԱՄ. ՆԱՀԱՊԵՏՆԵՐ

(Ծննդոց ԺԱ-Ծ)

Ք. ծ. ա. ԺԹ-ԺԷ դարեր

§ 20. Սուրբ երկիր Աբրահամի ծագումը (Ծննդոց ԺԱ 16-26)

Աստվածաշունչը կարելի է համարել առաջին գիրքը, ուր մարդկության ուղին դիտարկվում է համաշխարհային-պատմական տեսանկյունից: Եթե նեղոսյան պատումները խոսում են եգիպտացիների ծագման մասին, Միջագետքի առասպելները՝ շումերների ու բաբելացիների, ապա Հին Կտակարանում Աստծու ժողովրդի ճակատագրի պատմությանը նախորդում է աշխարհի սկզբի և ամբողջ մարդկային ցեղի պատումը:

Այդ նախաբանի հիմնական բովանդակությունը, ինչպես տեսանք, ամփոփված է երկու կարևոր նյութերում. բարի Արարչի իմաստությունը և մարդու անկումը: Ծննդոց ԺԱ-ից սկսվում է նախապատրաստությունը՝ պատմելու այն մարդկանց մասին, ովքեր արձագանքում են Աստծու կոչին, և որոնց վիճակված է հիմնադրել հինկտակարանյան Եկեղեցին: Այստեղ նախանշվում է պատմության հոգևոր էության խորհրդանշական՝ «սրբապատկերային» բացահայտումից անցում դեպի մասնավոր փաստեր: Գործողության վայրը Մբ. Երկիրն է: 2000 տարվա ընթացքում՝ Աբրահամից մինչև ավետարանական ժամանակներ, Գիրքը փրկության պատմության իրադարձությունների վկան է լինելու: Աստծու խոսքն ընթերցել և ուսումնասիրելը դժվար է, առանց սուրբգրային երկրի աշխարհագրության ու պատմության իմացության:

1. Սբ. երկրի անվանումն ու դրությունը: Պաղեստինը գտնվում է Մերձավոր Արևելքի կենտրոնում, երեք աշխարհամասերի սահմանին, Սիրիայի և Սինայի անապատի միջև: Սրա հին անվանումը՝ Քանան (եբր. քանան - ՔենԱԱն) եգիպտական և բաբելոնյան վավերագրերում հանդիպում է Ք. ծ. ա. երկրորդ հազարամյակի կեսերից: Հավանաբար այդ անունը կապված է կիննախի (ծիրանագույն) բառի հետ: Սիրիա-պաղեստինյան ծովա-

փին հնուց արտագրում էին ծիրանագույն ներկ¹: Հունական փոփոխ (պուր-պուր) բառից ծագել է Փյունիկիա անունը: Այն բանից հետո երբ ժԲ դարում Արևմտյան Քանանը գրավեցին փղշտացիները, հույներն սկսեցին երկիրն անվանել Պաղեստին: Իբրև կանոն Աստվածաշունչն այն անվանում է էՐԵՑ ԻՍՐԱՅԷԼ (եբր. יִשְׂרָאֵל) Իսրայելի երկիր:

2. Բաժանումը մարզերի: Երկրի տարածքը մոտավորապես 26 հազար քառակուսի կիլոմետր է: Հյուսիսից հարավ այն կիսում է նեղ և ոչ նավարկելի Հորդանան գետը: Հոսելով Լիբանանի լեռներից՝ գետն իրեն ճանապարհ է հարթում ոլորուն կիրճով և վերին հոսանքում տարածվում է՝ կազմելով Քեններեթը, կամ Գեննեսարեթի լիճը (20x9 կմ), ապա իջնում է հարավ և թափվում Մեռյալ ծովը²: Այս ծովն ընկած է երկրագնդի ամենախոր իջվածքում: Աղբերի մեծ կուտակման պատճառով Մեռյալ ծովում բնավ կյանք հնարավոր չէ:

Հորդանանից արևելք Գաղաազի սարահարթն է, խիստ կտրտված տեղանք, որ նշանավոր է իր արոտավայրերով:

Գետից հյուսիս-արևելք ընկած տարածքը Գալիլիան է (եբրայերեն גליל - ԳԱԼԻԼ ՀԱ-ԳՈՒՄ - հեթանոսների մարզ): Դա բերրի, երբեմնի ծաղկուն մի երկիր է, ուր հարթավայրերը փոխվում են բլուրներով ու փոքր բարձունքներով: Արդեն Փյունիկիայի սահմանին Գալիլիան հարում է Կարմեղոս լեռանը:

Պաղեստինի հարավային մասը՝ լեռնոտ Հուդան, ընդհակառակն, աչքի է ընկնում խիստ չոր կլիմայով: Մեռյալ ծովի մերձակայքում այն վերածվում է անպտուղ անապատի:

3. Կլիման: Իսրայելի երկրին բնորոշ են կլիմայական կտրուկ փոփոխությունները Որոշ շրջաններում կլիման մերձարևադարձային է, այլ տեղերում՝ ավելի ցուրտ. Հերմոն լեռան վրա ամբողջ տարին ձյունը չի հալչում: Զմռանը Հուդայում երբեմն ձյուն է գալիս, բայց ընդհանրապես դա հորդ անձրևների շրջան է: Ամառն ամենուրեք շոգ է ու չոր, խոտածածկը լիովին խանձվում է:

Սուրբգրային հնագիտության նշանավոր մասնագետ Վիլյամ Օլբրայթի (տե՛ս հտ. 1, §10, կետ 2) խոսքով՝ «Պաղեստինի բարձր լեռների համեմատաբար չոր կլիման այն դարձնում է Մերձավոր ու Միջին Արևելքի ամենաառողջարար շրջաններից մեկը, բայց նաև նստակյաց ժողովուրդներով զբաղեցրած ամենաաղքատն վայրերից է»: Այդ պայմաններում իսրայելացիները դարձան բացառիկ խստաբարո ժողովուրդ, որի բնական առողջությանը նպաստել են սննդի ու մաքրության կանոնների խստագույնս հետևելը, ինչպես

¹ Ներկն ստանում էին խխունջից. – Ծան. թարգմ.:
² Աշխարհագրական սահմանմամբ այս գոյացությունը ծով չէ. – Ծան. թարգմ.:

և՛ ընկերային ու սեռական մաքրություն բարձր պահանջները: Ավելին, այդ բլուրների աղքատիկությունն ստիպել է մշտապես պայքարել իր սպարտայական գոյությունը պահպանելու իրավունքի համար: Հին Իսրայելը, այսպիսով, եղել է թոյնբիական օրենքի՝ «խստաշունչ երկրների խթանը»՝ հիանալի նմուշ: Իր ձևավորման ամբողջ շրջանում, նաև դատավորների ժամանակ, այն եղել է մեկ այլ սկզբունքի՝ «հարվածների խթանի»¹ ապշեցուցիչ օրինակ:

4. Բուսականություն: Պաղեստինն իր կլիմային համապատասխան ունի ինչպես հարավային, նույնպես և միջին լայնությունների բուսականություն: Հորդանանի փեթրին աճում են տարատեսակ թփեր, սոսի, եղեգն, պապիրուս: Գալիլիայում՝ կարմրագգիններ, խնկենի, կաղնի, ընկուզենի ևն: Գարնանը բլուրներն ու հովիտները ծածկվում են ծաղիկներով (այդ թվում վառ հողմածաղիկներ՝ ավետարանում նշված «շուշաններ»): Մշակաբույսերից տարածված են թզենին, ձիթենին, արմավենին, խնձորենին, նոնենին (արևադարձայիններն ավելի ուշ են բերվել): Հնուց աճեցրել են խաղող, ցանել ցորեն, գարի, կորեկ, բանջարեղեն մշակել:

5. Սուրբ երկրի կենդանական աշխարհը: սուրբբրային ժամանակներին քիչ բանով էր տարբերվում հարևան երկրների կենդանական աշխարհից: Այնտեղ հանդիպում էին առյուծներ ու արջեր, մինչև օրս պահպանվել են գայլեր, բորենիներ, շնագայլեր, երկարականջ աղվեսներ, եղնիկներ և փոքր կճղակավոր դամաններ² (եբր. օճՅ – ՇԱՖԱՆ, Սաղմ. ՃԳ, ռուս. սինոդական թարգմանության մեջ՝ «նապաստակ»): Թռչուններից հանդիպում էին արծիվներ, անգղներ, կաքավներ, ինչպես և արագիլ, բու ու հավալուսն: Գլխավոր ընտանի կենդանիներն էին ոչխարը, այծը և ավանակը: Զիերն ու ուղտերը հայտնվեցին միայն թագավորների դարաշրջանում: Գալիլիայում պահում էին նաև խոշոր եղջերավոր անասուններ:

6. Պաղեստինի բնակչությունը բազմհազարամյա պատմություն ունի: Գալիլիայի քարանձավներում գտնվել են քարեդարյա շրջանի կմախքներ: Ինչպես պեղումներն են ցույց տվել՝ Երիթովն ամենահին (մինչև այժմ հայտնիներից) քաղաքն է ոչ միայն երկրում, այլ նաև աշխարհում. նրա տարիքը 9 հազար տարուց ավելի է:

Պաղեստինի աշխարհագրական դիրքը՝ ռազմական ճանապարհների խաչմերուկում գտնվելը և բնական պատնեշների բացակայությունն այն դարձրել էին բաց՝ օտարերկրյա հարձակումների առջև: Նրա բնակչությունը

¹ Խոսքն անգլիացի պատմաբան-մտածող Առնոլդ Թոյնբիի (1889–1975) տեսությունների մասին է, որը մասնավորաբար ուսումնասիրել է բնության ազդեցությունը քաղաքակրթության վրա. – Շան. ռուս. խմբ.:

² Ճագարանման խոտակեր կաթնասուններ՝ Hyracoidea:

միշտ խայտաբղետ է եղել: Մոտավորապես 2300 թ. սրա լեռնային շրջաններում բնակվել են սեմական անասնապահ ամորիացիները: Նրանք միասնական պետություն չստեղծեցին, բայց այն դարաշրջանում (միջին բրոնզե) մի շարք քաղաքներ արդեն կային: Էբլայի արխիվներում (տես հտ. 1, § 12, կետ 5) հիշվում են Սողոմը, Գոմորը, Սյուբեմը, Մակեդոսը, Գազան և՛ ենթադրաբար Երուսաղեմը:

Մոտավորապես 2000 թ. հյուսիսից երկիր թափանցեցին փյունիկեցիների մերձավոր ազգակից քանանացիները: Նրանք նույնպես, ինչպես ամորհացիները, պետություն չստեղծեցին և Եգիպտոսի ու Միջագետքի թագավորների իշխանության տակ էին: Աբրահամի դարաշրջանում Ամենեմիսեթ Գ փարավոնը¹ հասավ մինչև Սյուբեմ և նվաճեց Պաղեստինի մի մասը: Անջատանջատ ցեղերն ի վիճակի չէին նրան դիմադրելու: Նույն դարաշրջանում Քանանում հայտնվեցին հնդեվրոպացիներ՝ խեթերը (խետե), խուրիները (խորե), ինչպես և այլ՝ պակաս հայտնի ցեղեր: Քանանի մշակույթի հուշարձանները ցույց են տալիս, որ այն գտնվել է Եգիպտոսի ու Միջագետքի ուժեղ ազդեցության ներքո:

7. Հին Քանանի կրոնը: Պաղեստինում գտնվել են եգիպտական ու բաբելոնյան աստվածների բավական շատ արձաններ: Մինչև Ի դարը բավարար պատկերացում չկար քանանացիների սեփական աստվածների մասին: Բայց 1929 թ. Ուզարիտի պեղումներից հետո (ներկայիս Ռաս-Շամրա) հնարավոր դարձավ վերականգնել Քանան-փյունիկյան հավատալիքների գունապատկերը:

Քանանացիների դիցարանում գլխավորը պտղաբերության աստվածներն էին: Նրանց անվանում էին Բահազ (տեր) և Մողոք (թագավոր): Դիցարանի տիրակալը՝ յոթ հիմնական աստվածների հայրը, էլն (Իլու) էր: Էլը՝ հավերժի տիրակալը, հաճախ անվանվում էր Յուլ (պտղաբերության խորհրդանիշ): Նրա կերպարի մեջ պահպանվել են հին համասեմական պաշտամունքի գծեր: Առասպելներում նա արդեն հետին դիրք է գրավում՝ աստվածների նոր սերնդի համեմատությամբ:

Էլից ու նրա կին Աշերայից ծնվեց ամպրոպի աստված Բահազ-Խադադը:



Աստարթի արձանիկներ, XVI-XIII դդ. Ք. ծ. ա.:

1 Թագավորել է 1853–1806 թթ. Ն. Բ. (XII հարստություն):

Այդ աստվածը կարևորագույն դեր էր կատարում Քանանի պաշտամունքի մեջ: Նրան անվանում էին «ամպերի մեջ շրջող» և «իշխան» (Բահադ-Ջեբուդ, որից ավելի ուշ ծագեց սատանայի անունը՝ Բեհեզդեբուդ), ու նաև Ալիյանուն՝ «հզոր» (սուրբգրային էլիոն-ը)¹:

Իր կնոջ՝ ռազմի աստվածուհու Անատի հետ Բահադը հաղթեց մահվան՝ Մութու և ծովի՝ Յամա աստվածներին: Այդ պայքարն արտացոլում էր տարվա եղանակների հերթագայությունը, երբ հաջորդաբար հաղթանակ էին տոնում ծաղկման աստվածը և երաշտի աստվածը:

Այդ երկրում, որ բերքը դժվարությամբ էր տրվում, մարդն իրեն զգում էր լիովին կախված պտղաբերության աստվածներից: Ուստի քանանացիք մարդկային պոռնոգրություններ էին կատարում, իսկ աստվածների գուլթը շարժելու համար հաճախ մանուկներ էին զոհաբերում: Քանանացիք տաճարներ էին կառուցում և աստվածների կուռքեր քանդակում: Պաշտամունքի վայրեր էին հիմնում սրբազան անտառներում, բլուրներին (եբր. ԵՐԿՈՒՆՆԱՅԻՆ - բարձունքներ) և կոթողների (եբր. ԵՐԿՈՒՆՆԱՅԻՆ - ՄԱՅԵՎՈՒՆՆԱՅԻՆ) առջև: Բնության գարնանային զարթոնքին նվիրված ցուփ տոնակատարությունները գայթակղության մշտական աղբյուր էին նրանց համար, երբ նստակյաց կյանքի անցան Քանանում:

8. Հրեա նահապետների ծագումը (Ծննդ. ԺԱ 14-31): Եթե Սաղմոսների մեջ տեսանելի է քանանյան գրականության, իսկ ուսուցողական գրքերում՝ եգիպտական գրականության ազդեցությունը, ապա Աստվածաշնչի հնագույն մասերում ակնհայտ է կապը Միջագետքի հետ: Այդ կապը չկար Մովսեսի դարաշրջանում և առաջին թագավորների տիրապետության ժամանակ: Սրա բացատրությունը գտնում ենք Ծննդոց Գրքում, որը Միջագետքը նշում է իբրև աստվածաշնչական նահապետների Հայրենիք. հենց նրանցից են գալիս Հին Կտակարանի հնագույն ավանդությունները:

ա) Թարան (եբր. ԵՐԿՈՒՆՆԱՅԻՆ - ԹԵՐԱՆԱՅԻՆ)՝ Աբրահամի հայրը, Աբրահամն ինքը, իր եղբայրները՝ Նաբոթն ու Արանը, Նաբոթի թոռ Լաբանը ապրում էին Փատան-Արամ (կամ Միջագետքի Արամ)² մարզում: Այդ մարզը Հյուսիսային Միջագետքում էր: Դրա կենտրոնն Խառան քաղաքում ծաղկած էր Լուսնի (Մին) պաշտամունքը, որը նրան կապում էր այդ պաշտամունքի մյուս կենտրոնին՝ Ուրին: Աստվածաշունչը վկայում է, որ հրեա ժողովրդի նախնիները հեթանոս էին: «Նախնիսնում ձեր հայրերը,- ասում է Հեսու Նավեն իսրայելացիներ-

¹ Եբրայերեն բնագրում Ծննդ. ԺԴ-ի Բարձրյալ Աստված-ն է:

² «Արամ Նահարայն, այսինքն՝ Արամ ի մեջ երկուց գետոց, Ծննդ. ԻԴ 10, կամ Փատան Արամ, այսինքն դաշտ Արամայ, Ծննդ. ԻԵ 20». տե՛ս «Բառարան Սուրբ Գրոց», Պոլիս, 1881. - Ծան. թարգմ.:

րին,- Թարան՝ Արրահամի հայրը և Նաբորի հայրը, պանդխտել են գետի¹ այն կողմը և պաշտել օտար աստվածներին» (Զեաու ԻԴ 2):

Ը) Թեպետ Աբրահամի նախնիների ազգաբանությունը հիմնված է բանավոր ավանդույթյան վրա, ընդհանուր առմամբ այն կարող է պատմականորեն հավաստի համարվել: Հին դարոցի քննադատներն այն մտացածին էին համարում, սակայն Մարիում² (Միջագետք) գտնված բնագրերը թվարկում են քաղաքներ ու վայրեր, որոնք պահպանել են հրեական նախնիների հուշը. Նախուր, Փարախի, Փալեկի, Սարուխի (հմմտ. Նաբոր, Թարա, Փաղեկ, Սերուք): Ք. ա. մոտավորապես 2300 թ. էբլում թագավորում էր էբրիումը, որի անունը համահունչ է Եբերին (եբր. ԵԲՄ - էվեթ), և որին կոչում էին հրեաների նախահայր (Ծննդ. Ժ 21):



Զիկուրատի ավերակներ Ուրում՝ Աբրահամի ծննդավայրում

Ինչևէ, հնարավոր է «հրեա» բառը (հրեաները - եբր. ԵԴԵԲՄ - իվրիթ՝ այն ափից եկածներ) կապված է խաբիրի³ եզրույթի հետ, որ հաճախ է հանդիպում եգիպտական և միջագետքյան հուշարձաններում: Այդպես էին կոչվում տարացեղ կիսաքոչվոր տոհմերը, որ ապրում էին քաղաքների արվարձաններում: Նրանց հայտնվելը կապված էր ցեղերի զանգվածային գաղթի հետ Գ և Բ հազարամյակներին: Նրանցից ոմանք, գալով սիրիական անապատներից՝ հաստատվեցին Միջագետքում և այնտեղ հիմնեցին Բաբելոնի թագավորությունը, մյուսները թափանցեցին Ասորիք և Քանան: Նահապետների թափառումները հավանաբար այդ գաղթերի մասին էին: Ըստ Ծննդ. ԺԱ 31-ի՝ Թարան քաղղեական Ուրից էր ելել, Պաղեստին գնալու համար, բայց հիմնավորվել էր Արամում (Խարրան քաղաքում): Յոթնասանիցի մեջ Քաղղեական Ուրի փոխարեն պարզապես «Քաղղեական երկիր» է: Իսկապես, Ուրը հեռու հարավում էր, ընդ սմին Ծննդ. ԻԴ 4-ում Աբրահամն իր հայրենիքն

¹ Այսինքն Եփրատից այն կողմ:

² Մարի - հնագույն քաղաք-պետություն Միջագետքում, այժմ՝ Թեյ-Հարիրի բլուր Սիրիայում: Կործանել է ն. Ք. 1758 թ. բաբելական Համմուրաբի թագավորը:

³ Տե՛ս ստորև՝ § 23, կետ 3.գ - խմբ.:

անվանում է Միշագետքի Արամ: Բայց պատճառ չկա ժխտելու, որ ցեղը որոշ ժամանակ կարող էր բնակվել Ուրում՝ լուսինը պաշտողների քաղաքում: Հստ երևույթին նրան այդտեղ գնալու դրդել է ռազմամով ամորհացվոց շարժը: Սակայն որոշ պատմաբաններ համարում են, որ աստվածաշնչական Ուր կոչված քաղաքը նույնական չէ շումերական Ուրի հետ (հարավում), այլ գտնվել է հյուսիսում՝ էբլի մոտակայքում:

Ծանոթություն

Պետք է նշել, որ իսրայելացիք իրենց «եվրեյ» (հրեա) չէին անվանում որպես կանոն: Այդ բառը գլխավորապես այն ժամանակ էր կիրառվում, երբ նրանց մասին խոսում էին այլ ցեղերի մարդիկ, կամ երբ նրանք շփվում էին այլ ցեղերի հետ (Ծննդ. ԼԹ 14, 17, Խ 15, ԽԱ 12, Ել. Ա 19, Բ 6-7, Գ 18, Ա Թագ. Դ 6):

Կամ իրենց ժամանակավոր բնակավայրի (Արամում), կամ արամեացիների հետ ազգակցական կապի պատճառով իսրայելացիների նախնիները կոչվում էին «Թափառական արամեացիներ» (Բ Օր. ԻՉ 5)¹: Արամեացիք ամորհացիների ցեղակից (կամ ճյուղ) էին և պատմության մեջ հայտնվեցին Գ և Բ հազարամյակների սահմանին: Ավելի ուշ նրանց թագավորության մայրաքաղաք դարձավ Դամասկոսը: Եթե նահապետները նրանցից են ծագել, ուրեմն նրանք խոսել են արամեերեն և միայն Պաղեստինում յուրացրին քանանացիների լեզուն, որի բարբառն է հին եբրայեցերենը (հմմտ. Եսայի ԺԹ 18):



Աբրահամի ժամանակակից սեմիթ-քոչվորները: Եգիպտական դամբարանի պատերի զարդանկարներից (թ. ծ. ա. XIX դ.)

Չ) Այժմ դժվար է որոշել՝ Աբրահամի նախնիներից ով է եղել պատմական դեմք, իսկ ով էպոնիմ (տոհմի մարմնավորող), բայց Աբրահամը, Իսահակը և Հակոբը Սբ. Գրքում ներկայացված են իբրև կատարելապես իրական անձեր: Տակավին վերջերս շատերն աշխատում էին հանձինս նրանց տեսնել առասպելական դեմքեր, գրեթե հին աստվածների (տես Никольский Н., Избранные произведения по истории религии, М., 1974, էջ 48): Բայց արդի պատմաբանների մեծամասնությունը հերքեց այդ վարկածը: Երեք նահապետների անունները

¹ Հայերենում այլ է՝ «թափառական արամեացու» տեղը ունենք «թողեց Ասորեստանը» (հետևում է Յոթանասնից թարգմանությանը) – խմբ.:

ոչ մի տեղ հիշված չեն որպես ցեղերի կամ աստվածների անուններ, փոխարենը բավական հաճախակի են հանդիպում իբրև այն դարաշրջանի սեմականների անձնանուն (Աբրահամ, Հակոբ-էլ ևն): Նահապետների վերաբերյալ պատումի մանրամասներն արտացոլում են Մովսեսից շատ առաջվա սովորույթներն ու կյանքի պայմանները, որ տիրում էին Արևելքում:

«Աբրահամը, Իսահակը և Հակոբը,- գրում է Վ. Օլբրայթը,- այժմ չեն ներկայանում իբրև առանձին անձեր, առավել ևս՝ ուշ շրջանի իսրայելական պատմության ինչ-որ մտացածին դեմքեր: Նրանք այժմ մեր առջև հառնում են որպես իրենց դարի ճշմարիտ զավակներ և իրենց ժամանակի իրական հերոսներ, որ կրել են նրա անունները, քայլել նրա ճամփաներով, այցելել նրա քաղաքները (գլխավորապես Խառան և Նաբո) և ունեցել են նույն սովորույթները, ինչ և նրանց ժամանակակիցները» («Археология Палестины»):

Նահապետների պատմությունը շատ բաներում այլ է, քան Մովսեսի և մարգարեների կրոնը: Այն իր վրա կրում է հնության գծեր, ցույց տալով իր խորը նախամովսիսյան արմատները:

Հարցեր կրկնության համար

1. Նահապետների պատմությունն ինչո՞վ է տարբերվում Ծննդոց Գրքի նախաբանից:
2. Սուրբ Երկիրն ի՞նչ անուններ է ունեցել:
3. Ի՞նչ չափեր ուներ, և ի՞նչ յուրահատկություններ ուներ նրա աշխարհագրական դիրքը:
4. Ի՞նչ մասերի է բաժանվում այն:
5. Նկարագրեցե՞ք Սուրբ Երկրի բնական պայմանները, բուսականությունն ու կենդանական աշխարհը:
6. Ի՞նչ ժողովուրդներ էին ապրում հին Քանանում:
7. Քանանացիների գլխավոր աստվածներ որո՞նք էին:
8. Ինչո՞վ է հաստատվում իսրայելացիների նախնիների վերաբերյալ պատումների հավաստիությունը:
9. Ինչո՞վ է հաստատում Աբրահամի և նահապետների վերաբերյալ պատումների հավաստիությունը:

§ 20-ի Հավելված

1. Հյուսիսային Քանանի բնությունն Աբրահամի դարաշրջանում

Աբրահամին մոտ դարաշրջանում, եգիպտական թագավորի զայրույթից խուսափելով, պալատական Սինուխեն փախավ Քանան: Նա հիմնավորվեց ասորի ցեղերի մի առաջնորդի մոտ:

«Այնտեղ աճում էր թուզ և խաղող,- գրում է Սինուխեն,- և գինին ավելի շատ էր քան ջուրը, և՛ մեղրն էր առատ, և՛ ձիթապտղի յուղը. ծառերի վրա՝ ամեն տեսակ պտուղներ... Ամեն օր ինձ բերում էին հաց ու ըմպելիք, նաև խաշած միս, ու տապակած թռչնամիս, և դա, չհաշված անապատի վայրի երեները, որ ինձ համար որսում ու բերում էին իմ առջև, և չհաշված այն, որ բերում էին իմ շները»:

Рассказ Синухе. “Повесть Петеисе”, III, М., 1978, էջ 96-97:

Բայց հարկ է ընդգծել, որ այդպիսի ծաղկուն մարզեր կային միայն հյուսիսային Քանանում:

2. Պաղեստինի հողագործական օրացույցը

Այդ օրացույցը գտնվել է 1908 թ. Երուսաղեմից 25 կմ հեռու և թվագրվում է Դավիթ-Սողոմոնի դարաշրջանով (Թարգմանություն մեջ ամսանունները տրվում են փակագծով): Սա հայտնաբերված եբրայեցերեն ամենահին բնագիրն է (փյունիկյան այբուբեն):

Երկու ամիս (սեպտեմբեր – հոկտեմբեր) – պտուղների քաղ

Երկու ամիս (նոյեմբեր – դեկտեմբեր) – ցանքս

Երկու ամիս (հունվար – փետրվար) – ուշ ցանքս

Ամիս (մարտ) – կտավատի կտրում

Ամիս (ապրիլ) – գարու հունձ

Ամիս(մայիս) – մնացած ամեն ինչի հունձ

Երկու ամիս (հունիս – հուլիս) – խաղողի վազի Էտում

Ամիս (օգոստոս) – ամառային բերք (կորեկ և քնջուլթ)

Թարգմ. Ի. Ն. Վիննիկովի. ըստ ХДВ.

1963, էջ 302:




Երկրագործական օրացույց
Գեզերից (Ք. ծ. ա. X դար)

3. Նահապետների պատմության ժամանակագրական սահմանները

Սուրբգրական պատմություն	Հին Արևելք
Մոտ. 1850 թ. Աբրահամ և Իսահակ	Ամենեմխեթ Գ փարավոնը (ԺԹ դարի Բ կես) իրեն Է ենթարկում Քանանի մի մասը 1894 թ. Բաբելոնյան առաջին հարստության սկիզբը

Մոտավորապես 1750-1700 թթ. Հակոբ և Հովսեփ	Մոտավորապես 1700-1670 թթ. - խռովու- թյուններ Եգիպտոսում Հիբոսների արշավանքը (1720-1552) Համնուրաբի (1792-1750) - Բաբելոնի թագա- վոր
---	---

4. Նահապետների տոհմագրությունը



**5. Սրբական թվեր
նահապետների մասին պատումներում**

Ծննդ. ԺԸ 11-12-ում ասված է, որ Աբրահամն ու Սառան «ծերացել էին և նրանց տարիքը առաջացել էր»: Բայց ավելի առաջ (Ծննդ. ԺԲ 4), երբ Աբրահամը ելավ Խառանից՝ արդեն իսկ 75 տարեկան էր: Արդի մեկնիչները սովորաբար հաշվում են, որ նահապետների իրական տարիքը հայտնի չէ, իսկ Հին Կտակարանի ցուցումները պայմանական են, այդ թվերը խորհրդանշական են:

Նահապետ	Հասակը	Թվերի գումարը
Աբրահամ	175 տարեկան	7x(5x5) 17

Իսահակ	180 տարեկան	5x(6x6)	17
Յակոբ	147 տարեկան	3x(7x7)	17

§ 21. Արրահամը «հավատացյալների հայր»
(Ծննդ. ԺԲ-ԻԵ)

1. Արրահամի նշանակությունը սրբազան պատմության մեջ: *Ուղղափառ Եկեղեցին ի դեմս Արրահամի հիշում է ոչ միայն Հիսուս Քրիստոսի հեռավոր նախնուն (Մատթ. Ա 1), այլ «հավատացյալների» հոգևոր «հորը»: Նոր Կտակարանում Արրահամի անունը հանդիպում է 72 անգամ: Տերն Ինքն աստվածաշնչական հավատի ճշմարիտ Աստծուն անվանում է «Արրահամի, Իսահակի ու Հակոբի Աստված» (Մատթ. ԻԲ 32): Պողոս առաքյալի խոսքով՝ Արրահամը, որ անսահմանորեն վստահեց Աստծուն, «մեր բոլորի հայրն է», որ և նա «որ անհուսության մեջ էր, հուսով հավատաց, որ ինքը կլինի բալում ապգերի հայր» (Յոհն. Դ 16-18): Նահապետի այս նշանակությունը գիտակցվում էր տակավին հինկտակարանյան դարաշրջանում: Բ Մնաց. Ի 7-ում հեղինակն Արրահամին անվանում է Աստծու սիրելի, իսկ Սիրաքը գրում է, որ նա «Փորձության մեջ հավատարիմ մնաց, ուստի Տերը երդմամբ նրան խոստացավ, որ նրա սերնդով օրհնվում են բոլոր ժողովուրդները» (ԽԴ 21-22)¹: Այսպիսով, նահապետի անձի ու հավատի մեջ Աստծու խոսքը տեսնում է այնպիսի գծեր, որոնք նրան դարձնում են հինկտակարանյան Եկեղեցու ճշմարիտ նախահայր և դրանով կապում են Նոր Կտակարանի Ընդհանրական Եկեղեցու հետ: Ծննդ. ԺԲ-ից սկսած Արրահամն ու իր ժառանգները դառնում են պատումի առանցք: Նրանց մեջ են կենտրոնանում Աստծու մտահղացումները աշխարհի հոգևոր ապագայի մասին:*

2. Արրահամի կոչումը (Ծննդ. ԺԲ 1-9, ԺԵ 1-6): *Դա տեղի ունեցավ Ք. ա. ԺԹ դարում, Տրոյական պատերազմից ու Հռոմի հիմնադրումից շատ ու շատ առաջ: Փոքր, կիսաքոչվոր տոհմը (մոտավորապես 300 մարդ, չհաշված կանանց և երեխաներին. - Ծննդ. ԺԴ 14) թողեց Փաղան-Արամ² հարթավայրը և ուղևորվեց դեպի արևմուտք՝ Քանանի երկիր: Առաջնորդն էր Արրահամը՝ ավագը, կամ շեյխը (արաբերեն՝ ավագ): Շատ ցեղեր այն ժամանակ երկրից երկիր էին փոխադրվում: Բայց Արրահամի գաղթը տեղի սովորական փոփոխություն չէր: Նա իր հարազատներին չլքեց լավագույն արոտավայրերի համար, այլ Աստծու կոչին անսալով:*

¹ Գրաբարում այս գլուխը չկա. - Ծան. թարգմ.:
² Հայերենում այս տարածքը անվանվում է Սիջագետք, կամ Արամի դաշտ՝ Փաղան Արամ (Ծննդ. ԻԵ 20) - խմբ.:

Մեզ համար գաղտնիք է մնում, թե ինչպես տեղի ունեցավ կրոնական հեղաբեկումը նահապետի հոգում: Ռացիոնալիստները¹ փորձել են Աբրահամի հավատն առ մեկ Աստված բացատրել սեմականների միաստվածության հակումով: Բայց պատմության փաստերը հերքում են այդ վարկածը: Բոլոր սեմական ժողովուրդները՝ բաբելացիները, փյունիկեցիները, քանանացիները, ասորեստանցիները, մինչիսլամական արաբները վառ արտահայտված բազմաստվածության հետևորդներ են:

Աստվածաշունչն Աբրահամի կոչման մասին ասում է որպես Աստվածային Նախախնամության հատուկ գործ: Բիբլիական հավատքի աղբյուրները ոչ թե մարդու մեջ են, այլ՝ Աստծու կամքի:

«Աստված ասաց Աբրամին. Յեռացիր քո երկրից, քո ցեղից ու քո հոր տնից և գնա այն երկիրը, որ ցույց կտամ քեզ: Քեզ ավելի մեծ ցեղի նախահայր պիտի դարձնեմ, պիտի օրհնեմ քեզ, պիտի փառավորեմ քո անուն, և դու օրհնյալ պիտի լինես: Պիտի օրհնեմ քեզ օրհնողներին, իսկ քեզ անհոծողներին պիտի անհոծեմ: Ընդունվ պիտի օրհնվեն աշխարհի բոլոր ժողովուրդները» (Ծննդ. ԺԲ 1-3):

Այլ կերպ ասած՝ հինկտակարանյան Եկեղեցու պատմությունն սկսվում է Ելքի կոչով, որը կկրկնվի Մովսեսի օրերին և Բաբելոնյան գերության վերջում: Աբրահամն անսաց երկնային ձայնին և համարձակ ճամփա ընկավ դեպի իրեն օտար երկիրը՝ չերերալով և ոչինչ չհարցնելով: Միայն Քանանում, ուր Աստված ոչ միայն «ասում է», այլ հայտնվում է տեսիլքի մեջ Աբրահամին, նահապետը հարցնում է, թե ինչպես կարող է իրագործվել խոստումը, երբ ինքն անզավակ է: Բայց Աստված ևս մեկ անգամ հաստատում է խոստումը: «Աբրամը հավատաց Աստծուն, և այդ հավատը իր համար արդարություն համարվեց» (Ծննդ. ԺԵ 6):

3. Աբրահամի անձը: Սովորաբար ժողովրդական զրույցները հերոսներին պատկերում են նրանց կատարյալ դարձնելով: Դրան հակառակ Աստվածաշունչն Աբրահամին պատկերում է իրական կերպով՝ նրա բոլոր թուլություններով հանդերձ: Նա գերմարդ չէ: Առաջին հայացքից՝ նա իր ժամանակի սովորական զավակն է: Նրան խորթ չեն երկմտանքն ու վհատումը (ԺԵ 2), երբեմն նա փոքրոգություն է ցուցաբերում (ԺԲ 10-20, Ի 1-8), չի կարողանում հակադրվել կնոջ շար պահանջներին (ԺՁ 1-6): Սակայն այդ թուլություններով հանդերձ ավելի ակնհայտ են դարձնում Աբրահամի մարդկային արժանիքները: Նա ընկերասեր է և ձգտում է խուսափել վեճերից (ԺԳ 8-10), բայց եթե պետք է՝ պատրաստ է զենքը ձեռքին պաշտպանել ազգականին (ԺԴ): Նրա համար հյուրընկալությունը սրբազան օրենք է (ԺԸ 1-8, հմմտ. Մատթ. ԻԵ

¹ Ռացիոնալիզմ, բանականապաշտություն (լատ.՝ ratio – բանականություն), փիլիսոփայության ուղղություն, ըստ որի մարդու գործողության և ընկալման հիմքը բանականությունն է (Դեկարտ, Լայբնից, Սպինոզա, Գեգել և այլն) – խմբ.:

35): Նա չի ցանկանում բարեկամանալ անառակ և անօրեն քանանացիների հետ և որդուն հարս բերելու նպատակով մարդ է ուղարկում հայրենի Արամ (ԻԴ): Մարգարեի նման (Ի 7) Աբրահամը մերժում է նրանց նողկալի գործերը: Իզուր չէ, որ քանանացի Բահաղների դեմ մեծ պայքարող Եղիան դիմելու է «Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստծուն» (Գ Թագ. ԺԸ 36): Այնուամենայնիվ Աբրահամը բնավ թշնամանք չի ցուցաբերում Քանանի բնակիչների նկատմամբ և հաճույքով նրանց հետ միություն է կնքում (ԻԱ 22-34): Ավելին, նա նույնիսկ աղոթում է Աստծուն՝ միջնորդելով մեղավոր սողոմացիների (ԺԸ 22-23) և Գերարայի Աբիմելեք արքայի համար (Ի 7, 17):

4. Աբրահամի հավատը: «Հավատացյալների հորը» վերաբերող ասքը կառուցված է երեք համանման ավանդույթյան հիման վրա (Ե, Յ, Է, Ք, Ք.): Այն պարունակում է չորս հիմնական թեմա. 1) Աբրահամի Աստվածը, 2) Աբրահամի հավատքը, 3) Խոստումը, 4) Ուխտը:

ԱՔՐԱՅԱՄԻ ԱՍՏՎԱԾԸ (հետագայում կոչված՝ «Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստված»): Նահապետների ժամանակի հատուկ անուններում հաճախ հանդիպում է Աստծու անունը՝ նախդիրներով. Աբ - հայր, ախ - եղբայր, աւմ - ժողովուրդ: Այս փաստը յուրօրինակ ավանդույթուն է ցույց տալիս. անձնական հովանավոր համարել ոչ թե այս կամ այն երկրի աստվածությունը, այլ այն Աստծուն, որը սերտ, ասես «ազգակցական» կապ ունի տվյալ ընտանիքի կամ համայնքի հետ (օրինակ՝ Աբիմելեք նշանակում է «աստվածային թագավոր - իմ հայր», Իլաբիխա՝ «քո հոր աստվածը»): Այսպիսի անձնական, ընտանեկան կրոնները հետագայում անհետանում են:



Նահապետների ժամանակների խեցեգործական անոթներ (Ք. ծ. ա. XIX դար):

Աբրահամն այնպես վարվեց ինչպես իր ժամանակակիցները՝ իր հովանավոր Հայր ճանաչեց Աստծուն, որին անվանեց Բարձրյալ Աստված (Եբր. Եր 17 և - էլ էլիոն) կամ Ամենազոր Աստված (Եբր. Եր 17 և - էլ ՇԱԴԴԱՅ), կամ Տիեզերքի (հավիտենականության) Աստված (Եբր. ԸՆ 17 և - էլ ՕԼԱՄ), կամ, Ամենատես Աստված (Եբր. Եր 17 և - էլ ՌՈՒԿ), ի վերջո, պարզապես իր Աստվածը («Աբրահամի Աստված». հմմտ. Ծննդ. ԺԴ 18, ԺԵ 13, ԺԶ 1, ԻԱ 33, ԻԸ 13): Բայց այդ Աստվա-

ծը տարբերվում էր հեթանոսական աստվածություններից. Նա պահանջում էր հրաժարումն մյուս պաշտամունքներից, Նա պաշտամունքային պատկերներ չուներ, Նա երկնքի և երկրի տիրակալ էր համարվում (ԺԴ 19):

Զգտելով թափանցել Աբրահամի՝ Աստծու հավատքին դառնալու խորհրդի մեջ՝ ավելի ուշ ավանդությունները նրա հոգևոր որոնումների երկար ընթացք էին պատկերում: Հովսեպոս Փլավիոսի խոսքերով՝ նահապետն Արարչի հավատքին է հանգել «երկրի ու ծովի, արևի ու լուսնի և երկնային երևույթների» դիտարկման և իմաստավորման արդյունքում: Քանի որ (տրամաբանում էր նա), եթե բոլոր այդ մարմիններին հատուկ լիներ ուժը (սեփական, ինքնուրույն), ապա դրանք իրենք հոգ կտանեին իրենց միջև կարգ պահպանելուն, բայց քանի որ այդ բանը չունեն դրանք, ապա ակնհայտ է, որ դրանք օգտակար են մեզ համար՝ ոչ թե իրենց հատուկ սեփական զորության, այլ ի հետևանս դրանց Հրաման տվողի իշխանության, որին՝ Միակին է պատշաճ պատիվ և գոհություն ցուցաբերել» (Древн., 1, 7, 1): Նույնպիսի ավանդություն կա նաև իսլամում, որն իր ազգաբանությունն սկսում է Աբրահամից (տես հտ. 1, § 21, Հավելված):

Ամեն ինչ ստիպում է մտածել, թե աստվածաշնչական պատումներն աշխարհի ու մարդու սկզբի մասին իրենց միջազետքյան երանգով հանգում էին Միջագետքի ծնունդ՝ Աբրահամին:

Ծանոթություն

Ծննդոց Գրքի հեղինակն, Աբրահամի Աստծու մասին խոսելով, կիրառում է Եսաիվէ սրբազան անունը: Դա ժամանակագրության գիտակցված խախտում է, որ պիտի ցույց տա, թե «Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածը» նույն այն Աստվածն է՝ ինչ Մովսեսինը (հմմտ. Ել. Գ 6):

ԱԲՐԱՀԱՄԻ ՀԱՎԱՏՔԸ: Աբրահամի «արդարությունը» համարվում է ոչ թե այն, որ նա հավատաց, որ գոյություն ունի Աստված, այլ՝ հավատաց և վստահեց Նրան: Սուրբ Գիրքը նկատի չունի Աստծու գոյությանը տեսականորեն հավատալը: Այդպիսի հավատ կարող են ունենալ հեթանոսները ևս (հմմտ. Հռոմ. Ա 19): Բայց հեթանոսները հաճախ աստվածությունը պատկերացնում էին մարդու նկատմամբ անտարբեր և նույնիսկ շարամիտ: Իսկ Աբրահամի մեծությունն այն էր, որ նա ներծծված էր Արարչի նկատմամբ վստահությանմբ: Անվերապահորեն հետևելով Նրա ցույց տված ճանապարհին՝ Աբրահամն ապացուցել է իր հավատն Աստծու բարության հանդեպ: Եբրայական **נִשְׁבָּח אֱלֹהֵינוּ** (հավատ) բառը նույն արմատն ունի, ինչ **נִשְׁבָּח אֱלֹהֵינוּ** բառը, որ նշանակում է հուսալի, հավատարիմ (այդտեղից՝ «ամեն» բառը): Աբրահամը չէր կասկածում, որ Աստված հավատարիմ կլինի Իր խոստումին, որ Նրա խոսքն անխախտ է: Եվ նա ինքը հավատարիմ մնաց Աստծուն:

ԽՈՍՏՈՒՄԸ: Աբրահամին տված խոստումը երեք խորհուրդ ունի.

ա) Ավետյաց երկրի և Աստծու ժողովրդի խորհուրդը: Խոսքը Աբ. Երկրում հինկտակարանյան Եկեղեցու մասին է: Արտաքնապես դրան հակասում էր այն, որ Աբրահամն օտար ու պանդուխտ էր այդ երկրում և զավակներ չունեք:

բ) Զրիատուսի խորհուրդը: Օրհնությունը գալիս է Աբրահամի «սերունդի» միջոցով (հմմտ. Գործ. Գ 25): Մեսիայի հայտնությունը իրագործվեց խոստումը, ուստի Սուրբ Կույսն իր խոսքի մեջ հիշում է Աբրահամի մասին (Ղուկ. Ա 55), իսկ Փրկիչը հրեաներին ասում է. «Աբրահամը՝ ձեր հայրը, ցանկացավ իմ աշխարհ գալու օրը տեսնել. տեսավ և ուրախացավ» (Յովհ. Ը 56):



Աբրահամի ժամանակների հին գոհասեղան անտաշ քարերից, Պաղեստին, Մակեդոն

գ) Ընդհանրական Եկեղեցու խորհուրդը: Աբրահամի օրհնությունը տարածվում է «աշխարհի բոլոր ժողովուրդների վրա»:

Խոստումի նշանն Աստծու «երզումն է»: «Արդարև, մարդիկ երդվում են նրանով, ով մեծ է իրենցից. և նրանց մեջ եղած ամեն հակասականության վերջնական վճիռը երդումն է: Ահա թե ինչու Աստված, կամենալով առավել ևս ցույց տալ իր նպատակի անփոփոխ լինելը խոստման ժառանգորդներին, օգտագործեց երդումը» (Եբր. Չ 16-17):

ՈՒՒՏԸ: Ի հաստատություն բացահայտվածի՝ Աստված «ընդունում է», այսինքն՝ Անձամբ է հաստատում Ուխտը կամ միությունն Աբրահամի հետ: Մարդը, որի մեջ ամփոփված է Եկեղեցու ապագան, Աստծուց ստանում է այն բանի նշանը, որն Աստծու Խոսքը անբեկանելի է:

Հնում, երբ մարդիկ իրար հետ պայման էին կնքում՝ զոհի կենդանիներ էին մորթում և անցնում կիսված մասերի միջով (Երեմ. ԼԴ 18): Աբրահամը նույն կերպ վարվեց, ուխտ կնքելով Տիրոջ հետ. «և կրակի լեզուները անցան անասունների կտրտված մարմինների միջով» (Ծննդ. ԺԵ 17): Իսկ սա նշանակում էր, որ այս պարագային ոչ թե մարդը, այլ Աստված է հաստատում ընտրյալի հետ միությունը: Ուխտի կնքման պահին Աբրահամը խորհրդավոր ահ է ապրում Աստծու մերձությունից («Աբրամը թմբիրի մեջ ընկավ, սարսափելի վախ համակեց նրա սիրտը»): Նա թմբիրի մեջ լսում է փորձությունների մասին մարգարեական խոսք, թե ինչ է սպասում իր հետնորդներին. Աստծու ժողովրդի ճանապարհը հեշտ չի լինելու: Բայց խոստացվածը կկատարվի ամեն ինչին հակառակ:

Իսկ Աբրահամից ի՞նչ էր պահանջվում այդ Ուխտով: Նրա առաջին պատվիրանը. «Ես եմ քո Տեր Աստվածը [էլ ՇԱԴԴԱՅ], հնապանդ եղիր ինձ և եղիր անարատ» (ԺԵ 1): Ծննդ. ԺԸ 19-ում Տերն ասում է. «Որովհետև Ես գիտեի [ոռու.՝ ընտրեցի], որ նա [Աբրահամը] իր որդիներին ու իր հետնորդներին կպատվիրի, որ նրանք ընթանան՝ պահպանելով արդարությունն ու իրավունքը» (այսինքն ճշմարտություն և արդարություն):

Ուխտի նշան դարձավ նահապետի անունը՝ Աբրահամ: Առաջ նա կոչվում էր Աբրամ, որ նշանակում է «Բարձրյալ (Աստված) - հայր», նոր անունը թարգմանվում է «հայր բազմություն»։ Բուն անվանափոխությունը մատնանշում է, որ այդ պահից նահապետը պատկանում է Աստծուն: Մյուս նշանը թլպատությունն էր: Այդ ծեսը շատ հին է: Այն տարածված էր շատ ժողովուրդների մեջ (եգիպտացիներ, քանանացիներ և այլն): Դա նշանակում էր մարդու ընծայումն աստվածությունը: Աբրահամի համար թլպատությունը եղավ նվիրումն բարձրյալ Աստծուն: Հետագայում, երբ հրեաները շփվեցին հունահռոմեական աշխարհի հետ, ուր նման սովորույթ չկար, դա եղավ հրեական հավատքի տարբերակիչ նշանը:

Նոր Կտակարանում այդ ծեսը կորցրեց իր նախկին կրոնական իմաստը, որովհետև փոխարինվեց մկրտությունով (սակայն որոշ Հինարևելյան Եկեղեցիներում դա պահպանված է):

5. Աբրահամի փորձությունները: Աբրահամի երկար կյանքն Աստվածաշնչում ներկայացված է իբրև ուղին մի մարդու, որին փորձում է Աստված: Նրա հավատն անցնում է մաքրագործող բովի միջով:

I. Ոչինչ չէր ապացուցում, որ Աբրահամին կամ նրա սերունդներին Աստվածը ընտրյալ երկրում վերջնականապես հաստատվելու հնարավորություն կընձեռվի: Ընդհուպ մինչև մահ նահապետը գրեթե բոլորովին այդ հույսը չունեի: Աբրահամն իր մարդկանցով ու հոտերով թափառում է Քանանով

մեկ, անցնելով հյուսիսից հարավ, և որևէ տեղ չի կարողանում հիմնավորվել: Ծննդոց Գիրքը նշում է նրա դեգերումների հետևյալ փուլերը:

ա) Սբ. Երկրի սահմանն անցնելով՝ հավանաբար Հաբոկ գետի մոտ Աբրահամը իր վրաններն է խփում Քանանի կենտրոնում, Սյուքեմ քաղաքի մոտ, ուր Տերը հայտնվում է նրան, և ուր նա կառուցում է առաջին զոհասեղանը (ԺԲ 6-7):

բ) Ապա նահապետը շարժվում է դեպի հարավ և կանգ առնում մի քաղաքի մոտ, որ կոչվում է իր սրբավայրի անունով՝ Բեթել (եբր. փոխարինում է Բեթ-էլ)՝ Աստծու տուն: Այստեղ նա կրկին զոհասեղան է կառուցում (ԺԲ 8-9):

գ) Սովը, որն ըստ երևույթին փարավոնի զորքի ներխուժման արդյունքն էր, ստիպում է Աբրահամին ապաստան փնտրել Եգիպտոսում, ինչպես արել էին ուրիշ քոչվորներ (տես հտ. Ա, § 21, Հավելված 2): Վախենալով, որ իրեն կսպանեն գեղեցկուհի կնոջ համար՝ նա վերջինիս իբրև քույր է ներկայացնում, և «տարան նրան փարավոնի պալատ»: Բայց Աստված՝ «փարավոնին ու իր ընտանիքի անդամներին պատժեց մեծամեծ ու դաժան պատուհասներով», և Սառային անմիջապես բաց են թողնում: Այստեղ տեսնում ենք ոչ միայն Աբրահամի փոքրոգի երկչոտությունը, այլև Նախախնամություն հովանավորությունը, որ պահպանում է նրան (ԺԲ 10-20):

դ) Աբրահամի տոհմի՝ Բեթելի մերձակայքը վերադառնալուց հետո մի խումբն առանձնանում է նրա զարմիկ Դովտի հետ, քանի որ նրանց հովիվների միջև գոտություն էր ընկել արոտավայրերի համար: Դովտն ընտրեց ծաղկուն Սիզգիմ՝ հովիտը Սոդոմ քաղաքի մոտ, չնայած տեղի բնակիչները «չար մարդիկ էին և Աստծու հանդեպ բապում մեղքեր էին գործում»: Այդ իմանալով՝ Աբրահամը չգայթակղվեց խոտառատ արոտավայրերով, այլ ընտրեց Քեբրոնի խոտաշունչ մերձակայքը, ուր կարող էր վրաններ խփել Մամբրեի կաղնու մոտ: Այնտեղ Տերը դարձյալ երևում է նրան, և Աբրահամը զոհ է մատուցում Աստծուն (ԺԳ):

ե) Երբ Աբրահամը իմանում է, որ Դովտին գերի են վերցրել Սոդոմի հովիտով անցնող ելամական զորքերը, հավաքում է իր մարդկանց, գիշերով հարձակվում է թշնամու վրա և ազատում գերիներին: Նրա սխրանքն ուրախություն է պատճառում Շաղեմի քաղաքացիներին: Սրա Մելքիսեդեկ թագավորն ընդառաջ է գնում Աբրահամին, մատուցում հաց և գինի (զոհով կնքված բարեկամության նշանը): Նա Ամենագոր Աստծու անունից օրհնում է նահապետին և առաջարկում օգտվել թշնամիներից խլված ավարից: Բայց Աբրահամը հրաժարվում է (ՉԼ ԺԴ):

¹ Հայերենում Սիզգիմ տեղանունը թարգմանված է Աղի ձոր – խմբ.:

Ծանոթություն

Ծննդոց գրքի ԺԴ գլուխը վերցված է անկախ աղբյուրից (J, E և P ավանդությունների հետ կապ չունեցող): Այնտեղ «*իրեա* Աբրամը»¹ կարծես առաջին անգամն է ի հայտ գալիս: Նահապետի մտերիմներն այստեղ անվանվում են «*խանիկիմ*»: Այդ եզրույթը Յին Կտակարանում միակ անգամն է կիրառված: Այն հանդիպում է միայն եգիպտական և քանակյան բնագրերում Ք. ա. Բ հազարամյակի առաջին կեսին: Պատմաբանները ԺԴ գլուխը համարում են շատ հին տարեգրության հատված:

ա) ԺԴ գլխում հիշված թագավորներից ոչ մեկը հայտնի չէ արտասուրբ-գրական աղբյուրներից (նախկինում Ամրափաղին սխալմամբ նույնացնում էին Համմուրաբիի հետ): Բայց հավանաբար նրանց անուններն իրական են: Այսպես, Քոդոզագոմորը թեթևակի փոխված էլամական Կուդիր-Հագոմար անունն է, Արիոքը հանդիպում է Մարի (Ալիբուկ) բնագրերում², իսկ Թարգաղը հավանաբար նույնական է խեթական Թուլթխալիսա³ անվան հետ: Քրիստոսից առաջ Ի և ԺԹ դարերում էլամական թագավորության տիրապետության մասին Մերձավոր Արևելքում վկայում են մի շարք արձանագրություններ ու հուշարձաններ: Սիդդիմ հովտի հինգ թագավորներ պատկանում էին քաղաքների խմբինը, որոնք շուտով կործանվեցին աղետի հետևանքով (տես ստորև՝ Սողոմի ու Գոմորի մասին):

բ) Մելքիսեդեկ անունը (եբր.՝ מֶלְכִּי־צֶדֶק Մալքի-սեդեկ՝ «իմ արդար արքա») իմաստով մոտ է քանանյան մեկ ուրիշ արքայի՝ Ադոնի-ցեդեկ անվանը⁴ (Յեսու Ժ 1): Մելքիսեդեկը Շաղիմ քաղաքի թագավոր-քահանան էր: Ենթադրում են, թե այդ քաղաքը նույնական է Երուսաղեմին (ԺԴ դարի սեպագիր արձանագրության մեջ այն կոչվում է Ուրու-սալիմ, որ նշանակում է խաղաղության քաղաք. նույն նշանակությունն ունի եբր.՝ דִּישׁוֹרָ – ԻԵՐՈՒՇԱԼԱՅԻՄ): Այն, որ Մելքիսեդեկը պաշտում էր նույն Աստծուն, ինչ և Աբրահամը, և նրա օրհնությունը նահապետին՝ մեկնիչներին ստիպել են քանանյան թագավորին դիտել իբրև բացառիկ անձնավորություն: Դեռևս Հին Կտակարանում (Սաղմ. ԵԹ 4) Մելքիսեդեկի իշխանությունը կամ «կարգը» դիտարկվել է որպես թագավորի և քահանայապետի իշխանության համատեղում: Այն վերաբերվել է գալիք Մեսիայի հետ: Կումրանի տեքստերում Մելքիսեդեկը ներկայացված է իբրև երկնային էակ, Աստծու Դատաստանի գործիք (Тексты Кумрана, М., 1971, հատ. 1, էջ 287): Փիլոնի երկում (Законы аллегории,

¹ Հայերենում այստեղ՝ ԺԴ 13-ում *իրեա* բառը չկա – խմբ.:

² Մարին գտնվել է Եփրատի միջին հոսանքի շրջանում, որտեղից, պեղումների արդյունքում, գտնվել են մեծ թվով արձանագրություններ (1951 թ.) – խմբ.:

³ Տե՛ս Հայ Ժողովրդի պատմության քրեստոմատիա, հտ. 1, Երևանի Համալսարանի հրատ., 2007, էջ 76-78 – խմբ.:

⁴ Հայերենում՝ *Ադոնիբեզեկ*:

III., 26) Մեկքիսեդեկը մարմնավորում է Բանը (լոգոս), իսկ Եբրայեցիների Ե-է գլուխներում նրա իշխանությունը Մեսիայի երկու իշխանությունն նախատիպն է՝ որպես Թագավորի և Քահանայապետի:

Ակնհայտ է, որ Մեկքիսեդեկի դրվագն Աբրահամի պատմությունն է մուծվել նահապետին Իսրայելի ապագա մայրաքաղաք Երուսաղեմի հետ կապելու նպատակով:

գ) Դովտի ազատագրումից հետո Աբրահամը վերստին գալիս է Մամբրեի կաղնու (ԺԸ 1), ուր նրան ներկայանում են երեք խորհրդավոր օտարականներ (տե՛ս ստորև): Այդտեղից նա իջնում է հարավ՝ Նեգե, կանգ է առնում Գերարում (Գազայի մոտ): Հյուսիսային ավանդության (է - E) համաձայն այստեղ նրան պատահում է գրեթե նույնը, ինչն ըստ հրեական (Ե - J) ավանդության, եղել է Եգիպտոսում (Ի, հմմտ. ԺԲ 10 և հաջ.): Նա դաշն է կնքում Աբիմեելք թագավորի հետ՝ Բերասբեեի¹ մոտ (Եբր. ԵՁՅ ԴԶԲ ԲԵՆԲ-ՇԵՎԱ):

դ) Միայն Քեբրոնի մոտ Աբրահամն ի վերջո որպես սեփականություն հողակտոր է ստանում (ԻԳ): Այդ շրջանը քետացիների առաջնորդներին էր ենթակա: Ցանկանալով կնոջը թաղել՝ Աբրահամը խնդրում է քետացիներին՝ իրեն վաճառել Մաքփելայի² անձավը՝ տոհմական հանգստարանի համար (այդպիսի հանգստարաններ հնագետները գտել են Աբրահամի ժամանակվա Պաղեստինում): Բայց քետացիների առաջնորդն, կարծես թե մեծահոգություն ցուցաբերելով, Աբրահամին վաճառում է քարանձավին մերձակա ամբողջ ագարակը (Ճննդ. ԻԳ): Վերջերս հայտնաբերված խեթական օրենքները բացատրում են առաջնորդի այս քայլը: Ամբողջ դաշտը, և ոչ նրա մի մասը, ձեռք բերած մարդը պարտավոր է ենթարկվել իշխանին (տե՛ս Хеттские Законы, 7 Б` ХДВ, 1980 հատ.1-ում՝ էջ 277): Հետևաբար հողատերերը մտադիր էին Աբրահամին իրենց ծառայեցնել: Այսպես թե այնպես Մաքփելայի քարայրը առաջին նշույն էր այն բանի, որ Սուրբ Երկրի մասին խոստումն սկսվում է իրականանալ: Բայց Աբրահամը կախման մեջ է ընկնում քետացիներից, իսկ ագարակն իրականում բավական փոքր էր: Բայց նահապետը լիովին հավատում է Աստծու խոստումին: Նա պատգամում է իրեն թաղել կնոջ կողքին, այնտեղ, որտեղից սկիզբ են առնում նրա հետնորդների իրավունքները Քանանի նկատմամբ:

Մանոթո-թյոն

Հեթանոսական աստվածները համարվում էին որոշակի երկրի բնակիչներ: Աբրահամի Աստվածը կապված չէ այս կամ այն երկրին: Նա Քանանը խոստանում է Աբրահամի զավակներին, դա հաստատելով Ուխտով: Բայց մասնավոր սերունդների

¹ Հայերենում՝ Երդան ջրհոր - խմբ.:

² Հայերենում այդ անվամբ անձավը նշվում է միայն ագարակ բառով - խմբ.:

համար այդ խոստումը *պայմանական* է: Ինչպես Ադամը կարող էր ապրել Եդեմում՝ հնազանդ լինելով, նույնպես և «Աբրահամի սերունդը» Ավետյաց երկրին տիրելու է Ուխտին հավատարիմ լինելու դեպքում միայն (հմմտ. Բ Օր. ԻԸ 63, Ամուս Ե 27, Օսեե ԺԱ 5):

II. Ծննդոց Գիրքը պատմում է այն փորձությունների մասին, որոնցով անցնում է Աբրահամի հավատն իրեն սերունդ ունենալու խոստման համար:

ա) Տարիներ են անցնում, իսկ նահապետի կինը մնում է անպտուղ: Աբրահամը տարակուսում է՝ ինչպես կկատարվի կանխասացությունը, երբ ինքն ստիպված է լինելու իր ամբողջ ունեցվածքը որպես ժառանգություն թողնել Եղիազարին՝ ծառային, որին վարձել էր Դամասկոսում (ԺԵ 2):

Խուրրիների օրենքների և Համմուրապիի Օրենսգրքի համաձայն (որոնք արտացոլում են Բ հազարամյակի սկզբի արևելյան իրավունքը) որդեգրված ծառան տանը ժառանգության իրավունք ուներ (Кодекс Хаммурапи, § 191):

բ) Իր ժամանակի օրենքներին հետևելով (Խուրրիական իրավունք, Համմուրապիի Օրենսգրք, § 145), Աբրահամն իրեն հարձ է վերցնում եգիպտուհի Հագարին: Համմուրապիի օրենքով (§ 146), եթե նույնիսկ այդ ստրկուհի հարձը երեխա ծնի, չպետք է «իրեն հավասարեցնի իր տիրուհուն»: Բայց Հագարը հղիանալով՝ «տիրուհին ընկավ իր աչքից» (ԺԶ 4): Մի ավանդության մասին (Ե - J չդիմանալով տիրուհու ճնշումներին՝ հղի Հագարը նրանից անապատ փախավ (ըստ երևույթին ձգտելով հասնել հայրենիք՝ Եգիպտոս): Մյուս (Ք - P) ավանդության մասին Հագարը վտարվել է Իսահակի ծնունդից հետո: Առաջին պարագային Աբրահամը զրկվեց միակ հույսից, թե Հագարից ծնված որդին կլինի իր երկար սպասած ժառանգորդը:

Հագարի որդի Իսմայիլն ստանում է Աստծու օրհնությունը (նրա անունը հանդիպում է Մարիի բնագրերում, ԺԸ դար): Նրա հետնորդ իսմայելացիները դիտվում էին իբրև իսրայելացիների ցեղակից: Նրանց ճակատագիրն անուղղակի կապված է Աբրահամին տրված խոստումի հետ: Իսմայելի որդիները քոչվոր բեդուիններ էին Սինայի անապատում: Իսլամի հետևորդները նրանց համարում են իրենց նախնիներ, թեպետ «արաբ» հասկացությունն այն ժամանակ ավելի լայն էր և ներառում էր անապատի (եբր. אֲרָבִּי - ԱՐԱԲԱ՛) բոլոր բնակիչներին:

գ) Երբ Աբրահամը ծերացավ, և ժառանգ ունենալու հույսն անիրականանալի էր թվում, Աստված Մամբրեի մերձակայքում հատուկ հայտնվելով վերստին հաստատում է այն: Այնտեղ նահապետն ընդունում է երեք օտարականի: Պարզվում է՝ դրանցից մեկը Եհզեի Հրեշտակն էր, այսինքն Աստծու ուղարկածը, որ եկել էր փորձելու ինչպես Աբրահամի հավատը, նույնպես և Սողոմոն ու Գոմորի բնակիչներին, որոնց մեղքը լցրել էր Աստծու համբերության բաժակը:



Մեռյալ ծովի ափի ժայռերից: Մեջտեղի ժայռը անվանվում է «Ղովտի կին»

Կանխասացույթյունը լսելով՝ Սառան ծիծաղեց: Այն իրեն անհավանական թվաց: Բայց Աբրահամն առանց վարանելու ապավինում է Աստծու խոսքին: Աստվածաշնչում զառամյալ կամ անզավակ ծնողների որդու ծնունդը նկարագրված է մի քանի անգամ (Հակոբ, Եսայ, Սամսոն, Սամուել, Հովհաննես Մկրտիչ): Գիրքը դրանով ցույց է տալիս, որ մարդուն կյանքը ևս տրվում է Աստծու կամքով:

Այս պատումը պատկերավոր ձևով շարադրում է նաև պատմության աստվածաշնչական փիլիսոփայությունը, որի համաձայն ժողովուրդների ճակատագրերը կախված է նրանց բարոյական վիճակից: Աստծուն աղաչելով սողոմացիների համար՝ միևնույն ժամանակ Աբրահամը վստահում է Նրա արդարացիությանը: Նահապետը մեղսագործների կործանումը չի ցանկանում և համակերպվում է միայն համոզվելով, որ ծանր մեղքերը Մեռյալ ծովի մերձակա քաղաքները կորստյան են մատնելու (ԺԸ):

Մանրագրություն

Երկրաբանական և հնագիտական տվյալները հաստատում են, որ Սիդդիմի շրջանում իրոք աղետ է տեղի ունեցել, որ կործանել է ափամերձ քաղաքները: Ցամաքի մի մասը սուզվել է ու ընկղմվել Մեռյալ ծովի ջրերում: ԺԹ դարից հետո՝ հովտի քաղաքների անունները վերանուն են վավերագրերից: Աղետի բուն բնույթը մնում է անհայտ:

Ղովտի փախուստը (ևս մեկ փոքր «եղք») նշանակում է Աստծու հորդորը՝ բաժանվել մեղքով վարակված քանանացիներից: Ղովտը նրանց միջավայր մտավ՝ գայթակղված բարեբեր երկրի հարմարություններով, բայց այժմ ստիպված է փախչել՝ առանց ետ նայելու և ամեն ինչ թողած: Սա դաս էր Աստծու ժողովրդին, որին այդքան հաճախ հրապուրում էին քանանյան քաղաքակրթության բարիքները:

Օգոստինոս Երանելին այստեղ նորկտակարանյան Եկեղեցու համար կարևոր դաս է տեսնում: «Խնչ իմաստ ունի,- գրում է նա,- ազատագրվածներին ուղղված հրեշտակական արգելքը հետ նայելու վերաբերյալ, քան ոչ այն, որ եթե մենք ցանկանում ենք խուսափել վերջին դատաստանից, ապա չպետք է հոգով վերադառնանք հին կյանքին, որից վերածնվածը հեռացել է շնորհով» (O grade bozhiem, XVI, 30):

Ծննդոց ԺԹ 30-38 պատումը խոսում է ամոնացիների ու մովաբացիների ծագման մասին, ժողովուրդների, որ հետագայում բնակվեցին Հորդանանից ու Մեոյալ ծովից արևելք: Դովտի աղջիկների արարքը բացատրվում է նրանով, որ նրանք ենթադրում էին, թե իբր կրակի մեջ զոհվել են բոլոր մարդիկ (31), և իրենց է վերապահված մարդկային ցեղի վերածնունդը: Սակայն այդ արյունապղծությունը (իսրայելացիներին արգելված (տես Աւտ. ԺԸ 7) և թույլատրված հեթանոսներին) ցույց է տալիս, որ Դովտի հետնորդները չեն պահպանել Աբրահամի հավատի բարոյական սկզբունքները: Դրանով իսկ նրանք դուրս գրվեցին ընտրյալ սերունդների շարքից:

Ո) Աբրահամի վերջին և ամենածանր փորձությունը նկարագրված է Ծննդ. ԻԲ գլխում: Աստված, որ նահապետին խոստացել էր մեծաթիվ սերունդ, հանկարծ կոչ է անում Իր համար զոհել Իսահակին՝ երկար սպասված զավակին: Հույսերը կրկին կործանվում են: Բայց այստեղ ևս Աբրահամը մնում է հավատարիմ: Եվ միայն ամենավերջին պահին Եհովեի Հրեշտակը, այսինքն Տերն Անձամբ, բռնում է Աբրահամի ձեռքը: «Հավատով է, որ Աբրահամը, իր փորձության մեջ - ասում է առաքյալը, - Իսահակին որպես պոհ մատուցեց. և նա, ով խոստումն էր ընդունել, իր միամտորիկ որդուն էր որպես պոհ մատուցում: Աբրահամին ասված էր, թե՛ Իսահակով քեզ սերունդ պիտի տրվի: Աբրահամը իր մտքում մտածեց թե Աստված կարող է մեռելներից էլ հարություն տալ Իսահակին: Ուստի և, որպես նախօրինակ այդ բանի, նա հետ ստացավ իր որդուն» (Եբր. ԺԱ 17-19):

Պատումը վկայում է անհողգողգ հավատը նահապետի, որ պատրաստ է ցանկացած զոհաբերության: Այն նաև ցույց է տալիս, որ ամեն մի անդրանիկ պատկանում է Աստծուն (հմմտ. Ել. ԼԴ 19-20), բայց ի տարբերություն քանանացիների՝ Աբրահամի որդիները պետք է զոհաբերեն ոչ թե զավակներին, այլ կենդանիներ: Իսկ զոհաբերությունը և անդրանիկի նվիրաբերումը կոչված էին հիշեցնելու, որ ամեն ինչ պատկանում է Արարչին: Աստծուն տալով այն, ինչը ապահովում է իրենց կյանքը, հին իսրայելացիները խոստովանում էին Աստծու գերագույն իշխանությունը կյանքի ու մահվան նկատմամբ:

Ի դեմս Հիսուս Քրիստոսի Աստված Ինքն Իրեն կզոհաբերի և դրանով կնմանվի հինկտակարանյան զոհին (գառին): Այստեղից էլ «Աստծու Գառը»

անվանումը, որի մեջ Աստվածաշունչը տեսնում է Փրկչին (Յովհ. Ա 29, Յայտն. Ե 12):

Մանուշիան

Իսահակի ամուսնույթյան պատմության մեջ (ԻԴ) ոչ միայն պատկերված է հրեա նահապետների կենցաղը, այլև շեշտվում է Աբրահամի հաստատ մտադրությունը ազգակից չլինել քանանացիներին: Այդ ձգտումը հետագայում դարձավ խիստ արգելք, որը թելադրված էր բարոյական ու կրոնական անկման սպառնալիքով, որ բխում էր քանանացիների հեթանոսությունից: Իսահակի կերպարը ճննդոց Գրքում պակաս ընդգծված է, քան Աբրահամին ու Հակոբին: Միայն հաստատվում է, որ Աբրահամի օրհնությունը տարածվում է նաև Իսահակի վրա (ԻԶ 2-5), և պատմվում է Իսահակին պատահածի մասին, որն ամբողջովին համադրելի է Աբրահամի պատմության համանման դրվագին (ԻԶ 6-33. հմտ. Ի): Երկու պատումներում ժամանակակիցները կա. Քանանի հարավ-արևմուտքն անվանված է փղտացիների երկիր, թեպետ վերջիններս այնտեղ հայտնվել են մի քանի դար հետո:



Քերթն: Աբրահամի թաղման ենթադրյալ տեղը: Առկա են հրեական, քրիստոնեական և մահմեդական կառույցներ:

6. Եզրակացություն. Աբրահամն իզուր չի անվանվել «Աստծու բարեկամ» (Հակ. Բ 23): Նրա հավատը ներծծված է և՛ Արարչի նկատմամբ անվարան վստահության ոգով, և՛ Նրան խորհրդավոր մոտիկությամբ: Տերը գալիս է Աբրահամի վրանը՝ սեղանակից լինելու նրա հետ: Այդ սեղանը (եբբ նահապետը գլխի է ընկնում, որ իրեն երկնային Հյուրն է այցելել) դառնում է զոհաբերության պատկեր: Հնում զոհաբերությունն ընկալվում էր որպես սրբազան խնջույք, որին ներկա է Աստված Ինքը: Սեղանը մարդկանց միավորման նշանն է, սեղան-զոհաբերությունը նշանն է նրանց միավորման Աստծու հետ:

Ռուբլյովի¹ «Երրորդությունը»՝ ներշնչված Ծննդոց Գրքի պատմություններով, խորհրդանշում է վաղնջական Հաղորդությունը, և ի տարբերություն Երրորդության Աստվածահայտնությունը ներկայացնող այլ սրբապատկերների՝ այստեղ արդեն չկա Աբրահամի անձը: Եվ թվում է՝ հոգեպես այս Սեղանի վկա և մասնակից է դառնում սրբապատկերի առջև աղոթող մարդն ինքը:

Հարցեր կրկնության համար

1. Ո՞րն է Աբրահամի՝ իբրև «հավատացյալների հայր» նշանակությունը:
2. Ե՞րբ Աբրահամը փոխադրվեց Միջագետքից:
3. Ո՞րն էր Աստծու առաջին խոսքն Աբրահամին:
4. Նշեցե՞ք Աբրահամի կոչման պատումում հնչած չորս հիմնական թեմաները:
5. Ի՞նչպես էր անվանվում Աբրահամի Աստվածը:
6. Ո՞րն էր Աբրահամի հավատը:
7. Ո՞րն էր նրան տրված խոստումը:
8. Ի՞նչ էր Աբրահամի Ուխտի նշանը:
9. Աստվածաշնչում ինչո՞վ է բնութագրվում Աբրահամի անձը:
10. Ի՞նչ էր Աբրահամի փորձությունների իմաստը:
11. Նշեցե՞ք Աբրահամի թափառումների հիմնական կետերը:
12. Ո՞վ էր Մելքիսեդեկը:
13. Աբրահամն ինչո՞ւ է գնում Մափիելայի քարանձավին կից ամբողջ հողատարածքը:
14. Ո՞ր հին օրենքներն են պարզաբանում Աբրահամի գործերը:
15. Ո՞րն է Աստծու՝ Մամբրեի կաղնու մոտ հայտնվելու պատումի իմաստը:
16. Ի՞նչ են վկայում Սողոմոնի վիճակն ու Ղովտի ճակատագիրը:
17. Ինչո՞ւ Իսահակի հարսնացուին Քանանից չընտրեցին:
18. Ո՞րն է Աբրահամի զոհաբերության իմաստը:
19. Ռուբլյովի «Երրորդություն» սրբապատկերն ի՞նչպես է կապված Ծննդոց Գրքի պատումի և զոհաբերություն-սեղանի (Հաղորդության) խորհրդի հետ:

§ 21-ի Հավելված

1. Մահմեդական պատումն Աբրահամի դարձի մասին

«Այսպիսով, Մենք Իբրահիմին ցույց ենք տալիս իշխանություն երկնքի և երկրի վրա, որ նա վստահություն ունեցողներից լինի:

¹ Անդրեյ Ռուբլյով (1340–1428) – Ռուս պատկերանկարիչ, հայտնի է նրա «Երրորդություն» սրբապատկերը (1425–1427): Սրբադասվել է Ռուս Ուղղափառ եկեղեցու կողմից 1988 թ.:

Եվ երբ նրան պարտուրեց գիշերը՝ նա աստղը տեսավ և ասաց. «Սա իմ Տերն է»։ Իսկ երբ աստղը մայր մտավ՝ նա ասաց. «Ես չեմ սիրում մայր մտնողներին»։

Երբ նա տեսավ ծագող լուսինը՝ ասաց. «Սա իմ Տերն է»։ Իսկ երբ այն մայր մտավ՝ նա ասաց. «Եթե իմ Տերն ինձ ուղիղ ճանապարհի չհանի՝ ես կլինեմ մոլորյալ մարդկանցից»։

Իսկ երբ նա տեսավ ծագող արևը՝ ասաց. «Սա իմ Տերն է, Նա մեծ է»։ Իսկ երբ այն մայր մտավ, նա ասաց. «Ո՛վ իմ ժողովուրդ, ես մասնակից չեմ դրան, որ դուք վերագրվում եք Նրան իբրև ընկերակիցներ։ Ես հայացքն իմ ուղղեցի Նրան, ով ստեղծեց երկինքն ու երկիրը, երկրպագելով Նրան մաքրապես, և ես բազմաստվածության հետևորդներին չեմ»։

Ղուրան, 2, 75-79

2. Սեմական ցեղերի Եգիպտոս փոխադրվելու վկայություններ

Բենիհասանում (Կահիրեից 270 կմ հարավ) կա քոչվոր սեմականների քարավանը պատկերող որմնանկար։ Նրանք Եգիպտոս են ժամանել իրենց շեյխ Աբիշարի գլխավորությամբ։ Որմնանկարը թվագրվում է Ք. ա. ԺԹ դարով (Աբրահամի ժամանակները)։ Քոչվորները պատկերված են թուխ, կարճ՝ գանգուր մազերով և փոքր մորուքներով։ Դրանք բոլորը՝ կանաչք և տղամարդիկ, հագած են հասարակ գործվածքի վառ գույնի հագուստ։ Իրենց ունեցվածքը նրանք տանում են ավանակներով, իսկ եգիպտական աստիճանավորին նվեր են տանում այծյամներ։ Ավելի ուշ շրջանի (Ք. ա. ԺԴ դար) եգիպտական վավերագիրը խոսում է նմանատիպ մի իրադարձության մասին։ Աստիճանավորը պետին հաղորդում է բեդուինների մասին. «Նրանք ջախջախվել են, իսկ իրենց քաղաքն ամայացել է, և կրակ է լցվել (նրանց հացին)... Նրանց հողերը դատարկ են, նրանք ապրում են լեռնային այծերի նման... Այդ ասիացիներից ոմանք, չիմանալով ինչով ապրել, եկել են [ապաստան խնդրելու] թագավորի տիրույթում, ինչպես Ձեր հոր հայրերն են արել հնում... Եվ թագավորը նրանց հանձնում է Ձեր իշխանությանը, նրանց սահմանները պաշտպանելու համար»։ ԺԳ դարի այլ մի վավերագրի մեջ սահմանապահ պաշտոնյան հաղորդում է, որ բեդուիններին թույլ է տվել «անցում Մերնեփթահի ամրոցով դեպի Սեկ (Սուկկոտ)՝ Պիթոմի ճահիճների մոտ... որպեսզի պահպանվի նրանց կյանքը և նրանց նախիրների կյանքը»։ Այսպիսով, Աբրահամի վերաբնակեցումը, ապա և Հակոբինը, Եգիպտոս ունեցել է շատ զուգահեռներ փարավոնների երկրի պատմության մեջ։


§ 22. Հակոբ նահապետ Իսրայելի որդիները (Ծննդ. ԻԵ 19-Յ 26)

1. **Հակոբի դարաշրջանը:** Ք. ա. ԺԸ դարի վերջին Բաբելոնի թագավորության հզորությունը խաթարվեց լեռնականների արշավանքով, իսկ Հյուսիսային Միջագետքից Պաղեստին շարժվեցին ամորհացիների և խուրրիների հորդանները: Նրանք հեծելազոր ունեին, զորատեսակ, որ այն ժամանակ անձանոթ էր մյուս ժողովուրդներին: Սա նրանց օգնեց ամրանալու Քանանի «չեզոք» հողերին: Եկվորների համար հենակետ դարձան Շարրու-քեննու Քեբրոնը, որտեղ նրանց զորքերն սկսեցին պատրաստվել շարունակելու արշավը դեպի հարավ՝ եգիպտոս: Ահարկու զավթիչներին եգիպտացիներն անվանում էին *հեկա հասուտ*՝ «օտար երկրների թագավորներ» (հուև. հիբսուներ): Հստ երևույթին նրանց հետ միաժամանակ Միջագետքից եկավ արամեական գաղթականների նոր խումբ՝ իրենց ցեղապետ Հակոբի (Իսրայելի) գլխավորությամբ:

Հակոբ անունը (ավելի ամբողջական ձևով՝ Հակոբ-էլ) այն ժամանակ լայնորեն տարածված էր: Այն հանդիպում է և՛ բաբելոնյան, և՛ եգիպտական վավերագրերում: Հիբսուների թագավորներից մեկի անունն էր Հակոբ-էր: Հետաքրքիր է, որ ավելի ուշ աստվածաշնչական պատմության մեջ Հակոբ անունը չքանում է ընդհուպ մինչև ավետարանական ժամանակները:

Հակոբի մարդիկ, հիշելով իրենց ծագումն Աբրահամից, հաստատապես հավատում էին, որ նրան տրված խոստումը տարածվում է և իրենց վրա: Հակոբի տոհմով է սկսվում իսրայելացիների պատմությունը, որ Արևելքի սովորությունները իրենց անվանում էին Իսրայելի որդիներ (եբր. יִשְׂרָאֵל – ԲԵՆԵ-ԻՍՐԱԵԼ. հմմտ. մյուս ցեղերի ու ազգային խմբերի անունները. Բեն-Կեդեմ, Բենե-Լագաշ, Բենե-Յամին և այլն):

2. **Հակոբի կերպարն Աստվածաշնչում:** Հակոբը, ինչպես նրան պատկերում է աստվածաշնչական ավանդությունը՝ բարոյական առումով Աբրահամից ցածր է: Խոսելով Հակոբի խորամանկության մասին՝ Ծննդոց Գրքի հեղինակը չի արդարացնում նրա տհաճ արարքները: Բայց Հակոբը եռանդուն է, հետևողական, համառ՝ նպատակներին հասնելու ճանապարհին: Բնավորության այս գծերը նախախնամությունն օգտագործում է, որպեսզի Հակոբը և նրա ցեղն ապրեն ու հաստատվեն Ավետյաց երկրում: Ընդամին, բոլոր թերություններով հանդերձ, Հակոբը պատկերված է որպես մարդ՝ ընդունակ հոգևոր աճի. կյանքի փորձությունները մեղմացնում են նրան, դարձնում ավելի մաքուր և իմաստուն:



Պաշտամունքային սյուների Գազերում, Պաղեստին (Ք. ծ. ա. XVII դարի կեսեր)

Պարզամիտ հովիվը, որ հաճախ գործում էր «զգուշավորին Աստված կպահի» սկզբունքով, աստիճանաբար ավելի է համակվում խոստումի հավատով ու հույսով: Դա նրան տարբերում է եղբորից՝ Նսավից: Նրանց հակադրությունը հետագայում խորհրդանշական իմաստ է ստանում (հմմտ. Մառաթ. Ա 2-3):

3. Հակոբի կրոնը: Նահապետի Աստվածը «նրա հայրերի Աստվածն է», Աբրահամի ու Իսահակի Աստվածը, որ նաև կոչվում է «Հակոբի հզոր (պաշտպան)» (ԽԹ 24) (եբր. בְּקוֹץ יַעֲקֹב – ԱՎԻՐ ԵԱԿՈՎ) և «Իսահակի երկյուղ» (ԼԱ 42) (եբր. יִרְאַת יִצְחָק – ՊԱՆՏՆՈՒ ԻՅԻՍԱԿ), որտեղ «երկյուղ» նշանակում է ակնածոտ հուզմունք: Պախաղ բառը կարելի է թարգմանել նաև ազգական: Եթե ընդունենք երկրորդ բացատրությունը, դա կնշանակի, որ ի դեմս Աբրահամի Աստծու Հակոբը տեսել է իր տոհմի Հայր-Հովանավորին:

Իսրայելի որդիների աստվածպաշտությունը Հակոբի դարաշրջանում եղել է նույնքան պարզ ու հասարակ, ինչպես Աբրահամի ժամանակ: Հակոբը զոհ էր մատուցում հանպատրաստից շինված զոհասեղանին (ԼԵ 1) և քարերն օծում էր յուղով (ԻԸ 18), ինչպես ընդունված էր պաղեստինաբնակների միջավայրում (այդպիսի սրբազան քարեր՝ մասներներ գտնվել են քանանյան շատ քաղաքներում): Այդ ամենը շատ է տարբերվում ուշ ժամանակների բարդ կենտրոնացված պաշտամունքից, բայց ավանդությունը լիակատար հավաստիությամբ պահպանել է նահապետական սովորույթների հիշողությունը:

Հակոբն ավելի հաճախ, քան Աբրահամը, մնում էր միևնույն վայրում, իսկ երբեմն նույնիսկ հասցնում էր հողամաս մշակել և բերք հավաքել: Նրա

կայանավայրերը գտնվում էին Քանանի հին պաշտամունքային կենտրոնների մոտ՝ Բեթելի և Սյուբեմի: Հետագայում հրեաներն այդ վայրերի հեթանոսական անցյալի հիշատակը ջնջելու համար դրանց պաշտամունքը կապում էին նահապետների անվան հետ: Բայց ի վերջո պաշտամունքային վայրերը ոչնչացվեցին (Դ Թագ. ԻԳ 15):

Հենց Բեթելում Հակոբը քնի մեջ լսեց Աստծու Ուխտը հաստատող ձայնը. «Ես Տերն եմ, քո հայր Աբրահամի Աստվածը և Իսահակի Աստվածը: Մի վախեցիր, որովհետև այն հողը, որի վրա քնել ես դու, քեզ եմ տալու և քո սերունդներին: Քո սերունդները երկրի ավալի չափ շատ են լինելու, տարածվելու են դեպի ծովակողմ, դեպի արևելք, դեպի հյուսիս ու հարավ: Քո շնորհիվ և քո սերունդների շնորհիվ օրհնվելու են աշխարհի բոլոր ազգերը» (ԻԸ 13-14):

Բեթելյան երազի պատմությունը երկու հիմնական նյութ ունի. առաջին՝ երկինք տանող խորհրդավոր սանդուղքի աստիճանները¹: Սա կարծես հակադրվում է Բաբելոնին, որի անունը (Բաբիլոն) նշանակում է «Աստծու դարպասներ»: Քաղաքի կենտրոնում կանգնեցնելով աստիճանավոր աշտարակ՝ հեթանոսները հավատում էին, թե դա կլինի Մարդուկի՝ իր պաշտողներին ընդառաջ իջնելու վայրը: Բայց Աբրահամի Աստվածը Հակոբին «Աստծու ուրիշ տուն» և «երկնային այլ դարպասներ» է ցույց տալիս (ԻԸ 17), որոնք միացնում են երկինքն ու երկիրը: Այդ անտեսանելի դարպասները Սուրբ երկրում խորհրդանշում են փրկության պատմության աստվածամարդկային իմաստը: Աբրահամին խոստացված երկիրն Աստծու Նախախնամության իրագործման վայրն է: Եվ Քրիստոսի խոսքերը հնչում են որպես Հակոբի տեսիլքի արձագանք. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, պիտի տեսնեք երկինքը բացված և Աստծու հրեշտակներին՝ բարձրանալիս և իջնելիս մարդու Որդու վրա» (Հովհ. Ա 51): «Հակոբի սանդուղքը» եկեղեցական գիտակցության մեջ խորհրդանշում է նաև Աստվածամորը, ուստի Հակոբի երազի մասին հատվածը ընթերցվում է Սուրբ Կույսին նվիրված տոներին²:

Երկրորդ նյութը ընտրյալ լինելու մասին է: Աբրահամից սերող բոլոր ցեղերից (մովբացիներ, ամմոնացիներ, իսմայելացիներ, մադիանացիներ, եգոմացիներ) միայն «Իսրայելի որդիները» կլինեն «ժողովուրդների օրհնությունը»: Սա պայմանավորված չէ որևէ բանով, բացի Աստծու կամքից: Հակոբը ծննդից իսկ նշված է հատուկ դրոշմով (ԻԵ 23): Թեև Եսավը նրանից ավագ է, թեև նրա սերունդ եգոմացիներն իսրայելացիներից վաղ կհիմնեն իրենց թագավորությունը (գլ. ԼԶ այդ թագավորության սկիզբը վերաբերում

¹ Եբր. մեո – ՍՈՒԼԱՄ բառը սովորաբար թարգմանում են սանդուղք, բայց եզրույթի առավել ճշգրիտ իմաստը լցնելն է, տարածքի արհեստական բարձրացումը (Եբր. ևո Սալալ՝ լցնել):

² Ըստ Ռուս եկեղեցու ծեսի: Հայ եկեղեցում այլ է – խմբ.:

է 1400 թվականին), Աստված առավելութունը տալիս է Հակոբին: Նրա ու նրա զավակների վրա է երկրում Աստծու գործին աջակցելու մեծ պատասխանատվությունը: Հետագայում Պողոս առաքյալն ընտրյալներին, այսինքն Եկեղեցու անդամներին, կկոչի Աստծու «գործակից»¹:

4. Հակոբի պատանեկության գրույցը (Ճննդ. ԻԵ 19-34, ԻԷ-ԻԸ): Ծննդոց Գրքում միացված է երկու պատում Հակոբի պատանեկության մասին (Ե-J+Q-P). դրանք միասնաբար վկայում են, որ նա շատ տարիներ է ապրել նախնիների հայրենիքում՝ Հյուսիսային Միջագետքում (Փատան-Արամում), և միայն այստեղ ամբողջ տոհմի գլուխ անցած՝ վերադարձել Քանան: Սակայն երկու ավանդություններում վերաբնակության հանգամանքները տարբեր են:

Քահանայական ավանդության համաձայն (ԻԶ 34, ԻԸ 1-5), Իսահակը դժգոհ էր, որ իր ավագ որդի Եսավը կնության էր վերցրել քետացի կանանց, և կրտսերին՝ Հակոբին պատվիրել էր գնալ Միջագետք՝ ամուսնանալու արամեուհու հետ (այդ ցանկության պատճառի մասին տես հատ. 1, § 21, 5-րդ ճանապարհը):

Ավելի վաղ պատմության մեջ այլ պատճառ է նշվում. Հակոբն իր եղբայր Եսավի զայրույթից էր խուսափել, որն իր ավագությունն անմտությանը վաճառել էր Հակոբին ոսպապուրով (ԻԵ 29-34. հմմտ. Եբր. ԺԲ 16-17): Այն դարաշրջանում այդպիսի գործարքներ հաճախ էին կնքվում. օրինակ՝ Նուզիի² (Հյուսիսային Միջագետք) տեքստերից իմանում ենք, որ ոմն մեկը երեք ոչխարով գնել է անդրանկության իրավունքը:

Հրաժարվելով անդրանկությունից՝ Եսավը դադարեց խոստման ժառանգորդ լինելուց, իսկ Հակոբը հավատում էր մարգարեությունը և ուզում էր ամեն գնով Աբրահամի ժառանգորդ լինել: Օրհնության մոգական ուժի մասին պարզունակ պատկերացումը նրա մորը խաբեության է մղում, և Հակոբը հաճույքով մասնակցում է խաբեությանը: Ծննդոց Գրքի հեղինակն ակնհայտորեն կարեկցում է Եսավին, որին այդպիսի դավադիր ձևով շրջանցում են: Բայց Աստծու ծրագիրը վեր է մարդկային տրամաբանությունից: Հակոբի և նրա սերնդի ճակատագիրը հատուկ ընդգծված է Նախախնամության կողմից:

5. Հակոբը Միջագետքում (ԻԹ-ԼԱ): Փատան-Արամի ճանապարհին Հակոբը երազում տեսնում է երկնային աստիճանները և լսում խոստումի լուրը: Թվում է, թե դա պիտի ամրապնդեր նրա մեջ բացարձակ հավատ: Բայց

¹ Ա Կորնթ. Գ 9 – խմբ.:

² Տիգրիսից արևելք գտնվող հին քաղաք, բնակեցված հուրիներով: 1925-1931 թթ. պեղումների ժամանակ հայտնաբերվել են հազարավոր կավե սեպագիր արձանագրություններ – խմբ.:

Հակոբը շարունակում է անընդհատ ապահովագրել իրեն, ասես դեռևս չունի լիակատար վատահույսություն Աստծու նկատմամբ:

Միջագետքում՝ Լաբանի մոտ, Հակոբի կյանքի պատմությունն աչքի է ընկնում դրամատիկությամբ և կենցաղային վառ գունավորումով: Նրա բնավորությունը լուսաբանվում է տարբեր կողմերից: Նա ընդունակ է խորունկ սիրո և պատրաստ է հանուն հարսնացուի երկար տարիներ ծառայի նման աշխատել: Հանուն նրա Հակոբը հանդուրժում է Լաբանի անարդարությունները: Մեկնիչները նշում են, որ Հակոբի և իր ազգականի հարաբերությունների պատմության մեջ ինչ-որ բացթողում կա: Լաբանը պնդում է, որ ինքը որոշ իրավունքներ ունի իր զարմիկի նկատմամբ: Միգուցե նա որդեգրել է նրան ու դրանով իսկ իշխանություն է ձեռք բերել նրա, ինչպես և նրա գույքի նկատմամբ: Վերջապես ազգականների վեճերն ավարտվում են նրանով, որ Հակոբն իր կանանցով, երեխաներով ու նախիրներով հանդերձ ծածուկ լքում է Լաբանին:

Ծանոթություններ.

1) Իսրայելացիների մեջ տիրում էր միակնությունը, թեպետ նահապետների դարաշրջանում տակավին թույլատրելի էր բազմակնությունը¹: Այդ պատճառով Ս. Գիրքը չի դատապարտում Հակոբին երկու կին ունենալու համար: «Հակոբն ինքը,- ասում է Օգոստինոս Երանելին,- ինչպես երևում է Գրքից, մեկից ավելի կին չի ցանկանում... Նա եկավ մի կին վերցնելու, բայց երբ առաջինի փոխարեն մյուսին Էին հրամայել,- նա չլքեց և դրան» (Օ grade Божию, XVI., 38): Չսիրված Լիային տրված օրհնությունը ցույց է տալիս, որ Աստված նեղվածների պաշտպանն է: Հակոբի սխալվելու պատճառն (ԻԹ 25) այն էր, որ հարսանիքի ժամանակ փեսայի մոտ հարսնացուին բերում էին քողածածկ դեմքով:

2) Հարճերից չորս երեխաների ծնունդը (գլ. Լ), ինչպես գիտենք, համապատասխանում էր ժամանակի օրենքներին (տես հտ. 1, § 21, կետ 5, 2բ): Որոշ մեկնիչներ նշում են, որ հարճերի զավակները (Գադ, Ասեր, Դան, Նեփթաղիմ) նախահայր են եղել բանասացիներին առավել սերտ կապված տոհմերին (նրանք տարածվեցին Պաղեստինի հյուսիսում, հեթանոսների հարևանությամբ):

Ըստ Քահանայական ավանդության (ԼԵ 22-26) Հակոբի բոլոր երեխաները ծնվել են Միջագետքում, իսկ ըստ Էլրիականի՝ Բենիամինը ծնվել է Քանանում (ԼԵ 16-18):

6. Հակոբը Քանանում: Աստծու կամքն այն էր, որ Հակոբը թողնի Միջագետքը: Ինչպես Աբրահամին, նրան ևս ասվել է. «Դուրս արի այս երկրից» (ԼԱ 13): Բայց եթե Աբրահամի ելքն անշահախնդիր հնազանդությունն էր Աստծու կոչին, ապա Հակոբի մղումները Մենդոց Գրքում ներկայացված են երկակի. այդտեղ քիչ դեր չեն խաղում երկրային մղումները (մասնավորաբար՝ Լաբանի իշխանությունից ազատվելու ցանկությունը): Նույն նկատառումներով

¹ Թագավորների բազմակնությունը բացառություն էր՝ թելադրված քաղաքական պարագաներով (Արևելքում հարեմի մեծությունը ցույց էր տալիս թագավորի հարուստ լինելը):

է բացատրվում նաև Ռաբելի քայլը, որ գողացել է Լաբանի «թերափիմներին»¹ (սինոդալ թարգմանության մեջ՝ «կուռք»։ ԼԱ 19, 34-35)։ Հատ նուզիի տեքստերի, ընտանեկան աստվածների այդ փոքր արձանիկներն իրենց տիրոջը ժառանգության իրավունք էին տալիս։ Դրանց նկատմամբ արհամարհական վերաբերմունքը, որ նկատելի է պատումում (Ռաբելը դրանք թամբի տակ էր թաքցրել), արտացոլում է Ծննդոցի հեղինակի վերաբերմունքը կուռքերի նկատմամբ։

Փախուստից և Լաբանի հետ հաշտվելուց հետո Հակոբն ուղևորվում է Պաղեստին։ Այնտեղ նա տեղեկանում է, որ իրեն ընդառաջ են գալիս Եսափի մարդիկ, և կրկին նրան երկյուղ է պատում։ Ապավինելով Աստծուն՝ նա միաժամանակ ձեռնարկում է նախազգուշական միջոցներ։

Խոստացյալ երկրի սահմանին, Հաբոկ գետի մոտ, առեղծվածային դեպք է կատարվում։ Խորհրդավոր մեկը կտրում է Հակոբի ճանապարհը, և պայքարի մեջ է մտնում նրա դեմ։ Այդ պայքարն ասես խորհրդանշում է Սուրբ Երկրի նկատմամբ իրավունքի նոր ձեռքբերում։ Աստծու պարգևը միայն նրան է տրվում, ով ջանք է գործադրում (հմմտ. Մատթ. ԺԱ 12)։

«Ի դեմս Հակոբի ոչ միայն Աստծու ուժը պայքարում է մարդկային հոգու հետ, այլև տեսնում է, «որ չի կարողանում հաղթել նրան»։ Աստծու ուժը կարող է ամեն ինչ, որ կամենա։ Նա կարող է կործանել և բնաջնջել մարդուն, բայց չի ցանկանում։ Այդ ուժը ներքին հաղթանակ է ուզում, որպեսզի մարդն ինքն իր կամքով ենթարկվի Աստծուն և միանա նրան, իսկ եթե մարդը դիմադրում է և չի ուզում Աստծու ուժի ուղղակի ազդեցությանը ենթարկվել՝ ուժը դիմում է գործողության կողմնակի միջոցի. «բռնեց ապրդի ջլերը»։ Ազդրը նշանակում է մարդու նյութական կյանքի ոլորտը... Միայն իր բնական տկարությունը ճանաչելով՝ մարդկային գոռոզ հոգին հնազանդվում է և պայքարի փոխարեն օրհնություն փնտրում... Այսպիսով Աստծու ուժը հասավ նպատակին. մարդկային սկիզբն ինքը, կամովին, խիստ և հետևողական կերպով պահանջում է մտնել աստվածամարդկային միության մեջ, նա օրհնություն է պահանջում և դրանով իսկ ընդունում է իր ենթակայությունը... Բայց Անպատճառ Սկզբին իր ենթակայությունը խոստովանելով՝ մարդը պահպանում է իր հարաբերական ուժը և հաստատում է իր ինքնուրույնությունը. մի բան, որ անհրաժեշտ էր Աստծու նպատակների համար» (Вл. Соловьев, История и будущность теократии, II, XXIII)։

Ս. Գիրքն այդ պայքարի հետ է կապում Հակոբի երկրորդ անունը՝ Իսրայել, որ նշանակում է միաժամանակ և՛ «թող իշխի Աստված» և՛ «Աստծու հետ մարտնչող»²։

¹ Թերափիմ – փոքր կուռք կամ սնապաշտական պատկեր – խմբ.։

² Իսրայել անվան ևս երկու նշանակություն՝ «Աստծուն զովերող էություն» և «Աստծու հետ արդար» (կամ՝ «արդար է Աստված»)։ – Ծան. ոռու. խմբ.։

«Ամենից հավանական է,- նկատում է արդի մեկնիչը,- թե «մարտն Աստծու» հետ խոսում է Հակոբի կյանքում բարոյական ճգնաժամի մասին, որի նկարագիրը տրված է եղբոր հետ մոտակա հանդիպման առթիվ, որի հանդեպ երկյուղը օգնության հուսահատ աղերսանք առաջացրեց: Այստեղ փորձության է ենթարկվում Հակոբի հավատը՝ որոշակի չափով դեռ չփորձված» (Ք. Դ. Фейли):



Ռաբելի դամբարանը Բերդեհեմում

Հակոբի հոգում տեղի ունեցած ներքին բեկման մասին է խոսում այն, որ նա բնակվելով Սյուբեմում (եղբոր հետ հաշտվելուց հետո) հրամայում է «Վերացրեք ձեր միջից ձեզ մոտ եղած օտար աստվածները» (ԼԵ 2-4) և Լաբանի թերափիմները թաղում է հողում:

Սյուբեմի մոտակայքում Հակոբն իր համար հողամաս է գնում և այնտեղ կանգնեցնում է զոհասեղան Իսրայելի Աստծու համար (ԼԳ 18-20): Նրա տոհմը մի այլ հողամաս է նվաճում ամորհացիների հետ մարտնչելով (ԽԼ 22): Բնագրում այդ հողն անվանված է «ԴՈՃ ԾՉՊ – ՇԵՆՆՄ ԱՆԱՂԻ», այսինքն՝ որոշ հողակտոր Սյուբեմի տարածքում: Բայց այդ հողը չի կարելի նույնացնել Սյուբեմ քաղաքին, որ զավթեցին ու կողոպտեցին Հակոբի որդիները՝ վրեժ լուծելով իրենց քրոջ արատավորված պատվի համար (ԼԵ): Նրանց նենգությունը սյուբեմացիների նկատմամբ Հակոբը խստությամբ դատապարտեց:

Ծանոթություն

Սյուբեմը, որ փռված է Գերաղ և Գարիզիմ լեռների միջև, Հակոբի ժամանակներից սկսած իսրայելացիների կրոնական կենտրոններից էր: Հնարավոր է որոշ տոհմեր այնտեղ էին մնացել անգամ այն բանից հետո, ինչ Հակոբը տեղափոխվեց Եգիպտոս: Այս իսկ պատճառով Հետու Նավեն Սյուբեմը գրավելու կարիք չուներ և հենց այն դարձրեց իր հենակետը (տես ստորև): Սյուբեմի մոտ ծեսեր էին կատարվում, որ նկարագրված են Բ Օրինաց ԻԷ-ում:

7. **Հովսեփի Իսրայելի որդիները Եգիպտոսում** (ԼԷ 35-50): *Ք. ծ. ա. մոտ 1720 թ.* (տե՛ս հտ. 1, § 22, կետ 1 և § 22-ի Հավելվածը) *հիքսոսները Քեբրոնից շարժվեցին դեպի Եգիպտոս: Փարավոնների երկիրն այն ժամանակ ներքին հակամարտությունների և ավերածության մեջ էր: Այս էր պատճառը, որ Ասիայից եկած զորագնդները հեշտությամբ գրավեցին Նեղոսի գետաբերանն ու իրենց իշխանությունը հաստատեցին: Նրանք կառուցեցին Հեթվարդ, կամ Ավարիս քաղաքը (հետագայում՝ Չանն, եբր. Ցուան, հուն. Թանիս)¹, որ մայրաքաղաք դարձրին: Աստվածաշունչն նշում է, որ այս քաղաքը Քեբրոնի բերդից յոթը տարի ուշ էր կառուցված (Թվեր ԺԳ 23):*

Հիքսոսյան փարավոնները կառավարեցին մոտավորապես հարյուր տարի: Եվ չնայած նրանք յուրացրել էին եգիպտական մշակույթն ու սովորույթները, հիքսոսներին ասում էին և անվանում «անիծյալներ» և «բորոտներ»: Ըստ երևույթին այս շրջանին է վերաբերում Իսրայելի որդիների Եգիպտոս տեղափոխվելը: Եգիպտացիներին չվստահելով՝ հիքսոսները սիրով հովանավորում էին Քանանից եկածներին:

1914 թ. լույս տեսավ Մոսկվայի հոգևոր ակադեմիայի պրոֆեսոր Դ. Վվեդենսկու հիմնարար աշխատությունը Հովսեփի մասին: Ի մի բերելով պատմական մեծածավալ նյութը՝ հեղինակը ցույց է տվել, թե անգամ մանրուքներում որքան ճշգրիտ է Աստվածաշունչը վերարտադրում եգիպտական միջավայրն ու ավանդույթները: Տակառապետի եւ մատակարարի պաշտոնները, երազների մեկնությանը տրվող նշանակությունը, Հովսեփի զբաղեցրած դիրքը պետական համակարգում և շատ այլ հանգամանքներ լիովին հաստատվում են եգիպտագետների տվյալներով, չնայած հենց իր՝ Հովսեփի վերաբերյալ եգիպտական ուղղակի վկայություններ չեն պահպանվել: Սա բացատրվում է նրանով, որ հիքսոսներին վտարելուց հետո եգիպտացիները ոչնչացրել են օտարերկրյա լծի մասին հիշեցնող բոլոր հուշարձաններն ու տարեգրությունները:

Հովսեփի մասին պատումը, որ պահպանվել է երկու նույնական տարբերակով, գեղարվեստական առումով բիբլիական պատմության արձակի գոհարն է: Վաղուց անտի այն մշտապես իր վրա է սևեռել բանաստեղծների, նկարիչների ու գրողների ուշադրությունը (ի մասնավորի պատմությունը թոմաս Մաննի «Հովսեփն ու իր եղբայրները» վեպի² հիմքն է կազմել): Ծննդոց Գրքի հեղինակն ավանդությունը շարադրում է դեպքերի կտրուկ փոփոխություն ունեցող պատմության ոգով: Աստվածաշունչն ընթերցողն կարծես դառնում է եղբայրների հանցանքի և որդուն ողբացող Հակոբի հուսահատության վկան: Հովսեփի հետ մենք ասես փոխադրվում ենք եգիպ-

¹ Հայերենում Տանիս, Տայանիս – խմբ.:

² Томас Манн, Иосиф и его братья, издание на русском языке, AST Publishers, 2010.

տական պաշտոնյայի տունը, ուր նրան սպասում է գայթակղություն և բարոյական հաղթանակ, հետո բանտ, և վերջապես փարավոնի պալատը: Հուզիչ պատկերը, երբ Հովսեփը փառքի գագաթին հասած, բացահայտում է իր ինքնությունը եղբայրների առջև, գրված է վարպետորեն, այդտեղ ցույց է տրված նրա խստությունն ու մեծահոգությունը, նրա ըմբռնումը Տիրոջ նախախնամության ճանապարհների:

Պատումի իմաստը հակիրճ արտահայտված է Հովսեփի խոսքով՝ ուղղված իր եղբայրներին. «Դուք մտածեցիք ինձ չարիք պատճառել, բայց Աստված իմ նկատմամբ բարի վարվեց»¹ (Շ 20): Հովսեփը ցանկացած ձախորդության ժամանակ հավատարիմ էր մնում Աստծուն, որը և նրան դարձրեց իսրայելացիների փրկության գործիք: Անտեսելով դժվարությունները, փորձությունները և մարդկանց շար կամքը՝ ավերիչ արշավանքների ու սովի ժամանակներում Տերը պահպանեց իր ժողովրդի ապագայի կորիզը:

Հովսեփի զրույցի վերջում պատմվում է Հակոբի մահվան և Հովսեփի վախճանի մասին: Առաջինին թաղում են Քանանում, իսկ երկրորդը պատգամում է ապագայում իր աճյունը Եգիպտոսից տեղափոխել Ավետյաց երկիր: Բնակություն հաստատելով Նեղոսի գետաբերանի արևմուտքում, Գեսեմում (եբր. ԵՄՁ Գոճեն)՝ Ավարիսի մոտ, Իսրայելի որդիները չեն կամենում կապը կորցնել երկրի հետ, որ Աստված խոստացել է նրանց նախահայր Աբրահամին:

Ծանոթություն

1) ԽԹ գլխում գետեղված է «Հակոբի օրհնությանը» անունով պոեմը: Իր ներկա ձևով այն գրվել է ավելի ուշ, հավանաբար դատավորաց դարաշրջանում: Այն բնութագրում է Իսրայելի տասներկու ցեղերը, որոնց մեջ հատկապես առանձնացված է *Հուդան*: Տասներորդ համարի խոսքը՝ «մինչև չգա Հաշտարարը» բառացի թարգմանվում է որպես «մինչ Սելով չգան»: Սելովն աստվածպաշտության առաջին վայրերից է Իսրայելի՝ Եգիպտոսից Քանան մտնելուց հետո (Հեսու ԺԸ 9-10, Դատ. ԺԸ 31, Երեմ. ԼԶ 12): Սելովն աստվածաշնչական եզրութաբանությամբ նշանակում է մեսիական թագավորություն: Խոսքի իմաստը՝ Հուդայի ցեղը բարձրացված կլինի Աստծու ժողովրդի մեջ, մինչև չկատարվի խոստումը:

¹ Ռուսերեն սինոդալ թարգմ. մեջ վերջին հատվածն այսպես է. «բայց Աստված դա բարիի վերածեց» – խմբ.:

² Ռուս. «доколе не придет Примиритель, и ему покорность народов», հայերենում՝ «մինչև որ գա նա, ում պարկանում են հանդերձյալները». – Ծան. թարգմ.:



Գեսեմի (Գոշեմ) շրջանի հին ավերակները Նեղոսի Դելտայի արևմուտքում

2) Տասներկու թիվն Աստվածաշնչում նվիրական է: Դա նշանակում է ընտրյալների ամբողջություն: Հնում տասներկու ցեղերը կապվում էին Կենդանակերպի տասներկու նշանների հետ, որոնց համապատասխանում էին տարբեր խորհրդանիշներ, այդ թվում թանկարժեք քարեր (հմմտ. Հայտն. ԻԱ 19-20): Այդ կապը ցույց է տալիս Աստծու տիեզերական մտահղացումները Եկեղեցու նկատմամբ:

Հարցեր կրկնության համար

1. Հակոբի դարաշրջանը համաշխարհային պատմության ի՞նչ իրադարձություններով է նշանավորվել:
2. Աստվածաշունչն ի՞նչպես է նկարագրում Հակոբի կերպարը:
3. Հակոբն ի՞նչպես է անվանում Աստծուն:
4. Ինչպիսի՞ն էր աստվածաշտությունը Հակոբի դարաշրջանում:
5. Հակոբի պատմությունն ի՞նչպես է կապված Քանանի հին քաղաքների հետ:
6. Ի՞նչ էր նշանակում Հակոբի երազը:
7. Ո՞րն է նրա ընտրության իմաստը:
8. Նշեցե՛ք Հակոբի՝ Միջագետք գնալու երկու պատճառ:
9. Ինչի՞ վրա էր հիմնված անդրանիկության վաճառքը:
10. Հակոբին ի՞նչն ստիպեց վերադառնալ Քանան:
11. Ի՞նչ էր նշանակում՝ «մարտ Աստծու հետ»:
12. Հակոբն առաջին անգամ որտե՞ղ ձեռք բերեց սեփական հող:
13. Եգիպտական պատմության ի՞նչ փաստերի հետ է կապված Հովսեփի պատմությունը:
14. Ինչո՞վ է բացատրվում Հովսեփի պալատական առաջխաղացումը:
15. Ի՞նչ գրական առանձնահատկություններ ունի Հովսեփի պատմությունը:
16. Ո՞րն է դրա հիմնական իմաստը:

§ 22-ի Հավելված

1. Եզրիպտական քուրմ Մանեթոնի¹ պատմածը հիբսոսների արշավանքի մասին

Մանեթոնի (թ. ա. Գ դար) «Էզրիպտիկա» երկը չի պահպանվել: Դրանից հատվածներ բերվում են Հովսեպոս Փլավիոսի «Ընդդեմ Ապիանոսի» գրքում (1, 14):

«Հայտնի չէ՝ ինչու Աստված զայրացավ, և արևելյան երկրներից հանկարծ մեր երկրի վրա հարձակվեցին անփառունակ ծագման, բայց և քաջակորով մարդիկ, և հեշտուկամբ գրավեցին երկիրը, առանց մարտի և բռնություն»: Նրանք հաղթեցին եղած բոլոր իշխաններին, հետո անխնա հրդեհեցին քաղաքները և ավերեցին աստվածների տաճարները: Նրանք բնակչության հանդեպ ամենազաժան վերաբերմունքը դրսևորեցին, ոմանց սպանելով, մյուսներին՝ կանանց ու երեխաների հետ ստրկացնելով: Այդ ամենից հետո նրանք իրենց միջավայրից թագավոր ընտրեցին, որի անունը Սալիթիս էր²: Սա իր նստավայրը հիմնեց Մեմփիսում, հարկ նշանակեց Վերին և Ներքին հողերին (այսինքն՝ Վերին Եգիպտոս և Դելտա) և առավել հարմար կետերում կայազոր նշանակեց: Բայց հատկապես նա ամրացրեց արևելյան ծայրամասերը, սպասելով, որ ասորեստանցիք, ուժ կուտակելով, երբեք կհարձակվեն իր թագավորության վրա՝ ցանկանալով տիրանալ: Սետրոտի մարզում՝ Նեղոսից արևելք, գտնելով շատ հարմար դիրքով մի քաղաք, որն ըստ հին կրոնական ասքի կոչվում էր Ավարիս՝ կառուցապատեց այն, ամրացրեց շատ ուժեղ պատնեշներով և տեղավորեց բազմամարդ զորակայան»:

Մանեթոնի տվյալներով, որ լրացված են հնագիտական նյութերով, հիբսոս փարավոնները (ԺԵ-ԺՁ հարստություններ) հետևյալ անուններն ունեին. Սալիտիս, Բնոն, Ապախնան, Ապոփիս (Ապոփի), Իաննես (Իան), Կերտոս (Խամուդի), Հակոբ-էր, Սեմկեն, Անատ-էր: Անունների մի մասն ակնհայտորեն սեմական են: Եվսեբիոսի «Ժամանակագրության» մեջ պահպանված ավանդության համաձայն Հովսեփ նահապետի ժամանակակիցը եղել է Ապոփիս փարավոնը: «Հիբսոսներ» բառը Մանեթոնը մեկնում է որպես հովիվ-թագավորներ: Բացառված չէ, որ այստեղ առկա է արձագանքն այն բանի, որ նվաճողներն առաջնորդում էին անասնապահ ժողովրդին: Այստեղից հասկանալի են դառնում Ծննդ. ԽՁ 34-ի խոսքերը. «որովհետև եզրիպտացիները խորշում էին ոչխարների հովիվներից»:

¹ Մանեթոն – Թ. ա. Գ դար, եգիպտացի պատմիչ, Հելիոպոլիսի քուրմ, ծնված Սեբենիթ քաղաքում, Պտղոմեոս Երայրասերի ժամաքնակ (282–246):

² Այլ ընթերցմամբ Սիլիտիս. – Ծան. ռուս. խմբ.:

Հիքսոս թագավորների անունով առարկաներ գտնվել են ոչ միայն Եգիպտոսում, այլև Սինայում ու Պաղեստինում

2. Փարավոնի՝ վեպիրին վերաբերող հրահանգներից

Փարավոնի պալատում Հովսեփի պաշտոնը համապատասխանում էր վեպիրի պարտականություններին: Այդ աստիճանավորի իրավունքների մասին մանրամասն հաղորդում է Թեբեում եղած արձանագրությունը (Ք. ա. ԺԵ դար):

«...Նա է, որին պիտի զեկուցեն փարավոնին դիմող ամեն մի խնդրատուի մասին, այն բանից հետո, երբ վերջինս գրավոր կշարադրի իր խնդրանքը: Նա է, որ պիտի ուղարկի պալատի բոլոր վստահելիներին, որ պիտի առաքվեն տեղական իշխանների ու քաղաքագլուխների մոտ...»

Նա է, որ պիտի նշանակի Վերին և Ներքին Եգիպտոսում բարձր ծառայության պաշտոնակատարներ... Սրանք չորս ամիսը մեկ իրեն զեկուցելու են ամեն ինչի մասին, որ իրենց մոտ կատարվում է... Նա է սահմանելու զորքի ընդհանուր թիվը, որ շարժվելու է թագավորի ետևից՝ հյուսիս և հարավ ուղևորվելիս: Նա է բացահայտելու Թեբեում և նստավայրում ժամանակին չվճարված հարկերը»:

Քաղվածքը՝ ХДВ, 1963, էջ 95:

3. Եգիպտոսի յոթնամյա սովը և հողային բարեփոխումը

Եգիպտոսի հողագործությունը կախված էր Նեղոսի ողողումներից: Երբ ջուրը քիչ էր և մակընթացություն չկար՝ երկիրը սովի էր մատնվում: Սոված տարիների մասին շատ եգիպտական հուշարձաններ են հաղորդում, ընդ որում, դրանցից մի քանիսը սովի տևողությունը յոթ տարի են համարում: Ստորև բերվող բնագիրը վերաբերում է Ջոսեր փարավոնի (Ք. ա. մոտ. 2778–2750 թթ.) ժամանակին: Թագավորը գրում է իր փոխարքային:

«Ես խիստ անհանգստացած եմ նրանց համար, որ իմ պալատում են: Սիրտն իմ մեծապես փոթորկված է աղետի պատճառով, քանի որ իմ օրոք Նեղոսը յոթ տարի շարունակ չի ողողում: Դաշտային հացաբույսերը պակասել են, խոտ չկա, սնունդը չի բավարարում: Յուրաքանչյուրը կողոպտում է իր մերձավորին: Մարդիկ հագիվ են քայլում: Մանուկները լալիս են»:

J. B. Pritchard (ed). The Ancient Near East: An Antology of Texts and Pictwures, v.1, Princeton, 1958, p. 25:


Մինչև հիքսոսների ներխուժումը՝ նոմերի (մարզ) կառավարիչները համարվում էին իրենց հողերի սեփականատեր: Նրանց վտարելուց հետո երկրի հողերն արդեն կենտրոնացվեցին: Երևում է, որ այդ կենտրոնացումը տեղի է ունեցել հիքսոսների ժամանակ: Պատմաբաններն այդ փաստի հետ են կապում Հովսեփի բարեփոխումների վերաբերյալ պատումը (Ճննդ. ԽԵ 20-26): Պետք է նշել, որ քուրմերի հողերը մնացին իբրև նրանց սեփականություն: Դա լիովին համապատասխանում է 22-րդ համարին. «որովհետև Յովսեփը դրանք չզնեց, քանի որ փարավոնը քրմերին առատորեն պարգևատրում էր»:

ՄՈՎԱՍԵՍ

(Ք. ա. ԺԳ դար)

§ 23. Մովսեսը և Ելքը: Աստված իբրև Փրկիչ և պատմության տիրակալ (Ելք Ա-ԺԸ)

1. Մովսեսը և Ելքի թեման եկեղեցական ավանդության մեջ: Մովսեսի կերպարը և Ելից պատմությունը կարևոր, թերևս կենտրոնական տեղ են զբաղեցնում մարգարեական մատենագրության և սաղմոսների մեջ: Բայց դրանք նոր Կտակարանի համար նույնպես պահպանում են իրենց նշանակությունը: Քրիստոս Փրկիչն ինքը, թվելով կարևորագույն պատգամները, մեջ է բերում հին Մովսեսական հավատո հանգանակը (Մարկ. Ժ 19): Լեռան քարոզում նա մեկնում է, խորացնում և ձևափոխում Օրենքը (Մատթ. Ե 17-25): Ինչպես ասում է Սբ. Իրենեոս Լիոնացին՝ Տերը «հորդորեց ձեռնպահ մնալ ոչ միայն Օրենքով արգելված գործերից, այլև դրանց ցանկությունից... Դա հատուկ է Նրան, ով չի կործանում Օրենքը, այլ լրացնում է, ընդլայնում և տարածում» (Против ересей, IV, 13, 1):



Մովսես: Քանդակ,
Միքելանջելո, 1515 թ.

Թեպետ Ելից Գրքի իրադարձությունները Բանի մարմնացումից բաժանված են ավելի քան 13 դարով՝ Եկեղեցին միշտ դրանց մեջ տեսել է գործերն այն նույն Աստծու, որը հայտնվեց մարդկանց՝ ի դեմս Հիսուս Քրիստոսի (տես Սվ. Իստին, Դիալոգ ս Կրիստոս, II): Պողոս առաքյալի խոսքով՝ անցումը ծովով և մանանան մկրտության ջրերի և երկնային հացի՝ Քրիստոսի նախօրինակ են (Ա Կորնթ. Ժ 1-11): Սա մակերեսային նմանությունն է, այլ երկու Ուխտերի խորքային կապի վկայությունը: Երկուսի մեջ ևս Աստված Իրեն ներկայացնում է որպես Ազատարար, որ փրկություն է շնորհում:

Փրկության խորհուրդն աստվածամարդկային բնույթ ունի: Տերն ազատում է, բայց և ժողովուրդը պիտի մասնակցի Աստծու մտա-

հղացումներին, արձագանքի Նրա կոչին, ինչպես երբեմն Աբրահամն ու Հակոբը: Մարդկանց ազատ հնազանդությունն անհրաժեշտ է Աստծու Նախախնամությունը: Աստված հավատարիմներին ազատագրում է գերությունից, ուստի Քրիստոսի վկաների խմբերը Հայտնության մեջ (ԺԵ 3) «երգում էին Մովսեսի [Աստծու ծառայի] երգերը և Գառան երգերը», այդ պատճառով խորհրդավոր Ընթրիքի՝ Նոր Կտակարանի Աստվածային Սեղանը հագեցած է Ելքի և Զատկի խորհրդաբանություններով: Հինկտակարանյան Պասեքի պարագաները (գառ, զոհ, հաց, ազատագրում, խոստում, սեղան, գոհություն) մինչև այժմ պահպանված են մեր Հաղորդության խորհրդի մեջ: Վաղ քրիստոնեական որմնանկարներում, խճապատկերներում, սրբապատկերներում կարելի է տեսնել մշտական անդրադարձ Ելքի պատմությանը: Առավոտյան կանոնի առաջին երգի ընթերցվածները Մովսեսի երգի նոր-կտակարանյան արտահայտություններն են¹:

2. Գիրք Ելից: Մովսեսի կոչումի, Աստծու ժողովրդին ստրկությունից ազատելու և Ուխտը կնքելու մասին պատմում է Ելից գիրքը:

Գրքի կառուցվածքը բավական բարդ է: Այն պարունակում է էպիկական պատմաներ Իսրայելի որդիների եգիպտական ստրկության, Մովսեսի կոչման (Ա-Ե), հանուն ժողովրդի ազատագրության՝ Փարավոնի դեմ Մովսեսի պայքարի (Զ-ԺԱ), զատկական արարողությունների հրահանգի (ԺԲ) և Եգիպտոսից Ելքի (ԺԲ-ԺԳ) մասին: Այնուհետև Գիրքը ընդգրկում է Մովսեսի երգը (ԺԵ), Թափառումների պատմությունը դեպի Սինա լեռը (ԺԶ-ԺԸ), այնուհետև Ուխտի կնքումը և Օրենքի ստանալը (ԺԹ), ինչպես և Օրենքի տեքստերը՝ Տասնաբանյան (10 պատվիրանները) և Ուխտի Գիրքը (Ի-ԻԴ). պարունակում է Տապանակի և Վկայության խորանի նկարագրությունը (ԻԵ-ԼԱ), ոսկե հորթի պատմությունը և Ուխտի նորոգումը (ԼԲ-ԼԴ) և Վկայության խորանի կառուցումը (ԼԵ-Խ):

Այս կառուցվածքը պայմանավորված է Գրքի բնույթով, որ ոչ թե իրադարձությունների ժամանակագրություն է՝ գրառված անկողմնակալ ժամանակակցի գրչով, այլ աղոթական ժողովների համար նախատեսված աստվածաշտակական և խրատական տեքստեր են (հմմտ. Գործք ԺԵ 21): Ամենից առաջ Ելից գիրքը Պասեքի գիրքն է, որ ընթերցվում էր Ուխտի տոնին: Իր հիմքերով հանգելով Մովսեսին՝ այն, ժամանակակից մեկնիչների կարծիքով, վերջնական տեսք է ստացել լոկ նրա մահից հետո և այստեղ, ինչպես և Հնագամայանի մյուս մասերում, նկատելի է չորս ավանդույթ (տես վերևը՝ հտ.1, § 15 և 16):

¹ Հայ եկեղեցում նույնպես Ելքի պատգամները արտահայտված են ժամերգությունների մեջ, մասնավորաբար Գիշերային ժամերգության ավագ Օրհնություններում, որոնց սկսվածքը հենց Մովսեսի երգի առաջին տողերն են (ԱԿ, ԳԿ – երգեցեք Տեսնոն երգ նոր...) – խմբ.:

Ելից գրքի հիմնական միտքն այն է, որ Աստված հավատարիմներին ստրկութունից ազատության է տանում: Ազատությունը, սակայն, ինքնակամություն չի նշանակում, այլ հավասարակշռվում է Օրենքի պատգամներով, որոնք մարդն ընդունում է կամովին: Ազատությունը մարդկանցից սխրանք է պահանջում, հոգևոր ջանքեր: Սրբազան հեղինակը ցույց է տալիս, որ մարդը դժվարությամբ է ընկալում այդ պարզերը և ազատությունը կարող է ծանր բեռ հանդիսանալ նրա համար: Իսրայելի թափառումները անապատում փորձության է վերածվում, որին մարդիկ հաճախ ի վիճակի չեն դիմակայել: Աստված ոչ միայն ազատագրում է հինկտակարանյան Եկեղեցին, այլև հաղթահարում է նրա անդամների երկշտությունն ու համառությունը: Մովսեսն իսրայելին հաղորդում է Աստծու Անունը (տե՛ս ստորև՝ կետ 4), որ վկայում է Հայտնության նոր փուլի մասին:

Արարչի կամքն է, որ Ուխտի միջոցով հաստատվի միություն մարդկանց հետ: Դրա հետ է կապված Աստծու անվանումը Ելից գրքում. «պատերազմող այր է» (ռուս. պատերազմ խորտակող է¹, եբր. אֵש־מִלְחָמָה – *իՇ ՄիլիսԱՄԱ*): «Կենդանի հայտնվող Աստված Իր ստեղծած աշխարհի պատմությունն ընտրեց իբրև մարտադաշտ մարդկային դաժանության դեմ, որպեսզի մարդուն Իր հետ հաղորդակցության բերի: Աստծու այդ պատերազմը պատմությունը դարձնում է սրբազան» (св. А. Князев. Господь, Муж брани. – ПМ, 1949, в. VII, էջ 114):

Ծանոթություն

Ելից գրքի տարբերակիչ առանձնահատկություններից մեկը, ինչպես և Հեսու Նավեի գիրքը Հնգամատյանին մերձեցնող՝ հիսաբանչ նշանների ու հրաշքների առատությունն է: Դրանց ընկալումը կապված է երկու խնդրի հետ. 1) *հրաշքի հանգամանքը որպես այդպիսին* և 2) աստվածաշնչական պատումների *տեսակի* (ժանրերի) հարցը (տե՛ս վերևը՝ § 9):

Առաջին խնդիրը վերաբերում է հիմնական աստվածաբանության ոլորտին: Հրաշքի հնարավորությունը բնականորեն բխում է Աստծու ամենագորությունից: Աշխարհի օրենքների Արարիչն ի գորու է դրանց տալու այլ ուղղություն կամ դրանք ենթարկելու Իր կամքին: Այնուամենայնիվ բոլոր ժամանակներում հրաշքները, որպես կանոն, մարդու ավատության իրավունքը չեն ոտնահարում, նրան հավատ չեն պարտադրում (ինչնք, որ հարուցյալ Քրիստոս չհայտնվեց Իր թշնամիներին): Իսկական հրաշքը կասկածանքի տեղ է թողնում՝ ընդունելու կամ մերժելու: Այն հավատացող սրտերին բաց է անում Աստծու ներկայությունը: Սա վերաբերում է նաև հինկտակարանյան հրաշքներին:

¹ Հայերենում նույնն է՝ տե՛ս Ելք ԺԵ 3 – խմբ.:

«Երբ հրեշտակները ծննդյան երգեր էին երգում հավատավոր հովիվների առջև, և երբ Գողգոթայի մեզը ծածկում էր ամբողջ երկիրը, արտաքին աշխարհը քնած էր, ուտում, խմում, գնում ու վաճառում և իր գորշ առօրյան էր անցկացնում՝ արտառոց ոչինչ չնկատելով: Երբ Մովսեսն ամպրոպին և փոթորկին Սինա էր բարձրանում՝ առանձնանալու և աղոթելու համար, հավատացյալ ժողովուրդը սրտատրոփ սպասում էր Աստծու մոտալուտ հայտնությունը, իսկ շրջակա քոչվոր ցեղերը՝ Իսրայելի նոր վերաբնակչի թշնամիները, ոչ մի Պենտեկոստե¹ չէին նկատում, այլ միայն տեսնում էին սովորական ամպ՝ կայծակով ու որոտով: Իսրայելի ժողովրդի համար փախուստը Եգիպտական ստրկությունից՝ հեքիաթային հրաշքներով էր լի: Բարեհաջող անցումը Կարմիր ծովի արևմտյան նեղուցով՝ տեղատվության պահին, երբ հաջողակ հողմն էր ուղեկցում իրենց, և ամեն ինչում բացահայտ էր Աստծու օգնությունը՝ անմոռանալի մի ապրում էր, որ սկիզբ դրեց իսրայելացիների լինելության նոր դարաշրջանին... Մինչդեռ Եգիպտոսը նույնիսկ չնկատեց կարևորությունը, առավել ևս այդ իրադարձության հրաշալիությունը և ոչնչով չդրոշմեց իր հիշողության մեջ» (Карташев А. В., Ветхозаветная библейская критика, էջ 42–43):

Բայց այդ պարագային ինչո՞ւ Հին Կտակարանի որոշ հրաշքներ, հատկապես Ելքի և Հեսու Նավեի ու Դատավորների գրքերում, թվում են չափազանց ակնառու, անհերքելի ապացույցներ Աստծու իշխանության: Նահանջում է ծովը, հավաքատեղում շարժվում է հրե սյունը, արևը կանգ է առնում Հեսուի խոսքով, «աստղերը մարտնչում են երկնքից»: Արդի մեկնաբանների մեծ մասի կարծիքով՝ այդ հրաշքների նկարագրությունները պետք է հասկանալ սուրբգրական և ընդհանրապես արևելյան բանաստեղծության չափազանցված լեզվի լույսի տակ, որոնց հատուկ են գեղեցիկ չափազանցություններ, տեսանելի պատկերներ, որ ցնցում են մարդու երևակայությունը: Օրինակ, երբ գրքում ասված է՝ «լեռները ցատկում էին ինչպես գառ»², պարտադիր չէ այստեղ երկրաշարժ հասկանալ. սա Տիրոջ Փառքի հայտնության պատկերն է, որի առջև դողում է երկիրը:

Բանական միտքը ձգտել է սուրբգրական բոլոր հրաշքները հանգեցնել բնության սովորական երևույթներին: Մինչդեռ պատմությունը շատ բնական զղեւններ գիտե (օրինակ՝ Վեզուվի ժայթքումը), բայց դրանք նոր կրոն չեն ծնել: Մովսեսի և Հեսու Նավեի օրերին կատարվածն ավելի մեծ մի բան էր՝ արմատավորված Հոգու աշխարհում:

¹ Հունարեն նշանակում է 50-րդ: Եգիպտոսից դուրս գալու 50-րդ օրը՝ Մովսեսը ստացավ օրենքի տախտակները (տե՛ս Ելք ԽԴ 22, Ղևտ. ԻԳ 15) – խմբ.:

² Հայերենում՝ Լեռները ցնծացին խոյերի պես – Սաղմ. ՃԺԳ 3–4 – խմբ.:

3. Իսրայելի որդիները Եգիպտոսում (Ել. Ա 8-22): *Ինչպես արդեն գիտենք* (տե՛ս հտ. 1, § 12, կետ 8 և § 22, կետ 6), *Ք. ա. XVI դ. հիքսոսները վտարվեցին Եգիպտոսից, նրանց Ավարիս ամրոցն ավերվեց, և իշխանությունն անցավ տեղական հարստության: Սրա կենտրոնը դարձավ Թեբեն* (եգիպտերեն Նուտ, եբր.՝ Նո կամ Նո-Ամոն՝ Ամոն աստծու քաղաք): Փարավոնների հաջող արշավանքները Նուբիա, Պաղեստին, Ասորիք և նույնիսկ Եփրատի կողմերը հանգեցնում են Եգիպտական կայսրության ստեղծման: Կայսերական Ամոն աստծու ազդեցության աճը քուրմերի շրջանում նպաստում է միաստվածական միտումներին: Իսկ ժողովրդական զանգվածները շարունակում են նախանձախնդրորեն պաշտել բազմաթիվ տեղական աստվածներին: Սրանով է բացատրվում էքնաթոն թագավորի անհաջողությունը, որ աշխատում էր մոռնել Աթոն միակ աստծու պաշտամունքը: Բայց անգամ նրա բարեփոխման ձախողումից հետո միաստվածության հակումը նկատելի է շատ օրհներգերում ու գրվածքներում (տե՛ս հտ. 1, § 23, հավելված 1 և 2):

Ամբողջ այդ ժամանակ Իսրայելի որդիները տոհմերն ապրում էին Գեսեմ մարզում՝ Դելտայից արևելք: Աստվածաշունչը քիչ բան է հաղորդում այդ երկարատև շրջանի մասին (մոտ. 400 տարի): Հավանաբար այդ ընթացքում չեն եղել ո՛չ ականավոր մարդիկ, ո՛չ նշանավոր իրադարձություններ: Խաղաղ անասնապահների միօրինակ կենցաղը ոչնչով չէր խախտվում շատ սերունդների կյանքում: Պետք է ժամանակի այդ հատվածից նշել միայն երեք փաստ.

ա) Իսրայելացիների որոշ մասը Քանան վերադարձավ դեռևս Մովսեսից առաջ. Ա Մնաց. է 21, 24-ի ժլատ խոսքերի համաձայն այդ մարդիկ պատկանում էին Եփրեմի ճյուղին, որ անուղղակիորեն հաստատվում է հետևյալով. Հեսուն եփրեմյանների մարզը գրավեց առանց պայքարի ու Սյուբեմը դարձրեց իր նստավայրը կենտրոնական Պաղեստինում: Աստվածաշնչագետների մեծամասնության կարծիքով վերաբնակների երկու հոսքերի առկայությունը (Մովսեսի հետ եկածների և նրանից առաջ) սկիզբ դրեց Իսրայելի երկու մշակութային ավանդույթի (հյուսիսային և հարավային), որոնց հակամարտությունը ձգվում է ամբողջ սրբազան պատմությունով մեկ: Ենթադրյալ առաջին ելքի ժամանակը որոշված չէ: Եգիպտական Մանեթոն քուրմը հաստատում էր, որ հրեաները երկրից հեռացան փարավոնների երկրից նահանջող հիքսոսների հետ (տե՛ս Иосиф Флавий, Против Апиона, 1, 14, 15): Թուլթմոս Գ-ի զինվորական տարեգրության մեջ (մոտ. 1500 թ.) հիշատակված է պաղեստինյան քաղաք (կամ տեղանք) Իոսիֆելը: Բացառված չէ, որ դա կապված է վերաբնակ-եփրեմյանների հետ: Մոտավորապես 1400 թ. Պաղեստինում եգիպտական դրածոներին սպառնում էին «խաբիրի» ցեղերը (տե՛ս հտ. 1, § 20, կետ 8բ), որոնց երբեմն նույնացնում են հրեաների հետ:

բ) Բնակվելով Գեսեմոմ՝ Իսրայելի որդիները պահպանել են նահապետների և նախնական ժամանակների վերաբերյալ ավանդույթյունները: Հենց այդ ավանդույթյուններն են ընկած Ծննդ. Ա-ԺԱ գլուխների պատումների հիմքում:

զ) Եգիպտոսում եղած ժամանակ ժողովուրդը կրոնական ուսուցիչներ չունեի, և բացի «Աբրահամի Աստուծոց» պաշտում էր հեթանոսական աստվածների (Յեսու ԻԴ 14, Եզեկ. Ի 5-8, ԻԳ 3, ԺԹ 21): Այդ աստվածների թվում էր անապատի դև Ազազելը, որին հովիվները զոհ էին մատուցում, որ նախիրները պաշտպանի համաճարակից: Իսկ եգիպտական ազգային պաշտամունքները հավանաբար չէին թափանցում իսրայելական միջավայր:

Եգիպտոսում կարևորագույն իրադարձությունների ժամանակագրություն Իսրայելի՝ այնտեղ եղած ժամանակ

Ք. ա. Մոտ. 1580-1570 թթ.	Ապստամբություն հիբսուսների դեմ և նրանց վտարումը: Ցահմոս Ա
Մոտ. 1500 թ.	Թութմոս Գ-ի պատերազմներն Ասորիքում: Կայսրության ստեղծումը
Մոտ. 1380 թ.	Լուքսորի մեծ տաճարի կառուցման սկիզբը
Մոտ. 1370 թ.	Էքնաթռնի կրոնական բարենորոգությունը
Մոտ. 1314 թ.	19-րդ հարստության սկիզբը: Ռամզես Բ
Մոտ. 1280 թ.	Ռամզես Բ-ի պատերազմները քետացիների դեմ
Մոտ. 1224 թ.	Ռամզես Բ-ի մահը: Մերնեփթափի թագավորելը: Լիբիացիների և «ծովի ժողովուրդների» հարձակումը:

ԺԳ դարի սկզբին Ասորիքում ավարտելով քետացիների դեմ պատերազմները՝ Ռամզես Բ փարավոնն իր նստավայրը տեղափոխում է Նեղոսի գետաբերան և ձեռնարկում շինարարական լայնածավալ աշխատանքներ: Հիբսոսյան հին Ավարիսի տեղում նա կառուցում է նոր քաղաք՝ Պի-Ռամզես (Ռամզեսի տուն): Աշխատանքներին ներգրավված էին ռազմագերիներ և անազատներ, ինչպես և օտարերկրացիներ: Ռեխմիրեի¹ դամբարանի (Թեբե) պատերին պատկերված են ասորի բանվորներ, որ աղյուս են պատրաստում, իսկ Ռամզես Բ-ի ժամանակի վավերագրերից մեկում կա հրաման՝ «անունդ բաժանել գինվորներին և ապերուններին, որոնք քար են մատակարարում մեծ պիլոնի² համար»: «Ապերու» եզրույթը համապատասխանում է «խաբիրի» բառին³: Ելից գրքի ավանդույթյունը (Ա 11) վկայում է, որ հենց

¹ Եգիպտ.՝ Rekh-Mi-Re՝ «իմացող՝ ինչպես Ռան» - Ք. ա. XVIII դ. պետական գործիչ, Թութմոս Գ և Ամենհոթեփ Բ-ի կառավարման շրջանում Թեբեի կառավարիչ: Պահպանվել է նրա դամբարանում վեզիրի առօրյան պատմող «վեզիրի խրատները» պատմությունը - խմբ.:

² Հունարեն՝ πυλώνος πυλαι - դարպաս, աշտարակած կառույց մեծ մուտքերի մոտ - խմբ.:

³ Խաբիրի, խաբիրա, ապերու - տոհմ կամ ազգ, որ բնակվել է Փյունիկիայում կամ Պաղեստինում՝ Ք. ա. XV-XII դդ.: Ամենհոթեփ Բ (մոտ. 1443 թ.) փարավոնի արձանագրության

հրեաներն են կառուցել Ռամզես¹ և Փիդոն քաղաքները (եգիպտ. Պի-Թոմ): Հետևաբար Ռամզես Բ կարող էր լինել այն փարավոնը, «որը Հովսեփին չէր ճանաչում» և Իսրայելի որդիներին դարձրել էր պետության ստրուկներ (Ա 8): Իսկ Մովսեսի կոչումն իրականացավ Ռամզեսի հետնորդ Մերնեփթահի ժամանակ (Բ 23):

Մանոթո-Եյո-ն

Ելից փարավոնը: Ելքի ժամանակների փարավոնի հարցը ցայժմ աստվածաշնչագիտության մեջ վիճելի է մնում: Ըստ Գ Թագ. Գ 1-ի Ելքը տեղի է ունեցել Սոդոմոնի տաճարի կառուցումից 480 տարի առաջ: Քանի որ տաճարի կառուցումն սկսվել է մոտավորապես 958 թ., ապա Ելքի ժամանակն ընկնում է 1440 թ.: Բայց այդ ժամանակ և ավելի ուշ անընդմեջ փարավոններն էին թագավորում Պաղեստինում (այդ մասին Աստվածաշունչը բնավ չի հիշատակում): Այն ժամանակ կայսրության մայրաքաղաքը հարավում էր՝ Թեբեում, իսկ Ռամզես քաղաքը տակավին ավերակների կույտ էր: Այնինչ Ելից գրքի պատումից բացահայտ է, որ փարավոնի կենտրոնակայանը Գեսեմի հարևանությամբ էր՝ «Ռամզես երկրի» մոտ, այսինքն՝ Դելտայում (ուր և գտնվում էր Ավարիս-Ռամզեսը): Ըստ երևույթին 480-ը կտրացված նվիրական թիվ է (40-ը փորձության ժամկետն է՝ բազմապատկած 12-ով՝ ընտրյալների թվով): Հայտնի է, որ ժամանակագրական առումով որոշակի դժվարություն է ներկայացնում Մերնեփթահի հուշակոթողը, որ հայտնաբերել է Ֆլինդերս Պիտրին² 1896 թ.: Կոթողը թվագրվում է ԺԳ դարի 30-ականներով: Դրա վրա քանդակված է թշնամիներին ջախջախած փարավոնի հաղթական օրհներգը, որ ավարտվում է հետևյալ տողերով.

Թշնամիները տապալված են, գթություն են հայցում.

Ամայացվել է Լիբիան, Խաթթը հանդարտվել է,

Քանանը գերված է իր ողջ չարությամբ,

Չավթված է Ասկադոնը, գերված՝ Գեսերը,

Իսրայելի ցեղում մարդ չի մնացել,

Նրա սերունդներն այլևս չկան...

Հուշապան առաջին ուսումնասիրողներից մեկը՝ Վիլիելմ Շպիգելբերգը³, առաջարկեց «Իսրայելի ցեղ» հասկանալ այն եփրեմյաններին, որոնք դեռևս ելքից առաջ իջևանել էին Սյուբեմի մերձակայքում⁴: Սակայն բացառված չէ, որ օրհներգը պարունակում է Ել-

մեջ խաբիրիները հիշատակվում են քանանացի ռազմագերիների ցանկում: Ք. ա. XIV դ. Էթնաթոնի վասալը՝ Երուսաղեմի թագավորը, հաղորդում է, որ խաբիրիները գրավել են թագավորական հողերը Քանանում: Շատ աստվածաշնչագետներ այս դեպքերը նույնացնում են Հեսու և ավելի արշավանքների հետ – *խմբ.*:

¹ Հայերենում՝ Ռամես – *խմբ.*:

² Ֆլինդերս Պիտրի (1853–1942) – Անգլիացի նշանավոր հնագետ, եգիպտագիտության հիմնադիրներից: Նրա հայտնաբերած Մերնեփթահի կոթողը առաջին պատմական վավերագիրն է, ուր հիշատակված է *Իսրայել* անունը – *խմբ.*:

³ Շպիգելբերգ Վիլիելմ (1870–1930) – Գերմանացի եգիպտագետ, բանասեր, հայտնի է պապիրուսների վերծանության ուսումնասիրություններով – *խմբ.*:

⁴ «Իսրայելի» թարգմանությունն իբրև «Իսրայելի ցեղ» հիմնվում է այն բանի վրա, որ շարադրանքում «Իսրայել» բառն աշխարհագրական անուն չէ. դրան նախորդում է ցեղ, ժողովուրդ նշանակող մասնիկը:

քի իրադարձությունների արձագանքը: Այդտեղ խոսքը քաղաքի կամ բնակավայրի մասին չէ, այլ հենց ժողովուրդի (ցեղի): Հնարավոր է, որ խորայելացիներն օգտվել են նվաճված ժողովուրդների ապստամբության հետևանքով առաջացած խառնաշփոթությունից, լքել են Եգիպտոսը: Հետապնդման իր անհաջողությունը փարավոնը ներկայացրել է իբրև հաղթանակ (դա սովորական էր պատերազմական զեկույցներում): Ըստ մի այլ կարծիքի՝ փարավոն-կեղեքողը Ռամզեսի հայրն էր՝ Սեթի Ա., իսկ Ելքը տեղի է ունեցել Ռամզեսի վերջին տարիներին: Այս վարկածը, թեպետ տարածված, տարակուսելի է, թեկուզ այն պատճառով, որ Ռամզեսի նման հզոր փարավոնի թագավորելը նպաստավոր պայմաններ չէր ստեղծի Ելքի համար:



Սեմիթ-բանվորները փարավոնի շինություններում աշխատելիս: Պատկերը Թեբեում գտնվող դամբարանից է (Ք. ծ. ա. XV դար):

4. Մովսեսի կոչումը (Ելք. Բ-Դ): *Ելից գիրքը պատմում է, որ Գեսեմի բնակչության աճը պալատում անհանգստություն է առաջացրել: Մարզը թշնամական ժողովուրդների սահմանին էր, և Եգիպտոսում վախենում էին, որ ապերուների ենթակա անազատները (տես վերևը, կետ՝ գ) կմիանան կայսրության թշնամիներին (նշենք, որ Ռամզեսի և քետացիների պայմանագիրը պահանջում է փախստականների հանձնում): Մանկաբարձուհիներին ստիպելու փորձերը, որ սպանեն արական սեռի նորածիններին՝ ձախողվեցին (այդ կանանց անուններն այն դարաշրջանի սովորական սեմական անուններ են): Հագրիվ թե եգիպտացիները կարողանային կատարել երեխաներին սպանելու հրամանը ճշտություն, քանի որ դա խռովության պատճառ կհանդիսանար և աշխատուժի կորուստ կառաջացներ, բայց ըստ երևույթին ինչ-որ մի ժամանակ փորձել են դա անել: Ցանկանալով փրկել որդուն՝ Ղևիի ցեղի մի կին*

նրան դրել է Նեղոսի¹ մոտ՝ եղեգնուտում: Երեխային վերցրել էր «փարավոնի դուստրը» և անվանել Մովսես (եբր. מֹשֶׁה – ՄՈՇԵՆ): Հրեական ավանդույթյունն այդ նույնը կապում է «դուրս հանել» բառի հետ: Բայց ավելի հավանական է, որ արքայադուստրը հոգեորդուն տվել է եգիպտական Մեսու անունը, որ նշանակում է որդի:

Նկատված է Մովսեսի մանկույթյան պատումի՝ և այլ հին հերոսների՝ աքաղաղական Սարգոն թագավորի և պարսից Կյուրոսի մասին պատումների նմանությունը: Բայց դա ինքնին չի ապացուցում Ելից Գրքի պատմության մտացածին լինելը: Ռամզես Բ-ի շուրջը շատ էին սեմական ծագման անձինք: Մասնավորապես նրա դուստրերից մեկն ամուսնացած էր Բենտ-Անատ անունով ասորու հետ: Ռամզեսի բազում կանանցից մեկի դուստրը, հնարավոր է, որ ծնվել է խառն ամուսնությունից և իսրայելացի մանկան հանդեպ խղճահարույթյամբ վարվեց:

Խորիմաստ է այն պատումը, որ Մովսեսը փրկվել է և դաստիարակվել եգիպտացիների ձեռքով: Աստու ժողովրդին հարստահարողներն իրենք ակամա դառնում են Նախախնամության գործիք, դրանով ցույց տալով, որ Աստու կամքը կատարվում է հակառակ ամեն ինչի:

Ըստ ավանդույթյունների՝ Մովսեսը սովորել է «եգիպտական ամբողջ իմաստությունը» (Գործ. Է 21-22): Այդ մասին իր՝ «Մովսեսի կյանքը» գրքում գրել է Փիլոն Ալեքսանդրացին: Համենայն դեպս ակնհայտ է, որ ապագա առաջնորդն ու մարգարեն շատ բանով բարձր էր իր ցեղակից անկիրթ հովիվներից: Ավելին, մյուս ղեկավարները ևս սերտորեն կապված էին եգիպտացիների հետ (Ոփնի, Փենեհես, Մերարի, Պասքոր և մյուսները եգիպտական անուն էին կրում):

Քանի որ իբրև ստնտու Մովսեսի համար վարձվել էր իր հարազատ մայրը (Ել. Բ 8-9), նա չկորցրեց կապն իր հարազատ ժողովրդի հետ, թեպետ, մեծացավ եգիպտական շրջապատում: Որքանով էր Մովսեսը պարտական քուրմերի դասերին՝ հայտնի չէ, բայց նրա հիմնած պաշտամունքի որոշ տարրեր (օրինակ՝ Տապանակը) նմանակներ ունեն եգիպտական կրոնի մեջ: Բացառված չէ, որ նա միաստվածական հայացքներին ծանոթացել է հենց եգիպտական ուսումնառության շրջանում:

Ըստ Հովսեպոս Փլավիոսի՝ Մովսեսը նշանակվել է զորապետ և մասնակցել Եթովպիայի դեմ արշավանքին, իսկ հաղթանակից հետո ամուսնացել է եթովպական իշխանուհու հետ (Древн., II, 10): Այս ավանդության հավաստիությունը ոչնչով չի հաստատվում, բացի Թվեր ԺԲ 1 հիշատակումից, որ «նա կնություն էր առել մի եթովպուհու»:

¹ Մովսեսի եղբայր Ահարոն ավագ որդին էր և ծնվել էր մանուկներին սպանելու հրամանից առաջ:

Կործանման եզրին կանգնած Իսրայելի դառն ճակատագրին Մովսեսի ցուցաբերած մասնակցությունն առաքյալը դիտարկում է իբրև հանուն հավատի կատարված սխրանք: «Հավատով է, որ Մովսեսը, երբ մեծացավ, մերժեց Փարավոնի դատեր որդի կոչվել, նախընտրեց չարչարվել Աստծու ժողովրդի հետ, քան միառժամանակ մեղապարտ հաճույքներ վայելել» (Եբր. ԺԱ 24-25): Սպանելով եգիպտական վերակացուին՝ Մովսեսն ստիպված էր փախչել երկրի սահմաններից: Բայց ավելի հավանական է, որ նա ուներ Փարավոնի զայրույթից վախենալու այլ՝ ավելի ծանրակշիռ պատճառներ:

Ինչպես վավերագրերն են վկայում՝ այն տարիներին Եգիպտոսի սահմանից անցնելը մեծ դժվարությունների հետ էր կապված՝ այն ամենուրեք պաշտպանված էր հուսալիորեն: Մովսեսը թաքնվեց «Մադիամի երկրում», Սինայի թերակղզու հյուսիս-արևմուտքում, որտեղ թափառում էին Իսրայելի ցեղակիցները: Այնտեղ նա տեղավորվեց կինեցի քուրմ Հոթորի (եբր. חֹתָן – ԻՏՐՈ՛) ընտանիքում, որին առավել հին ավանդույթը (Ե-]՝) անվանում է ՌԱԳՈՒԻԻԼ (եբր. ՌԵՈՒԻԼ՝ – רַעִוִי, նշենք, որ արաբական հին արձանագրությունները քահանաներին կրկնակի անուն են տալիս): Այդ մարդու դերը Մովսեսի կյանքում ըստ երևույթին եղել է շատ կարևոր, թեև շատ բան մնում է անորոշ:

Հոթորն իր դստերը կնություն է տալիս Մովսեսին, հանդես է գալիս որպես նրա խորհրդատու և ուսուցիչ: Նա դավանում է Եահվեի հանդեպ հավատը և նրան զոհ է մատուցում (Ել. ԺԸ): Որոշ աստվածաշնչագետներ համարում են, առաջին անգամ Մովսեսը հենց Հոթորից է լսել Տիրոջ սրբազան անունը: Հին սեմականները, ինչպես հայտնի է Ուգարիտյան արձանագրություններից¹, պաշտում էին Եվո անունով աստծուն: Հոթորը կարող էր այդ աստծու սպասավորը լինել, որը Մովսեսի կրոնում դարձավ Եահվե, Իսրայելի Աստված: Այնուամենայնիվ, Մովսեսի ուսմունքն իր էությունամբ ինքնօրինակ էր ու բացառիկ: Նույնիսկ եթե նա ելնում էր որոշ՝ նախկինում եղած հավատներից, նա դրանց մեջ դրեց բոլորովին այլ իմաստ և հոգի (տե՛ս ստորև):

Քահանայական ավանդությունը (Ք-Ք) Մովսեսի կոչումը վերագրում է նրա կյանքի եգիպտոսյան շրջանին (Չ 2-30): Ավանդությունը շեշտում է, որ «Աբրահամի, Իսահակի ու Հակոբի Աստվածը» այսուհետև միայն ներկայանում է է, Եահվե անունով: Անձնական անվան հայտնությունը նշանակում էր, որ Աստված ոչ միայն հայտնում է Իր միանալը մարդու հետ, այլև Իր մասին խոսում է որպես Անձի, որ գործում է պատմության իրադարձությունների մեջ, որպես Իր ընտրած մարդկանց ստրկությունից Ազատագրող: Նա

¹ Ուգարիտ – Զ. ծ. ա. Բ հզր. քաղաք-պետություն (ժամանակակից Սիրիայի հյուսիսում): 1930-ականների պեղումների ժամանակ հայտնաբերվել են բազմաթիվ հնագիտական նյութեր, արձանագրություններ – խմբ.:

հոսսուումի Աստվածն է, և ոչ անծանոթ աստվածություն, և Ինքը Նա է, որ խոսել է Իսրայելի նախահայրերի հետ:

Մովսեսի կոչումն փաստն իսկ նշանավորում է սրբազան պատմության հատուկ պահ: Դրա ամբողջ ընթացքում Աստված մեկից ավելի անգամ այս կամ այն ընտրյալներին կոչում է ծառայության (Աբրահամից ու մարգարեներից մինչև Սուրբ Պողոսը):

Հնագույն ավանդությունները (Ե-] և Է-E) պատմում են, որ Մովսեսին Աստված կանչել է անապատում, երբ արածեցնում էր իր աներոջ՝ Հոթորի հոտը: Մի անգամ նա հասել էր Սինայի (կամ Քորեբի) ստորոտի կողմերը՝ սրբազան համարվող լեռան փեշերին (Գ 1): Այնտեղ Տերը նրան հայտնվում է բոցի միջից, որով բռնկված էր մորենու թուփը, սակայն չէր այրվում: Աստվածահայտնության [Թեոֆանիա] այդ պատկերը խորհրդանշում է Աստծու մերձավորությունը մարդուն, Աստծու, որ «լախոռդ կրակ է»¹: Այս իսկ պատճառով Եկեղեցին «անկէլ մորենին» դիտում է իբրև Աստվածամարդության կամ Կույս Մարիամի նախակերպար²:

Աստված «հիշեց Իր Ուխտը»³, որ խորհրդանշում է Նրա փրկարար գործերի ժամանակը եկել է: Նա Մովսեսին հորդորում է գնալ Եգիպտոս՝ նոր փրավոնի մոտ, և պահանջել, որ նա Տիրոջ ժողովրդին արձակի «ստրկության այս տնից»⁴:

Մովսեսը, թեպետ երկյուղած, դողով խոնարհվեց Աստծու առջև, բայց այնուամենայնիվ լի էր կասկածանքով: Այստեղ առաջին անգամ հանդիպում ենք մարգարեական կոչման յուրահատկություններին: Մարգարեն իր անունից չի խոսում, նա նույնիսկ հակադրվում է Աստծու հորդորներին, բայց տիրական հնազանդեցնող կոչը հաղթահարում է նրան:

ա) Մովսեսը համոզված է, որ իսրայելացիները մոռացել են «հայրերի Աստծուն»: Նրանք կհարցնեն՝ «Ո՞վ է Նա: Ի՞նչ է Նրա անունը»:

Դրան Տերը պատասխանում է. «Ես Նա եմ, ով է» (եբր. *היה אשך היה אלהים* ԱՇԵՐ ԷՂԵ), այսինքն՝ Նա, Ում պատկանում է լինելությունը, և Նա, որ այդ բաշխում է արարածներին, որ մոտ է Եահվե (եբր. *יהוה*) անվանը, որ կապված է *יהוה* ՀԱՅԱ (հին. *יהוה* ՀԱՎԱ) - լինել, գոյություն ունենալ բային: Հստ Մովսեսի հայտնության լինելությունը, կյանքը պատկանում է միայն Աստծուն, բոլոր արարածները Նրանից են կյանք ստանում: Նշանակալից է,

¹ Տե՛ս Բ Օր. Դ 24 - խմբ.:

² Հայ եկեղեցում էլ նույն մոտեցումն է. *Անկեղ մորենին* խորհրդանշում է Ս. Կույս Մարիամին - խմբ.:

³ Ելք Բ 24 - խմբ.:

⁴ Ելք ԺԳ 3 - խմբ.:

որ Տեր Հիսուս հաճախ Իրեն վերագրում էր «Ես եմ» բանաձևը, որ իմաստով մոտիկ է Աստծու անվանը (օրինակ՝ Հովհ. Ը 24, 28, 58, ԺԳ 19, ԺԸ 5-6):

բ) Մարգարեն շարունակում է տարակուսել. մարդիկ կարող են չհավատալ, որ հայրերի Աստվածը հայտնվել է իրեն՝ եգիպտացիների դաստիարակածին:

Նրա առաքելությունը հաստատելու համար Մովսեսին նշան է տրվում: Մարգարեի ձեռքի գավազանն օձի է վերածվում (Սա բնություն վրա Աստծու ունեցած իշխանության նշանն է: Եգիպտոսում օձերը խորհրդանշում էին պտղաբերության աստվածուհուն): Մովսեսի ձեռքը մեկ բորոտությունք է ծածկվում, մեկ կատարելապես մաքրվում է (ի նշան մարդու վրա Աստծու իշխանության):

գ) Բայց կրկին Մովսեսին պատում է կասկածը. «ես պերճախոս չեմ եղել»: Մեծանալով եգիպտացիների մեջ՝ միգրացե նա բավարար չափով ազատ չէր տիրապետում ցեղակիցների լեզվին:

Այնժամ Տերը նրան ցույց է տալիս Ահարոն եղբորը, որ դառնում է Մովսեսի թարգմանը, միջնորդը և «մարգարեն» («նա կլինի քո խոսափողը, իսկ դու նրա համար կլինես ներշնչող Աստված» - Դ 16, հմմտ. Է 1):

Այսպիսով հինկտակարանյան Եկեղեցու փրկությունը մարդկային գործ չէ: Մարդը՝ Մովսեսը, լիովին հասկացավ իր անզորությունը: Միայն գիտակցումը, որ «Աստված իր հետ կլինի»՝ նրան արիություն է տալիս: Նա վերադառնում է Հոթորի՝ աներոջ մոտ, իսկ հետո Ահարոնի հետ ուղևորվում եգիպտոս:

Օճճճճճճճճճճ

Ելից Դ 24-26 համարները մեկնելու համար քիչ դժվարություն չեն հարուցում: Սովորաբար դրանք հասկացվում են հետևյալ կերպ. Մովսեսը որդու թլպատումն արհամարհում էր, հավանաբար այն համարելով պարզապես եգիպտական սովորույթ: Բայց ծանր հիվանդությունը (Աստված «ուզում էր սպանել նրան»¹) նշան եղավ Մովսեսին, որ Ուխտի այդ ծեսն անհրաժեշտ է կատարել: Տկարության պատճառով ի գորու չլինելով կատարել այն՝ Մովսեսը կնոջն է հանձնարարում: Մեպփորայի խոսքը, ինչպես ենթադրում են մեկնաբանները, վերցված է կինեցիների² ամուսնական ծիսակարգից, որի մեջ մտնում էր արյուն ցողելը: Որդու թլպատումը Մովսեսի կնոջ համար նրանց միության ամրապնդումը եղավ: Դրանից հետո Մեպփորան ժամանակավորապես գնում է հոր մոտ (հմմտ. ԺԸ 2), վստահ, որ այնուհետև ամուսնու հետ կապված է անխախտ կապերով:

5. Պայքար Ելքի համար (Ել. Ե-ԺԱ). Մովսեսը եղբոր հետ գնում է ժողովրդի ձերակույտի մոտ: Նրանք սկզբնապես լիակատար վստահությունք

¹ Հայերենում՝ «Տիրոջ հրեշտակը ուզում էր սպանել նրան» - խմբ.:
² Հոթորը կինեցի էր - խմբ.:

են ընդունում եղբայրներին: Բայց հետո մարդիկ, սարսափով բռնված, մի անգամ չէ, որ հակադրվելու են իրենց ազատագրող Մովսեսին, նախընտրելով ստրկական, բայց կայուն վիճակն անորոշության տանող ճանապարհից: Աստծու կամքի կատարումը հավատի արիություն էր պահանջում:

Հանուն Ելքի պայքարը նկարագրող պատմության մեջ հատկապես հստակ երևում է տեքստի աստվածաշտական բնույթը: Այդ են վկայում կառուցվածքն ու կրկնակները: Յուրաքանչյուր դրվագ («հարվածներ»), ինչպես երգի մեջ, սկսվում և վերջանում է համանման բառերով: Պատումի մեջ տիրապետում է երկու հիմնական նյութ՝ Աստծու մեծությունը և մարդու ընդդիմանալը Նրան.

Ա) «Եգիպտական հարվածները» նկարագրված են որպես բնության վրա Աստծու իշխանության նշան: Եգիպտացիները երկինքն էին պաշտում, Նեղոսը (Խապի), կենդանիներ, հողն ու ջուրը, ընդհանրապես բնության ուժերը: Բայց այդ ուժերը, ինչպես պարզվում է «հարվածների» վերաբերյալ պատումից, ենթարկվում են Մովսեսի Աստծուն: Իսրայելացիների համար դա վկայություն էր, որ Նա եգիպտական աստվածներից զորեղ է («աստվածների մեջ, Տեր, ով կա Քեզ նման» - Ելք ԺԵ 11):

Բ) Պատումի փարավոնն Աստծու կամքին մարդու հակադրվելու տիպաբանական պատկերն է: Ահարկու նշանները չեն կարող փոխել մարդու կամքի ներքին ուղղվածությունը: Փարավոնը վտանգի պահին զիջում է, բայց հետո նորից շարունակում է պայքարել Աստծու դեմ և՛ ավելի խստացած: Այլ խոսքով՝ ակնհայտ հրաշքները դեռևս իսկական հավատ չեն ծնում:

Փարավոնի զգոնությունը թուլացնելու նպատակով Մովսեսը նրան ասում է «եբրայեցիների Աստծու» պատվին գարնանային անասնապահական տոն անցկացնելու հնարավորության մասին: Իսրայելի որդիները պետք է գնան անապատ՝ «երեք օրվա ճանապարհ» (այսինքն՝ Դելտայից մոտավորապես հարյուր կիլոմետր հեռու), ուր զոհ կմատուցվի Եահվեին: Բայց իշխանություններն անգամ սրան համաձայն չեն: Մովսեսի քարոզն ու պահանջներն ավելի են սաստկացնում վերակացունների խստությանը: Ուժից վեր աշխատանքից տանջահար իսրայելացիների տրտունջը Ելքի նախաձեռնողների դեմ է ուղղվում. «մեր հոտը գարշելի դարձրիք փարավոնի ու նրա պաշտոնյաների աչքին: Դուք սուր տվեցիք նրա ձեռքը, որ նա մեզ սպանի» (Ել. Ե 21): Այդ պահից սկսվում է Մովսեսի վշտալի ճանապարհը, նրա մենավորությունն ու դառնությունը, պայմանավորված էր ամբոխի կողմից հասկացված չլինելու հանգամանքով: Աստվածաշունչը դաժան ճշմարտությունը չի թաքցնում: Մարգարեն ստիպված է հակադրվել ժողովրդին, որը սարսափում է ամեն մի փոփոխությունից: Այդպես է բոլոր մարգարեների

ճակատագիրը, նաև հենց Քրիստոսինը, և նորկտակարանյան Եկեղեցու շատ սրբերինը:

6. «Սատակիչի» անցումը և Չատիկը (ԺԱ 1-ԺԳ 16): Ելք Ե 1, 3-ից պարզվում է, որ հրեա հովիվները նախկինում ևս ունեցել են գարնանային մեծ տոն, երբ սերնդի առաջնեկ գառներ էին զոհաբերում: Որոշ մեկնիչներ համարում են, որ այն ընդգրկում էր ծեսեր՝ կոչված պաշտպանելու «սատակիչից»՝ ժանտախտից, որ վտանգում էր մարդկանց և անասունին: Թերևս այդ ժանտախտի պատճառը նրանք տեսնում էին անապատի չար ոգիների մեջ (Ազգագելի¹ և այլ), որոնցից պաշտպանվում էին՝ տան դռների բարավորներն ու գերաններն օծելով գառան արյունով:

Ելից Գրքի զատկական պատմությունը կապ է ստեղծում «սատակիչի» և Եգիպտոսում մոլեզնող սարսափելի համաճարակի միջև: Այն իսրայելացիներին չդիպավ և նրանց երկիրը լքելու հնարավորություն տվեց: Հավանաբար համաճարակին միացան նաև ուրիշ ձախորդություններ (հարևան ժողովուրդների ապստամբությունները, որոնք Մերնեփթահն ստիպված էր ճնշել): Համաճարակից զերծ մնացած իսրայելացիք վերջապես համախմբվեցին Մովսեսի շուրջը և նախապատրաստվեցին Ելքի:

Ամանորյա հին տոնն այլ նշանակություն է ստանում՝ ասես դառնում է Աստծու ժողովրդի ծննդյան օր: Սրանից հետո ամեն ընտանիք գարնանային նիսան² ամսի տասնչորսին այդ օրը նշելու է: Տոնի խորհրդաբանությունը վերահիմաստավորվում է Ելքի և ազատագրության հոգով: Որդին ընտանիքի գլխավորին պիտի դիմի ծիսական հարցով՝ Ինչ է նշանակում այդ ամենը, և ստանա պատասխան. «Տերը հյոր ձեռքով է հանել մեզ Եգիպտացիների երկրից՝ ստրկության տնից» (ԺԳ 14): Այսպիսով, ինչպես ասում է երանելի Թեոդորիտոսը, Աստծուն հաճո էր, որ հավերժ պահպանվի փրկության հիշատակը (Толкование на Исход, вопр. 24): Բաղարջ հացերը (Էբբ. ՈՂՅՈ – ՄԱՅՈ՛Տ), որ թխում էին հունձի սկզբին՝ այժմ հիշեցնում են շտապողականության մասին, որով կատարվում էր ընթրիքի սեղանն ազատագրության գիշերը: Մարդիկ պիտի հագնված լինեին արշավական զգեստներ: Գառը և իր արյունը խորհրդանշում են Իսրայելի նվիրումն Աստծուն: Սեղանը պոհն է (Ել. ԺԲ 27), այն մարդկանց միավորում է ոչ միայն իրար հետ, այլև Աստծու հետ: Այն նաև նոր կյանքի սկզբի խորհրդանիշ է (հմմտ. Ա Կորնթ. Ե 7):

Երբ Քրիստոս Ինքը դառնա Գառն փրկության՝ Նա կլինի Նոր Ուխտի «Չատիկը»՝ ազատագրումը մեղքի ստրկությունից: Այդ պատճառով Խորհրդավոր Հնթրիքին Ուխտ կնքելու համար Նա ընտրում է փրկության հին

¹ Տե՛ս Ս. Մայիլյան, Ժամանակակից աղանդները Հայաստանում, Ս. Էջմիածին, 2000, էջ 255-258 – խմբ.:

² Հնում տարին գարնանն էր սկսվում:

տոնը: Այստեղից է զատկական ծեսերի սերտ կապը Պատարագի հետ (տե՛ս Успенский Н. Д., Анафора, БТ, N 13): Պետրոս առաքյալն էլ Եկեղեցու կերպարն ուրվագծելիս՝ օգտվում է հին զատկական խորհրդանիշներից: Ինչպես որ իսրայելացիները խզեցին իրենց կապը եգիպտական անցյալի հետ և շտապ պատրաստվեցին տարագրության, այդպես և «Նոր Իսրայելը» պիտի արթուն լինի՝ հիշելով, որ ետևում է թողել մեղքի թագավորությունը: «Ուստի, գոտեպնդելով ձեր միտքը, զգաստ, կատարյալ հույսով սպասեցե՛ք Հիսուս Քրիստոսի հայտնության ժամանակ ձեզ հասանելիք շնորհին: Իրև և հնապանդ որդիներ, մի կերպարանվե՛ք նախկին, ձեր անգիտության ժամանակվա ցանկություններով. այլ, նման այն Սրբին, որ ձեզ կանչեց, դուք էլ ձեր ամբողջ կյանքով սուրբ եղե՛ք, քանի որ գրված է. “Սուրբ եղե՛ք, որովհետև սուրբ եմ եմ”» (Ա Պետր. Ա 13-16):

Ծանոթություն

Հնարավոր է, որ սկզբնապես Բաղարջակերաց տոնը և գառան զոհաբերության տոնը երկու առանձին տոներ են եղել: Բայց հետագայում դրանք միացան մեկ ամբողջի մեջ: Եբր. ՌՏԳ ՊԵՍԱԽ (արամ. *պասխաս*), սովորաբար արտածում են «անցում» բառից, բայց ճշգրտորեն դա ստուգաբանված չէ: Թագավորաց շրջանում և Գերությունից հետո տոն մուծվեցին ձեռքերի լվանալու, գինու և հացի օրհնության ծեսերը: *Սեղեռի* (զատկական սեղանի) ժամանակ կանգնած լինելու սովորույթն ավետարանական շրջանում արդեն չէր կիրառվում: Թալմուդի համաձայն (Pesachim X, 1) ընթրիքի մասնակիցները բազմում էին սեղանի շուրջ:

7. Ելից գիրք (ԺԳ 17-ԺԵ 21): «Իսրայելացիները՝ վեց հարյուր հապարտողամարդ, հետիոտն, բացի մնացած բազմությունից, Ռամեսից մեկնեցին Սոկթովթ: Նրանց հետ ճանապարհ ընկավ մի խառնիճաղանջ բազմություն ... Իսրայելացիներն իրենք ու (իրենց հայրերը) Եգիպտացիների երկրում (և Քանանացիների երկրում) ապրեցին չորս հարյուր երեսուն տարի» (ԺԲ 37, 38, 40): Եթե այս թիվը հասկանանք բառացի, ապա իսրայելացիների ընդհանուր թիվը Ելքի պահին անցնում էր միլիոնը: Այնինչ պատմաբանների կարծիքով ամբողջ Եգիպտոսի բնակչությունը հազիվ մի քանի միլիոն էր: Հայտնի աստվածաշնչագիտական հնագետ Ֆրինդերս Պիտրին նշել է, որ եբր. ԳՂՁ ԷԼԵՖ (հազար) նշանակում է նաև ընտանիք կամ մեկ վրանի բնակիչներ: Այդ դեպքում Ֆրինդերս Պիտրիի հաշվումներով իսրայելացիները մոտ հինգ հազար հոգի էին: Սոկթովթն այլ բան չէ, քան սահմանային Սեկու ամրոցը, Գեսեմի արևելքում («Ռամասես երկիր»): Իսրայելի՝ Եգիպտոսում գտնվելու թվականները համընկնում են այն դարաշրջանին, որ անցել է հիքսոսների ժամանակից (մոտ. 1700) մինչև Ռամզես Բ և Մերնեփթահ (ԺԳ դար):

Ելք ԺԲ 38 պարունակում է վկայություն, որ իսրայելացիներին միացել են ուրիշ ցեղերի ապստամբներ և խառնվել նրանց շարքերին: Հետագայում 14 - Ա. ՄԵՆ, ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

այդ օտար ցեղերն անվանվեցին եկվորներ (Եբր. Ծ՛ԴՁ ԳԵՐԻՄ), և Մովսիսական օրենքը պաշտպանեց նրանց իրավունքները (Ելք ԻԲ 21, ԻԳ 9):

Քանան տանող ամենակարճ ճանապարհը հարյուր տարի հետո ստացավ Փղշտական անունը: Այդ ճանապարհը Միջերկրական ծովի երկայնքով տանում էր դեպի հյուսիս-արևելք: Բայց հենց այդ ճանապարհով էին շարժվում Եգիպտոսի դեմ ապստամբած ասորիների և «ծովի ժողովուրդների» զորքերը (նրանց հետ էին և փղշտացիները), որոնք ոչ վերջերս էին ներխուժել քանանյան ծովեզերք: Այդ պատճառով Մովսեսը փախստականների ամբոխին առաջնորդեց հարավ-արևելք՝ այժմյան Սուեզի ջրանցքի շրջանը: Նրանց ճանապարհին կար մի ջրամբար, որ Աստվածաշնչում կոչվում է «Եղեգների ծով» (Եբր. ԳՂԾ Ծ՛ ՅԱՄ ՍՈՒՖ): Եգիպտացիներն այդպես էին անվանում աղի լճերի շարքը, որոնք հարավում միանում էին Կարմիր ծովին (հուն. և ռուս. թարգմանություններում Յամ Սուֆը պարզապես կոչվել է Կարմիր, սլավոներենում՝ Բոսոր ծով)¹:

Սրբազան հեղինակը, խոսելով Ելքի մասին, շեշտադրում է կատարվածի հոգևոր իմաստը: Նա ոչ թե պարզապես պատմում է ստրուկների փախուստը, այլ ավետում է Փրկիչ Աստծու մասին: Տեղի է ունենում արտաքուստ աննշան, բայց սրբազան պատմության համար մեծ իրադարձություն. Տերն ազատագրում և ստեղծում է Իր ժողովրդին՝ Իր Եկեղեցին: Եսայու գրքում Ելքի մասին ուսմունքը որպես ստեղծագործական ընթացք ձեռք է բերում խորհրդավոր նախախնամության հատկանիշներ: Հայտնելով Իրեն՝ Տերը նոր կյանք և ազատագրություն է շնորհում: «Եվ կճանաչեք ճշմարտությունը, կասի Քրիստոս - և ճշմարտությունը ձեզ կապատի» (Յովհ. Ը 32): Այն, որ Տերն Ինքը գտնվում է ազատություն ստացածների մեջ, երևում է նրանից, որ հայտնվում են ամպե և հրե սյուներ (ամպը և հուրն Աստվածահայտնության սուրբգրական խորհրդանիշեր են):

Իսրայելի հետապնդումը եգիպտական զորքերի կողմից միանգամայն բնական է. իշխանությունները չէին կամենում կորցնել աշխատուժ, որի կարիքը մշտապես ունեին: Հայտնի են հաշվետվություններ երկու-երեք ստրուկների հետապնդման մասին, առավել ևս կարելի էր սպասել հետապնդում մի քանի հազար մարդու: Արևելքում ընթացող մարտական գործողությունների հանգամանքով պայմանավորված՝ փարավոնի հեծելազորը պատրաստ էր և նետվեց Իսրայելի որդիների հետևից:

Վաղ պատումներն (Ե-], Է-E) ասում են, որ Եահվեն եգիպտացիներին խուճապի մատնեց (ԺԴ 24-25): Բացի այդ՝ «Եվ Տերը հարավային հողմի ուժով ողջ գիշեր ծովը հետ մղեց. ծովը ցամաքի վերածվեց» (ԺԴ 21)²: Թշնամու ռազ-

¹ Հայերենում նույնն է՝ Կարմիր ծով - խմբ.:

² Հայերենում՝ «և հարավային հողմի ուժով ողջ գիշեր ծովը հետ մղվեց. բացվեց ծովի

մակառքերը դժվարություններ էին շարժվում, հավանաբար խրվելով առափնյա ավազի մեջ, մինչև վերստին հորդացած ջուրը դուրս մղեց նրանց: Եվ բնական երևույթները, որ տեղի ունեցան այդ պահին, փրկարար հրաշք էին, որ զարմացրին իսրայելացիներին և նրանց հավատ ներշնչեցին Մովսեսի և նրա Աստծու նկատմամբ (տե՛ս Սաղմ. 6ԼԵ):

Քահանայական պատումը լրացնում է պատմությունը վեհաշուք պատկերով՝ Աստծու ժողովուրդն ընթանում էր նահանջած ջրի երկու ամեհի պատերի միջև բացված շոր գետնի վրայով: Եահվեի ուղարկվածի՝ Մովսեսի գավազանն ասես իշխում է տարերքների վրա, բանալով դեպի ազատություն տանող ճանապարհը:

Զատկական պատումն ավարտվում է Մովսեսի և նրա քրոջ՝ մարգարեուհի Մարիամի գոհաբանական օրհներգով (ԺԵ): Օրհներգի համեմատությունը քանանյան պոեզիայի հետ ցույց է տալիս, որ սա Աստվածաշնչում հնագույններից մեկն է: Նրա որոշ համարներ (14-15) մատնանշում են Հեսու Նավեի ժամանակը, բայց օրհներգի հիմքը, և ամենից առաջ գլխավոր կրկներգը (հմր. 21), անկասկած գալիս են Ելքի ժամանակներից: Այս երգն ընթերցվում և երգվում է Ավագ Շաբաթվա ժամանակ¹, որ նախորդում է նորկտակարանյան Զատիկին՝ ազատագրում մեղքի ստրկությունից: Վաղ քրիստոնեական Եկեղեցում Զատիկը ընդհանրական մկրտության օր էր, և Ելքի Գրքի ընթերցմամբ վերածնվում էր ջրի և Հոգու խորհրդի հին նախատիպը:

Ծանոթություն

Մովսեսի երգում (հմր. 17) ասվում է՝ «այն լեռան վրա, որ ժառանգությունն է Քո»: Որոշ մեկնիչներ համարել են, որ այստեղ խոսքը Տաճարական՝ Սիոն լեռան մասին է, և այդ հիմքով էլ ժԵ գլուխը վերագրել են թագավորաց դարաշրջանին: Բայց ինչպես պարզվել է ավելի ուշ՝ «Լեռը» Արևելքում նշանակել է ընդհանրապես Աստծու գտնվելու վայրը. մասնավորաբար այդպիսի սրբազան վայր է համարվել Սինա լեռը (հմմտ. Բ Օր. ԼԳ 2, Գ Թագ. ԺԹ 8, Ամբ. Գ 3):

8. Սինայի ճանապարհին (ԺԵ 22-ԺԸ 27): Երեք ամիս Կարմիր ծովի ափի երկայնքով իսրայելացիները շարժվում են դեպի հարավ: Եգիպտոսի բարեբեր հողից հետո անապատում լինելը նրանց անտանելի է թվում: Նրանք անընդհատ «տրտնջում» էին Մովսեսից, որն իրենց տարել էր այդ անկյանք վայրերը: Հինկտակարանյան Եկեղեցու գոյության սկզբին նրա մարմնական տկարության մասին հիշեցնում են Քրիստոսի երեք փորձություններն անապատում: Այն ժամանակ, երբ Իսրայելը հաց էր պահանջում, թերահավատություն էր ցուցաբերում և գայթակղվում էր օտար աստվածների պաշտա-

հատակը» – խմբ.:

¹ Հայ եկեղեցում էլ Ավագ Շաբաթվա վերջին օրը՝ ճրագալույցին ընթերցվում է Ելքից – խմբ.:

մունքներով, Աստվածամարդը՝ նորկտակարանյան Եկեղեցու գլուխը, «Նոր Իսրայելը» մերժում էր այդ գայթակղությունները: Ընդգծենք, որ պատասխանելով փորձչին՝ Տերը երեք հատված է բերում Մովսեսի գրքից (Բ Օր. 2 4, 2 16, Ը 3): Ուղղափառ աստվածաբան Մ. Մ. Տարեկը¹ կարծում էր, որ այդ փորձությունների լույսի ներքո է պետք դիտարկել Եկեղեցու ողջ պատմությունը:

Հանդուրժելով թերահավատներին՝ Աստված նրանց տալիս է Իր օգնությունը. Մեռա օազիսի ջրերը կորցնում են դառնությունը, մանանան հագեցնում է ճամփորդներն, չվող լորերի երամները նրանց ապահովում են մտով: Ինչպես ենթադրում են շատ մեկնաբաններ՝ հրեաների համար երբևէ չտեսնված մանանան մոշավայրիի սառած հյուսն էր, որ հատիկների նման թափվում էր երկրի վրա (այն և հիմա սնունդ է բեղունիների համար): Աստվածաշնչական խորհրդաբանությունը մանանան նշանակում է երկնային հաց, որը սնում է հավատարիմներին: Մարմնի համար այդ հացը «կյանքի հացի» նախատիպն է, որ վերածնում է հոգին (Յովհ. 2 58): Շաբաթ օրը մանանայի չքանալու մասին զրույցն ընդգծում է հանգստի սրբազան օրը պահելու անհրաժեշտությունը: Ելք ժՁ 33-ում նշվում է մանանայի խորհրդաբանական նշանակությունը, որ հիշեցնում է, թե Տերը կերակրում է Իր մարդկանց:

Ռափիդիմ շրջանում, Քորեբին մերձ, տեղի ունեցավ Իսրայելի առաջին ռազմական ընդհարումը բեդուին-ամաղեկացիների հետ, որոնք իրենց համարում էին այդ վայրերի տերը: Ճակատամարտի պահին Մովսեսի աղոթքը ցույց է տալիս, որ ոչ թե մարդկային ուժը, այլ Աստծու հովանին է պաշտպանում հինկտակարանյան Եկեղեցին:

Հենց այդտեղ՝ Քորեբի մոտ, Մովսեսին դիմավորում է իր աներ Հոթորը: Եհզվեին առաջին զոհը մատուցվում է նրա ձեռքով: Ինչպես արդեն տեսել ենք, այդ բանում արտահայտվել է կինեցի քահանայի կարևոր (թեպետ այժմ ոչ բավարար պարզ) դերն իսրայելական կրոնում: Հոթորի նախաձեռնությամբ Մովսեսը ժողովրդի վրա կառավարիչներ է նշանակում, որոնք պիտի «դատեն» ժողովրդին, այսինքն իրագործեն արդարադատությունը: Այս քաղաքացիական նշանակումն Իսրայելին տալիս է իրավունքի հիմունքները, որ հետագայում զարգացվեցին Հնգամատյանի դատաստանագրքերում:

Ոչ մի առողջ հասարակություն չի կարող գոյատևել առանց իրավունքի: Օրենքը հասարակական կյանքի անհրաժեշտ կարգավորողն է: Այն հակադրում է ուժին՝ թագավորի բռնատիրությանն ու ամբոխի անիշխանությունը: Այդ պատճառով է, որ իրավաբանական հրահանգները Թորայում զետեղվել

¹ Տարեկ Մ. Մ. (1867–1934) – Ռուս փիլիսոփա, աստվածաբան, գրող, Մոսկվայի Հոգևոր ակադեմիայի դասախոս, մեջբերումը «Искушение Господа чашего Иисуса Христа, М, 1900» գրքից է – խմբ.:

են պատվիրանների կողքին: Ու թեև Մովսեսի օրենսդրության իրավական սահմանումներն այժմ կորցրել են արդիականությունը, բայց օրինականության և իրավունքի գաղափարը պահպանում է իր արժեքը:

Չարքեր կրկնության համար

1. Եկեղեցական ավանդության մեջ ի՞նչ տեղ են զբաղեցնում Մովսեսն ու Ելքի պատմությունը:
2. Որո՞նք են Ելից Գրքի հիմնական բովանդակությունը, բնույթն ու իմաստը:
3. Ո՞ր երկու տեսանկյունից է պետք դիտարկել Ելից Գրքի հրաշքները:
4. Եզրիպտոսում ի՞նչ իրադարձություններ էին տեղի ունենում՝ երբ այնտեղ էր Իսրայելը:
5. Թվարկեցե՛ք երեք հիմնական փաստ, որ բնութագրում են Իսրայելի կյանքը Գեսեմում:
6. Ի՞նչը հանգեցրեց փարավոնի կողմից իսրայելացիների ճնշմանը:
7. Ենթադրաբար ո՞վ էր Ելքի ժամանակ փարավոնը:
8. Ելից Գիրքն ի՞նչ է պատմում Մովսեսի ծննդյան ու մանկության մասին:
9. Ի՞նչ է նշանակում նրա անունը, և ինչպիսի՞ն կարող էր լինել նրա դաստիարակությունը:
10. Նկարագրեցե՛ք Մովսեսի կյանքի դեպքերը նրա կոչվելուց առաջ:
11. Ներկայացրե՛ք Յոթորի դերը Մովսեսի կյանքում:
12. Ի՞նչ է խորհրդանշում «անկեզ մորենին»:
13. Մարգարեական կոչման յուրահատկությունը ո՞րն է:
14. Ի՞նչ կասկածներ ուներ Մովսեսը, և ի՞նչ պատասխանեց նրան Տերը:
15. Ո՞րն է Աստուծու սրբազան անվան նշանակությունը:
16. Ի՞նչպես են մեկնաբանում Ելք Դ 24-26-ը:
17. Բնութագրեցե՛ք «եզրիպտական հարվածների» պատումը. ո՞րն է դրա իմաստը:
18. Ինչի՞ մասին է ասում փարավոնի «խստանայր»:
19. Ինչպիսի՞ն էր ժողովրդի վերաբերմունքը Մովսեսի նկատմամբ:
20. Ո՞րն է հովիվների հին տոնի իմաստը, և այն ի՞նչպես վերաիմաստավորվեց Չատիկի տոնում:
21. Որո՞նք են գատկական սեղանի տարրերը:
22. Այդ սեղանը ինչպես է արտացոլված Չաղորդության մեջ:
23. Ո՞րն է ծովի հրաշալի անցման իմաստը:
24. Նկարագրեցե՛ք Իսրայելի ուղին դեպի Սինա: Ի՞նչ են ասում ժողովրդի փորձություններն անապատում:
25. Ո՞րն է մանանան ստանալու իմաստը:
26. Ի՞նչ նշանակություն ունեցավ իրավական կարգի սկզբնավորումը հինկտակարանյան Եկեղեցում:

§ 23-ի Հավելված

1. Էքնաթոնի օրհներգից

«...Դու փայլարձակ ճառագում ես երկնից փեշերին, [ո՛վ] կենդանի սկավառակ, [ո՛վ] ակունք կենաց: Դու ծագեցիր երկնքի արևելյան լանջին և համայն երկիրը լիացրիր քո հմայքով: Դու հրաշագեղ ես, մեծասքանչ, լուսապայծառ: Դու [անհաս ու] բարձր ես համատարած երկրի վերևում: Քո ճառագայթները գրկում են բոլոր ծագերը [երկրի]՝ մինչև սահմանները քո ստեղծածների:



Երկրպագություն Աթոնին: Ախետաոնի տաճարի քանդակներից (Ք. ծ. ա. XIV դարի սկիզբ):

Դու Ռան ես, դու հասնում ես սահմաններին: Դու ենթարկում ես սիրելի որդուն բոլոր հողերը, որ դեռ կան հեռվում: Հեռու ես դու, բայց ճառագայթներդ՝ երկրի վրա, դու մարդկանց առջև [...] քո շարժումը: Դու [մայր] ես մտնում երկնքի արևմտյան կողմում, և երկիրը խավարի մեջ է, նման մահվան ճիրանն ընկածին: Մարդիկ քնած են տներում, և նրանց գլուխները ծածկած են, և մի աչքը չի տեսնում մյուսը, և կողոպտվել է նրանց ունեցվածքը, որ թաքցված էր նրանց գլխի տակ, իսկ իրենք չգիտեն:

Առյուծն իր որջից ելնում է: Խավարում օձերը խայթում են մարդկանց, երբ գալիս է գիշերը, և երկիրը թաղվում է լուռության մեջ, քանի որ ամբողջի ստեղծիչն իջել է երկնքից անդին: Երկիրը լուսավորվում է, երբ դու ելնում ես երկնակամար, դու փայլում ես ինչպես արևի սկավառակը, դու ցրում ես խավարը, շուսյլ հղելով քո շողերը, և Երկու Երկրներն արթնանում են ցնծալով, և մարդիկ վեր են կենում: Դո՛ւ արթնացրիր նրանց, և նրանք լվանում են իրենց մարմիններն ու վերցնում իրենց հագուստը...

Չկա ուրիշ՝ քեզնից բացի: Դու մենակ էիր և ստեղծեցիր երկիրը քո սրտի ցանկությամբ, երկիրը՝ մարդկանցով հանդերձ, անասուններով ու բոլոր կենդանիներով, որոնք իրենց ոտքերով շրջում են ներքևում, կամ թևածելով ճախրում են վերևում: Օտար երկրները, Ասորիքը, Քուշը, Եգիպտոսը. ամեն մարդու իր տեղն էս հատկացրել դու: Դու արարում ես ամեն ինչ, որ հարկավոր է նրանց: Յուրաքանչյուրն իր սնունդն ունի, և ամեն մեկին չափված է իր կյանքի ժամանակը:

«Повесть Петеисе», III, М., 1978, էջ 251-253:

2. Հատված մովսիսական դարաշրջանի օրհներգից՝ ձոնված եգիպտական Անունին

«Աստվածները խոնարհվում են քո մեծության առջև, մեծարելով իրենց ստեղծողի կամքը, ցնծալով, երբ մոտենում են իրենց ծնողին: Նրանք բացականչում են քեզ. «Ողջո՛ւյն քեզ, բոլոր աստվածների հայրերի հայր, որ կախել ես երկինքը և ոտնակոխ արել երկիրը: Փառք քեզ, ամեն ինչի ստեղծող, ճշմարտության տիրակալ... մեկ՝ միակ, որ նմանը չունի...»:

ИДВ, һавт. 1, էջ 329:

3. Խաբիրին Պաղեստինում (ԺԴ դար)

Էքնաթոն փարավոնի դիվանում գտնվել են Քանանի արքաների ու կառավարիչների՝ Եգիպտոսի դրածոների նամակները: Նրանք բողոքում են քաղաքների անբարեկարգությունից և խաբիրի թափառող տոհմերի թշնամական գործողություններից:

Երուսաղեմի կառավարիչ Աբդիսիբայի նամակներից

Իմ տեր թագավորին՝ Աբդիսիբան. քո ստրուկը... Թող այստեղ գան թագավորական նետաձիգները: Թագավորը չի տիրապետում երկրին. խաբիրիներն ամայացնում են ամբողջ թագավորական մարզը: Եթե զորքերը ժամանեին այս տարի՝ երկիրը կմնար թագավորի ձեռքին, բայց նրանք չկան, և երկիրը կորած է...

Թո՛ղ գիտենա թագավորը՝ բոլոր հողերը կործանվում են, իմ դեմ թշնամանք կա. Գազերի, Ասկազոնի մարզը և Լաբիս քաղաքը նրանց սնունդ տվին, ձեթ և ամեն անհրաժեշտ բան: Ըստ այսմ՝ թո՛ղ թագավորը հող տանի զորքերի մասին և նրանց ուղարկի այն իշխանների վրա, որոնք ելել են իր դեմ... Դա Միլթիլի գործն է և Լաբաիայի որդիների, որոնք թագավորական երկիրը հանձնում են խաբիրիներին... Թո՛ղ իմանա թագավորը՝ ես չեմ կարող քարավան ուղարկել թագավորի մոտ... Թագավորն իր անունը հավերժորեն դրոշմել է Երուսաղեմի երկրում, ուստի նա չպիտի թողնի Երուսաղեմի հողերը:

Էքնաթոնին ուղղված Լաբաիայի նամակից

Ես թագավորի հավատարիմ ծառան եմ, ես չափը չեմ անցել և չեմ մեղանչել, չեմ թաքցրել տուրքերը և անհնազանդ չեմ եղել ուբիսուլին¹: Ինձ զրպարտում են...

¹ Սեմական բառ, որով կոչել եգիպտական իշխաններին Ասիայում, Ասորիքում: Նրանց պարտականություններն էին դատական և զինվորական գործերը, համարվում էին միջնորդ վասսալների և արքունիքի միջև - խմբ.:

Շուվարդատի նամակներից

Մահացավ Լաբահան, որ խլում էր մեր քաղաքները... բայց Աբդիսիբան, որ երկրորդ Լաբահան է, խլում է մեր քաղաքները... Թագավորն ինձ իր ձեռքից ձգել է, թող նա նետաձիգներ ուղարկի:


ИДВ, հատ. 1, էջ 297-298:

էքնաթոնի հաջորդների օրոք Եգիպտոսի իշխանությունը Քանանում վերստին ամրացավ:

4. Ռամզես Բ-ի՝ քետացիների հետ [կնքած] պայմանագրից

«Եթե մի մարդ, կամ երկուսը, որոնց չգիտեն (այսինքն երևելի մարդ չեն), փախչեն (Եգիպտոսից) և գան քետացիների երկիրը, ուրիշի հպատակ դառնալու համար, ապա նրանց չեն թողնի քետացիների երկրում, այլ կհասցնեն Ռամզես-Մերի-Ամոն՝ Եգիպտոսի մեծ տիրակալի մոտ»:

ИДВ, 1963, էջ 128:



Ռամզես Բ-ի վիթխարի արձանը Աբու-Սիմբելում, Եգիպտոս (Ք. ծ. ա. XIII դ.)

5. Բաղարջակերաց տոնի հնագույն արտասուրբգրական նկարագիր

էլեֆանտինա կղզու (Եգիպտոս) հրեական զորակայանի փաստաթղթերի մեջ գտնվել է մի բնագիր, որ վերաբերում է Բաղարջակերաց տոնին: Պապիրոսը վերաբերում է Ք. ծ. ա. Ե դարին:

«Այս տարի՝ Դարեհ [Բ] թագավորի հինգերորդ տարում, թագավորից լուր է ուղարկվել Արշամին... Այժմ հաշվեցեք այսպես. հանեցեք նիսանի տասնչորս օրերը և նիսանի տասնհինգերորդ օրվանից մինչև քսանմեկերորդի մայրամուտը բաղարջ հաց կերեք: Մաքուր եղեք և զուսպ, մի՛ աշխատեք... մի՛ ըմպեք և մի՛ ճաշակեք ոչինչ՝ ինչի մեջ կա թթխմոր, նիսանի տասնհինգերորդ օրվա արևամուտից մինչև նիսանի քսանմեկերորդը ձեր բնակարան բան չտանեք և փակվեցեք [այս] օրերի միջև...»

Իմ եղբայր Հեդոնիային ու իր ընկերներին, հուդայական զորքին, ձեր եղբայր Քանանիա»:

Арамейские документы иудейской колонии на Элефантине V. в. до Р. X., М., 1915, էջ 10-11:

§ 24. Մինայի ուխտը (Ելք ԺԹ-Խ, Ղևտական)

1. Մինա լեռան մոտ (ԺԹ 1-2): Միվան ամսին (մայիս-հունիս), Ելքից տասներկու շաբաթ հետո, Իսրայելի որդիների քարավանը հասնում է Աստծու լեռան մոտ, ուր տանում էր նրանց Մովսեսը և որտեղ նա նախկինում ստացել էր իր մարգարեական կոչումը: Հյուսիսային ավանդույթյամբ (Է-Յ) այդ լեռը հայտնի է իբրև Քորեբ (եբր. օօօօօ - ԽՈՐԵՎ): Հավանաբար այդպես են անվանել ամբողջ լեռնազանգվածը Մինա թերակղզու հարավում: Իսկ սարը կոչվում էր Մինա (ղուսնի աստված Մինայի անունով), և մերձակա ցեղերը հնուց սրբազան էին համարում այն: Սարի ստույգ տեղը հայտնի չէ: Հին ավանդույթյունը Մինան նույնացնում է Ջեբել Մուսայի հետ, որի ստորոտին այժմ գտնվում է Մբ. Կատարինե նահատակի վանքը: Այժմ ևս այստեղ ուխտի են գալիս երեք միաստվածյան կրոնների (հուդայականություն, քրիստոնեություն և իսլամ) ներկայացուցիչները: Լեռն Աստվածահայտնության և աստվածպաշտության վայր է, որ ասես մարդուն հիշեցնում է Արարչի անմերձենալի վեհությունը:

2. Մինայի Աստվածհայտնությունը (Թեոփանիա) (ԺԹ 3-25): Ուխտի կնքման պահին Մինայի մերկացած ժայռերն ու գահավանդներն ամպով են ծածկվում, որտեղից կրակ է փայլում և լսվում է «շեփորի ձայնը»: Հողմի ու ամպրոպի աստվածաշնչական պատկերը բանաստեղծորեն արտահայտում է ստեղծվածին հայտնվող է-ի մեծությունն ու փառքը: Այս պատկերներն անցնում են Հին ու Նոր Կտակարաններով՝ մինչև Հայտնություն: Երկնային ամպրոպների որոտը «Աստծու ձայնն» է խորհրդանշում (տես Սաղմ. ԻԸ):

Աստծու ժողովուրդը պիտի երկյուղածության դողով համակվի Տիրոջ առջև, ուստի նա չպիտի մոտենա լեռանը՝ մնալով որոշակի հեռավորության վրա: Ժողովրդի հետ ուխտի դաշն Հաստատողը ոչ թե մի ինչ-որ տարերքի աստված է, այլ Տրեգերքի խորհրդավոր և անհաս Տիրակալը:

Անիմանալիի հանդեպ խորհրդավոր երկյուղի կարևորությունը կրոնի մեջ դիտարկել է գերմանացի աստվածաբան և պատմաբան Ռուդոլֆ Օտտոն իր դասական «Սրբությունը» աշխատության մեջ (1917): Նա ցույց է տվել, որ աստվածային խորհրդի մերձության զգացումը հավատի հիմնարար հատկանիշն է: Այդ պարագային Աստված հանդես է գալիս իբրև անբողոքալիս Այլ՝ արարվածի սահմանից վեր: Նա առևր է, այսինքն՝ անհամեմատելի որևէ ստեղծված բանի հետ: Այստեղից էլ Ս. Գրքի խոսքը. «Ժնաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է»¹: Այդ զգացումը տարբեր է բոլոր ապրումներից և չի կարող նույնանալ դրանցից ոչ մեկին: Ռ. Օտտոն այն անվանել է «նումինալ» (լատ. numen՝ աստվածություն):

1 Առակ. Ա 7 - խմբ.:

3. Աստծու Ուխտը: «Ուխտ» բառը, կամ «միությունը» (եբր. ֵאָוֶב־־־ ԲԵՐԻՏ, աքքադ. Բիրիտու), նախապես եղել է իրավաբանական եզրույթ: Միությունները կարգավորում էին հարաբերությունները ցեղերի և թագավորությունների միջև: Բայց Մովսեսի Ուխտը ընդգրկում է իր մեջ մի նոր իմաստ. այն խոսում է Աստծու կողմից մարդկանց որոշակի խմբի ընտրության խորհրդի մասին, մարդիկ, որոնք նախատեսված են Նրա Նախախնամական նպատակների համար: Այն խոսում է նոր ժողովրդի ստեղծման մասին՝ կազմված ստրուկների անկանոն ամբոխից, այդ թվում՝ այլ ցեղերից: Այդ ժողովուրդը կազմավորվում է Աստծու կամքով և ոչ թե բնական ճանապարհով: Իսկ նրա կյանքի հիմքում Ուխտն է Աստծու հետ: Նրա Նախախնամության մեջ Իսրայելը լինելու է հոգևոր ընդհանրություն՝ Եկեղեցին:

Մինայի Ուխտն արտահայտված է ամուսնական պայմանագիր հիշեցնող բանաձևով. «Դուք ինձ համար ժողովուրդ կլինեք, իսկ ես ձեզ համար կլինեմ Աստված»: Այլ խոսքով՝ Ուխտի նպատակը Էի միավորումն է մարդկանց հետ: Մինայում դրա իմաստը դեռևս լիովին բացահայտված չէր: Եահվեն միայն հայտնում է՝ «Դուք կլինեք ինձ համար որպես թագավորություն, որպես քահանայություն և որպես սուրբ ազգ» (ԺԹ 6): Քահանան Աստծու սպասավորն է, սուրբը՝ Նրան նվիրվածը: Նոր Ուխտ կնքելով, Տեր Հիսուս ուղի է բացում, որն ազգային Եկեղեցին դարձնում է Ընդհանրական: Եվ Ընդհանրական Եկեղեցին իր կոչման համար կպահպանի Մինայի Ուխտի խոսքերը: «Բայց դուք ընտիր ցեղ եք, - ասում է Պետրոս առաքյալը բրիստոնյաներին - թագավորություն, քահանայություն, սուրբ ազգ, Աստծու սեփական ժողովուրդ, որպեսպի ձեր առաքինությունները նվիրեք նրան, ով խավարից ձեզ կանչեց իր սքանչելի լույսին: Դուք, որ մի ժամանակ ժողովուրդ չէիք, բայց այժմ ժողովուրդն եք» (Ա Պետր. Բ 9-10): Ուխտն ընդունելով հավատարիմները դառնում են Աստծու «գործակից», Նրա մտահղացումների ու գործերի մասնակից (Ա Կորնթ. Գ 9):


Ուխտի խորհրդաբանությունը ներառում է արյուն ցողելու ծեսը (Ելք ԻԴ 8): Կյանքը խորհրդանշող արյունը միությունը հաստատելիս եղել է միասնության և ազգակցության նշան: Արյունով ցողվածներն արյունակից էին դառնում՝ անկախ իրենց ծագումից: Քանի որ կյանքի վրա իշխանություն ունի միայն Արարիչը՝ արգելվում էր արյունն օգտագործել իբրև սնունդ: Աստվածամարդու աշխարհ գալով իր՝ Մարմնացյալի Արյունն ու Մարմինը դառնում են Նրա սրբազան Սեղանը, որ առաջարկվում է հավատարիմներին: Այն նրանց միավորում է մեկ հոգևոր ընտանիքի մեջ՝ Եկեղեցու և շնորհում Աստվածամարդու հետ միավորվելու հնարավորություն:

Ծանոթություն

Հակառակ վելիաուզենյան հին քննադատական դպրոցի կարծիքին՝ Ուխտի Մովսիսական կառուցվածքը Մինայում տեղի ունեցած իրադարձությունների ուշ վերականգնում չէ: Հաստատված է, որ այդ ձևը բնորոշ էր Մովսեսի դարաշրջանի հին արևելյան ժողովուրդներին, իսկ Ժ դարում, երբ Մովսիսական ավանդությունը գրառվել էր, արդեն վերացել էր: Ըստ քետական վավերագրերի՝ տիրակալը, պայմանագիր կնքելով վասսալի հետ, դեկավարվել է հետևյալ կերպ. 1) պատմական նախաբան, 2) պայմանագրի պայմաններ, 3) օրհնանքներ և անեծքներ: Այս կերպ է կառուցված և Մինայի Ուխտը ամբողջությամբ: Այս նմանությունը պատմական մեծ նշանակություն ունի: Այն ցույց է տալիս, որ Աստծու և Իսրայելի միջև երկկողմ Ուխտն *իրավահավասար* կողմերի Ուխտ չէր: Ուխտի նախաձեռնողն Աստված էր, այն Նրա՝ իբրև Իր ժողովրդի Տիրակալի կամքի արտահայտությունն էր: Այստեղ չկային գործարքի կամ իրավաբանական հավասար գործընկերության տարրեր, այլ իրագործված էին միայն Նախախնամության նպատակները:

4. Տասնաբանյա կամ Տասն պատվիրանները (Ի 2-17, Բ Օր. Ե 6-21):
Աստվածաշնչագետներին մեծ մասի կարծիքով Տասնաբանյան Ուխտի գլխավոր փաստաթուղթն է, որ անմիջականորեն ծագել է Մովսեսի դարաշրջանից: Այդտեղ, ինչպես Օրենքի մյուս հատվածներում, արտացոլված չեն երկրագործական կյանքին բնորոշ պայմաններ:

Տասնաբանյան Մովսեսի հավատը և նրան տրված հայտնությունը հասկանալու կարևորագույն աղբյուր է: Իր ներկա տեսքով այն ունի հակիրճ հավելումներ, որոնք տարբեր են ելից գրքում և Բ Օրինացում: Ըստ Բ Օր. Դ 13-ի Տասնաբանյան ընդգրկում է տասը դարձվածք (բառացի՝ «տասը խոսք»), գրառված երկու քարե կոթողի կամ տախտակների (աղյուսների) վրա: Արևելյան եկեղեցական ավանդույթյան մեջ բաժանումն ըստ պատվիրանների փոքր-ինչ այլ է, քան արևմտյանում, քանի որ Օգոստինոս Երանելին «քեզ կուռքեր չպիտի կերտես» խոսքերը միացրել է «Ինձնից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար» պատվիրանին:



Տասը պատվիրանների վերականգնումը, գրված հին փյունիկյան այբուբենով

Ծանոթություն

Ինչ այբուբեն կարող էր օգտագործվել աղյուսների վրա գրելու համար: Թերևս այդ հարցի պատասխանը կարող է տալ Ֆիլիդերս Պիտրիի գտած՝ այսպես կոչված *Մինայի գրությունը* (1904-1905): Տեքստը վերաբերում է Բ. ծ. ա. ԺԵ դարին, բայց ավելի հավանական է, որ այդ գրերը ծագել են ավելի վաղ: Մրա հիմքում ընկած են

եզիպտական նշանները՝ հարմարեցված սեմական լեզվին: Որոշ ուսումնասիրողներ համարում են, որ Սինայի այբուբենը, որ ստեղծել են փարավոնի համար աշխատող սեմականները, եղել է փյունիկյան այբուբենի նախատիպը, որը հետագայում օգտագործել են քանանացիներն ու հրեաները, և որն ընկած է հունական գրի հիմքում:

Կարծիք կա, որ Տասնաբանյայի ամենահին ձևը եղել են Ելք ԼԴ 14-26 պատվիրանները: Բայց դրանք սերտորեն կապված են նստակյաց կյանքի հետ և Քանանի հետ ծանոթ լինելու նշաններ են առկա: Մասնավորապես Ելք ԼԴ 26-ը արգելում է ուլը եփել իր մոր կաթի մեջ: Ուզարիտում եղած գուտերը բացատրում են այս հանելուկային բնագիրը: Պարզվեց, որ քանանացիների մոգական ծեսերում ներառված էր «ուլը կաթի մեջ եփելու» արարողությունը (տե՛ս «Мифологии древнего мира», Пер. с англ., М., 1977, էջ 202):

Պատտվիրանների բաժանումը տասն հատվածների Ելից Գրքում և Բ Օրինաց Գրքում միակը չեն: Այսպես՝ ԺԴ Սաղմոսում թվարկվում է տասը պայման նրա համար, ով արժանի է Աստծու Տանն աղոթելու:

- 1) նա, ով անբասիր է ընթանում, արդար գործ է կատարում.
- 2) ճշմարտություն խոսում իր սրտում.
- 3) Ով չի նենգել իր լեզվով.
- 4) և ընկերոջը վատություն չի արել.
- 5) Մերձավորներից նախատինք նա չի ստանում.
- 6) և չարագործն անարգված է նրա աչքում.
- 7) Այդպիսին փառաբանում է նրանց, ովքեր երկյուղ ունեն Տիրոջից.
- 8) երդվում է իր բարեկամին և երդումն իր չի դրժում.
- 9) Իր արծաթը վաշխով չի տալիս.
- 10) իրավունքի դեմ կաշռոք չի վերցնում:

Տասնաբանյայի գլխավոր հատկանիշն Աստծու մասին ուսմունքն է և ծառայությունը Նրան: Հեթանոս աշխարհն այդպիսի բան բնավ չգիտեր: Եվ եթե անգամ եզիպտոսում գտնում ենք մոլսիսականին նմանվող բարոյական պատվիրաններ (տե՛ս հոտ. 1, § 24, Հավելված 1), ապա դրանք կորչում են մոգական կանոնների, անեծքների, աստվածների խաբելու ձգտման նյութերի մեջ: Տասնաբանյայի Միակ Աստվածը պատմության արարիչն է, որ հավատարիմներից պահանջում է նախ և առաջ պահել բարոյականության հիմնական սկզբունքները.



Հատված Տասնաբանյայից, գրված պապիրուսի վրա քառակուսի գրով (Ք. ծ. ա. I դար)

ա) Առաջին պատվիրանն (Ի 2-3) հայտնում է Փրկիչ Աստծու մասին, Որը ոչ միայն ցանկանում է պահպանել Իր ժողովրդին, այլ նաև նրան ազատելով ստրկությունից՝ տանում է դեպի ապագա: Սա է ամբողջ աստվածաշնչական վախճանաբանության և պատմության աստվածաշնչական ըմբռնման կորիզը: Նա հեռավոր ու անդամ չէ, այլ՝ Կենդանի և Գործող: Նա հայտնում է Իր ներկայությունն աշխարհում:

Տասնաբանյան հայտնում է Նախանձոտ Աստծու մասին, որը մարդուց պահանջում է ծայրահեղ հավատարմություն: Նա «աստվածներից մեկը չէ», թեկուզ գերագույն, այլ Միակ Աստվածն է: Ըստ երևույթին իսրայելացիները հավատում էին հեթանոսական աստվածների գոյությանը (օրինակ՝ Դատ. ԺԱ 24), բայց այդ աստվածները դիտվում էին լոկ իբրև արարված: Միայն ուշ մարգարեներն ունեն վառ արտահայտված միտք, որ հեթանոսների աստվածները «ոչինչ են»¹ (Ես. ԽԱ 23-24): Հետաքրքիր է, որ վաղբրիստոնեական Եկեղեցին ևս չէր հերքում իրական լինելն աստվածների, որոնց «դև» էին անվանում (Тертуллиан. Апологетик, 23): Մովսիսական միաստվածությունը ոչ թե փրկիսոփայական էր, այլ «գործնական» (Ա. Կյազև ավ. քնն.): Բառիս բուն իմաստով միայն Եահվեն էր Աստված Մովսեսի համար: Նա դարձավ Աստված Իսրայելի, բայց միևնույն ժամանակ նա ինչ-որ մեկ տարերքի (կամ ժողովրդի) աստված չէ, այլ ողջ արարչության Տիրակալն է («որովհետև իմն է ամբողջ երկիրը». ԺԹ 5): Ո՛չ հեթանոսների աստվածները, ո՛չ երկրային գայթակղությունները չպիտի կանգնեն մարդու և Արարչի միջև:

բ) Երկրորդ պատգամն (Ի 4) արգելում է պատկերել է-ին [Եահվեին]: Կուռք պատրաստելով՝ մարդիկ հավատում էին, որ դրանց մեջ աստվածության ուժ է լինում: Այդպիսով ասես նրանք ունենում էին իրենց տնօրինության տակ սեփական աստվածներ: Կուռքը քաղաքի, երկրի, ժողովրդի մոգական թալիսմանն էր: Այն տեսանելի և զգալի էր դարձնում Բարձրյալին: Մովսեսին հայտնված Աստվածն այդպիսին չէր: Գերազանց լինելով ամենայն երկրայինից՝ Նա չի կարող և չպետք է պատկերներ ունենա. Նրան զգայական կերպարի հետ կապելը կնշանակեր ոտնձգություն Նրա դեմ՝ Նրա անսահման խորհուրդն ու հզորությունը նսեմացնելու փորձ: Որքանով հաստատ հետևեց հինկտակարանյան Եկեղեցին այդ սկզբունքին՝ ցույց են տալիս պեղումները: Հնագետները երբեք և ոչ մի տեղ Պաղեստինում չեն գտել որևէ բան՝ Եահվեի կուռքին նմանվող:

գ) Երրորդ պատգամը (Ի 7) Աստծու սրբազան անվանն է վերաբերում: Աստվածաշնչային ժամանակներում անունը սերտորեն կապվում էր այն կրողի հետ: Ուստի, եթե Աստված սուրբ է, այսինքն՝ մեծ և անհաս, ակնա-

¹ Հայերենում պիղծ են – խմբ.:

ծանքը պիտի տարածվի նաև Նրա անվան վրա (հմմտ. ավետարանական՝ «Մուրթ թող լինի Քո անունը»): Եբրայական ՌՍՊ՝ ԼԱՇԱ՛Վ բառը (սինոդական թարգմանություն մեջ «իզուր») լայն իմաստ ունի, որ իր մեջ ներառում է նաև կեղծ երգման արտաբերումը, և սրբազան անվան օգտագործումը սնահավատ նպատակներով (հմայություն համար և այլն): Ավելի ուշ Ք. ծ. ա. Գ դարում երկյուղածությունը սրբազան անվան հանդեպ առաջ բերեց այն արտասանելու արգելք. այն փոխարինվեց Ադոնայ - Տեր բառով:

դ) Զորորդ պատգամը (ԻՑ-11) շաբաթ օրվան է վերաբերում: Այդ օրը պիտի հանգստանան բոլոր մարդիկ՝ ազատներն ու ստրուկները, նույնիսկ անասունները: Հենց այդ հանգիստը աշխատանքից նկատի ունեն Հիսուս, երբ ասաց. «Շաբաթը օրը մարդու համար է, և ոչ թե մարդը՝ շաբաթ օրվա համար» (Մարկ. Բ 27): Քրիստոնյաների համար այսպիսի օր եղավ կիրակին: Էլոհիմականը պատվիրանը պարզաբանում է ելնելով Վեցօրյայի պատմությունից (տես. հտ. 1, § 17, կետ 9), իսկ Բ Օրինացը դա կապում է Եգիպտոսից ելնելուն:

Առաջին չորս պատվիրանները խոսում են Աստծու նկատմամբ մարդու վերաբերմունքի մասին: Նրանց միավորում է Մովսեսի մեծ կտակը՝ հինկտակարանյան Եկեղեցուն, որն նա թողեց մահից փոքր-ինչ առաջ. «Ահի Իսրայել, մեր Տեր Աստվածը մեկ Տեր է: Քո Տեր Աստծուն պիտի սիրես քո ամբողջ հոգով, քո ամբողջ էությունը ու քո ամբողջ ուժով» (Բ Օր. 2 4-5): Քրիստոս Փրկիչը պատասխանելով «Ո՞ր պատվիրանն է առաջինը» հարցին՝ բերեց հենց այդ համարը (Մարկ. ԺԲ 28-30), բայց և հավելեց. «Եվ երկրորդը նման է սրան. «Դու պիտի սիրես քո ընկերոջը քո անձի պես» չկա ուրիշ պատվիրան ավելի մեծ, քան սրանք» (Մարկ. ԺԲ 31, հմմտ. Ղևտ. ԺԹ 18):

ե) Պողոս առաքյալը բացատրում է, որ այդ երկրորդ պատվիրանը ամփոփում է Տասնաբանյայի մնացած մասը. «Մի շնացիր, մի սպանիր, մի գողացիր, սուտ մի վկայիր, մի ցանկացիր և ուրիշ ինչ պատվիրան էլ որ կա, այս խոսքի մեջ է բովանդակվում, թե՛ սիրիր քո ընկերոջը ինչպես քո անձը» (Հռոմ. ԺԳ 9):

Այսպիսով, երբ ասում էր, որ Ինքը եկել է ոչ թե կործանելու Օրենքը, այլ լրացնելու, Տերն ամենից առաջ նկատի ունեն բարոյական միաստվածությունը՝ Տասնաբանյան¹: «Այդ լրացումն» այն էր, որ մեղավոր արարքների դատապարտմանը նա ավելացրեց հոգու մեղավոր ձգտումների դատապարտումը և ամբողջը պսակեց անձնուրաց սիրո մասին նոր պատվիրանով (Մատթ. Ե 17-28, Հովհ. ԺԳ 34): Թեոփիլակտ Երանելու խոսքով՝ Քրիստոս «ամբողջ կատարելությունը ուրվագծեց այն, որի միայն ստվերն էր ներկայացնում Օրենքը»:

¹ Տե՛ս Մատթ. Ե 17. հունարեն πληρωσαι բայը սինոդական թարգմանության մեջ փոխանցվել է «կատարել» բայի: Ավելի ճշգրիտ թարգմանությունը պահանջում է «լրացնել», «ավարտել» բառերը. - Ծան. ռուս. խմբ.:

քը... Ինչպես նկարիչը չի պատկերում նախնական ուրվագիծը, այլ հստակեցնում ու լրացնում է այն» (Благовестник, Казань, 1855, մասն 1, էջ 99):

Տասնաբանյայի երկրորդ մասի էությունը ոչ այնքան մասնավոր պատվիրաններն են, որոնք լրացման ու պարզաբանման կարիքն ունեն, որքան բուն իմաստը, որ ողորմությունն ավելի հաճելի է Աստծուն՝ քան զոհը (հմմտ. Օտեն 2 6, Մատթ. Թ 13):

Տասնաբանյան Մինայական Ուխտի պայմանն էր: «Արդ, Իսրայել, ինչ է պահանջում քեզանից քո Տեր Աստվածը. միայն այն, որ երկնչես քո Տեր Աստծուց, ընթանաս նրա ցույց տված ճանապարհներով, սիրես նրան ու պաշտես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ էությանմբ, պահես քո Տեր Աստծու պատվիրաններն ու նրա օրենքները» (Բ Օր. Ժ 12-13): Ավելի ուշ, երբ իսրայելացիներին հրապուրվում էին ծիսապաշտությունը՝ մարգարեները հիշեցնում էին նրանց Մովսեսի Ուխտի սկզբունքները.

Պատմվեց քեզ, ո՛վ մարդ, թե ինչ է բարին

և ինչ է ուլում քեզանից Տերը.

իրավունք հաստատել, ողորմություն սիրել

և պատրաստ լինել քո Տեր Աստծու ետևից գնալու:

(Միքիա 2 8)

5. Ուխտի Գիրք (Ել. ԻԱ-ԻԳ): Քաղաքացիական ու եկեղեցական օրենքների ժողովածուն, որ Ուխտի Գիրք (ԻԴ 7) կոչվեց, Մովսեսի Տասնաբանյայի ընդլայնումն ու մասնավորեցումն է՝ արդեն Իսրայելի նստակյաց կյանքի վաղ շրջանի պայմանների համար: Իրավաբանության բնագավառին վերաբերող բաժինը պարունակում է հինարևելյան իրավունքի արձագանքներ: Այստեղից՝ զուգահեռներն Ուխտի Գրքի և Համմուրաբիի, խուռիների, քետացիների և ասորեստանցիների դատաստանագրքերի միջև (տես հտ. 1, § 24, Հավելված 2): Ինչպես նշվել է՝ թեպետ այդ կանոնները կորցրել են այժմեականությունը, սակայն օրինականության գաղափարը պահպանել է իր նշանակությունը հասարակական հարաբերություններում:

Հողագործական և անասնապահական երեք տոները՝ ա) ոչխարների անդրանիկի և բաղարջակերաց, բ) երախայրիքը բերքի և գ) հունձի, վերափոխվում են ստրկությունից ազատագրման և Աստծու բարերարությունների մասին հուշերի՝ (Չատիկ, Պենտեկոստե և Տաղավարահարաց տոն, ԻԳ 14-17):

Ուխտի Գիրքը մարդու և անասունի բոլոր անդրանիկներին հայտարարեց Աստծուն պատկանող (ԻԲ 29-30): Անդրանիկ մանկան «փոխարեն»՝ խորհրդանշական զոհ էր մատուցվում: Սա պիտի մշտապես հիշեցներ, որ կյանքն Աստված է շնորհում, և նրան է պատկանում: «Անդրանիկներին Աստծուն ընծայելը նվիրաբերողի կողմից կատարվող բարոյական արարք է ի նշան ենթարկության բարձրյալ կարգի» (Վլ. Սոլովյով):

Ուխտի Գիրքն իր ներկայիս ձևն ստացավ այն ժամանակ, երբ Իսրայելը բոլոր կողմերից շրջապատված էր հարևան հեթանոսներով (ԻԳ 28): Աստծու ժողովրդին արգելվում էր երկրպագել նրանց աստվածներին և նրանց հետ միութուն կնքել, քանի որ միութունը նաև կրոնական երդման պահանջ էր: Իբրև միութուն էին համարվում նաև ամուսնական կապերը, քանի որ հեթանոս կանանց միջոցով հինկտակարանյան Եկեղեցի հեշտությամբ կարող էր թափանցել կռապաշտության գայթակղությունը:

Նիստ կարևոր է, որ իրավաբանական ու պաշտամունքային օրենքների կողքին կան և բարոյական պատվիրաններ՝ Տասնաբանյայի ոգով (Ել. ԻԳ 1-11): Դրանք պատգամում են հոգատար լինել աղքատների ու «պանդուխտների» նկատմամբ (օտարազգեր Իսրայելի միջավայրում), արգելում են անարդար դատ վարել, վաշխով դրամ տալ և անարդար վարվել հակառակորդի հետ: Ուխտի Գրքի քրեական իրավունքը նախատեսում է պաշտպանություն չկանխամտածված սպանություն գործած անձի համար (ԻԱ 13): Գիրքը մեղմում է հնում ամենուրեք տարածված ստրկությանը վերաբերող օրենքները: Անագատ հրեայի տերը պարտավոր էր յոթներորդ տարում նրան ու նրա ընտանիքին ազատություն տալ (ԻԱ 1-3):

6) Մովսեսը լեռան վրա (ԻԴ 12-18, ԼԳ 1-23, ԼԴ 5-8): Սուրբ Գրիգոր Նյուսացին Մովսեսին անվանում էր «առաջին խորհրդապաշտը»: Նրա մտնելն ամպի սրբազան Մառախուղի մեջ, որ ծածկել էր Սինա լեռը¹, Եկեղեցու հայրերը մեկնել են իբրև Աստվածության ներկայության մեջ խոկման բարձրագույն արտահայտում: Սինայի բարձունքին Մովսեսի ազդեցական առանձնացումը նրան բացահայտեց Եհովեին՝ իբրև «գթացող և ողորմած, համբերատար, բազույթ ու ճշմարիտ», որ և նույն Ինքը՝ արդարության Աստվածն է, որ մեղավորին չի պատում պատժից (ԼԴ 6-7): «Մինչև երրորդ և չորրորդ սերունդը» հատուցման վերաբերյալ խոսքերը կապված են Աստվածային «դաստիարակության» մտադրության հետ²: Մարդիկ, որոնց բարոյական գիտակցությունը բավարար աստիճանի զարգացած չէր, որ նաև չգիտեին հետմահու հատուցման մասին (տե՛ս հտ. 1, § 19, կետ 3 ծանոթ.), խիստ արգելքների կարիքն ունեին, որոնք հետագայում մեղմացվեցին («հոր անիրավությունը որդուն չի պարտավորեցնում». Եզեկ. ԺԸ 19):

Գիրքը վկայում է, որ Տերը Մովսեսի հետ խոսում էր «դեմ հանդիման, ինչպես մեկը կիսուս բարեկամի հետ» (ԼԳ 11) այն դեպքում, երբ ներքևում սպասող մարդիկ նրա «կերպարանքը չտեսան» (հմմտ. Բ Օր. Դ 15): Բայց սա չի նշանակում, թե մարգարեի խորհրդապաշտական խոկումը թույլ էր տալիս հասու լինել Աստվածային բուն խորհրդին: Ելից ԼԳ 12-23-ում կարդում ենք,

¹ Տե՛ս Ելք Ի 21 – խմբ.:

² Տե՛ս Գաղ. Գ 24 – խմբ.:

Թե մարդ չի կարող տեսնել Աստծուն և կենդանի մնալ: Այդ իսկ պատճառով ի պատասխան Մովսեսի խնդրանքին՝ իրեն է-ի ճանաչում շնորհել, Տերը նրան ցույց է տալիս լուկ Իր Փառքի նշույլը. «դու Ինձ կտեսնես թիկունքից: Բայց իմ դեմքը քեզ չի երևա»: Աստված ոչ միայն անմերձենալի Սրբություն է, այլև անգամ նրա փառքի արտացոլումը Մովսեսի դեմքին՝ վախ էր առաջացնում ժողովրդի մեջ. «Իսրայելացիները տեսնում էին, որ Մովսեսի դեմքը ճառագում է: Մովսեսն այն ժամանակ քողով ծածկում էր երեսը» (ԼԳ 35):

Փառքը (եբր. փփփ – ԿԱՎՈ՞Ր) աստվածահայտնության ձև է՝ Արարչի զորության հեղումն աշխարհի վրա: Նոր Կտակարանում Տեր Հիսուս Իր Փառքը հայտնում է ուրիշ լեռան վրա, Սինայում ազոթող երկու մարգարեների՝ Մովսեսի ու Եղիայի ներկայությամբ, և աշակերտները տեսնում են նրա փառքը՝ է-ի մեծագույն ողորմածությունն է լինում նրա գալուստը մարմնով. «ով ինձ տեսավ, տեսավ Յորը» (Յովհ. ԺԴ 9):

Այսպիսով, Հին Կտակարանը սովորեցնում է, որ նույնիսկ մարդկանց երևալով, լինելով նրանց մեջ՝ է-ն մնում էր անդրանցական և լի գաղտնիքներով: «Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել, բացի միայն միաձին Որդուց, որ Հոր ծոցում է. նա հայտնեց նրան» (Յովհ. ԺԴ 18):



Սինա լեռը

7. Ոսկե հորթը (Ել. ԼԲ): Այդ ժամանակ, երկար սպասելով Մովսեսին, մարդիկ իրենց որբացած են զգում և վախենում, թե առաջնորդն իրենց լքել է առհավետ: Անտեսանելի Արարչի մասին նրա ուսմունքը դժվարամատչելի էր իսրայելացիների ըմբռնմանը, որոնք դեռ երեկ կուռքերին էին պաշտում

1 Ռուսերենում տեսնում էին ինչքան կարող էին: Մեր կանոնում այդ պահը նկարագրվում է տեսնում էին սուկայի հիացմամբ, հրաշալի տեսլամբ բառերով – խմբ.:

(Եզեկ. Ի 8): *Ուստի նրանք Ահարոնին ստիպում են իրենց համար հորթի արձան քանդակել, որը մարմնավորեր Եահվեին, և Նրա պատվին տոն կատարել:*

Անցյալում մեկնիչները կարծում էին, թե ոսկե հորթը եգիպտական Ապիսի տարբերակն է, որին պաշտում էին ցուլի տեսքով: Բայց այժմ առավել հավանական է համարվում, որ այստեղ հորթը հանդես է եկել որպես պտղաբերության աստվածության համասեմական խորհրդանիշ (ինչպես և ուզում էին պատկերացնել Եահվեին):

Ոսկե հորթի պատմության մեջ փորձվում է նաև Մովսեսի հավատը: Աստված նրան առաջարկում է դառնալ նոր Աբրահամ, Աստծու նոր ժողովրդի հիմնադիր, երբ նախորդը կործանման ենթարկվի: Բայց Մովսեսը հանդես է գալիս անկյալների միջնորդ: Նրան առաջնորդում է ոչ միայն Իսրայելի հանդեպ կարեկցանքը, այլև նախանձախնդրությունը Աստծու հանդեպ, որի Ուխտն անխախտ պիտի լինի: «Եվ Տերը հրաժարվեց պատճառել այն չարիքները, որոնցով սպառնում էր պատճառել ժողովրդին» (ԼԲ14):

Սակայն մեղավորներն, այնուամենայնիվ, խիստ պատժվեցին: Այդ պահից առաջին անգամ հանդես են գալիս դևտացիները իբրև Մովսեսի գործակիցներ (ԼԴ 26): Նախկինում նրանք մյուս ցեղերից ոչնչով չէին տարբերվում: Նրանք ոչ միայն հատուկ չէին նվիրվել Աստծուն, այլև աչքի էին ընկնում առանձնակի դաժանությանը (Ճննդ. ԼԴ, ԽԹ 5): Բայց այն ժամանակվանից, երբ դևտացիները հավատարմություն ցուցաբերեցին Մովսեսին՝ նրանք վերածվեցին քահանայական ցեղի:

Օանոթո-թյո-ն

Ավելի ուշ՝ Ք. ծ. ա. Ժ դարում, հորթի պատկերները նորից հայտնվեցին հյուսիս-իսրայելական սրբավայրերում՝ Բեթելում և Դանում (Գ Թագ. ԺԲ 25-33): Այնուամենայնիվ, ինչպես կարծում են հայտնի աստվածաշնչագետները (Վ. Օլբրայթ և այլք), այդ հորթերը չէին մարմնավորում Աստծուն, այլ ասես պատվանդան էին Անտեսանելիին (քերովբեների նման): Այդ մեկնությունը հիմնված է հին արևելյան ժողովուրդների՝ աստվածությունը ցուլի մեջքին կանգնած պատկերելու սովորության վրա: Բեթելի և Դանի հորթերի վրա արձաններ չկային: Բայց բացառված չէ, որ ժողովրդական զանգվածները հեշտությամբ այդ արձանները նույնացնում էին Եահվեի խորհրդանիշի հետ, որն առաջացնում էր մարգարեների զայրալից բողոքը (Օսեե Ը 5-6, ԺԳ 2):

8. Տապանակը, Խորանը և աստվածապաշտությունը (Ելք ԻԵ-ԼԱ, ԼԳ 7-10, ԼԵ 4-35, ԼԶ-Խ): *Տեսնելով ոսկե հորթի շուրջը հրճվող մարդկանց՝ Մովսեսը գայրույթով փշրում է առաջին քարե տախտակները, բայց ի նշան ներման՝ նրանց տրվում են նորերը: Իսրայելի մեղանշումից հետո մարգարեն պաշտամունքի օրենքներ է սահմանում: Նրա հիմնական պարագաներն են դառնում Ուխտի Տապանակը և Վկայության Խորանը: Դրանք միասին կազմում*

են մի տեսակ արշավային սրբարան՝ անհրաժեշտ անապատում դեգերելիս:

Տապանակը (եբր. 178 - ԱՐՈՆ) արկղ էր, որ ղևտացիները կրում էին երկու ձողի օգնությամբ: Դրա կափարիչը զարդարված էր երկու քերովբեներով: Արևելյան հնագիտության տվյալներով քերովբեները պատկերվում էին թևավոր առյուծի կամ ցուլի տեսքով, մարդկային դեմքերով: Դրանք խորհրդանշում էին Տիրոջ շարժական գահը, որտեղից նա անտեսանելի առաջնորդում էր իր ժողովրդին: Ճանապարհ ընկնելիս՝ տապանակը բարձրացնում էին, ասելով՝ «Աեր կաց, Տէր, որ ցանուցիր լինեն բո թշնամիները, փախուստի մատնվեն բոլոր քեզ ատողները», իսկ երբ տապանակը դադար էր առնում, ասում էին.



Ուխտի Տապանակը պատկերող քարե քանդակ: Գտնվել է Կափառնաումի հին սինագոգի պեղումների ժամանակ (մոտ. 200 թ.)

«Տէր, դարձիր դեպի հապարավոր ու բյուրավոր խրայելացիները» (Թվեր Ժ 35-36):

Վկայության հորանը, որի առջև ազդեցում էր Մովսեսը, խորհրդանշում էր Աստծու ներկայությունը ժողովրդի մեջ: Սրա նշանն էր Փռաքի ամպը, որ իջնում էր հորանի վրա (Ելք Խ 34-38): Խորանն Աստվածամարդկության նախատիպը եղավ՝ շեշտելով Արարչի մերձ լինելը մարդկանց: Այդ պատճառով Հովհան ավետարանիչը, խոսելով Մարմնացման մասին, գրել է. «Եվ Բանը մարմին եղավ և բնակվեց մեր մեջ» (Հովհ. Ա 14), բառացի՝ «Եվ մեր մեջ հորան դրեց»:

Խորանի առջև ծեսեր և զոհաբերություններ էին կատարվում: Եվ հարց է ծագում. Ինչի՞ համար էր այդ արտաքին աստվածպաշտությունը, եթե Տառնաբանյան բարոյական սկզբունքները հաստատեց իբրև գերագույն ծառայություն Աստծուն: Պատասխանը տալիս են Սբ. Հայրերը. «Երբ նրանք՝ [խրայելացիները],- բացատրում է Սբ. Իրենեոս Լիոնացին,- վճռեցին հորթ պատրաստել... ստացան այլ ծառայություն՝ իրենց ցանկությանը համանման, որ ճիշտ է՝ նրանց Աստծուց չէր բաժանում, բայց նրանց պահում էր ստրկության լծի տակ» (Против Ересей IV., 15, 1): «Աստված զլիսավորապես պահանջում էր ոչ թե զոհաբերություններ և զոհերի զենում,- գրել է Հերոնիմոս Երանելին,- այլ որ դրանք շմատուցվեն կուռքերին, և որպեսզի մենք մարմնավոր զոհերից, ասես պատկերով ու նմանությամբ, անցնեինք հոգևոր զոհաբերության» (На Ис. 1,12): Սբ. Հովհան Ոսկեբերանն ավելի որոշակի է

ասում. նա նշում է, որ Աստված իսրայելական պաշտամունքում թուլյատրեց շատ բաներ նրանցից, «որ հեթանոսները պահում էին դեբրին, որպես աստվածներին պաշտելիս» (Беседы на Мф VI.): Այլ խոսքով՝ ծիսական օրենքները «ներողամտորեն էին վերաբերում» ժողովրդի կրոնական կոպիտ գիտակցության նկատմամբ: Պատմաբանները շատ զուգահեռներ են գտնել ոչ սուրբգրային պաշտամունքների մեջ: Անգամ Տապանակն իր նախատիպն ուներ եգիպտական կրոնի մեջ:

9. Ղևտական գիրքը: Իսրայելի աստվածպաշտական կանոնները շարադրված է Ղևտական Գրքում: Այն ներկա ձևն ստացել է քահանայական ավանդույթյամբ (R-P), հավանաբար, Գերուլթյան շրջանում կամ դրանից քիչ առաջ: Գիրքը ենթադրաբար մանրակրկիտ մշակված տաճարական պաշտամունքն է ներկայացնում, նաև բազում քահանաներ՝ քահանայապետի գլխավորությամբ, քաղաքային և երկրագործական կենսաձև: Ղևտական Գրքում գտնում ենք արդեն ոչ երեք, այլ տարեկան հինգ տոն: Արարողությունների համար պահանջվում էին նստակյաց հողագործական կյանքի արդյունք եղող թանկագին նյութեր, ինչպես և մթերքներ՝ հաց, գինի, ձեթ, որ չէին կարող լինել անապատում: Աստվածաշնչի պատմական Գրքերը ցույց են տալիս, որ նույնիսկ դատավորների և թագավորների վաղ շրջանում պաշտամունքն ավելի պարզ էր: Բայց այդ կանոնադրության մեջ մտել են Մովսեսի և մինչմովսեսյան պաշտամունքի շատ տարրեր: Սովորաբար մեկնիչները գրքի միջուկ համարում են «սրբուլթյան օրենքները» (ԺԷ 1-Ի2 46): Ղևտական Գիրքը պարունակում է զոհաբերության կանոններ (Ա 1-Է 38), ղևտացիների ընծայման կանոնները (Ը 1-Ժ 20), մաքրման ծեսերը (ԺԱ 1-Ժ2 34) Սրբուլթյան օրենքը և ամփոփումը (ԻԷ 1-34):

Ղևտական Գրքի շատ հրահանգներ իրենց արմատներով հասնում են հեթանոսական ավանդույթներին: Այսպես, Ղևտ. է 31-32-ում ասված է, որ «փրկության զոհի» ժամանակ սեղանի մոտ բերվող կենդանու աջ թևը պետք է տրվի քահանաներին: Իսկ Լաքիս քաղաքի մինչիսրայելական շերտի պեղումների ժամանակ հեթանոսական տաճարի ավերակների մեջ ցլի ու ոչխարի բազմաթիվ ոսկոր են գտնվել, և «բոլոր ճանաչված ոսկորներն առջևի աջ ոտքի վերին մասն են եղել» (Wright D. E. Biblical Archaeology, 1957): Հետևաբար՝ քանանացիները հետևում էին նույն այն կանոնին, որ հրահանգում է Ղևտական Գիրքը:

Ղևտական Գրքի մեջ նախադարյան-հեթանոսական տարրերի ամենաբնորոշ օրինակն է կենդանիների բաժանումը մաքուրների ու անմաքուրների: Այս բաժանումը թվում է բոլորովին չպատճառաբանված (Ղևտ. ԺԱ): Բայց, ամենայն հավանականությամբ, արմատը հնագույն տաքուների (արգելքների) մեջ է, որոնց սկիզբը քարե դարից է գալիս: Սակայն հինկտակարան-

յան Եկեղեցին այդ արգելքներն ընդունել է ոչ պատահականորեն: Դրանց օգնությամբ Եկեղեցին իր անդամներին առանձնացրել է կոապաշտների հետ համատեղ սեղաններից: Սա կարևոր էր, քանի որ ամեն մի սեղան ուղեկցվում էր աղոթքով և այդպիսով կրոնական երանգ էր ստանում: Նոր Կտակարանում ուտելիքին վերաբերող օրենքները ամբողջությամբ վերացվեցին (Մատթ. ԺԵ 10-11), չնայած առաքյալները դրանցից հրաժարվեցին ոչ այնքան հեշտությամբ (հմմտ. Գործք Ժ 14-15, Գաղ. Բ 11-14):

Ղևտական Գրքի՝ հինկտակարանյան այդ «կանոնագրքի» ծիսակարգերը ժողովրդին տրվել էին նրա «խստասրտության» պատճառով, որպեսզի տեսանելի գործողություններով արթնանա և ամրապնդվի բարեպաշտության ոգին: Բայց դրանք ունեին նաև առավել խոր իմաստ.

Ա) Զոհերը (տե՛ս հտ. 1, § 24, Հավելված 3) հիշեցնում էին մարդու կախումն Աստծուց, նրա ներկայության ահեղ մերձ լինելը: Միաժամանակ «փրկության» զոհաբերությունները սրբազան սեղան էին, որ հիշեցնում էին Նախահավիտյանի հետ միավորվելու մասին: Եվ վերջապես պաշտամունքային արարքները նպաստում էին երկյուղածության զգացմանը, դաստիարակում Աստծու առջև կանգնելու հոգի:

Բ) Ղևտացիների զատումը մեղավոր Իսրայելի փոխարինումն էր ընտրյալ ներկայացուցիչների խմբով, որ իրենց ողջ էությանմբ (սուլյնիսկ հազուստով ու ապրելաձևով) աչքի են ընկնում էին ծառայության մեջ:

Գ) Մաքրագործման (եբր. արփժ – ԿԻՊՈՒՐ) ծեսը, որ ուշ հրեականության մեջ հատուկ նշանակություն ստացավ, հիշեցնում էր մեղքի վարակիչ լինելու և Տիրոջ մաքրող զորության մասին: Նոխազը, որ Իսրայելի նախնիներն արձակում էին անապատ իբրև զոհ Ազազելին՝ այծակերպ դեերի թագավորին (եբր. ԸՂԻՄՍ – ՍԵԻՐԻՄ – բրդոտ), այդուհետ մեղքի խորհրդանիշ դարձավ, որը վերցվում է ժողովրդից և հեռացվում նրանից (ռուսերեն թարգմանության մեջ «Ազազելի նոխազ»՝ «քավության նոխազ»)¹: Եփրեմ Ասորու մեկնությանմբ՝ Ազազելի համար բաց թողած նոխազը Քրիստոսի գալիք քավչարար խորհրդի օրինակն էր (Толкование на Лев., 316):

Աստվածապաշտական այլ, հատկապես կարևոր իմաստը պայմանավորված է նրա նախատիպ լինելու դերով: Մաքրագործող և քավչարար ծեսերը խոսում են ներում գտնելու ծարավի, մեղքն ատելու, մաքրագործման հույսի մասին, որ պարգևում է Աստված: Այդ հույսը կկատարվի Քրիստոս-Քահանայապետի միջոցով, ինչպես ցույց է տրված Եբրայեցիներին ուղղված թղթում (Է-Թ):

¹ Հայ եկեղեցու տեսակետի մասին տե՛ս Գր. Տաթևացի, Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1728, էջ 318 – խմբ.:

Ղևտական ԺԹ 1-ում գտնում ենք գրքի հոգևոր արժեքը ներկայացնող մնայուն արտահայտությունը. Տերն ասում է. «Մոռրք եղեք, քանպի Ես, Ձեր Տեր Աստվածը սուրբ եմ»: Այս հատվածում սրբությունը նշանակում է Հինկտակարանական Եկեղեցու առանձնացումը հեթանոս աշխարհից և նրա գոյությունը որպես Աստծու պատկանող վիճակ (սուրբ նշանակում է առանձնացված, Աստծուն պատկանող): Սրբությունն արտահայտվում է ոչ միայն պաշտամունքի, այլև բարոյական պատվիրանները պահելու մեջ՝ հիմնված Տասնաբանյայի վրա (ԺԹ 3, 12, 30): Ղևտ. ԺԹ 18-ն ասում է. «Վրեժ-խնդիր մի լինիր և քո ժողովրդի դեմ ոխ մի ունեցիր: Պիտի սիրես քո ընկերոջը՝ ինչպես ինքդ քեզ»: Այս պատվիրանն ընդլայնել է Քրիստոս Փրկիչը և արդեն ոչ միայն ներեկեղեցական ուխտ է, այլև տարածվում է ցանկացած հավատի ու ծագման մարդկանց վրա (հմմտ. բարի սամարացու առակը):

Հարցեր կրկնության համար

1. Որտե՞ղ է Սինա լեռը:
2. Ի՞նչ էր նշանակում ժողովրդի լեռան չմոտենալու արգելքը:
3. Ուխտն ի՞նչ նշանակություն ուներ Աստծու ժողովրդի ստեղծման գործում:
4. Ինչո՞ւ Ուխտի կնքման ծեսը կապված էր արյան ծեսի հետ:
5. Հին պայմանագրերի բնագրերն ի՞նչպես են պարզաբանում Ուխտի բնույթը:
6. Ո՞րն է Տասնաբանյայի հիմնական հատկանիշը:
7. Ի՞նչ են ասում Ուխտի առաջին չորս պատվիրանները:
8. Ո՞ր երկու պատվիրանով է ամփոփվում Տասնաբանյան:
9. Ինչպե՞ս են փոխհարաբերվում Տասնաբանյան և Ավետարանը:
10. Ի՞նչ է Ուխտի գիրքը, ինչպիսի՞ բովանդակություն և հատկանիշներ ունի:
11. Ուխտի Գիրքը ո՞ր երեք տոնն է պատվիրում կատարել:
12. Մովսեսի՝ Սինայում գտնվելու պատումն ինչի մասին է վկայում:
13. Ինչո՞ւ պատրաստվեց ոսկե հորթը:
14. Ի՞նչ տեսք ունեին Տապանակն ու Վկայության խորանը: Ո՞րն է այդ խորհրդանիշերի իմաստը:
15. Ո՞րն է Մովսեսի կրոնի մեջ ծիսակատարության մուծման պատճառը:
16. Ի՞նչպես է կազմավորվել Ղևտական գիրքը:
17. Ո՞րն է այդ գրքի բովանդակությունը և հիմնական իմաստը:


§ 24-ի Հավելված

1. Բարոյական հանգամանքները եզրիպտական «Մեռյալների գրքում»

«Մեռյալների գիրքը» կազմվել է դարերով: Ճի՛ն գլուխն ընդարձակ բնագրի մի մասն է միայն՝ առավելաբար մոգական բովանդակությամբ: Գլուխը գրվել է Ք. ծ. ա. ԺԵ դարից ոչ ուշ:

Հանգուցյալի ինքնարդարացման առաջին խոսքը

1. Ես մարդկանց չարություն չեմ արել:
2. Ես անասունին վնաս չեմ տվել:
3. Ես մեղք չեմ գործել Եշմարտության վայրում:
8. Ես սրբապղծություն չեմ արել:
9. Ես թուլյերի վրա ձեռք չեմ բարձրացրել:
10. Ես աստվածների առջև գարշելի բան չեմ գործել:
11. Ես ստրուկին չեմ ճնշել իր տիրոջ առջև:
12. Ես տկարության պատճառ չեմ եղել:
13. Ես արցունքի պատճառ չեմ եղել:
14. Ես չեմ սպանել:



«Մեռյալների գիրքը»: Մեռյալի սիրտը կշռում է Անուբիսը, մեռյալների թագավորություն ուղեկցողը: Պապիրոս (Ք. ծ. ա. XIII դ.):

15. Ես չեմ հրամայել սպանել:
16. Ես ոչ մեկին տառապանք չեմ պատճառել:
17. Ես չեմ մսխել տաճարների պահուստը:
18. Ես չեմ փչացրել աստվածների հացը:
19. Ես չեմ յուրացրել մեռյալների հացը:
20. Ես չեմ շնացել:
21. Ես չեմ հայիոյել:
22. Ես չեմ ավելացրել կշեռքի չափը և չեմ պակասեցրել դրանից:
23. Ես արուրից¹ չեմ պակասեցրել:
24. Ես կես արուր անգամ չեմ խաբել:
25. Ես կշռաչափով խարդախություն չեմ արել:
26. Ես ուղղալարով խարդախություն չեմ արել:
27. Ես երեխաների բերանից կաթ չեմ խլել:
28. Ես ոչխարներ ու այծեր չեմ բշել իրենց արոտավայրից:
29. Ես թակարդով աստվածների թռչուն չեմ որսացել:

¹ Մակերեսի չափման եզրիպտ. միավոր՝ 2735 բառ. մ. – խմբ.:

- 30. Ես աստվածների ձուկ չեմ որսացել լճակներում:
- 31. Ես ջուրը չեմ կանգնեցրել իր ժամանակ:
- 32. Ես չեմ փակել հոսող ջրի ճանապարհը:
- 33. Ես գոհի կրակը չեմ մարել նրա ժամին:
- 34. Ես բաց չեմ թողել մտեղեն գոհաբերության օրերը:
- 35. Ես նախիր չեմ խրտնեցրել աստծու կալվածքներում:
- 36. Ես արգելք չեմ ստեղծել աստծուն նրա ելքի ժամանակ:
- 37. Ես մաքուր եմ, ես մաքուր եմ, ես մաքուր եմ, ես մաքուր եմ:

«Повесть Петеисе III»,
M, 1978, էջ 256-257:

**2. Որոշ պուգահեռներ Համմուրաբիի օրենքների
և Ուխտի գրքի միջև**

Համմուրաբիի օրենսգիրք ¹	Ուխտի գիրք
14. Եթե մարդը գողացել է ուրիշի փոքրահասակ որդուն՝ ապա նա պիտի սպանվի:	Ելք ԻԱ 16. Եթե մեկը գողանա մի իսրայելացու և վաճառի, և կամ իր մոտ գտնեն նրան, ապա սա մահապատժի թող ենթարկվի:
22. Եթե մարդը կողոպուտ է արել ու բռնվել է՝ այդ մարդը պիտի սպանվի:	Ելք ԻԲ 2. Եթե գողին մահացու հարված հասցնեն տան պատին անցք բացելիս, թող դա սպանություն չդիտվի:
206. Եթե մարդ ուժեղ հարվածել է մարդու կռվելիս կամ նրան վերք է հասցրել, ապա այդ մարդը պիտի երդվի՝ «Դիտավորյալ չեմ խփել» և վճարի բուժակին:	Ելք ԻԱ 18-19. Եթե երկու մարդ կռվեն, և նրանցից մեկը քարով... բայց տուժածի աշխատանքից զրկվելու վնասի ու բժշկության համար թող հատուցում վճարի:

«[Համմուրաբիի] օրենսգրքին խորթ է հանցանքի ըմբռնումն իբրև մեղք, հեռացում Աստծուց, նրա կամքի խախտում: Համմուրաբիի օրենքներն Աստծու երկյուղ չգիտեն, ամբողջ իրավունքն Աստծու և մերձավորի սիրուց չեն բխեցնում: Դրանք զանցանքները դիտարկում են բացառապես անձին նյութական վնաս հասցնելու տեսակետից կամ պետությանը ու հասարակությանը վտանգ ներկայացնելու տեսանկյունից: Այս առումով բաբելոնյան օրենքների ժողովածուն խիստ տարբեր է Մովսեսի օրենսդրությունից, վերջինիս վառ արտահայտված կրոնական զգացմունքներից... Բայց հոգով հեռու լինելով Սինայից՝ Համմուրաբիի օրենքները համեմատելի են մովսիսականների հետ խմբավորմամբ, դարձվածաբանության մեջ, շատ մանրուքներում, հատկապես վնասվածքներ հասցնելու համար պատժի սկզբունքներ»

¹ ХДВ. 1980, т. 1, էջ 155:

րով, արյունապղծության, գույքային վնասի դեմ որոշումներով և այլն: Զուգահեռների մեծագույն մասը բաժին է ընկնում այսպես կոչված Ուխտի Գրքին (Ել. ԻԱ-ԻԳ)» (Трапав Б. А., ИДВ, кн. 1, էջ 113):

3. Հինկտակարանյան պոհաբերության ձևերն ըստ Հնգամատյանի

1. Ողջակիզում - ամենօրյա հանրային տաճարական զոհաբերություն, երբ զոհվող կենդանու մարմինն ամբողջովին այրվում էր զոհասեղանին:

2. Չոհաբերություն մեղքի համար - մատուցվում էր առանձնակի դեպքերում: Այրում էին կենդանու մի մասը միայն, մնացածը տրվում էր քահանաներին:

3. Խաղաղության զոհ - կատարվում էր զոհաբերողների ցանկությանմբ, որոնք մասնակցում էին սրբազան սեղանին (քահանաներն ստանում էին զոհաբերվող կենդանու կրծքամասն ու աջ թևը):

4. Անարյուն զոհեր - արվում էին այլուրով, հացով, ձիթայուղով, գինով:

4. Ուրիմ և թումիմ

Իսրայելական պաշտամունքի այդ իրերն առաջին անգամ հիշվում են Ելք ԻԸ 30-ում: Հետագայում դրանք հանդիպում են Թվեր Իէ 21, Բ Օր. ԼԳ 8, հմմտ. Ա Թագ. ԻԳ 9-12, Լ 7-8 համարներում¹: Անուղղակի վկայություններից պարզվում է, որ ուրիմն ու թումիմը ինչ-որ բանով նման են սրբազան վիճակ գցելուն, որի օգնությամբ հարցում էին անում Աստծուն: Երկնային կամքն իմանալու այդ ձևը հատուկ էր հինկտակարանյան կրոնի վաղ շրջանին: Բայց նաև Նոր կտակարանում առաքյալները դիմում էին վիճակահանության (Գործ. Ա 26):



Համնուրարի արքան ստանում է օրենքները Համաշ աստծուց: Համնուրարի օրենքների քարեկոթողի վերին մասը, Բաբելոն (Ք. ծ. ա. XVIII դար):

¹ Ուրիմ և թումիմ - տե՛ս Ա. Մայիլյան, նշվ. աշխ., էջ 310. - խմբ.:

§ 25. Սինա-Կադես-Անդրհորդանան (Թվերի գիրքը և Բ Օրինացը)

1. Թվեր: Գրքի ուսերեն վերնագիրը (ինչպես նաև հունարենում [և հայերենում]՝ Ἀριθμοί) ծագում է Մովսեսի օրերի՝ ողջ հինկտակարանյան Եկեղեցու սերունդների ու տոհմերի թվարկումների առատությունից: Սերտ առնչվելով Ելքի Գրքին՝ Թվերի Գիրքը, ուղղակի և նախօրինակ լինելով, նվիրված է Եկեղեցու՝ Աստու ժողովրդի ճակատագրին: Գիրքը պատկերում է մի համայնք, որ համախմբվել է սրբարանի շուրջը, որի կենտրոնում Աստու Փառքն է: Աստու շնչով ներշնչված հեղինակը լուսնային չի մատնում մարդկային մեղքերն ու հավատացյալների թուլությունները (խոռվություն հոգևոր վերակացունների դեմ, տրտունջ և անհնազանդություն, գժտություն համայնքի ներսում): Միևնույն ժամանակ պատմությունը խոսում է Տիրոջ գթասիրտ ներողամտության մասին, որ պահում է թերհավատներին, խոսում է դաժան դասերի մասին՝ նրանց խրատելու համար:

Թվոց Գրքում ամենից շատ տեսանելի է Քահանայական խմբագրի ձեռքը (Բ-Ք), բայց ոչ քիչ գլուխներ կառուցված են Ե-Յ և Ե-E ավանդույթով՝ հին օրհներգերի ժողովածուների հավելմամբ:

Գիրքը բաժանվում է երեք հիմնական մասի:

Առաջինը պատմում է իսրայելացիների՝ Սինայում գտնվելու, նրանց թվի, ղևտացիների և նազովրեցիների¹ պարտականությունների, Ելքից հետո երկրորդ Պասեքի մասին (Ա 1-Ժ 10):

Երկրորդը պատմում է թափառումների մասին՝ Սինայից Կադես և ապա Մովաբի հարթավայրեր (Ժ 11-ԻԲ 1):

Երրորդն Անդրհորդանանում՝ Մովաբի տարածքում տեղի ունեցած դեպքերին է նվիրված (ԻԲ 2-ԼՁ 13):

Բոլոր այս մասերը ներառում են ծիսական հրահանգներ:

2. Իսրայելի որդիների ուղին դեպի Քանան: Հագիվ թե հնարավոր է ամենայն մանրամասնությամբ հետևել այն ճանապարհին, որով Մովսեսն իր ժողովրդին տարավ Սինայից հետո: Ժամանակագրական գիրք չլինելով՝ Թվոց Գիրքը քիչ ուշադրություն է դարձնում պատմությանն ու աշխարհագրությանը: Սակայն ամբողջ Գրքով մեկ ցրված ցուցումները հնարավորություն տալիս են ընդհանուր գծերով վերականգնելու տեղաշարժման և իրադարձությունների հերթականությունը: Սկզբում իսրայելացիք գնում են հյուսիս-արևելք՝ Ելաթ (Ագապա) ծոցի երկայնքով դեպի Փառան անապատ: Հանգրվանելով դրա հյուսիսային մասում՝ Կադես մեծ օազիսում, նրանք հա-

¹ Նազովրեցի – եբր. առանձնացյալ անձ (Թվեր 2 2), որ Տիրոջը նվիրվելու մեծ ուխտ է անում. – իսր.:

կառակ Մովսեսի կամքի՝ զինչալ ներխուժում են ձեռնարկում Նեգևի¹ (հարավային Պաղեստին) կողմը, բայց հանդիպում են քանանացիների ուժեղ դիմադրությանը: Դրանից հետո նրանք վերադառնում են անապատ, Ելաթի ծոցի մոտ, այնտեղից շրջանցելով Եգիպտոսի թագավորությունը՝ գնում են Անդրհորդանան և Մովսեսի հարթավայրերը: Այդ իրադարձությունների ժամանակը սովորաբար ընդունված է հաշվել ԺԳ դարի վերջին տարիները:

3. Հինկտակարանյան քահանայությունը (Թվեր Գ, ԺԲ 1-15, ԺԶ-ԺԸ). Հեթանոսական քրմերը դիտվում էին որպես աստվածներից ծագած ու մոգական իշխանություն մեծացած անձեր՝ գաղտնի գիտելիքներ և ուժ ունեցող: Այլ կերպ է հասկացվում հինկտակարանյան Եկեղեցու քահանայությունը: Ահարոնի սերունդներն ու բոլոր մյուս ղետացիներն Աստծուն համարվում են որպես Աստծուն ընծայված զոհ ու ընծա, այն անդրանիկների փոխարեն, որոնք նվիրվում էին Արարչին (Գ 11-12): Քանի որ ամբողջ Իսրայելը դեռևս ի վիճակի չէր «քահանաների թագավորություն» լինելու, ժողովրդի մի մասը (ղետացիները) փոխարինում է նրան Եահվեի առջև: Դրանով իսկ ղետացիները դառնում են նաև Աստծու ժողովրդի միջնորդներ, Եկեղեցու կողմից զոհասեղան ներկայացնող և այլ աստվածաշտական ծեսեր կատարողներ:

Քահանայության այս ըմբռնումը պահպանվեց նաև նորկտակարանյան Եկեղեցում, սակայն մի կարևոր փոփոխություն: «Համայն Իսրայելի թագավորական քահանայությունը,- նկատում է Ն. Աֆանասևը,- Հին Կտակարանում մնաց որպես խոստում» (прот. Н. Афанасьев. Церковь Духа Святого. Париж, 1970, էջ 10): Ղետացիներն աստիճանաբար փակ, ժառանգական խավ դարձան: Մինչդեռ Նոր Կտակարանի շնորհաբեր պարզեր խոստումնի կատարումն էր: Եկեղեցու բոլոր անդամները նրա կառույցի «կենդանի վեներն» են (Ա Պետր. Բ 5)՝ նրա «անարատ քահանայությունը»: Իսկ նրա նվիրապետական կարգը պայմանավորված է շնորհների զանազանությունով (Ա Կորնթ. ԺԲ 28) ու Համայնքում կարգի պահպանության անհրաժեշտությունով (հմմտ. свт. Климент Римский. 1 Посл. к Кор., 40): Հաղորդության խորհուրդը կատարող քահանան, որպես Եկեղեցու սպասավոր, կարող է ընտրվել ոչ թե որևէ որոշակի ցեղից, այլ այդպիսին կարող է լինել ամեն մեկը՝ որին նշանակում է Եկեղեցին:

Թվերի գիրքը քահանաներին ու ղետացիներին պատկերում է ավարտուն տեսքով՝ ինչպիսին նրանք դարձան Գերության ժամանակ: Ավելի ուշ՝ դատավորների ու թագավորների շրջանում, հաճախ զոհ մատուցում էին առաջնորդները, միապետներն ու մասնավոր անձինք (Դատ. 219, Բ Թագ. 2 17), թեպետ նախընտրելի էին ղետացիները (տես Դատ. ԺԵ-ԺԸ): Սակայն Թվե-

¹ Նեգևի անապատ - Իսրայելի հարավում գտնվող ամենամեծ անապատը՝ մոտ 12.000 քառ. կմ, արևմուտքում Սինայի անապատն է: Ս. Գրքում այդ անունը չէնք հանդիպում, բայց հիշատակվում է որպես «հարավային երկիր» (Ծննդ. Ի 1, ԻԴ 62, Թվեր ԺԳ 18): Եգիպտոսից դուրս գալուց հետո այստեղ են թափառել Մովսեսի առաջնորդությամբ, մինչ Հորդանանն անցնելը. - խմբ.:

րի գիրքը պարունակում է ցուցումների մի շարք, որ Մովսեսի ժամանակ քահանայության հաստատումը գործուն դիմադրության էր հանդիպում:

Ծանոթություն

Նազովրեցիներին (եբր. Ծ՛ՂԻՂ – ՆԱԶՐԻԿՄ), որոնց մասին խոսում է Թվեր 2 գլխում, չպետք է շփոթել Նազարեթիցիների հետ (եբր. ՆՈՅԵՐԿՄ – Ծ՛ՂՅՈՂ)՝ Նազարեթի բնակիչների հետ¹: Նազովրեցի դառնալը ժառանգական ծառայություն չէր ղևտացիների օրինակով: Նազովրեական ուխտի մեջ կարող էին մտնել մասնավոր անձեր՝ իրենց կամ ծնողների ցանկությամբ (հմմտ. Դատ. ԺԳ 5, Ղուկ. Ա 15): Նազովրեցիներն իրենց նվիրում էին հեթանոսության դեմ պայքարին, խոստանում էին չխուզել մագերը, գինի չխմել և չհիպչել դիակի: Ուխտի մեջ մտնելը կարող էր լինել նաև ժամանակավոր: «Նազովրեցի» բառը ծագում էր եբր. Դ՛ՂՂ – ՆԱԶԻԿ՝ առանձնացված, (Աստծուն) նվիրված ձևից²: Նազովրեական ուխտը հինկտակարանյան ճգնափորության ձևն էր, քանանական քաղաքակրթության կործանարար պտուղներից հրաժարումը: Նազովրեական ուխտին մոտ էր ռաբաբիմների կինեցիների գերդաստանը (Դ Թագ. Ժ 15, Երեմ. ԼԵ), որոնք ոչ միայն հրաժարվում էին գինուց, այլև ապրում էին վրաններում, ինչպես իրենց քոչվոր նախնիները:

4. Տրտունջ և խռովություններ (ԺԱ-ԺԴ, ԺԶ): *Թվերի Գիրքը հատկապես մանրամասն անդրադառնում է ժողովրդի՝ իր առաջնորդին ընդդիմանալուն:*

Անապատի տարագրության դժվարությունները զանգվածային դժգոհություններ առաջացրին Մովսեսի դեմ (ԺԱ 1-6): Մինչ այդ անմիաբան և մրցակցող ցեղերը, ինչպես և օտարազգիներ (հմր. 4) դժվարությամբ էին հարմարվում միասնության մտքին: Սովր ճամբարում, ինչպես պատմում է Թվերի Գիրքը, իր պատասխանատվությունը գիտակցող Մովսեսի հոգուց աղոթք-զանգատ կորզեց:

«Տե՛ր, ինչո՞ն չարչարեցիր ինձ՝ քո ծառային, ինչո՞ն քո առաջ շնորհք չգտա, և այս ժողորդի բարկությունն ինձ վրա թափեցիր: Միթե ես հղացա այս ամբողջ ժողովրդին կամ թե ես ծնեցի նրան, որ ինձ ասում ես, թե՛ "Առ նրան քո գիրկը, ինչպես դայակն է՝ իր գիրկն առնում ծծկեր երեխային, որպեսպի նրան տանեմ այն երկիրը, որը դու խոստացար իրենց հայրերին": Արդ ես որտեղից միս գտնեմ, որ տամ այս ամբողջ ժողովրդին, չէ՞ որ նրանք լաց են լինում ինձ մոտ և ասում. "Մեզ միս տուր որ ուտենք": Ես միայնակ չեմ կարող կրել այս ժողովրդի բեռը, որովհետև իմ ուժերից վեր է դա» (Ժ 11-14):

Այնուհետև պատմվում է Մովսեսի դեմ նրա եղբոր ու քրոջ զայրույթը: Առիթ հանդիսացավ Մովսեսի եթովպուհի կինը (տե՛ս հտ. 1, § 23, կետ 4), բայց

¹ Դայերեն Ս. Գրքում *Նազովրեցի* բառն Զին Կտակարանը ընդհանրապես չի օգտագործում, այլ օգտագործում է իմաստային թարգմանությունը՝ *ուխտավոր* ձևով, իսկ Նոր Կտակարանում *Նազովրեցի* ձևը միայն *Նազարեթցի* իմաստով – *խմբ.*

² Գրք. բնագրում բառը պարզապես դուրս է թողնվել: Դասական հայերենում այն հանդիպում է Բարսեղ Կեսարացու՝ Պահքի մասին առաջին քարոզում. տե՛ս Բարսեղ Կեսարացի, Գիրք Պահոց, Սբ. Էջմիածին, 2008, էջ 64. հմմտ. ՆՅԲ ՆԱԶԱՐԱՑԻ հոդվածը: Ռուս.՝ назорей, անգլ.՝ Nazirite ձևերն իսկապես կարող են շփոթության առիթ հանդիսանալ. -*Ծան. թարգմ.*

գլխավոր պատճառը նրա՝ իբրև ժողովրդի առաջնորդի և մարգարեի հեղինակությունը խափանելու ցանկությունն էր. «Միթե Տերը միայն Մովսեսի հետ խոսեց. նա նաև մեկ հետ չխոսեց» (Թվեր ԺԲ 1-2): Մարիամին ախտահարած բորոտությունը բանակից բաժանվելու նշան էր, քանի որ բորոտների համար է ասված՝ «բանակատեղիից դուրս» (տես Ղևտ. ԺԳ-ԺԴ): Սակայն այդ դրվագը հիմք չի տալիս կարծելու, թե Մովսեսը գործում էր որպես բռնապետ: Բանակատեղիում մարգարեների հայտնվելը (Թվեր ԺԱ 26-30) ոմանց թվաց որպես ոտնձգություն առաջնորդի իրավունքների նկատմամբ: Սակայն նա հերքեց այդ կասկածները: Նա չէր կամենում սահմանափակել մարգարեանալու ազատությունը: Դեռ ավելին՝ Մովսեսը չէր կամենում ղևտացիների նվիրապետությունն սահմանել (քահանայության իշխանություն) և ժողովրդին կառավարելու համար նշանակեց ծերերի (Թվեր ԺԱ 16, հմմտ. Ելք ԺԸ 13-27):

Օանթոն-Եյոն

Մովսեսի հեզույթունը (ԺԲ 3) հարկ է հասկանալ ոչ թե քրիստոնեական իմաստով, այլ ժամանակի և միջավայրի բարբերի տեսանկյունից:

Կադեսից լրտեսներ ուղարկվեցին Քանան: Նրանք տեղեկություններ բերեցին այնտեղ բնակվողների զորության և անառիկ քաղաքների մասին: Սա «տրտունջի» նոր ալիք բարձրացրեց, որին ի պատասխան մարգարեություն եղավ, որ ոչ մի թերահավատ չի մտնի այն երկիրը, որը խոստացել է Տերը (ԺԴ 1-38): Սակայն խախտելով Տիրոջ կամքը և մարգարեի զգուշացումները՝ առավել մարտական տրամադրված իսրայելացիները նեգե թափանցելու փորձ կատարեցին: «Լեռան վրա բնակվող ամառեկացիներն ու քանաանացիները իջան, հարվածելով սրակոտոր արեցին նրանց՝ հետապնդելով մինչև Յերմա» (ԺԴ 39-45):

Եվ վերջապես ղևտացիները ըմբոստացան Մովսեսի դեմ՝ ղեկավարվելով Կորխի, Դաթանի և Աբիրոնի կողմից (զլ. ԺԶ): Նրանք մեղադրում էին Մովսեսին, թե կամենում է «ղեկավար դառնալ» ժողովրդին: «Ժողովուրդը մաքուր է,- ասում էին նրանք,- և Տերը նրանց մեջ է»: Բայց հրաշալի նշանը՝ հատուցումը, ցույց տվեց, որ Մովսեսը ճիշտ էր, և որ դեռ չի եկել Եկեղեցու ընդհանուր քահանայության մասին խոստման իրականանալու ժամանակը: Մյուս նշանը՝ Ահարոնի ծաղկյալ գավազանը, (զլ. ԺԷ) վկայեց նրա տոհմի՝ քահանայությունը գլխավորելու իրավունքը:

5. Նշաններ Կադեսից Մովսեսի ճանապարհին (Ի-ԻԱ): Կադեսի մոտ Իսրայելի փորձությունների ընթացքում, թերահավատությունը դիպավ անգամ Մովսեսին և Ահարոնին: Երբ ջուրն սպառվեց, Տերը Մովսեսին հրամայեց հարվածել ժայռին և խոստացավ, որ այնտեղից ջուր կբխի: Բայց Մովսեսը երկմտեց և ապահովության համար երկու անգամ հարվածեց: Հին երգի հա-

մաձայն (ԻԱ 17-18)՝ աղբյուրն առաջացավ, «ապգերի առաջնորդների»՝ Մովսեսի ջանքերով: Ինչ էլ որ լինի, այդ թերահավատության պատճառով Մովսեսն ու Ահարոնը զրկվեցին ավետյաց երկիր մտնելու իրավունքից:

Եդոմի թագավորության սահմանին, ուր ուղևորվում էր Իսրայելը Ելաթի անապատային ավերից, մահացավ Ահարոնը: Այնտեղ Արադ քաղաքի քանանացիները ելան իսրայելացիների դեմ և այս անգամ ջախջախվեցին: Մովսեսը որոշեց չմտնել Եդոմի սահմանը, այլ շրջանցեց անմարդ արահետներով: Ճանապարհին բանակատեղին ենթարկվեց «կիզիչ օձերի» հարձակման (եբր. ԾԻՓՐՇՈ ԾԻՇՈՆՈ – ՀԱ-ՆԱԽԱՇԻՄ ՀԱ-ՍԵՐԱՖԻՄ, հավանաբար այդ անունը ծագում է մահացու բորբոքումից, որ առաջացնում էր դրանց խայթոցը): Այնժամ Աստծու հրամանով Մովսեսը պղնձե օձ պատրաստեց և դրեց ձողի վրա. ով նայում էր դրան՝ բժշկվում էր (ԻԱ 4-9): Սա Հնգամատյանի ամենաառեղծվածային հատվածներից մեկն է:

Շատ ժողովուրդների, այդ թվում իսրայելացիների համար օձը դիվային մութ ուժերի խորհրդանիշ էր (հմմտ. Ծմնդ. Գ 1 և հաջ.): Եգիպտացիները պատկերում էին պարտված օձ՝ ի նշան դրա նկատմամբ Արևի հաղթանակի: Հնարավոր է՝ ձողին ամրացված պղնձյա օձը նույնպես նշան էր օձերի նկատմամբ հաղթանակի (ավագերեց Ա. Կնյազև): Պատումը խոսում է հավատի բուժիչ զորության մասին: Այդ պատճառով նաև Քրիստոս «պարտամուրհակը, որ մեր դեմ էր, վերացրեց այն մեջտեղից և մեխեց խաչափայտին»¹՝ Իր խաչը համեմատելով պղնձե օձի հետ, որը բարձրացվեց անապատում, որպես փրկության նշան (Յովհ. Գ 14): Ավելի ուշ իսրայելացիները Մովսեսի օձը պաշտում էին իբրև ֆետիշ, ուստի Եզեկիա թագավորն էլ դարձավ ոչնչացրեց այն (Դ Թագ. ԺԸ 4):

6. Քանանը ԺԳ դարում և «սրբազան պատերազմի» կանոնները: Եդոմի ու Մովսեսի սահմանների մոտով Իսրայելի որդիներն արդեն շարժվում էին Քանանի տարածքով:

Այդ շրջանում Եգիպտոսի իշխանությունը երկրի վրա գրեթե ավարտված էր: Փարավոնները հազիվ էին կարողանում ետ մղել լիբիացիների և «ծովի ժողովուրդների» հարձակումները: Այժմ արդեն Պաղեստինի քաղաքական քարտեզն արտակարգ խայտաբղետ էր: Արևմտյան ավին տեղավորվում էին փղշտացիների առաջին խմբերը, որոնք շուտով հաստատվեցին Կարմեղոս լեռից հարավ՝ ցամաքի երկայնքով: Կենտրոնական մարզերը բնակեցվեցին տարբեր ցեղերով, ըստ երևույթին այդ թվում նաև հրեաներով (տես հտ. 1, § 23, կետ 3ա): Արևելյան Անդրհորդանանն ամորհացիների թագավորի և ամոնացիների ձեռքին էր: Մեռյալ ծովից արևելք ու հարավ-արևելք Մովսեսի

¹ Կող. Բ 14 – խմբ.:

ու եղումի թագավորություններն էին: Հյուսիսային և Հարավային քաղաք-պետությունները պատկանում էին քանանացի թագավորներին:

Քանանացիների նկատմամբ իսրայելացիները հատուկ ատելություն ունեին: Եթե Մովսեսի կրոնը մարդուց պահանջում էր բարոյական մաքրություն, ապա քանանացիների՝ Մողոբի, Բաղամի, Աստարտի ու մյուս աստվածների պաշտամունքը լայն ասպարեզ էին տալիս անկյալ բնություն վայրի բնազդներին, այլասերմանն ու խելահեղությունը՝ դրա դիմաց խոստանալով լավ բերք և հոտերի բեղմնավորություն: «Եթե մոնեստերիս Սեր Աստծու քեզ տված երկիրը, - ասում է Մովսեսը, - չյուրացնես այդտեղ ապրող ազգերի գարշելի սովորությունները: Ձեր մեջ թող չգտնվի այնպիսի մեկը, որն իր տղային կամ աղջկան կրակի բովից անցկացնի, կախարդությամբ պաշտի, թոշուններին նայելով կանխագուշակություններ անի, մոգություններով պաշտի, վիուկ կամ սուտ մարգարե լինի, ոգեհարցությամբ պաշտի, որովհետև Տիրոջ համար պիղծ է նա, ով պաշտվում է այդպիսի բաներով. այդպիսի գարշելի բաների համար է, որ Տերը նրանց վերացնում է քո միջից» (Բ Օր. ԺԸ 9-12): Պեղումներն ու վավերագրերը վկայում են, որ Քանանում ծաղկում էր մարդկային զոհաբերությունները: Շինությունների հիմքերի տակ հայտնաբերվել են ոչ քիչ մանկան կմախքներ: Գազերում բացվել է հրկիզված մանուկների մի ամբողջ գերեզմանոց: Գյուղատնտեսական մոգություն հավատն անբաժան էր սեռի պաշտամունքից: Տաճարներում հատուկ հարճեր էին, որ մասնակցում էին պտղաբերության աստվածների պատվին կազմակերպվող ցոփություններին: Ի տես այս ամենի՝ հասկանալի է, որ իսրայելացիները քանանացիների դեմ մղվող պայքարին նայելու էին որպես «Տիրոջ մարտի»՝ արքայալստ պատերազմի, որ «գարշանքի» դեմ պատերազմում էր Ինքն Նահվեն:

Այդ նույն ժամանակ իսրայելական ռազմական գործի մեջ մուծվում է նզովքի օրենքը (եբր. ԾՂԸ - ԽՆՐԵՄ հուն. ἀνάθεμα): Դա հնուց կիրառում էին բազմաթիվ հեթանոս ժողովուրդներ: Սա արտահայտվում էր նրանով, որ նզովքի տրվող քաղաքում ավար ու գերի չէին վերցնում: Ամեն ինչ ջնջվում էր երկրի երեսից: Ընդունելով այդ դաժան օրենքը՝ իսրայելական զինվորները համարում էին, որ Աստված խրախուսում է այն: Առաջին անգամ նրանք դա կիրառեցին Արադը գրավելիս (Թվեր ԻԱ 1-3): Աստվածաշնչի այն մասերն ընթերցելիս, ուր «նզովքի» օրենքն ասես Աստված Ինքն է հրահանգում, հարկ է հաշվի առնել Գրքի պատմական, երկրային կողմը: «Աստված ժողովրդի համար բացահայտվում էր աստիճանաբար, և ճիշտ նույն կերպ Նա ավելացնում էր Իր պահանջները նրա հանդեպ: Նա վարվում էր փորձված դաստիարակի նման, որ գիտե իր աշակերտների թուլություններն ու կարողությունները: Ճշմարտության ընկալումը և ըմբռնումը ոչ միայն ուսուցչից է կախված, այլև աշակերտների մակարդակից: Այնպես, որ եթե

նույնիսկ ուսուցիչն այն չի թաքցնում սաներից, ապա նրանք միշտ չէ, որ ունակ են ընդունել ու հասկանալ այն: Հենց այսպես պետք է ճիշտ գնահատել Հայտնություն «աստիճանական» լինելը» (Կ. Կудасевич. Библия, история, наука. Варшава, 1978): Նորկտակարանյան կրոնական գիտակցությունը չի ընկալում այն միտքը՝ իբր նգովքի հեթանոսական սովորույթին հետևելն Աստծու գործն էր: Հները հաճախ նույնքան աղավաղումով էին մեկնաբանում Նախախնամության ճանապարհները, ինչպես ավելի ուշ խաչակիրները, որոնք կործանելով քաղաքներն ու դրանց բնակիչներին՝ գոչում էին՝ «Այդ է ուզում Աստված»:

Այնուամենայնիվ սրբազան պատմությունը գիտե դեպքեր, երբ որոշ ժողովուրդների բարբարոսությունն ընդունվում էր որպես մյուս ժողովուրդների մեղանշումների հատուցում: Օրինակ, ասորեստանցիներին և քաղղեացիներին մարգարեները ճանաչում էին իբրև «Աստծու պատուհաս»: Այսպես և իսրայելացիների ներխուժումը եղավ քանանացիների ու նրանց «գարշելիություն» դատաստան, ինչպես որ մեկնում է Իմաստության Գրքի հեղինակը. «Դու ատեցիր նաև քո սուրբ երկրի հին բնակիչներին իրենց կատարած գարշելի գործերի՝ կախարհությունների, անսուրբ պոռնությունների, մանուկների անողորմ կոտորածների և աստվածությանդ նվիրված խորհրդավոր ծեսերի ժամանակ՝ մարդկային մարմնի փորձով և այրուն ուտելու համար: Եվ այն ծերերին ու ծնողներին, որոնք սպանեցին անօգնական հոգիներին, դու կամեցար կորստի մատնել մեր հայրերի ձեռքով» (ԺԲ 3-6):

Օւանթո-թյոն

Յարկ Է ընդգծել, որ բացի նգովքի առանձին դեպքերից, պատերազմ վարելու հինկտակարանյան կանոնները բավական մեղմ էին՝ անգամ ներկայիս պահանջների համեմատությամբ: Չինվորներին արգելվում էր կողոպտել կամավոր հանձնված քաղաքը (Բ Օր. Ի 10-11): Պաշարելիս արգելվում էր այգիներ հատելը և «ըջակայքն ամայացնելը»¹ (Բ Օր. Ի 19): Քաղաքը գրոհով գրավելիս խնայում էին կանանց ու երեխաներին (Բ Օր. Ի 14): Եթե կինը, որ գերիներից էր, ամուսնալուծվում էր, մնում էր ազատ (Բ Օր. ԻԱ 10-14):

Եդոմի թագավորն իսրայելացիներին չէր թողնում իր տարածքով անցնել, և գաղթողները շրջանցեցին նրա հողերը: Բայց Արադում տոնած հաղթանակը նրանց արիություն ներշնչեց, և երբ Սեհոնը՝ ամորհացիների թագավորը, նույնպես նրանց թույլ չտվեց խաղաղ անցում կատարել, նրանք, ուժով ցրելով ամորհացիների զորքն, իրենց ճամփան հարթեցին դեպի Անդրհորդանան: Նույն բախտին արժանացավ Բասանի փոքր թագավորությունը: Հորդանանի արևելյան ափին հիմնավորվելը շարունակվում էր:

¹ Հայերենում մի կտրիք ծառը – խմբ.:

7. Բաղաամի պատումը (Թվեր ԻԲ-ԻԴ): Իսրայելի ցեղակից մովաբացիների թագավոր Բաղակը մշտապես ենթակա էր ամորհացիների սպառնալիքին: Սեհոն թագավորը նրանցից ետ վերցրեց մի շարք մարզեր (Խմմտ. երգի հին տեքստ՝ Թվեր ԻԱ 27-30), ուստի Բաղակը սկզբում ի դեմս նոր եկվորների՝ իսրայելացիների, դաշնակից տեսավ: Բայց նա շուտով հասկացավ, որ դրանք իր համար վտանգավոր են: Չվճռելով խախտել խաղաղությունը նրանց հետ՝ Բաղակը որոշեց դիմել մոգություն, որպեսզի վնաս պատճառի Իսրայելի որդիներին: Նա Միջագետքից կանչեց Բաղամ տեսանողին և խոստացավ պարգևատրել, եթե նա իր անեծքներով կործանի եկվորներին:

Նախնական պատումի համաձայն Աստված կանգնեցրեց Բաղամին՝ ստիպելով խոսել նրա ավանակին: Մյուս վարկածով՝ նրան թուլատրեցին մտնել Մովաբ, բայց անեծքի փոխարեն օրհնանք արտասանեց:

Պատումը պարունակում է աստվածաշնչա նմուշներ: Բաղամի չորս մարգարեությունները (ԻԳ 7-10, 18-24, ԻԴ 3-9, 15-24) ցույց են տալիս, որ Աստուծով ոգեշնչվել կարող էին նաև հեթանոս մարգարեները: Պատումների գլխավոր բովանդակությունը՝ մարդու համար անկարելի է հակադրվել Տիրոջ մտադրություններին: Ճշմարիտ մարգարեն, «լսելով Աստծու խոսքը», խոսում է ոչ թե ինքն իրենից, այլ՝ վերևից ներշնչված:

8. Հեթանոսական գայթակղություն (Թվեր ԻԵ): Մովաբացիների հետ խաղաղ հարաբերությունները հանգեցրին Քանանի ժողովրդի հետ առաջին սերտ շփման: Եվ դա իսկույն տխուր արդյունքներ տվեց: Բելփեգոր աստծու տոնին իսրայելացիները խրախճանքի մեջ էին, նրան գոհ էին մատուցում և «պղծվեցին այնտեղ մովաբացիների դուստրերի հետ պռոնկանալով»: Պարզվեց, որ Մովսեսի պատգամները լուր մակերեսորեն էին ազդել ժողովրդի գիտակցության վրա: Միայն ամենակտրուկ միջոցներով (մեղավորներին պատժելով) առաջնորդները կարողացան կասեցնել սկսված այլասերումը: Մովսեսը պիտի գիտակցեր, Քանան փոխադրվելն սպառնում է իր գործի լիակատար ձախողմամբ, ուստի կանխատեսելով իր մոտալուտ մահը՝ մարգարեն



Բահաղ-Աղաղ, քանանացիների ամպրոպի աստվածը, քանդակ, սպիտակ կրաքար, Ուգարիտ: Ք. ծ. ա. II հազարամյակի 1-ին կես: Ներքևի աջ կողմում, հավանաբար, Ուգարիտի արքայի պատկերն է:

հավաքեց իսրայելացիներին և նրանց խստիվ զգուշացրեց հեթանոսական գայթակղություններից զերծ մնալ: Այդ քարոզներն ու պատվիրանները Բ Օրինաց գրքի առանցքը կազմեցին:

9. Բ Օրինաց գրքի ծագումը: Ինչպես արդեն նշվել է՝ այս գիրքը պատկանում է Մովսիսական շորորոզ ավանդությանը (Vor-D): Գրքի բովանդակությունը բանավոր և գրավոր ճանապարհով փոխանցել են Սելովի ու Այուքեմի շուրջ հաստատված հյուսիսային ցեղերի քահանաները ու ղևտացիները: Բ Օրինաց գիրքը մյուս չորս գրքերից տարբերվում է վերամբարձ քարոզչական ոճով, որ նման է Է-Ձ դարերի մարգարեների գրվածքներին: Սրա օրենսդրական մասն առանձին հետևողականությամբ ընդգծում է միայն մեկ պաշտամունքային կենտրոնի անհրաժեշտությունը (ԺԲ): Հավանաբար համոզվելով, որ ցեղերի միությունն ամուր չէ, Մովսեսը ձգտել է նրանց միավորել Խորանի ու Տապանակի շուրջը: Ավելի ուշ, երբ Տապանակը փոխադրվեց Սելով՝ այդ քաղաքն սկսեց պաշտամունքի կենտրոն համարվել: Մարգարեները հաճախ էին հանդես գալիս տեղական պաշտամունքային վայրերի դեմ՝ հատկապես Դանում և Բեթելում:

Սամարիայի անկումից հետո՝ 722 թվականին, Բ Օրինացի հիմք հանդիսացող գիրքը տարվեց Երուսաղեմ և թաքցվեց Տաճարում*: 622 թ. Հոսիա թագավորն անսպասելիորեն գտավ այն և օրենք դարձրեց ամբողջ Իսրայելի համար (Դ Թագ. ԻԲ 8): Երուսաղեմի Տաճարը համարեցին հենց այն ընտրյալ տեղը, որ միակն է, ուր կարելի է զոհ մատուցել:

Այդ հիմունքով հին քննական դպրոցը Բ Օրինաց գիրքը վերագրեց Երուսաղեմի քահանայությանը: Սակայն ներկայումս այս կարծիքը գրեթե կողմնակիցներ չունի: Բ Օրինացը (ԺԸ 6-8) պաշտպանում է ղևտացիների և տեղական սրբարանների քահանաների իրավունքները, որոնք և պետք է կենտրոնական սրբարանում պաշտամունք մատուցելու իրավունք ունենային: Սակայն այս լուծումը չէր բավարարում մայրաքաղաքի կղերականության շահերին և կյանքի չկոչվեց: Բ Օրինացի ԻԷ-ԻԸ գլուխներում նկարագրվում է ծես, որ հնուց ի վեր կատարվում էր Այուքեմում՝ Գեբաղ և Գարիզիմ լեռների մոտ: Ուխտի վերանորոգման այս ծեսը գալիս էր Մովսեսի ժամանակներից և տարածված էր Հյուսիսային թագավորությունում:

10. Բ Օրինաց գրքի բովանդակությունն ու աստվածաբանությունը: Բ Օրինացը կազմված է չորս մասից, Մովսեսի խոսքերից, որ նա արտասանել է Անդրհորդանանում՝ մահվան նախօրեին, և վերջաբանից.

* Բ Օրինաց գիրքը, անշուշտ, ծագումով կապված է հյուսիսային (Էլոհիմական) ավանդության հետ, բայց այն ծագում է Սամարիայի անկումից հետո Հրեաստան վերադարձած ղևտացիներից – ծխթ. ռուս. խմբ.:

Առաջին մասն (Ա 1-Դ 43) ընդգրկում է Իսրայելի թափառումների հետահայաց պատմությունը՝ Մինայից մինչև Քանան:

Երկրորդ մասը (Դ 44-ԻԸ 68) գրքի օրենսդրական կորիզն է: Այն ընդգրկում է Տասնաբանյան, հիմնական պատվիրանները, տոների և աստվածաշտույթյան մասին օրենքները, ինչպես նաև քաղաքացիական կանոնադրությունը: Այս մասն ավարտվում է օրհնության և նզովքի ծեսերի նկարագրությամբ:

Երրորդ մասը (ԻԹ 1-Լ 20) Բ Օրինաց գրքի կանոնադրության եզրափակիչ բաժինն է: Այստեղ է ամփոփված Ուխտը պահելու և ճշմարիտ ճանապարհն ընտրելու կոչը:

Չորրորդ մասը (ԼԱ 1-ԼԴ 12) Բ Օրինաց գիրքը շաղկապում է Աստծու ժողովրդի հետագա պատմության հետ: Նրա մեջ են մտել Մովսեսի Երգն ու Օրհնությունը, և նրա վերջին օրերի և մահվան մասին պատմությունը:

Բ Օրինացը հիմնականում Ուխտի Գիրք է, որի կենտրոնական նյութն է՝ Աստծու պահանջկոտ սերն հինկտակարանյան Եկեղեցու հանդեպ: Ուխտի մեջ մտնողներին առաջարկվում է երկու ճանապարհ՝ կյանքի և մահվան: Մարդիկ պետք է վերջնական ընտրություն կատարեն՝ ճշմարիտ Աստծու և կեղծ աստվածների միջև: Գրքում հեթանոսական գայթակղությունները պատկերված են մարգարեների հոգով՝ որպես Իսրայելի բոլոր դժբախտությունների աղբյուր: Նրա փրկությունն է՝ Արարչին ու Նրա Ուխտին հավատարիմ լինելը: Ուխտն Աստծու որդեգրումն է Իր ընտրած ժողովրդին: Հավատարիմներին կոչ է արվում ամբողջ սրտով սիրել Նրան, և իրենց ողջ կյանքը ներծծված պիտի լինի Տիրոջ Օրենքով:

Ընտրությունն ամբողջապես Աստծու գործն է, առանց մարդու որևէ վաստակի (հմմտ. «Ոչ դուք ընտրեցիք ինձ, այլ ես ձեզ ընտրեցի». Յովհ. ԺԵ 16): Տիրոջ նպատակներն անիմանալի են: Նա դրանք իրագործում է ոչ թե մեծերի ու հզորների, այլ կրտսերների ու տկարների միջոցով (հմմտ. Ղուկ. Ա 52): «Տերը բարեհաճեց ու ընտրեց ձեզ ոչ նրա համար, որ դուք բոլոր ազգերից բավմամարդ եք, քանի որ դուք բոլոր ազգերից սակավաթիվ եք. այլ նրա համար, որ Տերը սիրում էր ձեզ» (Է 7-8): Աստված Իր Եկեղեցու Հայրն է և Բարեխոսը, բայց Նա Իր օրհնությունն է տալիս միայն Ուխտի պատվիրանները կատարելու պայմանով (ԻԸ 15 և հաջ.):

Ուխտին դավաճանելու և կռապաշտության վերաբերյալ զգուշացումները Բ Օրինաց Գրքում հնչում են որպես մոտալուտ սպառնալիքի հանդեպ անհանգստացած քարոզ (նշենք, որ գիրքն սկսել է կազմավորվել մի դարաշրջանում, երբ Իսրայելում հաճախ հակվում էին հեթանոսական աստվածներին): «Այսօր, ահա,- ասում է Մովսեսը,- քո առջևն եմ դնում կյանքն ու մահը, բարին ու չարը» (Լ 15): Մարդու գործն է՝ ազատ ընտրություն կատարել

և վճիռ կայացնել: Եթե նա մնա Ուխտի մեջ՝ կյանք կստանա, եթե ընկնի՝ կհայտնվի հողևոր և մարմնական մահվան իշխանություն տակ:

Բ Օրինաց Գրքում հինկտակարանյան Եկեղեցին նորկտակարանյանի նախատիպն է: Նրա հիմնադիրներին Տերը դարձյալ ընտրեց տկարներից և ոչ իմաստուններից (Մատթ. ԺԱ 25, Ա Կորնթ. Ա 26), որոնք կդառնան Նրա «վիճակի բաժինը» (Եփես. Ա 11, 14), այդ պատճառով է, որ Բ Օրինաց գիրքը Նոր Կտակարանում առավել հաճախակի է մեջբերվում, քան Աստվածաշնչի մյուս Գրքերը (մոտ. 83 անգամ): Այն խոստումները, պատվիրանները և նախազգուշացումները, որ ժամանակին վերաբերում էին Հին Իսրայելին՝ այժմ արդեն վերաբերում են Քրիստոսի ամբողջ Եկեղեցուն:

Բ Օրինաց Գիրքն ավարտվում է Մովսեսի մահվան նկարագրով (ԼԴ): Լոկ հեռվից՝ Նաբավ լեռան վրայից, նա կարողացավ տեսնել Հորդանանից այն կողմ ընկած հարթավայրերը, ուր իրեն վիճակված չէր մտնել: Բառացիորեն Բ Օր. ԼԴ 5-6-ը կարող է այսպես թարգմանվել. «Եահվեն թաղեց նրան»: Այս խոսքերը խորհրդավորություն մե և պարտություն առաջնորդի վախճանը, օրենսդրի և մարգարեի, որի կյանքը լի էր հրաշալի նշաններով ու մեծ իրագարծություններով:

Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ է պատմում Թվերի Գիրքը:
2. Նկարագրեք Իսրայելի ուղին Սինայից մինչև Քանան:
3. Ի՞նչ յուրահատկություն ունի հինկտակարանյան քահանայությունը:
4. Այն ինչո՞վ է տարբերվում նորկտակարանյանից:
5. Ո՞վ դուրս եկավ Մովսեսի դեմ:
6. Ի՞նչ ընդունելի մեկնություն կա պղնձե օձի պատմությանը:
7. Ի՞նչ էր Քանանը ԺԳ դարում:
8. Ինչո՞վ է բացատրվում Իսրայելի անբարյացակամությունը քանանացիների նկատմամբ:
9. Ի՞նչպես հասկանալ «սրբազան պատերազմի» օրենքը:
10. Ո՞րն է Բաղասամին վերաբերող պատմության իմաստը:
11. Ինչո՞վ է պայմանավորված Ուխտի նորոգումը:
12. Ի՞նչպես է կազմվել Բ Օրինաց Գիրքը:
13. Ի՞նչ հիմնական մասերից է այն բաղկացած:
14. Ո՞րն է սրա հիմնական բովանդակությունը:
15. Ի՞նչպես է այն կապվում նորկտակարանյան Եկեղեցուն:
16. Բ Օրինաց Գիրքն ի՞նչ է ասում Մովսեսի մահվան մասին:

Գ

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԳՐՔԵՐ
(Մինչ մարգարե-գրողների դարաշրջան)

ՀԵՍՈՒ ՆԱՎԵԻ ԵՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՁԱՆ
(մոտ. Ք. ծ. ա. 1200-1040 թթ.)

**§ 26. Պայքար Ավետյաց երկրի համար
Հեսու Նավեի գիրքը**

1. Հին Կտակարանի պատմական գրքերը (Հեսու Նավե, Դատավորներ, Թագավորություններ)։ Արդի աստվածաշնչագիտության մեջ ընդունված է անվանել Երկրորդօրինաց պատմություն, քանի որ ընդունում են, որ նախապես այն սկսվել է Բ Օրինաց Գրքով։ Ըստ հինկտակարանյան ավանդության այդ տրիլոգիան (եռագրություն) (կամ տետրալոգիան (քառագրություն), տե՛ս հտ. 1, § 5) կոչվում է Հին մարգարեներ։

Պատմական գրքերի՝ աստվածաշունչ կազմողներն օգտագործել են ժողովրդական ավանդությունն ու վավերագրերը՝ կրոնական ուսուցման նպատակով։ Ի տարբերություն ավանդագրույցներ ու տարբերություններ հավաքող հեթանոս հեղինակների՝ աստվածաշնչի պատմիչները չէին ձգտում ժողովրդի մեջ հիացմունք առաջացնել իրենց անցյալի նկատմամբ, այլ՝ ամենից առաջ ձգտել են արթնացնել նրա խիղճը։ Հին մարգարեների բոլոր գրվածքները ներծծված են միասնական աստվածաբանական գաղափարով, որ հանգում է հետևյալին.

- Տերն Իր ժողովրդին տալիս է Ավետյաց երկիրը, բայց որոշակի պայմանով. նա պիտի պահպանի և կատարի Ուխտը.

- Երբ մարդիկ ուրանում են Ուխտը՝ Աստված թողնում է, որ Իսրայելի թշնամիները հաղթեն.

- Հինկտակարանյան Եկեղեցու զղշումից հետո միայն ուղարկվում են ազատագրող-առաջնորդներ.

- Բայց նրանցից և ոչ մեկը չէր կարող լիակատար և վերջնական փրկություն բերել։

Աստվածաշնչագետ-հնագետ Վ. Ֆ. Օլբրայթը պատմական գրքերի սկզբնաղբյուրները (ԺԲ-ԺԱ դդ. Էպոսը, Աստծու պատերազմների գիրքը, Արդարի

գիրքը, դատավորների, թագավորների և մարգարեների կենսագրությունները, պետական տարեգրությունները ևն) «անգին վավերագրեր» է անվանում: Նրա կարծիքով դրանք «արտագրվել և համառոտվել են մեծագույն զգուշությամբ, դրանցից շատերը վերարտագրվել են բառացի» («Археология Полестины»):

Պատմական գրքերի շարքը եզրափակվել է հավանաբար Ք. ծ. ա. է դարի վերջին, իսկ ավարտուն տեսք է ստացել մոտավորապես 560 թ.:

2. Իսրայելի Քանան թափանցման սկիզբը: Եթե իսրայելացիների Ելքին պատրաստ լինելը հավատի գործ էր, ապա ավելի ևս հավատ և արիության էր պահանջվում նրանցից Ավետյաց երկրի շեմին: Աբրահամի, Իսահակի ու Հակոբի երկրում հաստատվելու փորձն անհուսալի էր թվում: Կաղես բերած լրտեսների լուրերն արդեն ժողովրդին մատնում էին վհատության, այդ պատճառով Աստված դատեց, որպեսզի ստրկության մեջ մեծացած սերունդը կյանքն ավարտեր անապատում: Բայց և նոր սերունդը կարող էր ունենալ կասկած ու երկմտանք: Դրա պատճառները լիովին պարզաբանվում են հնագիտության լույսի ներքո:

Թեպետ Քանանը համարվում էր Փյունիկիայի հարուստ և ծաղկող մի խուլ անկյուն, նրա բնակչությունը Իսրայելի որդիներից շատ ավելի էր քաղաքակրթված: Քանանացիների քաղաքները շրջապատված էին հզոր պարիսպներով, որ կարող էին դիմանալ տևական պաշարման, իսկ կառավարիչներն իրենց տրամագրության տակ ունեին լավ զինված զորաբանակներ ու ռազմակառքեր: Մշտապես թշնամանելով օտարերկրացիների և միմյանց հետ՝ քանանացիները ձեռք էին բերել նշանակալից ռազմական փորձ: Իսրայելն ընդհակառակը, թույլ միաբանված ցեղերի խառնուրդ էր, հետևակ զինվորների խառնամբոխ, որ տիրապետում էր ամենապարզունակ զենքերին: Այդպիսի պայմաններով անհնարին էր թվում թափանցել երկիր և գոյատևել քանանացիների շրջապատում:

Այնուամենայնիվ իսրայելացիները մի քանի տասնամյակի ընթացքում կարողացան հաստատվել Քանանում և նույնիսկ գրավել մի քանի կարևոր ամրոց: Այդ հանգամանքն աստվածաշնչական ավանդությունը դիտում է որպես հրաշալի փաստ՝ պայքար, ուր հաղթել են ոչ մարդիկ, այլ Աստված Ինքը:

3. Հեսու Նավեի Գիրքն (եբր. 111 11-עשרה - ԻՈՇՈՒԱ ԲԻՆ ՆՈՒՆ) այդպես է անվանվել գլխավոր հերոսի՝ Եփրեմի ցեղից Հեսու Նավեի անունով: Նա Մովսեսի օգնականն էր և քչերից մեկը Ելից սերնդից, որ մնացել էր: Որոշ հին մեկնիչներ հենց Հեսուին էին համարում իր անունը կրող գրքի հեղինակ, բայց այժմ աստվածաշնչագետների մեծ մասը վերադարձել են Թեոֆորիտոսի կարծիքին, որը պնդում էր, թե այդ գիրքն «ինչ-որ ուրիշ մեկն է գրել, որ ապրել է ավելի ուշ» (Толкование на Ис. Нав.):

Գիրքը հին պատումների հիման վրա կազմվել է այն շրջանում, երբ քանանացիներն արդեն խառնվել էր իսրայելացիներին, և երբ ժողովուրդը մարգարեների կշտամբանքից հետո զղջաց հեթանոսությունը տեղիք տալու համար: Բ Օրինացի՝ կռակաշտություն հանդեպ անզիջում լինելու պահանջը բնորոշում է Հեսու Նավեի ամբողջ Գրքի բնույթը: Պաղեստինի բնակեցումը Գիրքը պատկերում է իբրև «Տիրոջ պատերազմներ», երբ մարտերի ելքը վճռում է ոչ այնքան զինվորի արիությունը, որքան երկնային աշակցությունը: Երիքովի պարիսպները քանդվում են փողերի ձայնից, քանանացիների վրա քարերի կարկուտ է տեղում, կանգ է առնում արևը (տես ստորև, կետ 6): Հետո Նավեի արշավանքները պատկերված են որպես ամբողջ երկրի հաղթական գրավում՝ հետագայում բաժանելով ցեղերի միջև: Բայց Դատավորաց Գիրքը (հատկապես՝ Ա, Գ) այլ պատկեր է նկարագրում: Իսրայելացիները դանդաղ և դժվարությամբ են թափանցում որոշ մարզեր: Նրանք շարունակում են կողք-կողքի ապրել քանանացիների հետ, նրանց հետ ամուսնանում և միություն կազմում, իսկ սրանից բխում էր հեթանոսական ազդեցության տակ ընկնելու մշտական վտանգը (Դատ. Գ 5-6): Ցեղերի միջև կապն ամուր չէ: Նրանցից շատերն իրենք են իրենց գլխի տերը: Նկատենք, որ Հեսու Նավեի գիրքը ևս հիմնականում խոսում է նրա երկու ռազմական արշավների մասին՝ հարավային ամորհացիների քաղաքների ու հյուսիսային քանանացիների դեմ:

Այդ արշավանքների մասին են վկայում Քանանի մի շարք քաղաքների ԺԳ դարի ամայացնող ավերածությունների հետքերը: Օրինակ, Լաբիսի (Լաբի) պեղումները վկայում են հրդեհի մասին, որ ոչնչացրել է քաղաքը: Պարիսպները սև գույն են ստացել՝ դառնալով աղյուս թրծող վառարանի նման: Ապակե իրերը հալվել են: Փղոսկրյա բեկորները սևացել ու ածխացել են: Գտնվել են նաև կրակի մեջ կործանված տաճարի՝ կղմինդրե կտուրի մնացորդները: Պահպանվել է մի պատվանդան, որի վրա կուռք է կանգնեցված եղել: Արձանը կամ կտորվել է, կամ վերածուլվել:

Հեսու Նավեի Գիրքը երեք մասի է բաժանվում.

- Առաջինը (Ա-ԺԲ) նվիրված է Երիքովի անկմանը, Սյուքեմում Ուխտի նորոգման և Հեսու Նավեի երկու հիմնական ռազմական արշավանքներին,

- Երկրորդը (ԺԳ-ԻԱ 42) խոսում է ցեղերի միջև Սուրբ երկրի բաժանման մասին,

- Երրորդը (ԻԱ 43-ԻԴ 36) պատմում է Հեսուի վերջին օրերի մասին:

4. Գրքի հոգևոր իմաստը բնութագրվում է երկու հիմնական դրույթով.

Ելքի նման՝ Իսրայելի հաստատվելը Քանանում եղել է Աստծու Նախախնամության գործը: Տիրոջ կամքն էր, որ այդ երկիրը տար հինկտակարանյան Եկեղեցուն՝ Արարչին հավատարիմ մնալու պայմանով:

Աստծու պարգևը հեշտ չէ ստանալ նրանց համար, ովքեր անգործունյա են: Իսրայելը պիտի հավաքեր իր ամբողջ ուժերն՝ իր առջև ծառայած արգելքները հաղթահարելու համար: Գործելու այս կոչի մեջ, առանց որի Աստծու պարգևն անհասանելի կլինի, սուրբ Հայրերը տեսել են Աստծու արքայություն մտնելու նախատիպը, որ «հզորներն են հափշտակում» այն (Մատթ. ԺԱ 12): Սուրբ երկրի նվաճմանը ուղեկցող նշանները խորհրդանշում են երկնային օգնությունը նրանց, ովքեր պայքարում են:



Երիքով, Ք. ծ. մոտ 7000 տարի առաջ կառուցված ամրոցի մնացորդները: Կենտրոնում շրջանաձև դիտաշտարակը (բարձրությունը՝ 10 մ, տրամագիծը՝ 13 մ):

5. Հորդանանի անցումը և Երիքովի անկումը (Ա-Չ): Հեսու Նավեն ոչ մարգարե էր, ոչ հոգևորական, բայց միևնույն ժամանակ նա Աստվածաշնչում ներկայացված է որպես Մովսեսի ժառանգորդ: Նրա խնդիրն է եղել իսրայելացիների (կամ նրանց հիմնական մասի) միավորումը՝ արևմտյան Քանան մտնելու պահին: Աստված նրան ասում է. «Արդ, չորացիր և շատ քաջ եղիր, որպեսպի պահես և կատարես այն բոլոր օրենքները, որ իմ ծառա Մովսեսը քեզ պատվիրեց...» (Ա 7):

Դեռևս Հորդանանն անցնելուց առաջ Հեսուն լրտեսներ է ուղարկում Երիքով՝ առաջին մեծ քաղաքը նրա ճանապարհին: Նրանց իր տանը թաքցնում է Ռահաբ պոռնիկը (Ռահաբա), մեկն այն քանանացիներից, որ ընդունեցին իսրայելի հավատը և հետագայում մնացին ապրելու Եհովեի ժողովրդի հետ (հմմտ. Եբր. ԺԱ 31): Ռահաբն ամուսնացավ իսրայելացու հետ, և նրա ցեղից ծնվեց Դավիթ թագավորը: Այս կինը չորս օտարուհիներից մեկն էր, որոնք հիշվում են Հիսուս Քրիստոսի ազգաբանության մեջ (Մատթ. Ա 5):

Հորդանան գետի անցումը նկարագրված է որպես հրաշք՝ նման Կարմիր ծովի անցմանը: «Եվ տապանակը կրող քահանաների ոտքերը, - գրում է

Հեսու Նավեն,- խրվեցին Հորդանան գետի ջրի մեջ,- մինչ Հորդանանը գալիս էր ափեափ լցված - ...վերևից իջնող ջրերը կանգնեցին» (Գ 13): Եվ իսկապես, Հորդանանի հունը հանկարծ մերկացավ, և ջրերը «իրարից խիստ հեռացած» անջրպետվեցին:

Օանոթո-թյոն

Այլ դեպքեր ևս հայտնի են, երբ ստորգետնյա տատանումից Հորդանանի հոսանքը քարերով է ծածկվել: Դրանցից մեկը միջին դարերում է եղել, իսկ երկու անգամ համանման բան տեղի է ունեցել Ի հարյուրամյակին (1924 և 1927 թթ.): Սակայն այդ երևույթի հնարավոր բնական պատճառները Հեսուի ժամանակի իրադարձությունը չեն զրկում նախաինամական նշանակությունից:



Գինու սափոր Երիթովից (XVII դ. թ. ծ. ա.)

Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացին (Огласительные слова¹, X., 11) մատնանշում էր Աստծու ժողովրդի Հորդանանն անցնելու խորհրդաբանական իմաստը: Գետը, որ ասես Ավետյաց երկրի սրբազան սահման էր, դարձավ խորհրդանիշ՝

կապված նորկտակարանյան դեպքերի հետ: Սուրբ Հովհաննես նախակարապետն ապաշխարության լվացում (մկրտություն) էր անում հորդանանյան ջրերում՝ ի նշան նախապատրաստության Աստծու Արքայության գալու:

Երիթովի արշավանքը ձեռնարկվեց իսրայելացիների առաջին կրոնական կենտրոն Գաղզաղից: Սուրբ երկրում առաջին անգամ այնտեղ է տոնվել Զատիկը, և այնտեղ՝ ի նշան Ուխտի հավատարմության վերահաստատման, Հեսուն հրամայեց թլպատության ծես կատարել, որն անապատում սկսել էին անտեսել:

Երիթովի մատուցներում Հեսուին երևում է խորհրդավոր «Տիրոջ զորքի զորավարը»: Այս տեսիլքը ցույց էր տալիս, որ Աստված ուղեկցելու է Իսրայելին: Երիթովը՝ մեղքի քաղաքը, ընկնելու է ոչ թե մարդու ձեռքով, այլ հրաշքով: Հրեշտակը Հեսուին հրամայում է, որ ղևտացիները տապանակով և փողհարություններով՝ երթով քայլեն ամրոցի պարիսպների շուրջ: Առաջնորդը կատարում է հրամանը, և փողերի ձայնը կործանում է անմատուց պարիսպները (Երիթովի նզովքի և «սրբազան պատերազմի» մասին տես հտ. 1, § 25, կետ 6):

¹ Հայերեն թարգմ.՝ Կյուրեղ Երուսաղեմացի, Կոչումն ընծայության, բնագրից թարգմ.՝ Ս. Կրկյաշարյան, Ս. Էջմիածին, 2007 – խմբ.:

Օանոթո-թյո-ն

1952 թ. անգլոամերիկյան արշավախումբը Քեթլին Քենոնի ղեկավարությամբ պարզեց, որ Ք. ծ. ա. 1500 և 1200 թթ. ժամանակաշրջանում Երիթովի հնագիտական շերտերում գրեթե բան չի պահպանվել: Դա բացատրելի է նրանով, որ Հետուից հետո քաղաքը երկար է մնացել ամայի, և ավերակները ենթարկվել են տեղումների ու քամու կործանիչ ներգործությանը: Պահպանվել են միայն ավելի վաղ և ուշ շրջանների մշակութային շերտերը: Բայց այնուամենայնիվ հայտնաբերվել են նվաճման ժամանակի խեցեղենի որոշ բեկորներ:

Երիթովից հետո կործանվեց Գայի քաղաքը (Հետու Ը), այլ աղբյուրներին անծանոթ քաղաք՝ Բեթելից արևելք: Գայի բառն ավերակ է նշանակում: Որոշ հնագետներ սրա գրավման պատմությունը նույնացնում են Բեթելի կործանման հետ, որի անկման մասին Հեսուի Գիրքը չի խոսում: Պեղումների տվյալներով՝ Բեթելը հրդեհվել է ԺԳ դարի վերջին:

6. Չոհասեղանը Սյուբեմում: Միություն Գաբավոնի հետ (Ը 30-Թ 27): Երիթովի անկումից հետո իսրայելացիների հիմնական զանգվածը հավաքվում է Անդրհորդանանում և Պաղեստինի կենտրոնական՝ առավել քիչ բնակեցված մասում: Հեսուն կրոնական կենտրոն է դարձնում Սյուբեմը՝ Գեբաղ և Գարիզիմ լեռների մոտ: Մուտքն այդ շրջան խաղաղ ճանապարհով է ընթանում: Որոշ պատմաբաններ ենթադրում են, որ Սյուբեմի շուրջը արդեն հրեաներ են ապրել (տես հտ. 1, § 23, 3ա): Հենց այդտեղ է կառուցվում համաիսրայելյան զոհասեղանը, և Գաղզաղից այդտեղ են տեղափոխում Տապանակը (ավելի ուշ սրբությունը տարվել է Սելով. տես Հետու ԺԸ 1):



Սյուբեմ: Սրբարանի պեղումները: Պաշտամունքային քարը մեջտեղում, Ուխտի կնքման հավանական վկան (Հետու ԻԴ, 21-27):

Սյուբեմում ձևավորվում է Ուխտի վերահաստատման ավանդույթյուն, որ նկարագրված է Բ Օր. Գրքում (ԻԷ-ԻԸ): Հավանաբար դա պայմանավորված էր իրարից անջատված ցեղերի կրոնական միասնությանը պահելու անհրաժեշ-

տուժյամբ: Ըստ Հեսուի (Ը 32)՝ առաջնորդը կարգադրել է օրենքի հրահանգները գրել քարե տախտակներին՝ ի հիշատակ Ուխտի վերահաստատման:

Սյուքեմի հարևան Գաբավոնի բնակիչները, խորամանկության դիմելով, կարողացել են իսրայելացիների հետ միություն կազմել: Նրանք թաքցնում են, որ ապրում են մերձակա տարածքում, և իսրայելացիները նրանց հավատալով՝ խախտում են իրենց կարգը՝ երդվելով նրանց հետ խաղաղ ապրել: Ավելի ուշ, երբ բացահայտվեց խաբեությունը, գաբավոնացիները դարձան Իսրայելի վասալներ: Պեղումները ցույց են տալիս, որ Գաբավոնը նաև Հեսուից հետո պահպանել է առևտրական հարուստ քաղաքի իր կարգավիճակը:

7. Հեսու Նավեի երկու գլխավոր արշավանքները (Ժ-ԺԱ). Գաբավոնացիների պայմանագիրն իսրայելացիների հետ անհանգստացրեց հարավային Պաղեստինի թագավորներին: Նրանցից հինգը միավորվում են Երուսաղեմի թագավորի գլխավորությամբ և շարժվում են դեպի Գաբավոն: Գաբավոնացիները սուրհանդակ են ուղարկում Հեսուի մոտ և օգնություն խնդրում: Հեսուն գիշերային արագ արշավով իր զինվորներին տանում է դեպի Գաբավոն և ջախջախիչ հարված է հասցնում ամորհացիների բանակին:



«Հին զոհասեղան» կամ «Եղջրավոր սեղան» Բերսաբեից (այսօր՝ Բեեր-Շեբա), IX դ. Ք. ծ. ա.

Այդ ճակատամարտի մասին երգեր են գրվել է հին իսրայելական պատումներում, որոնք մեզ չեն հասել (Ուղիղի գիրք)¹: Բայց դրանց բեկորները պահպանվել են Հեսուի Գրքում: Այնտեղ խոսվում է ամորհացիներին ջախջախած քարե կարկուտի և կանգ առած արևի մասին: Գրքի հեղինակը քաղվածք է բերում հին էպոսից (Ժ 13): Որոշ մեկնիչների կարծիքով Հեսուի՝ արևին ու լուսնին ուղղված խոսքերը՝ Աստծու զինվորների սխրանքի առջև (հմմտ. Ամբակում Գ 11) «կանգել», «կանգ առնելու» (եբր. ԾՄԺ – ԴԱՄԱՄ) կոչ էին լուսատուներին: Այլ մեկնաբաններ համարում են, որ այստեղ գործ

¹ Տե՛ս էջ 26-ի 2-րդ ծանոթագրությունը:

ունենք բանաստեղծական պատկերների հետ, որոնցով լի են հին օրհներգերը (հմմտ. «Երկնքից պատերազմեցին աստղերը», Դատ. Ե 20):

Տվյալ պարագային կարո՞ղ էր իրական հրաշք կատարվել: Բնական է, որ բնության բոլոր ուժերն Աստծու ձեռքն են, բայց մյուս կողմից՝ Հեսուն, որ մարտն սկսել էր արշալույսի աղջամուղջին, հագիվ թե հաղթանակի համար կարիքն ունենար օրվա երկարացման: Գաբավոնի ճակատամարտն ավելի շուտ գրված է հերոսական էպոսի լեզվով՝ դրան հատուկ չափազանցություններով¹, որոնց օգնությամբ հեղինակը կարող էր արտահայտել գլխավոր միտքը. Աստված աջակցեց Հեսուի հաղթանակին:

Երկրորդ հարվածով իսրայելացիները ետ մղեցն Գալիլեական միության ճնշումը, որ գլխավորում էր Ասորի (եբր. ܐܘܪܝܝܐ – ԽԱՅՈՐ) թագավորը: Թշնամին ջախջախվեց Մառոն լճի մոտ, Գեննեսարեթից հյուսիս, բայց հաղթանակն այնքան կատարյալ չէր, ինչպես պատմում է Հեսու Նավեի Գիրքը: Շուտով ասորական թագավորը վերականգնեց իր հզորությունը և որոշ ժամանակով (Դաբիրի ու Բարակի ժամանակ) իրեն ենթարկեց հյուսիսիսրայելական ցեղերը:

8. Հեսու Նավեի կյանքի վերջին օրերը (ԺԳ-ԻԴ). Ավետյաց երկրի բաժանման պատկերը պայմանական է: Իրականում Պաղեստինի զգալի մասը Հեսուից հետո մնաց քանանացիների իշխանության ներքո: Այս իսկ պատճառով վիճակով ցեղերի միջև հողերի բաշխումը ավելի շուտ նշանակում էր «ազդեցության ոլորտների բաժանում» (Ա. Կնյազև), քան իրականության արտացոլում: Իսկ բուն վիճակահանությունն անհրաժեշտություն էր դարձել լավագույն հողերը զավթել ցանկացող ցեղերի միջև հասունացող մրցակցության պատճառով:

Թեև Հեսուի Գիրքն իսրայելը պատկերում է իբրև մեկ ամբողջություն, բայց չի լուրջ ցեղերի անջատողական միտումների մասին: Այսպես, անդրհորդանանյան ցեղերը (Ռուբեն, Գադ, Մանասեի ցեղի կեսը) փորձեցին Գադադում զոհասեղան կառուցելով՝ ստեղծել իրենց անկախ կրոնական կենտրոնը (ԻԲ 9-34): Այդ նախաձեռնությունը համընդհանուր դատապարտման արժանացավ: Ուստի անդրհորդանանցիներն ստիպված էին դրանից հրաժարվել:

Հեսուն, Մովսեսի նման, մահից առաջ նորից պահանջեց իսրայելի ավագների ժողովից որոշում կայացնել և վերջնականապես ընտրել՝ հակվում են Քանանի աստվածների կողմը, թե ամբողջովին նվիրվում են միակ Աստծուն: Ժողովը պատրաստակամություն հայտնեց հավատարիմ մնալու Աստծուն, որ և հանդիսավորապես վկայվեց Սյուրբեմում: Այն ժամանակվանից քաղաքի

1 Ռուսերենն օգտագործում է *հիպերբոլա* բառը, որը ոճական հնար է, պատկերավոր արտահայտություն, երբ երևույթի չափը խիստ չափազանցվում է, ազդու դարձնելու նպատակով (Լեզվաբանական բառարան, ԳԱ, Ե., 1975, էջ 249) – խմբ.:

մերձակայքում մշտապես տեղի էին ունենում այդպիսի ժողովներ: Սյուրբեմը դարձավ հյուսիսիսրայելական Մովսիսական ավանդույթյան ձևավորման կենտրոն: Դրանից են ծագում Երկրորդ Քահանայական ավանդույթյունը (է-Ե) և Բ Օրինաց Գրքի կորիզը:

Հեսու Նավեի արշավանքների վերաբերյալ պատումը վերջանում է այս խոսքով. «Եվ երկիրը դադարեց պատերազմելու» (ԺԱ 23): Բայց ինչպես առաքյալն է բացատրում՝ Հեսուի գործը չավարտվեց: «Որովհետև, եթե Հեսուն դրանց հանգիստ տված լիներ, ապա դրանից հետո Աստված ուրիշ օրվա մասին չէր խոսի» (Եբր. Դ 8): Այդ մյուս օրն օրհնյալ «հանգստի» օրն է, Աստծու խոստման կատարյալ իրականացումը, որ կանխասվել է Սաղմ. ՂԴ 11-ում:

Հետաքրքիր է, որ Հեսու Նավեն իրենից հետո փոխարինող չլից էր ամբողջ Իսրայելի համար: Սրանից հետո միակ Տիրակալն ու Թագավորը պիտի լիներ միայն Տերը: Բայց այդպիսի ազատ աստվածապետությունը (թեոկրատիա), որ գործում է առանց հարկադրանքի, ժողովրդի համար ուժից վեր էր: Այդ է վկայում Դատավորաց Գիրքը:

Հարցեր կրկնության համար

1. Պատմական գրքերի շարքն ինչի՞ց է կազմված, և ինչո՞ւ են այն կոչում Երկրորդօրինաց պատմություն:
2. Ո՞րն է Երկրորդօրինաց պատմության հիմնական միտքը:
3. Ի՞նչ սկզբնաղբյուրների վրա է հիմնված և ենթադրաբար ե՞րբ է կազմվել:
4. Ինչո՞ւ Իսրայելի Քանան գաղթելը դիտվում է իբրև հրաշք:
5. Որո՞նք են Քանանի գրավման հանգամանքները, և դրանք ի՞նչպես են նկարագրված Հեսու Նավեի Գրքում:
6. Ի՞նչ է պատմում Հեսու Նավեի Գիրքը:
7. Ի՞նչ երկու գաղափար է պարունակում Հեսու Նավեի Գիրքը:
8. Նկարագրեցե՛ք Հորդանանն անցնելու և Երիթովը գրավելու հետ կապված իրադարձությունները:
9. Ինչո՞ւ հնազիտական շերտերում հետք չի մնացել Երիթովի նվաճումից:
10. Ո՞ր քաղաքներն են եղել Իսրայելի կրոնական կենտրոններ:
11. Ի՞նչ էր խորհրդանշում Ուխտը Սյուրբեմում:
12. Հետևի ո՞ր գլխավոր ռազմական գործողություններն են նկարագրված նրա անունը կրող գրքում:
13. Ի՞նչ իրադարձությամբ նշանավորվեցին Հեսուի վերջին օրերը:

§ 26-ի Հավելված

ԺԳ դ. Քանանում բնակվող ժողովուրդները

1. ԶԱՆԱՆԱՑԻՆԵՐ - փյունիկյան ժողովրդի հարավային ճյուղը: Այդ ժողովուրդը Պաղեստինում միասնական պետականություն չի ունեցել: Նրա գլխավոր քաղաք-պետությունները Փյունիկիայի տարածքում էին (Տյուրոս, Սիդոն, Ուզարիտ): Հետո ղարաշրջանից հետո քանանացիների մի մասը տեղափոխվեց հյուսիս, մի մասը կոտորվեց մարտերում, իսկ մնացածները խառնվեցին իսրայելացիներին: Նրանց կրոնի մասին տե՛ս § 25:

2. ԶԵՏԱՑԻՆԵՐ (Եբր. ԾԻՌՈ - ԽԻԹԻՄ) - քետացիները պատկանում էին ժողովուրդների հնդեվրոպական խմբին: Խեթական պետության ծաղկման շրջանում նրանք բնակավայրեր ունեին Քանանում (Փոքր Ասիա): Քետացիների թագավորության անկումից հետո (մոտ 1200 թ.) նրանց պաղեստինյան գաղութները ձուլվեցին իսրայելացիների մեջ:

3. ԽԵՎԱՑԻՆԵՐ - շատ պատմաբանների ենթադրությամբ՝ գաղութարարներ Միտանի (Հյուսիսային Միջագետք) թագավորությունից: Կովկասյան ժողովուրդների ազգակիցներ:

4. ՓԵՐԵՉԱՑԻՆԵՐ (Եբր. ԾԻՐՁ - ՓԵՐԵՉԻՄ) - անհայտ ցեղ, հնարավոր է՝ ցեղակից խուտիներին:

5. ԳԵՐԳԵՍԱՑԻՆԵՐ (Եբր. ԾԻՐԳԵ - ԳԻՐԳԱՇԻՄ) - հավանաբար հյուսիսային Պաղեստինում բնակվող ցեղ:

6. ԱՍՈՐՅԱՑԻՆԵՐ - սեմական ազգությունների մեծ խմբի ընդհանուր անունը: Թագավորություններ են հիմնել Բաբելոնում, Մարիում, Անդրհորդանանում: Հավանաբար հրեաների ու արաբների մերձագույն ցեղակիցներ:

7. ԶԵԲՈՒՄԱՑԻՆԵՐ - մինչիսրայելյան Երուսաղեմում և նրա մերձակայքում բնակվող ցեղ:

8. ՌԱՓԻՄԱՑԻՆԵՐ - Ուզարիտի բնագրերում հիշատակվող ցեղ:

Սրանցից բացի Քանանում բնակվել են Իսրայելի որդիների «եղբայրները»՝ ԱՄՈՆԱՑԻՆԵՐԸ, ՄՈՎԱԲԱՑԻՆԵՐԸ, ԵԴՈՄԱՑԻՆԵՐ և կիսանստակյաց ՄԱԴԻԱՆԱՑԻՆԵՐ (Կենեցիներ):

Ըստ Դատ. Ա. 27-36, Գ. 1-6՝ տակավին դատավորների դարաշրջանում քանանացիները շարունակում էին բնակություն հաստատել Մանասեի, Եփրեմի, Զաբուղոնի, Ասերի ու Նեփթաղիմի ցեղերի տարածքներում: Հեբուսացիները Երուսաղեմում իշխանությունը պահպանեցին ընդհուպ մինչև Դավթի դարաշրջանը, ամորհացիները՝ կենտրոնական Պաղեստինում և Լիբանանյան լեռների սահմանին: Անկախ էին նաև փղշտացիների հինգ հենակետային քաղաքները, որտեղից նրանց տիրակալները Պաղեստինը նվաճելու համար շուտով հաջող արշավանք ձեռնարկեցին:

§ 27. Քանանի համար մղվող պայքարի շարունակությունը Գիրք Դատավորաց

1. Իսրայելը Քանանում: Դատավորաց գրքում նկարագրված դարաշրջանն ընդգրկում է Ք. ծ. ա. ԺԲ-ԺԱ դարերը: Այն կապված է դատավորների (եբր. օփթօփ – ՇՈՖՏԻՄ) գործունեության հետ, ինչպես քանանացիների օրինակով, կոչվում էին իսրայելական առաջնորդները: Սովորաբար դատավորներն ամբողջ ժողովրդի առաջնորդը չէին: Ավելի հաճախ նրանք ղեկավարում էին 1-2 ցեղ (իսկ ոմանք, ինչպես Սամսոնը, գործում էին միայնակ): Ի դեմս դատավորների՝ Աստված առաջ է քաշում խարիզմատիկ (այսինքն՝ աստվածաշունչ) առաջնորդներ, որոնք Տիրոջ Հոգով կոչվում էին ծառայելու:

Այն ժամանակ իսրայելական տոհմերը միավորող միակ օղակը նրանց հավատն էր, ցեղերի կրոնական միությունը: Այդ միությունը երեք սրբազան կենտրոններ ուներ՝ Գաղգազում, Սյուքեմում, Սելովում: Ցեղերի ներկայացուցիչներն այնտեղ էին հավաքվում տոներին կամ աղետների ժամանակ: Դատավորների դարաշրջանի կրոնահասարակական կատարելության պատկերն աստվածապետությունն էր՝ ցեղերի միավորումն Ուխտի և հավատի հիման վրա: Սակայն իրականում այդ ցանկությունն անկատար երազանք մնաց: Դրան խանգարում էին ցեղերի մասնատվածությունը, հեթանոսական ազդեցությունը, տարածքների մրցակցությունը: Ապրելով ավելի քաղաքակիրթ հարևանների մեջ՝ իսրայելացիներն արագ ընդունեցին նրանց մշակույթը, տնտեսավարման եղանակներն ու սովորույթները: Մի կողմից դա բարձրացրեց երեկվա քոչվորների կենսամակարդակը (մասնավորապես նպաստեց նրանց մշակութային աճին), իսկ մյուս կողմից՝ կախվածություն առաջացավ հեթանոսական շրջապատից: Մովսիսական հավատքի սերմերը հազիվ էին ծլարձակել, երբ արդեն բոլոր կողմերից հեթանոսական գայթակղություններն սկսեցին ճնշել: Գեղջկական կենցաղն ու ժողովրդացրեց Քանանի գյուղատնտեսական մոգության ու ծեսերի գրավչությունը:

Եահվերն լիովին մերժելու մասին խոսք չկար, բայց Սինայից բերված կրոնի կողքին հայտնվում են այլ պաշտամունքներ (Բահաղներ, Աստարոթ և ուրիշներ): Իշխում է երկհավատությունը, որ թուլացնում է ցեղերը միացնող հոգևոր կապերը: Մասնատվածությունն իսրայելացիներին դարձնում է ավելի ուժեղ ցեղերի բաժին: Անապատից հարձակումներ են գործում քոչվոր մագրիանացիները, արևելքից՝ ամոնացիները ու մովաբացիները, հյուսիսից՝ Ասորի քանանացիները, իսկ արևմուտքից՝ նորեկ փղշտացիները:

Եվ լոկ միակ Աստծու հանդեպ հավատը հինկտակարանյան Եկեղեցու համար դառնում է փրկության նշան: Հենց այդ նշանի ներքո էլ հանդես են գալիս խարիզմատիկ-դատավորները:

2. Դատավորաց Գիրքը շարունակում է Քանանի երկրում Իսրայելի հիմնավորվելու պատմությունը: Բայց ի տարբերություն Հեսու Նավեի Գրքի, այն ավելի շատ ուղղված է ժողովրդի մեղքերը մերկացնելու, որ չկարողացավ դիմագրավել կռապաշտությունը: Արդեն հաղթանակները հազվադեպ են տրվում, և դրանց նախորդում են օտարազգիներից վասալական կախման տարիները:

Ըստ էության Դատավորաց Գրքի աստվածաբանությունը նույնն է, ինչ Հեսու Նավեի Գրքինը: Իսրայելն օգնություն կարող է ստանալ միայն Աստծուց: Եթե նա նահանջում է Ուխտից՝ կզրկվի երկնային պաշտպանությունից: Այստեղով է անցնում ջրբաժանը բազմաստվածական և աստվածաշնչական կրոնների միջև: Հեթանոսների աստվածները կամ հաղթություն էին տոնում, կամ կործանվում իրենց պաշտողների հետ: Բոլոր հանգամանքներում թագավորությունների, քաղաքների ու ժողովուրդների պաշտպանությունն ամեն մի ազգային աստվածության անմիջական գործն էր: Այլ էր վիճակը հինկտակարանյան Եկեղեցում: Եահվեն Ինքն է դատում մեղավորներին, և Ինքն էր շնորհում ազատագրություն, երբ նրանք ապաշխարության ոգով դիմում էին Նրան:

Դատավորները պատկերված են իբրև հավատի և աստվածապետական իշխանության կրողներ: «Դատավոր» բառը Քանանում երկու նշանակություն ուներ, այդպես էին կոչվում որոշ կառավարողներ (փյունիկեցիների մոտ՝ առֆֆենտներ) և միաժամանակ՝ մարդիկ, որ ժողովրդին պաշտպանում էին թշնամիներից: Աստվածաշնչական դատավորները մեծ մասամբ այդպիսի պաշտպաններ էին, թեպետ նրանցից ոմանք (Գեդեոնը, իսկ ավելի ուշ՝ Սամուելը) նաև պետական իշխանություն էին իրագործում:

3. Դատավորաց Գրքի ժամանակն ու կառույցը: Գիրքն ավարտվել է Ք. ծ. ա. 2 դարում, բայց կազմված է շատ հին նյութից: Սրա գրույցները, Գ. Ֆոն Ռադի խոսքով՝ «մեզ տեղափոխում են վաղուց կորած աշխարհ, պահպանելով թարմությունն ու իսկությունը, որոնք ցույց են տալիս ավանդության հնությունը: Ամեն ինչ այստեղ ինքնատիպ է ու անկրկնելի, և ոչ մի իրադարձություն նման չէ մյուսին: Ընդհակառակն, աստվածաբանական ձևակերպման մեջ ամեն ինչ արտահայտում է այն կենտրոնական միտք, որ մշտապես հարցնում է. ի՞նչն էր հատկապես ընդհանուր, բնորոշ այդ ժամանակին» (БОГОСЛОВИЕ ВЕТХОГО ЗАВЕТА, 3С. 1):

Գրքի կառուցվածքը վկայում է նրա բարդ կազմության մասին (օրինակ՝ Հեսուի մահվան մասին խոսվում է երկու անգամ, դրվագները ներկայանում են որպես անկախ պատմություններ): Իսկ Գրքին միություն է տալիս հիմնական գաղափարը, որը հետևողականորեն անցնում է սկզբից մինչև վերջ: Այն Դատավորների շրջանի ամբողջ պատմությունը բաժանում է նույնատիպ

կրկնվող պատումների. ուրացություն, հատուցում, ապաշխարություն, փրկություն և դարձյալ անկում: Դատավորաց Գրքի բովանդակությունն է.

1. Իսրայելացիներ և քանանացիներ (Ա).
2. Ուրացություն և պատիժ (Բ 1-Գ 6)
3. Միջագետքի լուծը. Ա դատավոր Գողոնիել (Գ 7-11)
4. Մովաբյան լուծը. Բ դատավոր Ավող (Գ 12-30)
5. Պայքար փղտացիների դեմ. Գ դատավոր Սամեգար (Գ 31)
6. Քանանացիների լուծը. Դ և Ե դատավորներ Դեբորա և Բարակ (Դ-Ե)
7. Մադիանացիների հարձակումներ. Չ դատավոր Գեդեոն (Չ 1-Ը 32)
8. Աբիմելեքի՝ միապետություն ստեղծելու փորձը (Ը 33-Թ 57)
9. Է դատավոր Թողա (Ժ 1-2)
10. Ը դատավոր Հայիր (Ժ 3-5)
11. Ամոնացիների հարձակումը: Թ դատավոր Հեփթայե (Ժ 6-ԺԲ 7)
12. Ժ դատավոր Եսերոն (ԺԲ 8-10)
13. ԺԱ դատավոր Ելոն (ԺԲ 11-12)
14. ԺԲ դատավոր Աբդոն (ԺԲ 13-15)
15. Փղտացիների լուծը: ԺԳ դատավոր Սամփսոն (ԺԳ-ԺԶ)
16. Պատում դևտացի Յովնաթանի և Դանի ցեղի մասին (ԺԷ-ԺԸ)
17. Բենիամինյանների հանցանքը (ԺԹ-ԻԱ):

4. Կարևորագույն դատավորների բնութագիրը: *Դատավորների մասին պատմելով՝ սրբագան հեղինակը ձգտում է ցույց տալ, որ նրանց հաջողությունն ամբողջությամբ երկնային օգնությունից է: Բայց ի վերջո նրանցից ոչ ոք չմարմնավորեց հինկտակարանյան Եկեղեցու իդեալը, ոչ ոք չկարողացավ դառնալ Աստծու ժողովրդի աստվածապետական առաջնորդ: Առանձին ցեղերի եսասիրական շահերը, կռապաշտությունը, անձնական թուլությունները և հենց դատավորների մեղքերը ձախողում էին նրանց գործը: Գրքի այդ հոռետեսությունը կարծես ընթերցողին հուշում է, որ ճշմարիտ Հոգու Այրը հայտնվելու է ապագայում:*

Անդրադառնանք երեք դատավորի՝ Դեբորային, Գեդեոնին և Սամփսոնին:

Դեբորա - մարգարեուհի՝ Եփրեմի ցեղից. նրա երգն աստվածաշնչական ամենահին օրհներգերից է (Դաւո. Ե): Այդ կնոջ համար իսրայելյան Աստվածը զորությունների Տեր է, որ վտանգի պահին հավաքում է Իր ժողովրդին: Իսրայելացիների հաղթանակն Իր՝ Եահվեի ու նրա երկնային զորքի հաղթանակն է: Երբ Ասորի քանանացիներն իրենց ենթարկեցին Իսրայելը՝ Դեբորան կոչ հղեց երկրով մեկ՝ աշխատելով ժողովրդին հավաքել թշնամուն հակահարված տալու: Շատերն արձագանքեցին նրա կանչին, բայց հյուսիսային ու անդրհորդանանյան ցեղերը չսատարեցին եղբայրակիցներին: Թանաքի

մոտ ճակատամարտում Բարակ դատավորի ղեկավարությամբ քանանական զորքերը պարտվեցին, Բայց թույլ միությունն արագ լուծարվեց: Իսկ շուտով, Դեբորայի մահից հետո, «Իսրայելի որդիները դարձյալ սկսեցին չարիք գործել Տիրոջ աչքի առջև»:

Գեդեոն: Քոչվոր մադիանացիների արշավանքն Աստծու ժողովրդի լավագույն մարդկանց մեջ զղջում և հավատի նկատմամբ նախանձախնդրություն արթնացրեց: Գեդեոնը կործանեց Բահաղի զոհասեղանը և աշխարհագործ էլավ թշնամու դեմ: Որպեսզի պարզ լինի, որ հաղթությունը վերևից է տրվում՝ Աստված Գեդեոնին հրամայեց իր հետ վերցնել միայն երեք հարյուր ընտիր այրեր: Նրա հրաշալի հաղթանակն իսրայելացիներին մի միտք հուշեց՝ նրան թագավոր կարգել: Բայց Գեդեոնը հրաժարվեց. «Տերը թող իշխի ձեզ վրա»: Սակայն այդ աստվածընտիր այրը չդիմացավ քանանացիներին նմանվելու գայթակղությանը: Իր Եփրա քաղաքում եփուղ¹ պատրաստեց (Մովսեսի խրատին հակառակ): Ի վերջո դատավորի հաստատած խաղաղությունն անկայուն եղավ:

Թագավորական իշխանության գաղափարի նկատմամբ Գրքի հեղինակը երկակի վերաբերմունք ունի: Նա խրախուսում է Գեդեոնի մտադրությունը՝ պահպանելու ազատ աստվածապետության կարգը, ենթակա միայն հավատի օրենքներին: Գեդեոնի որդի Աբիմելեքն ինքնիրեն թագավոր հռչակելով՝ սրբազան հեղինակի նկարագրությամբ անպատիվ չարագործ է: Հովաթամի առակը, որ բերվում է այդ առիթով (Թ 7-15) ակնհայտ հակամիապետական բնույթ ունի: Բայց ի վերջո ընդունվում է միասնական ժառանգական իշխանության անհրաժեշտությունը («Այն օրերին Իսրայելում թագավոր չկար, և ամեն մարդ անում էր այն, ինչ հաճելի էր իրեն», ԻԱ 25):

Սամսոնը՝ Դանի ցեղից, պատկերված է իբրև ժողովրդական հերոս, որ անհաշտ պայքար էր մղում փղշտացիների լծի դեմ: Նա նազովեցի էր և Աստծու առջև ուխտել էր գինի չըխմել և չկտրել մազերը (մազ կտրելը հեթանոսական ծեսից էր): Բայց իր կրքերից պարտված՝ Սամսոնը զրկվում է ուժից, որ նրան ընծայել էր Աստծու Հոգին: Կուրացված և շղթայված՝ նա Աստծուց միայն մի ողորմություն է խնդրում՝ վերջին անգամ հաշվհարդար տեսնել թշնամու նկատմամբ. և նրանց հետ զոհվում է փլատակների տակ՝ շարժելով փղշտացիների տան հենասյունները:

Դատավորների պայքարի անիմաստությունն անկախության համար հասկանալի է դառնում ժողովրդի ընդհանուր հոգևոր վիճակից, որ Գրքում նկարագրված է ամենամռայլ գույներով:

¹ Եբրայեցերեն բառ է, որ նշանակում է քահանայական զգեստ: Զրեաները սնապաշտական պատիվ էին տալիս այդ զգեստին, և այն գործածում էին կուռքեր պաշտելու համար – խմբ.:

5. Իսրայելի կրոնական և բարոյական անկումը ցուցադրվում է երկու դրվագով, որոնցով ավարտվում է Դատավորաց Գիրքը (ԺԷ-ԻԱ): Այդ պատումներից երևում է, թե ինչպիսի վայրի բարքեր էին տիրում այն խոռվահույզ և անիշխանական ժամանակներում:

Դանի անհող սերունդը քոչելիս կողոպտում է Եփրեմի ցեղից ոմն Միքայի տան սրբությունները, խլում է նրա թերափը (ընտանեկան կուռքը) և իր հետ տանում է նրան ծառայող ղևտացի Հովնաթանին: Ըստ հին վկայությունների՝ այդ ղևտացին Մովսեսի սերնդից էր: Ուշագրավ է, որ մի կողմից իբրև քահանա նախընտրում են ունենալ ղևտացի, մյուս կողմից՝ ակնհայտ է, որ Մովսեսի օրենքը հիմնովին մոռացված է. այդ մասին է խոսում սրբատեղիում ձուլածո թերափի առկայությունը: Գրքի կազմողն ընդգծում է, որ ի խախտումն կրոնական միասնություն, Դանի ցեղը ևս մեկ պաշտամունքի կենտրոն են ստեղծում իրենց վերականգնած Դան քաղաքում (այնինչ Տապանակը գտնվում էր Սելովում): Երկրորդ պատմությունը խոսում է Բենիամինի ցեղի վայրագություն մասին, որոնք դաժանորեն պատժվել են, ընդ որում այդ ցեղը քիչ մնաց կորչի երկրի երեսից:

Դատավորների Գիրքն ամփոփող երկու դրվագները գծում են ժողովրդի կյանքի ամենատխուր պատկերը: Ճանապարհներով թափառում են տնից գրկված հորդաններ. վայրագություններ են անում թե՛ թշնամիները, և թե՛ յուրայինները, ամենուր՝ բռնություն, կողոպուտ և անօրինություն: Իսրայելացիները կուռքեր են պատրաստում, գոհեր մատուցում Բահաղներին: Եվ թվում է, թե այդ կրոնական ու քաղաքական խառնաշփոթում Մովսեսի և դատավորների բոլոր ձեռնարկումները դատապարտված են ձախողման: Բայց այդ ամենի մասին խոսելով՝ աստվածաշնչական հեղինակն ասես նախապատրաստում է անցումը Թագավորությունից գրքին՝ սրբազան պատմություն հաջորդ գլխին:

Հարցեր կրկնության համար

1. Ո՞ր դարերն է ընդգրկում Դատավորաց Գիրքը:
2. Ովքե՞ր էին դատավորները:
3. Իսրայելի կյանքն ինչո՞վ է բնութագրվում նստակյաց կյանքի առաջին շրջանում:
4. Իսրայելացիների երկհավատությունն ի՞նչ էր նշանակում:
5. Ո՞րն է Դատավորաց Գրքի աստվածաբանության եռությունը:
6. Ինչի՞ մեջ է Դատավորաց Գրքի հռեետեսությունը:
7. Ի՞նչն էր Դեբորայի, Գեդեոնի և Սամվիսոնի գործն ու անհաջողությունը:
8. Ի՞նչ նշանակություն ունեւր Դանի ու Բենիամինի ցեղերին վերաբերող պատմությունները:

§ 28. Սամուել մարգարեն և միապետության հիմնումը

(Ա Թագ. Ա-ԺԵ)

1. Թագավորությանց Ա և Բ գրքերը Դատավորաց Գրքի շարունակությունն են: Սկզբնապես Աստվախաշնչում Ա-Բ Թագավորությանց Գրքերը մեկ ամբողջություն էին և կոչվում էին Սամուելի Գիրք: Յոթանասնիցի և Վուլգատայի մեջ Գիրքը բաժանվեց երկու մասի՝ Ա և Բ Գիրք Թագավորությանց խորագրով: Սրանք նկարագրում են ԺԱ-Ժ դարասկզբի իրադարձությունները. քահանայական հարստության անկումը, Եղիա, Սամուելի կառավարումը, Սավուղի կառավարումը և Դավթի կյանքը մինչև նրա թագավորության վերջին օրերը:

Ա-Բ Թագավորությանց Գրքերը մտնում են Երկրորդօրինական ավանդության կազմի մեջ, որն ավարտին է հասել Գերուսթյան շրջանում: Բայց այն կառուցված է հին ավանդությունների և վավերական փաստաթղթերի հիման վրա: Դրանք են Տապանակի, Սամուելի մասին պատմմաները, երկու պատում միապետության հիմնադրության մասին (տես ստորև), Դավթի կենսագրությունը՝ գրված հավանաբար նրա որդի Սողոմոնի ժամանակ: Դավթին վերաբերող պատումը գրական տեսակետից գեղարվեստական պատմագրության հիանալի նմուշ է՝ ստեղծված «պատմահայր» Հերոդոտոսից շատ դարեր առաջ: Դեմքերն ու դեպքերը նկարագրված են վառ ու հակիրճ, առանց ավելորդ հռետորաբանության: Պատումի անկողմնակալ տոնը չի թուլացնում նրա հուզականությունը:

Աստվածաշնչի սրբազան գրողը միացրել է իր սկզբնաղբյուրները՝ առաջնորդվելով Աստծու Հոգու ներշնչումով: Այդ պատճառով, օրինակ, նա քիչ ուշադրություն է դարձնում Դավթի ռազմական հաղթանակներին, բայց հանգամանորեն անդրադառնում է նրա աստվածային ընտրության պատմությանը և գահի նկատմամբ նրա իրավունքներին: Դավթին համարելով մեծ թագավոր՝ Աստվածաշունչը չի թաքցնում նրա մեղքերն ու թերությունները: Այն ձգտում է ոչ թե մեծարել առաջնորդներին ու միապետներին, այլ ցույց տալ Նախախնամության գործը Աստծու ժողովրդի պատմության մեջ: Ինչպես ամբողջ Երկրորդօրինական շարքը, Ա-Բ Թագավորությանց գրքերն Իսրայելի հաջողությունները համարում են Ուխտին նրա հավատարմությունից կախված:

«Թագավորությանց գրքերը ցույց են տալիս, որ Աստծու Թագավորությունն այս աշխարհից չէ, և որ Աստծու Նախախնամությունը մշտական արգելքների է հանդիպում աշխարհում մարդկային մեղքի պատճառով, որը, սակայն, Աստծուն չի խանգարում երկրի վրա իրագործելու իր առաջադրած բոլոր նպատակները (տվյալ դեպքում Փրկչի ծնունդը Դավթի տնից, Բեթղե-

հեմում՝ Դավթի հայրենի քաղաքում): Այս գրքերում պետք չէ անպայմանորեն փնտրել բարոյական ճշմարտություններ: Հինկտակարանյան բարոյախոսությունն լեցուն ու լրացված է սիրո նորկտակարանյան պատվիրաններով: Բայց մնում է այլ բան՝ աշխարհում Աստծու գործունեության սկզբունքները և մարդու ընթացքն Աստծու առջև: Այդ մասին հինկտակարանյան գրքերը վկայում են աստվածային ներշնչանքով, և այդ վկայությունը պահում է իր ուժը բոլոր ժամանակներում» (ալ. քին. Ա. Կնյազև):

Ա Թագավորությանց գիրքը բաժանվում է երկու՝ ծավալով անհավասար մասերի.

ա) Սամուել մարգարեի կառավարումը (Ա-Է)

բ) Սավուղի Թագավորելը և Դավթի բարձրանալը (Ը-ԼԱ)

Բ Թագավորությանց Գիրքը բաժանվում է հինգ մասի.

ա) Դավթի գահակալությունը (Ա-Դ)

բ) Դավիթը՝ Թագավոր համայն Իսրայելի (Ե-Ժ)

գ) Դավթի մեղքը (ԺԱ-ԺԲ)

դ) Դավթի տան պատուհասները (ԺԳ-Ի)

ե) Դավթի վերջին տարիները (ԻԱ-ԻԴ):

2. Փղշտացիների լուծը կողմնակի խթանիչ պատճառ հանդիսացավ իսրայելական միապետության հիմնադրման: Փղշտացիները Քանանում տիրապետելու ձգտող բոլոր հավակնորդներից ամենալուրջն էին, և նրանց դեմ մղված պայքարի ընթացքում հասունացավ իսրայելական հասարակության վերակազմակերպման հարցը:

Ամոս մարգարեի խոսքով՝ փղշտացիները եկել էին Կրետե կղզուց¹ (Թ 7): Նրանք այսպես կոչված՝ «ծովի ժողովուրդների» ընտանիքին էին պատկանում, որոնք ԺԳ դարում հարձակվեցին Մերձավոր Արևելքի երկրների վրա: Հույներից ճնշվելով՝ փղշտացիներն ու էգեյան մյուս ցեղերը ցամաք ելան Փոքր Ասիայում, ջախջախեցին Քետացիների Թագավորությունը, Ասորիքով շարժվեցին դեպի հարավ և, ի վերջո, ներխուժեցին Եգիպտոս: Մերենփթահ և Ռամզես Գ Փարավոնները մեծ դժվարություններ կասեցրին արշավանքը: Փղշտացիներն ամրացան Քանանի հարավային ափին, որ կնքեցին իրենց անունով (Պաղեստին՝ եբր. יְהוּדָה ՓեՆԻՇՏԻՐ - փղշտացի բառից): Այնտեղ նրանք հիմնեցին հինգ քաղաքների միությունը (Գազա, Ազոտ, Ասկազոն, Գեթ և Ակկարոն)² և այդտեղից ԺԲ դարի սկզբին արշավանքներ սկսեցին դեպի երկրի խորքը:

¹ Հայերենում Գամրից, որ նույնացվում է Կրետե կղզու հետ - խմբ.:

² Հայերենում «...փղշտացիների հինգ թագավորությունները՝ գազացիներինը, ազոտացիներինը, ասկազոնացիներինը, գեթացիներինը, ակկարոնացիներինը...»: տե՛ս Զեուս ԺԳ 3 - խմբ.:

Փղշտացիները եգիպտական բարձրաքանդակներում պատկերված են բարձրահասակ ռազմիկների տեսքով՝ փետրավոր սաղավարտներով: Նրանք լավ են զինված, ունեն ռազմականքեր և ծովային տորմիդ: Յուլեր լծած սալերով նրանք տանում էին իրենց գույքը, կանանց ու երեխաներին: Այդ ժողովուրդն արդեն գիտեր երկաթի ձուլման գաղտնիքը, որով առավել-լուծվում ունեին քանանացիների ու իսրայելացիների նկատմամբ, որ միայն բրոնզե զենք ունեին:

Պեղումներից հնագետները հանել են հունականին բնորոշ փղշտական խեցեղեն: Սակայն դրանց վրա գրություններ չեն պահպանվել: Եկվորներն արագ յուրացրին քանանյան լեզուն ու սովորույթները: Փղշտացիների և նրանց աստվածների անունների մեծ մասը հայտնի են Աստվածաշնչից և սեմական ծագում ունեն:

Տեղական բնակիչներին աստիճանաբար իրենց վասալ դարձնելով՝ փղշտացիները խստիվ պահպանում էին իրենց «երկաթե մենաշնորհը»: Նրանք վախենում էին՝ հանկարծ մյուսները «սուր կամ գեղարդ շշինեն» (Ա Թագ. ԺԳ 19-22): Նրանք դուրս մղեցին Դանի ցեղը իրենց բնակած վայրերից և շարունակեցին դանդաղ շարժվել դեպի արևելք: ԺԱ դարի կեսին ամբողջ երկրի վրա կախված էր ստրկացման սպառնալիքը:

Ժամանակագրական աղյուսակ

Մոտ. 1234 թ.	Մերնեփթահը կասեցնում է «ծովի ժողովուրդների» առաջին հարձակումը
Մոտ. 1175 թ.	Ռամզես Գ-ն կասեցնում է «ծովի ժողովուրդների» երկրորդ արշավանքը, փղշտացիները տարածվում են Քանանի արևմուտքում
Մոտ. 1100 թ.	Փղշտացիների դեպի արևելք հարձակման սկիզբը
Մոտ. 1050 թ.	Ճակատամարտ Ափեկի մոտ: Փղշտացիների լծի սկիզբը
Մոտ. 1040 թ.	Սամուելն՝ առաջնորդ և դատավոր
Մոտ. 1030 թ.	Իսրայելի ապստամբությունը փղշտացիների դեմ: Միապետության հիմնումը

3. Սամուելի կոչումը (Ա Թագ. Ա 1-Է 2): Այս դարաշրջանում իսրայելական ցեղերի կրոնական կենտրոնը Սելովն էր, ուր պահվում էր Ուխտի տապանակը՝ տեղագրված հատուկ իր համար կառուցված տաճարում: Այդտեղ արարողությունները կատարում էր Հեղի (եբր. ִיֶּזֶק, Էլի), քահանայի ընտանիքը: Հեղին համարվում էր աստվածապետական Իսրայելի գլուխը, բայց ի վիճակի չէր համախմբելու ցեղերին: Դատավորի ժառանգական կոչումն իր տոհմի համար պահելու նրա հույսերը չարդարացան: Հեղիի որդիները

տակավին նրա կենդանության օրոք ստացան ազահ և անզգամ մարդկանց անուն: Իսկական առաջնորդ էր պետք, որ կարողանար հոգեպես վերածնել ժողովրդին և փղշտացիներին դիմադրելու համար ուժ ներշնչեր:

Այդպիսի առաջնորդ է դառնում Սամուելը՝ Եփրեմի ցեղից մի հայտնի մարդու որդին: Նա ծնվել էր իր մոր՝ Աննայի աղոթքով, որ երկար ժամանակ անպտուղ էր: Աննան իր որդու ծնունդը ոչ միայն իբրև ողորմածություն ընդունեց՝ ընծայված անձամբ իրեն, այլ՝ իբրև Աստծու ժողովրդի ապագա փրկության նշան: Նրա երգը (Ա Թագ. Բ 2-10) հստակորեն արտահայտում է այդ հույսը (այդ օրհներգը եղավ Աստվածածնի երգի նախատիպը Ղուկ. Ա 46-55 համարներում):

Ծնողները մանուկ Սամուելին հանձնում են Սելովի տաճարին, և այնտեղ գիշերով Տերը նրան ծառայության է կոչում՝ կանխատեսելով Հեղիի տոհմի վախճանը: Ծեր քահանան, իմանալով Աստծու վճիռը, այն ընդունում է կատարյալ խոնարհությամբ:

Հետագայում Սամուելի որդիները նույնպես անարժան են լինում Աստծու ժողովրդին առաջնորդելու: Այս երկու փաստը բերելով՝ սրբազան հեղինակն ակնարկում է կառավարման ժառանգական կերպի անկատարությունը: Հինկտակարանյան Եկեղեցու ճշմարիտ առաջնորդ կարող է լինել միայն նա, ում նշանակում է Ինքն Աստված:

Սամուելի պատանեկության և կոչման վերաբերյալ պատումն ընդմիջվում է Տապանակի և փղշտացիների լծի սկսվելու պատմությամբ: Թշնամու դեմ ելնելով՝ իսրայելացիները որոշում են իրենց հետ վերցնել Մովսիսական սրբությունը: Նրանք հույս էին տածում, որ դրա առկայությունը զորքի մեջ՝ հաղթանակ կբերի: Այդ մասին լուր առնելով՝ երկյուղ են կրում փղշտացիները, որ համարում էին, թե թշնամու բանակատեղի եկել է «հրեաների Աստվածն Ինքը»: Աստվածաշունչը պսակազերծ է անում այդ սնահավատմոգական պատկերացումը սրբության մասին, ցույց տալով, որ մասունքն ինքնըստինքյան չի կարող զորության գրավական լինել: Ափեկի մոտ ճակատամարտում փղշտացիները հաղթում են և տիրանում Տապանակին: Հեղիի որդիներն սպանված են, իսկ ինքը, լսելով դառն լուրը, հանկարծամահ է լինում: Ինչպես պարզվել է պեղումներով՝ Սելովը գրավվել ու հրդեհվել է:

Բայց պատումը բնավ չի ձգտում հինկտակարանյան սրբության փառքը նսեմացնել: Ընկնում են հեթանոսական կուռքերը, երբ իրենց տաճարում հայտնվում է Ուխտի Տապանակը, համաճարակը, որ մահառիթ սուկում էր տարածում փղշտական քաղաքներին՝ դրանց բնակիչներին հուշեց որ Տապանակն իսրայելացիներին վերադարձնեն: Այն դնում են կառքին, և երինջները տանում են Կարիաթարիմ:

4. Մամուելին՝ առաջնորդ և դատավոր (Է 3-15): Գլխավորելով ժողովրդին՝ Մամուելը ոգևորում է ապստամբելու փղշտացիների լծի դեմ: Նրա հաջողությունը բացատրվում է նրանով, որ «ամբողջ Իսրայելը հայացքը չէր կտրում Տիրոջից» (Է 2): Մարգարեն պահանջեց մարդկանցից՝ «ձեր միջից վերացրեք օտար աստվածները և Աստարոթը», և որ վերագառնան միակ Աստծու պաշտամունքին:

Հասկանալի է, որ ժողովրդական գիտակցության մեջ այդպիսի կրոնական շրջադարձը կատարելն իր ուժից վեր էր: Նրա հետ միասին գործում էին մարգարեների որդիների համայնքները: Դրանք տեսանողների խմբեր էին, որոնք քարոզում էին պայքար հեթանոսության դեմ և վերագարձ Մովսեսի հավատին: Նրանց ելույթները խիստ հուզական էին և ուղեկցվում էին երաժշտական գործիքների նվագակցությամբ (Ժ 5): Արտաքուստ նրանք քիչ էին տարբերվում այլ ժողովուրդների գուշակներից, բայց նրանց ժառանգորդներին մեծ ապագա էր սպասում: «Ինչպես Եհովայի կրոնը,- գրում է Բ. Ա. Տուրաևը,- մաքրվելով քանանականությունից՝ միակ Աստծու ավելի բարձր հավատք դարձավ, այդպես էլ այդ գուշակներից արդեն ժ դարում առանձնացան հզոր դեմքեր, որոնք դարձան ժողովրդի հոգևոր առաջնորդները և կրոնական անհատականություններ, ընդ որում, հուզականության տարրը գնալով նահանջում է, կամ ընդհանրապես աննկատելի դառնում» (ИДВ, һш. 2, էջ 67):

Մամուելը և մարգարեների որդիները շրջում են երկրով մեկ, ժողովրդին կոչելով ապաշխարության և նրան պատրաստելով փղշտացիների դեմ պայքարի: Մոտ 1030 թ. նրանց ազդեցությամբ տեղի է ունենում Իսրայելի աստիճանական համախմբումը: Մամուելի դրոշի ներքո հավաքվում են բավականին շատ մարդիկ: Մասեփաթում (եբր. מִסֶפֶת – ՄիՅՊԱ), Գաբավոնից ոչ հեռու, տեղի ունեցավ համաժողովրդական ապաշխարության ծեսը. «Չուր հանեցին ու թափեցին գետին, Տիրոջ առջև»¹ ի նշան հեթանոսությունից և անցյալ մեղքերից մաքրության:

Մասեփաթում իսրայելացիների մեծ հավաքի լուրը հասնում է փղշտացիների կայազոր, և նրանք շտապում են ճնշել սկսվող ապստամբությունը: Թշնամու մոտենալը վրդովեցնում է իսրայելացիներին, որոնք արդեն երկար տարիներ գենք չէին վերցրել: Նրանք Մամուելին խնդրում են եռանդագին ազդեցի, որպեսզի Տերն զորացնի իրենց թշնամու դիմաց: Մամուելը ողջակեզ է մատուցում զոհասեղանին, և հենց այդ ժամանակ թշնամին մոտենում է քաղաքին:

Ա թագ. է 10-11-ում կարդում ենք. «Այդ ժամանակ Տերը բարձր ձայնով որոտաց այլազգիների վրա, և նրանք շփոթվելով փախան իսրայելացիների

¹ Ա թագ. է 6 – խմբ.:

առջևից: Իսրայելացիները Մասեփաթից ելան, հարվածեցին այլապահներին ու կոտորեցին նրանց մինչև Բեթթորի ասիմանները»: Մեկնիչներն այս տողերը պարզաբանելիս տարբերվում են: Մեծ մասը կարծում է, որ ճակատամարտի պահին որոտ է եղել և փղշտացիները խուճապի են մատնվել (տես Лопухин А. П., Библейская история, т. 2, էջ 45): Բայց աստվածաշունչ հեղինակի համար կարևորը է եղել ամենից առաջ շեշտել, որ հաղթանակն ի վերուստ է շնորհվել:

Սամուելին հաջողվեց վավերացնել հաղթանակի արդյունքները: Փղշտացիների գրաված քաղաքների մի մասը վերադարձվեց Իսրայելին: Քանանի բնակիչները հանդես էին գալիս իսրայելացիների հետ միասին: Բայց ինչպես գրում է ավ. քհն. Ա. Կնյազևը, «Սամուելի գլխավոր նշանակությունն այն էր, որ նա եղավ Իսրայելի ժողովրդի վերջին համախմբողը: Նա նույնիսկ ցույց տվեց Իսրայելի քաղաքական ուղին. նա իր որդիներին թողեց իբրև առաջնորդ Բեթելում և Բերսաբեեում. ի հայտ եկավ իսրայելական ինչ-որ աշխարհիկ իշխանություն, իսկ նրա կողքին՝ մարգարեական սպասավորություն՝ ի դեմս Սամուելի, որ ասես հսկում էր աշխարհիկ իշխանությանը»: Պատահական չէ, որ Օգոստինոս Երանելին համարում էր, թե մարգարեների դարաշրջանն սկսվեց «այն պահին, երբ մարգարեանալ սկսեց Սամուելը» (О Граде Божием, 17,1):

5. Միապետության հիմնումը: Սավուղ (Ը 1-ԺԳ 7): Սբ. Գրքում պարզ նկատելի է երկակի վերաբերմունք միապետական իշխանությանը: Մի կողմից դա համարվում է քաղաքական անհրաժեշտություն (արտաքին լռնամիների դեմ պայքարելու առումով), իսկ մյուս կողմից՝ երազանք է մնում ցեղերի ազատ միությունը՝ կառուցված աստվածապետության վրա, այսինքն բոլորի ենթակայությունն Աստծու կամքին, որ արտահայտվում է մարգարեների միջոցով: Այս երկրորդ մտեցումը արտահայտում է բացասական վերաբերմունքը թագավորական իշխանության նկատմամբ, որ տիրապետում է Աստվածաշնչում:

Սավուղի թագավորության պատմությունը, ինչպես այն պատկերված է Սբ. Գրքում, արտացոլում է այդ երկու սկզբունքները: Միապետության ծագման մասին երկու ավանդություն միացվել են իբրև մեկ ամբողջություն:

Հնագույն պատմումը (Թ 1-10, 16, ԺԱ) իրադարձությունները ներկայացնում է հետևյալ կերպ. հայտնի տոհմի մի իսրայելացի՝ Սավուղ անունով, «բարի և թիկնեղ», գնում է կորած ավանակները փնտրելու: Նա օգնության է դիմում «Աստծու մարդուն», «տեսանող» Սամուելին: Իսկ Աստված մարգարեին հրահանգում է օծել Սավուղին սրբազան յուղով, որին Սամուելը մինչ այդ չէր ճանաչում՝ ի նշան այն բանի, որ նա կանչվում է Տիրոջ ժառանգու-

Թյան «արքա» լինելու (տես ստորև՝ Ծան.): Այդ անսպասելի օծումից հետո Սավուղը հանդիպում է մարգարեների որդիներին, և Աստուծու Հոգին իջնում է նրա վրա:

Որոշ ժամանակ Սավուղն իր օծումը գաղտնի է պահում, բայց իր ցեղակից բենիամինյանների Հաբիս քաղաքը պաշարում է ամոնացիների Նաաս թագավորը՝ Սավուղը դառնում է թշնամու դեմ պայքարի նախաձեռնող: Նրա կոչով զինվորները հավաքվում և ազատագրում են Հաբիսը: Դրանից հետո Սամուելը համաժողովրդական հավաք է հրավիրում Գաղգաղում, որպեսզի Սավուղին հանդիսավորապես թագավոր հռչակի:



Բագալտե ձիթահան, IX դ. Ք. ծ. ա.

Ըստ մյուս գրույցի (Ը 1-22, Ժ 17-25, ԺԲ), երբ Սամուելը ծերացել էր, ժողովուրդն իր դժգոհությունն արտահայտեց նրա որդիներից և պահանջեց, որ մարգարեն Իսրայելի համար թագավոր օծի, որը կկառավարի «ինչպես բոլոր ապգերի մոտ է»: Այս պահանջը զայրացրեց Սամուելին: Դրանում նա տեսավ աստվածապետությունից հրաժարվելու ոգի: «Եվ Տերն ասաց Սամուելին. Լսիր ժողովրդի ձայնը, ինչ էլ որ ասի նա քեզ: Նրանք ոչ թե քեզ անարգեցին, այլ չուպեցին որ ես թագավորեմ իրենց վրա: Նրանց Եգիպտոսից դուրս գալու օրվանից մինչև այսօր նրանք ինձ լքեցին ու պաշտեցին օտար աստվածներ: Եվ ինչ որ արեցին իմ նկատմամբ նույնը կանեն քո նկատմամբ: Արդ, դու լսիր նրանց խոսքը, բայց նրանց տեղյակ պահիր, բացատրիր թագավորի իրավունքները, որ իշխելու է իրենց վրա»:

Այսպիսով միապետական կարգ ընդունելն այստեղ հավասարեցվում է կռապաշտություն մեղքին: Թագավորի իրավունքները, որ հայտարարեց մարգարեն, լիովին համապատասխանում են Հին արևելքում առկա օրենքներին: Թեև թագավորը դատելու է ժողովրդին և նրան գլխավորելու է թշնամու դեմ պայքարելիս, նա Իսրայելի վրա կղնի հարկահավաքության և ճնշումների լուծը:

Մասեփաթում ժողով հրավիրելով՝ Սամուելը հայտարարում է, որ ժողովուրդը անարգեց իր Աստծուն՝ թագավոր պահանջելով իբրև երկրավոր ազատարար: Բայց, զիջելով պահանջին, պատրաստ է օծելու ընտրյալին: Տալիս են Բենիամինի ցեղից Կիսի որդի Սավուղի անունը: Սա թաքնվում է ամբոխից, բայց նրան գտնելով կանգնեցնում են ժողովի առաջ: Սավուղին օծում են և նրա իրավունքները հանդիսավորապես հայտարարում են և գրի առնում մատյանի մեջ:



Ճրագաման ձեթի, VIII դ. Ք. ծ. ա.

Դրանից հետո Սամուելը վայր է դնում դատավորի կոչումն ու իրավունքները և հեռանում Ռամա¹: Երբ նա գնում է, մարդիկ նրան խնդրում են աղոթել, որպեսզի միապետության մեղքի պատճառով Տիրոջ զայրույթը խափանվի:

Մի շարք աստվածաշնչագետ պատմաբաններ պնդում են, որ իրական դեպքերին համապատասխանում է միայն առաջին պատմությունը, իսկ երկրորդն արտացոլում է ավելի ուշ ժամանակի հակամիապետական միտումները: Բայց բոլոր հիմքերը կան համարելու, որ Սամուելն իսկապես նոր կարգի հակառակորդ էր և դժվարությամբ համաձայնեց թագավոր օծել միայն ժողովրդին զիջելով: Աշխարհական միապետությունը դավաճանություն էր Մովսիսական հավատի ոգուն, որն իրավակարգի հիմքում դնում է միայն Աստծու Օրենքը:

Մանրագրություն

Յին արևելյան երկրներում ձեթն (ծիթապտղի յուղը) օգտագործվում էր սննդամթերք պահելու համար: Այդ առումով ձեթը պահպանության, պաշտպանության խորհրդանիշ դարձավ: Սրբազան յուղով օծված մարդը (եբր. փ՛ՄՊ – ՄԱՇԻՄՅ, արամ. Մեշիհա, հուն. ΧΡΙΣΤΟΣ) նվիրվում էր Աստծու գործին՝ իբրև խարիզմատիկ² շնորհի կրող: Օծվում էին թագավորները, քահանաներն ու մարգարեները:

¹ Սբ. Գրքում *Գաբաա*, որը գտնվում է Ռամայի մոտ (Ա Թագ. Ժ 26) – *խմբ.*:

² Հունարեն՝ χάρισμα – շնորհ բառից – *խմբ.*:

6. Խզում Սավուղի և Սամուելի միջև (Ա Թագ. ԺԳ, ԺԵ): *Ա-Բ Թագավորությունների պատումներում Սավուղն սկզբնապես հանդես է գալիս որպես խարիզմատիկ առաջնորդ՝ Տիրոջ Հոգով ղեկավարվող մարդ: Հենց Աստծու Հոգին է նրան գորուծյուն տալիս և խաղաղ գյուղացուն ռազմական առաջնորդի վերածում: Նա կանոնավոր բանակ է հիմնում և քանիցս պարտության մատնում փղշտացիներին: Քանանի համար մղվող պայքարում առավելությունը թեքվում է Իսրայելի կողմը (որը գրեթե խառնված էր քանանացի բնակիչներին): Սավուղին կռիվներում օգնում է իր որդի Հովնաթանը՝ առաքինի հոգով, խիզախ և հավատարիմ: Բայց Ռամայի մարգարեն ուշադիր հետևում է, որ Թագավորը չբռնազավթի Իսրայելի հոգևոր իշխանությունը:*

Մյուս ժողովուրդները թագավորներին համարում էին աստվածային էակներ, աստվածների որդիներ և գերագույն քուրմեր: Աստծու ժողովրդի մոտ նման բան պետք է չլիներ: Այդ պատճառով, երբ Սավուղն ինքնակամ, չսպասելով մարգարեին, ողջակեզ մատուցեց Գաղգաղայում, վերջինս նրան խստիվ հանդիմանեց և կանխատեսեց, որ նրա թագավորությունը այլևս չի շարունակվելու: Մի ուրիշ անգամ, ամաղեկացիներին հաղթելուց հետո, թագավորն ավարի մի մասը պահեց՝ հակառակ «սրբազան պատերազմի» կարգի: Դա թագավորի և մարգարեի միջև վերջնական խզման առիթ հանդիսացավ: Աստվածաշունչը դրանով ակնարկում է միապետների վտանգավոր միտումը՝ իրենց ձեռքում կենտրոնացնել «կայսրինն» ու «Աստծունը»:

Հարցեր կրկնության համար

1. Թագավորությունների Ա և Բ գրքերն ինչպես են կոչվում երրայերեն Գրքում:
2. Ո՞ր դարաշրջանը և ի՞նչ իրադարձություններ են նկարագրում Թագավորությունների Ա և Բ Գրքերը:
3. Այդտեղ ի՞նչ սկզբնաղբյուրներ են օգտագործվել, և դրանք ի՞նչպես են դասավորված:
4. Ո՞րն է Թագավորությունների Ա և Բ գրքերի աստվածաբանությունը:
5. Ի՞նչ է հայտնի փղշտացիների մասին:
6. Աստվածաշունչն ի՞նչ է ասում Սամուելի ծննդյան ու կոչման մասին:
7. Ո՞րն է Տապանակի վերաբերյալ պատումի իմաստը:
8. Ովքե՞ր են մարգարեների որդիները:
9. Ինչպե՞ս է վերաբերվում Աստվածաշունչը միապետականությանը:
10. Դա ինչպե՞ս արտահայտվեց Սավուղի ընտրության պատմության մեջ:
11. Օծումն ի՞նչ էր խորհրդանշում:
12. Ո՞րն էր թագավորի և մարգարեի խզման պատճառը:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՏՐՈՏՈՒՄԸ

1010-910 թթ. Զ. ծ. ա.

§ 29. Դավիթ թագավոր: Մեսիականության ակունքները (Ա Թագ. Ժ2-ԼԱ, Բ Թագ.)

1. Դավթի կերպարն աստվածաշնչական ավանդության մեջ: Ավետարաններում Հիսուս Քրիստոսն անվանված է «Դավթի Որդի», և ոչ լոկ այն իմաստով, որ Դավիթ թագավորը Նրա հեռավոր նախնին էր: Փրկչի ազգաբանության մեջ կան ոչ քիչ այլ անուններ, սակայն հենց Դավիթն է բոլոր թագավորներից ավելի կապված մեսիականության գաղափարին: Աստծու ընտրած մարդու կերպարը, որին Նա անհայտությունից կոչել է թագավորության, օծյալը, որ մինչև վերջ հավատարիմ մնաց Տիրոջը, դարձավ գալիք Մեսիայի նախատիպ:

Աստվածաշնչական մեսիականությունը երկար պատմություն ուներ, որ ժողովրդի հոգևոր աճման ընթացքում փոփոխություններ կրեց: Բայց դրա սկիզբը սերտորեն կապված է թագավորի հետ, որը հավատի մարդ էր և ձգտում էր ծառայել Տիրոջը:

Եթե Տիրոջ նախախնամության նպատակներն Աբրահամին գրեթե անհայտ էին, և եթե Մովսեսի ժամանակ դրվում էր «սուրբ ժողովուրդի» Եկեղեցու հիմքը, իսկ հետագայում Աստծու նպատակները ուղղվում են դեպի Ավետյաց երկիրը, ապա Դավիթը հիմնադիրն էր աստվածապետական թագավորության՝ որպես Աստծու Քաղաքի: Նրա ու նրա հետնորդների հետ է կնքվում Ուխտը, և Դավիթին կանխասվում է հավերժ թագավորություն: Նրա սերնդով Տիրոջ կամքը վերջնականապես իրագործվելու է մարդկանց մեջ: Այլ խոսքով՝ Դավթի պետությունը երկրային նախապատկերն է Աստծու Թագավորության, որ պիտի գա երկիր:

Բայց Ա-Բ Թագ. Գրքերի աստվածաշունչ գրողը հեռու է այն մտքից, թե Դավիթն ինքն իրենով ամբողջապես մարմնավորել է մեսիական կերպարը: Ընդհակառակն, նա պատկերվում է իբրև փոթորկոտ կրքերի մարդ՝ շատ

թուլություններով: Ինչպես և Դատավորաց Գրքում, դրանով ընդգծվում է, որ մեսիականության կատարելիությունը դեռ առջևում է:

Դավթի կյանքն ու գործն ավելի քիչ են համապատասխանում քրիստոնեական սրբության չափանիշներին: Իսրայելի մեծ թագավորը՝ իր ժամանակի զավակն էր, հաճախ կոպիտ ու դաժան, հաճախ նենգ ու անզուսպ, և քիչ էր տարբերվում իր ժամանակի ուրիշ թագավորներից: Սակայն, այնուամենայնիվ, Դավիթը որոշակիորեն բարձր է կանգնած իրեն շրջապատող միջավայրից: Նա կարող է ներել, ընդունակ է անկեղծ բարեկամության, մեծ հմայք ունի և չի վախենում մեղքերի հրապարակային խոստովանությամբ իր արժանապատվությունը նսեմացնելուց: Բայց նրա գլխավոր հատկանիշն ինքնամոռաց հավատն է Աստծու հանդեպ: Նա գիտակցում է, որ Նրանից է ստացել իշխանությունը, որ ինքն ինքնակալ չէ՝ ազատ օրենքից, այլ մարդ, որ ցանկացած իսրայելացու նման պատասխանատու է Աստծու առջև: Բանաստեղծ և սաղմոսերգու՝ նա իր հավատն արձանագրել է օրհներգերում, որոնք դարերով ոգեշնչել են Հին ու Նոր Կտակարանների Եկեղեցին:

Միասնական թագավորության ժամանակագրությունը և թագավորությունների բաժանումը

Մոտավ. 1010	Դավթի թագավորելը
Մոտավ. 1000	Երուսաղեմն Իսրայելի մայրաքաղաք
970	Դավթի մահը: Սողոմոնի թագավորելը: Դամասկոսի անջատումն Իսրայելից: Ասորիքի Ռազոն թագավորը
955	Երուսաղեմի տաճարի շինարարության ավարտը
945	Եգիպտոսում ԻԱ հարստության սկիզբը: Սավսակիմ Առաջին
930	Սողոմոնի մահը: Թագավորությունների բաժանումը
925	Սավսակիմ Ա-ի արշավանքը Պաղեստին
930-910	Հերոբոլամ Ա-ի կառավարման շրջան

2. Դավթի ընտրությունը (Ա Թագ. ԺԶ-ԺԷ): Սավուղի մերժման պատճառը նրա ինքնակամությունն էր, մարգարեին հնազանդվելուց հրաժարվելը: Թագավորն իզուր էր ողջակեզների դիմում, որոնցով ուզում էր Տիրոջ գուլթը շարժել: «Միթե Տիրոջ համար ավելի հաճելի են ողջակեզներն ու զոհերը, – ասում է Սամուելը, – քան Տիրոջ ձայնին անսալը: Հնապանդությունն ավելի լավ է, քան ընտիր զոհը, և անսալն ավելի լավ է, քան խոյերի ճարպը: Կախարդություն անելը մեղք է, կուռքերը միայն ցավ ու տառապանք են պատճառում¹: Քանի որ դու արհամարհեցիր Տիրոջ խոսքը, Տերն էլ քեզ պիտի

¹ Այս նախադասությունը Սինոդական թարգմանության մեջ այլ է. Քանի որ անհնազանդությունը նույնն մեղքն է, ինչ որ կախարդությունը, և հակառակվելը՝ ինչ որ կռակաշտությունը – խմբ.:

մերժի իբրև Իսրայելի թագավոր» (ԺԵ 22-23): Սավուղի փոխարեն մարգարեն ուրիշին է ընտրում: Այդ մարգուն ցույց է տվել Ինքն Աստված: Նա զինվոր կամ փառապանծ զորավար չէ, այլ ոչ մեկին հայտնի մի պատանի՝ Հուդայի Բեթղեհեմից: Սամուելին Հեսսեի որդիներից ավելի հարմար է թվում ավագը, բայց Տերն այլ կերպ է դատում. «Նրա տեսքին մի նայիր և ոչ էլ հասակի բարձրությանը, ... մարդիկ երեսին են նայում, իսկ Աստված՝ սրտին» (ԺՁ 7): Ընտրվում է ամենակրտսերը՝ հովիվ Դավիթը: Այդպես հենց սկզբից ոչ թե երկրային մտածումները, այլ Գերագույն Կամքն է ցույց տալիս ապագա օձյալի ուղին (տես հտ. 1, § 29, Յավելված):

Ըստ Հուդեի Գրքի Դավիթի նախատատը մովաբացի էր: Նրա վերաբերյալ ավանդույթյունները սկիզբ են առնում են Դավիթի թագավորության ժամանակներից: Բայց Գիրքն ավելի ուշ է գրվել, ուստի մենք այն կդիտարկենք երկրորդ հատորում: Մատթ. Ա 5-ից պարզվում է, որ քանանացի Ռահաբը (Ռահաբա) նույնպես եղել է Դավիթի նախնիների թվում:

Բեթղեհեմյան հովիվին ընտրելու հանգամանքը Սամուելը գաղտնի էր պահում՝ երկնչելով Սավուղի վրեժխնդրությունից: Առաջին անգամ Դավիթը հայտնի դարձավ փղշտացիների դեմ պայքարում: Այդ մասին պատմող դրվագը (ԺԷ) Ա Թագ. Գրքի ինքնուրույն հատված է, որն ըստ իրադարձությունների տրամաբանության պիտի նախորդեր Դավիթի՝ պալատում հայտնվելուն (ԺՁ): Մենամարտի նկարագիրը կոչված է ցույց տալու, որ Դավիթը հաղթում է ոչ թե զենքի ուժով, այլ՝ Աստծուն ապավինելով: Նա հրաժարվում է զենք ու զրահից և թշնամի հսկայի դեմ ելնում է միայն հովվական պարսատիկով: Փղշտացու ծաղրին նա պատասխանում է. «Դու ինձ վրա ես հարձակվում սրով, գեղարդով և վահանով, իսկ ես քեզ վրա եմ հարձակվում Իսրայելի սրբի սրբությունների Տիրոջ անունով, Իսրայելի, որին դու այսօր նախատեսիր»: Դավիթը հսկային տապալում է պարսատիկով և նրա իսկ սրով կտրում գլուխը:



Դավիթ թագավոր, հայկական մանրանկար Աստվածաշունչ մատյանից (Երուսաղեմ, ձեռ. 1925, էջ 700ա, Երզնկա, 1269 թ.)

Օճանդո-ճո-ն

Ինչպես ենթադրում են որոշ մեկնիչներ՝ նախապես պատմության մեջ փոշտացու անունը չէր հիշատակված, այլ ավելի ուշ փոխադրվել է ուրիշ ավանդությունից՝ Գողիաթի մասին, որին սպանեց Եղեանանը Բեթղեհեմից (Բ Թագ. ԻԱ 19):

3. Դավիթ և Սավուղ (Ա Թագ ԺԶ 14-23, Ժ-ԼԱ): *Սավուղն առաջին անգամ Դավիթի հետ ծանոթանում է նրա մենամարտից հետո* (հմմտ. ԺԷ 55-58): *Նա Դավիթին պալատ է հրավիրում: Պատանին իր քնարի նվագով պիտի հանգստացնեն մելամաղձոտության ծանր ցնցումները, որոնք սկսել էին տանջել թագավորին: Սամուելի հետ կապերը խզելուց հետո Սավուղը տառապում էր մոռյալ մտքերից, և ժամանակ առ ժամանակ ցնորամիտ դառնում: Ասելով, թե թագավորին «Աստծուց ուղարկված չար ոգին է պատել»՝ աստվածաշնչական հեղինակը շեշտում է, որ աշխարհում ուրիշ բարձրագույն ուժ չկա, բացի Արարչից, և որ նույնիսկ հիվանդությունները Նրա թուլյտվությունամբ է:*

Դավիթը թագավորի շրջապատում գերում է բոլորին: Սավուղի որդի Հովնաթանը նրա հետ հավերժ բարեկամության միություն է կնքում, Սավուղի դուստր Մեղքողն (Միխալ) ամուսնանում է նրա հետ: Պարզվում է, որ Դավիթը ոչ միայն տաղանդավոր երաժիշտ ու երգիչ է, այլև օժտված զորավար: Թագավորը նրան ռազմական հանձնարարություններ է տալիս, նրան նշանակում է ջոկատների հրամանատար, և Դավիթը միայն հաղթանակներ է բերում: Աստիճանաբար Սավուղի հոգին ներխուժում են նախանձոտ կասկածներ: Ոգևորությունը, որով ժողովուրդն ընդունում էր նոր հաղթողին՝ թագավորին զգուշավորության է դրդում: Արդյո՞ք իր փեսան չի ձգտում տիրանալ գահին: Բայց սրբազան գրողը պարզորոշ ցույց է տալիս, որ Դավիթի մտքով այդ չէր անցնում: Միայն ջերմ կապվածությունը Հովնաթանի հետ բավարար էր, որ Դավիթն իրենից վաներ այդ միտքը: Ամեն ինչ կատարվում էր կարծես իր կամքից անկախ:

Դավիթին սպանելու թագավորի մի քանի փորձից հետո նա ստիպված էր փախչել: Նրան օգնում են Հովնաթանն ու Մեղքողը՝ իրենց վրա վերցնելով հոր զայրույթը: Հալածյալը թաքնվում է Օղողմում, ուր նրա շուրջը կազմավորվում է խռովարար «ազատախումբ»՝ կազմված դժգոհներից ու ճնշվածներից: Իր զորախմբով Դավիթը հարձակվում է փոշտացիների վրա և պարտության մատնում: Իսկ Սավուղը, մոռացած թշնամու դեմ պայքարը՝ մտացածին մրցակցի հոգնեցուցիչ հետապնդում է նախաձեռնում: Մի քանի անգամ, առանց կասկածելու այդ մասին, թագավորն ընկնում է Դավիթի ձեռքը, բայց սա նրան վնաս չի պատճառում՝ հաշտության հույս փայփայելով: Բայց Դավիթին սպանելու ցանկությունը տիրում է Սավուղին մոլագարության ուժով: Դավիթի մեծահոգությունը նրան չի կարող երերացնել:

Այդ տեսանկյունով՝ Դավիթն իր մարդկանցով ստիպված դիմում է նվաստացուցիչ քայլի. ապաստան խնդրել թշնամիներից: Փղշտացիների Անքուս արքան՝ Գեթի կառավարիչը, ուրախությամբ է ընդունում Դավիթին իբրև վասալի և նրան է տալիս Սիկեդակ քաղաքը: Այնտեղից Դավիթն ամաղեկացիների դեմ արշավներ է ձեռնարկում և կապ է պահպանում Հուդայի ցեղի հետ, որից սերում էր:

Մոտավորապես 1010 թվականին փղշտացիներն սկսում են զանգվածային հարձակում Իսրայելի վրա: Նրանք վախենում են Դավիթին վերցնել իրենց հետ և դրանով նրան ազատում են դժվարին վճիռ կայացնելուց: Գեղբուհ լեռնապարի մոտ հակառակորդ զորքերը հանդիպում են: Մարտից առաջ Սավուղը, չար կանխազգացումներից անհանգստացած՝ գնում է վհուկի մոտ և կանչում Սամուելի ոգին: Հարցուկ կնոջ տված պատասխանը պարզ էր. Սավուղը կսպանվի: Եվ իրոք, նա ճակատամարտը տանուլ է տալիս: Հովնաթանն սպանվում է, և թագավորն ինքը, չցանկանալով գերի ընկնել, ինքնասպան է լինում: Այդ պահից փղշտացիները դառնում են երկրի լիիրավ տերերը:

4. Դավթի թագավորելը (Բ Թագ. Ա 1-Ե 5): Սավուղի ու Հովնաթանի մահվան լուրը խորապես ցնցեց Դավիթին: Հին տարածայնությունները մոռացվեցին: Հերոսների մահվան մասին ողբը, որ հորինեց Դավիթը, իսրայելական աշխարհիկ պոեզիայի լավագույն նմուշ է (Ա 17-27) և ցույց է տալիս, որ Դավիթը գիտեր սիրել և ներել:

Բայց փղշտացիների դեմ տարած հաղթանակը Դավիթին թույլ չի տալիս անգործություն մատնվել: Անսալով Աստու ձայնին՝ նա գնում է Քեբրոն, որտեղ «Հրեաստանի մարդիկ» նրան հուշակում են իրենց թագավոր: Այսպիսով երկրի հարավային մասն տարանջատվում է հյուսիսայինից, ուր կառավարում է Սավուղի տկար ու թուլամիտ որդին:

Յոթ տարի շարունակ փղշտացիներն ուրախությամբ են հետևում վասալ պետության տրոհմանը: Ի վերջո, Դավիթը դառնում է «թագավոր ամենայն Իսրայելի վրա» (Ե 3): Ժողովրդի ծերերը նրան ընդունում են որպես աստվածընտիր առաջնորդ: Այդ ժամանակ նա երեսուն տարեկան էր:

Փղշտացիները, Իսրայելի հզորացումից վախենալով, իսկույն ռազմական գործողություններ են սկսում Դավիթի դեմ: Բայց Դավիթը նրանց բազմիցս պարտության է մատնում, որոնցից հետո նրանք այլևս ուշքի չեն գալիս: Նրանց գաղութը մի փոքրիկ կղզյակ է դառնում Պաղեստինում և աստիճանաբար ձուլվում է շրջակա բնակչության հետ:

Արտաքին քաղաքական իրավիճակն Արևելքում բարենպաստ էր Դավիթի համար: Այդ ժամանակ հարևան մեծ տերություններն անկման շրջան

էին ապրում, իսկ Ասորեստանն զբաղված էր արամեացիների դեմ պայքարում: Դա թույլ տվեց իսրայելական թագավորին ստեղծելու սեփական փոքր կայսրություն: Բացի Իսրայելից և Հուդայից, այն ընդգրկում էր Մովաբի, Ամմոնի, Եդոմի ու Ասորիքի տարածքները: Թագավորն իրեն անվանում էր «գլուխ օտարապահների»¹ (Բ Թագ. ԻԲ 44):

Այս առիթով ամրապնդվում են իսրայելացիների կապերը քանանացի բնակչության հետ: Դավիթը կատարում է Գաբալոնի բնակիչների պահանջը՝ հանձնել իրենց թշնամիներին Սավուղի տնից: Թագավորական զորախմբում ծառայում են քետացիներ ու փղշտացիներ: Փյունիկյան Տյուրոսի արքա Քիրամ Ա ձգտում է բարեկամության դաշն կնքել Դավթի հետ:

Բայց Աստվածաշունչը Դավթի նվաճումների ու աշխարհիկ հաջողությունների մասին շատ ժլատ տեղեկություններ է տալիս: Գրքի համար առաջին տեղում ոչ թե քաղաքական պատմությունն է, այլ «Դավթի թագավորությունն» իբրև մեսիական դարաշրջանի նախատիպ:

5. Երուսաղեմն Աստծու ժողովրդի սուրբ քաղաք (Բ Թագ. Ե 6-16, 2-Է): Բ թագավորությունների գիրքը հատուկ ուշադրություն է դարձնում նոր մայրաքաղաքի հիմնադրմանը: Դավիթն այն կառուցեց ոչ թե մի ցեղի տարածքում, այլ ընտրեց սահմանային Երուսաղեմ քաղաքը: Նրա գլխավոր՝ Սիոն ամրոցը գտնվում էր քանանական հեբուսացիների ցեղի ձեռքին (այդ պատճառով քաղաքն այն օրերին կոչվում էր Հեբուս): Հեբուսացիները չէին ցանկանում կամավորապես ենթարկվել Դավթին: Հնուց ավանդված էր, թե Սիոնը ոչ ոք չի կարող գրավել հարձակմամբ. նույնիսկ կույրերն ու կաղերը կարող են թշնամիներին վտարել նրա պարիսպներից: Այնուամենայնիվ Դավթին հաջողվեց գրավել միջնաբերդը, և մոտավորապես 1000 թվականին նա Երուսաղեմը հռչակում է իր մայրաքաղաք: Քիրամ Առաջինի ուղարկած փյունիկյան վարպետների օգնությամբ նա Երուսաղեմում պալատ կառուցեց, ուր տեղավորվեցին նրա մեծ ընտանիքը, թիկնապահները և պահակազորը:

Բացի այդ, Դավիթը որոշեց Երուսաղեմը դարձնել Իսրայելի կրոնական կենտրոն: Դրա համար նա հրամայեց այնտեղ փոխադրել Ուխտի Տապանակը, և ինքը սրբազան պարով գլխավորեց հանդիսավոր արարողությունը: Այսուհետև Եհզկի փառքը, որ Աստծու ժողովրդին ուղեկցել էր անապատում, մնալու էր Դավթի քաղաքում:

Աստվածաշունչը սովորեցնում է, որ այդ խորհրդավոր Փառքն իրեն հայտնում է աշխարհաստեղծման ողջ ընթացքում: Բայց կան նաև Աստվածահայտնության [Թեոփանիա] ընտրված վայրեր, ուր Աստված հայտնվում է հատուկ կերպով, իրեն բացահայտելով մարդկանց: Այդպիսի վայրեր էին

¹ Հայերենում գլուխ ազգերի - խմբ.:

Մինա և Թեման¹ լեռները, Սյուբեմ և Սելով քաղաքները: Տապանակը Դավթի քաղաքում հիմնավորելը նշանակում էր, որ նրա մայրաքաղաքն այժմ ձեռք բերեց Սուրբ քաղաքի նշանակություն:

Ավելի ուշ, Գադ մարգարեի թելադրանքով Դավիթը կառուցեց զոհասեղան հեբուսացի Օռնային պատկանող կալում: Օռնան ուզում էր այն նվիրել թագավորին, բայց Դավիթը նախընտրեց հողը գնել Օռնայից, որպեսզի այս գնածը նույնպես դիտվի իբրև զոհաբերություն Աստծուն:

Երբ կործանվեց Սելովի տաճարը՝ Տապանակը գտնվում էր մասնավոր տներում կամ վրանում: Դավիթը մտածեց դրա համար նոր տաճար կառուցել՝ «Աստծու Տուն»: Նաթան մարգարեն՝ թագավորի հոգևոր դաստիարակը, սկզբում դրվատեց այդ ցանկությունը, բայց հետո հայտնություն ստացավ, թե Դավիթը, որ պատերազմներում շատ արյուն է հեղել, արժանի չէ լինելու Տաճարի կառուցող (Ա Մն. ԻԲ 8-9), և այդ պատիվը նրա որդուն համար է նախապատրաստված:

Թվում էր Տապանակը Միոնում նշանավորում էր խոստման իրականացումը: Այն Դավթի քաղաքը պարուրել էր սրբություն համբավով: Բայց դեռ Հին Կտակարանում սկիզբ էր առել այն նախազգացումը, թե Դավթի թագավորությունն Աստծու Նախախնամություն ավարտը չէ: Սուրբ քաղաքի պատկերն աստիճանաբար հեռանում էր իր պատմական նախատիպից: Եսայու Գրքում այն արդեն «Նոր Երուսաղեմն» է՝ կառուցած ոչ թե Դավթի, այլ Բուն է-ի ձեռքով: Իսրայելական մայրաքաղաքի ողբերգական ճակատագիրն էլ հենց ամրապնդեց հավատն այդ գալիք Տիրոջ Քաղաքի մասին: Աստվածաշնչի վերջին Գիրքն ուսուցանում է խորհրդավոր Երուսաղեմի մասին, որ «իջնում էր երկնքից», որը և «Աստծու խորանն մարդկանց մեջ», ուր «Նա պիտի բնակվի նրանց հետ, և նրանք պիտի լինեն Նրա ժողովուրդը» (Յայտն. ԻԱ 2-3):

Արդեն Դավթի ժամանակակից Նաթան մարգարեին հայտնվել էր, որ Տիրոջ ճշմարիտ տիրապետությունը չի կարելի նույնացնել Հեսսեի որդու իշխանության հետ: Դավիթը լուր գնում է այն սերնդի հիմքը, որից կծնվի Եահվեի Մեսիան: Այդ առաքելության համար նա է ընտրվել, քանի որ ականջալուր է եղել Աստծու ձայնին և ապավինել է է-ին: Ուխտը Դավթի տան հետ հաղորդվել է Նաթան մարգարեի միջոցով.

Հավիտյան հաստատուն պիտի լինեն նրա անունն
ու թագավորությունը Իմ առաջ,
նրա աթոռը հավիտյան կանգուն պիտի մնա Իմ առաջ:
(Բ Թագ. Է 16)

¹ Ավնարկ Ամբ. Գ 3-ի՝ Աստված Թեմանից կգա ... - խմբ.:

Բայց հարյուրամյակներ կանցնեն, մինչև որ մարդիկ կհասկանան, որ այդ թագավորությունը չի նմանվի երկրային կայսրություններին, և որ «Դավթի որդին» կգա ոչ իբրև զինվոր ու միապետ: Նրա հոգևոր տիրապետության բնույթը կհասկանան, և այն էլ՝ սոսկ մասամբ, մեծ մարգարեները: Նրանց կհայտնվի, որ Դավթի արմատից ընձյուղված սուրբ գավազանը կաճի լոկ այն ժամանակ, երբ կկտրվի նրա հարստության ծառը (հմմտ. Ես. ԺԱ 1-9): Հինկտակարանյան Եկեղեցին կանցնի երկար ճանապարհ, որ բաժանում է Դավթին Ընտրյալ [Կույս]ից, որը կլսի Ավետաբերի խոսքը. «Եվ ահա դու կհղիանաս և կծնես մի որդի ու նրա անունը Յիսուս կդնես: Նա մեծ կլինի ու Բարձրյալի որդի կկոչվի: Եվ Տեր Աստված նրան կտա նրա հոր՝ Դավթի անունը, և նա հավիտյան կթագավորի Յակոբի տան վրա ու նրա թագավորությունը վախճան չի ունենա» (Դուկ. Ա 31-33):

6. Դավթի մեղքը և դրա հետևանքները (Բ Թագ. ԺԱ-ԻԳ): Հին Կտակարանի մեսիական հավատը ձևավորվել է իրական պատմության և Օծյալի կերպարի համադրությամբ: Օծյալ-թագավորի միջոցով, Ս. Տրուբեցկոյի խոսքով ասած՝ «երկրի վրա իրագործվում է Աստուծո ճշմարտությունն ու ուժը, - Իսրայելի ուժն ու փառքը. նա արդար է, բարեպաշտ, և հզոր իր աստիճանով ու կոչումով, իր օծումով: Եվ, որքան ավելի հայտնի է դառնում առանձին թագավորների անհամապատասխանությունն այդ օծմանը... այնքան ավելի կատարյալ նշանակություն է ստանում «ճշմարիտ» Մեսիայի կերպարը, ժողովրդին ազատողի, ճշմարտության ու խաղաղության Թագավորի, որին սպասում են բոլոր գերիներն ու ճնշվածները, բոլոր սգավորներն ու վիրավորները, այրիներն ու որբերը, զորավորներից ճնշվածները, հավատարիմները, որ հեծում են հեթանոսների լծի տակ» (Учение о Логосе в его истории, М., 1900, էջ 203):

Իրական թագավորների այս անհամապատասխանությունը կատարյալի պատկերացմանը տեսանելի է արդեն Դավթի պատմությունից: Որքան մեծ է նրա կոչումը, նույնքան մեծ է պատասխանատվությունը:

Դավթ թագավորի արարքը, որ իր զորավարի ձեռքից խլեց նրա կնոջը՝ նրան ուղարկելով անխուսափելի մահվան, աննկատ կմնար Արևելքի ցանկացած տարեգրողի համար: Այդպիսի բաները համարվում էին սովորական: Բայց աստվածաշնչական տեսակետը միանգամայն այլ է. Դավթի մեղքի մասին պատմվում է ավելի մանրամասնորեն, քան նրա հաղթանակների: Օծյալի բարոյական անկումը դավաճանություն է Աստուծո ուխտերի հանդեպ: Նա պարտավոր է հիշել, որ իսկական իշխանությունը պատկանում է է-ին, Որը խստիվ դատապարտում է մեղքը:

Եվ Դավիթը դա գիտակցում է: Նա հեզուսյամբ լսում է Նաթան մարգարեի մեղադրանքը, իսկ որդու մահը և բոլոր հաջորդող աղետներն իբրև արժանի պատիժ է ընկալում:

Դահի ժառանգորդների միջև խիստ պայքարը, Աբեսաղոմի և մյուս խոռվարարների ապստամբությունը սրբազան հեղինակը դիտում է որպես Դավթի մեղքի արդյունք: Երբ զառամայլ թագավորը, փրկվելով սեփական որդուց՝ ստիպված է փախչել մայրաքաղաքից, նա հստակ հասկանում է, որ իրեն բաժին ընկած ամբողջ դժբախտությունը պատահական չէ: Ճանապարհին Սավուղի ազգական Սեմեին «անիծելով և քարեր շարտելով Դավթի վրա»՝ նրան անվանելով արյունաբու: Բայց Դավթն արգելում է Սեմեին պատժել. «Թողեք նա այդպես անիծի, քանզի Տերն է ասել նրան»: Դավթի ապաշխարությունը ուժեղ էր թագավորական արժանապատվության զգացումից: Ապստամբների դեմ ճակատամարտելուց հետո, երբ Աբեսաղոմը, հոր կամքին հակառակ, սպանվեց, թագավորին տիրում էր անմխիթար վիշտ: Նա հասկանում է, որ պատժվում է Տիրոջ պատվիրաններից նահանջելով:

Ուշագրավ է, որ Բ թագավորությունների գիրքն առավել, քան նախորդ պատմական գրքերը, շեշտում է մարդկային կամքի դերը երկրային իրադարձություններում: Թեպետ Տերը Տիրակալն է պատմության, այն չի կերտվում առանց մարդկանց մասնակցության, որոնք ազատորեն ընտրում են շարի կամ բարու ճանապարհը: Դրանով իսկ Աստվածաշունչն ի ցույց է դնում փրկության պատմության աստվածամարդկային բնույթը:

7. Սաղմոսերգու Դավիթ: Սաղմոսաց կամ Փառաբանությունների գիրքը դարերով է կազմվել (տե՛ս հտ. 2, § 13-14). Բայց դրա հիմքը Դավթն է դրել՝ Հին Կտակարանի սրբազան բանաստեղծը: Նոր Կտակարանում նա անգամ անվանվում է «մարգարե», որովհետև իր աղոթքները գրել է վերին ներշնչման ազդեցությամբ¹:

Անմիջական Դավթին պատկանող սաղմոսները (մասնավորապես՝ ԺԷ, ԻԳ, Ծ, ԾԹ և այլն) մեզ տանում են նրա հոգու սրբություն սրբոց, նրա անձնական հավատի աշխարհը: Սովորաբար մեկնիչները Դավթի հնագույն սաղմոսներից են համարում ԺԷ-ն: Այստեղ կենտրոնացված են այն հիմնական գաղափարները, որոնք բնորոշ են և մյուս սաղմոսներին.՝ նա խոսում է Աստծու մասին, որ ազատում է հալածվողին և ձեռք մեկնում տառապող ընտրյալին: Հուսահատության խորքից բխող աղաղակը վերջանում է երախտագիտական գովքով և փրկության հանդեպ վստահությամբ: Պատահական չէ՝ խաչի վրա Տերն աղոթում էր այդպիսի սաղմոսներից մեկի խոսքով (ԻԱ):

¹ Օրինակ Գործք Ա 16-ում – իսկ:

Ժէ սաղմոսն սկսվում է Տիրոջ հանդեպ հավատի խոստովանությանը՝ աղոթողի «գորուծյունն ու վեմը»: Բանաստեղծ թագավորը նկարագրում է իր դժբախտություններն ու ձախորդությունները, որ բխում են իր սրտից՝ բոցաշունչ աղոթքի նման.

Նեղությանս մեջ ես Տիրոջը դիմեցի
և իմ Աստծուն աղաղակեցի:
Նա լսեց ինձ և իմ աղոթքի ձայնն իր սուրբ տաճարից,
նրան ուղղված աղաղակս Նրա ականջին է հասնելու¹:

Այնուհետև նկարագրվում է մի հիասքանչ պատկեր. Տերը Դավթին օգնության է շտապում: Նա փոթորկի ու հրի միջով գալիս է «հողմի թևերով», ելավ նա քերովբեի վրա ու թռավ: Նա մեկնում է ձեռքը և փրկում կործանվողին: Բայց Նրա համար թագավորը թանկ չէ, որ պսակ ու գահ ունի, այլ որովհետև ճշմարտությունն է սիրում.

Տերն ինձ կհատուցի ըստ իմ արդարության,
ըստ իմ անբժության կհատուցի ինձ:
Ես կպահեմ Տիրոջ ճանապարհը
և իմ Աստծու դեմ ամբարշտություն չեմ անի:
Նրա բոլոր օրենքներն իմ առջև են,
նա արդարությունն իր չեռացրեց ինձնից:
Եվ ես անբասիր կլինեմ նրա հանդեպ,
կզուշանամ իմ անօրենությունից...
Սրբի հետ սուրբ կլինես, Տէր,
անարատ մարդու հետ՝ անարատ:
Ընտրյալների հետ ընտրյալ կլինես
և խոտորվածներին կկործանես:
ԴՈՒ ՓՐԿՈՒՄ ԵՍ ԶԵՉ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ,
ԻՍԿ ԱՄԲԱՐՏԱԿԱՆՆԵՐԻ ԱՉՔԵՐԸ ԽՈՆԱՐՅԵՑՆՈՒՄ²:

Եթե անգամ Դավթին ընդունում էր իր դարաշրջանի շատ պատկերացումներ, և միշտ չէ, որ դիմանում էր գայթակղության, նա հայտնում էր ճշմարտության Աստծու մասին, թուլյերի ու ճնշվածների Հոր մասին, Աստծու մասին, որ ողորմություն ու ճշմարտություն է պահանջում: Աստված Ինքն իրեն հայտնում է հանդ նշաններով, բայց Նա չի հեռանում մարդուց. անկեղծ աղոթքը միշտ հասնում է Նրա գահին:

Դավթի մի այլ սաղմոս կապված է Տապանակը Սիրոն տեղափոխելու հետ (ԻԳ): Այդտեղ դեռևս հնչում են անապատի սահմանին եղած հին ճակատամարտերի արձագանքները, երբ Աստված «պատերապմունս զորեղ», Իր ժողովրդին առաջնորդում էր դեպի Ավետյաց Երկիր: Այժմ Նրա սրբությունը մուտք

¹ Սաղմ. ԺԷ 7. հմմտ. Բ Թագ. ԻԲ - Ծան. թարգմ.:

² Բնագրային մեջբերումներում ընդգծումները հեղինակինն են - խմբ.:

է գործում Դավթի մայրաքաղաք, լեռը, որը կլինի «Տիրոջ լեռը»:

Վեր քաշեցեք, իշխաններ, դռները ձեր,
թող բացվեն հավիտենական դռները,
և փառքի արքան թող ներս մտնի:

Ո՛վ է այս փառքի արքան, – կարողությամբ
հղոր Տերն է նա,
պատերապմունս պրեղ Տերը ...

Նույն սաղմոսից իմանում ենք նաև՝ ով է ար-
ժանի մոտենալու այն վայրին, ուր գտնվում է
սրբուխյունը.

Նա, ով մաքուր ձեռքեր և անբիծ սիրտ ունի,
ով հանձն չի առել ունայնություն ու
նենգությամբ չի երդվել իր ընկերոջը:

Նա է, որ օրհնություն կատանա Տիրոջից,
և ողորմություն իր փրկարար Աստծուց:



Քնար. նմանատիպ քնարի վրա (կինոր) նվագել է Դավիթը

Յարգեր կրկնության համար

1. Ինչո՞ւն է Դավթի նշանակությունը մեսիականության գաղափարի համար:
2. Ի՞նչ անձնական հատկանիշներ ունեւր Դավիթը:
3. Ի՞նչ են վկայում Դավթի ընտրության պատմությունը և նրա մենամարտը փղշտացու հետ:
4. Ա Թագ. գիրքն ի՞նչպես է վկայում, որ Դավիթը գահին չէր ձգտում:
5. Ինչպե՞ս է անցնում Դավթի կյանքը տարագրության մեջ:
6. Ի՞նչպես գոհվեց Սավուղը, և նրա մահվանն ի՞նչպես արձագանքեց Դավիթը:
7. Ինչպիսի՞ք էին Դավթի թագավորության երկու փուլերը:
8. Որ ժողովուրդներից էր կազմված նրա կայսրությունը, և ինչո՞ւ Աստվածա-
շունչն այդքան հակիրճ է խոսում դրա ու Դավթի հաղթանակների մասին:
9. Դավիթն ի՞նչպես Երուսաղեմը դարձրեց իր պետական և կրոնական մայրա-
քաղաքը:
10. Դա ե՞րբ տեղի ունեցավ:
11. Ինչպիսի՞ հոգևոր նշանակություն ունի Երուսաղեմը:
12. Ո՞րն է Դավթի մեղքը, և որո՞նք էին դրա հետևանքները:
13. Դավիթն ի՞նչպես արձագանքեց իրեն հասած դժբախտություններին:
14. Դավթի հավատքն ի՞նչպես է արտացոլված ԺԷ սաղմոսում:

§ 29-ի Հավելված ՃԾԱ սաղմոսի նորագյուտ բնագիրը

Աստծու զորությամբ անհայտությունից գահ բարձրացված Դավթի՝ մարդու, որի սիրտը հավատով էր ներծծված, կերպարն արտացոլված է երկու սաղմոսներում, որոնք չեն մտել եբրայական կանոն: Հույն թարգմանիչը



Դավիթ թագավորի դամբարանը Սիոն լեռան վրա (թաղման ենթադրյալ տեղ)

դրանք կրճատել և դարձրել է մեկ (ՃԾԱ պարականոն սաղմոսը): *Բայց վերջերս՝ Մեռյալ ծովի մոտ՝ տասնմեկերորդ քարանձավում, գտնվեց այդ սաղմոսների բնագիրը, գրված, հավանաբար, Գերությունից հետո: Բերենք դրանցից առաջինի թարգմանությունը.*

Փոքր էի ես իմ եղբայրներից,
իմ հորս տան կրտսեր որդին:
Նա ինձ կարգեց հովիվ իր գառներին,
առաջնորդող իր այծերին:
Իմ ձեռքերով շվի պատրաստեցի
և մատներով՝ քնար¹,
Եվ այսպես Ես հիվեին փառաբանեցի:
Ինքս ինձ ասացի՝ «Լեռները Նրան վկայություն չեն բերում,
բլուրները չեն ազդարարում Նրա մասին:
Եվ ծառերը՝ Նրա գործերի, և նախիրներն Իր կատարածերի մասին:
Ո՛վ պիտի հռչակի Նրա գործերի մասին: Ո՛վ կպատմի դրա մասին»:
Աշխարհի Տիրակալը, Նա տեսել է,
Աշխարհի Աստված, Նա լսել է, խոնարհել է ականջը:
Նա ուղարկեց մարգարեին՝ ինձ օծելու,

¹ Գրաբարում՝ Իմ ձեռքերով սաղմոսարան պատրաստեցի և մատներով՝ գործիք օրհնության:

Սամուելին, որ ինձ դարձնի հռչակավոր:
 Խոսեցին նրա հետ իմ եղբայրները, գեղեցիկ ու մեծամեծ,
 թիկնեղ և գեղեցիկ վարսերով:
 Չընտրեց նրանց Եսիվե Աստված,
 Նա ինձ հանեց նախիրների ետևից.
 Եվ սրբազան յուղով օծեց ինձ,
 Եվ ինձ դարձրեց իշխանն Իր ժողովրդի,
 առաջնորդ Ուխտի որդիների:¹

«Le Monde de la Bible», Paris, 1979, N7

§ 30. Սողոմոն: Երուսաղեմի Տաճարը

(Գ Թագ. Ա-ԺԱ, Բ Մն. Ա-Թ)

Մնացորդաց գրքեր. Առակաց գիրքը

1. Գ - Դ Թագ. գրքերը մի ժամանակ եղել են մեկ ամբողջություն: Եբրայական տարբերակում դրանք կոչվում են Մելևեհիմ (Եբր. מֵלֶכְהִים - թագավորներ): Առաջին անգամ դրանք բաժանել են երկու մասի Յոթանասնիցի թարգմանիչները:

Այս գրքերն ընդգրկում են Դավթի մահվանից և Սողոմոնի թագավորելուց (970 թ.) մինչև Բաբելոնյան գերություն (2 դար) ընկած շրջանը: Գրքերի առաջին խմբագրությունն աստվածաշնչագետների մեծ մասի կարծիքով ավարտվել է Հոսիայի իշխանության շրջանում (Է դար), իսկ երկրորդը՝ Ք. ա. 2 դարի 60-ական թվականներին: Ինչպես Հին Կտակարանի մյուս պատմական գրքերը, Գ - Դ թագավորության գրքերը հիմնված են իսկական վավերագրերի և հին ավանդությունների վրա. սրանց նյութը նույն կերպ տարա-

¹ Հայերենում պահպանվել է այս տարբերակով.

1 Փոքրն էի ես իմ եղբայրների մեջ.

եւ կրտսերն՝ իմ հոր տանը.

հորս ոչխարներն էի արածեցնում:

2 Ձեռքերն իմ նվագարան ստեղծեցին,

եւ մատներս օրհներգության գործիք պատրաստեցին:

3 Իսկ արդ, ո՛վ պիտի պատմի այս բանն իմ Տիրոջը.

ամեն բանի Տերն ինքը կը լսի այս ամենը:

4 Նա ուղարկեց իր հրեշտակին,

ինձ վերցրեց հորս ոչխարների հոտից,

եւ օծեց ինձ իր յուղի օծումով:

5 Գեղեցիկ ու մեծ էին եղբայրներն իմ,

բայց Տերը չհավանեց նրանց:

6 Ես ելա այլազգու դեմ,

եւ նզովեցի կուռքերը նրա:

7 Առա նրա սուրն իրենից,

կտրեցի գլուխը նրա,

եւ վերացրի նախատինքը Իսրայելի որդիներից: - *Խմբ.:*

բաշխված է անհավասար, քանի որ կազմողը առաջնորդվել է իր գլխավոր աստվածաբանական գաղափարով: Այդ գաղափարը հակիրճ բանաձևվել է Թեոդորիտոս Երանելին. «Քանի Իսրայելը կարողանում էր օգտվել աստվածային Նախախնամությունից, նա ապրում էր խաղաղության ու անդորրի մեջ, և ամեն ինչ նրան ենթակա էր: Բայց երբ նա կորցրեց Աստծու օգնությունը, ենթարկվեց թշնամական հարձակումների» (Գ Թագ. մասին, Հարցեր, 36): Այսպիսով, Գ - Դ Թագ. գրքերն առաջին հերթին խրատական երկեր են, չնայած արտաքուստ անկողմնակալ տարեգրություն ձև ունեն:

Պետք է ընդգծել, որ կազմողը փաստերը չի կեղծում հօգուտ գաղափարի և երբեմն մեղմում է իր խիստ մոտեցումները: Օրինակ, նա նկարագրում է Ամրի թագավորի հաջողությունները, թեպետ նա «Տիրոջ առջև չարիք գործեց», և հակառակը՝ բարեպաշտ Հովսե թագավորը զոհվում է մարտի դաշտում: Դրանով հեղինակը ցանկանում է ասել, որ Նախախնամության խորհուրդը ոչ ամբողջությամբ է տեղավորվում Գրքում ներկայացրած մոտեցումներում:

Պատմական նյութի անհավասար բաշխումն արտահայտվում է այն բանում, որ մի շարք դրվագներ պատկերվում են մանրամասն, իսկ պատմության հինկտակարանյան թագավորությունների հիմնական ընթացքը՝ թռուցիկ, որոշակի պատկերացումների օգտագործմամբ:

Մանրամասն խոսվում է. 1) Սողոմոնի թագավորելու ու նրա թագավորության սկզբի մասին. 2) Սողոմոնի հարստության և Տաճարի կառուցման մասին. 3) Նրա մեղքերի և թագավորության բաժանման մասին. 4) Եղիա և Եղիսե մարգարեների մասին. 5) չի հարձակման մասին. 6) Հովսեի բարեփոխումների մասին. 7) Երուսաղեմի անկման մասին:

Իսրայելի (Եփրեմի) և Հուդայի մյուս թագավորների մասին սեղմ պատմվում է որոշակի ծրագրով. 1) Թագավորության թվականը, 2) մոր անունը, 3) թագավորության կրոնական ու քաղաքական սեղմ բնութագրումը, 4) մահը, հուղարկավորությունը, ժառանգորդը:

2. Մնացորդաց Ա և Բ գրքերը լրացնում են Թագավորության գրքերի: Եբրայական օրինակում դրանք կոչվում են Դիվր՛ ՀԱ-ՅԱՄԻՄ (Էբր. דברי הימים - (անցյալի) օրերի գործեր) և սկզբնապես եղել են մեկ գիրք: Երկու մասի բաժանելով՝ Յոթնասնիցն այն վերնագրեց Paralipomenon՝ «այն որ բաց է թողնված» (այսինքն մյուս պատմական գրքերից բաց թողած): Վուլգատայում ընդունված է «Քրոնիկոն» (տարեգրություն) վերնագիրը, բայց դա Աստվածաշնչի ընթերցողին չպիտի մոլորեցնի: Ա-Բ Մնացորդաց գրքերը տարեգրություն չեն բառի սովորական իմաստով: Դրանք հակիրճ ակնարկներ են կամ ամփոփում Հին Կտակարանի պատմության՝ Ադամից մինչև Բաբելոնյան գերություն: Մնացորդաց Ա և Բ գրքերին անմիջապես հարում են

Եզրասի ու Նեեմիի գրքերը, որ ներկա տեսքն ստացել են նույն հեղինակի ձեռքով, որին ընդունված է անվանել Տարեգրող¹:

Տարեգրողի աշխատանքը գրվել է Գերուխյան հաշորդող շրջանում, մոտավորապես Ք. ա. 350-300 թթ.: Ա Կնյազև ավագերեցի արտահայտություններ՝ այն գերազանցապես «Իսրայելի եկեղեցական պատմությունն է»: Տարեգրողն առաջին տեղում դնում է Տաճարը, ղևտացիներին, աստվածապաշտությունը: Հիմնական ուշադրությունը նվիրված է Հուդայի երկրին և Դավթի հարստությանը: Հուդայականությունը պատկերված է որպես միասնական, խիստ կազմակերպված եկեղեցի, որ ապրում է Օրենքով ու պաշտամունքային կանոններով:

Տարեգրողը պատմական տեսանկյունից Թագավորությանց գրքերի համեմատ քիչ բան է տալիս, որոնք հաճախ վերապատմում ու մեջբերում է: Բայց նա որոշ իրադարձություններ լրացնում է իր սեփական աղբյուրներից քաղվող հաղորդումներով: Այդ աղբյուրները բավական շատ են: Դրանցից մի քանիսը, հավանաբար, օգտագործել են նաև Թագավորությանց գրքերը կազմողները, իսկ մյուսներն ավելի ուշ ծագում ունեն (օրինակ՝ Յուդայի և Իսրայելի թագավորաց գիրքը, Իսրայելի թագավորների գրառումներն ու գործերը, Նաթան մարգարեի գրությունները, Գադ տեսանողի գիրքը, Աբիա-տեսանողի գիրքը և այլն): Ա-Բ Մնացորդաց գրքերը ընդգրկել են Տաճարի և պալատի սպասավորների, զորապետների ու պաշտոնեության ցանկերը, որոնք կազմողը վերցրել է հին վավերագրերից:

Տարեգրողի աստվածաբանության հիմնական գաղափարն է. Աստծու ժողովուրդը պիտի ստեղծվի ոչ որպես աշխարհիկ ազգ, այլ որպես կրոնական համայնք՝ եկեղեցի: Այստեղ Տարեգրողը եզեկիել մարգարեի ժառանգորդն է հանդիսանում: Նրա համար հավատը, աղոթքը, աստվածապաշտությունը և Օրենքին հետևելը ժողովրդական կյանքի առանցքային կետն է հանդիսանում: Նրա համար խորթ է բաժանումը, և ինքը պատրաստ է Համայնքի կազմում ընդունել և՛ հյուսիսի հերձվածողների, և՛ օտարազգիների:

3. Սողոմոնի թագավորելն ու իմաստությունը (Գ Թագ. Ա-Դ, Ա Մն. ԻԹ, Բ Մն. Ա): Ինչպես Դավթի մասին պատմությունը, այնպես էլ նրա որդու մասին պատմությունը միտումնավոր երկակի բնույթ ունի: Աստվածաշունչը ցույց է տալիս Սողոմոնի մեծությունն ու իմաստությունը, բայց այդ բնավ ներբող չէ: Հնթերցողն աստիճանաբար մոտեցվում է տխուր վերջաբանի, Սողոմոնն Ուխտի խախտող հանդիսացավ և իր քմահաճույքն Աստծու Օրենքից բարձր դասեց: Նա Աստծուց իմաստություն խնդրեց, և դա շնորհվեց նրան, բայց թագավորի բռնապետությունն ու մեղքերն աստիճանաբար կործանեցին այն ծաղկումը, որ Սողոմոնը բերեց Իսրայելին:

¹ Կամ Զրոնիստ – խմբ.:

Նախան մարգարեն Դավթի խիղճն էր. նրա խոսքը թագավորն ունկնդրում էր երկյուղածությամբ: Հակառակը, Աքիան՝ Սողոմոնի ժամանակի մարգարեն, արդեն պալատում չէ և ընդդիմադիր կողմում է: Բայց Սողոմոնի թագավորության սկզբնական շրջանում նախանը դեռ ողջ էր և պահպանում էր իր ազդեցությունը: Ավելին, հենց նախանին էր պարտական Սողոմոնը գահի համար:

Վշտից կոտրված՝ (Աբեսաղոմի դավաճանության ու մահվան), Դավիթը ժամանակից շուտ զառամյալ դարձավ: Այդ պատճառով գահի համար պայքարն սկսվեց արդեն նրա կենդանության օրոք: Թագավորի որդիներից մեկը՝ Ադոնիան, բացահայտորեն պատրաստվում էր ժառանգել իշխանությունը: Բայց նախան մարգարեն, որ ժամանակին պաշտպանել էր Բերսաբեին, հիշեց, որ Դավիթը խոստացել էր թագավորությունը նրա որդի Սողոմոնին (եբր. *וְהָיָה צִבְיָדָא*): Միանալով քահանայապետ Սադոկի և կայազորի հրամանատարի հետ՝ նախանը պայքարում էր Ադոնիայի նկրտումների դեմ: Նա հասավ այն բանին, որ Սողոմոնը հանդիսավորապես օծվեց թագավոր դեռ հոր կենդանության օրոք: Երբ Դավիթը մահացավ՝ Ադոնիան փորձեր ձեռնարկեց մրցակցելու Սողոմոնի հետ, բայց սպանվեց: Բերսաբեի որդին միահեծան «նստեց իր հոր՝ Դավթի գահին ... նրա թագավորությունը շատ հաստատուն էր»:

Սողոմոնի ժամանակ կայսրության տարածքը փոքրացավ. անջատվեց Դամասկոսի թագավորությունը: Բայց թագավորը պատերազմել չէր կամենում: Առավել ուժեղ հարևանի հետ խաղաղություն ապահովելու համար նա դաշն կնքեց փարավոնի հետ (հավանաբար Փսուսեննես Բ) և ամուսնացավ նրա դստեր հետ:

Աստվածաշունչը Սողոմոնի իմաստության մասին խոսում է որպես Աստծու շնորհի, որը նա խնդրել էր աղոթքով: Թագավորը գիտակցում էր, որ երիտասարդ հասակը և անփորձությունը խանգարում են իմաստուն կառավարմանը: «Արդ, իմ Տեր Աստված Դու քո ծառային դրել ես իմ հայր Դավթի փոխարեն, իսկ ես դեռ պատանի եմ և չգիտեմ իմ անելիքը ... Իմաստություն տուր քո ծառային, որ նա կարողանա լսել ու դատել քո ժողովրդին, խելամտություն ունենա տարբերելու բարին ու չարը» (Գ Թագ. Գ 7, 9):


Այն ժամանակ իմաստություն (եբր. *חָכְמָה* *հոնեՄԱ*) էր համարվում տուն, տնտեսություն վարելը, և գլխավորը՝ երկիր կառավարելը: Այդ աշխարհիկ իմաստության նրբությունները ծանոթ չէին Իսրայելին, որ նոր էր սկսում իր պետական գոյությունը: Համարում էին, որ մինչ այդ իմաստությունն օտարերկրյա թագավորների ու ժողովուրդների մենաշնորհն էր: Ցանկանալով այն ստանալ՝ Սողոմոնը դիմում է Աստծուն: Այստեղ են Աստվածաշունչի Ուսուցողական գրքերի աստվածաբանության ակունքները, որոնք Արարչի մեջ են տեսնում իմաստության աղբյուրը:

Տերը հավանություն տվեց Սողոմոնի ցանկությունը: Շնորհը կպարգևավի նրան՝ Ուխտը պահելու պայմանով: «Քանի որ դու այդ բանը խնդրեցիր ինձնից, խնդրեցիր ոչ թե կյանքի երկար օրեր, հարստություն կամ քո թշնամիների մահ, այլ խնդրեցիր ինչամտություն՝ դատ անելու, ուստի քո ասածի համաձայն եմ վարվելու. քեզ տալիս եմ իմաստուն ու հանճարեղ միտք, այնպես որ ոչ քեզնից առաջ է քո նմանը եղել, և ոչ էլ քեզնից հետո քո նմանը կհայտնվի: Քեզ տալիս եմ նաև այն, ինչ դու չխնդրեցիր՝ հարստություն ու փառք ... Եվ եթե ընթացանա իմ ճանապարհով, կատարես իմ հրամաններն ու պատվիրանները, ինչպես ընթացել էր քո հայր Դավիթը, ապա քո կեանքի օրերը կերկարեցնեմ» (Գ Թագ. Գ 11-14):

Սողոմոնի իշխանության առաջին շրջանում, որ համարվում է Իսրայելի ոսկեդար, երիտասարդ թագավորը բազմազան ձևերով է ի հայտ է բերում իրեն շնորհված իմաստությունը: Աստվածաշունչն իբրև օրինակ բերում է Սողոմոնի վճիռը երկու կանանց գործով, որոնք վիճում էին երեխայի շուրջը (Գ Թագ. Գ 16-28): Սողոմոնի գրագիրները գրի էին առնում նրա իմաստությունները և կենցաղային իմաստուն խորհուրդները: Դրանով դրվում է աստվածաշնչային ուսուցողական մատենագրության սկիզբը (տես ստորև՝ կետ 5): Բայց թագավորի գլխավոր գործը վարչական բարեփոխումներն էին՝ ընդարձակ կառավարչական խմբի ստեղծումը, որը կազմված էր բազմաթիվ պաշտոնյաներից ու մասնագետներից, որոնք ղեկավարում էին պալատի տարբեր ոլորտների, տնտեսության, բանակի, մթերման և մատակարարման աշխատանքները: Սողոմոնն ստեղծեց պաշտպանության համար անհրաժեշտ հեծելազոր (նրա ձիանոցի մնացորդները գտնվել են Մակեդոնի ավերակներում): Նա պայմանագրեր էր կնքում հարևան թագավորների հետ, առևտրական նավեր առաքում հեռավոր երկրներ, մշակում էր Կարմիր ծովի ափին գտնվող պղնձահանքերը: Նրա պալատում հայտնվեցին օտարերկրյա դեսպաններ: Սաբայի թագուհին, եկավ Երուսաղեմ «փորձելու նրան հանելուկներով», իսկ իրականում առևտրական պայմանագիր կնքելու: Բայց ամենից առաջ Սողոմոնի փառքը կապված էր Երուսաղեմում կառուցված Տաճարի հետ:

4. Սողոմոնի տաճարը (Գ Թագ. Ե-Ը): Դավթի օրոք Ուխտի Տապանակը գտնվում էր հատուկ պատրաստված Վկայության խորանում (վրանում): Կատարելով հոր ցանկությունը՝ Սողոմոնը ձեռնամուխ եղավ Տաճարի կառուցմանը: Յոթ տարուց ավելի կառուցվում էր սրբավայրը: Քանի որ իսրայելացիներն այդպիսի շենքեր կառուցելու վարպետություն չունեին, Սողոմոնը փյունիկյան վարպետներ հրավիրեց: Քիրամ Ա թագավորը նրան ուղարկեց մայրի փայտ և ուրիշ շինանյութեր: Աշխատանքն ավարտվեց Ք. ա. 955 թ.:

մարդկանց հետ երկրի վրա: Եթե երկինքն ու երկնքի անասանանությունները քեզ բավական չեն, ապա ինչպե՞ն կարող է բավականացնել (Քո անվան) իմ շինած այս տունը ... Քո աչքերը գիշեր-ցերեկ թող բաց լինեն այն տեղի վրա, որի համար ասացիր, թե քո անունն այնտեղ պետք է լինի»:



Սողոմոնի տաճարը (վերակառուցված)

Տաճարն Աստծու բնակարանն է, այլ Նրա Փառքի հայտնության, Նրա սուրբ անվան վայր: Փառքը, եթե ուղղափառ աստվածաբանական լեզվով ասելու լինենք, Աստծու «էներգիան»¹ է, Նրա էության արտահոսումը:

Սպասավորներից բացի ոչ ոք չէր հանդգնում Տաճար մուտք գործել: Ժողովուրդն աղոթում և զոհաբերություն էր անում մուտքի առջև՝ բակում: Փառքի տաճար լցվելը նշանակում էր Ուխտի շարունակություն, Արարչի և մարդու մերձեցման իրականացում: Զոհեր մատուցելով՝ հինկտակարանյան Եկեղեցին խոստովանում էր հավատն Աստծու հրաշալի Ներկայության, որ իր մեծ բարեհաճությամբ իր ժողովրդի հետ է: Բայց տաճարի շեմն անցնելու արգելքը նշանակում էր, որ Աստվածության ահեղ խորհուրդը դեռ ծածուկ է մարդու համար, և որ նրա և Երկնքի միջև դեռ արգելք է կանգնած: Միայն այն ժամանակ, երբ կհայտնվի մարմնացյալ Աստված, կվերանա այդ արգելքը: «Յիսուս նրան ասաց. «Կգա ժամանակը,– ասում է Տեր Հիսուս սամարուհուները ո՛չ այս լեռան վրա և ո՛չ էլ Երուսաղեմում կերկրպագեն Յորը ... Բայց ... կերկրպագեն Յորը հոգով եւ ճշմարտությամբ» (Յովհ. Դ 21, 23):

Իբրև ճշմարիտ Աստծու սրբավայր Տաճարը միայն Հինկտակարանյան Եկեղեցու ազգային սրբավայր չէր լինելու. այն աղոթքի տուն է բոլոր ժողովուրդների համար: Այս միտքն է արտահայտում Աստծուն ուղղված սողոմոնյան խոսքերը, որ ասել է նա տաճարի օծման օրը (Գ Թագ. Ը 41-43):

«Եթե Իսրայելի քո ժողովրդին չպատկանող մի օտարական գա հեռու երկրից, ուր լսած լինի քո մեծ անվան, ամուր ձեռքի ու հյոր բալկի մասին,

¹ Ուղղափառ աստվածաբանության մեջ այս եզրը հոմանիշ է Աստծու շնորհի, Տիրոջ զորության հետ, որ փոխում է մարդու էությունն ու անհատականությունը – *խմբ.*:

գա և աղոթք անի այս տեղում, ապա նրան ևս լսիր երկնքում՝ քո բնակության տեղում, և ըստ ամենայնի կատարիր այդ օտարականի քեզնից խնդրածը, որպեսպի երկրի բոլոր ազգերը ճանաչեն քո անունը, երկյուղ կրեն քեզնից, ինչպես Իսրայելի քո ժողովուրդը»:



Բրոնզե ավազանը Տաճարի բակում - «պղնձե ավազանը» (մոդել)

Դրանով իսկ Տաճարը դառնում է ապագա Հնդհանրական Եկեղեցու նախատիպ:

Բայց Հին Կտակարանում հայտնված էր, որ երկրային Տաճարի և Աստծու միջև չկա այն անխզելի կապը, որ կար հեթանոսական կրոններում, որոնց համար տաճարների կործանումը հենց աստվածների կործանումն էր: Իսկ Աստված, որ բացահայտվում է Աստվածաշնչով, Ինքը կարող է թողնել Իր սրբավայրը, եթե մարդիկ արժանի չէին Իր ներկայությանը: Աստծուն ոչ թե տաճարի կահավորանքն ու զոհերն են հարկավոր, այլ հավատարմությունն այն ճանապարհին, որ Ինքն անձամբ է ցույց տվել (հմմտ. Սաղմ. ԽԹ): Արարչին պատկանում է համայն Տիեզերքը, և Նա որևէ բանի կարիք չունի:

Շեշտելով այդ ճշմարտությունը՝ Սողոմոնի Տաճարը տիեզերական խորհրդաբանություն ուներ: Մուտքի մոտի երկու բրոնզե սյուները, նաև բուսական ու կենդանական զարդերը խորհրդանշում էին կենդանի էակների աշխարհը, պատերի վրայի քերովբեները նշանակում էին քամու և հողմի տարերային ուժերը, ճրագներն՝ աստղերը, ցլերի արձանների վրա հենվող բրոնզե վիթխարի ավազանը («պղնձե ավազանը»)՝ համաշխարհային ջրերը, յոթնակերոնը (եբր. օօօօօ, ՄԵՆՈՐԱ՝)՝ Կյանքի ծառը:

Դեհիրը՝ Սրբություն Սրբոցը, խորանարդաձև սենյակ էր, սրբավայրից առանձնացած պատով ու վարագույրով: Այնտեղ լիակատար խավար էր տիրում և այնտեղ էր գտնվում Տապանակը՝ անտեսանելի Աստծու գահը: Դրա

վրա թևերն էին տարածել երկու հսկա քանդակներ: Դրանք փայտյա՝ ոսկեպատ քերովբեներն էին՝ երկնային պահապաններ առյուծի (կամ ցլի¹) մարմնով, մարդկային դեմքով և արծվի թևերով: Սրբություն Սրբոցի խավարը հիշեցնում էր Սինայի սրբազան միգախառն ամպը, է-ի խորհրդի անհասանելիությունը: Երբ Տապանակն այնտեղ փոխադրվեց, Սողոմոնն ասաց. «Տերն ասել է՝ Ես հովանի պիտի լինեմ մեզ ու մշուշով» (Գ Թագ. Ը 12):



Քերովբե (քերուբ): Փղոսկր, Նեբրոթ, Ասորեստան (մոտ IX-VIII դդ. Ք. ծ. ա.):

Թագավորը համոզված էր, թե Իսրայելի Աստծու Փառքը Նրա Տաճարում է լինելու «հավիտյան»: Այստեղ նա ակամա տուրք է տվել լայնորեն տարածված հեթանոսական պատկերացումներին: Բայց արդեն Երեմիա մարգարեն կասի, որ մարդկային մեղքերը սրբավայրը կարող են վերածել մեռյալ քարերի: «Այլևս չեն ասելու՝ “Իսրայելի Սուրբ Ուխտի տապանակը”, չի հիշվելու այն, նրա անունն այնտեղ չի տրվելու, այլևս չի փնտրվելու այն և չի վերաշինվելու» (Երեմ. Գ 16): Իսկ Եզեկիել մարգարեն տեսիլքում կտեսնի, թե ինչպես է Եահվելի Փառքը լքում Տաճարը¹, որպեսզի տարագրության գնա հավատարիմ «մնացորդի» հետ: Աստծու ներկայություն՝ վայրերից և տեղերից անկախ լինելու մասին ուսմունքը, լույս է սփռում նաև նորկտակարանյան Եկեղեցու բազու սրբավայրերի ողբերգական ճակատագրի վրա:

¹ Տե՛ս Եզեկ. Ժ 18-23 – խմբ.:

Ծանոթություն

Պետք է ընդգծել, որ ի տարբերություն ավելի ուշ կանոնի, Տաճարում զոհեր կարող էին մատուցել ոչ միայն հոգևորականները. այսպես, Սողոմոնը զոհեր էր մատուցում և օրինում ժողովրդին:

5. Սողոմոնի առակները: Աստվածաշնչական ուսուցողական մատենագրության սկիզբը: *Սողոմոնի կառավարման շրջանը նշանավորվեց իսրայելական գրականության ծաղկմամբ: Հավանաբար այդ շրջանում է ստեղծվել Եսհվեականի աշխատությունը, կազմվել են էպիկական ժողովածուները, Տիրոջ պատերազմների Գիրքը և Ուղիղի Գիրքը, կազմվել են Հեսու նավեի և դատավորների վերաբերյալ պատումերը, գրվել են առաջին թագավորների կենսագրությունները, ինչպես և Սողոմոնի գործերի գիրքը՝ յուրօրինակ պաշտոնական ժամանակագրություն:*

Սողոմոնի ժամանակներում սկսվում է Իսրայելի մերձեցումը Եգիպտոսին, որն ամրապնդվեց դարեր շարունակ: Շատ հրեական թագավորներ իրենց քաղաքականության մեջ կողմնորոշվում էին դեպի փարավոնները, իսկ նրանք իրենց հերթին նայում էին Պաղեստինին որպես պատնեշ Ասորեստանի ու քաղաքացիների դեմ: Սողոմոնի ամուսնությունը եգիպտական թագավորի դստեր հետ աննախադեպ փաստ էր (նախկինում փարավոններն իրենց դուստրերին օտարազգիների կնության չէին տալիս): Նմանօրինակ կապերն իրենց ազդեցությունն ունեցան նաև մշակույթի ոլորտում:

Վաղուց Եգիպտոսում գրիչների ժառանգական դաս կար, որոնք ղեկավարում էին դպրոցներ, մատենադարաններ, ծառայում էին որպես պաշտոնյաներ և կառավարիչներ, ստեղծում և հրապարակում էին գրական երկեր: Այդ գրականությունը ընդգրկում էր գիտական աշխատություններ ու տարեգրություններ, պոեմներ և պատմվածքներ, քնարերգություններ և հեքիաթներ, առակներ ու աֆորիզմներ:

Եգիպտական օրինակով Սողոմոնն իր պալատում ներգրավեց գրագիրների (եբր. 7910 ՍՈՓԵՐ), որոնց գլխավորում էին Ելիարեփը, Աքիան և Հոսափատը (Գ Թագ. Դ 3): Հավանաբար հենց սրանց էր հանձնարարվել սերունդների համար պահպանել թագավորի ասույթները:

Եբր. 797 ՄԱՇԱՆԷ բառը սովորաբար թարգմանում են առակ: Սակայն դրանք առակ-պատումներ չէին՝ նման ավետարանականի, այլ կարճ երկտող կամ եռատողեր էին, որոնք պարունակում էին կենցաղային իմաստության խրատներ:

Աստվածաշունչը Սողոմոնի անվան հետ է կապում այդպիսի ասույթների երկու ժողովածու (Առակ. Ժ 1-ԻԲ 16, ԻԵ-ԻԹ): Դրանցից որոնք են անմիջականորեն պատկանում թագավորին և որոնք անանուն իմաստունների՝ հնարա-

վոր չէ պարզել: «Սողոմոնի առակների» մի մասը հավաքվել է նրանցից 200 տարի հետո՝ Եզեկիա թագավորի գրիչների ձեռքով (Առակ. ԻԵ 1), մյուսները պատկանում են այն գրագիրներին, որոնց անունը մնացել է ավանդության մեջ. դրանք են՝ Հակեբի որդի Ագուրը¹ և թագավոր անվանված Լեմուելը² (Առակ. Լ 1-33, ԼԱ 1-9):

Առակներից շատերն օտար ազդեցության կնիք են կրում և տեղ-տեղ համընկնում են եգիպտական աֆորիզմներին (տես հտ. 1, § 30 Հավելված): Դրանց հեղինակները, կողմնորոշվելով համամարդկային կենսափորձով, չեն հիմնվում Ուխտի և սրբազան պատմության վրա: Նրանք խոսում են հիմարության ու իմաստության, առատաձեռնության և ժլատության, հարստության ու աղքատության մասին: Նրանց մտահոգում են ընտանեկան հարաբերությունները, մարդու կենցաղային արարքները, բարեկամական և ընկերական հարաբերությունները, աշխատանքն ու արդարադատությունը: Առաջին հայացքից Առակաց գրքում հավաքված ասույթները թվում են աշխարհիկ բարոյախոսության քարոզ, այն տեսքով, ինչպես այն հայտնի էր նահապետական հասարակությանը: Այդ հիմամբ Թեոդորոս Մոպսուեստացին մերժում էր Գրքի աստվածաշունչ բնույթը և այն համարում կենցաղային սովորական իմաստության արդյունք:

Սակայն ավելի ուշագիր ընթերցմամբ և ուսումնասիրությամբ Առակաց գիրքն այլ լույսի տակ է երևում: Բարեպաշտ կյանքի իդեալը, որ այն պատկերում է, աշխարհիկ բարոյագիտության իդեալը չէ: Այն խորապես արմատավորված է հավատի մեջ: Աստվածաշնչական գրիչները, ժողովրդական աֆորիզմներով կերտելով բարեպաշտ մարդու կերպարը, ցույց են տալիս, որ բարու աղբյուրը Տերն է: Մարդը պարտավոր է Նրան ծառայել իր ամբողջ կյանքում.

*Տիրոջ երկյուղը³ կյանքի աղբյուր է,
որը խուսափել է տալիս մահվան որոգայթներից (ԺԴ 27):
Տնանկին զրպարտողը բարկացնում է նրա Արարչին,
բայց ով պատվում է Աստծուն, նա ողորմում է աղքատին (ԺԴ 31):*

Քո գործերը յանձնիր Տիրոջ ձեռքը, եւ քո մտադրութիւնները պիտի կատարունեն (ԺՁ 3):

... Տերն է դատում սրտերը:

Արդարություն գործելը և ճշմարտություն խոսելը ավելի հաճելի է Տիրոջը, քան սոսիների արյունը (ԻԱ 2-3):

¹ Հայերենում Լ 1-ում Հակեբի որդի Ագուրի խոսքերը հատվածը չկա:

² Հայերենում ԼԱ 1-ում Լեմուել թագավորի խոսքերը հատվածը չկա: Ընդունված է նույնացնել Եդոմի Մասե թագավորի հետ – խմբ.:

³ Հայերենում հրամանը – խմբ.:

Աստծու համեմատությամբ՝ մարդ ոչ իմաստություն ունի, ոչ արիություն և ոչ էլ խորհուրդ (ԻԱ 30):

Սույն ասույթներից պարզ է դառնում, որ սոփերները [գրիչներն] սկսել են իմաստությունը դիտարկել, ոչ թե լուրջ իբրև տունը, տնտեսությունն ու թագավորությունը կառավարելու արվեստ, այլ իբրև Աստծուն հաճո կյանք: Գերությունից հետո հրեա իմաստունները (եբր. *דוכן* *ԽԱԽԱՄ* *דמך* *ԽՈՒՄՄ* – իմաստություն բառից) ավելի հստակ նշում էին, որ մարդկային իմաստությունը ծագում է Աստծու իմաստությունից: Այդ գերագույն իմաստությունն արտացոլված է Տրեզերքում: Ճշմարիտ կյանքի որոնումներում մարդ կարող է հաղորդակցվել դրան և իմանալ Արարչի կամքը:

Գերությունից հետո իմաստուններն Առակաց գիրքը բերեցին ներկայիս տեսքին՝ այն օժտելով աստվածային իմաստության վերաբերյալ առաջաբանով: Եվ հենց նրանց են պատկանում Աստվածաշնչական ուսուցողական մատենագրության հիմնական երկերը (Հոբի, Ժողովողի, Երգ Երգոցի և ոչկանոնական Սիրաբի, Տոբիթի, իմաստության գրքերը): Քանի որ այդ մատենագրության սկսողները Սողոմոնն ու նրա գրիչներն էին, դրա շրջանակում ընդգրկված շատ գրքեր սկսեցին ավանդաբար անվանել Սողոմոնյան:

Ուսուցողական գրքերի հավաքածուն ամենաուշն է ընդգրկվել Սբ. Գրքում: Իրանց մի մասը կանոն է մտել արդեն Քրիստոսի ծնունդից հետո: Ավետարանական ժամանակներում Աստվածաշունչը նաև կոչվում էր «Օրենք և Մարգարեներ»: Այդ պատճառով իմաստունների գրքերին մենք կանդրադառնանք սույն ձեռնարկի երկրորդ հատորում:

6. Սողոմոնի մեղքը և դրա հետևանքները (Գ Թագ. ԺԱ): Դավթի որդին մինչև վերջ չկարողացավ օգտվել իրեն տրված իմաստությունից: Եթե Դավթին իրեն համարում էր աստվածպետական, աստվածընտիր առաջնորդ և չնայած իր անկումներին, ապրում էր Եահվեի հավատով, ապա Սողոմոնը վերածվեց իսկական աշխարհիկ միապետի՝ վստահ իր ժառանգական իրավունքներին: Զգտելով նմանվել հարևան թագավորներին՝ նա ուզում էր իր հեղինակությունը բարձրացնել պալատի շքեղությամբ և մեծաթիվ հարեմով, ինչն իբրև անտանելի բեռ ծանրանում էր ժողովրդի ուսերին: Ամենուրեք հասունանում էր դժգոհությունը: Թագավորի բռնապետությունից առանձնակի շատ էին նեղվում հյուսիսային ցեղերը:

Աստվածաշունչը նշում է նաև Սողոմոնի կրոնական ուրացումը: Առևտուր անելով հեթանոսների հետ, նրանց հետ դաշինք կնքելով և իր հարեմ վերցնելով օտարների՝ Սողոմոնն ստիպված էր նրանց համար տաճարներ կառուցել: Աստծու Տան կողքին՝ Երուսաղեմում, հայտնվեցին փյունիկյան Աստարոթի, մովաբական Քամոսի, ամովնացիների Սողոթի սրբավայրերը:

Հաճոյանալով դաշնակիցներին, առևտրական գործընկերներին, ինչպես և իր հեթանոս կանանց՝ Սողոմոնը կյանքի վերջում անձամբ սկսեց մասնակցել կռապաշտական ծեսերին: «Եվ նա ամբողջ հոգով,- ասվում է Գ Թագ. Գրքում,- չկապվեց իր Տեր Աստծու հետ, ինչպես իր հոր՝ Դավթի սիրտն էր կապված» (ԺԱ 4):

Բռնակալ իշխանությունից դժգոհներն ապաստան էին գտնում Եգիպտոսում, որի նոր արքա Սավսակիմ Առաջինը շահագրգռված էր իսրայելական պետության թուլացումով: Այդպիսի խռովարարներից մեկին սատարում էր Աքիան՝ Սելովից¹: Հայտնի չէ, թե արդյոք նա ձգտում էր անմիջականորեն ազդել թագավորի վրա: Եթե նույնիսկ ձգտում էր, ապա անօգուտ: Աքիան գտավ արքայական վերակացու՝ եփրեմյան Հերոբոլամին և նրա համար կանխատեսեց իշխանություն հյուսիսային ցեղերի վրա: Աստված «կխաղաղեցնի» թագավորին նրա ճյուղը զրկելով թագավորության կեսից:

Թագավորին հայտնում են պատրաստվող ապստամբության մասին, և Հերոբոլամը փախչում է Եգիպտոս, ուր ապրեց մինչև Սողոմոնի մահը: Իսկ երբ թագավորը վախճանվեց, Հերոբոլամը վերադարձավ և գլխավորեց հյուսիսայինների խռովությունն ընդդեմ Դավթի տան:

Պսակագերծելով Սողոմոնին, որ իմաստություն էր ստացել Աստծուց, Սբ. Գիրքը ցույց է տալիս, որ Աստծու ժողովուրդն իշխողների մեջ պետք է գնահատի ոչ թե երկրային ուժն ու փառքը, այլ հավատարմությունն առ Աստված և նրա պատվիրանները:

Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ ժամանակահատված են ընդրկում Գ և Դ Թագավորությանց Գրքերը:
2. Դրանք ի՞նչպես են կոչվում հրեական Գրքում, և երբ են գրվել:
3. Ո՞րն է նրանց աստվածաբանությունը, և ի՞նչպես է արտացոլվել գրքերում:
4. Ի՞նչպես են կոչվում հրեական կանոնում Ա և Բ Մնացորդաց գրքերը, և ե՞րբ են գրվել դրանք:
5. Ի՞նչպիսի բնույթ ունեն Մնացորդաց Ա և Բ գրքերը, և դրանց հեղինակն ի՞նչպես է դիտարկում հինկտակարանյան պատմությունը:
6. Ո՞րն է Սողոմոնի պատմության Էությունը:
7. Ի՞նչ հանգամանքներում նա ստացավ իշխանությունը:
8. Աստվածաշունչն ի՞նչ է ասում Սողոմոնի իմաստության ակունքի մասին:
9. Որո՞նք են նրա թագավորության հիմնական հատկանիշները:
10. Ե՞րբ կառուցվեց Տաճարը, և ո՞վ մասնակցեց կառուցման աշխատանքներին:
11. Ի՞նչ մասերի է բաժանվել Տաճարը:

¹ Գ Թագ. ԺԴ 1-2 - խմբ.:

- 12. Ո՞րն է Տաճարի աստվածաշնչական ըմբռնման տարբերությունը հեթանոսականից:
- 13. Ի՞նչ էր նշանակում Տաճարի տիեզերական խորհրդաբանությունը:
- 14. Ի՞նչ է Սրբություն Սրբոցը:
- 15. Ո՞վ կարող էր մտնել Տաճար, և որտե՞ղ էր կատարվում զոհաբերությունը:
- 16. Գրական կյանքում Սողոմոնի թագավորության շրջանն ի՞նչ իրադարձություններով աչքի ընկավ:
- 17. Ովքե՞ր են գրիչները՝ սովերները:
- 18. Ի՞նչ է հինկտակարանյան առակը:
- 19. Ի՞նչի մասին են Առակաց գրքի ասույթները:
- 20. Ո՞րն է այդ Գրքի կրոնական իմաստը:
- 21. Ինչո՞ւ Աստվածաշնչի շատ ուսուցողական գրքեր կոչվել են Սողոմոնի անունով:
- 22. Ո՞րն է Սողոմոնի մեղքը, և ինչպիսի՞ հետևանքներ ունեցավ:

§ 30-ի Հավելված

Որոշ չուզահեռներ Առակաց գրքի և եգիպտական իմաստության միջև

Աստվածաշնչյան և եգիպտական աֆորիզմների հարազատության առավել վառ օրինակ է Առակաց գրքի և Ամենեմոպեի խրատների համեմատությունը: Գիտնականները միասնական կարծիքի չեն հանգել այն հարցում, թե որ գիրքն է շուտ ծագել: Բայց եգիպտական բնագիրը գրվել է հավանաբար Ք. ծ. ա. ժ դարից ոչ ուշ:

Առակաց Գիրք	Ամենեմոպեի խրատներ
<p>Ականջդ մոտ պահիր իմաստունների խոսքերին. լսիր իմ խոսքերը, հաստատիր սրտիդ մեջ և կիմանաս, որ դրանք բարի են: Եվ եթե դրանք պահես սրտիդ մեջ, կուրախացնեն քեզ և միշտ կմնան շուրթերիդ վրա:</p> <p style="text-align: right;">(ԻԲ 17-18)</p>	<p>Ականջդ թեքիր, լսիր ասվածը, դարձիր, որ մեկնաբանես դա. օգտակար է դա քո գլխում ամրագրելը:</p> <p style="text-align: right;">(3/9-16)</p>
<p>Ընկեր մի լինիր բարկացկոտ մարդուն և մի՛ առնչվիր դյուրաբորբոք բարեկամի հետ, որ չլինի թե սովորես նրա ճանապարհները և ծուղակն ընկնելով՝ խեղդամահ լինես:</p> <p style="text-align: right;">(ԻԲ 24-25)</p>	<p>Մի՛ եղբայրանա բռնկուն մարդու հետ, զրուցելու համար մի՛ մոտ գնա նրան... թո՛ղ նա չիրապուրի քեզ և վրադ օղակ չդնի: (11/13, 11/17):</p>

<p>Եթե ունևոր չես, մի ձգտիր հասնել հարստին, այլ քո իմաստութեամբ հեռացիր նրանից: Յենց որ աչքդ տնկես մի բանի վրա, այն իսկույն կչքանա. հարստությունն արծվի թևեր է շինում իր համար եւ վերադառնում է իր նախնիների տունը:</p> <p style="text-align: right;">(ԻԳ 4-5)</p>	<p>Մի ճգնիր օգուտ քաղել սեփական կարիքներդ հոգալու համար: Եթե հարստություն ես ձեռք բերել կողոպուտով, դրանք և մի գիշեր քեզ հետ չեն մնա. լուսաբացին դրանք քո տնից դուրս կլինեն, նրանց տեղը կարելի է ենթադրել, բայց դրանք արդեն չկան... դրանք սագի պես թևեր են առել իրենց համար և սավառնել են երկինք:</p> <p style="text-align: right;">(9/14-19, 10/4)</p>
--	---

Թարգմ. Կորոստովցովա Մ. Ա, ըստ նրա՝
Յին Եզիպտոսի կրոնը գրքի,
 Մ., 1976, էջ 274-275:

§ 31. Իսրայելյան Կայսրության տրոհումը

(Գ Թագ. ԺԲ-ԺԴ, Բ Մնաց. Ժ-ԺԲ)

1. Բաժանման պատճառները: Արդեն Սողոմոնի կառավարման ժամանակ նրա պետության միասնականությունն էսպես վտանգված էր: Թագավորին միայն ուժով էր հաջողվում ճնշել աճող դժգոհությունը, բայց դրա պատճառներն առավել քան լուրջ էին, որ Սողոմոնի մահից հետո թագավորության ամբողջությունը պահպանվեր: Կարևորագույն պատճառները հետևյալներն էին.

Ա. Հյուսիսային ցեղերի անշատողական նկրտումները հազիվ էին գսպում Դավիթն ու իր որդին: Երուսաղեմի փաստացի իշխանությունն ամբողջ Իսրայելի վրա խիստ անկայուն էր: Հուդայի ցեղի գերակայությունը, որին պատկանում էր արքայատոհմը, մրցակցության ոգի էր առաջացնում Եփրեմի մարզում և նրա հարևան ցեղերի մեջ: Հյուսիսում սեփական ավանդույթներ էին ձևավորվում, որոնք արմատներով հանգում էին վաղ անցյալին: Հյուսիսը գիտեր իր ավանդույթները, իր հերոսներին, որոնցով հպարտանում էր (Հեսու Նավե, Դեբորա, Գեդեոն, Սամփսոն, Սամուել ևն): Իսկ Հուդան երկրի լեռնային ծայրամասն էր, որ մինչ այդ ոչնչով աչքի չէր ընկել:

Բ. Եթե փոշտացիներին հաղթող Դավիթը դեռ կարող էր բարձրացնել Հուդայի հեղինակությունը, ապա Սողոմոնի բռնատիրությունը (հատկապես վերջին տարիների), ճնշող հարկերը, որ մտցրեց նա, մի շարք ապստամբությունների պատճառ դարձան:

Գ. Սողոմոնի զիջումները հեթանոսներին նրա դեմ հանեցին մարգարեններին՝ Աքիա Սիլոնացու գլխավորությամբ: Աքիան օժանդակում էր պալատական պաշտոնյա Հերոբովամի նկրտումները, որը Սողոմոնի դեմ խռովություն բարձրացրեց: Քանի դեռ թագավորը կենդանի էր, Հերոբովամը թաքնվում էր Եզիպտոսում, իսկ 931 թվականին վերստին հայտնվեց Իսրայելում:

դ. Երուսաղեմի Տաճարի իշխող դրուժյունը հյուսիսցիների ընդդիմությունն էր առաջացնում: Նրանք կապված էին իրենց հին սրբություններին՝ Սյուքեմում, Բեթելում, Դանում: Ու թեև Սելուվի տաճարն ավերված էր, այդ տեղերի ղևտացիները շարունակում էին այդ քաղաքը համարել Աստվածընտիր վայր պաշտամունքի համար (նկատենք, որ Աքիան ծնունդով Սելուվից էր):

Չնչին առիթն իսկ բավական էր, որ այս բոլոր պատճառները ներքուստ պայթեցնեին Սողոմոնի կայսրությունը:

2. Քաղաքական պառակտումը: Միապետության երկու ըմբռնում: Մինչև թագավորական իշխանության հաստատումն Իսրայելում հակում կար կառավարման աստվածապետական ձևին: Ցեղերը կազմել էին «միութենական հանրապետություն» (Ա. Պ. Լոպուխին), որ գլխավորվում էին խարիզմատիկ առաջնորդները: Ժողովրդական հավաքի համաձայնությամբ մարգարեներն օծում էին նրանց: Ըստ էության Սավուղը հենց այդպիսի ընտրյալ խարիզմատիկ առաջնորդ էր: Իսկ ժառանգական իշխանությունը նրանք նայում էին կասկածանքով, համարելով, որ դրա մեջ արտացոլված չեն Աստծու ու ժողովրդի կամքը:

Անգամ Գեղեոնը հրաժարվեց թագավորական պսակից, նախընտրելով, որ Տերն Ինքը լիներ աստվածապետական համայնքի կառավարիչ: Սամուել մարգարեն աներկմիտ հասկացրեց, որ թագավոր ունենալու ժողովրդի ցանկությունը մեղք է: Նա համաձայնեց գահին օծել Սավուղին, միայն պահանջին տեղի տալով, ընդ որում՝ լիակատար փոխհամաձայնությունը մերժեց: Ընտրյալ առաջնորդը պիտի ենթարկվեր Աստծու ձայնին, որ հնչում էր մարգարեի միջոցով: Իսկ երբ Սավուղն սկսեց շենթարկվել, մարգարեն հրաժարվեց նրանից:

Սողոմոնի վախճանից հետո դարձյալ ընտրովի թագավորի վերաբերյալ միտքը առաջ եկավ: Ժառանգորդ Ռոբովամին (եբր. ԾԵՃՈՂ - ՌԵՆԱՎԻԱՄ) հարկ եղավ մեկնել հյուսիսի ավանդական կենտրոն Սյուքեմ, որպեսզի ժողովրդական հավաքը հաստատեր նրա իրավունքները: Այնտեղ ցեղերի ավագները Ռոբովամից պահանջեցին մեղմել հարկերն ու տուրքերը, որ նրա հայրը դրել էր երկրի վրա: Նրանք միայն այդ պայմանով կհամաձայնեին ընդունել Դավթի ցեղի իշխանությունը: Ռոբովամը չէր լսում ծերերի խորհրդին, որոնք նրան համոզում էին զիջման գնալ: Երիտասարդ պալատականները նրան խորհուրդ էին տալիս հաստատակամ լինել, և նա համառորեն հայտարարում էր, թե «կծանրացնի լուծը» և ոչ թե կթեթևացնի:

Ի վերջո ավագները ցրվեցին՝ Դավթի տան հետ կապերը խզելու հաստատ մտադրությամբ: Հարկահավաքին քարկոծեցին, իսկ Ռոբովամն ինքը, կյանքը փրկելով, շտապ փախավ Երուսաղեմ: Այնտեղ նա աշխատեց զորք

հավաքել անհնազանդների դեմ, բայց Աստծու մարդը՝ Սամեա անունով մարգարեն, ընդդիմացավ դրան: Նա ասաց, որ դեպքը կատարվել է Աստծու կամքով: Իսկ Հեռոթովամը թագավոր հռչակվեց Սյուքեմում, որը եղավ նրա առաջին նստավայրը:

Ռոբովամին մնաց միայն Հուդայի ցեղի տարածքը: Ճիշտ է շուտով այդ տարածքին միացվեց Բենիամինի տարածքի մի մասը, դրա համար հյուսիսային թագավորությունն սկսեցին անվանել տասը ցեղերի (կամ ամենաբազմամարդ ցեղի անունով՝ Եփրեմյան) թագավորություն:

Եփրեմում տհաճություններ էին վերաբերում ժառանգական միապետության գաղափարին: Արդյունքում ոչ մի հյուսիսային ցեղ արքայության գահին երկար չէր մնում: Իսկ Հուդայում Դավթի տունը պահպանեց իր դիրքերը մինչև Երուսաղեմի գրավումը Նաբուգոդոնոսորի կողմից՝ 587 թ.: Եվ անգամ Գերությունից հետո Դավթի սերնդից Սասբասարը և Զորաբաբելը հրեաների մեջ գերագույն հեղինակություն էին վայելում:

Արքայատանը նվիրվածությունը չէր բխում միապետական կարգի նկատմամբ հավատից, այլ կապված էր մեսիական հույսերի հետ: Քանի որ Աստված Ուխտ էր կապել սաղմոսերգու թագավորի հետ և խոստացել էր, որ նրա հետնորդը հավիտենական թագավորություն կհաստատի, հրեաները հաշտվում էին Դավթի տան նույնիսկ վատթար ներկայացուցիչների հետ:

Այդ հույսերի ու միապետների նկատմամբ բարձր պահանջկոտության մասին վկայում են Սաղմոսարանը և Գ-Դ Թագավորությունների գրքերը: Հրեական թագավորների գործերի համառոտ թվարկումն ահեղ դատաստան է պարունակում նրանց նկատմամբ: Բացի Հովսափատից, Եզեկիայից ու Հոսիայից, նրանք բոլորը պատկերված են որպես օրինազանց ու մեղավոր կառավարողներ՝ հեռու կատարելության երազանքից: Ընդհանուր առմամբ «Դավթի որդիները» արևելյան մյուս թագավորներից ոչ լավ էին, ոչ վատ, բայց Աստվածաշունչը նրանց նայում էր Աստծու Օրենքի տեսանկյունից: Եվ Օրենքի լույսի ներքո նրանք խոստումին արժանի չեղան:

Թագավորների անարժանությունը հինկտակարանյան Եկեղեցուն ավելի ստիպեց հայացքն ուղղել Դավթի Որդուն, որ կատարյալ պիտի լիներ, և որի գալստյանն էր սպասում Եկեղեցին: Այսպես կոչված «թագավորական սաղմոսներում» այդ ակնկալիքները հատկապես ընդգծված են արտահայտված: Այդտեղ Դավթի ժառանգորդը պատկերվում էր աստվածադիր առաջնորդ, որին որդեգրում է Տերն Ինքը: Այսպես սաղմոս Բ-ում Աստծու Օծյալն ասում է.

*Տերն ասաց ինձ. «Դու իմ որդին ես, ես այսօր ծնեցի քեզ:
Խնդրիր ինձնից՝ և հեթանոսներին*

քեզ կտամ որպես ժառանգություն,
 ու իշխանություն՝ երկրի բոլոր ծագերում:

(7-8)

Օծյալի կերպարն աստիճանաբար գերբնական հատկանիշներ էր ձեռք բերում, նրա մեջ միահյուսվում էին իշխանությունն ու հոգևոր սպասավորությունը, թագավորությունն ու քահանայությունը: Այս մեսիականության լիարժեք նախատիպ էին համարում Մելքիսեդեկին՝ Երուսաղեմի հին քահանա-թագավորին.

Երդվեց Տերը և չի պղծա,
 որ Դու հավիտենական քահանա ես
 ըստ Մելքիսեդեկի կարգի:

(Սաղմ. ԵԹ 4)

Այսպիսով Սաղմոսում հասունանում է ճշմարիտ Աստծու Որդու ապագա հայտնությունը: Սակայն թագավորների դարաշրջանում այդ ըմբռնումը դեռևս կապված էր երկրային պատկերացումների հետ:

3. Կրոնական պառակտում: Հերոբովամ Ա-ն, երբ թագավորում էր Իսրայելում, հասկանում էր, որ Երուսաղեմի նոր Տաճարը, որտեղ գտնվում էր Տապանակը, ժողովրդի համար չի կորցրել իր ձգողականությունը անգամ թագավորության բաժանումից հետո: Նա զգուշանում էր, որ դեպի Հրեաստան ուխտագնացությունները կխախտեն իր հեղինակությունը:

Քանի որ Քանանի ազգեցությունը Եփրեմում ավելի ուժեղ էր, Հերոբովամ Ա, ընդառաջելով ժողովրդի հակումներին, այդ տաճարներում տեղադրեց հորթերի ոսկեզօծ արձաններ: Աստվածաշնչական հեղինակի համար, որ կազմում էր Բ Օրենքի պատմությունը, սա իսկական կռապաշտություն էր: Նա նույնիսկ Հերոբովամ Ա-ի շուրթերով խոսում է ոսկե հորթի պատմության բառերով. «Ահա քո աստվածները, ով Իսրայել, որոնք քեզ դուրս բերեցին Եգիպտացիների երկրից» (Գ Թագ. ԺԲ 28): Եվ ընդհանրապես Տաճարից բացի, որևէ այլ սրբավայրերի առկայությունը 622 թվականից հետո դիտվում էր Աստծու կամքի խախտում:

Բայց Հերոբովամի ու նրա հաջորդների ժամանակ քիչ էին նրանք, ովքեր ընդունում էին այդ տեսակետը: Եղիա մարգարեն և շատ բարեպաշտ այրեր մեղք չէին համարում այն, որ զոհաբերություն էր արվում Երուսաղեմից դուրս: Հերոբովամի մեղքն այն էր, որ նա ամրապնդեց պառակտումը կրոնական առումով: Երուսաղեմի տաճարն ամբողջ Հինկտակարանյան Եկեղեցու հավատի միասնության խորհրդանիշն էր: Դանում և Բեթելում նրա մրցակիցները թուլացնում էին այդ միասնությունն և ճանապարհ էին հարթում քանանյան հեթանոսական հովերին: Այդ ազգեցության նշաններից մեկը այդ հորթերն էին, որ տաճարներում կանգնեցրել էր Հերոբովամը:

Աստվածաշնչագիտության մեջ երկար քննարկվել է հորթերի պաշտամունքի ծագման հարցը: Շատ մեկնիչներ համարում էին, որ այն փոխառվել է եգիպտոսից, ուր պաշտում էին ցլի կերպարանքով Ապիս աստծուն: Բայց այսօր տիրում է այն կարծիքը, որ հորթի խորհրդանիշն համասեմական էր, և մասնավորաբար քանանյան: Իսրայելի հարևանները պաշտում էին ցլի տեսքով գերագույն աստծուն, որ մարմնավորում էր ուժ և պտղաբերություն:

Արդյո՞ք հորթերը հենց իր՝ Եահվեի պատկերն էին: Դա կասկածելի է արդեն իսկ այն պատճառով, որ Եղիա և Եղիսե մարգարեները, որ քարոզում էին Եփրեմում, հորթերի դեմ հանդես չեն եկել: Եթե դրանք այդքան սրբապիղծ քանդակներ լինեին, հավատի նախանձախնդիրներն անպայման կդատապարտեին դրանք: Վ. Ֆ. Օլբրայթն ուշադրություն է դարձրել այն հանգամանքին, որ շատ աստվածների պատկերում էին հորթի վրա կանգնած: Դրանից նա եզրակացրեց, որ Հերոբովամ Ա-ի հորթերը նրա տաճարներում քերովբեի դեր էին տանում, իբրև գահ ծառայելով անտեսանելի Աստծու համար (ինչպես Տապանակի քերովբեները): Բայց սնահավատ ամբոխը ժամանակի ընթացքում սկսեց այդ քանդակներին նայել որպես կուռքերի: Այդ է պատճառը, որ Ը դարում Օսե մարգարեն սուր հարձակումների ենթարկեց հորթերի պաշտամունքը (Ը 5, Ժ 5 և հաջ.):

Այսպես թե այնպես կրոնական պառակտումն ու պաշտամունքային նորամուծություններն Աքիա մարգարեի դժգոհությունն առաջացրին. մարգարե, որն առաջ Հերոբովամի կողմից էր: Արդեն կույր և զառամյալ նա մարգարեացավ, որ «Տերը իր համար մի թագավոր պիտի հանի Իսրայելի դեմ, որը այսօր իսկ բնաջինջ պիտի անի Յերոբովամի տունը» (Գ Թագ. ԺԴ 14):

4. Թագավորությունների բաժանման հետևանքները շատ շուտ երևացին: Վախենալով Հյուսիսի վրա իր տիրապետությունը վերականգնելու Երուսաղեմի փորձերից, Հերոբովամ Ա-ն օգնության կանչեց իր դաշնակից Սալվասկիմ փարավոսին (եբր.՝ 𐤑𐤍𐤏𐤍 𐤇𐤁𐤆𐤏): Սա անմիջապես օգտվեց ընձեռված հնարավորությունից և 936 թ. ներխուժեց Հրեաստան: Ռոբովամը, պաշարումից խուսափելու համար, վճռեց փրկագին վճարել. ռազմատուգանքը քիչ չէր, թագավորը նույնիսկ ստիպված էր վերցնել Տաճարի գանձերը: Բայց դա չբավարարեց Սալվասկիմին: Նա ցանկանում էր վերագործնել նախկին իշխանությունը Պաղեստինի վրա: Նրա տարեգրություններից պարզվում է, որ վերջինս չսահմանափակվեց Հրեաստանով, այլ գրավեց մի շարք քաղաքներ, որ պատկանում էին Հերոբովամ Ա-ին:

Թագավորությունների բաժանումը տարիների ընթացքում հանգեցնում է քաղաքականապես դրանց աստիճանական թուլացմանը: Միասնությունը կորցնելով՝ դրանք դառնում էին անընդունակ դիմակայելու ավելի ուժեղ

հարևաններին: Հերոբովամ Ա-ից հարյուր տարի հետո Պաղեստինն ընդամենը մի քանի տասնամյակ է պահպանում անկախությունը: Նրա թագավորությունների վերահսկողությունը մերթ անցնում է Ասորեստանին, մերթ՝ Եգիպտոսին, մերթ՝ քաղաքացիներին:

Հերոնիմոս Երանելին հինկտակարանյան թագավորությունների պառակտումը համեմատել է եկեղեցական բաժանումների ու վեճերի հետ: Թե՛ մեկը, թե՛ մյուսը էական վնաս են հասցրել Աստծու ժողովրդին: Այնուամենայնիվ Իսրայելի քաղաքական անկումն ուներ նաև նախախնամական իմաստ: Այն մշտապես խաթարում էր երկրային հույսերն ու երազանքները, ստիպելով մտածել Աստծու Նախախնամության հոգևոր նպատակների մասին. այն ասպարեզ էր տալիս մեծ մարգարեներին, որոնք ազատորեն դատապարտում էին ժողովրդին ու թագավորներին: Առավել ուժեղ իշխանության դեպքում նրանց քարոզչությունը կբախվեր անհաղթահարելի արգելքների:

Չարքեր կրկնության համար

1. Թվարկեցե՛ք Յուլիսային թագավորության՝ Չարավային թագավորությունից անջատվելու չորս պատճառ:
2. Թագավորական իշխանությանը ի՞նչպես էին ընկալում Յուլիսային Իսրայելում:
3. Ե՞րբ և ի՞նչ հանգամանքներով տեղի ունեցավ թագավորությունների բաժանումը:
4. Ինչո՞ւ պահպանվեց Դավթի տունը:
5. Դավթի հարստության հեղինակությունն ի՞նչպես է կապված նրան տված խոստումին:
6. Մեսիական թագավորի իդեալն ի՞նչպես էր պատկերվում Սաղմոսներում, և ո՞րն է դրա նախտիպի նշանակությունը:
7. Չերոբովամ Ա-ին ի՞նչն ստիպեց հոգ տանել հյուսիսային սրբավայրերի հեղինակության համար:
8. Աստվածաշնչագիտության մեջ ի՞նչպես է մեկնաբանվում հորթերի պաշտամունքը:
9. Որո՞նք էին թագավորությունների բաժանման հետևանքները:
10. Իսրայելի քաղաքական գորության թուլացումն ի՞նչ դրական հետևանքներ ունեցավ:

ՊԱՅՔԱՐ ԵՐԿՆԱՎԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԵՂԻԱ ԵՎ ԵՂԻՍԵ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ

Ք. ծ. ա. 910-800 թթ.

§ 32. Հեթանոսության նոր հարձակումը. Եղիա մարգարե

1. Մասնատված թագավորություններ. Ք. ծ. ա. Ժ-Թ դարեր (Գ Թագ. ԺԵ-ԻԲ, Դ Թագ. Ա-Բ). Պառակտմանը հաջորդած առաջին հարյուր տարիներին երկու հրեական պետությունների կապերը չէին խզվում: Դրանց միապետերը մերթ դաշն էին կնքում, մերթ հակամարտում էին: Հրեաստանը առավել, քան Հյուսիսը (Իսրայել) պահպանում էր հավատարմությունը միակ Աստծուն: Չնայած հրեական թագավորների մայրերն ավելի հաճախ հեթանոս էին, թագավորներն իրենք ձգտում էին նմանվել Դավթին: Այսպես, Ռոբովամի թոռ Ասան իր տիրույթներից վտարեց հեթանոս քուրմերին և ոչնչացրեց Աստարոթ աստվածուհու մեհյանը, որ կառուցել էր իր մայրը:

Ասան խորացրեց թագավորությունների միջև անդունդը՝ հյուսիսցիների դեմ իր պայքարին օգնության կանչելով ասորիների Բենհադադ Ա թագավորին (Սինոդական թարգմանության մեջ Վենադադ¹) և նրա աջակցությամբ գրավելով Բենիամինի տարածքի մի մասը: Եվ ընդհակառակն՝ Ասայի որդի Հովսափատն Իսրայելի հետ հաշտություն կնքեց: Չնայած դրան նա շարունակեց էր հոր հակահեթանոսական քաղաքականությունը: «Թեև տակավին բարձրադիր մեհյաններ կային», - ասում է Աստվածաշունչը²: Բարձր տեղերը (Էբր. 107B ԲԱՄՈՏ) կոչվում էին բլուրները, որոնց գագաթներին զոհ էր մատուցվում: Իսկ Բ Օրինացի ավանդության տեսանկյունից պաշտամունքի վայր կարող էր լինել միայն Երուսաղեմի Տաճարը³:

Հուդայի միությունը Հյուսիսային թագավորության հետ, սակայն, ուներ նաև բացասական հետևանքներ: Հյուսիսում քանանացիների կրոնն առավել տարածում գտավ, և դրա ազդեցությունն սկսեց թափանցել Հուդա և

¹ Հայերեն՝ Բենադադ, գրաբարում նրա անունը նշվում է որպես Ադերի որդի - խմբ.:

² Գ Թագ. Ի 33 - խմբ.:

³ Բարձունքներն, իբրև կանոն, հին քանակյան պաշտամունքի կենտրոններ էին, ուստի մարգարեները դրանք դիտարկում էին իբրև հավատի մաքրության սպառնալիք և ի վերջո հասան (Է դար), աստվածապաշտության լիակատար կենտրոնացման:

շարունակում էր ուժեղանալ, մինչև որ Եզեկիա (Թ դար) թագավորն դրա դեմ վճռական պայքար ծավալվեց:

Եփրեմի իսրայելական թագավորությունը Ժ-Թ դարերին մի շարք պալատական հեղաշրջումների ենթարկվեց, փոփոխվեցին արքայատները: Դրանցից ամենագորավորն Ամրիի (Ամրոի) հարստությունն էր: Ամրին Մովսեսի հաշվին ընդլայնեց իր տարածքները և թագավորության մայրաքաղաք դարձրեց Սամարիան:

«Սամարիայի դիրքն այն վեր էր ածում բնական ամրոցի: Սամարիան փոված է կոնաձև բարձունքի վրա, որ 100 մետրով վեր է խոյանում լեռնային ընդարձակ գոգահովտում: Դժվար չէր այն դարձնել ժամանակի համար անմատչելի ամրություն: Եվ իրոք, Սամարիան մեկից ավելի անգամ դիմագրավել է գերազանց թշնամական ուժերի պաշարումը» (Ռ. Կիտտել):

Հետաքրքիր է, որ ասորեստանցիք, որոնք այդ ժամանակ հայտնվեցին քաղաքական ասպարեզում, Իսրայելն անվանվում էին Բիթ-Խոումրի, այսինքն Ամրիի տուն կամ թագավորություն: Այս անվանումը նրանք գործածում էին նույնիսկ այն ժամանակ, երբ Ամրիի հարստությունն անկում էր ապրել:

Ամրիի որդի Աքաաբը (874-853 թթ.), վախենալով Ասորեստանի աճող հզորությունից, դաշինք կնքեց Դամասկոսի, Փյունիկիայի ու Ամմոնի թագավորների հետ: Նրանց հետ նա դիմագրավեց ասորեստանյան զավթիչ Սալմանասար Գ-ի առաջին հարվածը: Ասորիքում՝ Կարկարի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո (854 թ.), Սալմանասարն ստիպված էր ժամանակավորապես նահանջել:

Աքաաբը փյունիկեցիների հետ դաշինքն ամրապնդեց Հեզաբելի՝ Սիրդոնի թագավոր Հոբադի դստեր հետ ամուսնությունամբ: Վերջինս ասորիների Բահադ-Մեղքոմի քուրմն էր: Ի հաճույս կնոջ՝ թագավորը Սամարիայում կառուցեց տաճար փյունիկյան աստվածությունը և ապահովեց մի ամբողջ խումբ քուրմերով ու մարգարեներով: Հեզաբելն իշխող ու պատվասեր կին էր և մեծ ազդեցություն ուներ ամուսնու վրա: Նա Մեղքոմի պաշտամունքը ցանկանում էր դարձնել Իսրայելի երկրորդ կրոն: Այսպիսով, վտանգավոր երկհավատությունը երկրում դարձավ լիովին պաշտոնական:

Հեթանոսության նոր «արշավանքին» զուգահեռ տեղի ունեցան և սոցիալական փոփոխություններ: Իսրայելական վերնախավը հարստանում էր Փյունիկիայի հետ առևտուր անելով, աճում էր սոցիալական անհավասարությունը, հասարակ նահապետական-հովվական բարքերը մնում էին անցյալում: Ազնվականները մրցակցում էին շքեղության մեջ, իսկ թագավորական իշխանությունն ավելի բռնատիրական էր դառնում: Կրոնական և սոցիալական ճգնաժամի այդ միջոցին Սամարիայում հանդես եկավ Թեզբա-ցի (այսինքն՝ Գաղաադի Թեզբե քաղաքից) Եղիա մարգարեն:

2. Եղիա մարգարե. հալածվածների պաշտպան (Գ Թագ. ԻԱ): Եղիա մարգարեի վերաբերյալ աստվածաշնչական պատմությունները նրա վերաբերյալ ավելի ընդարձակ շարքի մի մասն են: Դրանք մուծված են Թագավորությունաց Գրքեր, ցույց տալու համար, որ ճշմարիտ հավատը չմարեց նույնիսկ երկհավատության տարիներին: Մարգարեի ծագման ու պատանեկության մասին Սբ. Գրքում ոչինչ ասված չէ: Նա հայտնվում է հանկարծակի և նույն կերպ էլ անհետանում: Նրա կերպարը գրեթե գերբնական պսակով է պատված: Նրա անունն իսկ (եբր. ܝܗܝܐ - Էլիշա՛:ՀՈԻ) նշանակում է «Եահվեն իմ ԱՍՏՎԱԾՆ է»: Հնարավոր է՝ մարգարեն այն ընդունել է ի նշան իր կոչման և առաքելության: Հակառակվելով փյունիկ-քանանյան քաղաքակրթության քայքայիչ ազդեցությանը՝ Եղիան կրում էր անապատաբնակի հանդերձներ: Թիկնոցը մորթուց էր և գոտին կաշվից, որպիսիք կրում էին հովիվները: Անապատը նրա կյանքի սիրելի վայրն էր: Այդ պատճառով Անտոն Մեծը նրան անվանում էր օրինակ ճգնակեցության (св. Афанасий, Жизнь св. Антона, 7):

Եղիայի մասին պատմություններից մեկը պատմում է, թե ինչպես է նա բացահայտ հանդես եկել Աքաբի դեմ: Թագավորն ուզում էր խաղողի այգի ձեռք բերել, որը հարում էր իր պալատին: Բայց դրա տերը՝ գյուղացի Նաբոթը (եբր. ܢܒܘܬ - ՆԱԲՈՒԹ), հրաժարվում էր վաճառել «իր հայրերի ժառանգությունը»: Թագավորը վշտացավ, բայց չհամարձակվեց օրենքին հակառակվել: Հեզաբելը զարմացած էր ամուսնու այսպիսի անվճռականությունից: Նա սովոր էր մտածել, որ թագավորն ինքնակալ տերն է իր հպատակների: Նա կեղծ մեղադրանքներ հավաքեց Նաբոթի դեմ, և նրան քարկոծեցին իբրև հանցագործի, ասելով թե՝ «դու հայհոյեցիր Աստծուն և արքային»¹: Մահապատժից անմիջապես հետո Աքաբը տիրացավ ցանկալի հողակտորին: Բայց խաղողի այգու դարպասի մոտ նրան սպասում էր Եղիան: «Այսպես ասում Տերը. Քանի որ սպանեցիր ու ժառանգեցիր նրա ունեցվածքը ...»: Մարգարեն զայրույթով հանդիմանեց թագավորի հանցանքը և մարգարեացավ նրա տան կործանման մասին:

Եղիայի համար օրինազանցությունն ու արդարության ոտնահարումը վիրավորանք էր Աստծուն: Ի դեմս նրա՝ հավատը դառնում է սոցիալական արդարության պաշտպան: Այս մոտիվը պիտի խորացնեն և զարգացնեն մեծ մարգարե-գրողները:

3. Եղիա մարգարեն սովի տարիներին (Գ Թագ. ԺԷ): Փյունիկյան տարեգրությունները հիշատակում են սովի մասին, որ մոլեգնել է Ասորիքում Հոբաղի իշխանության ժամանակ²: Երաշտն ամայացրել էր Եփրեմը: Անգամ թագավորն ստիպված էր թափառել երկրով մեկ՝ իր ձիերի համար սնունդ

¹ Հայերենում հայհոյեցիր բառի տեղը օրհնեցիր է. - Ծան. թարգմ.:

² Հովսեփոս Փլավիոս, Ընդդեմ Ապիանոսի, 8, 13, 2:

որոնելով: Եղիա մարգարեն այդ աղետը բացատրում էր նրանով, որ թագավորն ու ժողովուրդը թույլ են տվել Բահադ-Մեղքոմի ծառայությունը:

Եղիան միայնակ չէր գործում: Նրան օգնում էին մարգարեի որդիները, որ շրջում էին Իսրայելի քաղաքներով, գյուղերով ու ավաններով, հնչեցնելով ուրացության համար պատժվելու սպառնալիքը: Նրանց հարում էր նաև ուղեբայանների համայնքը: Նրանք, ի նշան քանանական սովորույթների դեմ բողոքի, հրաժարվում էին գինուց և ապրում վրաններում: Նրանց քարոզը Հեզագեելի զայրույթն առաջացրեց, և նա սկսեց կատաղի կերպով հետապնդել մարգարեներին. նրանց մի մասին բռնեցին ու սպանեցին, մի մասին իր տանը թաքցրեց բարեպաշտ պալատական Աբդիուն: Եղիա մարգարեն Աստծու հորդորով հեռացավ անապատ՝ Քոռաթ հեղեղատի մոտ (Անդր-հորդանան), ուր Տերը հրաշալի սնեց նրան, իսկ երբ վտակը ցամաքեց՝ Եղիան գնաց Փյունիկիա: Այնտեղ նա ապրեց Սարեփի թաղում, աղքատ այրիի մոտ: Մարգարեն նրան փրկեց սովից և հարույթուն տվեց նրա մեռած որդուն:

Ս. Գիրքը մանրամասն անդրադառնում է այդ իրադարձություններին, քանի որ դրանք ցույց են տալիս, որ Աստծու գթասրտությունը տարածվում է նաև օտարազգիների վրա: Աստծուն հաճելի էր Եղիային հյուրընկալած փյունիկյան կնոջ բարությունը, թեպետ նա չէր պատկանում ընտրյալ ժողովրդին: Դրա վրա ուշադրություն կհրավիրի նաև Քրիստոս Փրկիչը՝ նշավակելով նազովրեցիների թերահավատությունը: «Եղիայի օրով Իսրայելում բալում այրիներ կային, երբ երկինքը փակվեց երեք տարի ու վեց ամիս, և ամբողջ երկրի վրա մեծ սով եղավ: Սակայն նրանցից ոչ մեկի մոտ Եղիան չուղարկվեց, այլ միայն՝ մի այրի կնոջ՝ սիրոնացիների Սարեփա քաղաքում» (Ղուկ. Դ 25-26):

**Բաժանված թագավորությունների՝
Ժ-Թ դարերի պատմության ժամանակագրություն**

Հրեաստան		Իսրայել (Եփրեմ)	
913-911	Աբիա	910-909	Նադաբն սպանվեց Բաասայի ձեռքով
911-870	Ասա. Միություն Ասորիքի հետ Բաասայի դեմ: Պայքար հեթանոսության դեմ:	909-886	Բաասա
		886-885	Ելա. Չամբրին իշխում է յոթ օր
		885-874	Ամրի ([Էբր.] Օմրի). Սամարիայի իմնումը: Մովաբի գրավումը
870-848	Հովսափատ: Եղոմի գրավումը: Միություն Աբաբի հետ: Պայքար հեթանոսության դեմ:	874-853	Աբաբ և Հեզագեել: Մեղքոմի տաճարը Սամարիայում: Պայքար ասորեստանցիների դեմ
		853-852	Օբոզիա

848-841	Հովրամ: Ամուսնություն Ամրիի դստեր՝ Գոդունիելի հետ: Բաադամի պաշտամունքը: Եդոմի անջատումը:	852-841	Հորամ (նրա եղբայրը) Հեուն սպանում է Հորամին
841	Օթոգիա: Սպանվեց Հեունի (Եբր.) Իեուսահ) հրամանով	841-814	Հեու: Իսրայելն Ասորեստանի հարկատու: Ագայելը (Եբր.) Հազայել) գրավում է Գադաադը
841-835	Գոթոդիան (Եբր.) Աթալիահ) միահեծան թագուհի		
835-796	Հովաս	814-798	Հովաթագ: Պայթար Բենադադ Գ-ի դեմ:

4. Չոհաբերություն Կարմեղոս լեռան վրա (Գ Թագ. ԺԸ): *Երբ ավարտվեց Եղիայի խրատվելու ժամանակը՝ նա հայտնվում է Աքաաբի առջև ու նրա հարցին՝ «Այդ դ՞ն էս Իսրայելը տակնուվրա անողը», - պատասխանեց. «Ես չեմ Իսրայելը տակնուվրա անողը, այլ՝ դու և քո հոր տունը, որ, լքելով ձեր Տեր Աստծուն, գնացել եք Բահադիմին հարողների ետևից»:* Մարգարեն առաջարկում է ժողովրդական հավաք հրավիրել, որպեսզի մարդիկ վերջնականապես վճռեն՝ ո՞վ է ճշմարիտ Աստվածը՝ Մեղքողմը, թե Եհովան:

Կարմեղոս լեռան վրա Եղիայի և Բահադի մարգարեների «մրցակցություն» է տեղի ունենում: Մարգարեն ժողովրդին ասում է զայրալից խոսքեր. «Մինչև երբ պիտի կաղաք երկու ոտքով. եթե Տերը Աստված է, գնացեք Նրա ետևից, և եթե Բահադն է, նրա ետևից գնացեք»: Երկու հավատ ունենալ հնարավոր չէ: Չի կարելի երկու տիրոջ ծառայել: Հեթանոս մարգարեները կրակ խնդրելով զոհասեղանի համար՝ պարում էին, ճշում, իրենց կտրատում էին, մինչև որ արյուն էր հոսում իրենց մարմնից, ինչպես ընդունված է քանանացիների խելահեղուկյան հասցնող կրոնում: Բայց նրանց բոլոր ջանքերն իզուր էին: Եղիան խիստ ծաղրում է նրանց. «Բարձրաձայն կանչեցեք, չէ՞ որ աստված է, թերևս պաշտված է, կամ գործ է կատարում, կամ գուցե քնած է և պարթնի»: Այս խոսքերը երևան են հանվում հեթանոսների աստվածների մարդակերպության մասին հասարակ պատկերացումները:

Իսկ երբ հերթը հասնում է Եղիային՝ նա կանգնեցնում է զոհասեղան տասներկու վեմից՝ իբրև ողջ հինկտակարանյան Եկեղեցու խորհրդանիշ և կանչում է խոստումի Տիրոջը՝ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստծուն: Նա խնդրում է, որ Տերը հայտնվի կրակի մեջ՝ ինչպես մի ժամանակ Սինայում: Եվ որպեսզի Նրա հայտնությունը լինի հատկապես բացահայտ մարգարեն զոհասեղանի քարերի վրա ջուր է լցնում:

Եվ երբ երկնային հուրը (Աստվածահայտնության կերպարը) լափեց Եղիայի զոհը՝ ժողովուրդը սուրբ ահով բացականչում է՝ «Արդարև Տերն

Աստված է»: Օգտվելով իր հաղթանակից՝ Եղիան հաշվեհարդար է տեսնում հեթանոս քուրմերի նկատմամբ: Իբրև վաղ շրջանի մարգարեության ներկայացուցիչ՝ նա թուլյատրելի է համարում բռնություն գործադրել կրոնի գործերում: Նա դեռևս ապրում է «սրբազան պատերազմի» պատկերացումներով, որ գովերգում էր Դեբորան¹: Բայց արդեն գրող-մարգարեները կհրաժարվեն հավատի պաշտպանության այդ միջոցից: Իսկ Քրիստոս Եղիայի նախանձախնդրությունն ընդօրինակել ցանկացող աշակերտներին կասի. «Զգիտե՛ք ինչ հոգուց եք դուք» (Ղուկ. Թ 55):

Սպասվող անձրևը վերջապես ոռոգեց խանձված բլուրներն ու հովիտները: Հափշտակության մեջ տարված՝ Եղիան վազում է Աքաաբի ռազմակառքերի առջևից ընդհուպ մինչև Հեզրայել: Թագավորն արտասվում է ուրախությունից՝ համակված զղջումով: Բայց Հեզրայելը, լսելով Բահաղի մարգարեների կործանման մասին, սկսում է անողոքաբար վրեժ լուծել նրանց համար: Բոլոր մարգարեների որդիները նրա հրամանով սպանվում են: Եղիան ստիպված է երկրից փախչել հարավ՝ Բերսաբե, որ ենթակա էր հրեական թագավորին:

5. Եղիա մարգարեն Սինայում (Գ Թագ. ԺԹ 1-18): *Խորապես հուսահատված մարգարեն ուխտի է գնում դեպի Սինա (Քորեբ): Նա կարծես վերադառնում է իսրայելական հավատի ակունքներին, սուրբ լեռան, ուր հնչել են Տիրոջ խոսքերը: Մարգարեին թվում է՝ թե իր ամբողջ պայքարն անիմաստ էր, և նա մահ է ցանկանում, «Մախանձախնդրություն ունեցա ամենակալ Տիրոջ համար,- դիմում է նա Աստծուն,- քանի իսրայելացիները լքեցին ինձ, քո պահանջանքները կործանեցին և քո մարգարեներին սրակոտոր արեցին: Միայն ես եմ մնացել, և ինձ էլ փնտրում են, որ սպանեն»:* Եվ Տերը հայտնվում է մարգարեին: Սկզբում Սինայի վրա հողմ է բարձրանում հետո ժայռերը տատանվում են երկրաշարժից, ապա բռնկվում է կրակը: Բայց աստված-հայտնության այս սովորական նշանների մեջ չկա Տերը: Նա գալիս է «մեղմ օդի ձայնով», խաղաղ քամու փչմամբ, որ մեղմի կեսօրի տապը: Դա անսպասելի է, քանի որ Աստված միշտ հայտնվում է ամպրոպի ու փոթորկի մեջ, և մարգարեի հոգին իսկ նման էր այդ ահեղ տարերքներին: Եվ այս «մեղմ օդի ձայնով» աստված-հայտնությունը կանխատեսում է Աստծու նոր ըմբռնումը՝ ողորմած և մխիթարող: Երանելի Թեոդորիտոսի խոսքով՝ Տերը «լավագույն համարեց մարդկային ցեղը ղեկավարել հեզուսթյամբ և երկայնամտությամբ, թեև նրա համար դժվար չէ թե՛ կայծակ, թե՛ որոտ ուղարկել անմաքուրների վրա» (На книгу Царств, Вопр. 59): Եղիայի՝ Սինայի Աստվածահայտնության դրվագը նախապատկերն է նոր Կտակարանի:

Եղիան անսպասելի կամքին: Բայց, քանի որ նա ընկճվել էր ու երկմտել, ապա, մեկ անգամ թերահավատություն ցուցաբերած Մովսեսի նման,

¹ Ավարկ Դեբորայի և Բարակի երգից՝ Դատ. Ե գլուխ – խմբ.:

իր գործն ավարտին հասցնել չի կարող: «Իր փոխարեն» նա ծառայություն պիտի օժի Եղիսե մարգարեին: Այս երկու հին մարտնչողների՝ Մովսեսի ու Եղիայի ողբերգությունն առավել ակնհայտ կդառնա Թաբոր լեռան՝ Փառաց լույսի ներքո, երբ նրանք կկանգնեն աստվածային Մարգարեի առջև, որը կանցնի իր ուղին ընդհուպ մինչև տառապանք և մահ:

6. Եղիան որպես Փրկչի նախակարապետ: Եղիա մարգարեի հիշատակը սրբորեն նշում էր հինկտակարանյան Եկեղեցին: Նա իր կյանքի օրերին չէր կարող շատ բաների հասնել: Բայց Տերը նրան հանեց մահկանացուների ընդհանուր վիճակից՝ սպասելու Տիրոջ Օրվան (տես հտ. 1, § 33): Ինչպես Հովսեփոս Փլավիոսն է ասում՝ մարգարեն, Ենոքի նման, խուսափեց սանդարամետից: Նա սահմանված էր հոշակելու Ազատարարի գալուստը: Այդ մասին մարգարեացել էր Մաղաքիա մարգարեն (Դ 5): Հրեաները հավատում էին, որ հենց Եղիան կկատարի Մեսիայի օժումը որպես թագավոր: Իսկ երբ Հորդանան կգա «Եղիայի հոգով և զորությամբ»¹ մարդը՝ Քրիստոսի խոսքով՝ նոր Թեպրին՝ Քավիչի նախակարապետ:

Հարցեր կրկնության համար

1. Ինչպես էին ձևավորվում բաժանված թագավորությունների հարաբերությունները:
2. Ինչո՞վ բնորոշվեց Ամրիի կառավարումը:
3. Աբաարի ժամանակ ի՞նչն ուժեղացրեց հեթանոսության դիրքերը:
4. Ո՞րն էր Հեզաբելի նպատակը:
5. Ինչպիսի՞ք էին փյունիկյան ազդեցության սոցիալական հետևանքները:
6. Աստվածաշնչի ո՞ր պատումից է երևում, որ Եղիան հանդես է եկել միապետների ինքնիշխանության դեմ:
7. Եղիայից բացի Իսրայելում ո՞վ է հանդես եկել հեթանոսության դեմ:
8. Ինչի մասին են խոսում Եղիայի հրաշքները Սարեփայում:
9. Ինչպե՞ս է տեղի ունեցել «մրցակցությունը» Կարմեղոսում:
10. Հեզաբելն ինչպե՞ս պատասխանեց Բահադի մարգարեների մահապատժին:
11. Ի՞նչ իմաստ ունի Եղիայի Աստվածհայտնությունը Սիմայի (Զորեքի) վրա:
12. Եղիան ինչո՞ւ պիտի ծառայության օժեր ուրիշ մարգարեի:
13. Ո՞ր մարգարեն է խոսել Եղիայի մասին իբրև Մեսիայի նախակարապետի:
14. Նոր Կտակարանի սեմին ո՞վ կատարեց Եղիայի գործը:

¹ Ղուկ. Ա 17 – խմբ.:

§ 33. Եղիսե մարգարե

Մարտնչող մարգարեականության ավարտը (Դ Թագ. Ա-ԺԵ)

1. Եղիսեն՝ Եղիա մարգարեի աշակերտը: Սինայում Եղիա մարգարեն հրաման ստացավ իր փոխարեն մարգարե օծել և Դամասկոսում թագավոր օծել Հագայելին (Ագայելին), իսկ Իսրայելում՝ Հեուին (Հեուիահ): Անհայտ պատճառներով Եղիան կատարեց միայն առաջին պատվերը, իսկ մնացած երկուսը՝ Եղիսեն: Բայց Թեոդորիտոս Երանելին պարզաբանում է՝ քանի որ մարգարեն իբրև իր ժառանգորդ օծեց Եղիսեին, «ապա նրա միջոցով օծեց և մյուսներին: Որովհետև Եղիսեն նրա միջոցով ընդունելով մարգարեական շնորհ՝ պարզևր փոխանցեց և նրանց» (На книге Царств, вопросы, 60):

Եղիսեի անունը (եբր. עשילס – էլիշա) նշանակում է «իմ Աստված փրկություն է»: Նա հասարակ գյուղացի էր Գալիլեայից: Եղիան կանչեց նրան, երբ Եղիսեն իր դաշտում վար էր անում: Օծման փոխարեն Եղիան դիմեց խորհրդանշական քայլի՝ Եղիսեի վրա գցեց իր հովվական վերարկուն: Դա նշանակում էր, որ այդուհետ գյուղացու որդին դառնում է Եղիայի գործի շարունակող:

Աշակերտն սկզբում պարզապես ծառայում է ուսուցչին, և միայն այն բանից հետո, երբ Եղիսեն արժանացավ տեսնելու, թե ինչպես Եղիան խորհրդավոր կերպով հրե կառքով վերցվեց, նա սկսում է գործել Թեզբացու իշխանությունում և զորությամբ:

Եղիսե մարգարեի ծառայությունն Թ դարի երկրորդ կեսին է: Ի տարբերություն Եղիայի՝ նա վայելում է հարգանք և ճանաչում ամբողջ Իսրայելում ու դրա սահմաններից դուրս: Աստվածաշունչը նրան պատկերում է իբրև խիստ և կտրուկ մարդ, բայց ոչ կարեկցությունից զուրկ: Նա չի ձգտում դեպի անապատ, այլ մշտապես գտնվում է քաղաքների բնակիչների բազմության մեջ: Նրան տեսնում ենք Սամարիայում՝ պաշարման օրերին, իսրայելական բանակում (տե՛ս հտ. 1, § 33, Հավելված)՝ միապետների հետ զրուցելիս, նրան անվանում են «Իսրայելի կառք», այսինքն՝ ժողովրդի առաջնորդ: Բնորոշ է մարգարեի գործուն միջամտությունն Իսրայելի քաղաքական գործերին: Սիրաբի որդի Հեսուի խոսքով՝ Եղիսեն «իր օրում չի դողացել իշխանի առջև, և ոչ ոք չի գերազանցել նրան» (ԽԸ 13)¹:

2. Եղիսեն և մարգարների որդիները: Իր գործունեության հենց սկզբում Եղիսեն ճանաչվում է մարգարեների որդիների առաջնորդ (Դ Թագ. Բ 9-15): Նա այցելում է նրանց՝ ամբողջ երկրով սփռված համայնքները: Այդ համայնքները դատավորաց ժամանակների մարտնչող պրոֆետիկայի (հուն. προφητης – մարգարե) ժառանգներն են: Նրանց համար Աստծու ժո-

¹ Գրք. Սիրաբի գիրքն ավարտվում է ԽԲ գլխով:

ղովրդի թշնամիները Եահվեի թշնամիներն են: Նրանք շրջում են խմբերով՝ գրգռելով ժողովրդի խանգը և քարոզելով օտար աստվածների դեմ: Նրանց մարգարեությունները կատարվում էին երաժշտական հնչյունների ներքո՝ մտահափշտակության մեջ:

Եղիսեն ինքը շատ բաներում հիշեցնում է մարգարեների որդիներին: Երբ իսրայելացիների և հրեաների միացյալ զորաբանակում նրան հարցնում են ճակատամարտի ելքի մասին՝ նա կարգադրում է կանչել քնարահարի: «Երբ քնարահարն սկսեց նվագել, - գրում է աստվածաշնչական տարեգիրը, - Տիրոջ ձեռքը իջավ Եղիսեի վրա» (Դ Թագ. Գ 15):

Բացի անկախ մարգարեների որդիներից Սամարիայում կային և թագավորական՝ «Եահվեի մարգարեներ»: Այն ժամանակվա երկհավատություններից ստացված նրանք հաշտվում էին պալատում հեթանոս գուշակների առկայությանը: Սրանց գուշակությունները սովորաբար հօգուտ թագավորի էին (Գ Թագ. ԻԲ 6, Ժ-ԾԲ): Եղիսեն Եղիայի նման, այդ թագավորական մարգարեներին վերաբերվում էր խիստ բացասաբար (Դ Թագ. Գ 13): Պետք է նշել, որ թագավորական մարգարեություն երևույթը պահպանվեց ընդհուպ մինչև Երուսաղեմի անկումը: Պալատական մարգարեների դեմ պայքարում էին մեծ մարգարեները:

- Այսպիսով Թ դարում տեսնում ենք երեք կարգի մարգարեներ,
 - պալատական գուշակներ,
 - մարտնչող մարգարեների որդիներ, որ հանդես էին գալիս հեթանոսությունից դեմ,
 - Աստծու ընտրյալ այրեր (Եղիա, Եղիսե, Միքիա և ուրիշներ):

3. Եղիսե մարգարեն և այլազգիները: Մարգարեների որդիների նման Եղիսեն հայրենասիրաբար էր տրամադրված. նա ուրախանում էր իսրայելական թագավորների ռազմական հաղթանակներով և ողբում Իսրայելի պարտությունները: Բայց միևնույն ժամանակ նա բաց է օտարածիների նկատմամբ. նա մեծահոգություն է ցուցաբերում ասորի գերիների հանդեպ (Ձ 11-23), Աստծու հորդորով Դամասկոս է գնում և Հազայելին գուշակում է, որ նա կլինի ասորիների թագավոր (Ը 7-15), բժշկում է ասորի զորահրամանատար Նեեմանին և խստորեն պատժում իր ծառա Գեեզիին, որ վերջինս Նեեմանից վճար է վերցրել (Դ Թագ. Ե):

Եղիսեի այս քայլերով կյանքի է կոչվում ոչ միայն մեծ մարգարեների ուսմունքը, այլև իրականանում է Քրիստոսի խոսքը. «Արևելքից և արևմուտքից շատերը պիտի գան ու երկնքի արքայության մեջ սեղան պիտի նստեն Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ» (Մատթ. Ը 11):

Աստվածաշունչը հիշում է նույն դարաշրջանի ևս մի հայրենասեր մարգարեի՝ Հովնանին, Ամաթի որդուն (Դ Թագ. ԺԴ 25): Նա կանխատեսեց Իսրայելի՝ Թ դարավերջի հաղթանակները: Բայց հենց նա, ըստ ավանդության, ուղարկվեց Ասորեստան, որպեսզի այնտեղ ազդարարի ապաշխարության մասին: Հովնանի վերաբերյալ պատումը՝ ուղղված կրոնական ազգայնամուլության դեմ, ընկած է Հովնանի Գրքի հիմքում, որ գրված է Գերությունից հետո (տե՛ս հտ. 2):

4. Հեուի հեղաշրջումը (Դ Թագ. Թ-Ժ): 841 թ. Ամրիի հարստությունը՝ երկհավատության մեղավորը, տապալվեց: Խռովության ոգին եղավ Եղիսե մարգարեն: Նա այլևս չէր կարող հաշտվել Սամարիայում գտնվող Մեղքողմի կռատան և դրա բազում պաշտողների՝ փյունիկեցիների ու իսրայելացիների հետ: Հեզաբելը դեռ կենդանի էր և օգտվում էր իր որդի Հորամի հեղինակությունից, որ թագավորում էր Աքաաբի մահից հետո (853): Աստվածաշունչը բերում է շատ հուզիչ մի հատված տարեգրությունից, որ մանրամասնորեն նկարագրում է Հեուի հեղաշրջումը:

Ասորիների դեմ պատերազմի ժամանակ, որ մղում էին Իսրայելի և Հրեաստանի միապետները համատեղ, Հորամը վիրավորվել էր և ապաքինվում էր Հեզրայելում: Եղիսեն իր օգնականներից մեկին ուղարկում է բանակ՝ զորավար Հեուին թագավոր օծելու: Զինվորներն իսկույն նրան հռչակում են թագավոր, և ջոկատի գլուխ անցած՝ նա շտապում է Հեզրայել քաղաքը: Այնտեղ նա գործում է արագ և անողոք: Երկու թագավորները՝ Հորամն ու Հուդայի Օթոզիան սպանվում են տեղում, Հեզաբելին սեփական ծառան դուրս է նետում պատուհանից: Հետո սկսվում է հաշվհարդար Ամրի տան բազմաթիվ իշխանների նկատմամբ: Բոլորը՝ 70 հոգի, կոտորվում են, և նրանց գլուխները տանում են Հեուին: Կործանվում են ոչ միայն թագավորի հարազատները, այլև «նրա բոլոր մեծամեծներին, հարապատներին, քրմերին, այնպես որ նրանցից ոչ մեկին կենդանի չթողեց» (Ժ 11): Կոտորվում է նաև Հրեաստանի թագավոր Օթոզիայի ամբողջ շքախումբը: Սամարիայում Հեուն գործում էր նենգորեն ու դաժանորեն: Նա Մեղքողի երկրպագողներին հրավիրում է տաճար՝ իբր աստվածապաշտության և այնտեղ ոչնչացնում՝ բռնորդին, իսկ կռատունը հողին է հավասարեցնում:

Թվում էր՝ եկել է Եղիսեի կատարյալ հաղթանակը: Բայց նա անսպասելիորեն խզում է կապը Հեուի հետ, ինչպես առաջ՝ Աքիան Հերոբոլամի հետ: «Արբազան պատերազմի» գաղափարն սպառել էր իրեն: Բռնատիրողի դաժանություններն ամբողջ Իսրայելը մատնեցին սարսափի: Տերը նրանց դատապարտեց Օսեե մարգարեի միջոցով («Եվ ես Հեպրայելի արյան վրեժը պիտի պահանջեմ Հեուի տնից» – Ա. 4): Հավատը չի կարելի սերմանել

բռնությամբ: Հինկտակարանյան Եկեղեցին այդ մտքին հանգեց տառապալից փորձով: Չարի սանձումը, նույնիսկ հանուն բարի նպատակի, միայն շարիքն է ավելացնում:

Իբրև Հեուի մեղքի հատուցում «այդ օրերին Տերն սկսեց կոտորակել Իսրայելի բոլոր սահմանները, իսկ Ավայելը նրանց կոտորեց Իսրայելի բոլոր սահմաններում» (Ժ 32): Ազայելի թշնամական վերաբերմունքը Հեուի նկատմամբ թելադրված էր Ասորեստանի դեմ միավորվելու վերջինիս հրաժարումով: Սակայն բռնատերը նախընտրեց փրկագնվել ճոխ նվերով: Սալմանասար Երրորդի կոթողին մենք տեսնում ենք Հեուին՝ ձեռքերը տարածած ասորեստանյան թագավորի առջև, իսկ նրան հաջորդում է ազնվականների շարանը՝ ոսկու և արծաթի պարկերով:

Ծանրագույն հետևանքները խռովություն առաջացրեց նաև Հրեաստանի թագավորությունում: Օքոզիա թագավորի սպանությունը համարյա պիտի հանգեցներ Դավթի հարստության կործանման: Թագուհի-մայր Գոթողիան (եբր. Աթալիան), Ամրիի դուստրը, սպանելով բոլոր ժառանգորդներին, Երուսաղեմում թագավորում էր միանձնյա: Եվ հարստությանը նվիրված մարդիկ միայն հրաշքով փրկեցին մանուկ Հովասին՝ Օքոզիայի որդուն, որին յոթ տարի անց հաջողվեց թագավոր հռչակվել:

Եղիսեի ձախողումը՝ որ դիմել էր ռազմական հեղաշրջման, հին մարտնչող պրոֆետիզմի մայրամուտ էր նշանակում: Այն իր դարն ապրել էր իբրև դատավորաց, «սրբազան պատերազմի», մարգարեների որդիների ու Դեբորայի ժամանակների մնացուկ: Այսուհետ հավատի մաքրության համար պայքարն այլևս երբեք չպետք է վերածվի պատերազմի:

Յարգեր կրկնության համար

1. Ինչպե՞ս կատարվեցին Եղիային տրված բոլոր երեք հրամանները:
2. Ինչպե՞ս եղավ Եղիսեի կոչումը, և ո՞վ էր նա մինչ կանչվելը:
3. Եղիսեի կենսակերպն ինչո՞վ էր տարբերվում իր ուսուցչի կենսակերպից:
4. Ո՞ր համայնքներն էին Եղիսեին համարում իրենց առաջնորդը:
5. Թ՞ դարում մարգարեների ի՞նչ երեք դաս կային Իսրայելում:
6. Ի՞նչ երեք իրադարձությամբ է բնութագրվում Եղիսեի վերաբերմունքն օտարազգիներին:
7. Ո՞վ էր Յովսանը:
8. Ի՞նչպես կատարվեց Յեուի հեղաշրջումը:
9. Ի՞նչ հետևանքներ ունեցավ դա:
10. Ինչի՞ հետ է կապված մարտնչող պրոֆետիզմի անկումը:

§ 33-ի Հավելված

Եղիսե մարգարեն իսրայելական բանակատեղիում էր, երբ հարձակվում էին Մովաբի վրա: «Մովաբի Մոսա արքան ոչխարի հոտերի տեր էր, և Իսրայելի արքային հարկ էր տալիս հարյուր հապար մաքի ու հարյուր հապար նրբագեղմ խոյ: Աքաաբի մեռնելուց հետո Մովաբի երկրի արքան ըմբոստացավ Իսրայելի արքայի դեմ» (Դ Թագ. Գ 4-5): Յորամը, Հրեաստանի Օքոզիա թագավորի և Եզոմի թագավորի հետ միասին ելավ Մոսայի դեմ՝ նպատակ ունենալով հնազանդեցնել նրան: Եղիսեն կանխագուշակեց Մոսայի պարտությունը: Վերջինիս զորքն իսկապես ջախջախվեց, բայց թագավորն ինքն ամրացավ բերդում: Տեսնելով, որ չի կարող դիմանալ պաշարմանը՝ նա պարսպի վրա տարավ իր ժառանգորդին և զոհեց Քամոս Աստծուն: Դա մեծ կսկիծ պատճառեց իսրայելացիներին, և նրանք նրանցից երես դարձնելով պաշարումը վերացրին:

1868 թ. պրուսական միսիոներ Ֆ. Ա. Կլյայնն Անդրհորդանանում գտավ Մոսայի հուշարձանը՝ կապված այդ իրադարձություններին: Հուշարձանը վնասված էր, բայց կարևոր մասը պահպանվել էր: Դա հնագույն վիմագրություններից էր՝ կատարված հին եբրայական (փյունիկյան) գրով: Ինչպես դա անում էին բոլոր ժամանակների տիրակալները՝ Մոսան իր փրկվելը ներկայացնում է իբրև լիակատար հաղթանակ:

«Ես՝ Մովաբի դեբոնացի արքա Մոսան, որդին Քամոսկանի... Հայրն իմ թագավորեց Մովաբում երեսուն տարի, իսկ նրա մահվանից հետո թագավորեցի ես և կառուցեցի Քամոսի այս սրբությունը Կերիհոտում (Աստվածաշնչում՝ Կիր-Հարեսեր)¹, սրբավայր ապաստանի համար, քանի որ Քամոսն ինձ փրկեց իմ բոլոր հալածողներից և ինձ իշխանություն տվեց իմ թշնամիների վրա: Ամրին Իսրայելի թագավորն էր և ճնշում էր Մովաբը երկար ժամանակ, քանզի Քամոսը զայրացած էր իր իսկ երկրի դեմ: Իսկ նրա (Ամրիի) որդին հաջորդեց նրան: Եվ նա ևս ասաց. «Ես կճնշեմ Մովաբը»: Նա այս բանն ասաց իմ օրերին: Բայց ես հաղթահարեցի նրա տունը: Եվ Իսրայելը կործանվեց առհավետ... Ես Կերիհոտում խրամներ ունեմ՝ փորված իսրայելական գերիների ձեռքով...» (J. B. Pritchard. The Ancient Near East: An Anthology of Texts and Pictures, vol. 2, p. 209):


Ինչպես պատմաբաններն են ենթադրում՝ Իսրայելի կործանման խոսքերն այստեղ ակնարկում են Հեռուի հեղաշրջումը և նրա հնազանդվելը Ասորեստանի առջև: Մոսայի հուշակոթողը թվագրվում է Հեռուի իշխանության առաջին տարիներով (մոտ. 840 թ.):

¹ Մովաբի մայրաքաղաքը. հայերենում չի նշվում այդ անունը, տե՛ս Դ Թագ. Գ 25, Երեմ. ԽԸ 31, 36, Եսայի ԺՁ 7 – խմբ.:

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՄՆ Ա

Մարգարենների դարաշրջան



Ա

ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՁԱՆ

ՄԻՆԶԲԱԲԵԼՈՆՅԱՆ ԳԵՐՈՒԹՅԱՆ
ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐՔԵՐԸ
Ք. ծ. ա. Ը-Ձ դարեր

§ 1. Մարգարեական գրքեր:
Մարգարեականության էությունը

1. Մարգարեական գրությունները, Օրենքից հետո, Հին Կտակարանի երկրորդ հիմնարար գրքերն են: Հրեական Սուրբ Գրքում սրանք հաջորդում են Հին մարգարեներին և կոչվում են Ուշ մարգարեներ: Ժողովածուն երկու բաժին ունի՝ Մեծ և Փոքր մարգարեներ: Այս անվանումները պայմանավորված են գրքերի ծավալով: Մեծ մարգարեների շարքից են Եսայու, Երեմիայի, Եզեկիելի և Դանիելի (վերջինս հրեական Սբ. Գրքում «Գրություններ» ժողովածուի մեջ է) գրքերը: Փոքր մարգարեներում ներառված են Օսեե, Հովել, Ամովս, Աբդիու, Հովնան, Միքիա, Նավում, Ամբակում, Սոփոնիա, Անգե, Զաքարիա և Հոսիաբիա մարգարեների գրքերը: Կանոնի մեջ չմտած գրքերից «Մարգարեներին» են հարում Բարուքի գիրքը և Երեմիայի թուղթը¹: Ք. ծ. ա. 200 թվականին ժողովածուն արդեն ստացել էր իր վերջնական տեսքը:

2. Մարգարեական գրքերի գրական առանձնահատկությունները: Սրանք Հին Կտակարանի առաջին «հեղինակային» ստեղծագործություններն են, այսինքն գրեթե ամբողջությամբ պատկանում են նրա գրչին, ում անունը հիշված է վերնագրում: Սակայն սկզբնական շրջանում այս գրքերը կարճ քաղվածքների փոքրիկ գալարներ էին, որ կարելի էր հեշտությամբ յուրացնել ու մտապահել: Ավելի ուշ մարգարեների աշակերտներն այս գալարներն ի մի հավաքեցին և ներածականներ ու հեղինակների մասին տեղեկություններ կցեցին: «Մարգարեների խոսքերն այն հերթականությամբ են դասավորված, որպես գտել է հավաքողը» (Թեոդորետոս երն.): Ներկայումս բնագրերի ժամանակագրական հերթականությունը ճշտելու հարցով զբաղվում է աստվածաշնչագիտությունը:

¹ Հայերենում չիք – խմբ.:

Իրենց գրքերում մարգարեները կիրառում են գրական տարբեր տեսակներ (ժանր), որ կազմավորվել են դարերի ընթացքում.

- ա) մերկացնող-բացահայտող խոսք,
- բ) գղջման և գոհաբանական սաղմոսներ,
- գ) վախճանաբանական և մեսիական մարգարեություններ,
- դ) ուղերձներ,
- ե) առակներ,
- զ) ինքնակենսագրական վկայություններ,
- է) աղետների մասին կանխագուշակություններ և ողբեր:

Մարգարեական գրքերի մեծագույն մասն աստվածաշունչ պոեզիայի երկեր են, որ ստեղծվել են գրական որոշակի օրինաչափությամբ (տե՛ս § 8): Մարգարեների լեզուն և ոճը Սբ. Գրքի մեջ դասական են համարվում:

3. Մարգարեներն աշխարհիկ և հոգևոր պատմության համատեքստում: *Մարգարեների մեծամասնության գործունեության ժամանակը որոշվում է համեմատաբար ճշգրիտ կերպով, քանի որ գրքերի կազմողները նշում էին, թե ո՞ր թագավորների ժամանակ է ծառայել այս կամ այն մարգարեն: Ժամանակագրական մի շարք տվյալներ կարելի է գտնել նաև բնագրերում: Մարգարե-գրողների շրջափուլը չորս հարյուրամյակ է ընդգրկում (Ը-Ե դդ.): Ե դարից սկսյալ մարգարեական շնորհն ավելի ու ավելի հազվագյուտ է դառնում: Իսկ արդեն Ք. ծ. ա. Բ դարում Իսրայելում հստակ գիտակցում էին, որ լուել է մարգարեական ձայնը: Մարգարեական ծառայությունը վերածնվեց միայն նորկտակարանյան ժամանակներում՝ Հովհաննես Մկրտչի գալստյամբ:*

Մարգարե-գրողները հրեական երկու պետությունների կարճատև ծաղկման, իսկ հետո նաև վախճանի (722 թ.՝ Եփրեմ և 587 թ.՝ Հուդա) վկայներն էին: Նրանք չդադարեցին առաջնորդել ժողովրդին Գերության շրջանում և շարունակեցին ծառայել Բաբելոնից վերադարձի առաջին շրջանում:

Այս դարերի ընթացքում մարգարեները պայքարում էին. ա) երկհավատության, բ) կրոնական ձևամոլության և կեղծ բարեպաշտության, գ) համաշխարհային կայսրություններին ընդդիմանալու եղանակով երկրի քաղաքականությունը վարելու փորձերի դեմ: Նրանք հանդես էին գալիս հանուն աստվածահայտ ուսմունքի մաքրության, ինչպես և ժողովրդի բարոյական գիտակցության խորացման օգտին: Նրանց քարոզը սևեռված էր վախճանաբանական և մեսիական ապագայի վրա:

Մեծ մարգարե-գրողները հինիսրայելյան տեսանողների և մարգարեների որդիների ժառանգորդներն էին: Սակայն, ի տարբերություն իրենց նախորդների, նրանք հեռացել էին «սրբազան պատերազմի» գաղափարնե-

րից. նրանց աստվածճանաչողությունը մի նոր, հինկտակարանյան կրոնի առավել բարձր աստիճան էր: Եթե նախկին մարգարեներն ինչ-որ չափով հիշեցնում էին հարևան երկրների տեսանողներին, ապա Ամոսն ու Նաային բացառիկ երևույթներ են Հին աշխարհում:

Մարգարեներն ապրում էին հոգևոր և փիլիսոփայական զարթոնքի շրջանում, որ արդեն սկիզբ էր առել աշխարհի գրեթե բոլոր քաղաքակիրթ երկրներում: Կոպիտ հեթանոսությունը փոխարինելու եկան համաշխարհային կրոններն ու փիլիսոփայական համակարգերը, որ ցայսօր չեն կորցրել իրենց ազդեցությունը:

Յիմնական հոգևոր-փիլիսոփայական ուսմունքները

(Ք. ծ. ա. առաջին հազարամյակ)

<p>Մոտ. Է-2 դդ. ԻՐԱՆ</p>

	<p>են՝ ԴԱՕ-ԴԵ ՑԶԻՆ և ՉԺՈՒԱՆ-ՑԶԻՆ: ԿՈՆՖՈՒՑԻՈՍԻ (551-479) ուսմունքը ավելի շատ բարոյափիլիսոփայական և քաղաքական ուսմունք էր, քան կրոն: Հիմնադիրն ինքը երկրպագում էր Երկինք անվամբ աստծուն, սակայն իր կարծիքով, մարդը ոչինչ չգիտե Նրա մասին: Մարդկանց խնդիրն է մարդասիրական հասարակության ստեղծումն է, որ հիմնված կլինի առողջ ավանդույթների, բարեկրթության և ծեսերի վրա, որ կոչված են ամրապնդելու պետությունը:</p>
--	---

4. Մարգարեական Հայտնության առանձնահատկությունները:

Մարգարեների քարոզներում եկեղեցու համար առանձնակի կարևորություն ունեն Մեսիայի՝ Քրիստոսի գալստյան մասին մարգարեությունները: Սրանից բացի մարգարեները հաճախ հանդես էին գալիս իբրև տեսանողներ, որ կանխատեսում էին ապագայում սպասվող իրադարձությունները: Սակայն սխալ է կարծելը, թե մարգարեական ուսմունքն սպառվում է ապագայի կանխատեսություններ:

Մարգարեների քարոզներից շատ բաներ՝ չնայած վերաբերում են Հին Կտակարանին, պահպանում են իր անանց արժեքը նաև Նորում: Աստծու հետ հաղորդակցվելու նրանց անկրկնելի փորձը, վերաբերմունքը հավատքին և բարեպաշտությանը, նրանց բարոյական միաստվածության առանձնահատկությունները և ուսմունքը պատմության մասին, Բ. Ա Տուրակի պնդմամբ «լիիրավ կերպով կարելի է աստիճան համարել դեպի քրիստոնեություն»: Այն, ինչի դեմ պայքարում էին մարգարեները՝ սոցիալական անարդարություն և բռնատիրություն, ազգային սնափառ մեծարանք և կեղծ բարեպաշտություն, տակավին չեն վերացել: Այս իսկ պատճառով մարգարեից գրքերում «ամփոփված ուսմունքը բոլոր ժամանակներին է վերաբերում» (Պ. Չաադակ):

Բուն «մարգարե» բառը (եբր. מָרְאָה־נָבִיא – ՆԱՎԻՔ, հուն. προφήτης) միայն ապագան կանխատեսող չի նշանակում: «ՆԱՎԻ» եզրը կարելի է թարգմանել նաև կանչված (Աստծու կողմից), իսկ հունարեն «προφήτης»-ն՝ իբրև մարդ, որ խոսում է մի ուրիշի անունից (այս պարագային՝ Աստծու):

Մարգարեներն Աստծու կամքն արտահայտողներն էին, կամք, որ հայտնվել էր նրանց հոգով: Մարգարեականության կարևորագույն գծերից մեկը նրանց ոգեշնչման աստվածային աղբյուրն է: Նրանք ծառայության էին կոչվում երբեմն իրենց համար անսպասելի, երբեմն իրենց կամքին հակառակ: Է-ի հրամանը մարգարեներն ընդունում էին իբրև խորհրդավոր զորություն, որ մարդուն հաղթելով նրա շուրթերին էր դրոշմում Աստծու խոսքը: Գերբնական ներշնչմամբ բռնկված՝ նրանք հանդգնում էին խոսել ուղղակի Տիրոջ անունից: Նրանց շատ մարգարեություններ սկսվում են «Այսպես է ասում Տերը» բառերով: Հին ժամանակների մարգարեները, ասում է առաքյալը, ոչ

Թե ըստ մարդկանց կամքի էին գալիս, այլ Աստծու սուրբ մարդիկ խոսում էին Սուրբ Հոգուց մղված (Բ Պետր. Ա 21):

Տեսանողները բնակչության տարբեր խավերից էին սերում. կային շինականներ, որպես Ամոսն ու Միքիան, քահանաներ, ինչպես Եզեկիելը, տաճարական տեսանողներ, ինչպես Նավումը, և արքայի մերձավորներ, ինչպես Եսային: Սակայն նրանք բոլորը, միշտ չէ, որ թողնելով իրենց առօրյա զբաղմունքները, դառնում էին երկնային կամքի ազդարարողը: Նրանք պարզորոշ զգում էին, որ այն ինչ բարձրաձայնում են, չի բխում իրենցից, այլ Աստծուց է:

«Ոմանք ասում են,- գրում է Բարսեղ Մեծը,- Թե նրանք մարգարեանում էին հափշտակության մեջ, որովհետև Հոգին մթազնում էր մարդկային միտքը: Սակայն աստվածային խոստումն իջնելուն հակառակ՝ աստվածաշունչ անձը դառնում է հմայված, այնպես որ նա ... դուրս է գալիս իրեն բնորոշ գիտակից վիճակից» (Толкование на Исайю, Предисловие): Մարգարեները նման չէին հեթանոս գուշակներին և արևելյան խորհրդապաշտներին, որ մտահափշտակության մեջ կորցնում էին սեփական անձը: Մարգարեների գիտակցությունն ու միտքը մշտապես պայծառ են, նույնիսկ երբ կանգնում են Աստծու առջև: Եվ սա արտացոլվել է նրանց երկերում: Այստեղ նկատելի են նրանց շնորհների, բնավորությունների և կենսափորձի դրոշմները: Աստվածային հայտնությունը ոչ թե «թելադրվում» է մարդկանց, այլ բեկվում է առաքվածի անձի մեջ:

Երբեմն մարգարեները ուժասպառ էին լինում ծառայության բեռի տակ. նրանց ամենևին հեշտ չէր աղետներ կանխատեսելն ու մարդկանց մեղքերն մերկացնելը: Սակայն նրանք մինչև վերջ հավատարիմ էին մնում իրենց կոչմանը:

5. Օրենք, ընտրությունն ու խոստումը մարգարեության մեջ: Ռուս աստվածաբան Մ. Մ. Տարեկն ընդգծում էր, որ «անզուգական բարձր ու մաքուր հրեական միաստվածությունը ... մարգարեական քարոզի առավելագույն արդյունքն է» (Основы христианства. Серг. Посад, 1908, кн. 2, էջ 91): Այս առիթով ԺԹՊ դարի աստվածաշնչագիտությունը հակված էր գերազանհատելու մարգարեական քարոզի նորոգյթը: Այն ներկայացվում էր իբրև գրեթե նոր կրոն, որ փոխարինեց կոպիտ և պարզունակ հինը: Սակայն հենց մարգարեական գրքերից բացահայտ է, որ նման տեսակետը հիմնավորված չէ: Եվ իրապես մարգարեների կրոնաբարոյական գիտակցությունը էականորեն բարձր էր նախորդ դարաշրջանների համեմատ, բայց ավանդույթի խզում չի եղել: Այն սկիզբ է առել Աբրահամի Ուխտով և Մովսեսի Օրենքով, և արդեն անդրանիկ մարգարեները՝ Ամոսը և Օսեեն, հիմնվում էին Օրենքի վրա, որ նախապես տրվել էր Աստծու ժողովրդին (Օսեե Դ 6, Ը 1, Ամ. Բ 4): Այսպիսով նրանք հանդես

են գալիս ոչ որպես նոր կրոնի քարոզիչներ, այլ իբրև բարեփոխիչներ, որ վերածնունդ և շարունակում են Մովսեսի գործը: Տասնաբանյայի բարձրագույն ուսմունքը, որ յուրացված էր ոչ լրիվ, դասական մարգարեականության մեջ գտավ իր առավել կատարյալ արտահայտությունը:

Հենց Տասնաբանյայից է բխում մարգարեների վերաբերմունքը բարոյականության և սոցիալական արդարության նկատմամբ՝ իբրև հավատքի պահանջների: Նրանց համար «խենեղը»-ը՝ գթությունը, վեր է ողջակեզից ու զոհից: Զոհաբերությունը առանց ապաշխարության, ընծաները, որ բերվում էին Աստծու Սեղանին առանց բարոյական մաքրագործման, սոսկ վիրավորում են Աստծուն:

Մերկացնելով հեթանոսությանն արված զիջումները՝ մարգարեները բարոյական չարիքը հավասարեցնում են կռապաշտությանը: Թուլերին ճնշելը, բռնությունը, սուտն ու անարդարությունը նույնպիսի դավաճանություն են Ուխտի հանդեպ, ինչպես «օտար աստվածներին» պաշտելը:

«Մարգարեների սոցիալական քարոզների յուրահատկությունը,- նկատում է Ս. Բուլգակովը,- այն է, որ կարելի է նաև սոցիալական բարոյականություն անվանել, դա նրանց վերաբերմունքն է տնտեսության հարցերին իբրև բարոյական խնդիրների, և բարոյականության տեսանկյունից նրանց գնահատականը սոցիալական կյանքին: Շնորհիվ իրենց սոցիալական բարոյախոսության, ընդ որում կրոնական խորությունամբ, նրանք տնտեսության մեջ տեսնում են ոչ միայն սոցիալական հարաբերություններ, այլև սոցիալական ճշմարտություններ» (Очерки по истории экономических учений. М., 1918, էջ 25):

Բարոյական բարձր պահանջները, որ մարգարեները ներկայացնում էին Իսրայելին, բխում են հինկտակարանյան Եկեղեցու ընտրյալ լինելու հավատից: Մարգարեները չեն կասկածում, որ է-ն ընտրել է Իսրայելն Իր նախախնամական նպատակների համար: Սակայն ընտրյալ լինելու հանգամանքը նրանք ոչ թե առավելություն էին համարում, այլ կրկնակի պատասխանատվություն Աստծու առջև: Աստծու խոստումներն անբեկանելի են, սակայն այս կամ այն՝ որոշակի սերնդի համար դրանք իրականանում են միայն ու միայն Ուխտը պահելու դեպքում:

6. Մարգարեներն ու պաշտամունքը: Մարգարեների խիստ քննադատությունները ծեսերի և պաշտամունքի հանդեպ կարող են տպավորություն ստեղծել, թե նրանք հերքում էին հանրային աստվածպաշտությունը: Սակայն իրականում մարգարեականության և պաշտամունքի միջև սկզբունքային անհամաձայնություն չկար: «Սկզբնապես սրբության գաղափարն առաջ տանելով՝ գլխավորապես ծիսական մաքրության տեսանկյունից, հինկտակարանյան աստվածպաշտությունը, ինչպես և մարգարեական քարոզը, նպաստում էին Իսրայելում սրբության իդեալի ձևավորմանը

որպես բարոյական մաքրություն, որը պահպանվում է Մովսիսական հին օրենքի պատվիրաններով» (прот. А. Князев. Пророки, գլ. 7): Մարգարեները սովորաբար քարոզում էին սրբարաններում, և նրանց խոսքը տաճարական ծեսի մաս էր կազմում: Մարգարեների մերկացումներն ուղղված էին Աստծու պաշտամունքի հանդեպ միակողմանի մոտեցման դեմ, երբ զոհաբերություններն ու ծեսերը փոխարինում էին անկեղծ հավատն ու բարոյականությունը: Ինչպես արդեն նշել ենք, մարգարեների մեջ կային նաև քահանաներ՝ Երեմիան ու Եզեկիելը, հնարավոր է նաև Օսեեն, Նավումը և Ամբակումը:

Իրենց քարոզներն ասելիս՝ շատ մարգարեներ խորհրդանշական գործողությունների էին դիմում, որոնք կոչված էին բառերից ավելի խորը մխրճվելու ժողովրդի գիտակցության ու հիշողության մեջ (սպասքի փշրում, շղթաների կրում և այլն): Խորհրդանշական գործողությունների շարքին կարելի է դասել նաև մարգարեների՝ երբեմն իրենց որդիներին շնորհած անունները. դրանք խոսում էին Աստծու ժողովրդին սպասվող ճակատագրերի մասին: Տեր Հիսուսն Ինքը, Մարգարե լինելով, նույնպես խորհրդանշական գործողությունների էր դիմում (Թզենու անիծելը, Երուսաղեմ մուտքը ավանակին նստած և այլն):

7. Մարգարեների ուսմունքը պատմության վերաբերյալ: Մարգարեները հավատում էին, որ Աստված գործում և բացահայտում է Իրեն պատմական իրադարձությունների ժամանակ: Այս իսկ պատճառով նրանք գործուն մասնակցություն էին ունենում իրենց ժամանակակիցների կյանքում: Նրանք դաստիարակներ էին ժողովրդի համար, խորհրդականներ՝ արքաների, ժողովրդի ներկայացուցիչներ էին և հոգևոր առաջնորդներ: Սակայն ի տարբերություն իրենց նախորդների, նրանք քաղաքական հեղաշրջումների չէին դիմում (ինչպես Աբիան, Նաթանը, Եղիսեն): Նրանց ծառայությունը միայն կրոնական էր:

Աստծու ձեռքը նրանք տեսնում էին ոչ միայն հինկտակարանյան Եկեղեցու կյանքի իրադարձություններում, այլ նաև հեթանոս ժողովուրդների պատմության մեջ, որոնք նույնպես ենթարկվում են Բարձրագույն Կամքին:

Համաշխարհային ուսուցիչների մեծ մասի համար տիեզերքի գոյությունն ու մարդու կյանքը ներկայանում են իբրև անփոփոխ կամ որպես հավերժական վերադարձի պտույտով: Եվ միայն աստվածաշնչյան մարգարեների համար պատմությունն իրադարձությունների մի շղթա է, որին Աստված ուղղորդում է որոշակի նպատակի: Մարգարեների տեսության համաձայն, պատմությունը կավարտվի Աստծու Թագավորությունով, վերափոխված աշխարհում, ուր կկործանվեն ամեն խավար ու չար, և կհաղթանակի աստվածային ներդաշնակությունը: Նրանք հավատում էին, որ Աստծու դատաստանը մշտապես հասնում է անազնիվներին ու չարագործներին, իսկ վերջին օրերին արարչության միջից չարն ամբողջովին կվերանա: Երկրում նոր

Եղեմ կհաստատվի, կվերանան ճնշումներն ու պատերազմները, կվերանա մահը, և բնությունը կենթարկվի մարդուն: Եվ սա կկատարվի, երբ Աստված Ինքը կհայտնվի մարդկանց մեջ:

8. Մարգարեություններ Քրիստոսի մասին: Մարգարեություններում ոչ թե մարեց, այլ առավել խորացավ Դավթին տրված խոստման հանդեպ հավատը: Թագավոր-Մեսիան երկիր կգա որպես Աստծու կամքն իրականացնող: Եվ նա գործելու է ոչ թե արտաքին զորությունմբ, այլ արդարությունմբ, ճշմարտությունմբ և Հոգով: Նրա խոսքը ժողովուրդներ կզերի: Որոշ մարգարեներ անգամ մոտենում են տառապող Մեսիայի խորհրդին: Նրանց տրված էր կանխատեսել շատ բաներ Քրիստոսի կյանքից ու ծառայությունից:

Սակայն Աստվածամարդության խորհուրդը ծածկված մնաց մարգարեների համար: Սկզբում դեռևս Մեսիային նրանք պատկերացնում էին իբրև երկրային թագավոր: Այս գաղափարից հրաժարվելով՝ Օծյալի աշխարհ գալստյան և Աստծու հայտնություն մեջ մարգարեները երկու զուգահեռ իրադարձություն էին տեսնում: Եվ միայն Նոր Կտակարանում բացահայտվեց Աստվածահայտնության և Մեսիականության միասնությունը:

Պատմական կանխատեսման շնորհը մարդուն վեր է հանում ժամանակային սահմաններից: Սրանից է ծագում մարգարեությունների ժամանակագրական հեռանկարի կրճատումը: Տիրոջ Հոգով առաջնորդվող տեսանողն ապագան ավելի «մոտ» էր տեսնում: Այն, որ աստվածային հայացքի ներքո «ինչ որ լինելու է շուտով» (Հայտն. Ա 1), մարդկային չափանիշներով կարող է կատարվել հազարավոր տարիներ անց, որովհետև Աստծու համար հազար տարին ինչպես մեկ օր է (Սաղմ. ՁԹ 5, Բ Պետր. Գ 8): Այս է պատճառը, որ Քրիստոսի գալստյան մասին աստվածաշնչյան մարգարեների կանխատեսումները միահյուսվում են պատմության վախճանին և Աստծու Թագավորության մասին վախճանաբանական լրումի հետ:

9. Մարգարեականություն և կեղծ մարգարեներ: Իսրայելում և Հուդայում մեծ մարգարեների կողքին մշտապես գործել են զգալի թվով արքայական մարգարեներ, որոնք պալատական և տաճարի սպասավորներից էին: Ամենից հաճախ աստվածաշնչյան մարգարեները դրանց ընդդիմադիր էին, քանի որ համարում էին, որ նրանք սուտն են ազդարարում: Կեղծ մարգարեները ձգտում էին հաճոյանալ միապետներին ու ամբոխին՝ հաղթանակ և հաջողություն գուշակելով այն պահերին, երբ երկնային պատիժ էր պետք ակնկալել: Դեռևս Երկրորդ Օրինացում Իսրայելը զգուշանում էր կեղծ մարգարեներից (ԺԳ 1-6): Նրանց ինքնահուշակության¹ հատկանիշները

¹ Ուսերենը օգտագործում է *самосвятство* բառը, որ նշանակում է *ինքն իրեն հռչակել եպիսկոպոս – խմբ.:*

հեթանոսության հետ փոխհամաձայնությանը պատրաստ լինելն ու մարգարեականության ավանդներից հրաժարումն էր, որն արտահայտվում էր ժողովրդի մեղքերի հանդեպ անհաշտ լինելու մեջ:

Օսեեն, Յսային և հատկապես Երեմիան բոցավառ հայրենասերներ էին և երբեք հաշվի չէին առնում համաքաղաքացիների ազգային զգացմունքները, երբ հարկ էր լինում խարազանել Ուխտին դավաճանելը: Նրանց քարոզներն այնքան համարձակ էին, որ ավելի հզոր իշխանության դեպքում և ուրիշ հանգամանքներում նրանց դավաճան և ազգի թշնամի կհամարեին: Նման մեղադրանքներ առաջադրեցին Երեմիային, որ և բանտ նետվեց Երուսաղեմի ու Տաճարի կործանումը կանխատեսելու համար: Սակայն շնչին բացառությամբ մարգարեները հարաբերական ազատություն էին վայելում: Նրանց համար Աստուծու Կամքը վեր էր ամեն ինչից, քանի որ միայն Ուխտին հավատարիմ լինելու մեջ էին նրանք տեսնում երկրի բարեկեցությունը և ժողովրդի կոչումը: Եվ հակառակը՝ կեղծ մարգարեները պալատական քծնողներ էին, որ պատրաստ էին խոսել «թագավորի սրտին համապատասխան»:

10. Մարգարեությունը Նոր Կտակարանում: Մարգարեական շնորհը վերածնվում է Նոր Կտակարանում: Հին մարգարեների զորությունները և ոգով է հանդես գալիս Հովհաննես Մկրտիչը, և Ինքը՝ Հիսուս Քրիստոս, երկրային սպասավորությունը նույնպես իրագործում է իբրև Մարգարե:

Վաղբրիստոնեական համայնքներում ամենուր մարգարեներ են ի հայտ գալիս: Հինկտակարանյան մարգարեների պես նրանք խորհրդանշական գործեր են կատարում, կանխատեսելով գալիք իրագարծությունները (Գործք ԺԱ 28, ԻԱ 10-11), շրջում քաղաքից քաղաք (Գործք ԺԱ 27):

Եկեղեցին մարգարեությունը մեծագույն շնորհ է համարում (Ա Կորնթ. ԺԴ 1), որ տրվում է ընտրյալներին (Ա Կորնթ. ԺԴ 29): Սակայն, ինչպես վկայում է Պետրոս առաքյալը, Քրիստոսի գալստյամբ և Սուրբ Հոգու շնորհմամբ իրականանում է Հովել մարգարեի միջոցով տրված խոստումը. բոլոր հավատարիմներին մարգարեության շնորհ կտրվի (Գործք Բ 16-21, Յովել Բ 29): Սա արտահայտվում է նրանով, որ յուրաքանչյուր քրիստոնյա կարող է «լցվել¹ Սուրբ Հոգով»: Եվ արդեն Դրոշմի խորհրդի ժամանակ նոր մկրտվողներին շնորհվում է Սուրբ Հոգով լցվելու² երաշխիքը: Սակայն մարգարեական շնորհի լրումը իրականացնելու համար սխրանք է հարկավոր: Սերաֆիմ Սարովսկին Սուրբ Հոգով լցվելը¹ «քրիստոնեական կյանքի նպատակն» էր

¹ Բնագրում օգտագործված է հին սլավոներեն *святость* բառը, որ ուղղափառ աստվածաբանության մեջ բազմիմաստ է և գրեթե անթարգմանելի: Նշանակում է ամեն ինչ հանձնել Ս. Հոգու իշխանության՝ մեր միտքը, զգացումները, գործողությունները ...: Թարգմանել ենք լցվել բառով – խմբ.:

² Տե՛ս նախորդ հղումը – խմբ.:

անվանում: Հստ Ա. Կնյազևի՝ սրբերի անցած ուղին «վկայում է, որ հոգևոր որոշակի աստիճաններում մարդուն կարող են հայտնի և հասկանալի դառնալ Աստվածային Նախախնամության՝ դրա մասին տրված սահմանումները... Սա ևս համընդհանուր մարգարեության շնորհներից է»: Մարգարեին հայտնի են Աստուծո ճանապարհները: Եվ հին մարգարեների նմանությամբ հավատացյալները կարող են հասու լինել աստվածային կամքին, որովհետև նրանք այլևս ստորուկ չեն, այլ զավակներն են Արքայության (Յոզ. ԺԵ 15):

Չարքեր կրկնության համար

1. Ինչպես են բաժանված մարգարեների գրվածքները:
2. Ինչո՞վ են պայմանավորված այդ բաժանումների անվանումները:
3. Ինչպես ստեղծվեցին մարգարեական գրքերի ժողովածուները:
4. Գրական ի՞նչ տեսակներ են կիրառված մարգարեական գրքերում:
5. Պատմության ի՞նչ շրջան է ընդգրկում մարգարեների սպասավորության ժամանակը:
6. Պատմական ի՞նչ կարևոր իրադարձություններ տեղի ունեցան մարգարեների ժամանակներում:
7. Ինչի՞ դեմ էր ուղղված մարգարեական քարոզը:
8. Ինչո՞վ էր բնորոշվում մարգարեական շրջանի արտասուրբգրական ժողովուրդների կյանքը:
9. Արդյո՞ք կարելի է մարգարեների գործունեությունը սահմանափակել սոսկ ապագան կանխատեսելու հանգամանքով:
10. Ի՞նչ է նշանակում «մարգարե» բառն Աստվածաշնչում:
11. Ո՞րն է մարգարեական ներշնչման գլխավոր հատկանիշը:
12. Մարգարեների պարագային ի՞նչպես էին փոխհարաբերվում Յայտնությունն ու տեսանողի անձը:
13. Արդյո՞ք մարգարեական ուսմունքը նոր կրոն չէր:
14. Ինչո՞վ են իրար կապված Մարգարեությունն ու Օրենքը:
15. Ի՞նչպես էին մարգարեներն գնահատում ընտրությունն ու խոստումը:
16. Մարգարեներն ինչպե՞ս էին վերաբերում ընդունված աստվածաշտությանը:
17. Ի՞նչ ասել է խորհրդանշական գործողություն:
18. Ո՞րն է պատմության մասին մարգարեական ուսմունքի առանձնահատկությունը:
19. Ի՞նչպես էին մարգարեները պատկերացնում Մեսիա-Քրիստոս գալուստը:
20. Նոր Կտակարանի ո՞ր հիմնական խորհուրդն էր ծածկված մարգարեների համար:
21. Ի՞նչպես էին իրարից տարբերվում ճշմարիտ ու կեղծ մարգարեները:
22. Նոր Կտակարանում ի՞նչպես արտահայտվեց մարգարեական շնորհը:
23. Քրիստոսի հավատացյալների համատարած մարգարեական պարզևի իմաստը ո՞րն է:

§ 2. Ամոս՝ Աստծու դատաստանի մարգարե

(մոտ. 750 թ.)

1. Ամոս մարգարեի անձը և դարաշրջանը: Ամոսը հինկտակարանյան Եկեղեցու մեծագույն մարգարեներից է: Նրան կարելի է պրոֆետիզմի պատմության նոր շրջափուլի հիմնադիր համարել: Մովսեսից հետո հենց Ամոսի ուսմունքի մեջ առավել ամբողջական արտահայտություն գտավ Սինայի Ուխտը: Նա առաջինն էր մարգարեներից, որ գրի առավ իր խոսքերը, և բոլոր հետագա մարգարեներն իրենց վրա զգացին նրա ազդեցությունը: Ամոսի գիրքն բացառիկ տեղ է գրավում Աստվածաշնչում:



Ամոս մարգարե: Մարգարեների գրքի մանրանկարներից (XIII դ. Հռոմ, Վատիկանի գրադարան):

Մարգարեի կյանքի մասին սակավ տեղեկություններ են պահպանվել: Նա մարգարեից որդիներից չէր և ոչ պալատական տեսանողներից: Մինչ իր կոչումը նա ապրել է Հուդայում՝ Բեթղեհեմի հարևանությամբ գտնվող Թեկվա (եբր. Իջուրտ – ՏԵԿՈՎ) բնակավայրում: Այս փոքրիկ քաղաքն անապատի եզրին էր: «Իրանից այն կողմ,- ասում է Հերոնիմոս Երանելին, որ այդ կողմերում է ապրել,- ոչ մի բնակավայր չկա, անգամ չկան անտառ, հնոցի նմանվող հյուղակներ, որ աֆրիկացիները «մապալիա» (mapalia) են կոչում: Սա այնքան ընդարձակ անապատ է, որ տարածվում է մինչև Կարմիր ծով... Այս չոր և ավազոտ հողից ոչ մի պտուղ չի ծնվում: Այս է պատճառը, որ տարածքում շատ են հովիվները, այնպես որ

անպտուղ հողերը հարուստ են անասունների հոտերով: Այս հովիվներից մեկն էր Ամոսը» (Толк. на Амоса. Пролог):

Ամոսն իր մասին ասում է՝ «Ես ոչ մարգարե էի՝ և ոչ էլ մարգարեի որդի, այլ հովիվ էի՝ և թուր¹ էի քաղում» (Է 14): Հայտնի չէ՝ գոյություն համար դրամ վաստակելու նպատակով Ամոսն այլոց նախիրներն էր արածեցնում, թե իր հոտերն էին: Ժամանակակից մեկնիչները կարծում են, որ ԴՂՂ, «նոկեդ» – հովիվ (Ա 1) բառը հարկ է թարգմանել անասնավաճառ: Սակայն Ամոսը հա-

¹ Տե՛ս ստորև – խմբ.:

րուստ չի եղել: Սովորաբար թթենին (թզենու տեսակ)¹ էտում էին վարձու աշխատողները, որ աճը արագանա: Այսպիսով ապագա մարգարեն իր օրն անց էր կացնում անապատի միայնություն մեջ և քաղաքամերձ այգիներում աշխատելով: Ամոսը Սուրբ Գրքերն ընթերցած անձնավորություն էր, լայն մտահորիզոնով: Նրան քաջ հայտնի են Իսրայելում տիրող իրավիճակն ու հարևան երկրների կացությունը:

Նրա կանչվելը անսպասելի էր: Ինչպես կանչվեց Հովհաննես Մկրտիչը, որին Աստված ընտրեց՝ ապաշխարություն քարոզելու համար, այնպես էլ Ամոսին հրամայվեց գնալ մարդկանց մոտ և ազդարարել Աստծու Դատաստանը:

«Տերը վերցրեց ինձ հոտից և ասաց ինձ. "դու գնա՛ և մարգարեացիր Իսրայելի իմ ժողովրդի մասին"» (Է 15): Հովիվը գիտեր, որ ոչ ոք չի կարող ընդդիմանալ Աստծու հրամանին.

«Եթե առյուծը մոռնչա,

նվ է, որ չի սարսռա:

Եթե Տեր Աստված խոսեց,

նվ է, որ չի մարգարեանա»:

(Գ 8)

Ամոսն ուղևորվեց Սամարիա, որ իր վերջին ծաղկման շրջանն էր ապրում (Դ Թագ. ԺԴ 23-28): Հերոբովամ Բ (783-743 թթ.) ետ վերցրեց Իսրայելի կորցրած բոլոր հողերը և իրեն ենթարկեց Դամասկոսը: Նրա մայրաքաղաքը վերակառուցվեց և ճոխ զարդարանքի արժանացավ: Հերոբովամի երկու նստավայրերը (ամառային և ձմեռային) փառաբանվում էին իրենց ճոխությունները: Եվ ցայսօր Սամարիայի ավերակներում հնագետները փղոսկրազարդ նախշեր են գտնում, որ թագավորի համար պատրաստել էին եգիպտացի վարպետները: Սակայն Եփրեմի արտաքին, ցուցադրական փայլը չէր կարող շփոթեցնել Ամոսին:

Նա եկավ Հյուսիսային թագավորություն ապաշխարություն քարոզելու և մարգարեանում էր Բեթելի սրբարանում, ուր հանդիպեց հոգևորականության կատաղի դիմադրությանը: Չհամարձակվելով նրան կալանավորել՝ գլխավոր քահանան՝ Ամասիան, թագավորին հայտնեց՝ «Ամոսը քո դեմ խռովություններ է քարոզում Իսրայելի տանը, և երկիրը չի կարող տանել նրա բոլոր խոսքերը, քանի որ այսպես է ասում Ամոսը, "Յերոբովամը սրով պիտի վախճանվի, և Իսրայելը գերվելով պիտի գերվի իր երկրից"» (Է 10-11): Սամարիայից ցուցում ստանալով՝ Ամասիան հրեա մարգարեին հրահանգեց հեռանալ Բեթելից. «Ով դու գուշակդ, թող այս տեղդ, գնա Յրեաստան երկիրը, այնտեղ ասորիք և այնտեղ մարգարեացիր, այլևս չչարունակես մարգարեանալ Բեթելում, որովհետև

1 Հունարեն σκάμινα – ժանտաթզենի բառն է (եբր. תרמשה) – խմբ.:

սա թագավորի սրբությունն է և թագավորության տաճարը» (Է 12-13): Ամոսը ընդդիմացավ՝ ասելով, որ ինքը Եփրեմում մարգարեություն է անում ոչ թե սեփական կամքով, այլ Աստծու հրամանով: Նա դաժան վախճան կանխատեսեց Ամասիայի ողջ տան համար և կրկնեց Իսրայելի կործանման մասին մարգարեությունը:

Սա Ամոսի գրքում միակ կենսագրական վկայությունն է, բացառյալ ներածական խոսքերը, ուր մարգարեի ծառայության շրջանը վերագրվում է Հերոբոամ Բ կառավարման օրերին և նշվում է, որ Ամոսը «երկրաշարժից երկու տարի առաջ» հանդես եկավ (Ա 1): Հավանական է, որ այդ երկրաշարժն անկախ է իբրև աստվածային զայրույթի արտահայտություն, և դրանից հետո Ամոսի անհայտ հետևորդներն ի մի հավաքեցին նրա բոլոր գրվածքները:

Ամովս մարգարեի հիշատակը Եկեղեցին նշում է հին տոմարով՝ հուլիսի 15ին²:

2. Ամոս մարգարեի գիրքը Փոքր մարգարեների ժողովածուի մեջ երրորդ տեղում է: Այն բաղկացած է առանձին, կարճառոտ մարգարեություններից, որ իրար են հաջորդում առանց ժամանակագրական հերթագայության: Ըստ բովանդակության գիրքը չորս մասի է բաժանվում.

1. Ազգերի դատաստանը (Ա 1-Բ 16),
2. Հյուսիսիսրայելական թագավորության դատաստանը (Գ 1-Չ 14),
3. Խորհրդանշական տեսիլքներ (Է 1-Թ 8ա),
4. Վերջաբան – խոստումը (Թ 8բ-15):

Ամովսի աստվածաշունչ գրվածքները բանաստեղծական կառուցվածք ունեն: Դրանցից ոմանք՝ տաճարական պաշտամունքի ժամանակ արտասանված խոսքերի գրառումներ են: Մարգարեն օժտված է վեհ և խիստ ոճով: Այն վկայում է խստաբարո, նպատակասլաց, չընկրկող բնավորության մասին: Նա անողոք է հասարակության մեղքերի նկատմամբ: Բացառությամբ Վերջաբանի՝ նրա խոսքերում իշխում է Աստծու Դատաստանի գաղափարը:

3. Ամովսի աստվածաբանության հիմնադրույթները կարելի է խմբավորել հինգ բաժիններում.

Ա. Մարգարեն բացարձակ միաստվածություն է հռչակում և խոսում է Աստծու մասին որպես Տիեզերքի միակ Արարչի: Սրանով նա Մովսիսական ավանդույթի շարունակողն է:

Բ. Զարգացնելով Տասնաբանյալի ուսմունքն Ամոսը մարդկայնությունն ու ճշմարտությունը գլխավորն են Աստծուն ծառայելու գործում:

¹ Հետայսու ևս բոլոր տոները բերվելու են հին տոմարով:

² Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին 12 Փոքր մարգարեների հիշատակը նշում է Ծննդյան տոների 9 կիրակիին հաջորդող երեքշաբթի օրը – խմբ.:

Ծեսերն ու զոհերը շեն կարող փոխարինել բարի գործերը:

- Գ. Մարգարեն բուռն կրքոտությամբ մերկացնում է հասարակության թերուժյունները, աղքատներին հարստահարելը համարելով վիրավորանք Աստծու հանդեպ:
- Դ. Նա բոլոր ժողովուրդներին Արարչի առջև հավասար է համարում, իսկ Իսրայելի կոշումն ավելի է մեծացնում պատասխանատվությունն Աստծու առջև:
- Ե. Ամոփսի գրքում առաջին անգամ է հանդիպում ենք «Եահվեի օր» թեմային, այսինքն մոտ և ահեղ Տիրոջ Դատաստանին: Բայց միաժամանակ հույս է հայտնվում, որ կփրկվի «Հովսեփի մնացորդը» (Ե 15), և կվերականգնվի «Դավթի խորանը» (Թ 11):

4. Ամոփս մարգարեի ուսմունքն Աստծու մասին: Եթե նախկինում շատ իսրայելացիներ «հայրերի Աստծուն» դիտում էին իբրև Իսրայելի Աստված, որ ընդամենն Իր հզորությամբ գերազանցում է մյուս աստվածներին, ապա Ամոսն իսպառ վերջ է դնում այս հնացյալ պատկերացումներին: Չնայած Աստծու Ձայնը հնչում է «Սիրոնից», դա չի նշանակում, թե Աստված միայն Սիրոնում է գտնվում: Նա համայն Տիեզերքի Արարիչն ու Տիրակալն է:

*«Ահավասիկ Ես եմ, որ հաստատում եմ երկինքը,
հաստատում եմ հողմերը,
Ես եմ նա, որ իր Օծյալին ի հայտ է բերում մարդկանց մեջ,
ստեղծում է առավոտն ու մեզը
և ելնում է երկրի բարձունքների վրա.
Ամենակալ Տեր Աստված է նրա անունը»:*

(Դ 13)

*«Ով ստեղծում է ամեն ինչ և նորոգում¹,
ով մահվան սուվերը այգ է դարձնում
և ցերեկը մթնեցնում ինչպես գիշեր,
ով վերև է կանչում ծովի ջրերը
և հեղում երկրի երեսին,
Ամենակալ Տեր է նրա անունը...»*

(Ե 8)

Աստծու իշխանությունը չի սահմանափակվում ո՛չ տեղով, ո՛չ ժամանակով: Եվ մեղավորներն իզուր են կարծում, թե կարող են թաքնվել Նրա հայացքից.

*«Թեկուկ նրանք դժոխքում էլ թաքնվեն,
իմ ձեռքը այնտեղից էլ դուրս կրերի նրանց.
Եթե երկինք բարձրանան,
ես այնտեղից էլ կիջեցնեմ նրանց,*

¹ Ռուսերենում այս հատվածը այլ է՝ Ո՛վ է ստեղծում յոթնաստղը և Օրիոնը – խմբ.:

*իսկ եթե թաքնվեն Կարմելի բարձունքներում,
այնտեղ էլ կփնտրեն և կրոնեն նրանց:
Եթե իմ աչքից խույս տան և պահվեն ծովի խորքերում,
այնտեղ էլ վիշապին կհրամայեն, որ խայթի նրանց»:*
(Թ 2-3)

Բազմաթիվ հին փրկաստիճանների համար գերագույն Սկիզբը չափազանց հեռու և անմատչելի էր, որ առնչվեր մարդկային հասարակության մեջ տեղ գտնող իրադարձություններին: Սակայն Ամոսի համար բացահայտ է, որ հենց Նա է Աստվածը, որ «պատրաստում է իր համբառնալը դեպի երկինք, ով իր ավետիան է հաստատում երկրում» (Թ 6), անտարբեր չէ մարդկային ցեղի նկատմամբ: Մարդիկ Նրա հատուկ մտահղացման առարկան են, և նրանք կոչված են Նրա կամքն իրագործելու:

5. Ճշմարիտ ծառայությունն Աստծուն: Հերոսովամի կառավարման շրջանում պաշտամունքը գրեթե հեթանոսական բնույթ ընդունեց: Մարդիկ միամտաբար կարծում էին, թե Աստծուն կարելի է բարիացնել գոհերով և տոնախմբություններով: Սրա հետ մեկտեղ թաքնված կերպով շարունակում էին գոյատևել քանանյան ծեսերն ու հավատալիքները: Ազգային կանոնական բարեպաշտությունն աստիճանաբար ձևականության, «հայրական» ավանդույթի էր վերածվում, որից անհետանում էր հոգին: Եվ հանցանք, մեղք գործող մարդն սկսում էր հուսալ, որ պաշտամունքի և ընծայաբերման միջոցով կծածկվի: Եվ, ի հակադրություն այս ամենի, մարգարեն Աստծու անունից ազդարարում է, որ առանց պատվիրանները պահելու պաշտամունքը սրբապղծություն է.

*«Ատեցի, մերժեցի ձեր տոները
և ձեր տարեկան հավաքների հոտը չեմ շնչի.
և եթե ձեր ողջակեպներն ու զոհերը մատուցեք,
չեմ ընդունի դրանք և չեմ նայի ձեր փրկության նշաններին:
Յեռացրո՛ւ ինձնից քո երգերի ձայնը,
քո սրինգների նվազը ես չեմ լսի:
Թող հորդի իրավունքը ինչպես ջուր,
և արդարությունը՝ ինչպես անհուն հեղեղ:
Միթե ողջակեպ և զոհեր մատուցեցիք ինձ այնտեղ,
անասատուն, քառասուն տարի, ով տունդ Իսրայելի»:*
(Ե 21-25)

Սա հավատքի հանդեպ մոգական վերաբերմունքի հզորագույն մերկացումներից մեկն է, որ երբևէ ծանոթ է եղել հին աշխարհին: Աստվածպաշտության մեջ գլխավորը պետք է լինեն «դատը» (եբր. օֆֆալ – ՄԻՇՊԱՆՏ)՝ իմա՛ արդարադատությունը և «ճշմարտությունը» (եբր. Եմետ – էՄԵՏ)՝ իմա՛

արդարությունը: Դրանցով է արտահայտվում Ուխտին ճշմարիտ հետևելը, և միայն այդ դեպքում են զոհերն ու ծեսերը հաճո Աստծուն: Իսկ երբ մարդ մոռանում է իր պարտքը, նրա կեղծավոր «բարեպաշտությունը» սրբապղծության է վերածվում:

«Մտնք Բեթել, ամբարշտացնք,
 գնացնք Գաղգադա և շառացրնք ամբարշտությունը,
 առավոտյան մատուցեցնք ձեր փոհերը և երեք օրը մեկ՝
 ձեր տասանորդները:
 Ընթերցում էին արտաքին օրենքները
 և հրավիրում խոստովանության.
 հայտնեցնք, որ խրայելացիները սիրեցին սա», –
 ասում է Տէրը»:

(Դ 4-5)

Քրիստոնյա Եկեղեցու համար մարգարեի այս բացահայտումները մնալուն նշանակություն ունեն: Քրիստոս Փրկչի խոսքերն ընդդեմ փարիսեցիության ասես մարգարեի ճշմարտության հաստատումն էին (Մատթ. ԻԳ 13-18, Դուկ. ԺԱ 37-54, տե՛ս նաև՝ «Ոչ ամեն մարդ, որ Ինձ "Տէր, Տէր" է ասում, երկնքի արքայություն կմտնի, այլ նա, ով կատարում է կամքը իմ Հոր, որ երկնքում է» (Մատթ. Է 21): Եվ պատահական չէ, որ Սինեդրիսին դիմելիս Ամոսին է հղում առաջին մարտիրոս Ստեփանոսը (Գործք Է 42): Մարգարեի ոգով տոգորված են հանդես գալիս Եկեղեցու քաջարի շահակիրները՝ Հովհան Ոսկեբերանը, Հերոնիմոս Երանելին, սուրբ Փիլիպպոսը և Մաքսիմ Գրեկ երանելին:

6. Մարգարեն ընդդեմ ընկերային անարդարության: Ամոսը չէր բավարարվում անհատական մեղքերը դատապարտելով, այլ նաև մատնանշում էր հանրային հարաբերությունների անբարո վիճակը: Մարգարեն չէր երկնշում իշխանավորներից, չնայած գիտակցում էր, որ նրանք իրեն ապստամբյալ կհամարեն: «Ահա թե ինչու նա, ով իմաստուն է, այդ ժամանակ կլռի, քանի որ ժամանակը չար է» (Ե 13): Սակայն հովիվը չէր կամենում երկչոտների և «հաշվենկատների» շարքն անցնել: Նա թունոտ կերպով է նկարագրում անհոգ զվարճացող հարուստներին, պճնված կանանց, շահամոլ դատավորներին, որ «նրանք արդարին ծախեցին արծաթով և տնանկին՝ մի փոքր կոշիկի դիմաց» (Բ 6. – խոսքը փողով ստրկության մատնելու մասին է): Ազգի իշխանավորները «անօրենսություն և թշվառություն էին գանձում իրենց զավառներում» (Գ 10): Այստեղ մարգարեն նահանջ է նկատում Մովսիսական Օրենքից. «նրանք մերժեցին Տիրոջ օրենքներն ու չկատարեցին նրա հրամանները» (Բ 4): Հասարակության, ինչպես և առանձին անհատի կյանքը սերտորեն կապված է բարոյական գերագույն աշխարհակարգի հետ: Մինչդեռ մարդիկ, որ դատը վեր են ածում թույնի և զգեստնում են ճշմարտությունը (Ե 7), ոչ միայն ոտնահա-

րում են Աստվածային օրենքը, այլև հակադրվում են դրա ջատագովներին.

«Դռների առաջ նրանք ասեցին հանդիմանողներին
 սուրբ խոսքերը պիղծ դարձրին:
 Դրա համար աղքատներին նեղելով
 և նրանցից ընտրությամբ կաշառք առնելով՝
 շքեղապարոյ ապարանքներ պիտի շինեք,
 բայց չեք բնակվի նրանց մեջ,
 այգիներ պիտի տնկեք,
 սակայն նրանց գինին չեք խմի»:

(Ե 10-11)

Հարուստներն անտարբեր են Թորայի հրահանգներին, գիրք, որ պաշտպանում է զրկյալի, որբի և այրի կանանց իրավունքները:

«նրանց, որ տրորում են երկրի հողը,
 որ կռփահարում էին աղքատների զրուխները,
 շեղում խոնարհների ճանապարհը
 Երանք իրենց զգեստները¹ որպես ծածկոց էին զգում իրենց վրայ
 և զոհասեղանին և բռնագրաւուած գինի էին խմում
 իրենց Աստծու տան մէջ»:

(Բ 7-8)

Այստեղ առաջին անգամ ի հայտ են գալիս աստվածաշնչական երկու հասկացություններ՝ «աղքատ» (եբր. օփֹר – ԷՎՈՆԻՄ) և «հեզ» (եբր. օփֹֆ – ԱՆԱՎԻՄ): «Ֆվոնիմ»ը պարզապես աղքատը չէ, այլ իսկական բարեպաշտը: Անցյալի այս «սակավապետներ»ը նախընտրում էին քշով բավարարվել հանուն Աստծու ճշմարտության: Ի հետևանս այս ամենի սաղմոսներում հաճախ «աղքատ»ը հանդես է գալու իբրև «արդարի» հոմանիշ: Ուշագրավ է, որ Երուսաղեմի առաջին քրիստոնյաներն իրենց «էբիոնիմ» էին կոչում, ի նկատ ունենալով, որ Լեռան քարոզում Հիսուս դիմում էր «աղքատին» և «հեզերին»:

Ամոսի ոգով անարդարությունը կդատապարտի Հակոբոս առաքյալը (Ե1-6): Իսկ Եկեղեցու Հայրերն իբրև ծանրագույն մեղք անարգանքի սյանը կգամեն հարստանալու մոլուցքը. «Բոլոր հարստությունները,- ասում է Հերոնիմոս Երանելին,- անարդարությունից են ծագում... Հարուստը կամ ինքն է անարդար, կամ ժառանգորդն է անարդարության» (Посл. 120):

Մանթո-Յոն

Իբրև գրավ վերցված հանդերձանքի մասին խոսքերն ակնարկում են Մովսիսական պատվիրանը խախտելու մասին, որ հրահանգում էր երեկոյան վերադարձնել աղքատի հագուստը (Ելք ԻԲ 26):

¹ Ռուսերենում գրավով վերցրած զգեստները: Տե՛ս ստորև Ճանաչությունը – խմբ.:

7. **Ունիվերսալիզմ ու ընտրյալ լինելը:** Հին Կտակարանի սրբազան հեղինակներից Ամոսն առաջինն էր, որ հստակ ձևակերպեց ունիվերսալիզմի գաղափարը, այն հակադրելով ազգային բացառիկությանը: Եթե Ծննդոց Գրքում այս գաղափարն արտահայտված է անուղղակի (բոլոր ժողովուրդների արյունակից լինելը ցույց տալով), ապա Ամոսի գրքում այն ազդարարվում է անմիջականորեն՝ իբրև Հայտնության կարևորագույն բաղադրիչ: Ավելին՝ ինքը՝ հրեա մարգարեն, իր անձն ընկալում է ուղարկված ոչ միայն Իսրայելի և Հուդայի համար: Գիրքն սկսվում է ասորիներին, փղշտացիներին, փյունիկեցիներին, եդոմացիներին, ամորհացիներին և մովաբացիներին ուղղված խոսքերով: Աստծու գայրույթը կիջնի նրանց վրա, ոչ թե հեթանոս լինելու համար: Նրանք Հայտնություն չեն ունեցել, ուստի նրանց կրոնական մոլորությունները չեն նրանց գլխավոր մեղքը: Նրանց մեղքը դաժանությունն ու անմարդկայնությունն է, զավթողական պատերազմները, հաշվեհարդարը խաղաղ բնակչության նկատմամբ, մարդկանց վտարումը հայրենական հողերից, սրանք են այս ժողովուրդների հանցանքները (Ա 3-Բ 3. «Երեք»ը և «չորս»ը ժամանակի լրումն են նշանակում՝ որի ընթացքում Աստծու երկայնամտությունն է ի հայտ եկել): Աստծու վերաբերյալ ճիշտ պատկերացումներ չունենալով հանդերձ՝ հեթանոսները կարող են տարբերել բարին ու չարը, որովհետև խղճի օրենքը նրանց սրտերում է գրված (Հռոմ. Բ 14-15):

Իսկ Իսրայելը կրկնակի պատասխանատվություն է կրում Աստծու առջև, որովհետև նրան է տրվել Տիրոջ Օրենքը (Բ 4), և նա կոչված է ծառայելու Աստծուն.

«Երկրի բոլոր ազգերից միայն ձեռք ընտրեցի,
ԱՅՂ ՊԱՏՃԱՌՈՒՎ ԷԼ ՁԵՉ ՊԻՏԻ ՊԱՏԺԵՄ
ՁԵՐ ԲՈԼՈՐ ՉԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ»:
(Գ 2)

«Ընտրեցի» բառը (ավելի ճիշտ՝ «ճանաչեցի») նշանակում է սիրեցի, այսինքն մոտեցրի Ինձ, մերձ հարաբերություններ հաստատեցի:

Խոսքը Հայտնության մեծագույն շնորհի մասին է, որ ստացավ Աստծու ժողովուրդը, և նրանից բարոյական կամքի լիակատար կենտրոնացում է պահանջվում:

Իսրայելը ո՛չ վեհ և ո՛չ գերազանց է մյուս ցեղերից: Նրան առանձնացնում է լուրջ Աստծու կողմից ընտրված լինելը: Նույնիսկ Ելքի մեծագույն իրադարձությունն Աստծու աչքին բացառիկ բնույթ չէ: Այսպիսի մի բան եղել է նաև մյուս ազգերի պատմության ընթացքում.

«Միթե ինձ համար եթովպացիների
որդիների պէս չե՞ք դուք,
Իսրայելի որդիներ,- ասում է Տերը.-

*Իսրայելին չհանեցի Եգիպտացիների երկրից,
այլապահներին՝ Գամրից և ասորիներին՝ Բոթորից»:*

(Թ 7)

Մրանով ընդմիշտ մերժվում է ազգի գերագնահատման հանգամանքը, որ բնորոշ էր Հին Աշխարհի քաղաքակրթություններին (ինչպես և հետագա դարերի):

8. Աստծու Դատաստանը Գոյի Սրբության պատասխանն է մարդկային անարդարությանը: *Ամոս մարգարեի ամբողջ քարոզն այդ Դատաստանի սպասման նշանի ներքո է: Աստված «բազումողորմ» է (Եբր. ԾՈՆ ԸԴ – ՌԱՎ ԽՏՍԵԴ), բայց վաղ թե ուշ Նրա արդարությունը իրեն ցույց կտա:*

Իսրայելացիները հավատում էին, որ գալու է «Շահվեի օրը», երբ, ինչպես հույս ունեին իրենք, իրենց թագավորությունը կդառնա հզոր ու փառավոր: Երկրային հանդիսության մեջ էին տեսնում Աստծու օրհնությունը: Նման տեսակետներ գտնում ենք ցանկացած կրոնում: Օրինակ քանանացիներն ու Իսրայելը շրջապատող մյուս ժողովուրդներն աստվածներին համարում էին իրենց բարգավաճման երաշխավոր: Այս առումով հրեաները բացառություն չէին: Աստված, որ հայտնվել էր միայն երկրային բարօրության համար, չի կարող ճշմարիտ Ուխտի Աստված լինել: Նա ոչ միայն խոստանում է, այլ նաև պահանջում է: Նրա վերջնական նպատակը ոչ թե հաղթանակներ շնորհելն է, առատ բերք, բարեկեցություն, այլ «սուրբ ժողովուրդ» ստեղծելը, Եկեղեցի, որ ապրում է Իր պատվիրաններով: Ուստի մարդիկ չարաչար սխալվում են, սպասելով, թե Շահվեի Օրն առատության եղջյուրից Բարձրյալի պարգևներն են հորդելու.

«Կայ Տիրոջ օրը ցանկացողին...

այն խավար է և ոչ թե լույս»:

(Ե 18)

Սակայն Ամոսի մարգարեություններում Դատաստանի Օրը դեռևս վախճանաբանական իմաստ չունի: Այն չարի հատուցում է պատմության որոշակի շրջանի մեջ.

«Ահա դրա համար էլ, ո՛վ Իսրայելի տուն,

ձեր դեմ մի ալգ պիտի հանեմ,

որը պիտի նեղի ձեզ, որպեսզի այլևս Եմաթ չմտնեք

ու չհասնեք մինչև արևմտեան հեղեղատը»,-

ասում է Չորությունների Տերը»:

(Չ 14)

Մարգարեն չի նշում այդ ազգի անունը: Սակայն շուտով համայն Արևելքով կանցնի այդ սարսափելի բառը՝ ասորեստանցիներ: Հնարավոր է՝ Ամոս

մարգարեն իր կյանքի վերջում ականատես է եղել համընդհանուր աղետի սկզբին, երբ Աստուրի անհաղթ բանակները ներխուժեցին հարավ և արևմուտք՝ կրակի մատնելով արտերն ու հազարավորների գերեցին: Եվ կանխատեսելով այս աղետը՝ մարգարեն այն պատահականություն չի համարում: Զավթիչ ժողովրդի ստրկացնող լուծը նրան ներկայանում էր իբրև պատմական պատիժ մեղքերի համար.

«Կայ նրանց, ովքեր արհամարհում են Սիոնը
 և հույս են դրել Սամարիայի լեռան վրա:
 Հավաքեցին ազգերի իշխաններին,
 և Իսրայելի տունը մտավ նրանց մեջ: ...
 Դուք, որ գալիս եք դեպի չարիքների օրը,
 մոտենում եք հասնելու ստությունների շաքարին,
 Դուք, որ ննջում եք փղոսկրեա գահավորակներում,
 մեղկանում ձեր անկողիններում,
 Հոտերից ուլեր եք ուտում և նախիրներից՝
 պարարտ հորթեր,
 Դուք, որ պարում եք սրինգների նվագի տակ,
 և դրանք մնայուն բան համարեցիք և ոչ՝ անցավոր,
 Դուք, որ խմում եք անխառն գինի
 և օծվում անուշ յուղերով
 և ցավ չէիք պզում Հովսեփի տան կործանման համար,
 Ահա դրա համար էլ այժմ գերի պիտի տարվեք
 բռնակալների իշխանության կողմից,
 և պիտի կտրվի Եփրեմի տան երիվարների խրիհնջը:
 (Չ 1, 3-7)

Եվ այնուամենայնիվ թշնամիների արշավանքը և գերությունը մարգարեի աչքին ամենածանր աղետը չեն: Ամենասարսափելին այն է, որ զրկվել են Աստծու ողորմածությունից, մեղավորների հեռանալը Իրենից.

«Ահա օրեր պիտի գան,- ասում է Տեր Աստվածը,-
 և ես սով պիտի ուղարկեմ այդ երկիրը,
 ոչ թե հացի սով կամ ջրի ծարավ,
 ԱՅԼ ՏԻՐՈՋ ԽՈՍՔԸ ԼՍԵԼՈՒ ՍՈՎ:
 Ջրերը պիտի հուլվեն ծովից մինչև ծով
 և հյուսիսից մինչև արևելք.
 նրանք պիտի գնան Տիրոջ խոսքը փնտրելու
 և չեն գտնելու:

(Ը 11-12)

Պետք չէ կարծել, թե Ամոս մարգարեն կամենում էր, որ իր կանխասացություններն իրականանան: Նա խոսում էր ոչ թե իրենից՝ այլ ենթարկվե-

լով Աստծու Հոգու ձայնին, և դրա հետ մեկտեղ վշտահար աղերսում էր. «Տէր, Տէր, խնայիր, որովհետև իմ կվերականգնի Հակոբի տունը, քանի որ նա սակավաթիվ է» (Է 2): Տեսանողը ողբում էր «Իսրայելի կույսի» համար, որ ընկել է, և չկա մեկը, որ կանգնեցնի նրան (Ե 2): Նա աղաչում էր մարդկանց. «Փնտրեցե՛ք Տիրոջը, և դուք կապրե՛ք» (Ե 6): Եվ նրան հայտնվեց խորհուրդը, որ Աստծու Դատաստանը միայն ուղղելու համար է և ոչ կործանման:

9. Ամոս մարգարեի Գրքի վերջաբանը: Մարգարեություն փրկության մասին: Մարգարեն տեսիլքով (Է 3, 6) իմանում է, որ Աստված գթալու է մեղավորներին: Ինչպես հովիվը «կկարողանա առյուծի բերանից ապատել երկու սրունք կամ ականջի մի բլթակ»¹ (որ հաշվետու լինի տիրոջը), այդպես էլ աղետներից հետո կփրկվի Աստծու ժողովրդի մի Մնացորդը:

«Մնացորդի» մասին ուսմունքը կգարգանա Եսայու մարգարեության մեջ: Բայց հինկտակարանյան Եկեղեցու պահպանված հատվածի մասին միտքն արդեն առկա է Ամոսի գրքում (Ե 15): Այն մեղմում է նրա ամբողջ գրքի ահեղ ոգին՝ վերջաբանը (Թ 11-15), որ հույս է ներշնչում: Աստված խոստանում է, որ Դավթի անկյալ խորանը կվերականգնվի, վտարվածները կվերադառնան Գերուխից և նորից կկառուցեն ամայացած քաղաքները: Դա կիրականանա ի կատարումն խոստման, որովհետև Տիրոջ խոսքն անբեկանելի է:

Դավթի թագավորության մասին մարգարեության մեջ, որ ընդգրկելու է «բոլոր ապգերը» (Թ 12), Հակոբ Տեառնեղբայր առաքյալի տեսել է Տիեզերական Եկեղեցու նախապատկերը, որը կընդգրկի և՛ հրեաներին, և՛ հելլեններին (Գործք ԺԵ 15-18):

Հարցեր կրկնության համար

1. Հին Կտակարանի ո՞ր բաժնում է Ամոս մարգարեի գիրքը:
2. Ինչո՞վ է պայմանավորված մարգարեի բացառիկ նշանակությունը:
3. Ե՞րբ է նա ապրել, և ի՞նչ է հայտնի նրա մասին:
4. Ո՞րտեղից էր սերում Ամոս մարգարեն և ո՞րտեղ էր քարոզում:
5. Ի՞նչ հիմնական բաժիններից է բաղկացած և ի՞նչպես կազմվեց նրա գիրքը:
6. Որո՞նք են Ամոս մարգարեի գրքի հիմնական նյութերը:
7. Ինչո՞վ է բնորոշվում Ամոս մարգարեի ուսմունքն Աստծու մասին:
8. Մարգարեն ի՞նչպես է պատկերացնում իրական սպասավորությունն առ Աստված և ինչո՞ւ է քննադատում ժողովրդի ծիսական բարեպաշտությունը:
9. Ինչո՞վ է պայմանավորված Ամոսի գրքում առկա՝ սոցիալական բողոքը:
10. Որո՞նք են մարգարեի ունիվերսալիզմի յուրահատկությունները:
11. Ի՞նչպես է նա ընկալում Իսրայելի ընտրյալ լինելու հանգամանքը:

¹ Գ 12 – խմբ.:

- 12. Ինչպիսի՞ն էր Եահվեի Օրվա մասին ժողովրդական տեսակետը:
- 13. Ի՞նչ է ներկայացնում այդ Օրն Ամոս մարգարեի համար:
- 14. Ինչո՞վ կարտահայտվի ազգերի և Իսրայելի նկատմամբ Աստծու դատաստանը:
- 15. Ո՞րն է ապագայի հանդեպ Ամոս մարգարեի հույսը:
- 16. Ըստ Հակոբ Տեառնեղբայր առաքյալի ինչի՞ նախապատկերն է Դավթի տան վերածննդի մասին մարգարեությունը:

§ 3. Օսեն.

Աստծու հանդեպ սեր պահանջող մարգարեն

(մոտ. 750-730 թթ.)

1. Օսեն մարգարեի ինքնությունն ու դարաշրջանը: Օսենն՝ Երիի որդին, Հյուսիսային թագավորության վերջին մեծ մարգարեն էր: Նրա անունը (եբր. עשוה – ՅՈՇԻԱ) իր իմաստով մոտ է Հիսուս անվանը (այն կարելի է թարգմանել «Եահվեն փրկում է» ձևով): Այս անվամբ է ասես պայմանավորված մարգարեի սպասավորության բնույթը: «Եթե Ամոսը մատնանշում է Աստծու արդարադատությունը, ապա Օսենն քարոզում է Նրա գթասրտությունը» (Բ. Ա. Տուրան):

Օսենն Ամոսի կրտսեր ժամանակակիցն էր: Նա ծառայում էր Սամարիայում, երբ Եփրեմի թագավորությունն արդեն անկում էր ապրում (Օսեն Ա 1, Դ Թագ. ԺԵ 8-29): Մարգարեն վկան էր Հյուսիսի և Հարավի հակամարտությունների, պալատական հեղաշրջումների, հասարակության բարոյական և հոգևոր անկման: Նրա օրերում ասորեստանյան սպառնալիքն արդեն իրական էր. 740 թ. Իսրայելի թագավորը հարկատու դարձավ Թիգլաթպալասար Գ-ին (Աստվածաշնչում նա հանդես է գալիս իբրև Փուա՝ ըստ իր երկրորդ անվան՝ Պուլու)¹: Սակայն, ըստ ամենայնի, մարգարեն 722 թ. Սամարիայի կործանման ժամանակ արդեն ողջ չէր. նրա գրքում այս իրադարձության մասին ակնարկներ չկան:



Օսեն մարգարե: Մանրանկար (Մեկնություն մարգարեների գրքերի, X դ. վերջ - XI դ. սկիզբ, Թուրին, Ազգային գրադարան):

Օսեն մարգարեի մասին կենսագրական տեղեկություններ գրեթե չեն պահպանվել: Հավանական է, որ նա ղևտացի էր, կամ քահանա. նա քաջածանոթ է հոգևորականության կենցաղին:

¹ Ա Մևաց. Ե 26-ում Թագղաթիղասար – խմբ.:

Օսեեն ամուսնացել է Գաբելայիմի Գոմեր անունով դստեր հետ, որին շատ սիրել է: Բայց նա դառն տառապանք է պատճառել մարգարեին իր դավաճանություններով: Սակայն Օսեեն չկամեցավ դատի տալ անհավատարիմ կնոջը և պատրաստ էր ներելու նրան: Կյանքի այդ դրաման մարգարեին առակի նյութ հանդիսացավ, ուր Իսրայելը ներկայացված է անհավատարիմ կնոջ կերպարով: Ամուսինների խզումը հաշտությունամբ ավարտվեց: Սրանում Օսեեն տեսնում էր Աստծու հետ Իսրայելի գալիք հաշտեցումը:

Օսե մարգարեի հիշատակը Եկեղեցին տոնում է հոկտեմբերի 17ին¹:

2. Օսեն մարգարեի գիրքը կազմված է առանձին մարգարեություններից և քաղվածքներից, որ հավաքվել են արդեն հետմահու: Սամարիայի անկումից հետո (722 թ.), նրա գրվածքները տարվեցին Երուսաղեմ, ուր և տարածում գտան: Գրքի բնագրերն ավելի վատ են պահպանվել, քան մյուս մարգարեական գրքերինը: Դրանում շատ են բացերն ու անհասկանալի մասերը, որ դժվարացնում են մեկնությունն ու թարգմանությունը:

Ներկա կազմությամբ այն երեք հիմնական մասի է բաժանվում.

ա) Անհավատարիմ կինն իբրև անհավատարիմ ժողովրդի նախատիպար (Ա 1-9 5),

բ) Իսրայելի մեղքն ու Աստվածային սիրո հայտնությունը (Դ 1-ԺԴ 1),

գ) Դարձի եկող ժողովրդի ներումը (ԺԴ 2-9):

Ինչպես կարծում են 10-րդ համարը հավելել է գրիչը, որ ի մի էր հավաքում Օսեեի մարգարեությունը: Հավանաբար նրանն է նաև ողջ գրքին տրված վերնագիրը (Ա 1):

3. Օսեն մարգարեի աստվածաբանությունը հիմնված է Մովսեսի Տասնաբանյայի վրա: Նա ոչ միայն Ամոսի պես Իսրայելին մեղադրում է բարոյական օրենքները խախտելու համար, այլև դատապարտում է կռապաշտությունը (հորթերի պաշտամունքը): Նրա համար սրբազան ձևակերպումը՝ «դուք ինձ համար ժողովուրդ կլինեք, ես ձեր համար Աստված»² նույնական է ամուսնական ուխտի հետ: Իսրայելի ուրացությունը դավաճանություն է Աստծու հանդեպ, և դա նման է ամուսնական դավաճանությանը: Այս «շնացումն» անխուսափելիորեն պատժի է հանգեցնելու: Ժողովուրդը (անհավատարիմ կինը) անապատ կբշվի: Թեոդորիտոս Երանելիի մեկնությամբ «անապատը» Գերությունն է:

Սակայն աստվածային սերը զորավոր է մարդկային մեղքից: Ինչպես սիրող ամուսինը բացեց դռները զղջացող «կին պռռնիկ»ի առջև, նույն կերպ

¹ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին 12 Փոքր մարգարեների հիշատակը նշում է Ծննդյան տոների 9 կիրակիին հաջորդող երեքշաբթի օրը – խմբ.:

² Երեմ. Լ 22 – խմբ.:

նաև Տերը կրնդունի Իսրայելը զղջումից հետո: Ուխտը կվերականգնվի, և կրկին երկրի վրա կհաստատվի երբեմնի ներդաշնակությունը, որ խախտվել էր Ադամի մեղքով (Բ 18): Այս մարգարեության մեջ արդեն Նոր Ուխտի կանխազգացում կա, չնայած բուն արտահայտությունը՝ «Նոր Ուխտ»-ը, միայն Երեմիան կարտասանի (ԼԱ 31):

4. Անհավատարիմ կինը: *Օսեեի ամուսնության հանգամանքները շարունակում են մնալ ոչ պարզ: Օսեե Ա Ձ-ում ասվում է, որ մարգարեն, Աստծու հրամանով առավ «պոռնիկ կին, և պոռնկության որդիներ»:* Սակայն մեկնիչների մեծամասնության կարծիքով Գոմերն այդպես է կոչվում իր հետագա անկումների պատճառով: Մարգարեն անգամ իր զավակներին է շարագույժ անուններ տալիս Յելպուայել (կապելով Հեուի մեղքերի հետ), Լորուհամա (Զոդորմած), Լոամմի (Ոչ իմ ժողովուրդ)¹: Օսեեն նրանց դառն խոսքերով է դիմում.

*«Դանտ արեք ձեր մոր հետ, դանտ արեք,
քանի որ նա իմ կինը չէ,
և ես նրա ամուսինը չեմ:
Ես կվերացնեմ նրա պոռնկությունը իմ ներկայությունից
և շնությունը՝ իր ստիսքների միջից,
որովհետև նրան կմերկացնեմ
և նրան կանեմ այնպես, ինչպես ծնված օրը»:*

(Բ 2-3)

Աստծու ժողովրդի ճակատագիրը խառնվում է շնացող կնոջ ճակատագրին: Հստ օրենքների պոռնիկը, եթե անգամ խուսափում էր մահապատժից, ապա զրկվում էր ինչքից և տնից վտարվում: Նույնկերպ և Իսրայելը, Աստծուց հեռանալով, կսնանկանա և կբշվի Տիրոջ երկրի սահմաններից:

Օսեե մարգարեի համար Մովսեսի ժամանակներն Ուխտի լուսավոր սկիզբն է, Ուխտ, որը ոտնահարվեց, ինչպես առաջին սերը, որ ապականվեց շնությամբ: Բայց դեռևս այն ժամանակներում, սրբազան պատմության արշալույսին մարդիկ ցույց տվեցին իրենց անհնազանդությունը Աստվածային Փեսայի հանդեպ:

Ծանոթություն

Օսեե ԺԱ 1-ի խոսքերը բերելով իբրև մարգարեություն Զրիստոսի մասին՝ Մատթեոս ավետարանիչը Նրան ներկայացնում է որպես Նոր Իսրայել (Մատթ. Բ 15):

5. Աստծու ժողովրդի մեղքը նահանջն է աստվածաշնչական հավատքի երեք հիմնադրույթներից. ճշմարտությունից (եբր. ֵאֱמֶת, ETESET), զթասրտությունից (եբր. ֵאֱמֶת – ԻԵՄԵԴ) և աստվածանաշողությունից (եբր.

¹ Համապատասխանաբար՝ הוֹמֵר אֶל (Ա 6) և עֵמֵר אֶל (Ա 9) – խմբ.:

Ո՞ՐԿԻՆ ԵՎԵՐ – ԴԱՄՏ ԷԼՈՅԻՄ): Սրանք մարդկությանն ուղղված կոչ են Աստծուն նմանվելու, Արարչին, որ արդար է ու հավատարիմ, գթասիրտ ու սուրբ: Ճշմարտությունը միայն բարոյական և սոցիալական արդարությունը չէ, այլ նաև հավատարմությունն իր կոչմանը և Աստծուն: Գթասարտությունը միայն գուժը չէ, այլ նաև սեր-կարեկցանքն ու սեր-խղճահարությունը: Աստվածանաչողությունը մեկուսացված աստվածաբանությունը չէ, այլ կենդանի, իրական մերձեցում Աստծուն՝ հավատի և սիրո միջոցով: Այս ամենը ոտնահարվել է Իսրայելի մեղքերով: Նրա մեղքերը աստվածային սիրուն վիրավորելն է, ոչ թե խախտելը ձևական օրենքի:

«... Տերը դատ ունի երկրի բնակիչների հետ.

«Չկա ճշմարտություն, չկա ողորմություն

և չկա Աստծու ճանաչում երկրի վրա:

Անեծք, ստություն, սպանություն, գողություն և շնություն

ողողել են երկիրը

և արյունը արյան են խառնում»:

(Դ 1-2)

Իսրայելը (նշենք, որ եբրայեցիներն այն իգական սեռի է) վազում է իր «սիրեկաններին», հեթանոսական աստվածների ետևից: Նա հույս է տածում նրանցից պարգևներ և բարօրություն ստանալ: Նա ոչ թե Աստծուն, այլ Բահաղիմներին է աղբրսում: Բոլոր լեռների գլխին, ուր նախկինում աղոթում էին հեթանոսները, նա զոհեր է մատուցում կուռքերին (Դ 13):

Օսեե մարգարեն Դանում և Բեթելում, որ նա Բեթ Ովնա¹ (անպատվության տուն) է անվանում, հարձակվում է կուռքերի վրա. «... իրենց համար կուռքերի պատկերների նման ձուլածո արձաններ պատրաստեցին իրենց արծաթից՝ ճարտար արհեստավորների գործ տալու նրանց: Նրանք ասացին. «Մարդիկ, պո՛հ մատուցեցե՛ք, որովհետև հորթերը նվապեցին»² (ԺԳ 2):

Մարգարեն հիշում է Իսրայելի անցյալի մութ էջերը: Նույնիսկ Հակոբ նահապետին հիշելիս նա ամենից առաջ բացասական կողմերն է գտնում: Սակայն նա առանձնակի է մեղադրում առաջնորդներին, հոգևորականությանն ու իր ժամանակի մարգարեներին: Նրանց թվում է, թե ճոխ պաշտամունքներն ու զոհաբերությունները լիովին բավարար են: Մինչդեռ Աստված այլ բան է սպասում.

«...որովհետև ձեր ողորմությունը վաղորդյան ամպի պես է

և առավոտյան ցողի պես, որ անհետանում է:

Դրա համար հնձեցի ձեր մարգարեներին

և կոտորեցի նրանց իմ քերանի խոսքով...

¹ Հայերենում տուն Ովնի – խմբ.:

² Սինոդալ թարգմ. մեջ վերջին մասն այլ է. «համբուրեք հորթերին» – խմբ.:

*ՔԱՆԶԻ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ԵՄ ՑԱՆԿԱՆՈՒՄ
ԵՎ ՈՉ ԹԵ ԶՈՅԱԲԵՐՈՒՄ,
ԱՍՏԾՈՒ ՃԱՆԱԶՈՒՄՆ ԱՎԵԼԻ ԵՄ ՑԱՆԿԱՆՈՒՄ,
ՔԱՆ ՈՂՋԱԿԵԶՆԵՐԸ»:*

(Չ 4-6)

Այս վերջին խոսքերը կկրկնի Փրկիչ Քրիստոս հրեա դպիրների և փարիսեցիների կեղծ բարեպաշտությունը պախարակելիս (Մատթ. Թ 13):

6. Աղետներն իբրև սթափվելու միջոց: Իսրայելը «քանի ցանեց և փոթորիկ կհնձի»¹: Նա Աստծու կամքին հակառակ թագավորներ էր ուզում ունենալ (Ը 4), իսկ այժմ միապետները դեպի մահ են առաջնորդում նրան: Բռնապետերն իշխանության կռիվ են անում, իսկ անհեռատես քաղաքական գործիչները մի ծայրահեղությունից մյուսին են անցնում. մերթ խոնարհվում են Ասորեստանի առջև, մերթ նրա դեմ դաշն են ստեղծում: Քաղաքական խառնաշփոթն իշխանավորների կոլորության արդյունք է:

Բարոյական անկումը նույնքան կործանարար է՝ «...քանի որ սխալ բաներ արեցին. զոդ կմտնի նրա տունն, իսկ ավապակը կթալանի նրա ճանապարհներին. նրանք միասին կմրմնջեն, ինչպես մրմնջում են մարդիկ իրենց մտքում. նրանց բոլոր չարիքները հիշեցի» (Է 1-2):

Սակայն հատնում է Աստծու երկայնամտությունը: Հնտրյալները, որոնց շատ բան է շնորհված, պետք է կարողանան պատասխան տալ Աստվածային արդարության ողջ խոստովյամբ՝ «Չնայած նրանք ընծաներ էին ուղարկում ժողովուրդներին, սակայն շուտով Ես նրանց կժողովեմ և նրանք կսկսեն տառապել իշխանների թագավորի լծից» (Ը 10)²: Ռազմատուգանքը, որ Թիզլաթպալասար Գ պահանջեց Սամարիայից, լոկ աղետների սկիզբն էր: «Սուզը կպատի երկիրը»³, նրա որդիները գերության են տարվելու: Իսրայելն կարծես թե վերադառնում է նախամովսիսական ժամանակներ, երբ ստրուկ էր օտար երկրում: Ուխտը՝ Աստծու և Իր ժողովրդի ամուսնական միությունը, կբեկանվի: Սակայն Օսեեն չի բավարարվում այս ահազդու մարգարեություններով: Նա գիտե, որ Աստվածային սերը մարդուց հավատարմություն է պահանջում, բայց և մարդու համար բաց է է-ի անսահման սերը: Աղետները վախճանի շեն հանգեցնի, այլ երկնային խրատ կհանդիսանան:

7. Չոջումն ու Ուխտի վերականգնումը: Օսեեի մարգարեությունն Աստծու Սիրո մեծագույն հայտնությունն է: Հավատարիմներին պատժելով՝

¹ Օսեե Ը 7: Հայերենում խորշակահար սերմ ցանեցին, և նա էլ կկործանվի նրանց նման – խմբ.:

² Մեր թարգմանության մեջ այլ է՝ «դրա համար էլ կմատնուի ազգերին: Բայց այժմ կընդունեն նրանց, և մի փոքր կդադարեն թագավորներ և իշխաններ օժելուց» – խմբ.:

³ Օսեե Դ 3 – խմբ.:

Աստված չի փոխում Իր էությունը: Իսկ Նրա էությունը կարեկցող սերն է:

*«Ինչպե՞ս վարվեմ քեզ հետ, Եփրեմ,
ինչպե՞ս պաշտպան լինեմ քեզ, Իսրայել...*

Միրոս շուռ եկամ,

գութս շարժվեց,

և իմ սաստիկ բարկության թելադրանքով չեմ վարվի

ու չեմ թողնի, որ Եփրեմը ջնջվի,

քանի որ ես Աստված եմ և ոչ թե մարդ»:

(ԺԱ 8-9)

Եվ դարձյալ անհավատարիմ կնոջ ներումը հիշեցնում է Աստծու թողության մասին: Մոլորյալ Իսրայելը կվերադառնա և կընդունվի. «Զեպ կնշանեմ ինձ հավիտյան» (Բ 19), «Կվերականգնեմ նրանց բնակարանները և ամբողջ արտոյ կսիրեմ նրանց» (ԺԴ 5):

Մարգարեն դիմում է ժողովրդին. «Դարձիր, Իսրայել, դեպի քո Տեր Աստվածը» (ԺԴ 2),- և նա գիտե, որ զղջացողները մերժում չեն ստանա, եթե ասեն. «Գնանք և վերադառնանք մեր Տեր Աստծուն. որովհետև նա հարվածեց մեզ և ինքն էլ կրժշկի» (Չ 1): Բոլոր սպառնալիքներն ու պատիժները լուր դաստիարակության միջոց էին: Դրանց ետևում հավերժական Սերն է: Այն պայմանավորված չէ ոչնչով, բացի Արարչի էությունից: Անկարելի է «վաստակել» այս Սերը: Այն ազատորեն հորդում է մեղավորների վրա, որ կամենում են Հոր տուն վերադառնալ:

Ներումը կնշանավորվի Ուխտի վերականգնմամբ: Մարդիկ այլևս փրկություն չեն փնտրի կուռքերի և երկրային քաղաքականության մեջ, որովհետև Աստծու ողորմությունը նորից կվերադառնա: Եվ նույնիսկ բնությունը կվերականգնվորվի ու կդառնա ինչպես Եդեմի ժամանակներում՝ բարեսեր և հեզ (Բ 18):

Ավելի ուշ Պետրոս և Պողոս առաքյալները Օսեեի մարգարեության մեջ կտեսնեն Քրիստոսի Եկեղեցու՝ Աստծու նոր ժողովրդի հետ Ուխտի կանխատեսումը (Ա Պետր. Բ 10, Հռոմ. Թ 25):

Օսեե մարգարեի գրվածքները հավաքողը գիրքն ավարտում է հարցով՝ «Ով իմաստուն է կհասկանա այս բաները»: Եվ իսկապես՝ Հին Կտակարանում աստվածային սիրո մասին խոսքերը նորույթ էին և լի էին ավետաբեր հույսով:

Հարցեր կրկնության համար

1. Ինչո՞վ է տարբերվում Օսեեի մարգարեությունն Ամոս մարգարեի քարոզից:
2. Ե՞րբ է ապրել Օսեե մարգարեն, և ինչո՞վ է բնորոշվում նրա դարաշրջանը:
3. Նրա կյանքի ի՞նչ հանգամանքներ ի հայտ եկան գրքում իբրև խորհրդանիշ:
4. Ե՞րբ և ո՞րտեղ ի մի բերվեցին Օսեե մարգարեի գրվածքները:

5. Ի՞նչ երեք հիմնական մասերի է բաժանվում Օսեն մարզարեի գիրքը:
6. Որո՞նք են Օսենի աստվածաբանության հիմնական հատկանիշները:
7. Իսրայելի անհավատարմությունը մարզարեն ինչպես է պատկերում:
8. Ո՞րն է Աստծու ժողովրդի մեղքը:
9. Ո՞րն է հավատի էությունն ըստ Օսեն 2 4-6-ի:
10. Ի՞նչ հետևանքների հանգեցրեց Իսրայելի մեղքը:
11. Ո՞րն է մեղքերի համար պատժելու նպատակը:
12. Ի՞նչ է բովանդակում Աստծու Սիրո հայտնությունը:

§ 4. Եսայի. Սրբության և մեսիականության մարզարե

(մոտ. 765-685 թթ.)

Եսային մեծագույնն է մինչգերության շրջանի պրոֆետիզմի դասական ներկայացուցիչներից: Իբրև Մեսիայի ու Նրա Թագավորության ազդարարող, և որպես մարզարենների ուսմունքն առավել վառ ներկայացնող անհատ մեծ հեղինակություն է վայելում նաև նորկտակարանյան մեկնիչների շրջանում: Դեռևս առաքելական ժամանակներից Եկեղեցին առանձնակի ուշադրության էր արժանացնում նրա գիրքը. Նոր Կտակարանում քառասունից ավելի հղում կա նրա գրքին և վաթսունից ավելի ուղղակի մեջբերում: Սուրբ Հայրերը Եսայիի գրքի բազում մեկնություններ են գրել, իսկ նրա մարզարեությունների խոսքերը հաճախ հնչում են ուղղափառ աստվածապաշտության ժամանակ¹:

1. Եսայի մարզարեի գիրքը մեկ անձի ստեղծագործություն չէ. երուսաղեմյան մարզարեի՝ աստվածաշունչ աշակերտների և շարունակողների մի ամբողջ դպրոց հարյուրամյակներ շարունակ լրացրել և ընդլայնել է գիրքը: Հեղինակի վերաբերյալ հների պատկերացումները նպաստեցին, որ ավարտուն տեսք ստանալով՝ Եսայու գիրքն սկսեն ամբողջությամբ դպրոցի հիմնադիր՝ Ը դարի մարզարեին վերագրել:

«Հավաքական», խմբակային հեղինակության մասին առաջին կասկածներն արտահայտվեցին արդեն միջին դարերում: Բայց միայն ԺԷ-ԺԸ դարերից մեկնիչներն սկսեցին լուրջ հիմնավորումներ բերել նախ երկու, իսկ հետո նաև երեք հեղինակի գոյության վերաբերյալ: Այժմ արդեն աստվածաշնչագետների ճնշող մեծամասնությունը նշում է, որ Եսայի Երուսաղեմացու մարզարեությունները զետեղված են գրքի առաջին մասում (Ա-ԼԹ գլուխներում): Մի քանի հատված հետագայում է ներմուծվել (ԺԳ-ԺԴ, ԻԴ-ԻԵ, ԼԴ-ԼԵ, ԼԶ-ԼԾ գլուխներն ու ընդմիջարկություն են, քաղված Եսայու շրջանի տարեգրություններից):

¹ Լույսն է նաև Հայ Եկեղեցու ծիսակարգում – *խմբ.*:

Գրքի երկրորդ մասը (Խ-ԿԶ) գրվել է հիմնականում Բաբելոնյան գերության շրջանում (Ք. ծ. ա. 2 դար) և դրանից հետո:

Հատվածների այս թվագրման հիմնավորումները կբերվեն Եսայու գրքի երկրորդ մասը դիտարկելիս (տե՛ս §15), իսկ այստեղ կքննարկվեն Ը դարի մեծ մարգարեի բնագրերը:

2. Եսայի մարգարեի անձը և դարաշրջանը: Ի տարբերություն Ամոսի և Օսեեի Եսային ազնվական ընտանիքից էր, մերձ արքունիքին¹: Նա ծնվել է մոտավորապես 765 թվականին՝ Երուսաղեմում և այնտեղ է անցկացրել ողջ կյանքը: Տերը նրան ծառայության է կոչել դեռևս երիտասարդ տարիներին: Մոտավորապես 740 թ. Տաճարում գտնվելիս Եսային տեսիլք ունեցավ. Աստված նրան հրամայեց գնալ քարոզելու և ազդարարել զայրույթը, որ սպասվում է հինկտակարանյան Եկեղեցու «ապստամբ որդիներին»²: Եսայու կինը ևս մարգարեական շնորհ ստացավ (Ը 3): Իր որդիներին Եսային խորհրդանշական անուններ տվեց, որ համահունչ էին նրա քարոզի հիմնական գաղափարներին:



Եսայի մարգարե: Խճանկար Պանագիա Պարագորիտիսսա եկեղեցում (Արտա, Հունաստան):

«Եսային կրոնական բոցավառ հանճար էր ու միևնույն ժամանակ սթափ և իրատես քաղաքական գործիչ, որ իր խոսքով և ազդեցությամբ վճռական նշանակություն ուներ Հուդայի ճակատագրում» (ավ. քին. Ս. Բուլգակով): Այդ շրջանում Հարավային Թագավորությունն ավելի փոքր ու թույլ էր, քան Եփրեմը: Այն կանգնած էր ընտրության առջև. կամ հնազանդվել մեծ տերության՝ Ասորեստանի գերիշխանությանը, կամ անդամակցել դրա դեմ ձևավորված դաշինքին: Դաշինքը գլխավորում էին Սիրիայի և Եփրեմի թագավորները: Երուսաղեմի երիտասարդ թագավոր Աքազն սկզբում խելամիտ ուղի էր ընտրել և փորձում էր զերծ մնալ ռազմաքաղաքական խարդավանքներից: Սակայն դաշնակիցները որոշեցին նրան

¹ Եսայիի հայրը՝ Ամոսը, «ինչպես կարծում են շատերը, տասներկու մարգարեների շարքից երրորդը չէր, բոլորովին այլ անձնավորություն էր, և այս երկուսի անունները հրեից մատյաններում տարբեր գրություն ունեն»։ (Բերոնիմոս Երանելի, Толкование на пророка Исайю, Книга 1. Творения, кн. 7, էջ 6): Եսայիի հոր անունն արտասանվում է *Amos* ձևով:

² Եսայի Լ 1 – խմբ.:

պատժել որդեգրած չեզոքության համար, և նրանց զորքերը շարժվեցին դեպի Երուսաղեմ (Դ Թագ. ԺԶ, Բ Մնաց. ԻԸ): Այդ ժամանակ Եսային առաջին անգամ խոսեց թագավորի առաջ և խոստացավ նրան Աստծուց նշան ստանալ: Աքազը պետք է հույսը դնի ոչ թե զենքի, այլ Աստծու օգնության վրա: Աստված փրկություն է շնորհում հավատարիմներին (Խոսք Էմմանուելի մասին կամ առաջին մեսիական մարգարեությունը՝ Եսայի Է):

Սակայն, փոքրոգություն ցուցաբերելով, Աքազը ճակատագրական քայլ կատարեց. օգնության կանչեց ասորեստանցիներին: Թիզլաթպալասար Գ այս պատրվակով ներխուժեց Ասորիք: Նա ջախջախեց ասորիների բանակն ու գրավեց Գալիլեան: Արդյունքում Հուդան ևս հայտնվեց Ասորեստանից կախյալ վիճակում: Քաղաքական նկատառումներով Աքազն սկսեց հեթանոսական սովորույթներ ներմուծել և զոհեր մատուցել աստվածներին:

Այս տարիներին Եսայի մարգարեի քարոզների հիմնական նյութը ժողովրդի և նրա առաջնորդների անհավատարմությունն էր առ Աստված: Դեռ եփրեմական-ասորական դաշինքի հետ պատերազմելուց առաջ մարգարեն խոսում էր սպասվող աղետի մասին, որ անխուսափելի կդառնա, եթե հեռանան Աստծուց: Եսային գրի էր առնում իր մարգարեությունները և ի պահ տալիս աշակերտներին: Նրա հետևորդների խումբը շատ շուտ կազմավորվեց, և հենց նրանք ապագայի համար պահեցին մարգարեի գրվածքները:

722 թ. երկարատև պաշարումից հետո Սամարիան ընկավ (տես § 5-ի Հավելվածը): Աստվածահայտ հավատքի միակ ակուլն այլևս փոքրիկ Հուդան էր: Եվ Եսայի մարգարեն հույսը կապել էր այն «սուրբ Մնացորդի» հետ, որ պիտի դարձի գա և փրկվի Տիրոջ Օրը: Աքազի կառավարման ավարտին նա ասաց իր՝ երկրորդ մեսիական մարգարեությունը (Թ 2-7)՝ Դավթի տոհմից սերող Մանկան մասին:

715 թվականին գահ բարձրացավ Աքազի որդի Եզեկիան: Բարեպաշտ արքան Եսայիին մոտեցրեց իրեն և հաճախ օգտվում էր նրա խորհուրդներից: Մարգարեն արքային ոգեշնչեց, որ բարեփոխի պաշտամունքը, որով տաճարական արարողությունը մաքրվեց հեթանոսական տարրերից (Դ Թագ. ԺԸ 1-8):

Ասորեստանցիների Սարգոն Բ արքայի մահվանից հետո (705 թ.) նրան ենթակա թագավորները դարձյալ սկսեցին կայսրության դեմ պատերազմի պատրաստվել: Դրանով խիստ հետաքրքրված էր նաև Եգիպտոսը՝ մյուս մեծ տերությունը, որ Ասորեստանի ախոյանն էր: Եվ ականջալուր չլինելով Եսայու բողոքներին՝ Եզեկիան ևս ներգրավվում է այս վտանգավոր խաղում: Պալատում մեծ կշիռ և ազդեցություն էր ձեռք բերել Սոմնաս իշխանը, որ թագավորին պատերազմի էր հրահրում, վստահեցնելով, թե միացյալ դաշինքը Եգիպտոսի օժանդակությամբ կհաղթի Ասորեստանին, առավել ևս, որ նրա

դեմ ռազմական գործողություններ է սկսել նաև Բաբելոնի թագավոր Մարդուկ-ապլահիդդինը (Աստվածաշնչում՝ Մարդուք Բադդան, տես Դ Թագ. Ի 12, Եսայի ԼԹ 1): Ի վերջո Եգեկիան համաձայնեց գլխավորել պայքարը և իր դրոշի ներքո ժողովեց Ասորիք-Պաղեստինի իշխանությունները:

Եվ գուր էր ընդդիմանում Եսայի մարգարեն. նրա խորհուրդներն այլևս չէին լսելու: Այդ օրերին նա գրելու էր.

«Այսպես է ասում Տերը. «Կայ՛ ձեզ, ապստանք որդիներ,
բանալի խորհուրդ էք անում, բայց ոչ իմ կամքով,
դաշինք էք կռում, բայց ոչ իմ հոգով,
մեղքերի վրա մեղքեր էք բարդում...»

Կայ՛ նրանց, ովքեր օգնություն գտնելու համար
իջնում են Եգիպտոս,
ովքեր հեծյալներին ու
մարտակառքերին են ապավինում,
թե շատ են,
և ձիերի մեծ բազմությամբ.
նրանք Իսրայելի սրբի վրա հույս չեն դնում,
Աստծուն չեն փնտրում»:

(Լ 1, ԼԱ 1)

Կրոնական բարեփոխման խնդիրներին փոխարինելու եկան ռազմաքաղաքական պայքարի խնդիրները:

Այդ ընթացքում Ասորեստանի նոր արքան՝ Սենեքերիմը, պատասխան հարվածի էր պատրաստվում: Նա պատժիչ արշավանք ձեռնարկեց դեպի Բաբելոն և շարժվեց արևմուտք: 701 թվականին նա գրավեց Հուդան և պաշարեց Երուսաղեմը:

Ասորեստանի արքայի տարեգրություններում կարդում ենք. «Հիզկիային [Եգեկիային]՝ հրեային, որ մերժեց իմ լուծը, նրա 45 մեծ քաղաքները, ամրոցներն ու շրջակա ավանները, որ թիվ չունեն, ավազաբլուրներ կազմելով և խոյահարող գործիքներով, հետևակի հարձակմամբ և գրոհային աստիճանների կիրառությամբ ես պաշարեցի: Գերեվարեցի 200.150 մարդ՝ մեծ, թե փոքր, կին ու երեխա: Ձիեր ու ջորիներ, ուղտեր ու ավանակներ, անթիվ խոշոր և մանր անասուններ դուրս բերեցի՝ դարձնելով ռազմավար: Իսկ իրեն՝ իր իսկ թագավորական քաղաքում թռչունի նման փակեցի վանդակի մեջ» (XԼԵ. 80, 1, 214):

Դ Թագ. գիրքն այս արշավանքի մասին համառոտ է խոսում (ԺԸ 13-16): Հետագա շարագրանքն արդեն վերաբերում է Սենեքերիմի երուսաղեմյան երկրորդ արշավանքին (մոտ. 688 թ.):

Եզեկիան փրկագնվում է մեծագույն ռազմատուգանքով: Նրա տարածքների մի մասը խլվեց, և երկրը թաղվեց սուգի մեջ: Պահն օգտագործելով՝ Եսայի մարգարեն ժողովրդին կոչ էր անում ապաշխարության: Այս շրջանին են վերաբերում նրա գլխավոր՝ մերկացնող բնույթի մարգարեությունները (գլ. Ա): Մարգարեի աղոթքով թագավորն ազատվեց մահացու և անբուժելի հիվանդությունից: Այժմ նա ամեն ինչով ենթարկվում էր իր դաստիարակին:

Տասը տարի անց Սենեքերիմը որոշեց վերջնականապես արմատախիլ անել հնարավոր ապստամբությունների ծիլերը: 689 թվականին նա ներխուժեց Բաբելոն, և ասորի զինվորները հիմնահատակ ավերեցին Արևելքի հնամենի մայրաքաղաքը: Հասավ Հուդայի ժամանակը: Լաքիսը գրավելով՝ Սենեքերիմը զորքն ուղարկեց պաշարելու Երուսաղեմը (Եսայի ԼՁ 2-ԼԷ 37): Այս անգամ Եզեկիան Եսայի մարգարեի աչքում անմեղ էր: Մարգարեն թագավորի մոտ ուղարկեց իր աշակերտներին, որ հուսադրեն. թշնամին սուրբ քաղաք չի մտնի: Եվ իզուր էր ասորեստանցիների «ուպիսակ» զորահրամանատարը հանձնվելու բանակցություններ վարում, զուր էր հպարտանում Սենեքերիմը, թե հաղթել է բոլոր աստվածներին ու կհաղթի նաև Եսայիին: Եզեկիան քաջ և անզիջում դիրք էր գրավել: Ճիշտ է, փարավոնը փորձեց օգնության գալ Երուսաղեմին, սակայն նրա բանակը պարտության մատնվեց: Եվ հույսը միայն Աստված էր:

Մարգարեի կանխատեսումներն իրականացան: Ասորեստանցիներն,



Ասորեստանցի զինվորը երկու գերի-հարայելացիների հետ: Ասորական խորաքանդակներից (VII դ. թ. ձ. ա.):

անսպասելիորեն պաշարումը դադարեցնելով, Հուդայից հեռացան: Եսայի ԼԷ 36-ում կարդում ենք. «Ապա Տիրոջ հրեշտակը ելավ և Ասորեստանի բանակից հարյուր ութսունհինգ հապարհն սպանեց: Առավոտյան վեր կենալով՝ գտան բոլորի անշունչ դիակները»: Հովսեպոս Փլավիոսը նշում է, որ ասորեստանցիների ճամբարում «մահացու խոցի» համաճարակ էր (Древ. X,1, 5), իսկ հույն պատմագիր Հերոդոտոսը (II, 141) կարծում է, թե Սենեքերիմի զորքը մկների բանակի հարձակմանն է ենթարկվել (ժանտախտի խորհրդանիշն է):

Եսայու ծառայության այս վերջին շրջանին է վերաբերում նրա եր-

րորդ մեսիական մարգարեությունը՝ «Յեսսեի արմատից գավապան պիտի ընձյուղվի» (ԺԱ 1-10):

Մարգարեի մահվան ճշգրիտ թվականը հայտնի չէ: Հնագույն ավանդազրույցների համաձայն նա Եզեկիա թագավորից երկար է ապրել և նահատակվել է մարգարեներին հալածող Մանասեի օրոք (տես § 6):

Եսայի մարգարեի հիշատակը Եկեղեցին տոնախմբում է մայիսի 9-ին¹:

Եսայի մարգարեի կյանքի և գործունեության կարևոր թվականները և ժամանակի պատմական իրադարձությունները

մոտ. 765	Մարգարեի ծնունդը	մոտ. 780–740	Հերոբոլամ Բ կառավումն Իսրայելում, Ոգիա (Ազարիա) Յուդայում	753	Յոնի հիմնադրումը
740	Եսայու կոչումը		Ազարիայի մահը	745	Թիզլաթայալասար Գ Ատրեստանի գահակալ
		736	Աբազը Յուդայի թագավոր		
734	1-ին մեսիական մարգարեություն	734	Աբազի պատերազմն ընդդեմ Եփրեմական-ասորական դաշինքի		
733–732	Երկրորդ մեսիական մարգարեությունը		Թիզլաթայալասար Գ-ի ներխուժումը Գալիլեա: Աբազը Թիզլաթայալասարի վրանում:	732	Թիզլաթայալասարն իրեն է ենթարկում Սիրիան և Բաբելոնը
			Հեթանոսական պաշտամունքը Յուդայում	727	Թիզլաթայալասարի մահը:
725–724	Մարգարեություն Սամարիայի մասին	725 722 – 721 716	Օգիա թագավորի կալանումը: Սամարիայի պաշարումը: Սամարիայի անկումը Աբազի մահը: Եզեկիայի գահակալությունը	726 721	Սալմանասար Ե-ի գահակալությունը Սարգոն Բ գահակալությունը: Եզիպտոսի եթովպական հարստության սկիզբը:
713–711	Մարգարեն հանդես է գալիս ռազմական դաշինքների դեմ	711 705	Սարգոն Բ-ի զորքերը Պաղեստինում Հակասորեստանյան 2-րդ դաշինք: Մարդուկ (Մարովրաթ)–ապլադդիների պատվիրակների այցելությունը Եզեկիային	705 702	Շաբակ ¹ փարավոն Սարգոնի մահը: Մենեփերիմի գահակալությունը Մենեփերիմը ջախջախում է Մարդուկ–ապլադդիների բանակը

¹ Հայ Առաքելական Եկեղեցում հիշատակը նշվում է Վարդավառին հաջորդող հինգշաբթի օրը – *խմբ.*:

¹ Հայերենում՝ Սովա փարավոն (Դ Թագ. ԺԷ 4): Հաճախ նույնացվում է Սաբակոն Բ փարավոնի հետ – *խմբ.*:

701	Մարգարեն մերկացնում և դատապարտում է ժողովրդի մեղքերը	701	Մենքերիմի առաջին արշավանքը դեպի Յուդա	700	Աքեմենյան հարստության հիմնադրումն Իրանում
688	Մարգարեություն Երուսաղեմի փրկության մասին: Մեսիական երրորդ մարգարեությունը	688 687	Մենքերիմի երկրորդ արշավանքը դեպի Յուդա Մանասեի գահակալությունը. Մարգարեների հալածանքը		
մոտ. 685	Եսայու մահը				

3. Եսայի մարգարեի գրություններն աչքի են ընկնում գրական բարձր արժանիքներով: Նրա խոսքերում և օրհներգություններում իրար են միահյուսվել խիստ Ամոսի փառահեղ զորությունը և Օսեեի քնարականությունը: Նրա մոտ տեսնում ենք տարբեր ոճեր՝ ցասկոտ ու մերկացնող, հանդիսավոր ու փառաբանական և առակավոր: Եսային բանաստեղծ է, որի լեզուն դասական է համարվում: Այն պատկերավոր է, հարուստ այլաբանություններով ու համեմատություններով: Իրեն տրված աստվածային Հայտնությունը մարգարեն կատարյալ ձևով է ներկայացնում, օրինակ դառնալով իրեն հետևող բազում սերունդների համար: Եսայու ստեղծագործությունները հանճարեղ գրողի վրա Աստծու Հոգու ազդեցության վառ օրինակ է:

Գրքի առաջին մասում զետեղված մարգարեությունները Եսայու աշակերտները դասակարգել են ոչ թե ժամանակագրական սկզբունքով, այլ ըստ բովանդակության:

- 1) Մերկացնող խոսքեր, որ գրքի ներածությունն են դարձել (գլ. Ա), 733 և 701 թթ. միջև:
- 2) Երուսաղեմի կոչումն ու իր մեղքերը (գլ. Բ-Դ), մոտ. 740 թ.:
- 3) Երգ կամ առակ խաղողի այգու մասին (գլ. Ե), մոտ. 740 թ.:
- 4) Եսային կանչվում է քարոզելու (գլ. Զ) մոտ. 742 թ.:
- 5) Մեսիական առաջին մարգարեությունն էմմանուելի մասին (գլ. Է), մոտ. 733 թ.:
- 6) Մարգարեի որդիներն ու աշակերտները (գլ. Ը):
- 7) Մեսիական երկրորդ մարգարեությունը երկրի Իշխանի մասին (Թ 1-6), մոտ. 730 թ.:
- 8) Սամարիայի վախճանը և Ասորեստանի մերկացումը (Թ 8-Ժ 34), մոտ. 722 թ.:
- 9) Մեսիական երրորդ մարգարեությունը (ԺԱ 1-10), մոտ. 688 թ.:
- 10) Աստծու նոր ժողովուրդ (ԺԱ 10-ԺԲ 6):
- 11) Մարգարեություն Ասորեստանի մասին (ԺԴ 24-27), մոտ. 688 թ.:

- 12) Մարգարեություն փղշտացիների երկրի մասին (ԺԴ 28-32). մոտ 715 թ.:
- 13) Մարգարեություն Մովսեսի մասին (ԺԵ-ԺԶ): Ինչպես կարծում են որոշ մեկնաբաններ, սա Եսայի մարգարեից շուտ է գրվել՝ Թ դարում (հմնտ. Երեմ. ԽԸ 29-47):
- 14) Մարգարեություն Դամասկոսի և Եփրեմի մասին (ԺԷ 1-11). մոտ 734 թ.:
- 15) Մարգարեություն Ասուրի մասին (ԺԸ 12-14). մոտ. 688 թ.:
- 16) Խոսք Եգիպտոսի դեմ (ԺԸ 1-ԺԹ 4). 713-705 թթ. միջև:
- 17) Համաշխարհային կրոնի մասին (ԺԹ 16-25). մոտ. 705 թ.:
- 18) Կենսագրական հատված, վերագրված 713-711 թթ. (զլ. Ի):
- 19) Մարգարեություններ Անապատի, Եդոմի, արաբացիների մասին (զլ. ԻԱ):
- 20) Մարգարեություն Երուսաղեմի մասին (զլ. ԻԲ). մոտ. 705-702 թթ.
- 21) Մարգարեություն Տյուրոսի մասին (զլ. ԻԳ). թվականն անհայտ:
- 22) Մարգարեություն Եփրեմի և Երուսաղեմի մասին (զլ. ԻԸ). 722-ից քիչ վաղ:
- 23) Չգուշացում Երուսաղեմին (զլ. ԻԹ). մոտ. 701 թ.:
- 24) Եգիպտոսի հետ դաշն կնքելու դեմ (զլ. Լ-ԼԲ). 705 - 701 թթ. միջև:
- 25) Ազատագրման օրհներգեր (զլ. ԼԳ). մոտ. 688 թ.:
- 26) Պատմողական հատված տարեգրությունից (զլ. ԼԶ-ԼԷ), որ հիմնականում 688 թվականին է վերաբերում (Սենեքերիմի երկրորդ արշավանքի շրջան):
- 27) Եզեկիայի հիվանդությունը և Բաբելոնի արքայի պատգամավորները (զլ. ԼԸ-ԼԹ). Ը դարի վերջի իրադարձությունները:

4. Եսայի մարգարեի աստվածաբանությունը հետևյալ հիմնական նյութերի շուրջ է.

ա. Աստված առարք է, այսինքն համեմատելի չէ որևէ արարածի հետ: Նա նաև մարդկանցից է պահանջում սուրբ լինել, որը նրանց համար Աստծուն անմնացորդ հավատարիմ ու նվիրված լինելն է:

բ. Աստված Տերն է պատմության: Նա, մարդկային ազատ կամքը պահելով, իրադարձություններն այն հունով է ուղղում, որ, վերջին հաշվով, ծառայում են Իր մտահղացմանը: Այս մտահղացումների մասնակից է դարձնում մարդուն նրա *հավատ-վստահությունը*:

գ. Հավատն առաջին հերթին պետք է արտահայտվի բարոյական կյանքում և Տիրոջ հանդեպ հավատարմությամբ: Միայն այս դեպքում է ծիսական կրոնասիրությունը իմաստ ստանում:

դ. Հինկտակարանյան Եկեղեցուց, որի անդամները մեղքով են վարակ-

ված, Աստված բոլոր ժամանակների համար պահում է «Շեար»-ին՝ Մնացորդին: Սա նրանք են, որ Իրեն հավատարիմ են մնացել՝ ձգտելով ապրել Իր պատվիրաններով: Նրանք կլինեն Աստծու ապագա ժողովրդի միջուկը:

5. Եսայի մարգարեն առաջինն է գրող-մարգարեններից, որ լիակատար որոշակիությամբ խոսում է Մեսիայի մասին որպես Անձի: Նա կանխատեսում է Դավթի տան քաղաքական անկումը, որից, բոլոր փորձություններով անցնելուց հետո, «գավազան» պիտի ընձյուղվի՝ Եսայիի Օծյալը: Նրա գալստյամբ երկիրը կգտնի մարդու կողմից կորուսյալ Եդեմը:

Այսպիսով Եսայի մարգարեի ուսմունքի կենտրոնական նյութերն են՝ Աստծու սրբությունն ու փրկությունը, որ իրականանալու են Նրա Օծյալի միջոցով: Այս է պատճառը, որ Եկեղեցու հայրերը Եսայիին միայն մարգարե չէին անվանում, այլ նաև առաքյալ և ավետարանիչ:

Հարցեր կրկնության համար

1. Եսայի մարգարեի գիրքն ի՞նչ առանձնահատկություններ ունի:
2. Հասարակական ի՞նչ խավից էր սերում մարգարեն:
3. Ո՞րտեղ է նա ծնվել, ապրել և քարոզել:
4. Ինչո՞վ է բնորոշվում նրա ժամանակաշրջանի քաղաքական իրադրությունը:
5. Ի՞նչ իրադարձությունների հետ է կապվում Եսայիի մեսիական Առաջին մարգարեությունը:
6. Ե՞րբ ընկավ Սամարիան:
7. Ինչո՞ւ էր մարգարեն դեմ ռազմական դաշինքներին:
8. Ինչո՞վ է բնորոշվում մարգարեի դիրքորոշումը Սենեթերիմի առաջին և երկրորդ արշավանքների ժամանակ:
9. Բնորոշեցե՞ք մարգարեի գրքի գրական առանձնահատկությունները:
10. Որո՞նք են նրա աստվածաբանության հիմնական նյութերը:

§ 4-ի Հավելված

Եսայի մարգարեի մարտիրոսական վախճանի մասին պատումը

Այս պատումն արդեն հայտնի էր առաջին դարերի քրիստոնյա մատենագիրներին (Տերտուղիանոս, Որոզինես, Եպիփան): Պարականոնի բնագիրն առաջինը հրապարակել է Լորենսը՝ Օքսֆորդում (1819 թ.), եթովպերեն: Պահպանվել են նաև հունարեն և լատիներեն թարգմանությունները: Աստվածաշնչագետների մեծամասնության կարծիքով պարականոնն ի հայտ է եկել հրեական միջավայրում Ք. ծ. ա. Ա-Բ դարերում և ավելի ուշ վերանայվել է քրիստոնեական տեսանկյունից¹: Պատմական արժեք իրենից չի ներկայաց-

¹ Եսայու նահատակությունը Դ Թագ. ԻԱ 16 համարի հրեական միդրաշն է: [Միդրաշ՝ եբր.

նում, սակայն պատկերացում է տալիս լեգենդների վերաբերյալ, որ անցյալում հյուսվել են մեծ մարգարեի մասին: Անգլերեն թարգմանությունն առկա է Ռոբերտ Չարլզի ընտրանիում («Апокрифы и псевдэпиграфы», Oxford, 1973, էջ 159-162):

Պարականոնը պատմում է, թե ինչպես Մանասեի օրոք արքայի սպասավորները բռնեցին Եսայիին և տանջեցին՝ ստիպելով հրաժարվել իր մարգարեություններից: Եվ որովհետև Եսային անդրդվելի էր, նրան տանջանքների ենթարկեցին և փայտյա սղոցով նրան երկու կես արեցին: Մեռնելով շարձարանքների ժամանակ մարգարեն «ո՛չ գոռում էր և ո՛չ լալիս,- կարգում ենք պարականոնում,- որովհետև շրթունքները Սուրբ Հոգով էին խոսում»:

§ 5. Եսայի մարգարե

(շարունակություն)

1. Կոչումն մարգարեի: Աստծու

Սրբությունը: Իր իսկ խոսքերով Աստված երևացել է Եսայուն Օզիա թագավորի մահվան տարում (մոտ. Ք. ծ. ա. 740 թ.): Շարադրանքից կարելի է եզրակացնել, որ Եսային տեսիլքը Տաճարում է ստացել: Այն ամենն ինչ տեսնում ու լսում էր մարգարեն, բացվում էր նրա հոգևոր աչքերին ու լսելիքին: «Եսային լսում է,- մեկնում է սուրբ Բարսեղ Մեծը,- Աստծու ձայնը, չնայած ոչինչ չի հասնում մարմնավոր լսելիքին... որովհետև այդ մարդկանց անխոտոր և մաքուր մտքերում անպատմելի զորությունը պատկերներ են ստեղծվում, ասես նրանք լսում են Աստծու խոսքը, չնայած օդը չի հաղորդում, և ականջին չի հասնում որևէ շշուկ» (Толк. на Исайю, кн. VI.):



Արամեերեն արձանագրություն քարե տախտակի վրա. «Այստեղ են տեղափոխել Օզիայի մատնիքները, հրեաների թագավորի (742 թ. Ք. ծ. ա.)

Մարգարեի առջև հառնեց գահը, որին բազմած էր է-ն՝ շրջապատված հրեղեն էակներով՝ սերովբեներով: Եվ Աստծու Փառքի առջև փակելով իրենց դեմքերը՝ նրանք բացականչում էին. «Սուրբ, սուրբ, սուրբ՝ զորությունների Տերը, և ամբողջ երկիրը լի է Երա փառքով»:

մեկնություն - Հին Կտակարանի մեկնության հրեական բանավոր ավանդությունն է - խմբ.]:

Գահը, կամ աթոռը նշանակում էր, որ Եահզվեն միակ իրական Թագավորն է Աստծու ժողովրդի և աշխարհի (հմմտ. Հայտն. Դ 3-11): Սերովբե («սերաֆիմ», որ «սարաֆ»ի հոգնակին է) բառը՝ այրող, կիզիչ, սրանից բացի միայն մեկ անգամ է հանդիպում Հին Կտակարանում, երբ հիշատակվում են հրե օձերը՝ «հա-նախաշիմ հա-սերաֆիմ» (հմմտ. Թվեր ԻԱ 6): Շատ մեկնիչների կարծիքով Եսայու տեսիլքի սերովբեները երկնային գորությունների մարմնավորումն են. զորք, որ խմբված է Աստծու գահի շուրջը, ինչպես Եզեկիելի հիշատակած քերովբեները (զլ. Ա): Իսկ սերովբեների թևերի վերաբերյալ, ըստ Հերոնիմոս Երանելու, այլաբանություն է, որ խորհրդանշում է նրանց շարժման կայծակնային արագությունը (Толк. на пр. Исаию, գիրք III.):

Սերովբեների օրհներգը, որ հետագայում հինկտակարանյան և քրիստոնեական պաշտամունքի մեջ մտավ, բացահայտում է Աստծու և արարածների փոխհարաբերության գաղտնիքը: Մի կողմից Նա սուրբ է (եբր. שׁוֹדֵד ԿԱԴՈՇ) և բարձր երկրային ամեն բանից, սակայն միևնույն ժամանակ Նրա Փառքը (եբր. נִבְרָךְ ԿԱՎՈՐ) հեղվում է համայն Տիեզերքով՝ թափանցելով այն: Այն Աստծու «Էներգիան» է, Աստվածահայտնության ձևը (հմմտ. Ելք ԻԴ 17, Սաղմ. ԺԸ 2):

Մարգարեն գիտակցում է, որ ինքը մեղավոր մարդ է և չի կարող ողջ մնալ Աստծու կուրացուցիչ փառքի մասին խորհելիս: Սակայն երկնային հրով մաքրագործված՝ նա համարձակորեն կանգնում է Արարչի գահի առջև ու պատրաստակամ համաձայնում է լինել Նրա առաքյալը:

Ուշագրավ է, որ արևելյան խորհրդապաշտության տեսանկյունից (Հնդկաստան, Հունաստան) մտահափշտակության մեջ ընկած մարդը կորցնում է սեփական անձի գիտակցությունը, մինչդեռ Եսային, աստվածայինի հետ շփվելով, իրեն ճանաչելու և խորհրդածելու շնորհ է ստանում: Սրանով բացահայտվում է աստվածաշնչյան Հայտնությունը մարդու մասին՝ որպես պատասխանատու և բանական էակի, որ կարող է Արարչի գործակիցն ու սպասավորը լինել:

Սրբազան սարսուռը, որ Տաճարում համակել էր մարգարեին, ոչ միայն Փառաց Թագավորի անհաս վեհությունը է պայմանավորված, Թագավոր, որին անգամ սերովբեները չեն կարող նայել, այլ նաև Նրա Սրբությունը, որ գերագույն մաքրությունն է ու զերծ ցանկացած խավարից ու մեղքից: Այս իսկ պատճառով «անմաքուր շուրթերով» մարդը չի կարող դիմակայել Փառքի շողարձակմանը: Նա մահվան է դատապարտված: Սրանով իրար են կապվում Աստծու Սրբությունն ու մարդու բարոյական վիճակը: «Սուրբ եղեք, քանպի Ես՝ ձեր Տեր Աստվածը սուրբ եմ» (Ղևտ. ԺԹ 2) խոսքերը բարոյական իմաստ են ստանում. Աստված ոչ միայն անդրսահմանական Զորություն է, այլ նաև գերագույն Բարի:

2. Աստված պատմության Տերն ու Թագավորն Է: Եսայի մարգարեն գործուն մասնակցություն ուներ երկրի կյանքում և կարողանում էր իմաստնաբար գնահատել քաղաքական իրադրությունը: Սակայն նրա հայրենասիրությունը հոգևոր բնույթ ուներ: Նա Երուսաղեմի համար Ասորեստանի կամ այլ կայսրությունների հզորությունը չէր կամենում: Աստված, որի նպատակը միայն ժողովրդին ուժ և բարգավաճում շնորհելն է, արդեն գրեթե չէր տարբերվի հեթանոս աստվածներից: Մինչդեռ Եահվեն պատմության միակ Թագավորն է: Եվ Թագավորությունների երկրային մեծությունը փոշի է նրա առջև: Հրամանատարներն առաջնորդում են իրենց բանակները, միապետները ծրագրեր են կազմում և զարդարում են իրենց մայրաքաղաքները, սակայն նրանք անկարող են փոխել պատմության ընդհանուր ընթացքը, որ որոշում է է-ն: Աստուրն ընդամենը փայտ է նրա ձեռքին, Նա է ազդանշան տալիս՝ *ասես պահապան շանը* (Եսայի Ե 26-ի բառացի թարգմանությամբ՝ «սուլոց» Է. տևն Ի. Якимов, Толкование на Кн. пр. Исайи. СПб., 1893, էջ 102):

Աստծու Դատաստանն ամբողջ աշխարհին է վերաբերում: Այն սանձում է մարդկային հպարտությունը, այն մոտենում է փոթորիկի պես.

*«Քանպի Չորությունների Տիրոջ օրը
բոլոր հպարտների ու ամբարտավանների վրա է,
բոլոր մեծամիտների ու գոռոպների վրա,
որոնք պիտի խոնարհվեն,*

նաև Լիբանանի բոլոր

բարձր ու սլացիկ մայրիների վրա ...

բոլոր բարձր լեռների

և բարձրիկ բլուրների վրա,

բոլոր վերասլաց աշտարակների

և բարձր պարիսպների վրա ...

Ամեն մարդ պիտի խոնարհվի,

մարդկանց հպարտությունը պիտի իջնի,

և միայն Տերը պիտի բարձրանա այդ օրը»:

(Բ 12-17)

Սա ստորացում չէ մարդու համար: Այն, որ մարգարեն կարող է դեմ հանդիման խոսել Աստծու հետ և կամավոր կատարել նրա հրամանները («Ո՛ւ՛մ ուղարկեմ... «Ահավասիկ ես, ինձ ուղարկիր» – 2 8), հակառակն է ապացուցում: Մարգարեն ընդամենը պատռում է դիմակը մարդկային մարմնավոր հպարտության՝ բացահայտելով դրա ունայնությունը:

Եվ լոկ այն ժամանակ, երբ Աստծու ժողովուրդը կվանի իր բոլոր երկրային ձգտումները, այն ժամանակ միայն նրան կտրվի է-ին ճանաչելու շնորհը: Ուստի Եսայիի պարտքն է մերկացնել չարիքները և կանխատեսել աղետնե-

րը: Նա սարսում է իր առաքելությունից և հարցնում. «Մինչև երբ, Տե՛ր»: Եվ ստանում է պատասխանը.

Մինչև որ քաղաքներն ավերվեն
 քնակիչ չլինելու պատճառով...
 և այդ երկիրը մնա ամայի:
 ...և ՍՈՒՐԲ ՍԵՐՈՒՆԴԸ,
 ինչպես իրենց պատյանը թոթափած բլեկն
 ու կաղին, ՆՐԱ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԴԱՌՆԱ:

(Ձ 11, 13)

Եվ այսպես քաղաքական երազանքների և հույսերի խորտակումը կլինի Աստծու ժողովրդի վերածնության նախապայմանը:

Սրանով է բացատրվում այն, որ Եսային կտրականապես դեմ էր ռազմական դաշինքներին, միասնական ճակատ կազմելու և Եգիպտոսի օժանդակությանն ապավինելու նախագծերին: «Հեծյալները և մարտակառքերը» չեն փրկի ժողովրդին: Նա պետք է հույսը կապի միայն է-ի՝ պատմության Տիրակալի և Թագավորի հետ:

3. Աստծուն հավատալն ու ծառայելը, ըստ Եսայու, Նրա սրբության առջև խնկաբույր խոնարհումը չէ միայն (տաճարական պաշտամունք), այլ առաջին հերթին Նրա պատվիրանների կատարումը: Եվ Աստված առավել խիստ կլինի իր ժողովրդի նկատմամբ, որին շնորհվել են Ուխտը և խոստումը: Եվ եթե մարդիկ կարծում են, թե Աստծու գուլթը կշարժեն զոհերով և «սիրաշահեն» ի պատիվ Նրա կատարվող տոնախմբություններով, ապա շարաշար սխալվում են.

«Իմ ինչին են պետք ձեր բազմաթիվ պոհերը,
 - ասում է Տե՛րը, -
 ես կշտացել եմ ձեր խոյերի ողջակեպներից.
 ձեր գառների ճարպը,
 ցուլերի ու նոխասների արյունը չէ, որ ուզում եմ,
 և ոչ էլ այն, որ գաք ու կանգնեք իմ առաջ:
 Ո՛վ ինդրեց դա ձեզնից.
 մի՛ շարունակեք կոխոտել իմ գավիթները:
 Եթե ասնիվ ալյուրի հաց մատուցեք ինձ՝ փուր է լինելու.
 ձեր խնկերն էլ են պիղծ են ինձ համար.
 ձեր ամսամուտները, շաբաթները
 և տոնական մեծ օրը ևս անընդունելի են ինձ.
 ձեր պահեցողությունն ու հանգիստը,
 ձեր ամսամուտներն ու տոները ասեց իմ հոգին:
 Կշտացել եմ ձեզնից, այլևս չեմ ների ձեր մեղքերը:

Երբ աղոթքի համար դեպի վեր բարձրացնեք ձեր ձեռքերը,
 երես եւ դարձնելու ձեզանից,
 և եթե բազմապատկեք ձեր աղոթքները,
 չեմ լսելու ձեզ, որովհետև ձեր ձեռքերը լի են արյունով:
 Լվացվեցե՛ք, մաքրվեցե՛ք,
 իմ աչքի առաջ ձեր չար արարքները
 թոթափեցե՛ք ձեզանից,
 վերջ տվե՛ք ձեր չարագործություններին:
 Սովորեցե՛ք բարիք գործել, արդարություն փնտրեցե՛ք,
 փրկեցե՛ք զրկվածին,
 արդարադատ եղե՛ք որքի հանդեպ,
 իրավունք տվե՛ք այրուն:

(Ա 11-17)

Եսայի մարգարեի տողերում Աստծու ժողովուրդն առաջին անգամ ներկայանում է իբրև խաղողի այգի: Հետագայում այս պատկերը դառնալու է կարևորագույններից մեկը Նոր Կտակարանում (առակներ խաղողի այգու, որթատունկի և այլն): Խաղողն այն բույսն է, որ առանձնակի հոգածություն և խնամք է պահանջում. հարկավոր է մշտապես էտել և հեռացնել անպտուղ մատերը: Եսայու առակում (զլ. 5) Աստված հանդես է գալիս իբրև հոգատար մշակ, որ խաղողի վազեր է տնկել և անում է ամեն բան, որ դրանք բերք տան, սակայն ազոխ տվեցին.

«Չորությունների Տիրոջ այգին
 Իսրայելի տունն է,
 Յուդայի երկրի մարդը՝
 նրա սիրած դավար որթատունկը.
 սպասեցի, որ նա իրավունքը պահի,
 առաջ տանի, բայց նա անիրավություն արեց,
 արդարության փոխարեն՝ ողբ ու աղաղակ:

(Ե 7)

Եվ ինչպես հողագործն է թողնում ու լքում անպետք այգին, նույն կերպ և Տերն է թողնում, որ Իր Եկեղեցին անցնի փորձությունների միջով, որպեսզի մաքրվի և գիտակցի մոլորությունները:

Հեթանոսության արված զիջումները և օտարերկրյա թագավորներից օգնություն խնդրելն Աստծու աչքին դավաճանություն և մատնություն են միակ Տիրակալի և Թագավորի հանդեպ.

Լսի՛ր, երկինք, և ականջ դի՛ր, երկիր,
 քանզի Տերն է խոսում.
 «Չավակներ ունեցա և մեծացրի,
 իսկ նրանք ինձ անարգեցին:

Եվն իր տիրոջն է ճանաչում,
 և էշը՝ իր տիրոջ մուրը,
 բայց Իսրայելն ինձ չճանաչեց,
 իմ ժողովուրդն ինձ չհասկացավ»:


(Ա 2-3)

Սակայն որքան էլ ծանր լինի կոչվածների մեղքը, մարդկային շար կամքն անկարող է փոխել Աստծու ծրագրերը: Եվ նույնիսկ Իսրայելի կործանումից հետո նրա «արմատը» կգոյատևի: Եվ Աստված արդար մնացած մնացորդի հետ կրկին կստեղծի Իր Թագավորությունը:

4. Սուրբ մնացորդը Եսայու մարգարեությունների կարևորագույն գաղափարներից է: Ինչպես ժամանակին ընտրվեց Նոյը անօրեններից և Աբրահամը՝ հեթանոսներից, նույն ձևով հինկտակարանյան Եկեղեցու ընդերքում կպահպանվի Աստծուն հավատարիմ մարդկանց փոքրաթիվ խումբը: Նրանք կգիմեն Աստծուն և փրկվելու են կգտնեն: Ի նշան այս ամենի մարգարեն իր որդուն կոչեց Սեար-Յասուր՝ «Մնացորդը դարձի պիտի գա»¹:

Եսայի մարգարեն տեսնում էր այդ Մնացորդն ի դեմս բարեպաշտ մարդկանց, որ իրենց «աղքատ» և «հեզ» էին կոչում²: Նրանք ատում էին հարստությունը, չէին գայթակղվում օտար քաղաքակրթությունների փայլով և պահում էին հին ժամանակների բարոյական մաքրությունը:

Այս միջավայրից դուրս եկան Եսայիի աշակերտներն ու հոգեզավակները (Ը 18): Նրանք ապրում էին հավատով, որ երբեք չսասանվեց, և հույսով, որ նրանց ներշնչել էր ուսուցիչը: Ինչպես Տեր Հիսուս հիմնեց Իր Եկեղեցին Պետրոս առաքյալի հավատքի «վեմի» վրա (Մատթ. ԺԶ 18), նույնպես



և Հին Կտակարանում Նրա նախակարապետ-մարգարեն սուրբ մնացորդն ամուր հիմք էր համարում, որի վրա կանգնելու է Աստծու ժողովուրդը: Հանուն նրա Երուսաղեմը պետք է խնայվի և փրկվի թշնամական հրոսակներից: Եթե քաղաքն ընկներ, դեռևս չամրացած և չափազանց փոքր Մնացորդը կարող էր ցրվել և անհետանալ: Եվ քանի դեռ այն չի ամրացել, Դավթի քաղաքը երկնային հովանու ներքո պիտի լինի:

Դրա համար էլ այսպես է ասում Տեր Աստված.
 «Ահա ես Սիոնի հիմքում մեծագին քար եմ դնում,
 պատուական ու

¹ Տե՛ս Եսայի է 3՝ Յասուր - խմբ.:
² Զմմտ. Մատթ. Ե 3-5 համարները - խմբ.:

ապնիվ անկյունաքար՝ նրա հիմքում,
և ով որ հավատա նրան՝ չի ամաշի»:

(ԻԸ 16)

Եսայի մարգարեի հույսը Մնացորդի հանդեպ սերտորեն կապված էր մեսիական սպասումների հետ: «Անկյունաքարը» և՛ սուրբ Մնացորդն է, որ պահել է իր հավատարմությունը, և՛ Ինքը Մեսիան՝ Աստծու Թագավորության Հիմնադիրը: Դարձի եկած հրեաների մասին խոսելիս Պողոս առաքյալը նրանց նույնացնում է Մնացորդի հետ, որի մասին մարգարեացել էր Եսային. «Նույնպես և ներկա ժամանակում մնացորդներ՝ ըստ ընտրության շնորհի» (Յոհն. ԺԱ 5, հմմտ. ԺԱ 25-27):

5. Մեսիականությունը Եսայի մարգարեի մոտ: Մարգարեն հայտնություն էր ունեցել, որ կգա ժամանակը, երբ կվերանան երկրային թագավորություններն իրենց պատերազմներով ու դաժանություններով հանդերձ, և միայն Տերը կլինի աշխարհի Թագավոր: Այս Թագավորությունն սկիզբ կառնի Երուսաղեմից, սակայն կտարածվի բոլոր ժողովուրդների վրա: Այս առիթով Եսային մի մարգարեություն է բերում, որ առավել ամբողջական է Միքիա մարգարեի գրքում¹: Մեկնիչները միասնական կարծիք չունեն, թե մարգարեներից որն է այս բնագրի հեղինակը՝ Եսային, Միքիան, թե ամեն մեկն իր հերթին վերցրել է մի երրորդ՝ անհայտ հեղինակից (տե՛ս Толковая Библия, հտ. 7, էջ 253): Սակայն շարադրանքն ընդհանուր առմամբ լիովին համապատասխանում է այն Հայտնությունը, որ արձանագրվել է Եսայու գրվածքներում:

Վերջին օրերին պիտի հայտնվի Տիրոջ լեռը,
Աստծու տունը՝ լեռների գագաթներին,
պիտի բարձրանա բլուրների վրա,
և ԲՈՂՈՐ ՀԵԹԱՆՈՄՆԵՐԸ ՊԻՏԻ ՇԱՐԺՎԵՆ ԴԵՊԻ ՆԱ:

Գալու են բազում ժողովուրդներ՝ ասելով.
«Եկե՛ք ելնենք Տիրոջ լեռն ու Հակոբի Աստծու տունը:
Նա մեկ կսովորեցնի իր ճանապարհները, որոնցով և կգնանք»:
Օրենքները Սիոնից են դուրս գալիս,
և Տիրոջ խոսքը՝ Երուսաղեմից:
Նա դաստաստան պիտի տեսնի հեթանոսների մեջ
ու պիտի հանդիմանի բազում ժողովուրդների:
Նրանք իրենց սուսերներից խոփեք պիտի ձուլեն,
և իրենց պիններից՝ մանգաղներ.
ապգ ապգի վրա սուր չպիտի բարձրացնի,
և նրանք այլևս չեն սովորելու պատերազմել:

(Եսայի Բ 2-4)

¹ Տե՛ս Միքիա Դ 2-5 – խմբ.:

Եվ եթե մարգարեության առաջին մասն իրականացել է Քրիստոս Փրկչի գալստյամբ, ապա երկրորդն այն ժամանակներին է վերաբերում, երբ ավետարանական գաղափարներն այնքան խորը կթափանցեն մարդկային հարաբերությունների մեջ, որ կսկսեն որոշիչ դեր խաղալ ժողովուրդների կյանքում: Անգամ մեր հարյուրամյակում¹ այս հույսն անիրականանալի կարող է թվալ: Եսայի մարգարեի ժամանակ էլ պատերազմներն ամենուր էին, բայց, այնուամենայնիվ, մարգարեն ազդարարեց ապագայի մասին այս Հայտնությունը և հավատում էր Բարու վերջնական հաղթանակին:

Ժողովուրդների հաշտեցումը Եսայու գրքում չի ուրվագծվում իբրև Իսրայելի հաղթանակ թշնամիների նկատմամբ: Հակառակը. և՛ զավթիչները (Ասսուր), և՛ նրանք, որ բազմաստվածության գայթակղությունն էին տարածում (Եգիպտոս), վերածնված մարդկության սրբազան եղբայրությանը կանդամակցեն:

«Այն օրը Տիրոջ փոխանդանը լինելու է Եգիպտացիների երկրում... Այն օրը Եգիպտոսից դեպի Ասորեստանն ճանապարհ պիտի լինի, ասորեստանացիները պիտի մտնեն Եգիպտոս, եգիպտացիներն էլ պիտի գնան ասորեստանացիների մոտ. եգիպտացիները պիտի ծառայեն ասորեստանացիներին²:

Այն օրն Իսրայելը եգիպտացիների ու ասորեստանացիների շարքում երրորդը պիտի լինի՝ օրինության արժանաանալով այն երկրում, որն օրինելու է Չորությունների Տերը՝ ասելով. «Օրհնյալ լինի իմ ժողովուրդը, որը Եգիպտոսում է և Ասորեստանում, օրհնյալ լինի իմ ժառանգությունը՝ Իսրայելը»:

(ԺԹ 19, 23-25)

Այսպիսով, մեսիական շրջանը Եսայու գրքում ուրվագծվում է որպես ունիվերսալիզմի դարաշրջան:

Մարգարեի մեսիական սպասումների երկրորդ առանձնահատկությունն այն է, որ Աստուծու Օծյալը հանդես է գալիս որպես որոշակի Անձ:

Եսայու մեսիական կարևորագույն մարգարեությունները, ինչպես նշել ենք, երեքն են: Առաջինը հնչել է մոտավորապես 734 թ., երբ եփրեմական-ասորական դաշինքի բանակները շարժվում էին դեպի Երուսաղեմ: Աքազ թագավորը պատրաստվում էր թշնամու գերազանցող ուժերի հարձակմանը և ստուգում էր պաշտպանական կառույցները, երբ իրեն ընդառաջ ելավ Եսային՝ ասելով. «Չգոնջ եղիր և հանդարտվիր. մի վախեցիր, և թող քո անձը չպարհուրի»: Աքազը պետք է անդրդվելի լինի իր հավատքով, քանի որ Դավ-

¹ Ի դարում – խմբ.:

² Հայերենը համապատասխանում է Յոթանասնից թարգմանությանը. ռուսերենում և եբր.՝ Եգիպտացիները ասորեստանացիների հետ կծառայեն Տիրոջը – խմբ.:

Թի քաղաքը պետք է փրկվի: Մարգարեն նույնիսկ առաջարկեց թագավորին նշան ցույց տալ, որ հաստատի խոստման անխախտ լինելը: Սիոնը կմնա կանգուն, ինչ թշնամի էլ որ հարձակվի: Սակայն Աքազը, զուտ քաղաքական ծրագրեր փայփայելով (տե՛ս § 4), չկամեցավ Աստծուց նշան խնդրել: Եվ այն-ժամ մարգարեն ասաց.

Դրա համար էլ Տերն ինքը ձեզ նշան է տալու: Ահա կույսը պիտի հղիանա ու որդի ծնի, և նրա անունը պիտի լինի Էմմանուել. յուզ ու մեղը պիտի ուտի նա. նախքան չարը ճանաչելը կամ այն ցանկանալը նա պիտի ընտրի բարին: Դրա համար մանուկը բարին կամ չարը ճանաչելուց առաջ պիտի անարգի չարը և ընտրի բարին, և այն երկիրը, որից դու վախենում ես, պիտի լքվի երկու թագավորների պատճառով:

(Է 14-16)

Մարգարեն սրան հավելում է ասորական վտանգի ու Երուսաղեմին սպասվող փորձությունների մասին խոսքերը:

Մեսիական առաջին քարոզը եկեղեցիներում ընթերցվում է Քրիստոսի Ծննդյան Ճրագալույցի¹ ժամանակ: Այն երկակի իմաստ է կրում.

ա) Պատմական կամ բառացի. երբ հղիանա, ծնվի Մանուկը և մեծանա, Դավթի տան թշնամիները կշախջախվեն:

բ) Նախապատկերային. կապված է Դավթի տան հատուկ՝ մեսիական լինելու հավատի հետ²: Մարգարեի համար Մանկան ծնունդը նշանն է անբեկանելի ռության Ուխտի, որ կնքվել է մեծ թագավորի տան հետ: Աստծու կամքով այն անդրդվելի կմնա անկախ ամեն ինչից, և Աստված Ինքը կայցելի Իր ժողովրդին (Նորածնի խորհրդանշական անունը՝ Էմմանուել նշանակում է «Աստված մեզ հետ»):

Շատ մեկնիչներ կարծում են, որ Եսային ի նկատի չունեն սովորական մի ծնունդ, այլ՝ հրաշալի: Ըստ երևույթին այդպես է մտածել նաև թարգմանիչը, որ Յոթանասնիցում Կույս՝ *παρθένο* բառն է դրել, մինչդեռ հրեական բնագրում «ալմա»՝ երիտասարդ կին ձևն է: «Ավետարանիչները, - նկատում է պրոֆ. Կարտաշևը, - որ արդեն սովորաբար Աստվածաշունչն ընթերցում էին հունարեն, իրենց աչքերը սևեռեցին *παρθένο* բառին և մեզ ավետեցին, որ այս անսովոր և ոչ ճշգրիտ թարգմանությունը պատահականությունն արդյունք չէ՝ մարգարեական է և խորհրդանշական» (Ветхозаветная библейская критика, էջ 35. տե՛ս նաև А. Князев. Откровение о Матери Мессии. - Православная мысль, 1953, թ. IX., էջ 101): Սակայն հարկ է ընդգծել, որ Մեսիայի

¹ Հայ Առաքելական Եկեղեցում էլ այդ հատվածը ընթերցվում է Ս. Ծննդյան ճրագալույցի երեկոյան՝ ընթերցումների ժամանակ - խմբ.:

² «Պատմական ճշմարտությունից հետո ամեն բան պետք է հասկանալ հոգևոր իմաստով» (Блж. Иероним, Творения, kn. 7, էջ 4):

ծնունդը Կուչսից (Մատթ. Ա 22-23) շրնկալվեց հինկտակարանյան մարդու պատկերացումներում: Քրիստոսի ժամանակներում Մեսիայի վերաբերյալ ժողովրդական պատկերացումներում Օծյալի գերբնական ծնունդը դեռ տեղ չունեի (տե՛ս Սվ. Иустин Мученик. Диалог с Трифоном, էջ 48-49, Иероним. Толк. на пр. Исаяю, գիրք III.):

Մեսիական Երկրորդ մարգարեությունն առավել պարզ և որոշակի է: Եսային այն գրի է առել առաջինից քիչ հետո, երբ ասորեստանցիներն արդեն գրավել ու ամայացրել էին Գալիլեան: Մոռյլ իրականության այսպիսի միջավայրում մեսիական դարաշրջանի մասին ուրախալի լուրը կարող էր անհավանական թվալ ժամանակակիցներին: Սակայն մարգարեն խորապես հավատում էր Աստծու գալիք Թագավորությանը:

Նախ դուք այդ նեղությունները տարեք և շնուտ թոթափեցեք, Չարուղոնի՛ երկիր, երկիր՝ Նեփթադիմի, ճանապարհի ծովի, նաև մյուսներդ, որ բնակվում եք ծովեկերքին և Հորդանան գետի այն կողմում, հեթանոսների՛ Գալիլիա և Հրեաստանի՛ կողմեր:

Այն ժողովուրդը, որն ընթանում էր խավարի միջով,
տեսավ մեծ լույս.

ձեպ համար էլ, որ բնակվում եք աշխարհում
և մահվան սովերների մեջ,
լույս պիտի ծագի...

որովհետև վերացավ այն մեծ լուծը,
որ նրանց վրա էր դրված,
և գավապանը, որ նրանց պարանոցին էր:

Ինչպես Մադիամի օրերին,
նա մերժեց հարկապահանջների գավապանը:

Ամեն մի պատմունճանի և հանդերձի համար,
որ նենգությանը էին հավաքել,
տուգանքով պիտի հատուցեն,

նույնիսկ եթե դրանք այրված լինեին,
նրանք պիտի հոժարեին հատուցել,
քանպի մեպ համար մասուկ ծնվեց,
մի որդի տրվեց մեպ,

որի իշխանությունն իր ուսերի վրա պիտի լինի.
նա պիտի կոչվի Մեծ խորհրդի հրեշտակ,

Սքանչելի խորհրդակից, Աստված հպոր, Իշխան,
Հայր հանդերձյալ աշխարհի:

Մեծ Է նրա իշխանությունը,
և նրա խաղաղութիւնը սահման չունի:

Նա պիտի նստի Դավթի աթոռին,
առաջ պիտի տանի նրա թագավորությունը,

իրավունքով ու արդարությանը պիտի պորացնի այն այսուհետև
և հավիտյանս հավիտենից:

Չորութիւնների Տիրոջ նախանձախնդրությանը
պիտի կատարվի դա:

(Թ 1-7)

Այսպիսին է առաջին՝ ուղղակի խոսքը Մեսիայի մասին: Չնայած հատվածում դեռևս կան երկրային հույսերի արձագանքներ՝ այն Օծյալի Թագավորությունը պատկերում է իբրև Աստծու ձեռքերի գործ: Մադիամում տարած հաղթանակի (Գեդեոնի օրոք) և Մեսիայի գալով պատերազմների ավարտի մասին հիշատակումները ցույց են տալիս, որ մարգարեին Նա ներկայացնում էր որպես աստածաշունչ Առաջնորդ: Նրա տերությունը կլինի արդար և հավերժ: Խորհրդանշական անունները բացահայտում են Մեսիայի գերբնական էությունը.

Սքանչելի խորհրդակիցը ցույց է տալիս Նրա գերագույն իմաստնությունը,

Աստված հզորը՝ աստվածային զորությունը,

Հայր հանդերձյալ աշխարհինը՝ Նրա Թագավորության անսասանությունը,

Իշխան խաղաղութեանը (եբր. Ծօփ րօ ՍԱՐ ՇԱԼՈՄ՝ իշխան հանգստություն)՝ օրհնյալ աշխարհը, որ հաստատվելու է մեսիական Թագավորության մեջ:

Եվ վերջապես, երրորդ մարգարեության մեջ հարստության [Դավթի] հանգամանքն ամբողջովին ետ է նահանջում: Մարգարեն հայտարարում է, որ փրկությունը կհայտնվի, երբ Դավթի տան ծառը կհաստվի, և երբ իշխանությունը կվերցվի նրանից: Մեսիան կգա որպես երիտասարդ ընձյուղ, որ բարձրանում է ընկած ծառի արմատներից: Նա կհաղթի չարին ոչ թե զենքի ուժով, այլ Տիրոջ Հոգով: Եվ դա կլինի ոչ միայն մարդկային ցեղի մեջ թշնամության վախճանը, այլև ներդաշնակության վերականգնումը, որ սահմանված է բոլոր արարածների համար.

Յեսսեի արմատից գավապան պիտի ընձյուղվի,

ծաղիկ պիտի բուսնի այդ արմատից:

Նրա վրա պիտի իջնի Աստծու Յոգին,

ինաստության և հանճարի հոգին,

խորհրդի ու պորության հոգին,

գիտության և աստվածաշունչության հոգին.

Աստծու երկյուղի հոգին պիտի լցնի այն:

Ոչ ըստ կարծիքի պիտի դատի նա

և ոչ էլ ըստ խոսքերի հանդիմանի:

Նա տնանկի իրավունքը պիտի պաշտպանի

և արդարությամբ պիտի դատի երկրի տառապյալներին.
 Իր բերանի խոսքով հարվածի երկրին
 և իր շուրթերի շնչով ոչնչացնի ամբարիշտներին:
 Արդարությամբ պիտի գոտևորի իր մեջքը
 և ճշմարտությամբ կապի իր կողերը:
 Գայլն ու գառը միասին պիտի ուտեն,
 ընձառյուծը ուլի հետ պիտի մակադի,
 հորթը, ցուլն ու առյուծը միասին պիտի սնվեն,
 և մատաղատի մանուկը պիտի հովվի նրանց:
 Եվն ու արջը միասին պիտի ուտեն,
 նրանց ձագերը խառը պիտի շրջեն,
 և առյուծը, ինչպես եղը, հարդ պիտի ուտի:
 Մատաղատի մանուկն իր ձեռքը պիտի մոցնի
 իժերի բունը և իժերի ձագերի բունը,
 ու նրանք ոչ ոքի չպիտի կարողանան վնասել
 և խայթել իմ սուրբ լեռան վրա,
 քանպի ամբողջ երկիրը լցվելու է Տիրոջ գիտությամբ,
 նման առատ ջրերին, որոնք ծածկում են ծովերը:
 Այն օրը հեթանոսներն իրենց հույսը դնելու են
 Հեսսեի արմատի վրա,
 որն իշխան է կանգնելու հեթանոսներին,
 և նրա հանգիստը փառահեղ է լինելու:

(ԺԱ 1-10)

Այստեղ «Գավազանի» պատկերը նշանավորում է հինկտակարանյան մտածողության ևս մեկ քայլը դեպի Աստվածամարդու խորհուրդը: Չնայած Փրկիչը տակավին Մեսիա չի անվանվում, սակայն միանգամայն պարզ է, որ Եսային մարդկային անձ նկատի ունի, Դավթի ցեղի ժառանգին, Օծյալին: Սակայն միևնույն ժամանակ Նա հասարակ մարդ չէ. Նա գործում է Հոգու գործությամբ: Նա այն հատկանիշների կրողն է, որոնք Հին Կտակարանը մշտապես վերագրում է Աստծուն. Իմաստնություն, ճշմարտություն, Հավերժություն: Նրա փրկության տանող գործերը նաև Իր իսկ՝ է-ի գործերն են:

6. Եսայի մարգարեի ազդեցությունն մեծ էր: Իր մահից հետո նրան հետևողների դպրոցը շարունակեց: Աշակերտները խնամքով էին պահում և արտագրում նրա գրությունների գալարները: Նրանց գործունեությունը շարունակվեց նաև Բաբելոնյան գերության շրջանում: Նրանցից մեկը, որին ընդունված է երկրորդ Եսայի անվանել, գրքին ավելացրեց մի քանի մարգարեություն, որոնք համարվում են պրոֆետիզմի պոեզիայի մարգարիտներ: Այդ գլուխներում Մեսիայի կերպարն առաջին անգամ ներկայանում է որպես շարժարվող Արդար, Եահվեի Սպասավոր (տես հտ. 2 § 15):

Եսայիի գիրքը շարունակում էր համալրվել ընդհուպ մինչև Ք. ծ. ա. Դ դար՝ պահպանելով դպրոցի աստվածահայտնութենական կենդանի ավանդույթը: Սակայն անգամ այդ դպրոցից դուրս մարգարեի գրքերը մեծ արձագանք ունեցան: Եսայու ներկայացրած պատկերներն ու մոտիվները գտնում ենք գրեթե բոլոր հետագա մարգարեների մոտ ու հայտնություններում: Սիրաբքը գրում էր, թե Եսայիի ձեռքով Երուսաղեմը փրկվեց կործանումից (ԽԸ 23)¹: Մարգարեի գրքի շատ հատվածներ մտել են պատարագի տեքստերի մեջ: Դրանք մեսիական սպասումներ էին արթնացնում նախաավետարանական շրջանում: Մեռյալ ծովի մոտ գտնվող Կոմրանի գրատարանում ամենից շատ Եսայու գրքի պատառիկներ են հայտնաբերվել: Դրանցում անգամ Եսայու մարգարեությունների մեկնություններ են առկա: Առաջին քրիստոնյաների համար Եսայի մարգարեի խոսքերը հաճախ քարոզի սկիզբ էին հանդիսանում: Ավետարանիչները նրա տողերում հայտնաբերում էին հրաշալի կանխատեսումներ այն ամենի, որ կատարվեց Գալիլեայում և Երուսաղեմում՝ Օգոստոսի և Տիբերիոսի ժամանակներում: Եկեղեցական պատկերացմամբ Եսային Աստծու սրբություն, փրկության և մեսիականության մեծագույն ավետաբերն է:

Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչպես և ի՞նչ հանգամանքներում կոչվեց Եսային:
2. Ի՞նչ են նշանակում Փառքի տեսիլքի պատկերները:
3. Մարդու համար ի՞նչ է նշանակում Աստծու Սրբությունը:
4. Եսայու գրքում գտե՞ք այն տեղերը, ուր նա Աստծուն «Սուրբ» է անվանում:
5. Պատմության մեջ ինչպե՞ս է արտահայտվում Աստծու իշխանությունը:
6. Այն ի՞նչպես է մարդուն ուղղորդում դեպի խոնարհություն:
7. Ի՞նչ նպատակ ունեին Իսրայելին բաժին ընկնող աղետները:
8. Արդյո՞ք Եսայի մարգարեն հերքում էր տաճարական պաշտամունքը:
9. Մարգարեի ուսմունքի համաձայն ո՞րն է իրական բարեպաշտությունը:
10. Ի՞նչ է հավատալու ազդեցությունը:
11. Ինչո՞ւ Երուսաղեմը պետք էր պահպանվեր:
12. Ի՞նչ է խարհրդանշում «Մնացորդ» բառը:
13. Մնացորդի գաղափարն ինչո՞վ է կապվում նորկտակարանյան մտածողության հետ:
14. Եսայի մարգարեի կրոնական ունիվերսալիզմն ինչպե՞ս արտահայտվեց:
15. Ո՞րն է մարգարեի մեսիականության բնորոշ գիծը:
16. Ի՞նչ հանգամանքներում տրվեց Էմմանուելի մասին մարգարեությունը:
17. Որո՞նք են այս մարգարեության երկու իմաստները:
18. Ինչի՞ մասին է մեսիական Երկրորդ մարգարեությունը:

¹ Հայերենում չիք – խմբ.:

19. Ի՞նչպես է ընկալվում Մեսիայի գալուստը Երրորդ մեսիական մարգարեության մեջ:
20. Եսայի մարգարեն ի՞նչ ազդեցություն է թողել հետագա սուրբ գրությունների վրա:

§ 5-ի Հավելված

Հյուսիսային թագավորության կործանումը (Դ Թագ. ԺԷ) և Եգեկիայի բարեփոխումները

Հյուսիսցիները սովորաբար իրենց անվանում էին Իսրայել: Նրանց պատկերացմամբ Հուդան ընդամենը մի ծայրամաս էր, որ փորձում էր անօրինաբար բռնազավթել էր Աստծու ժողովրդի իշխանությունը: Հյուսիսի տարածքն ավելի ընդարձակ էր և այնտեղ էին նահապետների ու դատավորաց հերոսական շրջանի հնագույն սրբավայրերը՝ Սյուքեմ, Դան, Սելով, Բեթել: Հյուսիսը հպարտանում էր Հեսու Նավեի, Դեբորայի, Գեդեոնի, Սամսոնի, Սամուել և Նղիա մարգարեների անուններով: Փյունիկիայի հետ հարևանությունը մշտապես հեթանոսության ներթափանցման պատճառ էր հանդիսանում, բացի այդ երկրում բավական զորեղ էր քանանյան տարրը: Բայց, ի հակակշիռ այս ամենի, հյուսիսում երբեք չի մարել «սրբազան պատերազմի», այլադավանների հանդեպ անհանդուրժողության ոգին: Հենց այնտեղ էր ընդունված կրոնի պաշտպանությունը զենքի ուժով:

Հյուսիսն էր նախաձեռնողը քաղաքական երկպառակություն, որ թուլացրեց Իսրայելը թե՛ ներսից, թե՛ դրսից: Դրա արդյունքում Սամարիայի թագավորությունն առաջինն էր, որ զոհ գնաց զավթիչներին: Նախ Թիգլաթպալասար Գ նրանից խլեց Գալիլեան և հարակից տարածքները (733 թ.): Նրա մահվանից հետո Օսեե թագավորը գաղտնի համաձայնության եկավ Եգիպտոսի հետ և սկսեց ուշացնել տուրքերի վճարումն Ասորեստանին: Ասորեստանի նոր տիրակալ Սալմանասար Ե-ի լրտեսները զեկուցեցին Սամարիայում ընթացող ռազմական պատրաստությունների մասին: Օսեեն իբրև դավաճան կալանվեց և բանտ նետվեց:

Սակայն եփրեմյաններն ապավինել էին մայրաքաղաքի հզոր պարիսպներին և մի խումբ իշխանների առաջնորդությամբ շարունակում էին դիմադրել: 725 թ. Սալմանասարը պաշարեց Սամարիան: Քաղաքը լավ էր ամրացված, և թշնամին երեք երկար տարի մնաց դարպասների մոտ: Սակայն 722 թ. իշխանավորների դավադրությունը գահին բերեց Սարգոն Բ-ին, որ Սամարիային արագ ստիպեց հանձնվել: Հաղթողը չկոտորեց բնակիչներին. 27000 մարդ Ասորեստան արտաքսվեց, ուր նրանց բնակության հարմար վայրերում տեղավորեցին:



Ասորեստանյան հեծելազորը: Ասորեստանյան քանդակից
(VIII դ. Ք. ծ. ա.):

Սամարիան և նրա մերձակայքը բնակեցված էր արևելքի մարդկանցով, որոնք արագ ձուլվեցին իսրայելացի բնակչության մնացածների հետ: «Ես նրանց վրա նշանակեցի իմ կառավարիչներին, վերակացուներին և փոխանորդներին,- գրված է Սարգոնի արձանագրության մեջ,- սահմանելով նույնպիսի հարկեր, ինչ վճարում են ասորեստանցիները»: Եփրեմը դանդաղ անկում էր ապրում: Երկարատև պատերազմներից և բնակչության զանգվածային արտագաղթից Եփրեմի կենսական ուժերն սպառվեցին: Մնանկացած երկիրը սովի ճիրաններում էր: Երբեմն վայրի գազանների խմբերը քաղաք էին ներխուժում և հարձակվում մարդկանց վրա: Վերաբնակները կարծում էին, որ բոլոր դժբախտությունները տեղի աստվածությունների պատիժն են, ուստի կառավարիչին խնդրեցին, որ Եահվեի կրոնի քահանա ուղարկվի իրենց մոտ: Եվ Սարգոնի թույլտվությամբ նրանց խնդրանքը բավարարվեց: Բեթելում հին պաշտամունքի նման մի բան վերականգնեցին: Սա ասորեստանցիների նուրբ հաշվարկն էր, որով մտադիր էին պահպանել Պաղեստինի Հյուսիսի և Հարավի միջև մրցակցությունը: Ընդ որում վերաբնակեցվածները, ընդունելով Իսրայելի հավատքը, չհրաժարվեցին իրենց աստվածներից (Դ Թագ. ԺԷ 24): Ավելի ուշ հրեաները չէին ցանկանում սամարացիներին իբրև եղբայրակից ընդունել: Նրանց համարում էին հեթանոսությամբ վարակված անգամ այն ժամանակ, երբ բազմաստվածության բոլոր հետքերը վերացել էին:

Երկրից արտագաղթած իսրայելացիները անհետ վերացան, ձուլվելով Միջագետքի ցեղերի մեջ: Նրանք չպահպանեցին ո՛չ հայրերի կրոնը, ո՛չ ազգային ինքնագիտակցությունը:

Եկեղեցու Հայրերի մեկնություններում Իսրայելի և Հուդայի միջև եղած խզումը դիտարկվում է իբրև Եկեղեցիների բաժանման հինկտակարանյան նախապատկեր (տե՛ս Иероним, Խո. 13, էջ 27): Եվ իրոք, ողբերգությունը քրիստոնյա աշխարհի, որ ներքին թշնամանքով է տարված՝ մահմեդականների և

այլ հակառակորդների հանդեպ, լավագույնս կարելի է վերաիմաստավորել Աստվածաշնչի լույսի ներքո: Ալեքսանդրիայի ու Կոստանդնուպոլսի վիճակը պայմանավորված էր իրար հանդեպ անզիջում, մոլի անհանդուրժողականություններով, ներքին խառնակություններով և Եկեղեցիների բաժանություններով:

Սակայն Հյուսիսի հոգևոր ժառանգությունը չոչնչացավ: 722 թվականից հետո ղևտացի փախստականները Երուսաղեմ բերեցին Սուրբ Գրոց իրենց ավանդությունները: Երկրորդ Օրենքի հիմնական տեքստերը, դատավորների մասին պատմությունները, Օսեե մարգարէի գիրքը մտան Սուրբ Գրոց գանձարանը, որն արդեն հրեաները պիտի պահպանեին: Հավանական է, որ Եզեկիայի օրոք հյուսիսային՝ երկրորդ սրբազան Պատմությունը (էլո-հիմական) միացվեց հարավայինին (Յահվեական), դառնալով մեկ ամբողջություն (տե՛ս հտ. 1, § 16):

Սուրբ Գրքերի կտրուկ ավելացումը և մարգարեների ազդեցությունը նպաստեցին Եզեկիա թագավորի նախաձեռնած բարեփոխումներին: Թագավորը, որ աչքի էր ընկնում խորին և անկեղծ բարեպաշտությամբ, ձգտում էր Ուխտի կրոնը մաքրել հեթանոսական ներմուծումներից: Տաճարից հանվեցին բոլոր պատկերները, որ ասորեստանցիների սիրույն բերվել էին Աքազի օրոք: Զինայեցին նույնիսկ Մովսեսի պղնձե օձը, որովհետև այն սնապաշտության առարկա էր դարձել: Եզեկիան առաջին անգամ Երուսաղեմում համաժողովրդական բազմությամբ տոնեց Զատիկը (Բ Մնաց. ԻԹ): Թագավորը նաև մի հատուկ խմբի հանձնարարեց ի մի հավաքել Սողոմոնի և մյուս իմաստունների ասույթները: Այս գրվածքները, որ մարդու առօրյայի վերաբերյալ են, մարգարեների քարոզի անհրաժեշտ հավելումը եղան (տե՛ս հտ. 1, § 30):


§ 6. Ուխտի վերաբերյալ կեղծ հայացքի բացահայտումը: Միքիա և Սոփոնիա մարգարեներ (Ը-Է դարեր)

Երուսաղեմի՝ ասորեստանցիների հարձակումից հրաշքով փրկության հետևանքով, վերածնվեց հին, ժողովրդական ընկալումը Ուխտի: Նախանի մարգարեությունն սկսեցին մեկնաբանել այն տեսանկյունից, թե Աստված ցանկացած դեպքում կպաշտպանի իր սուրբ քաղաքը¹: Այս միտքն առավել էր ամրապնդում Երուսաղեմի անձեռնմխելիության մասին հին հավատալիքը: Եսայի մարգարեն գիտեր, որ Դավթի քաղաքը փրկվել է լոկ Մնացորդի համար: Մինչդեռ ընդհանուր կարծիքն այն բանին էին հանգեցնում, թե Աստված խոստացել է ամեն գնով բարձրացնել «Դավթի որդիներին»: Իսկ Ուխտը խախտելու մասին զգուշացումներն (Բ Օրին. ԻԹ 16-28) անուշադրության էին մատնվում: Այս տեսակետի դեմ հանդես եկավ Միքիա մարգարեն:

¹ Տե՛ս Բ Թագ. Է 1-17 – խմբ.:

1. Միքիա մարգարեն (եբր. מִיכָיָהּ – ՄԻԽԱ) երուսաղեմից հարավ-արևմուտք ընկած Մորեստա քաղաքից է (սրանից է ծագում մականունը՝ Մորատացի): Նա Եսայի մարգարեի ժամանակակիցն է և քարոզել է 740-700 թվականների ընթացքում: Մարգարեի կյանքից ոչինչ հայտնի չէ: Նրա գրքի լեզուն պարզունակ է և զուրկ բանաստեղծական փայլից, որ բնորոշ է մեծ երուսաղեմացուն: Ամենայն հավանականությամբ Միքիան հասարակ ծագում ուներ, ինչպես Ամոսը: Նա սրտին մոտ է ընդունում այլևայլ խնդիրները գյուղացիների և հասարակ հրեաների, որ տառապում էին խառնաշփոթություններից, պատերազմներից և ճնշումներից: Այս հանգամանքով ևս նա մոտենում է Ամոսին: Ոչ մի հիշատակություն չկա, թե Միքիան անմիջականորեն աշակերտել է Եսայիին, սակայն կասկածից վեր է, որ նա «Տիրոջ աղքատներից» էր, որ համախոհ են եղել և օժանդակել են մարգարեին:

Միքիայի հին եբրայերեն բնագիրը համեմատաբար վատ է պահպանվել: Բայց նրա քարոզի հիմնադրույթները լիովին պարզ են: Գրքում ուշ միջամտություններ հայտնաբերելու փորձերն անվիճելի արդյունքներ չտվեցին: Այն հիմնականում Մորստացու վավերական ստեղծագործությունն է, որ գրվել է Ը դարում: Մարգարեական մյուս գրվածքների նմանությամբ, այն նույնպես կազմվել է փոքրիկ գալարների տեսքով, որոնք հետագայում դպիրները միացրեցին և ընդգրկեցին Փոքր Մարգարեների ժողովածուի մեջ:



Միքիա մարգարե: Մանրանկար «Մարգարեների գրքերի մեկնություններ» գրքից: X դ. վերջ - XI դ. սկիզբ, Թուրին, Ազգային գրադարան:

Ներկա տեսքով Միքիա մարգարեի գիրքը երեք մասից է բաղկացած.

ա. Ժողովրդի մեղքերի մերկացում և Աստուծու Դատաստան (Ա-Գ),

բ. Սիոնի մխիթարություն (Դ-Ե),

գ. Դատաստան և փրկություն (Զ-Է):

Եկեղեցին մարգարեի հիշատակը տոնում է օգոստոսի 14-ին¹:

2. Ուխտի նկատմամբ կեղծ հայացքի բացահայտում: Միքիա մարգարեն խիստ կերպով հանդես էր գալիս նրանց դեմ, որ ժողովրդին հանգստացնում էին սին խոստումներով: Հատկապես կտրուկ էր վրդովմունքն այն մարգարեների նկատմամբ, որ պնդում էին, թե ի սեր Ուխտի Աստված մշտա-

¹ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին 12 Փոքր մարգարեների հիշատակը նշում է Ծննդյան տոների 9 կիրակիին հաջորդող երեքշաբթի օրը – խմբ.:

պես աջակցելու է Իսրայելին: Միքիան մերկացրեց նրանց շահագիտական նկատառումները, ամբոխին հաճոյանալու և դրանով պարզկենցիկ արժանանալու ձգտումը:

Այսպես ասաց Տերը մարգարեների մասին,
որոնք մոլորեցնում են իմ ժողովրդին,
որոնք խաժատում են նրան ատամներով
և խաղաղություն¹ են քարոզում նրան:
Բայց ոչինչ չդրվեց նրանց բերանը,
և նրա դեմ պատերապմ հարուցեցին:

(Գ 5)

Սակայն հավատացյալները նույնպես պարարտ հող էին ստեղծում նման «մարգարենների» համար: Միսալ ընկալվող հայրենասիրությունը և Ուխտի կեղծ մեկնաբանությունը ժողովրդին ստիպում էին հաճույքով լսել այդ մարդկանց, որ իրենց սրտից էին խոսում.

Սա սուտ դուրս եկավ,
քո մեջ գինի և արբեցություն կաթեց,
և այդ կաթումից բաժին կընկնի նաև այս ժողովրդին:

(Բ 11)

Մինչդեռ ճշմարտության խոսքը դառը խոսք է: Այն գալիս է Աստծուց և չի կարող սիրաշահել մարդկանց, որ կուրացել են ստից: Ուխտն ուժի մեջ է մնում լոկ նրանց համար, որ սրբորեն պահում են այն, լոկ «Հակոբի սերնդի մնացորդացի» համար (Ե 7): Եվ մարդկանց հիմնական զանգվածը, հատկապես ունևորները, այլևս արժանի չէին Ուխտին: Նրանք հույսը դրել էին Միտնի անխորտակելի լինելու վրա, սակայն «նրանք չիմացան Տիրոջ խորհուրդը» (Դ 12):

Կարո՞ղ են արդյոք իրենց «Մնացորդ» համարել կռապաշտներն ու բռնացողները: Իշխանները համոզված են, որ ուժն իրենց ձեռքերում է, և անտեսում են պատվիրանները.

Աչք էին տնկում հանդերին, հաիշտակում որբերին,
բռնագրավում տները,
հաիշտակում էին մարդուն և նրա տունը,
մարդուն և նրա ժառանգությունը:

(Բ 2)

Այս է պատճառը, որ Սամարիան պիտի ավերակների վերածվի (Ա 6), և անգամ Երուսաղեմը չի խնայվի.

Լսեցե՞ք սա, Հակոբի՛ տան առաջնորդներ
և Իսրայելի՛ տան մնացորդներ...

¹ Իմա՛ քարոզություն:

որ Սիոնը կառուցում էք արյան վրա
 և Երուսաղեմը՝ անհրապուրյան:
 Երա առաջնորդները կաշառքներով էին դատում,
 նրա քահանաները վարձով էին պատասխան տալիս,
 նրա մարգարեները արծաթով էին գուշակություններ անում
 և Տիրոջն էին ապավինում ու ասում.
 ”Արդարև, Տերը մեզ հետ չէ՞.
 ո՛չ, մեզ վրա չարիք չի գա՞”:
 Դրա համար Սիոնը ձեր պատճառով
 պիտի հերկվի արորով,
 Երուսաղեմը պիտի դառնա ինչպես մրգապահների տաղավար,
 և Տիրոջ տաճարի լեռը՝ մայրիների անտառ:

(Գ 9-12)

Հետևաբար Ուխտն ու Խոստումը կմնան անբեկանելի միայն նրանց համար, որ երբեք չեն նահանջի Աստծու ճանապարհներից:

3. Տիրոջ ճշմարիտ ճանապարհը: Ամոսի և Օսեեի ավանդույթյանը հետևելով՝ Միքիան ազդարարում էր, որ Իսրայելի Աստծուն հաճելի չեն ընծաները, եթե դրանք մատուցում են մարդիկ, որ ընդդիմանում են Նրա կամքին: Նա նման չէ հեթանոսական աստվածներին, որ բավարարվում են զոհերով և դրանց դիմաց բարեկեցություն երաշխավորում: Եվ ի՞նչն է Աստծու աչքին բարիք:

Ինչո՞վ փութամ Տիրոջ մոտ,
 ապավինեմ իմ բարձրյալ Աստծուն,
 ընդառաջ գնամ նրան ողջակեպներով
 և մեկ տարեկան հորթերով:
 Տերը կընդունի՞ հապարավոր խոյեր
 կամ բյուրավոր պարարտ նոխապներ,
 տան՞ իմ անդրանիկը ամբարշտության պատճառով
 և իմ որովայնի պտուղը՝ իմ անձնական մեղքերի համար:

(Չ 6-7)

Եվ այսպես շատերն էին մտածում: Աքազ թագավորն անձամբ իր որդուն զոհասեղանի մոտ բերեց՝ տուրք տալով հեթանոսական սովորույթներին (այս իմաստով է պետք հասկանալ Բ Մնաց. ԻԸ 3-ի՝ «կրակի միջով անցկացրեց» բառերը): Թվում է, թե սա մեծագույն զոհաբերությունն է, որ անկասկած պետք է մեղմի Աստծու զայրույթը: Սակայն Միքիա մարգարեն բոլորովին այլ պատասխան է տալիս.

Պատմվե՞ց քեզ, ո՞վ մարդ, թե ինչ է բարին
 և ինչ է ուլում քեպնից Տերը.

**ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏԵԼ, ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ՍԻՐԵԼ
ԵՒ ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼ ՔՈՍ ՏԵՐ ԱՍՏԾՈՒ
ՀԵՏԵԻԻՑ ԳՆԱԼՈՒ:**

(Չ 8)

Այս պնդումը «կրոնական հեղաշրջում» կամ նորամուծություն չէր: Այն հենվում էր Մովսեսի ուսմունքի վրա: Միքիա մարգարեն լուկրացնելով կրկնեց Բ Օրենքի խոսքերը՝ (Ժ 12-13). «Արդ, Իսրայել, ինչ է պահանջում քեզանից քո Տեր Աստվածը. միայն այն, որ երկնչես քո Տեր Աստծուց, ընթանաս նրա ցույց տված ճանապարհներով, սիրես նրան ու պաշտես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ էությունը, պահես քո Տեր Աստծու պատվիրաններն ու նրա օրենքները, որ ես այսօր պատգամում եմ քեզ, որպեսպի քեզ համար լավ լինի»:

Երեք պատվիրաններն ասես ամբողջացնում են Աստծու Օրենքի էությունը: Դրանք վերաբերում են՝

- հանրային հարաբերություններին (արդարությունը),
- անհատական բարոյականությունը (գթասրտությունը),
- Աստծու նկատմամբ վերաբերմունքին (խոնարհամիտ, որ մեծագույն ակնածանքն է Աստծու հանդեպ):

Եվ լուկ այս դեպքում է, որ զոհերն իմաստ կունենան իբրև հոգևոր և բարոյական կյանքի արտահայտություն:

4. Փրկություն: Մեսիա-Առաջնորդ: Միքիա մարգարեն հավատարիմ է Աստծու գալիք Թագավորության հույսին: Չնայած իշխանավորները «քերթում են ժողովրդի կաշին», չնայած ժողովուրդը մոլորության մեջ է, չնայած հատուցումն անխուսափելի է՝ Արարչի նպատակները կիրականանան ի հեճուկս այս ամենի: Եվ կիրկվի Մնացորդը: Աստված Իր շուրջը կժողովի հավատարիմներին «և Տերը Սիոն լեռան վրա կթագավորի այսուհետև մինչև հավիտյան» (Դ 7): Եվ սա կիրականանա խորհրդավոր Առաջնորդի ձեռքով: Փորձությունների շրջանը չի ավարտվի «մինչև ծննդկանի ժամանակը. նա կծնի» (Ե 3): Մեսիան կծնվի Դավթի հայրենիքում՝ երկրային Կնոզից.

«Եվ դու, Բեթղեհեմ, Եփրայթայի սակավամարդ տուն,
կլինես Հուդայի երկրի հապարավորների մեջ,
քեզանից պիտի ելնի ինձ համար Իսրայելի մի իշխան,
և նրա ծագումը աշխարհի Մզջբի Օրերից է:

(Ե 2)

Եսայու հայտնությունը Միքիա մարգարեի գրքով երկու հանգամանք է ավելանում՝ Փրկիչը կգա Բեթղեհեմից, և Նրա ծագումը սքանչելի կլինի: Մարգարեի խոսքերը ի սկզբանե Մեսիայի մասին՝ հինկտակարանյան հավատքի հիմքը դարձան: Այս հավատը կանխատեսում էր ավետարանական Բանի խորհուրդը, որը «սկզբից Աստծու մոտ էր» (Հովհ. Ա 2):

5. **Հեթանոսական արձագանքը Մանասեի և Ամոնի ժամանակ** (687–642): 687 թվականին՝ Սենեքերիմի երկրորդ արշավանքից քիչ անց, Եգեկիան մահացավ: Նրա ժառանգորդ Մանասեի (եբր. ܡܫܢܡ – ՄԵՆԱՄՇԷ) օրոք Հուդայում հաղթանակեց ասորեստանամետ կուսակցությունը: Եսայի մարգարեի շուրջ ձևավորված «բարեփոխումների կուսակցությունը» հույս էր տածում, որ Իսրայելի մեծագույն թշնամին և ստրկացնողը՝ Ասսուրը, կթուլանա: Սակայն իրադարձություններն այլ ընթացք ստացան: Սենեքերիմի որդու՝ Ասսարհադոնի՝ կառավարման տարիները Նինվեի ծաղկման շրջանն էին: Ասսարհադոնը վերականգնեց Բաբելոնը՝ դրանով իսկ շահելով նրա հավատարմությունը: Սիրիա-Պողեստիների թագավորությունները երազել իսկ չէին կարող ընդդիմանալու մասին: Ասսարհադոնի արձանագրության մեջ 22 հպատակ միապետի անուն է թվարկված, ցուցակի սկզբում Բահաղ Տյուրոսացու և «Նաուադի թագավոր Մանասի» (Մանասե) անուններն են: Սրա օրոք Եգեկիայի նախաձեռնած կրոնական բարեփոխումները կանգ առան: Մանասեն և իր շրջապատն Ասորեստանից իրենց վասալական կախվածությունը տարածեցին նաև կրոնի ասպարեզում: Տաճարում դարձյալ հայտնվեցին աստվածների կուռքերը: Հատկապես մեծ տարածում գտավ պաշտամունքը «երկնային զորությունների», այսինքն աստղերի, որ վաղնջական ժամանակներից պաշտվում էին Միջագետքի երկրներում: Ժողովրդի գիտակցության մեջ Իսրայելի Աստվածը վերածվեց ազգային Աստվածության, որին զուգահեռ կարելի էր պաշտել նաև ուրիշների:

«Բարեփոխումների կուսակցության» բողոքները դաժանաբար ճնշվում էին: Երիտասարդ տարիներին այդ բռնաճնշումներին ականատես եղած Երեմիա մարգարեի խոսքով, սուրը կերավ ձեր մարգարեներին, առյուծի պես հոշոտեց (Երեմ. Բ 30): Դ թագ. գրքում ասվում է, որ Մանասեն «չափազանց շատ անմեղ աղյուն թափեց, այնպես որ Երուսաղեմը ծայրեծայր աղյամբ լցվեց» (ԻՍ 16):

Հավատքը գաղտնի պահող շատագույններին մնում էր միայն հուսալ և սպասել: Նրանց հաշողվեց փրկել մարգարեների սրբազան ձեռագրերը և, հավանաբար, հենց նրանք Տաճարում թաքցրեցին Բ Օրենքի գալարը, որը 622 թ. հայտնաբերեց Հոսիա թագավորը:

Ըստ երևույթին այս քառասուն՝ գորշ տարիներն արտացոլվել են ՂԳ սաղմոսում.

Աստված՝ վրեժխնդիր Տեր,

Աստված վրեժխնդիր, դու հայտնվեցիր:

Բանձր եղիր, որ երկիրը դատես,

հատուցում տուր ամբարտապաններին:

¹ Սբ. Գրքում Ասորդան (Դ թագ. ԺԹ 37) – խմբ.:

*Մինչև երբ մեղավորները, Տեր,
մինչև երբ մեղավորները պիտի պարծենան:
(Սաղմ. ԴԳ 1-3)*

Մանասեն մահացավ 642 թվականին: Իշխանությունը ժառանգեց նրա որդի Ամոնը, որ շուտով պալատական հեղաշրջման զոհ դարձավ: Նրան սպանած դավադիր իշխանները փորձեցին գահ բարձրացնել իրենց դրածոյին, սակայն հասարակ հրեաները՝ «եռկրի ժողովուրդը», ոտքի ելան ի պաշտպանություն Դավթի տան և 640 թվականին թագավոր հռչակեցին Ամոնի որդի Հոսիային, որ այն ժամանակ տակավին ութնամյա երեխա էր (Դ Թագ. ԻԱ 19-26): Այս պահից սկսած մարգարեական շարժումը կրկին վերածնունդ ապրեց:

6. Սոփոնիա մարգարեն և իր գիրքը: Սոփոնիա մարգարեի անունով պահպանված փոքրիկ գիրքն ամբողջությամբ ինքն է գրել: Այն բաղկացած է չորս մասից.

- ա) Իսրայելին սպասվող Բարկություն օրը¹ (Ա 1-2, 3),
- բ) Ժողովուրդների Դատաստանը (Բ 4-16),
- գ) մարգարեություն Երուսաղեմի մասին (Գ 1-8),
- դ) խոստումներ (Գ 9-20):

Մարգարեի հիշատակի օրը եկեղեցին նշում է դեկտեմբերի 3-ին²:

Նրա մարգարեության հիմնական գաղափարն այն է, որ մարդ կարող է ապրել միայն չկորցնելով կապն Աստծու հետ: Այս կապի կորուստն աշխարհը քաոսի է մատնում՝ թե՛ բնական, թե՛ պատմական: Սակայն մորրիկներից և աղետներից կփրկվի «Մնացորդը» (Գ 13), «Աստծու աղքատները», «հեզ և խոնարհ ժողովուրդը» (Գ 12): Աստված կլինի նրանց հետ և կյանքի կատարելություն կպարգևի: Խոնարհների ու հեզերի հաղթանակի լուրը կհնչի Կոչս Մարիամի՝ Սիոնի Դստեր աղոթքում, Որի վրա կկատարվի խոստումը (Դուկ. Ա 52):

Հարցեր կրկնության համար

1. Ո՞րն է Ուխտի մասին կեղծ պատկերացումը:
2. Ի՞նչ գիտենք Միքիա մարգարեի մասին:
3. Ինչի՞ համար էր Միքիա մարգարեն կշտամբում իր ժամանակի մարգարեներին:
4. Միքիան ի՞նչպես էր սահմանում իրական բարեպաշտությունը:
5. Ի՞նչ բնորոշ գծերով է օժտված Միքիայի մեսիական մարգարեությունը:

¹ Զմմտ. Առակ. ԺԱ 4 – խմբ.:

² Հայ Եկեղեցում Սոփոնիայի հիշատակը նշվում է 12 Փոքր մարգարեների հիշատակի օրը՝ Ծննդյան տոների 9 կիրակիին հաջորդող երեքշաբթի օրը – խմբ.:

6. Մանասեի ժամանակ ինչո՞վ էր պայմանավորված հեթանոսական ազդեցությունը:
7. Ինչո՞վ այն արտահայտվեց:
8. Ի՞նչ իրադարձություններ եղան Սուփոնիա մարզարեի քարոզչության սկզբին:
9. Ո՞րն է Սուփոնիայի գրքի հիմնական գաղափարը:

§ 7. Հոսիայի բարեփոխումները: Նավում և Ամբակում մարզարեներ (628–609 թթ.)

1. Բարեփոխման քաղաքական նախադրյալները: *է դարի 30-ական թվականներին Ասորեստանի քաղաքական գերիշխանությունն ավարտվեց: Ելամը, Բաբելոնն ու Եգիպտոսն ազատվեցին Նինվեի լծից: Անասելի կերպով հզորացավ Մեդացիների թագավորությունը¹: Սկյութները զավթեցին Մերձավոր Արևելքի մի մասը:*

Այս իրադրությունից օգտվեց հրեից երիտասարդ թագավոր Հոսիան և իր հսկողության տակ առավ համայն Պաղեստինը: Նա մի թագավոր էր, որ մետրոպոլիտ Տիլարեսի (Դրոզդով) բնորոշմամբ «ոչ միայն բարեպաշտ էր, այլ նաև աննախադեպ էր իր բարեպաշտությունում» (Соч. Слова и речи, тит. III, էջ 1): Նա իրեն շրջապատեց հավատքի նվիրյալներով և հանդիսավորապես հայտարարեց, որ ինքը հավատարիմ է «Դավթի Աստծուն»: Նա հրամայեց երկրով մեկ հատել սրբազան պուրակները, փշրել կուռքերն ու ավերել դրանց զոհարանները (Բ Մնաց. ԼԴ 1–7):

Այն բանից հետո, երբ Հոսիան խզեց կապերը Նինվեի հետ, ասորեստանամետ կուսակցությունը կորցրեց իր ազդեցությունը: Առաջատար դիրք գրավեցին կրոնական բարեփոխումների շատագույնները. դպրապետ Սափանը, նրա որդի Աքրիկամը, Երուսաղեմի իշխան Մասիասին, պալատական հանդերձանքի պատասխանատու Սեղղումը և քահանայապետ Քեղկիան:

2. Օրինաց Գրքի հայտնաբերումը: *622 թ. գարնանը Հոսիան Տաճարի վերանորոգման աշխատանքներ ձեռնարկեց, որոնց պիտի հսկեր Սափանը: Մի օր՝ աշխատանքներն իրականացնելիս Քեղկիա քահանան գաղտնարանում մի գալար գտավ, որ պարզվեց Օրինաց Գիրքն է: Նա փոխանցեց այն Սափանին: Վերջինս ծանոթացավ ձեռագրի շարադրանքին և թագավորի մոտ բերեց: Մի քանի տող կարդալով՝ Հոսիան սարսեց. գիրքը բացեիբաց և աներկբայելի կերպով արգելում էր Երուսաղեմի Տաճարից բացի Եահվեի համար սեղան կառուցել որևէ այլ տեղ: Մինչդեռ մայրաքաղաքում և երկրի տարածքով մեկ վաղուց անտի հարյուրավոր զոհասեղաններ էին կառուցվել:*

¹ Հայերեն Աք. Գրքում օգտագործված Մարաց թագավորություն կամ Մարաստան ձևը – խմբ.:

Հերոնիմոս Երանելու և Սուրբ Հովհան Ոսկեբերանի կարծիքով Քեղկիայի գտած Օրենքի Գիրքը Բ Օրենքն էր: Հենց այնտեղ է պահանջվում, որ Աստծուն պաշտոն մատուցանվի միայն մեկ՝ ի վերուստ մատնանշված տեղում (Բ Օրին. ԺԲ 5-7):

Պաշտամունքի կենտրոնացումը կարևոր դեր պիտի խաղար հինկտակարանյան Եկեղեցու կյանքում: Այն նվազեցրեց զոհաբերության նշանակությունը կրոնական արարողություններում և արգելք հանդիսացավ հեթանոսական տարրերի համար քանի որ շատ սրբարաններ կառուցվել էին քանանյան պաշտամունքի վայրերում (Բեթել, Բեթսան, Բերսաբե ևն):

Օրենքի գիրքը կարգալիս Հոսիան լաց էր լինում. որքան երկար է Իսրայելն ընդդիմացել Աստծու կամքին: Եվ արդյո՞ք այժմ հնարավոր է ուղղել այդ վիճակը: Պատասխանի համար դիմեցին մարգարեներին: Սակայն Երուսաղեմում չգտան որևէ մեկին, որ «Աստծու խոսքը» ներկայացնեք (այդ ժամանակ Սոփոնիան արդեն վախճանվել էր, իսկ Երեմիան բնակվում էր Անաթովթում): Վերջ ի վերջո հայտնաբերեցին մարգարեուհի Օղդային, որ վճռականորեն պահանջեց, որ թագավորը ճշգրտորեն կատարի Սուրբ Գրքի հրահանգները (Դ Թագ. ԻԲ 14-20):

3. Հոսիայի կատարած փոփոխությունները (Դ Թագ. ԻԳ 1-27, Բ Մնաց. ԼԴ 1-33, ԼԵ1-19): Իբրև սկիզբ թագավորը հավաքեց ժողովրդին և ընթերցեց Օրենքի Գիրքը: Ապա մի բարձր տեղ կանգնելով՝ «Տիրոջ առջև ուխտ դրեց, որ կընթանա Տիրոջ ճանապարհով, ամբողջ հոգով և Էուլայամբ կպահի նրա պատվիրանները, վկայություններն ու կանտոնները, կկատարի այդ մատյանում գրված ուխտի պատգամները» (Դ Թագ. ԻԳ 3): Մովսեսից հետո սա երկրորդ դեպքն էր, երբ հինկտակարանյան Եկեղեցու համար Օրենքն ընդունվում էր իբրև կրոնական և իրավական կանոնագիրք: Հոսիայի բարեփոխումներից հետո Աստծու ժողովուրդն ավելի ու ավելի շատ հատկանիշներով էր նմանվում կրոնական Համայնքի:

Հոսիան չբավարարվեց հեթանոսական պաշտամունքի մնացուկները արմատախիլ անելով: Նա հրամայեց կործանել մայրաքաղաքի բոլոր զոհասեղանները՝ բացառությամբ տաճարականի, և երկիրն անցնելով հարավից հյուսիս՝ ամենուր կործանեց հին սրբարանները: Սեղանների այն պաշտոնյաները, որ զերծ էին կռապաշտության մեղքից, թագավորի հրամանով Երուսաղեմ էին ուղարկվում: Եվ երկրով մեկ շրջելուց հետո, Հոսիան մայրաքաղաքում նշեց Զատիկը:

Դ Թագ. գրքում Հոսիայի մասին ասված է. «Նրանից առաջ նման մի թագավոր չէր եղել, որ իր ամբողջ սրտով, ամբողջ հոգով ու փորությամբ, հնապանդվելով Մովսեսի բոլոր օրենքներին, հսկվեր դեպի Տերը: Ոչ էլ նրանից հետո եղավ նրա նմանը» (ԻԳ 25):

Ծանոթություն

Սկզբնապես իբրև Բ Օրենքում հիշատակված միասնական պաշտամունքի վայր նկատի ունենին Հյուսիսի սրբարաններից մեկը (Սյուքե՛մը թե՛ Սելո՛վը) (տե՛ս հտ. 1, § 25): Սակայն Հոսիայի օրոք այդպիսի վայր դարձավ Երուսաղեմի Տաճարը:

4. Նինվեի անկումը: Նավում մարգարե (մոտ. 615–612 թթ.): *Հիշյալ դեպքերի ժամանակաշրջանում մոտենում էր ասորեստանյան ռազմական*



Կավե գլան Նաբոպալասարի գրությանը

կայսրության վախճանը: Հին ռազմական միջնաբերդը, մեծ տերուծյունը, որ երկար ժամանակ ստրկացնում էր ժողովուրդներին, իր վրա զգաց հարձակումների և պաշարումների սարսափները: Գավառ առ գավառ նրանից խլում էին մարաց Կիաքսար արքան և իր դաշնակիցը՝ Բաբելոնի Նաբոպալասար թագավորը: 614 թ. հուլի-

սին ընկավ Ասսուրը, հերթն արդեն Նինվեին էր: Անգամ հեթանոսները կայսրության ճակատագիրը նրա հանցանքների և սրբապղծության պատիժն էին համարում: Եվ առավել ևս Երուսաղեմում իրենց խնայանի վախճանը չէին կարող պատահականություն համարել:

Այս թեմային են նվիրված տաճարական մարգարե Նավում Ելիեսացու (եբր. ישקאלא דווחו נבטנולח זל-לחנח) ահեղ և հիացական օրհնությունները: Նրա անձի մասին ոչինչ հայտնի չէ: Նրա մարգարեությունների գաղափարն այն է, որ լուկ կարող է թվալ, թե պատմական իրադարձությունները խառնիճաղանջ քառս են, մինչդեռ հակամարտ ուժերի բոլոր ընդհարումների վրա իշխում է Արարչի և Դատավորի միակ Կամքը: Նինվեն «արյան քաղաք» էր, և նրա շարագործությունները չեն կարող մնալ անպատիժ: Տերը «խամբերատար» է (Ա 3), սակայն վաղ թե ուշ արդարությունը հաղթանակում է: Ինչպես մեկնում է մետրոպոլիտ Ֆիլարետը (Դրոզդով), աստվածաշնչյան մարգարեները պատմական հատուցումը չեն ներկայացնում «իբրև պատժող Աստծու հատուկ գործ, այլ բնական, որպես հենց մեղքերի ազդեցություն» (Слова и речи, հտ. III, էջ 43):



Նավում մարգարե: Մանրանկար «Մարգարեների գրքերի մեկնություններ» գրքից: X դ. վերջ - XI դ. սկիզբ, Թուրին, Ազգային գրադարան:

Մարգարեն կայսրության մայրաքաղաքի ավերման պատճառ հանդիսացող

գրոհի և ճակատամարտի ահասարսուռ պատկերներ է ներկայացնում.

Բոլոր նրանք, ովքեր լսեցին քո գույժը,

ծախ կպարնեն քեզ համար:

քանի որ իմ վրա չեկավ քո շարունջունը մշտապես:

(Գ 19)

Նավումի մարգարեություններն ընդգրկվեցին Սբ. Գրքում իբրև խստաշունչ նախագգուշացում իշխանավորներին և ժողովուրդներին. բռնակալները Դատաստանի կարժանանան, և դաժանությունը, որի վրա հիմնել են իրենց թագավորությունները, իրենց դեմ կշրջվի:

Մարգարեի հիշատակը Եկեղեցին տոնում է դեկտեմբերի 1-ին¹:

5. Հոսիա թագավորի մահը: Ամբակում մարգարե (մուտ. 609 թ.): 612 թվականին՝ Նինվեի անկումից հետո, ասորեստանյան զորքի մնացուկները հապճեպ նահանջեցին դեպի Խառան, և դրանք գլխավորող Աշշուր-Ուբալիտ Բ-ն, որ իրեն թագավոր էր հռչակել, շտապով պատվիրակներ ուղարկեց Եգիպտոս: Նա խնդրում էր Նեքսավով Բ փարավոնին իրեն օգնության հասնել: Նեքավովը շարժվեց դեպի հյուսիս լոկ 609-ի աշնանը: Նա ամենևին չէր կամենում փրկել ջախջախված ասորեստանցիներին, սակայն նրան անհանգստացնում էր հզորացումը Բաբելոնի, որ կամենում էր տիրանալ Ասորեստանի ժառանգությանը:

Փարավոնի ճանապարհն անցնում էր Պաղեստինով: Նա մտադիր էր այնտեղով անցնել, զերծ մնալով ռազմական ընդհարումներից, որպեսզի հնարավորին չափ շուտ հասնի Եփրատի հովիտ: Սակայն Հոսիա թագավորը, որ արդեն իրեն համարում էր բավականին զորեղ, որոշեց փակել փարավոնի ճանապարհը: Բայց սա սխալ էր: Գալիլեայում՝ Մակեդոնի մատույցներում, բանակները մարտի բռնվեցին, և ճակատամարտի հենց սկզբում Հոսիան մահացու վիրավորվեց: Նրան Երուսաղեմ տարան, հրեական զորքը տրոհվեց, իսկ Նեքավովը շարժվեց առաջ:

Մայրաքաղաք հասնելուց մի քանի ժամ անց Հոսիան մահացավ: Նրան ողբում էր ողջ երկիրը: Եվ սա պարզապես բարի միապետի կորստյան թախիժ չէր, մարդու, որ զոհվեց ուժերի ծաղկման շրջանում: Մարդկանց տարակուսանքի մեջ էր նետում միևնույն հարցը. Աստված ի՞նչպես թույլ տվեց, որ զոհվի Դավթի բարեպաշտ որդին, որ ամեն ինչում ականջալուր էր Նրա կամքին: Այս հարցը շատերին էր հուզում: Այս հարցն արդեն դուրս էր գալիս մասնավոր դեպքի ծիրից՝ աղերսվելով աստվածային Նախախնամության խորհրդին: Այս խորհրդավոր երևույթի մասին է Ամբակում մարգարեի գիրքը:

¹ Հայ Եկեղեցում Նավում մարգարեի հիշատակը նշվում է 12 Փոքր մարգարեների հիշատակի օրը՝ Ծննդյան տոների Գ կիրակիին հաջորդող երեքշաբթի օրը – խմբ.:

6. Ամբակում մարգարե (609-604 թթ.): *Ամբակում (եբր. ܐܡܒܠܝܘܬ ܝܘܘܠܝܘܬ ܕܡܪܘܘܬܝ) մարգարեի գրքում ո՛չ ժամանակագրական նշումներ կան, ո՛չ տվյալներ հեղինակի մասին: Գրություն ժամանակի մասին միակ ակնարկը «ԾԿՇԾ, ԲԱՇԴԻՄ»՝ քաղղեացիներ բառի կիրառությունն է: Մարգարեն զարհուրում է, տեսնելով մի նոր՝ անեղ ախոյան, որի «զորությունն իր աստվածն է» (Ա 11)¹: Նինվեի մայրամուտից հետո Մերձավոր Արևելքի տիրակալ դառնալու Բաբելոնի նկրտումներն ան ու սարսափ առաջ բերեցին: 605 թվականի մայիսի վերջերին Բաբելոնի քաղղեական հարստության շառավիղ Նաբուգոդոնոսորը Եփրատի ափին՝ Կարթեմիշի մերձակայքում ջախջախեց եգիպտական բանակը: Այդ ժամանակ վախճանվեց Նաբոպալասար թագավորը, և 605 թվականի սեպտեմբերի 7-ին Բաբելոնում կայացավ Նաբուգոդոնոսորի թագադրությունը: Նրա իշխանությունը տարածվում էր Փոքր Ասիայից մինչև Սինա: Այս բոլոր իրադարձություններն ինչպես և Հոսիայի մահը 609 թվականին առավելազույնս համապատասխանում են Ամբակում մարգարեի գրքի պարունակած նյութին: Այստեղ մարգարեն ասես «վեճի է բռնվում Աստծու հետ» (Ջերոնիմոս Երանելի), ցանկանալով*



Ամբակում մարգարե: Մանրանկար Նոր Կտակարանից: XIV դ., Պատմության Պետական թանգարան, Մոսկվա:

իմանալ Նրանից, թե մինչև երբ պիտի աշխարհում տիրի բռնությունը: Ներկայիս շատ մեկնաբանների կարծիքով Ամբակումը տաճարական

մարգարե էր, և նրա գրքում գետեղված են պաշտամունքների ժամանակ արտասանված քարոզները:

- Գիրքը կարելի է երեք մասի բաժանել.*

 - 1. Մարգարեի գանգատը Աստծուն և պատասխանը (Ա 1-2, 4),*
 - 2. Ինչ է սպասվում կեղեքիչներին (Բ 9-20),*
 - 3. Աստվածահայտնության օրհներգ (Գ):*

Գրքի հիմնական գաղափարն այն է, որ փորձությունների առջև կանգնած մարդը կարող է ապավինություն գտնել միայն ու միայն ամբողջովին և անմնացորդ վստահելով Աստծուն: Եվ որքան էլ երկար ձգվի արհավիրքը, Աստված կիրականացնի իր Դատը և փրկություն կպարգևի հավատարիմներին:

¹ Հայերենում՝ «սա է իմ Աստծու զորությունը» – թարգմ.:

Ամբակումի երգը Առավոտյան ժամերգության կանոնի 4-րդ օրհնության սկսվածքն է:

Մարգարեի հիշատակը Եկեղեցին տոնում է փետրվարի 2-ին¹:

7. Մարգարեի կասկածները: Հավատքի հաղթանակը: Գիրքն սկսվում է Ամբակումի տրտունջներով, ուր մարգարեն ողբում է ժողովրդի ծանր վիճակը Հոսիայի մահվանից հետո.

Մինչև երբ, Տեր, աղոթեմ,

բայց դու չլսես,

պրկված՝ ձայն տամ քեզ, և դու չփրկես:

Ինչո՞ւ ինձ ջանք ու հոգնություն պատճառեցիր՝

թշվառություն և ամբարշտություն տեսնելու:

Իմ առաջ եղավ դատաստանը,

և դատավորը կաշառք էր առնում:

Այդ պատճառով օրենքը խախտվեց,

և արդարությունը գլուխ չի գալիս.

քանի որ ամբարիշտը ճնշում է արդարին,

դրա համար էլ սխալ դատաստան էր լինում:

(Ա 2-4)

Մարգարեն հարց է դնում անմեղի տառապանքների մասին, և զրանով նրա գիրքը կապվում է Հոբի գրքին: Մարգարեին տանջում է խորհրդավոր չարը և նա աղերսում է Աստծուն, որ իրեն ցույց տա ելքը գոյության ողբերգական հակասություններից:

Աստծու պատասխանն սկզբում մխիթարիչ չէ. Նա մարգարեին նոր աղետների՝ քաղղեացիների հայտնվելու մասին է տեղեկացնում (Ա 5-11): Սա առավել հուսալքության է մղում Ամբակումին: Նա գիտե, որ թշնամին «իբրև պատիժ» է ուղարկվել: Բայց, այնուամենայնիվ պատասխանը մարգարեին լիովին չի բավարարում է (Ա 12-17):

Ամբակումը բարձրանում է աշտարակի վրա, սպասելով մեկ այլ Հայտնության (Բ 1), որպեսզի «մարգարեական աչքերով տեսնի որոնվող լուծումը» (Թեոդորիտոս Երանելի): Եվ այնտեղ նա մի պատասխան է ստանում, որ մակերեսային դիտարկմամբ կարող է տարօրինակ թվալ.

Ահա, ամբարտապան հոգին չի հանդարտվի,

ԲԱՅՑ ԱՐԴԱՐԸ ՀԱՎԱՏՔՈՎ ԿԱՊՐԻՒ՞Ց:

(Բ 4)

¹ Հայ Եկեղեցում Ամբակում մարգարեի հիշատակը նշվում է 12 Փոքր մարգարեների հիշատակի օրը՝ Ծննդյան տոների Գ կիրակիին հաջորդող երեքշաբթի օրը – խմբ.:

² Հայերենում համարները ըստ Յոթանասնից են: Ռուսերենում երկրորդ տողը հայերենի 5-րդ համարն է, իսկ 1-ին տողը եբրայերեն բնագիրն է – խմբ.:

Բառացի թարգմանությունը առաջին հատվածը նշանակում է «Ահա նրա մեջ հոգին անարդար է վեր բարձրանում»: Ասույթի իմաստը հակադրությունն է. մարդ, որ հույսն իր վրա է դրել, և մարդ, որ իրեն ամբողջովին հանձնել է Աստծուն: Աստված չի բացատրում իր մտահղացումները: Նա լուկ կոչով դիմում է հավատարիմներին, որ իրեն ապավինեն: Սա է աստվածաշնչյան հավատքի էությունը: Արդարությունը, որ որոշվում է Աստծու հանդեպ վստահությունը, ուղղված չէ արտաքին իրականությանը: Այն իբրև վեմի վրա՝ կանգնած է գիտելիքի վրա, որ Աստված Բարի է, և որ կարելի ապավինել նրան: Եվ ընթանալով Աբրահամի ճանապարհով՝ մարգարեն «հավատաց Աստծուն»: Եվ նա կյանքի արժանացավ, որովհետև միայն հավատն է դա տալիս: Նորկտակարանյան Հայտնության մեջ «կյանք» բառը հոմանիշ է «փրկություն, Աստծու Արքայության մասնակից» արտահայտությանը: Ամբակում մարգարեի խոսքը շարունակելով՝ Պողոս առաքյալն ուսուցանում է, որ փրկությունը մարդուն տրվում է Աստծուն հավատալու միջոցով, մի բան, որ մարմնավորվեց Հիսուս Քրիստոսով (Գաղ. Գ 11):

Ամբակում մարգարեի գրքում անօրենների, բռնացողների և հարստահարողների վիճակին հակադրվում է լուսավոր տեսիլը նրանց, որ ճաշակել են հավատի բերկրանքը: Սաղմոսը¹, որ եզրափակում է գիրքը (Ձ. Գ), ցույց է տալիս, որ այդ տեսիլը լուսավորել է մարգարեի հոգին: Աստծու մասին խոկման մեջ մարգարեն գտնում է բառերով անհնարին, սակայն, զորությունը լցված հնարավոր, բոլոր կասկածների փարատումը: Նա պատրաստ է դիմակայելու ցանկացած արհավիրքի, եթե իր հետ է Աստված: Գլխավորը ներքին միասնությունն է է-ի հետ:

Սաղմոսում Աստվածահայտնությունը նկարագրված է հինարևելյան ավանդական պոեզիային բնորոշ ձևերով: Աստծու մեծությունը ներկայացնելու համար մարգարեն տիեզերական մրրիկի պատկերների է դիմում: Միևնույն ժամանակ մրրիկը նաև խորհրդանշում է այն պատմական աղետները, որ սպասվում են աշխարհին: Չնայած ճշմարիտ հավատացյալը սոսկում է ահավոր հեղաշրջումներից, նա հույս և ապավեն ունի՝ հավատքը: Նա դիմում է Աստծուն, ոչ միայն երկրային բարեկեցության համար, այլև այն բանի, որ Աստված կյանք է: Իրական հավատացյալին ոչինչ չի կարող սասանել.

Քանսի էթե անգամ թվենին իր պտուղը չտա,

որթատունկը ծնունդ չունենա,

ձիթենին բերք չտա, դաշտերը կերակուր չտան,

հոտերը դադարեն արածելուց, և մսուրների մեջ եպներ չլինեն,

ես պիտի ուրախանամ Տիրոջով, ուրախանամ իմ փրկիչ Աստուծով:

(Գ 17-18)

¹ Այստեղ սաղմոսը նշանակում է երգ, աղոթք – խմբ.:

Մարգարեի այս խոսքերը նշանակալի շրջադարձ են հինկտակարանյան մտածողության մեջ. մարդն ազատվում է հավատի նկատմամբ շահագրիտական վերաբերմունքից:

Հարցեր կրկնության համար

1. Քաղաքական ինչ նախադրյալներ ունենի Հոսիայի բարեփոխումները:
2. Ինչ հանգամանքներում և երբ հայտնաբերվեց Օրենքի գիրքը:
3. Հերոնիմոս Երանելիի և Սուրբ Հովհան Ոսկեբերանի կարծիքով Աստվածաշնչի ո՞ր մասն էր այն ընդգրկում:
4. Ո՞րն էր գրքի հիմնական պահանջը պաշտամունքի վերաբերյալ:
5. Ինչպես էին ընթանում Հոսիայի բարեփոխումները:
6. Ինչ իրադարձություններ են արտացոլված Նավում մարգարեի գրքում:
7. Ո՞րն է գրքի գլխավոր գաղափարը:
8. Ինչպես զոհվեց Հոսիա թագավորը:
9. Ենթադրաբար ինչ ժամանակների է վերաբերում Ամբակում մարգարեի գիրքը:
10. Ինչ մասերից է այն կազմված:
11. Ինչո՞ւ էր գանգատվում մարգարեն Տիրոջը:
12. Ինչ պատասխան եղավ:
13. Ո՞րն է հավատքի էությունը:
14. Հինկտակարանյան մտածողության շրջադարձն ինչպես է արտացոլվել Ամբակում մարգարեի գրքում:

§ 8. Երեմիա մարգարե. կյանքը և ծառայությունը

(մինչ 597 թ.)

Երեմիա մարգարեի կյանքի և ինքնուրույն մասին Աստվածաշնչում ավելի շատ տեղեկություն կա, քան որևէ այլ մարգարե-հեղինակի: Եվ սա պատահական չէ: Երեմիան անձի կրոնի մեծագույն նախակարապետն է, «սրտի կրոնի» մարգարե, որ մարդկանց համար բացեց իրենց ներքին աղոթական կյանքի աշխարհը: Իր ոգով Երեմիան մոտ է սաղմոսերգուներին: Նա մեր առջև բացում է իր հոգու գաղտնարանները, սիրող և տառապող հոգու, որ մշտապես երկխոսություն մեջ է Աստծու հետ: Նա ընտրյալ Մնացորդի մասնիկն է: Իրեն է վիճակված ազգային աղետի կանխատեսողը և վկան լինել: Եվ նա առաջինն է արտաբերելու «Նոր Ուխտ» բառերը՝ Քրիստոս Փրկչի հայտնությունից ավելի քան հինգ դար առաջ:

1. Երեմիա մարգարեի գիրքը գրվել է գրեթե քառասուն տարի՝ 627-626 և 587-586 թթ. ընթացքում: Այն բաղկացած է մերկացնող ճառերից,

կանխատեսումներից, առականերից, սաղմոս-աղոթքներից և կենսագրական գլուխներից: Դրանք հավաքել է մարգարեի աշակերտ Բարուքը, սակայն գիրքն իր վերջնական տեսքն ստացել է Գերության շրջանում: Բարուքը այդ գործն սկսել է մոտ 604 թվականին, երբ դեռ ուսուցիչը ողջ էր:

Այն բաղկացած է չորս հիմնական բաժիններից.

ա) Մարգարեություններ և մերկացնող քարոզներ, որ գրվել են Երուսաղեմի անկումից առաջ՝ 627-626 և 587-586 թթ. ընթացքում (գլ. Ա-ԻԵ):

բ) Իշխանավորների, հոգևորականության, կեղծ մարգարեների դեմ Երեմիայի պայքարի պատմությունը, որ հիմնականում Բարուքն է գրել (գլ. ԻԶ-ԽԵ): Նույն բաժնում է նաև այսպես կոչված Մխիթարության գիրքը (մարգարեություն Նոր Ուխտի մասին՝ գլ. Լ-ԼԱ)¹, որի հիմնական մասը, հավանաբար, ստեղծվել է Երուսաղեմի ավերումից հետո:

գ) Մարգարեություն ժողովուրդների մասին (գլ. ԽԶ-ՇԱ),

դ) Պատմական հավելված (գլ. ՇԲ):

Յոթանասնիցում Երեմիա մարգարեի գիրքը որոշ տարբերակիչ առանձնահատկություններ ունի. բնագրի մի մասը կրճատված է (մոտավորապես մեկ ութերորդը): Ժողովուրդների մասին մարգարեություններն այլ հերթականությամբ են տրված և հաջորդում են ԻՅ 13-ին²:

2. Երեմիա մարգարեի աստվածաբանության հիմնական գծերը:

Այս բաժնում կնշենք նրա մարգարեության լոկ առավել բնորոշ յուրահատկությունները:

Երեմիան խոսում է Մինայի Ուխտի ավարտի մասին, որին կփոխարինի Նոր Ուխտը, որ գրվելու է մարդկանց սրտերում (տե՛ս ստորև՝ § 10): Մարգարեն մերժում է Տաճարի ու Տապանակի բացարձակ նշանակությունը և կանխասում է դրանց կործանումը: Նա նախակարապետն է նորկտակարանյան աստվածաշտության՝ «հոգով և ճշմարտությամբ» (Յուդ. Դ 23):

Երեմիան Աստծուն Հայր է անվանում և ընդգծում է անհատական կրոնասիրության նշանակությունը: Նրա գրքում գտնում ենք Աստծուն որդեգիր դառնալու մասին նյութը իբրև հավատքի հիմք (Գ 4, 19):

Ամոս մարգարեի պես Երեմիան սովորեցնում է, որ Աստծու ժողովրդի ընտրյալ լինելու հանգամանքն արտոնություն չէ, այլ մեծագույն պատասխանատվություն Աստծու առջև: Նա խստիվ քննադատում է քաղաքական վերնախավի կույր հայրենասիրությունը և հիմնականում ընդունում Իսրայելի կրոնական առաքելությունն ու կոչումը: Եսայի մարգարեի պես Երե-

¹ Այդպես են պայմանականորեն անվանում Լ-ԼԱ գլուխները, ուր Երեմիան մարգարեանում է մի Նոր՝ Չորրորդ Ուխտի համար (Նոյի, Աբրահամի, Մովսեսի հետ կլթած ուխտերը համապատասխանաբար Առաջին, Երկրորդ և Երրորդն են համարվում) – խմբ.:

² Տե՛ս նաև *Ներածություն Յին Կտակարանի*, աշխտ. Գ. Դարբիսյանի, ԶԴԿ, Ս. Էջմիածին, 2000, էջ 337-338 – խմբ.:

միան պատերազմների թշնամի է, որ ներքին փոփոխությունների գրավական է համարում խաղաղությունը:

Երեմիան Մեսիայի մասին՝ իբրև Անձի՝ քիչ է խոսում, սակայն Նրան անվանում է «Դավթի շառավիղ» (ԻԳ 5), դրանով իսկ շարունակելով մեսիական ավանդությունը, որ գալիս է Նաթան մարգարեից¹: Այս մարգարեությունն ընթերցվում է Քրիստոսի Ծննդյան տոնին²:

Մարգարեի հիշատակը Եկեղեցին տոնում է մայիսի 1-ին³:

Երեմիա մարգարեի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը

Մոտ. 645	-	մարգարեի ծննունդը Երուսաղեմի մերձակա Անաթոթում
626	-	կոչումն Երեմիայի
626-622	-	առաջին քարոզները
622-609	-	ծառայությունը Յոսիա թագավորի բարեփոխումների տարիներին
609-605	-	հանդես է գալիս թագավորի և մարգարեների դեմ
605-597	-	Երեմիա մարգարեի ձեռագրի ընթերցումը Տաճարում: Նրա ձերբակալությունը: Նաբուգոդոնոսար Բ-ի առաջին արշավանքը դեպի Երուսաղեմ:
697-586	-	գործունեություն Երուսաղեմի անկման տարիներին
586	-	հրեա փախստականների հետ գնում է Եգիպտոս
Մոտ. 580	-	մարգարեի մահը Եգիպտոսում

3. Մարգարեի կոչումը: *Երեմիան ծնվել է Երուսաղեմից ինը կմ հեռու գտնվող Անաթոթ (եբր. תותנת) Անատոտ) քաղաքում, քահանայի ընտանիքում: Նրա գրվածքների ոճից երևում է, որ նա խորամուկս է հյուսիսային ավանդության ոգուն: Հստ ամենայնի նրա նախնիները կապ են ունեցել Եփրեմի այն հոգևորականների հետ, որ պահել էին Բ Օրենքի գիրքը: Մանուկ հասակում Երեմիան ականատես է եղել մարգարեների հետապնդումներին (Մանասեի օրոք):*

626-ը բեկումնային տարի էր Հուդայի համար: Այդ ժամանակ Հոսիա թագավորն իրեն հուշակեց հայրերի Աստու հավատարիմ հետևորդ: Նույն շրջանում Աստված Երեմիային ծառայության կոչեց: Երիտասարդ ղեկավարն պատմում է, թե ինչպես է երկնչել իր առաքելությունից.

¹ Դավթի շառավիղների մասին տես Եսայի Դ 2, ԺԱ 1, Երեմ. ԻԳ 5, ԼԳ 15, Չաբ. Գ 9, 2 12 – խմբ.:
² Հայ Եկեղեցում այդ օրերին ընթերցվում է հիմնականում Եսայի մարգարեի մեսիական հատվածները – խմբ.:
³ Հայ Եկեղեցում Երեմիա մարգարեի հիշատակը տոնվում է Վերափոխման տոնին հաջորդող հինգշաբթի օրը – խմբ.:

... Իսկ ես ասացի. «Տէր, ո՛վ դու Տէր,
 ահա ես նույնիսկ խոսել չգիտեմ,
 քանի մանուկ եմ»:

Տէրն ինձ ասաց.

«Մի՛ ասա, թե՛ “Մանուկ եմ ես”.

ու՛մ մոտ որ ուղարկեմ քեզ, բոլորի մոտ էլ պիտի գնաս,
 ու այն ամենը, ինչ որ պատվիրեմ քեզ, պիտի խոսես:

Զվախե՛նաւ նրանցից, – ասում է Տէրը, –

քանի ես քեզ հետ եմ՝ քեզ փրկելու համար»:

Եվ Տէրը, ձեռքն ինձ երկարելով, հպեց բերանիս ու ասաց.

«Ահա իմ խոսքը քո բերանը դրեցի:

Ահա քեզ այսօր իշխանություն տվի ապգերի

ու թագավորությունների վրա,

որպեսպի դրանք քանդես ու խորտակես,

կործանես ու ավերես, կառուցես ու հաստատես»:

(Ա 6–10)

Երեմիան պարզ գիտակցում էր, որ իր կամքով չէր գնում Երուսաղեմ՝ մարգարեանալու, այլ Աստված է ընտրել և սիրել (ճանաչել) իրեն՝ դեռևս ծնվելուց առաջ (Ա 4–5. հմմտ. Գաղ. Ա 15): Ինքը պետք է դառնա գործիք և սուրբ անոթ Աստծու Հոգու համար: Որդիական անկեղծությամբ մարգարեն առարկում է Տիրոջը: Ինքը պատրաստ է Նրա կամքը կատարել, սակայն իրեն անկարող է համարում այդ գործն իրականացնելու համար: Մովսեսի պես նա վստահ է, որ չի կարող ծառայել Նախախնամության նպատակներին: Չէ որ ինքն պիտի ասի այն, որ բողոք և նույնիսկ զայրույթ կառաջացնի: Եվ միայն ի վերուստ եկող հույսն կօգնի Երեմիային, հաղթահարելու վախը: Այստեղ կրկին անգամ ակնատես ենք լինում պրոֆետիզմի կարևորագույն առանձնահատկություններից մեկին. մարդն Աստծուն ծառայում է ոչ իբրև մտածելուց զուրկ գործիք, այլ իբրև ազատ էակ, որ Աստծու ճանապարհն ընտրում է հանուն սիրո և հնազանդության:

Երուսաղեմ գալով՝ մարգարեն ակնատես է լինում, թե ինչպես են պայքարում հին սնահավատության դեմ, որ Հոսիա թագավորը փորձում էր արմատախիլ անել: Նա սրտի ողջ կրքոտություն է գրոհում հեթանոսությունը, որ խորին արմատներ էր գցել Մանասեի օրոք: Չգտելով ժողովրդին հիշեցնել նրանց՝ Մովսիսական Օրենքին դավաճանելը, մարգարեն կրկնում է Օսեեի առակն անհավատարիմ կնոջ և Եսայիի առակը խաղողի այգու մասին.

«Ինձնից հեռացած որդիներ,

դարձե՛ք ինձ մոտ,

որպեսպի ես ձեզ տիրեմ, – ասում է Տէրը:

(Գ 14)

Մակայն Աստված նրան հասկացնում է, որ նրա խոսքերը չեն լսելու, և որ հրեաների դարձը մակերեսային է: Նրանք դեռ շատ փորձությունների պիտի ենթարկվեն, մինչև որ գիտակցեն իրական զղջումը: Մարգարեն դժվարանում է այս մասին խոսել.

«Որովայնս, որովայնս ցավ է ընկել,
 և հեծում են արտիս պապարանները:
 Սիրտս ճնշվում է, և
 ՀՈԳԻՍ ՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ,
 որովհետև ես շեփորի ձայն լսեցի
 և պատերապմի ու թշվառության գույժ:
 Հարված հարվածի վրա եկավ.
 բողոք բարձրացրէք,
 քանպի ողջ երկիրն ավերակ դարձաւ:

(Դ 19-20)

Մարգարեն տարակուսում է՝ մի՞թե Աստված խաբել է Երուսաղեմին, և առջևում սպասվում է միայն ավերում ու կործանում (Դ 10): Եվ այդ ժամանակ նա նոր Հայտնություն է ստանում՝ լի լույսով և հույսով: Կգա ժամանակ, երբ մարդիկ կդառնան Աստծուն և «բոլոր ազգերը հավաքվելու են Երուսաղեմում, և այլևս չեն հետևելու իրենց չար արտերի խորհուրդներին» (Գ 17): Եվ այնուհետ աստվածպաշտության արտաքին խորհրդանիշներն ավելորդ կդառնան, որովհետև Աստված մարդկանց հետ կլինի (հմմտ. Հայտն. ԻԱ 22):

Այլևս չեն ասելու՝ «Իսրայելի Սուրբ Ուխտի տապանակը»,
 չի հիշվելու այն, նրա անունն այնտեղ չի տրվելու,
 այլևս չի փնտրվելու այն և չի վերաշինվելու:

(Գ 16):

Բայց մարգարեն դեռ պետք է շարունակի իր պայքարը: Ժողովրդի բարոյական վիճակը նրան դառն մտորումների տեղիք է տալիս.

Երուսաղեմի փողոցներով այս ու այն կոհմ շարժվեցեք,
 նայեցեք, իմացեք և փնտռեցեք նրա հրապարակներում.

եթե այնտեղ գտնեք մի մարդ,

որ արդար գործ անի

և լինի ճշմարտությանը հետամուտ, ...

Արդ, ո՞ւմ հետ խոսեմ և

ո՞ւմ մոտ վկայություն անեմ, որ լսի.

սահավասիկ նրանց ականջներն անթշիտ են,

և նրանք չեն կարողանում լսել:

*Ահա Տիրոջ խոսքը նրանց համար նախատինք եղավ,
և այլևս նրանց ախորժելի չի լինելու այն:*

Ես լցվեցի բարկությանը ու վսպեցի այն իմ մեջ:

(Ե 1, 2 10-11)

Եվ կարծելով, թե իր առաքելությունն իրականացած է, Երեմիան վերադարձավ հայրենի քաղաքը: Իսրայելի արագ հոգևոր վերածննդի հույս նա այլևս չունեց: Սակայն շուտով Տաճարում հայտնաբերվեց Օրենքի Գիրքը, և Հոսիա թագավորն սկսեց իր բարեփոխումները (տես § 7):

Երեմիան ողջունեց բարեպաշտ արքայի նախաձեռնությունը: Եվ Աստված հրամայեց նրան, որ ամենուր ազդարարել՝ «Լսեցեք այս ուխտի պայմանը» (ԺԱ 2): Սակայն Անաթոթի ղևտացիները դեմ էին փոփոխումներին: Դրանով նրանք զրկվում էին իրենց խորանների սպասավորությունից: Չհամարձակվելով թագավորի դեմ խոսել՝ նրանք իրենց ատելությունն ուղղեցին Երեմիայի դեմ, և հավանաբար մահափորձ են կատարել նրա դեմ: Աստծու առջև աղոթքներում մարգարեն բուռն կերպով արտահայտում է իր վիշտը: Նա լիակատար միայնություն մեջ է: Նա ընտանիք չունեց և շրջապատված էր անվստահություններով և թշնամանքով:

*... Ես, իբրև անմեղ մի գառ, որին մորթելու են տանում,
չինացա, որ իմ մասին չար խորհուրդ են արել և ասում են.
«Եկեք ոչնչացնենք ծառն իր պտղով և նրան ջնջենք ողջերի երկրից,
թող նրա անունն այլևս չհիշվի»:*

*Չորությունների՜ Տեր, դու, որ արդար ես վարվում,
քննում ես երիկամներն ու սրտերը,
թող ես տեսնեմ, որ վրեժխնդիր ես լինում նրանցից,
քանզի քեզ հանձնեցի իմ դատը:*

(ԺԱ 19-20)

Մարգարեի՝ տրտունջով լեցուն աղոթքները ցույց են տալիս նրա տառապանքի ողջ խորությունը: Եվ մարգարեն Հոբի պես պատրաստ է դատի նստել Աստծու հետ, թեև այդուհանդերձ նրա նկատմամբ վստահությունը կատարյալ է.

*Արդար ես դու, Տեր,
բայց ես իմ դատը պետք է պաշտպանեմ
ու իմ իրավունքի մասին խոսեմ.
ինչպես է, որ ամբարիշտների բռնած գործերը
հաջողվում են, և բոլոր նրանք,
ովքեր արհամարհում են ու անարգում,
երջանիկ դարձան:*

(ԺԲ 1)

Հոսիա թագավորի մահը (609 թ.) փոփոխումների ավարտ հանդիսացավ: Այս պահից սկսած Երեմիա մարգարեի ծառայության նոր շրջանին է սկսվում:

4. Երեմիա մարգարեի քարոզչությունը 608-597 թվականներին:

Սպանված թագավորին պիտի հաշորդեր նրա ավագ որդին՝ Եղիակիմը, սակայն ժողովուրդը նախընտրեց Սեղղոմ իշխանին, որ գահ բարձրանալով՝ Հովաքազ անունն ընդունեց: Երեք ամիս անց նրան իր մոտ կանչեց Նեքավով Բ փարավոնը և հայտարարեց, որ իր վերահսկողություն է հաստատում Հուդայի վրա: Թագավորն ստիպված էր ենթարկվել: Նեքավովը նրան պահեց իր մոտ իբրև պատանդ՝ Երուսաղեմի գահին բարձրացնելով Եղիակիմին: Եվ ի նշան Եգիպտոսին ենթարկվելուն նա նոր անուն ընդունեց՝ Հովակիմ (Դ Թագ. ԻԳ 31-37):

Նոր միապետը չէր պատրաստվում շարունակել հոր գործը: Հոգևոր կյանքն անկում ապրեց: Մարդիկ մխիթարվում էին հույսով, թե Աստված ամեն դեպքում կփրկի Երուսաղեմը թշնամիներից: Եվ այդ ժամանակ Երեմիան դարձյալ հայտնվեց մայրաքաղաքում, որպեսզի մերկացնի ժողովուրդին: Նա եկավ Տաճարի դարպասների մոտ, երբ պաշտամունքի համար այնտեղ հավաքվեց ամբոխը:

Այսպես է ասում Չորությունների Տերը՝ Աստվածն Իսրայելի.- սկսեց նա-Ուղղեց՞ք ձեր ընթացքն ու վարքը, և ես կրնակեցնեմ ձեզ այս վայրում: Մի՛ ապավինեք սուտ խոսքերին. նրանք, որ ասում են՝ Տիրոջ տաճարն է, Տիրոջ տաճարը, Տիրոջ տաճարը, բոլորովին ձեզ չեն օգնի:

... Եվ գողանաք, ապանեք, շնություն անեք, սուտ երդում տաք, ինկարկեք Բահադին, հետևեք օտար սուտ աստվածներին, որոնց չեք ճանաչում, ապա ձեզ բաժին կհասնի չարիքը: Ու դուք կգաք, կկանգնեք իմ առաջ, այս Տան մեջ, որի վրա իմ անունն է դրված, և կասեք՝ «Հրաժարվեցինք բոլոր այն գարշելի գործերը կատարելուց»: Միթե ձեր աչքին ավապակների քարայր է դարձել իմ այս Տունը, որի վրա իմ անունն է դրուած¹:

(Է 3-4, 9-10)

Այս խոսքերն ընդունվեց իբրև ազգային սրբություն ոտնահարում: Հատկապես վրդովվեցին քահանաները. «Իու մահ պիտի գտնես, որովհետև Տիրոջ անունից մարգարեացար և ասացիր, թե այս Տունը պիտի դառնա Սելումի նման, և այս քաղաքը պիտի անայանա բնակիչներից» (ԻԶ 9):

Սակայն ծերերից մարդիկ եղան, հավանաբար Հոսիայի կողմնակիցներից, որ ելան ի պաշտպանություն Երեմիայի: Նրանք ասում էին, որ նախկին-

¹ Ռուսերենում վերջին մասն այլ է՝ և կասեք մենք "փրկված ենք", որպեսզի շարունակեք այդ գարշելի գործերը կատարել - խմբ.:

նում ևս եղել են մարգարեներ, որ կանխատեսել են Երուսաղեմի կործանումը, սակայն ոչ ոք նրանց չի պատժել այդ բանի համար: Բայց, այնուամենայնիվ, Հովակիմի պալատում վճռեցին պատժել Երեմիային: Նրան փրկեց պալատականներից մեկը, Նաթանի՝ հանգուցյալ արքայի դպրապետի որդին¹: Բայց օրինակ Ուրիա մարգարեին, որ նույնն էր ասում ինչ Երեմիան, բռնեցին և մահապատժի ենթարկեցին: Ավանդական բարեպաշտությունն ու հայրենասիրությունը չէին կարող համակերպվել այս տեսակ «խռովարարների» հետ:

Երեմիան շարունակեց իր մերկացնող քարոզները, արդեն բացահայտ արտահայտվելով Հովակիմի դեմ: Իրական «Դավթի որդին» նա է, որ կատարում է Աստծու պատվիրանները, իսկ Օրենքը խախտողը զրկվում է «Աստծու ժողովրդի առաջնորդ» լինելու իրավունքից.

Եթե դու մայրի փայտից կերտված քո հոր այս տան մեջ սայրացար,
ինչ է, կարծում ես թագավորելու ես:

Թող ո՛չ ուտեն և ո՛չ խմեն, որովհետև իրավունքը, արդարություն
ու բարությունը չճանաչեցին,

տնանկի իրավունքը չպահեցին և աղբատին չարդարացրին:
«Իսկ դա հենց ինձ չճանաչել չի նշանակում», – ասում է Տերը:

Ահավասիկ քո աչքերը և քո սիրտը

հակված են ոչ թե դեպի բարություն,

այլ՝ դեպի ազահություն, դեպի անպարտ աղյունահեղություն,

դեպի անիրավություն ու սպանություն:

(ԻԲ 15–17)

Մարգարեն անմիջապես բանտ կնետվեք, եթե Իսրայելի մայրաքաղաքին չսպառնար նոր՝ տագնապալի վտանգը: 605 թվականին Կարքեմիշի² մերձակայքում Նաբուգոդոնոսորը ջախջախեց փարավոնին, իսկ քիչ անց դարձավ Բաբելոնի գահակալ: Երուսաղեմը պիտի վճռեր՝ հավատարիմ մնալ Եգիպտոսին, թե անցնել քաղղեացիների իշխանության տակ:

Երեմիան կրկին քարոզ խոսեց, որում Նաբուգոդոնոսորին հայտարարեց «Աստծու խարազան»³, որն ուղարկված է Իսրայելը խրատելու: Նա պահանջում էր, որ Հովակիմը ենթարկվի քաղղեական թագավորին (ԻԵ 1–17):

604 թվականի դեկտեմբերին Նաբուգոդոնոսորը վերջնագիր ներկայացրեց Հովակիմին: Հենց այդ ժամանակ Երեմիայի աշակերտ Բարուքն արտագրեց նրա մարգարեությունների գիրքը և այն հրապարակայնորեն ընթերցեց Տաճարում (Ղ. Լ.2): Այս իրողությունը հայտնեցին թագավորին: Նա

¹ Բնագրում Նաթանի փոխարեն Սափան է՝ Բայց Սափանի որդի Աբիկամի բազուկը Երեմիայի հետ էր ... (ԻԶ 24) – խմբ.:

² Հնագույն քաղաք Հյուսիսային Ասորեստանում (մ. թ. ա. 2400–600 թթ.)՝ Եփրատի աջ ափին, այժմյան Սիրիայի և Թուրքիայի սահմանին. – Շան. թարգմ.:

³ Բնագրերում Իմ ծառային (ԻԵ 9) – խմբ.:

հրամայեց, որ այդ մատյանն իր մոտ բերեն և կարդան: Եվ երբ թագավորը լսում էր երկու-երեք տող, վերցնում էր դպիրի ձեռքից մատյանը, պատռում այդ մասը և հնոց նետում: Այսպես նա կամենում էր ցույց տալ, որ Երեմիայի մարգարեությունները նենգ զառանցանք է համարում: Եվ մարգարեն նորից թելադրեց Բարուքին մարգարեությունները, որ ավելի խիստ էին, քան նախկինները:

Երեմիային ձերբակալեցին Տաճարում և շղթայակապ կանգնեցրին դարպասների դիմաց՝ ինչպես անարգանքի սյան: Նա տեսնում էր, որ ասելի է բոլորի համար. նրան հայրենիքի թշնամի և Տաճարին հայհոյող էին համարում: Նա ցանկանում էր ընդմիջտ վերջ տալ քարոզությանը, տուն վերադառնալ և թողնել, որ ամեն բան ընթանա իր հունով: Բայց Աստված ստիպեց նրան, որ մինչև վերջ կանգնել: Մարգարեի հոգեվիճակի մասին է ասում նրա աղոթք-սաղմոսը.

Տե՛ր, խաբեցիր ինձ, ու ես խաբվեցի. հաղթեցիր ու պոռացար:

Ծաղր ու ծանակի առարկա դարձա,

օրս մթնեցրի ծաղրի մեջ,

որովհետև իմ դառն խոսքերով այս ու արհամարհանք վաստակեցի:

Իմ թշվառության պատճառով

ես բողոքեմ բարձրացնելու,

քանպի Տիրոջ խոսքն ինձ բերեց նախատինք

և հանապապոյա ծաղրուծանակ:

Ես ասացի. «Չեմ տա Տիրոջ անունը,

այլևս չեմ խոսի նրա անունից»:

Սակայն իմ սրտում կարծես կրակ վառվեց,

բորբոքվեց ոսկորներիս մեջ,

ու ես ամեն կողմից լքված մնացի,

չկարողացա հանդարտվել:

(Ի 7-9)

Հայրենիքի դավաճան համարվելը մարգարեի համար անասելի դառնություն էր, սակայն Աստծու կոչն առավել զորավոր էր:

601 թվականին փարավոնը ժամանակավոր հաղթահարեց Նաբուգոդոնոսորին: Եվ Հովակիմն անմիջապես Եգիպտոսի կողմն անցավ: Սակայն այս մասին տեղեկանալով՝ քաղղեացիները զորք ուղարկեցին Հուդա: 598 թվականի աշնանը Հովակիմը վախճանվեց, և գահն անցավ նրա որդի Հեքոնիային: 597 թվականի հունվարին Նաբուգոդոնոսորի բանակն արդեն Երուսաղեմի մատուցներում էր:

Մարտ ամսին տասնութամյա Հեքոնիան որոշեց հանձնվել: Թագավորի գլխավորությունը բազում ազնվական հրեաներ ուղարկվեցին Բաբելոն:

Իբրև Հեքոնիայի տեղապահ քաղղեացիները հաստատեցին նրա եղբորը՝ Մեթթանիային, որ Սեդեկիա անունն ստացավ: Նրա գահակալության շրջանը Երուսաղեմի դանդաղընթաց հոգեվարքն էր:

Չարքեր կրկնության համար

1. Ինչ դեր ունի Երեմիա մարգարեն սրբազան պատմության մեջ:
2. Ինչպես ստեղծվեց նրա գիրքը:
3. Քանի մասերի է այն բաժանվում:
4. Որո՞նք են Երեմիա մարգարեի աստվածաբանության գլխավոր բնորոշ գծերը:
5. Երբ և ինչպես կանչվեց Երեմիան:
6. Ինչ էր քարոզում Երեմիա մարգարեն ծառայության սկզբում:
7. Ինչպես ընդունվեց նրա քարոզը:
8. Ինչպես էր Երեմիա մարգարեն վերաբերվում Յոսիա թագավորի բարեփոխումներին:
9. Պատմեցե՞ք Երեմիայի՝ Տաճարում խոսած քարոզի մասին:
10. Ինչպես էր ընկալում նա թագավորի կոչումը:
11. Ինչ հանգամանքներում ձերբակալվեց Երեմիան:
12. Ո՞րն էր նրա կյանքի ողբերգությունը:
13. 597 թվականին ո՞ւմ իշխանության տակ անցավ Յուդան:

§ 9. Եզեկիել մարգարե. ծառայության սկիզբը (597-590 թթ.)

1. Հրեաների առաջին արտաքսումը դեպի Բաբելոն: *Իր գավթողական քաղաքականության մեջ Նաբուգոդոնոսոր Բ հետևում էր ասորեստանցիների օրինակին: Հնարավոր ապստամբությունների կենտրոնները թուլացնելու կամ վերացնելու նպատակով նա հիմնովին վերատեղաբաշխում էր գրավյալ երկրների բնակչությունը: Մարդիկ, որ զրկվում էին հայրենիքից և հաստատվում էին նոր տեղերում, կորցնում էին հայրենի ավանդույթները և դառնում էին ուղղակի «թագավորի հպատակներ»:* Այս գործելակերպի արդյունավետությունը, մասնավորաբար, ապացուցվում է Հյուսիսային Իսրայելի ճակատագրից:

Այն բանից հետո, երբ Երուսաղեմը հանձնվեց, հրեա ազնվականների և հոգևորականության զգալի մասը, թագավոր Հեքոնիայի հետ միասին, Բաբելոն արտաքսվեցին: Ծառայության շրջան ապրող քաղաքակրթության սրտում հայտնվելով՝ նրանք պետք է համոզվեին, որ քաղղեական թագավորներն անխորտակելի զորություն մե են օժտված:

Նաբուգոդոնոսորի մայրաքաղաքը ցնցում էր իր շքեղությամբ: Կենտրոնում վեր էր խոյանում 90-մետրանոց էթեմենանկի աշտարակ-տաճարը¹: Երկիրն աշխույժ առևտրի մեջ էր Արևելքի և Արևմուտքի երկրների հետ: Գոյություն ունեին դրամատներ, գրասենյակներ, դպրոցներ ու գրադարաններ: Ամենուր հեթանոս աստվածների աստվածությունների խորհրդանիշներն էին: Նաբուգոդոնոսորն աչքի էր ընկնում ջերմեռանդ բարեպաշտությամբ: Արամեերենը համընդհանուր կիրառություն էր ստացել, ուստի տարբեր երկրներից բռնագաղթվածներն իրար շատ լավ էին հասկանում: Բոլորին հարաբերական ազատություն էր շնորհված, ունեին տներ և հողատարածքներ:

Սակայն աքսորված հրեաների հոգևոր կյանքը լուրջ փորձությունների ենթարկվեց: Հեթանոսական քաղաքակրթության փայլը հավատքի վերաբերյալ կասկածներ էր առաջացնում: Բացի այս՝ նրանք զրկվել էին խորանի առաջ պաշտամունքի հնարավորությունից: Հոսիա թագավորի հաստատած՝ կենտրոնացված պաշտամունքի սկզբունքն այլևս անխախտելի էր համարվում: Սա նշանակում էր, որ հավատացյալները դատապարտված են ապրելու Աստծուց և Երուսաղեմում գտնվող Նրա սրբությունից բաժան: Այդ կասկածների պատասխանն Աստված տվեց Եզեկիել մարգարեի միջոցով:

2. Եզեկիել մարգարեն և իր գիրքը: Եզեկիելը (եբր. יְחֶזְקֵאל בְּנֵי בִּלְגַיָּה בְּיָדֵי ԿԻՇԼ), որ Երուսաղեմի քահանա էր, Բուզի որդին, Բաբելոնում էր հայտնվել գերինների առաջին խմբի հետ: Իր մարգարեական ծառայությունն սկսել էր 592 թվականին, որը ինքը 30-րդ է կոչում²: Եկեղեցու Հայրերի մեծ մասն այս նշումն ընդունում է իբրև մարգարեի տարիք, սրանից հետևեցնելով, որ նա ծնվել է 622 թվականին: Սակայն հնարավոր է նաև, որ մարգարեն նկատի ուներ Հոսիայի կողմից Տաճարի վերանորոգման 30-րդ տարին:

Եզեկիել մարգարեն ապրել է Քոբար (Քեբարու) գետի ափին՝ Թել-Ավիվ ավանում, որ հեռու չէր բաբելոնյան Նիպպուր քաղաքից: Նա ամուսնացած է եղել, սակայն կորցրել է կնոջը (ԻԴ 15-19), և իր տունը վերածվեց մի վայրի, ուր հավաքվում էին հրեաները՝ զրուցելու հավատքի մասին և լսելու նրա խոսքերը (Ը 1, ԺԴ 1, Ի 1):

Իր կարևորագույն տեսիլքները Եզեկիելը ճշգրիտ թվագրում է: Վերջին թվականը գրքում 571-ն է (ԻԹ 17): Հավանաբար քիչ անց մարգարեն վախճանվել է: Ավանդության համաձայն նրա գերեզմանը Բիրս-Նեմրութի մոտ է³:

Նրա հիշատակը Եկեղեցին տոնում է հուլիսի 21-ին⁴:

¹ Ենթադրվում է, որ դա Բաբելոնի աշտարակի նախատիպն է – խմբ.:

² Տես Ա 1 – խմբ.:

³ Բաղդադի հարավում Ենթադրյալ Բաբելոնի աշտարակի տեղում:

⁴ Հայ Առաքելական Եկեղեցին տոնում է Վերափոխման տոնին հաջորդող երրորդ եղբ-

Եզեկիել մարգարեի գիրքն առավել կուռ կառուցվածք ունի, քան Եսայի և Երեմիա մարգարեների գրքերը: Չնչին բացառությամբ այն բուն հեղինակին է պատկանում: Սակայն հնարավոր է, որ նրա մահվանից հետո աշակերտներից մեկը փոխել է հաջորդականությունը՝ դասավորելով ավանդական հերթականությամբ՝ ժողովրդի մեղքերի մերկացում, քարոզ հեթանոսների մասին, մարգարեություններ ապագայի վերաբերյալ:

Ի տարբերություն մարգարեների մեծամասնության՝ Եզեկիելը հիմնականում արձակ է շարադրել իր խոսքը: Եվ նրա գրքում առատ են պատկերները, որ հաճախ բարդ են մեկնաբանության համար: Մարգարեն Աստծու Հայտնությունը առակաների տեսքով էր ներկայացնում (Ի 49)՝ շատերին գրավելով իր խոսքի յուրօրինակությամբ (ԼԳ 32): Նա երբեմն խորհրդանշական գործողություններ էր կատարում՝ ցուցադրելով սպասվող իրադարձությունները: Եզեկիելը «հափշտակության» վիճակում էր տեսնում Տիրոջ խորհուրդները: Եվ իր տեսիլքների իմաստը մարդկանց փոխանցելու համար մարգարեն տարբեր խորհրդանիշներ և այլաբանություններ էր կիրառում: Նրա գրվածքները խորհրդավոր են և շատ առաջ են անցնում հետագայի հայտնութենական գրականությունից:

Եզեկիել մարգարեի գրքի կառուցվածքը.

- ա) Մարգարեություններ Երուսաղեմի դատաստանի մասին (գլ. Ա-ԻԴ),
- բ) Մարգարեություններ յոթ հեթանոս ժողովուրդների մասին (գլ. ԻԵ-ԼԲ),
- գ) Մարգարեություններ, որ գրվել են 587 թ. Երուսաղեմի անկումից հետո (ԼԳ-ԼԹ),
- դ) Մարգարեություններ Նոր Երուսաղեմի մասին (գլ. Խ-ԽԸ), որ գրվել են 2 դարի 70-ական թվականներին:

Եզեկիել մարգարեի գրքից հատվածներ ընթերցվում են Ավետման տոնի երեկոյան և Ավագ Շաբաթվա առավոտյան ժամերգություններին¹:

3. Եզեկիել մարգարեի ուսմունքի հիմնադրույթները: Մարգարեքահանայի գլխավոր գործը հովվական խնամքն էր հինկտակարանյան Եկեղեցու, որ պետք է զերծ պահեր հեթանոս շրջապատի գայթակղություններից: Մարգարեն տեսնում է Եհզվեի Փառքը, որ լքում է մեղավոր Երուսաղեմը, որպեսզի գնար վտարանդիների մոտ: Եզեկիել մարգարեի գիրքը լեցուն է խորին և երկյուղած հավատով դեպի Արարչի մեծությունը: Անհասանելիին և Ամենակարողին հակադրված է անզոր «մարդու որդին» (Իմա մահկանացուն): Էի Փառքի մասին ակնածալից խոկումը այն հիմնական զգացումն

շաբթի օրը՝ Եզրի և Յովի. Մկրտչի հոր Չաբարիայի հետ միասին – խմբ.:

¹ Հայ Առաքելական Եկեղեցու ծեսում Եզեկիելի մարգարեության գրքից ընթերցումները հիմնականում Մեծ Պառիկ շրջանում են և սրբոց տոներին – խմբ.:

է, որ գերիշխում է գրքում: Եզեկիելի տողերում հազվագեպ է հանդիպում այն մերձությունն Աստծու հանդեպ, որ առկա է ազոթարար-մարգարե Երեմիայի մոտ: Սակայն Եզեկիելը չի խոսում սոսկ Աստծու ամենակարողության մասին, այլ նաև Արարչին ներկայացնում է իբրև Բարի Հովիվ, որ սիրում և խնամում է հավատարիմների Հոտը: Եզեկիելը կանխատեսում է Երուսաղեմի անկումը, միաժամանակ վերջնականորեն հրաժարվելով այն մտքից, թե որդիները պատասխան պիտի տան հայրերի մեղքերի համար: Այնուհետ ամեն ոք պատասխան է տալու իր մեղքի համար: Մարգարեն կոչ է անում ժողովրդին սիրտը փոխել, կանխատեսում է Աստծու ժողովրդի հրաշալի վերածնունդը և Նոր Ուխտի կնքումը: Գրքի վերջին գլուխներում Նոր Երուսաղեմի տեսիլն է, որ մարգարեություն է Գերության ավարտի և միաժամանակ նախապատկերումը Քրիստոսի Եկեղեցու: Եզեկիել մարգարեի գրքի պատկերները հանդիպում են Նոր Կտակարանում (Մատթ. ԺԸ 12, Հովհ. Ժ 1-6, Բ Կորնթ. Գ 3 և հատկապես Հայտն. ԻԱ 16, ԻԲ 1 և այլն):

4. Փառքի տեսիլքը Քոբար գետի մոտ (գլ. Ա-Բ, Ը-ԺԱ): Մարգարեի առաջին տեսիլքը եղել է 592 թ. թամուզ¹ ամսվա հինգերորդ օրը՝ Երուսաղեմի անկումից հինգ տարի առաջ: Այնտեղ կանխատեսվում էր սուրբ քաղաքի մոտալուտ վախճանը՝ մարգարեին դարձնելով համր ու անզոր: Եվ միայն նշաններով էր նա ցույց տալիս մարդկանց, թե ինչ է սպասվում նրանց հեռավոր հայրենիքին: Տեսիլքները նկարագրելիս մարգարեն ըստ երևույթին կիրառում էր պատկերներ, որոնք բաբելոնյան սրբազան արվեստն էր ներշնչել իրեն (տե՛ս М. Скабалланович. Первая глава Книги пр. Иезекииля. Мариуполь, 1904, էջ 41 և հաջ.): Մարգարեն ասես իր գրքում բառերով սրբապատկեր է նկարում, մշտապես ընդգծելով, որ իր խորհրդանիշներն ընդամենը «նմանություն» են, և այն էլ խիստ հեռավոր: Սրանով նա կամենում էր ցույց տալ, որ տեսիլքները դժվարնկարագրելի են:

Ըստ Եզեկիելի՝ ինքը նախ տեսավ, թե ինչպես հյուսիսից հրե ահռելի մի ամպ սուրաց («հյուսիս»ն այստեղ պատահական չէ. հնուց ի վեր այն Աստվածությունն «գտնվելու վայրն» է խորհրդանշել): Ամպի մեջ չորս հսկա էակ էր ուրվագծվում: Նրանց կցված թևերը ծածանվում էին չորս կերպարների վրա՝ մարդու, առյուծի, եզան և արծվի: Նրանք «երկնային կառքն» էին կազմում (եբր. הַכּוֹרֶת – ՄԵՐԿԱՎԱՄ), որ տանում էր երկնային Տապանակը: Մեկնաբանների կարծիքով կառքի անիվները (եբր. עִינֵי־הַכּוֹרֶת – ՕՖԱՆԻՄ) երկնակամարն են խորհրդանշում, իսկ դրանց վրայի «աչքերն»՝ աստղերը: Թևավոր էակները (քերովբեներ) մարմնավորում են արարված ուժերը՝ Աստծու Փառքի անձեռակերտ Տապանակը: Քերովբեներին՝ դեպի չորս ծագերն

¹ Հրեական տոմարի չորրորդ ամիսը – խմբ.:

ուղղված լինելը կապվում է Տապանակի համատիեզերական բնույթի հետ: Փառքը, որ տանում էր կառքը նկարագրվում է հետևյալ բառերով.

Նրանց գլխավերևի երկնականարից էլ ավելի վեր կար գահի պես մի բան, որ շափուղայ ակի էր նմանվում, իսկ գահի վրա՝ մարդու կերպարանքով մի բան: Այդ կերպարանքի մեջ բազմազույն ակի պես մի պատկեր էի տեսնում, նրանից ավելի ներքև՝ շուրջանակի կրակի պատկեր, մեջքից վեր՝ արեգակի նմանությամբ, իսկ մեջքից ներքև՝ կրակի: Եվ լոյսը, որ նրա շուրջը բոլորակ էր կապմել, ուներ ծիածանի տեսք, որ անձրևային օրերին ամպերի մեջ է ձգվում:

(Ա 26-27)

Ինչ է նշանակում այս տեսիլը: Սա շարունակությունն է այն ամենի, որ հայտնվել էր Երեմիա մարգարեին: Երկրային, ձեռակերտ Տապանակը լոկ ստվերն է տիեզերական՝ աստվածային Կառքի: Այլ կերպ ասած՝ համայն Տիեզերքն Աստծու Տապանն է, և ձեռակերտ Տապանակի մոտավոր կործանումը որևէ կերպ չի նվազեցնի Եսայիի Փառքը (հմմտ. Հայտն. Դ 3-8, ուր տաճարական պաշտամունքին հակադրված է երկնային պաշտամունքը):

Աստված մարգարեին ուղարկում է Իսրայելի որդիների մոտ՝ «անհնազանդ մարդկանց»¹ (Բ 3): Նա՝ տկար «մարդու որդին», պետք է դառնա էի մունետիկը: Նրան է տրված դառն կանխատեսումների մագաղաթը, որ պիտի թափանցի նրա ներսը (Աստծու Բանի խորհրդանիշը, որ լցվում է մարգարեի մեջ):

Մեկ այլ տեսիլքում մարգարեն պիտի ճանաչի Իսրայելի մեղքերի ողջ ծանրությունը: Նա հոգով Երուսաղեմ է տեղափոխվում և տեսնում է, թե ինչպես այն նույն կրակե կառքը Տաճարից դուրս է հանում է Փառքի Տապանակը: Հրեշտակները շիկացած ածուխ են շաղ տալիս Երուսաղեմի վրա, իսկ քերովբեները տեղից շարժում են երկնային կառքը: Տաճարի բակը լցվում է լուսավոր ամպով, իսկ հաջորդ պահին Փառքն արդեն արևելյան դարպասների մոտ է: Այն լքում է մեղքով պղծված վայրը:

Սա զարհուրելի տեսարան էր. կատարվում էր այն, ինչ կկատարվի ևս մեկ անգամ, երբ Քրիստոս ասի. «Ահա ձեր տունը ավերակ կթողնվի ձեզ» (Մատթ. ԻԳ 38): Թվում է, թե խորտակվում են Ուխտի հիմքերը: «... Աղաղակեցի ու ասացի. «Վսյ ինձ, Ամենակալ Տեր. ահա դու ջնջում ես Իսրայելի այդ տան մնացորդներին՝ քո վայրույթը Երուսաղեմի վրա թափելով» (Թ 8):

Եվ ի պատասխան նրա ողբի հնչում է հույսի խոսքը.

Այսպես է ասում Ամենակալ Տերը. նրանց զգելու եմ ապգերի մեջ, սիրելու եմ ամբողջ երկրով մեկ: ՄԻ ՓՈՔԸ ԺԱՄԱՆԱԿ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԵՄ ԼԻՆԵԼՈՒ ՆՐԱՆՑ ՄՏԱԾ ԵՐԿՐՈՒՄ: Ուստի ասա՛

¹ Հայերենում՝ Ինձ դառնացնողների – խմբ.:

նրանց. Այսպես է ասում Ամենակալ Տերը. նրանց հավաքելու եմ ապգերի միջոց, մեկտեղելու եմ նրանց այն երկրներից, ուր սփռել էի նրանց, և նրանց եմ տալու Իսրայելի երկիրը: Նրանք մտնելու են այնտեղ, վերացնելու են այնտեղի բոլոր գարշելի կուռքերը, ինչպես նաև բոլոր անօրենությունները նրա միջոց: ԵՎ ՈՒՐԻՇ ՍԻՐՏ ԵՄ ՏԱԼՈՒ ՆՐԱՆՑ, ՆՈՐ ՀՈԳԻ ԵՄ ՊԱՐԳԵՎԵԼՈՒ ՆՐԱՆՑ, ՀԱՆԵԼՈՒ ԵՄ ՔԱՐԵՂԵՆ ՍԻՐՏԸ ՆՐԱՆՑ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ ԵՎ ՏԱԼՈՒ ԵՄ ՄԱՐՄՆԵՂԵՆ ՍԻՐՏ, որպեսպի պատվիրաններին համաձայն ընթանան, օրենքներս պահեն ու կատարեն, ինձ համար ժողովուրդ լինեն, ես էլ իրենց համար՝ Աստված:

(ԺԱ 16-20)

Եվ այսպիսով Աստված Իր Եկեղեցին չի թողնի տարագրության մեջ: Ինքն Անձամբ նրա համար սրբարան կլինի հեթանոս երկրում: Սա նշանակում է, որ Աստծու Հոգին երկրի միայն մեկ վայրում չէ, որ գործում է (հմմտ. Հովհ. Դ 21), այլ ամենուր, որտեղ մարդիկ արտասանում են Աստծու անունը (հմմտ. Հովհ. Գ 8): Օտարության մեջ ստեղծված համայնքը հոգու միությունն ձեռք կբերի, և Աստծու զորության մեջ լուսավորված՝ հավատարիմների սիրտը կվերափոխվի: Հետևաբար Աստծու Փառքը Տաճարը լքեց ոչ միայն ի նշան «բարկության», այլ նաև այն բանի համար, որպեսզի հավատարիմների հետ լինի, ուր էլ որ նրանք գնան:

Վերջում Եզեկիելը տեսավ, որ քերովբեները, թևատարած սավառնելով, էի Փառքը հանեցին քաղաքից: Երկնային Կառքի փայլատակումը ողողեց Ձիթենյաց լեռը՝ այն, որի վրա հետագայում վերջին անգամ Քրիստոս երևալու է Իր Փառքով աշակերտներին:

Հարցեր կրկնության համար

1. Ինչ վիճակում էին գտնվում Բաբելոն բերված առաջին հրեաները:
2. Ինչ դժվարություններ ծագեցին նրանց կրոնական կյանքում:
3. Երբ է ապրել Եզեկիելը և ո՞րտեղ է մարգարեություն արել:
4. Ինչ է հայտնի նրա մասին:
5. Ինչ բնորոշ հատկություններ ունի նրա գիրքը:
6. Ինչպես է այն կառուցված:
7. Եզեկիելի մարգարեություններում ինչ հիմնական նյութեր են հանդես գալիս:
8. Ինչպես է մարգարեն նկարագրում Քոբարի տեսիլքը:
9. Ինչ է խորհրդանշում երկնային Կառքի պատկերը:
10. Աստծու Փառքն ինչո՞ւ լքեց Տաճարը:
11. Ինչ խոստում տրվեց վտարվածներին:
12. Ինչպես է այն աղերսվում նորկտակարանյան Եկեղեցուն:

§ 10. Երուսաղեմի անկումը (587 թ.): Երեմիայի մարգարեությունը Նոր Ուխտի մասին

1. Երեմիա մարգարեի պայթարն ընդդեմ ռազմատենչ կուսակցության: Սեդեկիա թագավորը՝ թույլ և կամազուրկ մի մարդ, գահ բարձրանալով՝ վերածվեց խաղալիքի իշխանների և զինվորականների ձեռքին, որ խելահեղ մի երազանք էին փայփայում՝ ազատվել Բաբելոնի իշխանությունից: Եվ Երեմիա մարգարեն, փորձելով սթափեցնել նրանց, ապարդյուն էր ի գործ դնում իր ազդեցությունը: Գաղտնի պատրաստվում էին պատերազմի:

Մարգարեն ավելի շատ հույսը կապում էր լավագույն մարդկանց հետ, որ Բաբելոն էին քշվել: Մոտավորապես 597 թվականին գրված առակում մարգարեն նրանց համեմատում է թզի՝ ժամանակին հավաքված պտուղների հետ, իսկ մնացածներին՝ ժանտահամ և փտած (զլ. ԻԴ): Տերը հայտնեց մարգարեին, որ հենց տարագիրներն ամբողջ սրտով կդառնան Աստծուն և կապաշխարեն: Մարգարեն գերիներին նամակ գրեց Քաղդեացիների երկիր, կոչ անելով նրանց՝ հինկտակարանյան Եկեղեցու Մնացորդին, աշխատել և ապրել խաղաղ, հավատալ և հուսալ, որովհետև երբ նրանք քավեն իրենց մեղքերը, Աստված նրանց ետ կբերի հայրերի երկիրը (զլ. ԻԹ):

Մոտավորապես 592 թվականին Սեդեկիան ստիպված էր Նաբուգոդոնոսորի դեմ դաշն կնքել հարևան երկրների հետ: Դաշնագրի նախաձեռնողը փարավոնն էր, որ կամենում էր թուլացնել Քաղդեացիների պետությունը, նրա հետ հակամարտության մեջ ներքաշելով Ասորիք-Պաղեստինի երկրները: 588 թվականին, բանակցությունների ժամանակ, Երեմիան ժողովրդին հայտնվեց լուծը պարանոցին և ձեռքերին կապանքներ: Նա ազդարարեց, որ Աստված որոշ ժամանակ իշխանությունը տվել է Նաբուգոդոնոսորին, և վերջինիս դեմ պայքարելու ցանկացած փորձ անիմաստ է (զլ. ԻԵ): Ի պատասխան՝ պալատական մարգարե Անանիան ցուցադրաբար վերցրեց Երեմիայից լուծը և ջարդեց՝ արտասանելով. «Այսպես ասում Տերը. Այսպես պիտի խորտակվի Նաբուգոդոնոսորի լուծը»: Երեմիան առարկեց, թե ինքը ևս ուրախ կլինեք այդ բանի համար, սակայն Աստծու կամքն այլ է: Մարգարեն պարտավոր է հայտնել ոչ թե իր սրտի ցանկությունը, այլ այն, ինչ իրեն հայտնել է Աստված (զլ. ԻԸ): Եվ Երեմիան հաճոյանալը մերկացրեց իբրև կեղծ մարգարեության նշան: Աստծու ժողովրդի մեղքերը շատ են, և ով հաղթանակներ և բարօրություն է կանխատեսում, չի կարող ներշնչված լինել Աստծու Հոգով:

Շուտով Նաբուգոդոնոսորի զորքերը շարժվեցին Հուդայի վրա: Դրանք առանց դժվարության գրավեցին մայրաքաղաքը: Դիմադրեց ընդամենը երեք ամիս՝ Ազեկան, Լաբիսը և Երուսաղեմը:

Ի դարի 30-ական թվականներին Լաքիսում հայտնաբերված գրությունները, որ դիտարկվող ժամանակին են վերաբերում, լույս են սփռում պատերազմի մանրամասների վրա: Կան շտապ հաղորդագրություններ, որ հրեա հրամանատարները ուղարկել են՝ սպասելով փարավոնի օգնությանը: Տեղեկանում ենք նաև, որ թշնամական զորքերով իրարից բաժանված ամրոցներն իրար կրակով էին ազդանշան ուղարկում: Թղթերից մեկում հիշատակված է ոմն մարգարե, որ «թուլացնում է ժողովրդի բազուկները» (իմա՛ դիմադրության ոգին): Մարգարեի անվան սկզբնատառերը չեն պահպանվել, սակայն դատելով վերջին տառերից՝ խոսքը Երեմիայի մասին է:

Տագնապահար Սեղեկիա թագավորը մարդ ուղարկեց Երեմիայի մոտ՝ ապագայի մասին տեղեկանալու: Մարգարեի պատասխանն անփոփոխ էր: Օգնություն որևէ տեղից սպասել պետք չէ. անհրաժեշտ է վերջ տալ պատերազմին: Քաղաքացիներն արդեն պաշարել էին մայրաքաղաքը: Սեղեկիան որոշեց շարժել Աստու գույթը և ազատ արձակեց ստրուկներին, ինչպես պահանջում էր Մովսիսական Օրենքը (Ելք ԻԱ): Երեմիան, բնականաբար, հավանություն տվեց. «Ճիշտ վարվեցիր»: Սակայն հենց Վափառ փարավոնն ստիպեց քաղաքացիներին վերջ դնել պաշարմանը, ստրուկներին վերադարձրեցին տերերին: Մարգարեն զայրույթով ընդվզում էր. «Երա համար էլ Տերն այսպես է ասում. «Դուք չլսեցիք ինձ, յուրաքանչյուրն՝ իր եղբորը, և ամեն մեկն իր մերձավորին ապատ չհայտարարեց. ահա էս էլ ձեզ համար ապատություն պիտի հռչակեմ սրի, սովի ու մահվան միջոցով, - ասում է Տերը. - ձեզ պիտի ցրեմ աշխարհի բոլոր թագավորությունների մեջ» (ԼԴ 17-18):

Այդ ժամանակ Երեմիան որոշել էր Անաթոթ վերադառնալ: Հարազատներն առաջարկել էին նրան հողակտոր ձեռք բերել, որի իրավունքն ինքը ուներ: Պատերազմական պայմաններում սա խելահեղություն էր թվում: Սակայն մարգարեն կամենում էր ցույց տալ, որ ինքը հուսահատված չէ և հավատով է լեցուն ապագայի նկատմամբ: Այս էր պատճառը, որ նա ուղևորվեց Անաթոթ, սակայն դարպասների մոտ նրան բռնեցին որպես թշնամու կողմն անցնող: Նրան դավաճան հռչակեցին, դաժանաբար ծեծի ենթարկեցին և նետեցին պալատական ատենադպիր Հովնաթանի նկուղը¹ (ԼԲ):

Այդ ժամանակ փարավոնի բանակը ջախջախվեց, և քաղաքացիները նորից պաշարեցին Երուսաղեմը: Սկսվեցին շրջապատման ծանր օրերը՝ սովի, հուսալքության: Բանտարկված մարգարեի համար ամենից վատթարագույնն էր այն միտքը, որ իրեն դավաճան են համարում: Եվ մարգարեն իր վիշտը հեղում էր իր ազոթքներում ողբերի մեջ.

¹ Հովնաթան ատենադպիրի ապարանքը վերածվել էր բանտի (Երեմ. ԼԵ 14-15) - խմբ.:

«Անիծյալ լինի այն օրը,
 երբ ես ծնվեցի.
 թող ուխտի չլինի այն օրը,
 երբ իմ մայրը ծնեց ինձ:
 Անիծյալ լինի այն մարդը,
 որն ավետիս տվեց իմ հորը և ասաց,
 թե՝ “Զեպ արու մանուկ ծնվեց”,
 և ցնծությամբ ուրախացրեց նրան...
 Ինչո՞ւ այսպես պատահեց,
 որ ես դուրս ելա արգանդից՝
 տեսնելու վշտեր ու տառապանքներ,
 և իմ օրերն ամոթալի վախճան ունեցան»:

(Ի 14-15, 18)

Երբևէ, որևիցե պահի չդավաճանելով իր կոշմանն ու մշտապես ականջալուր լինելով Աստծու կամքին՝ մարգարեն չէր կարողանում համակերպվել այն ամենի հետ, ինչ կատարվում էր հայրենիքում: Նա ամբողջ հոգով ու սրտով սիրում էր իր հայրենիքը, գիտեր, որ այն դատապարտված է, սակայն օգնելու հնարավորություն չուներ:

Մի գիշեր Սեդեկիա թագավորը գաղտնի եկավ Երեմիայի մոտ, նորից հարցնելու ապագայի մասին և կրկին պատասխան ստացավ՝ հարկ է վերջ դնել պատերազմին՝ հանձնվելով քաղղեացիների ողորմածությունը: Սակայն Սեդեկիան վաղուց կորցրել էր իշխանությունը զորահրամանատարների վրա: Գիտակցելով, որ մարգարեն ճիշտ է, թագավորն ընդամենը փորձեց մեղմել նրա վիճակը և Երեմիայի խնդրանքով նրան տեղափոխեց պալատի պահակասենյակ: Եվ այնտեղ, բոլորի կողմից մերժված, սովի և պաշարման բոլոր զրկանքները կրող Երեմիան գրառեց իր՝ հուսո մարգարեությունը՝ մեսիական ավետիսը.

«Ահա օրեր են գալու, - ասում է Տերը, - և ես հաստատ կատարելու եմ իմ բարի խոսքերը, որ հայտնեցի Իսրայելի տան մասին և Յուդայի տան մասին: Այն օրերում և այն ժամանակ ԴԱՎԹԻ ՅԱՍԱՐ ՄԻ ԱՐԴԱՐ ԾԱՌԱՎԻՂ ՊԻՏԻ ԾԼԵՍ, որն իրավունք ու արդարություն պիտի պաշտպանի երկրի վրա: Այն օրերում Յուդայի երկիրը պիտի փրկվի, և Երուսաղեմը հույսով պիտի սպրի: Այս է այն անունը, որով նա պիտի կոչվի՝ “Տերն է մեր արդարությունը”»:

(ԼԳ 14-16)

Սա սրբազան պատմության կարևորագույն հատկանիշն է: Հույս և փրկություն է շնորհվում այն պահին, երբ երկրային բոլոր սպասումները վերջնականապես խորտակվել են:

2. Երուսաղեմի անկումը (Երեմ. ԼԹ-ԽԳ, Դ Թագ. ԻԵ 1-21, Սաղմ. ՀԸ, Ողբ 1-5). Եվ որքան ծանրանում էին պաշարման հետևանքները, այնքան ավելի էր դժվարանում մարգարեի վիճակը: Իշխանները չհամարձակվեցին մահապատժի ենթարկել մարգարեին, բայց փաստորեն մահվան էին դատապարտել՝ նետելով խոր փոսը: Երեմիային փրկեց արքայի ներքինին՝ եթովպացի Աբդիմեկեքը: Նա համոզեց թագավորին, որ չի կարելի բարկացնել Աստծուն՝ սպանելով Նրա մարգարեին: Երեմիային դարձյալ տեղափոխեցին բանտի գավիթ:

Այդ ժամանակ քաղաքում սպառվել էին մթերքի պաշարները: Պաշարման դաժան տեսարանները պատկերված են Ողբի գրքում՝ Դ 1-9 (տես ստորև՝ § 11): 587 թվականի հուլիսի 19-ին Սեդեկիային զեկուցեցին, որ հյուսիսային պատում բացվածք կա, և քաղաքացիները քաղաքի կենտրոն են հասել: Թագավորը որոշեց դիմել վերջին միջոցին. գիշերվա քողի տակ նա ընտանիքով և կայազորով դուրս եկավ արևելյան դարպասներից, որ արքունի այգու հարևանությամբ էին գտնվում: Սակայն նրանց չհաջողվեց աննկատ անցնել թշնամու դիտակետերի մոտով: Քաղաքացիներն սկսեցին հետապնդել նրանց: Հավանաբար Սեդեկիան մտադիր էր Հորդանանն անցնելով թաքնվել, սակայն Երիքովի մերձակայքում քաղաքացիները հասան փախչողներին: Տեսնելով թշնամուն՝ Իսմայել իշխանն իր ջոկատով լքեց արքային և քառատրոփ արշավեց գետի կողմը, իսկ Սեդեկիան քաղաքացիների ձեռքն ընկավ: Նրան Ռեբղաթա տարան՝ Նաբուգոդոնոսորի մոտ:

Զայրացած Նաբուգոդոնոսորը դաժանորեն պատժեց իրեն դավաճանած Սեդեկիային. նրա առջև մահապատժի ենթարկեցին որդիներին, իրեն կուրացրեցին և կապանքներով տարան Բաբելոն, ուր շուտով մահացավ:

Երուսաղեմի պարիսպներն ավերվեցին: Տաճարը հրկիզվեց: Նաբուգոդոնոսորը հրամայեց իբրև ռազմավար վերցնել արժեքավոր իրերը: Այսպես իրականացան մարգարեությունները: Նրա Փառքը լքեց Եահվեի Տունը, և Տաճարը վերածվեց սևացած քարակույտի: Սրանով հայտնվում էր, որ արտաքին պաշտամունքը ոչինչ է Աստծու համար, եթե չեն հետևում Նրա պատվիրաններին:

3. Երեմիա մարգարեի կյանքի վերջին տարիները (Երեմ. ԼԹ-ԽԶ): 586 թ. օգոստոսին սկսվեց գերիների արտաքսումը Բաբելոն: Սակայն Նաբուգոդոնոսորը չէր կամենում, ամբողջովին սնանկացնելով, կործանել երկիրը: Նա գերադասեց այն դարձնել գավառ, որի կառավարումն ստանձնեց «խաղաղության խմբի» անդամ Գոդոլիան: Իբրև ապստամբությունները դատապարտողի՝ Երեմիային ազատ արձակեցին: Խ գլխի 1-ից երևում է, որ նրան սխալմամբ ուղարկել են վերաբնակների ճամբար, բայց հետո Նաբու-

գողոնոսորի կուսակալն ազատ ընտրություն շնորհեց. կարող էր Բաբելոն գնալ, կամ մնալ Հուդայում: Մարգարեն նախընտրեց մնալ:

Երկիրն ավերականների մեջ էր, և Գողոզիան պետք է վերականգներ: Երեմիան ամեն կերպ աջակցում էր նրան: Տոն օրերին Տաճարի ավերակների մոտ էին գալիս աղոթողները: Կյանքը կամաց-կամաց խաղաղ հունի մեջ էր ընկնում: Սակայն մինչև վերջ պայքարելու կողմնակիցները դարձյալ խռովություն բարձրացրին: Գողոզիան և քաղղեացի իշխանները դավաճանաբար սպանվեցին: Ամենուր ժողովրդական ընդվզման ջոկատներ էին ձևավորվում: Եվ քաղղեացիները Պաղեստին ուղարկեցին պատժիչ զորախումբ, որպեսզի վերջնականապես ճնշեն խռովությունը: Պարագլուխները որոշեցին Եգիպտոս փախչել՝ ակնկալելով փարավոնի պաշտպանությունը: Եվ նրանք ստիպեցին Երեմիային, որ գնա իրենց հետ:

Այս անգամ Նաբուգոդոնոսորն ավելի զանգվածային տեղահանություն նախաձեռնեց: Քաղաքների գրեթե ամբողջ բնակչությանն օտարության էին քշում, իսկ նրանց տեղը ոչ մեկին չէին բնակեցնում:

Երեմիան իր աշակերտ Բարուքի հետ Եգիպտոսում ևս շարունակեց ծառայել Աստծու խոսքին: Հրեական զորքը, որ այժմ արդեն փարավոնին էր ծառայում, հեթանոսական հավատալիքներով արագ էր վարակվում:

Այդ գաղթավայրի վավերագրերը, որ հայտնաբերվել են ԺԹ դարում, ցույց են տալիս, որ Եահվեին զուգահեռ եգիպտաբնակ հրեաները պաշտում էին և այլ աստվածների: Ավանդությունը հաղորդում է, թե Երեմիա մարգարեին քարկոծել են, երբ սկսել է մերկացնել մոլորյալներին:

4. «Գիրք Մխիթարության»: Նոր Ուխտ: Կյանքի վերջին տարիներին մարգարեն հավաքեց իր նախկին մարգարեությունները և ավերացրեց նորերը: Այն ընդունված է «Գիրք Մխիթարության» (գլ. 1-11) անվանել: Դրանում հայտարարվում էր մեղավորների ներման և այն մասին, որ Աստված նոր սերունդներից չի պահանջելու հայրերի գործած սխալների համար:

«Այն օրերին այլևս չեն ասելու,

թե՝ “Հայրերն ապոխ կերան՝

որդիների ատամներն առան”:

(11 29)

Չնայած Աստծու ժողովուրդը բազմիցս անարժան է գտնվել Ուխտին և խոստմանը, ի հեճուկս ամեն ինչի՝ Աստված իրագործելու է նախորոք ասվածը: Նախկին Ուխտը խախտվեց: Սակայն Աստված այն կվերականգնի:

Ահավասիկ օրեր են գալու, – ասում է Տերը, – երբ ՆՈՐ ՈՒԽՏ ԵՄ ԿԱՊԵԼՈՒ ԻՍՐԱՅԵԼԻ ՏԱՆ ՀԵՏ ԵՎ ՀՈՒԴԱՅԻ ԵՐԿՐԻ ՏԱՆ ՀԵՏ: Ոչ թե ըստ այն ուխտի, որ մի օր ես ուխտեցի նրանց հայրերի հետ, երբ

բռնեցի նրանց ձեռքից՝ դուրս հանելու համար նրանց Եգիպտոսացիների երկրից, բայց նրանք իմ ուխտին հավատարիմ չմնացին, ու ես նրանց մասին հոգ չտարա, – ասում է Տերը, – այլ այն ուխտն է, որ ուխտելու եմ Իսրայելի տան հետ այն օրերից հետո, – ասում է Տերը, – իմ օրենքները նրանց մտքի մեջ եմ դրոշմելու, դրանք նրանց սրտերի մեջ եմ գրելու, նրանց համար Աստված եմ լինելու, իսկ նրանք ինձ համար լինելու են ժողովուրդ: Եվ այլևս ամեն մեկն իր ընկերոջը չի սովորեցնելու, կամ ամեն մեկն իր եղբորը չի ասելու, թե՛ «Ճանաչիր Տիրոջը», քանպի ամենքը՝ նրանց փոքրերից մինչև մեծերը, ճանաչելու են ինձ, – ասում է Տերը, – որովհետև նրանց անհրաժեշտությունները պիտի ներեմ և նրանց մեղքերն այլևս չպիտի հիշեմ:

(ԼԱ 31-34)

Այս մարգարեության մեջ կարելի է մի քանի կարևոր կետեր ընդգծել.

ա) Նախկին Ուխտն անցնում է պատմության գիրկը: Նորն «այլ» է լինելու: Այն սկիզբը կլինի Աստծու և մարդու միջև նոր հարաբերությունների:

բ) Ուխտն այս վերաբերում է «Խորայելին և Հուդային», այսինքն Աստծու ողջ ժողովուրդին, հինկտակարանյան ողջ Եկեղեցուն, որ այս կերպ նորկտակարանյան դարաշրջան կմտնի: Նոր Ուխտի Եկեղեցին տիեզերական կլինի, որովհետև «աշխարհի ծայրերից հեթանոսները բեզ մոտ են գալու» (ԺՁ 19):

գ) Նոր Ուխտը կգրվի մարդկային սրտում: «Գրված Օրենքը,– նկատում է Ֆրանսիացի արդի աստվածաշնչագետ Ա. Ժեյլինը,– չի կարող արտահայտել աստվածային բոլոր պահանջներն ու մտադրությունները, ուստի դրան կփոխարինի ներքին Օրենքն՝ իբրև մտքի գերագույն պայծառացում: Այնժամ կրոնական կյանքը կդառնա անհատի կյանք այնքանով, որ այն կներկայանա որպես մարգարեի ներքին փորձառության շարունակությունը: Քանի որ Երեմիան նախատեսել էր իր կրոնական փորձառությունը ապագայի համար»:

դ) Նոր Ուխտում «աստվածճանաչողությունը», այսինքն սերն առ Աստված, մարդկային գոյության կենտրոնում կլինի: Շնորհի զորությամբ այն կդառնա մարդու նոր բնությունը:

ե) «Ես եմ ձեր Աստվածը, իսկ դուք իմ ժողովուրդն եք» հին բանաձևը ձեռք կբերի մարդու և նրա երկնային Հոր ներքին կապի նոր իմաստ՝ Եկեղեցու և նրա Փրկիչ Աստծու:

5. Երեմիա մարգարեի ազդեցությունը: Մարգարեի հավատարիմ աշակերտ Բարուքը գրքերը բերեց Բաբելոնի վերաբնակներին, ուր դրանք զգուշորեն պահվեցին և ընթերցվում էին մեծագույն ակնածանքով: Հնարավոր է Նոր Ուխտի մասին նրա մարգարեությանը ծանոթ էր նաև Եգեկիել մարգարեն: Վերջինիս գրքում կարդում ենք Աստծու հետևյալ խոսքերը.

Եվ իմ ծառա Դավիթն էլ իշխելու է նրանց վրա՝ հավիտյան: Խաղաղության դաշինք են կնքելու նրանց հետ, և այդ ուխտը հավիտենական է լինելու նրանց հետ:

(ԼԷ 25-26)

Սաղմոսաց գրքում և Հոբի գրքում կարտացոլվեն Երեմիայի ուսմունքի շատ կողմեր և նրա «սրտի կրոնի» փորձառությունը, իսկ ինքը՝ տառապյալ մարգարեն, կդառնա Տիրոջ Ծառայի, Մեսիա-Գառան նախակերպարներից մեկը (Եսայի ԾԳ): Քրիստոս Փրկչին կսկսեն ընդունել որպես հարուցյալ Երեմիա (Մատթ. Ժ2 14), որովհետև նա ուսուցանելու է, թե Տաճարը դատապարտված կլինի, եթե հավատքը փոխարինվի արտաքին ծեսով: Երեմիա մարգարեի հավատի կենդանի փորձը, նրա աղոթքները կանխատեսում են այն վերաբերմունքը Հոր հանդեպ, որ ազդարարելու է Քրիստոսի Ավետարանը:

Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ է խորհրդանշում թզերի մասին առակը:
2. Նկարագրեցե՞ք ռազմատենչ խմբի դեմ Երեմիայի պայքարի դրվագները:
3. Ի՞նչ հանգամանքներում բռնվեց մարգարեն:
4. Ի՞նչ մեղադրանք էին առաջադրում նրան:
5. Ե՞րբ է հնչել Երեմիայի՝ մեսիական մարգարեությունը:
6. Ի՞նչպես ընկավ Երուսաղեմը:
7. Ի՞նչ վիճակում էր այդ ժամանակ Երեմիան:
8. Ի՞նչպես անցան նրա վերջին տարիները:
9. Ի՞նչ էր ասում «Մխիթարության Գիրքը»:
10. Ո՞րն է Նոր Ուխտի մասին մարգարեությունը:
11. Երեմիա մարգարեն ի՞նչ ազդեցություն ունեցավ:

§ 11. Բարելոնյան գերություն:

Ողբի գիրքը: Աբդիու մարգարե (580-575 թվականներ)

1. Սփյուռքի սկիզբը: *Գերված հրեաների մեծագույն մասը բնակեցվեց Նաբուգոդոնոսորի մայրաքաղաքում, որ արքան զգալիորեն ընդլայնել էր: Մնացածները տեղավորվեցին մերձակա բնակավայրերում՝ ջրանցքների ափերին: Հույն պատմագիր Հերոդոտոսը Բաբելոն այցելելուց հետո այսպես է նկարագրում այն.*

«... Իսկ քաղաքը բաժանված է երկու մասի, քանզի նրա միջով հոսում է գետ, որի անունն է Եփրատ... Պարսպի երկու ծայրերը հասնում են մինչև գետը, այստեղ գետափից թեքվելով, երկու կողմից ձգվում է թրծած աղյուսներով

կառուցված պարիսպը: Քաղաքը զարդարված է եռահարկ և քառահարկ տներով ու կտրտված է ուղիղ փողոցներով ... Քաղաքի երկու մասերից մեկի մեջտեղում կանգնած է թագավորական պալատը՝ շրջապատված բարձր և հզոր պարիսպով, իսկ մյուսի մեջտեղում՝ Չևս Բելի պղնձադուռ սրբավայրը ... Նախկին թագավորների ժամանակ քաղաքի մի մասից մյուսը գնալու համար ստիպված էին նավակով անցնել մյուս կողմը»:

(Պատմություն I, 180, 181, 186)¹

Հերոդոտոսը խոսում է նաև մի կամրջի կառուցման մասին, որը գիշերը հավաքում էին, որպեսզի մարդիկ «չթափառեն և իրար չկողոպտեն»²:

Այս զգուշավորությունը պատահականություն չի կարելի համարել: Վերաբնակեցման քաղաքականության արդյունքում Բաբելոնյան իրապես բազմազգ քաղաք էր դարձել: Հարևան թաղամասերում ապրում էին եղամացիներն ու փյունիկեցիները, հրեաներն ու հույները, որ հաճախ իրար նկատմամբ թշնամաբար էին տրամադրված: Վերաբնակեցվածները հիմնականում աստիճանաբար կորցնում էին ինքնությունը՝ ընդունելով բաբելացիների կրոնն ու մշակույթը: Նույն ճակատագիրը կսպասվեր նաև հրեաներին, եթե մարգարեների քարոզը նրանց կրոնական միաձույլ Համայնքի չվերածեր: Այսպես ստեղծվեց սփյուռքը՝ դիասպորան՝ ցրվածները: Եվ այս Սփյուռքը նախատիպը եղավ նորկտակարանյան Եկեղեցու, որը նույնպես ցրված է ոչ քրիստոնյա աշխարհում:

Գերություն առաջին տարիներին համայնքի անդամների հիմնական հոգեվիճակը ասպաշխարհությունն էր: Սուրբ երկրից կտրվելով՝ նրանք առանց ապավենի մնացին: Տիրոջ կործանված Տնից հեռու հայտնված քահանաներն ու ղեկավարներն անգամ չէին համարձակվում երգել սրբազան օրհներգությունները:

«Բարեշունի գետերի մօտ՝

այնտեղ նստած լայիս էինք,

երբ յիշում էինք Սիրոնը:

Նրանց ուռիներից էինք

կախել մեր կտակարանները:

Այնտեղ մեզ գերեվարողները

օրհնութեան խօսք էին պահանջում մեպինց,

մեզ տարագրողներն ստիպում էին՝ ասելով.

«Երգեցէք մեզ համար Սիրոնի օրհներգերից»:

Իսկ մենք ինչպէ՛ս երգենք Տիրոջ օրհներգերը

օտար երկրում:

¹ Տեքստը վերցված է հայերեն թարգմանությունից՝ Հերոդոտոս, Պատմություն Ի-ըը գրքից, թարգ.՝ Ս. Կրկյաշարյանի, ԳԱ հրատ., Երևան, 1986 – խմբ.:

² Նույն տեղում I, 186 – խմբ.:

Եթե մոռանամ քեզ, Երուսաղէմ, թող իմ աջը մոռանայ ինձ»:
(Սաղմ. ԵԼԶ 1-5)

Ոչ վաղ անցյալի աղետալի դեպքերը ոչ մեկին հանգիստ չէին տալիս: Վերջապես մարդիկ սկսեցին հասկանալ, թե որքան ճիշտ էին մարգարեները, երբ զգուշացնում էին ժողովրդին: Նրանք կարդում և վերընթերցում էին Սուրբ Գրքերը, փորձելով գտնել ապագայի ինչպես և կատարվածի իմաստի մասին հարցերի պատասխանները:

2. Ողբի գիրքը Յոթանասնիցի մեջ ստացել է Երեմիայի Ողբեր անունը (հնարավոր է Բ Մնաց. ԼԵ 25-ից ելնելով): Սակայն սկզբնապես այն պարզապես Ողբ էր կոչվում և ոչ թե մարգարեների ժողովածուի մեջ էր, այլ Գրությունների բաժնում: Մի շարք նշաններ որոշակիորեն մատնանշում են, որ Երեմիան չի կարող այս գրքի հեղինակը լինել: Դրա կազմողն այլ՝ մարգարեից հեռու շրջանակի է պատկանել: Այստեղ ափսոսանք կա, որ Եգիպտոսն օգնության չհասավ հրեաներին (Դ 17): Մինչդեռ Երեմիան կտրականապես դեմ է այդ օգնությանը (ԼԵ 5-10): Ողբի հեղինակը մեծ հարգանքով է խոսում Սեդեկիա թագավորի մասին, նաև թե ինչ հույսեր էին կապում նրա կառավարման հետ (Դ 20): Եվ սա ամենևին չէր կարող դուրս գալ Երեմիայի շուրթերից, որ դատապարտում էր թագավորին և նրա մահը գուշակում: Եվ վերջապես ընտրելագույն ոճը գրքի, որ այբուբենական ակրոստիքոսով է օժտված, մատնանշում է մի հեղինակի, որ ստեղծագործել է ազատ պայմաններում, ինչը բոլորովին չի համապատասխանում Երեմիայի կյանքի վերջին տարիներին:

Մեկնաբանների մեծագույն մասը կարծում է, որ Ողբը գրվել է Երուսաղեմի անկումից հետո՝ առաջին տարիներին, կամ Հուդայում՝ Գողգոթիայի օրոք, կամ Բաբելոնում: Այն սերտորեն կապված է սուրբ քաղաքի անկման հիշատակին կատարվող պաշտամունքի հետ: Գրքի գլխավոր նյութն է՝ մեղքը իբրև ազգային ողբերգության պատճառ: Հեղինակն իրադարձությունները գնահատում է Դատավորների և Թագավորությունների գրքերի աստվածաբանության տեսանկյունից: Այստեղ դեռ չեն դիտարկվում անմեղ մարդու տառապանքների (Յոթի գիրք) և արդարի տառապանքների քավիչ ուժի (Եսայի ԾԲ-ԾԳ) մասին հարցեր: Աստուծով ներշնչված հեղինակի նպատակը մարդկանց մեղավոր լինելու գիտակցության արթնացումն է, որպեսզի ապաշխարության զգացումը, չարությունն ու հուսահատությունը հաղթահարելով, նրանց վերածնի նոր կյանքի համար:

Երուսաղեմը պատկերված է սզացող կնոջ կերպարով (Ա 1): Սա կապվում է Աստծու և ժողովրդի միջև ամուսնական միության խորհրդանիշի հետ (հմմտ. Օսեե Ա-Գ): Ժողովրդի անունից աստվածաշնչյան պոետը ընդունում է հատուցման արդարացի լինելը:

*Ո՛վ պորափոր Աստված,
 նայիր իմ թշվառությանը:
 Իր ցաւման գաւապանով նա տիրեց ինձ¹:
 (Գ 1)*

*Զորրորդ գլխում Երուսաղեմի պաշարման դրամատիկ նկարագրու-
 թյունն է, որի ավարտին ասվում է.*

*Բայց դա տեղի ունեցավ նրանց մարգարեների² մեղքով,
 նրանց քահանաների մեղքով:
 (Դ 13)*

*Գ 1-66-ում հանդես եկող «տառապող» մարդը, որի անունից գրում է հե-
 ղինակը, Իսրայելի Մնացորդն է: Նրա աղոթքները բաղկացած են հատուց-
 ման, Աստծու գթասրտութեան և փրկութեան հուշարձանի մասին մտորումներից:*

3. Աբդիու մարգարե (եբր. אֲבִיָּוּ - ՕՎԱՂԵԱ) իր գիրքը գրել է մոտա-



Աբդիու մարգարե: Մանրանկար
 Մարգարեների գրքից: XIII դ., Հռոմ,
 Վատիկանի գրադարան:

վորապես նույն ժամանակ, ինչ որ Ողբի
 Գիրքը: Դրա գրութեան համար պատ-
 ճառ են հանդիսացել հարևան Եդոմի
 թագավորութեան գործողութունները:
 Եդոմացիները, օգտվելով Իսրայելին
 բաժին ընկած աղետներից, թալանում
 էին առանց այն էլ սնանկութեան հա-
 սած եղբայրական երկիրը: Եդոմացինե-
 րին ուղղված Աբդիու մարգարեի մեղա-
 դրանքները շատ բաներում Երեմիայի
 ազդեցութունն են կրում (երբեմն բա-
 ռացի համընկնումներ կան): Ուղղված
 լինելով չարախնդութեան մեղքի դեմ՝
 գիրքը խոր բարոյական իմաստ ունի
 (հմմտ. Սաղմ. 6ԼԷ 7): Այս պահից սկսած
 Եդոմը դառնում է Աստծու ժողովրդի
 հավերժական թշնամու խորհրդանի-
 շը (ավելի ուշ Եդոմ էին կոչում Հռոմը³):
 Գիրքն ավարտվում է այն մարգարեու-
 թյամբ, թե Եսապի որդիները Երուսաղե-

¹ Ռուներեն թարգմանությունը եբր. բնագրին է համապատասխանում. *Ես մարդ եմ, տա-
 ռապանք տեսնելով նրա բարկության գավազանից – խմբ.:*
² Ռուներենում կեղծ մարգարեների – խմբ.:
³ Թալմուդում հաճախ հռոմը անվանում են Եդոմի թագավորություն (Շաբատ 56բ, Սան-
 հեդրին 21բ և այլն) – խմբ.:

մին ենթակա կլինեն, երբ Սիոն գան «փրկիչները» (Ա 21)¹: Այս եզրույթով էին կոչվում դատավորաց շրջանի աստվածաշունչ առաջնորդները (Դաւ. Գ 9, 15): Սակայն Աբդիու մարգարեի տողերում այն մեսիական իմաստ է ստանում, քանի որ թշնամիներին նվաճելուց հետո կգա Տիրոջ Թագավորությունը:

4. Աղոթատուն: Քահանաներ: Տաճարի բացակայության պատճառով այլևս հնարավոր չէր զոհ մատուցել: Սակայն պաշտամունքը երբեք չի դադարեցվել: Այն պարզապես նոր բնույթ կրեց: Մարդիկ սկսեցին հավաքվել տներում, կարդալ աղոթքներ, սաղմոսներ և Սուրբ Գիրք: Ուսուցիչները քարոզ էին կարդում, մարգարեները ազդարարում էին Տիրոջ կամքը: Աստվածպաշտության այս հոգևոր-ուսուցողական կողմը նաև Գերուխյունից հետո պահպանվեց՝ տաճարական պաշտամունքին զուգահեռ: Տները, ուր այն կատարվում էր, կոչվում էին «ժողովական տներ» (եբր. [תּוֹכַח תּוֹבָ] բեթ-հա-թնեսեթ), հունարեն՝ սինագոգներ: Սկզբնապես նաև քրիստոնեական աղոթատներն էին այդպես կոչվում (Յակ. Բ 2): Բացի այդ, նորկտակարանյան աստվածպաշտությունը (աղոթք, սաղմոս և Գիրք) շատ բան է ընդունել աղոթատների ավանդույթներից (տե՛ս Н. Д. Успенский. Анафора. – ВТ, 13):

Խորանից զրկված սփյուռքի քահանաները խնամքով պահում էին հին պաշտամունքային կանոնները... Ինչպես կարծում են ժամանակակից աստվածաշնչագետները հենց այս շրջանների հոգևորականությունից դուրս եկավ Երրորդ՝ Քահանայական Պատմությունը (P, Ք), որ ընդգրկվեց Հնգամատյանում (տե՛ս հտ. 1, § 16):

Գերուխյան ընթացքում ավարտվեց Սուրբ Գրոց Պատմական գրքերի շրջանը: Դրանք ժողովրդի առջև բացում էին անցյալի պատկերը, որպեսզի հայրերի սխալներն ստիպեին նոր սերունդներին ապաշխարության և հոգևոր վերածնության:

Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ է նշանակում դիապորա:
2. Ինչո՞ւ հրեաները չտարրալուծվեցին մյուս ազգերի մեջ:
3. Գերության մեջ գտնվող Աստծու ժողովուրդն ի՞նչ զգացումով էր ապրում:
4. Ե՞րբ է գրվել Ողբի Գիրքը:
5. Ո՞րն է դրա հիմնական իմաստը:
6. Ինչի՞ մասին էր մարգարեանում Աբդիու մարգարեն:
7. Ի՞նչպես առաջացան սինագոգները, և ո՞րն էր դրանց նպատակը:
8. Սուրբ Գրքի ո՞ր մասերն են ձևավորվել Գերության շրջանում:

¹ Հայերենում փրկվածները – խմբ.:

§ 12. Եզեկիելի մարգարեությունը Նոր Երուսաղեմի մասին

(մուտ. 573 թ.)

1. Եզեկիել մարգարեն Երուսաղեմին սպասվող վիճակի մասին:
Հուդայի և Բաբելոնի միջև պահպանվեցին մշտական և մասնավոր կապեր՝ վաճառականների, ճանապարհորդների և հատուկ նվիրակների միջոցով: Երուսաղեմի կործանման լուրն անսպասելի չեղավ Եզեկիելի մերձավոր շրջանակի համար: Մարգարեն վաղուց էր ճակատագրական վախճանը կանխատեսել: Սակայն իզուր չէ, որ տեսիլքի ժամանակ իրեն տրված մագաղաթը, որը պիտի ուտեր (Գ 1-3), «մեղրի քաղցրություն տվեց»: Ահեղ իրադարձություններում մարգարեն Նախախնամության գործն էր տեսնում:

Դավթի քաղաքի պաշարման օրերին Եզեկիելը ժողովրդի առջև խորհրդանշական կերպով պատկերում էր պաշարման աղետները՝ սովն ու կործանումը (զլ. ԴԵ): Սակայն երբ կանխորոշվածն իրականացավ, մարգարե-քահանայի քարոզն այլ ուղղություն ձեռք բերեց:

2. Տերը՝ Հովիվ: Քանի որ հինկտակարանյան Եկեղեցու հովիվները հիմնականում անարժան գտնվեցին իրենց կոչմանը, Աստված ինքը նրա Հովիվ կլինի (զլ. ԼԴ):

«Այսպես է ասում Տեր Աստված. «Ահա ես ինքս եմ փնտրելու հոտերս, այցելելու եմ դրանց: Ինչպես որ հովիվն է իր հոտը փնտրում այն օրը, երբ մեզ ու մառախուղ է լինում իր ցրված հոտերի վրա, այնպես էլ ես եմ փնտրելու հոտերս, հավաքելու եմ դրանք այն բոլոր տեղերից, ուր ցրված էին մեզ ու մառախուղի օրը»:

(ԼԴ-11-12)



Այսպիսով Եզեկիելի հայտնության մեջ ի հայտ է գալիս Աստծու նոր պատկեր՝ Փրկիչ-Աստծու, որ ներում է մեղքերը: Աստված ինքն իրեն հովիվ հետ է համեմատում, քանի որ արևելյան պատկերացումների համաձայն ոչխարները հատուկ հոգածության և սիրո առարկա էին: Հենց այս պատկերը կիրառեց Հիսուս Բարի Հովիվ առակում (Հովի. Ժ 1-18):

Եզեկիել մարգարե: Որմանկար Էլյուսայի Աստվածածին եկեղեցում, Բեյլուսա, Հունաստան: XII դ. սկիզբ:

Ինչո՞ւ Աստված, եթե սիրում է Իր ընտրյալներին, նրանց հետ այդքան դաժան վարվեց: Եզեկիել մարգարեն այս հարցին պատասխանում է պարզ և մարգարեական ավանդներին հարազատ. Գերությունը խրատ էր մոլորյալների համար և պատիժ մեղավորների.

Տերը խօսեց ինձ հետ ու ասաց. Մարդո՞ւ որդի, Իսրայելի այդ տունը, որ բնակուել էր իր երկրում, իր ընթացքով, կուռքերով ու պղծութեամբ պղծել է այն... Բարկությունս թափեցի դրանց վրայ այն արեան համար, որ թափել էին երկրում ...

(ԼԶ 16, 18)

Ժամանակ է հարկավոր հինկտակարանյան Եկեղեցին իր անիրավություններից մաքրելու համար: Միայն հինը կործանելուց հետո Աստված կատեղծի նորը: Կգան օրեր, երբ թողություն կտրվի, և Սուրբ երկիրը կծաղկի ինչպես եղեմական պարտեզը (ԼԶ 35):

3. Վերածնության խորհուրդը (գլ. ԼԷ). Շատ մարդիկ չէին կամենում հավատալ Խոստմանը: 587 թվականի աղետն անուղղելի էր թվում: Տաճարն այլևս չկա, սուրբ երկիրը խլել են, ժողովուրդը ցրվել է, և հեթանոսների տերությունն անասան է թվում: Երկրային ոչ մի հաշվարկով հնարավոր չէր հիմնավորել ապագայի հանդեպ հույսը: Թերահավատների համար պատասխան հանդիսացավ Եզեկիելի տեսիլը:

Մարգարեի առջև դաշտ էր, ուր մարդկային մնացորդներ էին՝ վաղուց քայքայված ոսկորներ.

Նա ասաց ինձ. «Մարդո՞ւ որդի, արդյոք կկենդանանան այդ ոսկորները»: Ես ասացի. «Տե՛ր Աստված, այդ դու գիտես»: Նա ասաց ինձ. «Մարդո՞ւ որդի, մարգարեացի՞ր այդ ոսկորների վրա ...:

(ԼԷ 3-4)

«Մարգարեացի՞ր»ը պետք է հասկանալ որպես ազդարարի՞ր էի կամքը: Եվ Նրա հրամանով Եզեկիելն ասում է ոսկորներին, որ դրանք նորից միս ու արյուն կհագնեն, և նորից հոգի կտրվի իրենց: Եվ հազիվ էին հնչել այս բառերը, երբ ձայն լավեց, և ոսկորներն սկսեցին իրար մոտենալ ու միանալ: Աստծու խոսքով մարգարեն կանչեց՝ «Ո՛վ շունչ, փչի՛ր մեռելների վրա», և ոսկորները կենդանացան ու ոտքի կանգնեցին:

«Եվ Տերը խոսեց ինձ հետ ու ասաց. «Մարդո՞ւ որդի, այդ ոսկորներն Իսրայելի ամբողջ տունն են: Դրանք ասում են. “Չորացան մեր ոսկորները, մեր հոյսը կտրվեց, ու մենք մեռանք”: Ուստի մարգարեացի՞ր ու ասա՛մ դրանց. “Այսպես է ասում Տեր Աստված. Միս ես բաց եմ անելու ձեր գերեզմանները և հանելու եմ ձեզ ձեր գերեզմաններից, ո՞վ իմ ժողովուրդ: ... Ձեզ դնելու եմ ձեր երկրում, և դուք պիտի իմանաք, որ ես եմ Տերը: Ասացի ու կատարելու եմ “», - ասում է Տեր Աստված:

(ԼԷ 11, 12, 14)

Այսպիսով տեսիլքի անմիջական իմաստը բացատրվում է հենց Գրքում: Եկեղեցու որոշ Հայրեր (օր.՝ Յերոնիմոս Երանելին) բավարարվել են այս ընկալմամբ: Սակայն մյուսներն այստեղ ավելին են նկատել. Եկեղեցին վերածնելու և Հնդհանրական Հարուխանն ուղղված Աստծու գործերի նախատիպը: Եվ իսկապես՝ նորկտակարանյան Եկեղեցու ողջ պատմությունը նշանավորվել է Աստծու Հոգու հրաշալի գործերով, Ով փորձության օրերից հետո կառուցում էր Եկեղեցին: Բացի այդ՝ տեսիլքը ցույց է տալիս, որ Աստված կարող է կենդանացնել փտածը, որովհետև նա կյանքի Տերն է:

Համայնքի վերականգնումը նկարագրված է իբրև նոր առեղծված (հմմտ. Ծննդ. Բ 7): Իր նորացված ժողովրդի հետ Աստված հավիտենական Ուխտ կհաստատի և նրա գլուխը կկարգի «մեկ Թագավորին»՝ Մեսիային: Այս մարգարեությունը, որ ընթերցվում է Ավագ Շաբաթվա արարողությունից հետո, կանխասում է Քրիստոսի միտքը մի հոտի և մի Հովվի մասին (Հովհ. Ժ 16):

4. Վախճանաբանական պատերազմ (զլ. ԼԸ-ԼԹ): Եզեկիել մարգարեն առաջինն է մտցրել Ս. Գրքում վախճանաբանական ճակատամարտի մասին նյութը: Ժամանակի վախճանը կնշանավորվի Աստծու Թագավորության հավատարիմների և թշնամիների միջև մեծ ճակատամարտով (հմմտ. Հայտն. ԺԹ 19): Այլ կերպ ասած Թագավորությունը չի տրվի հենց այնպես, այլ, Ավետյաց երկրի նմանությունը, պահանջվում է պայքար և ջանք (հմմտ. Մատթ. ԺԱ 12): Աստծու ժողովրդի ախոյանների անունները մարգարեն վերցրել է հյուսիսի ռազմատենչ թագավորների և ցեղերի մասին ավանդություններից¹ (Գոգը մեղացիների արքա Գիգեսն է, Ռովսը՝ Ուրարտուի արքա Ռուսան, Մոսոքը և Թոբելը՝ Կովկասի և Հյուսիսային Միջագետքի ազգերն են)²: Նրանք խորհրդանշում են այն սպառնալիքը, որ գալիս է հեռավոր երկրներից: «Ոմանք ընկալում են սա ալաբանական իմաստով՝ Եկեղեցու, սատանայի և հալածանքների մասին, որ տարբեր ժամանակներում ձեռնարկվել են պիղծ թագավորների կողմից» (Ս. Златоуст. Обзорение книг Ветхого Завета. Творения, кн. IV, էջ 688):

¹ Ռուսերենում այսպես է՝ երեսդ ուղղիդ դեսի Գոգը, Մագոգի երկրում Ռովսի, Մոսոքի և Թոբելի իշխանի դեմ: Հայերենում Ռովսը և Մոսոքը միասին են՝ Ռուսեսոք – խմբ.:

² Գոգ և Մագոգ – Հրեության և քրիստոնեության, նաև իսլամի (Յաջուջ և Մաջուջ) վախճանաբանական պատկերացումներում Աստծու ժողովրդի ռազմատենչ թշնամիներ, որոնք վերջին օրերին կհայտնվեն հյուսիսից և հարավից կամ աշխարհի այլ ծայրերից: Տարբեր ազգերի կամ տեղանունների հետ այս անունների նույնացման բացատրությունները բազմաթիվ են (տե՛ս օրինակ Մեկնություն Յայտնություն Յովհաննու Աւետարանչի, արարեալ Անդրեի Կեսարու, 1855, էջ 275–280. Մեկնություն Յայտնություն Ս. Յովհաննու Առաքելոյ, ի Պետրոսե արքեպս. Բերդումեանց, 1846, էջ 291–304): Սակայն ոչ մի տարբերակ թե՛ գիտականորեն, թե՛ լեզվաբանական մոտեցումներով հաստատելը դժվար է և գրեթե անհնար (օրինակ, Էլնելով համահունչ լինելուց, նույնացվում են Մոսոքը Մոսկվայի, Ռովսը՝ ռուսների, Թոբելը՝ ռուսական գրեթե անհայտ Տոբոլսկի հետ) – խմբ.:

5. Նոր Երուսաղեմ (Խ, ԽԲ 15-20, ԽԳ, ԽԸ): *Եզեկիելի վկայությունմբ այս մարգարեությունն ինքն սկսել է գրել 573 թ. գարնանը* (Խ 1):

Գերություն քսանհինգ տարիների տխուր օրերին Աստծու Հոգին մարգարեին Երուսաղեմ տեղափոխեց: Եվ տեսանողին դրեց «*չափազանց բարձր լեռան վրա*» (Խ 2): Այս նշումը պատահական չէ: Իրական Երուսաղեմի շրջակայքում այդպիսի լեռ չկա: Մարգարեն տեսնում է Ապագայի մի կատարյալ Քաղաք: Նրա նկարագրության մեջ ինչպես և Հայտնության Նոր Երուսաղեմի պատկերում, բոլոր մանրամասները խորը թաքնված իմաստ ունեն:

Աստծու Քաղաքին նոր անուն է տրվում՝ «*Տերն այնտեղ է*» (ԽԸ 35): Սա նշանակում է, որ այնտեղ կիրականանա արարման գերագույն նպատակը՝ Աստված կյինի մարդկանց հետ (հմմտ. Եսայու հիշատակած փրկչական անունը՝ Էմմանուել-Աստված մեզ հետ):

Տաճարն այլևս հարակից չի լինի թագավորական պալատին, ինչպես նախկինում էր: Աստծու ժողովրդի «*իշխանի*» տունը դրանից հեռու կլինի: Ճշգրտությունը և որոշակիությունը սրբարանի նկարագրության, սրբարանի, որ կառուցվելու է Գերությունից հետո, ոչ միայն հրահանգ են շինարարների համար (իբրև Եզեկիել քահանան լավ պատկերացնում էր հին Տաճարը), այլ նաև հաստատում, որ Աստծու Տունը կվերականգնվի:

Ի նշանավորումն այն բանի, որ Տիրոջ երկրում ամեն ինչ կատարյալ և ներդաշնակ է լինելու, Եզեկիելը կառուցն ավելի սլացիկ է նկարագրում, քան Սողոմոնի Տաճարն էր: Արտաքին պատը կատարյալ քառակուսի է (ավարտունության և ներդաշնակության խորհրդանիշ): Դեպի աշխարհի չորս ծագերը տարածված լինելը խորհրդանշում է Աստծու Տան և Քաղաքի տիեզերական նշանակությունը (ԽԲ 15-20): Հարություն առած հինկտակարանյան Եկեղեցին դիմավորում է Եհզկելի Փառքը, որ գալու է արևելքից (որտեղից պիտի վերագառնան վտարանդիները):

Աստված ներում է մարդկանց և կրկին բնակվում է նրանց հետ: Սա ավետարանական Աստվածահայտնության նախապատկերն է, սակայն հեռավոր նախապատկեր, որովհետև Փառքը դեռ թաքնված է մարդկանց հայացքներից: Միայն մարմնացումն Աստծուն կհայտնի աշխարհին: Տաճարում պաշտոնավարելն աստվածաբուխ վկայությունն է այն բանի, որ Աստված մոտ է, որ նա՝ կիրգիչ Հուրը, ապրում է Քաղաքի սրտում:

Հողակտորների արդար բաժանումը բարոյական սկզբունքներն է խորհրդանշում, որոնք պիտի ընկած լինեն մարդու երկրային կյանքի հիմքում (ԽԸ 15-29): Հավասար բաժին են ստանում նաև պանդուխտները, այսինքն դարձի եկած հեթանոսները: «*Իսրայելի պավակների մեջ սրանք ձեզ համար երկրածինների պես են լինելու. ձեզ հետ են ապրելու, ժառանգությունից են օգտվելու Իսրայելի ցեղերի մեջ*» (ԽԷ 22):

Ուշագրավ է, որ «իշխանը» (նա Եզեկիելի մոտ փոխարինում է թագավորին) զրկված է ամբողջ հողին տիրելու իրավունքից. նրա իշխանությունը սահմանափակ է: «Այսպիսով, ներկա հատվածում Արևելքի համար առաջին անգամ արտահայտվում է այն միտքը, որ թագավորը պետության կալվածատերը չէ» (Բ. Ա. Տուրան):

Եզեկիելին համարում են հինկտակարանյան համայնքի ձևավորող, «հուզայականության հայր»: Սակայն նրա Աստծու Քաղաքն առավել խոր բովանդակություն ունի. կենդանի ջրի գետերը (ԽԵ 1-9) խորհրդանշում են նրա ուսմունքի մեկ այլ, միստիկ-վախճանաբանական ծրագիրը: Մարգարեն արդեն նկատի ունի ոչ թե պարզապես աշխարհի ձևավորումն արդարության սկզբունքով, այլ նաև Երկնային Երուսաղեմն (հմմտ. Հայտն. ԻԱ 16) իբրև շնորհի կենտրոնացում, որ կվերափոխի տիեզերքը: Այն, որ Մեռյալ ծովի ջրերը զրկվում են իրենց կործանարար ուժից (ԽԵ 8), ցույց է տալիս Հոգու հաղթանակող իշխանությունն անկատար բնության և մարդային սերնդի մեջ առկա շարի նկատմամբ:

Հարցեր կրկնության համար

1. Եզեկիել մարգարեն ի՞նչպես էր պատկերում Երուսաղեմի անկումը:
2. Ո՞վ է լինելու Աստծու ապագա ժողովրդի Հովիվը:
3. Ըստ մարգարեի ո՞րն է ժողովրդի աղետների իմաստը:
4. Ի՞նչ նպատակ էր հետապնդում «չորացած ոսկորների» մասին մարգարեությունը:
5. Ի՞նչ էր այն նախապատկերում պատմական և վախճանաբանական առումով:
6. Ի՞նչ է նշանակում վերջին մարտը Գոգի և մյուս թագավորների հետ:
7. Եզեկիել մարգարեի գրքի ո՞ր գլուխներն են նվիրված Նոր Երուսաղեմի նկարագրությանը:
8. Ինչո՞վ է տարբերվում այս Քաղաքը պատմական Երուսաղեմից:
9. Ո՞րն է Քաղաքի վերաբերյալ մարգարեության ընդհանուր իմաստը:
10. Ի՞նչ է ասում Քաղաքի և Տաճարի պատերի նկարագրությունը:
11. Եզեկիելի գրքի համաձայն որո՞նք են երկրի հասարակության կազմակերպման սկզբունքները:
12. Ի՞նչ տեղ է հատկացվում «պանդուխտներին» Նոր Երուսաղեմում:
13. Ի՞նչ է խորհրդանշում կենդանարար ջուրը, որ հոսում է Տաճարից:

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

§ 13. Սաղմոսարան. Ընդհանուր դիտարկում

Աստվածաշնչի ոչ մի գրքում այսքան ամբողջական բացահայտված չէ հինկտակարանյան Համայնքի կրոնական փորձը, որքան Սաղմոսարանում, և Հին Կտակարանի ոչ մի գիրք այնքան կարևոր դեր չի խաղում Քրիստոսի Եկեղեցու կյանքում, որքան սաղմոսների ժողովածուն:

Ինքը՝ Տեր Հիսուս, աղոթում է սաղմոսերգունների խոսքերով (օր.՝ Մատթ. ԻԷ 46): Դեռևս առաքելական ժամանակներից սաղմոսները դարձան պաշտամունքի և աղոթագրքերի անբաժանելի մասը: Այսպիսով, սաղմոսները ոչ միայն «կազմեցին այն օղակը, որ Եսայիին, Երեմիային կապում է Ավետարանի հետ» (Բ. Ա. Տուրաև), այլ նաև փոխանցեցին Նոր Ուխտի Եկեղեցուն Հնի անանց, հոգևոր արժեքները:

1. Սաղմոսարանի անվանումը և կազմությունը: «Սաղմոսարան» անվանումը (եբր. מִזְמוֹרֹת – թե՜ՅԻԼԻՄ – փառաբանություն, հուն. «ψαλτήριον») կապված է սաղմոսարանի երաժշտական գործիքի անվանման հետ, որի նվագակցությամբ ուղեկցվում էր սաղմոսների երգեցողությունը: Ինչպես գրում է սուրբ Բարսեղ Կեսարացին, «սաղմոս» (ψαλμός) բառը նշանակում է «երաժշտական խոսք, որը արտասանելիս հարվածում էին նվագարանի լարերին» (Беседы на Пс 29):

Կանոնական սաղմոսները 150-նն են: Դրանց համարակալումը Յոթանասնիցում և Վուլգատայում, որը համապատասխանում է ռուսերեն թարգմանության հետ¹, հաճախ չի համապատասխանում հրեականի հետ.

Ա-Ը և ՃԽԸ-ՃԾ սաղմոսները համընկնում են:

Ժ-ից մինչև ՃԽԷ սաղմոսները մեկով տեղաշարժված են հրեականի բնագրից (օրինակ՝ Յոթանասնիցի և Վուլգատայի Ի սաղմոսին համապատասխանում է հրեական ԺԹ-ն):

Յոթանասնիցի և Վուլգատայի Սաղմ. Թ	համապատասխանում է	Հրեական Ս. Գրքի Թ և Ժ-ին
Սաղմ. ՃԺԳ	-	Սաղմ. ՃԺԴ և ՃԺԵ

¹ Հայերեն թարգմանության հետ նույնպես – խմբ.:

Սակայն ողջ Սաղմոսարանը հետգերություն շրջանին վերագրելը, ինչպես վարվում էին ժԹ դարի մի շարք աստվածաշնչագետներ, անհիմն է: Նման թվագրման դեմ բավական հիմնավորումներ կան: Ի մասնավորի ուգարիտյան (Ռաս-Շամրա, տես հտ. 1, § 20, կետ 7) օրհներգերի հայտնաբերումից հետո բացահայտ դարձավ, որ շատ սաղմոսներ իրենց վրա կրում են հինքանանյան գրականության ազդեցությունը, որ Գերության շրջանում վերջնականապես վերացել էր (տես այս բաժնի Հավելվածը):

Սաղմոսների մեծ մասը գրվել է, հավանաբար, թագավորաց շրջանում, չնայած կան նաև Գերության շրջանին (ՃԼԶ) և Բաբելոնից վերադարձին հաջորդած տարիներին (ՃԻԳ) աղերսվողներ: Քրիստոսից առաջ Ա դարի սաղմոսներն (Կուևրայյան օրհներգեր, Սաղմոսնի սաղմոսներ ևն) արդեն չեն ընդգրկվել Սաղմոսարանում: Հետևաբար դրա բոլոր հինգ գրքերը կանոնական են ճանաչվել Ք. ծ. ա. Բ դարից ոչ ուշ:

Գրական առումով սաղմոսները սրբազան բանաստեղծության տեսակին են պատկանում: Սակայն դրանք օժտված չեն ո՛չ հանգավորմամբ, ո՛չ տաղաչափական հատկություններով: Սաղմոսերգուների գեղարվեստական գլխավոր միջոցները նույնն են ինչ մարգարեներինը. ալիտերացիա¹, գաղափարական գուգահեռներ և համաչափություններ (հտ. 1, § 9, 4):

Սաղմոսների հետ նմանություններ կարելի է գտնել ոչ միայն կումրանյան մագաղաթներում, Նոր Կտակարանում (Ղուկ. Ա 46-55, 67-80) և Հարանց գրվածքներում, այլ նաև ուշ գրականության մեջ՝ Միլտոնի, Լոմոնոսովի, Բայրոնի և այլ պոետների մոտ:

3. Սաղմոսարանի նվագակցությունը աստվածաշնչական հնագույն ավանդույթ է: Սրբազան օրհներգությունների երաժշտության մասին հիշատակվում է Ելից գիրքը (ԺԵ 20-21): Երաժշտական նվագակցության էին դիմում դատավորները, մարգարեները, թագավորները (օր. Ա Թագ. Ժ 5, Դ Թագ. Գ 15): Դավիթ թագավորը հայտնի էր քնար նվագելու իր վարպետությամբ (Ա Թագ. ԺԶ 17-23): Տաճարում ղևտական մեծ երգչախմբեր կային (Բ Մնաց. ԻԹ 25), որ երգում էին երաժշտական նվագակցությամբ: Հենց սաղմոսներում Աստծուն փառաբանելու կոչ է արվում՝ երգով և նվագարաններով (ՃԽԹ 3):

Երաժշտության նվագակցությամբ երգում էին կա՛մ առանձին երգիչները (մենակատարներ), կա՛մ երգչախումբը, իսկ երբեմն նաև բոլոր աղոթողները կրկնում էին օրհներգի եզրափակիչ տողերը (Բ Օրին. ԻԷ 15-26): Երաժշտական դադարներն ընդգծում էին «անլա» արտասանելով (սինդգական թարգմանության մեջ այս բառը բաց է թողնված)²:

¹ Նմանաձայնությունները – որոշակի բաղաձայների հաճախակի կիրառումը – խմբ.:

² Հայերենում նույնպես – խմբ.:

Բիրլիական շրջանի երաժշտական գործիքներից կարևորագույնները հետևյալներն են.

Կինոր (= հին հրեական նվագարան, քնար) - տախտակ, մեջտեղում փորվածք, որի վրա լարեր են ձգված:

Նեվել (= սաղմոսարան) - տավրի տեսակ:

Ցիմբալ կամ կիմբալ - հարվածային գործիքի տեսակ:

Փող - որպես կանոն մետաղական էին և ուղիղ:

Շուխար (եղջերափող) - պատրաստվել է խոյի ոլորած կամ այծի եղջյուրից. ձայնը նման է շեփորի բարձր, ձգված ձայնի:

Տիմպան (= հարվածային գործիք) - դափ բոժոժներով կամ զանգուլակներով:

Ուզար (= սրինգ) - պարկապզուկի տեսակ:

Այս և այլ գործիքներից էր կազմվում հինկտակարանյան Տաճարի նվագախումբը: Դրանց պատկերները պահպանվել են եգիպտական և ասորական հուշարձանների վրա:

Սաղմոսները կատարվում էին թիվ ասելով - սաղմոսասացությամբ, որ նախատիպ է հանդիսացել հինեկեղեցական երգեցողության համար:

4. Սաղմոսների վրայի մակագրությունները հաճախ կապված են տաճարական պաշտամունքի երաժշտական յուրահատկությունների հետ: Բերենք մի քանի օրինակ.

«Այսուհետև առափոռյան օգնության մասին» (Սաղմ. ԻԱ) - նշանակում է, որ սաղմոսը պետք է երգվի առավոտյան երգի ավանդական եղանակով:

«Երաժշտների խմբավարին»¹ (Սաղմ. ԺԸ) - սաղմոսը վերցված է տաճարի խմբավարի ժողովածուից:

«Օրհներգություններ բարձունքի աստիճանների վրա» (Սաղմ. ԵԺԹ-ԵԼԳ) - սաղմոսներն այն աղոթքներից են, որ երգում էին Տաճար մուտք գործող ուխտավորները:

«Աղենոթ» (Սաղմ. ԽԵ)² - եբր. הַמֶּלֶךְ - «ԱԼՄԱՎ»՝ երիտասարդ կին բառից. մատնանշում է սաղմոսը երգող կանացի երգչախումբը:

«Մի ապականիր» (Սաղմ. ԾԶ) - ինչպես կարծում են ժամանակակից մեկնիչները, սրանով ակնարկվում է գարնանային եղանակ [երաժշտական], որ կապված է բերքահավաքի հետ:

«Տաճարի նավակատիքի օրհնությունը» (Սաղմ. ԻԹ) - կապում են Տաճարի նավակատիքի տոնի հետ:

«Գեթացիների գործիքով» (Սաղմ. ԶԳ)³ - կարող է նշանակել փղշտացիներ-

¹ Հայերենում չկա այս տողը - խմբ.:

² Հայերենում չկա այդ գործիքի անվանումը, այդ բառը հանդիպում ենք Ա Մևագ. ԺԵ 20 համարում - խմբ.:

³ Հայերենում՝ հնձանների մասին: Հավանաբար գրաբարը հենց այս տարբերակն է ընտրել՝

րի գործիք (կամ երաժշտական եղանակ): Որոշ մեկնաբաններ «գրթիթ» բառը կապում են «գաթ»՝ խաղողի մամլիչի անվան հետ, որ խոսում է խաղողի բերքահավաքի և գինեգործության շրջանի մասին:

Մյուս ցուցումները ևս վերաբերում են երգողներին և նվագախմբին: Դրանք միշտ չէ, որ հասկանալի են, որովհետև անցյալի երաժշտական մշակույթը բավականաչափ ուսումնասիրված չէ:

Աստի, Կորխի որդիների, Եմանի և այլոց մակագրությունները կապվում են ղևտական սաղմոսերգուների հիմնագիրների հետ (հմմտ. Ա Մնաց. 2 33, 2 44): ԶԹ սաղմոսը գրված է Մովսեսի անունից, իսկ ՀԱ-ն Սողոմոնի: Մի շարք սաղմոսներ անհեղինակ են:

5. Սաղմոսարանի հիմնական բովանդակությունը: Սաղմոսներն առնչվում են Աստծու ժողովրդի հոգևոր կյանքի գրեթե բոլոր ոլորտներին: «Կարծում եմ, - գրում էր սուրբ Աթանաս Մեծը, - չափվել ու նկարագրվել են խոսքերով մարդկային ողջ կյանքը, նրա հոգևոր ողջ կացությունը, նրա մտադրությունների բոլոր տեղաշարժերը» (Послание к Марцеллину): Գրքում արտացոլված է աստվածաշնչական աստվածաբանության ամողջ բազմազանությունը: Այն արտացոլել է մարգարեների և քահանաների, Օրենքի վարդապետների և իմաստուն-դպիրների ուսմունքը: Սրանով է բացատրելի Բարսեղ Մեծի դիտարկումը, որ «Սաղմոսաց Գիրքը ընդգրկում է բոլոր Գրքերի մեջ պարունակող օգտակարը» (Беседы на Псалмы, Предисловие): Կյուրերը դիպուկ կերպով Սաղմոսարանը «Փոքր Աստվածաշունչ» էր անվանում, քանի որ սաղմոսներում մենք լսում ենք՝

հալածվող արդարների հառաչանքները (էվյոնիմ, անավիմ),
 Աստծուն ապավինած ժողովրդի փառաբանական օրհներգերը,
 բնության և պատմության մեջ Աստծու մեծ գործերի մասին,
 մտորումներ բարու և չարի, մեղքի և հատուցման, գայթակղության և դրա նկատմամբ հաղթանակի մասին,
 փառաբանություն Աստծու Թագավորության մասին, որի գահին բազմել է «Դավթի որդին»՝ Քրիստոսի նախակերպարը:

Երկու Կտակարանների կենդանի հաջորդական կապի շնորհիվ, Սաղմոսարանն արձագանք գտավ նաև քրիստոնյայի հոգևոր փորձառության մեջ: Իսրայելի արդարների ճակատագրերը և նրանց՝ Աստծու առաջ կանգնելը փոխում է նաև հավատարիմների ճակատագրերը նորկտակարանյան Եկեղեցում, որոնք իրենց կյանքի ուղին անցնում են տառապանքների ու փորձությունների միջով՝ հաստատուն մնալով Աստծու հանդեպ ունեցած հավատով:

Քրիստոնյա ընթերցողին կարող են շփոթեցնել որոշ սաղմոսներում հանդիպող կտրուկ արտահայտությունները, որ վերաբերում են անօրեն-

կապված խաղողաբաղի և գինու հետ - խմբ.:

ներին, մեղավորներին, թշնամիներին (օր.՝ «Դու, Աստված, պիտի սպանես մեղավորներին» Սաղմ. 61Ը 19): Սակայն պետք է հիշել, որ Սաղմոսարանը կապված է Հայտնություն նախաավետարանական փուլի հետ: Հին Կտակարանի ժամանակաշրջանից անարդարացի է պահանջել ներման նորկտակարանյան ընկալումը: Բացի այդ, ցանկացած դարաշրջանում բռնությունն ու անմարդկային դաժանությունը, բռնակալությունը, զանգվածային սպանությունները բուռն բողոք էին առաջ բերում: Սաղմոսերգուների համար չարագործ մարդիկ Աստծու թշնամիներ էին: Եվ նրանց համար երկնային պատիժ աղերսելով՝ սաղմոսների հեղինակները յուրովի արտահայտում էին իրենց հավատը բարոյական աշխարհակարգի նկատմամբ, որ սահմանված է ի վերուստ:

Հարցեր կրկնության համար

1. Ինչպիսի՞ն է Սաղմոսարանի ընդհանուր նշանակությունը Եկեղեցական ավանդույթում:
2. Ի՞նչպես է Սաղմոսարանը կոչվում հրեական և հունական Սուրբ Գրքում:
3. Ի՞նչ են նշանակում այս անվանումները:
4. Քանի՞ սաղմոս կա Սաղմոսարանում:
5. Համընկնում է արդյո՞ք հրեական Ս. Գրքի սաղմոսների համարակալումը Յոթանասնիցի և Վուլգատայի համարակալման հետ:
6. Քանի մասի է բաժանվում Սաղմոսարանը:
7. Եղե՞լ են արդյոք սաղմոսներ մինչ Դավիթը:
8. Ինչո՞ւ են սաղմոսները կոչվում «Դավթի»:
9. Ո՞ր դարաշրջանում է գրվել սաղմոսների մեծամասնությունը:
10. Գրական ի՞նչ առանձնահատկություններ ունեն սաղմոսները:
11. Ի՞նչ երաժշտական գործիքներ կային հինկտակարանյան շրջանում:
12. Երաժշտական նվագակցությունն ի՞նչպես է արտացոլվել սաղմոսներում:
13. Ի՞նչպես էին երգվում սաղմոսները:
14. Ո՞րն է սաղմոսների հիմնական բովանդակությունը:
15. Հինկտակարանյան աստվածաբանության ի՞նչ ավանդույթներ են արտացոլվել սաղմոսներում:
16. Ինչո՞ւ են սաղմոսներում թշնամիների հասցեին անեծքներ հնչում:

§ 13-ի Հավելված

Քանանյան կրոնական պոեզիայի նմուշ

(Բ. ծ. ա. ԺԴ դար)

*Երբ հնչում է սրբական ձայնն Բահադի,
երբ տարածվում է ամպրոպը Բահադի,*

*դողում է երկիրը, սասանվում են լեռները,
երերում են բլուրներն ու ժայռերը:*

*Նրա թշնամիները թաքնվում են լեռների ետևում
կամ մութ անտառներում:*

*Արևելքից արևմուտք նրանք խուճապահար
փախչում են իր հայացքից:*

*Ասացե՛ք, Բահադի թշնամիներ, այժմ ինչո՞ւ եք այդպես սարսափելի.
որովհետև աչքերը նրա սրատես են,
և ձեռքերը՝ պորեղ:*

Անգլ. թարգմանությունը՝ Տ. Գաստերի

§ 14. Սաղմոսների տեսակները

Յուրաքանչյուր սաղմոս հինկտակարանյան պատմության այս կամ այն իրադարձության հետ կապելու փորձերը ոչ միշտ էին հաջողվում: Այս իսկ պատճառով մեկնաբանները նախընտրում են ըստ խմբերի դիտարկել սաղմոսները, որ իրար հետ կապված են պարունակած նյութի յուրահատկությամբ և տեսակով: Ռուս իրականության մեջ այս եղանակի հիմքը դրել է Պ. Ա. Յունգերովը, իսկ Արևմուտքում՝ գերմանացի աստվածաբան Գ. Գունկելը:

1. Աստված աշխարհաստեղծման և պատմության մեջ: Այս նյութն են պարունակում Ը, ԿԳ, ԶԸ, ՃԳ, ՃԼԸ, ՃԽԸ և սրանց հարազատ սաղմոսները: Սրանք ազդարարում են, որ Աստված միակն է իր բնությանմբ, որ բովանդակում է է-ն՝ լինելիությունը: Աշխարհն ստեղծել է Նա, և ամեն բան Նրանից է: Նրա կամքով է մարդը դրվել որպես արարչության պսակ: Պատմության իրադարձություններում երևան է գալիս աստվածային Կամքը: Տիեզերքը և մարդը ակնածալի փառաբանություն են մատուցում Արարչին: Իբրև օրինակ դիտարկենք ԿԳ սաղմոսը:

1-5 համարներ. Տաճարում օրհնաբանություն են մատուցում Աստծուն: Աստված Իրեն է մոտեցրել նրանց, ում սիրտը մաքրվել է Նրա փրկարար գործությամբ:

6-9 համարներ. համայն աշխարհով մեկ Աստված իրագործում է Իր արդարությունը: Աշխարհում չկա այնպիսի տեղ, ուր չերևար Նրա ուժը: Նա սանձում է շարիքը շարի տարերքների («ցածրացնում ալիքների ձայնը») և հանդարտեցնում «խռովությունը հեթանոսների», որոնք ապստամբել են Նրա Կամքի դեմ:

10-14 համարներ. ամեն բան՝ ինչ կենդանություն է տալիս երկրին՝ ցողը, պարարտացնող ջուրը՝ Արարիչն է շնորհում: Սրանով է ի հայտ գալիս Նրա 27 -Ա. ՄԵՆ, ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

շարունակական արարումը, որովհետև Նա խնամում է այն ամենն ինչ ստեղծել է ինքը:

2. Սրբազան պատմության դասերը: Սաղմոսերգուները հաճախ են անդրադառնում հինկտակարանյան Եկեղեցու անցյալին: Այստեղ նրանք գտնում են Փրկիչ Աստծու խրատական գործերը: Ժողովրդի մեղքերին ու թուլություններին հակադրվում է Եահվեի անփոփոխ հավատարմությունն իր խոսքին:

ԽԳ սաղմոս. Եահվեն ստեղծեց հինկտակարանյան Եկեղեցին, սակայն ինքն իսկ պահանջում է նրանից իր արդարության օրենքով:

Կէ սաղմոսն սկսվում է այն գոչմամբ, որով ուղեկցվում էր Տապանակն անապատում (հմմտ. Թվեր Ժ 35): Սուրբ երկրում Տիրոջ հայտնվելը և՛ դատաստան էր, և՛ ներում: Նա գթասրտության Աստված է.

«...որ հայրն է որբերի ու դատավորն այրիների ...
սպասում էս գերյալներին,
իսկ անհնապանդները կմնան կիպիչ անապատում»:
(6-7)

Հէ սաղմոսերգուն հիշում է Իսրայելի փոքրագությունն ու անհավատարմությունն անապատում: Սակայն մարդկային մեղքն անկարող է փոխել Աստծու մտահղացումը: Աստված մերժեց անհնազանդներին, մերժեց նաև Եփրեմի թագավորությունը, հանուն Մնացորդի պահելով Դավթի տունը:

Ձ սաղմոսում Արարչին հավատարիմ մնալու կոչն է: Ժողովրդի դժբախտությունը հավատքի թուլության և ուրացության արդյունք է.

«Եթե իմ ժողովուրդը լսեր ինձ,
կամ Իսրայելն ընթանար իմ ճանապարհով»:
(14)

ՂԴ անարժանները չեն մտնի Ավետյաց երկիր: Յ-րդ համարում հանդիպող՝ աստվածները (եբր. օփօօօ - ԷԼՈՅԻՄ) պետք է հասկանալ հրեշտակներին¹:

ՂԹ Աստված իր Եկեղեցու Ստեղծողն է: Ընտրյալներին փրկելով՝ իր սեփականությունն է դարձնում.

«Իմացե՛ք, որ Նա է Տեր Աստվածը մեր.
նա ստեղծեց մեզ, և ոչ թե մենք եղանք.
նրա ժողովուրդն ենք մենք ու ոչխարները նրա արոտի»:
(3, հմմտ. Յովի. Ժ 1-16)

¹ Հայերենում այլ է. եբրայերենը *Էլոհիմ* բառը օգտագործում է նաև այլ իմաստներով՝ դատավորներ, հրեշտակներ:

ՃԶ Աստված իշխում է բնության տարերքների և պատմության իրադարձությունների վրա, որն Իր գործերի շնորհիվ սրբագործվում է:

ՃԼԱ ստրկությունից ազատվելու օրհներգ: Հավատքն սկսվում է ազատութից, որն Աստված է պարգևում (հմմտ. Յովհ. Ը 32 «Եվ կճանաչեք ճշմարտությունը, և ճշմարտությունը ձեզ կազատի»):

ՃԼԴ ընտրյալ լինելու խորհուրդն է բացահայտում: Սա աստվածային ազատ սիրո պարգևն է, որին մարդը պիտի պատասխանի նվիրվածությամբ և հավատարմությամբ: Աստված միակ Արարիչն է, իսկ բոլոր աստվածները «ձեռքի գործն են մարդկանց որդիների» (15):

ՃԼԵ Աստծու գթության մասին է՝ արարումից մինչև հրաշքներ, որ արվեցին Մովսեսի միջոցով: Այս սաղմոսը երգվում է Գիշերային հսկումի արարողության ժամանակ¹:

Այս շարքին են հարում ՄԹ, ՀԳ, ՀԸ, ՀԹ, ՃԷ սաղմոսները: Ողբի Գրքին հարազատ լինելով սաղմոսները ողբում են Իսրայելի և Հուդայի ճակատագիրը, որ իրենց մեղքերի պատճառով հայտնվեցին թշնամիների ձեռքում: ՀԸ սաղմոսը, հավանաբար, արտացոլում է Սամարիայի անկման՝ 722 թվականի դեպքերը:

Սաղմոսների մեկ այլ խմբում խոսվում է Գերության մեջ ապաշխարելու և Աստծու ժողովրդի ազատագրման մասին (ՅԶ, ՁԴ, ՂԵ, ՃԱ, ՃԺԵ, ՃԻԵ, ՃԻԸ, ՃԼԶ, ՃԴԵ):

3. Աստված միակ Թագավորը: Հասարակության մասին աստվածաշնչական ուսմունքի հիմքը հավատի խոստովանությունն է առ Աստված, որպես միակ ճշմարիտ Թագավորի: Մարդը պատկանում է Արարչին: Մարդկային կյանքում չկա այնպիսի բնագավառ, որ ենթակա չլինի Աստծու իշխանությանը: Պատմության մեջ է նրա Թագավորությունը հաստատվում: Եվ ամբողջությամբ այն կկատարվի միայն ժամանակների վախճանին: Ժամանակակից աստվածաշնչագետ Սիգմունդ Մովինկելի² կարծիքով Աստծու Թագավորության մասին սաղմոսների մեծ մասը Տաճարում երգվել է նոր տարվա օրը³, երբ խորհրդանշական հանդիսավորությամբ Եահվեն «գահ էր բարձրանում» իբրև ժողովրդի և աշխարհի Թագավոր:

ԻԸ սաղմոսը փառաբանում է Եահվեի տիեզերական իշխանությունը: «Աստծու որդիները» այստեղ հրեշտակներն են:

ԿԶ սաղմոսն Եահվեի մասին է, որպես Տիրակալը երկրի բոլոր ազգերի:

¹ Ռուս.՝ Полиелей – (հուն.՝ Πολυέλεος – բազումողորմ) Յանդիսավոր սաղմոսերգությունը առ ԵԼԴ–ԵԼԵ սաղմոսների տողերի: Երգվում են կիրակի և հանդիսավոր տոների Առավոտյան ժամերգության ժամանակ – խմբ.:

² Նորվեգիացի բողոքական մեկնիչ (1884–1965):

³ Յրեական տոմարով:

ՂԵ սաղմոսն սագդարարում է ճշմարիտ Աստծու համաշխարհային պաշտամունքը, Ով իշխում է երկրի վրա: Իր ոգով սաղմոսը մերձ է Եսայի 40-56 գլուխներին:

Նույն՝ ընդհանրական և հավիտենական Թագավորության գաղափարին են նվիրված ՂԷ, ՂԸ, ՃԺԲ, ՃԺԴ սաղմոսները:

4. Սիոն և Տաճար: Ճշմարիտ աստվածպաշտություն: Երուսաղեմի անձեռնմխելիությունն ընկալվում էր իբրև աստվածային անդրդվելի խոստման խորհրդանիշ: Սակայն Սիոնի և Տաճարի հանդեպ բարեհաճ վերաբերմունքը հնարավոր է լուրջ ևս ժամանակ, երբ մարդիկ պահում են Տիրոջ Ուխտը:

Թ - Աստծու արդար դատաստանը:

ԽԵ - Սիոնը վեմն է հավատարիմների և խորհրդանիշը խոստման:

ԽԷ - Աստված կփրկի հավատարիմներին իրենց թշնամիներից: Այս, ինչպես և ԽԵ սաղմոսը, Սենեքերիմի շրջանին են վերաբերում (տե՛ս հատ. 1, § 4):

ՀԵ - Հավատքի հիմքն ավերելու թշնամիների փորձերն ապարդյուն են:

ՁԶ - Գալիք Երուսաղեմ՝ հավատարիմների Համայնք:

ՁԳ, ՃԺԹ-ՃԻԴ, ՃԻԹ, ՃԼ, ՃԼԲ, ՃԼԳ սաղմոսներում ուխտագնացների երգերն են: Դրանցից մի քանիսի տողերի քանակը համընկնում է Տաճարի աստիճանների թվին, որոնցով բարձրանում էին ուխտավորները:

ԽԹ, ՀԴ, ՁԱ, ՃԲ սաղմոսներն աղերսվում են Լ-Ձ դարերի մարգարեից (Ամովս, Օսեե, Եսայի, Միքիա) քարոզներին: Դրանք սովորեցնում են, որ Աստծու իրական պաշտամունքը չի կարող սահմանափակվել զոհաբերությանը և ծեսով, որովհետև հիմքը հավատարմությունն է Արարչին և Նրա Ուխտին:

Լսիր, իմ ժողովուրդ, ու ես քեզ կասեմ,

և Իսրայել՝ քեզ կվկայեմ,

որ Աստվածը, թո՛ւ Աստվածը ես եմ:

Ըո՛ւ կոհաբերությունների համար չէ, որ կշտամբում եմ քեզ,

քանզի ողջակեպներդ միշտ առջևս եմ:

Ըո՛ւ տնից հորթեր չեմ ընդունում,

ոչ էլ թո՛ հոտից՝ նոխապներ:

Իմն են անտառի բոլոր գալպանները,

լեռների երեսները եւ բոլոր անասունները...

Ես չեմ ուտում թո՛ հորթերի միսը,

և թո՛ նոխապների արյունը չեմ խմում:

Աստծուն օրհնության պատարագ մատուցիր

և Բարձրյալի առջև ուխտդ կատարիր:

Ըո՛ւ նեղության օրը կանչիր ինձ,

եւ կփրկեմ քեզ, ու դու կփառաբանես ինձ:

(ԽԹ 7-10, 13-15)

5. Տառապյալ մարդը ձգտում է առ Փրկիչ-Աստծուն: *Շատ սաղմոսներ աղոթք-ողբասացություն են, գրված տառապող մարդու անունից (Աստծու աղբատներ): Մեկնիչները չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ, թե այս սաղմոսներում խոսքը երբ է անհատի, և երբ է ժողովրդի մասին: Սակայն սաղմոսի եկեղեցական ընթերցման ժամանակ ենթադրելի են երկու տարբերակները: Մի կողմից այդ սաղմոսներում արտահայտվում են հավատացյալի անհատական ապրումները՝ նրա ցավը, նրա տրտմությունը, սակայն միևնույն ժամանակ սա նաև ձայնն է Եկեղեցու, որ պատմության ընթացքում անցնում է ալեկոծությունների և գայթակղությունների միջով: Սաղմոսարանի այս մասը բոլոր դարերում առավել մեծ արձագանք է գտել հավատացյալների շրջանում: Այստեղ բիբլիական հավատքը բացահայտվում է իբրև հավատ փրկության հանդեպ, հավատ առ Հովանավոր-Աստված: Սաղմոսերգուները հաճախ հուսահատության հասնող հոգեվիճակ են նկարագրում: Սակայն մշտապես, անգամ ամենածանր պայմաններում, հաղթանակում է Փրկչին ուղղված հույսը (Սաղմ. 9-2, 1, 6, 6Բ, 6Ե, 6Զ, 6Ը, 6Դ, 6Ե, 6Զ, 6Ը, 6Թ, 6Կ, 6Լ, 6ԼԹ, 6ԼԲ, 6Կ-6Ը, 4Գ, 4Ը-3, 2Բ, 2Ե, 2Ը, 7, 7Գ, 6ԼԹ-6ԼԲ):*

6. Գոհաբանական օրհներգեր: Փափագել Աստծուն: *Աստծուն վերառաքվող գոհաբանությունն աղոթքի գերագույն ձևերից է, որովհետև այս տեսակի աղոթքներն առավել ամբողջովին են արտահայտում սերն առ Աստված: Մարդը համակվում է գիտակցությամբ, որ ամենայն բարին ու լավն Արարչից են բխում: Դրա համար է Աստծուն հաճելի փառաբանությունը: Դրա մեջ աղոթողները իրենց սիրտը նվիրաբերում են Աստծուն (ԽԱ, ԿԱ, ԿԲ, 6ԺԴ, 6ԺԵ, 6ԽԵ, 6Ծ): Այս սաղմոսների նշանակալի առանձնահատկությունն անդադար Աստծուն փափագելն է, ինչն ավելի վեհ է, քան նրա պարգևներին ձգտելը:*

*«Ինչպես եղջերուն ջրի ակունքներին է փափագում,
այնպես էլ ես քեզ եմ փափագում, իմ Աստված.
հոգիս ծարավ է քեզ, Աստված հյոր և կենդանի.
Ե՞րբ պիտի գամ ու երևամ Աստծու առաջ»:*

(ԽԱ 2-3)

7. Բարին ու չարն Աստծու երեսի առջև: *Հավատը երբեք չի կարող նույնանալ բարոյականության հետ: Սակայն «քայլել Աստծու երեսի» առջև անիմաստ է առանց նրա կամքը կատարելու: Իսկ Աստծու կամքն է, որ չար, տկար, մեղավոր էակից մարդ ստեղծվի, այնպիսի մարդ, որպիսին նա ծրագրել էր արարման ժամանակ:*

Մի շարք սաղմոսներ այս նյութին են նվիրված: Դրանցում մատնանշվում են երկու ճանապարհներ, որոնցով կարող են գնալ մարդիկ՝ շնորհիվ

իրենց տրված ազատության՝ բարու ճանապարհը և չարի ճանապարհը: Ի վերջո դրանք Աստծուն մոտեցնող և Աստծուց հեռացնող, դեպի կյանք և դեպի մահ տանող ճանապարհներն են (Սաղմ. ԺԱ, ԺԳ, ԺԴ, Ի, ԻԵ, ԼԳ-ԼԵ, Ծ, ԾԱ, ՀԲ, ՂԱ, Ծ, ԾԸ, ԾԺԱ, ԾԻԶ, ԾԻԷ):

Եվ քանի որ անգամ նա, որ Աստծու ճանապարհն է ընտրել, բարու ճանապարհը, կարող է սայթաքել և ընկնել, հավատը ցույց է տալիս ապաշխարելով փրկվելու եղանակը: Մարդուն հնարավորություն է ընձեռված առ Աստված վերադառնալու՝ ի սրտե ապաշխարելով՝ մեր աղոթքը Նրա առջև դնելով և ամբողջ էությանմբ տրվելով Նրա պատվիրաններին:

8. Սաղմոսներ Օրենքի և Իմաստության մասին: Բարու և չարի մասին աղոթքներին սերտորեն աղերսվում են Աստծու Օրենքին և Իմաստությանը նվիրված սաղմոսները: Իմաստության մասին սաղմոսները (օր.՝ ԽԸ) դուրս են եկել իսրայելյան իմաստունների շրջանակից, որ իրենց ուսմունքն ստեղծել են ոչ թե Մովսիսական Օրենքի տառին համապատասխան, այլ հիմնվելով բարոյականության ընդհանուր սկզբունքների վրա (Գիրք Առակաց, Հոբի Գիրք): Դրանց հիմնական միտքն այն է, որ իրական Իմաստության աղբյուրը Տերն է: Եվ մարդը պարտավոր է ամենօրյա կյանքում իրագործել այդ Իմաստությունը: Այն մտավոր ճանաչողությունն է, այլ կյանքի ճշմարտության ճանաչողությունն է: Ամեն անցողիկ բան, որ գրավում է ունայն մարդկանց, ոչինչ է հավատի կյանքի համեմատ:

Օրենուսույց սաղմոսերգուները (Սաղմ. Ա, ԺԸ, ԾԺԸ), ի հավելումն այս մտքի, ընդգծում են, որ կատարյալ կյանքն ուրվագծված է Օրենքում, Թորա-յում: Այստեղ է ուղեցույցը կյանքի, և մարդը պետք է մշտապես մտորի Օրենքի մասին, թափանցելով դրա խորքերը, որովհետև այստեղ կգտնի Անձամբ Աստծու տված ցուցումները: Օրենքը բացահայտում է այն, ինչին մարդն իր բանականությամբ անկարող է հասնել: Իրական բարոյականությունն ու կյանքը բխում են Բարձրյալի կամքից:

9. Թագավորական, Մեսիական սաղմոսներ: Սաղմոսարանում բավականին հատվածներ կան, ուր կանխատեսվում են ավետարանական պատմության այս կամ այն դրվագը (օր.՝ «մանկահասակ ու ծծկեր երեխաների բերանից թող օրհնություն էլի»): Սաղմ. 8, հմմտ. Մատթ. ԻԱ 16): Սակայն Հին Կտակարանի քրիստոնեական ընկալման համար կարևոր են ոչ թե այս առանձին հատվածները, այլ Սաղմոսարանում առկա մեսիականությունը ամբողջությամբ վերցրած:

Մեսիականությունը իբրև մարգարեություն և ուսմունք այն մասին, թե Աստված կփրկի Իր մարդկանց Դավթի սերնդի միջոցով, և որ այդ փրկությունը կտարածվի ողջ աշխարհի վրա, հինկտակարանյան Եկեղեցուն չի տրվել

միանգամից և ավարտուն տեսքով: Այս խորհուրդը բացահայտվել է աստիճանաբար՝ ժողովրդի հոգևոր գիտակցության խորացմանը զուգընթաց:

«Դավթի որդի», «Թագավորություն», «Տիրոջ Օր» և «Փրկություն» հասկացություններն երկար պատմություն ունեն հինկտակարանյան կրոնում: Կարելի է հինգ փուլ առանձնացնել, որոնցով անցել է մեսիականության Հայտնությունը:

ա. Աբրահամին տրված խորհրդավոր կանխասացությունը, որ «քեզանով պիտի օրհնվեն աշխարհի բոլոր ժողովուրդները»: Այս հույսը որոշակի դարձավ Ավետյաց երկրի սպասումներում:

բ. Սուրբ երկրում հինկտակարանյան թագավորության ստեղծում, որ ինքնին հետագա խոստումների նախաբանը եղավ:

գ. Դավթին տրված կանխասացություն, որ իր միապետությանը փոխարինելու է իր Սերնդի հավիտենական Թագավորությունը: Ը դարի մարգարեների մոտ Նրա կերպարը որոշակի գծեր է ձեռք բերում. Նա հզոր Հաղթողն է հեթանոսների, Որի ուժն Աստծու Հոգու շնորհների մեջ է:

դ. Մարգարեների քարոզն Օծյալի մասին (Մեսիայի, Քրիստոսի), Որ գալու է այն ժամանակ, երբ Դավթի տունը զրկվի երկրային իշխանությունից: Այդ ժամանակը կլինի նաև Աստվածահայտնության ժամանակը: Եսայի մարգարեից սկսած Մեսիայի Թագավորությունն արդեն ընկալվում է որպես համաշխարհային:

ե. Հայտնություն Մեսիայի մասին իբրև Ծառայի: Նա միայն Թագավոր չէ, այլ նաև Քահանա: Նա պիտի անցնի տառապանքների միջով իբրև Եահվեի խոնարհ Ծառա (Եսայի ԾԳ): Նրա իշխանությունը աշխարհին կվերադարձնի Եդեմը, և Աստծու վերջնական թագավորումը:

Մեսիականության այս բոլոր կողմերն ու փուլերն արտացոլվել են Սաղմոսարանում:

Առաջին և երկրորդ փուլերը դրոշմվել են սրբազան պատմության դասերին առնչվող սաղմոսներում (տե՛ս հտ. 2, § 14, կետ 2):

Երրորդը համապատասխանում է թագավորական կոչվող սաղմոսների խմբին: Դրանք երգվել են, ինչպես ցույց է տվել Ս. Մովսիսկելը, թագավորի գահակալության կամ թագավորական հանդիսությունների ժամանակ: Այս սաղմոսները (Բ, ԽԴ, ՅԱ, ԵԹ և այլն) երկակի իմաստ ունեն: Դիողորոս Տարսոնացին¹ սաղմոսների այս առանձնահատկությունը «Ֆեորիա» (խոկում, թեորիա) է կոչում: Մի կողմից դրանք փառաբանում են ընդհանրապես Դավթի տնից այս կամ այն օծյալին, իսկ մյուս կողմից, ի վերջո, ճշմարիտ Օծյալին՝ Մեսիային:

¹ Դ դարի աստվածաբան:

Օրինակ ԽԴ սաղմոսի պատմական հիմքը թագավորի ամուսնուծյունն է: Նրա կերպարը հիշեցնում է Դավթի և Սողոմոնի փառքը: Բայց արդեն հինկտակարանյան թարգմաններում (արամեերեն մեկնություններում-թարգմանություններում) միապետի փառաբանությունն ընկալվում էր մեսիական տեսանկյունից: Դավթի որդին մարմնավորում էր գալիք թագավորին, որին փառաբանելու են ժողովուրդները հավիտյանս հավիտենից (ԽԴ 18):

Նույնը պետք է ասել նաև ՀԱ սաղմոսի մասին, ուր թագավորի կերպարի ետևում առավել պարզորոշ են նկատվում խոստացված Մեսիայի գծերը: Նրա հովանու ներքո «ծաղկում է արգարը»¹, նա ժողովուրդների Տիրակալը կլինի, և աշխարհի բոլոր թագավորները կխոնարհվեն Նրա առաջ (հմր. 11): Նա «հյորի ձեռքից փրկեց աղքատին, աղքատին ու տնանկիյ, որունք օգնական չունեն» (հմր. 12): Այս սաղմոսը կարելի է դասել մեսիականության շորորդ փուլին.

*Տիրոջ անունը կօրհնվի հավիտյան,
քանպի արևից հին է նրա անունը:
ԱՇԽԱՐՀԻ ԲՈՒՆՈՐ ԱՉԳԵՐԸ ԿՕՐՀՆԵՆ ՆՐԱՆ,
ԵՎ ԲՈՒՆՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԵՐԱՆԻ ԿՏԱՆ ՆՐԱՆ:*
(ՀԱ 17)

Դավթի թագավորության հավիտենականությանի մասին է ՃԼԱ սաղմոսը:

Հինգերորդ փուլ – Աստծու Օծյալը պիտի անցնի տառապանքների միջով. այս մասին խոսվում է շատ սաղմոսներում, սկսած ԺԷ-ից, որ հենց Դավթին է պատկանում: Նրանում թագավորը ներկայացված է թշնամիներով շրջապատված, որ ճնշում են նրան, և միայն Աստված է նրան փրկություն պարգևում: Առանձնակի ուժգնությամբ է այս գաղափարը հնչում ԻԱ սաղմոսում: Այն սկսվում է հալածվող արգարի ողբաձայն հառաչով. «Աստված իմ, Աստված, ինչու լքեցիր ինձ»: Այս սաղմոսի բառերով է խաչի վրա աղոթել Տերը: Աղոթքի վերջում խոսվում է Տառապյալի հաղթանակի մասին, երբ

*Աշխարհի բոլոր ծայրերից մարդիկ կվերհիշեն
ու կդառնան Տիրոջը:
Բոլոր սպասողները կերկրպագեն նրան,
քանպի Տիրոջն է արքայությունը,
և նա է տիրում բոլոր հեթանոսների վրա:*

(ԻԱ 28-29)

ՁԸ սաղմոսը նվիրված է Ուխտի պայմանին: Նրա մեջ մտնելու իրավունք կունենան միայն նրանք, ովքեր «կպահեն իմ պատվիրանները» (31-32): Սակայն ինչքան էլ խորը ընկնեն մարդիկ, Աստծու կամքը կկատարվի:

¹ Հայերենում Նրա օրոք արդարություն ու մեծ խաղաղություն թող տիրի – խմբ.:

Դավթի տան թշնամիներին կտրվի հաղթելու ուժ և իշխանություն (հմմտ. Հայտն. ԺԳ 7): Սաղմոսերգու թագավորի սերունդը կզգա ստորացման ողջ դառնությունը:

«Անարգեցիտ նրա սրբությունը,
և նրա գառը գետին տապալեցի»:

(ՁԸ 45)

Այստեղ երևում է տառապող Մեսիայի մասին ապագա Հայտնությունը: Սակայն մեսիական Թագավորությունը չի կարող կործանվել, որովհետև Նրա զորությունը ոչ թե «ձիերով ու մարտակառքերով» է պայմանավորված, այլ՝ Աստուծով:

Բ սաղմոսում նկարագրվում է ժողովուրդների խռովությունն ընդդեմ Օձյալի: Սակայն նրանց ջանքերն ապարդյուն են, որովհետև Աստված Ինքն ասաց. «Դու իմ որդին ես, ես այսօր ծնեցի քեզ» (հմր. 7): Աստուծու որդի լինելու հանգամանքը Հին Կտակարանում ընկալվում էր հոգևոր իմաստով, և ոչ թե առասպելաբանական, ինչպես հասկացել էին հեթանոս ժողովուրդները, որոնց թագավորները համարվում էին աստվածներից ծնված: Իբրև Որդի, Մեսիան դառնում է էակից (որովհետև Աստվածաշնչում «որդի» նշանակում է մասնակցություն ինչ-որ բանի. հմմտ. «մարգարեական որդի», «օրհնություն որդի», «բարկություն որդի»): Սակայն Աստվածամարդու խորհուրդն ամբողջությամբ բացահայտվում է միայն Նոր Կտակարանում, ուր «Աստուծու Որդի» արտահայտությունը Հոր և Որդու իրական միություն է նշանակում:

Մեսիան, Աստուծու Որդին, պատկերված է իբրև Քար, որ շինարարները անարգեցին և որը «դարձավ անկյունաքար» (ՃԺԷ 22): Ինքը Քրիստոս Փրկիչը մատնանշեց այս սաղմոսը, որպեսզի բացատրի Իր երկրային նվաստացման խորհուրդը (Մատթ. ԻԱ 42): Նա հիմնվում էր նաև ձԹ սաղմոսի վրա, սաղմոս, որը կարևորագույնն է մեսիականներից:

ՁԹ սաղմոսը գրված է Դավթի անունից: Այնտեղ հեղինակը Մեսիային անվանում է ԱՒՈՆԻ՝ եբր. אונן - իմ Տիրակալ: Քրիստոս, բերելով այս բառերը, հասկացնում էր, թե Մեսիան որքան է գերազանցում երկրային թագավորին՝ անգամ Դավթին: Սաղմոսերգու թագավորից սերելը չէ միայն Մեսիայի արտաքին նշանը, այլ նաև Նրանով Գրքի կարևորագույն մարգարեությունների կատարումը:

Եվ չնայած Օձյալի կերպարը սաղմոսում տակավին մեսիական առաջին փուլերի դրոշմն է կրում, օրհնեբզությունն այն լրացնում է մի նոր, կարևոր հատկանիշով: Ազատարարը ոչ միայն Տիրակալ և Թագավոր է, այլ նաև Բարեխոս մարդկանց համար՝ Քահանա: Նա ամփոփում է Իր մեջ և՛ թագավորական, և՛ քահանայապետական իշխանությունը, ինչպես Երուսաղեմի հնամենի տիրակալ Մելքիսեդեկը (հմր. 4):

Ինչպես Հին Կտակարանի բոլոր մարգարեությունները, սաղմոսների մեսիական վախճանաբանությունը անդրադառնում է ապագայի երկու խորհրդավոր իրադարձության, Աստուծու Թագավորության երկու կողմին՝ Օծյալի գալուստը և է-ի հայտնությունն աշխարհին: Այս երկու խորհուրդները դարձան միասնական՝ Մարդեղության շնորհիվ, ի Դեմս Մարդու Որդու, որ հայտնվեց իբրև Աստուծու Որդի և առհավետ մնաց երկրի վրա Իր հավատարիմների հետ (Մատթ. ԻԸ 20):

Հարցեր կրկնության համար

1. Սաղմոսարանն ի՞նչպես է բացահայտում աշխարհաստեղծման և պատմության մեջ Աստուծու մասին ուսմունքը: Բերե՛ք օրինակներ:
2. Սաղմոսերգուներն ի՞նչպես են օգտագործում սրբազան պատմության դասերը: Բերե՛ք օրինակներ:
3. Սաղմոսներում ի՞նչ է ասվում Աստուծու Թագավորության մասին: Բերե՛ք օրինակներ:
4. Սաղմոսարանում ինչպե՞ս են արտացոլված Տաճարի և ճշմարիտ պաշտամունքի մասին գաղափարները: Բերե՛ք օրինակներ:
5. Ի՞նչով են իրար մերձ սաղմոսերգուներն ու մարգարեները, երբ խոսում են Աստուծուն ծառայելու մասին: Բերե՛ք օրինակներ:
6. Սաղմոսարանում ի՞նչպես են արտահայտված տառապող արդարի զգացմունքները: Բերե՛ք օրինակներ:
7. Ի՞նչ է ասվում գոհաբանական օրհներգություններում: Բերե՛ք օրինակներ:
8. Սաղմոսարանում ի՞նչպես են լուսաբանված բարու և չարի գաղափարները: Բերե՛ք օրինակներ:
9. Ո՞ր սաղմոսներն են նվիրված Իմաստությանն ու Օրենքին:
10. Մեսիական Հայտնության մեջ ի՞նչ հինգ փուլ կարելի է առանձնացնել:
11. Թագավորական սաղմոսների երկակի իմաստը ո՞րն է:
12. Ի՞նչ են հուշում սաղմոսները Մեսիայի Թագավորության ընդհանրականության և հավիտենականության մասին:
13. Ի՞նչ է ասվում սաղմոսներում Օծյալի նվաստացման մասին:
14. Ո՞ր սաղմոսում է Մեսիան Աստուծու Որդի կոչվում:
15. Ո՞ր սաղմոսում է հիշատակվում Նրա քահանայապետական սպասավորությունը:
16. Մեսիական վախճանաբանության ո՞ր երկու հանգամանքներն իրականացան ի դեմս Հիսուս Արիստոսի:

ՄԱՍՆ Ք

ԳԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՃԱՐԻ ՇՐՋԱՆԻ ՍՐԲԱԶԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ (Չ-Ե դդ. Բ. Ծ. ա.)

§ 15. Երկրորդ Եսայի՝ «հինկտակարանյան ավետարանիչ» (Չ դար Բ. Ծ. ա.)

Եսայի մարգարեի գրքի երկրորդ մասում հինկտակարանյան կարևորագույն մարգարեություններ կան Քրիստոսի մասին: Դրանցից մեկին հղում է Ինքը՝ Հիսուս Քրիստոս, ասելով, որ ի դեմս Իրեն այն «կատարվել է» (Ղուկ. Դ 16-21): Եկեղեցու առաջին քարոզիչները Եսայու մարգարեությունների միջոցով բացատրում էին տառապող Մեսիայի խորհուրդը (Գործք Ը 32-35): Կուրբեղ Ալեքսանդրացու խոսքերով, դրանք «ավետարանական քարոզի պարզությունն ունեն» (Толк. на Исаяю. Предисловие), իսկ Հերոնիմոս Երանելին (Послание к Павлину) դրանք հինկտակարանյան ավետարան է կոչում:

1. Եսայու մարգարեության երկրորդ մասի (զլ. Խ-ԿԶ) հեղինակի և գրության ժամանակի հարցն առաջին անգամ բարձրացվել է Միջին դարերում: Մինչ այդ հրեական ավանդությունն այն վերագրում էր Ը դարի երուսաղեմացի մեծ մարգարեին (տես Սիր. ԽԸ 27-28): Այս կարծիքին էին հետևում նաև բոլոր քրիստոնյա մեկնիչները: Սակայն մ. թ. ԺԲ դարից արդեն սկսեցին ուշադրություն դարձնել որոշ հատվածների, որոնք վերաբերում էին այլ դարաշրջանի և այլ սրբազան հեղինակի:

ա) Եսային քարոզել է Գերությունից երկու դար առաջ, մինչդեռ գրքի երկրորդ մասն ուղղված է Բաբելոնում ապրող փախստականներին (ԽԳ 14, ԽԸ 20): Շարադրանքից երևում է, որ գրվելու պահին Երուսաղեմն ավերակների մեջ էր, և Աստված խոստացել է վերկանգնել այն (ԽԴ 26):

բ) Եսայի մարգարեն գործուն կերպով մասնակցում էր ժամանակի քաղաքական կյանքին, մերձ էր արքունիքին, մերկացնում էր իշխանությունը ունեորենների: Երկրորդ մասում չկան ո՛չ այս մերկացումները, ո՛չ էլ հիշա-

տակումներ Հուդայի թագավորների մասին: Ոչինչ ասված չէ Ասորեստանի՝ գլխավոր թշնամու մասին, խոսքը միայն Բաբելոնի մասին է:

գ) Պատմական միակ դեմքը, որ նշվում է գրքի երկրորդ մասում, Աքեմենյան Կյուրոս Բ-ն է (558-530), որ գրավեց Բաբելոնը և հայրենիք վերադառնալու հնարավորություն ընձեռեց հրեաներին (ԽԴ 28, ԽԵ 1):

դ) Երկրորդ մասի լեզուն տարբերվում է Եսայի մարգարեի գրվածքներից:

Այս ամենը աստվածաշնչագետներին բերեց այն եզրակացության, որ գրքի երկրորդ մասը (ԽԵ-ԽԶ) գրել է ոչ թե Եսայի Երուսաղեմացին, այլ նրա հետևորդներից մեկը, որ ապրել է Գերուսթյան շրջանում: ԺԸ դարից նրան սկսեցին Երկրորդ Եսայի անվանել: Եվ քանի որ ԾԶ-ԿԶ գլուխներում ուղղակի ակնարկներ կան գերիների վերադարձի մասին, ուստի ենթադրվեց, որ Երկրորդ Եսային նրանց հետ Երուսաղեմ է վերադարձել (588 թ.):

Ինչո՞ւ Երկրորդ Եսայու՞ աստվածաշունչ մարգարեություններն ընդգրկվեցին Երուսաղեմացի մարգարեի գրքում: Աստվածաշնչագետների մի մասը կարծում է, թե նա ևս Եսայի անունն է կրել, և բնագրերն ի մի հավաքողները նրան նույնացրել են Ը դարի մարգարեի հետ: Այլոց կարծիքով մարգարեն նախընտրել է անհայտ մնալ, քանի որ իր քարոզները, որ ուղղված էին Բաբելոնի դեմ, կարող էին վտանգավոր հետևանքների հանգեցնել: Սակայն ամեն դեպքում երկու մարգարեներն էլ հոգու միություն և ոճի հարազատություն ունեն: Նրանց միավորում է փրկության գաղափարի հիմնական շեշտադրումը, վերաբերմունքը պաշտամունքին, ուշադրությունը սևեռելով Մեսիայի վրա՝ իբրև անձի:

Համեմատելով Երկրորդ Եսայուն և իր ավագ ժամանակակից Եզեկիելի հետ, հեշտությամբ կարելի է նկատել նրանց միջև ոչ քիչ տարբերություն: Եզեկիելը որպես քահանա մեծ նշանակություն է տալիս տաճարական ծեսերին, Երկրորդ Եսային շեշտը դնում է անհատի բարոյականության վրա՝ իբրև Աստծուն ծառայելու գլխավոր պայման:

Եսայի մարգարեն դեռ կենդանության օրոք աշակերտներ ուներ: Ըստ երևույթին գրքի երկրորդ մասի հեղինակը պատկանել է այդ դպրոցին, որ չի վերացել Եսայու մահվանից հետո:

Շատ աստվածաշնչագետներ ԾԶ-ԿԶ գլուխներն առանձնացնում էին իբրև հատուկ բաժին, որ գրել է մի երրորդ մարգարե, որին պայմանականորեն նշում էին որպես Երրորդ Եսայի: Սակայն այս դասակարգումը հազիվ թե ճիշտ լինի:

Հայտնությունները, որոնք տվել է Սուրբ Հոգին՝ Եսայու դպրոցի մարգարեների միջոցով, առկա են նաև առաջին մասի մի շարք գլուխներում:

ա) Եսայի ԺԳ 1-ԺԴ 27. Մարգարեությունը, հավանաբար, գրվել է մոտավորապես 539 թվականին՝ Բաբելոնի անկումից ոչ շատ առաջ: Սա մի ահեղ օրհներգ է Բաբելոնի անկման մասին, քաղաքի, որ մարմնավորում էր աշխարհի մեծագույն թագավորությունները, որ հիմնված են բռնության և ստի վրա: Բաբելոնի կործանումը նկարագրված է այնպիսի վախճանաբանական պատկերներով ինչպես Դատաստանի օրը (հմմտ. Հայտն. ԺԴ 8, ԺՁ 19, ԺԷ 17): Օրհներգության մեջ Բաբելոնն առավել ընդլայնված իմաստ է ստանում. այն նմանվում է սատանային, որն ապստամբեց Աստծու դեմ և նետվեց սանդարամետ: ԺԴ 9-10-ում պատկերված են «ռափիմացիներ»¹ (մեռածների սուլերները), որ դժոխքի դարպասների մոտ դիմավորում են ընկած «արուսյակին»²: Չնայած մարգարեության մեջ հիշատակվում են քաղաքացիների խոյան մեղացիները, ընդհանուր առմամբ այն հեռու է իրական պատմական դեպքերից: Դիտարկման առարկան ոչ այնքան իրական Բաբելոնն է, որքան ընդհանրապես հեթանոսական աստվածամարտ բռնատիրությունը: Օրհներգության հեղինակ կարող է լինել Եսայու դպրոցի մարգարեներից մեկը.

բ) Եսայի ԻԴ-ԻԷ Վախճանաբանական շարադրանք, որ սովորաբար թվագրում են Ք. ծ. ա. Ե-Դ դարերով³:

գ) Եսայի ԼԴ-ԼԵ Դատելով ըստ լեզվաոճական առանձնահատկությունների, այս գլուխները Երկրորդ Եսայունն են:

«Ինքնըստինքյան պարզ է,- գրում է Ա. Բ. Կարտաշևը,- որ այս բոլոր մարգարեությունները, որ մեկ անգամ մտել են սրբազան և կանոնականացված բնագրի մեջ, հինկտակարանյան կամ նորկտակարանյան Եկեղեցուց ժառանգված լինելով իբրև Սուրբ Գիրք, մեզ համար պահպանում են իրենց դոգմատիկ, կրոնաոսուցողական համարվող վիճակը, անկախ այն բանից, թե դրանց հեղինակն անհայտ է կամ կեղծ անունով է հանդես գալիս» (Ветхозаветная библейская критика, էջ 28):

2. Երկրորդ Եսայու դարաշրջանը: Նաբուգոդոնոսորի և իր մերձավոր հետնորդների ժամանակներում հրեաները ճնշումների չէին ենթարկվում Բաբելոնում: Նրա որդին 561 թվականին բանտից ազատեց Հովաքիմին (տես Դ. Թագ. ԻԵ 28), դրանով իսկ հրեական թագավորության վերականգնման հույս արթնացնելով: Սակայն 556 թվականի գարնանն իշխանությունը հայտնվեց

¹ Գրաբարում այդ բառը (եբր. օօօօօ) թարգմանված է *հսկա* բառով, հանդիպում է նաև *Ռափա* ձևը (Բ. Թագ. ԻՎ 20-21, Եսայի ԻՁ 14, Ա Մևազ. Ի 4 և այլն): Հավանաբար ակնարկն է Ճևղ. 2 գլխի հսկաների, որոնք կործանվեցին – *խմբ.*:

² Տե՛ս Եսայի ԺԴ 12՝ *Առավոտյան աստղը*¹ Լուսաբեր – Սատանայի անկման պատումը (եբր. օօօօօ օօօօօ – առավոտյան աստղ) – *խմբ.*:

³ Այս մարգարեության նշանակությունը տե՛ս ստորև՝ § 26, կետ 6:

Նաբոնիդ բռնապետի ձեռքում: Նա ամուսնացավ Նաբուգոդոնոսորի այրու հետ, և վերջինիս որդիներից մեկին՝ Բաղդասարին, դարձրեց «Թագավորության երկրորդ մարդ»: Ազնվականությունն ու քրմերը ողջունում էին նոր տիրակալի երևան գալը, սակայն շուտով նրա նկատմամբ թշնամական դիրք գրավեցին: Նաբոնիդը հետևորդ էր Լուսնի աստված Սինի, որ պաշտվում էր տիրակալի հայրենիքում՝ Խառանում: Թագավոր դառնալով՝ նա փորձեց այդ պաշտամունքը դարձնել գլխավորը կայսրությունում և դուրս մղել Բաբելոնի հովանավոր աստծուն՝ հինավուրց Մարդուկին: Դանիելի գիրքն (տես հտ. 2, § 28) արտացոլել է Նաբոնիդի դարաշրջանի իրադարձությունները, որ կապվում են քաղաքացի թագավորի՝ միայն իր աստծուն երկրպագելու մասին հրամանի հետ: Հավանական է, որ նոր թագավորի բռնի միջոցներն ազդել են նաև հրեաների վրա:

Մայրաքաղաքի քրմերի դիմադրությունն ստիպեց Նաբոնիդին հեռանալ արաբական Թեյմու օազիսը: Նա քաղաքում կուսակալ նշանակեց Բաղդասարին: Բաբելոնում ծավալված ներքաղաքական պայքարից օգտվեց Պարսից թագավոր Կյուրոս Բ-ը: Այդ պահին նա արդեն իրեն էր ենթարկել մեղացիներին և Լիդիացիների թագավորությունը: Եվ Մերձավոր արևելքում նրա միակ հակառակորդը Բաբելոնն էր մնացել:

Կյուրոսն սկզբում Նաբոնիդից մի շարք գավառներ գրավեց, իսկ 540 թվականին շրջանցեց «Մեդական պարիսպը»¹ Բաբելոնի հիմնական պաշտպանական կառույցների շղթան: Սակայն Նաբոնիդը, դիմադրության պատրաստվելու փոխարեն հանդիսավոր երթեր և տոնակատարություններ էր անցկացնում ի պատիվ աստվածների: Սակայն, այդուհանդերձ, նա չկարողացավ հաշտվել ազնվականության և քրմերի հետ: Կյուրոսին բոլորն սպասում էին որպես ազատարարի: Նա նոր կարգի զավթիչ էր. չէր թալանում քաղաքները, օտարության չէր քշում գրավյալ տարածքների ժողովուրդներին և չէր դիպչում նրանց սրբություններին: Հատկապես մեծ հույսեր էին կապում նրա հետ գերի վերաբնակները, ի թիվս այլոց նաև հրեաները:

539 թվականի հոկտեմբերի 12-ին դավադիրները պարսից զորքերի դեմ բացեցին Բաբելոնի դարպասները: Նաբոնիդը գերեվարվեց, իսկ Բաղդասար կուսակալն սպանվեց իր պալատում (տես հտ. 2, § 28): Քաղաքի պարես նշանակվեց Կյուրոսի զորահրամանատար Գոբրին: Հոկտեմբերի 29-ին Բաբելոն մտավ պարսից արքան, որին դիմավորում էր ցնծացող բնակչությունը: Նա խաղաղություն խոստացավ բոլորին: Այլազգիներին թույլ էր տրվում ցանկության դեպքում հեռանալ Բաբելոնից:

¹ Մեդական պարիսպը մակրամասն նկարագրել է Քսենոփոնը (Անաբասիս, գիրք II, գլ. IV, 12, Երևան, 1970): Սահմանամերձ այս պաշտպանական գիծը՝ մոտ 30 կմ, կառուցել է Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Բ թագավորը, էջ 249 – խմբ.:

Այսպիսին էր ընթացքը դեպքերի, երբ իր ծառայությունն սկսեց «հին-կտակարանյան ավետարանիչը»՝ Երկրորդ Եսային, որ հրեաներին կոչեց նոր ելքի:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

562	Նաբուգոդոնոսր Բ մահը: Պահ է բարձրանում Ամել-Մարդուկը
561	Հրեից արքա Յովաքիմի ազատումը Բաբելոնյան բանտից
560	Ամել-Մարդուկը գահընկեց է արվում: Պահ է բարձրանում Ներգալ-շառեզերը (Ներիզիսասար)
558	Իրանում գահ է բարձրանում Կյուրոսը
556	Ներգալ-շառեզերի մահը: Պահ է բարձրանում Լաբաշի-Մարդուկը: Նաբոնիդը խլում է իշխանությունը
553	Բաղդասար՝ կուսակալ Բաբելոնի
550	Կյուրոսի հաղթանակը մեդացիների նկատմամբ
546	Կյուրոսն իրեն է ենթարկում Լիդիան
540	Կյուրոսի առաջին արշավանքն Բաբելոնի դեմ
539	12 հոկտեմբեր – Պարսիկները մուտք են գործում Բաբելոն: Բաղդասարի մահը 29 հոկտեմբեր – Բաբելոն է մուտք գործում Կյուրոսը
538	Կյուրոսի հրամանը, որ թույլ է տալիս հրեաներին վերադառնալ հայրենիք

3. Երկրորդ Եսայու ինքնությունը և նրա երկերի գրական առանձնահատկությունները: *Մարգարեի գրվածքերում, ի տարբերություն Եսայու կամ Երեմիայի, գրեթե բացակայում են ինքնակենսագրական վկայությունները: Միայն մի տեղ ենք գտնում այլ մարգարեների կոչման մասին պատմություններ հիշեցնող հատված.*

Մի ձայն ասում է՝ կանչիր:

Ասում են՝ ինչ կանչեն:

«Իմացիր, ամեն մարմին նման է խոտի,

և մարդու ամբողջ փառքը նման է խոտածաղկի ...

Խոտը չորանում է, ծաղիկը թափվում,

բայց Տիրոջ խոսքը մնում է հավիտյան:

(Խ 6, 8)

Շատ մեկնաբաններ Ծ 4-6 համարում են արձագանքն այն պայքարի, որ վիճակված էր նոր ելք քարոզող մարգարեին.

Տեր Աստված ինձ

խրատող լեզու տվեց,

որ կարողանամ ճիշտ ժամանակին

խոսք ասել,

ամեն առավոտ ինձ պոուշացրեց,
 սրեց իմ լսելիքը,
 որ ունկնդիր լինեմ:
 Տիրոջ խրատը կրացի իմ ականջները,
 և ես խառասիրտ չեմ դառնա
 ու չեմ ընդդիմանա:
 Թիկունքս հարվածների տվեցի,
 ծնոտներս՝ ապտակի,
 և երեսս շուռ չտվի
 նախատինքից ու թքից:

Եվ եթե այս մեկնությունը ճիշտ է, նշանակում է, որ մարգարեն թերահավատների համառ դիմադրությանն է հանդիպել, մարդկանց, որ չէին կամենում լքել Բաբելոնի իրենց տաքուկ անկյունները:

Երկրորդ Եսային գրում էր իրեն հայտնված Տիրոջ հոսքը և, հավանաբար, ընթերցում էր իր մարգարեություններն աղոթաժողովների ժամանակ: Այս գրությունները ոչ մեծ պոեմներ են, որ ժողովածուի մեջ դասավորվել են առանց տրամաբանական հերթականության: Այսպիսի «հատվածներ»¹ կարելի է առանձնացնել ըստ բովանդակության և հինական թեմայի:

Երկրորդ Եսայու լեզուն շատ կողմերով մոտ է Եսայի Երուսաղեմացու լեզվին: Սակայն շարունակողը հարստացնում է իր նախորդի ոճը՝ այն դարձնելով առավել արտահայտիչ և հանդիսավոր:

Գերության շրջանի անանուն մարգարեն Հին Կտակարանի վերջին մեծ բանաստեղծն է: Հզոր ու թմր, ալիտերացիաների կիրառությունը, բառախաղերն ու հանգավորումն իր օրհներգությունները գեղարվեստական առումով դարձնում են առաջինը մարգարե-գրողների ժառանգության մեջ: Նրան բնորոշ են ասուլիսների կիրառումը, լակոնիկ խոսքը և հակիրճ խոսքի մեջ աստվածաբանական խորը ուսմունք հայտնելը:

4. Երկրորդ Եսայու աստվածաբանության հիմնական գծերը: Աստված մարգարեին հայտնվում է որպես բացարձակ, միասնական և անմատչելի: Կտրականապես դատապարտվում են Նրան որևէ այլ հավիտենական գործության հետ համեմատելու փորձերը: Երկրորդ Եսայու մարգարեություններում կարելի է պարսկական (և ընդհանրապես հինարևելյան) դուալիզմի դեմ բանակռիվ նկատել: Աստծու Նախախնամությունը անհասանելի է մարդու համար, նա կարող է ընկալել լոկ այն, ինչ Աստված Ինքն է հայտնում մարդկանց:

¹ Աստվածպաշտության ժամանակ սուրբգրային ընթերցումների հատվածներն ունեն հատուկ անուն՝ *ափաթո*, որն օգտագործված է այստեղ – *խմբ.*:



Կյուրոսի գլանը - Բաբելոնի գրավման հրովարտակը
(539 թ. Ք. ծ. ա.)

Չնայած որ Եահզվեն արարչության սահմաններից դուրս է, նրա հետ կապված է Իր կենարար Խոռաքի գորուսթյամբ: Էն Խոռաքով ստեղծեց աշխարհը և Խոռաքով կվերաւտեղծի այն, երբ գա Աստծու Թագավորության ժամանակը: Աստված ստեղծեց ոչ միայն աշխարհն ու մարդկանց, այլ նաև Իր Եկեղեցին՝ Իր ժողովուրդը, որ կոչված է ծառայելու Իրեն: Սակայն Նա Իր Թագավորության մեջ կընդգրկի երկրի բոլոր ցեղերին, որոնց Աստծու ժողովուրդը կկանչի՝ Միակին պաշտելու համար:

Իսրայելը պատժվեց այն բանի համար, որ ինքը՝ ընտրյալը, չկատարեց իր առջև դրված խնդիրները: Այժմ Աստված դարձյալ Իր ողորմությունն է հայտնում և նորից է կոչում ծառայության: Դրա նշանն է լինելու ստրկությունից նոր ելքը դեպի Ավետյաց երկիր, ուր պիտի շողարձակի Նոր Երուսաղեմը՝ Տիրոջ Քաղաքը:

Տիրոջ Տառապող Սպասավորը (եբր. ַוּוֹ ַדְּבַע – ԷԲԵԴ ԵԱՅՎԵ)՝ բարդ և բազմակողմանի կերպար է Երկրորդ Եսայու մարգարեություններում: Նրանում միաձուլված են հալածվող Եկեղեցուն՝ Աստծու ժողովուրդի, մարգարե-առաքյալի, և Մեսիայի՝ Մարգարե-Քահանայապետի գծերը, Որն Իր չարչարանքներով մեղքի իշխանությունից կփրկագնի աշխարհը:

Չարքեր կրկնության համար

1. Ինչ նշանակություն ունի Եսայի մարգարեի գրքի երկրորդ մասը:
2. Ինչո՞վ է այս մասն տարբերվում Ը դարի մարգարե Եսայու մարգարեություններից:
3. Ինչպե՞ս է ընդունված անվանել երկրորդ մասի սրբագան հեղինակին:
4. Ինչո՞վ է նա կապված Եսայի մարգարեի հետ:
5. Եսայի մարգարեի գրքի երկրորդ մասի հեղինակի ծառայության սկիզբը պատմական ինչ իրադարձությունների զուգադիպեց:
6. Երկրորդ Եսայու գործերը գրական ինչ առանձնահատկություններով են օժտված:
7. Որո՞նք են նրա աստվածաբանության հիմնական գծերը:

¹ Այսինքն դարձի կրեթի – խմբ.:

§ 15-Ի Հավելված Կյուրոսի հրովարտակից՝ Բաբելոնի գրավման մասին

Նաբոնիդը հեռացրեց աստվածների հին կուռքերը... Թշնամական ձևով նա չեղյալ հայտարարեց ամենօրյա զոհաբերությունները: Նա բոլորովին մոռացուցեց մատենեց Մարդուկի՝ աստվածների թագավորի պաշտամունքը: Նա մշտապես չարիք էր գործում իր քաղաքի համար... Կառավարում էր դաժանություններ... Մեծ տիրակալը՝ Մարդուկը, իր ժողովրդի պաշտպանը, գոհանալով Կուրաշի (Կյուրոսի) գործերով, հրամայեց նրանց դուրս գալ իր քաղաքի՝ Բաբելոնի դեմ... Մարդուկը Կյուրոսի ձեռքը մատենեց Նաբոնիդին, որ չէր պաշտում իրեն: Եվ Բաբելոնի ու Շումեր և Աքքադ ողջ երկրի բոլոր բնակիչները, իշխանները և կառավարիչները խոնարհվեցին Կյուրոսի առջև... Նրանք ուրախությամբ ողջունում էին նրան իբրև համայն աշխարհի տիրակալի...

Երբ բարեկամաբար մուտք գործեցի Բաբելոն և որոշեցի իմ նստավայր պալատը... մեծ տիրակալ Մարդուկը [ներագրեց] Բաբելոնի հրաշահողի բնակիչների վրա [որ սիրեն ինձ]... Աշշուր, Շոշ, Ագադե, էշնուննու, Զամբան, Մե-Թուրնու, Դեր, ընդհուպ մինչև աշխարհն Գթաց, ես վերահաստատեցի այս սրբազան քաղաքներում սրբարանները, որ երկար ժամանակ ավերակ էին:

(թրգմ. Մ. Ա Դանդամյան. XDB. 1980,
2 մաս, էջ 19-20)

§ 16. Երկրորդ Եսայի (չարունակություն)

1. Տիրոջ Տառապող Սպասավորի մասին Մեսիական Հայտնությունն արտացոլված է Երկրորդ Եսայու չորս օրհներգերում: Սպասավոր բառը (եբր. ַדָּבָר - ԷԲԵԴ - ծառա, ստրուկ, աշխատող) սինոգական թարգմանություն մեջ «մանուկ»¹ ձևով է փոխանցվել, որովհետև հնում մանուկ են կոչվել թագավորի սպասավորները²:

Առաջին օրհներգության մեջ (ԽԲ 1-7) նա ներկայանում է իբրև էի ուղարկած Մեսիա, որ կատարելու է իր ծառայությունը ոչ թե երկրային զորության մեջ, այլ խոնարհության ոգով (հմմտ. Մատթ. ԺԱ 29): Նա նախահավիտենականի Օրենքը կհաստատի ոչ միայն Իսրայելի համար, այլ նաև ամբողջ

¹ Ռուսերենում - *отрок* ձևն է - խմբ.:

² Յոթանասնիցում *Էբեդ* բառը արտահայտվել է «ὁ παις» գոյականով, որ թարգմանվում է *երեխա, որդի, երիտասարդ սպասավոր* ձևերով: Նույն բառն է օգտագործված Քրիստոսի համար Պետրոս առաքյալի խոսքում (*Գործք Դ 27*, ըստ հնագույն ձեռագրերի) [իին սլավոներեն թարգմանության մեջ]. անկասկած սա Եսայու օրհներգերի ազդեցությունն է:

աշխարհի (4-րդ համարի «կղզիները» բառն Արևմտյան աշխարհի մասին է՝ Հունական կղզիների խմբի)¹: Փրկությունը, որ Աստված բերում է Սպասավորի միջոցով, մարգարեն պատկերում է որպես նոր արարչություն: Արարչության թեմային մեկ անգամ չէ, որ անդրադառնում է Երկրորդ Եսային (նա 16 անգամ կիրառում է ՌԸ «ԲԱՐԱՅ»՝ արարել, ստեղծել բառը)²: Մարդկության պատմության ընթացքում մշտապես գործում է այն նույն Աստվածը, որ ստեղծեց Տիեզերքը: Առաջին օրհներգության մեջ Մեսիան ներկայացված է իբրև Իսրայելի Հովիվ և «լույս հեթանոսների» (հմմտ. Ղուկ. Բ 29-32):

Հակոբն իմ ծառան Է. օգնական պիտի լինեմ նրան:

Իմ ընտրյալն Է Իսրայելը, որը հաճելի եղավ իմ հոգուն:

Իմ շունչը կտարածեմ նրա վրա,

և նա հեթանոսների դատաստանը կտեսնի:

Նա չի աղաղակելու և չի վիճելու,

ոչ ոք դրսում նրա ձայնը չի լսելու,

անգամ ջախջախված եղեգը նա չի ջարդելու

և առկայծող պատրույզը չի մարելու,

այլ արդարությանը դատաստան Է տեսնելու:

Նա պիտի ծագի և չպիտի խորտակվի,

քանի դեռ երկրի վրա չի հաստատել դատաստանը.

և հեթանոսները իրենց հույսը պիտի դնեն նրա անվան վրա:

Այսպես Է ասում Տեր Աստված,

որ ստեղծեց երկինքը և կանգնեցրեց այն,

հաստատեց երկիրն ու ամեն բան, ինչ կա նրա վրա,

շունչ տվեց այնտեղ գտնվող մարդկանց,

հոգի՝ բոլոր նրանց, ովքեր ոտք են դնում երկրի վրա.

Ես՝ Տեր Աստվածս, արդարությանը կանչեցի քեզ,

բռնեցի քո աջ ձեռքից և զորավոր դարձրի քեզ,

իբրև ուխտ տվեցի քեզ ժողովրդին

և իբրև լույս՝ հեթանոսներին,

որպեսպի կույրերի աչքերը բանաս

և խավարի մեջ նստած կալանավորներին հանես բանտից ու վնդանից:

Տեքստի բացատրություն

1. Ծառա (տե՛ն վերևում) – Սպասավոր: Սա Հիսուսի ասած խոսքերի նախօրոք ասված միտքն է, թե աշխարհ է եկել «ծառայելու» մարդկանց փրկու-

¹ Ուսերենում այսպես է՝ «не ослабее и не изнеможет, доколе на земле не утвердит суда, и на закон Его будут уповать острова». հայերենում՝ «քանի դեռ երկրի վրա չի հաստատել դատաստանը, և հեթանոսները իրենց հույսը պիտի դնեն նրա անվան վրա».- խմբ.:

² Այդ նույն բառը առկա է Ծննդ. Ա 1-ում – խմբ.:

թյան համար (Մատթ. Ի 28, Մարկ. Ժ 45): *Նույնը նկատի ուներ Պողոսը, ասելով, որ Քրիստոս «իր անձը ունայնացրեց, ծառայի կերպարանք առնելով»* (Փիլ. Բ 7):

2. *Զախչախված եղեգը ջարդելու, կամ արդեն առկայծող պատրուկը շիջանելու համար մեծ ջանքեր հարկավոր չեն: Անգամ այս չնչին արտաքին ուժերը Մեսիան չի գործադրի, կառավարելով Իր Թագավորությունը:*

3. *ԴՍՏԱՍՏԱՆՆՆ այստեղ նշանակում է արդարություն և ճշմարտություն:*

4. *ՕՐԵՆՔ. այստեղ «պետք է հասկանանք ոչ թե Մովսեսի միջոցով տրված Օրենքը, այլ Ավետարանը»* (Հեռոնիմոս Երանելի):

5. *ՇՈՒՆՁ. այստեղ կյանքի հոմանիշն է, և մասնավորաբար՝ մարդկային կյանքի (հմմտ. Ծննդ. Բ 7):*

6. *ԿՈՒՅՐԵՐԸ և ԿԱԼԱՆԱՎՈՐՆԵՐԸ՝ մեղքի ու մոլորության մեջ գտնվող մարդիկ:*

Երկրորդ օրհներգության մեջ (ԽԹ 1-26) Աստծու Սպասավորը միաժամանակ և՛ Եկեղեցին է, Աստծու Ժողովուրդը, և՛ Անձը, որ կվերածնի Եկեղեցին և կտարածի փրկությունը մինչև աշխարհի ծագերը: Խոսքը պարզապես Իսրայելի մասին չէ, այլ Մնացորդի՝ ճշմարիտ հավատացյալների: Նրանց երկրային ուղին լի է տառապանքներով, սակայն նրանք Աստծուն են ապավինում.

*Իսկ ես ասացի. Ուրեմն զուր տեղը չարչարվեցի,
իմ ուժն անմիտ բաների վրյ ծախսեցի,
բայց իմ իրավունքը Տիրոջից է,
և իմ վաստակն իմ Աստծու առաջ է:*

(ԽԹ 4)

Այսպիսով Մեսիան պսակում է Եկեղեցին, չի առանձնանում նրանից և միևնույն ժամանակ չի նույնանում նրա հետ: Մարգարեի տողերում գտնում ենք կանխասացությունը Պողոս առաքյալի խոսքերի, ուր Եկեղեցին հիշվում է իբրև Քրիստոսի Մարմին (Ա Կորնթ. ԺԲ 27. հմմտ. Հովհ. ԺԵ 1):

Երրորդ օրհներգությունը (Ծ 4-10) Մեսիային պատկերում է իբրև հալածվող Մարգարե (տես հտ. Բ, § 15): Այս հատվածը կարող է պարունակել Երկրորդ Եսայու անձնական կյանքի վերաբերյալ ակնարկներ: «Ժրատող լեզու» (հմր. 4) – բառացի «աշակերտների լեզու»: Այս բառը (եբր. דִּירָמָל לַחֲסִידֵי־יְהוָה) հանդիպում է միայն Եսայու գրքում: Օրհներգությունը նախապատկերն է Քրիստոսի շարձարանքների:

Առավել կարևոր է չորրորդ օրհներգությունը (ԾԲ 13-ԾԳ 12), որ ընդգրկված է Ավագ Ուրբաթի արարողության մեջ¹: Սրա մեծ մասը հնչում է թագավորների և «բազում ժողովուրդների» շուրթերից, որ զարմանքով են ականատես լինում Փրկչի խորհրդին:

¹ Հայ եկեղեցում Ավագ Ուրբաթի խաչելության կարգի մեջ այդ հատվածները նույապես ընդգրկված են – *խմբ.*

Մեսիան պատկերվում է նրանց առջև, ոչ այն կերպարով, ինչպես Նրան պատկերացրել են մարդիկ, չնայած նրանք ծանոթ էին իրական մարգարեությաններին (ՃԲ 15): Փրկչի դեմքին տառապանք է դրոշմված, Նա զերծ է երկրային վեհությունից: Նա կիսում է ճակատագիրն Աստծու կողմից ուղարկվածների, որ միշտ չեն հասկացել, հանդիպել են ատելության, ենթարկվել հալածանքների: Սակայն Նա Միջնորդ է մարդկանց համար, ինչպես Աբրահամը (հմմտ. Ծննդ. ԺԸ 23): Որպես Քահանայապետ Նա մարդկանց մաքրում է մեղքերից և հիվանդություններից (ՂԱտ. ԺԶ, հմմտ. Մատթ. Ը 17): Կուրացած մարդիկ, որոնք չհասկացան Նրա ճշմարիտ մեծությունը, ընդունեցին, որ Նրան Աստված է պատժում, բայց նրա չարչարանքները փրկարար ուժ ստացան (հմմտ. Մատթ. ԻԷ 42-43):

Արարչից հեռացած աշխարհն ընկղմվեց մթության մեջ, և դեպի խավարն է գալիս անարգված Մեսիան, որ բոլորի հետ կիսի տառապանքները և կբժշկի այն (հմմտ. Յովհ. Գ 16-17): Երկրորդ Եսայու Աստծու Սպասավորը պատկերված է զոհաբերվող գառան տեսքով, որն Աստծու հետ Ուխտի հաստատումն էր խորհրդանշում: Զոհաբերության սեղանը Աստծու ներկայության նշան էր: Աստծու Գառան զոհաբերությունն Աստվածահայտնության կատարությունն է նշանակում՝ սկիզբ դնելով Նոր Ուխտին (հմմտ. Երեմ. ԼԱ 31, Ղուկ. ԻԲ 20, Ա Կորնթ ԺԱ 25, Եփ. Բ 13):

Եվ Սպասավորը կամավոր գնում է չարչարանքների: Հետևաբար Աստծու կամքից բացի, որ ուղղված է մարդկանց փրկությանը, Քավության համար անհրաժեշտ է նաև Մեսիա-Աստվածամարդու մարդկային կամքի համաձայնությունը, որն էլ Իրեն ամբողջովին հանձնում է Հորը (Մատթ. ԻԶ 39): Իր Անձը ունայնացնելու պահին Մեսիան չհասկացվեց, բայց մահվան մեջ Նա հաղթանակում է: Օրհներգությունն ավարտվում է վախճանաբանական մարգարեությամբ. Քավիչի սխրանքը զոհ դառնալն է, որ Նոր Ուխտում հաշտեցնում է մարդուն Աստծու հետ: Փրկչի արյան նախաօրինակները հինկտակարանյան ծեսերով արտահայտվել, ուր զոհի արյունն Աստծու և մարդու միջև Ուխտի հաստատումն էր նշանակում:

Նրա տեսքն ավելի անարգ էր ու նսեմ,
քան բոլոր մարդկանց որդիներինը:

Նա հարվածների ենթակա մի մարդ եղավ,
որ ցավերին համբերել գիտե.

իր երեսը դարձնելով՝ արհամարհվեց ու բանի տեղ չդրվեց:

Նա մեր մեղքերն էր վերցնում և մեկ համար չարչարվում

(ՃԳ 3-4)

Հին Կտակարանի ոչ մի գրքում Մեսիայի չարչարանքների իմաստը այսօրվան լիարժեք նախօրոք չի հայտնել, ոչ մի տեղ Քրիստոս-Փրկչի կերպարն

այսքան պարզորոշ չի կանխատեսվել: Երկրորդ Եսայու շորրորդ օրհներգու-
թյունն իրավամբ հին սուրբգրային մեսիականության գազաթնակետն է: Նա
ազատված է երկրային նախկին հատկանիշերից: Քավիչն արդեն ոչ թե զին-
վոր է կամ առաջնորդ, այլ Աստծու անձնագորհ Սիրո մարմնացումն է:

Քրիստոսի Եկեղեցին առաքելական ժամանակներից սկսած Սպասավորի
մասին մարգարեությունները դիտում է որպես մեծագույն կանխատեսումներ,
ուր կանխատեսված է Տիրոջ երկրային կյանքը: Այս մեկնությունը փո-
խառնված չէ Հինկտակարանյան հրեական մեկնություններից. հրեա մեկ-
նիչները չէին կարողանում համակերպվել շարշարվող Մեսիայի գաղափարի
հետ: Այս իսկ պատճառով նրանք կանգ առան Սպասավորի մասին օրհներ-
գերի հավաքական մեկնության վրա, ուր Նրան նույնացնում են Համայնքի և
Եկեղեցու հետ: Նորկտակարանյան ընկալումը հայտնվել է առաքյալներին
անձամբ Քրիստոսի միջոցով և Սուրբ Հոգու ազդեցությամբ:

2. Ճշմարիտ Աստված և կուռքերը: Աստծու մասին Հայտնությունն
ազդարարելով՝ Երկրորդ Եսային աշխարհ չի բերում նոր կրոն: Արարչի վեհ
ընկալումը տրված էր և նախորդ սերունդների մարգարեներին: Այն կա նաև
բնության վկայության մեջ.

*Միթե չլսեցիք ու չիմացա՞ք, ի սկզբանե ձեզ չպատմվեց,
չիսկսեցա՞ք, թե ով հաստատեց երկրի հիմքերը:*

(Խ 21)

Մեծ քաղաքում՝ Բաբելոնում, հեթանոսական խորհրդանիշներով շրջա-
պատված հրեաները կարող էին այլ դավանանքների ազդեցության տակ
ընկնել: Մարգարեն պատմում է, թե ինչպես են կուռքերն ստեղծվում մարդ-
կային ձեռքերով, և պսակազերծում է դրանց (Խ 19-20) (հարկ է հիշել, որ այս
բանավեճը բազմաստվածությունն է նկատի առնվում. աստվածների զորու-
թյունները բնակվում են դրանց կուռքերում):

Ճշմարիտ Աստված անքննելի է: Երկրային սահմանափակ պատկերա-
ցումներն անկարող են ընդգրկել Նրա անսահման մեծությունը: Մարդկային
ոչ մի ենթադրություն չի կարող հավակնել հասու լինելու Աստծու խորհուրդ-
ներին.

*Ո՛վ իմացավ Տիրոջ մտքերը,
ո՞վ խորհրդատու դարձավ նրան՝
իբրև թե նրան խելամիտ դարձնելու համար:...*

*Բոլոր հեթանոսները նման են դույլի մի կաթիլին,
նույնն են, ինչ փոշեհատիկը՝ կշեռքի վրա
և կամ ինչպես բերանից ցայտող շիթը: ...*

Արդ, ո՞ւմ նմանեցրիք Տիրոջը, ո՞ւմ նման համարեցիք նրան:

(Խ 13, 15, 18)

Միայն էն է օժտված իրական էությունը. Նրա համեմատությամբ մարդը և ողջ տիեզերքը ոչինչ են: Մարգարեն կոչ է անում իր ունկնդիրներին աչքերը հառել երկնքին և տեսնել, թե ով է ստեղծել իրենց: Ո՞վ է սահմանել երկնային մարմինների ընթացքը: Նա չէ՞ միակն ու ամենակարողը (Խ 26):

Իրանի մարգարե Զրադաշտի (մոտ. Ք. ծ. ա. Է-Չ դարեր) քարոզների ազդեցությամբ Կյուրոսի դարաշրջանում պարսիկներն սկսեցին ուղղվել դեպի միաստվածություն: Սակայն լուսի աստվածության կողքին (պարսկ. Ահուրամասպա) պարսկական կրոնը դնում էր նրա՝ խավար, իբրև թե հավերժական երկվորյակին (Իրուհին կամ Ահրու-Մանյուին): Եվ չնայած ապագայում այդ շար սկիզբը պիտի կործանվի, պարտվելով Աստծուց, չարի հանդեպ հավատը Զրադաշտի կրոնը դարձնում է դուալիստական [երկվակյան], ընդունում է երկու սկիզբների հավասար լինելը (տե՛ս Խ. 2, § 1, կետ 3): Այս տեսակետը դարեր գոյատևեց գնոստիկության և մանիքեականության մեջ, Պավլիկյան ուսմունքում, բողոքիչների¹ մոտ և այլ աղանդներում:

Երկրորդ Եսային իր հայտնության մեջ կտրականապես մերժում է դուալիզմը՝ երկվակյանությունը.

Այսպես է ասում Աստված՝ Իսրայելի թագավորը

և նրա Փրկիչ Չորությունների Տերը.

«ԵՍ ԵՄ ԱՌԱՋԻՆԸ ԵՎ ԵՍ ԵՄ ՎԵՐՉԻՆԸ,

ԻՆՁՆԻՑ ԲԱՑԻ ՈՒՐԻՇ ԱՍՏՎԱԾ ՉԿԱ: ...

ԵՍ ԵՄ, ՈՐ ՀԱՍՏԱՏԵՑԻ ԼՈՒՑՍԸ ԵՎ ՍՏԵՂԾԵՑԻ ԽԱՎԱՐԸ,

ես եմ, որ խաղաղություն եմ անում և հաստատում չարը,

ես եմ Տեր Աստվածը, որ կատարում եմ այս ամենը:

(ԽԴ 6, ԽԵ 7)

Այլ կերպ ասած՝ մարգարեն միանշանակ հերքում է չարի՝ ի սկզբանե եղած արմատի գոյությունը: Եթե «խաղաղությունը», բարօրությունը բխում են Աստծուց, ապա վերջին հաշվով նաև «չարն» է կապվում Նրա հետ, որովհետև կախված է այն բանից, թե էի հանդեպ ինչ դիրք է բռնել մարդը: Խաղաղությունն Աստծուն մերձ լինելու արդյունք է, չարը ծագում է Աստծուն անհավատարիմ գտվնելուց: Նրանից հեռու վիճակում կյանքը վնասակար է դառնում՝ վերածվելով «չարի»: Այսպիսով մարգարեն այն նույն միտքն է արտահայտում, որն ամփոփված է Ծննդոց գրքի Եղեմի և առաջին մարդու պատմության մեջ, ուր խզվեց միությունն Աստծու հետ:

3. Մեղավորների ներումը: Նոր ելք: Աստծու Նախախնամությունը իրականանում է Նրա ժողովրդի, Նրա Եկեղեցու պատմության մեջ: Ժողո-

¹ Բալկաններում ծնունդ առած հակաեկեղեցական երկվակյան՝ դուալիստական աղանդ՝ X-XV դդ.: Հիմնադիր՝ Բոգոմիլի անունով:

վուրդը գերության մեջ էր այնքան ժամանակ, մինչև շապաշխարհեց: Այժմ նրան ներում է շնորհվել.

«Մխիթարեցե՛ք, մխիթարեցե՛ք իմ ժողովրդին,
 – ասում է Աստված, –
 դուք՝ քահանաներդ, Երուսաղեմի սրտով խոսեցե՛ք
 և մխիթարեցե՛ք նրան, որովհետև նա լի է տառապանքով»: *Թող նրա մեղքերին թողություն լինի,
 քանզի իր մեղքերի համար նա Տիրոջ կողմից
 կրկնակի հատուցում առացավ:*
 (Խ 1-2)

Գալիս է նոր ելքի ժամանակը: Եթե նախկինում հեթանոսները «ապառապեններն»¹ էին, ապա այժմ գերությունից Իսրայելի ազատագրումն իրականանում է այլազգի թագավոր Կյուրոսի ձեռքով.

Այսպես է ասում Տեր Աստված իր օծյալ Կյուրոսին.
 Ես բռնեցի քո աջ ձեռքը,
 որպեսպի ազգերին հնապանդեցնեմ քեզ...:
 (ԽԵ 1)

Նոր ելքն Ուխտի անբեկանելիության նշան կդառնա: Այն նույնքան հրաշալի կլինի, որքան Մովսեսի օրերում, երբ ստեղծվում էր Աստծու ժողովուրդը (ԽԳ 2-3): Թող իրենք՝ իսրայելացիները դժվարությամբ հավատան իրենց ազատագրմանը, Աստված ի ցույց կդնի Իր գթասրտությունն ու սերը: Ուխտի ժողովուրդը կոչված է վկան լինելու Միակի, որ կվերաստեղծի Իր մարդկանց և ողջ աշխարհը.

Քանզի Ես նորն եմ անելու ...:
 (ԽԳ 19)

Մարգարեն նկարագրում է անապատով անցնելու սքանչելի պատկերը: Ինքն Աստված է գլխավորում Իր Եկեղեցին, որ անշուր տափաստանով գնում է դեպի Ավետյաց երկիր: Խորհրդավոր ձայնը կոչում է.

Անապատում կանչողի ձայնն է.
 Պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը
 և հարթեցե՛ք մեր Աստծու շավիղները:
 Բոլոր ձորերը պիտի լցվեն,
 և բոլոր լեռներն ու բլուրները պիտի ցածրանան:
 (Խ 3-4)

Սա մարգարեություն է Մեսիական Թագավորության մասին, որ Տերը կստեղծի: Մունետիկի ձայնը Մկրտչի նախակերպարն է՝ Մեսիայի Կարապետի (Մարկ. Ա 1-3):

¹ Տե՛ս Եսայի ԺԳ 5 – խմբ.:

Մեսիայի գալուստը վերափոխելու է աշխարհը: Մարգարեն այն նկարագրում է ծաղկող անապատի պատկերով: Աստծու խոսքը, որպես կենարար ջուր, ոռոգում է անկենդան քարերը, և դրանք կանաչով են ծածկվում:

Անապատով հոսող ջուրը մարգարեի գրվածքներում ամենասիրված խորհրդանիշն է: Նա խոսում է թշվառների և աղքատների մասին (Իսրայելի արդար Մնացորդի), որ ծարավի են կենդանի ջրի՝ Աստծու խոսքի (հմմտ. 3ովհ. 7-10):

Ոչ բոլորն արձագանքեցին Երկրորդ Եսայու քարոզին: Շատերին թվում էր, թե կյանքն օտարության մեջ սովորական և խաղաղ է, և վտանգավոր է այն փոխել ավերված Հուդայի հետ: Դրան ի պատասխան մարգարեն ասում է, որ Աստված կպահի Իր մարդկանց: Նոր պատեքը և նոր ելքը, ոչ թե մարդկային գործ է լինելու, այլ Նախախնամության. ամեն բան լինում է Աստծու խոսքով.

Իմ խորհուրդները նման չեն ձեր խորհուրդներին,
 և ոչ էլ իմ ճանապարհները՝ ձեր ճանապարհներին,
 – ասում է Տերը,
 – այլ, ինչպես երկինքն է հեռու երկրից,
 այնպես էլ իմ ճանապարհներն են հեռու ձեր ճանապարհներից,
 և իմ խորհուրդները՝ ձեր խորհուրդներից:
 Ինչպես որ, ասենք, երբ անձրև կամ ձյուն է իջնում երկնքից
 և կրկին այնտեղ չի վերադառնում, քանի դեռ չի ոռոգել երկիրը,
 չի ծլեցրել ու պտղաբերել այն,
 սերմանողին սերմ և ուտելու հաց չի տվել,
 այդպես էլ պիտի լինի իմ խոսքը,
 որ ելնում է իմ բերանից.
 Ես դատարկ չի վերադառնալու,
 մինչև որ չկատարի այն, ինչ կամենում եմ ես:

(ՃԵ 8-11)

Աստված հիշեցնում է, որ Իր մարդիկ փոքր ու չնչին են աշխարհի աչքին, սակայն նրանց ծառայությունը մեծ՝ Եահվեի աչքերում, որ փրկագնեց նրանց, այսինքն գնեց Իր համար, դարձրեց Իր բաժինը (ԽԱ 14): Հինկտակարանյան Եկեղեցին Աստծու մտահղացումների գործիքը կդառնա, և դրա համար է կոչված պարսից արքան՝ Կյուրոսը (ԽԱ 25):

Երկրորդ Եսայու կանխատեսող հայացքը հասնում է հեռավոր ապագային: Նա խոսում է շատ ժողովուրդների մասին, որ Իր Եկեղեցու միջոցով դարձի կգան դեպի ճշմարիտ Աստված (ԽԵ 14-15): Եվ Ուխտը, որ խախտվել էր մեղքերի պատճառով կվերականգնվի:

*Լեռները Երուսաղեմի ավերակների հետ միասին
 ցնծության կոչ պիտի արձակեն,
 քանպի Տերը ողորմեց նրանց
 և փրկեց Երուսաղեմը:*

(ԾԲ 9)

Վերափոխված Նոր Երուսաղեմում կբացվի Աստծու ջրի աղբյուրը: Այն կհոսի բոլորի համար, որպես Ուխտի կատարում, որ կնքվել էր Դավթի հետ: Նրա սերունդը՝ Մեսիան, Գլուխը Նոր Թագավորության՝ կլինի Գլուխը նորացված Եկեղեցու:

*Ահա նրան տվեցի որպես հեթանոսների վկա,
 որպես ԱԶԳԵՐԻ ԻՇԽԱՆ ԵՎ ԶՐԱՄԱՆԱՏԱՐ:*

(ՃԵ 4)

Այս խոստումներով ավարտվում է Երկրորդ Եսայու այն մարգարեությանը, որ գրվել են մինչև 538 թվականը, երբ գերյալների առաջին խումբը դուրս եկավ Բաբելոնից:

Հարցեր կրկնության համար

1. Ինչպես է պատկերված Մեսիան առաջին օրհներգության մեջ:
2. Ինչ առանձնահատկություններ ունի Սպասավորի կերպարը երկրորդ օրհներգում:
3. Ինչ է ասում երրորդ օրհներգը Սպասավորի մասին:
4. Չորրորդ օրհներգության մեջ ո՞ւմ շուրթերից է հնչում չարչարվող Սպասավորի մասին վկայությունը:
5. Ինչո՞ւ էր Նա անարգված մարդկանց առաջ
6. Ո՞րն է Մեսիայի կամավոր սխրանքի իմաստը:
7. Ինչո՞վ է բնորոշվում Երկրորդ Եսայու ուսմունքն Աստծու մասին:
8. Ինչո՞վ է արտահայտվում նրա բանավեճը դուալիզմի դեմ:
9. Ինչպես է պետք ընկալել այն խոսքերը, թե խաղաղությունը և չարը Աստծուց են:
10. Փրկության Սրբազան պատմության մեջ ի՞նչ դեր էր կոչված խաղալու Կյուրոսը:
11. Մարգարեն ի՞նչպես է պատկերում մեսիական Թագավորության սկիզբը:
12. Ո՞ւմ նախակերպարն է անապատում հնչող ձայնը:
13. Ի՞նչ էր պատասխանում մարգարեն փոքրոզիներին:
14. Մեսիայի տիեզերական Թագավորությունը ի՞նչպես է պատկերում Մարգարեն:

§ 17. ԳԵՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏը:

Երկրորդ Տաճարի կառուցման ժամանակի մարզարեւները

(538-515 թվականներ)

1. Եզրասի գիրքը: Հրեաների՝ Գերությունից վերադարձի մասին հիմնականում պատմում է Եզրասի Ա կանոնական գիրքը: Աստվածաշնչի սինոդական հրատարակություններում այն դրվում է Մնացորդաց գրքերից հետո և բովանդակությամբ դրանց շարունակությունն է հանդիսանում¹: Սկզբնապես Ա Եզրասը մեկ ամբողջություն էր Նեեմիի գրքի հետ: Ա Եզրասի սկիզբը համընկնում է Բ Մնացորդացի վերջի հետ: Այս գրքերի լեզուն, ոճը և ուսմունքն այնքան մոտ են, որ մեկնիչների շրջանում համոզիչ կարծիք է տիրում, որ երեք գրքերի կազմողը նույն անձն է: Նրան ընդունված է ժամանակագիր կոչել, և սովորաբար նրա կյանքի ու գործունեության շրջան են համարում Ք. ծ. ա. Դ դարը (տես հտ. 1, § 30):

Ժամանակագիրն սկսում է ծագումնաբանություններ և Ադամից հասնում է Եզրասի և Նեեմիի ժամանակների հինկտակարանյան Եկեղեցու դասի ձևավորմանը (Ե դար): Եզրաս-Նեեմի գրքերի հիմքում վավերական բնագրեր են եղել (ի մասնավորի հենց Եզրասի և Նեեմիի գրությունները): Գրքերի աստվածաբանությունը նույնն է ինչ Մնացորդացում (տես հտ. 1, § 30): Դրանց նպատակն է ցույց տալ Աստծու ժողովրդի կայացումն իբրև կրոնական Համայնք՝ Եկեղեցի:

2. Վերադարձ: Երկրորդ Եսայու և նոր ելքի մյուս ջատագովների քարոզը շատ հրեաների սրտերում հայրենիք վերադառնալու բուռն ցանկություն առաջացրեց: Կյուրոս թագավորը նրանց համապատասխան թույլտվություն տվեց, որ փաստացի գրված է Ա Եզրաս Ա 2-4-ում: Հայրենադարձների թիվը, որ հիշվում է Եզրասի գրքում (ավելի քան 42.000), հավանաբար ամփոփում է բոլորին, որ լքեցին Բաբելոնը: Հարյուր տարվա ընթացքում եղել է հինգ այդպիսի քարավան: Առաջինը ճանապարհվեցին չքավորները, քահանաներն ու նվիրյալները՝ Սասբասար իշխանի գլխավորությամբ (մտտ. 537 թ.): Այնուհետև դուրս եկավ մեկ այլ խումբ՝ Զորոբաբել իշխանի գլխավորությամբ:

Վերադարձի բերկրանքը, որ լեցուն է հույսերով, արտացոլվել է ԿԵ, ՃՁ, ՃԻԳ, ՃԻԵ, ՃԻԸ սաղմոսներում: ՃԻԵ սաղմոսն սկսվում է հետևյալ խոսքերով.

Երբ Տերը Սիոնը վերադարձրեց գերությունից,

մենք մխիթարվեցինք:

Այնժամ մեր բերանները խնդությամբ լցվեցին

ու մեր լեզուները՝ ցնծությամբ:

¹ Հայերեն Ա. Գրքում էլ նույնն է – խմբ.:

Սակայն դաժան իրականությունը հավատքի իսկական փորձություն եղավ: Վերադարձողները կատարյալ ամայացված երկիր գտան: Նրանք կարող էին բնակվել միայն Երուսաղեմում և դրա շրջակայքում: Բոլոր կողմերի հողերը զավթել էին թշնամական ցեղերը: Ժամանակավոր կացարանները, սովը, մշտական վտանգը հարևանների կողմից՝ երկմտանքի մեջ նետեցին թերահավատներին: Սակայն մեծամասնությունն ապրում էր հույսով, երբ վերականգնվի Տաճարը, Աստված Իր օգնությունը կառաքի: Սամարացիները կամենում էին մասնակցել շինարարությանը, սակայն ժողովրդի առաջնորդները, երկյուղելով խախտել հավատքի անապականությունը, հպարտությամբ մերժեցին նրանց:

3. Երկրորդ Եսային Երուսաղեմում (զլ. ԾՁ-ԿՁ): Գերություն մեծ մարգարեն վերադարձավ հայրենադարձների առաջին խմբերից մեկով: Նա տեսավ մարդկանց հուսալքությունը, տեսավ, որ ազնվականությունը հոգ չի տանում ժողովրդի մասին, և դատապարտեց մոլորությունները նրանց, որ Համայնքն անձեռնմխելի էին ուզում դարձնել այլազգիների համար: Նա դիտում էր իրեն որպես Մեսիա-Սպասավորի կարապետ:

Տիրոջ Հոգին ինձ վրա է,
դրա համար իսկ նա օժեց ինձ,
ուղարկեց ինձ՝ ավետարանելու աղքատներին,
բժշկելու սրտով բեկվածներին,
գերիներին ապատություն քարոզելու
և կույրերին՝ տեսողություն,
հռչակելու Տիրոջ ընդունելի տարին
և մեր Աստծու վրեժխնդրության օրը,
մխիթարելու բոլոր սգավորներին:

(ԿԱ 1-2)

Իբրև Աստծու Թագավորության ավետաբեր՝ մարգարեն հայտնվեց որպես Քրիստոս Փրկչի նախակերպար, Ով գնալով քարոզելու, Իր մասին խոսում է Երկրորդ Եսայու բառերով (Ղուկ. Դ 14-22), սակայն բաց թողնելով «մեր Աստծու վրեժխնդրության օրը» հատվածը:

Մարգարեն Իսրայելը պատկերում է իբրև Եկեղեցի. նրա վրա է իրականանում Մովսեսին ասված խոսքերը (Ելք ԺԹ 6): ԿԳ 1-6 առակում անապատից եկող Աստված նմանեցված է միայնակ խաղողագործի: Նա մարդկանցից կարեկցանք և օժանդակություն է սպասում, սակայն ոչ ոք չկամեցավ աշխատել Նրա հետ:

Իբրև բարեպաշտության արտաքին նշան մարգարեն շաբաթները պահելն է հիշում (ԾՁ 2), սակայն գլխավոր շեշտը դնում է «իրավունքի» և «ար-

գարուիթյան» վրա¹: Եվ զգուշացնում է զերժ մնալ պատվիրաններն ու պահքը ձևականորեն պահելուց.

Այդպիսի ծոմապահությունը չէ, որ ես ընտրեցի, ...
 Քանի՜ր անհրավության հանգույցը,
 խորտակի՜ր քո վաճառականական խարդախությունն
 ու բռնությունը, ների՜ր ու արձակի՜ր նեղյալներին
 և պատռի՜ր բոլոր անհրավ մուրհակները:
 Քաղցածներին բաժանի՜ր քո հացը
 և անօթևան աղքատներին տար քո տունը.
 Եթե մերկ մարդ տեսնես՝ հագցրո՛ւ նրան,
 բայց քո ընտանիքի վավակին մի՛ անտեսիր:

(ՃԸ 5-7)

Մարգարեն չի արգարացում սամարացիների մերժումը: Հինկտակա-
 րանյան Եկեղեցի կարող է մտնել ամեն ոք, որ «հարել է Տիրոջը».

Իսկ այն այլապահներին, որոնք եկել յարել են Տիրոջը ...
 Նրանց կը տանեմ իմ սուրբ լեռը ...
 նրանց ողջակէպներն ու ընծաներն
 ընդունելի կը լինեն իմ սեղանի վրայ,
 քանպի իմ Տունը ԲՈԼՈՐ ՀԵԹԱՆՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ
 աղօթքի Տուն պիտի կոչուի:

(ՃՁ 6-7)

Երկրորդ Եսային վտանգ է տեսնում նաև նրանց նախանձախնդրուիթյան
 մեջ, որ ձգտում են արագ կառուցել Տաճարը: Փրկուիթյունը սրբարանի քա-
 րերի և շենքի մեջ չէ: Գլխավորը Տաճարն ու ծեսերը չեն, այլ կյանքը Աստծու
 կամքով.

Այսպես է ասում Տերը.
 Երկինքն իմ այժոռն է,
 և երկիրը՝ իմ ոտքերի պատվանդանը:
 Ինչ տուն պիտի շինեք ինձ համար, – ասում է Տերը, –
 և կամ իմ հանգստեան տեղն ինչպիսի՞ն պիտի լինի:
 ՉԸ որ այդ ամենն իմ ձեռքը պատրաստեց,
 և ամեն ինչ իմն է, – ասում է Տերը. – ու ես ո՞ւմ եմ նայելու,
 եթե ոչ հեկերին ու խոնարհներին և նրանց,
 ովքեր դողում են իմ խոսքից:
 Բայց անօրենը, որ ինձ ել է զոհաբերում,
 նույնն է, թե մարդու զանգ է ջախջախում,

¹ Ռուսերենում համապատասխանաբար՝ արդարության և դատաստանի – խմբ.:

իսկ նա, որ ոչխար է պոհաբերում,
 նույնն է, թե շուն է մորթում,
 իսկ նա, որ ընտիր ալյուր է ընծայաբերում,
 նույնն է, թե խուփ արյուն է թափում,
 իսկ նա, որ հիշատակների խնկարկման համար
 կնդրուկ է մատուցում,
 նույնն է, թե հայհոյում է:

(ԿՁ 1-3)

Այս մերկացնող խոսքերում մենք լսում ենք Տիրոջ այն նույն ահեղ ձայնը, որ հնչել էր երկու դար առաջ՝ մեծ Յսայու միջոցով: Մարգարեն, որ Բաբելոնում մխիթարում էր պանդուխտներին, այժմ կրկին դառնում է ժողովրդի խստապահանջ ուսուցիչ: Թերահավատություն, խանդավառության կորուստ, որ տիրում էր մարդկանց սրտերում նոր ելքի ժամանակ, գոյություն ծանր պայքար ավերված հողի վրա. ահա այսպիսին էր հինկտակարանյան Եկեղեցու ամենօրյա կյանքը: Իսրայելը չվերականգնվեց: Կազմավորվեց փոքրիկ մի մարզ՝ Յեհուդա¹, որ մտավ Պարսկական կայսրության մեջ: Ինքը մարգարեն ևս կարող էր հիասթափություն ապրել: Նա հարցնում էր Աստծուն, թե ինչո՞ւ հրայտվեցին Նրա հրաշքներն ինչպես Մովսեսի օրերում (ԿԳ 11-17): Երկրորդ Յսայու աղոթքն ավարտվում է ողբաձայն աղերսով՝

Եթե բացես երկինքը ...

(ԿԴ 1)

Սակայն մարգարեի հավատքը դիմացավ բոլոր փորձություններին: Նա գիտեր, որ ժողովրդի մեղքերը հեռացնում են Աստծու մտահղացումների իրականացումը: Բայց կգա օրը, և կկատարվի խոստումը: Դարձյալ կշողարձակի Երուսաղեմը՝ պարուրված Հոգով, որ իր մոտ կձգի բոլոր մարդկանց:

Լուսավորվիր, լուսավորվիր, Երուսաղեմ,
 քանզի հասել է քո լույսը,
 և Տիրոջ փառքը քեզ վրա է ծագելու: ...
 Թագավորները զայու են դեպի քո լույսը,
 հեթանոսները՝ դեպի քո լույսի փայլը:

(Կ 1, 3)

Նոր Ուխտ կշնորհվի, և ողջ աշխարհը կվերակերպվի: Ինքը՝ Տերն է ազդարարում՝

Քանի որ նոր երկինք ու
 նոր երկիր պիտի ստեղծեն,
 առաջվաններն այլևս չպիտի հիշեն

¹ Եբր. יהודה Յեհուդա – Հրեաստան – խմբ.:

Նա դիմում է Դավթի սերնդից իշխան Զորոբաբելին, հիշեցնելով նրան, որ Աստծու խոստումն անբեկանելի է: Աստված խոստանում է, որ նոր Տաճարի փառքը կգերազանցի հինին:

Այս մարգարեությունն իրականացավ, երբ Երկրորդ Տաճարում քարոզեց Քրիստոս:

Անգե մարգարեն սովորեցնում էր, որ հույսը պետք է խարսխվի Ուխտի և Խոստման ամուր հիմքի վրա: Այն, ինչ խոստացել է Աստված, կիրականանա հակառակ ամեն տեսակի խոչընդոտների: Երբ վերականգնվի սրբարանը, Աստված կհայտնվի աշխարհում: Մարգարեության մեջ նրա գալուստը նկարագրված է իբրև հին աշխարհի հիմքերի սասանում: Այս վախճանաբանական պատկերները պիտի ցույց տան Եահվեի մեծությունը աշխարհի բոլոր տերությունների համեմատ (Բ 6-7):

Զորոբաբելը կոչված է իրականացնելու Աստծու գործը: «Այն օրը, - ասում է Ամենակալ Տերը, - Սաղաթելի որդի Զորոբաբել, ես քեզ իմ ծառային, պիտի վերցնեմ եւ հաստատեմ որպէս կնիք, քանի որ դու հաճո եղար ինձ», - ասում է Ամենակալ Տերը» (Բ 23): Կնիքն այստեղ խորհրդանշում է մարդուն պատկանող և նրա համար թանկ մի բան: Այսպիսով Երուսաղեմի իշխանը մարգարեության մեջ Օծյալ է կամ Աստծու Օծյալի՝ Մեսիայի նախակերպարը:



Անգե մարգարե: Մարգարեների գրքից մանրանկար, Հոռոմ, Վատիկանի գրադարան (XIII դ.):

Ինչպես կարծում են մեկնիչներից շատերը, Անգե մարգարեն հուսով էր, թե մեսիականությունը կշնորհվի Զորոբաբելին՝ Դավթի որդուն: Եվ այս հույսը կարող էր վստահության փոխվել, թե Աստծու Թագավորությունը կսկսվի անմիջապես Տաճարը վերականգնելուց հետո: Մեր առջև ևս մի օրինակ է, թե որքան է կրճատվում ժամանակի հեռանկարը՝ ապագայի մարգարեական կանխատեսության ժամանակ: Սակայն Զորոբաբելի ճակատագիրը ցույց տվեց, որ Մեսիան դեռ չի եկել: Երկրորդ Տաճարն օծելուց հետո Զորոբաբելն անհետանում է պատմության բեմից: Ս. Ն. Տրուբեցկոյը ենթադրում է, որ նա գլխավորել է մեսիական ապստամբությունը Երուսաղեմում, որ պարսիկները ճնշեցին (հմմտ. Ա Եզր. Դ 15)¹: Մեկ այլ ենթադ-

¹ Զայրենում Բ Եզրաս Դ 15 - խմբ.:

րուծյան համաձայն *Զորոբաբելն Յեհուդում իշխանի պաշտոնից հեռացվել է և տարվել Բաբելոն*։

Անգեի գիրքը Մեսիայի գալստյան հանդեպ հավատի վկայություն է, որ հնչել է այն պահին, երբ համընդհանուր շփոթությունն ու թերահավատությունն էին իշխում։

5. Չաքարիա մարգարեն (եբր. *חִירְיָא* – ՉԵԽԱՐՅԱՎ) Անգեի գործակիցն էր, որի գրքում բերված է *Չաքարիայի ազգաբանությունը, ինչից հետևում է, որ նա անվանի ազգից էր*։ Ուշ ավանդության համաձայն *Չաքարիան Երուսաղեմ է եկել երիտասարդ տարիքում և մահացել է խոր ծերության ժամանակ, երբ Մեծ Ժողովի անդամ էր* (օրենուսույցների խումբ, որ մեկնում էր Գիրքը և բանավոր օրենքները)։

Չաքարիա մարգարեի հիշատակը Եկեղեցին տոնում է փետրվարի 8-ին¹։

Մարգարեի գիրքը երկու մասի է բաժանվում, որոնց միջև մի շարք տարբերություններ կան. առաջինը (գլ. Ա-Ը)¹ ճշգրիտ թվագրված է, և վերաբերում է 520 թվականի վերջին։ Մարգարեությունների բովանդակությունը սերտորեն կապված է Տաճարի վերականգնման և *Զորոբաբելի շրջանի հետ*։ Երկրորդը (Թ-ԺԴ) գրված է վախճանաբանական ոճով։ Այստեղ արդեն չի խոսվում ո՛չ *Զորոբաբելի*, ո՛չ պարսիկների և ո՛չ Տաճարի վերաշինության մասին։ Մարգարեությունը ի նկատի ունի ոչ միայն երուսաղեմյան Համայնքի ճակատագիրը, այլ նաև աշխարհի ճակատագիրը։ Մեկնիչների մեծամասնությունն այս մասը վերագրում է անհայտ մարգարեի (որ հնարավոր է նույնպես *Չաքարիա* անունն է կրել), որ ապրել է Ք. ծ. ա. Դ-Գ դարերի միջև, երբ մեծացավ հույների (Հոնիայի որդիների – տևն Թ 13) քաղաքական գորությունը։

Չաքարիա մարգարեի գրքի առաջին մասի աստվածաբանությունը մեսիական բնույթ ունի։ Մարգարեի խոսքը հիմնականում հետևյալ բովանդակության են. ա) *Տաճարի և Երուսաղեմի վերածնունդ*,



Չաքարիա մարգարե։ Մանրանկար մարգարեների գրքից, Հռոմ, Վատիկանի գրադարան (XIII դ.)։

¹ Հայ Առաքելական Եկեղեցին տոնում է երկու անգամ. ԺԲ փոքր մարգարեների տոնի ժամանակ (Մանդյան երրորդ կիրակիին հաջորդող երեքշաբթի օրը) և Հոգեգալստյան Ե կիրակիին հաջորդող երեքշաբթի օրը – խմբ.։

բ) ժողովուրդների դարձը և մեսիական թագավորությունը, որը հաղթահարում է համաշխարհային չարը, գ) առաքինությունն իբրև ճշմարիտ ծառայություն Աստծուն, դ) մեսիական իշխանության երկակի բնույթը (թագավորություն և քահանայություն):

Զաքարիայ մարգարեի գրքի տեսիլքները ձևով և ոգով մոտ են Եզեկիելի տեսիլքներին: Դրանք խոսում են անմարմին զորությունների (հրեշտակների) մասին, որոնք մասնակից են համաշխարհային պատմությանը: Խորհրդավոր անձինք շրջում են աշխարհով. ամենուր խաղաղություն է և անդորր, միայն Երուսաղեմն է տառապում: Մարգարեն չորս եղջյուր է տեսնում՝ համաշխարհային տերության խորհրդանիշը: Նրա տարածքներում սփռված են Ուխտի որդիները: Այժմ Աստված նրանց կոչ է անում վերադառնալ Աստծու Տան լեռան մոտ:

Հովսեփեկի որդի Հեսուն՝ (եբր. צפורה - Իեօֆորա) մեծ քահանայապետը, կեղտոտ հագուստներով է կանգնում է մարգարեի առջև: Նա մարմնավորում է ժողովրդին, որ իր վրա կրում է մեղքի գրոշմը: Այդ մեղքն առաջացել է սատանայի ներշնչմամբ (այստեղ Հին Կտակարանում առաջին անգամ սատանան անվամբ է հիշվում): Բայց Աստված իշխանություն ունի ներելու: Նա ժողովրդի միջնորդին վերադարձնում է նրանից վերցված արքայական խորհրդանիշները: Եվ հնչում է Աստծու ձայնը. «Բայց լսիր, Հեսու մեծ քահանա, դու և թո մերձավորները, որ նստած են թո առաջ, քանսի նրանք գիտակ կանխատես մարդիկ են: Ահա ես բերում եմ իմ ծառային՝ Շառավիղին, քանի որ այն քարի վրա, որ դրեցի Հեսուի դիմաց, յոթը աչքեր կան. ահա ես խորխորատ պիտի փորեմ, - ասում է Ամենակալ Տերը, - և պիտի շոշափեմ այդ երկրի ամբողջ անօրենությունը մեկ օրում» (Գ 8-9):

Շառավիղը (եբր. חַרְצִיָּה) խորհրդանշում է Մեսիային, որ կաճի ինչպես ճյուղ՝ Դավթի տան կտրված արմատից (հմմտ. Եսայի ԺԱ 1): Մարգարեն իմացել է, որ Մեսիայի գալստյամբ մարդկանց մեղքերի թողություն կտրվի: Այդ մեղքերը ներկայացված են մեծ մագաղաթի¹ տեսքով, ինչպես և «Էփի»² տեսքով, անօրինության չափանիշի, որ կանայք հեթանոսական Բաբելոն են տանում (կանանց մասնակցությունն ակնարկ է քանանյան ծեսերի, որոնց համար պատժվեց Իսրայելը):

Մարգարեն տեսնում է հրեշտակների մարտակառքերը, որ պաշտպանում են Տիեզերքը: Հատուցման քամին, որ փչում էր հեթանոսական երկրներից, նորից ետ է վերադառնում, որ այլևս չսուրա Երուսաղեմի վերևում (Չ 1-8):

Տերը մարգարեին հրամայում է երկու պսակ պատրաստել. արքայական և քահանայական: Դրանք երկուսն էլ պատկանում են Զորոբաբելին, որ

¹ Հայերենում՝ թռչող գերանդի - Ծան. թարգմ.:

² Հրեական չափման միավոր, մոտ. 22 լիտր. տես նաև Ելք Ժ2 36, Ղևտ. ԺԹ 36, Դատ. 2 19, Հոուլթ Բ 17, Ա Թագ. Ա 24 - խմբ.:

Մեսիայի նախակերպարն է: Ինչպես Անգեն, Զաքարիան ևս հույս ունեն, որ մարգարեությունը կկատարվի ի դեմս Զորոբաբելի: Սակայն Աստծու հայտնություն հոգևոր իմաստն այն է, որ Դավթի ցեղին տրված խոստումը կատարվելու է:

6. Երկրորդ Տաճար (Ա Եզր Ե-Չ): Անգե և Զաքարիա մարգարեների ազդեցությամբ Զորոբաբելը և Հեսու քահանայապետը ձեռնարկեցին Տաճարի կառուցումը: Տեղեկանալով Երուսաղեմում տարվող աշխատանքների մասին՝ Այսրգեստյա նահանգի (սրան էր կցված նաև Յեհուդ գավառը) կառավարիչն անհանգստացավ և հրեաներից բացատրություն պահանջեց: Զորոբաբելը պատասխանեց, որ Տաճարը վերականգնել վճռել էր դեռևս Կյուրոս թագավորը: Կառավարիչն այս պատասխանը փոխանցեց Դարեհին, որը դրանով լիովին բավարարվեց: Դեռ ավելին, համոզվելով, որ Յեհուդում հեղաշրջման մասին չեն մտածում, թագավորը միջոցներ ուղարկեց «Երուսաղեմում Աստծու Տան» կառուցման համար: Օժանդակում էին նաև օտարության մեջ գտնվող հրեաները:

Զորոբաբելի հաջողություններով բարձրացավ նրա հեղինակությունը: Քաղաքացիների երկրից Երուսաղեմ մարդ էին ուղարկում՝ կրոնական հարցերով խորհուրդ ստանալու: Ի մասնավորի հարցնում էին՝ արդյո՞ք պետք է պահքով ճնշել մարմինը Տաճարի կործանման սգո օրը¹: 518 թվականին Զաքարիա մարգարեի միջոցով տրված պատասխանը հին պրոֆետիզմի բարձր ոգով էր, պահքը մարդկային գործ է: Իսրայելի մեղքը ոչ թե պահքը խախտելու մեջ է, այլ պատվիրաններից նահանջելու: Իսկ ի՞նչ է պահանջում Տերը:

«Արդար դատո՞ւմ դատեցեք, ողորմություն և գթություն արեք յուրաքանչյուրն իր եղբորը: Մի կեղեքեք այրուն, որբին, պանդխտին և տնանկին: Թող ոչ ոք իր սրտում ռի չպահի իր ընկերոջ դեմ՝ նրա գործած չարիքների համար» (Չաք. Է 9-10):

515 թ. մարտի 12-ին Տաճարը հանդիսավորապես օծվեց: Օրը համընկել էր Պասեքի տոնակատարությանը: Դա մեծ հույսերի օր էր: Մարդիկ հավատացած էին, որ հեռու չէ այն օրը, երբ Տերն Անձամբ Իրեն կհայտնի աշխարհին: Բայց իրականում հինկտակարանյան Եկեղեցին դեռ շատ դժվարություններ պիտի կրեր, մինչ գար «ժամանակի լրումը»:

¹ Իսրայելի ծանր օրերի համար նշանակված էր պահքի օրեր: Դրանք չորսն էին. ա) տասներորդ ամսվա տասներորդ օրվա պահք - երբ սկսվեց Երուսաղեմի պաշարումը Նաբուգոդոնոսորի կողմից (Դ Թագ. ԻԵ 1), բ) չորրորդ ամսվա իններորդ օրվա պահքը - երբ սկսվեց Երուսաղեմի պարսպի կործանումը (Երեմ. ԾԲ 5-7), գ) Տաճարի և քաղաքի հրկիզման օրը, հինգերորդ ամսվա յոթներորդ օրը (Դ Թագ. ԻԵ 8), դ) Գողողիայի սպանության օրը՝ յոթներորդ ամսում (Դ Թագ. ԻԵ 25) - խմբ.:

Հարցեր կրկնության համար

1. Ինչի մասին է Եզրասի Ա գիրքը:
2. Երբ է այն գրվել:
3. Ինչպես եղավ վերադարձը Գերությունից:
4. Երուսաղեմում ինչ էր քարոզում Երկրորդ Եսային:
5. Ո՞րն էր նրա հույսն ապագայի նկատմամբ:
6. Ինչ հանգամանքներում և երբ էր քարոզում Անգեն:
7. Ինչ կոչ էր անում նա Չորոբաբելին:
8. Ինչ է հայտնի Չաբարիա մարգարեի և իր գրքի մասին:
9. Որո՞նք են Չաբարիա մարգարեի աստվածաբանության հիմնական գծերը:
10. Ո՞րն է նրա մեսիական մարգարեությունը:
11. Ինչպես վերականգնվեց Երկրորդ Տաճարը:
12. Չաբարիան ինչ էր ուսուցանում պահքի մասին:

§ 18. Ե դարի կրոնական ճգնաժամը: Մաղաքիա մարգարե: Հովնանի գիրքը

(515–445 թվականներ)

1. Կրոնական ճգնաժամի պատճառները: *Չորոբաբելից մինչ Եզրասս սրբազան պատմության իրադարձությունները արտացոլած չեն Աստվածաշնչում: Անկասկած սա հոգևոր խոր անկման և հուսալքության շրջան էր: Սա համեմատելի է Եկեղեցու պատմության այն շրջանի հետ, երբ երեբաց Երկրորդ Գալստյան շուտափույթ լինելու հավատը: Մարդկային հաշվարկներն ու ծրագրերը չեն համընկնում աստվածային Նախախնամության հետ: Մարդիկ անհամբեր սպասում էին, որ կգա Աստծու Թագավորությունը, սակայն տարիներն անցնում էին, և ոչինչ չէր փոխվում: Եվ դեռ ավելին՝ արտաքին իրադարձությունները ողբալի էին:*

Չորոբաբելից հետո պարսիկները Երուսաղեմում նոր կառավարիչ չնշանակեցին: Յեհուզը ենթարկվեց Սամարիայի կուսակալին: Սրանով առավել խորացավ սամարացիների հետ հակամարտությունը: Ժողովուրդը կարիքից ճնշված էր և կքած հարկերի ծանրության տակ: Ունևոր խավը հարստանում էր աղքատների հաշվին. պարտքերի դիմաց նրանց ստրկացնում էին: Շատ հրեաներ ամուսնանում էին հեթանոս կանանց հետ: Նրանց երեխաներն արագ մոռանում էին մայրենի լեզուն և հավատը: Հայտնվեցին կասկածամիտներ, որ հերքում էին Աստծու Նախախնամությունը: Փաստորեն հինկտակարանյան Համայնքը բարոյապես և հոգեպես մարեց՝ առջևում հեռանկար չտեսնելով: Դաժան իրականությունը փշրեց բոլոր հույսերը:

2. Մաղաքիա մարգարեն հիշյալ աղետալի շրջանի վերջին մարգարեն էր: Նրա մասին ոչինչ հայտնի չէ: Նրա անունը (եբր. יכאֵלִים – ՄԱԼԵԱԼԻՄ – Իմ ուղարկածը) հնարավոր է խորհրդանշական կեղծանուն է: Քարոզիչն իրեն ավետաբեր էր համարում, որին Աստված ուղարկել է հրեաների մոտ, որպեսզի հուսահատության օրերին նրանց ոգին բարձրացնի:

Մաղաքիայի գիրքը յուրահատուկ կառուցվածք ունի: Այն Աստծու, որ խոսում է մարգարեի միջոցով և կասկածողների հետ երկխոսությունն է: Այստեղ լրացված է նախորդ մարգարեների ուսմունքը, որոնք շեշտը դնում էին Աստծուն ծառայելու բարոյական կողմի վրա: Մաղաքիան, չհերքելով այդ, ցույց է տալիս, որ ծեսերի հանդեպ անփութությունը չի կարելի արդարացնել: Աստվածպաշտության արտաքին ձևերը բարեպաշտության արտահայտությունն է, և եթե այն կատարվում է անփութորեն, ապա դա վիրավորում է Աստծուն (հմմտ. Երեմ. ԽԸ 10):

Մաղաքիան հիշեցնում է Հակոբի ընտրությունը, որպեսզի ամրացնի հավատը նրանց, որ տարակուսում են Իսրայելի հոգևոր կոչման վրա: Աստված Իր ազատ ցանկությանը Իր համար նշանակեց Հակոբին, իսկ Եսային, որ երկրային բարիքները նախընտրեց (Ճննդ. ԻԵ 27-34) «ատեց»: Այս բառը ոչ թե սովորական իմաստով նշանակում է «ատել», այլ պակաս նախընտրել (հմմտ. Ղուկ ԺԴ 26): Հակոբ-Իսրայելի բաժինը եղավ Ուխտը և Օրենքը: Մինչդեռ Եզոմը դարձավ սովորական, մյուսներից չտարբերվող, մի թագավորություն. ընդ որում՝ այն բազում վնասներ հասցրեց եղբայրական ժողովրդին:

Պատասխանելով նրանց, որ այլևս չեն հավատում Աստծու արդարագատությունը (Բ 17), մարգարեն խոսում է Եահվեի գալստյան մասին, որից առաջ կգա մեծ ավետաբերը (Հրեշտակ) (Գ 1-2): Հետագայում այդ Ավետաբերը դարձավ Քրիստոսի Կարապետ Հովհաննեսը (Մարկ. Ա 1-2):

Այն, որ Իսրայելը չվերացավ աշխարհի երեսից, ինչպես շատ այլ ազգեր, ոչ թե նրա շնորհքն է, այլ Փրկիչ Աստծու Նախախնամության արդյունք (Գ 6): Եվ անկախ այն բանից, թե ինչ փորձություններ են սպասվում Համայնքին, Աստծու խոսքն անբեկանելի է: Աստված կգա, Իրեն կհայտնի աշխարհին և կհաստատի Իր Թագավորությունը: Նրա ճանապարհը կպատրաստի Եղիա մարգարեն, որ նորից կուղարկվի երկիր: Հենց նա կլինի Ավետաբեր-Հրեշտակը:



Մաղաքիա մարգարե: Քրիստոսի Հարության եկեղեցու որմնանկար, Բերիա (XIV դ.):

Այս մարգարեության իմաստը բացահայտվում է Քրիստոսի՝ Հովհաննես Մկրտչի մասին ասած խոսքերում, որ Հրեաստանը պատրաստեց ավետարանական քարոզի համար (Մատթ. ԺԱ 14):

3. Հովնան մարգարեի գիրքը: Շատ աստվածաշնչագետների կարծիքով այս նույն շրջանում է գրվել Հովնան մարգարեի գիրքը: Սա հիմնվում է Հովնան Ամաթի որդու պատմական ավանդության վրա, որ քարոզել է Ը դարում՝ հյուսիս-իսրայելյան թագավորությունում (Դ Թագ. ԺԴ 25): Սակայն բնույթով գիրքը տարբերվում է մարգարեական մյուս գրվածքներից՝ ավելի շատ եղիպյի և եղիսեի մասին պատմություններ հիշեցնելով: Գրքում առատ են արամեաբանությունները և արտահայտությունները, որ բնորոշ են հետգերության շրջանին: Այն գրվել է հավանաբար Նինվեի անկումից շատ տարիներ անց (612 թ.): Ասորեստանի մայրաքաղաքը հեղինակը պայմանականորեն է պատկերել, իբրև ինչ-որ հեթանոսական քաղաք: Այն անհավանական չափերի է՝ «երեք օրվա ճանապարհ», այսինքն՝ մոտավորապես 90 կմ տրամագծով: Պատմական Նինվեն անհամեմատ փոքր էր (պարսպի պարագիծը կազմում էր 12 կմ): Անցյալում նկարագրվածի չափերի մեծ քաղաքներ չեն եղել:

Ինչպես բացատրում է Ա. Կնյազև քահանան, Հովնանի գիրքը «միզրաշ է, այսինքն պատմության ազատ մեկնաբանություն, որ գրվել է ուսուցողական նպատակներով»: Ուստի հարց է առաջանում. որո՞նք են այդ նպատակները:

Եսայի մարգարեի դպրոցը հինկտակարանյան եկեղեցուն կոչ էր անում Տիրոջը վկայել բոլոր ժողովուրդների առջև: Մինչդեռ հրեաները, որ խմբված էին Յեհոզ գավառում, ոչ միայն չէին ձգտում հեթանոսներին քարոզել իրենց հավատքը, այլև խուսափում էին անգամ սամարացիներից: Նրանք սպասում էին հեթանոսական թագավորությունների կործանմանը և չէին կամենում նրանց դարձին:

Հովնանի գրքի աստվածաշունչ հեղինակը նման կրոնական ազգայնամոլության դեմ է հանդես գալիս: Նա կոչ է անում Տիրոջ անունը քարոզել այլազգիների մեջ:

Պատումի գլխավոր հերոսը՝ Հովնանը, ծանոթ է Աստծու գթասրտությանը: Նա վստահ է, որ եթե հեթանոսներն ապաշխարեն, Աստված կներ ի նրանց: Ինքն անձամբ չի կամենում, որ նրանք փրկվեն, ուստի որոշում է թաքնվել Աստծուց: Իր միամտությամբ նա որոշում է հեռավոր մի երկիր մեկնել (Թարսիսը Իսպանիայում է), հուսալով, որ այնտեղ անհասանելի կլինի Աստծու ձեռքի համար: Բայց ահա ծովն ալեկոծվում է: Սարսափահար նավավարներն սկսում են աղոթել իրենց աստվածներին, իսկ Հովնանը, գիտակցելով, որ իր փախուստը մեղք է, չի համարձակվում աղոթել: Նա նավամբար է իջնում և քնում: Եվ երբ պարզվում է, որ աղետի պատճառն ան-

հնազանդ մարգարեն է, ուղեկիրցները կամենում են փրկվել, սակայն նրան չվնասելով: Այն, որ հեղինակը հեթանոսներին պատկերում է դրական կողմերով, լիովին համապատասխանում է գրքի ընդհանուր իմաստին: Վերջիվերջո Հովնանին ծովն են նետում, ուր նրան կուլ է տալիս մեծ ձուկը (եբր. 707A 27 – 707B 9-11):

Պատումը բնույթով առակի է նման, որ ինքնըստինքյան բացառում է նման հրաշքի իրական լինելը: Սակայն հավատացյալի ընկալմամբ այն լիովին հնարավոր է: Արարիչը, որ ստեղծել է ծովային հրեշին, կարող է նաև այնպես անել, որ կուլ տված մարդը ողջ մնա (տես այս պարբերության Յավելվածը):

Ձուկը երրորդ օրը դուրս է փսխում Հովնանին ափ, և նա ստիպված է լինում Նինվե գնալ: Այնտեղ նա ազդարարում է, որ եթե ժողովուրդը չապաշխարի, ապա երեք օրից քաղաքը կկործանվի: Մարգարեն չէր սպասում, թե իր խոսքերն այդպիսի ազդեցություն կթողնեն: Նինվեի բոլոր բնակիչներն քուրձ հագան ու մոխրի վրա նստեցին ու ապաշխարեցին իրենց մեղքերից: Հովնանն սպասում էր, թե հեթանոսները պատժի կարժանան: Նա նստած է Նինվեի մերձակայքում, ստվերում մի թփի, որ Աստված մի գիշերվա ընթացքում աճեցրեց նրա համար: Երեք օրն անցնում է, և Հովնանը համոզվում է, որ Աստված ներել է մեղավորներին: Նա բորբոքվում է, մահ է խնդրում իր համար, և հանկարծ նկատում է, որ իրեն ստվերող բույսը թորշոմել է: Դրանից նա ավելի է հուսահատվում: «Տերն ասաց. «Դու ափսոսացիր դրմենուն, որի համար ոչ մի ջանք չթափեցիր, չսնեցիր այն. նա գիշերը բուսնեց և մյուս գիշեր կորավ: Իսկ ես չիմայնեմ Նինվե մեծ քաղաքին, որտեղ ապրում են ավելի քան հարյուր քսան հազար մարդ, որոնք իրենց լավն ու վատը չիմացան, ինչպես նաև շատ կենդանիներ» (Դ 10-11):

Սրբազան հեղինակը պատկերավոր գծերով է նկարում Հովնանի բնավորությունը՝ պոռթկուն, կրքոտ, համառ: Նրան տրված դասն առկա է գրքի վերոբերյալ բառերում. Աստված սիրում է բոլոր ժողովուրդներին: Եվ անգամ Իսրայելի թշնամիներին՝ նինվեացիներին փրկություն է կամենում: Ընդհանրականության (ունիվերսալիզմ) այս վեհ խոսքերը և քարոզությամբ զբաղվելու կոչը հնչեցին այն ժամանակ, երբ հրեաներն սկսեցին ցրվել ազգերի մեջ: Ավելի ուշ այն արտահայտվեց Տոբիթի գրքի տողերում:

*Իսրայելի որդիներ, պաշտեցե՛ք նրան հեթանոս ապգերի առջև,
որովհետև նա մեզ ցրեց նրանց մեջ.*

պատմեցե՛ք նրա մեծության մասին,

բարձրացրե՛ք նրան բոլոր կենդանի մարդկանց առջև:

(ԺԳ 3-4)

Քրիստոս Փրկիչ, դատապարտելով փարիսեցիների համառությունը, ասում է. «Նինվեի մարդիկ դատաստանի ժամանակ այս ապգի դեմ պիտի դուրս

զան» (Մատթ. ԺԲ 41), այսինքն հեթանոսների դարձը՝ կամաչեցնի Իսրայելի մեջ համառ եղողներին: Իր գերեզմանում երեքօրյա մնալը Քրիստոս խորհրդավորաբար կկոչի «Հովնան մարգարեի նշան» (Ղուկ. ԺԱ 29–32): Հրեշի փորից Հովնանի փրկվելը ցույց է տալիս Տիրոջ իշխանությունը կյանքի և մահվան վրա: «Ուժը, որ փրկեց և նորոգեց Հովնանին, այն նույն ուժն է, որ իր ողջ զորությունը հայտնվեց Քրիստոսի Հարություն ժամանակ, հաղթելով մահն ու Նրան բարձրացնելով դեպի նոր, շմեռնող կյանքի, որի վրա մահն այլևս ոչ մի իշխանություն չունի: Այս իմաստով Հովնանի փրկությունը նախապատկերում է Քրիստոսի Հարությունը: Բայց, անշուշտ, ո՛չ Հովնանը, ո՛չ Հովնանի գրքի հեղինակը նախապես չէին կարող իմանալ Քրիստոսի Հարության մասին: Հին Կտակարանի տիպաբանական մեկնությունը հնարավոր դարձավ լոկ այն ժամանակ, երբ ի հայտ եկան նորկտակարանյան գիտելիքները, որ հավատացյալներին թույլ էին տալիս, իրենց առավել կատարյալ փորձառությունը ճանաչել այն ցուցումները, որ Աստված տվել էր Հին Ուխտում» (Ա. Կնյազև քհն.):

Առաջին քրիստոնյաները Հովնանի պատմությունը հաճախ էին պատկերում անձավների պատերին և տապանաքարերին: Հովնանի աղոթքը, որ ուղղված էր անդնդի խորքից Աստծուն (Չ. Բ) ճ-րգ երգի իրմոսի հիմքն է կազմում¹:

Հարցեր կրկնության համար

1. Ինչո՞վ էր պայմանավորված Զ. Ծ. ա. Ե դարի կրոնական ճգնաժամը:
2. Ինչո՞վ է բնութագրելի Մաղաթիա մարգարեի գիրքը:
3. Ի՞նչպես էր նա ոգևորում հուսահատվածներին:
4. Ըստ Մաղաթիայի ո՞վ է նախորդելու Մեսիայի գալստին:
5. Գրական ի՞նչ առանձնահատկություններ ունի Հովնանի գիրքը:
6. Ի՞նչ է գրքի բովանդակությունը:
7. Ի՞նչ է գրքի իմաստը:
8. Ո՞րն է դրա ուսուցողական նշանակությունը:

§ 18-ի հավելված

ԺԹ դարի «Հովնանը»

Ի՞նչ կենդանի է ի նկատի առնված Հովնան մարգարեի գրքում: Սինոդական թարգմանության մեջ բնագրի «մեծ ձուկ» կապակցության փոխարեն դրված է «մեծ կետածուկ»: Հրեից լեզվում «կետ» բառը բացակայում է:

¹ Կանոնի երգի 1-ին տողն է: Նման մեր եկեղեցու շարականների 8 ձայնային համակարգի սկսվածքին (ԱՁ.-ԴԿ.): Կանոնի 6-րդ երգը մեր *ողորմյա* շարականների նմանությունն ունեն – *խմբ.*:

Լևիաթան (եբր. לַוִּיָּתָן – ԼԻՎԻԱՏԱՆ) անվան տակ սովորաբար ընկալվում է ընդհանրապես ծովային հրեշ կամ քանանյան լոթան օձը, որ Քաոսի այլաբանությունն է: Ուստի սինոդական Աստվածաշնչի թարգմանիչը բոլոր հիմքերն ունեն «ձուկ» բառը «կետ»ով փոխարինելու համար¹: Մանավանդ հայտնի են դեպքեր, երբ մարդը կենդանի է մնացել մնալով «կետ ձկան փորում»: Նման մի դեպք բերվում է Բրիտանական Ծովակալության արխիվից: Խոսքն «Արևելքի Աստղ» նավի ծառայող Ջեյմս Բարթլիի մասին է, որ փրկվել է: 1891 թվականին նա մասնակցել է կետի որսին և, ինչպես վկայված է արձանագրության մեջ, ընկել է կետի երախը, ուր մի քանի ժամ մնալով՝ ողջ է մնացել: Նավաստիները նրան դուրս են բերել կետի փորից, երբ հարպունով վիրավորված կետը սպանվել էր: Արդյունքում Բարթլին կորցրեց տեսողությունը, սակայն ապրեց ևս 15 տարի և մահացավ հայրենիքում՝ Գլոչեստերում:

§ 19. Եզրասի և Նենմիի բարեփոխումները: Հուլթի գիրքը (Ե դարի կեսեր)

1. Եզրասի դերը հինկտակարանյան ավանդության մեջ: Հնուց ի վեր հրեա դպիրները մեծ նշանակություն էին տալիս Եզրասի գործունեությանը: Նրան ներկայացնում էին որպես մի երկրորդ Մովսեսի: Սա բացատրվում է նրանով, որ Եզրասը կարողացավ վերակազմավորել հինկտակարանյան Եկեղեցին՝ հիմնվելով Օրենքի սկզբունքների վրա: Նա առաջին անգամ ի մի բերեց հանդիսավոր կերպով անբողջական Հնգամատյանը որպես կրոնա-աշխարհիկ գործող իրավունք՝ դրանով իսկ Համայնքը դուրս բերեց երկարատև ձգձգվող ճգնաժամից:

Եզրասի Ա գրքից բացի նրան է վերագրվում ևս երկու գիրք, որ իր անունն են կրում՝ Բ գիրք Եզրասի (կազմված է Բ Մնացորդացից, Ա Եզրասից և Նենմիից) և Գ գիրք Եզրասի (մ. թ. Ա դարավերջի վախճանաբանական ստեղծագործություն):

Աստվածաշնչագիտության մեջ Եզրասի գրքից Նենմիի գիրքը (տե՛ս հտ. 2, § 17) ընկած ժամանակաշրջանն ընդունված է անվանել Վերականգնման: Սակայն այս անվանումն այնքան էլ ճիշտ չէ: Եզրասը ոչ թե հրեաներին ետ բերեց դեպի նախկին կարգերին, այլ ավելի շուտ նորից Համայնք ստեղծեց՝ միացնելով իրար խստագույն սկզբունքներով և կանոններով: Հենց նա ստեղծեց «Օրենքի պատնեշը», որն անթափանց պարսպով Հուդայականությունը բաժանեց հեթանոսությունից: Մի կողմից սա վնաս հասցրեց ժողովրդի հոգևոր կյանքին՝

¹ Հայերենում թարգմանված է կետ, վիշապաբռերով (Հոբ է 12, Սաղմ. 39 14, 69 26 և այլն) – խմբ.:

² Հայերեն Ս. Գրքի հետ տարբերությունների մասին տե՛ս Գ. Դարբիսյան, Ներածություն Հին Կտակարանի, Ս. Էջմիածին, 2000, էջ 127-131 – խմբ.:

դատապարտելով մեկուսացման, սակայն մյուս կողմից միայն Եզրասի վճռական քայլերով կանխվեց Համայնքի անխուսափելի տրոհումը:

Բնական է, հինկտակարանյան Եկեղեցին չի սահմանափակվում այս օրինականության ուղղությամբ միայն: Իմաստունների ավանդույթը, որ իր ծաղկմանը հասավ Եզրասից քիչ հետո (տե՛ս հտ. 2, §§ 20, 21, 22 հաջ.) ազատ էր օրինականության նեղ շրջանակից: Սակայն, վերջ ի վերջո, Եզրասի հետնորդները հուղայականության մեջ առավել ազդեցիկ եղան:

2. Ժամանակագրության խնդիրը: Քանի որ Եզրասի գիրքը ստեղծվել է արդեն նրա մահվանից հետո, շատ դրվագներ ժամանակագրական հերթականությամբ հանդես չեն գալիս: Մեկնիչները զգալի ջանքեր գործադրեցին, որպեսզի ճշգրտեն Եզրաս-Նեեմիի գրքում նկարագրված իրադարձությունների հաջորդականությունը:

Բնագրում դրանք բերված են հետևյալ հաջորդականությամբ՝ առաջինը Հուդա է գալիս Եզրասը (Արտաշես Ա-ի յոթներորդ տարում, Եզր. Է 7¹. այսինքն՝ 458 թ.): Եզրասն անմիջապես առանձնացնում է հրեաներին այլազգիներից: Իսկ արդեն 445 թվականին ժամանեց Նեեմիին և սկսեց կառուցել Երուսաղեմի պարիսպները: Դրանից հետո Եզրասը հրապարակայնորեն ընթերցում է Օրենքը և պաշտոնապես հայտարարում Համայնքի ստեղծման մասին՝ որ դեկավարվելու է Թորայի կանոններով:

1890 թվականին կաթոլիկ աստվածաշնչագետ Ա Հոոնակերը նշեց Գրքի այն վկայությունները, որ ժամանակագրական այլ հաջորդականության հնարավորություն տվեցին: Եզրասի գալու պահին պարիսպն արդեն կար (Եզր. Թ 9), իսկ Երուսաղեմը բնակեցված էր (Ժ 1): Եղիասիք քահանան, որին քաղաքում հանդիպեց Եզրասը, Նեեմիի ժամանակակիցն է, Հովնանի հայրը: Իսկ Նեեմին, խոսելով իր ժամանման վերաբերյալ, ոչինչ չի ասում Եզրասի մասին, ինչն անհնար է, եթե վերջինս իրոք այնտեղ լիներ: Հայրենադարձների ցուցակում, որ կազմել է Նեեմին (ԺԱ 3), խոսվում է միայն Զորոբաբելի քարավանի մասին: Եզրասի հետ եկածների մասին ոչինչ չի ասվում: Սրանից Հոոնակերը եզրակացրեց, որ «Արտաշեսի յոթներորդ տարին» ոչ թե Արտաշես Ա-ին է վերաբերում, այլ Արտաշես Բ Մնեմոնին² (404-359), ուստի Եզրասը Երուսաղեմ է եկել 397 թվականին: Սակայն Ելեփանտինե կղզում³ հայտնաբերված պապիրուսներից պարզվեց, որ այդ ժամանակ Նեեմին Հուդայում չէր, և այնտեղ կառավարելիս է եղել փոխանորդ Բագոյը: Մինչդեռ Աստվածաշնչում մատնանշված է, որ Նեեմին ներկա էր, երբ Եզրասն ընթերցում էր

¹ Զայերենում Բ Եզր. Է 7 – խմբ.:
² Զայերեն՝ Արտաքսերքսես Բ Զիշաբ (հուն.՝ μνημων – հիշողություն, հիշող): Այդպես են անվանել նրան հույները բացառիկ հիշողության համար – խմբ.:
³ Կղզի Ասուանի մոտ (Եգիպտոս) – խմբ.:

Օրենքը (Նենմ. Ը 9): *Դրա համար էլ աստվածաշնչագետները ենթադրեցին, թե սկզբնական տարբերակում եղել է ոչ թե «յոթներորդ տարում», այլ՝ «երեսուներկերորդ»։ Այս դեպքում Եզրաս-Նենմիի գրքի ժամանակագրությունը հետևյալ տեսքը կստանա.*

538	Վերաբնակների առաջին հոսքի վերադարձը	Աբեմենյան Կյուրոս II (մահ. 530) Կամբյուսես II (530-522)
515	Երկրորդ Տաճարի օծումը	Դարեհ Ա Մեծ (522-486)
486	Սամարացիների ամբաստանագիրը հրեաների վերաբերյալ	Քսերքսես (486-464), Ս. Գրբում՝ Արտաշես
464	Երուսաղեմի պարսպի կառուցման դադարեցումը	
445	Նենմիայի ժամանումը Երուսաղեմ	Արտաշես Ա (464-423)
428	Եզրասը ժամանում է Երուսաղեմ	

3. Նենմիի գործունեությունը: *Հնում քաղաքն առանց միջնաբերդի համարվում էր թերի: Այն համարվում էր անպաշտպան անգամ թշնամու փոքրաթիվ ուժերի առջև: Այդ իսկ պատճառով հրեաները նախընտրում էին ապրել գյուղերում: Պարսպից զուրկ Երուսաղեմում գրեթե մարդ չէր բնակվում: Այն լցվում էր միայն տոնական օրերին: Ամբողջ վերականգնելու ծերակույտի փորձը ձախողվեց սամարացիների բանասարկությունների պատճառով: Նրանք Քսերքսեսին ամբաստանագիր գրեցին՝ կառուցողներին մեղադրելով դավադրության մեջ: Քսերքսեսը հավատաց սամարացիներին և նրանց իրավունք տվեց «արգելել և խափանել» աշխատանքները (Ա Եզր. Դ 6-23):*

Սակայն հաջորդ՝ Արտաշես Ա թագավորի օրոք իրադրությունը փոխվեց: Նրան շատ մերձավոր մի հրեա կար, որ Նենմի էր կոչվում (եբր. נִמְנִי - ՆԵՆՍԵՄԻԱՎ): Հայրենիքի ծանր կացության մասին տեղեկանալով՝ Նենմին թագավորից՝ եղբայրակիցներին օգնելու թույլտվություն խնդրեց: Արտաշեսը համաձայնեց և Նենմիին նշանակեց Յեհուդ գավառի կառավարիչ: Արքան նույնիսկ հրամայեց անհրաժեշտ քանակությամբ փայտ հատկացնել քաղաքային դարպասները վերականգնելու համար (Նենմի Բ): Նենմիի գրքում պահպանվել են գրություններ, ուր հեղինակը մանրամասնորեն նկարագրում է, թե ինչ տխուր վիճակում էր Երուսաղեմն իր ժամանելու պահին, և թե ինչպես ինքը գիշերով շրջեց ավերակներով՝ կազմելով վերանորոգման աշխատանքների ծրագիրը:

Ուսումնասիրելուց հետո Նենմին կանչեց ավագներին և օգնություն խնդրեց «բարի գործի համար»¹: Շինարարությունն սկսվեց: Սակայն ընթացքում անհամար դժվարություններ ծագեցին: Սամարիայի կառավարիչը

¹ Տե՛ս Նենմի Ե 19 - խմբ.:

կանգ չառավ ոչնչի առջև, միակ նպատակ ունենալով Նեեմիին ստիպել, որ նա ետ կանգնի իր մտքից: Սակայն ո՛չ խարդավանքները, ո՛չ ամբաստանագրերը, ո՛չ մահափորձն ի զորու չէին կոտրելու Նեեմիի կամքը, որ իրեն Աստծու կողմից կանչված էր համարում: Հաճախ թշնամական ցեղերը հարձակվում էին շինարարների վրա, այնպես որ վերջիններս ստիպված էին աշխատել առանց զենքը վայր դնելու: Նեեմիին առանձնակի վրդովեցնում էր ազնվականության կրավորական կեցվածքն ու դավերը նրանց, որ ծախվել էին սամարացիներին: Բազմաթիվ շունեորներ պարտքի դիմաց նրանց ստրուկը դարձան: Նեեմին գրում է.

«Ինքս ինձ խորհեցի, նախատեցի նրանց անվանի մարդկանց ու իշխաններին և ասացի նրանց. «Դո՛ւք եք ձեր եղբայրներից հարկ պահանջում»: Նրանց հրամայեցի մեծ ժողովի հավաքվել ու ասացի նրանց. «Մենք կփրկենք մեր եղբայր հրեաներին, որոնք վաճառվեցին հեթանոսներին, բայց դա մենք չիմացանք. հիմա էլ եք դուք վաճառում նրանց»: Նրանք լռեցին ու պատասխան տալ չկարողացան: Ես ասացի. «Լավ չէ այդ գործը, որ դուք անում եք, որովհետև Աստծուց չեք վախենում. այդ է պատճառը, որ մենք չապատվեցինք հեթանոսների ու մեր թշնամիների նախատինքից»:

(Նեեմ. Ե 7-9)

Նեեմիին պահանջեց, որ բոլոր պարտքերը ներվեն: Այս որոշումը խանդավառություն առաջացրեց ժողովրդի մեջ: Շինարարությունը շարունակվեց կրկնակի ոգևորությամբ: Շուտով Երուսաղեմը շրջապատվեց նոր պարսպով՝ ամուր դարպասներով: Սակայն Նեեմիին տեսնում էր, որ ինքն ի զորու չէ հաղթահարելու մյուս չարիքները՝ հավատքի կորուստ, կրոնական պատվիրանների նկատմամբ անտարբերություն: Օգնությունն անսպասելիորեն հասավ Բաբելոնից. 428 թվականին այնտեղից եկավ Եզրաս քահանան:

4. Եզրասի բարեփոխումները: Եզրասը բաբելոնյան սփյուռքից էր, Օրենքի գիտակ և հոգատար կերպով պահում էր սրբազան Գրքերը: Ի մասնավորի նրա մոտ արդեն կար Հնգամատյանն իր ներկայիս ծավալով: Իմանալով, որ Հուդայում մարդիկ աստիճանաբար հեռանում են հավատքից, Եզրասը որոշեց նրանց դարձի բերել Մովսիսական Օրենքին: Թորայում նա գտավ կանոնների խումբ, որն ընդգրկում էր կյանքի բոլոր կողմերը: Այն կարող էր կանոնագիրք դառնալ կրոնապետության համար, որն ուզում էր հաստատել Եզրասը Երուսաղեմում:

Դպիրը Արտաշես արքայից մի փաստաթուղթ խնդրեց, որն իրեն իրավունք կտար ղեկավարել Յհուդի ողջ կրոնական կյանքը: Թագավորը սիրով համաձայնեց, հուսալով, որ դրանով իր խնամքի տակ կառնի Երուսաղեմի գործերը:

Եզրասի հետ Պաղեստին գնացին մոտ հազար հինգ հարյուր կամավոր:

Տեղ հասնելով՝ դպիրը ժողովրդական հավաք հրավիրեց և սկսեց հրապարակավ ընթերցել Մովսիսական Օրենքը: Բայց քանի որ մարդիկ արդեն վատ էին ընկալում հին հրեական լեզուն, ղևտացիները Գրքի խոսքերը թարգմանում էին արամեերեն և բացատրում ընթերցվածը: Ընթերցումը շարունակվեց մի քանի օր և ցնցեց հրեաներին. «Երբ ժողովուրդը լսում էր օրենքների խոսքերը, լաց էր լինում»¹: Օգտվելով սրանից, Եզրասը, որ խիստ և անդրդվելի մարդ էր, որոշեց արմատախիլ անել հեթանոսական որոմները: Նա պահանջեց, որ հեթանոս կանանց հետ ամուսնացածները բաժանվեն²: Սա հակազդեցության առիթ հանդիսացավ. դեմ էր անգամ բարձր հոգևորական դասը: Սակայն Եզրասը իր պահանջից ոչ մի քայլ չնահանջեց: Նա համոզված էր, որ միայն այդպես կարելի է փրկել Համայնքը կործանումից:

Դիմադրությունը մի քանի ամիս տևեց, սակայն, ի վերջո, Եզրասը հաղթեց: Նա նորից հավաքեց Երուսաղեմի բնակիչներին և պահանջեց երդվել, որ նրանք խստիվ կպահեն Օրենքը: Եվ բոլոր նրանք, որ հեթանոս կանանց պիտի պահեին, պիտի հեռանային Համայնքից:

Նեեմիին համակիր էր Եզրասի գործին: 424 թվականին նա գնաց թագավորի մոտ՝ Սուսա³, և վերադառնալով դարձյալ սկսեց Օրենքը պահելու համար պայքարը (Նեեմ. ԺԳ 4-31):

Այսպիսով ավարտվեց հրեականության եկեղեցական կազմավորումը, որն այն համապատասխանեցրեց Օրենքի տառին: Սա բարենպաստ հետևանքներ ունեցավ. հավատքն ամրապնդվեց, կյանքը ենթարկվեց Օրենքին: Սակայն միևնույն ժամանակ Եզրասի բարեփոխումը մեկուսացման ճանապարհ բացեց, ծիսապաշտության և արտաքին օրինապահության միջև:

5. Ընդդիմություն օրենքի անհամաչափ կիրառություններին:
Չռուրթի գիրքը: Մարգարեների հետևորդներն արդարացիորեն Եզրասի և Նեեմիի գործունեության մեջ ծայրահեղություն էին տեսնում, որ հակասում է Իսրայելի հավատի սկզբունքներին: Առանձնացումն արգելք հանդիսացավ հեթանոսներին դարձի բերելու: Այլազգի կանանցից բաժանվելը կրոնական առումով միշտ չէ, որ հիմնավորվում է. նրանցից շատերն աստվածատուր կրոնն էին ընդունել:

Ըստ երևույթին հենց Եզրասի հակառակորդները ժողովրդի մեջ տարածեցին այն գիրքը, ուր հայտնվում էր Դավթի նախամայր՝ մովաբացի Հոութի մասին ավանդությունը:

Այս գրքի գրությունն ժամանակն ու հեղինակը հայտնի չեն: Բուն շարադրանքից երևում է, որ ստեղծվել է նկարագրվող՝ դատավորաց շրջանից ուշ

¹ Նեեմի Ը 10 – խմբ.:

² Ա Եզր. Թ – խմբ.:

³ Կամ Շուշան, Շոշ – Պարսից թագավորանիստ քաղաքը – խմբ.:

(Ա 1): Արամեաբանությունների առատությունը ևս խոսում է հօգուտ ուշ շրջանի: Ըստ Ա. Կնյազև քահանայի, ինչպես և ժամանակակից այլ աստվածաշնչագետների կարծիքով, Հռուֆի գիրքը գրվել է Գերությունից հետո, չնայած հիմքում ընկած է ավելի վաղ ժամանակի պատում: Հրեական կանոնում այն դասվել է երրորդ բաժնում՝ Գրություններում (Ագիոգրաֆներում):

Գրքի բովանդակությունն ու կառուցվածքը բարդ չեն: Երիտասարդ մովսեթյան Հռուֆն ամուսնացավ հրեայի հետ, որ ապրում էր Մովսեթի երկրում: Եվ երբ ամուսինը մահացավ, երիտասարդ այրին չլքեց սկեսրոջը. «Ուր էլ որ դու գնաս,- ասաց նա,- ես էլ կգնամ, որտեղ էլ որ մնաս, ես էլ կմնամ: Քո ժողովուրդն իմ ժողովուրդն է, և քո Աստվածն իմ Աստվածն է» (Ա 16): Եվ Աստված օրհնեց այս բարի անձնավորությանը: Սկեսրոջ հետ գալով Հուդա՝ նա ամուսնացավ իր ամուսնու ազգականի՝ Բոոսի հետ, և նրա ծոռը դարձավ հրեից մեծագույն թագավորը:

Գիրքն Եզրասին ոչ երկիրմաստ դաս էր տալիս, նաև բոլորին, որ ազգային բացառիկություն էին քարոզում: Հասարակ մովսեթյան պատմությունը չի եզրափակվում խրատով, որովհետև այն, ինչպես և Հովնանի պատմության մեջ, բխում է հենց պատումից. մարդու արժանիքները և արդարությունը կախված չեն ծագումից, ազգային պատկանելությունից: Աստծուն հաճո են բոլոր նրանք, որ պահել են հավատն ու սերը:

Հռուֆի գրքում ամփոփված ուսմունքն իր հետևորդներն ունեցավ: Հոբի գրքի հեղինակը, նկարագրելով Հուս երկրի բնակիչ սրբակրոն մարդուն, ցույց է տալիս, որ արդարությունը ցեղական սահմանափակումներ չի ճանաչում:

Այս է հիշեցնում նաև ավետարանիչը՝ Քրիստոսի ազգաբանության մեջ նշելով Հռուֆին (Մատթ. Ա 5):

Հարցեր կրկնության համար

1. Ինչ դեր է խաղացել Եզրասը հինկտակարանյան ավանդույթում:
2. Ժամանակակից աստվածաշնչագիտության տեսանկյունից Եզրաս-Նեեմիի գրքում ինչ ընթացք են ունեցել իրադարձությունները:
3. Ինչ արեց Նեեմիին Երուսաղեմի համար:
4. Ինչպես իրականացրեց իր բարեփոխումը Եզրասը:
5. Ինչ էր այդ բարեփոխման արդյունքների երկվությունը:
6. Երբ է գրվել Հռուֆի գիրքը:
7. Ինչպես նրանում արտացոլվեց օրինականության ընդդիմությունը:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ

ԿԱՄ ԴԻԴԱԿՏԻԿ ԳՐՔԵՐ

(Ե-Դ դդ. Ք. ծ. ա.)

§ 20. Երգ Երգոց գիրքը

1. **Հինկտակարանյան իմաստունների գրքերը:** Հին կտակարանի ուսուցողական գրքերը (տես հտ. 1, § 5) ի մի են հավաքվել միայն բաբելոնյան Գերուկթյունից հետո: Դրանց մեծ մասը գրվել է Երկրորդ Տաճարի շրջանում, չնայած ժողովածուի որոշ բաժիններ թագավորաց շրջանին են վերաբերում (հտ. 1, § 30):

Ուսուցողական գրքերը կարելի է երկու դասի բաժանել.

- առաջինը (Սաղմոսարան, Տոբիթ, Եսթեր, Սողոմոնի Իմաստուկյուն, Սիրաք, Հուդիթ) - կամ ընդգրկում է սրբազան պատմության և Օրենքի դրվագներ, կամ ամբողջությամբ է նվիրված պատմական դեպքերին,

- երկրորդը (Երգ Երգոց, Առականեր, Հոբ, Ժողովող) գրեթե ոչինչ չի ասում Ուխտի և Խոստման, Տաճարի և Օրենքի մասին: Այս գրքերի բովանդակությունը համամարդկային է: Մեկնաբանում են սովորական մարդու առօրյա կյանքի բարոյականության մեծագույն խնդիրները: Այստեղ չենք գտնի ո՛չ մարգարեություններ, ո՛չ ժամանակագրական պատմություններ: Ժանրը խրատական մտորումներ են, կամ պոեմներ կյանքի մասին: Այս աստվածաշունչ հեղինակներին անվանում էին իմաստուններ (եբր. ԾՊԾԾ - ԽԱԽԱՄԻՄ):

Իմաստունների այս դասը առաջացել է դեռևս Սողոմոնի (Ք. ծ. ա. Ժ դար) օրոք: Դրա անդամները գրի էին առնում ժողովրդական իմաստուկյան ասացվածքները, հորինում պոեմներ, օրհներգեր և առականեր: Նրանց ժառանգության այն մասը, որ մտել է Աստվածաշնչի մեջ, օժտված է յուրահատուկ գծերով: Այդ առանձնահատկություններն առավել նկատելի են աստվածաշնչյան այլ հատվածների համեմատությամբ.

- մարգարեներն ու Պատմական գրքերի հեղինակներն ավետում էին Աստծու մասին, որ հայտնում է Իրեն պատմության ընթացքում:

- քահանաները ուսուցանում էին հանրային աստվածաշտույթյան ձևերը,
- օրենսգետները՝ կյանքի կանոնները, որ տրվել էին Մովսիսական Օրենքով,

- իսկ իմաստուններն ուշադրության էին դարձնում մարդուն, որպես այդպիսին, նրա գոյության իմաստին աշխարհում: Իմաստունների ելակետը ոչ թե Իսրայելի Օրենքն է, այլ ցանկացած ժողովրդի և ցեղի մարդիկ, որոնք ստիպված են լուծել իրենց կենսական հիմնական խնդիրներ: Սակայն, վերջի վերջո, իմաստունները հանգում էին նրան, որ հավատի ճանաչողությունն էր ճշմարիտ մարդկայնության հիմքը:

2. Երգ Երգոց գիրքը: Ժամանակը: Երգ Երգոցը (եբր. *שיר השירים* - Շիր ԶԱ-ՇիրիՄ՝ Լավագույնը երգերից) վաղնջական ավանդությանմբ վերագրվել է Սողոմոնին: Նա համարվել է իմաստունների հովանավոր, կատարյալ իմաստուն: ԳԹագավորությունների գրքում ասված է, որ Սողոմոնը հազար հինգ երգ է հյուսել (Դ 32)¹: Այդ իսկ պատճառով լիովին բնական էր համարել, որ նա Երգ Երգոցի հեղինակն է:

Սակայն բուն գիրքը թագավորի մասին խոսում է երրորդ դեմքով, իսկ մեկ տեղ հերոսուհին՝ հարսը, ուղղակի դիմում է նրան. «Իմ այգին իմ առջեւն է. հազարը Սողոմոնին, եւ երկու հարիւրը՝ պահապաններին, որ պահում են նրա պտուղը» (Ը 11-12): Դեռ ավելին՝ Երգ Երգոցում կարելի է տեսնել հակադրությունը հովվի հանդեպ օրիորդի անկեղծ սիրո և Սողոմոնի հարեմի կանանց ճակատագրի:

Հյուսիսային Իսրայելի մայրաքաղաք Թերսայի հիշատակումը², մատնանշում է 922-ից (թագավորությունների բաժանումը) մինչև 875 թվականն (Թերսայից մայրաքաղաքի տեղափոխումը Սամարիա) ընկած ժամանակաշրջանը: Բացի այս, Երգ Երգոցում կան հատվածներ, որ ավելի ուշ ծագման մասին են խոսում: Դրանցում հանդիպում են արամեերեն, պարսկերեն և անգամ հունարեն բառեր՝ «կիպարիս» (Ա 17)³, «գահավորակ» (Գ 9) և այլն:

Այս ամենն ի նկատ առնելով՝ մեկնաբանները դեռևս ժԸ դարում եզրահանգեցին, որ Երգ Երգոցն իր վերջնական տեսքն ստացել է Երկրորդ Տաճարի շրջանում (ավելի ստույգ՝ 2 և Դ դարերի միջև):

3. Գրքի բնույթն ու կազմությունը: Սուրբ Գրքում Երգին նման գրքի չենք հանդիպում: Այստեղ չկա պատմողական մաս, և այն գրված է Հարսի,

¹ Հայերենում և LXX՝ 5 հազար - խմբ.:
² Ավնարկ է 2 4 համարի: Հայերենում Թերսա մայրաքաղաքը այդ համարում չի հիշատակվում: Հին Կտակարանում հիշվում է Հեսու ժԲ 24, Գ Թագ. ԺԵ 21, Դ Թագ. ԺԵ 14 համարներում - խմբ.:
³ Հայերենում՝ *սոճի- Ծան. թարգմ.*:

Փեսայի և երգչախմբի անունից: Ընդ որում՝ գործող անձերի առանձին «մասերի» միջև կապող ռեմարկներ¹ չկան: Բոլոր հանգամանքներն ստիպում են կարծելու, որ այս օրհներգերը հնչել են հինկտակարանյան ամուսնական ծեսերի ժամանակ: Որոգիներսը գիրքը մոտ էր համարում Էպիթալամի² հարսանեկան հիմներին: Նա նաև առաջինը նկատեց գրքի թատերգական տարրը: Հետևաբար Երգ Երգոցը կարող է դիտարկվել իբրև «բիբլիական հարսանեկան ծեսի» մի մաս: Հարսը և Փեսան իրենց խորին սերն են արտահայտում միմյանց նկատմամբ, իսկ երգչախումբը միջամտում է նրանց երկխոսությունը:

Գրքի կազմության վերաբերյալ երկու կարծիք կա. մեկնիչների մի մասն այն դիտարկում է իբրև օրհներգությունների ժողովածու, որոնք կապված չեն իրար հետ սյուժեի ընդհանրությամբ: Ոմանք էլ Երգ Երգոցը դիտում են իբրև յուրօրինակ ամբողջական դրամա: Սակայն բոլոր դեպքերում ոգու և նյութի միասնությունը պահպանվում է: Երգը խոսում է երկու սիրահարների մասին, որոնք հաղթահարում են իրենց ճանապարհի արգելքները:

Հարսը և Փեսան ոչ մի տեղ անվանական չեն հիշատակվում: «Սուլամիթ» (Է 1)³ բառը նշանակում է «սուլամիթացի»՝ Սուլամի բնակչուհի. Սուլամը ճանաչված էր իր բնակչուհիների գեղեցկությամբ (Գ Թագ. Ա 3-4): Փեսան, ըստ ամենայնի, չի նույնանում Սողոմոնի հետ: Նա հասարակ հովիվ է, որ իր հոտերն է արածեցնում սարերում (Ա 7):

Երգ Երգոցում խոսվում է նաև Սողոմոնի հարսանյաց հանդեսի մասին (Գ 7-11): Որոշ մեկնիչներ կարծում են, թե թագավորը կամեցել է սուլամացի բնակչուհուն իր հարեմ տանել, սակայն նա հովիվի սերն է նախընտրել:

Գիրքը տրոհած է յոթ պոեմի, նախաբանով և վերջաբանով:

- Ա) Նախաբան (Ա 2-4),
- Բ) Պոեմ առաջին (Ա 5-Բ 7),
- Գ) Պոեմ երկրորդ (Բ 8-Գ 11),
- Դ) Պոեմ երրորդ (Դ 1-Ե 1),
- Ե) Պոեմ չորրորդ (Ե 2-Զ 3),
- Ղ) Պոեմ հինգերորդ (Ղ 4-12),
- Է) Պոեմ վեցերորդ (Է 1-14),
- Ը) Պոեմ յոթերորդ (Ը 1-7),
- Թ) Վերջաբան (Ը 8-14):

1 Տեքստի հեղինակի կողմից տրվող բացատրությունները – խմբ.:

2 Հունարեն՝ հարսներգ – խմբ.:

3 Հայերենում սուլացի – խմբ.:

4. Երգ Երգոցն աստվածաշնչյան կանոնում: Այն Սուրբ Գրոց կանոն է մտել բոլորից ուշ: Դեռ Ք. ծ. հ. Բ դարում հրեա աստվածաբանները վիճում էին Երգ Երգոց գրքի կանոնական արժեք ունենալու մասին: Դրանցից ոմանք ասում էին, թե գիրքը, ուր անգամ չի հիշատակվում Աստծու անունը, չի կարող սուրբ լինել: Մյուսները, ի մասնավորի Աքիբան¹, պնդում էին, որ Երգը գաղտնի խորհրդավոր իմաստ ունի և ամբողջ Հին Կտակարանի «արբուժիւն սրբոցն» է: «Ողջ աշխարհն չարժե այն օրվան, երբ Իսրայելին շնորհվեց Երգ Երգոցը», - ասում էր Աքիբան: Վերջ ի վերջո գիրքը մտավ կանոնի մեջ և ընդունվեց նաև Քրիստոնյա Եկեղեցու կողմից: Չնայած դրանից հատվածները չեն ընթերցում ուղղափառ աստվածապաշտության մեջ, սակայն Մենդեյան կանոնում օգտագործված են Երգ Երգոցից պատկերներ ու արտահայտություններ²:

5. Գրքի բառացի մեկնությունը: Բառացի ընկալմամբ այստեղ կարելի է տեսնել երկրային սիրո պատկերը: Առաջիններից մեկն այն առաջարկել է Թեոդորոս Մոպսուեստացին: ԺԸ դարից այդ տեսակետը լայնորեն տարածվեց արևմտյան մեկնիչների շրջանում:

Բառացի մեկնությունը երեք հնարավորություն է ենթադրում.

- կամ գրքում արտացոլված է Գ Թագավորությունների Գ 1-ում նկարագրված իրադարձությունը՝ Սողոմոնի ամուսնությունը Փարավոնի դստեր հետ,

- կամ պատմվում է սոմնացի աղջկան կնության առնելու Սողոմոնի փորձի մասին, երբ աղջիկն այնուամենայնիվ հավատարիմ մնաց իր փեսացուին,

- կամ գիրքը պարզապես հարսանեկան ծեսի համար նախատեսված երգերի ժողովածու է:

Բոլոր այս դեպքերում Երգ Երգոցի բովանդակությունը սիրահարների զգացմունքներն են: «Երկու սիրահար անձ՝ մանուկն ու օրիորդը, իրենց նուրբ և խորը սերն են արտահայտում, միաժամանակ միմյանց բարձրացնելով մինչև երկինք և համեմատելով այն ամենի հետ, որ իրենց գեղեցկագույն և շքեղագույն կարող էր թվալ» (Գ. Պավսկի քին.):

6. Խորհրդաբանական-այլաբանական մեկնությունը հնուց է ընդունված թե՛ հինկտակարանյան Եկեղեցում, թե՛ նորկտակարանյան: Հրեա մեկնիչները Հարսին և Փեսային ընկալում էին իբրև Տիրոջ և Համայնքի խորհրդապատկերները. մարգարեները հաճախ Աստծու և Իսրայելի միջև

¹ Աքիբա բեն Հովսեփ - (50 -132 թթ.): Հրեական մեծագույն ուսուցիչ, Օրենքի գիտակ և մեկնաբան: Նա սովորեցնում էր, որ Աստծու սերը ի հայտ է գալիս չարչարանքների մեջ, որն ուղարկում է Աստված - խմբ.:

² Հայ եկեղեցում Երգ Երգոցից ընթերցումներ ճաշոցում բավականին շատ են - խմբ.:

Ուխտը պատկերում էին որպես ամուսնական միություն (Օսեե, Երեմիա, Եզեկիել): Պողոս առաքյալն այս խորհուրդը տարածեց Եկեղեցու վրա, երբ խոսեց Քրիստոսի հետ խորհրդավոր ամուսնության մասին (Եփես. Ե 32): Մեկնության այս եղանակն աստվածաբանական զարգացում ստացավ Որոգինեսի, Սբ. Գրիգոր Նյուսացու և Թեոփիլակտոս Երանելու մոտ: Վերջինս գրում էր. «Իրապես Աստծու շնորհներով և իմաստությունամբ լեցուն էին այն սուրբ Հայրերը, որոնք գիրքն այս դասեցին Սուրբ Գրոց կարգը, և այն համարելով հոգևոր խորհուրդներով լեցուն՝ արժանի գտան Եկեղեցուն... Սուրբ Գիրքը Հարսի անվան տակ Եկեղեցին նկատի ունի, իսկ Փեսա անվանում է Քրիստոսին» (Толк. на Песнь Песней. Введение):

Այստեղ բոլորից առանձնանում է Ամբրոսիոս Մեդիոլանցին¹, որ Հարսին Աստվածամոր նախապատկեր էր համարում («О Девстве»), իսկ Օգոստինոս Երանելին վերագարձավ հրեական մեկնությանը, Երգ Երգոցը համարելով հինկտակարանյան պատմության այլաբանություն (О Граде Божием, XVII., 8, 13):

ԺԹ դարավերջին Կիևի Հոգևոր ձեմարանի պրոֆ. Ա Օլեսնիցկին գրքի ընկալման իր տարբերակն առաջարկեց: Հարսի նկարագրություններում նա ուշադրություն դարձրեց այն գծերին, որ նրա կերպարը մոտեցնում էին պաղեստինյան բնության պատկերներին: Իր կարծիքով Հարսը Սուրբ երկիրն է՝ վերածնված Աստծու սիրով: Փեսան՝ ինչպես գարնան արև, լուսավորում է երկիրը՝ դառնալով Մեսիայի նախակերպար:

7. Երկու մեկնությունների միասնությունը: Երգ Երգոցի մեկնության բերված երկու մոտեցումներն իրար չեն բացառում: Նախ և առաջ հիմք չկա բառացի մեկնությունը մերժելու: Աստվածաշունչը, որ հասցեագրված է բոլորին և ամեն մարդու, չի կարող շրջանցել կյանքի այնպիսի մի բնագավառ ինչպիսին երկրային սերն է: Ուստի խոսելով զրա մասին՝ Երգ Երգոցը բացահայտում է Աստծու կամքը մարդու մասին: Սերն ու ամուսնությունն ի վերուստ են պատվիրված. «Այդ իսկ պատճառով տղամարդը թողնելով իր հորն ու մորը՝ պետք է միանա իր կնոջը, և երկուսը պետք է լինեն մի մարմին» (Ճննդ. Բ 24): Հարսնացու-կինը Աստվածաշնչյան ամուսնական իդեալում ոչ թե ստրուկ է, այլ ամուսին-փեսայի «մարմին իր մարմնից»: Երգ Երգոցում սերը պատկերված է իբրև հզորագույն զորություն, որ հաղթահարում է բոլոր արգելքները.

*Քանպի հյոր է սերը մահվան պես,
իսանդը դաժան է դժոխքի նման,*

¹ Ավրեյիոս Ամբրոսիոս Մեդիոլանցի (մոտ. 340 թ.-397 ապրիլի 4), քրիստոնյա գործիչ, Ընդհանրական Եկեղեցու նշանավոր հայրերից. – *Ճան. թարգմ.*:

*նրա թռիչքը նման է
 հրի բոցի թռիչքին:
 Առատ ջրերը չեն կարող սերը մարել,
 և ոչ էլ գետերը կարող են արգելել այն:
 Եթե մի մարդ
 իր ողջ հարստությունը տար սեր գնելու համար,
 նրան արհամարհելով կարհամարհեին մարդիկ:*
 (Ը 6-7)

Սերն իր բնությամբ մոնոգամ¹ է: Հարսը «միակն է» Փեսացուի համար. նրանում փեսան իր «երկրորդ ես»ն է գտնում, առանց որի չի կարող ապրել: Նույնպես և Հարսը. շնայած արգելքներին, նա ամբողջ հոգով իր սիրեցյալին է ձգտում: Երկուսի միավորման բերկրանքով իրագործվում է Տիրոջ մտահղացումը, որի նպատակն է, որ բոլորի վերջնական միությունն ու ներդաշնակությունը: Երկրային սերը կարծես այն դպրոցն է, որ մարդուն պատրաստում է գերագույն սիրուն:

Սակայն Երգ Երգոցն ավելի խորին՝ խորհրդապաշտական իմաստ ունի: Այն, որ երկրային սերն Աստվածաշնչում դառնում է Աստծու և մարդու փոխհարաբերության խորհրդանիշ, Երգն առավել հրաշալի է դարձնում: Ուխտը նմանեցնելով ամուսնական միության, ուր երկուսը «մի մարմին են», Աստծու հոսքը սովորեցնում է անկեղծ մարդկային սիրո գերագույն արժանիքը: Պատահական չէ, որ Եկեղեցին ամուսնությունը ներառել է իր խորհուրդներում: Ուղղափառ աստվածաբան Ս. Տրոյիցկին նշում էր, որ սա յոթ խորհուրդներից միակն է, որի հիմքը ամենասկզբից Հին Կտակարանում դրեց Ինքն Աստված:

Ծանոթություն

Բացի Երգ Երգոցի սինոդական և Վիեննայի թարգմանություններից² կան նաև համեմատաբար նոր տարբերակներ՝ Ա. Էֆրոսի (1909) և Ի. Դիակոնովի (1973): Շատ են նաև գրքի և նրա հատվածների բանաստեղծական փոխադրությունները (Դերժավին, Բայրոն, Պուշկին, Ֆետ և ուրիշներ): Երգով ոգեշնչված Ա. Կուպրինի «Սուլամիթա» վիպակը հիմնված է գրքի բառացի ընկալման տարբերակներից մեկի վրա:

Հարցեր կրկնության համար

1. Հիմնականում ո՞ր շրջանում են գրվել ուսուցողական գրքերը:
2. Թվեցե՞ք դրանք:
3. Ո՞ր ստեղծագործություններն են «իմաստունների գրքերից»:
4. Ինչո՞վ են դրանք բնորոշվում:

¹ Բառացի՝ մենամուսնական – խմբ.:
² Священные книги Ветхого и Нового Завета, Берлин, Брит. и Иностр. библейское о-во, 1931 – խմբ.:

5. Ի՞նչ է նշանակում «Երգ Երգոց» վերտառությունը:
6. Ի՞նչ կարծիքներ կան Երգ Երգոցի գրության ժամանակի վերաբերյալ:
7. Գրական ի՞նչ յուրահատկություններով է օժտված այդ գիրքը:
8. Ո՞րն է գրքի կառուցվածքը:
9. Ի՞նչ է նշանակում «Սուլամիթա» բառը:
10. Երգ Երգոցը ե՞րբ մտավ կանոնի մեջ:
11. Ո՞րն է դրա բառացի մեկնությունը:
12. Թվեցե՞ք խորհրդաբանական-այլաբանական մեկնության օրինակներ:
13. Ի՞նչպես են հարաբերվում մեկնության երկու տարբերակները:

§ 21. Ուսմունք Աստծու Իմաստնության մասին

(Առակաց գիրք)

1. Առակաց գրքի ծագումը, բնույթն ու կառուցվածքը: *Չնայած այս գիրքը կոչվում է «Սողոմոնի», հենց նրանում մի քանի հեղինակ և կազմող է հիշվում: Բաժիններից մեկն անանուն իմաստուններինն է (ԻԲ 17-ԻԴ 34), մյուսում ասույթներ են Սողոմոնից, որ է դարում հավաքել են «Եզեկիա արքայի բարեկամները» (ԻԵ-ԻԹ), երրորդն ու չորրորդը կազմել են Ազուր և Լեմուել¹ իմաստունները (Լ 1-14, ԼԱ 1-9): Մնացած մասերի հեղինակները ոչ մի կերպ չեն նշվում:*

Առավել հին առակներն (եբր. לְשׁוֹן מִלְּצִדְקָא - ասույթ, խրատական միտք) գալիս են Սողոմոնին (տե՛ս հատ. 1, § 30), իսկ Նախաբանը (1-9)՝ գրքի վերջին խմբագրին: Նախաբանի լեզուն հետզերության շրջանին է բնորոշ: Դրա աստվածաբանությունն կապված է Աստծու Խոսքի առավել ամբողջական բացահայտմամբ, քան Սողոմոնի ժամանակներում: Ի մասնավորի Սողոմոնի օրոք գերիշխում էր մեղքի համար հավաքական և տոհմական պատասխանատվության ընկալումը, մինչդեռ Առակներում շեշտն անձնական պատասխանատվության վրա է, իսկ այս տեսակետը հիմնավորվեց միայն Երեմիա և Եզեկիել մարգարեների քարոզությամբ (Երեմ. ԼԱ 29-30, Եզեկ. ԺԸ 2-3): Մեկնիչների մեծամասնության կարծիքով Առակաց գրքի Նախաբանը գրվել է Ք. ծ. ա. Ե դարի վերջին:

Մանրագրություն

Գիրքն ընդհանուր առմամբ պարունակում է 900 ասույթ, ուստի արդեն իսկ չի կարելի դրանք նույնացնել Սողոմոնի հնագույն առակների հետ, որոնց թիվը 3000 է: Դրանք չեն համապատասխանում նաև բովանդակությամբ: Իմաստուն-թագավորը «խոսել է ծառերի մասին՝ Լիբանանի մայրից մինչև պատն ի վեր մազլոդ զուպան,

¹ Հայերենում, նաև LXX-ում, այս իմաստունները չեն նշված: Ըստ հրեական ավանդության Սողոմոն թագավորի այլաբանական անուններն են – *խմբ.*:

պատմել է անասունների, թռչունների ու ձկների մասին» (Գ Թագ. Դ 32-33): Առակաց գրքի բովանդակություն մեծ մասամբ այլ է:

Այսպիսով գիրքը երկար պատմություն ունի, ուր արտացոլվել են Հայտնության հաջորդական փուլերը (տե՛ս Православная Мысль. Фարիզ, 1955, X., էջ 95):

Գիրքը կանոն մտավ զերծ շմնալով որոշակի կասկածներից, սակայն այդ ժամանակվանից ի վեր այն մշտապես մեծ հեղինակություն է վայելում: Դրանից հատվածներ են ներմուծված աստվածաշարական ծեսերում, իսկ Մեծ Պահքի շրջանում այն ընթերցվում է ծայրեծայր: Գրքի հունարեն անվանումն է՝ Պարեմիա¹, որից և ծագում է հինկտակարանյան եկեղեցական ընթերցանության անվանումը:

«Առակաց գիրքը,- ասում է սբ. Բարսեղ Մեծը,- բարքերի ձևավորում է, կրքերի սանձում և ընդհանրապես կյանքի ուսմունք, որ բովանդակում է գործունեության բազմաթիվ կանոններ» (Беседа XII. Սկիզբ Առակաց գրքի): Այստեղ մենք կրիտարկենք հիմնականում Առակաց գրքի նախաբանը (ուսուցողական բաժինը տե՛ս հտ. 1, § 30), որ ակնառու է իր ոճական և աստվածաբանական միասնությունը:

2. Ակունք իմաստության: Հինկտակարանյան դպիրների համար իմաստության ճանաչումն այլ էր, քան անտիկ փիլիսոփաների մոտ: Հույներն իմաստությունն տեսնում էին առաջին հերթին աշխարհճանաչողության մեջ: Հինկտակարանյան իմաստունների մոտ «իմաստությունը» բառը (եբբ. המצח - *ԽՈՒՄՄԱ*) բազմիմաստ է: Մի կողմից իմաստությունը մարդկային մտքի հատկություն է, իսկ մյուս կողմից նույնանում է կարգի, կամ կանոնի հետ. ի մասնավորի այն ինչ օգնում է թագավորին կառավարել երկիրը, իսկ հասարակ մարդուն՝ ընտանիքն ու տնտեսությունը: Սկզբում այս իմաստությունն իսրայելացու համար օտարերկրյա գանձ էր, քանի որ այն ընդօրինակում էին քաղաքակրթական բարձր մակարդակ ունեցող երկրներից: Եվ ի վերջո «խոխմա» բառի իմաստը կապված է կենցաղային իմաստնացածության հետ, այն գնահատականի, որ տալիս բանիմաց մարդը շրջապատին: Հրեա իմաստունները քաջածանոթ էին Եգիպտոսի, Բաբելոնի և Իսրայելի հարակից այլ երկրների իմաստունների գրվածքներին:

Սակայն նրանց տեսակետները կանգ չառան իմաստության աշխարհիկ կողմի վրա: Աստծու Հայտնությունը նրանց հանգեցրեց իմաստության ակունքի և էության ընկալմանը: Իսկական իմաստությունն արտահայտվում է արդարությունը: Այդ ճանաչողը ճանաչել է բարոյական կյանքի գլխավոր օրենքները:

¹ Հունարեն՝ *παροιμία* բառն է, որ թարգմանվում է *Առակներ* - իմբ.:

Հույն փիլիսոփաները բարոյագիտության հիմքերը որոնում էին մարդու մեջ: Սակայն Աստվածաշունչը նշում է, որ մարդն հակված է և՛ բարի, և՛ չար գործերի, ուստի կենսական կանոնների աղբյուրը գտնվում է գերբնական աշխարհում: Մարդիկ պետք է հետևեն բարուն, հնազանդվելով Աստծու կամքին: Այսպիսով իրական իմաստությունն անբաժանելի է հավատից.

«Տերն է տալիս իմաստությունը,
և նրանից են բխում գիտությունն ու հանճարը»:
(Բ 6)

Ինչպես ավետարանական առակի Աստծու Թագավորությունը, իմաստությունը համեմատվում է թանկարժեք իրի հետ, որի համեմատ անցողիկ բոլոր գանձերը ոչինչ են (Գ 13-15):

Իմաստության էությունն արտահայտվում է ասույթով, որ մի անգամ չէ, որ հանդիպում է Առակաց գրքում.

«Իմաստության սկիզբը՝ Տիրոջ երկյուղն է.
արդարների խորհուրդը՝ խոհեմություն»¹:
(Թ 10)

Ինչ ասել է «Տիրոջ երկյուղ», մեղքերի համար պատժվելու վախ: Բայց սրան չի կարելի հանգեցնել բարոյական կյանքին ձգտելու մղումը: «Երկյուղ» բառի հոմանիշը Առակ. Թ 10-ում «ճանաչել» բառն է: Իսկ ճանաչելը Հին Կտակարանում նշանակում է սեր, հավատ, Աստծուն մոտ լինել:

Աստվածաշնչյան լեզվով Աստծուց երկյուղ ունեցողը մարդն է, որ լեցուն է ակնածանքով: Սովորական վախ-սարսափն արտահայտվում է եբր. ܕܘܦܐ – «ՊԱՄԱՎ» բառով, իսկ հոգու ակնածալից թրթիռը եբր. ܚܘܒܐ – «իռա՛» բառն է, որ և օգտագործվում է Առակներում (հմմտ. Ա 27 և 29):

Եվ եթե իմաստությամբ ապրելը երկնային կամքի կատարումն է, ապա արդյո՞ք իմաստությունն առավել լայն իմաստ չպիտի ունենա: Չէ՞ որ մարդկանց ճակատագրերը Տիեզերքի ընդհանուր ճակատագրի մի մասն է, իսկ համայն Տիեզերքը կերտվում է Արարչի մտահղացմամբ և կամքով: Այս իսկ պատճառով Առակացի հեղինակը մտորում է Աստծու նվիրական իմաստության մասին, որ կազմավորում է Տիեզերքը:

Այստեղ մենք դարձյալ ականատես ենք լինում աստվածաշնչյան ուսմունքի և անտիկ փիլիսոփայության տարբերությունը, որը սկսեց զարգանալ այդ շրջանում (տե՛ս հտ. 2, § 1): Հունական պանթեիզմը փորձում էր բնության աղբյուրն ու հիմքը գտնել հենց նրանում: Աստծու խոսքն այլ բան է սովորեցնում:

¹ Հայերենը հետևում է LXX-ին, իսկ ռուսերենում այս տողը հետևում է եբր. բնագրին՝ իսկ Սուրբի ճանաչումը՝ իմաստություն – խմբ.:

Հորի գրքի հեղինակի գրած օրհներգությունը, որ մտել է այդ գրքի մեջ (ԻԸ 12 և հաջ.) բացահայտ պարզությունմբ խոսում է բարձրագույն Իմաստության ակունքի մասին:

Այդ որտեղից է իմաստությունը,

և հրն է տեղը խելք ու հանճարի:

Բայց մահկանացուն չգիտե ուղին դեպ իմաստություն.

չի էլ երևում սա մարդկանց միջին:

Անդունդը՝ ասաց. "Ինձ մոտ դա չկա",

իսկ ծովը ասաց. "Իմ խորքում չէ դա" ...

Թաքնված է այն բոլոր մարդկանցից,

ծածկված՝ երկնի ամեն թռչունից:

Կորուստը, մահը ասացին.

"Շատ ենք մենք լսել նրա համբավի մասին":

ՏԷՐԸ ԶԵՇՏՈՒԹՅԱԲ ՊԱՏՐԱՍԵՑ ՆՐԱ ՃԱՆԱՊԱՐՅՆԵՐԸ,

քանպի նրա տեղն Ինքը լոկ գիտե...

կշիռը հողմի, չափը ջրերի,

որ Ինքն է կարգել:

Նա Ինքն է տեսել ու մեկ-մեկ հաշվել:

Եվ ճանապարհ է սահմանել ամպի որոտման ձայնով:

Այն ժամանակ էլ տեսել է Ինքը իմաստությունը

ու նրա մասին հայտնել է մարդուն:

Պատրաստել, քննել ու ասել է Նա.

"Աստվածպաշտությունն² է իմաստություն,

ու չարիքներից հեռու մնալը՝ իելացիություն":

Այսպես Աստծու Խոսքը հաստատում է տիեզերական և բարոյական աշխարհակարգի միասնությունը՝ նրանց ընդհանուր ծագումն աստվածային կամքից: Եվ բնություն և՛ մարդկային կյանքի օրենքները միևնույն ակունքից են՝ Արարչից, որ Իր անսահման զորությունն ու բարությունը ցուցաբերում է Իմաստության միջոցով:

3. Ուսմունք Աստծու Իմաստության մասին: Բ. Տուրակի խոսքով, Առակաց գրքի Նախաբանում Իմաստությունն «անձնավորված» է (ՄԸԲ, հտ. 2, էջ 280): Սա ոչ միայն վերացական գաղափարի մարմնավորումն է, այլ՝ շատ ավելին է: Ճիշտ է՝ առաջին երեք գլխերում այն կարելի է ընկալել իբրև իմաստունների դասի հավաքական խումբ: Սակայն Աստծու Իմաստությունն Առակների գրքում նաև զորություն է, որ բխում է անմիջականորեն Արարչից:

¹ Ռուսերենում՝ Աբադոն, հայերեն Աղբադոն՝ անդունդի հրեշտակ (տե՛ս Զայտ. Թ 11) – խմբ.:

² Ռուս.՝ Աստծու երկյուղ, ինչպես եբրայերենում է – խմբ.:

Այս հիման վրա ռուս կրոնական միտքը զարգացրեց «սոփիոլոգիայի» տեսակետը (Վլ. Սոլովյով, Պ. Ֆլորենսկի քին., Ս. Բուլգակով ավագ քին.), որ Աստծու Իմաստությունը (հուն.՝ Σοφία) դիտարկում էր իբրև ի սկզբանե Աստծու մեջ բնակվող արարածի անձնավորված նախապատկեր: Սակայն այս տեսակետը¹ համակեղեցական ճանաչման շարժանացավ:

Առակաց գրքի Իմաստությունը ասում է.

Տերն ինձ ստեղծեց իր ճանապարհի սկզբին՝ իր գործերի համար.

հավիտենությունից էլ առաջ հաստատեց ինձ:

Նա ծնեց ինձ հենց սկզբին,

դեռ երկիրն արարելուց առաջ,

ավելի առաջ, քան անդունդներ կրացեր,

ավելի առաջ, քան աղբյուրների ջրեր կբխեցներ,

եւ էլ ավելի առաջ, քան կհաստատեր

լեռներն ու բլուրք բլուրները...

Ինձնով էր, որ Տերն ուրախանում էր մշտապես,

և ես ամեն ժամ ցնծում էի նրա առաջ:

(Ը 22-30)

Եկեղեցու Հայրերի լեզվին դիմելով՝ Իմաստությունը Գոյի «էներգիան» է. գերագույն էի այն կողմերը, որ մարդը կարող է ընդունել: Աստծու այս հատկություններից դուրս անհնար է որևէ աստվածաբանություն, բացի ապոֆատիկ (բացասական) աստվածաբանությունից, որը պնդում է միայն այն, «ինչը Ինքը չի համարվում»:

Առակաց գրքին համահունչ (Գ 19) ՃԳ սաղմոսը ուսուցանում է, որ Աստված ամեն բան ստեղծեց «իմաստությամբ» (բառացի՝ բե-խոխմա - իմաստության մեջ): Սրանով Իմաստությունը մերձենում է Բանին, որ Նոր Կտակարանում բացվում է իբրև Սուրբ Երրորդության Երկրորդ Դեմք՝ «Ամեն ինչ Նրանով եղավ» (Հովհ. Ա 3):

«Աստված հաճեցավ,- գրում է Աթանաս Մեծը,- որ Իմաստությունն Իր իջնի արարածների վրա, որ բոլոր արարածները և յուրաքանչյուրն առանձին կրեն Իր պատկերի նմանությունն ու գրոշմը, որպեսզի գոյություն կուզվածը լինի Աստծու իմաստնական և արժանի գործը» (На ариан, 2, 78):

Արարչի անհասանելիությունն հուշակելով՝ Հին Կտակարանը միևնույն ժամանակ գիտե նաև աշխարհին Նրա Հայտնության մասին: Հայտնությամբ կամ Ինքն Իրեն հայտնելով անքննելի ճանաչելի է դառնում: Արդեն իսկ Արարումն ինքնին Հայտնության ձև է, իսկ մարդկանց հետ Ուխտ կնքելով, նրանց մոտեցնելով Իր կատարելությանը, Եհովեն առավել ամբողջություն է հայտնում Իրեն արարածներին:

¹ Ռուսերենում теологичен, հուն. θεολογούμενον-ից: աստվածաբանական տեսակետ, որ պարտադիր չի համարվում բոլորի համար - Ծան. թարգմ.:

Սուրբգրային պատկերներից մեկը՝ Թեոֆանիան, Աստվածահայտնությունը անվանվում է Եառիվեի հրեշտակ (Ծննդ. ԺԶ 7, ԻԲ 11, Ելք Գ 2, Դատ. Բ 1)¹: Բանն էի, Նրա Հոգին և Իմաստությունն ասես երեք Հրեշտակ են, որ Հին Կտակարանում հայտնում են Աստծու խորհուրդը: Ուշագրավ է, որ ռուսական հին սրբապատկերներում Տիրոջ Իմաստությունը պատկերվում է թևավոր՝ հրեշտակի նմանությամբ (տե՛ս ЖМП, 1982, № 8, էջ 72 և հաջ.):

«Խոհիմն» բառը հին եբրայերեն լեզվում իգական սեռի է, և Առակաները նրան պատկերում են Կնոջ տեսքով, որը, հրաշալի տուն կառուցելով, բուլորին հրավիրում է այնտեղ, բոլոր նրանց, ովքեր ականջալուր են իր խոսքերին (Թ 1 և հաջ.): «Իմաստության տունը» և ինքն անձամբ խորհրդանշում են Արարչի մտահղացման իրագործումը երկրի վրա, այն մարդկանց թագավորությունը, որոնք կատարում են Իր ուխտերը²: Այս «Տունը», և ինքն անձամբ նախապատկեր է համարվում Աստծու Թագավորության, Եկեղեցու, Աստվածամոր: Այս պատճառով ընդհանրապես Առականերից կատարվում են Աստվածածնին նվիրված տոներին, իսկ Ս. Սոփիա անունը կրող տաճարները եկեղեցուն նվիրված տոները կատարում են Աստվածածնին նվիրված օրերին³:

Աստվածաշնչյան՝ Իմաստություն հասկացության նկարագրումները.

Ա. Կյանքի իմաստություն՝ բնատուր բանականության պտուղը՝ տրված Աստծու կողմից (Յոք ԼԲ7):

Բ. Բարձրագույն իմաստություն, Աստծուց տրված (Յոք ԻԸ 23):

Գ. Արարչի իմաստություն, որ արտացոլվել է արարվածների և բարոյական աշխարհակարգի մեջ (Առակ. Ը22-31, Սաղմ. ԾԳ 24):

Դ. Իմաստություն՝ որպես Աստծուց Հայտնություն՝ հավատքի ու արդար կյանքի վերաբերյալ (Իմաստ Ժ-ԺԹ):

Ե. Անձնավորված իմաստություն, այսինքն Բանն (խոսք) Աստծու, Սուրբ Երրորդության երկրորդ Դեմքը (Սաղմ. ԼԲ 6),

Զ. Բանն մարմնացյալ - Քրիստոս, Աստծու զորությունն ու Աստծու Իմաստությունը (Ա Կորնթ. Ա 24):

4. Երկու ուղի: Եվ վերջապես Իմաստությունն «Աստվածային Նախախնամության այն հատկանիշն է, որ կարելի է սահմանել իբրև Աստծու ուսուցողական գործունեություն: Իմաստությունն Աստված է, որ իմաստնացնում և դեպի կյանքի ճիշտ ճանապարհն է ուղղում» (Ա. Կնյազև): Առական

¹ Հայերենում Տիրոջ հրեշտակ – խմբ.:

² Իմաստության Տան յոթ սյուները կատարելության լրիվությունն են խորհրդանշում:

³ Հարկ է նշել, որ Ս. Սոփիա տաճարներն սկզբնապես նվիրվում էին Քրիստոսին. «Քրիստոս՝ Աստծու Իմաստությունը» (Ա Կորնթ. Ա 24):

գրքի Կին-Իմաստուծոյան հակապատկերն է կին-պոռնիկն է, որ մարդկանց մոլորեցնելով՝ իր որոգայթն է գցում: Նա մարմնավորումն է մեղքի և անզգամութեան, որ գրքում նկարագրվում են վանող մանրամասնութիւններով (Թ 13 և հաջ.):

Իմաստունների գրքերը մշտապես դիմում են նման հակադրութիւնների: Դրանք մարդուն կանգնեցնում են ընտրութեան առջև (հմմտ. Սաղմ. Ա 6. «Զանպի Տերը գիտե արդարների ճանապարհերը, իսկ ամբարիշտների ճանապարհները կորստյան են տանում»):

Այդ ընտրութիւնն ավառ է: Այդ ազատութեան համար էլ մարդիկ պատասխանատուութիւն են կրում իրենց ընտրած ճանապարհի համար: Արարչին ընդդիմանալը, մեղքը, չեն կարող անհետեանք մնալ: Եվ դա ոչ այնքան պատժի մասին է, որ պիտի դրսից, որքան բուն մեղքի կործանարար ուժի.

Եվ կշտամբանքը պիտի սպանի ամբարիշտներին,
 իսկ հիմարների ապահովությունը կկործանի նրանց¹:

(Ա 32)

Մարդը պետք է հաստատ իմանա որ. Աստծու հետ ինքը կենդանի է, առանց Նրա՝ մեռած է: Այս միտքը արդեն իսկ Մովսիսական Ուխտում գլխավորներից է. «Այսօր, ահա, քո առջևն եմ դնում կյանքն ու մահը, բարին ու չարը» (Բ Օրին. Լ 15): Օրենքն ու Մարգարեները, սաղմոսերգուներն ու իմաստունները՝ բոլորը խոսում են արդարի օրհնյալ կյանքի մասին, և աղետների, որ սպասվում են մեղքի ստրուկներին:

Սակայն այս դեպքում ինչպես հասկանանք արդարներին հասնող դժբախտութիւնները: Ի պատասխան Առակաց Գիրքն ցույց է տալիս փորձութիւնների բարերար դերը.

Որոյակ մի անարգիր Տիրոջ խրատը,
 և մի դժգոհիք նրա հանդիմանությունից:
 Զանպի Տերը ում սիրում՝ նրան խրատում է
 և պատժում է նրան, ում ընդունում է որպէս որդի:

(Գ 11-12)

Այս վերջին՝ առանձնապես կարևոր և դժվար նյութն Առակներում միայն ընդգծվում է: Անմեղի տառապանքների հարցն ամենայն սրութեամբ դրվում է Հոբի Գրքում:

Հարցեր կրկնության համար

1. Գրքի մի հատկանիշներից է երևում, թե Առակները միայն Սողոմոնի ստեղծագործությունը չեն:

¹ Հայերենում վերջին տողը այլ է - խմբ.:

2. Սկզբնապես ինչ կերպով էր ընկալվում իմաստությունը:
3. Ըստ Առակաց գրքի ո՞րն է իրական Իմաստությունը:
4. Ո՞րն է իրական իմաստության ակունքը:
5. Առակաց Գրքում ինչ է ընկալվում Աստծու Իմաստությունն ասելիս:
6. Ի՞նչ է ներկայացնում իրենից երկու ուղիների ուսմունքը:

§ 22. Հորի Գիրքը

1. Հորի գրքի կառուցվածքն ու բովանդակությունը: *Հորի Գիրքն ստեղծված է որպես երկփեղկյալ ստեղծագործություն: Այն տրոհվում է արձակ և բանաստեղծական-գրամատիկ մասերի: Արձակով են գրված նախաբանն ու վերջաբանը: Նախաբանում (Ա 1-Բ 13) պատմվում է, թե ինչպես սատանան կասկածի տակ դրեց, որ Հոբ-արդարի անշահասիրությունը, և Աստուծոց Հոբին փորձելու իրավունք ստացավ: Զրկվելով իր ամբողջ հարստությունից, կորցնելով զավակներին, ծանր տառապանքների ենթարկվելով Հոբն այնուամենայնիվ չզանգատվեց Աստուծոց: Նրա համբերատարությունը խայտառակեց սատանային: Վերջաբանը (ԽԲ 7-17) նկարագրում է քաջ տառապյալի հաղթանակը: Աստված պարգևատրում է նրան՝ վերականգնելով ունեցվածքը և նոր զավակներ ընծայելով: Եվ Հոբը «վախճանվեց զառամյալ հասակում»:*

Բանաստեղծական-գրամատիկ հատվածը՝ գրքի հիմնական մասը (Գ 1-ԽԲ 6), բովանդակում է իր բարեկամների հետ Հորի զրույցի երեք շրջափուլը, որոնք եկել էին կարեկցելու: Բարեկամները՝ Եղիփազը, Բաղդատը և Սոփարը փորձում էին Հոբին բացատրել նրա տառապանքների պատճառը: Սակայն Հորի համար նրանց մխիթարական խոսքերը դատարկ ձայն է: Նա համոզված է, որ ինքն անմեղ է Աստծու առջև: Նրա հոգում «կասկածանքի փոթորիկ» է բարձրանում (ՏՄԻ. Златоуст. Письма к Олимпиаде, 2, 8): Սակայն, ի վերջո, Ինքն Աստված հայտնվում է Հոբին և հայտնում, որ Իր ուղիներն անքննելի են մահկանացուի համար:

Գրքի այս բանաստեղծական մասում երեք ընկերների ասածներին (զրույցի շրջափուլերից ամեն մեկում) համապատասխանում են Հորի երեք ասածները: Սրան ավելացված է Իմաստության օրհներգը, որը, ըստ երևույթին, հենց գրքի հեղինակն է գրել (ԳԼ ԻԸ), ինչպես և Եղիուսի խոսքերը (ԼԲ 1-ԼԷ 24), որոնք կազմել է գրքի վերջին խմբագիրը:

2. Գրքի նախապատմությունը, գրության ժամանակը: *Անմեղ տառապյալի մասին նյութն առաջին անգամ երևան է գալիս Միջագետքի իմաստունների գրվածքներում: Հայտնի են պոեմների շումերական և բաբելոնական*

լական տարբերակները (տե՛ս այս հատվածի Յավելվածը): Դրանցում մարդը, որ ծանր դժբախտությունների է հանդիպել, մտորում է Աստվածության Կամքի մասին և խոնարհվում նրա առաջ: Այդ պոեմների ավարտը հաշոդակ է, ինչպես Հոբի գիրքը: Երկինքը պարզևատրում է տառապալներին՝ իրենց հավատի և համբերատարության համար:

Այս պոեմները կարող էր ծանոթ լինել գրքի աստվածաշունչ հեղինակին, որոնք և օգտագործվել են իբրև հենք նյութի համար: Բացի այդ Իսրայելում ծանոթ էին իմաստուն Հոբի մասին առասպելին, ով, հավանաբար, պատմական անձ է եղել: Ք. ծ. ա. ԺԴ դարի եգիպտական փաստաթղթերում նա հանդես է գալիս պաղեստինյան Եհզվա արքա: Եզեկիել մարգարեն նրան հիշում է ոչ իսրայելացի իմաստուն-արդարների շարքում¹: Հոբի գրքում նա Հուս երկրի՝ Եդոմի գավառներից մեկի բնակիչ է:

Պոեմի գրության ժամանակի մասին այլազան կարծիքներ են հայտնվել: Հրեական ավանդությանը հետևելով՝ Որոգինեսն այն վերագրում էր մովսիսական շրջանին (Против Цельса, VI): Հովհան Ոսկեբերանը գրել է. «Ասում են թե գիրքն այս կազմել է Սողոմոնը, եթե իհարկե այն Մովսեսի ստեղծագործությունը չէ» (Твор., изд. VI., էջ 664): Նույն կարծիքն են արտահայտել նաև Գրիգոր Աստվածաբանը և այլ հին մեկնիչներ: Սակայն ստեղծագործության լեզվի հետագա ուսումնասիրություններն այլ թվագրման հանգեցրին: Օրինակ՝ Ֆիլարետ (Ֆիլարետով) եպիսկոպոսն² այն դիտարկում էր իբրև հինկտակարանյան ամենաուշ ստեղծագործություն: Բոլոր դեպքերում գրքի հեղինակի անունն անհայտ է մնում:

Այն որ գրքում հատուցումը սահմանափակվում է երկրային կյանքով, ցույց է տալիս, որ դժվար թե այն ի հայտ եկած լինի Ք. ծ. ա. Դ դարից առաջ, երբ առաջին անգամ մեռյալների հարության մասին ավետիս հնչեց: Ներկայումս մեկնաբանների մեծ մասը գիրքը վերագրում է Ք. ծ. ա. Ե դարավերջին:

Այդ շրջանում դեռևս տիրում էր այն կարծիքը, որ շարը միշտ պատժվում է, իսկ բարին՝ պարգևատրվում: Սակայն շատերն էին զգում այս ձևի պարզունակությունը:

Հոբի գրքում Տերը հերքում է թեոդիցիայի (աստվածարարացման) աստվածաբանական հին տեսությունները: Ճիշտ է դուրս գալիս Հոբը, և ոչ թե իր բարեկամները, որոնք «պաշտպանում էին» Աստծուն, որովհետև, չնայած «կասկածանքի փոթորիկին», նա նրանցից ավելի շատ էր հավատում Աստծու ճշմարտության: Հետմահու հատուցման խորհուրդը դեռ չէր հայտ-

¹ Եզեկ. ԺԴ 14: Մարգարեի հիշատակած Դակիելը, փյունիկյան առասպելական իմաստուն արքան է:

² Ֆիլարետ (Ֆիլարետով) – Ռիգայի եպիսկոպոս (1824–1882):

նվել, և Հոբի գիրքը հինկտակարանյան Եկեղեցուն պատրաստում էր այդ խորհրդի ընկալմանը:

Հոբի գիրքը հնուց ի վեր մեծ հեղինակություն է վայելել (Հակ. Ե 11): Դրա հատվածներն ընթերցվում են Մեծ Պահքի շրջանում¹: Մեկնիչներն այն դասում են Հին Կտակարանի առավել իմաստասիրական գրքերի շարքը, որովհետև այնտեղ շոշափվում են մարդկային կյանքի ամենահրատապ հարցերը:

Այս գրքով ոգեշնչվել են Լոմոնոսովը, Գյոթեն, Բայրոնը: Այն ելակետային է եղել Ս. Կյերկեգորի, Լ. Շեստովի, Կ. Յունգի փրկիսոփայական մտորումների համար: Գրքի նոր թարգմանությունը կատարել է Ս. Ս. Ավերինցևը (1973)²:

3. Զոբի համբերությունը (նախաբան): Գրքի հեղինակը, չկամենալով բանավիճել օրենսգետների հետ, իբրև հերոս ընտրել է օտարազգու (եգոմայեցու): Հորը ոչինչ չգիտե Օրենքի և խոստումների մասին: Նա Միակ Աստծուն է խոստովանում, Որին պաշտում է սկզբնական պարզությամբ: Նա արդար է իր հանդեպ (եբր. ԾԾ «տալ» - անարատ, պարզ, ամբողջ), մարդկանց (եբր. ԴՄ «ԵԱՇԱՐ» - իրավացի, ուղիղ) և Աստծու հանդեպ («աստվածավախ է և ամեն տեսակի շար ու մեղավոր գործերից հեռու»):

Բայց ահա մի ոմն հոգևոր էակ, որ հակառակորդ է կոչվում (եբր. ԽԾ Սատան - ռուս.՝ Սատանա), մյուս «Աստծու որդիների» (հրեշտակների) հետ հայտնվելով երկնային գահի առջև, Հոբի անշահախնդրության վերաբերյալ կասկած է հայտնում: Արդյո՞ք նրա արդարությունը վարձքը չէ այն բոլոր բարիքների, որ Աստված տվել է նրան: Աստված նրան իր «ծառան» է համարում, մինչդեռ իրականում Հոբը միայն իրենն է փնտրում: «Բայց դե փորձիր մեկնել ու զգել քո ձեռքը նրա ամբողջ ունեցվածքին,- ասում է սատանան Աստծուն,- ու կտեսնես, որ նա դեմատդեմ կանիծի քեզ» (Ա 11):

Գրքում նշված սատանան տակավին այն դեռ չէ, ինչպես պատկերացնում են այսօր (այն ժամանակ դեռ խորհրդանիշն էին վիշապն ու օձը): Սատանան, «հակառակորդը» - Եահվեի խիստ նախատեսումների իրականացնողն է, նման ահեղ սատակիչ-հրեշտակների: Նրա խնդիրն է՝ փորձել մարդուն:

Հակառակորդի խոսքերում առկա են Ուխտի հայտնի մեկնաբանության բացահայտումը իբրև գործարքի: Սա կանխասելն է այն հանդիմանությունների, որ բազմիցս առաջ են քաշել կրոնական էթիկայի դեմ, որն իբր ամբողջությամբ հիմնված է «հատուցման և պատժի» վրա:

Պատասխանելով հակառակորդին՝ Աստված ոչ թե պարզապես հերքում է նրա կասկածները, այլ նաև հնարավորություն է ընձեռում նրան համոզվե-

1 Հայեկեղեցում Նույնպես Զոբի գրքից ընթերցումները հիմնականում Մեծ Պահքի շրջանում են և նրա հիշատակի օրը - խմբ.:

2 Տե՛ս С. С. Аверинцев, Собрание сочинений. Переводы: Евангелие от Матфея. Евангелие от Марка. Евангелие от Луки. Книга Иова. Псалмы Давидовы, ДУХ I ЛІТЕРА, 2004.

լու, որ Հոբն անշահախնդիր է: Նա սատանային է հանձնում լիովին տնօրինելու արդարի ճակատագիրը, որպեսզի ցույց տա նրան Հոբի անվերապահ հավատարմությունը:

Սակայն ինչպես կարող է Աստված մարդուն «վեճի դրույք» դարձնել: Այս ընկալելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ նախաբանի առակավոր, պայմանական բնույթը: Այն չի հավակնում իրականության ճշգրիտ ներկայացմանը: Հեղինակի նպատակն է այս երկխոսության միջոցով բացահայտել գլխավոր և շատ կարևոր ճշմարտություն:

Ըստ էության այս նույն՝ պայմանական բանալիով են պատկերված նաև աղետները, որ հակառակորդը բերեց Հոբի վրա: Մեկ օրում նա զրկվեց ամեն ինչից և գահավիժեց երջանկության ու հզորության բարձունքից: Սակայն աղետը նա տանում է անհողդողդ, որպես վայել է Աստծու իսկական «ծառային».

Իմ մոր որովայնից ես մերկ դուրս եկա,

մերկ էլ կվերադառնամ:

Տերը տվեց, Տերն էլ առավ...

Թող օրհնյալ լինի Տիրոջ անունը:

(Ա 21-22)

Սակայն սատանան չի բավարարվում դրանով: Նա ասում է, թե Հոբն աներեր է, որովհետև անձնապես ողջ և առողջ է: Եվ եթե հիվանդությունն իրեն դիպչի, հայտնի չէ, թե նա նույնքան աներեր և անշահախնդիր կմնա ու անասան կլինի իր հավատով: Եվ այստեղ նույնպես հակառակորդին գործունեության կատարյալ ազատություն է տրվում: Անձեռնմխելի է միայն Հոբի «հոգին», այսինքն՝ կյանքը:

Այսպես մարդը, որ դեռ երեկ իրեն երջանիկ էր համարում, ոտքից գլուխ չարորակ վերքերով պատվեց: Բոլորը վանվեցին նրանից, որ մի ախտով էր տառապում, որ հնուց ի վեր Աստծու պատիժ էին համարում: Կիրը համոզում է Հոբին, որ մի խոսք ասի Տիրոջ ու մեռնի նրա ձեռքով և ազատվի խատառակությունից ու տառապանքից: Սակայն Հոբը պատասխանում է. «Եթե Տիրոջ ձեռքից բարիքներ ընդունեցինք, չարիքներին չհամբերե՞նք» (Բ 10):

Ըստ Հովհան Ոսկեբերանի՝ պատումի նպատակն է, «համբերել սովորեցնել նրանց ովքեր փորձության մեջ են ընկնում, չնայած իրենց բարեպաշտությունը հայտնի է բոլորին և չգայթակղվել» (Твор., тун. VI., էջ 664):

4. Հոբի զրույցը հարազատների հետ: Հոբի աղետալի վիճակի մասին տեղեկանալով՝ նրան այցելեցին երեք ընկերները, որ նույնպես եզոմայեցի էին: Նրանք հազիվ ճանաչեցին Հոբին և «բարձրադաղակ լաց եղան» և նստեցին նրա կողքին՝ «յոթ օր և յոթ գիշեր», ու նրանցից ոչ մեկը մի բան

չխոսեց նրա հետ: Վերջապես Հոբբը խախտում է լուսթյունը և դառնությամբ խոսում իր ճակատագրի մասին: Գրքի բուն բովանդակությունը հենց նրանց զրույցներն են: Գիրքը տանջալից հարց է բարձրացնում՝ ինչո՞ւ է տառապում անմեղը:

Այն շրջանում, երբ գրվում էր Հոբբի Գիրքը, հույն ողբերգակները (էսքիլես, Սոֆոկլես) այս հարցի պատասխանն ունեին. մարդու վրա իշխում է կույր և ամենակարող ճակատագիրը: Ճակատագիրն անողոք է, և նրա նախանշումների մեջ բարոյական իմաստ չկա: Սակայն Հոբբը չի կարող դրա հետ համաձայնել: Նա հավատում է Աստծու ողորմածությունը, և հենց այս պատճառով են նրա տառապանքները ծանր:

ՉՐՈՒՅՑ ԱՌԱՋԻՆ: Հոբբն սկսում է այնտեղից, որ անիծում է իր աշխարհ գալու օրը.

Ինչո՞ւ չմեռա ես էլ արգանդում,
 դուրս եկա այսպես և տեղնուտեղը չչքացա գեթ...
 Մինչ հիմա հանգչած ես կլինեի,
 կննջեի ու կհանգչեի ...,
 Այնտեղ են հիմա ամբարիշտները,
 որ բորբոքեցին պայրույթը Տիրոջ:
 Այնտեղ հանգչեցին մարմնով տանջվածներ...
 Այնտեղ են փոթրն ու մեծը միասին,
 տոյսպես և ծառան, որ չունի երբեք տիրոջից երկյուղ:
 (Գ 11, 13, 17, 19)

Այս խոսքերում ակնարկվում է, որ Հոբբին տանջում է ոչ միայն իր դժբախտությունը, այլ նաև չարը, որ տիրում է աշխարհում :

Եղիփազն առարկում է Հոբբին (Դ-Ե), հիշեցնելով, որ Աստված չի կարող պատժել արդարին: Նա կոչ է անում Հոբբին համակերպվել և միջնորդություն խնդրել Աստծուց: Հեղինակը Եղիփազի և Հոբբի մյուս ընկերների շուրթերից բազում իմաստուն մտքեր է հնչեցնում, որպեսզի ցույց տա նրանց մտքերի մասնակի ճշմարտացիությունը: Եվ ոչ թե ընկերների հայացքներն են սխալ, այլ սխալ է, որ նրանք բավարարվել են հին տեսություններով և չեն սպասում նոր Հայտնության: Իսկ Հոբբը, խոսելով անկեղծ և ուղղակի, աչք չի փակում մարդկային ցեղի աղետների վրա: Եվ անգամ հուսահատության հասած վիճակում, նա չի դադարում հավատալ Աստծու ողորմությանը: Նա Արարչին է դիմում՝ աղերսելով բացահայտել գաղտնիքը մարդկային ողբերգական վիճակի: Հենց այս հավատն առավել է արդարացնում Հոբբին, քան արտաքինապես բարեպաշտ ընկերներին:

Եղիփազին պատասխանելով՝ Հոբն ասում է, որ ոչ միայն իրեն է պաշտպանում Աստծու առջև (Չ-Է), չէ որ բոլոր մարդիկ որևէ կերպ նման են իրեն՝ մոխիրի մեջ նստածին.

Փորձությունն չէ՛ միթե երկրի վրա կյանքն մարդու.

վարձկանի օրական վարձը չէ՛ կյանքը իր:

Ինչպես որ ծառան է վախենում տիրոջից ու պահվում սովերում,

կամ ինչպես վարձկանն է սպասում իր վարձին, –

այնպես էլ ես պուր եմ սպասել ամիսներ:

Ցավագին գիշերներ են բաժին ընկել ինձ:

(Է 1-3)

Բաղդատը փորձում է «պաշտպանել» Աստծուն և վկայում է, թե չի կարող պատահել, որ Նա պատժի արդարին: Իմաստունն համոզված է, որ Հոբն ուղղակի չի գիտակցում իր մեղքը, որի համար վճարում է:

Սակայն Հոբին նաև հակառակ օրինակներն են հայտնի: Նրա տառապանքը խորանում է նրանով, որ նա իր արդարությունը չի գտնում Աստծու մոտ: Արատ – պատիժ, բարիք – վարձարություն շղթան խախտված է.

Իսկ եթե հոգով մեղանչել եմ՝ չգիտեմ.

գիտեմ միայն, որ կյանքս իլում են ինձանից:

Դրա համար եմ ասել.

”Բարկությունը կործանում է մեծին ու հպորհին”:

(Թ 21-22)

Այս միտքն ավելի է տանջում Հոբին, քան իր անձնական դառնությունը. Յծծյունով կհասցնեմ նրան իմ խոսքերը.

կխուսեմ թախծոտած իմ հոգու դառնությամբ:

Ու կասեմ. ”Տե՛ր, մի՛ սովորեցրու ինձ, որ լինեմ ամբարիշտ”.

և ինչո՞ւ դատեցիր այսպես ինձ:

(Ժ 1-2)

Խոսակցությանը միանում է Սոփարը՝ Հոբի երրորդ ընկերը: Նա արդեն ուղղակի է մերկացնում տառապյալին: Աստծու մեծությունը թույլ չի տալիս մարդկանց դատի նստել Նրա հետ. եթե Հոբն անմեղ է՝ ամեն բան կվերագարձվի նրան:

Պատասխանելով Հոբը կրկին խոսում է համայն մարդկությանը ճակատագրի մասին: Մարդիկ ողորմելի են և անպետք: Նրանց անխուսափելի վախճանը մոխիրն է.

Կնոջածին մարդն է սակավակյաց ու լի դառնությամբ:

Ով որ ծաղկել էր որպես մի ծաղիկ՝ թափվեց ու ընկավ,

փախավ իբր սովեր. հաստատ չի մնա...

Ծառի համար իսկ գունվում է հույս.

թեև կտրում են, նորից է ծաղկում:

Ճյուղերը նրա դեռ չեն պակասում...
 Բայց մահկանացուն՝ վախճանված մարդը
 զնում է և էլ զոյություն չունի:
 Ծանծաղում է ծովն իր ժամանակին.
 սպառած գետերը ցամաքում են.
 նույնպես մարդիկ թե ննջեն՝ էլ վեր չեն կենա:
 Մինչև երկինքը իսպառ չլուծվի՝
 չեն վարթնի քնից:

(ԺԴ 1 և հաջ.)

Նախկինում մարդիկ բավարարվում էին նրանով, որ հատուցումը կլինի իրենց սերնդին: Սակայն Հորը չի բավականանում սրանով: Նրան բնորոշ է անձնական ինքնագիտակցությունը (ի հակադրություն ցեղայինի): Բայց, քանի որ դեռևս բացահայտված չէ մահվանից հետո հատուցման խորհուրդը, Հորը մարդկային ճակատագրին նայում է որպես ամենաթախծալին:

Այսպես Աստծու Խոսքը մարդուն տանում է այլ հատուցման անհրաժեշտության, որ սահմանափակված չէ երկրային սահմաններով:

ՉՐՈՒՅՑ ԵՐԿՐՈՐԷ: Եղիփազը հայտնում է, որ մարդը միշտ մեղավոր է, որ Աստված «իր սրբերին չի հավատում», իսկ հպարտությունն անպատվություն է, որի համար մահկանացուն պատիժ է կրում (ԺԵ 15-16):

Հակաճառելով՝ Հոբն ասում է, որ այլևս ընկերների օգնությանը չի սպասելու, այլ դիմելու է Աստծուն՝ պահանջելով Նրա դատաստանը (ԺԶ-ԺԷ):

Բաղդատը դարձյալ պնդում է, որ արդար հատուցման օրենքն անխախտ է (ԺԸ):

Հոբն ընկերներին գթասրտության կոչ է անում: Նա հուսահատության անդնդում է, սակայն հույսի նշույլը դեռ չի մարել՝

Քանի որ գիտեմ՝ յաւերժական է Նա¹,
 ով երկրի վրայ պիտի փրկի ինձ՝
 յարութիւն տալով մարմնիս,
 որ այս բոլորը համբերեց, տարաւ:

Տիրոջ կողմից են հասել բոլորը,
 որ ինքս անձամբ քաջ գիտակցում եմ,
 ինչ որ տեսել եմ ես իմ աչքերով, ոչ թէ ուրիշը:
 Այդպէս ամէն ինչ իմ ծոցում հանգաւ:

(ԺԹ 25-27)

Փրկչի (եբր. ԳՈՒՂ՝ נִצְּוֹן պաշտպան, ապավեն, փրկիչ) մասին այս մարգարեական խոսքերը բացարձակ ճշգրիտ թարգմանություն չունեն: Բնա-

¹ Այլ թարգմանություններում՝ Փրկիչ, Պաշտպան, Զավիչ – խմբ.:

գրին առավել մոտ է համարվում հետևյալ տարբերակը. «Եվ ես գիտեմ, Ապավենն իմ ողջ է և վերջում կհառնի մոխրակույտի վրա, և երբ մորթն իմ քայքայվի՝ մարմին առած ես կտեսնեմ Աստծուն»:

Հիմք չկա կարծելու, թե խոսքն այստեղ մեռյալներից հարուստն առնելու մասին է: Հոբբ սոսկ հույս է հայտնում, որ Աստված կհայտնվի իրեն, քանի դեռ ինքը ողջ է: Սակայն եթե ոչ բառացի, ապա գոնե հոգեպես այս տողերը կանխասում են գալիք քավության և հարուստի հույսը: Հոբբ տեսչում է լսել Աստծուն, տեսնել Նրան դեմ առ դեմ: Նրան հարկավոր չեն «Երկնքի լուսնային» բարեպաշտական տեսությունները, այլ կենդանի Հայտնություն:

Սոփարը դարձյալ համառորեն վերադառնում է հին տեսակետին: Նա ասում է, որ Հոբբ չի կարող անմեղ լինել: Աղետը պիղծ մարդկանց է հանդիպում (Ի):

Հոբբի համար դժվար չէր նրան հերքելը: Կյանքը չի տեղավորվում Սոփարի տեսության շրջանակներում: Հոբբ հարցնում է.

Այդ ինչպե՞ս է, որ ամբարիշտները միշտ ողջ են մնում,
տարիքը առնում, նույնիսկ լողում են հարստության մեջ...
Ամբարիշտները կյանքները ասիա բարիքների մեջ են ավարտել դեռ,
գերեզմաններում հանգիստ ննջել են:

(ԻԱ 7, 13)

ԶՐՈՒՅՑ ԵՐՈՐԸ: Գրքի այս մասի կառուցվածքն, ըստ երևույթին, փոփոխել են հին գրիչները: Նախնական շարագրանքն աստվածաշնչագետների ջանքերով վերականգնվել է ըստ իմաստի:

Նախ խոսում է Եղիփազը՝ Հոբբին մեղադրելով ծածուկ անօրինության մեջ և կոչ անելով ապաշխարել (ԻԲ):

Հոբբն Աստծու դատաստանն է աղերսում՝ դարձյալ հիշատակելով չար և ամբարիշտ մարդկանց բարեկեցությունը (ԻԳ, ԻԴ 1-17, ԻԵ) «Մարդիկ զրկվեցին քաղաքից, տնից. հոգիներն մանկանց խիստ հեծեծեցին: Իսկ Նա ինչո՞ւ չի այցելում սրանց» (ԻԴ 12):

Բաղդատը հիշեցնում է, որ Աստված ամենակարող է (ԻԵ, ԻԶ 5-14):

Հոբբ հերթական անգամ պաշտպանում է իրեն ընկերների առաջ (ԻԶ 1-4, ԻԷ 1-12):

Սոփարը վկայում է, որ վաղ թե ուշ մեղքը կպատժվի (ԻԷ 13-23, ԻԴ 18-24):

Հոբբ եզրափակիչ խոսքը (ԻԹ-Ա) լի է իր նախկին երջանիկ կյանքի հուշերով: Նա շարունակում է դժգոհել ճակատագրից և պաշտպանել իր անմեղությունը: Սրանով ավարտվում են երեք զրույցները: Ընկերները լուռ են, լուռ է և Հոբբը: Եվ այնժամ փոթորիկի ու ամպի միջից՝ հնչում է Տիրոջ ձայնը:

5. Աստծու պատասխանը: *Հոբին հայտնվելով՝ Աստված շղարշը չի վերացնում խորհրդավորության վրայից: Նա թեոդիցիայի նոր, առավել լավ տարբերակ չի տալիս: Նա լուկ բացում է մարդու առջև արարչության պատկերը, որ ի ցույց է դնում էի անսահման զորությունն ու իմաստությունը (ԼԼ-ԽԱ): Աշխարհի վերջնական բարօրությանն են ուղղված Աստծու բոլոր գործերը, անկախ այն բանից, թե որքան անհասկանալի են դրանք ներկայանում մարդկանց: Բոլոր էակները իրենց գոյությունը ստանում են Աստծուց: Արդյո՞ք սա Նախախնամության բարի լինելու մասին մտորումների առիթ չպիտի հանդիսանա: Այստեղ կանխասվում են փոքր թռչունների մասին Քրիստոսի խոսքերը (Մատթ. Ժ 29-31):*

Ըստ էության սրան է հանգեցնում Եահվեի ողջ մենախոսությունը: Սակայն գիրքն ընկալելու համար անհամեմատ կարևոր է, թե ինչպես է Հոբն արձագանքում Աստվածահայտնությանը: Նա հեզուլյամբ և ակնածանքով խոնարհվում է Աստծու առջև: Ինչո՞ւ: Բացատրությունը տալիս է Հոբի՝ Աստծուն ուղղված վերջին խոսքերում.

*Սրանից առաջ ես ականջներովս էի լուկ լսել,
բայց հիմա աչքերս էլ տեսան հենց քեզ:
Այդ պատճառով նվաստ համարեցի ինձ ու հալվեցի ես:
Ինքս ինձ հող ու մոխիր եմ դիտում:*

(ԽԲ 5-6)

Աստվածաշունչ հեղինակն Արարչի մասին հերթական ենթադրություն չի առաջարկում: Աստվածային Նախախնամության մասին Հոբի մոտ նոր գիտելիք է ծագում Էի հետ խորհրդավոր հանդիպումից: Սրանով վերջ է դրվում Աստծու կողմից մոռացված լինելուն: Հոբը դարձյալ մերձ է Ապավեն-Տիրոջը: Նա վիճում ու դժգոհում էր, սակայն մինչև վերջին պահը նրան չէր լքում հույսը, որ Աստված Իր դեմքը կհայտնի իրեն: Եվ այդ հույսն իրականություն դարձավ: Աստծու ներկայությունամբ բոլոր հարցերն ինքնըստինքյան վերացան: Այս խորհրդավորությունը բառերով արտահայտել չի կարողացել անգամ հավատի մեծագույն ուսուցիչը, Հոբի Գրքի հեղինակը: Գիրքն ասես անավարտ է մնում: Վերջնական պատասխանը կտրվի մահվան նկատմամբ հաղթանակի Հայտնությունամբ, մեռյալներից հարությունամբ և Քավիչի աշխարհ գալով:

Հոբի գրքում պատկերված է մի մարդ, որ խավարի մեջ է, հեռու է Ուխտից և խոստումներից: Սակայն անգամ այդ խավարում նա չի կորցնում հույսն ու հավատը: Ճշմարտությունը նա որոնում է ոչ թե մարդկանց, այլ Աստծու մոտ:

Հոբի ներքին ճշմարտացիությունը ցույց տալու համար հեղինակը գիրքը եզրափակում է երջանիկ ավարտով: Հոբը դարձյալ առողջ է, հարուստ,

և ընտանիքում երեխաներ են ծնվում: Աստված նրան՝ արդարացրեց, ոչ թե ընկերներին:

Սակայն բարեկամների համոզմունքներում ամենը չէ, որ սխալ էր: Հատուցումը ինքնաբերաբար օրենք չէ, որ իրականացվում է Երկրի վրա, այլ հավատն է դրա հանդեպ [օրենք]։ և սա մոլորություն չէ: Գիրքը միայն ցույց է տալիս, որ երկրային կյանքով ամեն բան չի սպառվում: Եվ հոգևոր պատմության մեջ սա է գրքի մեծագույն նշանակությունը:

Հարցեր կրկնության համար

1. Ինչ կառուցվածք և գրական առանձնահատկություններ ունի Յոբի Գիրքը:
2. Ինչ հավելումներ են կատարվել Յոբի գրքում:
3. Յին գրականության և ավանդությունների մեջ ինչ նախօրինակներ է ունեցել գիրքը:
4. Երբ է գրվել գիրքը:
5. Ո՞ր խնդիրն է գրքի կիզակետում:
6. Ինչի մասին է Յոբի Գրքի «երկնքի Նախաբանը»:
7. Ինչպես է պատկերված Յոբի համբերությունը:
8. Ընկերներն ինչով էին մեկնում Յոբին բաժին ընկած աղետները:
9. Ինչ էր պատասխանում Յոբը նրանց:
10. Ինչպես էր Յոբը նկարագրում մարդու վիճակը երկրի վրա:
11. Ո՞րն էր Տիրոջ պատասխանը Յոբին:
12. Ինչո՞ւ այդ նրան բերեց խոնարհության և զղջման:
13. Ինչո՞ւ էր Յոբն արդարացի:
14. Ո՞րն է Յոբի գրքի վերջաբանի իմաստը:

§ 22-ի Հավելված

Ամենդ տառապայալի մասին բարեխոնյան պոեմից

*Նոր սկսեցի ասրել, ժամանակս անցավ,
Եվ ուր էլ որ նայեմ՝ չարիք է, չարիք:
Աճում է դժբախտությունը, ճշմարտություն չկա:
Աստծուն դիմեցի, և դեմքը թեթեց,
Աստվածուհուն աղոթեցի, իմ կողմ չըջվեց,
Տեսանող քուրմը չասաց ասպազան,
Գուշակը մոգությամբ չպարվեց ճշմարտությունը,
Պայծառառեսին հարցրեցի, և նա չընկալեց:
Հմայախոսի ծեսը պատիժս չվանեց:
Սակայն ինչեր են կատարվում կյանքում:*

Տեսնում եմ ապագայի հետապնդումներն ու խառնակությունները...
 Ինչպես նա, որ աղոթքով չի փառաբանում աստծուն,
 Ուտելուց առաջ չի պաշտում աստվածուհուն,
 Չի երկրպագում և չի խոնարհվում,
 Շրթունքը նրա աղոթք չի հիշում,
 Ինքն աստծու տունը շուքով չի նշում
 Եվ ծեսերը մեծ անտես է առնում:
 Երկյուղածությամբ չի վարել իր հոտը:
 Առանց աստծուն հիշելու՝ սկսում էր ճաշակել...

Վրաս է կահավել ծանր հիվանդությունը,
 Մրրիկն է բարձրանում հորիզոնից,
 Վեր է բարձրանում Տկարությունը,
 Եվ դաժան հասր լքեց Անդունդը,
 Ստորգետնյա ոգին թողեց Էկուրը¹,
 Լեռան ետևից դուրս թռավ դևուհին,
 Տենդը՝ հորդահոս հոսանքներից,
 Խոտի հետ աճեց մարմնի տկարությունը:
 Բանակի նման հասան ինձ,
 Խփեցին գլխիս, ճվմեցին զանգս:
 Խավարում է անձս, հեծում են աչքերս,
 Ծոծրակս փշրեցին, ոլորեցին վիպս,
 Խոցեցին կողերս, կուրծքս սեղմեցին
 Խոցեցին մարմինս, ցնցեցին ձեռքերս
 Որովայնիս մեջ հրդեհ բորբոքեցին,
 Դող և սարսուռ գցեցին մարմինս մեջ,
 Լեզուս հրկիպեցին թոքերիս բորբով,
 Տենդով ճարպերը վանեցին մարմնից:
 Անուր էի պարսպի պես, այժմ ավերակ եմ,
 Ճկուն էի ինչպես եղեգն, իսկ այժմ՝ ճկված...

Չեմ մեռել ես դեռ, բայց ողբացել եմ ինձ:
 Համայն երկիրն է բացականչում՝ «Մեռավ նա... ողբ»:
 Լսում է թշնամիս և պայծառանում,
 Ինձ ատող կինը՝ սրտով է բերկրում:
 Մարում է օրը մերձավորներիս համար,
 Մայր մտավ արևն իմ ընկերների:

(«Я открою тебе сокровенное слово»,
 Մ., 1981, էջ 216-220)

¹ Բառացի «Լեռան տուն», ուր հավաքվում են աստվածները, հունական տարբերակն է Օլիմպոսը – իմր.:

§ 23. Ժողովուրդի գիրքը

1. Վերնագիրը, բնույթն ու կառուցվածքը: Գրքի վերնագիրն այսպիսին է, որովհետև գրված է ժողովուրդի [Եկկլեսիաստեսի] անունից «Դավթի Որդու՝ Երուսաղեմում Իսրայելի թագավոր ժողովուրդի խոսքերը» (Ա 1): Հրեական անվանումը ՊՆՊՂ - ԿՈՅԵԼԵՏ ծագում է ՆՊՂ - «ԿԱՅԱԼ» բառից, որ նշանակում է ժողով (սովորաբար այդպես էր կոչվում հինկտակարանյան համայնքը կամ հավատացյալների աղոթածոցը): Սրա համապատասխանությունը հունարենի թարգմանիչը գրքի վերնագիրը ծագեցրել է Ἐκκλησία («էկկլեսիա»)՝ ժողովրդական հավաք, Եկեղեցի բառից: «Կոհեբեթ-էկկլեսիաստ» բառի իմաստը կարելի է փոխադրել իբրև հավաքին խոսող, կամ քարոզիչ: Սուրբ Գրիգոր Նյուսացին այս անվան մեջ Եկեղեցու գերագույն Ուսուցիչ Քրիստոսի մասին ակնարկ է նկատում (Истолкование Екклесиаста, 2,1):

Գիրքն իմաստունների գրվածքների դասին է պատկանում: Ինչպես Հոբի, Առակաց և Երգ Երգոց գրքերում, այստեղ ևս ուղղակի հղումներ չկան Օրենքին, Ուխտին և սրբազան պատմությանը: Հեղինակը համամարդկային դիրքերում է, որ ընկալելի են ցանկացած երկրի և դարաշրջանի անհատի: «Ներկայի ունայնություն» (սուրբ Աթանաս) մասին իր հիմնական միտքն աստվածաշնչյան գրողն արտահայտում է բանաստեղծական բարձր ձևով: Գիրքը բաղկացած է վեց բաժիններից կամ պոեմներից:

1. Նախաբան (Ա 2-Ա 11),
2. Երկրային իմաստություն և վայելքների ունայնություն (Ա 12 - Բ 26),
3. Մարդկային ջանքերի ունայնություն (Գ 1-Ե 19),
4. Հարստության ու փառքի ունայնությունը (Զ 1-Ը 17),
5. Մարդու ճակատագիրը (Թ 1 - ԺԲ 8),
6. Վերջաբան (ԺԲ 9-14):

Պոեմներից յուրաքանչյուրն ինքնուրույն ամբողջություն է, սակայն գրանք բոլորը շաղկապված են միասնական գաղափարով: Վերջաբանը գրել է ժողովուրդի աշակերտը, որ բնութագրումներ է տալիս ուսուցչի երկերին:

2. Հեղինակն ու թվագրումը: Հեղինակն իրեն Դավթի որդի է կոչում, որ հնում առիթ էր ծառայում նրան Սողոմոնի հետ նույնացնելու: Սակայն հենց ինքն թաքնված ակնարկ է անում, որ գրում է Սողոմոնի թագավորելուց հետո: Նա ասում է՝ «Ես՝ ժողովուրդս, Իսրայելի թագավոր եղա Երուսաղեմում», - և հիշեցնում է Երուսաղեմում իրենից առաջ եղած թագավորների մասին (Ա 12, 16): Մինչդեռ Սողոմոնից առաջ կառավարել է միայն Դավիթը: Դեռևս ժեղարում Հուգո Գրոցիոսը¹ ժողովուրդ անունը դիտում էր իբրև ծածկանուն: Մոսկ-

¹ Հոլանդացի պետական գործիչ, իրավաբան, փիլիսոփա, թատերագիր և բանաստեղծ,

վայի մետրոպոլիտ Ֆիլարետն այդքան կտրուկ չի արտահայտվել, սակայն ընդունում էր Սողոմոնի՝ գրքի հեղինակ լինելու վերաբերյալ կասկածները: Բանասիրական հետազոտությունը հաստատեց այս կարծիքները: «Ժողովողի գիրքը,- ի դարասկզբին գրում էր Մոսկվայի Հոգևոր Ակադեմիայի պրոֆ. Միշցինը,- նույնիսկ ավելի լեցուն է արամեաբանություններով, քան Եզրասինը, Նեեմիինը և հետգերուսթյան մնացյալ ստեղծագործությունները... Այս ամենն ստիպում է ընդունել, որ Ժողովողի գիրքը գրել է ոչ թե Սողոմոնը, այլ մի անձ, որ ապրել է հետգերուսթյան շրջանում» (ՄԵ, СП6., 1908, հտ. 5, էջ 4-5):

Ինչո՞ւ էր հեղինակը գրում Սողոմոնի անունից: Հին Կտակարանում Սողոմոնն ընկալվում է իբրև իմաստունի իդեալ և միաժամանակ մարդ, որ ամբողջովին ըմպել է երկրային վայելքների գավաթը՝ մարմնական հաճույքներից մինչև աշխարհի ճանաչողությունը: Այս իսկ պատճառով սրբազան գրողը կարող էր տեղին համարել իր խոսքերը Սողոմոնի շուրթերից հնչեցնելը:

Ժողովողի հնագույն ձեռագիրը հայտնաբերվել է Կոմորանյան 4-րդ անձավում՝ Մեռյալ ծովի մոտ: Այն մոտավորապես Ք. ծ. ա. 150 թվականի է: Հետևաբար Ժողովողի գիրքը չէր կարող ստեղծվել այդ թվականից ուշ: «Իրա հուսահատական հոռետեսությունն արտացոլում է այն ժամանակաշրջանը, երբ շատերն սկսեցին կորցնել արտառոց սպասումների ու խոստումների իրականանալու հույսը: Երբ սպասվող վեհության և իրականում իշխող ստորացման հակադրությունն այլևս անտանելի էր դառնում, և միակ մխիթարությունը, բացի կյանքի սովորական հաճույքները, այն էր, թե հարազատ ժողովրդի վիճակը ողջ մարդկության ճակատագիրն է» (Б. А. Тураев. ИДМ, հտ. 2, էջ 281):

Ժողովողի գրքի հոռետեսությունը բացատրվում է նրանով, որ հրեա վարդապետների մոտ կասկած կար գիրքն կանոնի մեջ ընդգրկելու վերաբերյալ: Եկեղեցին այն ընդունեց իբրև Սուրբ Գրքի մի մասնիկ, հակառակ Թեոդորոս Մոպսուեստացու կարծիքին, որով վիճարկվում էր երկի աստվածաշունչ լինելը:

3. Գրքի հիմնական գաղափարը երկրային բոլոր պատրանքների պսակագերծումն է: Եթե Հոբի գրքի հեղինակը դեռ կյանքի բարօրությունը դիտարկում է իբրև Աստծու գթության նշան, ապա Քարոզիչն ի ցույց է դնում երկրային ամեն ինչի ունայնությունը: Բնագրում «ունայնություն» բառին (եբր. נבון - ՅեՎեՆ) նշանակում է ծուխ, փոշի, ոչնչություն, իսկ «ունայնություն ունայնությանն»՝ ունայնության բարձր աստիճանը: «Չոգու տանջանքը»՝ կարելի է թարգմանել քամուն հետապնդել: Այն՝ ինչ մարդիկ երջանկություն, բարիք, օգուտ (եբր. יוֹתֵי - Իթուու) են համարում, իրականում անհասանելի

երազանք է: Ժամանակավոր աշխարհում ամեն բան անցողիկ է: Ոչինչ չի մնա հավերժ, և ոչ մի բան լիակատար բավարարում չի շնորհի:

Հինկտակարանյան գիտակցության համար, որ ուղղված է երկրայինին, այս դառն եզրակացությունն անհրաժեշտ էր: Ժողովողի ժխտական փորձն օգնել է հասկանալ, որ երկրային կյանքն առանց հավերժական կյանքի՝ «ունայնություն» է: Այս է պատճառը, որ գիրքը սիրված էր քրիստոնյա ճգնավորների շրջանում:

4. Համաշխարհային շրջապտույտ: Կոհելեթը (մենք այսպես պիտի անվանենք գրքի հեղինակին) վերանում է սրբազան պատմության հիմքից և աշխարհին նայում հին փիլիսոփաների դիրքից, որոնք Տիեզերքը դիտարկում էր իբրև հավերժական շրջապտույտ, որ զուրկ է իմաստից և նպատակից: Նմանատիպ մի բան գտնում ենք Ժողովողի տողերում.

Սերունդ է գնում, սերունդ է գալիս,
բայց երկիրը մնում է հավերժ:
Արեգակը ծագում, արեգակը մայր է մտնում
և վերադառնում է իր տեղը, որտեղից ծագել է:
Հողմը ելնում է դեպի հարավ և դառնում է դեպի հյուսիս,
պտտվելով պտտվում՝ փչում է հողմը
և վերադառնում նորից իր շրջապտույտին:
Բոլոր գետերը գնում են դեպի ծով,
բայց ծովը չի լցվում,
և նորից գետերը վերադառնում են այնտեղ,
որտեղով հոսել են ...
Այն, ինչ եղել է, նույնն էլ պիտի լինի,
և այն, ինչ կատարվել է,
նույնն էլ պիտի կատարվի:
Եվ ոչ մի նոր բան չկա արեգակի ներքո.
որովհետև ոչ ոք չի կարող ասել՝
«Ահա սա նոր է,
բանի որ դա եղել է վաղուց,
հախոտենապես՝ մեզինից առաջ եղածների մեջ:
Նախկինների հիշատակը չկա,
չի լինելու նաև դրանցից հետո գալիքների հիշատակը՝
ամենավերջում եկողների մեջ:
(Ա 4 և հաջ.)

Աստվածաշնչյան մարգարեները կանխատեսում էին Աստծու Թագավորությունը՝ աշխարհի արմատական վերափոխումը, որը արարչագործության նպատակն է: Սա Հայտնությունը էր տրվել նրանց: Կոհելեթը ուրվագծում է

գոյությունն այնպիսին, ինչպիսին այն պատկերվում է բնական բանականության առջև: Բնությունն ու մարդը ենթակա են անփոփոխ օրենքներին, որոնք թույլ չեն տալիս հուսալ փոփոխությունների մասին: Ներկա օրինակում կարծես մենք ունենք «հակառակից բխող ապացույց»: Գրքում առանձնակի ընդգծված է, որ առանց Հայտնության մարդը դատապարտված է ճակատագրական հոռետեսության:

5. Երկրային հույսերը ունայնությունը: Ի տարբերություն Հոբի՝ Կոհեղեթը մշտապես պաշտպանված էր դժբախտություններից: Բայց, այնուամենայնիվ, նա համոզվել է, որ երջանկությունն անորսալի է: Ժամանակավոր բարիքները (եբր. ԾԾ - ԹՈԲ՝ բարիք) բացարձակ արժեք չեն ներկայացնում:

Սրտիս մեջ ասացի.

*«Արի՜ քեզ փորձեմ նաև վայելքի տալով,
տեսնեմ՝ ինչ էս դու բարիքների մեջ».*

և ահա դա էլ ունայնություն է:

Տեսա, որ ծիծաղը հիմար բան է,

եւ ուրախությունը՝ անօգուտ:

(Բ 1-2)

Կոհեղեթն ի գորու էր պարզելու, թե իրականում ինչպիսին են գայթակղությունները, որ գերում են մարդկային երևակայությունը: Նա իր համար հրաշալի տներ կառուցեց, խաղողի այգիներ տնկեց, շատրվանավոր պարտեզներ հիմնեց, ստրուկներ ու հարճեր գնեց և շուրջը երգիչ-երգչուհիներ խմբեց: Գիշեր ու ցերեկ իր աչքն էին շոյում գանձերը:

Ես նայեցի իմ ձեռքերի

արած բոլոր գործերին

և դրանք անելու համար իմ քաշած չարչարանքներին,

և, ահա՛ ամեն ինչ ունայնություն է և հոգու տանջանք,

և ոչ մի օգուտ չկա արեգակի ներքո:

(Բ 11):

Կոհեղեթը սրանով չի բավարարվում: Նա փորձում է հանգրվան գտնել մարդկային իմաստության մեջ, սակայն դարձյալ արդյունքը մխիթարիչ չէ.

Զանալի շատ իմաստության մեջ շատ գիտություն կա,

և իր գիտությունն ավելացնողը իր ցավն է ավելացնում:

(Ա 18)

Իմաստությունը բացեց նրան, որ մարդը չի կարող հասու լինել կյանքի գաղտնիքին, և բանականն առավելություն չունի: Եվ չնայած իմաստությունը լույս է, որպես կանոն իմաստունը չի ընդունվում և շուտ մոռանում

են նրան: Մարդիկ տիրում են՝ մեկը մյուսին, և արգարություն չկա. «Ես ծառաներ եմ տեսել, որ ձի հեծած են շրջել, և իշխաններ, որոնք երկրի վրա քայլել են ծառաների նման» (Ժ 7): Անարժանին վեր են բարձրացնում, իսկ արժանավորին ստորացնում են:

Ես ատեցի իմ կյանքը,
որովհետև ինձ համար չար էին այն գործերը,
որ կատարվել են արեգակի ներքո,
քանի որ ամեն ինչ ունայնություն է եւ հոգու տանջանք:

(Բ 17)

6. Մարդու վիճակը: Հայտնությունից զատ Աստված անհասանելի է: «Նա ամեն ինչ լավ է արել իր ժամանակի համար» (Գ 11), բայց և այնպես մարդս չի կարող հասկանալ Աստծու արած գործը (Գ 11): Մարդիկ իզուր են փնտրում ճշմարտությունը: Նրանք միայն կարող են կյանքն ընդունել այնպիսին, ինչպիսին որ է, սպասելով իրենց ժամին: Չէ որ մարդիկ «իրենք էլ անասուններ են» (Գ 18):

Արդարև, նույն դիպվածն է պահված թե՛ մարդու որդիների
և թե՛ անասունների համար,
նույն պատահարն է լինելու նրանց բոլորի համար:
Ինչպես որ մեկի մահն է, նույնպես եւ՝ մյուսի մահը,
եւ բոլորի մեջ նույն շունչը կա.

Էլ ինչ առավելություն ունի մարդն անասունից.
ո՞չ մի, քանի որ ամեն ինչ ունայնություն է:

Ամեն բան մի տեղ է գնում,
ամեն ինչ հողից է եղել,
և ամեն ինչ հող է դառնում:

(Գ 19-20)

Ճիշտ է՝ մեկ այլ տեղում Կոհելեթն ասում է, որ մեռյալի հոգին կամ շունչը «որ Աստված էր տվել, պիտի վերստին նրա մոտ գնա» (ԺԲ 7), սակայն սա հետմահու հատուցման հավատքի խոստովանություն չէ: Իմաստունը լոկ կամենում է ասել, որ մահկանացուների կյանքն ինչ-որ խորհրդավոր ուժ է (եբր. 𐤍𐤏𐤔 - 𐤍𐤏𐤕𐤕𐤕 Կոգի) պահպանում, իսկ երբ շունչը (եբր. 𐤍𐤏𐤕 - 𐤍𐤏𐤕𐤕𐤕) բաժանվում է մարմնից և գնում շեռլ, այդ ուժը, որ կապում էր նրանց, վերադառնում է վերին աշխարհ, որտեղից եկել էր:

Արդյունքում՝ Կոհելեթը, չնայած ճանաչել է երկրային վայելքների ունայնությունը, ստիպված է խոստովանել՝ «Տեսա նաև, որ մարդուս համար չկա ուրիշ ավելի լավ բան, քան ուրախ լինել իր վաստակով, որովհետև դա է նրա բաժինը» (Գ 22):

Իմաստունի բարեպաշտ աշակերտը գրքին մի քանի ասույթ է հավելել, որոնք, ըստ քահանա Ա. Կնյազևի, մեղմում են խիստ ոճը՝ «Եվ ահա լսիր իմ բոլոր խոսքերի վերջաբանը. վախեցիր Աստուծուց և պահիր նրա պատվիրանները. ահա այս է մարդն ամբողջովին, որովհետև Աստված պիտի բոլոր արարածների դատաստանն անի նրանց կատարած բոլոր թաքուն գործերի համար՝ լինեն դրանք չար թե բարի» (ԺԲ 13-14. նրա մյուս հավելումները՝ Գ 17, Դ 9-12):

7. Գիրքը սուրբգրային աստվածաբանության մեջ: Սուրբ Հոգով առաջնորդվող Եկեղեցին առաջին հայացքից բացասական թվացող այս գիրքը պատահական չէ, որ ընդգրկեց կանոնի մեջ: Դրա բացահայտումների նշանակությունը անցողիկ չեն: Կոհելեթը ցույց է տալիս, թե ուր են տանում մարդու ճանապարհները, եթե նա կողմնորոշվում է միայն երկրայինով:

Գրքում ամփոփված է «ոչ միայն մարդու հինկտակարանյան վիճակի դատաստանը, այլ նաև զուտ բնական մարդկային իդեալի, որ շտեմնելով աստվածային ուղին, չիմանալով շնորհների և երանելի կյանքի հնարավորության մասին ապագայում, անկախ իր բոլոր որոնումներից, անխուսափելիորեն փակուղի է մտնում» (Ա. Կնյազև):

Առանձին վերցրած ժողովողն անելանելի վիճակի է բերում, սակայն Սուրբ Գրքի ընդհանուր համատեքստում գիրքն նշանավորում է հինկտակարանյան գիտակցության կարևորագույն սկզբունքներից մեկը՝ երկրային գոյության վերազնաահատում: Սա անհրաժեշտ հանգրվան էր հավատքի ներքին զարգացման ընթացքում: Եթե այս աշխարհից դուրս մարդու համար ոչինչ չկա, ապա նրա կյանքն անիմաստ է: Հիասթափվելը երկրային ինքնաբավ արժեքների բարիքներից հանդիսացավ դրամատիկ նախադուռը հավիտենականության մասին Հայտնության, որ շնորհվում է մարդուն:

Հարցեր կրկնության համար

1. Ինչ է նշանակում գրքի անվանումը:
2. Աստվածաշնչյան ոճը ավանդությանն է այն առնչվում:
3. Ինչպես է այն կառուցված:
4. Ո՞րն են համարել Ժողովողի Գրքի հեղինակ, և Գիրքը ո՞ր շրջանին է վերագրում ներկայիս աստվածաշնչագիտությունը:
5. Ո՞րն է Ժողովողի Գրքի հիմնական գաղափարը:
6. Գրքում ինչպես է նկարագրված համաշխարհական շրջապտույտը:
7. Երջանկության որոնումներում ինչպիսի՞ն էր Կոհելեթի կյանքի փորձառությունը:
8. Ժողովողում ինչպես է նկարագրվում մարդկային գործերի սին բնույթը:
9. Ըստ Ժողովողի ինչ է մարդու ճակատագիրը:

10. Սուրբգրական աստվածաշնչագիտության համատեքստում ինչ տեղ է զբաղեցնում Ժողովողը, և ո՞րն է դրա հոգևոր իմաստը:

§ 24. Տոբիթի և Եսթերի գրքերը

1. Տոբիթի բնագրի լեզուն, ժանրը և գրության ժամանակը: *Տոբիթի գիրքը Հին Կտակարանի երկրորդականոնների շարքում է գտնվում: Սակայն գիրքը հեղինակություն է վայելել վաղ քրիստոնյաների շրջանում: Այս գրքին հղում կա արդեն Բ դարի մարտիրոս Պողիկարպոս Զմյուռնացու մոտ (Սոսլ. к Филиппийцам, 10,12):*

Աստվածաշնչի սինոդական տարբերակում գիրքը թարգմանվել է հունարենից: Սակայն հայտնի է, որ եղել են դրա արամեերեն և եբրայեցերեն տարբերակները: Դրանց պատահիկները, որ հայտնաբերվել են Կումրանում, Ա դարի են: Հերոնիմոս Երանելին Տոբիթի իր թարգմանությունն արել է արամեերենից, քանի որ իր օրերում, հավանաբար, եբրայեցերեն տարբերակն արդեն կորած էր:

Առաջին հայացքից գիրքը պատմական է թվում: Սակայն վարքագրական շարքին այն պատահաբար չի դասվել: Հեղինակը չի ձգտում պատմական ճշգրիտ տվյալներ հաղորդել. նա «միգրաշ»¹ է գրում, խրատական պատմություն, պատմական փաստերի շրջանակում: Նրա նպատակն է իսկական խորայնացու բարոյական իդեալը ուրվագծել (հմմտ. Հովհ. Ա 47), մարդու, որ հավատարիմ է հայրերի պատգամներին, բարեպաշտ է, բարի, ընտանեկան ավանդները պահող և մերձավորին օգնող: Պատումը այն երանգներով է, որը մոտ է նահապետների՝ Աբրահամի, Իսահակի և Հակոբի մասին ավանդություններին: Եվ չնայած Տոբիթի գիրքը էպիկական ժանրին է պատկանում, այն դասում են ուսուցողական գրականության շարքին: Ի տարբերություն իմաստունների, հեղինակն իր կրոնաբարոյական դասն ավանդում է Աստուծո ժողովրդի սրբազան պատմության լույսի ներքո:

Գրքի գրության ժամանակի վերաբերյալ ամենատարբեր կարծիքներն են արտահայտվել: Այն թվագրում են Ք. ծ. ա. է դարից մինչև Ք. ծ. հ. Ա դար: Գրության ժամանակը ճշտելն անհնար է, քանի որ բնագիրը կորած է: Աստվածաշնչագետների մեծ մասը, նկատի առնելով գրքում առկա պարսկական աղբյուրները, այն վերագրում են Ք. ծ. ա. Ե-Գ դարերին:

2. Գրքի հրեշտակաբանությունը: Աքիաբարոս: Հինկտակարանյան գրքերից Տոբիթն առաջինն է, որ հիշատակում է Ռափայել հրեշտակի անունը:

¹ Միգրաշ – (եբր. מִגְרָשׁ – մեկնություն), հրեական ավանդության մեջ Թորային (Ջնգամատյան) զուգահեռ առկա է նաև Բանավոր Թորան, որի մի բաժինը՝ միգրաշը հիմնական սկզբունքների մեկնությունն է բովանդակում:

Նախկինում սրբազան գրողները խուսափում էին անմարմին զորությունների մասին խոսելուց: Անշուշտ նրանք հավատում էին, որ մարդկանցից բացի նաև հոգևոր էակներ կան, որոնց ստեղծել է Աստված: Քանանյան սովորությունները դրանց «Աստծու որդիներ» էին կոչում, սակայն որպես կանոն Օրենքում և Մարգարեներում նրանց անունները չեն տրվում: Հրեշտակաբանության վերաբերյալ սրբազան գրողների զուսպ կեցվածքը լիովին հասկանալի է¹: Չէ որ նրանց հարևան հեթանոսների մեջ տարածված էր ոգիների պաշտամունքը: Ուստի հեթանոսական ավանդություն հանդիսացող հրեշտակաբանությունը, ինչպես նաև դիվաբանությունը հեշտությամբ կարող էին ընդգրկվել Աստծուց տրված կրոնի մեջ:

Եվ միայն այն բանից հետո, երբ ժողովրդի մեջ հաստատվեց միաստվածական հավատքը, արարված հոգիների մասին սկսեցին ավելի ազատ խոսել: Նրանց անուններ տրվեցին ըստ իրենց ծառայության կերպի: Օրինակ՝ Գաբրիել նշանակում է «Աստծու երկյուղ», Ռափայել՝ «Աստված բժշկում է»: Ռափայելը Տոբիթի գրքում ներկայացված է իբրև «մեկն այն յոթը սուրբ հրեշտակներից, որոնք վեր են հանում աղոթքները, մտնում սուրբ և փառավոր Աստծու մոտ և մատուցում նրան» (ԺԲ 15): Ինչպես գիտենք յոթը սրբազան թիվ է համարվում Արևելքում: Ի մասնավորի իրանցիների պատկերացմամբ աստվածության գահը շրջապատված է «յոթ անմահ հոգիներով»: Անվիճելիորեն Տոբիթի գրքի դեկ անունը պարսկական է. Ազմոդեսը (Գ 8) Այշմադեի՝ Զրադաշտական կրոնում շար ոգու անվան փոփոխություն կրած տարբերակն է (տե՛ս հտ. 2, § 1): Սակայն նման փոխառությունները սոսկ մակերեսային բնույթ էին կրում: Հինկտակարանյան հրեշտակաբանությունը ծագել է այն մարդկանց հոգևոր փորձառությունից, որ երկրային կյանքում զգացել են մասնակցություն անմարմին ուժերի, զորավոր, բայց միևնույն ժամանակ բնությամբ արարված:

Գրքում հիշատակված է ոմն Աքիաքարոս, որ Տոբիթի ազգականն է: Նրան պալատում զրպարտում են, սակայն հետո նա վերստին վերականգնվեց ավելի բարձր դիրք գրավելով: Ինչպես ցույց է տվել ուղղափառ աստվածաշնչագետ Ն. Դրոզդովը, Աքիաքարոսի մասին պատումը այսպես կոչված թափառող պատմություններից է: Այս պատումի տարբերակները պահպանվել են ասորերեն, արաբերեն, հայերեն, ղպտիերեն և այլ լեզուներով²: Դրա առավել հին տարբերակը Ք. ծ. ա. Ե դարից է: Բովանդակությունը նույնն

¹ Ասվածը չի վերաբերում Տիրոջ Հրեշտակին որպես Աստվածահայտնության կերպար:

² Հայոց մեջ Աքիաքարոսի անունը հայտնի է ավելի խիկար ձևով, որը նշանավոր խիկար իմաստունն է: Ավելի մանրամասն տե՛ս Տաշեան Յ., Մատեն. մանր ուսումնասիրությունը, Մասն Ա, Աժ2, Կիեմնա, 1895, Աճառեան Յ. Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ, էջ 512 – խմբ.:

է, ինչ համառոտակի պատմվում է Տոբիթի Գրքում (ԺԴ 10): Աքիաքարոսի առասպելի ակունքները Հին Միջագետքից են գալիս, և սա մի վկայություն է հօգուտ այն բանի, որ նախնական ավանդությունը, որից ելնում է Տոբիթի գրքի հեղինակը, իրական է:

3. Տոբիթի գրքի բովանդակությունը: Տոբիթը, որի անունից շարադրվում է պատմությունը, Նեփթաղիմի ցեղից սերող իսրայելացի էր: Հյուսիսային և Հարավային թագավորությունների բաժանումից հետո և բեկումից հետո նա շարունակում էր Երուսաղեմ ուխտի գնալ: 722 թվականին ասորիները Տոբիթին՝ կնոջ և որդու՝ Տուբիի հետ միասին վերաբնակեցնում են Նինվեում: Այնտեղ նա շարունակում է ապրել Աստծու Օրենքով: Նա հուղարկավորում էր թագավորի կողմից մահապատժի ենթարկվածների մարմինները և օգնում աղքատներին: Իր պարտքը կատարելով՝ Տոբիթը կյանքը վտանգի էր ենթարկում, սակայն դա չկանգնեցրեց նրան: Եվ ահա դաժան փորձությունը Աստված այցելում է արդարին. նա կուրանում է: Խորը վշտով նա մահ էր աղերսում Աստծուց: Այդ նույն օրը մեկ այլ բարեպաշտ անձ՝ վշտի մեջ, ևս աղոթում էր Աստծուն: Մեղիացում իսրայելացի վերաբնակների մի ընտանիք էր ապրում, որ Ազմոդես շար դևի իշխանության տակ էր ընկել: Դևն արդեն Ռագուելի դստեր՝ Սառայի յոթ փեսացուի էր կործանել: Նրանք վախճանվում էին հենց առաջին ամուսնական գիշերը: Այլևս անկարող լինելով դիմանալու նախատինքին և ծաղրին, աղջիկը Աստծուց մահ էր խնդրում.

«Եվ երկուսի աղոթքներն էլ լսելի եղան մեծ Ռափայելին: Նա ուղարկվեց բժշկելու երկուսին էլ» (Գ 16)¹:

Այդ նույն ժամանակ Տոբիթը որոշեց որդուն Միդիա ուղարկել՝ վերցնելու այնտեղ ի պահ տրված արծաթը: Որդուն հրաժեշտ տալիս՝ ծերունին նրան պատվիրաններ է տալիս: Այդ խոսքերը շատ մոտ են մյուս Ուսուցողական գրքերին և Օրենքին.

Քո ամբողջ կյանքում արդարություն կգործես, անիրավության ճանապարհներով չգնաս ... Քո ունեցվածքից ողորմություններ կանես... Երեսդ զորքներ բողոք աղբատներից, և Տեր Աստվածն էլ իր երեսը չի դարձնի քեզանից: Ինչքան շատ ունենաս, ըստ այդ շատության կանես քո ողորմությունները, եթե քիչ ունենաս՝ ըստ քչի: Չհասպաղես ողորմություններ անել, քանի որ դրանով բարիքներ կգանձես քո կյանքի օրերին: ...Վարձկանիդ վարձը թող մի օր էլ չմնա քեզ մոտ, այլ կվճարես անմիջապես... ինչը դու ատում ես, ուրիշին չանես: Հարբելու աստիճան գինի չիմես... Ամեն ժամ կօրհնես քո Տեր Աստծուն ...

(Դ 5 և հաջ.)

¹ Հայերենում Գ 24-25 – խմբ.:

Տուբին հուսալի ուղեկից գտավ, որ հանձն առավ ուղեկցել նրան դեպի հեթանոսական հեռավոր երկիր: Նրա անունն Ազարիա էր (թարգմանաբար՝ Տիրոջ օգնություն), սակայն իրականում դա Ռափայել հրեշտակն էր:

Որդուն ճանապարհելով՝ Տոբիթին մնում էր սպասել: Իսկ Տուբին և հրեշտակը նույն օրը երեկոյան հասան Տիգրիս գետը¹: Այնտեղ տարօրինակ մի բան պատահեց նրանց: Լվացվելիս պատանու ոտքը բռնեց մի մեծ ձուկ, սակայն նա ձկանը դուրս բերեց ափ: Նրանք ձուկը խորովեցին կրակի վրա, իսկ սիրտը, լյարդն ու լեղին Ազարիան պատվիրեց վերցնել հետները: Նա Տուբիին սովորեցրեց, թե դրանցից ինչպես կարելի է չար ոգիներին հալածող դեղամիջոց պատրաստել և սպեղանի՝ աչքի հիվանդությունների դեմ: Քաղաքում Ազարիան պատանուն ասաց, որ Ռափուելի դուստր Սառայից լավ հարսնացու չկա նրա համար, որովհետև ընտանիքն այդ Մովսեսի Օրենքով է ապրում: Սակայն Տուբին արդեն տեղյակ էր աղջկան ամուսնացնելու փորձերին և չէր կամենում դեի խարդավանքներին հանդիպել: Իսկ Ազարիան նրան հիշեցնում էր սպեղանու հրաշագործ հատկությունները:

Ռափուելը սիրալիր ընդունեց պատանուն, սակայն երբ Ազարիան ասաց, որ Սառայի ձեռքն է խնդրում Տուբիի համար, աղջկա հայրը հուզվեց: Բայց Ազարիան անդրդվելի մնաց, և շուտով հարսանիք կազմակերպեցին: Եվ երիտասարդ կնոջ հետ առանձին մնալով՝ Տուբին վերցրեց մոխրախառն կրակ, վրան դրեց ձկան սիրտն ու լյարդը, և ծխից Ազմոդեսը չքվեց, իսկ ամուսինները գոհաբանական աղոթք առաքեցին Աստծուն: «Իսկ Ռափուելը գնաց և նրա համար գերեզման փորեց, քանզի վախենում էր, թե գուցե նա էլ մեռնի»: Եվ որքան մեծ էր նրա ուրախությունը, երբ երկուսին անվնաս գտավ:

Արծաթը ստանալով՝ Տուբին կնոջ հետ վերադարձավ հոր մոտ: Շեմն անցնելուն պես երիտասարդը ձկան լեղին դրեց Տոբիթի աչքերին, և նա սկսեց տեսնել: Ողջ ընտանիքը ցնծում էր: Ծերունին կամեցավ առատորեն պարգևատրել Ազարիային օգնության համար, սակայն նա հայտնեց իր անձը Տոբիթին և ողջ ընտանիքին՝ ասելով, որ ինքն Աստծու հրեշտակն է, որ ուղարկվել է իրենց փրկելու: Եվ լսելով այս բոլորը երեսնիվայր ընկան գետին և հրեշտակն ասաց. «Մի՛ վախեցեք, թող խաղաղություն լինի ձեզ, օրհնեցեք Աստծուն»: Եվ հրեշտակին այլևս չտեսան:

Գիրքն ավարտվում է Տոբիթի գոհաբանական խոսքերով և նրա վախճանի նկարագրությամբ:

4. Տոբիթի գրքի ուսմունքը: Արդարի աղոթքն ի մի է բերում գրքի ողջ աստվածաբանությունը: Դա նրանց երանության մասին է, որ տառապեցին,

¹ Հայերենում Դկլաթ գետը – խմբ.:

սակայն հավատարիմ մնացին: Այն բերկրանքի նկարագրությունն է մարդկանց, որ դիմացան փորձությունը և արժանացան Աստծու ողորմությանը: Փառաբանությունը վեր է երկրային, ընտանեկան առաքինությունների, անհատական հավատքի և բարոյականության շրջանակներից: Այստեղ մարգարեություն է հնչում Երուսաղեմի պատժի և վերականգնման մասին: Վերածնվելով, այն ոսկյա քաղաք կդառնա, որի փողոցներում երբեք չի լուի «ալելուիան»: Սակայն Աստված միայն հինկտակարանյան Եկեղեցուն չէ, որ «հարվածում է և ողորմում, իջեցնում դժոխք և հանում այնտեղից» (ԺԳ 2), այլ նաև հեթանոսներին: Հրեաները պետք է իրագործեն իրենց տիեզերական առաքելությունը՝ միակ Աստծուն աշխարհին բերեն:

Իսրայելի որդիներ, պաշտեցեք նրան հեթանոսների ազգերի առջև որովհետև նա մեզ դրեց նրանց մեջ:

(ԺԳ 3)

Կանխասողների ծառայությունը մեծ պտուղ կտա գալիք ժամանակներում.

Բազմաթիվ ազգեր կգան հեռվից

Տեր Աստծու անունով իրենց ձեռքերին առած

կրեռեն իրենց նվերները

մատուցելու Երկնավոր Թագավորին:

(ԺԳ 11)

Այսպիսով Տորիթի Գրքում Աստծու Օրենքով արդար կյանքի իդեալը՝ գուգորդվում է մարգարեական կանխատեսման հետ և այլ ազգերի դարձի գալու հավատով:

5. Եսթերի գիրքը (եբր. *אסתר* - *ԷՍԹԵՐ*) պահպանվել է եբրայեցերեն և հունարեն տարբերակներով, ընդ որում՝ առաջինը բավականին տարբերվում է երկրորդից: Բացի այս՝ հին ձեռագրերում հունական լրացումները տարբեր տեղերում են գտնվում¹:

Իր ծագմամբ գիրքը պարտական է Փուրիմի (փուր - վիճակ) տոնին, որ նաև Մուրթեի օր է կոչվում (Բ Մակ. ԺԵ 36): Հնարավոր է այս տոնը հաստատվել է Գերություն օրերին՝ որպես հակակշիռ Մարդուկ աստծու հեթանոսական տոնին:

Քանի որ հունարեն բնագիրը Եգիպտոսում հայտնի էր արդեն Ք. ծ. ա. 114 թվականին, հետևաբար գիրքը դրանից ուշ չի գրվել: Հավանական է, որ Եսթերը գրվել է հեթանոսական բռնատիրության դեմ պայքարի շրջանում (Ք. ծ. ա. Բ դարի առաջին կես. տես հտ. 2, § 27), սակայն գրքի համար հիմք հանդիսացած ավանդությունն անհամեմատ հին է:

¹ Տե՛ս նաև Գ. Դարբիկյան, նշվ. աշխ., էջ 140 - խմբ.:

Գիրքը հրեուհի Եսթերի մասին է, որ պարսից արքա Արտաշեսի (եբր. שושלת - Ախաշատ-Նոշ, պարս. Քսերքսես) կինը դառնալով՝ իր ժողովրդին, որ վտանգի մեջ էր, փրկում է կործանումից: Բախտի բերմամբ արքայի սիրելի դարձած Համանի խարդավանքներն ուղղված էին հրեաների դեմ: Նա հասավ նրան, որ թագավորական հրովարտակով ազդարարվեց հրեաների ոչնչացումը: Սակայն թագուհու մերկացումից հետո Համանին մահապատժի են ենթարկում: Եվ քանի որ Իրանում արքայական հրամանները երբեք չեղյալ չէին հայտարարվում, հրեաներին թույլ տրվեց դիմադրություն ցույց տալ հակառակորդներին:

Գրքում առկա պատմական հղումները լի են անճշտություններով: Օրինակ. հայտնի է, որ Արտաշեսի կինը ոչ թե Ասթինեն է (Ա 11), կամ Եսթերը, այլ Ամեսթրիսը (Յերոդոտոս, Է, 6¹): Սակայն ինչպես Տոբիթի Գիրքը, Եսթերի Գիրքը ևս ճշգրիտ պատմական շարադրանք չէ: Այն գրվել է որպես վկայություն Աստծու նախախնամության գործերի՝ հինկտակարանյան Եկեղեցին փորձություններից պաշտպանող:

Եսթերի նմանօրինակություն կարելի է գտնել Հովսեփի պատմության մեջ, որ պատմում է Մենդոց Գիրքը:

Հարցեր կրկնության համար

1. Եկեղեցու Հայրերից ո՞վ է առաջինը հղում կատարում Տոբիթի Գրքին:
2. Ո՞րն էր գրքի բնագրի լեզուն:
3. Սրբազան գրությունների մեջ գրական ո՞ր ժանրին է դասվում գիրքը:
4. Ժամանակակից աստվածաշնչագետների կարծիքով ե՞րբ է գրվել գիրքը:
5. Ինչո՞ւ մինչգերության շրջանի գրվածքներում չեն հիշատակվում հրեշտակների անունները:
6. Ո՞վ էր Ազմոդևսը:
7. Պատմեցե՞ք գրքի հիմնական բովանդակությունը:
8. Տոբիթի Գրքի ո՞ր մասն է առավել ամբողջական արտահայտում նրա աստվածաբանությունը:
9. Ի՞նչ տեսքով է պահպանվել Եսթերի Գիրքը:
10. Ի՞նչ տոնի հետ կապված և ե՞րբ է գրվել այն:
11. Ի՞նչ բովանդակություն և իմաստ ունի գիրքը:

¹ Պետք է լինի (Է, 6 1): Հավանաբար վրիպակ է – խմբ.:

§ 25. Սիրաքի որդի Հեսուի Իմաստության Գիրքը

(Մուտ. 190 թ.)

1. Գրքի հեղինակը, գրության ժամանակը և լեզուն: *Մոտավորապես Ք. ծ. ա. 200 թ. տեղի է ունեցել Օրենքի ավանդության միացումն իմաստունների ավանդությանը: Դրանից հետո դպիրներն սկսեցին ավելի հենվել Թորայի վրա: Դա արտացոլվեց Իմաստության Գրքում, որ գրվել է Հեսու անունով մեկի՝ Սիրաքի որդու կողմից (եբր. ארנסן בן עושון - ԵՅՈՇՈՒՄ ԲԵՆ-ՍԻՐԱՔ):*

Թեև Սիրաքի որդի Հեսուի Գիրքը հրեաները չեն ընդգրկել իրենց կանոնի մեջ, իսկ Եկեղեցին այն ոչ կանոնական գրքերի շարքին է դասել, և քրիստոնյաների շրջանում այն մեծ հարգանք է վայելել: Սուրբ Կիպրիանոս Կարթագենացին անգամ այն անվանել է՝ «Գիրք Եկեղեցական»՝ էկկլեսիաստիկոս: Այդ անվամբ գիրքը հաճախ է հանդիպում կաթոլիկական հրատարակություններում (չշփոթել էկկլեսիաստի՝ ժողովողի հետ): Սուրբ Հայրերն իմաստության մեջ առօրյա կյանքի մի յուրօրինակ ուղեցույց են տեսել և հակաթույն անառողջ ցնորամտության դեմ:

Սիրաքի մասին կենսագրական տեղեկություններ չեն պահպանվել¹: Ըստ երևույթին նա ծագել է Երուսաղեմի նշանավոր մի տոհմից և երիտասարդական տարիներն անցկացրել է ճամփորդությունների մեջ, որից և տարատեսակ գիտելիքներ է ձեռք բերել: Հնարավոր է՝ նա ծանոթ եղած լինի անտիկ գրականությանը, բայց ամենից ավելի գիտեր Աստվածաշունչը, որ արդեն կարդացել էր ամբողջությամբ:

Իմաստությունը ներկայացնում է նաև հեղինակի կերպարը. սթափ, խոհուն, մարդկանց հանդեպ բարյացակամ: Որպես իմաստուններից վերջինը՝ նա իրեն կատարելապես դրսևորում է իբրև իմաստուն-դպիր: Նա սիրում է իր գրական աշխատանքը և բարձր է դասում բոլոր մասնագիտություններից: Օրենքը նրա համար արդար կյանքի բանալին է: Առանց Թորայի իմացության մարդ դառնում է ամբարտավան և դրանով իր վրա է հրավիրում անթիվ դժբախտություններ (Ժ 7-9):

Պտղոմեոս Է-ի թագավորության ժամանակ Եգիպտոս գնաց Սիրաքի թոռը և նկատեց, որ Ալեքսանդրիայի հրեաներն անբավարար գիտեն հայրենի կրոնի հիմունքները: Նրանց օգնելու համար նա որոշեց եբրայեցերենից հունարեն թարգմանել իր պապի գիրքը, որն ինքը համարում էր կյանքի ու հավատքի համար լավագույն ուղեցույց: Իր աշխատանքը նա սկսեց 132 թ. (նրա գրած առաջաբանը պահպանվել է նաև պլավոնական թարգմանությամբ): Հավանաբար Սիրաքն ինքը գրել է 190 թ.:

¹ Հեսու՝ Սիրաքի որդի - հաճախ կարճ անվանում են պարզապես Սիրաք:

Ընդհուպ մինչև ժԹ դարի վերջը հայտնի էին միայն գրքի հունարեն տարբերակները: 1896 թ. եբրայագետ Ս. Շեխտերը¹ տեղեկություններ հրապարակեց Կահիրեում գտնված՝ Սիրաքի եբրայական բնագրի մասին: Այդ գյուտը (իրատ. 1899 թ.) ոչ միայն աստվածաշնչագետներին մոտեցրեց գրքի բնագրին, այլև հնարավորություն տվեց ճշգրտելու հունարեն թարգմանության շատ անհասկանալի տեղեր:

2. Գրքի բնույթը: Սիրաքի որդի Հեսուրի իմաստության գիրքը բաղկացած է չափածո գլուխներից, որոնք հավաքված են առանց խիստ հստակ ծրագրի: Այն զարմանալիորեն բազմակողմանի է և կյանքի իսկական հանրագիտարան: Այստեղ խոսվում է պալատական սովորույթների և տաճարական ծեսերի, առևտրի և Սուրբ Գրքի, բժշկության և երեխաների դաստիարակության մասին: Այստեղ կան սաղմոսներ, որ հասնում են աստվածաշնչական սրբազան պոեզիայի լավագույն նմուշների մակարդակին: Բայց ամենից առաջ հեղինակը կյանքի ուսուցիչ է: Նա «գիտելիք» է քարոզում, սակայն ո՛չ գիտական իմացություն, ինչպես դա ըմբռնել են հույները, այլ՝ «կյանքի յուրօրինակ գիտություն»: Սիրաքը բարոյաբան է, որ մարդու գոյությունը դիտում է կրոնական տեսանկյունից: Իր գործնական փորձը նա կշռում է Աստծու Օրենքի կշեռքով:

Սիրաքը քիչ է խոսում գալիքից: Նա կենտրոնացած է ներկայի օրվա վրա, և սա նրան ու մյուս իմաստուններին տարբերում է մարգարեներից:

3. Ուսմունք արարչության, Աստծու Իմաստության և մարդու մասին: Սիրաքի որդի Հեսուրն ապրել է բուռն և տազնապալից դարաշրջանում: Այդ իսկ պատճառով ամենից ավելի նա գնահատել է կայունությունը, անսասանությունը, հաստատունությունը: Ամբողջ արարվածի անփոփոխությունը նա կապում էր Արարչի հանդեպ հավատին, որ գոյ է աշխարհի վրա.

Տիրոջ գործերը սկսբից և եթ ճշմարտությամբ էին,

և նա արարչագործությունից իսկ պատեց նրանց մասերը:

Հավիտյան կարգավորեց իր գործերը

և կարգեր սահմանեց նրանց տեսակների մեջ:

(ԺԶ 26-27)

Գրքում բավարար չի արտացոլված բնության և պատմության դինամիկան: Ամենից առաջ գիրքն ընդգծում է Տիեզերքի կարգի անխախտելիությունը: Աշխարհի օրենքները նրա համար Գոյի գերագույն իմաստության արտահայտություններն են, որոնց մասին խոսվում էր դեռևս Առակաց Գրքում և Հոբի Գրքում:

¹ Շեխտեր Սողոմոն (1847-1915) – հրեա գիտնական, աստվածաբան, Ամերիկյան հրեական աստվածաբանական ճեմարանի նախագահ:

Բայց Սիրաքին բնորոշ է Աստծու Իմաստության նույնացումն Օրենքի հետ, որ հինկտակարանյան Եկեղեցուն տրվեց Մովսեսի միջոցով: Սրբազան հեղինակը Իմաստության շուրթերով արտահայտում է խոսքեր, որոնցից երևում է, որ նա և Օրենքն ընդամենը միասնական աստվածային կամքի տարբեր արտահայտություններ են.

Ես դուրս ելա Բարձրյալի բերանից

և մշուշի նման ծածկեցի երկիրը:

Ես բնակվեցի բարձունքներում,

և իմ Աթոռը ամպի պան մեջ է:

Միայն ես պտտվեցի երկնքի ծիրով մեկ,

գնացի անդունդների խորքերը,

իշխեցի ծովի ալիքներին, բոլոր երկրներին

և բոլոր ժողովուրդներին ու ապգերին:

Այս բոլորի մեջ հանգիստ փնտրեցի և այն երկիրը,

ուր ես հանդարտվեմ:

Այն ժամանակ բոլորի Արարիչը պատվիրեց ինձ,

և նա, ով ստեղծեց ինձ, ցույց տվեց իմ խաղաղության խորանը:

Նա ասաց. “Դու բնակվիր Հակոբի տոհմի մեջ

և Իսրայելի մեջ ժառանգությունն ստացիր”:

Սկզբից, հավիտենությունից առաջ Տերն ստեղծեց ինձ,

և ես հավիտյան չեմ նվազելու:

Ես պաշտամունք մատուցեցի նրա սուրբ խորանի առջև,

ապա հաստատվեցի Սիոնի մեջ:

(ԻԴ 5-15)

Սիրաքի կարծիքով, եթե բնությունը չի կարող խախտել Աստծու նախանշած կարգը, ապա մարդն Իմաստության-Օրենքի առջև այլ վիճակում է գտնվում: Նա ապատ էակ է, օժտված մեծ շնորհներով, ստեղծված Արարչի կերպարանքով, և ինքը պետք է ընտրի իր համար ճշմարիտ ճանապարհը:

Նա ի սկզբանե մարդուն ստեղծեց

և նրան թողեց իր իսկ կամքի ձեռքին:

Եթե կամենաս, կպահես պատվիրանները

և հաճությամբ կպահպանես թո հավատը ...

Մարդու առջև է կյանքն ու մահը.

ինչ հաճելի կթվա իրեն՝ կտրվի նրան:

(ԺԵ 14-15, 17)

Այստեղ հինկտակարանյան գրություններում առաջին անգամ հատուկ արտահայտված է մարդու ազատության ու պատասխանատվության գաղա-

փարը: Իմաստուն կյանքը վերին իմաստության իրականացումն է գործերով, մտքերով և զգացմունքներով, այսինքն՝ Օրենքում գրված Աստծու կամքով:

4. Ուսմունք մեղքի մասին: Սիրաքի իմաստության մեջ հնարավոր չէ գտնել մշակված աստվածաբանական ուսմունք նախնական մեղքի մասին. այդ ժամանակներում հինկտակարանյան միտքը միայն մոտենում այդ գաղափարին (նախնական մեղքի ուսմունքն իր ամբողջությամբ բացահայտվում է միայն Պողոս առաքյալի գրություններում): Բայց Սիրաքի որդի Հեսուն արդեն գիտե, որ մեղքն սկիզբ ուներ, և դա կապում է Ծննդոց գրքի պատմությանը (Սիր. ԻԵ 27)¹: Ի տարբերություն իր ժամանակակից հույն բարոյագետների, իմաստունը չի հավատում, որ «բնական մարդը» բնությամբ բարի էակ է: Նա շատ լավ գիտե մարդկային հոգու շարի ուժը.

Փախիր մեղքերից, ինչպես օձից.

եթե մոտենաս կիսայթի քել:

Մեղքի ժանիքները առյուծի ժանիքներ են,

որ սպանում են մարդկանց հոգիները:

(ԻԱ 2-3)

Սիրաքն աշխարհը դիտարկում է անկյալ վիճակով, երբ շարը գոյության անբաժանելի բաղադրիչ մասն է համարվում: Բայց մարդն իրեն չպիտի համարի դատապարտված: Նրան տրված է ընտրության հնարավորություն.

Ամբարիշտը սատանային անիծելիս՝

ինքն իր հոգին է անիծում:

(ԻԱ 30)

Այլ խոսքով՝ նույնիսկ մութ ուժերի ազդեցությունը մարդկանց չի ազատում արարքների բարոյական պատասխանատվությունից:

5. Առաքինի մարդու կերպարը, որ ուրվագծվում է Սիրաքի Գրքում, կրում է հինկտակարանյան սահմանափակության դրոշմը: Նա ընտանիքի հոգատար գլուխն է, սիրող ամուսին, խիստ հայր, խոսքի մեջ զուսպ, իր վճիռները միշտ ծանր ու թեթև անող: Նա հարստության հետևից չի ընկնում, բայց և խորթ չէ կյանքի ուրախության: Նա արդարամիտ է, բարի, կիրթ և ուշադիր, երբեք տված խոստումը չի դրժի և պատրաստ է ցանկացած պահի օգնել կարիքավորներին:

Սիրաքը կյանքի մեծագույն բարիքներից է համարում բարեկամությունը: Ով բարի ընկեր է գտել՝ գտել է գանձ, իսկ ամբարիշտների հետ պետք չէ շփվել (ԺԲ 13):

¹ Հայերենում այդ համարն այլ է՝ Մեղքի սկիզբը կնոջից է, և նրա պատճառով ենք մեռնում բոլորս (Սիր. ԻԵ 33) – խմբ.:

Գրքի բարոյախոսուծությունը տեղ-տեղ գրեթե մոտենում է ավետարանականին: Վեր կանգնելով իրավական «աչքի փոխարեն՝ աչք» պատվերից՝ նա ասում է.

Ներհր թո եղբոր անիրավությունը,

և միայն այն ժամանակ աղոթելիս թո մեղքերը կներվեն:

(ԻԸ 2)

Արդար մարդն իր մեջ ամբարցնում է բարոյական ոգին և գոյություն բերկրանքն առ Աստված հավատով: Բայց արտաքին բարեպաշտությունն առանց բարուծյան և ճշմարտության՝ պիղծ է: Այստեղ Սիրաքն արժանի շարունակողն է մարգարեների, որոնց գրքերը նա պատվում էր և ուսումնասիրում.

«Մի ասա, թե Տերը կնայի իմ բավմաթիվ զոհաբերումներին

և Բարձրեալ Աստծուն մատուցելիս՝ նա կընդունի ...

Ով անարդար զոհ է մատուցում,

նրա զոհաբերումը արհամարհված է.

հաճելի չէ անօրենների մատուցած զոհը:

(Է 9, ԼԴ 18)¹

Մահկանացուն, սովորեցնում է Սիրաքը, չի կարող հավասարվել է-ին, մարդը Նրանից շնորհակալ պիտի լինի կյանքի համար, որ տրված է իրեն: Եվ եթե այն կարճ է՝ ապա այդպիսին է երկնային կամքը: Մարդ որքան շատ ճանաչի Արարչի մեծությունը, այնքան քիչ իրավունք իրեն կվերապահի պահանջ ներկայացնելու Նրան: Կյանքն ապրելով, վայելելով կյանքի ընծաները, աշխատելով իր և ուրիշների համար, կատարելով Աստծու Օրենքը՝ մարդը մխիթարության աղբյուր է գտնում է-ի փառքի մասին խոկման մեջ:

6. Սիրաքի որդի Յեսուն և սրբազան պատմությունը: Ի տարբերություն այլ իմաստունների՝ Սիրաքը չի սահմանափակվում լոկ Աստծու և կյանքի մասին խորհրդածելով: Նա խոսում է նաև պատմության մեջ Տիրոջ հայտնության մասին: Սակայն դա գլխավորաբար բիբլիական ժողովրդի պատմությունն է, որ Աստծուց ստացել է Իմաստության լույսը: Սիրաքը խիստ դատապարտում է Պաղեստինի բնակիչներին, որ հայտնվել են հեթանոսության իշխանության տակ՝ եզոմացիներին, փղշտացիներին ու սամարացիներին, որոնք, նրա խոսքով, առհասարակ ժողովուրդ չեն: Այսպիսով հեղինակն իրեն հաստատում է ծայրահեղ հուդայականություն դավանող:

Հայրերին փառաբանելիս (գլ. ԽԴ-Ծ)² Սիրաքի որդի Հեսուն խոսում է հին օրերի մեծ այրերի մասին, որոնք ապրել են բանականությամբ, օրեն-

¹ Հայերենում տեղիները այլ են՝ (Է 11, ԼԱ 21) – խմբ.:

² Այդ գլուխները հայերենում չկան – խմբ.:

քի համաձայն, և որոնց Աստված հայտնել է Իր կամքը: Նրանք թաղված են աշխարհում, բայց նրանց անուններն ապրում են սերնդեսերունդ: Նրանք մարդկության նախահայրերն են, նահապետներ և բարեպաշտ թագավորներ, մարգարեներ և Իսրայելի ուսուցիչներ: Նրանցից յուրաքանչյուրին Սիրաքը հակիրճ բնութագրում է և հինկտակարանյան սրբերի երթն ավարտում է Երուսաղեմի քահանայապետ Սիմոն Արդարով¹: Բայց գիրքը չի խոսում ապագայի, Մեսիայի մասին: Իմաստունը միայն հավատում է, որ կգան ժամանակներ, երբ հեթանոսներն էլ կճանաչեն ճշմարիտ Աստծուն: Նա աղոթում է.

Փուխով հասնել ժամանակին և հիշիր ժամադրությունը,
և թող պատմեն քո մեծագործությունները ...

Լսիր Տեր, քո ծառաների աղոթքը,

Քո ժողովրդի մասին՝ Ահարոնի օրհնությամբ.

Եվ կճանաչեն ԵՐԿՐԻ ՎՐԱ ԱՊՐՈՂՆԵՐԸ

որ Դու ես Տերը, հավիտյանների Աստված:

(ԼՁ 9, 18-19)²:

Այն դարաշրջանում, երբ հինկտակարանյան Եկեղեցուն դաժան փորձություններ էին սպասում, նա Սիրաքի որդի Հեսուփի նման ուսուցիչների կարիք էր զգում: Շրջանցելով վախճանաբանությունն ու մեսիականությունը՝ Սիրաքը մարդկանց սովորեցնում է ապրել, առօրյա կյանքով՝ առաջնորդվելով առողջ բանականությամբ և Աստծու Օրենքով: Նրա խրատների մեջ մարմնավորված է կրոնական բարոյականության այն կողմը, որ դաստիարակում է հոգու ամբողջականություն, կամքի կայունություն և բարոյական մաքրություն:

Հարցեր կրկնության համար

1. Ո՞վ է Սիրաքի Գրքի հեղինակը:
2. Ո՞ր լեզվով է գրված գիրքը, և ո՞վ է թարգմանել հունարեն:
3. Ի՞նչ հատկանիշներով է բնութագրված Սիրաքի Գիրքը:
4. Ո՞րն է Սիրաքի ուսմունքի էությունը՝ արարչության, Իմաստության և մարդու մասին:
5. Սիրաքն ի՞նչպես էր հասկանում մարդու մեղանչականությունը:
6. Որո՞նք են արդարի հատկանիշներն ըստ Սիրաքի:
7. Այս գիրքն ի՞նչպես է աղերսվում սրբազան պատմությանը, վախճանաբանությանը և մեսիականությանը:

¹ Սիմոն ապրել է մոտավորապես Ք. ծ. ա. 200 թվականին:

² Հայերենում ԼՁ 9-ը ԼԳ 10 համարն է, իսկ 18-19 համարները չկան – խմբ.:

ՀԱՅՏՆՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՐՔԵՐ ԵՎ ՊԱՅՔԱՐ ՀԱՆՈՒՆ ՀԱՎԱՏՔԻ

(Ք. ծ. ա. Դ-Բ դարեր)

§ 26. ԱՌԱՋԻՆ ՀԱՅՏՆՈՒԹԵՆԱԿԱՆՆԵՐԸ¹ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԵՏՈՒՄ

(Ք. ծ. ա. Դ դար)

1. Հայտնութենականություն: Աշխարհի առկա վիճակից խորին հիասթափությունը, դրա հետ հաշտվելուց հրաժարվելը հնչեցնում էին դեռևս մարգարեները՝ Ամովսից մինչև Մաղաքիա: Բայց նրանց մեծ մասը տակավին բավարար չէր տարբերում արարվածների սպասվող փոխակերպումը զուտ երկրայինից և նույնիսկ քաղաքական նկրտումներից: Սակայն Իսրայելական միացյալ թագավորության պառակտումը, օտար լուծը, Գերությունն աստիճանաբար հինկտակարանյան Եկեղեցու գիտակցությունն ազատում էին ուտոպիական պատրանքներից: Քրիստոսի ծնունդին նախորդող դարերի մայրամուտին աստվածաշնչական գրությունների մեջ վերջնական և մեծագույն Աստվածահայտնությունն ավելի հաճախ պատկերվում է որպես ամբողջությամբ սքանչելի, գերբնական: Այս հարցը հայտնութենական հեղինակների գրություններում դառնում է գլխավորը (ἀποκάλυψις - հայտնություն):

«Հրեական հայտնություն անվան տակ,- գրել է ավագ քահանա Ս. Բուլգակովը,- հասկացվում է երկերի մի շարք, որոնք պարունակում են խորհուրդների «հայտնություն»՝ աշխարհի ու մարդկության ներկա վիճակի, նրա անցյալի և հատկապես ապագայի վերաբերյալ»:

Այս ուղղվածությունը տարբերակում է հայտնութենականությունը իմաստունների ավանդությունից և ցույց է տալիս, որ այն դարաշրջանում հինկտակարանյան Եկեղեցում առկա էին մի շարք դպրոցներ կամ ուղղություններ:

¹ Αποκαλιπτική - ժանր է կրոնական գրականության մեջ, որ տեսանողն ստանում է հայտնության, տեսիլքի ձևով: Այն վեր է մարդկային ընկալումից, հաճախ հոմանիչ է *Էսխատոլոգիա* (վախճանաբանություն) գաղափարին: Այս հատվածում կիրառված αποκαλιπσις, αποκαλιπτική, αποκαλιπτικός բառերը ունեն և՛ հայտնության, և՛ վախճանաբանական իմաստներ և տարբերվում են նույն բառի՝ откровение - *հայտնություն, տեսիլք* իմաստից: Ստորև ըստ բովանդակության օգտագործում ենք երկու ձևն էլ՝ *հայտնութենական* և *վախճանական* ձևերով: Տե՛ս նաև Հավելված Դ - *խմբ.*:

Հայտնութենական գրքերի թվին են դասվում՝ կանոնական (Եսայի ԻԴ-ԻԷ, Զովել, Չաբ. Թ-ԺԴ, Դան.), ոչ կանոնական (Գ Եզր) և պարականոն գրքերը:

Հայտնութենական գրքերի մեծ մասին բնորոշ է երեք հատկանիշ.

- բարդ և առեղծվածային խորհրդանիշերով հագեցվածություն, որ կոչված է արտահայտելու պատմության նվիրական էությունը.

- կենտրոնացում վախճանաբանության և Աստու Դատաստանի վրա, որոնք խափանում են որոշակի քաղաքական ու հասարակական իրադարձություններ (որոնց վրա մեծ ուշադրություն էին դարձնում հին մարգարեները).

- հեղինակների անհայտություն: Մարգարեները ոչ միայն գրողներ էին, այլև ժողովրդի կյանքի գործուն մասնակիցներ: Նրանք առաջնորդվում էին խոսքով և գործով: Իսկ հայտնութենականներն ավելի հաճախ արտահայտվում էին գրքի միջոցով: Ընդ որում նրանցից շատերը ստեղծագործում էին՝ անանուն կամ կեղծանվամբ: Յանկանալով ցույց տալ, թե իրենց տրված հայտնությունը մարդկանց հաղորդակից է դարձնում Աստու հավերժական մտահղացումներին, նրանք իրենց երկերի վերնագրերում ղնում էին անցյալի փառապանծ այրերի անունները (Ենոքի, Նոյի, նահապետների, Եսայիի, Դանիելի և այլոց):

Հայտնութենական ժանրը պահպանվեց նաև նորկտակարանյան Եկեղեցում: Ամենից առաջ դա Հովհաննես Աստվածաբանի Հայտնությունն է, նաև՝ մի շարք պարականոն հայտնություններ, այդ թվում Հերմասի «Հովիվը»¹: Քրիստոս Փրկիչն Ինքն աշխարհի վերջի վերաբերյալ Իր մարգարեության մեջ հայտնութենական լեզու է օգտագործել (Մատթ. ԻԴ, Մարկ. ԺԳ, Ղուկ. ԻԱ):

2. Զովել մարգարեի գիրքը: Հովել (եբր. ܙܘܘܝܐ - ԻՈԷԼ), մարգարեի անունը ստուգաբանվում է «Եստվեն Աստված է» ձևով, և իմաստով նույնական է Եղիա մարգարեի անվան հետ: Մարգարեի անձի ու նրա կյանքի ժամանակաշրջանի մասին ոչինչ հայտնի չէ: Նրա մասին լռում են նաև ավանդությունները: Միայն կարելի է ենթադրել, որ նա Տաճարի ծառայողներից էր և քարոզել է Տիրոջ տանը:

Աստվածաշնչագետների մեծ մասի կարծիքով այս մարգարեն ապրել է Ք. ծ. ա. Դ դարում, երբ հրեական Համայնքը բոլոր կողմերից շրջապատում էին ինչպես հոգևոր, նույնպես և քաղաքական բնույթի վտանգներ:

Հուդայի սահմանները մնում էին սեղմված ամենանվազագույն չափերի մեջ: Այն պարսկական տերության իշխանության տակ էր: Շատ հրեաներ ցրված էին ապրում: Ժողովրդի առաջնորդների գլխավոր խնդիրներից մեկն այն էր, որ ժողովրդի մեջ առաքինությունը պահպանվեր:

¹ Տե՛ս Եզնիկ Արք. Պետրոսյան, Երկեր, հտ. 3, Հայրաբանություն, Նախանիկիական շրջան, Երևան, 2017, էջ 67 - խմբ.:

Մարգարեի հանդես գալու համար առիթ հանդիսացավ երկրին հասած ահավոր աղետը. մորեխը ոչնչացրել էր ցանքսերը, ժողովուրդը սովի էր մատնվել: Աստծու Հոգին մարգարեին ներշնչեց ներկայացնել այս փորձությունը որպես Տիրոջ Օրվա վախճանաբանական պատկեր:

Կործանում սփռող մորեխի նկարագրությունը, մարգարեի մոտ վերածվում է համաշխարհային աղետի պատկերի (Բ 1-12): Մորեխն արդեն ոչ թե սոսկ միջատ-ամայացնող է, այլ հատուցման խորհրդավոր իրագործողը: Մորեխի պատկերը գտնում ենք նաև Հովհաննու Հայտնության մեջ, ուր այն խորհրդանշում է ազատության ելած կործանարար ուժերը (Հայտն. Թ 1-12):

Մարգարեն ժողովրդին ապաշխարության է կոչում՝ իբրև երկնային բարկությունից խուսափելու միակ միջոցի (Ա 13-14):

Մանոթո-թյոն

Աղետը գալիս է հյուսիսից (Բ 20): Հյուսիս է անվանում, քանի որ սովորաբար այդ տեղից էին գալիս Իսրայելի գլխավոր թշնամիները (ասորեստանցիներ, սկյութներ): Բացի այդ՝ Արևելքում հյուսիսը նշանակում էր նաև Աստվածության բնակավայրը, հետևաբար հարձակումը նախատեսված է Աստծու կամքով:

3. Տիրոջ Օրվա մասին մարգարեությունն ըստ Հովելի տեսիլքի երկու կողմ ունի. մի կողմից Դատաստանի Ահեղ Օրն է: «Արեգակը կխավարի, և լուսինը արյուն կդառնա» (Բ 30), այսինքն՝ կխարխլվեն աշխարհակարգի դարավոր օրենքները: Իսկ մյուս կողմից՝ Աստվածահայտնությունը կլինի փրկարար գործողություն, որի մեջ կհայտնվի Տիրոջ ողորմածությունը.

Քաջալերվիր, երկիր,

ցնծա՛ւ և ուրախացիր,

որովհետև Տերը մե՞ծ գործեր կատարեց քեզ հետ ...

Միոնի՛ որդիներ, ցնծացե՛ք

և ուրախացե՛ք ձեր Տեր Աստուծով,

քանի որ Նա կտա ձեզ Արդարության Ուսուցիչ՝

(Բ 21-23)

Մինողական թարգմանության մեջ «ձեզ չափով անձրև կտա» տողը արդի բնագրագիտությունը թույլ է տալիս թարգմանել որպես՝ «ձեզ կտա բարեպաշտության ուսուցիչ»²: Եսասենականները նրան նույնացնում էին իրենց առաջնորդի հետ (տե՛ս հտ. 2, § 30), սակայն իրականության մեջ մեր առջև մեսիական մարգարեություն է, մարգարեություն Քրիստոսի գալստյան մասին:

Հովելի համար Բարեպաշտության Ուսուցչի գալուստը պատենշի անկման նշան է, որը մարդուն բաժանում է Աստծուց: Երբ Ուսուցիչը հայտնվի՝

¹ Այս տողը հայերենում 70-ի թարգմանությանն է համապատասխան՝ *քանի որ Տերը արդար կերակուր տվեց ձեզ – խմբ.:*

² Կամ՝ *Բարեպաշտ Ուսուցիչ:*

էն իրեն կբացահայտի ոչ միայն ընտրյալ-մարգարեների, այլև բոլոր հավատարիմների համար.

Եվ կլինի այնպես,

որ սրանից հետո իմ Հոգուց կհեղեմ ամեն մարմնի վրա,
կմարգարեանան ձեր տղաներն ու աղջիկները,
ձեր ծերերը երապներ կտեսնեն,
և ձեր երիտասարդները տեսիլքներ կունենան:

Այն օրերին իմ Հոգուց կհեղեմ իմ ծառաների վրա,
իմ աղախիմների վրա,
որոնք կմարգարեանան ...

Այո՛, կլինի այնպես, որ, ով որ կանչի Տիրոջ անունը՝
կապրի:

(Բ 27-28, 31)

Հոգու այս իջման հույսը հնուց կար Հին Կտակարանում (հմմտ. Թվեր ԺԱ 29): Այն իրականացավ Սիոնի Վերնատանը, երբ Քրիստոսի աշակերտների գլխավերևում վառվեցին բոցեղեն լեզուները (Գործ. Բ 3-4): Այդ պատճառով Պետրոս առաքյալը ժողովրդին բացատրելով Հոգեգալստյան հրաշքը մեջբերում է Հովել մարգարեին (Գործ. Բ 16-21): Եկեղեցին էլ այդ տոնին կարգում է նրա մարգարեությունը¹:

Պողոս առաքյալը, մեկնաբանելով «Ով որ կանչի Տիրոջ անունը՝ կապրի» խոսքը, շեշտադրում է Ով որ բառերը: Դրանով նա բացառել է մարգարեության ըմբռնումը նեղ իմաստով (միայն իսրայելացիների փրկությունը): Աստծու ժողովուրդ է ցանկացած մարդ, որ ապրում է Տիրոջով (Յոհ. Ժ 12-13):

Հովել մարգարեի գիրքն ավարտվում է Աստծու արքայության հանդիսավոր պատկերով: Երկնային Դատավորը ժողովուրդներին հավաքում է Երուսաղեմը շրջապատող «Հովսափատի ձորում» (Գ 2): Այդ պատկերը երկակի իմաստ ունի. ժողովուրդների մեջ Իսրայելի ցրված Մնացորդի վերածնունդը և Քրիստոսի Եկեղեցու վերածնունդը հայտնութենական ահեղ դարաշրջանին:

Աստծու արքայությունը մարգարեն պատկերում է տեսանելի գծերով: Աստծու ճշմարտությունը ենթադրում է վերջ բոլոր պատերազմներին ու թշնամական ուժերին (Գ 9-14): Հավատարիմներին տրվում է խաղաղություն և բարօրություն: Այս տեսարանները (Գ 17-21) հատուկ են մարգարեների պատկերավոր, այլաբանական լեզվին: Նրանք որոշ չափով սնել են նաև երկրային մեսիականության և հազարամյայի² գաղափարները: Բայց աստ-

¹ Հայ եկեղեցում նույնպես այդ հատվածն է ընթերցվում – խմբ.:

² Հազարամյա կամ խիլիզադ – ուսմունք է երկրի վրա Աստծու հազարամյա թագավորության մասին: Այդ տեսակետն ընդունել են Եկեղեցու վաղ շրջանի շատ Հայրեր:

վածահայտնության գլխավոր պարգևը Սուրբ Հոգու շնորհն է, որ կվերափոխի արարչությունը:

4. Զաքարիա մարգարեի Գրքի ԹԺԴ գլուխներն ինքնուրույն գործ են, որն ունի հատուկ վերնագիր: Լեզվով, ոճով ու նյութով այն տարբերվում է Ք. ծ. ա. Զ դարում ապրած Զաքարիա մարգարեի երկերից: Այստեղ արդեն չի խոսվում Տաճարի վերականգնման, Զորոբաբելի և քահանայապետ Հեսուի մասին, ինչը բնորոշ է Զաքարիայի գրքին:

Զաքարիայի գրքի ԹԺԴ գլուխների հեղինակն արդեն չի սպասում Դավթի թագավորության մոտակա վերականգնմանը: Նրա ականակալիքները վախճանաբանական և հայտնութենական բնույթի են: Քանի որ նա հիշում է հույներին՝ մեկնիչներից շատերը Զաքարիայի Գրքի երկրորդ մասը վերագրում են Ք. ծ. ա. Դ դարին: Այդ դարաշրջանում Ալեքսանդր Մակեդոնացու զորքերը գրավել էին ամբողջ Առաջավոր Ասիան: Ասորիքը (Սեդրաք և Դամասկոս) ու Փյունիկիայի (Տյուրոս և Սիդոն) ճակատագրին վերաբերող մարգարեությունները, ինչպես ենթադրում են, այդ ժամանակի իրադարձությունների արձագանքներ են պարունակում:



Զաքարիա մարգարե: Միքելանջելոյի որմնանկարներից: Սիքստինյան կապելա, Հռոմ, Վատիկան:

Այս աշխարհի զավթիչներին ու բռնակալներին մարգարեն հակադրում է ճշմարիտ Աստծուն՝ Մեսիային.

*Ուրախացիր խնդությամբ, դժուարի Սիոնի,
կանչիր ցնծությամբ, դժուարի Երուսաղեմի,
ահա գալիս է քո թագավորը քեզ մոտ,
քո արդար, փրկագործ
ու խոնարհ թագավորը՝
հեծած էշի, էշի բուռակի վրա:*

(Թ 9)

Մեսիան պատահական չի ընտրում ավանակը: Նժույզը հնուց եղել է պատերազմի խորհրդանիշ: Իսկ խոնարհ Թագավորը սուրբ քաղաք պիտի մուտք գործեր հեծած մի կենդանի, որ խաղաղություն է խորհրդանշում: Այդ է պատճառը, որ Քրիստոս Փրկիչը հենց այդպես է վարվում, երբ հանդիսավոր մուտք է գործում Երուսաղեմ (Մատթ. ԻԱ 1-5):

Մարգարեն մարդկանց ցույց է տալիս, որ Մեսիայի գալուստն աստվածային ողորմածություն հրաշքն է: Մեղավորները դա չէին վաստակել, իսկ ժողովրդի հովիվները դրան արժանի չէին (ԺԱ 1-11): Տերն Ինքն է կամենում իր ոչխարների Բարի Հովիվ լինել: Բայց մարդկանց ապերախտությունը մեծ է: Աստված մարգարեի միջոցով հարցնում է՝ նրանք ինչպես կվճարեն Իրեն՝ իր հոգատարության դիմաց, և ստանում 30 արծաթ՝ ստրուկի գլխագինը (հմմտ. Ելք ԻԱ 32): Երկնային Հովիվ գործն այդպես է գնահատվել: Մարգարեի խորհրդանշական գործը, երբ արծաթադրամները նետում է Տաճարում՝ դրանով բրուտի համար հող գնելու համար, ակնարկում է ժողովրդի մեղքը: Բրուտի հող էին անվանում անպտուղ կավահողերը, որ շատ էժան էին (ԺԱ 12-13)¹: Սա ասես Հուդայի հանցանքի նախատիպն է, որ մատնության դիմաց ստացավ ստրուկի գինը (Մատթ. ԻԷ 5, 9-10):

Գիրքն ավարտվում է մեղավորների ապաշխարության պատկերով.

Եվ պիտի թափեմ Դավիթի տան վրա և Երուսաղեմում բնակվողների վրա շնորհի և աղոթքի հոգին. և նրանք իրենց հայացքը պիտի դարձնեն դեպի Ինձ², Որին խոցեցին. և լաց ու կոծ պիտի անեն, ինչպես միամորի որդու վրա. և պիտի ողբան³, ինչպես անդրանկի վրա են ողբում: Այն օրը մեծ սուգ պիտի լինի Երուսաղեմում, ինչպես Ադադ-ռիմմոնի սուգը՝ Մակեդոնի դաշտում⁴:

(ԺԲ 10-11)

Մարգարեությունն ակնարկում է ոչ միայն ժողովրդի զղջումին, որ ողբում է Տիրոջը իր մեղքերով խոցելու համար, այլև Տառապող Մեսիային, ով խաչի վրա պատառոտվեց:

Ծանոթություններ

Ադադ Ռեմմոնը (Հադադ-Ռիմոն) բնության քանանյան աստվածն է, որի մահը ողբում էին ամենամյա ծեսի ժամանակ: Այդ ծեսը մարգարեն համեմատում է համաժողովրդական ապաշխարության հետ, որն կընդգրկի ոչ միայն Իսրայելը, այլև բոլոր ազգատոհմերը (ԺԲ 14):

¹ Այստեղ սինոդական թարգմանությունը հետևում է եբրայերեն բնագրին, իսկ հայերենը՝ 70-ին, ուր բրուտի հողը թարգմանված է բույի մեջ - խմբ.:

² Սինոդական թարգմանության մեջ *воззрят на Него* ձևը այնքան էլ ճիշտ չէ - ոռու. խմբ.:

³ Սինոդական թարգմանության մեջ *будут рыдать о Нем* - պիտի ողբան Նրա վրա - ոռու. խմբ.:

⁴ Հեղինակը բերում է եբրայական բնագրից. Մակեդոնի ծորում Հոսիա թագավորի սպանության դրվագն է (Դ Թագ. ԻԳ 29), երբ մեծ ողբ եղավ: Հայերեն և սինոդական թարգմանությունները համապատասխանում են 70-ի թարգմանությանը. *Շնորհի ու գթության հոգի պիտի հեղեմ Դավիթի տան և Երուսաղեմի բնակիչների վրա. նրանք իրենց հայացքը պիտի դարձնեն դեպի ինձ, պարելու փոխարեն լաց ու կոծ պիտի անեն, ինչպես ողբում են սիրելի Էակի վրա, սուգ պիտի անեն, ինչպես սգում են անդրանկի զավակի վրա: Այն օրը չափազանց մեծ սուգ պիտի լինի Երուսաղեմում, ինչպես դաշտում կտրտված տունիների վրա եղած սուգը* - խմբ.:

Հայտնութենական դարաշրջանն ավարտվում է աշխարհի վրա Աստծու լիակատար արքայությունը. «Այն օրը կենդանի ջուր է բխելու Երուսաղեմում... Այն օրը Տերը միակը պիտի լինի, և նրա անունը պիտի լինի միակը (ԺԴ 8-9):

Այդ մարգարեությունը կիրականանա ինչպես Քրիստոսի՝ Աստծու Արքայության մասին քարոզի մեջ, նույնպես և նրա՝ պատմության ավարտին վերջին հայտնությունը՝:

5. Հարություն մեռելներից: Վաղ Հայտնություն: Հինկտակարանյան Եկեղեցում երկար ժամանակ չկար ուսմունք հետմահու հատուցման մասին: Անդրշիրիմյան կյանքի մասին տեսակետը նա փոխառել է քանանացիներից ու Միջագետքի ժողովուրդներից: Աստվածաշնչական Շենյը (սանդարամետ) ներկայացվում էր որպես խավար անդունդ, ուր չի թափանցում Տիրոջ լույսը, ուր մարդկանց ստվերները գտնվում են կիսամագիտակից վիճակում (Սաղմ. 2 6, ՁԷ 11-12, Յոք Է 9):

Եվ, դրան հակառակ, եգիպտացիները ուսուցանում էին, որ մահվանից հետո հոգուն սպասում է մի վիճակ ըստ իր երկրային գործերի: Իսրայելին տրված չէր ընդունելու անմահության և անդրշիրիմյան հատուցման այդ տեսակետը: Հինկտակարանյան Եկեղեցին պատրաստվում էր ճանաչելու այլ, ավելի կատարյալ ճշմարտություն՝ ճշմարտություն մեռելներից հարություն առնելու մասին:

Այդ մասին ծածուկ ակնարկներն առաջին անգամ ի հայտ են եկել տակավին Գերությունից առաջ: Մամուել մարգարեի մոր՝ Աննայի աղոթքի մեջ ասում է. «Տերն իջեցնում գերեզման և դուրս բերում այնտեղից» (Ա Թագ. Բ 6): Իսկ սաղմոսը (ՃԼԸ 8) արտահայտում է այն հավատը, որ Է-ի իշխանությունը տարածվում է նաև սանդարամետի վրա:

Այն համոզմունքին, թե մարդը սանդարամետում հավետ մերժված է կյանքից և Աստծուց, հակադրվում է հույսը, որ Տերն ի գորու է մահացածին դուրս հանել անդունդից.

Քանպի դժոխքում չես թողնի Դու ինձ,

և քո սրբին ապականություն տեսնել չես տա:

(Սաղմ. ԺԵ 10)

Կարևոր է նշել, որ այստեղ ոչ թե հոգու բնական անմահության մասին է, այլ մարդու սանդարամետից լրիվ և կատարյալ փրկության: Բայց սաղմոսերգուն այդ մասին ասում է՝ իբրև Աստծու ողորմածության բացառիկ հրաշքի, որ կհայտնվի ընտրյալ արդարին (ինչպես դա եղավ Ենոքի ու Եղիայի հետ):

Բայց Ես միշտ քեզ հետ եմ.

Դու բռնեցիր իմ աջ ձեռքից,

¹ Ավնարկ Է Յոզի. Է 37-38 և Հայտն. ԻԲ 1 համարների - խմբ.:

*Քո խորհուրդներով ինձ առաջնորդեցիր
և փառքով ընդունեցիր ինձ:*

(Սաղմ. ՀԲ 23-24)

Սակայն երբ դժոխքն ինձ

ընդունելու լինի,

Աստված կփրկի իմ հոգին:

(Սաղմ. ԽԸ 16)

Նշված սաղմոսներում չի բացատրվում թե դա ինչպես է լինելու: Հոգով առաջնորդվող սաղմոսերգուն միայն հույս ունի, որ մարդու համար մեկ այլ ելք կա, քան այն, որ պատկերվել է ժողովողին¹: Շեղից փրկություն բերում է նա, Ով Իր ձեռքին ունի կյանքի և մահի բանալիները:

6. Եսայու վախճանականը (ԻԴ-ԻԷ): Մեռելների հարուստյան մասին առաջին Հայտնությունը գտնում ենք Եսայիի գրքի վախճանականում, որ գրել է նրա դպրոցի մարգարեներից մեկը՝ Դ դարի կեսերին:

Այդ դարաշրջանում սկսվեց Մակեդոնիայի վերելքը: Փլիլիպպոս թագավորը՝ Ալեքսանդր Մեծի հայրը, պատրաստվում էր նվաճողական մեծ արշավանքների: Խռովություններն ու ալեկոծությունները ներսից քայքայում էին Իրանի Աքեմենյանների միապետությունը, որ թուլացել էր Հունաստանի դեմ պատերազմներում: Պարսիկներից անջատվել էին Եգիպտոսն ու Փյունիկիան:

Եսայու վախճանականն անմիջականորեն այդ իրադարձությունների վրա չի հենվում: Նա խոսում է պատմության ներքին էության մասին և ասես աշխարհը բաժանում է երկու բևեռի. մեկում բռնության վրա կառուցված հեթանոսական թագավորություններն են, մյուսում՝ փրկության քաղաքը՝ կատարյալ Երուսաղեմը: Աստծու դեմ ապստամբած ուժերը մարգարեն մարմնավորել է որպես քառսի հրեշներ: Նրանք փոթորկահույզ են կատաղի ծովի նման, բայց արդեն մոտ է Դատաստանի Օրը, երբ մութ տարերքները վերջնականապես կգահավիժեն.

Այն օրը Տերը պիտի քաշի սուրբ, մեծ ու հպոր սուրը

փախչող վիշապ օձի² վրա,

գալարվող վիշապ օձի վրա՝

ծովի մեջ սպանելով վիշապին:

(Եսայի ԻԷ 1)

¹ Հեղինակը նկատի ունի կյանքի ունայնության մասին ժողովողի ասածները – խմբ.:

² Սինոդականում երբայերեն ձևն է՝ Լևիաթան: Հայերենը հետևում է 70-ի թարգմանությանը – խմբ.:

Քառսի որդիների կործանումը կնշանակի աստվածամարտության դարաշրջանի ավարտը: Սատանայի մութ աշխարհը կկործանվի վերջին վախճանաբանական ճակատամարտում (Եսայի ԻՉ 14):

Ողբերի մաքրագործող ուղին անցած հավատարիմների Եկեղեցին կվերակենդանանա հանդիսավորապես:

Մարգարեն խոսում է նաև բուն մահվան վախճանի մասին (ԻԵ 8): Տիրոջ սուրը կկործանի սանդարամետի դարպասները, հավատարիմները ձեռք կբերեն ոչ միայն հոգու անմահություն, այլև նոր կյանք՝ ամբողջ կատարելություն:

ՊԻՏԻ ՀԱՌՆԵՆ ՈՒ ԿԱՆԳՆԵՆ ՄԵՌԱՃՆԵՐԸ,
որոնք գերեզմաններում են,
և ուրախանալու են երկրի վրա, որովհետև այն ցողը,
որ քեզնից է, բժշկություն է նրանց համար,
իսկ ամբարիշտների երկիրը պիտի կործանվի:
(Եսայի ԻՉ 19)

Ծննդոց Գիրքը մահը դիտարկում էր ոչ իբրև օրենք, այլ որպես մարդու՝ Աստծուց հեռանալու արդյունք: Դրախտից անապատ արտաքսված՝ նա զրկվել էր Կենաց ծառի պտուղներից (Արարչի հետ անմիջական կապից): Եվ ստիպված է «հողին դառնալու», որից Աստված ստեղծել էր (Շննդ. Գ 19): Այս դրաման նախապատկերում էր Աստծու ժողովրդի ճակատագիրը: Երբ նա խախտեց Ուխտը՝ աքսորվեց անապատ՝ գերության (Օւտե Բ 14): Բայց ապաշխարությունից հետո Աստված հարություն տվեց նրան, ինչպես դա երևում է չորացած ոսկորների մասին Եզեկիել մարգարեի տեսիլքից (Եզեկ. ԼԷ): Նոր Հայտնության մեջ արդեն ասվում է մարդ-անձի ամբողջական հարության մասին:

Հունահնդկական կրոնական փիլիսոփայությունը մարմինը դիտում է իբրև հոգու բանտ: Աստվածահայտնությունական ուսմունքի համաձայն մարդկային բնության երկմիասնությունը մտնում է Արարչի նախնական մտահղացման մեջ: Արարչության բուն գործի մեջ մարդը դրվում է երկու՝ տեսանելի և անտեսանելի աշխարհների սահմանին: Ազամի միջոցով բնությունը, նյութը, միացված է լինում հոգուն, որը խորհրդանշում է բոլոր արարածների վերափոխման գրավականը (թեոսիա): Աստծու գալիք Արքայությունը միայն հոգու աշխարհը չէ, այլ նոր Եդեմ է, նոր երկինք և նոր երկիր, որոնք տրված են հարուցյալ և վերածնված մարդկությանը (Եսայի ԺԱ 6-9, Հայտն. ԻԱ 1):

Հաճախ պնդել են, թե մեռելների ընդհանրական հարության մասին Հին Կտակարանի ամենավաղ վկայությունը գտնվել է Բ դարի գրություններում

(Բ Մակ., Գիրք Դանիելի): *Իրականում այդ հայտնությունը տրվել է երկու դար առաջ՝ Եսայու վախճանականի մեջ:*

Մեռելների հարության հավատը ընդհանրական եկեղեցում ճանաչում ստացավ ոչ միանգամից. Ք. ծ. ա. Բ դարի 90-60-ական թվականներին, ու նույնիսկ ավելի ուշ, ավետարանական դարաշրջանում, իսկ սաղուկեցիներն այն համարում էին անթույլատրելի նորություն:

Հարցեր կրկնության համար

1. Հայտնությունականություն (ապոկալիպտիկա) եզրույթը ո՞ր բառից է ծագում:
2. Հայտնությունականությունն ինչ նյութերի է նվիրված:
3. Ինչ երեք գլխավոր հատկանիշներով է բնութագրվում այն:
4. Հինկտակարանյան սրբազան գրություններում ո՞ր երկերն են հայտնությունական:
5. Հովել մարգարեն ո՞ր դարաշրջանում է քարոզել:
6. Ինչն է առիթ ծառայել մարգարեի առաջին կոչին:
7. Ըստ Հովելի՝ որո՞նք են Տիրոջ Օրվան վերաբերող մարգարեության երկու կողմերը:
8. Տիրոջ Օրվա մասին Հովելի մարգարեության մեջ ո՞րն է գլխավոր խոստումը:
9. Այն ինչպես է մեկնաբանել Պողոս առաքյալը:
10. Մեկնիչներն ինչ հիմունքով են անջատում Չաբարիա մարգարեի Գրքի Թ-Ժ գլուխներն իբրև առանձին ժողովածու: Ինչ ժամանակաշրջանի են վերագրում:
11. Այդ ժողովածուի մեջ ցոլյց տվեք գլխավոր մեսիական մարգարեությունը:
12. Մեսիան ինչո՞ւ է Երուսաղեմ մտնելու ավանակի վրա հեծած:
13. Չաբ. Թ-Ժ գլուխներում ինչպե՞ս է պատկերվում ժողովրդի ապաշխարությունը: Այդ մարգարեությունը Ո՞ւմ նախապատկերն է:
14. Այդտեղ ինչպե՞ս է կանխատեսած ավետարանական քարոզչությունը:
15. Ինչպիսի՞ն էին իսրայելացիների նախնական պատկերացումները հետմահու գոյության մասին:
16. Ինչպիսի՞ն են մեռելների հարության մասին մարգարեություններն Ա Թագավորությունների և Սաղմոսաց գրքերում:
17. Եսայի մարգարեի Գրքի ո՞ր մասն են անվանում Վախճանական և, ենթադրաբար, Կրք է գրվել:
18. Ինչ է սովորեցնում Եսայու վախճանականը չարի և մահվան վրա տարած հաղթանակի մասին:
19. Ո՞րն է մեռելների հարության ուսմունքի էությունը:
20. Այդ ուսմունքը միանգամից ընդունվեց:

§ 27. ՀԵԼԼԵՆԱԿԱՆԱՑՈՒՄ: ԵՐԵՄԻԱՅԻ ԹՈՒՂԹՐ: ԲԱՐՈՒՔԻ ԳԻՐՔՐ: ՄԱԿԱՔԱՅԵՑԻՆԵՐԻ Ա և Բ գրքերը: Անտիոքոս Դ-ի հայածանքը

1. ՀԵԼԼԵՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐՐ: Ք. ծ. ա. Գ դարակեսին հին-կտակարանյան Եկեղեցին առաջին անգամ սերտորեն առնչվեց հելլենական աշխարհին, նրա ռազմական հզորությանը, գիտությանը, փիլիսոփայությանը, կրոնին ու կենսակերպին: Հելլենիզմը հունական մշակույթի տարրերի միաձուլումն էր այլ ժողովուրդների մշակույթների հետ, հունական տարրի բացահայտ գերակշռությամբ: Ի տարբերություն հին հելլենականության, հելլենիզմը չի սահմանափակվում Բալկաններով, Փոքր Ասիայով և հունական գաղութներով: Այն սկսեց արագ տարածվել ամբողջ քաղաքակիրթ աշխարհով մեկ: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո հելլենական ազդեցության ենթարկվեցին Հռոմը, Եգիպտոսը, Միջագետքը, Սիրիան, Միջին Ասիան ու Հնդկաստանը: Հունական «կոյնն» լեզուն¹ ըստ էության դարձավ միջազգային: Հույն փիլիսոփաների գաղափարները, հելլենականության գեղարվեստական կանոնները թափանցեցին գրեթե ամենուր:

Չնայած իր մեկուսի վիճակին՝ հրեական համայնքը նույնպես կրեց հելլենականացման ազդեցությունը: Այդ ազդեցության դրական արդյունքն էին Յոթանասնիցը (տե՛ս հտ. I, § 6) և հունաեբրայական փիլիսոփայությունն ու պատմագրությունը: Հուդայականները հելլենականացմանն էին պարտական Աստվածաշնչի այլաբանական մեկնության համար: Յոթանասնիցն Աստվածաշունչը մատչելի դարձրեց հեթանոսներին (ավելի ուշ՝ վաղ Եկեղեցում այն դարձավ բոլորի համար ընդունելի թարգմանություն):

Բայց հելլենական մշակույթի հետ շփումը նաև ոչ քիչ գայթակղություններ էր թաքցնում իր մեջ: Այն սպառնում էր հրեաների բարոյական մաքրությանը, նաև նրանց զլխավոր արժանիքին՝ հավատքին: Հեթանոսությունը վերստին վտանգավոր դարձավ Իսրայելի համար: Գայթակղություններին դիմակայելուն նպաստեց ժողովրդի հոգևոր դաստիարակների անզիջում լինելը, ովքեր կարողացան միակ Աստծու կրոնը զերծ պահել հելլենականացման քայքայիչ ազդեցությունից: Հավատի նախանձախնդիրների այդ պայքարի հետքերը գտնում ենք պարականոն գրքերում, Երեմիայի Թղթում, Բարուքի Գրքում:

2. ԵՐԵՄԻԱՅԻ ԹՈՒՂԹՐ և ԲԱՐՈՒՔԻ ԳԻՐՔՐ: Թուղթը ժամանակակից մեկնիչների ընդհանուր կարծիքով գրվել է Ք. ծ. ա. Գ և Ա դարերի միջև: Այն ամբողջովին նվիրված է կռապաշտության դեմ բանավեճին: Թղթի հեղինա-

1 Հուն.՝ κοινή – ընդհանուր բառից: Մակեդոնացու ժամանակներից սկսած մինչև Բ.ծ.հ. Գ դար հունարեն բարբառների հիման վրա խոսակցական ընդհանուր լեզուն է – խմբ.:

կը հավանաբար ապրել է Բաբելոնում և կարող էր ականատես լինել հեթանոսական տոների, որոնք վերականգնել էր Ալեքսանդր Մակեդոնացին: Հեթանոսության նոր գրոհին հեղինակը պատասխանում է խուսքով՝ ներշնչված մարգարեների հոգով, որոնք կուռքերի դեմ էին պայքարում: Թղթի մեջ պատկերավոր ներկայացված է կուռքերի պատրաստումը ու դրանց կեղծ շքեղությունը: Հեղինակը ցույց է տալիս, որ կուռքերը, որոնց պաշտում են որպես անձեռնմխելի և վերագրում կախարդական հատկանիշներ՝ անզոր են:

Գիրքը մեր օրերն է հասել հունարենով, բայց շատ բանասերներ կարծում են, թե դրա բնագիրը գրված է եղել եբրայեցերեն կամ արամեերեն լեզվով: Նույնը կարելի է ասել և Բարուքի պարականոն Գրքի մասին:

Այդ գիրքը Վուլգատայում մեկ ամբողջություն է Երեմիայի Թղթի հետ: Որոշ մեկնիչներ Բարուքի Ա 15-Գ 8 հատվածը վերագրում են հենց Բարուքին՝ Երեմիա մարգարեի աշակերտին: Բայց իր արդի տեսքով Գիրքը պատկանում է հելլենիզմի դարաշրջանին:

Բարուքի Գիրքը խոսում է բաբելոնյան Գերություն ժամանակ հրեաների կյանքի, տարակուսանքների ու հավատի մասին: Գրքի աստվածաբանությունը մոտ է մեծ մարգարեների աստվածաբանությանը: Հեղինակն Աստծուն անվանում է «Յավիտենական»¹: Այդպիսի բառ (գոյականի դերով) եբրայեցերենը չունի: Մեկնիչները ենթադրում են՝ «Յավիտենական» բառն օգտագործվել է իբրև հոմանիշ Եհովեի (Է-ի) սուրբ անվան: Բարուքի Գրքում շեշտվում է, որ հավերժական ու ճշմարիտ գոյությունը պատկանում է միակ Աստծուն, արարյալ աշխարհն անցողիկ է և ապականացու: Միայն Հավիտենականի ուժով են աշխարհն ու պատմությունը կյանք և շարժում ձեռք բերում: Աստծուց բխող Ուխտը, օգնությունն ու բարիքն անսասան են, քանի որ Նա հավերժ է: Գոյությունը Աստծուց է, Նրանից է և փրկությունը (հմմտ. Եսայի Խ 6-8): Եկեղեցու հայրերը բարձր են դասել Բարուքի գրքի դավանաբանական նշանակությունը:

Բարուքի անունով հայտնի է ևս մի պարականոն երկ՝ առավել ուշ շրջանից, Բարուքի Հայտնությունը (Ք. ծ. հ. Ա դարի վերջ):

3. Մակաբայեցիների Ա և Բ Գրքերը: Ք. ծ. ա. Բ դարում հրեականության և հելլենիզմի հարաբերությունները սուր հակադրության վերածվեցին: Դա հանգեցրեց հինկտակարանյան Եկեղեցու արյունալի հալածանքների, Հուդա Մակաբայեցու ապստամբությանը և նրա եղբայրների ձեռքով Պաղեստինում անկախ պետության ստեղծմանը:

Այդ ճգնաժամը հարցականի տակ դրեց աստվածաշնչական հավատքի գոյությունն իսկ. այն փրկեց Նախախնամությունը, որը ոտքի հանեց նա-

¹ Բարուք Դ 10, 14 – խմբ.:

խանձախնդիրներին, Տիրոջ ժառանգությունը պահպանողներին: Հալածանքներին և ազատագրական պայքարին են նվիրված Մակաբայեցիների առաջին երկու գրքերը: Թեպետ դրանք դասվել են ոչ կանոնականների շարքին, գրքերը մեծ նշանակություն ունեն, քանի որ լույս են սփռում սրբազան պատմության ամեն մի դրվագի վրա:

Գրքերը գրվել են այնտեղ նկարագրված իրադարձություններից ոչ ուշ, առաջինը կազմվել է մոտավորապես Ք. ծ. ա. 100 թվականին: Այն հինկտակարանյան պատմագրության փայլուն նմուշ է: Հեղինակն ապստամբների ջերմ կողմնակիցն է և հանգամանորեն պատմում է Մակաբայեցու ռազմական գործողությունները: Երկրորդը գրվել է ավելի շուտ, մոտավորապես 120 թվականին և համառոտ քաղված է Յասոն Կյուրենացու աշխատությունից (Բ Մակ. Բ 20–33): Նրա նպատակներն ավելի շուտ կրոնական են, քան քաղաքական: Այստեղ գովերգվում են հավատքի համար զոհված հինկտակարանյան նահատակները, ովքեր հավատում են, որ Տերը Դատաստանի Օրը հարություն կտա իրենց:

Ա և Բ Մակաբայեցիների Գրքերում նկարագրված իրադարձությունների ժամանակագրություն

Թվական (Ք. ծ. ա.)	Աստվածաշնչական իրադարձություններ	Թվական (Ք. ծ. ա.)	Արտասուրբգրային աշխարհ
200–142	Հուդան Սելևկյանների իշխանության տակ	323	Ալեքսանդր Մակեդոնացու մահը
176	Սելևկոս Դ զորավար Հելիոդորոսի Տաճարը կողոպտելու փորձը	223–187	Անտիոքոս Գ Մեծ
171	Ունիա Գ քահանայապետի սպանությունն Անտիոքում	187–175	Սելևկոս Դ
168	Անտիոքոսի հալածանքների սկիզբը	175–164	Անտիոքոս Դ Եպիփանես
167	Տաճարի պղծումը	170	Անտիոքոս Դ առաջին արշավանքը դեպի Եգիպտոս
166	Մակաբայեցիների ապստամբության սկիզբը	168	Անտիոքոս Դ երկրորդ արշավանքը դեպի Եգիպտոս
165	Դանիել մարգարեի գիրքը		
164	Մակաբայեցին ազատագրում է Տաճարը	164	Անտիոքոս Դ մահը
160–143	Հովնաթան Հասմոնացու կառավարումը	164–162	Անտիոքոս Ե Եվպատոր
		162–150	Դեմետրիոս Ա Սոտեր
		150–145	Ալեքսանդր Բալաս

<p>143-134 Հասմոնյան Սիմոնի կառավարումը: Հասմոնյան հարստության հիմնումը</p> <p>մոտ. 135 Էսսենացիների համայնքի հիմնումը</p> <p>134-104 Հովհան Զյուրկանոս Ա</p>	<p>145-129 Դեմետրիոս Բ, Պտղոմեոս Ը, Անտիոքոս 2, Տրիփոն, Անտիոքոս Է</p>
---	--

Ծանոթություններ

Ա Մակաբայեցիների Գիրքն ընդգրկում է 323-ից 135 թթ. իրադարձությունները, իսկ Բ Մակաբայեցիների գիրքը՝ 176-161 թթ.:

4. Հեթանոսական գայթակղություններ: 323-198 թթ. Հուդան գտնվում էր Պտղոմեոսյան հարստության հունաեգիպտական թագավորների իշխանության տակ: Այդ շրջանում հեթանոս զավթիչները, իբրև կանոն, չէին խառնվում երկրի կրոնական գործերին: Սակայն իրավիճակը փոխվեց, երբ Պաղեստինին տիրեց հունական ուրիշ հարստություն՝ Սելևկյանները, որ իշխում էին Ասորիքում: Սելևկյանները գործուն և հետևողական հելլենացման կողմնակից էին: Նրանք ձգտում էին միավորել Արևելքի՝ իրենց ենթակա ժողովուրդներին, նրանց մեջ սերմանելով ոչ միայն հունական քաղաքակրթություն, այլև հավատք: Արևելյան աստվածությունները նույնացվում էին հելլենականներին: Օրինակ՝ արևի բոլոր աստվածներն սկսեցին պաշտել Ապոլոնի անունով:

Հուդայում հունական սովորույթները ևս հոժարակամ չուրացվում էին: Նրանց հակադրվում էին միայն հին բարեպաշտության նախանձախնդիրները, որոնց անվանում էին հասիդներ կամ հասիդեյներ¹: Նրանք չէին ցանկանում ընդունել որևէ օտար բան, երկյուղ կրելով, որ հեթանոսական ազդեցությունը կխարխլի ժողովրդական հավատն ու բարոյականությունը: Եվ իսկապես, հունական արատներն ու սանձարձակությունը բացասաբար էին ազդում Համայնքի վրա: Բայց հունասերների և հասիդների միջև պայքարը ծածկաբար էր գնում մինչև Սիրիայի գահ բարձրացավ Անտիոքոս Դ Եպիփանեսը (175-164 թթ.):

Այդ թագավորն իրեն համարում էր Զևսի երկրային մարմնացումը և աչքի էր ընկնում հիվանդագին, քմահաճ բնավորությամբ: Որպես հին Հելլագայի երկրպագու՝ նա իր պետության մեջ հելլենականություն էր տարածում: Նա հույս էր փայփայում հոգևորապես գրավել նաև Հուդան: Այդ խնդրում թագավորը հենվում էր Երուսաղեմի հունասերների, մասնավորաբար Հեսուբահանայապետի վրա, որն իրեն հունական ձևով վերանվանել էր Յասոն:

Հովսեպոս Փլավիոսը Յասոնին անվանում է «սրբապիղծ և ոչ քահանայապետ»: Բայց հազիվ թե նա ցանկանար հրաժարվել հայրենի հավատքից:

¹ Եբր. ԴԻՍՈ հասիդ բառից, որ թարգմանվում է բարեպաշտ – խմբ.:

Նա միայն ձգտում էր հելլենականացում իրագործել թագավորի կամքի համաձայն: Սուրբ քաղաքում ստեղծվեցին մարգասրահներ, որ իրենց կողմն էին գրավում երիտասարդությանը, անգամ հոգևորականությունը:

Ա Մակաբայեցիների Գրքի հեղինակը, արդեն համոզվելով, թե ինչ հետևանքների է հանգեցրել այդ հովերը, գրել է.

Մրանց ժամանակ էր, որ հարայելացիներից ծնվեցին անօրեն մարդիկ, որոնք շատերին դուրսընդուր պատիր ու շողում խոսքերով՝ ասացին. «Եկեք մեր շուրջը բնակվող բոլոր հեթանոս ավգերի հետ ուխտ դնենք ու դաշինք կնքենք, որովհետև այն օրից ի վեր, երբ մենք անջատվեցինք նրանցից ու մեկնեցինք, բալուս մեծ չարիքներ պատահեցին մեզ»: Շատերին հաճելի թվացին այս խոսքերը, ժողովրդի միջից ոմանք համաձայնեցին զնալ հանդիպել թագավորին, և թագավորը նրանց իրավունք տվեց ասրել հեթանոսների բոլոր օրենքներով: Նրանք Երուսաղեմում ըստ հեթանոսների օրենքների մեհենական հրապարակներ կառուցեցին, իրենց համար անթլիսատության օրենք հաստատեցին, շեղվեցին սուրբ կտակարանների ուխտից, միաբանեցին հեթանոսների հետ և հոժարեցին չարիքներ գործել:

(Ա Մակ. Ա 12-16)

Հայտնի չէ, թե ինչի կհանգեցնեին հինկտակարանյան Համայնքի հելլենականացման ճանապարհով ընթացող Յասոնի բարեփոխումները, եթե նա չտապալվեր քահանայապետի պաշտոնի նոր հավակնորդ Մենելավոսի ձեռքով: Այս մարդը ոչ միայն կարողացավ խարդավանքի միջոցով հեռացնել Յասոնին, այլև իր համար՝ Անտիոքում խաղաղ կյանք վարող օրինական քահանայապետ Օնիա Գ-ի մահվան առիթ հանդիսացավ: Ժողովուրդն ամեն կերպ հակադրվում էր իշխանությունը բռնազավթած Յասոնին, իսկ սա կարող էր ապավինել միայն թագավորի օգնությանը:

170 թ. Անտիոքոսը եգիպտական արշավանքից վերադարձավ Հուդայով, ուր պայքար էր ծավալվել Յասոնի ու Մենելավոսի կողմնակիցների միջև: Անտիոքոսը քաղաքում դաժան սպանդ կազմակերպեց: Նրա զինվորներն օգտվեցին օրվա տոն լինելու հանգամանքից և կոտորեցին հազարավոր խաղաղ բնակիչների, այդ թվում՝ կանանց ու երեխաների: Հելլենականությունը ծավալվեց իր ամենասարսափելի կողմով: Բայց Երուսաղեմին սպասում էր գլխավոր դժբախտությունը:

5. Անտիոքոսի հալածանքը: Աստվածաշնչական ավանդության մեջ Անտիոքոս Եպիփանեսը դարձել է հակաքրիստոսի նախատիպ: Դանիելի Գրքից սկսած մինչև Հովհաննեսի Հայտնություն, սուրբգրական հեղինակները

Մեսիայի թշնամուն, Աստծու թշնամուն վերագրելու էին այս թագավորի գծերը:

Անտիոքոսն իզուր էր աշխատում հսկողության տակ վերցնել Եգիպտոսը. նա ստիպված էր հանդիպել Հռոմի աներեր կամքին, որ նրան ստիպեց նահանջել: Այդ անհաջող արշավանքից հետո Անտիոքոսը, իր անզոր զայրույթից դուրս գալու ելք որոնելիս, վճռեց վերջնականապես արմատա-



Դրամ Անտիոքոս Դ Եպիփանեսի պատկերով (II դ. Ք. ծ. ա.)

խիլ անել հուդայական հավատքը: Իրեն Ջևսի մարմնացում համարող մարդու համար անհանդուրժելի էր այն միտքը, թե ինքը դեռևս ունի հպատակներ, որ չեն պաշտում Օլիմպոսը և չեն հավատում թագավորի աստվածային լինելուն: Հարկ էր մահացու հարված հասցնել Իսրայելի Աստծուն:

168 թվականի աշնանն Անտիոքոսը հրովարտակ արձակեց Երուսաղեմի Տաճարում պաշտամունքը դադարեցնելու համար և բանագնացներ ուղարկեց բոլոր քաղաքները հրովարտակով, որն ասում էր. թագավորության տիրույթի բոլոր բնակիչները

այսուհետև համարվում են մեկ ժողովուրդ և պարտավոր են «թողնել իրենց օրենքը»: Հրեաներին խստիվ արգելվում էր կարդալ Գիրքը, շաբաթը պահել, երեխաներին թլփատել և, նույնիսկ, պարզապես կոչվել հրեա: Չենթարկվողներին մահապատիժ էր սպառնում (Ա Մակ. Ա 43-53):

Քահանայապետ Մենելավոսը և հունասերների խումբը ենթարկվեցին հրովարտակին: Իսկ Երուսաղեմի բնակիչների մեծ մասը նախընտրեց, սեփական տները լքելով, հեռանալ քաղաքից:

Կառավարական գործակալները շրջում էին երկրով մեկ՝ համոզելով, սպառնալով և պատժելով: Կտակարանի գալարները, որ ընկնում էին նրանց ձեռքը, նրանք պատառոտում և այրում էին:

Բայց Անտիոքոսին սա անբավարար թվաց: 167 թ. դեկտեմբերին, քասղևամսի տասնհինգերորդ օրը, Տաճարի բակում տեղադրվեց Օլիմպոսի Ջևսի զոհասեղանը: Այն ըստ արևելյան սովորույթների կոչվեց Երկնքի տիրակալ՝ Բահաղ Շամնեմ: Բայց ժողովուրդն այլափոխեց այդ տիտղոսը եբր. ԾՊՄՊ շրշ – ՇԻԿՈՒՑ ՄԵՇԱՄԵՄ, այսինքն՝ զգվելի նողկանք, կամ ավերմունքի պղծություն (Ա Մակ. Ա 57. տես հտ. 2, § 28, կետ 1): Իսկ տասն օր անց հրապարակվեց նոր հրաման՝ հավաքվել Տաճարի մոտ՝ հեթանոսական պաշտամունքին մասնակցելու համար: Խոզեր էին զոհաբերվում՝ ավելորդ անգամ ցույց տալով, որ հուդայական սովորույթները վերջացած են:

Բայց, քանի որ ոմանք դեռ շարունակում էին ընդդիմանալ հրամանին՝ Անտիոքոսը ճնշումներ և հետապնդումներ սկսեց: Սպանում էր նրանց, որ հրաժարվում էին իրենց տան մոտ հեթանոսական զոհասեղան տեղադրել, և նրանց, ովքեր չէին ուզում գնալ Աստծու պղծված տունը: Կանանց, որոնց երեխաները թլփատված չէին, իրենց զավակների հետ կախաղան էին բարձրացնում (Ա Մակ. Ա 63-64):

Հալածանքները Պաղեստինից փոխադրվեցին նաև հրեական սփյուռքի երկրներ, որոնք ենթակա էին Անտիոքոսին: Ով կարող էր՝ փախչում էր Եգիպտոս, մնացողները թաքնվում էին գյուղերում, լեռներում ու անապատներում:

Ինչպես հետագայում՝ քրիստոնյաների հալածանքների ժամանակ, իշխանություններն առավել դաժան էին ժողովրդի հոգևոր առաջնորդների նկատմամբ: Դպիրների, իմաստունների ու ռաբբիների մեջ տեսնում էին շարի արմատը: Միևնույն ժամանակ նրանցից ոմանց աշխատում էին ուրացություն մղել, որպեսզի հասարակ ժողովրդի մեջ գայթակղություն առաջացնեն:

Մակաբայեցիների Բ գիրքը պատմում է՝ ինչպես հեթանոսներն առևանգեցին զառամյալ օրենսդրության Եղիազարին՝ նրան համոզելով, թեկուզ առերես, խախտել Օրենքը: Դրան ի պատասխան Եղիազարն ասաց, որ իր միակ ցանկությունը հավատքի համար մեռնելն է: «Ո՛չ արժան է, ո՛չ էլ պատշաճ, որ այս տարիքի հասած մարդը կեղծավորություն անելով մտնի սուրբ դատաստան, - ասաց նա - կարող են շատ երիտասարդներ խեթ նայել ինձ վրա, մտքում կասկածել ու ասել. “Եղիազարը իննսուն տարեկան հասակում, հասնելով մահվան դուռը. դավանափոխ եղավ”»: Նրանք իմ պատճառով կեղծավորությամբ կգայթակղվեն: Ես խղճի խայթ կունենամ և աշխարհում վատ ծերունու անուն կթողնեմ» (Բ Մակ. Չ 24-25): Նրան մահապատժի ենթարկեցին, ինչպես և նրա յոթ աշակերտներին, որոնք զոհվեցին իրենց մոր աչքի առաջ. մայրը՝ ներկա լինելով տանջանքներին՝ տոկունության հորդորներ էր տալիս:

Այդ նահատակների հիշատակն Ուղղափառ Եկեղեցին տոնում է օգոստոսի 1-ին¹:

Դիմելով հալածողին՝ նրանք դավանեցին իրենց հավատը մեռելների հարություն մասին: «Ա՛յ դու գոռոզ, ինքնահավան ու ամբարտավան, դու կարծում ես, թե մեզ զրկում ես այս աշխարհի կյանքից, - ասաց մանուկներից մեկը, - թեպետ մենք մեռնում ենք օրենքի համար, բայց Նա, որ աշխարհի թագավորն է, հավիտենական կյանքում երկրորդ ծննդյան ժամանակ մեզ նորից կպարգևի»: Մյուսն էլ այսպես խոսեց. «Լավ է, որ հեռանում ենք

¹ Հայ Առաքելական Եկեղեցին տոնախմբում է Վարդավառի երրորդ շաբաթվա երկուշաբթի օրը. - Ծան. թարգմ.:

մարդկանցից, որովհետև մենք հավատում ենք մեռելների հարուստանը՝ երկրորդ ծննդեանը: Դու թէեւ կենդանի ես մնում, բայց հարուստան չես արժանանա» (Բ Մակ. Է 9, 14):

Այն ժամանակ առաջին անգամ Իսրայելում հնչեցին աղոթքներ մեռելների համար (Բ Մակ. ԺԲ 42-45):

Բռնությունների ալիքն աստիճանաբար խաղաղվեց: Բոլորը, որ ընկան թշնամու ձեռքը և չուրացան՝ սպանվեցին: Հազարավոր հավատարիմներ լքեցին քաղաքները: Երուսաղեմն ամայացավ: Տաճարը մնաց պղծված: Քաղաքում միակ կենդանի վայրն Աքրա ամրոցն էր, ուր տիրություն էին անում հույները և ուրացողները: Հասցված հարվածներից հետո՝ միայն հրաշքը կարող էր հարուստան տալ հինկտակարանյան Եկեղեցուն:

Այն օրերին փրկության լուրը ժողովրդին հասավ Դանիելի մարգարեության միջոցով:

Հարցեր կրկնության համար

1. Ինչո՞վ է բնութագրվում հելլենականությունը:
2. Այն ինչ դրական բան բերեց հինկտակարանյան հասարակությանը և ինչ վտանգներ էր թաքցնում:
3. Ե՞րբ է գրվել Երեմիա մարգարեի Թուղթը:
4. Ո՞րն է դրա հիմնական բովանդակությունը:
5. Ե՞րբ է գրվել Բարուքի Գիրքը:
6. Ինչպիսի՞ն է դրա ուսմունքն Աստծու մասին:
7. Ե՞րբ են գրվել Ա և Բ Մակաբայեցվոց գրքերը և ինչ իրադարձությունների մասին են պատմում:
8. Անտիոքոս Եպիփանեսն ինչպե՞ս էր փորձում խաղաղ եղանակով հելլենականացնել Հուդայի երկիրը:
9. Ո՞վ էր պաշտպանում նրա մտահղացումները:
10. Ներկայացրե՞ք Անտիոքոսի հալածանքները:
11. Հինկտակարանյան նահատակներն ինչպե՞ս դավանեցին հարության հավատքը:

§ 28. Դանիել մարգարեի Գիրքը

(Բ դարի 60-ական թվականներ)

1. **Գրքի ծագումը:** Եբրայական Ս. Գրքում Դանիելի Գիրքը (եբր. Դանիել - Աստված ինձ դատավոր) վերագրվում է ոչ թե մարգարեականներին (ինչպես սինոդական թարգմանության մեջ), այլ՝ Գրություններ բաժնին¹:

¹ Եբրայական Ս. Գիրքը երեք մասի են բաժանում՝ Թորա, Նեբիիիմ, Զեթուբիմ - Հնգա-

Դա ասում է, որ վաղ ավանդությունը Դանիելի Գիրքը մոտեցրել է խրատա-
ուսուցողական գրականությանը: Ավանդությունը Գրքի հեղինակ է համարել
հրեա իմաստուն Դանիելին, որ ապրել է, ինչպես երևում է շարագրանքից,
Գերուսթյան շրջանում (Ք. ծ. ա. Չ դար): Սակայն Դանիելի վերաբերյալ որևէ վկա-
յություն չկա Հին Կտակարանի մյուս մասերում: Նրա մասին լուր է նաև Սի-
րաքը՝ մարգարեների իր ցուցակում¹: Եզեկ. ԺԴ 20-ում Դանիելը ոչ թե աստվա-
ծաշնչական մարգարե է, այլ հին փյունիկյան իմաստուն թագավոր:

Դանիելի Գրքի մի մասը գրված է ուշ շրջանի արամեերենով: Գրքի պատ-
մողական մասը վկայում է, որ աստվածաշունչ այդ գիրքը գրվել է այնտեղ
պատկերված Գերուսթյան շրջանի իրադարձություններից շատ ժամանակ
անց: Այսպես՝ Բաբելոնի նվաճող է անվանված Դարեհը (522-486), մինչդեռ
համաձայն Եսայի ԽԵ 1-6, Ա Եզր Ա և արտասուրբգրային վավերագրերի Բա-
բելոնը գրավել է Կյուրոս Բ (559-530 թթ.): Գիրքը խոսում է Նաբուգոդոնոս-
րի՝ միակ Աստծու հավատքին դառնալու մասին, որը չի համընկնում աստվա-
ծաշնչյան տվյալներին և բաբելական աղբյուրներին: Այնուամենայնիվ Դա-
նիելի պատմությունները հիմնված են իրական դեպքերի հիշողության վրա:
Բայց այդ իրադարձությունները ներկայացվում են բանավոր պատումների
բովով անցնելուց հետո, ուր, բնական է, հնարավոր են փաստական անճշ-
տությունները: Հեղինակի նպատակը վաղուց անցած գործերը նկարագրելը
չէ, այլ՝ միզոնաշի միջոցով հաղորդել Հայտնությունը:

Դանիելի Գրքում շատ է խոսվում հավատարիմների հետապնդման
և Տիրոջ մասին, որը նրանց ազատում է տանջողներից: Դեռևս Գ դարում
նորպլատոնական Պորփյուրը Գիրքը վերագրում էր Մակաբայեցիների շր-
ջանին: Սուրբ Հովհան Ոսկեբերանը և Հերոնիմոս Երանելին Դանիելի տեսիլ-
քում պատկերված Աստծու թշնամուն նույնացնում էին Անտիոքոս Եպիփա-
նեսի հետ: Դա հաստատում է սրբազան հեղինակի հղումը «ավերածության
պղծությանը» (Դան. ԺԱ 31, ԺԲ 11), որ Զևսի զոհասեղանն է Տաճարում (Ա
Մակ. Ա 54): Ժէ դարից մեկնիչներն այն մտքին հանգեցին, որ Դանիելի Գիրքը
գրվել է Անտիոքոսի հալածանքների բուռն շրջանում, նախքան Հուդա Մա-
կաբայեցու Տաճարի մաքրելը «ավերածության պղծությունից»:

2. Դանիելի Գրքի կառուցվածքն ու լեզուն: Գիրքը բաժանվում է եր-
կու տարաբնույթ մասերի.

ա. պատմություններ Գերուսթյան մեջ ապրած իմաստուն Դանիելի կյան-
քի ու գործերի մասին: Այս հատվածի գրական տեսակը բնորոշվում է իբրև

մատյան, Մարգարեներ, Գրություններ:

¹ Սիրաքի ԽԵ-ՃԱ գլուխներում թվարկվում են Հին Կտակարանի մարգարեները, նրանց
գործերով (մանավանդ ԽԹ գլուխը): Դանիելի անունը այդտեղ բացակայում է: Այս
գլուխները հայերենում բացակայում են – խմբ.:

միդրաշ (պատմական նյութի պատում) և ազադա (խրատական առակ): Իբրև հիմք ծառայել են պատմական հին ավանդույթները (Ա-2):

բ. Դանիելի տեսիլքները, Հայտնություն աշխարհի և Աստծու ժողովրդի ճակատագրերի մասին: Սա գրքի վախճանական բաժինն է (Է-ԺԲ):

Եբրայեցիներեն են գրված Ա 1-Բ 2, Լ-ԺԲ, իսկ արամեերեն՝ Բ 3-է 28:

Ինչպես ցույց են տալիս Կումրանում գտնված ձեռագրերը՝ Դանիելի մասին պատումների շարքը չի սպառվում Աստվածաշնչի մեջ մտածներով (տե՛ս հաջորդող Հավելված 1-ը): Այս պատումների մի մասն ավելացվել է Գրքի հունարեն թարգմանությանը (Գ 14-90, ԺԳ-ԺԴ): Եկեղեցին այդ հավելումները դասում է երկրորդականոնների շարքը¹:

3. Գրքի աստվածաբանությունը: Սրբազան հեղինակը քաջալերում է հալածյալներին մի ժամանակաշրջանում, երբ հավատքի ազատությունը մահացու վտանգի առջև էր: Եվ Դանիելի պատումներն ու տեսիլքները կոչ են անում մինչև ի մահ հավատարիմ մնալ Աստծուն:

Գրքում գտնում ենք պատմության յուրահատուկ վախճանական փրկիսփայլություն. պատմության ընթացքում աշխարհը չի լավանում և չի թեքվում դեպի անկում (ինչպես մտածում էին հեթանոսները). սակայն մեծանում է բևեռացումը երկու բևեռների, որոնց Օգոստինոս Երանելին անվանել է Աստծու քաղաք և Երկրային քաղաք²: Նրանց աճման հետ ավելի ու ավելի դաժան է դառնում պայքարը միմյանց միջև:

Ծովից ելնող գազանների այլաբանական կերպարները (մուժ ու ժեռի խորհրդանիշ) ներկայացնում են համաշխարհային կայսրությունները, որոնց իշխանությունն անվերջ չէ: Կգա Օրը, երբ այդ հրեշ-թագավորություններին փոխարինելու կգա Մարդու Որդու Արքայությունը: Չար զորությունները պարտության կմատնվեն, և հավատի համար նահատակվածներն ու արդարները հարություն կառնեն, որպեսզի մտնեն Երկնային Արքայության բերկրանքի մեջ: Սա ևս մի ավետում է հարության մասին, որ հայտնվել է հինկտակարանյան մարդուն (հմմտ. Եսայի Ի2 19, Բ Մակ. Է 14):

4. Հավատարմություն Օրենքին (Դան. Ա). Առաջին «միդրաշը» պատմում է մանուկների մասին, որոնք, Գերության ժամանակ հեթանոսների մեջ լինելով ձեռնպահ են մնում չթուլատրվող կերակուրից, որը պատրաստված չէր Օրենքի կանոնների համաձայն (հմմտ. Ղևտ. ԺԱ): Կերակուրի արգելքների այս շեշտադրումն արտացոլում է ավելի ուշ շրջան, քան Գերության շրջանն է: Անտիոքոսի հալածանքների տարիներին հեթանոսները հրեաներին ստի-

¹ Լույնս Է նաև Հայ Եկեղեցու կանոնում – խմբ.:

² Աստծու քաղաք վերցված է Սաղմ 22 3-ից. *civitas Dei* – Աստծու քաղաք, *civitas terrena* – Երկրային քաղաք: Տե՛ս Սբ. Օգոստինոսի Հիպպոնայ եպս. *Յաղագս Զաղաքին Աստուծոյ*, հտ. Բ գիրք XV, գլ. 1-2, Վենետիկ, 1841 – խմբ.:

պում էին ուտել արգելված կերակուր, բայց շատերն նախընտրում էին մա-
հը, քան Օրենքի խախտելը (Բ Մակ. 2 18-31):

Միդրաշի մեջ բերվում է իմաստունների համար ընդհանուր մի միտք առ այն, թե Իսրայելի Աստվածը բոլոր ժողովուրդների Աստվածն է, թե քաղ-
դեացիների ու պարսիկների հեթանոսությունը լոկ ժամանակավոր մոլորու-
թյուն է: Նրանք լիովին ունակ են ճանաչելու Տիրոջը՝ երկնքի ու երկրի Արար-
չին: Պատմելով մանուկ Դանիելի ու նրա երեք ընկերների կյանքը Բաբե-
լոնում՝ հեղինակն ընդգծում է հեթանոսների բարի վերաբերմունքը նրանց
նկատմամբ: Բաբելոնի թագավորը նրանց դարձնում է իրեն մտերիմ: Բայց
ապրելով այլադավանների մեջ՝ նրանք Օրենքի որդիներ մնալու եղանակ են
գտնում: Սա Դանիելի Գրքի առաջին դասն է:

**5. Նաբուգոդոնոսորի երազը. համաշխարհային կայսրություննե-
րը** (Դան. Բ): *Երկրորդ դասը կարելի է արտահայտել ավետարանական խոս-
քերով. «Մի վախեցի՛ր փոքրիկ հոտ. որովհետև ձեր Հայրը հաճեց տալ ձեզ ար-
քայությունը»¹: Հավատարիմների թիվը շնչին է, և մեծ է հեթանոսների ուժը,
բայց Աստծու խոսքն ի վերջո կհաղթանակի:*

Գիրքը նկարագրում է Նաբուգոդոնոսորի մարգարեական երազը. թա-
գավորը կանգնած էր վիթխարի արձանի առջև, որի գլուխը ոսկուց էր,
կուրծքն ու ձեռքերը՝ արծաթից, իսկ ոտքերը՝ մասամբ երկաթից, մասամբ
կավից: Կավե ոտքերով այդ կոթողը կործանվեց. ժայռից քար պոկվեց, ըն-
կավ կուռքի վրա, որ փշրվելով՝ իրենով լցրեց ամբողջ երկիրը:

Գերված հրեա Դանիելից բացի ոչ ոք չկարողացավ մեկնել թագավո-
րին իր երազը: Կանգնելով նրա առջև՝ իմաստունը հայտարարեց, որ խո-
սելու է Աստծու հորդորով, Ով «փոփոխում է ժամերն ու ժամանակները:
Թագավորներ է կարգում և փոփոխում, իմաստուններին իմաստություն է
տալիս և իսելամիտներին՝ իմացություն» (Բ 21): Այս խոսքերում է ամփոփված
Գրքի գլխավոր ճշմարտություններից մեկը՝ պատմության աստվածաբանու-
թյունը:

Դանիելի բացատրությամբ կուռքը խորհրդանշում է համաշխարհային
կայսրությունները, որ գնում են անկման: Դրանց կփոխարինի Աստծու Ար-
քայությունը, որը «պիտի փոշիացնի ու վերացնի բոլոր թագավորությունները
և ինքը պիտի մնա հավիտյան»:

Գրքի վախճանական բաժնից բխում է, որ ոսկե թագավորությունը
Քաղդեայի (Նորբաբելոնյան կայսրությունը) խորհրդանիշն է, արծաթյան՝
պարսկական, երկաթեն՝ հունամակեդոնական կայսրությունները, կավեն՝
Դիադոքոսների միապետությունը՝ Ալեքսանդրի հետնորդների, մասնավո-

¹ Դուկ. ԺԲ 32 - խմբ.:

րաբար Անտիոքոս հալածողի¹: Վերջին թագավորությունը կլինի Մեսիայի հավիտենական տիրապետությունը՝ Աստծու Արքայությունը: Պատմության ընթացքում Քրիստոսի Հայտնության ու Դիագորոսների միջև եղել է նաև Հռոմեական տերությունը, բայց այն հանդես է եկել իբրև հելլենիստական միապետությունների անմիջական ժառանգորդ:

Երկրի չորս կողմերին համապատասխանող չորս դարաշրջանները ողջ Հին Աշխարհի համաշխարհային պատմության ընդհանուր անվանումն են: Բայց եթե հեթանոսների մոտ (օրինակ՝ Հեսիոդոսի) պատմական ընթացքը նշանակում էր լոկ աստիճանական անկում², ապա բիրլիական տեսանողը քառաստիճան այդ խորհրդանիշին դիմում է բացահայտելու Աստտծու՝ ճակատագրերի մասին խորհուրդը. չարի շատանալը աշխարհում միաժամանակ Աստծու Արքայության մոտ լինելն է նշանակում:

6. Հավատի խոստովանողների արիությունն ու հեթանոսական հպարտության պատիժը (Դան. Գ-Չ): Գրքի երրորդ դասը թագավորի կանգնեցրած արձանի, ճշմարիտ Աստծուն ազոթելն արգելելու և Դանիելի ու նրա ընկերների հավատարմության մասին պատմությունն է: Ոչ մի սպառնալիք չի կարող ստիպել մանուկներին, որ հրաժարվեն հավատքից: Գիրքը փառաբանում է խոստովանողներին, որ չերկրպագեցին արձանին, նաև իրեն՝ Դանիելին, որ հակառակ թագավորի հրամանին՝ շարունակեց ազոթել Աստծուն: Մանուկներն իրենց հանձնեցին երկնային պաշտպանության և հրաշքով փրկվեցին հրաբորբոք հնոցից, իսկ Դանիելն անվնաս մնաց առյուծների գուբի մեջ: Իսկ հալածողը պատժվեց ցնորվելով, և նրա թագավորությունն ընկավ:

Դանիելի Գրքի պատումները պատմականորեն հիմնված են երկու իրադարձության վրա. ա) Նաբուգոդոնոսորի պաշտամունքային բարեփոխման, որի համար տաճարները վերակառուցվեցին այնպես, որ նախկինում ժողովրդի աչքից ծածկված արձանը տեսանելի դառնա բոլորի համար. բ) Անտիոքոս Եպիփանեսի հրամանի, որ մահապատժի սպառնալիքով յուրաքանչյուր հրեայի հրամայվում էր զոհ մատուցել հեթանոս աստվածներին (Ա Մակ. Ա 42-53): Երեմիա ԻԹ 22-ը վկայում է, որ Բաբելոնում հայտնի էր մահապատժի՝ հնոցում այրելու եղանակը: Սատրապների հիշատակումը ժամանակավրեպ է. սատրապները միայն Պարսից կայսրությունում էին: Ե գլուխը պատմական անդրադարձ ունի: Բաղդասարը (եբր. ܒܘܕܝܣܐܪ - ԲԵԼՇԱՑԱՐ, բաբելական ԲԵԼ-ՇԱՐ-ՈՒՑՈՒՐ) եղել է, ինչպես ենթադրվում է, Նաբուգոդոնոսորի և եգիպտոսի Նիտոկրիսի որդին: Նաբուգոդոնոսորի մահվանից հե-

¹ Այսինքն՝ Սելևկյանների - խմբ.:

² Հեսիոդոսը (թ. ծ. ա. Ը դար) պատմությունը բաժանում էր ոսկե, արծաթե, պղնձե և երկաթե դարերի՝ դրանց անկման աստիճանին համապատասխան:

տո բռնապետ Նաբոնիդը (տե՛ս հտ. 2, § 15, կետ 2) իր իշխանությունն ամրապնդելու համար ամուսնացել է Նիտոկրիսի հետ և որդեգրել Բաղդասարին¹: Իր բացակայության ժամանակ նա արքայազնին կարգել է թագավորության երկրորդ իշխան² (հմմտ. Դան. Ե 29)³ մայրաքաղաքի տեղապահ: Դանիելի գրքում նկարագրված Բաղդասարի խնջույքը տեղի է ունեցել տոնակատարության ընթացքում (տե՛ս Յերոդոտոս, Պատմություն, I, 191), որի ժամանակ Կյուրոսի բանակը մոտեցավ Բաբելոնին, իսկ Նաբոնիդի հակառակորդները գաղտնաբար պատրաստվում էին դարպասները բանալ թշնամու առջև:

Պատին հայտնված երեք խորհրդավոր բառերը տարբեր կերպ են մեկնաբանվում: Դանիելը միայն դրանց ընդհանուր իմաստն է պարզաբանել: Արդի որոշ մեկնաբանների կարծիքով դրանք երեք դրամներն են խորհրդանշում՝ դասավորված ըստ արժեքի նվազման, որ ցույց է տալիս Բաբելոնի թագավորության աստիճանական մայրամուտը: Ընդհանուր առմամբ պատմական այս պատումի մեջ կան նաև Անտիոքոսի թագավորության մասին ակնարկներ (Դան. Ե 2-4, հմմտ. Բ Մակ. Ե 16):

Գ 24-90-ի մանկանց երգն սինոդական Աստվածաշունչը փոխառել է Յոթանասնի թարգմանությունից: Ենթադրում են, որ դրա բնագիրն արամեերեն է գրվել: Այն Աստծու տիեզերաստեղծ զորության հանդեպ հավատի խոստովանությունն է: ՅՑ-րդ համարը Անտիոքոսի կառավարման ժամանակն է մատնանշում, երբ Տաճարը վերածվել էր հեթանոսական մեհյանի (հմմտ. Ա Մակ. Ա 54-57):

Այդ երգը կարդացվում է Ավագ շաբաթվա ընթերցվածների շարքում՝ որպես խավարի ուժերի նկատմամբ Տիրոջ Փառքի հաղթության մարգարեություն^{3,4}:

7. Երկրային թագավորությունները և Մարդու Որդու Թագավորությունը (Դան. Է): Գրքի վախճանական մասի պատկերները, խորհրդանիշներն ու այլաբանությունները կոչված են պատկերելու համաշխարհային պատմության իրադարձությունների ներքին էությունը: Այն ներկայացված է որպես երկկողմանի ընթացք: Աստծու Արքայության մոտենալը կապված է շարի շատանալու հետ, որը ներկայացված է երկրի չորս կողմերից փչող բուռն հողմերը (Դան. Է 3):

Մարգարեն տեսնում է՝ ինչպես է ծովի ընդերքից դուրս գալիս չորս հրեշ,

¹ Ըստ Յերոդոտոսի Լաբոնիդը Լաբուևաիդն է (Լաբուևետոս). տե՛ս Յերոդոտոս, Պատմ., I, 188, Երևան, 1986, էջ 77 – խմբ.:

² Հայերենում երրորդ իշխան – Ծան. թարգմ.:

³ Դանիելի Գրքի Գ գլուխն ընկած է առավոտյան ժամերգության սկսվածքների հիմքում/7-8-րդ երգեր/:

⁴ Հայ Եկեղեցում ճրագալույցին (Ս. Ծննդյան և Ս. Հարության) հանդիսավոր կերպով ընթերցվում է այդ հատվածը՝ Դան. Գ 1-90 – խմբ.:

որ քաղղեակա՛ն և պարսկա՛կան պալատների քանդակներն էին հիշեցնում: Դրանց անբնական կերպարանքը, որոնց խառնված են տարբեր կենդանիների գծեր, ցույց են տալիս մեղքի թշնամուծությունը Աստծու սահմանած ա՛աշխարհակարգի հանդեպ:

ԱՌԱՋԻՆ ԳԱՉԱՆԸ - Ասորաբաբելական տերությունն է,

ԵՐԿՐՈՐԴԸ - Պարսկական,

ԵՐՐՈՐԴԸ - Մակեդոնական. սրա քառաթևությունը խորհրդանշում է չորս Դիագոքոսներին՝ Ալեքսանդրի հետնորդներին՝ Պտղոմեոսին, Սելևկոսին, Փիլիպպոսին, Անտիգոնեսին (տե՛ս Иероним, Толкование на пророка Даниила),

ԶՈՐՐՈՐԴ ԶՐԵՇԸ - մյուսներին չնմանվող, Սելևկյանների միապետությունն է, որ Ալեքսանդրի ժառանգության լոկ մի մասին էր տիրում: Հրեշի եղջյուրներն այդ հարստության թագավորներն են: Մարգարեն խոսում է «սրբապիղծ Անտիոքոսի մասին, որովհետև նա այն փոքր եղջյուրն է, որ դուրս մղեց նախորդ երեք եղջյուրները» (Иоанн Златоуст. Обзорение книг Ветхого Завета. Творения, тит. VI., էջ 689): Աստված-հայհոյող այս թագավորի կերպարը պատկերված է նույն այն գծերով, ինչպես հակաքրիստոսը Հովհաննես Աստվածաբանի Հայտնության գրքում (Զայտն. ԺԳ):

Չորս կայսրությունները կանգնում են Աստծու Դատաստանի առաջ: Աստված տեսիլքի մեջ հայտնված է Հինավուրցի՝ Ծերունու նման, որը ցույց է տալիս Արարչի հավերժությունը, որ վեր է սրբնթաց փոխվող աշխարհից և պատմությունից: Հայհոյողը կործանվում է Աստծու ուժով, իսկ գիշատիչ միապետներին «կյանքի երկարության որոշակի ժամանակ տրվեց» (Է 9-12), մինչ այն օրը, երբ երկնային Փառաց ամպի մեջ կիշնի Հաղթողը և վերջ կտա դրանց:

Գիշերային տեսիլքում տեսնում էի,

որ, ահա, երկնքի ամպերի միջից

գալիս էր մեկը մարդու Որդու նման

և հասնում Ծերունուն.

նա բերվեց նրա առջև:

ՆՐԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ,

ՊԱՏԻՎ և ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆ ՏՐՎԵՑ.

ԲՈՂՈՐ ԱՉԳԵՐԸ, ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՆ ՈՒ ԼԵՉՈՒՆԵՐԸ

ՊԻՏԻ ԾԱՌԱՅԵՆ ՆՐԱՆ.

նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է,

որ չի անցնի,

և նրա թագավորությունը չի կործանվի:

(Դան. Է 13-14)

«Աստուծու Որդի» (արամ. ܐܫܘܪ ܕܒܪ - ԲԱՐ-ՆԱՇԱՆՆ) կապակցությունը պարզապես մահկանացու է նշանակում: Բայց այս մարգարեության մեջ խոսվում է ոչ սովորական մարդու մասին: Այդ է-ն է, որ գալու է Փառաց ամպերի միջից: Նա գերազանց է բոլոր երկրածիններից: Միևնույն ժամանակ Նրա մարդկային դեմքը ցույց է տալիս Նրա Արքայության տարբերությունը գազանների կայսրություններից:

Հրեշտակը Դանիելին մեկնում է տեսիլքը. Մարդու Որդին և՛ «Բարձրյալի սրբերն» (Է 18) են և՛ Ինքը՝ Մեսիան: Նրա մեջ միացել են Երկիրնքն ու երկիրը, Փրկագնողի Անձը և Նրա Եկեղեցին:

Օձյալի բոլոր անուններից Քրիստոս-Փրկիչը նախընտրում էր Դանիելյան Մարդու Որդին (Մատթ. ԻՉ 24):

8. Կայսրությունների պայթարը և փորձությունների ժամանակը (Դան. Ը): Ը գլխի տեսիլքն ավելի որոշակի իմաստ ունի: Այն վերաբերում է Ալեքսանդրից մինչև Անտիոքոս Եպիփանեսի ժամանակները տեղի ունեցած դեպքերին: Տեսիլքը մարգարեին բացատրում է Գաբրիել հրեշտակը, որի հայտնությունները կապվում են մեսիական խորհրդի հետ (հմմտ. Ղուկ. Ա 26): Տեսիլքի նպատակն էր հալածանքի օրերին մխիթարել ողբացողներին, նրանց համար կանխատեսել փորձությունների ժամանակը:

Տեսիլքի մեջ խոյը պարսից տերությունն է, որ գրավել էր Փոքր Ասիայից մինչև Հնդկաստան շատ երկրներ (Ը 20): Դրա հետ մարտնչում է քոչը՝ հունական աշխարհը (սրա աչքերի միջև եղած եղջյուրն Ալեքսանդր Մակեդոնացին է, Ը 21): Քոչի հաղթանակը խոյի նկատմամբ ցույց է տալիս Պարսից պետության 333 թվականի ջախջախումը Ալեքսանդրի կողմից: Տասը տարի անց Ալեքսանդրը վախճանվեց (խորտակվեց նրա մեծ եղջյուրը, որի տակից չորս այլ եղջյուրներ ելան. Ը 8): Նրան հաջորդեցին չորս հետնորդները՝ Դիադոքոսները: Սրանցից մեկից (Սելևկոս) «մի փոքր եղջյուր դուրս եկավ, և նա չափազանց մեծացավ դեպի հարավ և դեպի արևելք և դեպի փառավորը¹: Եվ մեծացավ մինչև երկնքի զորքը, և գցեց գետին այն զորքից և աստղերից և նրանց կոխտեսց դրանք: Եվ մինչև զորաց Իշխանը բարձրացավ², և Նրանից վերցվեց ամենօրյա զոհը, մշտնջենականը, և կործանվեց Նրա սրբարանի տեղը» (Ը 9-11)³:

Դանիելի գրքի առաջին ընթերցողները հեշտությամբ կարող էին ընկալել, թե ով է պատկերված տեսիլքում: Դա հալածիչ-թագավորն է, ով պղծեց Տաճարը: Այն հարցին, թե երկա՞ր է տևելու սրբապիղծի հաղթությունը,

¹ Ակատի ունի Սք. Երկիրը:

² Իմա՛ Աստված (Տեր Սաբաովթ - Երկնային զորությունների Իշխան):

³ Այս հատվածի Սինոդական թարգմանությունը եբրայերեն բնագրից է - խմբ.:

խորհրդավոր ձայնը պատասխանում է, որ սրբարանը կմաքրվի 2300 օր հետո (Ը 14)¹ այսինքն՝ երեքուկես տարի անց¹: Այս մարգարեությունը ճշտությանմբ կատարվեց. 164 թ. Հուդա Մակաբայեցին մաքրեց Տաճարը հեթանոսներից (տե՛ս հտ. 2, § 29):

9. Մեսիական մարգարեություն յոթնյակների մասին (Դան. Թ): Դանիելը պատմում է, թե ինքն ինչպես էր խորհրդածում Աստծու ժողովրդի ճակատագրի մասին համաձայն Սուրբ Գրքերի: Երեմիայի Գրքի համաձայն Իսրայելի պատիժը՝ աքսորը, տևելու է յոթանասուն տարի (Երեմ. ԻԵ 9-12): Բայց իրականում Գերությունը պակաս տևեց, իսկ դժբախտությունները՝ երկար: Այնժամ Գաբրիել հրեշտակը տեսանողին բացատրում է, թե դժբախտությունների շրջանը, որ կտևի մինչև Մեսիայի գալուստը, կմեծանա յոթն անգամ (հմմտ. Ղևտ. ԻԶ 21): Այդ շրջանը չափվում է յոթ տարիներով՝ յոթնյակներով կամ շաբաթնյա տարիներով² (հմմտ. Բ Մնաց. ԼԶ 21, Ղևտ. ԻԶ 34-35): Ոչ թե յոթանասուն տարի, այլ յոթանասուն յոթնյակ կանցնի մինչև փորձությունների վախճանը և Մեսիական Թագավորության սկիզբը:

Պղծված Սրբություն Սրբոցը վերստին կսրբագործվի: Սա դիտվում է որպես Տաճարի սրբագործումը Հուդա Մակաբայեցու ժամանակ (Ա Մակ. Դ 36-61), և Մեսիայի գալստյան նախապատկերը: Եվ իրոք՝ նախանորկատարանյան շրջանը հենց Մակաբայեցիների ժամանակ է սկսվում:

Մարգարեության ավարտին ժամկետները ճշտվում են (Թ 25-27): Յոթանասուն յոթնյակի շրջանը (490 տարի) բաժանված է երկու փուլի՝ փորձության (յոթ յոթնյակ) և վերածնունդ (վախճաններկու յոթնյակ): Գրքում նշված թվերը կլորացված են, ինչպես ընդունված է Աստվածաշնչի խորհրդանշական հաշվարկներում (հմմտ. Մատթ. Ա 17):

Յոթանասուն յոթնյակի վերաբերյալ գոյություն ունի երկու մեկնություն.

ա. Հաշվարկն սկսվում է Պարսից Արտաշես Թագավորի՝ Երուսաղեմի պարիսպների վերականգնումը թուլյատրոզ հրամանից (445 թ. հմմտ. Նեեմի Բ 1), և հասնում մինչև Քրիստոսի երկրային սպասավորության ավարտը:

բ. Արդի աստվածաշնչագիտության մեջ առավել տարածված հաշվարկը կատարվում է ըստ Երեմիա մարգարեի՝ Գերությունից (հմմտ. Երեմ. ԻԹ 10):

Առաջին փուլը - կլորացված քառասունինը տարի (յոթ յոթնյակ). տևում է Գերությունից (587 թ.) մինչև ազատագրումը (538 թ.), ըստ Դանիելի՝ «մինչև Քրիստոս Տերը»³: «Քրիստոս Տերը» (եբր. ܩܪܝܫܬܘܫܬܐ - ՄԱՇԻՍԽ ՆԱ-

¹ Հայերենում 1268 օր, ինչպես Յոթանասնիցում է - խմբ.:

² Ինչպես յոթներորդ օրը, այնպես էլ յոթներորդ տարին շաբաթնյա երկու օրով կամ Տիրոջ շաբաթ (Ելք ԻԳ 10-13) - խմբ.:

³ Դան. Թ 25: Ռուսերենում Քրիստոս Տերը եբրայերեն բնագրի Մեսիա Իշխանն է: Հայերենում առաջին օձյալ է - խմբ.:

ԳԻԴ – օծյալ առաջնորդ) Հիսուս Քրիստոսը չէ, այլ Հեսու քահանայապետն է (Չաք. Գ), կամ Կյուրոս թագավորը (Եսայի ԽԵ 1):

Երկրորդ փուլը – կլորացված 434 տարի (վաթսուներկու յոթնյակ). տևում է մինչև ոմն օծյալի մահը (սինոդական թարգմանություն մեջ՝ «Քրիստոսի»): Այստեղ օծյալը հասկացվում է Օնիա Գ քահանայապետը (մահ. 171 թ.): Սրբավայրի ավերումը «առաջնորդի ժողովրդի» ձեռքով՝ խորհրդանշում է Անտիոքոսի հալածանքը: Վերջին՝ յոթանասուներորդ յոթնյակը՝ դժբախտությունների ժամանակն է (175-163 թթ.): Յոթնյակի կեսը (3.5 տարի, տես Դան Է 25, Ը 14, ԺԲ 7, 11-12), սկսվում է 167 թվականից, երբ Տաճարում տիրում է «ավերածության պղծությունը» (հմմտ. Ա Մակ. Ա 57, Դան. ԺԱ 31, ԺԲ 11) ու տևում է 1290 օր¹: Քրիստոս Փրկիչն այդ խոսքով բնորոշեց սրբության պղծումը հեթանոսների ձեռքով (Մարկ. ԺԳ 14):

Ըստ Ա. Կնյազևի Դանիելի յոթնյակներում գտնում ենք «պատմության այն նույն ընթացքը, որ անցնում է ամբողջ գրքով. չորս գազանների թագավորություն, որ պիտի փոխարինեն մեկը մյուսին մինչև Մարդու Որդու Թագավորության գալուստը».

Առաջին յոթ յոթնյակները	-	Նորբաբելական կայսրություն	-	Արձանի ոսկե գլուխը (Դան. Բ)
62 յոթնյակներ	-	Պարսից կայսրություն, Ալեքսանդր և Դիոդոթոսներ	-	Արծաթե կուրծքը և պղնձե մեջք
70-րդ յոթնյակ	-	Անտիոքոս Եպիփանեսը և նրա հալածանքները, հակաքրիստոսի նախակերպարը	-	Արձանի երկաթե և կավե ոտքերը
Անօրինության վախճանը	-	Աստծու Արքայությունը. հավերժական ճշմարտության Թագավորությունը լցնում ողջ աշխարհը	-	Անձեռակերտ քարը, որ ջախջախում է արձանը

Պատմությունը, կատարելով այն, ինչ եղավ Գերության սկզբից մինչև Անտիոքոս Եպիփանես և Քրիստոս, նախապատկերում է այն ամենը, որ կիրականանա աշխարհում Եկեղեցու սկզբից մինչև Երկրորդ գալուստը»:

10. Վախճանաբանական ճակատամարտ: Մեռելների հարությունը (Դան. Ժ-ԺԱ): Ժ-ԺԱ գլուխների տեսիլքում նշվում է անմարմին ուժերի (լուսո հրեշտակներ և անկյալներ) մասնակցությունը ժողովուրդների ճակատագրին: Հրեշտակների պարտականությունն է պահպանել բոլոր ժողովուրդներին: Նրանք կոչվում են «ժողովուրդների իշխաններ»: Բայց ոչ բոլոր հրեշտակները կատարեցին իրենց առաքելությունը: Այսպես՝ «պարսից թա-

¹ Սինոդական թարգմանության մեջ 11-րդ համարում 1290 օր է, իսկ 12-ում՝ 1335 օր: Հայերենում երկու տեղում էլ՝ 1335 օր է – խմբ.:

գավորութեան մի իշխան» (Ժ 13-14) ինքն անկում ապրեց և պարսիկներին գայթակղեց իշխանասիրութեան ոգով (հմմտ. Եզեկ. ԻԸ): Միքայելը՝ հինկտակարանյան Եկեղեցու պահապան հրեշտակն է: Նա պայքարում է Աստծու թշնամու դեմ: Նոր Կտակարանում նա հակաքրիստոսին և սատանային հաղթողն է (Յայտն. ԺԲ 7):

Հրեշտակը Դանիելին բացահայտում է Աստծու ժողովրդի ճակատագիրը: Խորհրդավոր կերպարների մեջ (զլ. ԺԱ) մարգարեի առջևով անցնում են թագավորներ և իրադարձություններ՝ Ալեքսանդրի մինչև Անտիոքոս և «ավերածութեան պղծությունները» (տես այս գլխի Յավելվածը): Մարգարեությունն ավարտվում է վախճանաբանական մարտի պատկերով: Հալածողի կործանումը հակաքրիստոսի թագավորութեան կործանման նախապատկերն է.

*Երկրում, հողի մեջ ննջածներից շատերը հարություն պիտի առնեն,
ունանք հավիտենական կյանքի համար,
և ունանք հավիտենական նախատինքի ու ամոթի համար:*

*Իմաստուն մարդիկ պիտի ճառագեն
իբրև երկնականարի լուսատուներ,
իսկ արդարներից շատերը առավել ևս՝
իբրև հավիտենական աստղեր:*

(ԺԲ 2-3)

Գրքի վերջաբանում մեկ անգամ ևս մարգարեին ժամանակների մասին ցուցում է տրվում: Հալածանքների շրջանը դարձյալ երեքուկես տարի է. այդ է «ժամանակին, ժամանակներում և ժամանակի կեսին» արտահայտությունն իմաստը (ԺԲ 7-12):

Այսպիսով Դանիելի գրքում գտնում ենք մարգարեական տեսիլքի երկու ուղղություն: Առաջինը վերաբերում է Մակաբայեցիների ժամանակի դրամատիկ իրադարձություններին, իսկ մյուսը հռչակում է Աստծու տիեզերական և վերջնական հաղթանակը մութ ուժերի նկատմամբ:

Յարգեր կրկնության համար

1. Դանիելի գրքության ժամանակն ինչի՞ց է երևում:
2. Ժամանակակից աստվածաշնչագիտությունն այն ո՞ր դարաշրջանին է վերագրում:
3. Գրքի կառուցվածքն ինչպիսի՞ն է:
4. Ի՞նչ լեզվով է գրված գիրքը:
5. Բնութագրեցե՞ք գրքի աստվածաբանության գլխավոր հատկանիշները:
6. Ի՞նչ է սովորեցնում գերված մանուկների պատմությունը:

7. Ո՞րն է Նաբուգոդոնոսորի երազի իմաստը:
8. Մանուկների վերաբերյալ պատմության կրոնաբարոյական նշանակությունը ո՞րն է, և դա ինչ պատմական փաստերի վրա է հիմնված:
9. Դանիելի է գլխում ի՞նչ են խորհրդանշում չորս հրեշները:
10. Ո՞վ է հայտնվել Մարդու Որդու անունով:
11. Դանիելի Ը գլխում ի՞նչպես է պատկերված կայսրությունների պայքարը, և ի՞նչպես է որոշվել հինկտակարանյան Եկեղեցու փորձությունների ժամանակը:
12. Դանիելյան յոթնյակների մեկնության երկու տարբերակներն ինչո՞վ են առանձնանում:
13. Դանիելի Գրքի առաջին մասում ինչի՞ն են համապատասխանում յոթնյակները:
14. Գրքում ի՞նչպես են պատկերված վախճանաբանական մարտը և մեռելների հարությունը:
15. Ցույց տվե՛ք Դանիելի Գրքում մարգարեական տեսիլքի երկու կողմերը:

§ 28-ի Հավելված

1. Դանիելի մասին պատմության պատաստիկ Կումրանի 4-րդ քարանձավից

Ազոթքի խոսքերը, որ արտասանեց Ասորեստանի և Բաբելոնի թագավոր Նաբոնիդը՝ մեծ արքան, երբ երկնքի Աստծու կամքով Թեյմե քաղաքում աստահարվեց շար բորով:

«Յոթ տարի ես վարակված էի շար բորով և... ես նման էի... Եվ իմ մեղքը թողեց տեսանողը, որ հրեա էր՝ Բաբելոնի տարագրության որդիներից, և նա իմացավ ու գրեց, որպեսզի պատիվ ու մեծ փառաբանություն տանք երկնքի Աստծու անվանը: Եվ նա այսպես գրեց. Երբ դու երկնից Աստծու կամք Թեյմե քաղաքում հիվանդացար շար բորով, յոթ տարի ազոթեցիր ոսկյա և արծաթե, պղնձաձուլ և երկաթակուռ, փայտյա ու քարեղեն, կավակերտ կուռքերին, որովհետև կարծում էիր, թե դրանք աստվածներ են...»:

(Ըստ՝ Ի. Դ. Амусин, Тексты Кумрана, М., 1971, էջ 331-332)

2. Հելլենական թագավորությունների ճակատագրերը Դանիել մարգարեի գրքի Ժ-ԺԱ գլուխներում

Դանիել մարգարեի գրքի Ժ-ԺԱ գլուխները մեկնաբանների համար հիմք են ծառայում իմանալու գրությունից ժամանակը: Մեկնիչների հետազոտող-թյուններն օգնել են Ժ գլխում հիշատակված թագավորներին ու իրադարձու-

թյունները նույնականացնել հելլենիստական շրջանի անձանց և դեպքերի հետ: Այս պատմական տեսիլքում Աստծու խոսքը ցույց է տալիս երկրային թագավորությունների անկայունությունը:

ԺԱ 3 – «հզոր թագավոր»՝ Ալեքսանդր Մակեդոնացի (336-323):

ԺԱ 4 – Ալեքսանդրի կայսրության բաժանումը նրա շորս հետնորդների՝ Դիադոքոսների միջև (հմմտ. Դան. Ը 8):



Ալեքսանդր Մակեդոնացի: Հունական արձանի հռոմեական պատճեն, 338 թ.:

ԺԱ 5-9 – «հարավի թագավորը»՝ Եգիպտոսի Պտղոմեոսների միապետը, «հյուսիսի թագավորը»՝ Ասորիքի Սելևկյան միապետը: «Հարավի թագավորի դուստրը»՝ Պտղոմեոս Փիլադելփոսի դուստր Բերենիկեն, որ կնություն արվեց Անտիոքոս Բ-ին (261-246) և օժիտ ստացավ Հուդան: Ամուսնու մահվանից հետո Բերենիկեն հեռացվեց իշխանությունից, և գահ բարձրացավ Անտիոքոս Բ-ի առաջին ամուսնությունից ծնված որդին: Եգիպտական Պտղոմեոս Գ թագավորը (246-221)՝ Բերենիկեի եղբայրը (նրա արմատի ընծյուղից), վրեժ լուծելով քրոջ համար, հարձակվեց Ասորիքի վրա, բայց չկարողացավ արշավանքը հասցնել հաջող ավարտի, քանի որ Եգիպտոսում ապստամբություն բռնկվեց:

ԺԱ 10 – Եգիպտոսի դեմ պատերազմը շարունակեցին Սելևկոս Բ-ի որդիները՝ Սելևկոս Գ (226-223) և Անտիոքոս Գ Մեծ (223-187): Նրանց հաջողվեց գրեթե քառասուն տարով Հուդան ենթարկել Սելևկյաններին:

ԺԱ 11 – Պտղոմեոս Դ Փիլոպատորը (221-205) ժամանակավոր հաղթանակ տոնեց Անտիոքոս Մեծի դեմ՝ 217 թ.:

ԺԱ 23 – Անտիոքոս Գ Մեծը վերստին գրավեց Հուդան:

ԺԱ 18 – Այս համարը ցուցում է պարունակում Անտիոքոս Մեծի՝ փոքրասիական հաղթանակի մասին:

ԺԱ 19-20 – Անտիոքոս Մեծի որդին՝ Սելևկոս Դ, Հուդայի վրա անասելի ծանր հարկեր դրեց: Նրա օրոք Հեղիոդորոսը փորձեց հափշտակել Տաճարի գանձերը (Բ Մակ. Գ 7-34):

ԺԱ 21-24 – խոսվում է Անտիոքոս Դ Եպիփանեսի՝ հրեաներին կեղեքելու մասին: «Ուխտի առաջնորդը» Օնիա Գ՝ սպանվեց 171 թ.:

ԺԱ 26 – Անտիոքոս Եպիփանեսի արշավանքը Եգիպտոս՝ 170 թ.:

ԺԱ 28-30 – Եգիպտոսի պարտությունը կանխեցին հռոմեացիները: «Կիտացիների նավերը»¹ Հռոմեացի ծովակալ Պոպպիլիոս Լենատի նավատորմի ղեկավարը, որ Անտիոքոս Եգիպտանեսին ստիպեց լքել դելտան: «Շեղվեցին սուրբ կտակարանի ուխտից» – հրեաներ, որ հեթանոսական սովորույթներն ու հավատալիքներն ընդունեցին (հմմտ. Ա Մակ. Ա 11-15):

ԺԱ 31 – Ենթադրվում է Տաճարի պղծումը (հմմտ. Ա Մակ. Ա 54 և հաջ.):

ԺԱ 33-38 – Խոսվում է Անտիոքոս Եգիպտանեսի, հավատի նահատակների մասին, ինչպես և ապստամբների, որոնք ոգեշնչվել էին Մատթիայի օրինակով (Ա Մակ. Բ):

§ 29. Հասմոնյաններ²:

Պարականոն և ոչ կանոնական գրքեր (Բ-Ա դարեր)

1. Ապստամբության սկիզբը (Ա Մակ. Բ): 166 թվականին ժողովրդի համբերությունն սպառվեց: Դանիելի մարգարեությունը և այլոց կանխատեսումները հավատ ներշնչեցին, թե հալածողի իշխանությունը չի դիմանա: Հեթանոսների դեմ պայքարի սկիզբը դրեց ծերունի քահանա Մատթիա Հասմոնացին: Երբ թագավորական պաշտոնյան եկավ նրա քաղաքը՝ Մոդիիմ, և պահանջեց, որ բնակիչները զոհ մատուցեն աստվածներին, Մատթիան հրապարակավ հրաժարվեց կատարել այդ հավատուրաց քայլն ու համաքաղաքացիներին կոչ արեց հետևել իր օրինակին. «Եթե թագավորի երկրի բոլոր մարդիկ ենթարկվել են թագավորի հրամաններին, – ասաց նա, – ընկրկել եւ հրաժարվել են իրենց հայրերի օրենքներից ու կատարում են թագավորի հրամանները, ապա ես, իմ որդիներն ու իմ եղբայրները կհետևենք մեր հայրերի պատվիրաններին» (Ա Մակ. Բ 19-20):

Եվ երբ առաջին դավաճանը մոտեցավ բազիլին, որ զոհ մատուցի, Մատթիան մահացու հարված հասցրեց նրան և սպանեց զինվորին, որ պահում էր զոհասեղանը և տապալեց բազիլին: Սրանից հետո ամբոխով շրջապատված քահանան սկսեց շրջել քաղաքով և բարձրաձայն ազգարարել. «Յուրաքանչյուր ոք, ով կարող է օրենքի նախանձախնդիր լինել, ով ուզում է հավատարիմ մնալ օրենքներին, թող հետևի ինձ»:

Նրանց այդ գործողությունը հաջողության հնարավորություն չունեց, սակայն ապստամբներն հավատում էին, որ Աստված կօգնի իրենց: Առջևից գնում էին Մատթիայի որդիներն ու իր տոհմը, որ Հասմոնյան էր կոչվում:

¹ Հայերենում Կիտացիների բանակները – խմբ.:

² Զահանայական տոհմ Մոդիիմ բնակավայրից: Այս անունը Մակաբայեցիների գրքերում չիք: Հանդիպում է Հովսեպոս Փլավիոսի երկերում, Թալմուդում: Հրեաստանը կառավարել են Բ.ժ.ա. 140-37 թթ. – խմբ.:

Դրան ի պատասխան սկսվեցին պատժիչ գործողությունները: Երուսաղեմից եկած բանական ընդվզող խմբերից մեկին հասնելով՝ գլխովին կոտորեց, որովհետև հրեաները չէին կամենում շաբաթ օրը զենք վերցնել: Այս մասին իմանալով՝ Մատաթիան խորապես տխրեց և հայտարարեց, որ այդուհետ՝ մինչև պատերազմի ավարտը, զենք կրողների համար վերացվում է շաբաթը:

Հասմոնյաններին միացավ նաև աստվածավախ հասիդները (տես § 27), որոնց շարքերում կային մարդիկ, որոնք «խրապելացիների մեջ հյոր ու պատերապմող էին, ամեն մեկն իր օրենքի համար ինքնակամ նահատակվելու պատրաստ»¹: Հետագայում նրանք բաժանվեցին Հասմոնյաններից, սակայն ընդհանուր վտանգի պահին միասին էին գործում:



Հասմոնյան շրջանի հրեական դրամներ

Շուտով Մատաթիան, որ տկարացել էր սարեսար շրջելուց և թաքնվելուց, հիվանդացավ և զգաց մոտալուտ մահ: Նա հավաքեց որդիներին՝ Հովհաննեսին, Շմավոնին, Հովնաթանին, Եղիազարին ու Հուդային և կտակեց մարտնչել ի սեր հավատքի ազատության՝ մինչև չնահանջեն հեթանոսները: Ռազմական առաջնորդի իշխանությունը նա փոխանցեց Հուդային, որ մանկուց հայտնի էր իր ուժով, և որին Մակաբե էին անվանում (եբր. ԾՂՂԾ - ՄԱԿԱԲ՝ մուրճ):

2. Մակաբեի պատերազմները և դրանց արդյունքը: Անտիոքոսի զորավարներն սկզբում էական ուշադրություն չէին դարձնում այդ իրադարձություններին: Ապստամբները փոքրաթիվ էին և վատ էին զինված: Նրանց դեմ արշավելով՝ թշնամիներն իրենց հետ էին վերցնում նաև ստրկավաճառների, որ անմիջապես վաճառեն գերիներին: Հուդան գիտակցում էր, որ պայքարում է մի ուժի դեմ, որ իրենց գերազանցում է, սակայն նա իր մարտիկներին դիմեց հետևյալ խոսքերով. «Հաղթանակը ձեռք է բերվում ոչ թե շատ զորքով, այլ այն զորությունամբ, որ երկնքից է գալիս: Նրանք մեզ վրա են գալիս ամբարտավան գոռոզությամբ և անօրենսությամբ, որպեսզի կոտորեն մեզ և մեր կանանց ու երեխաներին գերեվարեն: Մենք մարտնչում ենք հանուն

¹ Ա Մակ. Բ 42 համարն սինողական թարգմանության մեջ բազում հրեաներ է, իսկ հուլարենում՝ հասիդեյացիների խումբ:

մեր անձերի ու հանուն մեր օրենքների, և Տերը նրանց սատակեցնելու է մեր ոտքերի առաջ: Գոտեպնդվեցե՛ք, քա՛ջ եղեք, մի՛ վախեցեք» (Ա Մալ. Գ 19-22):

Սակայն ի զարմանս ասորիների Հուդան սկսեց մեկը մյուսի ետևից պարտության մատնել նրանց զորքերը՝ մարտերից հետո վերցնելով թշնամու զենքերը: Նախ ջախջախվեց Ապոլոնիոսը Բեթորի մերձակայքում, այնուհետև Լյուսիասը, իսկ 164 թվականի դեկտեմբերին Մակաբեն շարժվեց դեպի Երուսաղեմ: Ու թեև նրան չհաջողվեց գրավել Ակրա միջնաբերդը, սակայն ամբողջ քաղաքը մաքրվեց հեթանոսներից:

Ապստամբները Տաճարը թշվառ վիճակում գտան: Եվ սգո օրերից հետո Հուդան սրբագործման տոն նշանակեց: Եվ սրբարանի անարգումից գրեթե երեք տարի անց այն վերածնվեց: Ի նշանավորումն այս իրադարձության հաստատվեց Խանուկայի¹ (եբր. חנוכה) տոնը (հմմտ. Յով. Ժ 22): Երուսաղեմով մեկ ճրագներ վառվեցին: Գանիելի մարգարեությունն իրականացավ²:

Լուրը, թե Հուդան գրավել է Երուսաղեմը, Անտիոքոսին զայրույթի հասցրեց: Նա երդվեց, որ քաղաքը «հրեական գերեզմանոցի» կվերածի, հիմքերը կջնջի, որ անգամ քաղաքի անունը կմոռացվի: Սակայն նոր արշավանքի համար նա միջոցների կարիք ուներ, ուստի որոշեց թալանել էլամական տաճարներից մեկը: Ավարի ետևից ուղարկվածները կատաղի դիմադրության հանդիպեցին. քիչ ժամանակ անց Անտիոքոսը վախճանվեց: Հույն մատենագիր Պոլիբիոսի³ պնդմամբ նրա մահը վրա է հասել խելագարության վիճակում:

Սելևկյան գահի հավակնորդների միջև երկարատև պայքար սկսվեց իշխանության համար: Սակայն նրանց տերությունն այնքան չէր թուլացել, որ հրաժարվեր զավթված տարածքներից: 163 թվականին Լյուսիաս զորավարը Պաղեստին ուղարկեց մարտական փղերով մի զորամիավորում: Մակաբեն ստիպված էր թողնել Երուսաղեմը: Քաղաքը գրավելով՝ Լյուսիասը հրաժարվեց Անտիոքոսի հրամանն իրականացնելու գաղափարից և որոշեց այլևս չհետապնդել հրեական կրոնի համար: Լյուսիասին հաջորդեց Նիկանորը, որին հաջողվեց խաղաղություն կնքել Հուդայի հետ, որ ամրացել էր բերդերից մեկում: Այս քայլով նա հասավ նրան, որ հասիլների խմբերը, որոնք ոչինչ չէին պահանջում, բացի հավատքի ազատությունից, բաժանվեցին ապստամբներից:

Բայց Նիկանորը Մակաբեին չէր կամենում ազատության մեջ թողնել: Պատերազմը վերսկսվեց: Վճռորոշ ճակատամարտը դարձյալ տեղի ունեցավ Բեթորի մոտ: Հենց սկզբում Նիկանորը սպանվեց, և նրա զինվորները փա-

¹ Հայերեն՝ Նավակատիք – խմբ.:

² Լկատի ունի Դան. Թ գլխի մարգարեությունը Տաճարի մասին – խմբ.:

³ Պոլիբիոս (208–126 թթ. Ք. ծ. ա.) – հույն գրող, մաթեմատիկոս, պատմաբան: Տե՛ս Πολιβίος, Всеобщая история, М, 2007, XXXI, 11 – խմբ.:

խուստի դիմեցին: 160 թվականի մարտին Հուդան երկրորդ անգամ գրավեց Տաճարական լեռը:

Այս հաղթանակը եղավ վերջինը Մակաբեի համար: Ապրիլին Սելևկյանների զորքերը կրկին երկիր ներխուժեցին: Մարտի ժամանակ Հուդան զոհվեց: Սակայն իր գործը նա իրագործել էր, կրոնական հետապնդումները դադարեցվեցին: Սելևկյանները գնալով կորցնում էին վերահսկողությունը Պաղեստինի վրա:

152 թվականին Հուդայի եղբայր Հովնաթանը քահանայապետի աստիճան ընդունեց և դարձավ Հուդայի փաստացի կառավարիչը: Հովնաթանի մահվանից տասը տարի անց նրա եղբայր Սիմոնը ժողովրդական համաժողով հրավիրեց, ուր, չնայած այն բանին, որ Հասմոնյաններն Ահարոնի ցեղից չէին, նրանց ցեղին շնորհվեց թագավորական և քահանայապետական իշխանություն:

Հասմոնյան հարստությունը մնաց մինչև հռոմեացիների գալուստը (Ք. ծ. ա. 63 թվական): Շատ հանգամանքներում նրանք հիասթափեցրին ժողովրդին: Այս միապետերը կառավարում էին դաժան և անարդար: Տակիտոսի վկայությամբ նրանք «արտաքսում էին քաղաքացիներին, քաղաքներ ավերում, եղբայրների, կանանց ու ծնողների սպանություն և այլ՝ թագավորների համար սովորական հանցագործություններ»¹: Բացի այդ բոլորը Հասմոնյանների մեջ տեսնում էին կրոնական նախանձախնդրության պակաս և հակում դեպի հեթանոսական բարքեր:

3. Կրոնական խմբակցությունների առաջացումը: Բողոքն արտահայտողները հասիդյան խմբերը եղան, որոնք անցյալում Հասմոնյանների հետ միասին էին պայքարում: Նրանք սկսեցին բացեիբաց պնդել, որ Հասմոնյան հարստությունը ո՛չ թագի, ո՛չ քահանայապետական աստիճանի իրավունք չունի (թագավոր կարող են լինել միայն Դավթի սերնդից, իսկ քահանայապետ՝ Ահարոնի որդիներից):

Հասիդները ձգտում էին պահել նախկին բարեպաշտությունը՝ ի հակադրություն պալատի աշխարհիկ ձգտումների: Նրանք կուռ համայնքներ ստեղծեցին, որ տարանջատված էին ամբոխից, որ «Օրենքը չգիտի»²: Այս իսկ պատճառով ժողովուրդն սկսեց նրանց անվանել փարիսեցի (եբր. פְּרִישִׁיִּים - Փերիսիտիս՝ բաժանվածներ): Փարիսեցիները հավատացած էին, որ Գրքից բացի կա նաև բանավոր Թորա՝ Ավանդություն, որ Մովսեսի ժամանակներից է գալիս: Մեռելների հարության և անմարմին ուժերի՝ պատմության վրա ունեցած ազդեցության մասին նոր ավանդությունը կենդանի արձագանք գտավ փարիսեցիական միջավայրում:

¹ St' u Korneliiy PUBLIY Taцит, История, Наука, 1993, V, 8 – խմբ.:

² Զովհ. Է 49 – խմբ.:

Փարիսեցիները քաղաքականությունից խուսափում էին: Միայն Հասմոնյան՝ Ալեքսանդր Յաննայի (103-76) օրոք նրանք փորձեցին գլխավորել ապստամբությունը, սակայն նրանց հետ դաժան հաշվեհարդար տեսան. Յաննան հարյուրավոր հրահրողների խաչը հանեց: Յաննայի մահվանից հետո փարիսեցիները պետության մեջ մեծ ազդեցություն ունեցան: Նրանք հայտնի էին իբրև Օրենքի գիտականեր և դրա հավաստի մեկնաբաններ: Նրանց խիստ, ճգնակյաց ապրելակերպը հարգանք էր ներշնչում, սակայն փարիսեցիական բարեպաշտության մեջ, ինչպես նաև մնացած բոլոր բաների մեջ արդեն առկա էին ձևապաշտական գծերը, որը պատճառ դարձավ «փարիսեցի» անունը օգտագործել հասարակ իմաստով:

Ի տարբերություն փարիսեցիների՝ տոհմիկ ընտանիքների, հոգևոր բարձր դասը, ազնվականները, զորապետերն ու դատավորները Հասմոնյանների կողմից էին: Անգամ բարձրաստիճան հոգևորականների դասը չէին վիճարկում նրանց իրավունքները՝ մտածելով միայն իրենց արտոնությունների մասին:

Կրոնում «նոր հովերի» վերաբերյալ ազնվականության կեցվածքը կտրականապես ժխտողական էր: Նրանք հին իմաստության կողմնակից էին՝ ժողովողի ոճով: Հարության և հրեշտակների վերաբերյալ հավատքը նրանք համարում էին ավելորդ նորամուծություն: Նրանց համար միայն Թորան էր համարվում Աստծու Խոսք: Նրանք իրենց հայտարարեցին արդարության իրական ջատագովներ (եբր. օրօֆօ - ՅԵԴԱԿԱ): Այստեղից էլ նրանց անվանումը՝ սադուկեցիներ: Պալատում իրենց դիրքն ամրապնդելու պայքարում նրանք վերածեցին քաղաքական գործուն խմբավորման: Ծերակույտը կամ Սինեդրիոնը հիմնականում նրանց անդամներից էր կազմված: Չնչին ընդհատումներով սադուկեցիներն իրենց դիրքերը պահեցին ընդհուպ մինչև Հրեական պետության կործանումը:

Կրոնական երրորդ կուսակցությունը կազմեցին եսսենականների՝ կիսավանական ուխտի անդամները (տե՛ս հտ. 2, § 30):

4. Հուդիթի և Մակաբայեցիների Գ գրքերը: Հուդիթի երկրորդականոն գիրքն ըստ երևույթին գրվել է եբրայերեն լեզվով, սակայն մեզ է հասել միայն հունարեն թարգմանությունը: Իբրև ուսանելի գիրք նրան հղում են կատարել Եկեղեցու բազմաթիվ Հայրեր՝ սկսած Կղեմես Հռոմեացուց (Ա Թուղթ Կորնթացիներին, 55):

Թեև առաջին հայացքից Հուդիթը պատմական գիրք է, սակայն անցյալի իրադարձություններն այնտեղ ներկայացված են խիստ պայմանականորեն: Օրինակ Նաբուգոդոնոսորն այնտեղ հիշվում է իբրև Նինվեի թագավոր (Ա 1), իսկ Հողովիեռնեսը՝ նրա զորահրամանատար: Իրականում Նաբուգոդոնոսորը կառավարել է Բաբելոնում (Ք. ծ. ա. 2 դար), իսկ Հողովիեռնեսը պարսից

Արտաշես Գ-ի գորահրամանատարն էր: Հավանաբար գրքի հեղինակը, հիմք ընդունելով մի որևէ ավանդույթուն, դրան ավելացրել է սեփական մանրամասնությունները:

Աստվածաշնչագիտությունն արդեն վաղուց Հուդիթի Գիրքը վերագրել է Մակաբայեցիների ապստամբության շրջանին (տե՛ս «Толковая Библия», тит. III., էջ 363): Այն տոգորված է ազատության պայքարի ու հավատքի ոգով և վստահության մեջ, որ Ինքն Աստված է գործում մարդկանց ձեռքով ջախջախելով թշնամուն:

Հողովեռնեսը ներկայացված է իբրև հեթանոսական հպարտությամբ լեցուն անձն: «Նաբուքոդոնոսորից բացի էլ ի՞նչ Աստված կա», - բացականչում է նա (Չ 2): Հողովեռնեսն ավերում է Հուդան և մոտենում Բետիղուա քաղաքին, որի բնակիչները միայն Աստծուն կարող էին ապավինել: Եվ այդ ժամանակ բարեպաշտ այրի Հուդիթը սողոսկում է թշնամու բանակատեղի, իր գեղեցկությամբ գայթակղում է Հողովեռնեսին և սպանում նրան, որպեսզի փրկի հարազատ քաղաքը:

Հուդիթ անունը թարգմանվում է իբրև հրեուհի: Նա մարմնավորում է Աստծու ժողովրդին, որ դիմադրում է թշնամուն: Նրա բարեպաշտությունը բազմիցս է ընդգծվում գրքում (Ը 6, ԺԲ 2): Հողովեռնեսի ճամբարը գնալով՝ նա աղոթում է, արտահայտելով այն նույն մտքերը, որ ապստամբության սկզբում ոգեշնչում էին Մակաբեին. «Որովհետև քո զորությունը ոչ թե բազմության մեջ է, քո արդարությունը ոչ թե նրանցն է, ովքեր հզոր են, այլ դու խոնարհների Տեր Աստվածն ես, կարոտյալների օգնականը, տկարների ապավենը, կարոտյալների խնամակալը, հուսահատների փրկիչը» (Թ 16):

Որոշ մեկնիչներ Հուդիթը դիտարկում են իբրև վախճանաբանական գիրք, ուր Նաբուքոդոնոսորի և Իսրայելի պայքարով նկարագրվում է Տիրոջ պայքարը խավարի ուժերի դեմ:

Մակաբայեցիների Գ Գիրքը բովանդակությամբ նման է Եսթերի և Հուդիթի գրքերին: Այն պատմում է Աստծու ժողովրդի փրկության մասին, որին կամենում էր ոչնչացնել Եգիպտոսի թագավոր Պտղոմեոս Գ: Գիրքը գրվել է Ք. ծ. ա. Ա դարում: Կաթոլիկների մոտ այն պարականոն է համարվում:

5. Մակաբայեցիների շրջանի պարականոն գրքերը չեն ընդգրկվել ո՛չ հրեական, ո՛չ հունական Սուրբ Գրքում: Մերժված լինելով և՛ հինկտակարանյան, և՛ նորկտակարանյան Եկեղեցու կողմից՝ դրանք դարձան քննադատելի և թաքնված գրականություն: Այստեղից է ծագում «ապոկրիֆ» անվանումը, որ նշանակում է գաղտնարանում թաքցված մի բան:

Ռուս աստվածաշնչագետներից պարականոն գրականության ուսումնասիրության մեջ մեծ ավանդ ունի Կազանի Հոգևոր Ակադեմիայի պրոֆ. Ա Սմիրնով ավագերեցը: ԺԹ դարավերջից մինչև Ի դարասկիզբ նա հրատարակեց

հինկտակարանյան կարևորագույն պարականոնների թարգմանությունները ընդարձակ ծանոթագրություններով:

Այս գրքերի մերժվածության պատճառն այն էր, որ մի շարք կարևոր հարցերում դրանք նախանջում էին աստվածաշնչական վաղնջական ավանդությունից:

Հնգամատյանից սկսած Աստծու Խոսքը միշտ ասել է մարդու համար ճանապարհ ընտրելու և պատասխանատվություն կրելու մասին: Բացարձակ նախասահմանությունը Ս. Գրքին խորթ է: Մինչդեռ պարականոն գրքերում այն գաղափարն է արտահայտվում, որ աշխարհի բոլոր իրադարձությունները նախապես են որոշված: Սա ծնեց ճակատագրապաշտությունը և հավատը, որ գաղտնի այդ «գիտելիքն» իմաստուններին հնարավորություն է տալիս պատմության թերթերը ամբողջությամբ ընթերցելու (տես այս հատվածի Հավելվածը):

Առավել հին պարականոն է համարվում Ենոքի Ա. Գիրքը կամ «Եթովպական Ենոքը», որն այդպես կոչվեց, որովհետև մեզ է հասել եթովպերեն լեզվով: Այս գրքում ընդգրկված են մի քանի ժողովածու, որ գրվել են Ք. ծ. ա. Բ-Ա դարերում:

Ենոքի Գիրքը յուրովի է զարգացնում մեղքի անկման հասկացողությունը, ելակետային ընդունելով ոչ թե Ադամի պատմությունը, այլ Մենդոց Գրքի 2 գլուխը: «Աստծու որդիները»՝ հրեշտակները, տրվելով զգայական գայթակղության, - ինչպես պնդում է պարականոնը, - Արարչի կամքին հակառակ աշխարհ եկան և մարդկանց կախարհություն ու մոգություն սովորեցրեցին: Այս արարքի համար նրանք անդունդում կապանքների մեջ դրվեցին (հմմտ. Հուդա Ա 14-15):

Ենոքի գրքի հեղինակը չի հավատում անմաքուրների զղջմանն ու ապաշխարությունը, ինչը հնարավոր է համարվում Դանիելի գրքում: Նա խորհրդանշորեն պատմությունը ներկայացնում է տասը յոթնյակների բաժանմամբ, որոնց ընթացքում աշխարհում գերակշռելու է չարը:

Սակայն գրքում կան նաև հատվածներ, որ այն մերձեցնում են մարգարեական ամենաբարձր խոսքերին և անգամ Ավետարանին.

*Վայ ձեզ, որ մերձավորին չարիքով եք պատասխանում,
որովհետև ըստ ձեր գործերի կլինի ձեզ ...*

(Գիրք Ենոքի, գլ. 19, 95)

*Մի երկնչեք, տառապյալներ,
որովհետև ձեզ համար բժշկություն կլինի...*

(Գիրք Ենոքի, գլ. 19, 96)

Առականների նմանություններ գիրքը նկարագրում է Հին Կտակարանի պատմությունը մինչև Մակաբե: Այն խոսում է Տաճարի կործանման մասին, որի տեղը հայտնվելու է նորը՝ գեղեցիկ և հիասքանչ: Այդ ժամանակ աշխարհ կուղարկվի Մեսիան, նույն Ինքը Մարդու Որդին, Հնարյալը, Արդարը, կնոջ Որդին: Նա Դավթի սովորական ժառանգ չէ կամ հասարակ մարդկային էակ:

«Երկնքի աստղերի ստեղծվելուց առաջ,
 Նրա անունը ասվեց հոգիների Տիրոջ առաջ ...
 Ինքն ընտրուեց և թողարկվեց Նրա առաջ,
 նույնիսկ աշխարհի ստեղծումից առաջ,
 և Ինքը կլինի Նրա առաջև հավիտյան»
 (Գիրք Ենոքի, գլ. 8, 48)

Պարականոնը մեսիական դարաշրջանը դիտարկում է իբրև ժամանակավոր, որին հաջորդելու է պայքարը խավարի դեմ և վերջնական Աստվածահայտնությունը՝ Աստծու Դատաստանը: Այնժամ արդարները կզգեստավորվեն «կյանքի հավիտենական հանդերձներով»¹, կնմանվեն հրեշտակներին և անբաժան կլինեն Մարդու Որդուց: Նրանց համար հասանելի կլինի խորհրդավոր Կենաց Ծառը:

Այսպիսով իրական մարգարեությունները պարականոնում մերթ ընդ մերթ փոխարինվում են հասիդների վախճանաբանական երևակայության պատկերացումներով: Աստծու Թագավորությունը մի կողմից նկարագրվում է իբրև աշխարհի վերափոխում, իսկ մյուս կողմից՝ Խիլիալմի եզրերով: Ենոքը կանխատեսում է, որ աշխարհը կփոխվի այգու, և երկրային հեքիաթային առատություն կլինի:

Ենոքի Բ Գիրքը պահպանվել է միայն սլավոնական թարգմանությամբ: Հետ բովանդակության այն նման է Ենոքի Ա Գրքին:

Յոթելենից գիրքը, նույն հարյուրամյակներում գրված, Ծննդոցի միդրաշներ է պարունակում: Գրքի անվանումը կապվում է ժամանակի հաշվարկի հետ. հեղինակը պատմությունը բաժանում է հոբելենական հատվածների՝ 49-ական տարի (յոթ յոթնյակ): Այստեղ ուսուցողական մտորումներ են նահապետների կյանքի մասին:

Դրան մերձ է Տասներկու նահապետների կտակները պարականոնը: Այս գրքի տարբեր հատվածներ տարբեր ժամանակներում են գրվել, իսկ որոշ մասեր մշակել են քրիստոնյա գրիչները: Գիրքը միդրաշ է, որ գրվել է Հակոբի կտակի նմանությամբ (Ծննդ. ԽԹ): Այն հետաքրքրական է նրանով, որ գրքում ուսմունք կա երկու Մեսիանների մասին՝ Դավթի որդու և Ղևիի որ-

¹ Գիրք Ենոքի, գլ. 10, 62 – խմբ.:

դու¹: ԺՅ նահապետների կտակի որոշ մարգարեություններ արտահայտում են հինկտակարանյան Եկեղեցու ակնկալիքները Քրիստոս Փրկչի գալուստից առաջ.

Եվ այնժամ Տերը նոր Բահանա կրերի, որին Տիրոջ բոլոր խոսքերը հայտնի կլինեն, և նա Ճշմարիտ դատաստան կկատարի երկրի վրա բազում օրեր: Եվ երկնքում նրա աստղը կծագի որպես Թագավորի, լուսավորելով գիտության լույսով, ինչպես արգակը միջօրեին, և կմեծանա տիեզերքում: Նա կլուսավորի, ինչպես արեգակը օրը, և կվերացնի ամեն խավար երկնքի տակ, և խաղաղություն կլինի երկրում: Երկինքը կցնծա այդ օրերին, և երկիրը կինդա, և ամպերը ուրախ կլինեն, և Տիրոջ գիտությունը կհեղեղի երկրի վրա ինչպես ծովի ջուրը, և Տիրոջ երեսի փառքի հրեշտակները ուրախ կլինեն Նրա համար:

(Ղևի, 18)

Մեսիական մարգարեություններ գտնում ենք նաև Սողոմոնի Սաղմոսներ պարականոն գրքում, որ գրվել է մոտավորապես Ք. ծ. ա. 63 թվականին՝ հռոմեացիների գալու ժամանակ:

Երանի նրանց, որ կծնվեն այն օրերին,
Որովհետև կտեսնեն Տիրոջ բարիքները,
Որոնք Նա կստեղծի գալիք սերնդի համար:
Նրանք կլինեն Տիրոջ Մեսիայի գավազանի ներքո,
Իրենց Աստծու երկրում,
Հոգու, արդարության և զորության իմաստնության ներքո:

(18)

Պարականոն գրքերը պակաս կարևոր չեն իրենց նշանակությունը: Դրանք մեզ ուղեկցում են դեպի հինկտակարանյան Եկեղեցու այն շրջանը, որն ընդունված է «միջկտակարանյան» անվանել: Քրիստոսի կյանքի օրերին ժողովուրդն իր մեսիական պատկերացումները քաղում էր ոչ միայն Սուրբ Գրքից, այլ նաև պարականոն գրքերից: Հինկտակարանյան պարականոն գրքերը օգտագործվել են նաև նախնական Եկեղեցում:

Հարցեր կրկնության համար

1. Ինչպես սկիզբ առավ ապստամբությունն ընդդեմ Անտիոքոսի, և ո՞վ էր դրա ոգեշնչողը:
2. Ինչպես էին զարգանում ազատագրական պայքարի իրադարձությունները:
3. Ինչպե՞ս կոչվեց Տաճարի սրբազորման տոնը:

¹ Մեր պարականոնում գտնում ենք նաև հետևյալ տարբերակը. «Ղևեաւ և Յուդաիւ փրկեսցիք, զի յազգէ Նորա ծնցի Տէր Աստուած». տե՛ս «Թանգարան հին և նոր նախնեանց», Ա., Անկանոն գիրք Հին Կտակարանաց, Վենետիկ, 1896, էջ 44. հմմտ. անդ էջ 50. – Ծան. թարգմ.:

4. Ինչպե՞ս ավարտվեց ապստամբությունը և ի՞նչ հետևանքների հանգեցրեց:
5. Ինչո՞վ տարբերվեց Հասմոնյան հարստության կառավարումը:
6. Ինչպե՞ս առաջացավ փարիսեցիների շարժումը: Ի՞նչ է նշանակում փարիսեցի:
7. Ի՞նչ հայացքներ ունեին փարիսեցիները:
8. Ովքե՞ր էին սադուկեցիները:
9. Ի՞նչ է Հուդիթի Գրքի բովանդակությունն ու իմաստը: Ե՞րբ է այն գրվել:
10. Ի՞նչ է նշանակում ապոկրիֆ գիրք:
11. Ինչո՞ւ դրանք չմտան կանոնի մեջ:
12. Ենոքի գրքում ինչպե՞ս է նկարագրված չարի առաջացումը:
13. Ինչո՞վ է այն մոտ Մարգարեական գրքերին:
14. Ո՞րն է Ենոքի Գրքի մեսիական ուսմունքը:
15. Որտեղից ծագել Զոբելենից Գրքի անվանումը:
16. Մեսիական ի՞նչ մարգարեություններ կան ԺԲ նահապետների Կտակների և Սողոմոնի Սաղմունների գրքերում:
17. Ի՞նչ նշանակություն ունեն ապոկրիֆ գրքերն աստվածաշնչագիտության համար:

§ 29-ի Հավելված Ենոքի Գրքից

ա. Հետմահու հատուցում: *Եվ երբ բացվեն արդարների խորհուրդները, այնժամ մեղավորները կզատվեն և ամբարիշտները կմերժվեն արդարների և ընտրյալների կողմից: Հետայնու այլևս վեհ և զորավոր չեն լինի նրանք, որ տիրում են հողերին, և ի վիճակի չեն լինի տեսնելու սրբերի երեսները, քանի որ հողիների Տիրոջ լույսը շողալու է սրբերի, արդարների և ընտրյալների դեմքերին: Ես տեսնում էի... արդարների բնակարաններն ու սրբերի օթևանները: Այստեղ աչքերն իմ տեսան նրանց բնակարանները՝ հրեշտակների և օթևանները՝ սրբերի մոտ, տեսան, թե ինչպես են նրանք աղոթում և խնդրում, պաղատում մարդկանց որդիների համար: Եվ ճշմարտությունը հորդում էր նրանց առջև՝ որպես ջուր, իսկ գթասրտությունը՝ որպես ցող երկրի երեսին (ԼԸ 3-4, ԼԹ 4-5):*

բ. Նախասահմանության հանդեպ հավատ: *Ես դիտել եմ ամենը երկնային տախտակների վրա, ընթերցել եմ ամեն ինչ, որ գրված էր այնտեղ, ինձ համար նկատեցի ամեն բան, և կարդացի գիրքը և ամեն ինչ կար մեջը, բոլոր գործերը մարդկանց և մարմնից ծնվածների, որ լինելու են երկրի վրա մինչև ամենահեռավոր սերունդները (ՁԱ 2):*

Смирнов А., «Книга Еноха»,

Казань 1888, Էջ 324, 414

ԵՐԿՈՒ ՈՒԽՏԵՐԻ ՍԱՀՄԱՆԻՆ

(Ք. ծ. ա. Բ-Ա դարեր)

§ 30. Մեռյալ ծովի ձեռագրերը: Եսսենականություն:

1. Գյուտեր անապատում: *Բեդուին ցեղերից մեկի մի հովիվ 1947 թ. Մեռյալ ծովի ափի ժայռերին պատահմամբ մի գաղտնարան գտավ: Քարանձավում պահված էին հին գրերով կաշվե գալարներ: Այդպես սկիզբ դրվեց հայտնագործությունների մի ամբողջ շարքի: Դրանք վերաբերում են երկու Ուխտերի միջև ընկած դարաշրջանի կրոնական կյանքին (տե՛ս ЖМП, 1957, N 12):*

Անցած տարիներին հայտնաբերվեցին ևս հարյուրավոր ամբողջական կամ պատաստիկներ պահպանված ձեռագրեր, որ հին ժամանակների համար վիթխարի մատենադարան էր: Պեղումներ կատարվեցին Կումրանի, Այն-Ֆեշխի և այլ շրջանների ամրացված բնակավայրերի ավերակներում ու տարածքներում, ուր ժամանակին ապրել են այդ մատենադարանի ստեղծողներն ու տերերը: Այնտեղ կային Հին Ուխտի գրքերը, դրանց մեկնությունները, պարականոն գրքեր և բնակավայրերի կյանքն արտացոլող վավերագրեր:

Ձեռագրերի և հուշարձանների ուսումնասիրությունը հանգեցրեց գիտություն հատուկ ուղղության՝ կումրանագիտության ստեղծմանը: Գիտնականներն իրավամբ հույս էին տածում, որ անապատի հայտնագործությունները կհամալրեն մեր գիտելիքները՝ Քրիստոսի խոսքն առաջին անգամ ունկնդրած հասարակության մասին:

Բնագրերի թվագրումն աշխույժ բանավեճ առաջացրեց: Այժմ բոլորն ընդունել են, որ գալարները պատկանել են մոտավորապես Ք. ծ. ա. Բ դարի երկրորդ կեսից մինչև Ք. ծ. հ. Ա դարի 60-ական թթ. Մեռյալ ծովի ափին ապրած մարդկանց:

Առանձնապես արժեքավոր էին Աստվածաշնչի տեքստերը, որ մինչ այդ եղածներից հին էին (տե՛ս hun. 1, § 8):

2. Կումրանը, Եսսենացիները և Նորկտակարանյան Եկեղեցին: *Կումրանագետների ճնշող մեծամասնությունն այն կարծիքին է, որ Մեռյալ*

ծովի ափին բնակվող անապատականները պատկանել են հինկտակարանյան կրոնի Եսսենական կամ էսսենական ճյուղին:

Այդ համայնքի մասին անտիկ և հինքրիստոնեական մատենագիրները հաճախ են հիշատակել: Օրինակ Փիլոն Ալեքսանդրացին պատմել է էսսենականների՝ Պաղեստինում և Եգիպտոսում եղած մենաստանների և նրանց ճգնակյաց վարքի մասին: Հովսեպոս Փլավիոսը գովաբանել է նրանց համախմբվածությունը, եղբայրական սեղանները և հարստության հանդեպ արհամարհանքը: Նրանց մասին ավելի քիչ խոսել են Կղեմես Ալեքսանդրացին, Սուրբ Հիպոլիտոս Հռոմեացին, Եվսեբիոս Կեսարացին, Հերոնիմոս Երանելին, Սուրբ Եպիփան Կիպրացին, Երան. Նեղոս Սիրնայեցին (+450) և ուրիշներ: Նրանց բոլոր տեղեկությունները հիմնականում համընկնում են Մեոյալ ծովի ձեռագրերից բխող պատկերացումներին:

Հենց սկզբից կումրանագետներն ուշադրություն են դարձրել վաղ Եկեղեցու և Եսսեացիների կարգ ու կանոնների նմանությանը: Համայնքներն ունեին «վերահսկիչի» պաշտոն, որ համապատասխանում է հունարեն «եպիսկոպոս» բառին: Կումրանականների սեղանները առաջին քրիստոնյաների ազապենները՝ սիրո ճաշերն էին հիշեցնում: Կումրանում աղոթում էին դառնալով ոչ թե դեպի Երուսաղեմ, այլ արևելք, ինչպես հետագայում արեցին քրիստոնյաները: Աղոթելու պահերը երեքն էին՝ ինչպես սահմանվեց նաև Եկեղեցական կյանքում: Երուսաղեմի եկեղեցու գույքի ընդհանուր լինելը (Գործք Բ 44-45) նույնպես գիտնականներին հանգեցրել է Կումրանի հետ նմանության փաստին: Եսսենականները ենթարկվում էին տասներկու քահանաներից բաղկացած հանձնախմբին. առաքելական ժամանակների Եկեղեցին գլխավորում էր Տասներկուսը: Կումրանի բառապաշարի մեջ հանդիպում են շատ արտահայտություններ, որ հատուկ են Նորկտակարանյան գրքերին («Հոգով աղքատներ», «Լույսի որդիներ» և այլն): Եսսենական անապատականների հավատի հանգանակը ընդհանուր դրույթներ ունի վաղ քրիստոնեական գրականության հետ (Իիդախե, Բառնաբասի թուղթ, Հերմասի «Հովիվ»): Եվ, վերջապես, ուշագրավ է, որ Ուխտի անդամները երբեմն իրենց անվանել են «Նոր Ուխտի համայնք»: Նրանք պնդել են, թե իրենց վրա կատարվում է Երեմիայի մարգարեությունն Ուխտի մասին, որ Աստված Ինքն է դրոշմելու մարդկանց սրտերին¹:

Կումրանի առաջին հետազոտողները (Ջոն Ալլեգրո և ուրիշներ) նշված գուգահեռների հիմամբ վարկած առաջադրեցին, ըստ որի իբր բուն քրիստոնեությունը ծնվել է էսսենական միջավայրում: Սակայն հետագա հայտնագործություններն ու ձեռագրերի առավել հանգամանալի վերլուծությունը

¹ Տե՛ս Երեմ. ԼԱ 31 – խմբ.:

նը ցույց տվեցին, որ եսսենականներն անհամեմատ ավելի հեռու են եղել Ավետարանից, քան առաջին հայացքից էր նկատելի: Այժմ վստահ կարելի է ասել, որ կոմրանյան գաղափարախոսությունը շատ բանով տրամագծորեն հակառակ էր քրիստոնեությունը:

Ուստի ինչպե՞ս կարելի է բացատրել եսսենական սովորույթների և ըմբռնումների նմանությունը նորկտակարանյանին:

Այս հարցին պատասխանելու համար պետք է ծանոթանալ համայնքի պատմությանն ու նրա գաղափարներին:

3. Բարեպաշտ ուսուցիչը: Կոմրանյան տեքստերի մեջ միակ ժամանակագրական ցուցումը պարունակում է այսպես կոչված Դամասկոսյան վավերագիրը: Այնտեղ ասված է, որ «Ընտրյալների» միությունն ստեղծվել է Նաբուզոդոնոսորի ձեռքով Երուսաղեմն ավերելուց 390 տարի անց, այսինքն՝ մոտավորապես 190 թ.: Բայց հենց այդ ժամանակ էլ ձևավորվեց հասիդյանների շարժումը: Հասիդները՝ բարեպաշտները, հունական ազդեցության հակառակորդներ էին (տե՛ս հտ. 2, § 27): Հավանաբար «հասիդ» (արամեերեն՝ հասյեա) բառից է ծագում «Եսսեն» բառը¹:

Այնուհետև, Դամասկոսյան վավերագիրը հայտնում է, թե «ընտրյալները» քսան տարի «կույրի պես շոշափում էին ճանապարհը, խարխափելով խավարում, մինչև Աստված նրանց Արդար Ուսուցիչ հանեց» (Ա 10): Հետևաբար նա ապրել է Անտիոքոս Եպիփանեսի դարաշրջանում:

Եսսենականների այս առաջնորդի անունն անհայտ է մնացել: Հին պատմիչները նրան չեն հիշատակում: Կոմրանի գալարներում նա հանդես է գալիս լոկ իբրև Քահանա, Ընտրյալ, Օրենսգետ, Միակ Ուսուցիչ, Արդար Ուսուցիչ: Իր առաջնորդի տիտղոսը համայնքը փոխառել է Հովել մարգարեի Գրքից (Տե՛ս հտ. 2, § 26):

Հալածանքների ժամանակ հավատքի շատ նախանձախնդիրներ փախել են սարերն ու անապատները, ուր ապրել են «գալանների նման, խոտաբույսեր ուտելով, որպեսպի հեռու մնան պղծություններից» (Բ Մակ. Ե 27): Ուսուցիչն ինքը, ինչպես կարելի է ենթադրել ակնարկներից, հեռացավ Ասորիք՝ Դամասկոսի երկիր:

Փախստականների տրամագրությունը վախճանաբանական էր: Ուսուցիչն իր գլխավոր նպատակն էր համարում Մեսիայի շուտով գալուստն ազդարարելը: Նա հավատում էր, որ Աստված «Իրեն հայտնել է իր ծառաների՝ մարգարեների խոսքերի բոլոր գաղտնիքները», և Աստվածաշնչի մեջ փնտրում էր Մեսիական դարաշրջանի մոտալուտ գալուստը ցույց տվող նշաններ:

¹ Տե՛ս նաև Բարգեև Վրդ. Թօփճեան, Եսսենացիք (ուսումնասիրություն), Մոսկորեայ, 1987, էջ 25 – խմբ.:

Կուճրանյան Օրհներգերում, որ սովորաբար վերագրվում են Ուսուցչին, նա ևս հանդես է գալիս իբրև մարգարե:

«Ես Ուսուցիչ եմ իմաստության, Աստված իմ,
 Ես ճանաչեցի Քեզ հոգով, որ Դու դրեցիր իմ մեջ...
 Եվ դու ինձնից կերտեցիր որպես հայր ողորմության որդիների,
 Ասես սնուցող նախասահմանված մարդկանց համար»:

(XII)

Համայնք մուտք գործող մարդկանցից պահանջվում էր վստահություն Ուսուցչի մարգարեական շնորհի հանդեպ: Ընդամին նա իրեն չէր հայտարարում ո՛չ հրաշագործ և ո՛չ Մեսիա: Ընդհակառակն, նրան բնորոշ էր ապաշխարուության զգացումը և իր տկարության գիտակցությունը:

Իսկ ես ստեղծված եմ մոխրից,
 Ի՞նչ եմ ես:
 Կամ՝ խառնած ջրով...
 Դու Քո ողորմությամբ կանչեցիր ինձ
 Եվ ինձ ներում շնորհեցիր՝ հանուն Քո շնորհի լրիվության:

(XII)

Մակաբայեցիների գրքերն Ուսուցչի մասին լուռ են, և դա հասկանալի է: Դրանք գրված են ի փառս նահատակների և հեթանոսական բռնապետության դեմ պայքարողների: Իսկ հասիդները, թեպետ նախապես սատարում էին Հուդային, բայց հետո հեռացան նրանից: Հասիդական զույգ հուսանքները՝ փարիսեցիներն ու էսսենականները դարձան Հասմոնացիների նոր հարստության ընդդիմադիր: Եսսենական գրողներն իրենց գրքերում զայրույթով են խոսում քահանայապետ-թագավորների բարոյական անկման մասին, նրանց մեղադրելով բռնության, աղքատների կողոպտման և ամեն տեսակ արատների մեջ:

Հասկանալի է, այդ հարձակումները պալատում չէին կարող երկար ժամանակ անպատիժ թողնել: 150 և 140 թվականների միջև անկախ պետության ստեղծման շրջանում, Ուսուցիչը ենթարկվել է մի շարք ճնշումների: «Սրբապիղծ քահանայի» (այսինքն՝ Հասմոնացիներից մեկի) հրամանով նա «մերկացվել» է ու տրվել դատի: Իր կողմնակիցների հետ նա աքսորվել է, բայց այնտեղ ևս նրան հանգիստ չեն թողել: Նրա ետևից մարդասպաններ են ուղարկել, երբ նրա համայնքը տոնելիս է եղել Քավության Օրը¹: Ընդ որում՝ թագավորի ծառաները չէին համարում, թե խախտում էին տոնի սրբությունը, քանի որ եսսենականներն ունեին իրենց եկեղեցական օրացույցը՝ տարբեր ընդհանուրից:

¹ Տե՛ս Ղևտ. ԺԶ, Թվեր ԻԹ 7-11 - խմբ.:

Ուսուցիչը հակառակորդներ ուներ նաև յուրայինների մեջ, մասնավորաբար՝ ոմն «ստի մարդ», որ պառակտեց համայնքը: Նա առաջնության էր ձգտում, և եսսենականների մի մասը հարեց նրան:

Մոտավորապես 140 թ. Ուսուցիչը որոշեց թաքնվել Մեռյալ ծովի մոտ անբնակ մի վայրում, որտեղ կենտրոն հիմնեց «Նոր Ուխտի համայնքի» համար: Այդպես ստեղծվեցին Կումրանի ամրացված բնակավայրերը:

4. Կումրանյան համայնքի կանոնադրությունը: Եսսենականության և Ավետարանի միջև հակասությունն առավել ակնհայտ է դառնում, երբ անդրադառնում ենք սկզբունքներին, որոնցով Ուսուցիչը կազմակերպում էր իր ուխտը:

Կումրանի առաջին քարանձավում գտնված կանոնադրության ամբողջ ողջն ներծծված է արդարության օրինականության ըմբռնումով: Արդարը նա է, ով տառացիորեն և անվերապահ պահում է հինկտակարանյան ծեսերն ու համայնքի կանոնները: Նա պարտավոր է խզել կապը «խավարի որդիներին»՝ հետ, այսինքն բոլոր նրանց, ովքեր եսսենական չեն: Պետք է սիրել յուրայիններին՝ «լուստի որդիներին», իսկ «խավարի որդիներին»՝ ատել (Կանոն. Ա 1-10):

Պատրաստվելով Աստծու Արքայության մոտ լինելուն՝ կումրանյանները փորձում էին զարգացնել բարոյական, մարմնական և ծիսական մաքրությունը: Նրանք սպիտակ համազգեստ էին կրում և մշտապես կատարում սրբազան լվացում:

Նորադարձները համայնք էին ընդունվում միայն երկար փորձություններից հետո: Սկզբնապես միայն ամուսնությունից հրաժարված տղամարդկանց էին ընդունում, իսկ մարմնական արատ ունեցողներն «ընտրյալների» համայնքի լիարժեք անդամ չէին համարվում:

Ճամբարում կարգը կիսավանական-կիսաառաքմական էր: Ունեցվածքն ընդհանուր էր: Մարդիկ ղեկավարությանը տալիս էին «իրենց գիտելիքը, իրենց աշխատանքը և իրենց ունեցվածքը»: Գերագույն իշխանությունը պատկանում էր Ահարոնի ցեղի քահանաներին: Ամենուր պահպանվում էր նվիրապետական աստիճանակարգը. հանդիսավոր հավաքների ժամանակ հոգևորականությունն գնում էր առջևից, դրանից հետո արդեն «Իսրայելը»՝ այսինքն շարքային եղբայրները:

Գաղութի օրն սկսվում էր աղոթքով, որից հետո բոլորը գնում էին աշխատելու: Կարգ ու կանոնին ենթարկվում էին անվերապահորեն: Կարգազանցներին սպասվում էին տարատեսակ պատիժներ ընդհուպ մինչև համայնքից վտարումը:

¹ Տե՛ս Բարգեև Վրդ. Թօփճեան, ԼՂՎ. աշխ., էջ 37 – խմբ.:

Անգամ այս սակավ օրինակները բավարար են տեսնելու համար Քրիստոսի առաքյալների գործունեության և կուժրանյանների՝ «արդարության կղզի» ստեղծելու փորձերի միջև տարբերությունը:

Մեծ նշանակություն էր տրվում համատեղ սեղաններին և Աստծու հոսքի ընթերցմանը: Սեղաններին գինին արգելված էր, խմում էին խաղողի հյութ: Աստվածաշունչն ընթերցելիս հատուկ մեկնիչներն այն մեկնաբանում էին համայնքի հավատալիքների համաձայն:

Դանիել մարգարեին հետևելով՝ մեկնիչներն ձգտում էին Ս. Գրքում գտնել տեղիներ, իրենց ժամանակի ու ապագայի վերաբերյալ: Բայց Աստծու հոսքի նկատմամբ նրանց մոտեցումը կաշկանդված էր օրինապահության ձևականության կաղապարներով: Եսասեականները մեծ տեղ էին հատկացնում մաքուրի ու անմաքուրի, պղծվելու ու շաբաթի վերաբերյալ կանոններին: Նրանք շաբաթը պահում էին ճիշտ փարիսեցիների նման: Այդ օրը ոչ միայն չէր կարելի աշխատել, այլև խոսել աշխատանքի մասին: Արգելվում էր նույնիսկ փոսն ընկած անասունին հանել, որ հուդայական այլ ուսուցիչներ թույլ էին տալիս (հմմտ. Ղուկ. ԺԴ 5):

5. Եսսենական Հավատքի հանգանակը: Կուժրանի և մյուս բնակավայրերի մարդիկ ամեն տարի հավաքվում էին համատեղ ապաշխարության և Ուխտին իրենց հավատարմությունը հաստատելու համար: «Ուսուցիչը» բարձրաձայն ընթերցում էր համայնքի վարդապետության դրույթները: Դա ներմուծված է կանոնադրության մեջ, և դժվար չէ այդտեղ իմանալ գաղափարների շրջանակը, որոնցով ապրել են Ենոքի, Հոբելենից և վախճանական մյուս գրքերի հեղինակները:

Կուժրանի մատենագրության բնութագրական հատկանիշներից է իրանյան դուալիզմի անուղղակի ազդեցությունը (տե՛ս հտ. 2, § 1): Եսսենական Հավատի հանգանակը սկսվում է հետևյալ խոսքերով. «Ամենագետ Աստծուց է ամենը՝ ինչ կա և եղել է... Նա մարդուն ստեղծել է աշխարհին իշխելու և նրա մեջ երկու հոգի է դրել, որպեսզի դրանցով ղեկավարվի մինչև Իր նշանակած ժամանակը: Դրանք ճշմարտության և Ստի ոգիներն են: Լույսի ապարանքում ճշմարտի ծագումնաբանությունն է, իսկ խավարի ակունքից՝ Ստի արմատն է» (Գ 13 և հաջ.):

Կուժրանյանները, անշուշտ, միաստվածական էին մնում և հերքում էին չարի հավերժական լինելը, իսկ դուալիզմը նրանց աշխարհայացքում ծառայում էր արդարության և անօրենության առավել խիստ հակադրության համար: Եթե Ստի ծառաները բռնակալներ, շահագործողներ և Օրենքը խախտողներ են, իսկ ճշմարտի հոգին արտահայտվում է բարեպաշտությանմբ, խոնարհությանմբ և արդարությանմբ:

Ուստի հարց է առաջանում, թե նրանց կարծիքով որտեղի՞ց է անցնում դրանց ջրբաժանը:

Ուսուցիչն Օրհներգերի մեջ դեռևս արտահայտում էր բոլոր ժողովուրդները դարձի սուրբգրային ընդհանուր հույսը: Բայց նրա ուխտի մեջ աստիճանաբար հաստատվեց այլ հայացք: Եսսենականներն ասում էին, թե մարդու ուղին նախանշված է նրա ստեղծվելուց առաջ: «Ստի ծառաները» այդպիսին էլ կլինեն ու կմնան հավետ, իսկ կփրկվեն լոկ «ընտրյալները», որոնք ուրախությամբ պիտի սպասեն խավարի որդիների կործանմանը: Ավելին, նրանք հավատում էին, որ իրենք մասնակից են լինելու համաշխարհային ճակատամարտին, որ մղելու են հրեշտակները հեթանոսների ու այն հրեաների դեմ, որոնք չեն ընդունել իրենց համայնքի վարդապետությունը: Այսպիսի հայացքների դեպքում խոսք անգամ չէր կարող լինել որևէ միսիոներական կոչման մասին:

Այս ամենը կրկին անգամ ցույց է տալիս, որ չի կարելի խոսել կումրանյան և նորկտակարանյան ուսմունքների ծագումնաբանական կապի մասին:

6. Շարժման հետագա ճակատագիրը: Արդարության Ուսուցիչը հավանաբար մահացել է Ք. ծ. ա. 120 և 110 թվականների միջև: Որոշ պատմաբաններ կարծում էին, թե նա մահապատժի է ենթարկվել: Բայց թոկախաթ բառը, որ կիրառված է բնագրում նրա կապակցությամբ, նշանակում է մերկացում, պատիժ, նկատողություն, բայց ոչ՝ մահապատիժ:

Ըստ երևույթին Ք. ծ. ա. 80 թվականին գրված Դամասկոսյան վավերագիրն Ուսուցչի մահը հիշատակում է կատարյալ էպիկական ոճով, առանց որևէ ակնարկի նահատակության մասին: Ընդամին ասված է, որ նրա հետ կնքված ուխտի ժամանակը կձգվի «մինչև Ահարոնի ու Իսրայելի Մեսիայի ներկայանալը»: Հետևաբար Ուսուցիչն ինքը մահից հետո չի նույնացվում Մեսիայի հետ: Ճիշտ է, այդտեղ իսկ ասված է, որ Ուսուցիչը «կհառնի օրերի վախճանին» (VI. 8), բայց խոսքը ընդհանրական հարության մասին է, որ կումրանյանները, ինչպես և փարիսեցիները, ակնկալում էին գալիքում: Սա ոչ մի ընդհանրություն չունի Ավետարանական զատկական խորհրդի հետ:

Երկու Մեսիայի հիշատակումն արտացոլում է վախճանականների հավատը, թե մի Մեսիան կլինի Դավթի որդին, իսկ մյուսն՝ Ահարոնի (տես հտ. 2, § 29):

Ուսուցչի վախճանը չհանգեցրեց շարժման մարմանը, բայց այն մասնատվեց մի քանի ուղղություն: Կուսակրոնությունն ու ունեցվածքի ընդհանրությունը ոչ բոլորը պահեցին:

Առաջին դարի 80-ական թթ., երբ Յաննայ թագավորը դաժանորեն հետապնդում էր փարիսեցիներին, նրանցից ոմանք միացան եսսենական ուխտին: Նորադարձների ներհոսքը, ինչպես և այլ պատճառներ ճգնակյացների մի մասին դրդեց լքել Հուդան և մենություն փնտրել եգիպտական

անապատում: Այդ «թերապեվտների»¹ մասին հաղորդում է Փիլոնը, իսկ նրա խոսքից՝ Եվսեբիոս Կեսարացին («Պատմություն Եկեղեցական», Բ, 17):

31 թ.՝ Հերովդես Մեծի ժամանակ, երկրաշարժը կործանեց Կումրանի բնակավայրը: Սրա բնակիչները ցրվեցին քաղաքներով, բայց Ք. ծ. հ. Ա դարի սկզբներին վերադարձան այնտեղ: Երբ պատերազմ սկսվեց Հռոմի դեմ, եսսենացիները գործուն մասնակցություն ունեցան: Իսկ երբ թշնամին մոտեցավ, նրանք հեռացան անապատից՝ իրենց գրադարանը նախօրոք թաքցնելով քարանձավներում, ուր և պահպանվեց մինչև մեր օրերը:

Հետագայում շարժման հետքերը կորչում են: Դրա անդամների մի մասը գոհվեց պատերազմի ժամանակ, մի մասն էլ, հավանաբար, դարձան քրիստոնյա:

7. Կումրանը և Նոր Կտակարանը: Երբ հրապարակվեցին Մեռյալ ծովի առաջին ձեռագրերը, շատ աստվածաբաններ ու պատմագետներ ուշադրություն դարձրին եսսենացիների և Հովհաննես Մկրտչի նմանություններին: Եվ համայնքը, և՛ Նախակարապետն իրենց էին վերագրում «Անապատում կանչողի ձայնը» մարգարեությունը²: Հովհաննեսը, կումրանյանների նման, ճգնակենցաղ էր, մասնավորաբար գինի չէր օգտագործում և սնվում էր մորեխով: Թե՛ եսսենացիներ, թե՛ Հովհաննեսը ազդարարում էին Մեսիայի մոտալուտ գալուստը:

Ղուկաս Ավետարանիչն ասում է, թե Տիրոջ նախակարապետը մանկությունից «մնում էր անապատում» (Ա 80), իսկ եսսենացիներն իրենց բնակավայրն անվանում էին «անապատ»: Հովհաննեսի ծնողները զառամյալ էին, հավանաբար մահացել էին, երբ նա տակավին մանկական հասակից չէր ելել: Ընդ որում հայտնի է, որ եսսենացիները սիրով որդեգրում էին դեռահասներին (Иосиф Флавий, Иудейская война, VIII., 9, 120): Ուստի բնական հարց էր ծագում՝ արդյո՞ք Մկրտչը մանկությունն ու պատանեկությունը չի անցկացրել եսսենացիների շրջանում (տե՛ս ЖМП, 1958, № 8):

Սակայն, եթե նույնիսկ այդպես է, ստանալով Աստծու հրամանը՝ մարգարեն լքել է անապատը: Ի տարբերություն եսսենացիների՝ Հովհաննեսն ապաշխարության քարոզով դիմել է բոլոր մարդկանց: Նա չէր պահանջում, որ մարդիկ հեռանան աշխարհից, այլ յուրաքանչյուրին կոչ էր անում առտնին կյանքում կատարել Աստծու կամքը: Մարգարեն ձաղկում էր ազգային սնապարծությունը, կանխասում Փրկագնողի գալուստը, ապաշխարության նշան դարձրեց միաժամանակյա լվացումը (մկրտություն) Հորդանանի ջրերում: Այլ խոսքով՝ կումրանյան մեկուսացվածությունն ու սնա-

¹ Խսայիս-յի հունարեն համարժեքն է՝ բարեպաշտ (եսսենացի):

² Եսայի Խ 3 – խմբ.:

պարծուկությունը դատապարտեց ու մերժեց Նախակարապետը՝ կանանցից ծնվածներից մեծագույնը¹:

Բացառված չէ, որ Կումրանի հետ կապ ունեցած լինի նաև Հովհաննես Աստվածաբանը: Ավանդուկություն է պահպանվել, որ նա չի ամուսնացել, մի բան, որ հրեաների մեջ հազվագեպ էր: Հովհաննես գրությունները ոճական առումով մերձ են կումրանյաններին: Դա արտահայտվել է լույսի ու խավարի, Աստծու հոգու և մոլորության հոգու հաճախակի հակադրությամբ և լեզվական մի շարք բնորոշ դարձվածքներով: Գուցե Զեբեդյան Հովհաննեսը, որ սկզբում աշակերտել է Հովհաննես Մկրտչին, նրանից է ընդունել եսսենական դարձվածաբանության որոշ գծեր: Տիրոջ Օրվա գալստյան մոտ լինելը, որ ընդունում էին թե՛ եսսենացիները, թե՛ Կարապետը, փոխանցվել է ապագա առաքյալին ու նրան բերել դեպի Քրիստոս:

Ավելի դժվար է հասկանալ, թե եսսենական բառապաշարը որտեղից է թափանցել Պողոս առաքյալի թղթերի մեջ, որ տոհմիկ փարիսեցի էր, Գամաղիելի աշակերտը: Խոսքն այնպիսի արտահայտությունների մասին է, ինչպես՝ «արբերի վիճակին», «Աստծու խորհուրդներ», «Բելիար», «աստուանայի հրեշտակ» և այլն²: Թերևս լուծումը կարող է թաքնված լինել Պողոս առաքյալի ուղերձի հանգամանքներով: Հայտնի է, որ նրա առաջին ուսուցիչները Դամասկոսի քրիստոնյաներն են եղել, իսկ Դամասկոսը, եսսենացիների կենտրոններից մեկն էր:

Նկատելի է, որ Նոր Կտակարանում հիշվում են հուդայական հոսանքներից շատերը, իսկ եսսենացիների մասին խոսք չկա: Հաճախ դա մեկնաբանում են այն տեսանկյունից, թե կումրանյանների զգալի մասը քրիստոնյա է դարձել: Համենայն դեպս լիովին հավանական է, որ վաղ Եկեղեցի են մտել ոչ քիչ մարդիկ եսսենական համայնքից, և նրանք ազդել են առաջին քրիստոնեական եզրութաբանության, սովորույթների ու խորհրդանիշների վրա:

Սակայն դրանով Կումրանի և Ավետարանի միջև անդունդը չի փոքրանում: Տեր Հիսուսին դարձած «լույսի որդիները» ներքուստ պիտի վերածնվեին, մերժեին կարծեցյալ Նոր Ուխտը և ձեռք բերեին իսկականը, որի մասին կանխապես ասել էին մարգարեները:

Հարցեր կրկնության համար

1. Երբ և ինչ հանգամանքներ սկիզբ դրեցին Մեռյալ ծովի հայտնագործություններին:
2. Ո՞ր ժամանակին են վերաբերում այնտեղ գտնված վավերագրերը: Ի՞նչ նշանակություն ունեն դրանք:

¹ Մատթ. ԺԱ 11 – խմբ.:

² Տե՛ս Կող. Ա 12, Ա Կորնթ. Դ 1, Կող. Բ 2, Բ Կորնթ. 2 15, Բ Կորնթ. ԺԲ 7 7 և այլն – խմբ.:

3. Ովքեր էին դրանց շարադրողներն ու տերերը:
4. Հին հեղինակներից ո՞վ է խոսել եսսենացիների մասին:
5. Բնչն է մերձեցնում կումրանյան և առաջին քրիստոնեական սովորույթները:
6. Ո՞վ էր համայնքի հիմնադիրը: Ե՞րբ է ապրել նա, ինչպես է ընկալել իր կոչումը:
7. Կումրանյան կարգ ու կանոնը ինչպես են պատկերում ուխտի կանոնադրու-
թյունը:
8. Դրանք ինչո՞վ են տարբերվում Եկեղեցու կառույցներից:
9. Ո՞րն էր եսսենական հավատքի հանգանակը և ինչո՞վ է հակադիր ավետարանա-
կան բարոյախոսությանը:
10. Բնչ ճակատագրի արժանացավ շարժումը Ուսուցչի մահվանից հետո:
11. Ցույց տվե՞ք եսսենացիների ու Հովհաննես Մկրտչի նմանությունները:
12. Կումրանյան ազդեցության ինչ հետքեր կան Նոր Կտակարանում, որոնք են
այդ ազդեցության պատճառները:

§ 30-ի Հավելված Կումրանի բնագրերից

1. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ: *[Սա գրվել է], որպեսզի Աստծու օրենքները կատարելու գործին կամովին նվիրված ամեն ոք ընդգրկվի արդարություն միության մեջ, Աստծու խորհրդին միանալու համար և Նրա առջև անբասիր վարքով քայլելու համար՝ [հընթացս] բոլոր հայտնությունների և համաձայն դրանց վկայությունների ժամանակի: Եվ (նրանք պարտավոր են) սիրել լուսսի բոլոր որդիներին, յուրաքանչյուրին ըստ Աստծու խորհրդում ունեցած վիճակի, և ասել խավարի բոլոր որդիներին, ամենքին ըստ իր հանցանքի, համաձայն Աստծու վրեժխնդրության: Եվ բոլորը, թելադրված Նրա ճշմարտությամբ, ներդնում են իրենց ամբողջ գիտելիքները, իրենց ամբողջ ուժն ու ողջ ունեցվածքն Աստծու համայնքին, որպեսզի մաքրեն իրենց գիտելիքները Աստծու օրենքների ճշմարտությամբ, իսկ իրենց ուժն զորացնեն ըստ Նրա ճանապարհների կատարելության ... (1,7-13):*

Թարգմ. К. Б. Старкова,

«Палестинский сборник», պրակ 4 (67), 1959, էջ 26:

2. ԱՄԲԱԿՈՒՄ ՄԱՐԳԱՐԵԻ ԳՐՔԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԻՑ: *«Արդարև արդարը հավատքով կապրի» (Ամբ. Բ 5): Սրա մեկնությունը. (վերաբերում է) Եհուդայի [Հուդայի] տանն Օրենքը կատարողներին, որոնց Աստված կփրկի դատաստանի Տնից՝ նրանց տառապանքների և արդարության Ուսուցչին հավատալու համար (VII. 17, VIII. 1-3):*

Թրգմ. Ի. Դ. Ամունի, «Тексты Кумрана», պրակ 1, М., 1971, էջ 155:

3. ՕՐՀՆԵՐԳԵՐԻՑ: *Գոհանում եմ Քեզնից, Աստված, որովհետև աչքդ հուզուս վրա պահեցիր և փրկեցիր կեղծավոր ծաղրողներից և շողոքորթների բազմությունից: Դու փրկեցիր աղքատին, որին կամենում էին ոչնչացնել և*

արյունը հեղել Քեզ ծառայելու համար: Չիմացան, որ իմ քայլերը Քեզնից են բխում, ծանակեցին ու անարգեցին խաբեության նվիրյալների շուրթերով (36, II., 31):

Մեքերվում է ըստ՝ «Тексты Кумрана», պրակ 1, М., 1971, էջ 155:

§ 31. Սփյուռքի ավանդությունները: Սողոմոնի Իմաստության գիրքը:

1. Հինկտակարանյան սփյուռքը և նրա նշանակությունը: Բաբելոնի գերությունից հետո բոլոր տարագիրները չէ, որ վերադարձան հայրենիք: Նրանք կազմեցին համայնքներ՝ ցրված Արևելքով մեկ: Հելլենականացման դարաշրջանում այդ սփյուռքն առավել ընդլայնվեց: Համայնքներ ծագեցին Փոքր Ասիայում, Բալկաններում, Հռոմում և Ալեքսանդրիայում: Այդ երևույթն ինքնըստինքյան բացառիկ չէր: Դեռ Ք. ծ. ա. է դարում հույները հեռավոր երկրներ էին գնում և այնտեղ հիմնում իրենց գաղութները (այդ թվում՝ Նեապոլ ու Մարսել, Օդեսսա ու Թեոդոսիա): Նրանք իրենց հետ տանում էին իրենց մշակույթը, սովորույթներն ու կրոնը: Այնուհետև նաև հոռմեացիները, ենթարկելով միջերկրականի ավազանը, իրենց ազդեցությունը տարածեցին Բրիտանիայից մինչև Աֆրիկա: Իբրև արդյունք՝ Հին աշխարհը ձեռք բերեց միասնության հատկանիշներ, որոնք օգնեցին Քրիստոսի առաջին առաքյալներին: Նրանք սկզբում հրեական սփյուռքի մի համայնքից անցնում էին մյուսը, հաղորդակցվում էին միջազգային դարձած հունարենով, օգտնվում էին հռոմեական օրենքների պաշտպանությունից:

Յրման բերումով հինկտակարանյան Եկեղեցին բաժանվեց երկու մասի՝ սփյուռք և մետրոպոլիտայի: Սփյուռքում կրոնական կյանքը շմարեց (հիշենք, որ սփյուռքից եկան Եզրասն ու Նեեմիին): Պաղեստինից դուրս գտնվող համայնքներից ամենանշանավորն Ալեքսանդրիայի գաղութն էր: Այդ քաղաքում հանդիպեցին Արևելքի և Արևմուտքի մշակույթները: Ալեքսանդրիայի հրեաները ծանոթացան անտիկ փիլիսոփայությանը, յուրացրին դրա որոշ գաղափարներ: Ալեքսանդրիայում ստեղծվեց Յոթանասնիցը, և ծագեց Աստվածաշնչի մեկնության այլաբանական եղանակը: Հենց Ալեքսանդրիայում հույներն առաջին անգամ մոտիկից շփվեցին Հին Կտակարանին, և այնտեղ ի հայտ եկան առաջին նորագարձները, որոնց թիվն արագորեն աճեց: Նորագարձներին անդրադառնալով՝ Փիլոնը գրում էր. «Այդ մարդիկ, համոզվելով, որ սին ու կեղծ են բարքերը, որոնցով դաստիարակվել են, հրաժարվում էին դրանցից՝ դառնալով ճշմարտության իսկական պաշտողներ և անկեղծ աստվածասերներ»: Այդպիսով սփյուռքի միջոցով սկսեցին իրականանալ մարգարեների սպասումները:

2. Սողոմոնի իմաստության գիրքը: Հրեա-ալեքսանդրյան շրջանի նշանավոր հուշարձաններից է Սողոմոնի Իմաստության Գիրքը: Դրա հեղինակը նախընտրեց անհայտ մնալ՝ թաքնվելով, ինչպես ընդունված էր հրեա իմաստունների շրջանում, Սողոմոնի անվան ներքո: Բայց արդեն Մուրաառորի կանոնում¹ (Ք. ծ. հ. Բ դար) այն Սողոմոնի երկերի կարգը չի դասվել: Սողոմոնի՝ այս գրքի հեղինակ լինելու հանգամանքը վճռականապես հերքում էին Օգոստինոս Երանելին եւ Հերոնիմոս Երանելին: Վերջինս ընդգծում էր, որ «Դրա բուն շարադրանքը հատուկ է հունական պերճախոսությանը» (տե՛ս ԵԾ, հտ. 5, էջ 76): Ըստ բոլոր նշանների՝ գիրքը գրված է Ք. ծ. ա. Ա դարի կեսերին՝ Ալեքսանդրիայում:

Եկեղեցին Իմաստությունը դասեց երկրորդականոն գրքերի շարքը: Սակայն, հաճախ սրանից քաղվածքներ են անում սբ. Հայրերը, նաև օգտագործվում է աստվածաշտույթյան ծեսերում: Հիրավի, Իմաստությունը հինկտակարանյան մատենագրության գեղեցկագույն եզրափակումն է: Այստեղ միահյուսվել են՝ պրոֆետիզմը, ուսուցիչներինների իմաստությունը եւ սաղմոսների աղոթասացության տանելը: Հրեա մատենագիրներից դեռ ոչ մեկին չէր հաջողվել այդքան ներդաշնակորեն համադրել Հին Ուխտը և հելլենականությունը: Հեղինակը ոչ միայն գրել, այլև մտածել է հունարեն: Մասնագետները դրա լեզուն համարում են «գրեթե դասական»:

Իմաստության գիրքը պոեմ է, որ տեղ-տեղ ընդմիջվում է արձակ հատվածներով: Հեղինակը հանգամանորեն մտածել է գրքի կառույցն ու ձևը, որպեսզի չհեռանալով աստվածաշնչական ոճից՝ մշակույթով հելլեն մնա:

Սողոմոնի Իմաստության Գիրքը բաղկացած է երեք մասից.

ա) Զատագովություն կասկածամիտների դեմ (Ա-Ե).

բ) Աստծու իմաստությունը (Զ-Թ).

գ) Սրբազան պատմության իմաստը (Ժ-ԺԹ):

Նախ, հեղինակը դիմում է հունական կրթություն յուրացրած հրեաներին: Գրքի նախաբանից պարզ է, որ նա նկատի է ունեցել նաև հեթանոսներին: Այն օրերին, երբ աշխարհը պատրաստ էր խոնարհվելու կեսարների առջև, նա «երկրի դատավորներին» մեղադրում է հպարտության և ինքնահրապուրման մեջ²: Նրանք ժողովուրդներին խաղաղություն եւ փրկություն են խոստանում, բայց իրական ճշմարտությունը չի կարող ձեռքբերվել առանց Նրան, որ Գերագույն Բարին է և Գերագույն Ճշմարտությունը:

3. Գրքի ջատագովական մասը պատասխան է նրանց, որ կորցնելով հավատն Աստծու ճշմարտ լինելու մասին՝ գայթակղվել են գոեհիկ էպի-

1 Տե՛ս Եզնիկ արք. Պետրոսյան, Երկեր, հտ. 2, Ներածություն Լոր Կտակարանի, Երևան, 2016, էջ 15 - խմբ.:

² Գիրքը գրվել է Սուլայի ու Կեսարի իշխանության շրջանում:

կուրականությունը¹: «Անուղղելի մարդիկ» կարծում էին, որ եթե ամենուր թագավորում է շարը, ուրեմն Արարիչն անտարբեր է դրան ու, հետևաբար, ո՛չ վերին ճշմարտություն կա, ո՛չ էլ հատուցում: Աստված Ինքը մեղավոր է այն բանում, ինչ կատարվում է երկրի վրա: Կասկածամիտներին առարկելով՝ գրքի հեղինակը խոստովանում է, որ աշխարհն իսկապես լի է ողբով և ենթակա է մահվան օրենքին: Բայց է-ն չէ շարի պատճառը.

Արդարև, Աստված մահ չի ստեղծել,
 և նա չի ուրախանում ողջերի կորստյան համար:
 Նա ամեն ինչ հաստատել է լինելու համար,
 և աշխարհի գործերը փրկության համար են ...
 Աստված մարդուն ստեղծել է անեղծ լինելու համար
 և արարել է նրան ըստ իր բարերարության պատկերի:
 Մահը աշխարհ է եկել բանասրկուի նախանձով.
 և ովքեր նրա բաժինն են, նրանք էլ պիտի կրեն այն:
 (Ա 13-14, Բ 23-25)

